ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

IV

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Դ

ՀԱՏՈՐ

Պ–Ֆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1979

4Ար(30) Ինդեքս ԳՄԴ 81-2ՀՀ
Ա 501

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Խմբագրական հանձնաժողով.

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Է. Բ. ԱՂԱՅԱՆ, Մ. Մ. ՄԿՐՅԱՆ, ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

Հատորը հրատարակության են պատրաստել Մ. Ե. Ասատրյանը, Գ. Լ. Գաբեգիկյանը, Գ. Մ. Մանուկյանը, Գ. Կ. Հանանյանը

Պատասխանատու խմբագիր՝ պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Ա $\frac{4602020000-35}{704(04)-77}$ 58-79

ГР. АЧАРЯН

ЭТИМОЛОГИЧЕСКИЙ КОРЕННОЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Том IV

Издательство Ереванского университета

Ереван—1979

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1979

Պ

ՊԱԳ *«համբոյր». արմատ հների մօտ անգործածական. կայ միայն յետնաբար, ինչ. Թլկր. 34, Քուչ. 56. որից* պագանել *«համբուրել» (կտր.* պագի, *հրմ.* պա՛գ*). գործածուած է միայն երկիր բառի հետ. այսպէս՝* երկիր պագանել *ՍԳր. Ոսկ. ես. Սեբեր. Եփր. Թգ. միայն մէկ անգամ Գ. Թագ. ժԹ. 18 գործածուած է առանձին «որոյ ոչ իցէ պագեալ զնա», բայց դարձեալ ըստ չն. իմանալի է «պագեալ նմա զերկիր». յատկապէս ասւում է* երկիրպագանել *(իբր մէկ բառ) ՍԳր. Ոսկ. ես. Եփր. համաբ. կամ* երկրպագել *Խոր. Շար.* երկրպագու *ՅՀ. դ. 23. Եղիշ.* երկրպագութիւն *Շար. Նար. ևն։*

Նշ՛ Լծ. ռմկ. պաշիկ ընել, *պրս.* bōsīdan *և իտալ.* baciare *«համբուրել»*։ Canini, Et. étym. *8 սանս.* aphak *«համբուրել», պրս.* būsīdan *«համբուրել», իսկ էջ 71* երկրպագել *միացնում է հյ.* բագին *և լտ.* paganus *«կռապաշտ» բառերին։ Հիւնք.* պակշոտ *բառից*։ Patrubány SA 1, 211 *չն.* πήγνυμι, παγῆναι *«խրել, կոխել» բառերի հետ՝ հնխ.* phāgh *արմատից։ Նոյն,* SA *2, 149, ՀԱ 1907, 89 և 1908, 343 հնխ.* pāgh *«պընդել, հաստատել, կցել» արմատից՝ ի մասնիկով, որ համառօտուած է* épi *«վրայ» նախդիրից. հմմտ. չն.* πήγνυμι *«պնդել», սանս.* pāça *«կապ, չուան», լիթ.* pozyti *«կցել, զօդել» ևն։ — Կան մեր բառին մօտիկ հնչող մի խումբ հոմանիշ ձևեր. ինչ. օսս.* պաֆանին, *պրս.* bōsīdan, *գւռ. պրս.* māč *(այսպէս ըստ* Horn § 235, *որ ուրիշներ թուրքերէն են համարում. հմմտ. չաղաթ.* mač, mačak, *թրք.* باچه bače *«պաչիկ»* G. Meyer, Türk. Stud. SWAW 1893, 128), *քրդ.* mač, mačip, *աւար.* ubač, *լտ.* basio, *ֆրանս.* baiser, *գերմ.* schmatz, *լեհ.* buzia, buziak, *բուլգար.* bacam, baknъ, baknuvam *«համբուրել», որոնք համարւում են բնաձայն (այսպէ՛ս* Berneker 37, Horn § 235)։

ԳԻՒ.— Արմատական ձևն է պագ *«համբոյր», որից բայաձև՝ վն.* պաֆ՛ել, *Ալշ.* պակել. *ոնգականով (իբր* պագանել*) Մշ.* պագ՛նել, *Կր. Ախց.* պաֆնէլ, *Մկ.* պակ՛նիլ, *Սլմ.* պայ֊ֆնել, *Հճ.* բագ՛նել, *Մշ.* բաֆնել, *Ակն. Ննխ. Պլ. Ռ. Սեր.* բաֆնէլ, *ԶԹ. Խրբ.* բաֆնիլ, *Սվեդ. Տիգ.* բոֆնիլ, *Հմշ.* բաֆնուշ *(կտր.* բաֆնէցի*), Ասլ.* բա*նէ՛լ։— իսկ* պաչ *արմատից՝ Մշ. Զղ.* պաչել, *Երև.* պաչէլ, *Ագլ. Գոր. Ղրբ. Շմ. Տփ.* պաչիլ *(նաև* պաչ աճել *ձևով). — Նոր բառեր են* պագիկ, պագուկ, պագատիլ, պագպագել, պագռտել, պագռտուիլ, պագվտիլ, պաչիկ, պաչպաչել, անպաչիլ, պաչպչոռել, պաչպչռուիլ, պաչպչոռուիլ։

ՓՈԽ.— Վրաց. ბაჩი պաչի *«համբոյր», քրդ.* bač *«համբուրել» (Աճառ.* MSL *16, էջ 350)։* ***ՊԱԶՐՊԱՆՃ** *«բանգ բոյսի հունտը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2481։*

=Արաբ. بزر بنج bazr-i banǰ *նոյն նշ.— Ա՛ճ.*

ՊԱԹՈՒՐ *«մեղայ». ունի միայն Բառ. երեմ. էջ 262։*

ՊԱԺԻՏ *«թռչուն բռնելու ծուղակ». ունին միայն ԱԲ և Նորայր, Բառ. ֆր.* (rets *բառի տակ)։*

ԱԲ յիշում է իբր կասկածական բառ. բայց համարում է յունարէն։ Կայ չն. πάγις, παγίδος *«ցանց. 2. մուկ բռնելու ակնատես», որ ի հարկին կարող է բացատրել հյ.* պաժիտ *բառը (Հաղորդեց Ստ. Մալխասեան)։*

ՊԱԼ *«պաղ կամ ծիլ». ունի միայն Բռ. երեմ. էջ 262։*

+ՊԱԼ *«քարաժայռ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Հաւաք. էջ 17. «Ապա ի հինգերորդ տարին լըմնցան զպարիսպն. անճուն բարձրութիւն նորա էր դիմաց պալին, վաթսուն կանգուն»։ Իսկապէս նշանակում է «մեծ» և այս ձևով կենդանի է Ասպ. Արճ. Բլ. Հջղ. Մշ. Նր. Վն. որոնց մէջ գործածւում է իբր ածական «տեղից չշարժուող խոշոր ապառաժ քար, աւելի մեծ, քան թէ զնարը՝ որ շարժելի է» իմաստով. օր. Պալ պալ fաrեr. նշանակում է նաև «լայն և դուրս ցցուած». օր. պալ ճակատ: Տե՛ս և պաղ «քար» (որից պաղաճնաւ և պղպղաfար):*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bal- (կամ bāl- և կամ bl̥-) «խոշոր, ուժեղ» բառից. հմմտ. սանս. bála- «ուժ, զօրութիւն», bálīyān «աւելի ուժեղ», bališṭha- «ամենաուժեղ», յն. βελτίων, βέλτερος «լաւագոյն»? հսլ. boljĭjĭ bolijĭ «մեծագոյն», bolje «աւելի շատ», սերբ. böljî «լաւագոյն», ռուս. большой «մեծ», больше, более «աւելի», լտ. dē-bilis «թոյլ, անուժ», հոլլ. ստոր. գերմ. ֆրիզ. pal «անշարժելի,հաստատուն» (Pokorny 2, 119, Trautmann 25, Berneker 72, Walde 222, Boisacq 118), հիւլ. ad-bal «զօրեղ» (Ernout-Meillet 245), ալպիան pala «սեպ ժայռ»; balú «քարաժայռ», pala «գերեզմանաքար», pala «քարակոյտ», ինչպէս նաև մի խումբ լեռնագագաթների անուններ Ալպեան լեռների վրայ, որոնք ընդարձակ տե՛ս Bertoldi BSL № 96, *էջ 139 և 156—7։ Գերմանական ձևերը ոմանք վարանում են միացնել սրանց. հայերէնի կատարեալ համաձայնութիւնը նշանակութեան կողմից՝ գալիս է ցրուելու կասկածը։—Աճ.*

ՊԱԼԱՏՆ կամ ՊԱՂԱՏՆ, ն հլ. (սեռ. -տան) «ապարանք, աւրդունիք, թագաւորական կամ իշխանական բնակարան» Եւս. քր. Բուզ. Փարպ. Խոր. յետնաբար աւում է պաղատ կամ պալատ, ի հլ. «աւրդունիք» Ոսկիփ. Ճառընտ. Վրք. հց. Պոմ. վր. «աւրդունի գանձը» Վրդն. պոմ. էջ 141. «թագավորական վրան» Կիր. 94. Վրդն. 141. Նոր գրականում գործածւում է միայն պալատ «աւրդունիք», որից պալատական, պալատանական:—Ա՛ր ունի և պալատատուն բառը, որ ըստ Նորայր, Բառաք. 58՝ կազմուած պիտի լինի Վրք. հց. բ. 254 ի պալատատանն ձևից. բայց այս ձևը գրչագրական սխալ է՝ փոխանակ ի պալատանն:

=Յն. παλάτιον, παλάτιν հումանիշից, որ փոխառեալ է լտ. palatium բառից. սա նախապէս Հռովմի Պալատինեան լեռան անունն էր. թերևս ծագում է լտ. pālus «ցից» բառից և նշանակում է բուն «ցցապատ տեղ» (Walde 554). *յետոյ ստացաւ «աւրդունիք» նշանակութիւնը. անցած է նաև շատ ուրիշ լեզուների ինչ. իտալ.* palazzo, *ֆրանս.* palais, *անգլ.* palace, *հրգ.* phalanza, pfalanza, *մ. բ.գ.* palas, *նրգ.* Palast, Pfalz (Kluge 365), *հսլ.* polata, *ռուս.* палата, *հունգ.* palotə, *վրաց.* პალატი պալատի, *արաբ.* بَلَاط balāṭ, *ասոր.* ܦܠܛܝܢ palāṭīn *ևն։ Հայերէնի «վրան» նշանակութեան համար հմմտ. ռուս.* палатка *«վրան»։—Հիւբշ. էջ 370։*

ՀՀԲ «բառ այլազգ.»։ Ուլիղ մկհննց նախ St Martin. Mémoires 2, 279, *յետոյ ՆՀԲ,* Peterm. *21 ևն։*

Գիւր.—Ագլ. Ախց. Գոր. Ղրբ. Շմ. Տփ. պալատ, *Մշ.* բ'ալադ՝ *(վերջինը նոր փոխառութիւն ռում.* palat, palatŭ *ձևից, իսկ առաջիններն էլ ռուս.* палата *բառից)։*

ՊԱԼԱՏՈՒԻ, որ և բալատուր, պալարտուկ, պլատար *«մի տեսակ բոյս. լտ.* anacardium» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2483։*

=Արաբ. بَلَاذُر balāḏūr *կամ* بَلَاذِير balāḏīr *նոյն նշ. (տե՛ս* Steinschneider *-ի հաւաքածոյի մէջ՝* WZKM 11, 319). *Նոյնից է նաև վրաց.* ბალადური բալադուրի «анакардъ (дерево)» *Զուբին.² 93։*

Ուլիղ մկհննց ՀԲուս.։

+ՊԱԼԱՐ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «մարմնի վրայ մի տեսակ վէրք, խաղաւարտ» Դևտ. ժգ. 2, 10, ժդ. 56. «խարան, դաղած նշան» Փիլ. Պոմ. աղէքս. որից պալարաբար «պալարի պէս» Ա՛ր. պալարանալ «պալարի պէս լինել» Լմբ. ագ. անպալարուտ «անախտ, անսպի» Փիլ. լին.—Տե՛ս նաև յաջորդը։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bol- «ուռիլ, ուռուցք» արմատի ստորին bl̥- ձայնդարձից,

–ար մասնիկով. ցեղակիցների մասին ավելի ընդարձակ տե՛ս պղպջակ:

Bugge IF 1, 456 հնխ. bhlā- արմատից. համմտ. լտ. flare, հբգ. blatara «բշտիկ, խաղաւարտ», հհիւս. bladra: Patrubány ՀԱ 1903, 221 ap- մասնիկով *vel- «գլորիլ» արմատից, իբր գերմ. aufwallen «եռալ, պղպջալ»: Նոյն, ՀԱ 1907, 89 p (<epi) մասնիկով՝ *pu- «ուռչիլ» արմատից. համմտ. լտ. pustula, pussula, լիթ. pucziù, pūsti «փչել», լիթթ. pūslis «պղպջակ», ռուս. пыхать «փչել» ևն: Walde 93 մերժում է կցել լտ. blatea «պալար» բառին: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Petersson KZ 47, 261—2, որ ընդունում է նաև Pokorny 2, 111:

ԳԻՒ.—Բլ. պալար կայնիլ, պալրիլ «հարուածից մարմինը ուռիլ», Ալշ. Մշ. պալար «երկարաձիգ ձևով ուռեցք»: (Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան 546 պալրել Տր. «ծնկան վրայ դրած ոտի թմբրիլը, ընդարմանալը»):

ՊԱԼԱՐ «զարդ». արմատ առանձին անդործածական. գտնւում է հետևեալ բառերի մէջ. պալարակապ «զարդարուն (ձի)» Ես. կգ. 20. Ագաթ. պալարափայլ «զարդարուն» ԱԲ:

ՆՀԲ մեկնելով «պալարաձև», ուզում է կապել նախորդի հետ: Այսպէս նաև Petersson KZ 47, 262:

ՊԱԼԻ, անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Մխ. բժշ. 127. «Ի նոպային օրն... կերակուր չուտէ և պալի երկու օրն կերակրէ և պարարէ զմարմինն»: Ըստ իս նշանակում է «միւս, մնացեալ, յաջորդ», իբր

=արաբ. باقی bāqī «մնացեալ». ըստ այսմ ուղղելի է պաղի:—Ա.Տ.

Seidel, հրտր. Մխ. հեր. § 357 ուղղում է խալի և համարում է արաբ. خالی xālī «դատարկ»:

*ՊԱԼԻՈՒՆ «քահանայապետական համիփորոն» (նկարագրութիւնը տե՛ս Հացունի, Պտմ. տարազի 408) Լմբ. Յիշատ: Նոյն բառն ունի և Սմբ. պտմ. 130՝ հետևեալ ձևով. «Բացին գհողքն... կաթողիկոսին. նա գտան գշուրջառն փտած և գպավլին խայտնին չէն և գգաւազանն և գմազն. և ոսկր ամենևին չգտան». ուր պավլին խայտնին «պալիոնի գունատուր ժապաւէնն» է:

=Լտ. pallium «երկար ու նեղ՝ սպիտակ բուրդէ խաչազարդ մի տեսակ վերարկու» (որ առաջին անգամ Լուկիոս Գ. պապը նուիրեց Գրիգոր տղային, և յետոյ հետզհետէ տարածուեց մեր մէջ): Սոյնից է և յն. πάλλιον, παλλίον:—Հիւբշ. էջ 369:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:

*ՊԱԼՂԱՄ, որ և պալխամ, պլղամ, պղլամ, բլխամ, բլղամ «մաղաս, խուխ» Դամասկ. Մխ. բժշ. 3. Վրք. հց. Ոսկիփ. Վստկ. 120, 166. Մխ. ապար. որից բլղամոտ Ոսկիփ.:

=Արաբ. بلغم balγam, որից և Թրք. balγam, balgam, ռմկ. բալղամ, բաղլամ: Արաբ. ձևը ծագած է յն. φλέγμα հոմանիշից. բուն իմաստն է «բորբոքում» և յառաջանում է φλέγω «բորբոքել, այրել» բայից:—Հիւբշ. 274:

ՊԱՀ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «խաշած միս» Ել. ժբ. 9. որից պախեփ «լաւ խաշած» Հին բռ. պախել «եփել» Բառ. երեմ. 262· այսպէս էլ Տաթև. ձմ. ճժէ պախ եփեալ ջրով մեկնում է «որ է քաջ եփեալ»:

ՆՀԲ յիշում է պրս. puxtan «եփել», Lag. Urgesch. 334 pač «եփել» արմատից. համմտ. յն. πέσσειν, պրս. puxtan, նոյնպէս և Տէրվ. Նախալ. 45, իբր հնխ. pak, և Հիւնք. պրս. puxtan:

ԳԻՒ.—Թւում է թէ սրանից է պաղմիս Վն. «խաշած ու սառեցրած միս», որ յետոյ շրփոթուած է պաղ բառի հետ:

—ՊԱՀ «վախ, երկիւղ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են պախիլ «սաստիկ վախենալ» Ա. մկ. գ. 10· Ոսկ. ես. և մ. գ. էջ 123. պախել Ոսկ. ես. պախեցուցանել «սոսկացնել» Ոսկ. մ. բ. 8 և ես. պախնուլ, պախչիլ ԱԲ. պախկոտ «վախկոտ» Հին բռ. պախումն «վախ, երկիւղ» Փիլ. լիւս. սրտապախ Ոսկ. ես. 78. Պիտ. դիւրապախ «շուտ խրտնող, վախկոտ» Պիտ.—խոկ պախավէժ «գահավէժ» Սրկ. աղ. 138 կազմուած է վախ բառի կրկին նշանակութեանց համե-

մատ (այն է վախ «երկիւղ», վախմ «գահավէժ»)։

=Նոյն է պակ արմատի հետ, որ տես առանձին։

ՆՀԲ յծ. ռմկ. վախ։ Հիւնք. պախ, պակնուլ և վախ դնում է պրս. بَاک bāk «երկիւղ» բառից։ Bugge, Beitr. 34 իբր բնիկ հայ կցում է մբգ. spachen «ճեղքել», յն. φεκάς, φακάς «կտոր» բառերին։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 41 աճ, վախ, պակ բառերին է կցում։ Աճառ. ՀԱ 1909, էջ 159 խ և կ ձայնների յօրդուածեան օրէնքով միացնում է պակ արմատին։

ՊԱԽ «բաց, արձակ». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Պատմ. աղէքս. 69. Ընդ դրունս ելանեն պախս և բնդ անվթարս։

Այսպէս է մեկնում ՆՀԲ։

ՊԱԽ «պատռել, ճեղքել, վնասել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են պախումն «պատռուածք, ճեղքուիլը» Փիլ. լին. և ել. Նիւս. կազմ. անպախ «անվթար, աննեղծ» Փիլ. իմ. և լին. Անյ. բարձր. անպախելի «անվնաս» Տօնակ.։

ՊԱԽԱՃԱՄ «կարկանդակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում ենք գործածուած Ոսկ. կող. էջ 569. «Եւ զոր օրինակ մեք մանկուսյ պղակունգս և պախաճրճամս դնեմք և արծաթով պատրեմք». (յն. բնագիրն ունի միայն πλακοῦντας, որ է «պղակունդրս», որից երևում է թէ պախաճճամ բառն էլ սրա հոմանիշն է)։

ԱԲ դնում է «տղայոց խաղալիկ», բայց իրրև անստոյգ բառ։ Թոռնեան, Հատընտ. Ա. 194 թուի ընդունել «կարկանդակ»։ Գարագաշեան (անձնական) ընդունում էր «կարկանդակ» և կցում էր թրք. boγača հոմանիշին։ Հացունի, Դաստիարակութ. 270 իբրև «խաղալիք» կցում է պրս. bāx «դեղեցկութիւն»+ճճամ (թրք. jiǰi) «խաղալիք» և ո՛չ թէ պրս. جوجم ǰuǰam «բարունակ»։

*ՊԱԽԱՐԱԿ «ճախարակ». գիտէ միայն Բռ. երեմ. էջ 194, որից էլ դնում է պախարակել «շրջել ինչ» էջ 262, որ տարբեր է յաջորդից։

=Արաբ. بكر bakara, bakra «ճախարակ», որից նաև թրք. مقره maqara, ռմկ. մախարա «ճախարակ կամ թելի կոճ» (Կամուս թրք. թրգմ. Ա. 773)։—Աճ.

Դիմ.—Կայ արդի գաւառականներում գանազան ձևերով. ինչ. պախարայ Մրզ., բոկրայ Համշ., պուրայ Խրբ., pfra Շտ. որոնց նշանակութիւնն է «կարժան, ճախարակի անուակ կամ այլ մասեր». (մանրամասն նշանակութիւնները տե՛ս Գւռ. բառ. պախարայ)։

ՊԱԽԱՐԱԿԵԼ «պարսաւել, անարգել, խայտառակել, վրան պակասութիւն գտնել» Յոբ. լ. ծ. Սիր. իթ. 35. Ոսկ. կողոս. որից պախարականք Փիլ. Պիտ. պախարակութիւն Պիտ. անպախարակելի Պիտ. գրուած պաճարկել Արծր։

ՆՀԲ հանում է վախմ «գահաւանդ» բառից. լծ. պրս. բուխտան, հյ. պախել, բախել, առակել։ Bugge, Beitr. 34 և IF 1, 455 իբր բնիկ հայ կցում է յն. φέγω «պախարակել», φογερός «պախարակիչ» բառերին։

Դիմ.—Մշ. պախարագել։

*ՊԱԽՃԱՒԱՆԴ, ի—ա հլ. «գօտիի կամ կամարի նման կանացի մի զարդ». մէկ անգամ ունի Ոսկ. երր. իր. էջ 554. «Այնպիսի պախճաւանդօք և լանջագեղ կամարօք զսպեալ լինիցիս պնդակազմ»։ (ՋՔ գրում է պախճաւանդակ. Քաջունի՝ Գ. 198 դնում է պախճաւանդ «corset, սեղմիրան»)։

=Իրանեան փոխառութիւն է, որ կազմուած է պախճ- (պախիճ կամ պախուճ) +ւանդ բառերից, առաջինը անհետացած է իրանեանում, երկրորդն է պհլ. պրս. band «կապ», որ գտնում ենք նաև բաճուանդ, մեհեանդ, դանդաճաւանդ բառերի մէջ։—Աճ.

Հացունի, Պատմ. տարազին 129 պրս. պախչիտէն «շրջապատել»+band «կապ», որով հասկանում է մի երկար երիզ, որով կանայք լանջքը պատում էին՝ սեղմիրանի պէս։

ՊԱԽՈՒՑ, ո հլ? «սանձ, երասանակ» Յոբ. խ. 20. Պատմ. աղէքս. 23. Գէ. հս. Յայսմ. գրուած է նաև պախոյց, պախուց, պախցոյճ, պաճցոյցճ, պաճցոյճ (բոլորն էլ Պատմ.

աղէքս. 23), պաճուց *Շնորհ. առ. 57. արդի գրականի մէջ գործածւում է պախուրց ձևով, որ ըստ ՆՀԲ և ՋԲ գաւառական է, որից* պախուցաբոյծ *Գր. երէց.—սրանի՞ց է նաև* պահրացի *(ձիուն տրուած ածական) Սասն. 31.—* Rivola, *Բռ. հայոց² 311 ունի* պախոնցք *ձևով, բայց նաև* պախուրցկոթ *«սանձի չուանը»։*

Տէրվ. Altarm. *104, Երկրագ. 1884, 53, Նախալ. 91 իբր բնիկ հայ՝ հնխ.* paç *«կապել» արմատից. հմմտ. սանս.* pāça *«առասան, կապ», զնդ.* pas *«կապել», գոթ.* fahan *«բռնել», գերմ.* fangen, *լտ.* paciscor *«դաշինք կռել»։ Հիւնք.* ց(ռկա)կապ *բառից համառօտուած։*

Գիւր.—Հճ. բախուցք, *Սվեդ.* բախօոցք։

ՊԱԽՏ, ի *հլ. «տան հարկ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած ԺԱ դարու մի արձանագրութեան մէջ. «վասն պախտից տանց քաղաքիս և թաստակին, զոր տային ամ յամէ չափ ութից լտերց» (Վիմ. տար. էջ 27)։*

ՊԱԽՐԻ, ի *հլ. «տաւար, արջառ, նախիր» Մանդ. Կանոն. Մխ. դտ. Վստկ. 13. «ուտելիք, պաշար» Սիր. լա. 26. Ոսկ. մ. ա. 8, բ. 10. «ինչք, ստացուածք, ապրանք, դրամ» Ոսկ. ա. տիմ. ժդ. Եբր. ժա. փիլիպ. Բ. ժև. յետնադար գրուած* պախրայ *Ասոր. դատ. 56. Տաթև. ամ. 12. որից* պախրէիկ *«մի քիչ դրամ» Ոսկ. մ. ա. 3։ Նշանակութեանց զարգացման համար հմմտ. լտ.* pecu *«տաւար» և* pecunia *«ինչք, ապրանք, դրամ, արծաթ», արաբ.* māl *«հզ, տաւար. 2. ապրանք, հարստութիւն, ինչք», Ղրբ.* ապրանք *«ինչք. 2. տաւար» ևն։*

=Նման, բայց ձայնապէս անյարմար են ասոր. حفز baqrā *«նախիր», եբր.* בקר bāqār *«արջառ, կով, ցուլ», արաբ.* بقر baqara, baqra *«հզ, կով», ասուր.* buḳḳuru *«հերկել»։ Արաբերէնից է փոխառեալ յետին պահրայ ձևը։*

ՆՀԲ երեք նշանակութիւններով համարում է տարբեր բառեր. այսպէս՝ պախրէ *«ինչք» լծ. Բրբ.* պագըր, պրս. խրիյտէ, խրիտ, յն. χρῆμα,—պախրէ *«պաշար», լծ. Բրբ. (իմա՛ արաբ.)* զախրէ *և հյ.* պաճարաճք,—*իսկ* պախրէ *«արջառ» լծ.* պաճար, *եբր.* פחר, *լտ.* pecus։ *Տէրվ.* Altarm. *104, Նախալ. 91, Երկրագ. 1884, 53 դնում է *պախուէ ձևից և հանում է հնխ.* paç *«կապել» արմատից. հմմտ. սանս.* paçu, *զնդ.* pasu *«հզ, արջառ», գոթ.* faihu *«տաւար, ինչք, դրամ», լտ.* pecus *«տաւար»,* pecunia *«ինչք», լիթ.* pekus։ *Հիւնք. արաբ.* baqar *«արջառ, հզն» բառից։ Հիւբշ. 516* պախրէ *«տաւար» նշանակութեամբ համարում է արաբերէնից փոխառեալ* պահրայ *բառի ումկ. ձևը։ (Սակայն անտեղի է նախ բառիս այս նշանակութիւնը միւսներից ջոկել, և երկրորդ՝* պախրէ *«տաւար» նշանակութեամբ ունի Մանդ!)։* Seidel, *Մխ. հեր. § 183 հայացեալ է արաբ.* بقر baqar *«հզ» բառից։*

Գիւր.—Սվեդ. բոխրէ *«հզ», Ջթ.* բախռէ *«հզ», Հճ.* բախրէ *(որ է<բախռէ, որովհետև հյ. r>Հճ. յ, իսկ n>r) «հզ», Երև. Տփ.* պա՛խրա *«հղջերու», Ղրբ.* բա՛խրա *«հղջերու». որից* պախրակով *Ղրբ. «էգ հղջերու»։*

Փոխ.—Բոհեմ. bakro *«խոյ»,* bakriš *«ոչխար»,* bakrini *«մաքի»,* bakrilo *«գառն»,* bakroker *«փարախ»,* bakrišos *«հովիւ» (տե՛ս* Vaillant, Gram. des Bohémiens, *էջ 96)։*

ՊԱԽՐՈՒՃԻ *«մի տեսակ բոյս. Քուի լատ.* secale cornutum» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2485։*

***ՊԱԿ** *«մի տեսակ կանացի զարդ» Վրդն. Կլ. ուրիշ վկայութիւն չկայ. (Հին բռ. մեկնում է «պսակ», Քաջունի՝ Գ. էջ 198 «bijou—գոհար»)։*

=Ֆրանս. bague *«մատանի»։—Ահ. ԱԲ դնում է բառ «գղ.»։*

ՊԱԿ *«պէս, կերպ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած է* ո՛րպակ *«ո՛րպէս, ի՛նչպէս» Մագ. Թղ. 205. Արիստ. քանակ. Պորփ. էֆիմ. 318, 320. բառս ուրիշ տեղեր չի պատահում։*

ՊԱԿ *«վախ, երկիւղ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* պակնուլ *«վախենալ, ապշիլ, սարսափիլ» Բ. մկ.*

ը. 16, ժե. 23. Ագաթ. պակեցուցանել Փիլ. եզ. պակուցանել Փիլ. խոր. պակչիլ Իմ. ժէ. 14. Ոսկ. երր. ա. եւագր. Եփր. օրին. էջ 267. պակումն «վախ» Նիւս. բն. Վրդն. ծն. «կերակուրից յափրանալով խորշիլը» Կլիմաք.։ Սրա հետ նոյն է պախ «վախ», որ տես վերը։

Նշ՛ պախիլ բառի հետ? Հիւնք. պրս. bāk «վախ» ձևից։ Scheftelowitz BB 28, 309 յն. φέβομαι «վախենալ, փախչիլ», հսլ. běg «փախուստ» են բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ (Ճիշտ չէ, որովհետև այս բառերի արմատը դրուելով հնխ. bheg- (տե՛ս Boisacq 1019. Berneker 55), սպասելի էր հյ. նախաձայն p և ո՛չ թէ պ)։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 41 և Բազմ. 1912, էջ 263 պրս. bāk և հյ. պախ, վախ, աճ բառերի հետ։ Կուրտիկեան (տե՛ս Յ. Գ. Մ., Պատմ. դրակ. 17) պրս. ինչ որ պուճ ձևից, որ է թերևս՝ պաճ=bāk։ Ղափանցեան ՅԲՕ 23, էջ 356 պրս. bāk և հյ. վախ բառերի հետ միասին հնխ. vak արմատից. (բայց պրս. bāk<արիական *bhāyaka- ձևից, արմատը bhay- (Horn § 170), որ պիտի տար հայերէնի մէջ գոնէ *բայ), պատահական նմանութիւն ունի աւսուր. pakū «վախ, վախենալ» (Muss-Arnolt, Ass. Handwb. 801ա)։

ՊԱԿԱՆԵԼ «հաստատել, պնդել, կազդուրել». ունի միայն ՀՀԲ. նոյնը նաև Բառ. երեմ. էջ 262 պականեր «հաստատել», որի հետ նոյն է պատկենալ «հաստատել» էջ 266։ Յայտնի չէ թէ այս երկու ձևերից ո՛րն է ուղիղ։

ՊԱԿԱՌ կամ **ՊԱՀԱՌ** «մեծ աման». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Լաստ. ժզ. «Ոչ լսին ձայնք ուրախութեան ի կութս այգւոյ և ոչ ծանրանան պակառք (այլ ձ. պահառք) ի սոմանաց»։—ՆՀԲ ուզում է կարդալ տակառ։

ՊԱԿԱՍ (յետնաբար ի հլ.) «թերի, ոչ-ամբողջ» ՍԳր. Եւս. քր. Եփր. ծն. որից պակասել ՍԳր. Ոսկ. մ. բ. 6. պակասեցուցանել ՍԳր. Բուզ. պակասագոյն Ագաթ. Կորիւն. Բուզ. պակասամիտ ՍԳր. անպակաս ՍԳր. Եզն. Ագաթ. հացապակաս Մամիկ. գրպակաս Յիշատ.։

Նշ՛ որպէս թէ կասեալ իւիք։—Lag. Urgesch. 524, Gesam. Abhnd. 53 upaմասնիկով զնդ. kas արմատի հետ։ Հիւնք. պսակ բառից։ Հիւբշ. 458 կարծում է թէ չի պատկանում հյ. կասել կամ զնդ. kasu-, պրս. kih «փոքր» ձևերին, Karst, Յուշարձան 428 և 429 թթր. ak, yik արմատից, իբր ույղուր. yiksik, չաղաթ. üksik, օսմ. eksik «պակաս»։ Ղափանցեան ՅԲՕ 23, 350 արաբ. وكس vaks «պակասիլ» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 305) բառի հետ, (որ սակայն պատահական նմանութիւն ունի, ինչպէս նաև սրանից աւելի նման մի ձև, որ է արաբ. بخس baxs «պակասեցնել» Կամուս, անդ՝ 215)։ Meillet REA 2. 6 պա- մասնիկով՝ իրան. kas, սոգդ. kas «փոքրիկ», պրս. kāstan «պակասիլ» ձևից փոխառեալ։ Pictet բ. տպ. Բ. 399 թէև կցում է լտ. panis, մեսապ. πάγος, իռլ. páin, ինչպէս և սանս. pita, զնդ. pitu «հաց, սնունդ» բառերին, բայց Հայերէն բառը բնիկ է համարում։

ԴԻՒ.—Ագլ. Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. պակաս, Աչք. Մշ. պագաս, Ասլ. Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Սեբ. բագաս, Տիգ. բոգոս, Ջթ. բագօս, բագոս, Հճ. բագօս, Սվեդ. բոգուս.—բայական ձևով Ագլ. Գոր. Ղրբ. պկա՛սիլ, երև. պա՛կսէլ, Տփ. պա՛կսիլ, Ննխ. բակսէլ, բաֆսէլ, Պլ. Ռ. բաֆսիլ, Ասլ. բա՛սիլ ևն։ Նոր բառեր են պակասիկ, օրպակաս, պակսորդ, պակսուցք։

ՓՈԽ.—Թրք. գւռ. կս. bagas «պակասամիտ, անխելք». օր. sen-de bagas bir adam sən «դու էլ անխելք մի մարդ ես» (Բիւր. 1898, 713). Համմ. Էնկիւրիի Թրքախօս Հայոց բարբառով bagas «փախուկ, խեննթուկ» (Բիւր. 1898, 865)։—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է դնում ալբան. pakė «քիչ»!

ՊԱԿՇԵԼ «յաղթել». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 262։ Հաւանաբար նոյն է, ինչ որ

պակշիլ, *կամ մանաւանդ* պակշեցուցանել, *որ տե՛ս* պակշոտ:

ՊԱԿՇՈՏ *(որ և* պագշոտ*)*, ի–ա *հլ. «ցոփ, շռայլ, լիրբ, անառակ» Ոսկ. յհ. բ. 15 և խչ. Ագաթ. որից* պակշոտիլ *Առակ. է. 10. Մծբ. 228. Ոսկ. մ. բ. 9 և Երր. փարպ.* պակշոտութիւն *Ոսկ. յհ. բ. 13. Պիտ.* պակշոտեցուցանող *Լմբ. իմ. սրանց արմատական ձևն են ներկայացնում* պակշիլ *«զմայլիլ տեսքից» Լմբ. իմ.* պակշեցուցանել *«զմայլեցնել» Լմբ. իմ. որոնք ենթադրել են տալիս* պակշ–(պակիշ *կամ* պակուշ*) արմատը. որով* պակշոտ *կազմուած պիտի լինի* –ոտ *մասնիկով:*

Աւետիքեան, Քերակ. 1815, 235 –շոտ *մասնիկով* պագանել *բայից, իբր «համբուրելու հետամուտ». Հմմտ.* լեզուաշոտ: *ՆՀԲ «պակուցեալ և ափշեալ շուայտութեամբ կամ որ պագանէ զօշոտութեամբ»: Էմին, Քերակ. էջ 51 նոյնպէս* –շոտ *դնում է մասնիկ, որով արմատը* պակ: Lauer *(տե՛ս Տէրվ.* Altarm. *էջ 39)* պագանել *բայից: Տէրվ.* անդ՝ (fß)–fուշ, (փաղա)fուշ *բառերի* fուշ *արմատին միացնելով՝ դնում է* gus *ձևից. Հմմտ. լտ.* gustare, *գոթ.* kiusan, kausyan, *յն.* γεύω «ճաշակել»: *Հիւնք. յն.* βαχχεύω «անկդիտանալ ի հնչուածինն մարմնոյ»:

ՊԱԿՈՏԻՍ «ասեղ». *ունի միայն Բառ. հրեմ. յաւել. Գէորգ դպրի, էջ 556:*

*ՊԱՀ, ու *հլ. «պահելը, պահպանութիւն. 2. գիշերային պահպանութեան մէկ հերթը, որ է երեք ժամ. 3. ժամանակ. 4. բանտ, բանտարկութիւն» ՍԳր. Եւս. քր. Սեբեր. Բուզ. Եփր. Թգ. Ոսկ. ես. Ագաթ. «մէկ ժամ» (օրը ունենալով 24 պահ) Մխ. բժշ. (տե՛ս* Seidel § 170). *որից* պահ դուռն *«կապան, դարբանդ» Եղիշ.* պահիճ (ո *հլ. յգ. գրծ.* պահիով *Եփր. Համաբ. 192, բայց աւելի* պահիօճ*) «կերակուրներից ժուժկալութիւն» ՍԳր. Կոչ. Ոսկ.* պահել *«պահել, պահպանել, ծածկել, զգուշանալ, պաս բռնել» ՍԳր. Ագաթ. Բուզ.* պահանիճ *«բանտարգելութիւն» Ոսկ. մ. ա. 14, էջ 207.* պահայոյզ *«գիշերապահ» Ոսկ. մ. բ. 10.* պահանուող *«պահապան» Նեհմ. դ. 9. Ոսկ. յհ. բ. 32. «ուղտապան, ջրեպան» Վրք. հց. «համայեակ, յուռութք» Յայսմ.* պահարկել *Ագաթ.* պահեստ *ՍԳր. Ագաթ.* պահնակ *ՅՀ. կթ. Մխ. անեց. 34.* պահպահ *Սոկր. էջ 274.* գիշերապահ *ՍԳր. Ոսկ. մ. գ. 31. Ագաթ.* շաբաթապահ *Բ. մն. իգ. 4. Կոչ. Մծբ.* դժուարապահ *Սեբեր. Ոսկ. եփես.* եռեղապահ *Բուզ.* գանձապահ *Ա. մն. իբ. 1.* աննձապահապետ *Ա. թագ. իբ. 1.* ժամապահ *Վեցօր. Մծբ.* խորհրդապահ *Փարպ.* կողմնապահ *Բ. մկ. ժբ. 32.* կենդանապահ *Եզն.* խոհանապահ *Բուզ.* թիկնապահ *Խոր.* խառամապահ *Գ. մկ. ե. 24.* ցերեկապահ *«ցերեկուայ պահակութիւնը» Նորագիւտ Ա. մնաց. թ. 23.* դռնապահ *Բ. մկ. ժգ. 15.* անվերապահ, անվերապահօրէն, անապահպանութիւն *(նոր բառեր) ևն. նոր առումով ունինք մհյ.* պահ *«յղի»,* պահնալ *«յղիանալ» (երկուսն էլ ձիու և շան համար ասուած) Վստկ. 202, 221. առանձին տե՛ս* պահակ, պահապան, պահակապան, պահակեր, պահանգ:—*Բառիս հնագոյն ձևն է պարհ, որ ոսկեդարեան գրականութեան մնացորդների մէջ էլ մի քանի տեղ պահուած է. այսպէս՝* պարհիճ *«պահք, պաս» Եփր. ա. կոր. 60, 68, 80.* պարհել *«պահել» Բ. մկ. գ. 1. Յոբ. իդ. 15. Եփր. հռ. 17, 31, 46. ա. կոր. 62, 65, 68. գ. կոր. 117. Կըրկնագիր Ագաթ. 75 բ. ուր և ունինք* պարհեսցէ, *50 բ.* պարհեաց *73 ա:*

=ՊՀլ. *pahr ձևից, որ յատուկ էր Հիւս. գաւառականին և որի դէմ միւս բարբառներում գտնում ենք* pās. *այսպէս ՊՀլ.* pās *«պահպանութիւն», պրս.* pās *«պահպանութիւն, 2. գիշերային պահ, որ է 3 կամ 1½ ժամ», սրա հետ նաև պրս.* pahr *«քառորդ բաժին տունջեան և գիշերոյ», սոգդ.* pāθ⁰r *«պահպանութիւն, պաշտպանութիւն», զնդ.* pāθra *«պահպանութիւն» (*Horn § 274*). բոլորն էլ կազմուած են* pā- *«պահել» արմատից՝* -θra *մասնիկով:—Հիւբշ. 217:*

ՆՀԲ պարհիճ=*պրս.* փէրհիզ: Windisch. 15 pā *«պահել» արմատին ազգական է դնում: Նոյնը նաև* Lag. Urgesch. 115: Müller SWAW 42, 256 spaç *արմատից. Հմմտ. լտ.* spec-: Justi, Zendsp. 188 *անս. և զնդ.* pā: Mül-

ler, Kuhns u. Schleich. Beitr. 3, 88 *պրս.* pās *ձևի հետ*։ Lag. Gesam. Abhd. 8, 25 *և* Btrg. bktr. Lex. 58, 74 *զնդ.* pāθra *և պրս.* pās *բառերի հետ*։ Ascoli-Schweizer KZ 17, 136 *հին իրան.* pād *արմատից*։ Müller SWAW 78, 425 *ո՛չ թէ* pā, *այլ զնդ.* pāθra- *բառին պէտք է միացնել։ Այսպէս նաև* Lag. Arm. Stud. § *1792, իսկ § 1818 պաս ձևը (որ գրբ. պաես հայցականից է յառաջացած) կցում է պրս.* pās-bān «պահապան» *բառին։ Մորթմանն* ZDMG *26, 528 բևեռ.* pakha «պահ»։ *Տէրվ. Նախալ. 91* pā «պահել» *արմատից։— Հիւնք. պրս.* բէհրէ, բէհրիյզ։—Karst. *Յուշարձան 406 պահ «յղի» կցում է սումներ.* pah, pag' «առաւտ՝ բերրի լինել» *բայինն։ Մարտիրոսեան ՀԱ. 1924, 458 ասում է թէ կապ չունի հաթ.* pāimi «պահեմ» *բայի հետ*։

ԳԻՒ.—1. Ախց. Գոր. կր. Ղրբ. պաՒել, *Ագլ. Շմ. Տփ.* պաՒիլ, *Ալշ. Մշ.* պայել, *Երև.* պՒել, *Ջղ. Սլմ. Վն.* պախել, *Մրզ.* պախէլ, *Մկ.* պախիլ, *Սչ.* բաՒել, *Պլ. Ռ. Սեբ.* բաՒել, *Ննխ.* բայէլ, *Ասլ.* բայէ'լ, *Ակն.* բայՒիլ, *Տիգ.* բոՒել, *Հճ.* բէՒել, *Զթ.* բէՒիլ, *Խրբ.* բէյիլ, *Համշ.* բէՒուշ, *Սվեդ.* բիՒիլ, *Աժռ.* փայէլ.—*2. Գոր. Ղրբ. Ջղ.* պաf, *Ակն. Խրբ. Պլ. Ռ. Սեբ.* բաf, *Ասլ.* բաf, բա*, *Տիգ.* բոf, *Ագլ.* պօf, *Զթ.* բօf, բոf, *Հճ.* բօf, *Սվեդ.* բիւf,— *Մրզ. Սլմ. Վն.* պախս, *Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Շմ. Տփ.* պաս, *Համշ. Ննխ. Սչ.* բաս. —*3. Ակն.* բօյՒ «պահ, մի պահ», *Ասլ.* բայ մը, բայիգ «պահ մը, պահիկ», *Ննխ.* բամալ «մի քիչ առաջ» (<պաՒ մի այլ), մէկբանիգլեն «մի քիչ յետոյ» (<մէկ պաՒիկ-էն)։— *Նոր բառեր են* պաՒառան *(որ Ջղ. դարձած է* պարան «նամակի ծրար, պահարան՝ բստ Արևմտահայ գրականի), պաՒենի, պաՒեստէն, պաՒծու, պաՒվոխ (Ննխ.* բօՒօղվէլ, բօՒըդվէլ, բօղօդվէլ, *Ակն.* բայՒմըննդիլ), պաՒկուխ *(Սլմ.* փախկվել, *որ կարծեմ փախշիլ բայի ազդեցութեամբ նախաձայնը դարձրել է փ),* պաՒման, պաՒուՒի, պաՒուկ, պաՒոցել, պաՒպՒել, պաՒպրտել, պասակեր, պասաՒարիլ, պասալուայ, պասաՒան, պասաոն, պասնուտ, պասուց *են։—Էնկիւրիի Բրքախօս հայոց մէջ մնում են* bak «պահք», bak-baba «մոռմոռաս, ախացկէ», baharanǰə «լուսարար» *(որ եկեղեցու պահարանն է պահում. Բիւր. 1898, էջ 865), իսկ Սղերդի արաբախօս քրիստոնեաներն ունին* pze «պահէ՛» *(Բիւր. 1899, էջ 116)։*

ՊԱՀ «քաջ, լաւ». *անստոյգ բառ, որ գրտնւում է միայն* պաՒապէս «քաջապէս» *ձևի մէջ. այս վերջինն էլ գիտէ միայն Բառ. երեմ. էջ 263։*

**ՊԱՀԱԿ «պահապան, ոստիկան» Բ. Թագ. ը. 6, Ագաթ. Եփր. փիլիպ. 156. «պահապանող, խնամակալ» Ոսկ. մ. գ. 14. Եփր. Համաբ. «կապան, ամուր կիրճ» Ագաթ. Եղիշ. Փարպ. որից* պաՒակ ունել *կամ* պաՒակ վարել «բռնի և ձրի աշխատեցնել» *Մաթ. իէ. 32. Մրկ. ժբ. 21. Ոսկ. մ. ա. 18. Սեբեր.* պաՒակել «պահպանել» *Ոսկ. կողոս.* պաՒակափոխ *Կոչ. 238.* պաՒակաՒոց *(նոր բառ). կրճատմամբ՝* պաՒկութիւն «բռնի աշխատանք» *Ոսկ. մ. դ. 8. Հին ձևն է* պարՒակ, *ինչպէս որ աւանդուած էլ է* պարՒակ «բերդ». *Նորագիւտ Ա. մնաց. ժբ. 6, 13.* տարապարՒակ *Մաթ. ե. 41.* դառնապարՒակ *Թէոդ. կոյս.։ Այստեղ են պատկանում նաև* անպաՒակիկ «հեղգակ, դանդաղկէ» *Սեբեր. 185.* ըմպաՒկել «ընդվզիլ, հետեւել, անհնազանդ դտնուիլ», *որ և գրուած է* ըմբաՒկել, ըմբպաՒկել, ըմպՒկել, ըմբՒկել, ամպաՒակել, ըմբաՒակել, ըմպաՒակել, ընդպաՒկել, ըմբարՒակել, ըմպարՒակել) *Փիլ. Ոսկիփ. Պիտ. Մագ. գամագտ.* ըմպաՒակոտ «անսանձ, ապստամբ» *Գիրք Թղ. 189 (նորագիւտ բառ)։*

=*Պհլ.* *pāhrak *բառից, որ է զնդ.* pāθra- «պահպանութիւն» *(տե՛ս* պահ *բառի տակ). սրանից ունինք հիւս.-արեմ. պհլ.* pāhragbed «պահակապետ, haupt der Wache» *(գրուած* מאתרגביך *Թուրֆանի վաւերագրերի մէջ՝* Salemann ЗАН *8 (1908), էջ 108 և* MSL *17, 245), պրս.* پهره pahra «գիշերապահութիւն», pahradār «պահապան», *աֆղան.* pahra «գիշերապահ, պահակ. 2. պահականոց, պահապանի աշտարակ», pahradār «պահակ», *բելուճ.* pahrā

«պահպանութիւն» (Horn § 341). տե՛ս նաև յաջորդը։—Հիւբշ. 217։

Առհասարակ դրած են պահ արմատից՝ իբրև հայկական կազմութեամբ։ Lag. Arm. Stud. § 1793 պրս. pahra: Պատկ. Матер I, 13 բաժանելով պահ արմատից՝ կցում է պհլ. pahāk «ճամբայ» բառին։ Հինք. պահակ=պրս. բէյիկ «սուրհանդակ» բառից, իսկ ըմպահիկել՝ խմբակից բառից։

Գիւմ.—Պահուած է թերևս պահկուփլ, պահկիլ, պահկոսփլ, պահկուց, պահկուցիկ, պահկվուկ ձևերի մէջ։

Փոխ.—Վրաց. პაჰრაკი պահրակի (Մառ Иппол. 62 և ЗАН 8, 108), პარაკად պարակադ (Մարկ. ժե. 21) կամ პაჰრაკად պահրակադ (Մատթ. իէ. 32) «բռնի, պահակ վարելով», որոնք տառադարձուած են հայ թարգմանութիւնից, ուր նոյնպէս երկու տեղում էլ գտնում ենք պահակ (համմտ. ի մէջ այլոց Աճառ. Արրտ. 1898, 367 բ և յետոյ Մառ ЗВО 11, 170)։—Իբրև վայրանուն ձորայ կամ վիրոյ պահակի՝ յիշուած է օտար մատենագիրների մէջ. ինչ. յն. Βιρπαράχ և ասոր. ܘܝܪ ; ܦ ܪ ܟ Vīrūpahrag (ZA. 1922, 157)։

*ՊԱՀԱԿԱՊԱՆ «պահակ, պահապան» Բ. Թգ. ը. 14. Եւս. պտմ. գ. 6. Ոսկ. ա. Թես. ա. հին ձևն է պարսկապան «բերդապահ» Նորագիւտ Ա. մնաց. ժը. 13 կամ ճ-ի անկումով էլ՝ պարեկապան «դէտ, պահնորդ» Ա. մկ. ժբ. 27։

=Պհլ. *pāhrakpān «պահապան» բառից, որ կազմուած է pāhrak և pān բառերից։ Այս պհլ. ձևը, ինչպէս նաև նրա ներկայացուցիչ պրս. *pahrabān չեն աւանդուած գրականութեան մէջ. բայց նոյնն են հաստատում իրանեանից փոխառեալ ասոր. pahragbān «պահպանութիւն», թալմ. מרחגבא parhagbanā «ոստիկանական տեսուչ» ձևերը։—Հիւբշ. 218։

Առհասարակ միացրել են նախորդին՝ հայկական մի ածանց համարելով։

*ՊԱՀԱԿԵՐ, ի–ա հլ. «պահող, խնամող, անուցիչ» Եւս. լգ. 18 (որ Գէ. եւս. մեկնում է «դիշերապահ»)։

=Պհլ. *pahrkar «պահապան» ձևից, որ բարդուած է pahr «պահ» և kar «գործել» բառերից։—Աճ.

Peterm. 25 հլ. պահ բառից՝ -կեր մասնիկով։

ՊԱՀԱՆԳ կամ ՊԱՀԱՆԿ (սեռ. փ) «պատր ամուր պահելու համար մէջն ագուցուած գերաններ» ՍԳր. Եփր. Թգ. 423. Վեցօր. 169. Ոսկ. ես. և կողոս. 579. Մծբ. 39. «զրահ, պահպանակ» Թղթ. դաշ. որից պահանգակապ Սիր. իբ. 19. Մծբ. 39։

Նշբ «անկուած առ ի քաջ պահել, կամ ի պահել անկ», Lag. Urgesch. 378 sanǰ արմատից։ Հինք. վահան բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 307 պրս. وهنگ vahang «փայտեայ օղակ կամ շրջանակ՝ որ բեռների վրայ են անցկացնում՝ ամրապնդելու համար»։ Պատահական նմանութիւն ունի պրս. پهانه pahāna «դռան յետևի փայտէ սողնակը, նիգ, գամ»։

ՊԱՀԱՆՋ «բռնի ուղածը», արմատ առանձին անգործածական. գտնում է արդի գրականի մէջ՝ «առնելիք» նշանակութեամբ. որից պահանջել «բռնի ուզել, բռնադատել որ տայ» ՍԳր. պահանջանք Սերիր. Վեցօր. Եւագր. պահանջիչ Եւս. պտմ. պահանջող ՍԳր. պահանջումն Սիր. լգ. 42. Ոսկ. ես. զօրապահանջ Պտմ. աղէքս. ճշդապահանջ Ոսկ. գծ. հարկապահանջ Խոր. յորդորապահանջ Թէոդ. կոյս. օրէնսպահանջ Եւս. պտմ. ոգեպահանջ Գնձ. Նար. խստապահանջ, պահանջկոտ, պահանջատէր (նոր բառեր)։ Կրրուած է պարհանջել Եփր. երր. 204։

Նշբ «որպէս թէ զ'ի պահեստ հդեալն կամ զաւանդն և զփոխն յետս նահանջել»։ Հինք. պրս. պազխասբ (իմա bāzxᵘāst) հոմանիշից։ Meillet REA 1, 9 և II. 6 փոխառեալ իրանական կորած մի ձևից, որ կազմուած է pa- նախամասնիկով՝ պհլ. սոգդ. hanǰ, հպրս. զնդ. θanǰ «քաշել» արմատից. համմտ. պհլ. āhanǰītan, պրս. آهنجيدن āhanǰīdan «քաշել, յետ քաշել» (Bartholomae, Altir. Wört. 784—5, Horn. § 58, Gauthiot, Gr. sogd. 156), ինչպէս նաև

հյ. պա-կաս, պա-ճարաճէ, պա-ճար, նա-հաճջ:

ՊԱՀԱՆՋԱՆՔ *«ձեռքի ապարանջան». մէկ անգամ ունի Օրբել. ողբ. ժե. «Պահանջանքն իմոյ բազկին և ապարանջանքն իմոյս ոտին»:*

Պատահական նմանութիւն ունի բելուճ. āhinǰag *«կապ, գօտի»* (Horn, *§ 58, ծան.)*:

***ՊԱՀԱՊԱՆ,** ի-ա *հլ. «պահող» ՍԳր. Եւս. քր. «պահպանութիւն» Սղ. լր. 2. ճխ. 3. ա. մկ. (ստէպ). Եղիշ. «հմայիակ» Կանոն. որից* պահապանապետ *Պղատ. օրին. Պոմ. աղէքս.* պահապանութիւն *ճառընտ. կամ առանց յօդակապի՝* պահպան *Գ. մկ. գ. 16. Փիլ.* պահպանապետ *Եսթ. բ. 20.* պահպանակ *խոր. Կանոն.* պահպանութիւն *ՍԳր. Բուզ.* պահպանել *Փիլ. ևն: Բառիս հին ձևն է* *պարհապան:

=Պհլ. *pāhrapān*<զնդ.* *pāθrapāna- *բառից, որ կազմուած է* pahr*<զնդ.* pāθra *«պաշտպանութիւն, պահպանութիւն»+*pān *«պահող» բառերից: Վերի բառերը աւանդուած չեն թէև, բայց կան նրանց այլ գաւառական ձևերը. ինչ. պհլ.* pāspān*=պրս.* pāsbān *«պահապան»: Տե՛ս նաև* պահ*:—Հիւրշ. 217:*

Նշբ դնում է պահել *բայից՝ իբր հյ. ածանց:* Böttich. Arica 76, 252, Lag. Urgesch. 115, Müller SWAW 38, 575 *պրս.* pāsbān*:*

ԳԻՒ.—Գրականից փոխառութեամբ ունինք Ագ. Մշ. պահապան, *Երև.* պրեապան, *Մկ.* պոխոպան, *Պլ.* բահաբան *ձևերով՝ միայն «պահապան հրեշտակ», «Աստուած պահապան» ձևերի մէջ: Մինչև անգամ էնկիւրիի Բրքախօս հայոց բարբառում կայ* bahaban *«պահապան հրեշտակ». ինչ.* bahabanəm esirgedi *«պահապան հրեշտակս ինձ պահպանեց» (Բիւր. 1898, 865):*

Պահառ *տես Պակառ: Տակառ:*

***ՊԱՀԷՑ** *«բանջարանոց» Վրք. հց. բ. 496. Կեղծ-Շապհ. էջ 3. Արձ. 1215, 1266, 1348 ԹԹ. (Վիմ. տար. էջ 59, 110, 169). սրանից է նաև Բահիլաձոր աշխարհագրական անունը (Օրբել. 1861, էջ 268), որ ճիշտ այն է, ինչ որ այլուր* Պարտիզացփոր*:*

=Նոյն է պարտէզ *բառի հետ և ծագում է կա՛մ պհլ. գւռ. մի ձևից, և կամ հայերէնի մէջ* rտ*>*ճ *ձայնափոխութեամբ (իբր* եր-քալ*>*էճա՞լ*):—Աճ.*

ԳԻՒ.—Մկ. պախէզ *«բանջարանոց», Վն.* պախէզ *«սեխի, ձմերուկի և վարունգի պարտէզ», Մշ.* պաէզ *«տան առաջ բանջարանոց», Գնձ.* պիէզ *«բանջարանոց» (տե՛ս Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 39, 248): Սրանից են Վն.* պախէզպան *«պահէզը պահող մշակող անձը», և* պահէզիկ *«դպիրների գլխի կուլակը» (Քաջունի, հտ. Գ. 199):*

***ՊԱՀՄԻ** *«մի տեսակ որոմ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3387:*

=Արաբ. بهمن bahman*՝ նոյն նշ.:*

Այսպէս մեկնից ՀԲուս:

ՊԱՀՐԱՆ *«արօտատեղի»? Նորագիւտ բառ որ մէկ անգամ ունի Սմբ. դատ. 211. «Եւ զայլ անասնոցն վճնասն տեսնուլ պիտի և զպահրանն, նոյնպէս և զարծօղն»:* Karst *թարգմանում է «Weide, արօտատեղի»:*

***ՊԱՀՐԻՉ** *«պահք, պաս, ծոմ». մէկ անգամ ունի Զքր. ծործ. «Զի թէ պահէի զպահրէզ պահքն, իբր զանասուն պահէի և որպէս գայլազգի ճաշակէի»: (ԱՒ ջնջած է այս բառը): Նոյն է նաև* փահրիզ *«բժշկական ծոմ կամ պահեցողութիւն» Տաթև. ամ. 67. «Երեք իր պիտի առողջութեան. նախ ճարտար բժիշկ, երկրորդ՝ փահրիզն ի յառաջին ցաւոյն»:*

=Պրս. پرهيز parhēz *«զգուշութիւն ի կերակրոց, ժուժկալութիւն, ծոմ». սրա աւելի հին ձևերն են պազ.* pahrēǰ*, պհլ.* pāhrēč*, որ է զնդ.* paiti-raēč- *«թողնել, լքանել» կազմուած* paiti- *մասնիկով՝* raēk-, raēč- *«լքանել» բայից (ցեղակիցները տե՛ս Վիֆ): Պարսկերէնից է փոխառեալ նաև բրք.* پهريز pehriz*, որից ռմկ. փէյրիզ «բժշկական պահեցողութիւն»* (Horn, *§ 309):—*Հիւրշ. 274:*

Ուղիղ մեկնից նախ Նշբ:

ՊԱՂ *(ի հլ. ըստ Նշբ, բայց կայ միայն սեռ.* պաղի*) «սառոյց» Ոսկ. եփես. խոր. Ղեւոնդ. «ցուրտ, հով» Յայսմ. Գնձ. որից* պա-

ղիլ «սառչիլ» Ծլ. ժե. 8. Յոբ. զ. 17. Պտմ. աղէքս. «հովանալ» Յայսմ. պաղանալ Խոր. ճոռապաղ Պտմ. աղէքս. սառնապաղ Գնձ. պաղհաշ «ցուրտը իրեն քաշող» Վստկ. 159. պաղպաղակ «վանակնի և բիւրեղի նման թափանցիկ և փայլուն մի տեսակ քար» Վեցօր. էջ 51. Շիր. պաղլեղ «շիթ» Ւժշ. (բարդուած հոմանիշ լեղ բառի հետ), պաղաշ (Թերևս գրելի պաղակն) «մի տեսակ ազնիւ քար» Վանակ. հց. նոր գրականում պաղարիւն, պաղարիւնութիւն, պաղպաղակ «մարդծնի, ոտնտուրմա», պաղպաղակավաճառ «պաղպաղակ ծախող» են։

ՆՀԲ լծ. յն. πάγος «սառոյց», Թրք. pek «ամուր, պինդ» և լտ. pactus «տրնկուած»։ Հիմնք. յն. πάγος, πάχνη «սառոյց, պարզ, եղեամն»։ Bugge, Beitr. 34 և IF 1, 455 պաղպաղակ դնում է փաղփաղիլ բայից։ Petersson, Ar. u. Arm. Stud. 95 առնս. baṣṭa «ապուշ», Ֆրիգ. pal, pall «հաստատուն, անշարժ» բառերի հետ հնխ. bol-, bl̥- արմատից։

Գիւմ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Սլմ. Վն. պաղ, Ասլ. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Սեբ. բաղ, Տիգ. բող, Զթ. բօղ, բող, Հճ. բօղ, Սվեդ. բիւղ.—այս բառերը նշանակում են «սառոյց» (Երև. Վն.), «ցուրտ» (Պլ. ևն), «սառն» (Ախց. Կր.)։ Նոր բառեր են պաղապուր, պաղսիրտ, պաղբեռնիլ, պաղեռես, պաղեաճց, պաղպրակ, պաղլիկ, պաղլիճ, պաղլոռակ, պաղուլակ, պաղլուլակ, պաղկեկ, պաղշկիլ, պաղշտկիլ, պաղուկ, պաղսռտիլ։—Գւռ. պաղիլ նշանակում է նաև «աչքը անթարթ նայիլ» և այս իմաստով նըմանն է Թրք. طونوقلانمق donuqlanmaq (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 818) հոմանիշի կազմութեան, որ նոյնպէս ծագում է don «սառոյց» բառից, իսկ donuq «խուճացած»։

ՊԱՂ «փայլ, փայլիլն, ցոլք». արմատ առանձին անգործածական. սրանից են պաղապանճ «լուսափայլ, մաքուր, լուսապանճ» Հին բռ. պաղապանճական Անան. եկեղ. և կրկնութեամբ՝ պաղպաջ «փայլ, փայլիլն», որի վրայ տես առանձին։

+ՊԱՂ «քար», որ կայ միայն պաղանճաւ «քարանճաւ» բառի մէջ. Խոր.։—Տե՛ս Պալ։

Տաշեան ՀԱ 1926, 79 դրաւ գւռ. պալ «քար» բառից։

ՊԱՂԱԿ «ցնդած ծերուկ»? Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 234. «Լուաք թէ եկն պապն պաղակ (այլ ձ. պակ), Վարդանաստարն պիսակ, դիշերաբուն Բուլղարաց սպիտակափառն գեստրաս... պատուգարոսն պրաքսիս, սէգ գիշերեանն ճեմօղ»։ Խօսքը «չարաբաստ (քիչ յետոյ՝ վատաճամբաւ) ծերունի Նիկոլա» զօրավարի մասին է, որ կռուի էր եկել Վահրամ Պահլաւունու դէմ։ Այս Նիկոլան նախապէս բուլղարների վրայ էր գնացել (դիշերաբուն բուլղարների սպիտակափառ որսորդ)։ Մագիստրոս մի քանի անգամ ծաղրում է նրա ծերութիւնը. նախ կոչում է ծերունի Նիկոլա, երկրորդ՝ պապ, երրորդ՝ սպիտակափառ (սպիտակ մօրուսն ակնարկելով), չորրորդ՝ անժանի անկեռիճ փիղ (անասում) և վերջապէս՝ անասուն շիկորակ արջ։ Այս բոլորից յետոյ անպատեհ չէ կարծեմ պաղակ բառն էլ դնել «ցնդած ծերուկ», իբրև՝ =յն. παλαιός «վաղեմի, ծերուկ, զառամեալ» բառից կազմուած մի ձև։—Ա՛ճ.

Այսպէս տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 201—202։

Պաղակուտր տե՛ս Պղակունտ։

ՊԱՂԱՂ. առանձին չէ գործածուած և գտնուում է միայն միապաղաղ «միաձոյլ, միագանգուած, հարթ» Վեցօր. Խոր. «անշուք, պարզ» Ոսկ. յհ. բ. 39 բառի մէջ։

ՆՀԲ մեկնում է «պաղելով պաղեալ և եղեալ մի»։

*ՊԱՂԱՆ «համեհ, քամբ» Յայսմ. փետր. 6 (երկիցս). Առաք. պտմ. 330, 331 (կուրդինն, որ է պաղանն). որից պաղանել «համեհել» Վրք. հց. ա. 496. պաղանաւոր «ձիաւոր» Կաղանկտ. պաղանակար «համեհագործ» Դրնդ. 324։

=Պրս. پالان pālān «համեհ», որից փոխառեալ են նաև Թրք. palan, վրաց. ბალანი պալանի և ფალანი փալանի հոմանիշները։ Բառիս ստուգաբանութիւնը և հին ձևերը յայտնի չեն։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՊԱՂԱՏ «քաղաքանձանք, աղաչել խնդրելը».

մէկ անգամ գտնում եմ գործածուած այս արմատական ձևով աղաչաճ և պաղատ կրկնականի մէջ՝ Եփր. յես. էջ 317 (որի հետ համմտ. գւռ. աղաչ-պաղատ). նոյն արմատից են կազմուած պաղատիլ «աղաչել, թախանձել» ՍԳր. «լալով աղաչել» Մանդ. Շար. պաղատանճ ՍԳր. պաղատախառն Մծբ. պաղատումն Խոսր. Նար. Արծր. պաղատատուր Սկևռ. աղ. աշխարհապաղատ Բուզ. բազմապաղատ ՅՀ. կթ. մեծապաղատ ՅՀ. կթ.—բառիս երկրորդ ձևն է պաղէտ «աղաչանք» Մծբ. էջ 305, 339. Եփր. յես. էջ 317 և մնաց. էջ 475 (ըստ այլ ձեռագիրների. համմտ. ՀԱ 1911, 504 և 1912, 547)։

ՆՀԲ «թախանձել յաղեաց վասն աղետից»։ Աճառ. Արրատ. 1911, 418 համեմատում է լազ. պալակար, օպալակարու «խնդրել, աղաչել» բառի հետ։ Այժմ սակայն գտնում եմ որ սոյն լազ ձևը փոխառեալ է նյն. παρακαλῶ «աղաչել, պաղատիլ» ձևից (ρ-λ>l-r սովորական շրջմամբ), որով ո՛չ մի կապ չունի հայերէնի հետ։

ԳԻՒ.—Մրղ. պաղատ, Տփ. պաղատիլ, Ախց. պաղատէլ, Ննխ. բաղադէլ, Սվեդ. բողդիլ, Ախց. Երև. Շմ. Ջղ. պաղատանճ, Ղրբ. պղա՛տանճ, Տփ. պաղանտամ, որից կրկնութեամբ Երև. Մրղ. Սլմ. Շմ. աղաչ-պաղատ լինել, Սեբ. ախջէլ-բաղդէլ «շատ աղաչել»։

ՊԱՂԱՏԻԼ «պատատիլ, կապիլ», ունի միայն Բառ. երեմ. էջ 263։

*ՊԱՂԱՏԻՆ «տափակ նաւ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սոկր. եկեղ. պատմ. 669. «Նաւն ծանրաբերձ որ զմեծամեծսն բերէ սիւնս, պաղատին զնա անուանել»։

=ՅՆ. πλάτη նոյն նշ. բնագրում դրուած է հյց. πλατήν, որից և տատադարձուած է մեր ձևը։

Ուղիղ մեկնեց Մեսրոպ եպս. հրտր. Սոկր. էջ 669։

*ՊԱՂԱՏԻՏ, ի–ա հլ. «չոր թուզ» Ա. թագ. իե. 18, լ. 12. Դ. թագ. դ. 42, ի. 7. ես. լը. 21. Նորագիւտ Ա. մնաց. ժբ. 40. (իսկ Յուդթ. ժ. 5 գրուած է յգ. գրծ. պաղատակօֆ, այլ ձ. պաղատակօֆ, պաղատակօֆ), Ոսկ. ես. 240. Եղիշ. դտ. 197։

=ՅՆ. παλάθη «չոր ընկոյզի, թուզի և այլ պտուղների կարկանդակ կամ շարոց». սրա նուազական ձևերն են παλάθιον, παλαθίς, παλαθίδος. վերջինը գրեթէ նոյնանում է մեր ձևի հետ։ Յոյն բառի ստուգաբանութիւնը անստոյգ է՝ ըստ Boisacq 740։—Հիւբշ. 369։

ՆՀԲ «նոյն բառ է և ի յն. բալա՛թի»։ Հիմնք. յն. παλάθη «կողով թզոյ», պրս. falāta «պտուղ չորացուցեալ, քաղցու թանձրացեալ, պաստեղ»։

Պաղլեղ տե՛ս Պաղ։

*ՊԱՂՄԱԿԱՆ «մի տեսակ երկրաշարժ, որ գետինը դողացնում է «Արիստ. աշխ. 615 (գրուած է տաղմական)։

=ՅՆ. παλματίας հոմանիշի համեմատ կազմուած է πάλμα «սասանում, դող» բառից՝ հյ. –ական մասնիկով։—Հիւբշ. էջ 370։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Պաղուն տե՛ս Անդուն։

—ՊԱՂՊԱՋ, ո հլ. «փայլ, ցոլք» Նար. տաղ. աւելի յաւ երևան է գալիս ածանցմանց մէջ. ինչ. պաղպաջել (գրուած նաև բաղբաջել) «փայլիլ, փայլփլիլ, ցոլալ» Ոսկ. ես. Եփր. վկ. արև. 94. պաղպաջուն «փայլփլուն» Ոսկ. մ. ա. 3. բ. 25. կող. ժդ. ՅՀ. կթ. պաղպաջումն «փայլ, ցոլք» Տօնակ. Տաղ. պաղպաջումբ «զարդարուն գահաւորակ» Ա. թագ. իգ. 5, 7. Նար. (Թրգմ. յն. λαμπήνη հոմանիշից, որ մեր թարգմանիչները կարծել են թէ ծագած է λάμπω «փայլիլ, ցոլալ» բայից, մինչդեռ սրա հետ ո՛չ մի կապ չունի)։ Արմատը պաղպաջ՝ նշանակում է նաև «մի տեսակ սպիտակ փայլուն վէրք, որ բորոտութեան սկիզբն է» Ղեւտ. ժգ. 2, 4, 24, ժդ. 56. «Նշան սպւոյ կամ պալար կամ պաղպաջ= οὐλὴ σημασίας τηλαυγης, պաղպաջն= τηλαυγὴς, և սպւոյ և պալարի և պաղպաջոյ =καὶ οὐλῆς καὶ σημασίας καὶ τοῦ αὐλάζοντος", որոնց մէջ թէև հայերէնը համընթաց չէ յունարէնի հետ, բայց պաղպաջ բառի համապատասխաններն են τηλαυγὴς, αὐγάζοντος, որոնք երկուսն էլ բուն նշանակում են «փայլուն, պայծառ»։ Ըստ այսմ հյ. «պալար,

վէրք» նշանակութիւնը կազմուած է յունարէնից թարգմանաբար։

=Կրկնուած է պաղ «փայլ» արմատից, որ տե՛ս առանձին. կրկնութեան ձեւի համար համմտ. դողդոջ, բողբոջ, պղպջակ, որոնց պարզ արմատներն են դող, բող, պուղ. համմտ. ՀԱ. 1899, 234աւ—Ա.Ա.

ՆՀԲ պաղ «սառոյց» բառից։ Հիւնք. փայլ բառից։

ԳԻՒ.—Ալշ. Բլ. Մշ. պրդրբճալ «փայլիլ, փայլփլիլ», ՆԲ. բ'խբ'ճալ «ծաղիկների գոյնըզգոյն փայլիլը»։

ՊԱՃԱՐ, ի–ա հլ. «նախիր, արջառ, եզ, կով, կամ լայնաբար՝ ամէն անասուն» Կանոնք սահ. 126. Տիմոթ. կուզ 327. Փիլ. Խոր. Պտմ. աղէքս. 13. որից պաճարարոյծ «հովիւ» Պիտ. պաճարամիտ «անմիտ» Լմբ. մատ. 56, 95. պաճարեղէն «անասուններ» Նիւս. կազմ. պաճարարօտ Փիլ. Ասող. պաճարապէս «անասնաբար» Անյ. հց. իմ. բաջապաճար Փիլ.։ Այս արմատից են գալիս նաև պաճարաճի «ինչք, ապրուստ, պաշարեղէն» Ագաթ. Պիտ. ՅՀ. կթ. Ղևոնդ. «ճար, ճարակ, հնարամտութիւն, հնարք» Ոսկ. մ. ա. 9. Փիլ. յովն. 590. պաճարի «հայթայթանք, միջոց, հնարք» Ոսկ. մ. ա. 22. պաճարել կամ պաճարիլ «հայթայթել, նիւթել, միջոց կամ հնարք դտնել» Ոսկ. մ. ա. 22. Փիլ. Պիտ. անպաճարան «անհնարին, շատ դժուար» Փիլ. իմաստն. նշանակութեան զարգացման համար համմտ. պախրէ։

ՆՀԲ պաճար «տուար» բառի համար ոչ մի բան չի յիշում է եբր. պաʃար «պախրէ». իսկ պաճարել՝ լծ. և նոյն թրք. beʃermek և ոմկ. ճարել։ Lag. Urg. 479 ճարակ բառի հետ։ Հիւնք. պաճար «տուար»=պրս. čārpā «չորքոտանի» (շրջմամբ), իսկ միւս նշանակութիւններով՝ վաճառ բառից։ Գազանճեան, Արևել. մատ. 1907, 934—5 պաճարել=թրք. beʃer-mek: Meillet, Rev. d. ét. arm. 2, 6 պա– մասնիկով իրան. ճար (čār), ճարակ (čārak) բառերից փոխառեալ։

ՊԱՃԻՏԱԿ, անստոյգ բառ. մէկ անգամ ունի Փիլ. եղ. 481. «Գիննզինութիւնք և խաղակերութիւնք՝ որ ի ձեռն անյագութեան և որովայնամոլութեան լինին, ի պաճիտակ լինելոյ գործեն հիւանդութիւն»։ (Ալգերեան լս. թրգմ. ob abusum expletionis զեղծումն գոհացման)։ ՆՀԲ մեկնում է «աւելորդ պաճուճանօք և հանդերձանօք յօրինեալն», ՋԲ «աւելորդ պաճուճանք կամ հանդերձանք կերակրոց», ԱԲ «աւելորդ զարդարանք կամ կերխում»։

ՆՀԲ պաճուճանի բառից։ Lag. Arm. Stud. § 1801 և էջ 182 առնս. upaċi, ասոր. ציר פ ş i d g? և պրս. guzīdan «ընտրել»։

ՊԱՃՈՒՃ «զարդ, զարդարանք. 2. զարդարուն» Բրս. ծն. Վրք. հց. ա. 192. Նար. կուս. Մագ. որից պաճուճել «պճնել, զարդարել» ՍԳր. Կոչ. Եփր. ծն. պաճուճան Ոսկ. ես. պաճուճանի ՍԳր. կոչ. Ոսկ. մ. ա. 12. և ես. Կիւրղ. թգ. պաճուճազարդ Վեցօր. պաճուճապատանի ՍԳր. նկարապաճոյճ Ագաթ. անպաճոյճ Վեցօր. բնդվայրապաճոյճ Ոսկ. ես. գեղապաճոյճ ՅՀ. կթ. լուսապաճոյճ Անան. նկեղ. Նար. թագապաճոյճ Վահր. յյտ. ևն։

=Հաւանաբար իրանեան փոխառութիւն է, ինչպէս ցոյց են տալիս կրկին ճ-երը. համմտ. սոգդ. p'γwčh «պաճուճեալ»։ Այս բառի ստուգաբանութիւնը ծանօթ չլինելով՝ յայտնի չէ թէ ինչի՞ց է յառաջ գալիս այս երկուսի մէջ γ և ճ ձայնների տարբերութիւնը և հետևաբար ի՞նչ է հայերէն բառի բուն մեկնութիւնը։

ՆՀԲ լծ. թրք. beze-mek «զարդարել»։ Մորթմանն ZDMG 26, 535 բևեռ. barçudibiduni մեկնում է պարապատուն կամ պաճուճապատան։ Հիւնք. պճնել բայից։ Աճառ. ՀԱ. 1899, 233 իբրև կրկնական՝ *պաճ արմատից. համմտ. պարոյր, փաթոյթ, պատուտակ։ Վերի մեկնութիւնը տուաւ Meillet, REA 2, էջ 5։

ՊԱՅ (ի հլ. բաս ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «առասպելական մի էակ, որ մարդուց է յառաջանում և երէկների հետ է արածում» Եզն. 98, 99 (և զպայն իմն ի մարդկանէ. ի մարդկանէ ելեալ պայն. Զպայն իսկ). Ոսկ. պօղ. Ա. 602. Եղիշ. հրց. էջ 50. որից պայիկ (յիշում է ՆՀԲ պայ բառի տակ՝ իբր համանիշ, բայց առանց վկայութեան. տարբեր է պայիկ «պահապան», որ

տես առանձին). մարդապայ fաղ Ոսկ մ. ա. 4. էջ 58 (ձեռ. վարդապայն fաղից. այսպէ՛ս է սրբագրում Հ. Ա. Բագրատունի, Որատիոսի Ար. քերթ. էջ 31, որ ընդունում են նաև Նորայր, Քննասէր Ա. էջ 10 և Գալեմքեարեան, Մասիս 1900, 403), նաև Պայապիս Քաղեայ յատուկ անունը՝ խոր. Ա. ժդ. (կազմուած պայ+ապիս (կովը) և fաղ բառերից՝ ըստ Աճառ. Արրմ. 1912, 838, իսկ ըստ Markwart, REA 8 (1928), 221 եգիպտ. παάπις անունից, որ էր Հայր իմաստունն Ամենովփիսի)։—Եղնիկի առաջին վկայութեան մէջ (զպայն իմն) չի կարող պայն լինել որոշեալ ձև՝ յաջորդ իմն անորոշի պատճառաւ. ուստի պէտք է ենթադրել պայ բառի հետ նաև պայն ձևը, որ հաստատւում է նաև տակի գտ. ձևերով (տե՛ս այս մասին Աճառ. REA 3, էջ 7)։

Հիւնք. պայիկ=պրս. պիուք բառից, որ է بیوک biyūk «հարսն». հմմտ. յատբժանարան. կրճատեալ ձևով պայ: Ե. հպս. Դուրեան, Մասիս 1900, 436 լտ. pan «սրինգը հնարող առասպելական էակը»։ Գալէմքեարեան, անդ 475 արիական pāti «պահապան» ձևից։ Ալիշան, Հին հաւ. 185 վարդապայ կոչում է հնդ. վարտապա՛յ ձայնարկութեան հետ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 310 պարիկ բառի՞ց։ Mariès, REA 3, 7 յօդուածիս առթիւ խօսելով՝ ՀԱ, 1927, էջ 767—72, հաստատում է պայն ձևը և գտնում է որ հակառակ օրինակները արժէք չունին. այսպէս պայ Ոսկ. պօղ. Ա. 602 յետին նորամուծութիւն է, որ չկայ յունարէնում, մարդապայ սրբագրում է մարդասպան, իսկ ՆՀԲ-ի պայիկ բառի գոյութիւնը ժխտում է։

ԳԻՒ.—Ագլ. տնպայն, Աստ. տնպան «տան պահապան բարի ոգի»։ (Ագուլիսի բարբառում հին հյ. այ մնում է այ և չի վերածւում ո՛չ ա և ոչ է. օր. հայր, մայր, փայտ>Ագլ. հայր, մայր, փայտ)։

*ՊԱՅԱԶԱՏ, ի–ա հլ. «ժառանգորդ, ցեղի մնացորդը, յաջորդ, գահաժառանգ» Նւս. քր. Ոսկ. մ. ա. 9, 17. «ազնուատոհմ» Նար. Կեշառ. աղէքս. որից պայազատել «իշխանութիւնը յաջորդութեամբ առանալ, յաջորդել» նւս. քր. խոր. «տիրել, իշխել» ՅՀ. կթ. պայազատութիւն նւս. քր. անպայազատ «բնաջինջ եղած, սերունդը անճիտած» խոր. յարմարեալ ձև է պայ-ազն Մագ. թղ. 63 «սինլրքոր» (ըստ ՆՀԲ), «իշխան» (ըստ ԱԲ)։

=ՊՀլ. *payāzāt ձևից, որ է հպրս. *patiāzāta «յաջորդ յազատութեան, որ է ազնուականութեան», կազմուած pati մասնիկով՝ āzāta- «ազատ» բառից։—

ՆՀԲ «լծ. փայէ և զաթ (իմա՛ պրս. پایه pāya «պատիւ, աստիճան» և արաբ. ذات dāt «անձ»). ուստի առ մեօք առին ոմանք որպէս պէյզատէ»: Lag. Arm. Stud. § 1802 վերջի մասը դնում է պրս. zād=zāda «ծնեալ»։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. դրակ. 205 պրս. بکزاد beyzād, بکزاده bey-zāda «բէկի ծնունդ»։ Müller WZKM 10, 356 pat- մասնիկով zāt «ծնեալ» բառից՝ ընդունելով պայազատ՝ իբր «agnat» նշանակութեամբ։ վերի մեկնութիւնը տուաւ նախ Ա. Խաչատրեան (անձնական. նամակ առ Հիւբշ. 1898 թ.)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 310 մերժելով իր առաջին կարծիքը (ըստ որում بی bäy, beg թուրքերէն է), դնում է պայ «պարիկ»+զատ, իբր թէ «պարիկներից ծնեալ՝ քաջ»։ Նոյնը՝ Հայ-երան. Ուսումն. էջ 83 դարձեալ փոխելով իր կարծիքը՝ պհլ. vehzād= պրս. بهزاد behzād «վեհածին»։ Անկախ Խաչատրեանից՝ վերջին անգամ վերի ձևով մեկնեց Benveniste ՀԱ 1927, 762։

ՊԱՅԵԼԻ «պրակ փոքր». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 263։

ՊԱՅԵԿԵԱԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Յիշատ. «Գլորեալ ի մեղս և դեռ ևս ի նոյն շարաւահոտ բազմախայթ վէրս պայեկեալ նստիմ»։

ՆՀԲ մեկնում է «որպէս պառակեալ, պառկած, եան եկած»։ ԱԲ պայեկել «սպասել, մնալ. 2. ծառայել, որով ուզում է հանել պայեկ, պայակ բառից։

ՊԱՅԹ «ճաքիլ տրաքուիլը, լիութիւնից ճղուիլը». արմատ առանձին անգործածա-

կան, որից կազմուած են պայթիլ Դան. ժդ. 26. Ովս. ժդ. 1. Բուզ. դ. 44. Եփր. թգ. պայթուցանել Իմ. դ. 19, Մրկ. բ. 22. Ղկ. ե. 37, Եփր. աւետ. 266. պայթումն Մծբ. պայթիւն Եփր. աւետ. և եւ. էջ 186. Ոսկ. յհ. ա. 1. պայթեցուցանել Մեկն. ղկ. պայթնուլ Գիրք մոլ. պայթուիլ Պիտառ. անպայթելի Շիր. պայթուցիկ, պայթական, կիսապայթական (նոր բառեր)։ Սրանից է նաև պայթիմ. համմտ. այոիմ պայթիմ (տե՛ս այս բառը) «երդ հարբեցութեան» Ոսկ. եփես. 733. կայթիմ և պայթիմ «խաղ ու պար» Ոսկ. հռոմմ. 251։

ՆՀԲ (ճայթել բառի տակ) լծ. թրք. փաթլամաք «պայթիլ»։ Bugge IF 1, 455 հնխ. bheid- «ճեղքել» արմատից. համմտ. սանս. bhēdá- «կոտրիլը, ճայթիւն», bhid-, bhinátti, bhédati «ճաքիլ, ճեղքել», bhēdaya- «ճեղքել, կոտրել». և կամ ազդական պախումն բառի հետ։—Հիւնք., Դազանճեան, Արև. մամ. 1907, 934—5 և Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 տճկ. փաթլամաք «պայթիլ»։ Walde 299 և Pokorny 2, 139 չեն ընդունում Bugge-ի մեկնութիւնը՝ դնել bheid- արմատից։

*ՊԱՅԻԿ, ի-ա հլ. «բերդի պահապան, պահակ զինուոր, հետիոտն զինուոր» Խոր. Գ. 36. Փարպ. Ղևոնդ. ժ, էջ 37. Ասող. 126. գրուած նաև պայեկ Օրբել. պաեկ Մնաց. եր. պայակ Խոր. Գ. 36 (մի ձեռ.)—Նոր ձևն է փայիկ «ոտքով վազող սուրհանդակ» լծ. նար. («Սուրհանդակ, փայիկ և այնոքիկ՝ որ առաջի պարոնաց վազեն ոտիւք, յորժամ պարոնն ի ձի նստանէ»)։

=ՊՀլ. paik «սուրհանդակ», paikān «հետևակ զօրք», պրս. پیک paig «սուրհանդակ և թղթաբեր», հին նշ. «հետիոտն, հետևակ զինուոր, ոստիկան, դահիճ», paigān -sālār «ոստիկանապետ», սանս. padika- «հետևակ զինուոր». պրակր. pāikka: Այս բոլորը ծագում են սանս. pad-, զնդ. paδ-, պրս. پای pāy «ոտք» բառից, որի հայ. ցեղակիցներն են ճետ-ի և ոտն: Իրանեանից են փոխառեալ նաև ասոր. ܦܝܓܐ paigā «հետևակ զինուոր», արաբ. فيج faiǰ «թղթատար, սուրհանդակ», վրաց. პაიკი պաիկի, ფაიკი փաիկի «արագընթաց, արագոտն, скороходъ. 2. ճամբորդի խաղի մէջ հետևակը» (Horn § 359)։—Հիւրշ. 220։

ՆՀԲ նոյն ընդ պաեակ, լծ. պրս. paik: Böttich. Rudim. 50, 189 ասորին դնում է պարսկերէնից։ Նոյն, ZDMG 1850, 360 հայ բառը կցում է սանս. և պրս. բառերի հետ։ Ուղիղ են նաև Böttich. Arica 80, 342, Lag. Ges. Abhd. 74, Պատկ. Изслед. 12, Матер. II, 25։

*ՊԱՅԼ «ֆրանկների կողմից Կիլիկիոյ Հայոց մեծ իշխանին տրուած պատուոյ տիտղոս» Հեթմ. պտմ. Յիշատ. Վահր. ոտ. 210. Մխբ. պտմ. Սամ. անեց. շար. 148. «պարոնի կամ ասպետի փոխանորդը» Անսիզք 9, 39. որից պայլութիւն Անսիզք 11—17, Մխ. աս. 514, Պտմ. կիլ. 207։

=Հֆրանս. bail «կառավարիչ, հսկող, դատաւոր», ֆրանս. baile «խնամակալ, դեսպան վենետկեցոց ի Պօլիս», bailli «ոստիկան դատաստանաց, դատաւոր», bailliage «դատաւորութիւն, սահման դատաւորի. 2. տեղան, տուն դատաւորի», իտալ. bailo, balio «կառավարիչ, դատաւոր», balia «իշխանութիւն», balioso «զօրեղ, հզօր», որից նաև թրք. بالیوز balyōz «դեսպան վենետկեցոց ի Պօլիս», ռմկ. պալեօզ «մեծահարուստ անձնաւորութիւն»։—Հիւրշ. 390—1։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ, նոյնը յետոյ Peterm. ZDMG 15(1861), էջ 403։

ԳԻՒ.—Տե՛ս բել։

ՊԱՅՄԱՌ (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «փայլուն, լուսաւոր, վճիտ, փխբ. շքեղ, փառաւոր» Յակ. բ. 2, 3. Սիր. իթ. 29, լգ. 13. Յայտ. ժե. 6, իբ. 16. որից պայծառանալ Իմ. գ. 7. Յուդթ. ժ. 4, Եւս. քր. պայծառագեղ Ոսկ. ես. Եփր. թգ. պայծառագոյն Եզն. պայծառագգեաս Եփր. թգ. պայծառարև Վեցօր. 163. պայծառանշան Ագաթ. պայծառացուցանել Եւագր. համապայծառ Ագաթ. Ոսկ. փիլիպ. մեծապայծառ Ոսկ. մտթ. Սեբեր. Վեցօր. Եւս. քր. Եփր. թգ. ծաղկապայծառ Բէռփ. պհ. Մաշտ. լուսապայծառ Նար. Շար. պայծառակերպ (նորագիւտ բառ) Հայել. 295 եև։

Klaproth, As. polygl. *101 արաբ.* بيضة baiḍa *«ապիտակ» և գերմ.* weiss *«ապիտակ» բառերի հետ*; Bugge, Beitr. *33 լեթթ.* špihguloth *«փայլիլ» բառին է կցում։ Հիմնք. արաբ.* պէյզա *«ապիտակություն»,* պէյազ *«ապիտակ»։ Տես* ИАН *1909, 1155 –ատ մասնիկով (համմտ. երկ-ար և արդ-ար) պայծ բառից՝ որ փոխառեալ է վրացական մի լեզուից. տե՛ս պերճ, համմտ. գուռ. պէծ «կայծ»։ Նոյն* ИАН *1920, էջ 106 պայծ արմատը նոյն է դնում պարծիլ, կարծ և կայծ բառերի հետ։*

ԳԻՒ.—Տփ. պա՛յծառ, պօ՛յծառ, *Շմ.* պայծառ, *Ննխ.* բայծառ, *Ասն. (Բրքախօս Հայոց մէջ)* բէյծառ, *Վն.* պոծառ, *Ալշ. Մշ.* պօձառ, *Մկ.* պուծառ, *Ակն.* բօձառ, *Զթս.* բօզառ *(ըստ Հայկունի՝ Մօբոս, էջ 23), Սվհդ.* բիձառ։

ՊԱՅՂԱԿ *«աչքի շլացում, կուրություն». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* պայղակումն *«նոյն նշ.» Բրս. Քղք.* պայղակենութիւն. *Յհ. իմ. պաւլ. (բուն նշանակում է «աչքի մթնելը, շլացում, կուրություն», բայց վատ մտքով յատկացուած է Պաւղիկեան աղանդաւորներին, Պաւղիկեան բառի հետ յարմար նմանաձայնութիւն կազմելու պատճառաւ)։*

ՆՀԲ փայլակումն *բառից։*

*ՊԱՅՄԱՆ, ի–ա *հլ. «դաշն, դաշինք, ոճ, ձև, կերպ» ՍԳր. Եւս. քր. Կիւրղ. ծն. Ոսկ. մ. ա. 19 և յհ. ա. 27. որից* պայմանաւոր *Ագաթ. Վեցօր.* պայմանել *Խոր. Վրք. Հց.* տարապայման *Բուզ.* անպայման *Ագաթ. յետնաբար գրուած է ըստ մհյ.* պոման *Զքր. կթ. Ուխտ. Բ. 86. Մխ. գռ. Մեսր. Եր. Մարթին. Անսիզք 9, 13, 15, 47.* պոմանել *Կանոն. բարդութեամբ՝* պոմնբուխք *«պայմանաթուղթ» Անսիզք 75։ Նոր բառեր են* պայմանագիր, պայմանաժամ, պայմանադրութիւն, պայմանական, պայմանաւորուիլ, նախապայման։ — *Նոր գրականում (արևելեան բարբառ)* անպայման *սոսկել է «անպատճառ, անշուշտ» իմաստը (ազդեցութեամբ ռուս.* безусловно *ձևի), մինչդեռ հին նշանակութիւնն է «չափից դուրս, չափազանց» (անպայման սխանչելի Ագաթ.), իսկ արևմտեան գրականում «առանց պայմանի» (օր.* անպայման ննազանդութիւն)։

=*Պազ.* paimān *«չափ, սահման, խոստում, դաշինք, համաձայնութիւն, դաշնադրութիւն», պրս.* پیمان paimān *«պայման, ուխտ, դաշինք»,* پیمانه paymāna *«մի չափ է. 2. գինու մեծ կիզայ», տկլ.* 𐭯𐭲𐭬𐭭 patmān, 𐭯𐭲𐭬𐭭𐭪 patmānak *«դաշինք, համաձայնութիւն, չափ, ատիճան»* 𐭠𐭯𐭲𐭬𐭭 apatmān *«անպայման=չափազանց, անչափ»։ Իրանեանից են փոխառեալ նաև արաբ.* فيمان faymān *«պայման» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 532), արևել. Բրք.* پیمان payman *կամ* پیمانه paymanah *«մի տեսակ չափ»։ Իրանեան ձևերը ծագում են* paitimaanիկով՝ mā *«չափել» արմատից. ըստ այսմ պրս.* پیمودن paymūdan, *տկլ.* patmāyēnd, *քրդ.* piwān *«չափիլ» (Horn § 363), որոնց հետ համմտ. սանս.* māna *«չափ», յն.* μέτρον *(որից մետր) «չափ», լտ.* mētior *«չափիլ», ռուս.* мера *«չափ» են։— Հիւբշ. 220։*

ԳԴ (յետոյ ՆՀԲ) գնում են պրս. փէյման *ձևից։* Böttich. ZDMG 1850, 360 *սանս.* pratimāna: *Նոյն,* Arica *80, 344 սրա հետ նաև պրս. ձևը։* Lag. Urgesch. *139 պրս.-ից փոխառեալ է դնում։* Müller SWAW 38, 555 *յիշում է նաև հբր.* מתמאן (patmān?) *ձևը, որ չունի* Gesenius: *Մորթման* ZDMG *26, 526 բևեռ.* pini *«պայման» և 544* vidimana *«պայման»։ Նորայր, Կորիւն վրդ. էջ 275 անպայման գնում է պրս.* փէյմուտէն *«չափել» բայից։*

ՓՈԽ.—*Վրաց.* პაემანი պաեմանი *«պայմանաժամ»,* პაემნობა պաեմնոբա *«պայմանաժամ որոշել»,* უპაემანო ուպաեմանո *«անորոշ»։*

*ՊԱՅՄԱՆՆԱՄԱԿ *«պայմանագիր, դաշնագիր» Աբր. կթ. (=Գիրք Թղ. էջ 183)։*

=*Պազ.* *paimānnāmak=*պրս.* پیمان نامه paymānnāma=*տկլ.* 𐭯𐭲𐭬𐭭𐭭𐭠𐭬𐭪 *patmānnāmak *«պայմանագիր» բառից, որ կազմուած է* paymān+nāmak *«գրութիւն» բառերից. համմտ. իրան.* Կարնամակ, Աբտա-

վիրաֆնամակ, Շաճնամակ, Գաճնամակ են ձևերը։—Ա՛ճ.

*ՊԱՅՈՒՍԱԿ, ի–ա հլ. «պարկ, քսակ, մախաղ» Միք. ղ. 11. 3՛հ. կթ. Երզն. մտթ. որի հետ նոյն են ապաւասիկ կամ պայուսակ Ոսկ. մտթ. պայուասիկ «դրամական մի կշիռ կամ չափ, 50 լիտր» (ճիշտ հաշուով 16 kil. 320 gr. ըստ Մանանդեան, Կշիռները, էջ 41) Շիր. Սեբ. 147 (սխալմամբ գրուած է պայոասիկ տպ. Պօլիս, էջ 231). Բռ. երեմ. 264 գրում է պայսուկ և էջ 270 պաւակս. արդի գրականում կայ միայն պայուսակ «շանթա» («Քսակ» և «դրամական չափ» նշանակութեանց նոյնութեան համար հմմտ. թրք. كيسه kise «քսակ. 2. հինգ հարիւր ղրուշի գումար»)։

=Պհլ. *payūsak ձևից, որ չէ աւանդուած. սրա հետ հմմտ. պրս. پیوزه payūza, پیوژه paivaža «շապիկ և նման նմին լայն հանդերձք»։ Իրանեանից փոխառեալ է նաև ասոր. ܦܝܘܣܟ payūsag կամ payvasag «վզնոց, ցանց» (Brockelm. Lex. syr. 271ա)։—Հիւբշ. 220։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ. Lag. Ges. Abhd. 74 և Arm. Stud. § 1805, որ կասկածում է պրս. payūza ձևի վրայ. սխալ է գտնում կապել իրանեան բառը ուս ձևի հետ։ Müller WZKM 10, 356 իբր բնիկ հա՛յ սանս. wasti-, լտ. vesica «քսակ» բառերի հետ։ Karolides տես փայծաղն։ Պատահական նմանութիւն ունին լատ. bisaccium, նյն. βισάκκι, իտալ. bisaccia, լեհ. bisagi, ուկր. besáhy, բուլղ. biságі «վերարկուի գրպան», ֆրանս. besace «երկաչեայ պայուսակ», որոնք ծագում են լտ. bis «կրկին» և saccus «պարկ, քսակ» բառերից (Berneker 57)։

Փոխ.—Վրաց. ბავახაკი պավասակի «քրտակ, պարկ»։

ՊԱՅՈՒ *(գործածուած է մէկ անգամ յգ. գրծ. պայոեօf ձևով) «նետին վարի ծայրի ճեղքը՝ որ աղեղին լարին կը կոթնի» (տե՛ս նաև գղզիկ) Նիւս. երգ.։

ՊԱՅՏ, ի հլ. «ձիերի կամ այլ կենդանիների ոտքի տակ գամուած երկաթը, լուսին, նալ». ունին միայն ՀՀՔ և ՋՔ՝ իբր գուռ. բառ. սովորական է արդի գրականում։

Արդեօք յաշորդից ենթադրուած գրական ձև՞ է. գաւառականների մէջ այսպիսի բառ ծանօթ չէ։

*ՊԱՅՏԱՐ, որ և պայբար, բայտար, փայտար «կենդանիների ոտքին պայտ զարնող արհեստաւոր կամ ձիու բժիշկ» Վրդ. առ. 57. Ոսկիփ.։

=Արաբ. بيطار bayṭār նոյն նշ. որ ըստ Կամուս, թրք. թրգմ. Ա. 769 գալիս է بطر baṭr «պատառել, ճեղքել» արմատից, այսպէս կոչուած՝ պայտարի ամբակը ճեղքելու պատճառաւ։ Սրանից են նաև թրք. քրդ. baytar, վրաց. ბაითალი բայթալի՝ նոյն նշանակութեամբ։

ՀՀՔ և սրան հետևելով ՓՔ՝ մեկնում են պայտ առնող և այս վախճանի համար էլ գրում են պայտառ։ Այսպէս նաև արդի գրողներից ոմանք։ Ուղիղ մեկնից նախ ՆՀՔ, նոյնը յետոյ Հիւնք.։

*ՊԱՅՔԱՐ, ի–ա հլ. «կռիւ, վէճ» Բուզ. Եզն. Եղիշ. «իրար հետ դատուիլը» Կանոն, էջ 64. որից պայքարել Մծբ. կամ պայքարիլ Եղիշ. 3՛հ. կթ. յետին ձևեր են փայքար Արձ. 901 Բուից (Վիմ. տար. էջ 5), Օրբել. Հրտր. Էմինի, էջ 131, փայկար Ոսկ. Եփես. 876, փայքարիլ կամ փակարիլ Եղիշ. ը. էջ 123.—Բուզ. էջ 60 ցանկում գրուած է երկու անգամ փայքար, որոնցից մէկը էջ 98 վերնագրում դարձել է յանդիմանութիւն և միւսը պայքար։

=Նպհլ. *paykār ձևից. հմմտ. պրս. پيكار paikār կամ paigār «կռիւ, մարտ, պատերազմ», պազ. պհլ. ܦܛܟܪ patkār «վէճ, կռիւ, հակառակութիւն, պայքար», զնդ. *paitikāra (Horn § 360), որ կազմուած է paitiմասնիկով kar «գործել» արմատից. հմմտ. զնդ. 𐬯𐬀𐬎𐬀𐬑𐬀𐬉𐬎𐬀𐬐𐬀 paiti. akərənaoṭ «հակառակը գործից, հակառակուից» (Bartholomae, Altir. Wört. 447 բառիս իմաստը անյայտ է թողնում)։—Հիւբշ. 220։

Ուղիղ մեկնից նախ ԳԴ. յետոյ ՆՀՔ, Böttich. ZDMG 1850, 360, Arica 80, 343, Spiegel, Huzw. Gram. 187, Տէրվ. Altarm. 70 և։

Փոխ.—*Վրաց.* პაექრობა պաեքրոբա «վէճ» *Միք. ղ. 2.* სპაექრო սպաեքրո «մենամարտի տեղ», მეპაექრე մեպաեքրե «կռուող»։

*ՊԱՆ, ի *հլ.* «կոլոր հաց, բլիթ, նկանակ» *ՍԳր. (15 անգամ գործածուած). Վանակ. հց. Մեկն. ղևտ. Նար. էջ 93. «մեղրախորիսխ, մեղրահաց» Լմբ. առակ. Կլիմաք. Վստկ. 192. յետնաբար գրուած է բան «բազարջ փեթթակի, մեղրահաց» Վստկ. յաւ։

=*Յն.* πᾶνις «հաց», որ փոխառեալ է *լտ.* panis (>*ֆրանս.* pain) «հաց» բառից։ Շատ կարևոր են մեր բառի փոխառութեան հանգամանքները. պան յունարէնից կազմուած հնդ կամ գիտական տառադարձութիւն չէ, որովհետև՝ նախ մինչև այժմ էլ կենդանի է բարբառներում, երկրորդ՝ ըստ Sophocles *836 յն.* πᾶνις քիչ գործածական մի ձև է և բնաւ չի գտնւում *Ս. Գրքի յոյն թարգմանութեան մէջ։ (Աւուգիցի որ այն բոլոր դէպքերում, ուր հյ. օրինակն ունի պան, յոյնը դնում է ἄρτος սովորական ձևը)։ Այս բոլորից կարելի է հետևցնել, թէ հյ. պան յունարէնից չէ՛ փոխ առնուած, այլ ուղղակի լատիներէնից։

Schröder, Thesaur. 58 *միզանից է դնում լտ.* panis, *ՆՀԲ լծ. լտ. ձևը, իսկ Հիւնք. հայերէնը լատիներէնից փոխառեալ։ Չէ յիշած Հիւբշմանն։

Գիմ.—*Արբ.* բան, *ՀԲ.* բօն, բոն, *Սվեդ.* բուն «մեղրահաց, չհալած մեղր», որից և կազմուած է մեղրապան *ՀԲ. «մեղրախորիսխ»։

Պան *(բոյսը) տե՛ս* Բան։

*ՊԱՆԴԵՄԻ *կամ* ՊԱՆԴԵՄԻՆ «հեթանոսական ժողովրդական հասարակաց ուռն». *մէկ անգամ ունի Ոսկ. եզեկ.։

=*Յն.* πανδημεί, πανδημί, πανδήμιος, πάνδημος «համաժողովրդական, հասարակաց» բառից, որ կազմուած է πᾶν «ամբողջ» և δῆμος «ժողովուրդ» բառերից։

*Ուղիղ մեկնից ՆՀԲ։

*ՊԱՆԴՈՒԽՏ *(սեռ.* -կտոյ, -կտոջ) «իջևան, անցորդների օթևան, խան» *Ղկ. ժ. 34. Եփր. ա. կոր. 72. Սեբեր. Ոսկ. յհ. ք. 33. որ և* պանդուկի *Վրք. սեղբ. 710. յետնաբար դարձած է* պանդոկ *(սեռ.* -ի), *որ և գրուած* պանտոկ, բանդոկ *Ճառընտ. Վրք. Հց. Յս. որդի. Լմբ. առեն. Գնձ. Մեկն. ղկ. որից* պանդոկապետ *Ղկ. ժ. 35. Սեբեր.* պանդոկապան *Պզատ. օրին.* պանդոկապանութիւն *Պզատ. օրին։ Նոր գրականի մէջ գնդունուած է միայն* պանդոկ *ձևը։

=*Յն.* πανδοχεῖον «պանդոկ, հիւրանոց, հիւրատուն» *ձևից, որի հետ կան նաև* πανδοχεῖον «պանդոկ», πανδοχεύς «պանդոկապան». *կազմուած է* πᾶν «բոլոր» և δέχομαι «ընդունիլ» *բառերից։ Յոյնից է փոխառեալ նաև արաբ.* فندق funtuq *կամ* فندق funduq «պանդոկ, խան» *(տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 44). վերջինից է հյ. փնտուկ յետին ձևը, որ տե՛ս առանձին։—Հիւբշ. էջ 370։

Աւուգաբանութիւնը տալիս է մեզ հներից Վրք. սեղբ. էջ 710. «Զնոյն ասել (իմա՛ վերոյիշեալ) *պանդուկին, այս է ամենընկալ»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ. նոյնը նաև ՆՀԲ,* Müller SWAW *66, 278 և Հիւնք.։

ՊԱՆԴՈՅՐ «անմիտ, տխմար, ապուշ» *Ոսկ. մ. ք. 23. Հին բռ. որից* պանդուրութիւն *Ոսկ. փիլիպ. 406 (չունի ՆՀԲ). ենթադրելի է նաև* պանդոռ *ձևը, որից կազմուած է* պանդոռութիւն *Սիր. իբ. 16. երկու ձևերի փոխանակութեան համար հմմտ.* անդոյր և անդոռ։

Հիւնք. հանում է անդոռ *բառից։

Փոխ.—*Հայերէնի՞ց է փոխառեալ, թէ պատահական նմանութիւն ունի լազ.* bunduri «ծոյլ, դատարկապորտ» *(Աճառ. Արարատ 1911, 417)։

ՊԱՆԴՈՒԻԹՏ, ի-ա *հլ.* «նժդեհ, վատաբանդի» *ՍԳր. որից* պանդխտիլ *ՍԳր. Ոսկ. ես.* պանդրխտանալ *ՍԳր.* պանդխտեցուցանել *Բ. եզր. ե. 12. Նեհմ. է. 6. Գծ. է. 4.* պանդխտութիւն *ՍԳր.* պանդխտակից *Ոսկ. բ. կոր.* պանդրխտանոց «իջևան» *Փարպ.։—(Պանդուխտ, երժդեհ և եկ հոմանիշների տարբերութեան վրայ տե՛ս Տաթև. մտ. 360)։

Տէրվ. Մասիս 1882 յունիս 24 հայերէն բառ չի կարծում, բայց օտար լինելն էլ չի կարողանում հաստատել։ Նոյն, Ազգ. 1887, 108 հնխ. bhandh «կապել» *արմատից՝ -ութտ մասնիկով՝*

պանդխտութիւնը իբր բանտարկելութիւն ըմբռնելով։ Հիւնք. պանդոկ *բառից։ Մարքվարթ,* Die Entstehung der arm. Bistümer Roma 933, *էջ 7, ծան. 1 դնում է յն.* παγδόχος *ձևից, որ մերժում է* Adontz, *ըստ որում նոյն յն. բառի համապատասխանն է* պանդոկ *(Հաղորդեց Հ. Պէրպէրեան, նամակ 1933 յունվ. 16)։*

Գիւտ.—Խրբ. բանդուխդ։

ՊԱՆԴՐ *«անօրէն». ունի միայն Բառ. երեմ. էջ 264։*

ՊԱՆԴՐԵԼ *«տաշտաթաղ անել, տակռեցնել, ճիւղը հողի տակ թաղել՝ որ ծլի». որից* պանդրիլ *Վստկ. 59, 60,* պանդրած *«տաշտաթաղ եղած» Վստկ. 35, 58, 60։*

Նշբ արմատը դնում է պանդրի *«տաշտաթաղ» և վկայութեան է կոչում Վստակոց գիրքը, առանց տեղը նշանակելու։ Բայց Վստակոց դրքում այդպիսի գործածութիւն չկայ և* պանդրի *ձևը (էջ 59, 60)* պանդրիլ *բայից է։*

***ՊԱՆԵՄՈՍ** *«մակերոնական մի ամիս է. յուլիս» Եւթաղ. 100 (Որ օր հինգ էր պանեմոս ամսոյ). մի անգամ էլ յիշուած է անդ, էջ 89 ձեռագրական մի ընթերցուածում (տե՛ս* Նոեմոն*)։*

=Յն. πανέμος։

Ուղիղ մեկնեց Վարդանեան, Եւթաղ, էջ 89 ծան.։

***ՊԱՆԵՐ** *«գաւառանի կոչնագիրը տանող պաշտօնեան» Անսիպք, էջ 43։*

=Հֆրանս. banier *«իշխանութեան կողմից եղած պահանջները ներկայացնող պաշտօնեան»—Հիւբշ. 391։*

Անսիպքի հրատարակիչը՝ էջ 42 դնում է banerij *«պետական գինուորական»։*

***ՊԱՆԹԵՒ, ո** *հլ. «յովազ». մէկ անգամ ունի նպիփ. բարոյ.=*պանթեր *Բար. 157։*

=Յն. πάνθηρ *«յովազ», որից նաև լտ.* panther, panthera, *իտալ.* pantera, *ֆրանս.* panthère, *գերմ.* Panther *են։ Յոյն բառը հնդկական ծագում ունի. համմտ. սանս.* पुण्डरीक puṇḍarika- *«վագր» (բուն նշ. «դիղձաւուն»)* (Boisacq 745). *բայց յետոյ ենթարկուելով ժողովրդական ստուգաբանութեան՝ իմացուել է իբր* πᾶν *«բոլոր» և θήρ «գազան» բառերից բարդուած, իբր «ամենագազան»։—Հիւբշ. 370։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ՊԱՆԹԻՕՏԱՅ** *«նուիրապետ». ունի միայն Բա. երեմ. էջ 264։*

=Յն. Πανθοίδης, *որդի Պանթոոսի՝ որ էր քահանայ Ապոլոնի ի Դելփիս և ի Տրովադա։ Յատուկ անուն է, որի նշանն է -այ վերջաւորութիւնը։—Ա՛ճ.*

***ՊԱՆԹՈՒՄԱ** *«մի տեսակ բոյս. լտ.* loranthus» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2495։*

=Արաբ. بنتوما bantuma *(տե՛ս* Steinschneider-*ի հաւաքածոն,* WZKM 11, 320. *չունի կամուս)։—Ա՛ճ.*

***ՊԱՆԻՐ** *(յետնաբար սեռ. -ոյ կամ -ի) «պանիր» Յոր. ժ. 10. Նոնն. Պտմ. աղէքս. Խիւք. որից* պանրաճալ *«մակարդիլ» Ճառընտ. Սանահն.* պանրուտի *(գրուած նաև* պանրուտէ, պանդրուտու, պանդրուտոյ*) «կիթեղէնով պատ, նաւակատիք, յն.* τυροφαγία» *Գիրք Թղ. 334. Տօնակ. Ասող. Ոսկիփ.* պանդրաջուր *(որ է* պանրաջուր*) Մխ. բժշ. 46, 133 (ղ յաւելուածի համար համմտ. ծանդր, մանդրը, ծուանդրը. նոյն յաւելուածն ունին նաև սեռ.* պանտրի *Մաշտ. ջահկ. և Ագլ.* պա՛նդիր*). պանրավաճառ, պանրային (նոր բառեր)։*

=Պհլ. *panīr *ձևից, որ աւանդուած չէ. բայց կայ պհլ.* panēr, *պրս.* پنير panīr *«պանիր», որից փոխառեալ են նաև աֆղան.* panīr, *բելուճ.* p'aner, *քրդ.* panir, panīr, peynir, *զազա* penir, *արևել. Թրք.* penir, *Թրք.* penir, peynir, *գնչ.* pendir *«պանիր»։—Բառիս ծագումը իբր գնդ.* paeman- *«կաթ» բառից, տե՛ս* Horn, *էջ 289, § 163։—Հիւբշ. 221։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ։—ՆՀԲ յիշում է Թրք. բէնիր, և հայ բառը մեկնում է իբրև «պան իր», հացի հետ ուտելու բան։ Այսպէս նաև Թաղիադեան, Առաջնորդ մանկանց, էջ 29։

Ուղիղ են մեկնում Böttich. Arica 78,

292, Lag. Urgesch. 928, Müller SW-AW 38, 575, *Հիմնք.*։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Մկ. Մշ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. պանիր, *Ղրբ.* պա՛նըէր,, *Շմ.* պանէր, *Ագլ.* պա՛նդիր, *Ասլ. Խրբ. Ռ. Սեբ.* բանիր *(տես. Խրբ.* բայրի), *Տիգ.* բոնիր, *Պլ.* փանիր *(տես. Տիգ.* բոնդրի), *Սվեդ.* բոնէր, *Ննխ.* բէնիր *(գիւղերը՝* բ'անիր), *Զթ.* բանր՛յ, բանր՛ր, *Հճ.* բանիյ, *Համշ.* բօնիր.—*սրանց մէջ է ձայնաւորը և նախաձայն բ՝ կամ փ յառաջացած են խաչաձևմամբ Թրք.* penir *ձևի. հմմտ.* MSL *10, 324, Բազմ. 1897, էջ 260 և Քննութ. Ն. Նախիջևանի բարբառի, § 15, § 217.—ըստ Գաբիկեան, Ամէն. տարեցոյցը 1922, 325 Սեբ. Բրգնիկ գիւղ* պօնիր, *Մրշ.* պանար *(իմա՛* բօնիր, բանար)։ *Նոր բառեր են* պանրագող, պանրադրի, պանրամաճ, պանրատէր, պանրխոտ։

ՓՈԽ.—Աժտարխանի հայոց մէջ հոմանիշների տարբերացմամբ ռուս. սիր *նշանակում է «եւրոպական պանիր», իսկ* պանիր *«կովկասեան սպիտակ պանիր»։ Այսպէս են նաև տեղական ռուսներն ու թաթարները, որոնք հայերէնից փոխ առնելով գործածում են* панӣр, پنير panīr *ձևերը՝ «կովկասեան կամ հայկական պանիր» նշանակութեամբ։*

ՊԱՆՆ *«պարծեննալը, յանձնապաստանութիւն, հպարտանալը». արմատ առանձին անգործածական, որից* պանծալ (պանձալ, պանծանալ *կամ* պանձանալ) *ՍԳր. Ոսկ. մ. ա. 3 և Բ. տիմ. բ.* պանծութիւն *Ոսկ. փիլիպ.* պանծալի *Խոր. Պիտ.* պանծագոյն *Ոսկ. յհ. ա. 12. մեծապանծ Սարգ. Պրոկղ. լմբ.* ճերապանծ *Նար. գերապանծ ՅՀ. իմ. պալ. Խոր.* ինքնապանծ *Լմբ. առկ. և սղ.* երկապանծ *Պիտ.* զրապանծ *Պիտ.* խոխտապանծ *Պիտ.* գեղապանծ *(տե՛ս* գեղ *բառի տակ)։*

Հիմնք. պերճ, նպարտ, պարծիլ *են բառերի հետ՝* բարձր *բառից է հանում։* Scheftelowitz BB 29, 31 *սանս.* bhand *«փայլիլ, գովաբանութիւն»։ Թիրնաքեան, Կարնամակ, ծան. 35* պարծ *արմատին է կցում։ Նոյնպէս նաև Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 94։*

***ՊԱՆԿՐԱՏ** *կամ* **ՊԱՆԿՐԱՏԻՈՆ**, *ի–ա Հլ. «հասևառիկ, մի տեսակ ոլիմպիական խաղ» Եւս. քր. Պղատ. օրին. 233։*

=Յն. παγκράτιον *«կռիւամարտութեամբ ըմբշամարտութիւն». կազմուած է* πᾶν *«ամբողջ» և* κράτος *«ուժ» բառերից։ Որից նաև լտ.* pancratium, *ֆրանս.* pancrace *են։— Հիւրշ. 370։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՊԱՆՊ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ուռհ. «Սրօք և բրօք կանխեալ՝ ընկեցին զնա ի պանպէն ի մէջ բազմամբոխ խուխայինն»։ ՆՀԲ մեկնում է իբր* բեմբ *կամ գուցե ընթեռնլի ի պարսպէն։*

ՊԱՆՏ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Սիր. Թգ. «Ժողովուրդն իբրև եռես, խոստովան եղև առ ժամ մի պատ ի պատէ (այլ ձ. պանտ ի պանտէ), եթէ Տէր՝ Աստուած»։ ՆՀԲ ուղիղ ձևը համարում է* պատ ի պատէ *«մանուածոյ», որ սակայն յարմար չէ. ՋԲ դնում է* պանտ ի պանտէ *«ծառայարար կամ առ հարկի»?*

ՊԱՇԱՆ *«զօրական». գիտէ միայն Բռ. երեմ. էջ 264։*

[**ՊԱՇԱՏԻՏ** *«սպեղանի,* cataplasmus*». գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ-հյ. էջ 69։*

=Հյ. պաղատիտ *«չոր թուզ» բառն է, որ ձևով ու նշանակութեամբ շփոթուել է Սխալման մեկնակետ են հանդիսանում Գ. Թգ. ի. 7 և Ես. լը. 21 հատուածները. «Առցեն պաղատիտս թզոյ և առաւ և դիցեն ի վերայ վիրիդ. և ողջացի. Առ՛ դու պաղատիտս թզոյ, մանրեա և դիր ի վերայ վիրիդ և ողջացիս»։ Սրանց մէջ շատ դիւրին էր պաղատիտ ընդունել «սպեղանի» իմաստով։ Իսկ ղ>շ սխալագրութեան համար հմմտ.* սարաղուճ>սարաշուճ *(տե՛ս այս բառը)։—Ա.Ճ.]*

***ՊԱՇԱՐ**, *ի–ա, ո Հլ. «պահեստի կամ ճանապարհի պարէն, ուտելեղէն» ՍԳր. Ոսկ. մ. ա. 4. որից* պաշարադիր *Սիր. պհ. 173.* պաշարաբարձ *Վրդն. ծն.* պաշարաման *«պաշարի մեծ ման» Վրդ. առկ. 48.* պաշարապինդ *Սարգ. Վրք. Հց. գրուած է* պարշար *Նար. յովէդ։*

*=Պհլ. *pašar հոմանիշ ձևից փոխառեալ, որ աւանդուած չէ. բայց որը հաստատում է*

նորագիւտ սոգդ. pš"βr *«պաշար» (յիշատակուած է* BSL *23, 107)։ Այս բառը* Gauthiot, Gram. sogd. *էջ 162 կարդում է* f°šāβar *«ուտելեղէն,* vivres*» և կցում է զնդ.* fšav- *«անուշանալ, պարարտացնել» բառին։—Աճ.*

Նշիւ մեկնում է «պաճարանք ուտելեաց»։ Lag. Urgesch. *480 պաճար բառի հետ։ Հիւնք. նոյն ընդ վաճառ։ Վերի մեկնութիւնը տուաւ Աճառ.* Rev. d. Et. arm. 3, 8:

Գիւր.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Ջղ. Սլմ. Տփ. պաշար, *Խրբ. Հմշ. Ննխ. Սեբ.* բաշար, *Հճ.* բաշօյ, բէշօյ, *Զթ.* բէշօյ, բէշար, *Սվեդ.* բիշուր. *բոլորն էլ նշանակում են յատկապէս «ճամբորդութեան ժամանակ հետը վերցրած ուտելիք».—իսկ Բրքախօս հայերից Առն.* բէշէր *«կնունքի ժամանակ բաժանուած մրգեղէն»։*

ՊԱՇԱՐԵԼ *«չորս կողմը պատել» ՍԳր. Եզն. Եղիշ. որից* պաշարիչ *Եւս. քր.* պաշարումն *ՍԳր. Եւս. քր. գրուած է նաև* պարշարել *Եփր. ա. Քես. 179.* պարշարական *Սոկր. 609։ Նոր բառեր են* պաշարողական, ճակատպաշարում, պաշարակիր, ճախապաշարել, ճախապաշարմունք, ճախապաշարեալ *են։*

Նշիւ պար շարել *(իմա՛ «չորս կողմը շարել»)։ Հիւնք.* ասպար *բառից։*

ՊԱՇԴԻՈՆ *«մի տեսակ հարկ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 1042 թ. մի արձանագրութեան մէջ. «Թողնալ եմ զՏեկորոյ զպաշդիոնս շահանշահի արեւշաւութեան և իմ ծնողացս հոգւոյն» (Վիմ. տար. էջ 22). Համմտ. այլուր՝ «Թողնալ եմ զՏեկորոյ շարյաւն» (անդ՝ էջ 13)։*

[**ՊԱՇՊԱՃ.** *անասոյզ բառ. մէկ անգամ ունի Վրդն. օրին. «Ոտք քո ոչ փայպարեցան, Քերևս փոկ շրջէին, և ոչ կեղեքեալ վիրաւորէին պաշպաճ անկանելով»։*

=Պէտք է ուղղել պաղպաճ, *որ է պաղպաջ «պալար, ուռեցք»։ Սխալը յառաջացած է շ և ղ տառերի նմանութիւնից. Համմտ.* սարաղուն>սարաշուն, պաղատիտ>պաշատիտ։—*Աճ.*

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ Արրտ. 1910, 268։]

ՊԱՇՏԱՏԱԿԱՆ, *ի–ա հլ. «հարսի բերած օժիտը փեսային» Յես. ժդ. 10. Գ. Թագ. Ք. 16. Խոր. սխալ գրուած* պաշտակաճ, պաշտական *են։ Նոյնից է նաև* պաշտաճակարել *«պարգեւել, doto» Ներսէսովիչ, Բռ. լտ.- հյ. 167 բ։*

Հիւնք. պրս. pešdār *«կանխապոյն տուեալ, կանխիկ հատուցեալ» բառից՝ հյ. -ական մասնիկով։ Կոստանեան, Ազգ. հանդ. ԺԳ. 133 յն.* παστάς *«առագաստ» բառի հետ։ Ադոնց,* Арм. Юстин. *էջ 190 պրս.* peš-dāta *«առաջվանից արուած?» Թիրեաքեան, Արիահայ բռ. 311 պրս.* پیش داد pīš-dād *«նախընծայ»։*

***ՊԱՇՏԵԼ** *«ծառայել, սպասաւորել, մատուցանել (կերակուր), մատուցակել (գինի), հոգ տանիլ, պաշտօն ունենալ և վարել, Աստուած պաշտել, երկրպագել» ՍԳր. Ոսկ. Ես. Կոչ. Եփր. ծն. և ա. կոր. որից* պաշտիլ *«մի բանի ծառայել, մի բանի համար գործածուիլ, պէտք գալ» Եզն. Եւս. պտմ. Եփր. Թգ. և ա. կոր.* պաշտումն *Եղիշ. Խոր.* պաշտակ *«ծառայ, սպասաւոր» Կղնկտ. Հրտր. Էմ. էջ 46.* պաշտօն *(հոլովւում է* պաշտամանէ, -մունք, -մանց, -մամբ*) «ծառայութիւն, սպասաւորութիւն, մարդահաճութիւն, գործ, կրօնական արարողութիւն» ՍԳր. Ոսկ. Եզն.* պաշտօնուկ *«շողոքորթութիւն» Ոսկ.* պօղ. պաշտօնեայ *ՍԳր. են։ Բառիս բուն նախնական արմատն է* պարիշտ, *որից ունինք* ամբարիշտ *(իմա՛* աև-պարիշտ*) ՍԳր.* բարեպարիշտ *Պիտ. Նար.* բեռանապարիշտ *«մատուցակ» նորագիւտ Բ. մնաց. թ. 4.* կռապարիշտ *Ա. կոր. ե. 10, 11. զ. 9, Եփես. ե. 5. Եզն.* զրապարիշտ *Կղնկտ.* մարդապարիշտ *Տիմոթ կուզ, էջ 233, 238.* վատապարիշտ *Տիմոթ. կուզ. էջ 89, Կնիք Հաւ. 175,* վատապարշտութիւն *Տիմոթ. կուզ, էջ 113, 114, 161. ըստ այսմ* պաշտել<*պարիշտել, *որի անշնչտ ի ձայնը սղուելով՝* *պարշտել *(ինչպէս որ գտնում ենք դեռ* պարշտելի *Տիմոթ. կուզ էջ 32,* պարշտութիւն *«պաշտօն, ծառայութիւն» անդ, էջ 249,* պարշտակից՝ *էջ 255) և ր ձայնը շ-ի մօտ չնչուելով՝* պաշ-

տել: *Այս ձևը երևան գալուց յետոյ՝ ենթադրած է պաշտ արմատը, որի համեմատ էլ շինուած են բարեպաշտ ՍԳր. Ագաթ. երկապաշտ «հացկատակ» Ոսկ. ես. և եփես. կռապաշտ Ա. կոր. ժ. 7. աստուածապաշտ ՍԳր. Եզն. Ագաթ. ճիշմակապաշտ Եզն. դիւապաշտ Եզն. լուսնապաշտ Եզն. նշմարտապաշտ Կորիւն. ուրուապաշտ Ագաթ. Են: Նոր բառեր են պաշտօնագործ, պաշտօնաթող, պաշտօնակատար, պաշտօնանկ, պաշտօնապէս, պաշտօնատեղի, պաշտօնէութիւն, կիսապաշտօնական, ապագայապաշտ են:*

*=Իրան. *pari-štā «պաշտամունք, երկրպագութիւն» ձևից, որ կազմուած է pari-մասնիկով՝ sthā- արմատից և բուն նշանակում է «շուրջ կանգնիլ»: Սրանից են յառաջացած նաև պհլ.* parastātan *«պաշտել»,* parastišn *«պաշտումն», պրս.* پرستیدن parastīdan *«պաշտել»,* پرست parast *«պաշտող, ծառայող» (Horn § 298), š>s փոխանակութեամբ, որ սովորական է պարսկական բառբառներում: Հայերէնը իր շ ձայնով (*pariš-tā>պարիշտ) պահում է իրանեան հնագոյն ձևը: Նոյն բառը պահուած է նաև կելտական խմբի մէջ. համմ. իռլ.* hiress *«պաշտող»,* amairis *«ամբարիշտ» (Vendryès MSL 20, 267):*

ՆՀԲ պրս. parastīdan *«պաշտել» ձևի հետ: Բագրատունի, Քեր. զարդ. 654 պրս.* parast, *իսկ 690 պարիշտ «այն է պար գալն զիւիք, փարիլն, ըստ մեր բառին»:* Windisch. 43 *սանս.* upasthā? *Նոյնը առանց կասկածականի* Böttich. Arica 84, 405, Lag. Urgesch. 151:— Pictet 2, 691 *սանս.* bhaj *արմատից:* Lag. Beitr. bktr. Lex. 58 *սանս.* pṛšṭa? Canini, Et. étym. 71 *յն.* βάχχιος, *լտ.* paganus *բառերի հետ: Պարոնեան, Երկրագունտ 1885, 490 իմաստ և ընդ. մազդ ձևերի հետ: Հիւնք. զանազանում է պաշտել «ծառայել Աստուծոյ»=պրս. փէրէսթիյտէն և պաշտել «մատուցանել»=պրս. էնպաշթէն «լնուլ»: Հիւրշ. 221 ասում է թէ կապ չունի հյ. պաշտպան բառի հետ: Ալիշան, Հին հաւ. 12 պրս. պիճէշտ «դրախտ» կամ հյ. պատարագ, պատրուճակ, պատիւ, պաղատանաւ, պագանել, պատշաճ բառերի հետ, որոնց մէջ միշտ կայ պա ձայնախումբը: Marquart, Յուշարձան 292 հպրս. *pati-štā-man ձևից է դնում հյ. *պաշտամն>պաշտօն (բայց անյարմար է կորած r-ի պատճառաւ):—Müller, Մառ և Salemann, Manichäische Studien ЗАН 8(1908), 114 կցում են իրանեան բառին, որ վերջին անգամ վերի ձևով բացատրում է* Meillet MSL 22, 217:

ԳԻՒ.—Պահուած է միայն կրօնական իմաստով. ինչ. Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. պաշտել, *Ախց. Երև. Մրղ.* պաշտէլ, *Ագլ. Գոր. Ղրբ. Մկ. Շմ. Տփ.* պաշտիլ, *Նախ.* բաշտէլ, *Պլ. Սեբ.* բաշդէլ, *ՋԹ. Խրբ.* բաշդիլ, *Ասլ.* բաշդէ՛լ, *Սվեդ. Տիգ.* բոշդիլ:—*Պլ. փխբ. նաև «վրան գուրգուրալ, ամէն հոգս տանել»: Նոր բառեր են պաշտոց Եւդ. «չափազանց գուրգուրանքի՝ սիրոյ առարկայ եղող (գաւակ են)»,* պաշտում, պաշտումաճաց, պաշտումէց:

ՓՈԽ.—Տե՛ս բարի *բառի տակ:*

ՊԱՇՏԵԿ *«նման կամ կերպարան». ունի միայն Բառ. երեմ. էջ 264:*

*ՊԱՇՏՊԱՆ, ի-ա *հլ. «պահապան, պահող պահպանող» ՍԳր. Ոսկ. մ. ա. 5. որից* պաշտպանել *ՍԳր. Ոսկ. մ. գ. 25.* պաշտպանակ *«բիւկնապահ» Արծր.* պաշտպանութիւն *ՍԳր.* պաշտպանումն *Սիր. լա. 19.* անպաշտպան, մահասպաշտպան *(նոր բառեր). յետնաբար կապելով բառս* պաշտել *բայի հետ՝ գրուած է «ծառայել» նշանակութիւնը. այսպէս՝* պաշտպան *«ծառայող, սպասաւոր» Լմբ. Սկևռ. աղ.* պաշտպանութիւն *«ծառայութիւն» Պիտ. Լմբ. սղ.:*

*=Պհլ. *paštpān ձևից, որ չէ աւանդուած. բայց ունինք սրա աւելի նոր ձևը՝ պհլ.* pušte-pān- *և պրս.* پشتبان puštbān, پشتوان puštvān, *որոնք ենթադրում են հպրս. և ընդ. *paršti- pāna-: Մագում է հպրս. *prsti-=ընդ.* paršti- *> պհլ.* pušt *և պրս.* پشت pušt, *զազա* paš*t,* աֆղան. pu*ṣt, քրդ.* pišt, *բելուճ.* p'ut *«թիկունք, կրո-*

նակ»+pāna>bān բառերից, որով բուն նշանակությունը լինում է «թիկնապահ», յետոյ ըմբռնուած է ընդհանուր «պահապան, օգնական» իմաստով (Horn § 321)։ Հյ. պաշտպան փոխառեալ է արշակունեաց շրջանին. միևնոյն բառը սասանեան շրջանին երկրորդ անգամ փոխ է առնուած փուշտիպան «թիկնապահ» ձևով (տե՛ս այս բառը) և վերջապէս երրորդ անգամ նորապարսիկ շրջանին փոխ առնուելով տուած է փեշըվան Ակն. «պատի մէջ պահանդ», որ է պրս. puštvān «պահանդ»։—Հիւբշ. 221։

Müller SWAW 42, 250 պրս. pušt-bān ձևի հետ։ Էմին, Ист. Асохика 1864, էջ 82 փուշտիպան բառից։ Lag. Beitr. bktr. Lex. 57, 38 մերժում է ա-ի պատճառաւ։ Հիւբշ. KZ 23, 403 հայը պարսկից փոխառեալ։ Հինք. փուշտիպան բառից. գործ չունի պաշտել բայի հետ։

ԴԻՒ.—Երև. Կր. Մշ. Սլմ. պաշտպան, Շմ. պաշտպանիլ, Խրբ. բաշբան, բաշբանիլ։

*ՊԱՊ (յաւնաբար ի–ա, ու հլ.) «մեծ հայր» Փիլ. Մամիկ. Մխ. դտ. «հայրապետ, կաթուղիկոս (Աղէքսանդրիոյ, բայց յատկապէս Հռոմի)» Մխ. այրիվ. Վրք. հց. Գնձ. Սկևռ. պտ. 66. որից պապենի Յիշատ. երկպապ «պապի պապի հայրը, quadrisaïeul» մէյ բառ (ըստ Նորայր, Բառ. ֆրանս.) նոր գրականի մէջ պապական, պապենական, պապադաւան են. գրուած է նաև պապայ Օրբել. ողբ. էջ 62. պապիս Ուռհ. 275, 309. առանձին տես ապոպապ և պապա։

=Առաջին իմաստով փոխառեալ է պհլ. *pāp ձևից (Հիւբշ. Pers. Stud. էջ 175). Համմտ. պհլ. ւթՙՙ pāpak «հայրիկ» (նաև յատուկ անուն արական, ինչպէս հյ. Հայրիկ), պրս. بابا bāb «հայր» (գալիս է *pāb ձևից՝ նախաձայնը ազդուելով վերջաձայնից), بابا bābā «հայր, մեծ հայր», bābāk «հայրիկ», քրդ. bab, baw, հինդուստ. bābū «իշխան, տէր, պարոն»։ Երկրորդ իմաստով փոխառեալ է յունարէնից. համմտ. յն. πάππας, πάππος, παπᾶς «հայր», լտ. papa, papas, pappas «հայր, հոգևորական, պապ», գոթ. papa «հայր. 2. եպիսկոպոս», գերմ. Papst և ֆրանս. pape «Հռոմի պապը», մինչև անգամ չին. 爸爸 pá⁴-pa⁴ «հայրիկ»։

ՀՀԲ բառ չկայ ԳԴ պրս. bāb: Rask, Nonnulla (1832), էջ 25 յն. πάππας: ՆՀԲ «նոյն ձայն է և ի բազում լեզուս, որպէս յն. πάππος ևն»։ Gosche 27 միացնում է փռիւգ. πάπας (Դիոդ. Սիկիլ. էջ 192, տպ. Wess.), սկիւթ. παπαῖος (Հերոդ. Դ. 59), սարմատ. Babai «Սարմատացի մի թագաւորի անունը» (Jornandem 54, 55), պրս. bāb, bābā ձևերի հետ։ Bugge, Etr. u. Arm. 110 համ. papals «թոռ» բառի հետ։ Հինք. յն. πάππος։ Ալիշան, Հին հաւ. 470 փռիւգ. Պապ մեծ աստուածը։ Հիւբշ. 221, 341, 370, 514 անորոշաբար մէկ պարսկերէնից, մէկ յունարէնից։ Karst, Յուշարձան 406 սումեր. pap «մեծ հայր»։

ԴԻՒ.—Ախց. Երև. Կր. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Տփ. պապ, Գոր. պա՛պի, Ղրբ. պապ, պա՛պըէ, Ալշ. Մշ. պար, Խրբ. Համշ. Ռ. Սեբ. Սչ. բաբ, Ագլ. պօ՛պի, Վն. պապիկ (սեռ. պապկէ), Սլմ. պապիկ՝, Զթ. բօբ, բոբ, Անտ. բուէօ՛բ, Հճ. ՚բօբ, Տիգ. բոբ, Սվեդ. բուբ, որոնցից առաջիններն նշանակում են «մեծ հայր, պապ», իսկ Ալշ. Զթ. Անտ. Տիգ. լսած են «հայր» նշանակութիւնը, ինչպէս որ Տիգ. մամ դարձել է «մայր». Ալշ. պար «հայր», պարէ «պապ», Սվեդ. բուբ «քահանայ, 2. կնքահայր», բոբէօգ «մեծ հայր, պապ»։ Նոր բառեր են պապկլոր, պապկնալոր, պապկանց, պապոնճ, պապուճց, պապուճցի, կնճապապ (Էնկիւրիի Բրբահօս հայոց բարբառով իմ՚արար «կնքահայր»), սանապապ (Առն. սանաբար), պապուկ Ալշ. Պլ. «մուրացկան» (այլուր նաև «ծերունի, խեղճուկ, մի սև միջատ ևն».—«մուրացկան» նշանակութիւնը յառաջացած է euphémisme-ի օրէնքով. համմտ. նաև Պլ. ամուջա (<Բրբ. amuǰa «օրհնեալ հայր»), որ մուրացկաններին տրուած կոչականն է)։

ՓՈԽ.—Քրդ. babuk «մուրացկան, աղքատ, թշուառ մարդ»։

*ՊԱ՛ՊԱ «հայրիկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. հց. ա. 405. Ունէր և զմանուկն զկնի եր-

թեալ և ձայնէր պա՛պա պա՛պա. և որ ինչ սովորութիւն է տղայոյ հայրակոչ լինել»։

=Յն. πάππα «ո՛վ հայր». կոչականն է πάππας «հայր» ձևի։—Աճ.

—ՊԱՊԱԽԵԼ «ծարաւից այրել». մէկ անգամ ունի Պիտ. «Անապակն՝ զայլ մօտաւոր փորոտիսն առհասարակ պապաքեցուցեալ՝ անչափ ջերմութեամբն պապախէ»։

= Սխէմ սխալ գրչութիւն չէ, խ և կ ձայնների լծորդութեան օրէնքով միանում է պապակ արմատի հետ։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ. 1909, 160։

ՊԱՊԱԿ *«պաստառ, սաստիկ ծարաւ» երգն. մտթ. որից* պապակիլ *«ծարաւից այրիլ» Կիր. ժղ. 24, 25.* պապակիչ *լմբ. ժղ.* պապակումն *կլիմաք. հմմտ. նաև* պապախել։

*=Կրկնուած է անծանօթ պարզական *պակ արմատից։*

ՆՀԲ յիշում է փափագել կամ «բարբախմամբ շրթանց՝ պա՛ պա՛ հնչել»։ Հիւնք. պապաքել *բայից։* Müller, Armen. 41 *և* Bugge KZ 32, 58 պասում *բառի հետ՝ կցում են սանս.* pipās *«խմել ուզել» բային։*

ԳԻՒ.—Նրև. պապակվել, *Սեբ.* բարագիլ, *Նեխ.* բարգել, *Ախց.* պապամոիլ։

+ՊԱՊԱՆՁ *«լեզուն կապուիլը, համրանալը, անխօս մնալը». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* պապանձիլ *ՍԳր.* պապանձեցուցանել *Մտթ. իր. 34. Ա. պետ. բ. 15.* պապանձումն *Նիւր. Համառ. և ծն. քս. Սարկ. աղ. Ուռհ.։*

*=Կրկնուած է *պանձ պարզական արմատից, որ դ>ձ ձայնների լծորդութեան օրէնքով (հմմտ. խեղդ>հեղձ, խանդ>խանձ, յորդ>յորձ են)՝ միանում է *պանդ ձևին. իսկ սա էլ ցածր աստիճանի ձայնդարձն է պինդ «կապել» արմատի։ Ըստ այսմ* պապանձիլ *նշանակում է բուն «կապկպուիլ (լեզուն)»։—Աճ.*

ՆՀԲ «իբր պա՛ պա՛ շշնջել համերց»։ Հիւնք. պապաքել *բայից. Աճառ. ՀԱ 1899, 232 դնում է կրկնական։*

ԳԻՒ.—Սլմ. Վն. պապանձվել, *Նրև.* պապանձվել, *Շմ. Տփ.* պապանձվիլ, *Մրղ.* պապանձրվել, *Ախց. Կր.* պապանձիլ, *Մկ.* պապանձիլ, *Ալշ. Մշ.* պաբանձել, *Ագլ.* պպա՛նձիլ, պպա՛նձվիլ, *Ղրբ.* պպա՛նձվէլ, *Խրբ.* բաբանձիլ, *Զթ.* բաբանձըլ, *Հճ.* բաբոնձիլ, *Պլ. Ռ. Սեբ.* բաբընձիլ, *Սչ.* բաբընձել, *Նախ.* բաբընձել, *Դոր.* պմբա՛նձվէլ, *Ասլ.* բաղբընձիլ։

ՊԱՊԱՉ *«այծի ձայն», որից* պապաչել *(գրուած նաև* պապաջել *Խոսր. 116,* պապանջել, պաղաջել *Խոսր. 66) «այծի՝ կապիկի ձայն հանել» Պոմ. աղէքս. Նիւս. կազմ. Խոսր. Ոսկիփ.* պապչեակ *«այծ» Մագ. վրնջապապչեակ «այծ» Մագ.։*

=Բնաձայն բառ. կազմուած է կրկնութեամբ և չ ածանցականով՝ պարզական պա՛ ձայնից. արմատի համար հմմտ. պնչել, պռռնչել, *իսկ ձևի համար՝* խախաչել, կակաչել։

ՆՀԲ պա՛ պա՛ կամ պէ՛ պէ՛ ձայնից։ Տէրվ. Նախալ. 43 հնխ. bab<ba-ba *արմատից. հմմտ. յն.* βαβάζειν։ *Հիւնք. յն.* βαβάζω։ *վերի ձևով Աճառ. ՀԱ 1899, 204 բ։*

***ՊԱՊԱՍ** *(որ և* պապիոս*) «քահանայ» Ղևոնդ լդ. էջ 150, լմբ. մատ. 83. Մխ. դտ. հրտր. Բաստ. էջ 255. Վրք. հց. բ. 458։*

=Յն. πάππας «հայր, տէ՛ր հայր, տէրտէր», որից փոխառեալ է նաև Թրք. پاپاس papas *կամ* پاپاز papaz *«յոյնի կամ հայի քահանայ». հմմտ.* պապ։

Ուղիղ մեկնութեան ծանօթ էր հներից լմբ. մատ. 83, որ ասում է. «Հինգերորդ դաս աստիճանի եկեղեցւոյ հրեիսունք և պապասք, որ թարգմանին քահանայք և երիցունք»։ Ուղիղ մեկնեցին նորերից նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ՊԱՊԻԻ *«մի տեսակ ձուկ կամ ծովային թռչուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Անան. պիտ. 8. «Յորժամ պապիւք ի ծովէ ելանեն բազում զմիմեանցք՝ հողմ նշանակէ»։*

Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 549 յիշում է բառս պապիւ ձևով. ուշադրութիւն չէ դարձրած, որ բայը յոգնակի է, ուստի և պապիւ եննթական էլ հոգնակի է։

***ՊԱՊԼԱՍ կամ ՊԱՊԼԻՍ** *«վայրի խաշխաշ, լտ.* euphorbia peplos*» (ըստ Տիրացուեան,* Contributo § 170 papaver Rhoeas L., *որ և*

պտկու մէր, գուգուկ, պուտպուտ) *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2500։*

=*Արաբ.* بابلاص bāblaṣ, *որ փոխառեալ է յն.* πέπλος «ափարբի, euphorbe *բոյսը, ամկ.* réveille-matin» *բառից. տե՛ս* Steinschneider-ի *հաւաքածոյի մէջ* WZKM 11, 313: *Չունի Կամուս։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

*ՊԱՊԿԱՅ, ի *հլ. «Թութակ» Փիլ. լիւս. 128. Պոմ. աղէքս. 150. Կղնկտ. հրտր. էմ. էջ 157. Վրդն. ծն. յեանաբար* պղպղայ *Վրդ. առ. 297։*

=*Ասոր. փոխառութիւն է. համմտ.* ܦܓܐ papgā, papagā *(գրուած է* ܦܓ papā*) Պոմ. աղէքս. կամ* ܒܒܓܐ babgā «Թութակ» *(Դալիլ. և Դիմնա). այս բառի հետ նոյն են նաև արաբ.* ببغاء babγā *(Կամուս, Բրբ. Քրքմ. Բ. 801), պրս.* بپغا bapγā, *Քրբ.* پاپاغان papaγan, *յն.* παπαγάλλος, *իտալ.* pappagallo, papagallo, *սպան.* papagayo, *հֆրանս.* papegai, *ռումանականից փոխառութեամբ՝ գերմ.* Papagei, *հոլլ.* papegaai, *անգլ.* popinjay (Kluge 360), *գերմանականից էլ ռուս.* попугай *են։ Այս բոլորի առաջին աղբիւրը յայտնի չէ, բայց անշուշտ արեւելեան է։ Հայերէնը ծագած է ասորերէնից, ինչպէս ցույց է տալիս -այ վերջաւորութիւնը. կ ձայնը (ասոր. g-ի դէմ) անշուշտ յառաջացած է նախորդ պ-ի ազդեցութեամբ։— Հիւրշ. 315։*

Նախ ՆՀԲ համեմատեց արաբ. և իտալ. ձևերի հետ. բայց յիշում է նաև հյ. պապաչել։

*ՊԱՊՈՒՆԱՁ *կամ* ՊԱՊՈՒՆԻՁ, *որ և* բարուճաճ, բարուճիճ *«երիցուկ բոյսը, Քրբ. փափաբիա, ռուս. ромашка» Անյ. պորփ. (լս.). Բժշ. Մխ. հեր. գրուած* պապուճէճ *Վստկ. 79։*

=*Արաբ.* بابونج bābūnaǰ *կամ* bābūnij *որ արաբացեալ է պրս.* بابونه bābūna «matricaria chamomilla L» *հոմանիշից. (յոյն ձևն է* χαμαίμηλον, *որ և Թարգմանուած է արաբ.* تفّاح الارض tuffāḥ-ul-arḍ, *հյ. գետնախնձոր!) —Հիւրշ. 263։*

Ուղիղ մեկնեց նաև ՆՀԲ։ Վերջին անգամ տե՛ս Seidel, *Մխ. հեր. § 47։*

**ՊԱՂ «Հարկ, տուրք» ՅՀնսկ. 186. որ և բաղ Առաք. պտմ. 391։*

=*Պրս.* باج bāǰ *նոյն նշ. համմտ.* բաժ *(տե՛ս այս բառը)։—Աճ.*

*ՊԱՌԱԿ, ի–ա *հլ. «կողմ». մէկ անգամ ունի Եղն. 281. «է ձուկն՝ որոյ իբրև խոզի պառակաց, թամբ ի վերայ կողիցն կայ. և արիւն այնչափ ելանէ, որչափ յոչխարէ ոչ ելանէ». փոխաբերաբար գործածուած Օրբել. էջ 169. «Հարսնավազին ձորակովն գաւ ի կողմն յեկեղեցին որ ի պառակոջ ճանապարհին» (տե՛ս և տակը գւռ.)։ Սրանից է ձևացած* պառակիլ *«կողի վրայ ընկնել, պառկիլ» (համմտ. հյ.* կող—կողմն, ընկողմանիլ *և Քրք.* yan *«կող», ամկ. եան գալ «ընկողմանիլ, պառկիլ»), մանաւանդ «որսի համար դարան մտնել» Բուզ. դ. 12, էջ 118 (Նորայր, Կոր. վրդ. էջ 228 մեկնում է «որսական շներով հետազօտել կամ որոնել գանատուն»? իբր պառակաև բառից), որ և յեանաբար* պառիկիլ *«պառկիլ» Վստկ. Վրդ. առ. 63 (այլ ձ.* պարկիլ*), Վրք. Հց.* պառիկել *Վստկ.* պառկիլ *Յայտմ. Վստկ. 80.* պառակեցուցանել *«պառկեցնել» Վստկ. էջ 173.* պառիկելիք *«անկողին» Սմբ. դատ. 60.* պառիկելեց *«անկողնի վերաբերեալ իրեր» Անսիզք 45. ոճով էլ ասում է* պառակ դնել *«(բոյսը) մի կողի վրայ պառկեցնել» Վստկ. 54, 73։ Պառկելու դաղափարից ձևացել է* պառակ *«ոչխարների պառկած տեղը, մակաղատեղ, բակ» Ա. Թագ. իդ. 4. և յայնաբար՝* պառակ *«ոչխարի հօտ, անասունների խումբ կամ երամ» Սիւն. քեր. 210=Երզն. քեր. Տօնակ.* պառակ պառակ *«խումբ խումբ» Ոսկ. մ. ա. 15։ Սրանցից յառաջացած բառեր են* պառակամայր *«հորթ ունեցող կով» Եզնկ. խզ. 6.* աստուածապարագ *(!) «աստուածախումբ» Փիլ. լիւս. (իսկ Բռ. երեմ. 33 «աստուածապարակի ասին որք զդիրս սուրբս կամակորին»).* պառակտել *«խմբից բաժանել, հօտի մէջ հակառակութիւն դնել» Եղիշ. Ոսկ. հռ.* պառակտումն *«բաժանում, խմբից անջատուիլը» Ոսկ. ես.* պառակտե-

ցուցանել *Ոսկ. կող.* երկպառակ «*երկու խմբի բաժանուած, անմիաբան*» *Եղիշ. Փիլ.* երկպառակել «*մէջերը հակառակութիւն գցելով իրարից բաժանել*» *Եղիշ. Սարգ.* երկպառակութիւն *Ա. մկ. գ. 29. Դաղ. ե. 20.* երկպառակել *Ոսկ. Հռ.*։

=*Պհլ.* *parak «*կող*» *համանիշից, որ աւանդուած չէ, բայց կայ պրս.* پَرَه para «*կող*»։—*Աճ.*

Նշ՛ր պրս. պէռէգ (?) *և լծ. հյ.* փառախ։ Bugge, Beitr. 34 և KZ 32, 3 պառակ «*մակաղատեղ*» *փոխառնել է գնում մլտ.* parcus *բառից։ Նոյն,* IF *1, 455* պառակաել, փեռեկել *են իբր բնիկ հայ կցում է գոթ.* brikan, *գերմ.* brechen «*խորտակել*» *են բառերին։ Հիւնք. բոլորն էլ փառախ բառից։ Ղաֆանցեան* ЗВО *23, 350 արաբ.* وَرِق varik *և վրաց.* barkali «*ազգր*», *իսկ էջ 351 արաբ.* فَرق farq «*բաժանել*»։—*Թիրեաքեան, Արիա-հայ բռ. 250* պառակ *և փառախ գնում է պհլ.* vār «*շուրջ փակեալ բնդարձակ վայր*» *և պրս.* فَرَاخ farāx «*ընդարձակ, արձակ*», *իսկ էջ 311* պառակաել=*պհլ.* pārak, *պրս.* pāra «*մաս, բաժին*»։

Գիմ.—Արմատական ձեով ունինք պառակ Համշ. «ձիու գաւակ», Ղրդ. «արնգղէմ, արև առնող տեղ», Խոջ. (բառագ) «լեռան կամ արտի թեք կող», Ալշ. Մշ. (պառնգ) «մէջք», պառիկ Բլ. Բղ. Մշ. Նբ. Զրս. Վն. «կռնակ, թիկունք. 2. լեռան կող, բլուրի լանջը, հակնալ դիրքով տեղ», որ և յիշում է Բառ. երեմ. էջ 265 պառակ ձեով և «պրտ, անջրդի տեղ, պրակ կամ չորային» նշանակութեամբ։ Սրանից է պառակաճեղ Դոր. «լեռների վրայ բուսնող մի տեսակ բոյս» (Համմա. Ճեղա-կառոս, ազատ-ճեղ)։—Պառկիլ բայի գուռ. ձևերն են՝ Զղ. Վն. պառկել, Ախց. Մկ. Շմ. Կր. պառկիլ, Երև. պառկել, Տփ. պառկիլ, Ալշ. Մշ. պառգել, Սչ. բառգել, Ակն. Զթ. Պլ. Ռ. Սեբ. Սվեդ. Տիգ. բառգիլ, Ննխ. բառգել, Ասլ. բառգէ՛լ, Համշ. բառգուշ, Հճ. բարգել։ Նոր բառեր են պառկամաշ, պառկան, պառկման, պառկոտիլ, պառկուկ։

ՊԱՌԱԿԱՆ. *անյայտ նշանակութեամբ. գտնում է հետևեալ տեղերում. «ժամ տուեալ որսոյ ամենայն զօրացն, ածեալ կուտեալ զպառականն, խուճապական ձգեալ». Ագաթ. —«Սակաւ սպասաւորօք հանդերձ և որսոյն պառականօք». Բուզ. Գ. 20.—որից* պառական. «*Թակարդեօքն և պառակական խմբբիւք և այլով հնարաւոր գործեօք զբովանդակն արգելուին վայր*» (*այլ ձ.* պառական) *Պիտ.—Նշ՛ր մեկնում է «երագագ, ուռկան որսորդաց էրէոց՝ իբրև փարախ շրջափակ». նոյնը նաև Ջռ. իսկ Աբ «որսի շներ», որով բառը նոյնանում է* բարակ *համանիշի հետ։ Նոր քննիչները վարանում են այս երկուսի միջև. Ալիշան, Հայապատում Ա. 173 համարում է մի տեսակ որսորդական գործիք.—Հ. Ա. Բագրատունի, Քնր. զարդ. ե. 48, յ. 104, Նորայր, Կորիւն վրդ. էջ 227—8 և Թունեան, Հաւրնտիր Բ. 240 «որսի շներ» (յոգնակի կամ հաւաքական)։ Նորայր նկատում է յատկապէս, որ նիզ բառը նշանակէր «յանց», Ագաթ. չպիտի կարողանար ասել* ածեալ կուտեալ, *այլ* բերեալ կուտեալ։

Ս. Մովսիսյան (Նամակ 1935 մայ. 11) կցում է քրդ. p'ärani «*վոհմակ*» *բառին։*

**ՊԱՌԱԿԼԻՏՈՍ «մխիթարիչ». չորս անգամ ունի Ղևոնդ, էջ 58—59, իբրև Հոգւոյն Սրբոյ վերադիր օտար բառ։*

=*Յն.* παράκλητος «*մխիթարիչ*» (*վերադիր Հոգւոյն Սրբոյ*), *որ կազմուած է* παρα *մասնիկով՝* καλέω «*կոչել, օգնութեան կանչել*» *բայից։—Աճ.*

**ՊԱՌԱՎԱՏՈՍ (որ և* պառաւատոս, պառաբատոս, բառապադ) «*ուխտադրուժ, ուրացող*» *Վրք. ածաբ. Ճառընտ. Մխ. խոչ. (Բազմ. 1911, 261 ա). բոլորն էլ իբր Յուլիանոս կայսեր տրուած մականուն։*

=*Յն.* παραβάτης «*ուխտադրուժ*»—*Հիւբշ. 370։*

Ուղիղ մեկնեց Նշ՛ր։

**ՊԱՌԱՒ (յգ. -ուաք, -ուանց) «ծեր կին» ՍԳր. եզն. Փարպ. «պառաւած, ծերացած» (իբր ած.) Գիրք առաք. որից* պառաւիլ «*ծերանալ*» *Մն. ժբ. 13. «հնանալ» (անշունչ իրերի համար ասուած. ինչ. ծառի, առասպելի, ցաւի) եզն. խոր. Մագ.* պառաւական

Ոսկ. մ. բ. 11. պառաւորդի *Ձքր. կբ.* պառաւութիւն *Ոսկ. երբ. և ևս.*։

=*Պհլ.* *pārāv *հոմանիշ ձևից, որ ցոյց է տալիս պրս.* پارا pārāv «*ծեր կին, պառաւ*»։ *Այս բառը կարելի էր հայկրէնից փոխառութիւն համարել, եթէ չլինէին պրս.* پیر pīr, *պհլ.* pīr «*ծեր*», pīrak «*պառաւ*», *բելուճ.* pīrūk «*պապ*» *են բառերը, որոնք բոլոր պատկանում են զնդ.* paro «*նախ, վազ*» *ձևին և ծագում են հնխ.* per- *արմատից* (Horn § 270, 350). *Հայկրէն ցեղակիցներն են հեռի, հերու, առ, եր-* (Pokorny 2, 38)։ —*Հիւբշ. 221*։

Brosset, JAs. 1834, 377 *հայկրէնից է դնում վրաց.* փերի *և պրս.* pīr «*ծեր*»։ Böttich. ZDMG 1850, 360 *և* Arica 81, 365 *սանս.* pūrva, *զնդ.* paourva «*նախկին, վաղեմի*»։ Lag. Urgesch. 208 *զնդ.* paourva, *պրս.* pīr: Müller SWAW 38, 575, 588 *սանս.* purāṇa: *Նոյն, 43, 300 և 136, էջ 13 պրս.* pārāv: *Պատկ.* Изслед. *զնդ.* paourva, *սանս.* purāṇa: Justi Zendsp. *181 զնդ.* paurva, *սանս.* pūrva, *պրս.* pūrau: Lag. Btrg. bktr. Lex. 30 *պրս.* pārāw: Justi, Dict. Kurde 70 *քրդ.* paraw *և պրս.* pārāv։ *Հիւնք. պրս.* բարավ։

Գիմ. Ախլ. Ախց. Գոր. Երև. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. վն. պառաւ, *Տփ.* պա՛ռաւ, *Սչ.* բառաւ, բառաւ, *Ասլ. Համշ. Նխճ. Պլ. Ռ. Սեբ.* բառաւ, *Սլղ. Մշ.* պառաբ, *Խրբ. Տիգ.* բառաբ (*բայը՝* բառրբնալ «*պառաւիլ*»), *Զթ.* բառօբ, բառոբ, *Հճ.* բարօբ, *Սվեդ.* բարուվ։ *Նոր բառեր են* պառաւաշէնք, պառաւապուռ, պառաւուտիլ, պառաւկոտիլ, պառաւճակ, պառուտկ, պառուզուր։ *Նախորդներից անկախ մի ձև է Շլ.* պառիկ «*պառաւ*»։

Փոխ.—Քրդ. پارا paraw «*պառաւ, հայ աղախին*» (Justi, Dict. Kurde 70)։

***ՊԱՌԵԿԻՄԱՆՈՍ** «*բիւզանդական զօրավարական մի աստիճան կամ տիտղոս*» *Լասա. 22*։

=*Յն.* παρακοιμώμενος «*պաշտօնեայ՝ որ կայսեր մօտ՝ նոյն սենեակում քնում էր*». παρά-κοιμάομαι *բայի դերբայն է* (Sophocles *845 ա*)։—*Հիւբշ. էջ 370*։

***ՊԱՌԻԿՈՍ** «*տիրոջ ձեռքի տակ գտնուղ և նրան հարկաւոր շինական*». *մէկ անգամ գործածուած է Մխ. դտ. 330 (երեք ձեռագրում միայն). «Իշխանք և այլք եթէ յաւելի դառնէն զպառիկոսն, որ ընդ ձեռամբ իւրեանց իցեն և հանդիպի մեռանիլ, արեան գինք առցեն»։ Նոյնը նաև Սմբ. դատ. 8, 172*։

=*Յն.* πάροικος «*բաղաքում և կամ գաւառում հաստատուած օտար պանդուխտ մարդ, որ զուրկ է քաղաքային իրաւունքներից*»։

Ուղիղ մեկնից նաև Karst, *Դատան. էջ XXV, որից անտեղեակ՝ նոյնը Ահատ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 67*։

***ՊԱՌՃԱՒՈՒՃԱՆ** «*ձարխուտ,* capillus veneris» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2503*։

=*Արաբ.* برشاوشان baršāvšān *ձևից, որ աւում է նաև* برشیاوشان baršiyāvšān, برسیاوشن barsiyāvšan *(տե՛ս* Steinschneider WZKM 11, 315). *բոլորն էլ գալիս են պրս.* پرسیاوشان par-siyāvušān *հոմանիշից, որ բուն նշանակում է «Միավուշի թև կամ փետուր»*։

Ուղիղ մեկնից ՀԲուս. § 1766։

***ՊԱՌՈՍ** «*ծխատէր քահանայ*». *յիշում է միայն ՆՀԲ՝* ծխակիր *բառի տակ, առանց վկայութեան*։

=*Լտ.* parochus «*տաներէց*», *որ փոխառեալ է յն.* πάροχος «*մատակարար*» *բառից*։

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

ՊԱՌՊՈՒԻ «*մի տեսակ վայրի որթ*» *Վստկ. 130 (Թէ կամիս որ [խաղողին] կոյղն տեւրեով լինի ի պտղամիջկերն, դու զկէսն պառպուռ արա և զկէսն տանու). Հոլովուած ձեւով՝* պառպոյ ծաղիկ *Վստկ. 100,* պառպոին ծաղիկն *Վստկ. 102. բոլոր և պինդ ի սև պառպոյ կերպ. Վստկ. 47*։

ՆՀԲ դնում է ուղ. պառպոի *և հասկանալով իբր պրս. Քրք.* بیبر biber, bibar, bubar, *մեկնում է «պղպեղ»։ Բայց թէ բառը չի կարող «պղպեղ» նշանակել՝ յայտնի է նրանից, որ պառպուռը ողկուզաւոր բոյս է, մինչդեռ պղպեղը ողկոյզ չունի (համմտ. Վստկ. 102. ա՛ռ ըզպառպոին ծաղիկն, ի կուզէն Թաիեա՛). երկրորդ՝* պառպուռ *և* bubar *բառական*

տարբեր են ձևով. և վերջապէս՝ ինքը հեղինակը «կէսն պառպուռ, կէսն ապառնուռ» հակադրութեամբ ցոյց է տալիս որ առաջինը երկրորդի վայրին է։ Վաստակոց գրոց հրատարակիչն էլ՝ էջ 256 դնում է պառպուռ կամ պառպէռ=արաբ. և լտ. berberis «ծոր», որ նոյնպէս ուղիղ չէ։ Մեր տուած մեկնութիւնը հաստատում է՝

ԳԻՒՐ.—Պառպուռիկ Ջբ. «վայրի մի տեսակ որթ, որ գտնւում է Ջէյհունի լեռները և մանաւանդ գետեզերքները. պտուղն չափ և խաղողի նման մի պտուղ է տալիս»։

*ՊԱՍԱՆԻԿ «երկրորդական մի պաշտօնեայ, փինաւոր, սպասաւոր». նորագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ջուանշիրի Վրաց պատմութեան մէջ, Վենետիկ 1884, էջ 52. «Գնաց ընդ նմա և Ղունկիանոս Կարոնացի և երթեալ դիպեցան աւուրն խաչելութեան։ Եւ իրրև պասանիկն պնդեաց զբեեռան, զմայր Իլիոսի ընդոստոյց մասն մարգարէութեան՝ որ ի նմա»։

=Պհլ. *pasānīk ձևից, որ պահուած է մանիք. պհլ. פסאניג pasānīg ձևով, որ Salemann ZAH 8, 113 թարգմանում է «gefolgsman, թիկնապահ փինաւոր». ծագում է պհլ. ပသ pas=զնդ. pasča=պրս. پس pas «յետև» բառից, իրանականից է փոխառեալ նաև վրաց. Յանանօյո պասանիկի, Յանանօգո պասանիգի, Յանենագո պասենագի, Յանենայո պասենաճի, Յանենանո պասեմանի «պահապան, օդնական—adjudant, ծառայ, սպասաւոր, թագաւորի առաջ կանգնած զաւազանաւոր» (Մառ ЗВО 17, 027)։—Ա.Ճ.

ՆՀՐ և ԱՐ չգիտեն այս բառը։ Ջուանշիրի Պատմութեան հրատարակիչը հասկանում է «դահիճ կամ բևեռող» և հանում է յն. πασσαλεύω (որ և πασσαλεύω) «ցցի զարնել» բայից։ Վերի մեկնութիւնը տուաւ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. բ. 14—15. բայց պհլ. բառը սխալ է հանել pās «պահ» բառից և կցել պրս. پاسبان pāsbān «պահապան» բառին։

ՊԱՍԵՐ, ի–ա հլ. «բռնութիւն, ստիպումն», որից պասերաբար «բռնութեամբ». ունի մի այլ Բառ. երեմ. 265, որից և ՓԲ։

Պասեք տե՛ս Պասքա։

***ՊԱՍԽԱՂ** «ընդհանուր հրամանատար». նորագիտ բառ՝ որ երկու անգամ գործածում է Օրբել. էջ 302 և 344. Որ էր վաղիր և պասխաղ կարգեալ ի մեծ զանէն ի վերայ ամենայն աշխարհիս; այսինքն՝ հրամանատար ամենեցուն և իշխեցող արքունի հարկացն և մեծ դիւանին. Այս Նաւռուզ էր որդի Արղունին, որ եկաց պետ և պասխաղ ի վերայ ամենայն աշխարհիս (հրտր. Շահն. առաջին օրինակում՝ Բ. էջ 159 ունի պասղազ, երկրորդ օրինակում՝ Բ. էջ 219 պասխազ)։

=Թթր. և բրք. باشبوغ bašboγ «գլխաւոր հրամանատար զօրաց» բառն է, աղաւաղեալ գրչութեամբ։—Ա.Ճ.

St Martin կարդացել է պասխազ և մեկնել է «lieutenant, տեղակալ»։ Շահն. անդ՝ էջ 350 մեկնում է «տեսուչ», իբր պրս. բազուխաստ «քննիչ, վերակացու»։ Բայց քան իս այսպիսի մեկնութեանց պէտք չկայ, որովհետև Օրբելեան արդէն տալիս է բառիս բացատրութիւնը։

ՊԱՍԿՈՒՃ «մի տեսակ թռչուն, կորճ, լտ. gryphus» Վեստ. ժա. 13. Խոր. աշխ. 615. Պիսիդ. վէպօր. տող 933. Բար. 171։

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 ու բնաձայնից, Մառ ИАН 1918, էջ 2095 մարգարէ բառի հետ։ Ադոնց, REA 7 (1927), 188 վերջամասը (-կուճ) միացնում է կորճ թռչնանուան, վրաց. ճուճլի «ծովային արծիւ» և ճորի «անգղ» բառերի հետ։

Փոխ.—վրաց. Յանչկունջո պասկուճլի կամ Ցանչկունջո փասկուճլի «կորճ, ֆր. griffon, ռուս. грифъ» (նմանութիւնը յիշում է նախ ՆՀՐ)։ Այս բառը երկու անգամ միայն գործածուած է վրաց մատենագրութեան մէջ (տե՛ս Մառ ИАН 1918, էջ 2083) և անշուշտ հայ բնագրից է տառադարձուած։

ՊԱՍՆԹԱԼ. անծանօթ մի բոյս է. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2507։

ՊԱՍՈՒՔ, ո հլ. «պապակի, սաստիկ ծա-

բաւ» Մծբ. Վրք. Հց. Յոջ. ոսկ. գծ. որից պասխեցուցանել Ոսկ. ես. նիր. Համաբ. 37. պասխուրիւն Մծբ. պասխիլ Մծբ. 350. պասխանալ Նանայ. պասխածարաւ Բէրդ. կուս. պասխատոչոր (չունի ԱԲ) Առաք. պատմ. 310. գրուած է նաև պազուխ «ցամաք, անջուր» Ոսկ. ես.։

Տէրվ. Altarm. 71 պա=սանս. pā «խմել» և սուխ=սանս. çuč «փայլիլ, վառիլ»։ Հիւնք. յն. πάσχω «կրել, տանիլ, զգածիլ որևէ կրիւք»։ Müller, Armen. VI և Bugge KZ 32, 58 պապակ բառի հետ՝ սանս. pipās «խմել ուզել»։ Scheftelowitz BB 28, 313 սանս. bhakš «խմել»=զնդ. baxš։ Բիւրեաքեան, Աբիհայ բո. 312 պրս. پاسك pāsuk «յօրանջում» (իսկ «խոնջութիւն, թուլացում» նշանակութիւնները չգիտեն ԴԴ և Բուրհան)։

*ՊԱՍՊԱՅԻՃ «մի տեսակ բոյս. կճուռ, polypodium» Մխ. բժշ. 126. Ամիրտ. ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 961 բ և ՀԲուս. § 2508։

=Արաբ. بسبايج basbāyiǰ նոյն նշ. (տե՛ս Steinschneider-ի հատուածոյի մէջ՝ WZKM 11, 316), որ և بسفايج basfāyiǰ ձեով նշանակում ու նկարագրում է Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 375, դնելով պրս. بسپایه baspāya ձևից, որ համաձայն լատինականին նշանակում է բուն «բազմօտանի». նոյնը թարգմանուած է և մհյ. շատուռուի։

Նորայր, անդ՝ կցում է պրս. պէսիայէ բառին։ Ուղիղ է մեկնում ՀԲուս. § 1431, վերջին անգամ Seidel, Մխ. հեր. § 322։

*ՊԱՍՊԱՍ, որ և պասպասէ, պասպասայ, բազբազ «հնդկընկոյզի կեղև» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1916 և § 2509։

=Արաբ. باصباس bāsbās, بسباسه basbāsa՝ նոյն նշ. (տե՛ս Steinschneider-ի հատուածոն՝ WZKM 11, 316 և Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 217). որից և վրաց. ბანბანა բասբասա «мускатный цветъ» (Զուբինով 2, 98)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՊԱՍՊՕԼ. անծանօթ մի բոյս է. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2510։

*ՊԱՍՏԱՌ, ի–ա հլ. «փոռոց, շոր, սաւան, ծածկոց» Սաթ. ա. 6. Սղնկ. իէ. 7. «շորի կտոր» Ոսկիփ. (արևելեան գրականում «պատի թուղթ»). որից պաստառակալ Դատ. ժդ. 12, 13. Ղկ. իգ. 53. պաստառալի Մծբ. պաստառալիր Առակ. է. 16. պաստառակ «շոր» Մագ. Թղ. 204. «ստամոքսի մաշկը՝ կաշին» Մագ. Թղ. 112.—ՀԱ 1892, 167 ա (Զի ի ջղայց գաս (զստամոքսն) ստեղծիչն ստեղծ պաստառակօք)։

=Պհլ. *pastarr ձևից, որի աւելի հինն է *pat-starr<զնդ. *paitistarəna-, կազմուած paiti նախդիրով՝ star «տարածել, փռել» արմատից։ Նոյն արմատից տարբեր նախդիրներով կազմուած բառեր են զնդ. upa-starəna- «ծածկոց, գորգ», պրս. بستر bistar «անկողին», گسترانی gustarānī «անկողին», آستر āstar «աստառ» (առաջինը իբր իրան. *api--stara-, երկրորդը՝ *vi-stara-, երրորդը՝ *ā--stara-) ևն։—Հիւբշ. 222։

ՆՀԲ պրս. բիսդէռ, պիսաք, լծ. և պէզ, որպէս և բեհեզ, իտալ. pezzetta, ոմկ. բէշէդա։ Böttich. ZDMG 1850, 360 և Arica 78, 287 զնդ. upastar ձևից։ Lag. Urgesch. 245 սանս. star արմատից. համմա. պրս. pastara «գորգ»։ Lag. Beitr. bktr. Lex. 71 զնդ. upastarəna: Böttich. Horae aram. 23 և Rudim. 35 պաստառակալ=երր. בסמרק bstrq: Տէրվիշ. Altarm. 44 և Նախալ. 112 պրս. pestar «անկողին», զնդ. upastarəna, սանս. upastira «ծածկոց» բառերի հետ՝ star արմատից։ Նորայր, Բառաք. էջ 111 սանս. բաստարա, բաստիրա «անկողին, գորգ»։ Հիւբշ. 222 մերժում է զնդ. upastarəna- «ծածկոց, գորգ», որովհետև այս բառը պիտի տար պհլ. *apstarr >հյ. *ապաստառ: (Նոյնպէս և պրս. bistar կապ չունի մեր ձևի հետ, որովհետև պիտի տար հյ. *ապաստառ)։

*ՊԱՍՏԵՂ «պտուղը հիթելով խիւս շինած և թերթ թերթ չորացրած» Դրնդ. էջ 452. աւելի հնից չէ աւանդուած։

=Յն. πάστιλος (Sophocles 863) *բառն է, որ փոխառնալ է լտ.* pastillus, pastillum *«նկանակ, կարկանդակ կամ այլ խմորեղէն» բառից, իսկ սա էլ ծագում է լտ.* pasta (>*ֆր.* pâte) *«խմոր» բառից։ Նոյնից են փոխառնալ նաև Բրք.* پسديل pesdil *կամ* پستيل pestil, *գւռ.* besdil, *բլգ.* pestil, *ռում.* bezel, bezel, *ռուս.* постила, *նյն.* παστήλη *«պատեղ»։—Ա՛ճ.*

ԳԻՒ.—Կենդանի է Ակն. Արբ. Խրբ. Կր. Տիգ. պատեղ *կամ* բատեղ *ձևով. (Տիգ.* բադիխ*)։*

ՓՈՒ.—Արևել. Բրք. باستوق bastuq *կամ* bastuγ *«մրգահոյզով շինուած մի տեսակ ոսպ», Բրք. գւռ. Ակն.* basdəx *«Քուքի կամ խաղողի պատեղ», քրդ.* basteγ (MSL. 16, 350). *այս բառերը փոխառնալ են հայերէնից՝ վերջաձայնի (q=γ=x<հյ. ղ) պատճառաւ, մինչդեռ նախորդները՝ որոնք ունին l վերջաձայնը՝ յունարէնից են (հմմտ. Բրք.* پسدل pesdel *«մի տեսակ դոնդողական քաղցրեղէն» ըստ* Будаговъ *1, 316)։*

*ՊԱՍՔԱ *«Զատիկ (Հրէից Եգիպտոսից դուրս գալու և Քրիստոնէից համար էլ Քրիստոսի Յարութեան յիշատակը)» Կ. Կ. Բր. 1. Ղևոնդ, էջ 83. որ և* պասեհ *ՍԳր. (23 անգամ գործածուած). Շար. Կլիմաք. որից* պասեհաոօն *Եւս. քր.* պասեհաոօնակ *Մամբր. հմմտ. նաև* փասեակ*։*

=Յն. πάσχα *(որ և* φασέχ, φασέκ*) ձևից առառաղարձուած. սրանք էլ ծագում են Եբր.* פסח pesax *«զատիկ, պասեք Հրէից» բառից, որ սովորաբար առուգաբանւում է «անցք, զատումն, ասն ազատութեան». (ամբլի գիտական բացատրութիւնները տե՛ս* Gesenius, *Բառ. Եբր.*[17]*, էջ 651 ա)։ Եբրայականից կամ յունականից են յառաջացած նաև Քալմ. Քարգ.* פסחא pisxā, pasxā, *ասոր.* ܦܨܚܐ peṣxā, *արար.* فصح fiṣḥ, *լտ.* pascha, *ֆր.* pâque, *ռուս.* пасха *ևն։—Հիւրշ. 370։*

Բառիս առուգաբանութիւնը ծանօթ էր նաև հներին. հմմտ. Պասեքս այս մեծ է և պաշտելի. փա՛սկա յհրայեցւոցն անուանի ըստ նոցա ձայնին և յայտնէ ձայնն զԱնցքն փասկա յհրայեցւոցն անուանի... և ապա հելլենացի արարեալ զձայնն՝ զփիւրն ի պէ և զկէն ի քէ փոխեցին և պասքա զօր փրկչին անուանեցին. Ածաբ. պասք. բ։—Նոյնը Շիր. էջ 18. նաև էջ 23՝ պասխա կոչեցին, որ Թարգմանի չարչարանք.—(ի Հրէից) կոչէր պասխա, անցարան ըստ նոցա և ըստ մեզ փրկութիւն չարչարանաց. Տօնակ—Անց՝ զհին պասեքն ասէ. զի պասխայն անցք Թարգմանի. Լմբ. նաւտամ։—Զատիկն յհրայեցւոց լեզուն կոչի պասեհ, որ Թարգմանի անցք չարեաց. Բրս. մրկ. 248։—Նորերից ՀՀՔ բառ Եբր.։ ՆՀՔ Եբր. յն. լտ. ձևերի հետ նաև լծ. լտ. passio *«կիրք, չարչարանք» և իտալ.* passare *«անցանել»։ Տէրվ.* Altarm. 69 *յն.-ից։ Հիւնք. Եբր.-ից։*

Պավլիճ *տե՛ս Պալեոն։*

ՊԱՏ *«բոլորտիքը, չորս կողմը, շրջան, պատյտ». ընդարձակ զարգացում կրած արմատ, որի ածանցներն են.* ՊԱՏ *«շրջան», որից* պատ առնուլ *«շրջապատել» Խոր. Շիր. Վրդն. ծն. «փաթաթուիլ, շրջան կամ ոլորք կազմիլ (օձի)» Եղիշ. յես. էջ 176. Խաչիկ. 280. «նաւի ճամբորդելը զիզդագներով» Ոսկ. գծ. 372.* պատ գալ *«չորս կողմը ման գալ՝ դառնալ» Յայտմ.* պատ *«որմ, որ շէնքի չորս կողմն է պատում» Բրս. մրկ. Գր. Եբէց. Վասկ. 154. Մխ. այրիվ.* պատել *«փաթաթել, շրջապատել, ման ածել» ՍԳր. Եւս. պտմ.* պատ ի պատ *«երկար բարակ՝ մանուածապատ ձևերով» Նիւս. բն.* պատ ի պատէ *Եփր. Թգ. 437.* պատ ի պատու *Կիւրղ. ծն.* միջապատ *«զոգնոց՝ որ մէջքն է պատում» Ոսկ. Ես. մառախլապատ Ագաթ.* միգապատ *Ագաթ.* մարմնապատ *Եզն. Վեցօր. Ոսկ. մ. բ. 19.* կամարապատ *Եզեկ. խ. 22.* զրահապատ *Ոսկ. մտթ. գ. 16.* երկաթապատ *Դան. դ. 12, 20.* երիզապատ *Առակ. ե. 16. Մծբ. Ոսկ. եփես.* թակարդապատեալ *Կորիւն, էջ 8. Եւթաղ 165.* դիապատութիւն *Ոսկ. յհ. բ. 38.* շրջապատել *Խոր. Շիր.* պատկողանոց *«նաւի կողերը պատող տախտակներըն» Ոսկ. կողոս.* տարեպատ *«տարին բոլորուելու՝ լրանալու ժամանակը, տարեվերջ» Ուռհ. 371.* պատուած *«ոլորք» Նար. Ան որս.* պատուածոյ

Եզեկ. խգ. 17. պատուածել *«վրայէ վրայ ընել, պատել» Ա.Բ. «մանր քարերով հիւսել շարել» Օրբել. 164 «կանգնէ.. սիւն մի զարմանալի... ի մանր քարանց պատուածեալ ի չափ երեսուն կանգնոյ.—Տաթևի շարժական սիւնի համար է ասում)*; ՊԱՏԱՆ, ի–ա *հլ. «փաթաթելու շոր, յատկապես վէրքի կապ և կամ մեռելը մէջը պատատելու սաւան»; ՍԳր. Եփր. ծն. որից* պանուճապատանիճ *«տիկնիկ, խամաճիկ» Ա. Թագ. ԺԲ. 13, 15. նոր գրականի մէջ՝* պատանել, պատանիճել *կամ* պատնել *«մեռելը պատանքի մէջ փաթաթել»*; ՊԱՏԵԱՆ, ի *հլ. «պատուղը պատող արտաքին կեղևը» Ես. ղ. 13. Վեցօր. էջ 87—88 (տպ. պատկան. և այս ձևով էլ գնում է Ա.Բ՝ իբր անատոյգ բառ). «խեցեմորթի կեղև» Եփր. էջ 352, 358. «սուրի կամ ուրիշ զէնքի ամանը» ՍԳր. «զրահ, լանջապանակ՝ որ մարմինն է պատում» Ա. մկ. ղ. 2. Յոբ. խա. 4. Ես. պտմ. Սեբեր. որից* զինապատեան *Պատմ. աղէքս.* ոսկեպատեան *Բուզ.* ողոկապատեան *Վեցօր.* պատենիկ *Անյ. պորփ.* պատենազէն *Ա. մկ. ղ. 39. Եփր. վկ. արև. Բուզ. 208 (ձ.* պատեզէնիճ*).* պատենաթև *Վեցօր.* պատենաւոր *Նիւս. կազմ.*; ՊԱՏԱԿ *առանձին չէ գործածուած. որից* խելապատակ *«խելքը՝ ուղեղը պատող մաշկը. լմնբ. ուղեղ, գլուխ» Նիւս. կազմ. Պիտ. (գրուած է* խելապտակ *Շիր. քրոն. 51)*; ՊԱՏԻԿ *«փաթաթող կամ փաթաթուածք». առանձին չէ գործածուած. առաջին իմաստով ունինք դիապատիկ «մեռել պատանող մարդ» Ծն. ծ. 3 (հմմտ. դիապատութիւն Ոսկ. յհ. բ. 38). երկրորդ իմաստից փոխ. յառաջացել է «անգամ» նշանակութիւնը (հմմտ. գւռ. փաթ «փաթաթուածք, պտոյտ, շրջան, անգամ») և այս նշանակութեամբ են ձևացած՝* եօթնապատիկ *ՍԳր. բազմապատիկ ՍԳր. Եզն. բազմապատկել Դիոն. ածայ. և երկն. Վրդն. ծն. բիւրապատիկ ՍԳր. Եզն. Ագաթ. Մծբ. երկպատիկ Փիլ. երկպատկութիւն Նիւս. կազմ. պատկութիւն «կրկնութիւն» Ոսկիփ. պատկական «տեսակ տեսակ» Ա.Բ. պատկել «բազմապատկել» (չունի Ա.Բ) Տաթև. ձմ. ճժէ*; ՊԱՏԻՃ *(կազմուած* -իճ *մասնիկով. հմմտ.* ուսիճ*) «ցորենի կճեպ» (որ և պատեան) Վեցօր. 87. Ոսկ. Հերոդ. 618. «սոնապան՝ որ սրունքն է պատում» Մաշտ. ջահկ. «փղի կնճիթ» Վեցօր. 194. Փիլ. լիւս. 137 (վերջին իմաստի զարգացումը դժուար է բացատրել. տե՛ս նաև առանձին)*; ՊԱՏԱՍ, ի–ա *հլ. «կապոց, բեռ» Ծն. լա. 34. Ոսկիփ. որից* պատատել *«փաթաթել» Ոսկ. ա. կոր. Եւագր. փիլ.* պատատուկ *«բաղեղ». Մեսր. եր. Բժշ.* պատատանիճ *Բարուք. զ. 7*։

ԳԴ պատիպատ ձևը գնում է պրս. bādūbīd *«անոտի, անօգուտ» բառից*։ Gosche 40 prati+dā *կամ* prati- *մասնիկի մի բայական ձևն է համարում*։ Canini, Et. étym. *145 զնդ.* bdā *«շրջապատել»*։ *Տէրվ. Նախալ. 92 հնխ.* pat *«ընկնել, պատահիլ, թռչիլ» արմատից և կամ հնխ.* pad, *որ գրեթէ նոյն նշանակութիւնն ունի*։ *Հիւնք. էջ 114 պրս.* bādān, ābādān *«շինութիւն, հաստատութիւն», իսկ էջ 346* պատուէր *բառից*։ Patrubány SA *1, 198 համառօտեալ ժողովրդական ձև է* պատուար *բառից. իսկ ՀԱ 1903, 221* ap- *մասնիկով* ɣad- *«երթալ» արմատից (հմմտ. լտ.* vado *«երթալ»), իբր «վերև գնացող (պատ)»*։ *Փորթուգալ փաշա, Եղիշէ էջ 291* պատեան=*պրս.* պատեան *«ունող, պահպանող»*։ *Սագրզեան ՀԱ 1909, 335 սումեր.* bad, bat *«պարիսպ»*։ Karst, *Յուշարձան 400* պատ=*սուր.* pātu *«սահման, շրջապատ», 403 սումեր.* bad, bat *«որմ, շրջապատ», 424 ուլգուր.* bōt, būt, but *«ցանկապատ»*։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 312* պատան=*զնդ.* paitidāna, *պհլ.* padtān *«վերարկու»*։

ԳԻՒՒ.—Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. պատ, *Ալշ. Մշ.* պաղ, *Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* բաղ, *Տիգ.* բոդ, *Ասլ.* բաղ, բա*, *Զթ.* բօղ, բոդ, *Հճ.* բօղ, *Սվեդ.* բուղ, *բոլորն էլ նշանակում են «որմ, պատ», իսկ Համշ.* բաղ *«ցանկապատ».—Ապլ. կորցրած է այս բառը (պահում է հին* n՛ւ*ման հոմանիշը*<*nւմ-ն), բայց գիտէ* պա՛տիլ *«շրջապատել»*։ *Ունինք նաև* պատ *Ղրբ. «շարք. 2. դուլպայի մէկ հիւսքը. շուրջանակի գործած մէկ թել», պատ գալ «պատել,*

դառնալ», պատ ընկնիլ *«փաթթաթուիլ»*, պատ տալ *«դառնալ, պատել, շրջապատել»*։ Նոր բառեր են պատածակ, պատաշար, պատատակ, պատտակ, պատգլուխ, պատընկնուկ, պատծական, պատկար, պատկից, պատմար, պատուսոիմ աճել, պատիպատ աճել *«շուրջը դառնալ»*։—Առանձին տես փաթել *«պատել»*, փաթաթել, փաթոյր։

ՊԱՏ *«օգնութիւն, նպաստ»*. առանձին գործածական չէ. գտնւում է միայն պատառնուլ *«օգնութիւն՝ նպաստ ընդունիլ»* ոճի մէջ. Պատ առեցեալ յիշողէն. Մագ. դամագտ. 5. Նոյն բառն է որ ունի Բառ. երեմ. 265 պատառայել *«օգնել»*։

Պատագարոս տե՛ս Պատգոս։

*ՊԱՏԱԳՐՈՍ, ի–ա հլ. *«ոտնաւոր, ոտքի ցաւ ունեցող»* Լաբուբ. 9. Ագաթ. Խոր. Գևոնդ լա, էջ 133։ Կայ գրուած պատագարոս Մագ. Թղ. էջ 234 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 202). աւելի հարազատ, բայց քիչ գործածական ձև է պոտագրոս Նւս. պտմ. 65, 498։

= Յն. ποδαγρός *«ոտքի կաթուած ունեցող»*. կազմուած է ποῦς (սեռ. ποδός) *«ոտք»* + ἀγρέω *«որսալ, բռնել»* բառերից։ Յոյնից են փոխառեալ նաև ասոր. ܦܛܓܪܐ pṭagrā կամ ܦܘܕܓܪܐ podagrā, լտ. podager, podagricus, գերմ. Podagra, ռուս. подагра են հոմանիշները։ Մեր բառի մէջ առաջին ձայնաւորը հրկրորդի ազդեցութեամբ է. իսկ ա (փխ. ո) թերևս ասորականի ազդեցութեամբ։—Հիւբշ. 371։

Առաջին անգամ ուղիղ համեմատեցին Վիսառնեանք, Թրգմ. Խոր. էջ 136։ ՀՀԲ բառ չն.։ ՆՀԲ ուղիղ է։

*Նշ*Ր *պրս.* պատիուն, պատխէն *(իմ՛* بادخون bādxōn بادخن bādxan), *որպէս թէ «հողմնացոյց» և յն.* θυρίς *որպէս «դռնակ»։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. 207 և Հիւնք. պրս.* بادخان bādxān *«հողմամուտ պատուհան»։— Այս բոլորը, ինչպէս նաև պրս.* بادهنج bādāhanǰ *«լուսանցոյց ծակ», անյարմար են, որովհետև գալիս են պրս.* باد bād *«քամի» բառից, որի հին ձևն է պհլ.* vāt, *զնդ. սանս.* vāta- *«քամի»։— Փ. Տէր-Մովսէսեան,* Arm. Bauernhaus, *էջ 126 (Բրգմ. ՀՍ. 1893, 43) հյ.* պատ *և հանել բառերից, իբր «պատի մէջ ծակ»։ Պատահական նմանութիւն ունի եբր.* פתחון pittāḥōn *«բացում»։*

Գիհ.—Մշ. պադուհան, *Մկ.* պտուխան, *Վն.* պաւխան, *Տիգ.* բբդոհոն, *Սվեդ.* բոդիհուն *(փոքրը՝* բոդոհնէօգ), *Զթ.* բոդիհիւն, *Խրբ.* բաղիֆօն, *Երև.* պըղրհան, *Գոր. Ղրբ.* պոռհան, *Ագլ.* պսո՛րհան, *բոլորն էլ «պատի մէջ դարան», իսկ Հճ.* բահադէն *«լուսամուտ, պատուհան,* fenêtre»։

Փոխ.—Վրաց. პატოანი պատոանի *«պատուհան, լուսամուտ,* ОКНО» *Ջուբինով*[2] *1008։*

*ՊԱՏՈՒՀԱՍ, ի *հլ. «պատիժ, սաստ, յանդիմանութիւն. 2. պատժի արժանի գործ, յանցանք» ՍԳր. Ոսկ. մ. ա. 17 և հին. որից* պատուհասել *ՍԳր. Եփր. ծն. Ոսկ. յհ. և բ. կոր.* պատուհասակոծ *ՍԳր. Ոսկ. մտթ. և յհ. Սերբեր. Ագաթ.* պատուհասագոյն *Ոսկ. բ. կոր.* անպատուհաս *կոչ. ժանեապատուհաս Փիլ. լիւս. ևն։*

=*Պհլ.* پاتوفراس pātūfrās *«չար հաւատացումն, պատիժ» բառից. այս ձևը, որ հայերէնի համար յարմարագոյնն է, ունի* Salemann ZAH *8 (1908), 108. այլուր գըտնում ենք սովորաբար* پاتفراس pātfrās, *որ* Nyberg, Hilfsbuch d. Pehlevi *1, 57 կարդում է* pātifrās։ *Սրա միւս իրանեան ձևերն են մանիք. պհլ.* p'dyfr'h, *հարաւարևմ. պհլ.* h'tfr" (=pātfrāh), *պազ.* badafrāh, *որ* bādāfarā, bādāfarāh, bādāfrāh, bādāfarāš *(ուղղ.իլ* pādafrāh) *«հաւատացումն չար գործոց, պատիժ»* (Horn *§ 154), զնդ.* paitifrasa- *«հարցաքննութիւն, պատիժ», հպրս.* *pātifrāθa-։ *Այս բոլորը կազմուած է* pāt-, paiti- *նախդիրով* pares<*հնխ.* prek'->*հյ.* հարց *արմատից, որ այստեղ դատական հարցաքննութեան նշանակութեամբ է առնուած. հմմտ. նոյն արմատից հպրս.* avam ufrastam aprsam *«պատժեցի, լաւ պատժեցի», զնդ.* frašna- *«դատարանով լուծելու հարց», սոդդ.* βr's *կամ* βr"s (=frās) *«պատիժ», քուշ.* prekṣe *«դատաւոր» ևն։ Հայերէնի մէջ պհլ.* fr *դարձած է* ւհր *(հմմտ.* աւրհնել, հրապարակ*) և յետոյ* r *ընկած է։—Հիւբշ. 226։*

*Նշ*Ր *«պատհալ և ի վերայ հասեալ»։ Ուղիղ մեկնեց նախ Մառ* ЗВО *5 (1892), 320, որ համեմատում է պհլ.* pādafrās *ձևի հետ։ Թիրեաքեան, Պատկ.*

աշխ. գրակ. 207 պրս. پادَاش pādāš *կամ* پاداشت pādāšt *«բարի հատուցումն»։ Հինք. պրս.* պատաֆէրաշ։— Müller WZKM 8, 283, *Թրգմ. ՀԱ 1894, 294 դնում է պհլ.* pātfrās *ձևից փոխառեալ։ Հիւրշ. վարանում է ձայնական տարբերութեան պատճառով, որ հարթում է* Meillet, Esquisse 13, MSL 17, 243 *և* 18, 316։

ԳԻՒ.—Ախց. Կր. Տփ. պատուհաս, *Մշ. Շմ.* պադուհաս, *Մրղ. Սլմ. Վն.* պատուխաս, *Մկ.* պտուխաս, *Ննխ.* բադուհաս, *ՋԹ.* բադուհօս, բադուհոս, *Սվեդ.* բտղիհուս, *Գոր. Ղրբ.* պտըհաս.— *իսկ Ատն. բառը* բադուհաս *կամ* բադահաս *ձևով գործածւում է «տգեղ, տձև մարդ» նշանակութեամբ։*

ՓՈՒ.—Սղերդի արաբախօս քրիստոնեաներն ունին patixas *«պատուհաս» (Բիւր. 1899, 116)։*

ՊԱՏՈՒՄ *«եղած դէպքերը նկարագրել». արմատ առանձին անգործածական, որից* պատմել *(<*պատումել) ՍԳր.* պատմագիր *Նար. քր. Ագաթ.* պատմիչ *ՍԳր. Նար. քր.* պատմութիւն *ՍԳր. Ոսկ. Նար. պատմ. ճշմարտապատում Կորիւն. Ագաթ. շնորհապատում Կորիւն. անպատում Բ. կոր. թ. 15. Ագաթ. Նար. պատմ. աստուածապատում Կոչ. Ագաթ. դժուարապատում Իմ. ժէ. 1. Երր. ե. 11. դիւրապատում Կորիւն. բղձապատում Ջագ. ժ. 2. Երեմ. կթ. 8. իմիճապատում Ագաթ. խառնապատում Ագաթ. կարճապատում Ագաթ. բազմապատում Եփր. Հռ. ևն։*

ՆՀԲ տե՛ս պատգամ։ Windisch. 42, Böttich. Arica 87, 423 *սանս.* pratimā, *պրս.* paimūdan *«չափել» բառերի հետ։* Lag. Urgesch. 138 *սանս.* mā *«չափել» արմատից։* Müller SWAW *42, 250 և 46, 463 պրս.* paimūdan *և զնդ.* paitimā։ *Վերջինիս հետ նաև Հիւրշ.* KZ 23, 19: Canini, Et. étym. 195 *պրս.* bād, *հինդ.* bāt *«բառ»։ Հինք. պատգամ բառից։ Հիւրշ. 224 մերժում է պրս.* paimāyam<*պհլ.* patmāyam *«չափում», որովհետև հայերէնի արմատն է պատում և ո՛չ թէ պատմ. («չափել» իմաստն էլ անյարմար է)։ Ալիշան, Հայապատում Ա. պատել բայից։* Karst, *Յուշարձան 406 սումեր.* pa, paa, pad *«ասել, յայտարարել»։*

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. պատմէլ, *Ագլ. Մկ. Տփ.* պատմիլ, *Մրղ.* պատմըէլ, *Ալշ.* պադմել, *Շմ.* պադմիլ, *Սչ.* բադմել, *Ննխ. Ռ. Սեբ.* բադմէլ, *ՋԹ.* բադմիլ, *Համշ.* բադմուշ, *Տիգ.* բոդմէլ, *Ասլ.* բա*մէ՝լ։

Պատսբայել *տե՛ս Պատգրել։*

***ՊԱՏՊԱՐ.** *արմատ առանձին անգործածական, որից* պատապարել *«պահպանել, պաշտպանել. 2. հանգստացնել. 3. իրեն ուժ տալ, անձը զօրացնել» ՍԳր. Ոսկ. մ. ա. 18 և յհ. բ. 14. «շրջապատել» Նար. ճշ.* պատրսպարիլ *«ապաստանիլ, ապաւինիլ, հանգչիլ, ուժ առնել, կազդուրուիլ, նորից կռուի պատրաստուիլ» ՍԳր. Ոսկ. Եզն.* պատսպարեցուցանել *Ովս. ժա. 11. Երեմ. իգ. 8. կ. 19.* պատսպարութիւն *Եւս. քր.* պատսպարան *«պաշտպան, նեցուկ, ֆիկունք» Ա. Թես. բ. 14. Ոսկ. Ես. յհ. բ. 39. և մ. ա. 18. Վեցօր. «ապաստարան» Պիտ.* անպատսպարան *Իմ. ժզ. 11. Ոսկ. մ. ա. 3. Եփր. Բ. Թես. 191. Բուզ.* պատսպարանել *Փիլ. լին.* անպատրսպար *Նար. ևն։*

=պհլ. *patspar *ձևից, որ կազմւած է* pat=*զնդ.* paiti- *նախդիրով՝* spar=*պազ.* spar=*պրս.* sipar *«ասպար, վահան» բառից, իբր «վահանի տակ առնել». կազմութեան կողմից հմմտ. յն.* ὑπερ-ασπίζω *«վահանով ծածկել, պաշտպանել»* (ὑπέρ *«վրայ» և* ἀσπίς *«վահան» բառերից), որ և յհանարար թարգմանուած է գերասպարել։—Հիւրշ. 226։*

ՀՀԲ «իբր շուրջ զինիք պատսպարել»։ ՆՀԲ և Հինք. «պատել իբր ասպարաւ»։ Հիւրշ. Pers. Stud. *էջ 192 հպրս.* *patispar-, *իսկ* Arm. Gram. *երկու տարբեր ծագում է տալիս բառիս. «պահպանել» նշանակութեամբ դնում է վերի ձևով, իսկ «հանգստացնել» նշանակութեամբ հանում է պրս.* supurdan, sipāram *«տալ, յանձնել» (>հյ.* ապ-սպարել*) բառից՝* pat- *նախդիրով։ (Ըստ իս «հանգստացնել» յառաջացած է առաջին նշանակութիւնից, ուստի բառը բաժանելու պէտք չկայ, մանաւանդ որ «յանձնել» նշա-*

նակութիւնը համաձայն չէ «հանգստացնել» նշանակութեան)։

Պատվարդ տե՛ս Բատավարդ։

ՊԱՏՐԱՆ «յանցաւորի պատիժը իր վրայ առնելու պատրաստ անձը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում ենք գործածուած Սմբ. դատ. էջ 148. (Karst թարգմանում է Sühnopfer)։

*ՊԱՏՐԱՍ (յետնաբար ի հլ.) «յօժար, կազմ» ՍԳր. «առձեռն, ներկայ» Փիլ. «զգոյշ» Վրք. հց. Ոսկիփ. Մխ. բժշ. «ինչք, կարասիք» ԱՒ. որից պատրաստել ՍԳր. պատրաստիչ Վեցօր. պատրաստաբան Բուզ. պատրաստագոյն Բ. կոր. Թ. 3. Ոսկ. ես. պատրաստական ՍԳր. անպատրաստ ՕՆ. ա. 2. Բ. կոր. Թ. 4. Ագաթ. Ոսկ. առձեռնպատրաստ Պիտ. Խոր. ՅՀ. կթ. դիւրապատրաստ Նար. իճնապատրաստ Բրս. պհ. Մաշկ. յառաջապատրաստ Ուռհ. Կանոն. նախապատրաստել Ոսկ. յհ. ա. 33. պատրաստական, պատրաստականութիւն (նոր բառեր) ևն։

=Պհլ. *patrāst<հպրս. *patirāsta- «պատրաստ» բառից, որ կազմուած է pat-< pati- նախդիրով՝ հպրս. rāsta=սանս. rād-dha- «կազմ, պատրաստ» բառից. հմմտ. պհլ. բայական ձևով 𐭯𐭲𐭲𐭮𐭮𐭭 patrāstan (ZAH, 8, էջ 111)=պրս. پیراستن payrāstän (արդի հնչումով pirāstän) «յարդարել, զարդարել. 2. մուշտակ մորթ կազմել. 3. յօտել զծառ և զայգի. 4. վասն սերմանելոյ զարտորայս կազմ առնել և ևս զփոսն լնուլ» (Horn § 352): Նոյն արմատից ā մասնիկով կազմուած ձև է պրս. آراستن ārāstan «զարդարել»։—Հիւբշ. 227։ Müller SWAW 42, 250 և 44, 231 պրս. pairāsta: Justi, Zendsp. 256 զնդ. rād արմատի տակ՝ պրս. pairāstan, ārāstan ևն ձևերի հետ։ Պատկ. Изслед., Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. 207 և Հիւնք. պրս. pairāstan։ Հիւբշ. 227 ենթադրութեամբ երևան էր հանում պհլ. *patrāst ձևը, Salemann, Manich. Stud. ZAH 8 (1908), 111 գոաւ պհլ. patrāstan բայը և կցից հայերէնին։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Տփ. պատրաստ, Մշ. Շմ. պադրաստ, Կր. պառռաստ։

*ՊԱՏՐԻ «եւրոպացի կաթոլիկ կրօնաւոր». նոր ժամանակի բառ, որ մի քանի անգամ ունի Առաք. պտմ. 141. նոյնը նաև հայոց կաթուղիկոսի համար է գործածում Ձքր. սարկ. Բ. 74. 92. «Պատրի ոմն եկեալ է յԱճամստանայ. ՅԱճամստանայ պատրի մի եկեալ»։ Հոլովուած ձևով կայ պատրեաց Առաք. պտմ. 138, թէև այս հեղինակը այլուր գործածում է պատրիկ (տե՛ս այս բառը)։

=Լտ. pater «հայր» բառից. բառիս կազմութեան և գործածութեան վրայ անշուշտ ազդած են պատրիկ և պատրիարք բառերը։

*ՊԱՏՐԻԱՐՔ, ի–ա հլ. (յգ. նաև –ք) «հայրապետ, եպիսկոպոսապետ» ՅՀ. կթ. Մխ. դտ. Շար. Սանահն. որից պատրիարքութիւն ՅՀ. կթ. Վրդն. պտմ. պատրիարքական Ասող. Յայտմ. ապր. 26. Ճառընտ. պատրիարքանոց Վրք. հց. պատրիարքական (նոր բառ). պատրիարք Մխ. առ. 565. բոլոր այս բառերը սովորաբար գ տառով են գրւում (նաև արդի արևմտեան գրականում), որ թերևս արգ, յարգ բառի նմանութիւնից յառաջացած մի սխալ է։

= Յն. πατριάρχης «նահապետ, հայրապետ», որ կազմուած է πατριά «ցեղ, ընտանիք» (այս էլ πατήρ «հայր» բառից)+ἄρχω «իշխել» բառերից և ըստ այսմ թարգմանուած է նայրապետ։ Յունարէնից են փոխառեալ նաև լտ. patriarcha, ֆրանս. patriarche, արաբ. بطريق batrīq, թրք. پطريق patriq «պատրիարք» ևն։—Հիւբշ. 371։

Ուղիղ մեկնութեան ծանօթ են հներից Լմբ. մատ. էջ 82 «Դաս պատրիարգաց, որ թարգմանին առաջին հարք, այսինքն հայրապետք... և կոչին յունարէն պատրիարգք».—ՅՀ. արճիշ. էջ 20 «Պատրիարգն՝ որ թարգմանի հարանց հայր».—Տաթև. հարց. 607 «պատրիարքունքն, որ թարգմանին՝ հայրապետութիւն»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. 47, 382. Նոյնը նաև ՀՀԲ, ՆՀԲ։—Գ. Թիւրաքեան, Մասիս 1881 մայ. 30 նոյն է դնում արաբ. badraqa «առաջնորդ»։ Տէրվ. անդ՝ յունիս 2 նոյնութիւնը ընդունում է, բայց արաբը դնում է փոխառեալ յոյնից կամ լատի-

նից, որին համաձայն է Բիւրաքեան, անդ՝ յունիս 11։

ԳԻՒ.—Մկ. պատրիյարք[1], *Մշ.* բադրիարք, *Պլ. Ր.* բադիրյարք *(հին ձևը Պլ.* բադվիրարք), *Ակն. Սեբ.* բադիրարք, *Խրբ.* բադվիրարք, *Կր.* պատիյարք, *Մշ.* պադրյալք, *Ասլ.* բա*րիարք, բա*րիար, *ՋԲ.* բադրիյօյք, բադրիյորք, *ՀՃ.* բադիյօրք։

**ՊԱՏՐԻԿ, ի–ա Հլ. (յգ. նաև -տրկունք) «յունական իշխանական մի տիտղոս» (այսպէս էին կոչւում յատկապէս Արաբների կողմից Հայաստանի կառավարիչ կարգուած հայազգի իշխանները) Եւս. քր. Վրք. Հց. Կաղանկտ. Ղևոնդ. Ասող. Օրբել. «առաջաւոր մարդ, երեւելի ոմն» Առաք. պտմ. 271. որից* պատրկութիւն *Ղև. Մագ.։*

=Յն. πατρίκιος, *որ փոխառեալ է լտ.* patricius *բառից. Կոստանդին կայսեր ձեռքով հաստատուած իշխանական մի աստիճան. որից նաև արաբ.* بطريق baṭrīq *«զօրավար, սպարապետ» (Կամուսի Թրք. Թրգմ. Բ. 871), վրաց.* პატრიკი պատրիկի *«գլխաւոր առաջնորդ բանակի»։—Հիւբշ. 371։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

**ՊԱՏՐԻԿ «կրօնաւոր, վարդապետ». նոր ժամանակի բառ, որ գործածում է Առաք. պտմ. 109, 134 եւրոպացի կաթոլիկ կրօնաւորների համար։*

=Լտ. pater, patri, *հյ.* պատրիկ *և Թիֆլս Թրք.* پطريق patrik *«պատրիարք» ձևերի խառնուրդից յառաջացած մի բառ։—Աճ.*

**ՊԱՏՐԻՆՋ «բոյս է. cedronella, melissa». ունին միայն ՀՀԲ և ՋԲ. իսկ ՀԲուս. յիշում է միայն* բուրինջխոտ *բառի տակ՝ § 816։*

=Արաբ. بادرنج bādranj, *որ գալիս է պրս.* بادرنك bādrang *կամ* bādirang «species cucumeris, malum citreum» *բառից և այս էլ պհլ.* vātrang *ձևից։ Այս բառից է պհլ.* vātrangboi *(բուն նշանակում է «լեմոնահոտ»)>պրս.* bādrangboya, bādranbōya> *արաբ.* bādranjbūya, baδarranjbūya *«պատրինջ, մելիսա, Թրք. օղուլ օթի»>հյ. տառադարձուած* պատրանճպուխ, պատրմբոյխ *(ՀԲուս. § 2521)։—Հիւբշ. 274։*

Ուղիղ մեկնեցին Böttich. Arica 74, 200, Lag. Urgesch. 836, Müller SWAW 35, 26:

ԳԻՒ.—Ջղ. պատրինջ *«մի տեսակ խոտ»։*

**ՊԱՏՐՈՅԳ կամ ՊԱՏՐՈՅԿ (ըստ ՆՀԲ ի, ի–ա Հլ. բայց կայ միայն սեռ. -ի, Վեցօր, գրծ. -իւ Վրք. Հց.) «պատրոյգ, փիլթայ, ֆիթիլ» Ես. խբ. 3. խգ. 17. Մտթ. ժբ. 20. Վեցօր. էջ 57. Եփր. փես. 391. որից* լուսապատրոյկ *Նար. մծբ.։*

*=ՊՀլ. *patrōk ձևից, իբր զնդ. *paitiraoka-, որ կազմուած է* pat- *նախդիրով* rōk *«լոյս» բառից. համմտ. զնդ.* paiti-raočaya- *«վառել, լուցանել», սանս.* rōka- *«լոյս, պայծառութիւն» (բնիկ հայ ձևն է* լոյս*)։ Ըստ այսմ մեր բառի ուղիղ գրչութիւնն է* պատրոյկ, *թէև նոր գրականում աւելի ընդունուած է* պատրոյգ։—*Հիւբշ. 227։*

ՆՀԲ պատել *բայի՞ց։* Lag. Urgesch. 337 ruč *արմատից։ Նոյն,* Btrg. bktr. Lex. 63 *զնդ.* *paiti-raoka-: Müller SWAW *88 (1877), 15 զնդ.* paiti-raōγna- *ձևից, ուր* raōγna *=պրս.* روغن rōγan *«իւղ»։ Հիւնք. պատմուճան բառի՞ց։*

ԳԻՒ.—Կր. Ջղ. Տփ. պատրուք, *Մկ. Վն.* պատրուք[1], *Աշլ. Մշ.* պադրուգ[1], *Ագլ.* պմ՛ատրիւգ[1], *Երև.* պա՛տրիք, *Սվեդ.* բոդրէք, *Մրղ. Սլմ.* պատրուք, *Ասն.* բադրիգ, *Եւդ.* բատրուք, *Խրբ.* բայրոք, *Ակն.* բայօք, *որոնք նշանակում են «ճրագի պատրոյգ». փոխաբերաբար Տփ.* պա՛տրուք *«ողնաշարի միջի ծուծը», ՋԲ.* բադրըք *(նաև Ակն. Ջն.) «բուրդի կամ բամբակի գլանաձև ոլորք՝ որից իլիկ են մանում»։ (Այս նշանակութեամբ է Բերբերաքար Տփ.* պա՛տրուք *«ողնաշարի միջի ծուծը», ՋԲ.* բադրըք *(նաև Ակն. Ջն.) «բուրդի կամ բամբակի գլանաձև ոլորք՝ որից իլիկ են մանում»։ (Այս նշանակութեամբ է Բերբերաքաօս հայերից Այն.* bedrig*)։ Նոր բառեր են* պատրգամէջ, պատրուգկալ *կամ* պատրգալ *«բարակ ու կոլոր ճիւղ, որով բամբակը ոլորում ու պատրոյգ են շինում»։*

ՓՈԽ.—Վրաց. პატრუქი պատրուքի, *Թուշ.* პატრუქ პატრուք *«պատրոյգ», Բրք. գւռ. S.* berük *«պատրոյգ» (Բիւր. 1899, 799). կայ նաև գւռ. Բրք.* بدرك bedrük *«բամբակից հիւսած պատրոյգ վէրքի վրայ դնելու ևն» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 544) կամ* بدرك bedrek *«բամբակի ոլորած քուլայ՝ մանելու համար» (*Будаговъ *1, 247)։*

ՊԱՏՐՈՅՍ *«պատկին, պատուաստ» Ոսկիփ. Վստկ. 35, 128. որից* պատրուսել *«պատուաստել» Յայսմ. մրտ. 19. Վստկ. 34. 44.* պատրուսիլ *Տաթև. ձմ. կդ.* տերևպատրոյս *Վստկ. 139, 140.* ճղապատրոյս *Վստկ. 140.* պատրուսեճի *«պատուաստած բոյս» Քուչ. 75։*

ԳԻՒ.—Կր. Մկ. Վն. պատրուս, *Ալշ.* պաղրուս, *Երև.* պաղրիս, *Խրբ.* բադրուս, բայրօս, *Մշ.* պադրուստ, *Հմշ.* բադրուստ, *Սվեդ.* բադրչատ, *բոլորն էլ «ծառի պատուաստ». փոխաբերաբար՝ Ջղ.* պատրուստ, *ՋԹ.* բադրօս, *Տիգ.* բադրուս *և բայական ձևով Եւդ.* բարուցել *«երկու թել ոլորելով իրար կպցնել» (նոյնը ունին նաև Ախց. Մն.—այս նշանակութեամբ է Բրբախօս հայերից Ալն.* bedrislemek)։

ՓՈԽ.—Թրք. գւռ. Խրբ. bayros, *Մն.* betres yapmaq *«թել թելի կպցնել, թելերը պատրուսել»։*

***ՊԱՏՐՈՆ** *«միջնադարեան իշխանական մի աստիճան». Մհլ. բառ. յիշուած է 1198 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. էջ 39) ևն։*

=Ֆրանս. patron *«պատրիկ, պաշտպան, պետ» (ծագում է լտ.* patronus *հոմանիշից)։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Նորայր, Բառ. ֆրանս. էջ 914 բ։

ՊԱՏՐՈՒԱԿ, ի–ա *Հլ. «երեսի ծածկոյթ, քող, դիմակ. 2. որևէ ծածկոց, վարագոյր. 3. կեղծիք, պատճառանք, առիթ» ՍԳր. Ոսկ. ես. որից* պատրուակ բղրոյ *«նամակի ծրար» Կղնկտ. Հրտր. Շահն. բ. 72 (Հրտր. էմինի՝* պարուակ*). Ոսկիփ.* պատրուակել *«ծածկել, քօղարկել» Եզեկ. լբ. 7. Ոսկ. մ. գ. 30. Եփր. աղ. և ծն.* պատրուակիչ *«աչքը լուսն կապել, մթագնիլ» Մանդ.* անպատրուակ *Սկևռ. լմբ։*

ՆՀԲ Հլ. պատել *և պրս.* rōy *«երես, դէմք» բառերից։ Տէրվ. Մասիս 1881 ապրիլ 28 անշուշտ պրս. փոխառութիւն է։ Հիւնք. պրս.* parda *«վարագոյր» բառից։* Müller WZKM *8 (1894), 275 գնդ.* *paiti-raoδa։

***ՊԱՏՐՈՒՃ** *(որ և* բադրոճ, բադրուճ, պատրիճ*) «ռեհանազգի մի բոյս,* pouliot, *դաղձ,* mentha pulegium L*» Վստկ. 169. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2523։—Վստկ. յիշում է անանուխի հետ՝ իբր արաբ. «Վասն անանխոյ և մարուֆի... այդ խոտիդ արապկերէն ասեն* պատրուճ *և մեք չկարացաք ճշմարտել ի թարգմանէն».—սրանից երևում է որ թարգմանութիւնը կատարել են մի աբրաբագէտի կամ մի արարի օգնութեամբ, որ այս բառի հայերէնը չի իմացել։*

=Արաբ. بادروج bādruj *կամ* باذروج bāδurrūj *«ռեհան,* ocimum basilicum*»* (Steinschneider WZKM 11, 313), *որ կամուս, Բրք. Բրդմ. Ա. էջ 374 պրս.* بادروك bādrūk *բառից արաբացեալ է դնում։—Հիւբշ. 274։*

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Հայկ. բառաք. 97։

***ՊԱՏՐՈՒՃԱԿ** *(գրուած նաև* պատուրճակ, պատրճակ*), ի–ա Հլ. «ուտելի կենդանի» Ոսկ. մ. գ. 16. Եղիշ. Մագ. Երզն. քեր. «ոչխար» ՍԳր. «ոռճիկ, ուտելեղէն» Եւս. քր. բ. 272։*

*=Պհլ. *patročak ձևից, որ է իբր հպրս. *patirauča-. կազմուած է* pati- *նախդիրով* rauča- *«օր» բառից, որի միւս ժառանգորդներն են պհլ. *rōčīk>Հյ.* ռոճիկ *=պրս.* روزی rōzī*։ Բառիս միջին պրս. ձևը պիտի լինէր *patrōza, որից փոխառեալ է Թալմուդ.* פטרוזא patrōzā *«նիհար գառ»։ Սրանց հետ ո՞յն է նաև պրս.* بادروز bādrōza *կամ* بادروز bādrōz *«օրական կարգեալ ոռճիկ. 2. հանդերձ հին որ յիւրաքանչիւր աւուր ազանի. 3. սովորական կերակուր, որ յիւրաքանչիւր աւուր կերեալ լինի»։—Հիւբշ. 514։*

ՆՀԲ յիշում է վրաց. պատրուճա՛կնի։ Lag. Btrg. bktr. Lex. 63 ruč *արմատի տակ։* Lag. Arm. Stud. § 1850 *մերժելով այս՝ դնում է* ruj *արմատից, իբր պրս. *pairōza, որից արաբ.* fairūzag, pairōz *«յաղթական»։ Հիւնք. պրս.* պատրուզ, պատրուզէ։ *Ուղիղ մեկնեց նախ* Müller WZKM 8, 286։

ՓՈԽ.—Վրաց. პატრუჭაგი պատրուճագի *«զոհի ոչխար» Դան. ժգ. 31, 32, ուր հայերէն օրինակն էլ ունի* պատրուճակ։

ՊԱՐ, ու *Հլ. բուն նախնական նշանակութիւնն է «շուրջ, շրջան», որից ձևացած են*

հետևեալ առումները.—«պար, խաղ, կաքաւ, հօրա» ՍԳր. «խումբ, հաւաքոյթ» ՍԳր. Պիտ. Շար. «աստղերի հոյլ և նրանց շարժումը» ժմ. Ջքր. կթ. ծն. Անաւ. յհ. մկ. «անասունների, յատկապէս մեղուների խումբ» Վեցօր. 164, Եղիշ. դտ. 188. Փիլ. Մագ. Վրք. հց. «այլևայլ իրերի շարք» Նար. Բրս. ընչեղ. սըրտանից են պարանձև «կոլոր» Ոսկ. ես. 159. պարանցիկ Դտ. Բ. 27. պարաւոր ՍԳր. բարձրապարու Վրդն. քրզ. գեղապարել Պիտ. Փիլ. ՅՀ. իմ. առ. անպար Փիլ. լին. նօթպարեան ՅՀ. իմ. եկեղ. խորդապար Մագ. կոճապար Պիտ. օդապար Պիտ. օդապարիկ ՅՀ. կԲ. պար կամ պարս «մեղուախումբ» Ոսկ. եփես. 828. Նաագր. 360. որից պարս տալ «մեղունների խմբուիլը» Եփր. դտ. 341. պարսմայր «մեղունների թագուհին» Վստկ. ոճով աւտում է պար առնուլ «պարել, պար բռնել» ՍԳր. «պարունակել, բովանդակել» Արիստ. աշխ. պար արկանել «շրջապատել» Նիւս. ԹղԹ. և կազմ. յետոսկեդարեան շըրջանին՝ դարձել է նախամասնիկ՝ համապատասխան յն. περι և լտ. circum մասնիկներին. հմմտ. պարագայ=περιφερόμενος, պարագրել=περιγράφω, circumscribo, պարառնել =περιλαμβάνω, պարունակել=περιέχω ևն. այս գործածութեամբ ունինք նաև փար- ձեւով. ինչ. փարապառնալ=περιαίρεω Անյ. ստոր. փարադրել=περιτίθημι Արիստ. ստոր. շրժ. ևն.—Նոր բառեր են պարահանդէս, պարասարահ, պարբերական, պարբերաբար, պարուհի ևն.

Նշ Բծ. յն. περι- և սանս. para- «շուրջ»։ Peterm. 257 սանս. pari, յն. περι։ Windisch. 42 սանս. parā: Gosche 23 սրանց հետ նաև փռիւգ. βριχίσματα «պար»։ Windisch. 42 և Böttich. ZDMG 1850, 360, Arica 48, 34 պարմասնիկով մի քանի բառեր համեմատում են սանս. և յն. ձևերի հետ. այսպէս՝ պարաբերութիւն=paribhar, περιφέρεια, պարագիտել=περιϋδεῖν, պարագրել =περιγράφω, պարադատական=pari+dhāta, պարադիտել=paridhi, պարաւեսեալ=paridṛç: Lag. Urgesch. 79 սանս. pari, յն. περί։ Justi, Zendsp. 179 զնդ. pairi ձևի տակ։ Տէրվ. Մասիս 1882 սեպտ. 2 և Canini, Etudes étym. էջ 196 զնդ. pairi- «շուրջ»։ Տէրվ. Նախալ. 92 զանազանում է պար «խումբ»<par, pra «լնուլ» արմատից և պար «շուրջ»<par «երթալ», յն. περί, սանս. pari ևն։ Մառ ЗВО 5, 318 զնդ. pāδa- «ոտք» բառի հետ։ Հիմնք. պար գոյականը հանում է պարիսպ բառից, մասնիկը յն. περι-ից։ Patrubány ՀԱ 1907, 303 հնխ. *p-poro ձևից, որի մէջ p իբր կրճատում epi «վրայ» բառի, իսկ poro՝ ձևափոխուած հնխ. pero-ից (>լտ. per, զնդ. pairi, հպրս. pariy, յն. περι, ալբան. per, լիթ. peř, հսլ. prě, գոթ. fair, հբգ. far, նրգ. ver)։ Karst, Յուշարձան 403 պար (գոյականը) սումեր. bar «հաւաքել, դիզել, միասին», իսկ պար «շուրջ» (մասնիկը) սումեր. bar «շրջափակ, շրջապատել», 428 ԹԹր. qar, kor «շուրջ»։ Մառ, Христ. Вост. 2 (1913), էջ 27 պար= վրաց. ფერ̇ი փերխ'ի «ոտք», փերխ'ուլի «պար», մինգ. պորկի «ոտք» բառերի հետ. հայերէն ձևն էր նախ պարխ, սխալմամբ խ յոգնակիի նշան համարուից և դարձաւ պար։ Պատահական նըմանութիւն ունի կամիս. piran, biran, որ ԹէՀ ըստ Hrozny, Die Sprache der Hethiter 181 նշանակում է «շուրջը», բայց ըստ Sommer, Hethitisches (Boghaz-köi-Studien № 4), էջ 7 նշանակում է «առջևը»=հյ. առ, լտ. prae։

ԳԻՒ.—Ալղ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մշ. Շմ. Ջղ. Տփ. պար, Ասլ. Խրբ. Հմշ. Սեբ. բար, Ագլ. պօր «պար, խաղ», Սչ. բար «երգ», Թրքախօս հայերից Առն. բար «հարսանեկան երգ», Հճ. բօյ և ՋԹ. բօյս, բարս «մեղունների ձագերը», Խրբ. բարս դալ «մեղունների խմբով երթալը»։ Նոր բառեր են պարտուն, պարտեղ, պարան «դարձնելը», պարանել, պարանուիլ, պարանց ընկնել «ընկղմանիլ», շուտուպարան ևն։

ՓՈՒ.—Վրաց. ბარი պարի «պար» (տե՛ս Մառ, Հայ-վրաց. յարաբերութ. Բրգմ. էջ 31), ბუშპარი շուշպարի «պար», ბუშპრობა շուշպրոբա «պարել», սվան. šäšpär «մի

տեսակ պար» (ծագում են հյ. շուրջպար բառից. տե՛ս նաև ցուցք). Բրք. գւռ. Կր. bar «պար, շուրջպար» (տ. Բիւր. 1898, 387 և 627)։

ՊԱՐԱԶԱՆԻ «ստամբակիլ». ունի միայն ՓԲ յաւել. նոյնը գիտէ նաև Բառ. երեմ. էջ 268 պարազանել և էջ 262 պազանել ձևով, երկուսն էլ մեկնուած «ընդվզել, մարտնչել»։

Պարաժոյժ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եփր. արև. վկայից մէջ, էջ 17. «Ո՛վ սկայազունք անուանիք... բարձունք քան զամենեսեան, որք ոչ կորացուցին զպարաժոյժն պարանոցս ընդ լծով անիծից մահու» (Սոփերք էջ 66 ունի զպարոյթն պարանոցսն)։ Վերջին ձևը յիշում է ԱԲ «կլորաձև, կլորութիւն» նշանակութեամբ, որ բաւական անճահ է։ Անշուշտ լաւագոյն ընթերցուածը պէտք է դնել պարաժոյժ կամ թերևս ուղղելի տարաժոյժ «տկար, անզօր, չդիմացող» նշանակութեամբ, իբր տար և ժոյժ բառերից բարդուած (տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Բ. 10)։ Սակայն հմմտ. պարականոն «անկանոն» (Քաջունի, հտ. Գ. 202) փոխանակ տարականոն. (օր. պարականոն շարականներ)։

ՊԱՐԱԿՆԴՏ «հաւաքումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 268։

ՊԱՐԱՆ, ի–ա հլ. «չուան» ՍԳր. Ագաթ. Երգ. վիպաս. (Խոր. բ. 47). «այգինների մի տեսակ չափ» Վասակ. 10. «որթատունկերի շարքը» Վասակ. 55. որից մազապարան Յայսմ. պարանխաղաց, պարանխաղացութիւն ԱԲ. այգեպարան Վասակ. 55. պար(ա)նմէջ Վասակ. 58, 66. պարընկուլ «ԳԿ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամատունի, Հայոց բառ ու բան 554)։

Աւետիքեան, Քերակ. 1815, 227 –ան մասնիկով պար արմատից, Հիմնք. վարանել բայից։ Սպրդեան ՀԱ 1909, 335 սումեր. bar, Բրք. bay «կապ», Karst, Յուշարձան 403 սումեր. bar «կապել, կապ»։

ԳԻՒՒ.—Երև. Մշ. պարան, Խրբ. Սեբ. բարան, Հճ. բայօն, Ասլ. բարու «չուան, թոկ»։ Նոյն է նաև Սվեդ. pmrուն «թոկ, չուան»։ Վասակ. պարան բառը պահում են պարան Ակն. Ատն. պարտէզներում կանաչեղէն են ցանելու համար փորուած բարակ գիծ կամ ակօս. որթատունկերի մէկ ուղղութեամբ տնկուած շարքը», որից՝

ՓՈԽ.—Բրք. գւռ. Ակն. Բրք. յն. գւռ. Ատն. baran «որթատնկերի շարքը այգու մէջ». (Նոյն Բրք. բառը بارا baran ձևով յիշում են Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 159 և Будаговъ 1, 222)։

ՊԱՐԱՆԴԱՅԵԼ «ընդունիլ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 268։

—ՊԱՐԱՆԻԼ «դառնալ, յետ դառնալ» մէկ անգամ ունի Իմ. ժգ. 14. «Ելեալ ոգին անդրէն ոչ դառնայ և ոչ պարանի շունչն գրաւեալ». (Հին բռ. մեկնում է պարանի «խափանի», որ յարմար չէ. Բառ. երեմ. էջ 268 պարանել «խափանել կամ պաղատիլ», պարանի «կապի, ըմբռնի, կերպարանի». իսկ յոյն բնագիրն ունի ἐξελθὸν δὲ πνεῦμα οὐκ ἀναστρέφει, οὐδὲ ἀναλύει ψυχὴν παραληφθεῖσαν, ու ἀναλύει համապատասխանը՝ որ այլապէս նշանակում է «լուծել, քակել», այստեղ «յետ դառնալ, վերադառնալ» նշանակութիւնն ունի)։

=Կազմուած է պար «շուրջ» արմատից –ան ածանցիչով (ինչ. շուրջ—շրջել). հմմտ. գւռ. պարանել «դարձնել, շուռ տալ, միւս կողմը դարձնել, տապալել», պարանուիլ «դառնալ, շուռ գալ» ևն։

ՆՀԲ «իբրու պարանաւ յետս քարշել»։

ՊԱՐԱՆՈՑ, ի–ա հլ. «վիզ, ճիտ, շլինք» ՍԳր. Կիւրղ. զկ. Ոսկ. մ. բ. 17. «ծովի նեղ անցք, նեղուց, թերակղզու նեղ անցքը» Ա-բիստ. աշխ. որից պարանոցապաղ Նս. լ. 28. պարանոցատանջ Արծր. պարանոցուտ Նիւս. կազմ. մերկապարանոց Սբր. դ. 13. Ոսկ. երր. կարճապարանոց Վեցօր. 193. բարձրապարանոց Գ. մկ. գ. 12. խստապարանոց Սիր. ժգ. 11. Բ. մկ. ժե. 6. Ոսկ. մ. ա. 9. գեղեցկապարանոց Մագ. լայնապարանոց Փիլ. լիւս. Ճառընտ. ևն։

ՀՀԲ իբր պարանանոց։ ՆՀԲ «Իմա՛ որպէս ամբողջ բոլորակութիւն ուլան, ի ձայնէս պար, յն. περί, այսինքն «շուրջ» կամ պարան. վասն որոյ խառն ի առուգաբանութենէ հյ. և յն. ասի վասն ան-

ուանս Պերիճոս *կամ* Բէրիճոս, «*Բայց քո անունդ* Պերիճոս *յայտ է, զի զպարանոց քո պարանով քարշհանցեն ի կորուստն յաւիտենական*». *Յայսմ.*— *Հիւնք.* պարան *բառից*։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 87 ածանցուած* պար «*շուրջ*» *բառից*։

ՊԱՐԱՇԱՆԻԿ «*խորհիլ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 268*։

ՊԱՐԱՊ, ո *հլ.* «*անգործութիւն, դատարկ մնալը*» *Ոն. լգ. 14. Ոսկ. ես. Ես. պատմ.* «*յարմար ժամանակ*» *ՍԳր.* «*անգործ, դատարկ, ունայն*» *Վրք. հց. Ոսկիփ. Ուռհ. որից* պարապել «*յետ կենալ, դատարկանալ ի գործոց*» *Ա. կոր. ժզ. 12.* «*զբաղիլ, պարապ ժամանակը նրանով անց կացնել*» *Գծ. ժէ. 21. Ա. կոր. է. 5.* «*նեղել, ձանձրացնել*» *Ոսկ. հոռվմ. 41.* «*պարպել, մէջը լցնել*» *Շիր. 2.* պարապեցուցանել *Ագաթ. Կորիւն. Կոչ. Սիր. իթ. 34.* պարապուդ *Նլ. ե. 17. Մաթ. ժբ. 44. Եփր. յես.* անպարապ *Խոր. Փարպ. ևն.*— «*Զբաղիլ*» *նշանակութեան զարգացման համար հմմտ. յն.* σχολάζω «*պարապ ժամանակ անց կացնել. 2. պարապ ժամանակը մի զբաղմունքի նուիրել, զբաղիլ, ուսումնասիրել*», *ինչպէս նաև վրաց.* მოცალე մոցալե «*պարապ*», მოცალება մոցալեբա «*զբաղիլ*»։ Canini, Et. étym. *143 սանս.* par «*զբաղեցնել*»։ *Հիւնք. յն.* περίπατος «*ճեմք*» *բառից։ Պատահական նմանութիւն ունի սլաւն.* pari «*պարապ*» (*տե՛ս* Erckert, Die Spr. d. Kauk. Stammes *441*)։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. երև. Կր. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. պարապ, *Ալշ. Մշ.* պարար, *Խրբ. Հմշ. Ննխ. Սեբ. Սչ.* բարար, *Գոր. Ղրբ.* ճպա՛րապ, *Տիգ.* բmրmբ, *Զթ. Հճ.* բայօբ, *Սվեդ.* բmրուբ. (*վերջինս նշանակում է «ոչ-տօն օր, բայց նուիրուած մի սրբի, երբ ոմանք աշխատում են, ոմանք ոչ»*). *որից Ագլ.* պրա՛պիլ «*զբաղիլ*», *Սչ.* բարբել, *Պլ. Ռ. Սեբ.* բարբէլ, *Խրբ.* բարբիլ, *Տիգ.* բmրբիլ, *Զթ.* բայրիլ, բարրիլ, *Հճ.* բայրիլ, *Ասլ.* բարբէ՛լ, *Հմշ.* բարբուշ «*դատարկել, մի ուրիշ ամանի մէջ լցնել*», *Կր.* պարպիլ «*ապաուել, վերջանալ*», *Զթ.* բայրիլ «*մեռնիլ*», բայբըցընիլ «*ապաուել, հատցնել, պարպել*» (*որից և կրճատ՝* բաբցընիլ). բայբընօլ «*գործը վերջացնելով ազատուիլ*». *նոր բառեր են ան-պարպուն Մրշ.* «*անսպառ, անվերջանալի*», *կրկնաբար՝* պարապ-սարապ։

ՊԱՐԱՊԱՆ «*քուրձ, կարաս,* sarcina». *այսպէս ունի Ներսէսովիչ, Բառ. լտ.-Հյ. էջ 479 բ*։

*ՊԱՐԱՍ «*սպիտակ պիսակ (ախտ)*». *գիտէ միայն Քաջունի, Հտ. Գ. 203*։

=*Արաբ.* برص baraṣ «*բորոտութիւն*» (*Կամուս, Բրք. Բրգմ. Բ. էջ 364*)։—*Աճ.*

ՊԱՐԱՊԱՏԻԼ «*ճապկտիլ, յօրանջելու ժամանակ ձգձգուիլ*» *Վեցօր. 86.* «*Սկսանի այսուհետև մերթ յօրանջել յողն երթալ, մերթ ձկտել պարապատելն*»։

ՊԱՐԱՏԻԼ «*մաքրուիլ, սրբուիլ*». *մէկ անգամ ունի Տիմոթ. կուզ. էջ 25.* «*Իբր զՔրիստոսի աշակերտ մաքրեցիր, պարատեցիր. ի բաց զերծո՛ զի ծննդենէն ծածկոյթ*»։ *Նորագիւտ բառ*։

Գտաւ ու այսպէս մեկնեց Աճառ. Նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 96. բայց կարելի չէ՞ նաև համարել «βλίτωσις», իբրև βρῦμ. յն. περιτέμνω *բայի, որից և ունինք պերիտոմել «βλίτωσις». այն ժամանակ բառը կազմուած կլինի պար-հատ-իլ «կտրուիլ շուրջանակի»*։

*ՊԱՐԱՐ «*գիրանալը, մեծանալը*» *Ես. լ. 23. Ոսկ. ես. որից* պարարակ «*գէր, չաղլիկ*» *ՍԳր.* պարարել «*գիրացնել, մեծացնել, պարարտացնել*» *ՍԳր. Եփր. աղ. և եւ. Կոչ. Ագաթ. Ոսկ. ես. Եւագր.* պարարուն *Պիտ. մարմնապարար Ագաթ. որովայնապարար Ոսկ. ա. կոր. երկրապարար Ագաթ. որդնապարար Վրք. հց.* պարարեցուրիւն «*գիրութիւն*» *Մանդ. սիր. 22. գիրապարար Նար. ճոգեպարար Թէոդ. կուս. շռնմարաճապարար Ճառընտ. ակնապարար Նար. յիշ. ևն։ Սրա հետ նոյն է նաև* պարարտ, *որ տե՛ս տակը*։

ՊԱՐԱՐԿՈՂ «*փորագրող*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 268*։

*ՊԱՐԱՐՍ, ի–ա *հլ. (յգ. նաև* –ունք) «*գիրացած, ճարպոտ. 2. բերրի, արգաւանդ*» *ՍԳր.* «*պարարտութիւն, ճարպ*» *Ոն. դ. 4.*

Նեմ. ը. 40. որից պարարտանալ Սղ. կդ. 13. Երեմ. ե. 28. պարարտութիւն ՍԳր. պարարտագոյն Կոչ. պարարտամարմին Փարպ. ճարպապարարտ Մծբ. ևն։ Նոյն է սրա հետ Պարար, որ տե՛ս վերը։

=Իրան. *parar, անց. դերբ. *parart հոմանիշ ձևերից, որոնք թէև կորած են, բայց նոյնն է մատնանշում սոգդ. նորագիւտ parašt «պարարտ». սրանց մէջ r և š ձայնների փոխանակութիւնը ճիշտ այնպէս է, ինչպէս է ճրաժարիլ և ճրաժեշտ բառերի մէջ, որոնք նոյնպէս իրանեան են և որոնց r-ը ձայնների փոխանակութիւնը իրանեան երևոյթ է։

Bugge KZ 32, 23 պարար դնում է -ար մասնիկով՝ հնխ. *sphə-ró-s ձևից. հմմտ. սանս. sphirá- «գէր, լիքը», հսլ. sporŭ «բերրի», սանս. sphá-yāmi «օգտուիլ», հսլ. spĕja «յաջողիլ, ելս գտանել»։ Նոյն IF 1, 453—4 կրկնում է այս մեկնութիւնը և նոյն պարար բառից ա մասնիկով աճած է դնում պարարտ. հմմտ. աւարտ: Canini, Et. étym. 185 պարարել=սանս. bhar «սնուցանել»։ Հինք. պրս. parvardan «սնուցանել», parvarda «պարարեալ» (սրանց հետ հմմտ. գնչ. parvaráva «պարարել», parvardó «սնեալ», աֆղան. parwaral «սնուցանել», պհլ. parwartan «սնուցանել»)։ Müller WZKM 11, 206 պարմասնիկով՝ *ար=լտ. alo «սնուցանել» արմատից։ Bugge-ի մեկնութիւնը շատ կասկածական է գտնում Walde 729, իսկ Brugmann 1, 171 և Pokorny 2, 657 հնխ. spe, spī «չաղանալ, գիրանալ» արմատի տակ՝ յամենայն դէպս հաւանական։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet REA 2, 3։ Ղափանցեան, Նոր Ուղի 1929, յնվ. էջ 338 պարէն, պարար, պարարտ դնում է նախահայ par «ուտեստ» արմատից։ Պատահական նմանութիւն ունի հբր. בריא bārīa «պարարտ»։

Գիհ.—Ղրք. պա՛վարտ «ուռճացած (կանաչեղէն, բոյս)», Ղրս. բալարդ «դալար, թարմ (ծաղիկ)», Ուդ. բալարդ, բալըրդուգ (<*պալարտ, *պալարտուկ) «առոյգ, կայտառ»։

*ՊԱՐԱԻԱՆԴ, ի-ա հլ. «ձեռքի կամ ոտքի կապ, կապանք» Ուս. քր. բ. էջ 198. Ոսկ. մ. բ. 2. Եփր. ծն. էջ 94. որից պարաւանդել «կապել, շղթայել» Ոսկ. ա. թես. Եղիշ. դտ. «պատել պաշարել» ՅՀ. կթ. Նար. պարաւանդանք Պիտ. աստում է նաև պարուանդ Պիտառ.։

=Պհլ. *pādawand ձևից, իբր հպրս. *pādabanda=սանս. pādabandha «ոտնակապ», բարդուած pāda- «ոտք» և banda- «կապ» բառերից։ Սրանց նոր ձևն է պրս. پای بند pāy-band կամ پابند pāband «ոտնակապ, յատկապէս ձիու ոտնակապ»։ Իրանեան փոխառութիւն է նաև վրաց. գւռ. ფაბანდი փարմանդի «ձիու ոտնակապ» (Бердзе, Грузинск. глосс. по имерск. и рач'инск. говорамъ СП. 1912, էջ 44), թերևս հայերէնի միջոցով՝ r-ի պատճառաւ. m ձայնը՝ փոխանակ v, յառաջացած է յետոյ՝ յաջորդ n-ի ազդեցութեամբ։—Հիւբշ. 227։

Նշմ «որպէս թէ շուրջ պնդիչ՝ կապիչ (իմա՛ պար մասնիկով՝ պինդ արմատից) կամ վանդիչ պարանոց»։ Böttich. ZDMG 1860, 360, 217 և Arica 87, 429 սանս. paribandh:—Lag. Urgesch. 417 և Btrg. bktr. Lex. 17 bandh արմատից։ Պատկ. Матер. I. 14 պրս. بربند bar-band «ձիու խամութ»։ Müller SWAW 88 (1877), էջ 15 *pairi-band-: Տէրվ. Նախալ. 95 համարում է օտար բառ և վերջին մասը -ուանդ=bhandh արմատից։ Հինք. պրս. parvandīdan «կապել զբեռն կառույց», barvanda «փաթոյթ բեռանց կերպասուց»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Th. Bloch (նամակով հաղորդած Հիւբշմանին)։ Patrubány ՀՄ. 1907, էջ 304 իբր բնիկ հայ՝ պար- մասնիկով bhṇdhā արմատից։ Karst Յուշարձան 403 սումեր bar «կապել» բառի հետ։

ՊԱՐԳԵԻ, ի-ա հլ. «մեծից տրուած նուէր, ընծայ» ՍԳր. Ուս. քր. Ոսկ.հս. եղն. 38 (Որ պարգև ի տեսանէ կամ ձիր ի բարեկամէ առնուցու). «ոռճիկ, թոշակ, ուսելիղէն» Մն.

խէ. 22. Ա. մկ. գ. 28. «մրցանակ» Ա. եզր. գ. 5. որից պարգեւել ՍԳր. եզն. Երր. աւետ. պարգեւարաշխ Ագաթ. պարգեւական Ագաթ. պարգեւապետ Երեմ. ծա. 59. պարգեւատու Գ. մկ. ե. 6. Երր. ժա. 6. պարգեւիչ Ոսկ. Կողոս. աստուածապարգեւ Կորիւն. Ագաթ. ճորապարգեւ Ագաթ. բարեպարգեւ Ոսկ. յհ. ա. 41. երախտապարգեւ Բուզ. մեծապարգեւ ՍԳր. Բուզ. Սեբեր. վերնապարգեւ Կորիւն. պարգեւամտիկ «հարուստ, մեծատուն» Ոսկ. ճառք. էջ 109 ևն։

ՆՀԲ լծ. յն. παρέχω «հայթայթել, շնորհել»։ Հինք. թրք. վէրկիւ «տուրք» բառի հետ։ Müller WZKM 11, 206 իրանեան պար մասնիկով գև «տալ» ենթադրեալ բառից, որի հետ համմտ. գոթ. giba (ghebh) =գերմ. geben «տուրք, տալ»։ ԳԻՒ.—Ջղ. պարգ'եվ, Կր. Ախց. պարֆէվ, Տփ. պա'րիվ (փոխբ. Ակն. «ընտիր»)։

*ՊԱՐԵԳՕՏ, ի հլ. «կապայ» ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. մ. ա. 16. որից պարեգօտիկ Ոսկ. մ. գ. 29. պարեգօտաճաճղերձ Թղթ. դաշ. պարեգօտաւոր ԱԲ. պարեգօտիլ «կապան հագնիլ» ԱԲ. միապարեգօտ Ոսկ. մ. բ. 8։

=Հպհլ. *paragaud հոմանիշից, որ թէև գործածուած չէ իրանեան դրականութեան մէջ, բայց նոյնն է աւանդում Հեսիւքիոս՝ παραγωγάς (կարդա՛ παραγωτας?) ձևով. (παραγωγάς χιτὼν παρὰ Πάρθοις վերարկու բուն Պարթևաց). նոյնը յունական վերջաւորութեամբ՝ παραγαύδιον։ Իրանեանից են փոխառեալ նաև լտ. paragauda, paragaudis, paragaudius «զգեստի վրայ մետաքսէ կամ ոսկի բանուածք. 2. ոսկեհուռն զգեստ», ասոր. մանդ. և թալմուդ. פרגוד paragōd? «վերարկու, վարագոյր», արաբ. بُرْجُد būrǰud «հաստ կապերտ, թանձր ասուի», վրաց. პარაგაულტო պարեգավլատի «ruza, հանդերձ, երկար զգեստ»։—Հիւբշ. 227։

ՀՀԲ և ՆՀԲ պարել «պատել» և գոտի բառերից։ Lag. Urgesch. 843 և Gesam. Abhd. 209 համեմատում է լտ. և երր. ձևերի հետ։ Pictet 2, 296 դնում է bhar արմատից։ Lag. Arm. Stud. § 1863 մեկնում է գոտի բառով, իբր «շուրջը գոտիով», իսկ էջ 182 լտ. և թալմ. բառերի հետ։ Տէրվ. Altarm. 80 և Նախալ. 92, 107 պար «շուրջ» մասնիկով գոտի բառից։ Նոյնը, նաև Հինք. իբր թրգմ. յն. περίζωμα բառից։ Հիւբշ. աւելիս է վերի մեկնութիւնը, բայց առանց հակառակելու յիշում է նաև պար+գոտի մեկնութիւնը, ինչ որ չի կարող ուղիղ լինել, որովհետև նախ առանց բացատրութեան է մնում գոտի բառի վերջաձայնի անկումը և երկրորդ՝ որ պար մասնիկի այսպիսի գործածութիւնը յետին է։ Pictet բ. տպ. Բ. 382 պրս. barak, bārāni յն. φάρος, իտլ. beart «զգեստ» բառերի հետ՝ bhar «կրել» արմատից։

ՊԱՐԵԼ «անգահել», այսպէս ունի Բառ. երեմ. էջ 269. ինչ լինելը յայտնի չէ։

ՊԱՐԵՒ «ժայռ, լեռան ցցուած մասը, բարոյ տեղեր» Վրք. հց. ա. 571. Քուչ. 92. «գահաւանդ» Ագաթ. 167. «Յիսուսի գերեզմանի վրայ դրուած մեծ քարը» Եղիշ. Թղմ. 300։

Հինք. «Թուի յն. παράχωμα «բարձրադիր պողոտայ»։

ՓՈԽ.—Վրաց. პარეხი պարեխի «քարայր. 2. անդունդ», որից პარეხთა պարեխթա «սեպ ժայռի մէջ քարայր», პარეხელი պարեխելի «քարայրաբնակ» (վերջին երկու բառերը՝ որ չունի Ջուբինով, յիշում է Մառ, Тексты и Раз. VII, էջ 113 և էջ LXVI)։

*ՊԱՐԵԿ «պահապան, շրջադէտ» Հին բռ. որից պարեկապան «պահնորդ, դէտ» Ա. մկ. ժբ. 27. գրուած նաև պարսկապան Յուդթ. ժդ. 2 (իմա՛ պարակապան)։

=Նոյն է պաճակ, պարճակ, պաճակապան բառերի հետ, որ տե՛ս։

ՀՀԲ պար «շուրջ»+եկօղ։—ՆՀԲ շփոթուած է համարում պարէտ և պայեկ բառերի հետ։

*ՊԱՐԵՀՆԱԿ «շապիկ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. կողոս. էջ 529. «կաղօք և կուրօք և կարկամելովք և բոկովք և որ մի միայն պարեհնակաւն (յն. «պատմուճան») ունիցին և զայն ձակոտակէն»։ Այս բառը մեկնում է հետևեալ ձևով. պարեհնակ «կարճ՝ խեղճ պարեգօտ»

ԱԲ, պարեհաճակ «գծուծ և ծակոտեալ հանդերձ, կամ անարգ և պատառատուն զգեստ» ՀՀԲ. (ՆՀԲ և ՋԲ չունին). նոյն այս բառն է որ Բռ. երեմ. էջ 269 աղաւաղ ձևով գրում է պատեհական «հանդերձ գծուծ կամ ծակոտկէն»։

=ՊՀլ. փոխառութիւն է, բայց մայր ձևը անստոյգ. համմտ. պՀլ. patrahan և կամ pērāhan «զգեստ», պրս. پیراهن perāhan, որ և perahan, pērāhān, perahand «շապիկ», քրդ. pirûn, զազա periën «շապիկ», վախի parhán, սար. barhān «կանացի երկար շապիկ» (Horn § 353)։ Աֆղան արտասանութեամբ բառս հնչւում է pairāhan, որ տալիս է պՀլ. patrāhan (Հիւբշ. Pers. Stud. էջ 45). իսկ պՀլ. ձևերն էլ ենթադրում են զնդ. *pairyâñhana- (համմտ. զնդ. aiwyâñhana- «զօտի») ըստ Müller WZKM 8, 93։ Իրանեանից է փոխառեալ նաև վրաց. პერანგი պերանգի «շապիկ»։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս Արրտ. 1910, 268։ Հացունի, Պատմ. տարազի 147

պարհ (պանիլ) արմատից։

ՊԱՐԵՔ «աւետիք», որից պարեքաւոր «աւետարեր». ունի միայն Բառ. երեմ. էջ 269. մին f, միւսը տ վերջաձայնով. երկու ձևերից մին կամ միւսը սխալ է։

*ՊԱՐՁ, ո հլ. (յետնաբար ի հլ.) «անապակ, մաքուր, անմրուր» եզ. իէ. 20. Փարպ. «բաց, չծածկուած» Ոսկ. ես. «անկեղծ, միամիտ, պարզասիրտ» Ա. մն. իթ. 17. «պարզախօս, համարձակ» Իմ. է. 22. ես. լե. 6. «ո՛չ-բաղադրեալ, միատարր» Պիտ. Կիւրղ. գնձ. «մեկին, յայտնի, բացորոշ, հասկանալի» ես. պտմ. Վրք. հց. Շնորհ. ընդհ. «միայն, լոկ» Վրդն. ծն. «պարզ՝ անամպ երկընքով՝ լուսնի լուսով ցուրտ գիշեր» ՍԳր. Վեցօր. եփր. վկ. արև. Շիր. որից պարզել «մաքրել» ՍԳր. Սեբեր. եզն. «բանալ, տարածել» եզեկ. բ. 9. ես. լգ. 23. «երկարել» եզ. խ. 17. Ոսկ. ա. տիմ. լ. «բացատրել, մեկնել» Վրդն. ծն. և պտմ. «բաժանուիլ, հեռանալ» Բ. մկ. ժբ. 17. Ոսկ. յհ. ա. 2. պարզախօս Իմ. ժ. 21. Կոչ. պարզական Ագաթ. եզն. Սեբեր. պարզամիտ Առակ. ժա. 25. պարզկայ Վստկ. պարզուտ «քամոց» Վստկ. 114. «ճրագի ձագար» Երեմ. ժբ. 19. պարզուած Ագաթ. խաղցրապարզ Եւագր. նոր բառեր են պարզաբանութիւն, պարզասէր, պարզասիրութիւն են։

=ՊՀլ. գւռ. *pārz «զուտ, մաքուր» ձևից, որի համապատասխանն է մանիք. պՀլ. p'rwd «զտուած, մաքրուած» և rd>l սովորական ձայնափոխութեամբ էլ՝ պազ. pālīdan, պրս. پالودن pālūdan «քամել», پالایدن pālāyidan «պարզել, քամել, զտել»։ Իրանեան d=z համապատասխանութեան համար տե՛ս MSL 17, 244:

Klaproth, As. pol. 103 յն. φῶς, վոգուլ. pos, bos, անգսք. beorte ձևերի հետ։ Peterm. 23 սանս. mṛj «մաքրել» արմատի հետ։ Müller, Kuhns u. Schl. Btrg. 4, 255 սանս. bṛh «փայլիլ» և թերևս յն. βρέχειν «թրջել»։ Նոյն, Benfeys Orient u. Occ. 3, 348 աֆղան. barçēr «պարզ, յայտնի», սանս. bhrāj և յն. φλεγ-«այրել, վառել»։ Հիւնք. զանազանում է պարզ «ցուրտ»=պրս. իպիրզէ, իպիրտէ «ցուրտ» և պարզ «մաքուր»=պրս. իպրիյզ, բէրիյզէ «զուտ ոսկի»։ Müller WZKM 9, 379 ուղիղ համեմատեց պրս. pālūdan «մաքրել» ձևի հետ, որ չի ընդունում Հիւբշ. 514 և IF Anz. 8, 49, հայերէնի մէջ սպասելով *պարզայել ձևը։—Փառնակ, Անահիտ 1903, 130 սանս. bhras, հսլ. bliske, գոթ. bairnts «փայլուն» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Սոդդ. ձևի դիտող վերի մեկնութիւնը տուաւ Meillet MSL 17, 244, որ ընդունում է նաև Bartholomae IF 38, 13: Մառ ИАН 1920, 106 նոյն ընդ պայծառ: Պատահական նմանութիւն ունին ասոր. ܦܪܨ parres, եբր. pāraṣ՛ «պարզել, տարածել, մեկնել»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. երև. կր. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. պարզ, խրբ. Ննխ. բարզ, Տիգ. բmրզ, Ագլ. պօոզ «մաքուր, յստակ». Սվեդ. կայ միայն բmրզիլ «օդը բացուիլ, երկինքը պարզել»։ Նոր բառեր են պարզաջուր, պարզաջրել, պարզաւուն, պար-

զեղ, պարզկաչոր, պարզպան, պարզպարզուիլ, պարզօն «պանիր քամելու տոպրակ»։

ՓՈԽ.—Քրդ. parzinin «զտել, քամել, թորել», parzun «կաթը պարզելու պարկ, քամոց (գւռ. պարզօն)», parzuni «շոգիով քամիչի մէջ եփուած փլաւ» (տե՛ս Justi, Dict. Kurde 70 և Kurd. Gram. 212. առաջինի մէջ յիշում է հյ. պարզել ձևի հետ նաև պրս. پرّیز parīz, پروین parvēzan «մաղ», որոնք այստեղ գործ չունին և երկրորդի մէջ չեն յիշուած)։

ՊԱՐԶ կամ ՊԱՐԶՈՒ «ծարաւ».—անաստոյգ բառ, որ երկու անգամ գտնում ենք գործածուած Մծբ. ա. և դ. «Զի պարզու ծարաւոյ իմոյ զովասցի յաղբերէ վտակաց քոց. Հանգո՛ զիս ի ցանկութենէ աստի ի պարզոյ ծարաւոյ»։

*ՊԱՐՁԱՏ կամ ԲԱՐՁԱՏ «մի տեսակ բոյս» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2525։

=Արաբ. بارزد bārzad կամ بازرد bāzrad (Steinschneider WZKM 11, 314), որ է պրս. بیرزد berzad «անգուժաւտ, քաղցրան» (բոյսը և խէժը)։

Ուղիղ է մեկնել Ամիրտ. իբր պրս. փիրզատ, որից և ՀԲուս։

ՊԱՐՁՈՒՆԱԿ (ի–ա հլ. բստ ՆՀԲ, բայց ՀԼկայ վկայութիւն) «զսպանակ, նիգ, սողնակ» ՍԳր. (իսկ Բառ. երեմ. էջ 269 մեկնում է «մարդակ»)։

ՊԱՐԵՆ, ի հլ. (սեռ. -ենի) «ուտելիք, ոռճիկ, ապրուստ» Պիտ. ՅՀ. կԲ. Պտրգ. Բրս. մրկ. որից պարենապահ Արշ. պարենաւորիլ Արծր. պարենիկ Սղիշ. տիբ. 339 (չունի ՆՀԲ). խոզապարէն Սկևռ. աղ. 29, 67. պարենաւորում (նոր բառ)։

Pictet 2, 313 bhar *արմատից, իբր բուխար.* bari, *սիահփուշ* bre «ալիւր» են։ Canini, Et. étym. 185 *իռլ.* baran «սնունդ» *բառի հետ։ Հիւնք. լտ.* farina «ալիւր»։ *Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 Թրք.* barən-maq «ապրուստ ունենալ»։ *Ղափանցեան, Նոր ուղի 1929, յնվ. էջ 338* պարէն, պարարել, պարարտ *դնում է նախահայ* par «ուտեստ» *արմատից*։

ՊԱՐԷՏ, ի–ա հլ. (սեռ. -րետի կամ -րիտի) «վերակացու, իշխան, տեսուչ» *Նւս. ըր. բ. 198. կիւրղ. Թգ. Փիլ. լին. 118. Սարկ. քհ. 19. Գնձ. «դէտ, պահակ» Օրբել. ողբ.—գործուած է նաև պարետ։ (Հին բռ. մեկնում է պարէտ «տեսուչ, ազդարար», որին հետևելով ՀՀԲ ունի «տեսուչ, աւետիս»)։*

Հիւնք. յն. πάρεδρος «աթոռակից» *բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի պրս.* برید barēd «սուրհանդակ թղթատար»։

ՊԱՐԻԿ (ի–ա հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «փոռց, կապերտ, գորգ, խոսիր» Փիլ. տես. էջ 26։

ՊԱՐԻԿ, ի–ա հլ. «առասպելական մի ոգի» Եզն. Փիլ. լին. Լծ. փիլ. (վերջին երկուսի մէջ նաև պարեկ, պարակ ընթերցուածներով). որից առիւծապարիկ (նորագիւտ բառ) Բար. 171. տե՛ս նաև յուշկապարիկ։

=*Պհլ.* پریک parīk «չար ոգի», *մանիք. պհլ.* פריג parig «սատանայուհի» (Salemann ZAH *8 (1908), էջ 114*), *սոգդ.* parīk «յաւերժահարս», *պրս.* پری parī «թևաւոր յաւերժահարս, աննման գեղեցկութեամբ բարի ոգիներ», *ղնդ.* pairikā- «կախարդ կին» (Bartholomae, Altir. Wört. *863*), *ուրիշներ «իգական չար ոգի, սատանայուհի, բոզ կին» (Horn § 310)։ Բառիս ծագումը անյայտ է։ Պարսկերէնից են փոխառեալ աֆղան. parī, *քրդ. Բրք.* peri, *բուխար.* peri, *ալբան.* perri *են։—Հիւբշ. 228։*

Müller SWAW 42, 251, Justi, Zendsp. 180, *Տէրվ.* Altarm. 95 *տալիս են ուղիղ մեկնութիւնը։ Պալասանեան, Պատմ. գրակ. 199 իբր «պար եկող»։ Հիւնք. յուշկապարիկ բառի վերջին կէսը կտրելով կազմուած։ Ալիշան, Հին հաւ. 185 պրս.* փէրի *և հյ.* պարել, *իբր «պարող ոգի»։*

ԳԻՒ.—Սրանից է կազմուած Սվեդ. ջ'իրբոտղիգ «բորենի, մարդագայլ» բառը, որ է ջուրեպարիկ (ջուրի և պարիկ բառերից). այս բառին համանիշ է բրոռըջ'իրիգ «բորենի», որ արաբ. برّی barrī «ցամաքային, վայրի» *բառից է կազմուած։*

ՊԱՐԻՐ «բարձր». ունի միայն Բառ. երեմ. *էջ 269.—կարծեմ թէ պէտք է հասկանալ* պարիխ «բարձ»։

Պարիշտ *տե՛ս Պաշտ։*

***ՊԱՐԻՍՊ**, ի–ա *հլ. «իբրև ամրութիւն ծառայող պատ (քաղաքի, բերդի և ն)» ՍԳր. Ոսկ. եբր. Եփր. պհ. որից* պարսպել *«պարիսպ քաշել» Յուդթ. դ. 4. ի. 1. Նա և քր. Ոսկ. մաթ.* պարսպապահ *Բ. մկ. ժ. 36.* նախապարիսպ *Երգ. բ. 14.* պարսպատուր *ՍԳր.* պարսպափակ *Ասող.* կրկնապարիսպ *Եւագր.* անպարիսպ, *Թուց ժգ. 20. Առակ. իե. 28.* երեքպարսպեան *Եւագր.* շրջապարիսպ *Սոկր.* պարսպապատ *(նոր բառ) և այլն։*

=*Պհլ.* *parīsp *«պատ, պարիսպ» բառից. այս բառը բոլոր իրանեան լեզուների մէջ կորած է. պահում է միայն հայերէնը և վերջին ժամանակներս երևան եկաւ մանիք. պհլ.* פריסה p r i s p *(կարդա՛ parīsp) ձևով* (Salemann, Manich. Stud. ЗАН *8 (1908), էջ 114 և* ИАН *1912, 47). ծագում է* pari- *«շուրջ» մասնիկով* spā *«արկանել, դնել» արմատից, իբր «շուրջ արկեալ»։*

ԳԴ պրս. bāra *«պարիսպ» բառի հետ։ ՆՀՔ լծ. լտ.* paries *և պրս.* bāra: Lag. Btrg. bktr. Lex. 46 *զնդ.* *pairispi *ձևից։ Մորթման,* ZDMG 26, 535 *բևեռ.* barçudibiduni *մեկնում է «պարսպատուն կամ պանուճապատան»։ Հինք.* պատսպար *բառին է կցում։ Ռ., ՆորԴար 1885, 5 մեկնում է* պար *«շուրջ»+* իապա *«քաղաք», որ գոնում է խալդ.* տուսպա *(–տի+ուսպա «քաղաք, ամուր»), հյ. ասպանջական «բնակարան տուղ» և թերևս վրաց.* սոփելի *«գիւղ» բառերի մէջ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Salemann *անդ։*

ԳԻՒ.—Ախց. Մշ. պարիսպ.—*սրանից ունինք* պարսպիլ *Ախց. «իբր պարսպի մէջ ամրանալ»,* բակ-պարիս *Եւդ. (իբր կրկնական գործածուած)։*

***ՊԱՐԻՍՏՐՈՆ.** *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գոնում եմ գործածուած Նեղ. դոքս. 29. «Ամենայն պարիստրոն քաղաք սմա հնազանդին մինչև ի Դանուբ գնա»։*

=*Յն. բնագրի* αἱ παρίστριοι οἰκίαι *ձևից տառադարձուած։ Այս բառը չեն յիշում ո՛չ* Bailly *և ոչ* Sophocles. *կարծեմ պէտք է հասկանալ «Ἴστρος գետի շրջանում գտնուած (քաղաքներ)»։—Ա՛ճ.*

ՊԱՐԻՔՆՆՕՂ *«անքնին». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 269։*

***ՊԱՐԽՐՅԻ** *«հիւսիսային ցուրտ քամի, որ աշնան փչելով տերևներն է թափում» Վստկ. 97, 153, 177 (յատկապէս ուշադրութեան առնել Վստկ. 97 «պախրցին, որ է բօրէասն»). որից* պարխրցնոց Վստկ. *24. կայ նաև* պարխրային Վստկ. *էջ 3, 30.—Նշանակութիւնը ճշդելու համար համմտ. «Պարխրցին և հարաւայինն հանդերձ արևելեան հողմովն փչեն». Վստկ. 177.—գրուած է նաև* պախրցովն *(գրծ. հոլով, առանց r-ի) Վստկ. 104։*

=*Ծագում է* Պարխար *լեռների անունից. այս մեծ լեռնաշղթան, որ ուրիշ անունով կոչւում է նաև Պոնտական լեռնաշղթայ, գոնում է Արևմտեան Հայաստանի և Փոքր Հայոց հիւսիսային կողմում. այս մասերի մէջ փչող հիւսիսային քամին Պարխարեան բարձրաբերձ լեռներից է միայն գալիս. ըստ այսմ բառիս բուն ձևն է* Պարխաւրացի *կամ* Պարխարցի, *և անշուշտ առաջին անգամ ծընունդ է առած Փոքր Հայքի և Արևմտեան Հայաստանի շրջաններում։ (Շատ սովորական երևոյթ է քամիները կոչել փչած տեղի անունով)։ Անշուշտ գործածւում էր նաև պարզապէս* Պարխար *ձևով, ինչպէս ունինք այժմ էլ Բաբերդի և Խոտրջուրի գաւառականներում, և որից ածանցուած է* պարխարային *(այն է* պարխաւրային, *բայց ոչ թէ* պարխրցային*) ձևը՝ Վստկ. էջ 3, 30։—*Պարխար *անունն էլ (ըստ Սոքրատեսի* Παρυάδρης, Παραχοάθρας *կոչուած) ծագում է ըստ* E. Benveniste BSL *№ 85, էջ 7—8 իրանեան* *paruhvāθra-=զնդ.* pouruxvāθra *«լի բարօրութեամբ» ձևից, որ Աւեստայում լեռներին տրուած վերադիր է։ Սրանից են յառաջանում սոգդ.* Barxār, *«սրբավայր, տաճար» և պրս.* farxār, *որ քնարական բանաստեղծութեան մէջ նշանակում է «երջանկութեան վայր, անդորրութեան, հոտուն ջրերի և ըստուերների հաւաքարան» (ստուգաբանութիւնը տուել են նախ* Lag. *և Հիւբշ. 66—67)։ —Ա՛ճ.*

ՆՀՔ *արմատը դնում է* պարխուրց *և*

սրանից իբր հոլովական ձևեր պարխըրցոյ, պարխրցի, որոնք համեմատում է պրս. barkrīzī կամ barkrīzān «աշնանային տերևաթափ քամի» բառի հետ (կազմուած bark «տերև» և rīz- «թափել» բառերից)։ Սակայն պարխուրց ձև գործածուած չէ բնաւ։ Բառն է հենց պարխրցի:

ԳԻՒՐ.—Բբ. խոջ. բարխար, ՋԹ. բախըյցա, բախըրցա (<պախրցի» «հիւսիսային ցուրտ քամի»։

ՊԱՐԾ «պարծենկոտ, հպարտ, սէգ» Առակ. լ. 29. որից պարծիլ «պանծալ, հպարտանալ» ՍԳր. Եփր. մակաբ. պարծանալ Խոսրովիկ. պարծանք ՍԳր. Ոսկ. մտթ. պարծուկ «հպարտ, անապարծ» Մծբ. Եփր. դտ. էջ 330, 332 (սխալ է գրուած պարտուկ Մծբ. 210, որ ՆՀԲ իբրև առանձին բառ նշանակում է. տե՛ս ՀԱ 1911, 101). անապարծ Վեցօր. Ոսկ. մ. գ. 3. ունայնապարծ Ոսկ. յհ. ա. 2. ընդունայնապարծ Ոսկ. յհ. ա. 1 և մ. ա. 19. զրապարծ Ոսկ. մ. ա. մեծապարծ Ագաթ. Բուզ. մեծապարծուն Պիտ. գեղեցկապարծիկ Պարապմ. ձիապարծիկ «հպարտօրէն ձի հեծած» (նորագիւտ բառ) Տաթև. ձմ. ճղ. ևն։ =Պարզ արմատն է *պարտ, որի վրայ տե՛ս ևպարտ։—Աճ.

ՆՀԲ չծ. պերճ և բարձր: Մորթմանն ZDMG 26, 537 բևեռ. barzani և 588 barzaini «պարծանք»։ Scheftelowitz BB 28, 309 գնդ. bərəjaemi «գովել, պանծացնել»։ Հիւնք. բարձր բառից։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 35 բուրդ, բերդ, բառնալ, բարձ, բարձր ձևերի հետ։ Փառնակ, Անահիտ 1903, 130 գնդ. berez «բարձր» բառից։

ԳԻՒՐ.—Ջղ. պարծենալ, Սլմ. պոծենալ, Ախց. Երև. Տփ. պարծէնալ, Կր. պարծրենալ, Շմ. պարձանիլ, Ննխ. Պլ. Ռ. Սչ. Սեբ. պարձէնալ, Տիգ. բոռձէնոլ, Ասլ. բարձրենալ, ՋԹ. բայձինօլ, բարձինոլ, ՀՃ. բայձինօլ, բայձոռնինօլ, Մկ. պարծմանալ, Ալշ. Մշ. պարզէնալ, Խրբ. բարզէնալ, բարզանիլ, Ակն. բարձօնիլ «պարծանք»։ Նոր բառ է պարծենկոտ:

ՊԱՐԿ (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «տոպրակ» ՍԳր. Ագաթ. Կոչ. որից պարկուճ «թրթուրի պատեան» Վստկ. 79. «տղընդերք» Վստկ. 76. «ընդեղէնների դրսի կեղևը» Վստկ. 20. (վերջին իմաստի համար հմմտ. յն. θύλακος «պարկ, տիկ, ընդեղէնների կճեպը», գւռ. պարկուճ «տոպրակ», պարկուճիկ «իւղի տիկ»)։

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 152 պրս. պէրխ (իմա چرخ barx «սակաւ ինչ»)։ ՆՀԲ չծ. յն. πήρα, լտ. pera «պարկ»։ Karolides, Γλ. σγχρ. 95 կապադովկ. παγρί «սափոր»։ Հիւնք. պրս. barg «պատրաստութիւն պիտոյից ճանապարհի, պաշար»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 319 պրս. بارك barak «ուղտի բրդից գործուած կտոր, որից դարվիշները գլխանոց կամ կապայ են շինում. 2. մի տեսակ կարճ հագուստ»։

ԳԻՒՐ.—Գոր. Երև. Ղրբ. Մրղ. Շմ. Սլմ. Վն. Տփ. պարկ, Մկ. պոռկ, Մշ. պարգ, Սեբ. բարգ, Ագլ. պօրկ, ՋԹ. բօյգ, բորգ, Ջղ. պառկ.—(Մրղ. պարկ նշանակում է «տիկ». ուրիշ է Տփ. բարգ «բեռ»)։ Նոր բառեր են մուխպարկ, պարկակապ, պարկակապիչ, պարկամուկ, պարկապզուկ, պարկապոզ, պարկափոխան, պարկուկ, պարկուճիկ:

ՓՈԽ.—Վրաց. ბარკი պարկի «պարկ. 2. ընդեղէնների դրսի պատեանը», քրդ. berika, barîk, bärûk «գրպան» (վերջին քրդ. ձևերը, որոնք կասկածելի են, համեմատում է Justi, Dict. Kurde էջ 48 հլ. և վրաց. ձևերի, ինչպէս նաև bîr «կողմնակի գրպան» բառի հետ)։

ՊԱՐԿԵՇ, ի հլ. (յետնաբար նաև ի-ա հլ.) «ժուժկալ, համեստ, ողջախոհ» ՍԳր. Եփր. Բուզ. «մաքուր, անարատ» Ղևտ. ժ. 10. Ա. պետ. գ. 2. «չափաւոր կամ դիւրամարս (սընունդ)» Մխ. բժշ. (տե՛ս Seidel, Մխ. հեր. § 38). որից պարկեշտութիւն ՍԳր. Եփր. պհ. պարկեշտաբար Բուզդր. պարկեշտագեղ Ագաթ. պարկեշտական Ագաթ. Ոսկ. ես. անպարկեշտ Ղևտ. ժ. 10 ևն։

ԳԴ պրս. pardagī «պարկեշտ»։ ՆՀԲ չծ. փարգաստ=պրս. փէրֆէտ, իսկ պարկեշտանալ=պրս. bar-kaštan «հըրաժարիլ»։ Գարագաշեան (անձնական)

պրս. parda kašīda «վարագոյր քաշած», Հիւնք. հյ. պատրուակ, վարտիք, պրս. parda և pardagī ձևերի հետ, ԳԲ պրս. պէրկէշթէ «յետ դարձած»։

ԳԻՒ.—Ախց. Կր. պարկէշտ, Տփ. պա՛րկիշտ, Սեբ. և Թրքահօս հայերից Առն. բարգէշդ, Տիգ. բmրգէշդ։

*ՊԱՐԿԷՆ, ի–ա հլ. «քաղաքի պարիսպների շուրջը փորուած լայն խրամ, որի մէջ ջուր լցնելով թշնամու անցքը արգիլում էին պաշարման ժամանակ». գործածուած է միշտ փոս բառի հետ. ինչ. պարկէն փոսի Ագաթ., պարկենաւ փոսիւ, պարկէնս փոսից Ղևոնդ ժ. էջ 36, ժթ. էջ 103.—Կրկնագիր Ագաթ. էջ 65 ա գրուած է պարկեն։

=ՊՀլ. *pārken ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց նոյնն են հաստատում նորագիւտ մանիք. պհլ. פארגין pargīn (Salemann 3AH 8 (1908), 109), պրս. پارگین pārgīn կամ پارگی pārgī «նշանակէ զայն փոսն, զոր առնեն ի խոհանոցս և ի բաղանիս, զի աղտեղի ջուրք անդր երթիցեն. 2. անձրևաջուր, որ իջէ ժողովեալ ի փոսորակ տեղիս». بارگین bārgīn «տեղի ուր ժողովեալ իջէ անձրևաջուր», Իրանեանից են փոխառեալ նաևասոր. ܦܪܩܝܢܐ parqīnā «քաղաքը շրջապատող փոսը» (Brockelm. Lex. syr. 292), «աղտեղութիւն թափելու փոս» (Nöldeke), արաբ. فارقين fāriqīn «ջրամբար»։—Հիւբշ. 228։

Ուղիղ մեկնից նախ Հիւբշ. ZDMG 36 (1882), 132, որից յետոյ Պատկ. Mатер. II, էջ 1 (1884)։

*ՊԱՐԿՈՒԿ «ծիրան» ԲԺշ.։

=Արաբ. برقوق barqūq, birqūq, burqūq հոմանիշից։ Այս բառի հետաքրքրական պատմութիւնը արել են Diez, Mahn, Dozy, Hehn (Kulturpflanzen⁶, 417)։ Բառիս նախնական մայր ձևն է լտ. praecoqua, որ բուն նշանակում է «վաղահաս» և մասնաւորաբար «մի տեսակ վաղահաս ծիրան» (կազմուած է prae «առաջ, առջևը»+coquo «եփել. 2. հասցնել. կրաւ. հասնիլ» բառերից)։ Այս լատին բառը անցել է յունարէնի՝ πραικόκκιον, προκόκκιον ձևով և այստեղից էլ արաբերէնի البرقوق al-barqūq ձևով (al որոշիչ յօդ է)։ Արաբերէնի անորոշ ձևից է հյ. պարկուկ. իսկ որոշեալ ձևը յետ դառնալով Եւրոպա՝ տուել է սպան. պորտ. albarcoque, alvarcoque, albaricoque, իտալ. albercocca, albicocca, albercocoli, ֆրանս. գաս. aubricot, arbricot, ֆրանս. abricot, անգլ. apricot, գերմ. Aprikose, ռուս. абрикосъ, հոլլ. abrikoss (Kluge, էջ 21—22 իբրև միջնորդ գերմաներէնի ձևի), բոլորն էլ «ծիրան»։—Հիւբշ. 274։

ՆՀԲ «որ և պէրգուգ, լտ. բէրիգօ՛գգիում». իսկ ծիրան բառի տակ՝ մեր բառից աղաւաղեալ է դնում յն. προκόκκιον, լտ. bricoccon, bricoccoli։ ՀԲուս. § 2526 թէև գիտէ ուղիղ մեկնութիւնը, բայց չի ընդունում, այլ հայը դնում է պարկ բառից, իսկ միւսները փոխառեալ հայերէնից։

ԳԻՒ.—Ախց. պարկուկ «չորացրած ծիրան»։

Պարկուճ տե՛ս Պարկ։

ՊԱՐՄԱԳՈՑՆ «հզօրագոյն». ունի միայն Բառ. երեմ. էջ 269, որից ենթադրել է տալիս պարմ «հզօր»։

*ՊԱՐՄԱՅԵԼ «վնասը քաշել՝ կրել». մէկ անգամ ունի Եղիշ. բ. էջ 21. «եթէ տգիտաբար մոլորեալ են... յանձանց պարմայինն զվնասն իւրեանց». (այսինքն թէ իրենց արածը իրենք պիտի տուժեն)։—ՆՀԲ, որին հետևելով ՋՔ և ԱՔ, դնում են «զննել, շօշափել, զփորձ առնուլ». այս բառերից միայն վերջինն է ուղիղ։

=ՊՀլ. պրս. *parmāyam ձևից, իբր հպրս. *pari-mā՝ կազմուած pari- նախդիրով mā արմատից. հմմտ. զնդ. հպրս. ā-māta- «փորձուած, անձի փորձով սովորած»։—Հիւբշ. 228։

ՆՀԲ պրս. պէրմասիաէն կամ պէրմէճիաէն։ Lag. Arm. Stud. § 1871 mā արմատից, ինչպէս պրս. āzmūdan «փորձել»։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 222 պրս. պարմասիտան, պարմաշիտան «զգալ, շօշափել, զփորձ առնուլ»։

ՊԱՐՄԱՆԻ (–ւոյ, –նեաց) «պատանի, երիտասարդ» Փիլ. տես. Պիտ. որ և պարման Պետր. սիւն.։

ՆՀԲ պրս. պէրնա, փէրնա (իմա՛ պրս.

Ա. burnā «երիտասարդ», որ է պհլ. apurnāyak, գնդ. apərənāyuka- «տղայ, մանչ»)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 319 Բուրանցի մի կտրիճի անունն է, որ հաւասարակ անուն է դարձել։ Բառիս վրայ խօսում է Ակինեան ՀԱ. 1933, 509—11, տալիս է վկայութիւնները (Փիլ. տես. 20. Պիտ. Տիմոթ. կուղ. 299, Պետր. սիւն. 20-Աթան. 299) և ստուգաբանում է պար «շուրջ» մանե-լ բառերից, իբր յունաբան դպրոցի գործ. հմմտ. պատանի և մանուկ բառերի համար հների տուած ստուգաբանութիւնները։

ՊԱՐՄԱՓԻՐ «եգիպտական փարմուֆի ամիսը». մէկ անգամ ունի Շիր. 21. «Առնէ իւր օրինակ զտասն փարմուֆի բուռ եգիպտացոց, որ ի մէնջ պարմափիրն ձայնի»։ Յայտնի չէ սակայն թէ ո՞վ է այս ի մէնջը։— Պատկանեան բառիս համար որևէ նկատողութիւն չունի։

ՊԱՐՄԻՆՈՍ, ի հլ. «հանճարեղ». ունին միայն Բառ. երեմ. էջ 269 և ՓԲ յաւել.։

ՊԱՐՄՈՒՇԱ կամ **ՊԱՐՄՈՒՇՔԱ** «մի տեսակ դրհար, որ նաև անգոյն է կոչւում» Խոր. աշխ. 614։ Չունին բառարանները։ Տե՛ս յաջորդը։

ՊԱՐՄՈՒՇԻՏ կամ **ՊԱՐՄՈՒՇԻԴ** «մի տեսակ դրհար» Խոր. աշխ. 614։ Չունին բառարանները։ Տե՛ս նախորդը։

—**ՊԱՐՈՅԿ**, ի–ա հլ. «ոլորակ նշանը (՞) և սրա համեմատ ստորգանութեան ձև» Փիլ. այլար. Թր. քեր. Գրշ. զէ. բուն նշանակութիւնն է «շրջան», ինչպէս և ցոյց է տալիս պարոյկ ոռմոյ «պարսպի շրջապատը» Կղնկտ. հրտր. էմինի, էջ 177. որից պարոյկացնել «շուրջ պատհալ» Արծր. պարոյկանուն, յանգապարոյկ, յարապարոյկ Թր. քեր. Յակ. ղրիմ. պարուկանալ, պարուկիլ «ձայնը ոլորուիլ» Մագ. և Երզն. քեր։

=Կազմուած է պար «շուրջ» արմատից՝ –ոյկ մասնիկով, որ գտնում ենք նաև խարոյկ բառի մէջ (արմատը խար–խարել). հմմտ. հների տուած բացատրութիւնը. «Պարոյկ՝ շրջումն վերուստ ի վայր ...և է պարոյկն բեկումն ձայնի և շրջումն վերուստ ի վայր»։ Հմմտ. նաև յաջորդը։

—**ՊԱՐՈՅՐ** «ծիր, շրջան, պտոյտ» Կոչ. «ամբոխ, բազմութիւն, խումբ» Ոսկ. կոզ. որից պարուրել «շրջապատել, պատել» Փարպ. «ծածկել, փակել» Սկևռ. լմբ. «ժողովել, հաւաքել, ամփոփել» Կոչ. 174. Նար. Շնորհ. «քաշքշել, ձգձգել» Յոր. ժթ. 10. «մաքրել, սրբել, կեղտերը հանել» Օր. լ. 6. Ոսկ. մ. ա. 10. տիտ. զ. Կիւրղ. յհս. շրջապարուրել Նար. գեղապարոյր Ճառընտ. զգեստապարոյր Պիտ. կրկնապարոյր «երկու անգամ ծռուած» Նար. 177. անպարոյր Եւագր. 154։

=Կազմուած է պար «շուրջ» արմատից՝ անծանօթ –ոյր մասնիկով։

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 232 պարոյկ և պարոյր հանում է պար արմատից՝ –ոյկ, –ոյր մասնիկներով։ ՆՀԲ պար և ուր բառերից։ Էմին, Քերակ. 1846, 47 պար արմատից՝ –ոյր մասնիկով։ Müller SWAW 42, 250 գնդ. pairivərə «ծածկել»։ Մորթման ZDMG 32, 724—8 պար=յն. περί մասնիկով՝ ուր «դառնալ» արմատից, որ է սանս. vṛt «դառնալ» և կրկնութեամբ պահուած է ուրուր բառի մէջ։ Justi, Zendsp. 268 գնդ. var «ծածկել» արմատի տակ։ Canini, Et. étym. 145 սանս. bar, var «ծածկել» և 196 գնդ. pairi «շուրջ»։ Müller WZKM 8, 97 (կասկածականով) պրս. پروار parvār, برُوار barvār, فروار farvār, արամ. פרוורא parvurā? «արուարձան, նախասահնեակ» բառերի հետ։ Հիւնք. յն. παροίζω «սահմանը որոշել»։ Աճառ. ՀԱ. 1899, 233 կրկնուած պար արմատից, հմմտ. փաթոյթ, պատուտակ, պանոյն։ Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 105 պհլ. parivar «շուրջանակի» ձևից (որ սակայն պիտի տար հյ. *պարուար)։ Rosenberg ИАН 1920, 464 իրան. var «դարձնել» արմատից։

***ՊԱՐՈՆ** «իշխան, մեծաւոր» (Կիլիկեան շրջանի մի տիտղոս) Յայտմ. Հեթմ. պատմ. Վահր. ոտ. Ոսկիփ. Ուռհ. Վասակ. Թլկր. 51. որից պարոնութիւն կամ պարեւութիւն Վահր.

ոտ. Վստկ. Պտմ. ոուբ. 219. նոր գրականում դարձած հասարակ պատուանունն՝ իբր ֆրանս. monsieur, որ նոյնպէս առաջ նշանակում էր «տէր, իշխան» և այժմ հասարակ պատուանուն է։ Իշխանական պատուանունը սրանից զանազանելու համար արևելեան գրականի մէջ ընդունուած է գրել բարոն, իսկ պարոնը պահուած է սովորական գործածութեան համար։

=Հֆրանս. baron բառից. հմմտ. ֆր. baron, իտալ. barone ևն, որոնք գալիս են մլտ. baro (սեռ. baronis) «իշխանաւոր, տէր» բառից. այս էլ հբգ. baro «ազատ մարդ» ձևից, որի բուն նշանակութիւնն է «պատերազմիկ» և կցւում է հսլ. boryą, հիսլ. beryask «կռուիլ, մարտնչիլ» բառերին (Walde 84)։ (Սրանց հետ բոլորովին կապ չունի լտ. baro, baronis «տխմար, թանձրամիտ»)։— Հիւբշ. 390։

Նշ՛ր լտ. baro։ Աւելի ընդարձակ տե՛ս Տէր։

Գիր.—Ղզ. Սմմ. պառոն, Ախց. երև. պառօն, Շմ. Տփ. պառուն, Պլ. բառօն, Սկբ. բառօն, բառէօն, Տիգ. բmռօն, Ակն. բառիւն, Մրզ. պառուն. այս բոլորը փոխառեալ են գրականից։ Բնիկ գաւառական է Սվեդ. բmռիւն «հողաւէր անձ, որ մարթաներ է պահում»։ Նոր բառեր են պառոնբաներ «մի տեսակ բանջար», պառոնգզիր «մի տեսակ խաղ», պառոնպապ (>Հճ. բայէնբօր կամ բայրօր) «կեսրայր, տագր», պառոնտատ «կեսրայր», պառմայր (<պառոնմայր) «կեսուր»։

Փոխ.—Կիլիկեան շրջանին հայերէնից է փոխառեալ ասոր. ܒܪܘܢ bārōn, իբր հայկական պատուանուն («baro, apud Armenios. Brockelm. Lex. syr. 46): Այժմ էլ Պարսկաստանում (Ատրպատական) Թուրքերը հայոց իբր պատուանուն գործածում են barə́n *ձևով։*

**ՊԱՐՊՈՊԻԴ կամ ՊԱՐՊՈՊԻՍ «ցամաքի ղէնների և հեղանիւթերի մի տեսակ» Շիր. 30. գրուած է նաև պարոպսիդոս. (ըստ Մանանդեան, Կշիռներ էջ 62 պարունակում էր 204 դրամ)։*

=Յն. παροψίς, παροψίδος «ափսէ, պնակ»։— Հիւբշ. 371։

Ուղիղ մեկնեցին Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. 151 և Պտկ. Շիր. էջ 30։

ՊԱՐՈՅԱՄ *«ժողովակեաց». ունի միայն Բառ. երեմ. էջ 268.—Թերևս վրիպակ պարառոցել ձևից։*

ՊԱՐՈՒՅՏԱՆ *«գիտնաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 269։*

ՊԱՐՈՒԹԱՅ, *ի հլ. «հաւաքածոյ, հաւաքումն պատմութեանց, ժողովածու» Օրբել. ա. (տպ. պարութայիդս, իմա՛ պարութայիկս, Նշ՛ր պարութայիցս). արդի գրականում «մի գործի վերաբերեալ բոլոր թղթերի ամփոփոյքը, dossier». որից պարութել «ժողովել» Հին բռ.։*

Ասորի բառի երևոյթն ունի, ինչպէս ܡܪܘܬܐ marūtā *«տէրութիւն» (>հյ. Մարութայ յատուկ անունը), ուր -ūtā «-ութիւն» մասնիկն է. հմմտ.* ܦܪܘܬܐ prūtā *կամ* pərūtā *«մաշկեայ հագուստ»։*

Պարուճակ *տե՛ս Պար+ունել։*

ՊԱՐՈՒՍ *«սէզից հիւսուած չուան» Ճառընտ. սրա հետ նոյն է պարուսան «նոյն նշ.» վրք. հց. (այլ ձ. պաարուսան, տպ. գաւազան), պարուսանի «ուղտի պախուրց» Աբեղան. էջ 581, վրք. հց. ա. 55։*

ՊԱՐՈՒՏԱԿ, *ի–ա հլ. «բարակ մաշկ, թաղանթ (աչքի, ուղեղի)» Կոչ. 228. Պիտ. Նիւս. երդ. և կազմ. Պրպմ. ձեռ. որից պարուտակիլ «փաթաթուիլ» Մծբ. 223. պարուտակաւ «թաղանթը պատռուած» Վեցօր. 166. գրուած է նաև պարուճակ։*

Պատահակա՞ն նմանութիւն ունի ասոր. ܦܪܘܬܐ prūtā *կամ* pərūtā *«մաշկեղէն հագուստ»։*

ՊԱՐՉԱԼԻ *«պանծալի». ունի միայն Բառ. երեմ. էջ 270։*

ՊԱՐՊԱՏԻԼ *«լիութիւնից խճողուած լինելուց պատռիլ՝ ճաքիլ՝ տրաքուիլ» Ղկ. ե. 6. Կանոն. էջ 49. Փիլ. Գնձ. որից պարպատումն Նիւս. կազմ. պարպատիւն «ճայթիւն, շառաչիւն» Ոսկ. յհ. ա. 1. որովայնապարպատ Անյ. հց. իմ.։*

Նշ՛ր պար– մասնիկով պատել բայից։ Հինք. պատել բայից։ Müller WZKM

11, 206 պար- *մասնիկով* *պատել բայից, որ կցում է զնդ. paū «լցնել» և յն. πατέομαι «ուտել» բառերին (տարբեր է պատել «շրջապատել» բայից)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 320* պրս. barbād *«փչացած, եղծուած» բառից։*

ՊԱՐՊՈՒԼՈՒԼՈՒ *«անծանօթ մի բոյս է» Հին բժշ. ունի միայն ՀԲուս. § 2529։*

***ՊԱՐՍ**, ի հլ. «քար գցելու փոկ. տճկ. սափան» ՍԳր. սրա հետ նոյն են (զանազան մասնիկներով կազմուած)* **պարսեա** *կամ* **պարսէտ** *«նոյն նշ.» Ջենոբ էջ 45, Պղատ. օրին. Վանակ. յոր.* **պարսատիկ** *ա հլ. «պարսաքարի փոկ» Ա. Թագ. իր. 29. Առակ. իզ. 8. «բաբանի մէջ քար դնելու տեղը» Լաստ.* **պարսատակ** *«նոյն նշ.» ՅՀ. կՊ. Աբիսա. մկրտ.* **պարսայակ** *Արծր. արմատական* **պարս** *ձևից են՝* **պարսաւոր** *ՍԳր.* **պարսաֆար** *Ջագ. Բ. 15.* **պարսաֆարել** *Ա. Թագ. ժէ. 49. իե. 29.* **պարսել** *«պարսաքարով զարնել» Մագ. Նար. «քարկոծել» Օրբ. Հրար. էմ. էջ 330 (Պարսել զբերան զրաբան արանց). «ոսոնուլ, վեր ցատկել» Պատմ. ազէքս. Փիլ.։*

=ՊՀլ. *pars, որ բուն նշանակում էր «կապ, կապիչ» և յետոյ առացաւ «պարս» նշանակութիւնը. (Հների պարսէտը մի տեսակ կապ էր՝ մէջտեղը լայն, ծայրերը նեղ, ուր քարը դնելով արձակում էին. Համմ. յն. σφενδόνη «կապ, վիրակապ, գլխակապ, կանանց ամօթոյքի կապ, նաև պարսէտ». անգլ. sling «կապ և պարսէտ»)։—ՊՀլ. բառը աւանդուած չէ, բայց նրա հոմանիշ *parsak ձևն է հաստատում իրանեանից փոխառեալ թալմուդ.* פרסקא parsakā «Schlinge, թակարդի՝ ցանցի են կապը, lacet»։—Հիւբշ. IF Anz. *10, 49։*

Հինք. պրս. bārsang *«կշիռքի նժարը դնելու քար» (բառացի նշանակում է «բեռնաքար», կազմուած* bār *«բեռ» և* sang *«քար» բառերից)։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Müller WZKM *8, 287, որ չընդունեց Հիւբշ. 514 և* IF. Anz. *8, 49։* Müller WZKM *11, 293—4 տուաւ նոր բացատրութիւններ վերի ձևով, որով Հիւբշ. ևս համաձայնուեց* IF. Anz, *10, 49։*

Գիհ.—Վն. **պարսեա**, *Մկ.* **պարսիա**, *Խրբ.* **բարսադիֆ**[1], *Ջղ.* **պարսուս**, *Ալշ. Մշ.* **պարսեան**, *Սվեդ.* **բարսէք**, *Երև.* **պա՛րսօճ**, *Ղրբ.* **բա՛րսուղ**, *Գնձ.* **բա՛րսուր**, *Ջթ.* **բայսիգ**, **բարսիգ** *(Ղրբ. և Գնձ. նշանակում են նաև «շատ նեղ բան»)։ Ոճով ունինք* **խելքը պարս բնել** *Սեբ. «յանկարծ մի նոր միտք ունենալ, խելքին փչել, խելքին հէօքմ ընել» (համմտ.* **պարսել** *«վեր ցատկել»), եթէ մեղուների պարսից չէ։*

ՊԱՐՍԱՒ, ի հլ. *«անարգանք, նախատանք» Պիտ. Պղատ. օրին. «նախատուած, ամօթահար» Ոսկ. երր. և բ. տիմ. Եփր. ծն. որից* **պարսաւել** *«անարգել, նախատել, մեղադրել» Եւս. քր.* **պարսաւաճ** *Երեմ. ի. 20. Բ. կոր. զ. 8. Սիր. լ. 23.* **պարսաւասէր** *Փիլ. Կիւրղ. գնձ.* **պարսաւադիր** *Ոսկ. յհ. ա. 27.* **հրապարակապարսաւ** *Երզն. քեր.* **կաճխապարսաւ** *Շնորհ. բ. որ* **իճճապարսաւ** *Սկևռ. աղ. Նար.։*

ՆՀԲ **պարս** *«պարսաքար» բառից։* Müller SWAW *42, 253 աքիմենեան* pars, *համմտ. պհլ.* pātfrās *«պատուհաս»։ Տէրվիշ. Նախալ. 73 հնխ.* çru *«լսել» արմատից՝ պա<ապա բացառականով, ինչպէս որ միևնոյն արմատից ղ բացառականով էլ ունինք դրսով, դրսում։ Հինք. բառել բառի հետ՝ յն. περιστόρα «քաշքշել, պատառոտել»։* Müller WZKM *6, 184 կապ ունի պհլ.* pātfrās *«պատիժ»=զնդ. *paiti-parəs *(«հարցնել» արմատից) բառի հետ և փոխառեալ է իրանեանից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 34 ըստ Տէրվիշեանի։*

Գիհ.—Սեբ. **բարսավէլ**։

***ՊԱՐՍԻՆԱ** *«մի տեսակ բոյս» Բժշ. ըստ ՀԲուս. § 3388 «սագախոտ, որ է մի տեսակ* chenopodium*», ըստ Տիրացուեան,* Contributo *§ 102 «շուռ խոտ, սուիղ,* chenopodium Botrys L.*»։*

=*Արաբ.* برسيانا barsiānā *նոյն նշ. Համմտ. նաև պրս.* برسيان barsiyān *«մատուտակ» և* برسياندارو barsiyāndārū *«հովուացուպ (բոյսը)»։*

Պէյթարից առնելով ուղիղ մեկնից Հիւս.։

***ՊԱՐՏ**, ու հլ. (յետնաբար նաև սեռ. -ոյ) *«մէկի վճարելիք գումարը. 2. որևէ տալիք. 3. պարտականութիւն. 4. փոխ տրուած դրամ»* ՍԳր. *«պարտական, առիթ, պատճառ»* Հռ. ա. 27. Իմ. ժբ. 15. Եզն. Կոչ. Եփր. Թգ. Ոսկ. *«արժան, պատշաճ, վայել»* Կիւրղ. գնձ. *որից* պարտ է *«պէտք է»* ՍԳր. պարտ և պատշաճ Բ. մկ. դ. 19. Ոսկ. մ. ա. 1, 13 և հս. Եփր. օրին. և Թգ. պարտիմ ՍԳր. *(ամկահձև յգ.* պարտեր *«պարտքեր»* Եղիշ. է. էջ 108. *մի քիչ ցած՝* զպարտսն). պարտոյմ *«պարտականութիւն»* Եւթաղ. 179. պարտիլ *«պարտական լինել»* ՍԳր. Ոսկ. Կոչ. Սերեր. պարտական, ՍԳր. պարտապան ՍԳր. պարտատէր Ես. իգ. 2. պարտաւոր ՍԳր. անպարտ ՍԳր. Ոսկ. երր. ամպարտել *«անպարտ կացուցանել, ներել»* Տիմոթ. կուզ, էջ 150. բազմապարտ Մծբ. բարեպարտ Ոսկ. ա. կոր. բարեացապարտ Կորիւն. *(այս և նրման* -պարտ *յանգող բարդութեանց վրայ տե՛ս Ադոնց ՀԱ. 1928, էջ 81).* գլխապարտ Դան. ա. 20. եզն. Ոսկ. հս. դատապարտ Հռ. գ. 19. բ. 34. Առակ. ա. 23. Ոսկ. մ. դ. 11. զրպարտել ՍԳր. Ոսկ. հս. մանապարտ ՍԳր. մանապարտութիւն Բուզ. Փարպ. մեղապարտ Ոսկ. ա. կոր. Եփր. Թգ. շարեացապարտ Բ. մկ. դ. 47 *(ըստ Ադոնց ՀԱ. 1928, 80 ուղղելի ըստ յն.* շարեաց պարտ). պատժապարտ Ոսկ. Սերեր. վճռապարտ Գ. Թագ. ա. 21. տարապարտ ՍԳր. Ագաթ. Սերեր. Ես. պատ. եզն. տարապարտուց *«պարապ տեղը, ի դուր»* ՍԳր. Կոչ. 353. նոր բառեր են՝ երախտապարտ, պարտամուրհակ, պարտաճանաչ, անպարտաճանաչ, պարտադիր, պարտադրել, պարտաւորեցուցիչ, անպարտադիր, անպարտազիր, յանցապարտ են։ — *Փոխաբերական իմաստով է* պարտիլ *«յաղթուիլ» (իբր Թէ պարտական մնալ),* պարտել *«յաղթել, նուաճել»* ՍԳր. Սերեր. *որից* պարտութիւն ՍԳր. եզն. պարտումն Փարպ. անպարտելի եղիշ. խոր. դիւրապարտելի Մեկն. դևտ. են։

=*Հպրս.* *partu- *«պարտք» բառից, որ թէև աւանդուած չէ, բայց կայ միւս իրանեան լեզուների մէջ. համմտ. զնդ.* pāra- *«պարտք»,* tanūm pairyeite *«պարտական լինի անձին, գլխապարտ լինի»,* pəša- (<*prta-) *«պարտական, յանցաւոր, մեղաւոր»,* pəšōšāra- *«գլխապարտ»,* pəšōtanu-, pərətōtanu-, tanupərəθa- *«գլխապարտ, անձնապարտ, մահապարտ»,* սոգդ. apartak *«յանցաւոր, մեղապարտ»* (MSL *19, 128* և *ՀԱ. 1927, 763*), աֆղան. pōr *«փոխ, պարտք»։ Պակասում է սասանեան պահլաւերէնում։ Իրանեանից է փոխառեալ նաև քուչ.* peri *«պարտք» (MSL 19, 159)։—Հիւբշ. 228։*

ՆՀԲ լծ. ասկ. պօրճ *«պարտք», պրս.* պայէտ, ֆարզ *«պէտք, պէտք է»։ Ուղիղ մեկնից* Müller SWAW *42, 250* և *78, 431՝ կցելով զնդ. ձևերին։ Նոյն է նաև Հիւբշ.* KZ 23, 19: Müller WZKM 6 (1892), 301 *պհլ.* pardūn *«պատիժ, տուգանք» բառի հետ, որ կարդում է* part։ *Հիւնք. ասկ. պօրճ և արաբ.* فرض ֆարզ: Bugge, Lyk. Stud. 1, 40 *փռիւգ.* παρτυσσβρα *«անմեղ» բառի մէջ, որ մեկնում է* պարտասուրբ.—*Այս բոլորը վերաբերում է* պարտ *«պարտք» բառին, իսկ* պարտել *«յաղթել» սրանից բաժանելով՝ մեկնում են—Հիւնք. պրս.* burdan *«յաղթել»,* barda *«գերի».— Հիւբշ.* Arm. Gram. *229 (կասկածով) հպրս.* *part- *«կռուիլ» արմատից. համմտ. զնդ.* pərətənte *«մարտնչին»,* pəšanā- *«պատերազմ», սանս.* pṛt- *«պատերազմ»,* pṛtanā- *«պատերազմ, ընդհարում», պրս.* ورد āward *«կռիւ»,* nabard *պհլ.* nipart *«պատերազմ»։* Patrubány *ՀԱ. 1907, 304* պար *«շուրջ» ձևի հետ։ Մաս* ИАН *1920, 107 վրաց.* մարբալ *«արդար» բառի հետ։*

Գիմ.—Ախց. երև. պարոմ, *Ալշ. Մշ. Շմ. Ջղ. Տփ.* պարոկ, *վն.* պառոմ, *Գոր. Կր. Ղրբ.* պարբմ *(բայց Ղրբ.* պրոտա՛կաւ), *Սչ.* բարդմ, *Խրբ.* բարդմ, բարմ, *Տիգ.* բոռդմ, *Ննխ. Ռ.* բարբմ, *Սեբ.* բարդգ, *Ակն. և Պլ.* բարբգ, *Մկ.* պարմ՝, *Ասլ.* բար՞գ, բար՞ *(բայց* բարդբգաւ), *Անտ.* բորբմ, *Ագլ.* պօռբկ, *Ջթ.* բօյդմ, բուդմ, *Հճ.* բօյդմ, *Մրզ. և Սլմ.* պառմ, *Սվեդ.* բուրբմ, *Թրքախօս հայերից Առն.* bardk *«տալիք»։ Նոր բառեր են* պարտկանատէր, պարտմաքաղ, պարտմակոխ,

պարտաւէր, պարտաճէր, պարտովի, պարտօք (*Տիգ.* բարդօգ) «փոխառութիւն»։

*ՊԱՐՏԱԿ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.* –ի) «ծածկոյթ, ծածկոց» *Նեղոս. 717, «բոյսի արմատը և բունի տակը ծածկելու լցուածք (հողով, խիճով)» Վստկ. 53. «վրանի պատերը» Ղևոնդ իէ, էջ 127, «առագաստ, սեռնակ» Գր. տղ. «երամ, դունդ, խումբ» Երզն. քեր. (այս նշանակութիւնը կասկածելի է). որից* պարտակել «ծածկել, թաքցնել» *Յայսմ. դեկ. 10. Գնձ. Ոսկիփ.* անպարտակ «ցիրուցան» *Վրդն. աղ. հր. էջ 268.* պարտակիլ «տեղաւորուիլ, պարակուիլ, սրդմիլ» *Վրդ. առ. 61.* ապապարտակեալ *Նանայ 3։*

=*Պհլ.* *partak «առագաստ, վրան, ծածկոց» *բառից, որ թէև աւանդուած չէ, բայց հաստատում է պրս.* پرده parda *(որից թրք.* perde*) «վարագոյր, ծածկոց» և պահլաւերէնից փոխառեալ ասոր.* ܦܪܕܩܐ pardaqā «վրան» *բառերով։— Հիւբշ. էջ 229։*

ՆՀԲ մեկնում է «ծածկոյթ, թումբ, կոյտ, հողակոյտ, բլուր, բանակ, բանակիւղ» և քամ այսմ ստուգաբանում է պատրուակ, *լծ. թրք.* պայըր «բլուր, զառիվայր»։ Müller SWAW *38, 573—75, և 590 պրս.* parda «վարագոյր»։

Գիհ.—Հհ. բարդագ «ծածուկ». *բայական ձևով՝ երև.* պարտակել, *Ախց. Կր.* պարտըկել, *Տփ.* պարտըկիլ, *Ալշ.* պարդըգել, *Մրղ.* պատրկել, *Նխճ. Պլ. Ռ. Սեբ.* բարդըգել, *Տիգ.* բարդըգել, *Ղրբ.* փրթա՛կել, փռտա՛կել «ծածկել, թաքցնել»։ *Նոր բառեր են* գողպարտակ, անպարտակուած։

ՊԱՐՏԱՆՔ «կախարդական հմայիկ, յուռութք». *մէկ անգամ ունի Մանդ. իր.* «Ամենայն յուռութք և պարտանք դիւթի և թովչի և հարցկի՝ սուտ են և եղկելի»։

ՆՀԲ մեկնում է իբր «պարտակ, պատրուակ կամ ծրար (կախարդական)»։

ՊԱՐՏԱՍԻԼ «յոգնիլ, թուլանալ, ուժից ընկնել» *ՍԳր. Ոսկ. մ. ք. 27. Եփր. Թուոց. որից* պարտասել *Վրք. ածար.* պարտասեցուցանել *Դաան. ժզ. 16. Եզն.* անպարտաս *(նոր բառ). յետին անցողականի ձև է* պարտասանեալ «յոգնեցրած» *Սիմ. ապար. 47։*

ՆՀԲ պարտիլ «յաղթուիլ, ընկճուիլ» *բայից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 321 պրս.* pardāxtan, pardāz, pardās «հեատամոտիլ, զբաղիլ, յոգնիլ, գործը վերջացնել»։

ՊԱՐՏԲԱՇԻ «գրաւ, փրկանք, պատանդ» Ոսկ. ա. Թես. ը. 454. Սևբեր. էջ 168. Սարգ. ա. յհ. է, ա տպ. էջ 719, բ տպ. էջ 567. որ և պարտբաշխ, *բց. ի* պարտբաշխից *Եւս. քր. բ (գրուած է անջատ՝ իբր երկու բառ)։*

=*Բարդուած է* պարտ<*հպրս.* *partu- և բաշխ<*զնդ.* baxš *բառերից. զուտ պարսկական մտածման ձև է. ուստի բարդութիւնը տեղի ունեցած է ո՛չ թէ հայոց մէջ, այլ իրանեանից պատրաստի փոխ է առնուած։ Հիւբշ. 229։*

Հին բռ. մեկնում է «փոխանակ կամ պանդադ կամ փնդվայր»։ ՆՀԲ «տուրք՝ որպէս հարկաւ տալի ի բաշխ, բաժ, հարկ»։

*ՊԱՐՏԻԶ, ի–ա *հլ. «այգի, բանջարանոց, ծաղկանոց, մրգաստան ևն» ՍԳր.* որից պարտիզարար *Կոչ. 116.* պարտիզպան *ՅԿ. ի. 15. Վրք. հց.* պարտիզապան *Ոսկ. ես 464. Սիր. համաբ. 28. Պզատ. մինովս.* պարտիզանալ «ծլիլ, ծաղկիլ» *Նիւս. երգ.* պարտիզիկ *ՅԿ. կթ. Վրք. հց.։ Նոր բառեր են՝* պարտիզպանուհի, մանկապարտէզ, պարտիզպանական *են։*

=*Հպհլ.* *pardēz *համանիշից, որի հետ նոյն է պրս.* پالیز pālēz «պարտէզ». *սրա հին ձևն է զնդ.* pairidaēza, *որ կազմուած է* pairi «շուրջ»+diz «փորել, շինել, դիզել» *բառերից և նշանակում է բուն «շուրջանակի ցանկապատ»։ Շատ նշանաւոր էին աքեմենեան պարսիկ իշխանների պարտէզները. և նիւթի հետ բառը այն ժամանակից սկսեալ տարածուել է դէպի Արևմուտք. այսպէս ասուր.* pardisu, *ասոր.* ܦܪܕܝܣܐ pardaisa «պարտէզ», ܦܪܕܝܣܦܢܐ pardaispānā «պարտիզպան», *եբր.* פַּרְדֵּס pardēs «պարտէզ», *արաբ.* فردوس firdaus «ծառաստան, պարտէզ, դրախտ» *(սրանից էլ* Ֆիրդուսի *բանաստեղծի անունը, իբրև «դրախտաբնակ»),* فالیز fālīz «պարտէզ», *յն.* παράδεισος (Boisacq 746, 949), *լատ.* paradisus «պար-

տէզ, երկրային կամ երկնային դրախտ», իտալ. paradiso, ֆրանս. paradis *«դրախտ»։ Քսենոփոն վկայում է բառիս ծագման մասին՝ հետևեալ հատուածում.* ἐπιμελεῖται τουτων ὅπως κῆποί τε ἔσονται, οἱ παράδεισοι καλούμενοι, πάντων καλῶν τε καγαθῶν μεστοὶ ὅσα ἡ γῆ φύειν θέλει *«հոգս է տանում որ լինին այն այգիները, որոնք* **պարտէզ** *են կոչւում, բոլոր այն գեղեցիկ և լաւ բաներով լցուած, որ երկիրը արտադրել կարող է». (տե՛ս* Scriptorum classicorum bibliotheca Oxoniensis, Xenophontis opera, Marchant, Oxonii *Բ. պլ. Դ. § 13)։—Հիւբշ. 229։*

Schröder, Thesaur. 56 *առուգրանում է* **պարտ սէզ** *(այսինքն պիտանի կանաչներ) և մեզանից փոխառեալ է դնում միւսները։ Ըստ այսմ նաև Վիտոննանք, Թրգմ. Խոր. յոչ. էջ 6 հայերէնից են դնում յն. և լտ. ձևերը, որ ուրիշ դիտումներ մար կամ պարսիկ են համարում։ Աւգերեան, Լիակ. վրք. սրբոց. հտ. Ը. 221 նոյն է դնում պրս. և ուրիշ լեզուների հետ։ ՆՀԲ յծ. երբ. լտ. յն. և արաբ. ձևերը։* Lag. Urgesch. 634 *կցում է յն. և զնդ. ձևերին, բայց հայը իրանեանից փոխառեալ է դնում։ Մ. Մսերեանց, Ճռաքաղ 1859, 430 հայերէնից փոխառեալ է դնում բոլորը «Եբրայեցին դրախտին անուն տայ Ֆարտէս, բայց Հայդ պնդեա՛ թէ այն մերն իսկ է պարտէզ»։ Ուղիղ են նաև* Müller SWAW 38, 594, Justi, Zendsp. 180, Տէրվ. Նախալ. 87 *են։ Բառիս վրայ մի գեղեցիկ քննութիւն ունի* Meillet MSL 17, 250, *ուր ցոյց է տալիս թէ հայը աքեմենեան ժամանակից է փոխառեալ և այս հնութեան պատճառով է որ իրանեան* d *ձայնի դէմ ունի* տ։

ԳԻՒ.—երբ. բարդէզ, *Ջթ.* բայդէզ, բարդէզ *«վարունգի արտ»։*

ՓՈԽ.—Արաբ. بردزبا bardazba *«երկրագործ, մշակ». այս բառը Կամուս, Թրք, Թրգմ. Ա. 77 պարսկերէնից է համարում, բայց յայտնի է որ չի կարող լինել պարսկերէնից, որովհետև պրս. ձևն է* pālēzbān. *չի կարող նաև լինել ասոր.* פרדיספנא pardaispānā *ձևից՝ միջին* s *ձայնի պատճառաւ առնուազն. վերջապէս չի կարող պահ.* *pardēzpān *ձևից լինել, ըստ որում այդ շրջանի պահ.* *pardēz *բառը արաբ. տուած է* فردوس firdaus։ *Այլ, ինչպէս պ և տ ձայների յետին տառադարձութիւնը ցոյց է տալիս, նոր ժամանակ փոխառեալ է հյ. պարտիզպան բառից (Ա.ճառ. Արրատ. 1910, 269)։*

Պարտուկ *տե՛ս Պարծ։*

***ՊԱՐՏՔԱՃ** *«պարսկական մի աղանդ». մէկ անգամ ունի Եղիշ. ը. «Գիտէր և զամենայն պարտաքաղն, ուսեալ էր և զբոզպահիտն, ունէր և զպահլաւիկն և զպարսկադենն. քանզի այս հինգ կեղտք են՝ որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեանն»։ —Բառիս ուղիղ ձևն էր* **պարտմաշ**. *բնագրի մէջ այստեղ գրուած էր* **զամենայն պարտմաշ**, *ինչպէս ունի տպ. Պօլսոյ 1823. սրա համառօտագրեալ* **զամ պարտմաշ** *ձևից յառաջացաւ* **ամպարտմաշ** *ուղղականը, ինչպէս ունին տպ. Մոսկուա 1892, էջ 131 և Եղիշ. մատ. էջ 112։ Տաշեան, Յուց. էջ 9 ունի* **ամբարտմաղ**՝ *մեկնուած «ջահակրօն կամ լուսամիտ». ՆՀԲ դնում է* **պարտմաշ** *և* **ամպարտմաշ**, *որոնցից վերջինը միայն ուղիղ է համարում Հիւբշ. 96։*

=Զնդ. ~ 𐬯𐬀𐬎𐬌𐬎𐬀𐬵𐬌𐬎𐬀 · 𐬐𐬀𐬎𐬌𐬎𐬀𐬵𐬌𐬎𐬀 paoiryōṭkaēša- *բառն է, որ կազմուած է* 𐬯𐬀𐬎𐬌𐬎𐬀 paoiryō *«առաջին» և* 𐬐𐬀𐬎𐬌𐬎𐬀 ṭkaēša- *«քէշ, կրօն» բառերից. նշանակում է «առաջին կամ նախնական կրօն»։ Մազդէզական դրքերը այս անունով են կոչում Իրանի հնագոյն կրօնը, ա՛յն որ յայտնուեցաւ Ջէմշիդին և նրա յաջորդներին, և տևեց մինչև Զրադաշտ։ Զրադաշտի բարեզուխթիւնով այս վարդապետութիւնը մոռացուեցաւ և նրա փոխարէն սկսաւ* Ahuratkaēša- *վարդապետութիւնը։ Զնդ. բառը դարձած է պհլ. ըստ* Nyberg, Hilfsbuch des Pehlevi I. 58 𐭯𐭥𐭫𐭩𐭪𐭥𐭱𐭩𐭪 pōryōtkēš, *որի հետ կարող էր նաև հայերէնին աւելի մերձաւոր մի ձև դնուիլ։*

Ջթ մեկնում է իբր «պարսկակէշ կամ պարսկակէշտ»։—Հիւբշ. 96 իբր ուղիղ ընդունելով **ամպարտմաշ** *ձևը և հիմնուելով «ջահակրօն, լուսամիտ» բա-*

յատուկեան վրայ, բառի վերջին մասը համարում է fšz<ṭkaēša, *իսկ* *ամ-պարտ *են*թադրում է որ լինի «լոյս» նշանակութեամբ մի բառ. *ամբողջը իբր իրանեան փոխառութիւն վերի մեկնութիւնը տուաւ Բարթ. 1895, 51, որի հետ նոյն է Փորթուգալ փաշա, Եղիշէ 400. («ջահակրօն» իմաստը հանում է արաբ.* anvar-kaš *«լուսաւոր» ձևից)։ Նոյնը անկախաբար ունի Թիրեաքեան, Արիա-հայ բռ. էջ 24։* Benveniste *ՀՍ. 1927, 763 հանում է* parta->պարտ-f *բառից և մեկնում է «Պատժական օրինագիրք»։*

ՊԱՅԱԽ *«անծանօթ մի բոյս». Ախտարք. ունի միայն ՀԲուս. § 2533։*

ԳԻՒ.—Վն. պացաղ *«բողիկի նման մի խոտ է», Բղ. «կորնգան կամ զուիրակ»։*

***ՊԱՅԻՆ** «կոնք (մէջը լուացուելու համար)». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Անսիպք 45. «Ջարթէլ ի պառկիլեցն և ի բաղնեց բռահէն և յայտ ցեղ սարսուիենէդ, որ է պացին, սաւոր, սաւան»։ Նոյնը կայ նաև Մաշտ.։*

=Յբրանս. bassine *«կոնք, լճկան» բառից, որ ծագում է կելտ.* bac *«խոռոչ» բառից։—Ա.Մ.*

Այս մեկնութիւնս անտիպ է։ Նոյնը անկախաբար ունի Հայկունի, Ճաշոց 84։

ՊԱԻԱԿ, ի–ա *հլ. «մախաղ». ունի միայն ՓԲ յատկ. անստոյգ բառ։*

ՊԱԻԴՐԻԼ *«մեղմանալ, կակղիլ, դադարութիւնը իջնել». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկ. երր. իր. «Թևակէտ և կարի ոք մեծամիտ իցէ այրն, այնու վաղ պատրի, յորժամ հեզութիւն պարկեշտութիւն ցուցանիս»* =*յն.* ἐφελκύω *«իրեն քաշել, հրապուրել»։*

ՆշՀՔ մեկնում է «բառ անյայտ, իբր յն. ձգել, քարշել, ἐφελκύω, *որ Թարգմանի և պատռել. Թերևս այսպէս էր գրելի»։ ՋՔ «ամփոփիլ, զսպիլ, ցածնուլ, քաշվիլ»։ ԱՔ ջնջած է այս բառը։*

***ՊԱՔԱՐԱՑ** «արջառ, լուծ կամ բեռ քաշող եզ» Լմբ. ի լծ. Նիւս. կազմ. ուրիշ օրինակ չկայ։ (Գործածուած է յդ. պահարայի ձևով, որից ՆՀՔ սխալմամբ եզակին դնում է* պահար*)։*

=Արաբ. بقر baqara *«արջառ, եզ, կով» (սրա ցեղակիցները տե՛ս վերը* պախրէ *բառի տակ)։—Հիւբշ. 274։*

ՆՀՔ և ՋՔ համարում են երրայեցերէն։

***ՊԱՔՍԻՄԱՏ** (ի հլ. *բատ ՆՀՔ, բայց առանց վկայութեան) «կրկին եփած կամ չորացրած կակուղ հաց» Վրք. Հց. սրա հին օրինակի մէջ գրւում է միշտ* պաճգամատ, *անդ՝ Բ. 478, սխալմամբ նաև* տախսիմատ *(վերջածայն տ ազդել է գրողի մտածութեան վրայ) անդ, Ա. էջ 566—567.* պախսիմիտ *Մխ. բժշ. 45։*

=Յն. παξιμάδιν, *որ և ասւում է* παξαμάτες, παξαμάδες, παξαμάδιν, παξαμάδιον, παξημάδιον, παξαμάτιον, *որոնք նուագական կամ յոգնական ձևերն են* πάξιμας, παξαμᾶς, παξαμίς, παξαμίτης *բառերի* (Sophocles 839). *փոխառութեամբ անցել է նաև ուրիշ լեզուների. ինչ. մլտ.* paximatium, paxamacium, *վրաց.* პაქსიმადი პախսիմադի, *ասոր.* ܦܰܩܣܳܡܳܐ paksūmā, *պրս.* بکسمان baksimāt, *արաբ.* بقسماط baqsimaṭ, بشماط bišmāt, *քրդ.* baxsam (Justi, Kurd. Gram. *էջ 54), թրք.* beksimet, *բուլղար.* pesmet, *ռում.* paksimadŭ, *հունգ.* peszmét, *հին սլով.* paksimadŭ, *բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ (Յոյն բառի ծագումը անյայտ է.* Barbier de Meynard, Dict. turc-fr. *դնում է թրք.* برك berk *«ուժեղ, ամուր» և* سماد simād *«նաշիհ» բառերից, որ* Seidel *Մխ. հեր. § 141 մերժում է հայերէնի մէջ բառիս հին գոյութեամբ.* Sophocles *համարում է պրս. որ նոյնպէս յարմար չէ)։—Հիւբշ. 371։*

ՀՀՔ համարում է լտ.։ ԳԴ պրս.։ ՆՀՔ թրք. ձևի հետ է միացնում։ Տէրվ. Altarm. *69 յն. և պրս. ձևերի հետ։*

ԳԻՒ.—Ախց. բ'տխիմտր, *Ննխ.* բախսըմադ, բասմադ, բէսմէբ, *Սեբ.* բէ՝սմէ՝բ, *Սրվեդ.* բտխիմուր, *որոնցից ոմանք նոր փոխառութիւն են Թուրքերէնից. յայտնապէս Պլ.* փէխիմէբ.— *Հնաւաբրբրական է Արբ.* դէսմէբ *«իւղով ու ձուով պատրաստուած պաքսիմաթ», որ ներկայացնում է վերի* տախսիմատ *ձևը։*

Պեգաս *տե՛ս Պիգասոս։*

Պեխ *տե՛ս Բեղ։*

Պեկար *տե՛ս Բեկար։*

Պեկիւռիս *տե՛ս Կիպարիս։*

ՊԵՀԻԱՐՈՆ *«մի տեսակ լեռնային բոյս է՝ որ խոզերն են ուտում». Համամ. առկ. (յիշուած է մուուկի և տիգանի հետ). չունի ՀԲուս.։*

ՊԵՂ *«նիպ, կողպէք, գռնափակ,* sera». *ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լա-հյ. էջ 491 բ։*

***ՊԵՂԱԳՈՍ** *(գրծ. -ի, յգ. սեռ. -աց) «մեծ ծով» Խոր. աշխ. 595—6. գրուած պիղագոս Բղթ. դաշ. 15։*

=Յն. πέλαγος «ծով», որ և լտ. pelagus. *սրանից է* **Աւշիպեղագոս** *(ծովի անունը)։—Հիւրշ. 371։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

***ՊԵՂԱԿԱՆ** *«հաւալուսն, փորահաւ թռչունը.* pélican». *գործածուած է Փիլ. լիւս. 140 ձեռագրի լուսանցքում՝ իբր բացատրութիւն* **բռնձ** *հոմանիշի։*

=Յն. πελεκάν «հաւալուսն», որից նաև լտ. pelecanus, pelicanus, *ֆրանս.* pélican։

ՆՀԲ և ՋԲ հասկանում են «ծովային մի խեցեմորթ»։ ՆՀԲ աւուգաբանում է «Թերևս իբր **պեղագոսեաճ** *«ծովականք» կամ* **պողիպոդ**»։ *Ուղիղ մեկնեց Նորայր, Հայկ. բառաքնն. էջ 115—6։*

+ՊԵՂԵԼ *«փորել, հողը փորելով դուրս հանել» Սղ. է. 16. Ագաթ. Ոսկ. ես. 365 (կրաւորական ձևով). «փորել, փոս՝ ջրհոր են բանալ». Նխ. ծն. Խոր. Լմբ. սղ. «փորագրելով նկարել» Մխ. աս. 130. Նմանութեամբ ասում է գշարիս* **պեղել** *Առակ. Բ. 12.* **պեղել. զարդար արիւն ճառընտ. պեղումն** *«փորելը» ԱԲ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bel- *«կտրել հանել, փորել, փոսացնել» արմատից, որի ժառանգներն են սանս.* bila- *«խոռոչ, ծակ, բացուածք»,* bílma- *«տաշեղ», վեդ.* bāra- *«ծակ, բացուածք» (պահուած միայն բարդութեանց մէջ), միռլ.* belach *«ծերպ, ճեղք», նիռլ.* bealach *«ճամբայ, լեռնանցք»։*

ՆՀԲ լծ. թրք. belïemek *«փորել, բահել»։ Զօպանեան, Բազմ. 1908, 360 փող «նեղ անցք» բառից։ Սպրդեան ՀԱ 1909, 335 սումեր.* bal *«փորել»։* Karst, *Յուշարձան 403 սումեր.* bal *«փորել», 422 խալդ.* pili *«ջրանցք», թրք.* be։ *«բահ»,* bellemek *«փորել»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Petersson KZ 47. 264—5, Ar. u. Arm. Stud. 29, *որ ընդունում է* Pokorny 2, 110։*—Պատահական նմանութիւն ունի անշուշտ ն. ասոր.* p'el *«ական, տակից փորած ճամբայ»։*

ՊԵՂԻՍ *«մի տեսակ հեղուկաչափ» Շիր. «Պեղիսի կամ պեղիէս (այլ ձ. պեղես) կըրկին ապակի է և ունի նոյնչափ զմասն քսեսի» (այսպէս ՆՀԲ, ըստ Պատկ. էջ 31* **պեղիէս** *կամ* **պեղիէս**):

ՆՀԲ գնում է յն. πελίκη, πέλιξ, *բայց սա նշանակում է «փայտէ աման» և հակառակ է Շիրակացու բացատրութեան։* Brockelmann, *Ասս. փոխ. բառից 113 գնում է* πελίνη *որ աստիկնոց մի չափ է (ըստ Սոփ. Քնս.), իսկ* **պեղիէս** *և* **պեղիէս** *ընթերցուածները բացատրում է* πελίνη *բառի Λ և Δ տառերի նմանութեամբ։*

***ՊԵՆՏԱԹՂՈՍ** *«հնգամրցանք, մի տեսակ olիմպիական խաղ» Եւս. քր. ա. 284, 285 (գրուած նաև* **պենտատղոս**):

=Յն. πένταθλον *«հնգամրցանք». olիմպիական մի խաղ, որ ունէր հինգ մաս. այն է՝ վազք, ըմբշամարտ, կռիւամարտ, ոստում և շրջանակ նետել». կազմուած է* πέντε *«հինգ» և* ἆθλος *«մրցանք» բառերից. սրանից է* πένταθλος *«հնգամրցանքի մասնակցող կամ յաղթականը»։—Հիւրշ. 371։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՊԵՆՏԵԿՈՍՏ**, *ի հլ. (որ և* **պենտակոստէ** *Եփր. յար. 61,* **պենտակոս, պենդակոստեայ, պենդակոստէ**,) *«Հրէից Եգիպտոսից դուրս գալու յիսուներորդ օրը, յիսնօրեակ» Բ. մկ. ժբ. 32. «Հոգեգալուստ՝ որ Զատկից 50 օր յետոյ է գալիս» Ա. կոր. ժզ. 8. Գծ. ի. 12. Կոչ. 298. «Զատկից մինչև Հոգեգալուստ եղած 50 օրուայ միջոցը» Գծ. բ. 1. Սեբեր. Եփր. եփես. 147.—գրուած է* **պենտեկոստ** *Կանոն. 38,* **պենտէկոստէ** *Ոսկ. գծ. 44։*

=Յն. πεντηκοστή «Հոգեգալուստ». բուն նշանակում է «յիսուներորդ», սրանից են փոխառեալ նաև լտ. pentecoste, ֆրանս. pentecôte, Թրք. پنقشت pinqušt (Будаговъ, Срав. слов. 1, 320)։—Հիւբշ. 372։

Հներից մեկնում են Ոսկ. գծ. 44 «Պենտէկոստէն ըստ յունաց յիսներեակ ասի».— Տաթև. ձմ. ճխէ. «Ասորիք և յոյնք պենտէկոստ կոչեն, որ է հինգ տասն»։ Աւելի ընդարձակ՝ անդ, էջ ճծե. «Պենտակոստն ի յասորոց լեզուն հինգերորդ Թարգմանի, որ նշանակէ զհինգ տօնն ազգին Իսրայէլի... և ոմանք զայն ասեն Թէ պեհտն հինգ լսի և կոստն գրուխ. իբր Թէ հինգ գլխաւոր տօն էր նոցա գրոլոր ամն... այլ որ առաւգիւ Թարգմանեն ի հոռոմ լեզուն, պենտայն յիսուն լսի և կոստն յիսներեակ»։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

*ՊԵՉԱՅ «լաջակ». ռամիկ բառ, որ մէկ անգամ ունի Քուչ. 79. «Պէչան ալ ի վեր տարաւ, ունէրովն արաւ Թէ գնա՛»։ (Զօպանեան, Քուչ. 133 մեկնում է ճշդիւ «լաջակ»)։

=Պրս. پیچ pīča «փաթոյթ, որով փաթուիեն գիրս ոմանս. սարդի. 2. վարագոյր. 3. փաթաթումն կամ պատառումն». սրա նուազականն է چیچک pīčak «գլխակապ կանանց, զոր կանայք կապեն ի գլուխս իւրեանց»։ Բայց սրանցից աւելի յարմար է Թևհրանի արդի պրս. բարբառով pičä «քառակուսի Թափանցիկ կտոր, սև Թելից հիւսուած, որ մահմետական կանայք գլխի վրայ ամրացնելով՝ քողի նման երեսներն են ծածկում»։ Նոյն է Թրք. پچه beče կամ پچه peče «երեսի շղարշ» (Будаговъ, Срав. слов. 1, էջ 245), որից Պլ. ռմկ. բէլփէչէ «հարսի քող»։—Աճ.

ՊԵՊԷՆ «ծաղկախտի չեչ, պատառուի վրայ փոքր անհարթ կէտեր». իբրև մհյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 610 ա (ս. Grain բառի տակ). որից պեպենոտ «չեչոտ, ծաղկահատ» Ջքր. սարկ. Ա. 48 (ծակծակերես և պեպենոտ, շեկագոյն և պակասամօրուս)։

=Կրկնական բառ է և արմատն է պէն, որ պահում է Ղրբ. պէն։—Աճ.

Պատահական նմանութիւն ունի Թրք. بنك beng «երեսի վրայ խալ»>ռմկ. պէնկ

ԳԻՒ.—Արմատն ունի Ղրբ. պէն, որից ածականը՝ պենպենոտ Ղրբ. պիպենոտ Բլ. Մշ. այս վերջինից դուրս բերուած է Մշ. պիպ «երեսի վրայ ցան կամ դեղին բծեր»։

ՓՈԽ.—Վրաց. პეპენი պեպենի, პეპლი պեպլի «երեսի վրայ ցան»։

ՊԵՌԵԿԵԼ «խնայել, զլանա՞լ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 210. «Դու սպառնաս անիծանել, այլ ես աղօթել ի վերայ քո... դու խոստանաս գատել... ես խոստովանիմ, եթէ ոչ ամաչեցայց... դու խրատ խնդրես, ես ոչ իշխեմ զպիտանացուն պեռեկել զիւորոցն». (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 203)։

Պեռեքել տե՛ս Փեռեկել։

Պեռեքի տե՛ս Պեւեքի։

*ՊԵՒՊԵՌԱՏ «դրամի անուն է». Երեք հատիւր դեկան պեռպեռատ. Սմբ. դատ. 19։

=Ստ. լտ. hyperperata, որ և hyperperum, perperum, purpuratus կոչուած միջնադարեան բիւզանդական դրամն է, որ է յն. ὑπέρπυρον կամ ὑπέρπερον, փոխառութեամբ արաբ. برابر barbarah, barbarat (Իրն-ի Բառուտա Բ. 444, որ յիշում է իբրև վատ տեսակի ոսկի դրամի անուն)։ Յոյն բառը նշանակում է «կիսեփ, բոցավառ. 2. որ դնում են կրակի վրայ, որ այրում են», իմա՛ «հրափորձ ոսկի», և պակասում է Թէ՛ Bailly-ի և Թէ Sophocles-ի բառարանում։

Ուղիղ մեկնից բառս նախ Ալիշան, Սիսուան 378, յետոյ Karst, Դատաստան. II. էջ 7, և վերջին անգամ Ք. Ա. Դալբէգեան, Տեղեկ. ինստիտ. № 2, էջ 49։

*ՊԵՏ, ի–ա հլ. «գլխաւոր, մեծաւոր, իշխան» ՍԳր. Ագաթ. «սկիզբ» Մաթս. դիոն. որից պետութիւն «տէրութիւն, իշխանութիւն» ՍԳր. Եւս. քր. եզն. պետագոյն կիւրղ. ծն. մարդպետ Բուզ. հայրապետ ՍԳր. քահանայապետ ՍԳր. հազարապետ ՍԳր. դահճապետ ՍԳր. զօրապետ Ոսկ. յհ. ա. 18. գաւառապետ ՍԳր. տիեզերապետ Մծբ. Նոր բառեր են արարողապետ, գրադարանապետ,

մատենադարանապետ, հասարակապետություն, հաճրապետություն, մեծապետական, նահանգապետ, արհեստապետ, ոսկերչապետ, խմբապետ, խմբագրապետ, պետականացում, պետականացնել *են*:

=*Հիւս. պհլ.* *pet *ձևից, որ հատատառում է մանիք. պհլ.* —byd *(կարդա՛* bed*)* (MSL *17, 249). իրանեան միւս լեզուները ցոյց են տալիս* a. *ինչ. պհլ.* pat, *յգ.* patān, *գնդ.* 𐬐𐬀𐬑𐬎 paiti-, *սանս.* पति páti-, *միջին պրս.* (*Պրոկոպիոսից տառադարձուած*) -βάδης -βέδης, *պրս.* 𐭱𐭣 bad, bud, *բոլորն էլ նշանակում են «պետ, տէր» և գտնւում են տեղորաբար բարդութեանց ծայրը. ինչ. գնդ.* aeθrapaiti-, zantupaiti-, daŋhupaiti-, nmānōpaiti-, vīspaiti-, baēvarəpaiti-, *պհլ.* magupat, spāhpat, hazārpat, *Պրոկոպիոսի մօտ* Ἀσπεβέδης, *պրս.* sipahbad, mōbad, hērbud, *հյ.* **բիւրապետ, հազարապետ, մոգպետ, աստպահապետ, սպարապետ** *(տե՛ս առանձին առանձին), և մինչև անգամ քուչ. (իրանեանից փոխառութեամբ)* tanāpate *«տանուտէր»*—*Ահա բոլորը պատկանում են հնխ.* poti- *«տէր, փեսայ» արմատին. համմտ. այլ ժառանգ ձևերից՝ սանս.* pátyatē *«իշխել, տիրել, մասնակից լինել»,* pátnī, *«տիրուհի, հարս», գնդ.* paθnī *«տիրուհի»,* xvaē-pati *«նա ինքն», յն.* πόσις *«փեսայ»,* πότνια *«տիրուհի»,* δεσ-πότης *«տանուտէր»,* δεσ-ποίνα *«տանտիրուհի», լտ.* potis *«կարող»,* potestas *«կարողութիւն»,* potens *«կարող»,* potior *«լաւագոյն, աւելի ուժեղ»,* potissimus *«ամենալաւ, գլխաւոր»,* potissime *«գերազանցապէս»,* utpote *«ըստ որում, իբր այն»,* hospes, -pitis *«հիւր կամ հիւրընկալ»* (<*hosti-potis), *հլտ.* potis sum>possum *«կարող եմ»,* compos *«մասնակից», գոթ.* brūp-faps *«նշանած, խօսեցեալ»,* hundafaps *«հարիւրապետ», լիթ.* patis, pàts *«փեսայ, ինքն»,* vêsz-patis *«ինքնագլուխ տէր»,* vëszpatni *«տիրուհի», լեթթ.* pàts *«ինքն»,* pati *«տնտեսուհի, տանտիկին», հպրուս.* waispattin *«կին, տիկին»,* pattiniskun *«մուսնութիւն», հսլ.* gospodĭ=*սլով.* gospôd =*յգ. ռուս.* господа *«տէր», բրըտ.* ozech *«տանուտէր», ալբան.* pata, patšɛ *«ունէի» (=տէր էի) են։ Հայ լեզուի մէջ այս արմատը չի աւանդուած. (պիտի լինէր* *հեյ, *հոյ ձևով[1]*). առաջ կարծում էին թէ այստեղ է պատկանում հայ ազգի անունը, իբրև «տէր» (նուաճուած ժողովուրդների համար), սակայն այժմ այս կարծիքը չի ընդունւում* (Pokorny 2, 77, Walde 605, 370, Boisacq 806, *808, 179,* Trautmann 208, Berneker 336):— *Հիւբշ. 229։*

Նախ ԳԴ համեմատեց պրս. bud *ձևի հետ։ ՆՀԲ յիշում է սանս. փաթի և արաբ. պէտ, պէտի «սկսիլ»։ Սանս. և գնդ. կամ պրս. ձևերի հետ համեմատում են* Peterm. 17 (*նաև յն.* πόσις), Windisch, 11, 15, Böttich. ZDMG 1850, 360, 218, Arica 80, 346, Lag. Urgesch. 121, Justi, Zendsp. 176, Müller SWAW 41, 9 *են։ Մորթման* ZDMG 26, 499 *սրանց հետ նաև բևեռ.* patu, 592 badinini, 602 bidiadibat=**պետապետ**, 608 tiuripauiti=**տիրապետ**, 566 abidaiaina=**պետ**: Bugge BVS 1, 152 *պրս. և սանս. ձևերի հետ յիշում է նաև գնչ.* beddo *են։ Տէրվ. Նախալ. 91 յն.* πόσις, *լտ.* potis, *գոթ.* faþis *են ձևերի հետ՝ իբրև բնիկ հայ։ Հիւնք. պրս.* **պէտ, գնդ. պիւթ, պայիտ և հպրս. պիւտ, պայիտ!!**

Փոխ.—*Վրաց.* ჭეტობა **պետրա** *«գլխաւորութիւն, իշխանութիւն» (Մատ, Иппол. 66).* —*մայրապետ բառի գտ.* **մարապետ** *ձևից է քրդ.* marabet *«կրօնատուրուհի» (որ ի զուր* Justi, Dict. Kurde 392 *ուզում է հանել արաբ.* مربط marabit *«կապուել» բառից)։*

*[*ՊԵՏԱՇԵՏ. *անասոյզ բառ. մէկ անգամ գործածուած եմ գտնում Լծ. Նար. լդ. Գայ Մխքայէլ կարմիր ձիով և ի վեր քան զնա՝ այլ ոմն պետաշետ ձիով։—Պէտք է կարդալ «այլ ոմն պետ աշխետ ձիով». բայց ունինք նաև պրս.* شد šīd *«աշխէտ»։]*

*ՊԵՏԱՐԻՕՆ *«հրեանակ բոյսը». մէկ անգամ ունի Մխ. բժշ. 84. Ջափղ. որ է պետարիօն։*

---

1 *Տե՛ս Հ.այկապ բառի ստուգաբանութիւնը «Հայկականք»-ում (խմբ.)։*

=Յն. εὐπατόριον «հրեանակ» ձևից աղաւաղեալ (տե՛ս և Ղափեք)։

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ). նոյնը յետոյ անկախաբար Seidel, Մխ. հերաց. § 241։

ՊԵՏՄՈՑ «զրադաշտական մի աղանդ՝ արտաքոյ մոգական հինգ վարդապետութեանց և անսուրբ ու հերձուածական ըստ Պարսից»։ **Մէկ անգամ ունի եղիշ.** «Այս հինգ կեղտք են, որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեանն. բայց արտաքոյ սոցա է միւս ևս այլ վեցերորդ, զոր պետմոգն կոչեն»։ Բառս սովորաբար գրուած է նաև մոգպետ, որ ինչպէս յայտնի է՝ պաշտօնի անուն է և ո՛չ դաւանանքի. ուստի լաւագոյն է ուրիշ ձեռագիրների հետ ընդունիլ պետմոգ (Պատկ. Матер. I. 26, Բազմ. 1895, 52)։

=Անշուշտ իրանեան փոխառութիւն է։

Պատկ. անդ կցում է պրս. بيذ bīd «վեղանները, դիտութիւն, վարդապետութիւն» բառին, որով պետմոգ «վարդապետութիւն մոգուց»։

ՊԵՐԱՏԻ «Աբրահամ լսի ի յոյն լեզուն». այսպէս ունի Բառ. երեմ. 270։

***ՊԵՐԵՏՈՒԻՏ** «հոգևոր տեսուչ». երկու անգամ գործածուած է Կանոն Հարց հետևողաց իե և Մխ. դտ. հրտր. Բաստ. էջ 141 (այլ ձ. պերեսուս). Մխիթարի բացատրութիւնից երևում է որ բառս այն ժամանակ էլ անսովոր էր. «Քարեպիսկոպոս երկու են. մի՝ ձեռնադրեալն և մի՝ ո՛չ. և պերեսուան է՝ որ այժմ է բուա»։ Սրա նման է նաև Սմբ. դատ. 72՝ Փիրիսկոպոսութիւնն երկու աղգ են. մէկն ձեռնադրած է ու մէկայլն չէ. և բուան՝ որ է յունարէն պերիսուա։

=Յն. περιοδευτής «հոգևոր տեսուչ»։— Հիւրշ. 372։

Նշ Յն. περιείδων կամ ὑπερείδων։ Brockelmann, Նա. փոխ. բառից 94 վկրի ձևով։ Մատ ЗВО 7, 324 ձևի տարբերութեան պատճառաւ կարծում է որ բառս ասորական ճամբով է յառաջացել, ուր ձայնաւորների բացակայութեան պատճառով կարելի էր նաև այսպէս կարդալ։

Պերևեթել տե՛ս Փերևետել։

ՊԵՐԵԻԵՇՏ, ի հլ. «բեխ, պեխ», որի համար Ոսկեդարից գտնում եմ 3 վկայութիւն. Ձմօրուան երկայնս հանդերձ մանեալ պերեւեշտիւք մարձէին. Ոսկ. տիտ. էջ 330.— Պարսից թագաւորն ոսկի պերևիշտս ետ գործել նոցա. Ոսկ. կողոս. 605.—Վարսս ժողովեն և պերևեշտս մօրուացն յօրինեն. Ոսկ. եփես. 907.—մի անգամ էլ ոսկեդարից յետոյ ունի Կղնկտ. Ջաեղի շնչառու քթացն՝ մի քան զմի լայն թուով մազուցն պերևեշտիցն թէ կարէր ոք ճանաչել (ԱՔ ունի պերևիշտ ձևն էլ. հրտր. էմինի՝ էջ 109 պէրևէշտէից, 2 օր. պերևէջտիցն)։

Նշ մեկնում է «բառ անյայտ, իբր շրջակայ մասունք ունգանց կամ տեղի բուսանելոյ մազից յընչացս».— ԱՔ «պեխեր և պեխերու տեղը, մօրուքի հիւսուած գանգուրները»։ ՋՔ չունի, Թիրնաքեան, Արիահայ բռ. 368 նոյն ընդ փերևեափ։

ՊԵՐԹԻ «բանասարկու». ունի միայն Բառ. երեմ. էջ 271։

***ՊԵՐԻԱ.ՐՄԵՆԻԱՍ** «Արիստոտէլի մի աշխատութիւնը. Մեկնութիւն մասանց բանի Քերականութեան» (որ և թարգմանուած է հայերէն՝ Դաւիթ Անյաղթի ձևոքով)։

=Յն. περὶ ἑρμηνείας «յաղագս մեկնութեան»։

Ուղիղ մեկնեց Նշ։

***ՊԵՐԻՊԱՏԵՏԻԿԵԱՆ** «ճեմական (փիլիսոփայ)» Նա. քր. որ և պերիպատիկեան Եզն. էջ 204։

=Յն. περιπατητικός, որից և լտ. peripateticus «ճեմական». յառաջանում է περιπατέω «ման գալ, ճեմել» բայից։

Ուղիղ մեկնեց Նշ։

***ՊԵՐԻՏՈՄԵԼ** «թլփատել». ունի միայն Բառ. երեմ. էջ 271, որ գրում է պիոխտոմել «կրճատել». սրա մէկ այլ աղաւաղ գրութիւնն է պերահատմիւն «թլփատութիւն» անդ, էջ 270։

=Յն. περιτομή «թլփատութիւն» (որ կազմուած է περί «շուրջ» և τέμνω «կտրել» բառերից)։—Ա.Ճ.

***ՊԵՐԻՔՈՆ** կամ **ՊԵՏՐԻՔՈՆ** (կարդա՛ Պերիդեքսիոն) «հնդկական մի տեսակ ծառ».

իբր յն. բառ մէջ է բերում Եպիփ. բարոյ. «է ծառ ինչ, որ կոչի պետրիքոն (կամ պերիդեֆսիոն), որ Թարգմանի կշտապանակ և է ի Հնդիկս»։

=Յն. περιδέξιον «աջ թևի ապարանջան» (ծառի իմաստով չունին ո՛չ Bailly 1523 և ո՛չ Sophocles 875)։

Այսպէս մեկնեց ՆՀԲ։

ՊԵՐՃ, ի հլ. «փառաւոր, շքեղ, զարդարուն» Խոր. Ճառընտ. 36. կՔ. Մագ. որից պերճաճալ «հպարտանալ, ճոխանալ» ՍԳր. պերճութիւն Յոբ. գ. 10. ժգ. 12. Բարուք գ. 34. պերճաճմ Ոսկ. ես. և փիլիպ. պերճագոյն Խոր. աճպերճ Ոսկ. երր. իշխանապերճ Սանահն. պերճապատիւ Հայկ. էջ 212 (նորագիւտ բառ). նոր բառեր են պերճախօս, պերճախօսութիւն, պերճափայլ, պերճաշուք են։

ԳԴ պրս. varǰ «արժանապատուութիւն»։ ՆՀԲ լծ. հյ. բարձր, բերձ, պարծ, պրս. պէրժ, արաբ պէրզ։ Հիմնք. պարծ բառից։ Փառնակ, Անահիտ 1903, 130 իբր բնիկ հայ՝ սանս. bhrag, գնդ. barag «շողալ» են բառերի հետ։ Մառ ИАН 1909, էջ 1155 հասկանալով «փայլուն»՝ կցում է սեմ. brq «փայլիլ», վրաց. բրկիալի, պրկիալի, բռճղիալի «փայլուն» բառերին. Հայերէնը փոխառեալ է վրացական մի լեզուից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 94 կըրկնում է Հիմնք.։

*ՊԵՐՈՆԵԻԵՆԴԵՂԻՈՆ «նախաւետարան», մէկ անգամ գործածուած է Եփր. մատ. Բ. 261. Մարկիոն գրէ ի մատեանս իւր, որ անուանեալ կարդան պերոն և ենգեղիոն. այսինքն Թարգմանեալ կոչի ի մեր լեզու այսր չառաջ քան զաւետարան։

=Յն. προευαγγέλιον հոմանիշն է, որ ասոր. (ܐܘܢܓܠܝܘܢ ձևով մանելով եփրեմի աշխատութեան մէջ, այստեղից էլ տառադարձուած է հայերէն և չհասոյ ոգէտ գրիչների ձեռքի տակ աղաւաղուելով այս կերպարանքն է առացած։

Ուղիղ մեկնեց Preuschen, Zeit. f. d. neutest. Wissenschaft 1911, 245։

*ՊԵՐՈՉ «շղարշ, վրի վարշամակ» Յայտմ. հոկ. 6. որ և պէրոզ Յայտմ. պերեզոտ Վրդ. պտմ. տպ. Վենետ. էջ 116 (հրտր. Էմինի, էջ 153 պերոզոտ). Օրբել. հրտր. Էմ. էջ 324։

=Յն. περίζωμα «գօտի, մանաւանդ պարկեշտութեան գօտի». ըստ այսմ հայ. բառը ուղղակի է *պերիզոմ. վերի ընթերցուածներից ուղղագոյն ձևն է պերեզոտ, որի մէջ ե շփոթուած է ի և մ շփոթուած է Մ տառի հետ (երկաթագիր Մ և մ)։—Աճ.

ՆՀԲ բառը սրբագրում է պերիզոսար և հանում է յն. περιζώστρα «գոգնոց» ձևից։ Սրան է հետևում նաև Հիւբշ. 372 (կասկածով)։ Բայց ըստ իս աւելի դժուար է ուղղել բառը պերիզոսար քան պերիզոմ, մանաւանդ որ յն. περιζώστρα «գոգնոց» նշանակութեամբ նուազ յարմար է քան «գօտի»։

ՊԵՐՊԵՒ «սուր բրիչ՝ գետինը ծակելու համար» (նորագիւտ բառ) Վստկ. 57, որից պերպեռել «հողը ծակել» անդ, էջ 60։

*ՊԵՐՍԻ, որ և պերսէի ծառ «հղիպտական մի տեսակ Թունաւոր ծառ, լտ. balanites aegyptiaca, ֆրանս. avocatier» Մխին. ծն. ըստ Ռոշք. ունի միայն ՀԲուս. § 2537։

=Յն. περσέα որից և լտ. persea նոյն նշ.։ ՀԲուս. հանում է լտ. ձևից։

ՊԵՐՍԻ «փորձեալ». ունի միայն Բո. երեմ. էջ 271։

[ՊԵՒԵՍԱԿԻ «մի տեսակ ծառ». մէկ անգամ ունի Սրգն. լս. 109. «Ջիթաւարիր և ղդառնահամ տունկս նոնենից ի քաղցրութիւն կամեցեալ փոխարկել, փայտս ի պտենկի ծառոց՝ որպէս և ասի՝ յարմատս Ջիթաւարիր նոնենւոյն վարեն»։

=Շփոթուած և այլափոխուած է պակկս բառից, ինչպէս ցոյց է տալիս այնտեղ յիշուած վկայութիւնը, որ նոյն է վերինի հետ։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ]։

ՊԵՒԵՔԻ «այտոսկրները դուրս ցցուած»? Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մաղաք. աբ. 7. «Կանայքն իւրեանց ունէին դդակաւի սուրալ ի վերանալի ծածկեալ շարագուրով դիպակի. երեսքն լայն պեւեքի, սպանմամբ գեղով ծեփէին». (Պատկանեան հրատարակութիւնը ունի սուորա-

գծեալ բառերի փոխարէն երեսին զայն պեռեի, որ ոչ մի իմաստ չի տալիս. շատ աւելի լաւ է տպ. Երուսաղէմի, էջ 16, որ ունի երեսն լայն պեւեի... ըստ այսմ ուղղելի է նախորդը. վերի իմաստն էլ, հետևցնելով լայն ածականի յարադրութիւնից, հաստատ եմ թաթարների դէմքի տովորական նկարագրից)։

*ՊԵԻԿԷՍ «շոճի, մարխ» Վեցօր. 97. «Յորժամ վարիցեն առ արմատովքն երիթ [ուռն] պարարտ ի բևեկն [ի պևկէս] փայտէ և վարիցի ուռն և մատանիցէ ի սիրտ ծառոյն». այսպէս ունի տպագրեալը, ուր անկիւնաւոր փակագծի մէջ դրուածները յետին աւելացրուիթիւններ, որոնք չկան Անտոնեանց լաւագոյն ձեռագրի մէջ, ըստ Պատկեր 1893, 61 և ՀԱ. 1911, 302.—գրուած է նաև պևկի, պևկէ «ջահ» Պտմ. աղէքս. 102, գրծ. պեկիւ Ղևոնդ՝ էջ 90, բևկէ, բևկի Վատկ. նոյնը բևեկէ «կայծակ կամ խարոյկ» Բառ. երեմ. էջ 54. շփոթուած է բևեկն բառի հետ, որ տես =Յն. πεύκη «շոճի, թիզոշ»։ — Հիւբշ. էջ 372։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Վարդանեան ՀԱ. 1920, 333 կարծում է որ պևկէս՝ յոյն բառից տառադարձուած ասոր. ܦܩܣܐ pvqsā ձևից է անցած։

ՊՂՈՏԻ «ferula persica ծառը և սրա խէժը՝ որ է sagapenum» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2539։

*ՊՂՏԻԿ «փոքր». յետին հայերէն բառ, որ սովորական է արդի բարբառներում և արևմտեան գրականում. հնագոյն գործածութիւնն ունի Առաք. պտմ. էջ 488։

=Պրս. پست past, pest «ցած, կարճահասակ, կարճ. 2. ցած, անարգ, սոորին». իմաստով նոյնանում է յաճախ մեր բառի հետ. հմմտ.

چراغ پیش آفتاب نوری ندهد
ومنارهٔ بلوند در دامن کوه الوند پست نماید

čirāγ pīš-i āfitāb nūrī nadihad, va minā-ra-i buland dar dāman-i kūh-i Alvand past numāyad «Ճրագը արևի առջև լոյս չի տալ և բարձր մինարէն Ալվանդ սարի փէշին ցած (փոքր) կերևայ» (Սաադի, Գուլիստան, Յառաջաբան)։—Ըստ այս համեմատութեան հայ բառի հնագոյն ձևն է պստիկ, որ պահուած է արեւելեան բարբառներում և գրականում, իսկ յետոյ, երբ արևմտեան հայերէնում պ և տ խուլերը դարձան բրթռուն բ և դ, սրանց հետ նաև ս վերածուեց զ։ Հայերէնի մէջ -իկ նոր աւելացրած մասնիկ է, բուն ձևն է պստ-։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս Բազմ. 1897, էջ 260։

ԳԻՒՐ.—Իբրև մանկական փաղաքշական բառ, ստացել է բազմաթիւ ու բազմազան ձևեր, որոնց համադրական տախտակն է՝

1. պզտիկ	պիզտիկ	պտիկ	—
2. պզտի	պիզտի	—	—
3. պզտտիկ	պիզտիտիկ	պտտիկ	պիտիտիկ
4. պզտլիկ	պիզտիլիկ	պտլիկ	պիտիլիկ

Նոյները փ և ս բաղաձայններով՝

1. պստիկ	փստիկ	փիստիկ
2. պստի	փստի	—
3. —	—	—
4. պստլիկ	փստլիկ	փիստիլիկ

Հաստակենտ ձևեր են՝ պզտիլիկ, պիզիլիկ, պզտուտիկ, պտիտիկ, պզլիկ, պստկիկ, պնտլիկ, պտիկիկ, պստլուլիկ, կտտիկ, որոնք կարող են նաև իրենց համադիր ձևերն ունենալ, որոնք անծանօթ են (Զղ. միստիկ<մի պստիկ։)

Պգրկատուն տե՛ս Բզրկատուն։

ՊԶՐՈՒԿ, ՊԶՈՒՐ, որ և կոչւում է պնտուխի պզուկ, պնտուխի պզուր, և է «անծանօթ մի բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2541։

ՊԻԼԵԻՏԱՌ «զինուորական ոչ-երկաթեայ զլխանոց» Ուռհ. 137։

ՊԻԿԻՒՐԻԱ տե՛ս Կիպարիս։

ՊԻՆՈՒՊԻՆ. Նորագիւտ բառ, անստոյգ իմաստով. մէկ անգամ գտնում եմ գործածուած Շնորհ. առակ. 105, որ է՝

Մանուկ մի քաջ զերդ մոմեղէն,
Խանկրէր զհազար մանուկ ինքմէն,
Մեծէր զառեծրն պէնուպէն,
Յետոյ սպանաւ յիւր կնոջէն։

(Հանելուկը Սամփսոնի վրայ է)։

*ՊԻՇԱՍՊԻԿ «սուրհանդակ, իշխանաւորի

առաջից վազող ձիաւոր». մէկ անգամ ունի Բուզ. դ. 21. նոյնը յդ. պէշասպիհ ձեռվ Սեբ. ժա. («Յայնժամ եկին հասին պէշասպիք հրովարտակօք»), որ Հիւրշ. 230 ուղում է ուղղել պէշասպիկ։

=ՊՀլ. *pēšaspīk «յառաջընթաց ձիաւոր». կազմուած pēš «յառաջ» և asp «ձի» բառերից։ ՊՀլ. բառը աւանդուած չէ, բայց հաստատւում է փոխառեալ ասոր. ܦܫܣܦܝܓ pēšaspig, աւելի լաւ ܦܫܣܦܝܓ pešaspīg, յգ. ܦܫܣܦܝܓܐܢ pešaspigān «յառաջընթաց, praecursor» (Brockelm. Lex. syr. 295 բ) ձևերով։—Հիւրշ. 230։

ՆՀԲ գրում է պէշասպիկ և մեկնում է «ի պրս. բառիցս pača, piča «ձագ, մարուկ» և asp «ձի», իբր փոքրիկ ձի, նժոյգ և հեծեալն ի նժոյգ»։ ՋԲ ունի «պէշասպիկ կամ պէշասպիկ, պրս. հեծեալն յերիվար քաջընթաց»։ Եւրոպա 1852, 123 «բան առ բան յառաջաձի... առջևէն ու շուտով ձիավարող սուրհանդակ», իբր պրս. pēš + asb։ ԱԲ մեկնում է «պզտի ձի, քալուկ ձի, քալուկ ձիու վրայ հեծնող» (երեքն էլ անճիշտ մեկնութիւն)։ Պատկ. Բուզ. 56, Սեբ. (հրտր. 1879), էջ 199 և Матер. I (1882), էջ 12 պրս. pēšasbī։ Հիւրշ. ZDMG 35 (1881), 362 ունի ուղիղ մեկնութիւնը վերի ձևով, բայց առաջին մեկնիչն է Եւրոպա։ Տէրվ. Մասիս 1882 յունիս 24 և Հեզու 158 կրկնում է Եւրոպայի մեկնութիւնը։—Հիւնք.=ՆՀԲ։

*ՊԷՇՈՊԱ կամ ՊԷՇՈՊԱՅ «յառաջապահ գունդ». մէկ անգամ ունի Սեբ. իզ. (հրտ. Պատկ. էջ 93). Հասեալ է Թշնամին ի վերայ քոյ և կոտորեցին զզօրն պէշոպա յԼդիա»։

=ՊՀլ. ܦܫܘܦܐ pēšupāi (մանիք. ՊՀլ. פישובאי pišūbāi, Salemann ЗАН 8, 112) «առաջնորդ, գլխաւոր, վարիչ», pēšupāk «հասարակութեան գլխաւորը», պազ. pēšawāi «գլխաւոր, առաջնորդ», պրս. پیشوا pēšvā, pīšvā «գլխաւոր ժողովրդեան. նաև այնպիսի որ, որոյ բանիցն և գործոցն և խօսիցն հետևին մարդիկ»։—Հիւրշ. 230։

Ուղիղ մեկնից Պատկ. ծան. և Матер. I. 12։

*ՊԷՍ «իբր, հանդոյն, նման» Ոսկ. փիլ. ժ, ժե. և մ. բ. 23. Վեցօր. (իբր նախադրութիւն առանձին հազուագիւտ է հների մօտ. յետինների մէջ բաւական առատ, արևմտեան գրականում միակ գործածականն է, իսկ արևելեան գրականում մրցում է նման բառի հետ). որից այսպէս, այդպէս, այնպէս, որպէս, նոյնպէս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, որպիսի ՍԳր. Ագաթ. զինչպիսի Փարպ. Խոր. դոյնպէս Խոր. պէսզուռնակ Ասող. պէս զայս օրինակ Եւս. քր. պէսպէս ՍԳր. որպիսութիւն Փիլ. աւելի գործածական է իբր մասնիկ, ինչ. խստապէս Ոսկ. ա. կոր. Փարպ. խաչապէս, զուգապէս, վերջապէս, ֆաջապէս, ընդհանրապէս, այլապէս են են։

=ՊՀլ. *pēs ձևից, որ աւանդուած չէ. բայց հմմտ. զնդ. paesa-, paesah- «ձև, կերպ, հղանակ, զարդարանք». գտնւում է մանաւանդ բարդութեանց ծայրը. ինչ. vīspōpaesah- «ամենազգի, ամէն տեսակ», stəhrpaēsah- «աստեղազարդ, աստեղանման» են. սանս. péças «կերպարանք, ձև, գոյն» են։ Այս բառերը պատկանում են հնխ. peik'- «զարդարել, նկարել, նախշել» արմատին, որի ժառանգներն են նաև սանս. piṃçáti «զարդարել, ձևել, գրել», զնդ. paes- «զուգաւորել, զարդարել», հպրս. ni-pištanaiy «գրեցի», niyapaišam «գրեցի», պՀլ. nipištan, պրս. nivištan, քրդ. nəvīsin, օսս. finssun «գրել», քուչ. piñkaṃ «գրում է», paiykatsi «գրել», paykalñe «գրութիւն» (MSl 18, 422), յն. ποικίλος «խաւտուտիկ, գոյնզգոյն», գոթ. (filu-)faihs «(բազմա)պիսի», հդգ. fēh, անգսք. fāh, fāg «գոյնզգոյն», լիթ. pẽsziù, pẽszti «ածուխի կաորով գծեր քաշել, նկարել, գրել», հպրուս. peisāt, հսլ. pĭsati «գրել», pĭstrŭ «գոյնզգոյն», ռուս. писать, пишу «գրել», пестрый «խայտաբղետ», լեհ. pstry «խայտաբղետ», բուլգար. pismó=ռուս. письмо «նամակ» են։ Հնխ. peik'- արմատի հետ կար նաև * peig-, որից յառաջանում են լտ. pingo, pictum «նկարել», pictor «նկարիչ» են (Pokorny 2, 9, Trautmann 211, Boisacq 800, Walde 583, Horn § 1051)։ Եթէ բառը բնիկ լիներ հայերէնի մէջ՝ պիտի ունենար *ես ձևը, ուստի

պէտք է ընդունիլ որ փոխառեալ է իրանեանից, թէև ո՛չ պահլաւերէնի և ոչ էլ պարսկերէնի մէջ չէ պահուած (բացի ni- նախամասնիկաւոր ձևերից)։—Հիւբշ. էջ 230։

ԳԴ պրս. վէս, վիյս «կերպ, պէս»։ ՆՀԲ պրս. վէշ, ֆէշ։ Böttich. Arica 80, 258, Lag. Urgesch. 541 և Btrg. bktr. Lex. 52 անս. pēças և գնդ. paēsah- ձևերի հետ։ Lag. Arm. Stud. էջ 182 պրս. vēs, waihi։ Տէրվ. Նախալ. 93 իբր բնիկ հայ կցում է վերի բառերին և հանում է հնխ. piç «ձևել, պճնել» արմատից։ Karolides, Γλ. σσ χρ. 96 կապադվկ. πὲς «միայն»։ Հիւնք. պրս. պէս, պէզ «կերպ, օրինակ», պէսան «որպէս»։ Karst, Յուշարձան 424 ալթայ. bič, bis, bit, bes «նշան, գիր, երևոյթ, զարդ» ևն։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Մրզ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. պէս, Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Համշ. Սեբ. Սչ. բէս, Ասլ. բէ՛ս, Ղրդ. տէս. հետաքրքրական ձևեր են Ագլ. առպէսա «այդպէս», Դվ. ի՞նչպէսա «ինչպէս», Ննխ. բէս, բէսնագ, բէսնայիգ, բէսնարիգ «պէս, նման», ինչէ՞ս «ինչպէ՞ս»։

ՓՈԽ.—Հայ. բոշա պէս «պէս» (տե՛ս Finck ЗАН 1907, էջ 119)։

ՊԷՏ «հարկաւորութիւն, կարիք», անհոլով և անեզական գործածութեամբ ունին ՍԳր. Եգն. Սեբեր. Եւս. քր. եզակի ձևով ունին Փիլ. լին. Գնձ. Ոսկ. գծ. այս արմատից են պէտ առնել «հոգ տանիլ, խնամք ունենալ» Սեբեր. Խոր. Լաստ. պէտ է «հարկաւոր է, պէտք է» Ոսկ. ա. Քնս. բէ պէտ իցէ «եթէ պէտք է» Բուզ. Դ. 51. ո՛չ է պէտ «փոյթ չէ» Ագաթ. որշափ պէտ «որչափ ուզես, ուզածիդ չափ» Ոսկ. ա. ամմ. ժե. ո և պէտ «որևէ մէկը, ինչ ինչ ինի ինի» Ղև. ո և պէտ իսկ ո՛ նոյն նշ. Ոսկ. երր. ումպէտ «միուն, անպիտան» Ագաթ. յումպէտս «զուր, ի զուր» (արդի գրականի մէջ), յուպէտ Եւս. քր. գինչպէտ Կոչ. 304. Փարպ. գինչպիտութիւն Ագաթ. գիաւդուպէտ Ոսկ. մ. ա. 6. բեպէտ, բեպէտ և ՍԳր. որպէտ Շիր. Կանոն. չպէտ Ոսկ. մ. բ. 24. չպիտոյ Ոսկ. մ. գ. 6. պիտաճի ՍԳր. Եգն. պիտաճութիւն Եգն. Կոչ. Ոսկ. ճամապիտան «ամէնքին էլ պէտք եկող» (նորադիւտ բառ) Յիշատ. (Տաշեան, Յուց. 425 բ), պիտոյ, պիտոյք, պիտոյ է ՍԳր. Սեբեր. Եգն. Ոսկ. պիտոյանալ, Կոչ. անպէտ Գ մկ. գ. 19. անպիտան ՍԳր. սակաւապէտ Փիլ. պիտակ Սեբեր. պիտակութիւն Սեբեր. պիտառ «վկայ» Կղնկտ. Անան. եկեղ. պիտառել «վկայել» (Բրգմ. յն. χρηματίζω «բանակցիլ, խորհուրդի դնել, պատասխան տալ, երկնային յայտնութեամբ իմանալ ևն») Թէոդ. մայրագ. Անան. եկեղ. Նանայ. պիտի «պէտք է» Բ. Քագ. իա. 4. Ագաթ. Ոսկ. պիտեան «պիտանի» (չունի ԱԲ) Կոստ. Երզն. 149 ևն։

=Իրան *upaita ձևից, ինչպէս և պիտակ<իրան. *upaita-ka ձևից. Համմտ. պհլ. apētāk «պարտադիր, ստիպողական, պատշաճ», apāyēt, apāyīt «հարկաւոր, անհրաժեշտ է, պէտք է», պրս. bāyistan, bāyad «պէտք է». այս ձևերը գալիս են upa- մասնիկով i «երթալ» արմատից։ Հյ. բառը այն ժամանակ է փոխառեալ, երբ դեռ իրան. նախաձայն u չէր վերածուած a և նախաձայն u հայերէնի մէջ բնկնում էր։

Այսպէս մեկնեց Nyberg, Hilfsb. 2, 18։

Lag. Btrg. bktr. Lex. 54 գնդ. paiθya «տէրութիւն, պաշտպանութիւն»։ Մորթմանն ZDMG 26, 544 բևեռ. biduni «պիտանի կամ պատանի»։ Bugge, Beitr. 33 իբր բնիկ հայ՝ լեռթ. špeede «պէտք», špeedu «ճնշել» բառերի հետ։ Հիւնք. պոյտն կամ պտուկ բառից։ Patrubany SA 1, 311, ՀԱ 1906, 312 իբր բնիկ հայ կցում է հսլ. beda «վրտանգ», bediti «ստիպել», գոթ. ga-baidjan, հբգ. ge-beiten «ստիպել, բռնադատել», սանս. bādhate «նեղը լրծել» բառերին. հայերէն պէտ գալիս է հնխ. bheidos-ից, որ դարձած է նախ *բէտ և յետոյ՝ պետ բառի ազդեցութեամբ պէտ։ Թիրեաքեան, Ատրպատ. էջ 26 պրս. bāyad «պէտք է» (անորոշն է بایستن bāyistan, որ է պհլ. apāyistan=պազ. awāyastan Horn § 179, ուստի շատ հեռու հայերէնից)։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 94 պարտ բառից։

ԳԻՒ.—Ախց. կր. Մկ. վն. պէտ, *Սլմ.* պէտ[1], *Ալշ. Երև. Մշ. Շմ. Զղ. Տփ.* պէտկ, *Մրղ.* պէտկ[1], *Ղրբ.* պըէթ, *Զթ. Ննխ Ռ.* բէթ, *Խրբ. Հճ. Տիգ.* բէդ, *Պլ.* բէթգ, բէթգը *(օր.* բէթգը չէ *«պէտք չէ»), Սեբ.* բէդգ, *Սչ.* բէդգ[1], *Ասլ.* բէ*գը, *Սվեդ.* բիդ, *Ագլ.* պայթ[1]. *—Հմշ.* բէդ բնիմ *«սպասեմ», Ակն.* բինճալ *«պէտք գալ».—Նոյն բառն է որ դաւառականների և արդի գրական լեզուի մէջ դարձած է ապառնիի մասնիկ՝ պիտի և կրճատ պիտ՝, տի, պի, ա, պ ևն ձևերով. այսպէս են նաև Գոր. Ղրբ.* բէ՛դըմա, *Ագլ.* մո՛տոմ, մո՛տոլա, *Մղր.* մէ՛տիլ, *որոնք նշանակում են «պիտի»։ Նոր բառեր են* անպիտու, պիտուական, պիտուանի, պիտանացու, պիտենալ *(>Ակն.* բինճալ*),* պիտևան, պիտնալ *«սիրտը ուզել»,* պէտիշ, պէտոուբիւն, պէտական, պէտարան *«արտաքնոց» (որա համար հմմտ. հնից՝ եւէ պիտոյից «արտաքնոց» Վրք. հց. բ. 60),* պէտքը *(Հմշ. Տր.* բէթգը*) «լաւ, գեղեցիկ», տեառնպիտոյ Պատ. ծձկ. «էշ» (Մտթ. իա. 3, Մրկ. ժա. 3, Ղկ. ժթ. 31, 34 «Տեառն իւրեանց պիտոյ են, Տեառն իւրում պիտոյ է» խօսքերի ակնարկութեամբ, որոնք էշի համար են ասուած)։*

ՊԷՏ *«մեծ, խոշոր» տե՛ս Բէտ։*

ՊԹԽԻԿ *«փչանալ, ապուխտ, հոտիլ» Վրդն. առ. 235. (Զմիրուկն) պատեցաւ և պթխեցաւ և եղաւ նեխութիւնն արտաքս։*

ՊԹԳԱՆ *«խորշիլ, գարշիլ, զզուիլ» Ոսկ. յհ. բ. 13. ուրիշ օրինակ չկայ. բայց սովորական է նոր գրականում, ուր կան նաև պրժգանիլ, պժգալի նոր բառերը։*

Հիւնք. պագչոտ *և* պագանել *բառերից է հանում։—*

ԳԻՒ.—Սեբ. բշգ՛ալ *«զզուիլ, գանիլ», Սվեդ.* բշգ՛իլ *«զզուիլ»,* բշգ՛ալա *«զզուելի»։*

***ՊԻԳԱՍՈՍ** *«Պերսէոսի առասպելական թեաւոր ձին» Խոր. որ և* պէգասոս *կամ* պեգասոս *Եւս. քր.* պեգաս *Մագ.։*

=Յն. πήγασος, *որից և լտ.* pegasus *նոյն նշ.—յոյն բառի ճիշտ տառադարձութիւնն է* պէգասոս, *հայերէնի ուղղագրական օրէնքներով գրուած* պեգասոս, *և ղ տառի յետին ի հնչումով էլ* պիգասոս։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՊԻԶՄ *«կռիւ, վէճ, հակառակութիւն» Շնորհ. Թղթ. Մարթին. Լմբ. ոսկ. 22.—Կայ և «ընդ պըզման և ընդ չմարթեցնելոյ» Սմբ. դատ. 94 (հրատ. Ղլտճեան, էջ 43* պամաճ*), «վասն պզման» Սմբ. դատ. 194, որ* Karst *չգիտեմ ո՛րտեղից հանելով թարգմանում է «*durch Fahrlässigkeit *անհոգութեամբ». Թերևս նոյն լինի առաջինի հետ և այն ժամանակ կարելի է թարգմանել «ի հեճուկս»։*

Սրմագաշեան, Արմէնիա սրան է կցում ռում. pizmâ *«քէն, ոխակալութիւն» (յունարէնից առնուած)։*

ՊԻԹՈՆ *«բերան յափշտակական». ունի միայն Բառ. երեմ. էջ 271։*

***ՊԻԼԻՍԿԻ** *«մի տեսակ բոյս.* galium aparien*» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2549։*

=Արաբ. بلسكى biliskī *նոյն նշ.։*

Այսպէս մեկնեց ՀԲուս.։

***ՊԻԼՕՐ** *«բիւրեղ». ունի միայն Պատկանեան* Дарои. Камни *էջ 30, որ և մեկնում է՝*

=արաբ. بلّور billūr, *թրք.* بلور billor *«բիւրեղ»։*

ՊԻՈՒԿ *(յետնաբար ի–ա հլ.) «մի տեսակ իշամեղու» Ել. իգ. 28. Իմ. ժբ. 8. «Ա՛զ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան 557). որից* պիծակաւար *Շնորհ. առակ.* պիծակկոտ *Բժշ.* ձիապիծակ *Կիչառ. ազէքս. կայ նաև ոմկ.* պիծեկ *Անկ. գիրք նոր կտ. 169. (Քաջունի, Հտ. Գ. էջ 207 ունի* պուծեկ *«դեղին վայրի մեղու», որ նոյն ճիշտ է, ուրիշ մի դաւառական ձև է)։*

Böttich. Arica 67, 90 *օսս.* bünç *բառի հետ,* Müller, Benfeys Orient u. Occ. 3, 349 *և* SWAW 84 (1877), 229 *օսս.* bindze *«ճանճ» բառի հետ։ Տէրվ.* Altarm. 57 *յն.* օφῆξ *«պիծակ»,* օφίττω *«պնդել, ճնշել», հյ. անձուկ են բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Հիւնք. պրս.* بز biz *«մեղու»։* Patrubány *ՀԱ 1903, 381* ap- *մասնիկով և* -ga *ածականով* uei *«ոլորել» արմատից։ Ղափանցեան, ЗВО 23, 356 պրս.* biz, *քրդ.* vəzek *«մոծակ» բառերին ցեղակից։ Պատահական նմանու-*

Թիւն ունին գնչ. pesi, *հինդ.* pisū, *պրս.* paša «ճանճ», *օսս.* bindzä, «մեղու» *ատիճէ* badze «ճանճ»։ Petersson KZ *47, 278 (չեմ տեսած) հիսլ.* pīk «խայթոց» *բառի հետ՝ հնխ.* g²eyā-«բռնանալ, ճղմել» *արմատից։ Չի ընդունում* Pokorny *1, 667։*

ԳԻՒ.—*Խրբ.* բիձոգ, *Ալշ. Մշ.* պէձագ, *Զթ.* բիձիգ, *Սվեդ.* բիձձիգ, բիձձէօգ, բիձձօգ, բիձձուգ, *Սեբ.* բձէգ, *Ասլ.* բրձայ, *Հմշ.* բուջէգ։

ՊԻԹԱՒ «մի քիչ, փոքր ինչ». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. կզ. «Գրեալ է ի թագաւորութիւնն թէ Յովնաթանու աչքն ո՛չ կարէր տեսանել ի սովու և առեալ ի մեղրէն պիծառն և եկեր և բացաւ աչքն իւր»։ Ակնարկում է Ա. Թագ. ժդ. «Յովնաթան... կարկառ զծագ գաւազանի իւրոյ, որ ի ձեռին իւրում և եհար ի խորիսխ մեղու և դարձոյց զձեռն իւր ի բերան իւր և բացան աչք նորա»։ Բառիս իմաստը որոշում են արդի գաւառականներից խ. Ղրդ. պծար «մի փոքր կտոր», խ. Մրղ. Որմ. Սլմ. պծառ «մի քիչ», Ալշ. Մշ. պձառ «մի քիչ» (լոյսի համար. օր. Աչքը վնասուել է, պձառ մը լուս է մնացել). Սեբ. փցար «մի կտոր, մի պատառ» (օր. փցար մը հաց)։ Այս բառերի հետ նոյն են իմաստի մասնաւորացմամբ՝ Սս. պծառ «կրակի մի փոքրիկ կտոր», Վն. պծառ, Շմ. փցառ «կրակի կայծ, պէծ»։*

Պատահական նմանութիւն ունին անշուշտ ասոր. بَصَر bəṣar «նուազ, պակաս» *և* بَصِير bəṣīr «փոքր, քիչ», *որոնք բաւական ածանցներ ունին ասորերէնի մէջ և շատ հին գործածութիւն, ուստի չեն կարող փոխառեալ լինել հայերէնից։ Միւս կողմից հայերէնն էլ չի կարող փոխառեալ լինել ասորերէնից՝ ձևի տարբերութեան պատճառով (պիտի ունենայինք *բածար կամ *բածիր)։*

*[*ՊԻԿԱՐ «անգէտ կամ տկար». *ունի միայն Բառ. երեմ. էջ 271. անշուշտ ապիկար բառն է, որ գտնում ենք նաև անդ էջ 28, ուր բացատրուած է նոյնպէս «տկար կամ անպէտ»։]*

ՊԻՀ «ոգեպահիկ, պաշտպան, պարէն, ուտելիք» *Ես. պտմ. 161. Իրեն. հերձ. 89. (Հին բռ. մեկնում է* պիճ «վզինակ կամ մուտիկոն», *իսկ Բառ. երեմ. էջ 271 «վզինակ կամ մուտինակ», որով հասկացւում է «վնաս, թշնամութիւն»). սրանից է* օրապիճ «օրապահիկ» *Եփր. կնուրդ (ըստ պատուականի սրբագրութեան Վարդանեանի, Բառաք. դիտ. Գ. 30)։*

Հիմնք. պրս. بِيه bih «բարի» *բառից, իմաստի տարբերութեան համար հմմտ. հյ.* բարիւ։ *(Բայց պրս.* bih *բառի հինն է պհլ.* vēh, *որ տալիս է հյ.* վեհ, *ուստի այլ ևս* պիճ *ձևի հետ գործ չունի)։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 398 իոլ.* biuth, biith, biad «սնունդ», *հբրբտ.* bit «կեր, սնունդ», *յն.* βίοτος «կեանք, կենսամիջոց»։

ՊԻՂԱՐԴԱԿ «դիւաբախ». *ունի միայն Բառ. երեմ. էջ 271։*

ՊԻՂԸ, ո *հլ.* «անմաքուր, գարշելի, կեղտոտ» *ՍԳր. Կիւրղ. Գնձ. «կեղծ, ներկել (դրամ)» Գէ. ես. որից* պղծել *ՍԳր. Կիւրղ. ղևտ.* պղծաբան *Ոսկ. մ. գ. 8. Եփր. բ. տիմ. պղծագործ Ագաթ. Կոչ. 235.* պղծալից *Բ. պետ. բ. 10. եզեկ. ե. 11. Ագաթ. Եփր. ծն. Կիւրղ. ղկ.* պղծախօս *Ոսկ. ես.* Եղծապիղծ *Կղնկտ.* պղծաշուրթն *Ես. ղ. 5.* մկ՛ներապիղծ *Շնորհ. ընդհ.* չարապիղծ *Վրք. ոսկ. ևն։ Գրուած է նաև* պեղծ *Անսիզք 29,* պիւղծ *Ոսկ. ես. 351, 388,* պիւծ։

=*Պարզ ձևն է* *պիղտ, *որ պահուած է* պղտոր *ձևի մէջ. ծ—տ աճման համար հմմտ.* պարծ—հպարտ, աղտ—աղծեալ *և այլն։*

Տէրվ. Նախալ. 93 ղ *մասնիկով* պիծ *արմատից (*պիծղ>պիղծ*). որ* փիծ *բառի հետ հանում է հնխ.* pig «ներկել» *արմատից, իբր սանս.* pinǰ «ներկել», pingala «դորշ», *լտ.* pingere «ներկել»։ Bugge, Btrg. 33 *իբր բնիկ հայ՝ յն.* σπίλος «կեղտ» *բառի հետ։ Մառ, Արաքս 1890 Ա. էջ 109 փոխառեալ սեմականից. հմմտ. հր. և ասոր.* biš, *արաբ.* baisa։ *Վերի ձևով մեկնեց* Pedersen *(տե՛ս* Պղտոր*)։ Հիմնք. հանում է* կեղծ

բառից։ Karst *Յուշարձան 422 արմատը դնում է պիղ, տե՛ս պղտոր։— Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 339* բիծ, պիս(ակ), սպի, փիծ *բառերի հետ՝ կցում է* Բրք. pis *«կեղտոտ» բառին։ Պատահական նմանութիւն ունին մի կողմից արաբ.* بَدٌ badγ *«ապականութիւն» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. էջ 701) և միւս կողմից հսլ.* brudŭ, *ուկր. չեխ. լհհ.* brud *«կեղտ»* (Berneker 88)։

ԳԻՒՒ.—*Մշ.* պիղձ, պեղձ, *Մկ.* պէղծ, *Սեբ.* բիղձ. *իսկ Տփ.* պիխծ *«կղկղանք. 2. կեղտոտ».—բայական ձևով ունինք Սլմ.* պըղծել, *Ախց.* պղծէլ, *Շմ.* պղձիլ, *Սեբ.* բղձել, *Խրբ.* բղձիլ, *Ջղ.* պխծել *և Բրբախօս հայերից՝ Առն.* պղծել էքմէք *«պղծել»*։

ՓՈՒՒ.—*Վրաց.* ბოლწი պիլծի, ბოლწი բիլծի *«կեղտ, կեղտոտութիւն, մոլութիւն»,* ხიბოლწე սիպիլծե, ხიბოლწე սիբիլծե *«պըղծութիւն, աղտեղութիւն»,* ბოლწება բիլծեբա *«կեղտոտութիւն, աղտեղութիւն, պղծութիւն, բոզութիւն, շնութիւն»* (վերջիններիի հետ համմտ. հյ. պղծել զկոյս, կուսապղծութիւն)։—*Աղերդի արաբախօս քրիստոնեաներն էլ ունին* pəxs *«պիղծ» (Բիւր. 1899, 116)։ Նոյն է նաև ուտ.* պիրծ *«ծիրտ»,* պիրծոլ *«ծրտոտ»*։

ՊԻՃԱԿ *«անծանօթ մի բանջար». Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2551։*

*ՊԻՃԱՏԻ *«մի տեսակ քար է». ունի միայն Պատկ.* Драгоц. Камни, *էջ 69։*

=*Պրս.* بیجاده bīǰāda *(որ և* بیجاد bīǰād *«մի տեսակ յակինթ, ռուս.* гранатъ»։

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

ՊԻՄԵՆԻԱՅ *«հեղանիւթերի մի տեսակ չափ» Շիր. էջ 30 (այլ ձ.* պեմենիա)։

Brockelmann, *Ուս. փոխ. բառից 114, որից նաև Հիւրշ. 372 կարծում են որ* Η *և* Π *տառերի շփոթութեամբ յառաջացած է յն.* ἡ ἡμίνα *(=լատ.* hemina) *«մի տեսակ չափ» բառից և ըստ այսմ ուղղելի է* հեմինա։

*ՊԻՆ *«ծովային մի խեցեմորթ» Նիւս. բն. որ և* պինայ *Վրդն. ծն. Յայտմ. մրտ. 21.— ար.* պինեայց *Փիլ. լիւս. 156.* պինեոս *Փիլ. լիւս. 155.* պինեեակ *Լծ. փիլ. իպանիոս Վեցօր. 152 (լուս. և տպ.* էպինէս*). որից* պինասպաս, պինասպասեակ *«ծովային մի խեչափառ» Վրդն. ծն. Փիլ. լիւս. 155. Լծ. փիլ. որ և* պինասպասայ *Յայտմ. մրտ. 21։ Տե՛ս նաև եպենէս։*

=*Յն.* πίννα, πῖνα *«պինայ, տեսակ փիւնէզ». սրանից* πιννοτήρης, πιννοφύλαξ *(=լտ.* pinoteres, pinophylax*), որից Բրգմ. հյ.* պինասպասեակ *(հսկում է պինային և ընտանեաց գալուստը լուր է տալիս). սրանից է նաև վրաց.* პინახი պինասի։ — *Իսկ Վեցօրէից իպանիոս ձևը ծագում է ըստ ՆՀԲ* αἱ πίνναι *յգ. ձևից։—Հիւրշ. 372։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

+ՊԻՆԴ, ո *հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «սերտ, ամուր, խիտ, ժիր, հաւատարիմ» Եբր. գ. 14. Բ. կոր. ը. 22. Կոչ. Եւագր. Եւս. պտմ. որից* պինդ ունել, պինդ կալ *ՍԳր. Եւս. պտմ.* պնդով *Ոսկ. ա. տիմ. ը.* պնդել *(գըրուած նաև ոսկ.* պնտել*) «ամրացնել» Նաւտմ. գ. 14, Եւագր. Ոսկ. մ. ա. 15. «կապել, զօդել, կցել, միացնել» ՍԳր. «ամփոփել, ծրարել» Դ. Թագ. ժբ. 10.* պնդել զմէջ *«գօտի ածել, արիւնաբար պատրաստուիլ» (պրս.* meyān bastan*) ՍԳր.* պնդագոյն *ՍԳր.* պընդագնիգ *Եւագր.* պնդիլ, զհետ պնդիլ *ՍԳր.* ի պնդան առկանել *«ստիպել, բռնադատել» Վեցօր. 70.* բևեռապինդ *Ագաթ.* երիզապինդ *ՅՀ. ժա. 44.* կշռապինդ *Ես. կզ. 11. Ոսկ. երր.* նաստապինդ *Գ. մկ. գ. 9.* գլխապինդ *«գլխին կապած» Նոնն. 76.* զօտեպինդ *Խոսր.* պնդապան *«սաստիկ արգելք» (Նորագիւտ բառ) Զքր. սարկ. Ա. 37.—Նոր բառեր են* պնդերես, պնդան *«խցան, ռուս.* пробка*» (ըստ Կ. Սարաֆեան, Բանալի դիտութ. 1788 Սանկպետ. էջ 59)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* bhendh *արմատից, որի վրայ ընդարձակ տես Բանա. (բանա նոյն արմատի իրանեան ձևից է փոխառեալ. բնիկ է նաև* պապանձ*–իլ, որ հնխ.* bhendh-: bendh- *արմատի աստրին* bṇdh- *ձայնդարձի կրկնականից է յառաջացած)։*

Böttich. ZDMG *1850, 360, 219 և* Arica *81, 369 առնս.* piṇḍa: *Տէրվ. Մասիս 1881 մայիս 11 և Նախալ. 96 հնխ.*

bhandh «պնդել» արմատից, իբր սանս. bandh, զնդ. հպրս. band, պրս. band «կապ», գերմ. binden «կապել» ևն։ (Այսպէս նաև Scheftelowitz BB 29, 29)։ Bugge, Beitr. 34 յն. σφιγκτός «կապկպուած» բառի հետ նոյն, Etr. u. Arm. 87 համարակ. penθna «քար» բառի հետ։ Հիւնք. հանում է բանա բառից։ Patrubány SA 2, 147 հնխ. bhandh- արմատից։ Նոյն, ՀՍ. 1907, 16 և 1908, 377 p-bhandh-, ուր p համառօտութիւնն է epi «վերայ» բառի։ Karst, Յուշարձան 406 սումեր. pin «հիմնարկութիւն»։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Սլմ. պինդ (Մրղ. կրկ. պիք-պիք), Ախց. Կր. պինա, Հճ. Ննխ. Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. բինդ, Ցղ. պէնդ, Գոր. Ղրբ. պրէնդ, Ասլ. բինդ, բի*, Զթ. բր՝ենդ, Սվեդ. բէնդ, բոլորն էլ նշանակում են «ամուր». միայն Ռ. «թանձր» նշանակութիւնն ունի. օր. «ապուրը պինդ է»։ Գործածւում է գերադրական շինելու համար՝ Բզ. Հմշ. Սվ. օր. պինդ աղէկ, պինդ մեծը։ Նոր բառեր են պինդականջ, պինդապուր, պինդցորենապուր, պինդգլուխ, պինդիրաւ, պինթան (խմ՛ պինդրան) «չորթան», պնդարեւան, պնդախաշ, պնդակիր, պնդաւուն, պնդամար, պնդենի, պնդի, պրնդոց, պնդպնդուել։ Նաև պինդ «օրօրոցի կապը»։

ՊԻՆՈՎՏՈՆ «ընդելուզեալ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 159. «Պատկս ադամանդեայ բազմաքանքար և վակաս պինովտոն յունիովնայց և բիւրզայց»։—Անշուշտ յունարէն խառնարեալ մի բառից, ինչպէս է և յունիովնայց. համմ. յն. πίνω «ապտափով ընդելուզում»։

ՊԻՆՁ «քթի երկու ծակերը» Դամասկ. Տաթև. Հարց. 241. որից պնչատ «քիթը կըտրած» Ոսկ. գաղ. Պորփ. Անյ. պորփ. Կանոն. պնչատել Խոր. Հոիփ. Ար ունի նաև մինչ ձևը.—սխալ գրչութիւններ են նաև պինջ և պնջատ։

ՆՀՔ լծ. ունչ։ Böttich. Arica 69, 133 օսս. fünç «քիթ» և կասկածով աֆղան. pōza. Lag. Urgesch. 673 սրանց հետ նաև ունչ։ Չուբինով, Բառ. վրաց.[1] այս բառի հետ է դնում վրաց. փինթի «տըղեղ», որ մեր փնքի բառն է։ Հիւբշ. 231 սրանից բաժանում է պրս. և քրդ. pōz, բելուճ. p'ōñz, աֆղան. pōza, paza «քիթ»։ Thomaschek, Deutsch. Litt. 1883, էջ 1254 վրաց. պինչվի։

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Մկ. Մրղ. Սլմ. Վն. Տփ. պինչ, Ալշ. Մշ. պինճ, Ննխ. բինչ, գիւղերը բ'ինջ', Հմշ. բինչ, Խրբ. փինչ, Տիգ. կրկնութեամբ բինթ-փինչ, Ախց. փինչ (յգ. փնչէր), Շմ. պրնչ, Ասլ. բինչ, բիշ, Նոր. բրնչ, Ղրբ. փանչ (պահուած միայն յգ. բրբրփա՛նչէր ձևի մէջ)։ Սովորաբար նշանակում են «ռնգունք, քթի ռնգունքների արտաքին կողերը», բայց նաև «քիթ», մանաւանդ «անասունի քիթ» (այսպէս Խրբ.), որից «ռնխ, նախատաբար՝ բերան», կրկնութեամբ Ախց. պինչ ու մռութ (խմ՛ «դունչ»), երկակի և յգ. ձևով՝ Սեբ. բնչէր, Կր. պրնչվրնէր։ —Պլ. գործածական է միայն հետևեալ մանկական յանդաւոր բառախաղի մէջ.—

Ի՞նչ.—Էշու պինչ,
Փիլաւ կնփեմ, քեզի՞ ինչ.

որից երևում է որ պինչ բառի նշանակութիւնն է «էշի քիթ», թէև գործածողների համար անյայտ։ — Նոր բառեր են պնչլատ, պնչածակ։

ՓՈՒ.—Վրաց. ȝoճʁo պինչվի «քթի ծակ, ռնգունք», օսս. fjnj «քիթ», ափխազ. p'ync' «քիթ», համմ. նաև կարաբդին fənše «քիմք» և եգիպտ. fnḏ «քիթ»։ Այս բառերի կապը հայերէնի հետ յայտնի չէ. Հիւբշ. 397 կովկասեանները փոխառեալ է դնում հայերէնից, ինչ որ կատարեալ ճշմարտութիւն կլինի, եթէ ենթադրենք թէ վրաց. պինչվի բառի վերջավանկը (-վի) ներկայացնում է հյ. երկակի -վի վերջաւորութիւնը, որ և գտնում է Կր. պրնչ-վր-ներ (խմ պինչ-վի-ներ) ձևի մէջ։

ՊԻՇ «յառած աչքերով նայիլը». որից պիշ ունել «յառած նայիլ» Արշ. պըշնուլ «ձիգ ձիգ նայիլ» ՍԳր. Ոսկ. Սեբեր. պշուցանել Եզն. պշնել Սիր. խա. 28. Սեբեր. Վեցօր. 129 (այստեղ գրուած է պշրեալ, որ ՆՀՔ ձեռագրական սխալ է համարում, իսկ ՀՀՔ, ՋՔ

և ԱՔ իբր առանձին բառ են դնում, «աչքը մթագնիլ» նշանակութեամբ). մշտապիշ Ա-նան. եկեղ. մարմնապիշ ՋՔ. երկնապիշ ՅՀ. իմ. պաւլ. երկրապիշ Եղիշ. այլակ. 231. ՅՀ. կք. միապիշ Ոսկ. երր. 552. պշնական Պատմ. մծբ. 15. ակնապիշ (նոր բառ). կայ և ակնապուժիլ «վրան նայելով հիանալ» էֆիմ. էջ 6։

ՆՀՔ «լծ. ապուշ, ապշիլ, ուշ, ոմկ. պուշ, որ յառեալ հայի կկոցեալ աչօք»։ Böttich. ZDMG 1850, 360, 220 սանս. paç արմատից։ Müller SWAW 38, 577, 595 *պաշել նախաձևից, իբր սանս. paç: Lag. Urgesch. 114, Ges. Abhd. 68 զնդ. pišupāna «կամրջապահ» բառի հետ, որ ինքն իսկ մերժում է Arm. Stud. § 1886։ Հիւբշ. KZ 23, 19 մերժում է սանս. paç. իսկ Arm. Gram. 231 ասում է թէ ո՛չ իբր փոխառութիւն և ոչ իբր բնիկ կարող է կապուիլ զնդ. piš «նայիլ, տեսնել» բառին, որ Geldner KZ 30, 520 առաջարկեց և Darmesteter մերժեց։ Հիւնք. ապուշ բառից։ Մառ, О полож. абхаз. 35 ափխազ. sp'šueyt «նայիլ» և վրաց. մզերա «նայուածք» բառերի հետ։

ԳԻՒՒ.—Ալշ. Մշ. վն. պշալ, Տրև. պշէլ, պշշէլ, Ղզ. Մշ. պշպշալ «յառած նայիլ», արմատական ձևն է ներկայացնում Ալշ. Մշ. պուշ, Նխ. Սեբ. բուշ «կարճատես», ՆՔ. պուշ «շիլ»։

ՓՈԽ.—Հայերենից է փոխառեալ վրաց. შებიშუებული շեպիշուեբուլի «պշնուլ, յառած նայիլ», որ կազմուած է վրացական შე- շե- նախամասնիկով ვიშუებული *պիշ-ուեբուլի ձևից։ Զուբինով[2] 1454 և 1020 չգիտէ ո՛չ շեպիշուեբուլի և ոչ *պիշուեբուլի. առաջինը գտնում եմ գործածուած Մառի հրատարակած Тексты и Раз. VI. Физіологъ= Բարոյախօս (1904) աշխատութեան մէջ, էջ XXXVII։

ՊԻՇ «փոքրիկ տրցակ՝ կապոց». գիտէ միայն ԳԲ։

ՊԻՊԱԼ «տենչալ». ունի միայն ՓԲ յաւել. անստոյգ բառ։

*ՊԻՊՈՍ «մի տեսակ սուրբ թռչուն». նոր բագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Սեկունդ. էջ 232 (տե՛ս և Տաշեան, Das Leben und die Sentenzen des Phil. Secundus, Wien 1895).—«Բայց է պէպոս (այլ ձ. պիպոս) ի թռչնոց սրբոց. այլ ի նորա թևոցըն...»։

=Յն. πίπος «մի տեսակ արտոյտ»։

Գտաւ ու մեկնեց Տաշեան, անդ, էջ 41 և Մառեն. մանր ուսումն. հտ. Ա, էջ 251, ուր և յիշում է նաև յն. πίππος «թռչունի ձագ», որ ըստ նշանակութեան կապ չունի վերինի հետ։

*ՊԻՍԱԿ (ի–ա հլ. ըստ ՆՀՔ, բայց առանց վկայութեան) «խայտոյց, սև նշան, պէնկ» վրդն. պատմ. Դաղիան. «խայտուցաւոր, պիսակ ունեցող» ՍԳր. «բորոտ, քոսոտ» Եւս. քր. Վրք. Հց. Բ. 363. որից պիսակութիւն «բորոտութիւն» Փիլ. Կանոն. Վստկ. պիսակուց Եփր. աւետ. 339. պիսակացեալ Ոսկ. յհ. ա. 1. խայտապիսակ. Եփր. աւետ. պիսակաւոր (նոր բառ)։

=ՊՀլ. pēsak «բորոտ» բառից, որ դարձել է նախ *պէսակ և յետոյ բուն հայերէնի օրէնքով՝ պիսակ: Սրա հետ նոյն են հպրս. (յոյն տառադարձութեամբ) πισάγας „ὁ λεπρός“, զնդ. paesa- «բորոտ», պրս. پیس pēs, پیسی pēsī «բորոտութիւն», ասս. پیسا pēsa «խայտ ի սպիտակէ և ի սևոյ», پیسکی pēsagī «բորոտութիւն», ասս. بیسا bēsa «պիսակ, խայտուց»։ Սրանցից են փոխառեալ նաև ասոր ܦܝܣܟܝܐ paiskāyā «պիսակաւոր, խայտուցաւոր» (Brockelmann, Lex. syr. 271 ա), աֆղան. pes «բոր, բորոտ», pēsī «բորոտ», չաղաթ. پیس pis «մի տեսակ անբուժելի բորոտութիւն», խոքանդ. ասս. پیسا pisah «բորոտ», پیس pis «բորոտ», թրք. پیس pis «աղտոտ, կեղտոտ», որից էլ ոմկ. փիս «կեղտոտ» և վրաց. ფიხი փիսի «կղկղանք»։ Իրանեան ձևերը ծագում են հնխ. peik'- «մարմինը ցտելով կամ ներկելով նշաններ քաշել» արմատից, որի զանազան ժառանգները տե՛ս պէս բառի տակ։ Այս ձևերից յիշենք օր. ռուս. писать «գրել», письмо «նամակ», որոնց հետ նշանակութեան աստիճանական զարգաց-

համբ նոյնանում են բոլորովին տարբեր իմաստներ (տե՛ս վերը)։—Հիւբշ. 230։

ՀՀԲ պէս արմատից։ ԳԴ պրս. պիյսէ։ *ՆՀԲ «լծ. պէսպէս, բիծ, ռմկ. պուտ պուտ, իսկ պրս. փիսէկի «պիսակութիւն»։* Lag. Urgesch. *537 պրս.* pēsa։ —Pictet KZ *5, 343 պրս.* pēs, pēsi, *քրդ.* pīs, *սանս.* pēçi, *լտ.* pisum *«ոլոռ»։ Հիւբշմ.* ZDMG *38 (1884), էջ 427 հպրս.* պուսάγας, *սանս.* pēças *ևն։ Տէրվ. Նախալ. 93 իբր բնիկ հայ հնխ.* piç *«ձեւել, պճնել» արմատից. համմտ. սանս.* piç, pēças, *յն.* ποικίλος, *գոթ.* filufaihs, *պրս.* bēsa, *հյ.* պէս։ Karst, *Յուշարձան, 424 ալթայ.* bič, bis, bes *«նշան, դիր, զարդարել ևն», հյ.* պէս, բիծ։ *Թիրեաքեան, Բազմ. 1913, 339* բիծ, սպի, փիծ, պիղծ *բառերի հետ կցում է թրք.* փիս *ձևին։*

***ՊԻՍԻԴՈՆ** *(սեռ. -ի) «ծով» նար. խչ. որից* պիսիդոնացեալ *«ծովացեալ, ծովածաւալ» Ճառընտ.=Վրք. և վկ. ա. 424 կայ նաև* պոսիդոն *ըստ ԱԲ։*

=Յն. Ποσειδῶν *«ծովի աստուածը»։ Մեր ձևերից* պոսիդոն *ներկայացնում է ուղիղ տառադարձութիւնը, միւսի մէջ առաջին ձայնաւորը հպատակել է երկրորդին։*

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

***ՊԻՍԻՆՈՆ** *«ծովի բուրդ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում ենք գործածուած խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 18. «Մելեսի, ուստի ասէ եղեկիէլ ասր բերել ի Տիւրոս, այսինքն ծովու բուրդ, որ է պիսինոն»։*

=Յն. βύσσινον *«շատ նուրբ վուշից շինուած», βύσσος «բեհեզ, հնդկական շատ նուրբ վուշ, բամբակ»։—Ա.Ճ.*

Պիստ *տե՛ս Բուստ։*

***ՊԻՍՏԱԿ** *«մի տեսակ պտուղ, ֆստըխ» խոր. աշխ. Հին բռ. բժշ. որից նոր գրականում կազմուած են* պիստակենի, պիստակագոյն, պիստակավաճառ։ *Խոր. աշխ. 608 (2 ձեռ.* պիստակ*). հնագոյն ձևն է* պստակ *որ գործածուած է հրտր. Սուքրեանի, էջ 31 և i ձայնի անկումով համապատասխանում է պհլ. *pistak ձևին։*

*=Պհլ. ենթադրեալ *pistak ձևից, որի հետ համմտ. պրս.* پسته pista *«պիստակ». տարածուած է շատ լեզուների մէջ. օր. յն.* πιστάκιον, *նոյն.* βιστάκιον, *լտ.* pistacium, *ֆրանս.* pistache, *ռուս.* фисташки, *արաբ.* فستق fustuq, *թրք.* fəstəq>*ռմկ.* ֆըստըխ *ևն, բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Արաբերէն ձևից յետնաբար փոխառեալ է վստուղ, որ տե՛ս առանձին։*

ԳԴ պրս. փիսթէ *ձևից։ ՆՀԲ յունարէնից։*

***ՊԻՏԱԿ** *«թղթիկ, գրուած կամ գրելիք նամակ» Վրք. հց. Բ. 13 (նոր գրականում նշանակում է «étiquette, թղթի կտոր՝ որ ամանների կամ շիշերի վրայ են կպցնում՝ պարունակութիւնը նշանակելու համար»)։*

=Յն. πιττάκιον *«տոմսակ, նամակ, գրութիւն»* (Boisacq 788, Sophocles 892. *գործածական է թէ՛ բիւզանդական և թէ նոր յունարէնում)։—Բուն նշանակում է «շորով ապեղանի,* cmplâtre*» և ծագում է* πίττα *«ձիւթ» բառից։ Յոյնից են փոխառեալ նաև լտ.* pittacium *«շորով ապեղանի. 2. նամակ, տոմսակ. 3. պիտակ,* étiquette*», արաբ.* بطاقة biṭāqa *«պիտակ» (ըստ Կամուս, թրք. Թրգմ. Բ. 871), թրք.* بطاق pitaka, pataka *«ապրանքների վրայ կպցնելու պիտակ»։ Պատահաբար նման են ու սրանց հետ կապ չունին չաղաթ.* بتيك betik *կամ* petek *«նամակ, անցագիր, վաւերագիր», թունգուզ.* bitʸik, bičʸik *«գրուածք», բուրեաթ.* bičik *«գրուածք», ալթայ.* pičik *«գիր, դիրք», ույղուր.* beček, bičik *«գիր», որոնք ծագում են ԹԹր.* bit, bet *արմատից. համմտ. չաղաթ.* bitmak *«գրել, արձանագրել» եակուտ.* bit *«նշան», թունգուզ.* bitʸim *«գրել» ևն (տե՛ս* Vámbery, Etym. Wört. *էջ 203, № 217 և* Gustav Meyer, Türk. Stud. SWAW 1893, *էջ 128)։ Թուրքականից են փոխառեալ պրս.* بتك batak *«գիր, գրչութիւն, գրուածք»,* بتكچی bitikči *«գրագիր», կազանի ԹԹր.* بتی biti *«համայնակ», քրդ.* betik, bitik *«համայնակ, նուսխայ», որից նաև հյ. գուռ. Վն.* **բիբիկ աճել**, *ՆԲ.* **բրիկ աճել**, *Երև.* **փիբիկ աճել** *(Պռօշ. Սօս և Վարդիթ. ա տպ. էջ 29) «գիր անել համայնելով»։*

նշՒ լծ. Թրք. պիրի: *Հինք. պրս.* պէրէf, *յն.* πιττάκιον: *Աճառ. Արարտ. 1910, 269 մերժելով յունարէնը՝ դնում է թաթարականից. բայց ճիշտ չէ, որովհետև այս դէպքում սպասելի էր առնուազն* *պիրքակ և ո՛չ թէ պիտակ:

ՓՈԽ.—Վրաց. Ჰიტაკი պիտակի «*աղերս, խնդիրք,* просьба» (*Ս. Գէորգի Վարուց մէջ գործածուած*) *ըստ Ջուբինովի*[2] *1020 հայերէնից է: Նոյնպէս Մառ, Հայ-վրաց. յարաբերութ. էջ 41 հայերէնից է դնում վրաց.* պիտակի, *բայց նշանակութիւնը դրուած չլինելով, յայտնի չէ թէ ա՞յս բառն է:*

Պիտառ *տե՛ս Պէտ, պէտք:*

Müller WZKM *8, 283 (հյ. Թրգմ. ՀԱ 1894, 294)* դնում է *Թալմ.* פיתרא piθrā «*մեկնութիւն*», *հբր.* פתר pθr «*բացատրել*» *բառից, որ չի ընդունում Հիւբշ. 315 նշանակութեան տարբերութեան պատճառով: Բայց մեկնութիւնը ամէն պարագայի մէջ էլ ընդունելի չէ, որովհետև հյ. բառը կազմուած է յունարէնից Թարգմանարար* **պէտ** *և առնուլ բառերից:*

***ՊԻՏՈՒՍ** «Թեղօշի ծառը, pinus». Մէկ անգամ ունի Վեցօր. ը. 186. ուրիշ օր. չկայ:*

=Յն. πίτυς «*Թեղօշ*». *սրանից է փոխառեալ նաև վրաց.* Ჴიტო պիտո, Ჴიტჳოպիտվի, «сосна, пихта, *եղևին, կուենի*»:—*Հիւբշ. 372:*

Ուղիղ մեկնեց ՆՀՒ:

ՊԻՐԿ «*պրկուած, ձիգ, ամուր*» *Տօնակ. որից* պիրկ ձգել «*ուժով քաշել*» *Նիւս. կազմ.* պրկել «*ամուր քաշելով կապել*» *Ա. մկ. ե. 47, Գծ. իր. 25. Ագաթ. Բուզ. Ոսկ. Եւս. պատմ. «քաշելով երկարացնել, ձգտել» կիւրղ. ծն. Նիւս. կազմ. Փիլ.* պրկումն *Եւս. պատմ.* պրկոց *Եղիշ. ը. էջ 131.* պրկաձիգ *Ճառընտ.* **ուժգնապիրկ** *Նար. խշ:*

Bugge IF 1, 453 **փիրկ* *ձևի միջնորդութեամբ հանում է հնխ.* sphigró-s *բառից. համմտ. յն.* σφίγγω «*կապել, սեղմել, ճնշել*»: *Հինք. պրս.* բէրշիյաէն «*ոլորել գծայր*»: Karst, *Յուշարձան 415 փակ բառի հետ մոնգոլ.* buke, *կալմուք.* buku «*ամուր, հաստատուն*»: *Թիրեաքեան, Արիահայ բռ. 63* **պուրծ** *արմատի հետ նոյն է դնում: Պատահական նմանութիւն ունի ասուր.* pirik «*փականքով կողպել*»: *Նոյնպէս նաև արևել. Թրք.* بیرك birk «*հաստատուն, ուժեղ, ամուր*», birkitmak «*հաստատել, ամրացնել*», birkilmak «*ամրանալ*», *ատր. Թրք.* berk «*հաստատուն, ուժեղ, ամուր*», *տճկ.* perkitmaq «*դուռը ամուր փակել*», *որոնց համար* Vámbery, Etymol. Wört, *էջ 201, № 213 դնում է* berk, bert *արմատը, սրան կցելով նաև ույղուր.* berk, *չուվաշ.* parga, *եակուտ.* bärktä «*շատ, լաւ*», bärd «*գլխաւոր*» *ևն:*

ԳԻՒՒ.—Ջղ. պիրկ, *Ցղ.* պէրկ՝ «*ամուր*», *Ագլ.* պարկ՝ «*ժլատ*» (*բուն նշանակութիւնն է «ամուր»*). *որից պրկել Ջղ. «ամրացնել (օր. բերդը)»:*

ՊԻՐՏ «*ծանր կամ կարծր*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 271:—Արդեօք* բիրտ *բա՞ռն է:*

***ՊԻՒԹԻՒ.** «Մի տեսակ ոլիմպիական խաղ՝ նուիրուած Ապոլոնի» Եւս. քր. գրուած է նաև* **պիւթի, պիթիա** *ԱՒ,* **պիթիադ** *Փիլ. լիւս. 153:*

=Յն. πύθια, πυθιάς *նոյն նշ.:*

Ուղիղ մեկնեց ՆՀՒ:

***ՊԻՒԹՈՆ, ՊԻՒԹԻՈՆ** «*յունաց հարցուկը Ապողոնի բերնէն*» *ԱՒ. որից* **պիթագիր** «*մաթեմատիկ պատգամախօսութեանց Պիւթիայ*» *Պղատ. օրին. սխալ գրչութեամբ* **վիթովն** *կոչ.:*

=Յն. πύθιον, πύθων՝ *նոյն իմաստով:—Ագ.*

***ՊԻՒԹՈՍ** «*մի տեսակ մեծ աման հողէ*» *Արիստ. աշխ. 614:*

=Յն. πίθος *նոյն նշ. (անշուշտ մեր Թարգմանչի գործածած ձեռագրում գրուած է եղել* πύθος).—*Հիւբշ. 518:*

***ՊԻՒՌԱՄՈՒԴԻՍ,** *որ և* **պիւռամուդէս** «*բրգաձև, բլրաձև*» *Նեմես. 65:*

=Յն. πυραμοειδής «*բրգաձև*»:—*Հիւբշ. 372:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ:

***ՊԻՒՌԻՈՆ,** *որ և* **պիռիոն, պռիոն, պեռիոն** «*ատրուշան, Պարսից կրակատունը*» *Ճառընտ. Յայսմ. ապր. 14. Վրք. և վկ. Ա. էջ 1:*

=Յն. πυρεῖον *նոյն նշ. (ծագում է* πῦρ = «*հուր*» *բառից):—Հիւբշ. էջ 372:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ:

***ՊԻՒՐԱՄԻԴ**, *որ և* **պիւրամիդ, պիւռամիդ, պիւռամիտ** *«բուրգ» Նւս. քր. Նոննն. 24. «բուրգ, երկրաչափական ձևը» Նեմես. 65։*

=Յն. πυραμίς, πυραμίδος *«բուրգ». ընդհանուր տարածուած բառ է. ինչ. ֆրանս.* pyramide *ևն։ Առաջ կարծում էին թէ ծագած է* πῦρ *«կրակ» բառից, իբր թէ կրակի բրգաձև բարձրացման օրինակով, բայց այժմ այս կարծիքը թողնուած է և յն.* πυραμίς *համարւում է օտար փոխառութիւն* (Boisacq 829)։ *—Հիւբշ. 372։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

***ՊԻՔԻՆ** *«ջրանոթ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածում է Սոկր. էջ 51. Եւ զի զպիքինն ի տաճարն Սրապիոնոյ տանել, այլ նա յեկեղեցւոջն Աղեքսանդրացւոց զպիքինն փոխեալ հրամայէր։*

=Յն. πῆχυς *«թև, բազուկ (իբր ճիւղ ջրանոթի). 2. յետնաբար՝ նեղոսի չափը»* (Sophocles 889)։

Ուղիղ մեկնեց Մ. վ. Տէր-Մովսիսեան, Սոկրատի հրատարակութեան մէջ, էջ 51։

Պլամ *տե՛ս Պաեմ։*

ՊԼԱՏԱՆ *«անասուն ինչ յամոյրանման,* pasan?*» ունի միայն Նորայր, Բռ. ֆրանս. 908 ա. չորս անգամ գտնում եմ գործածուած Բար. 173։*

***ՊԼԻԿ** *«մի տեսակ փոքր դրամ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած ուշ ժամանակի մատենագրութեան մէջ. Չորս փողոյ պլիկ ունիմ և կտոր մի հաց և երկուս լումայս (Յայսմ. մրտ. 10, էջ 555ա). Հրամայեաց պլիկ կտրել պղնձէ (Պատմ. ԺԸ դարից. Դիւան հայոց պատմ. հտ. ժ. էջ 108)։*

=Ծագում է **փլիկ** *ձևից, որ նուազականն է* **փող***<պրս.* پول pūl *«փող» բառի։ Նկատելի է որ որոշ բարբառների մէջ հյ. փլ- դառնում է պլ-. օր.* **փլիլ>պլիլ** *«փուլ դալ», փլատալ>պլատալ, փլխիլ>պլխիլ. ըստ այսմ և* **փլիկ>պլիկ***. հին ձևը պահում է վրացին (տե՛ս տակը)։—Աճ.*

Գիւմ.—Վն. **պլիկ** *«փայտէ մէկ փարանոց (1/5 կոպէկ) որ հին ժամանակ եկեղեցիներում գործածում էին մեծ դրամները մանրելու համար». նոյն բառն ունին նաև Ալշ. Ասպ. Աժդ. Բլ. երև. Մրղ. Ջղ. Սլմ. Տփ. «փոքրիկ մի դրամ» կամ ընդհանրապէս «դրամ» իմաստով.— Ագլ.* **պլագ** *(ծածկալեզուով) «դրամ»։*

Փոխ.—Վրաց. **ფლოგი** **փլիգվի** *«կէս կոպէկանոց դրամ, 2 մանղրու» (Ջուբինով[2] 1311). տարակոյս չկայ որ փոխառեալ է հայերէնից, ըստ որում ունի* **-իկ** *նուազական մասնիկը։*

Պլղամ *տե՛ս Պալղամ։*

ՊԼՈՒԶ *«փոքրիկ» Շնորհ. առակ. (բայց ՆՀՒ դնում է նաև «կապուտակ» նշանակութեամբ)։*

ՆՀՒ **պլուզ** *«կապուտակ» դնում է* **բիլ** *«կապոյտ» բառից, որ գոյութիւն չունի (տ.* **բիլ***)։* **Պլուզ** *«փոքրիկ» պէտք է անշուշտ կցել արաբ.* بلز biliz *«կարճահասակ» բառին (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. էջ 162), բայց յայտնի չէ թէ ո՛վ ումից է առած։ Հաւանականն այն է որ փոխ առնողը հայն է, որին վկայում են բառի յետնութիւնը և Կովկասում գոյութիւն չունենալը։ Բայց այդ դէպքում ինչո՞ւ վն. և Ախց. ունին պ և ոչ բ։*

*Գիւմ.—***Պլուզ** *«կապուտակ» բառի համար ունինք երև.* **պլիզ**, *Ագլ.* **պլօզ** *«կապուտակ». —իսկ* **պլուզ** *«փոքր» բառի համար Վն.* **պըլուզ** *«կարճահասակ», Ջթ.* **բլուզ** *«տղայ», (որ և կոչական ձևով գործածւում է* **բլէ՛զ, լբլէ՛զ, լբրէ՛զ, բէ՛զ,** *իբր «ա՛յ տղայ, տօ՛, ծօ՛»), Կս. Սվ. «փոքր, փոքրիկ», որից Ախց. վ.* **պլուզիկ** *«փոքրիկ», նաև* **պլուզտղուբիւն** *Ջթ. «մանուկ հասակից սկսած, ի տղայ սիոց»։*

ՊԼՈՒՏ *«սերմն տնկոյ իրիք Փիլիպպեան կղզեաց, որ է դառն և թունաւոր. ֆր.* fève de Saint-Jgnace*». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 537 ա, իբր նորակերտ բառ։ Բայց ի՞նչ է ծագումը։*

ՊԼՕԹ *«զանազան դեղերից բաղադրուած լոյծ դեղախիւս» Վստկ. 207 (նորագիւտ բառ). «Յիրեար խառնեա և հալեա և պլօթ արա և ընդ բերանն ի վայր ած»։ Նոյն բառն է* **պլօր** *«դեղահատ, հաբ,* pilule*» մհյ. բառ՝*

ըստ Նորայր, Բառ. ֆր. 943 ա։ Երկուսից մէկը սխալ է։

***ՊԼՕՐ** «բիւրեղ» Երզն. մտթ. 108 (այսպէս ըստ ՆՀԲ, բայց տպագրում գտնում ենք* պիլլօր*). Վրդ. առ. 332—3. Մաշտ. ջհկ. Ոսկիփ. Տաթև. ձմ. լէ. «բիւրեղեայ»» Ուռհ. 149, 150. աստում է նաև* պիլօր *Երզն. մտթ. 308. այժմ ռմկ.* պիլլօր, *որից* պլօրեայ «բիւրեղէ» *Հայել. 178։*

=Արաբ. بلّور bilūr, *Թրք.* بللّور billor «բիւրեղ»։ *Բուն ծագումը տես* բիւրեղ, *որ է յն.* βήρυλλος, *որից նաև գերմ.* Brille, *հոլլ.* bril «ակնոց» (Kluge 73):

ԱԲ դնում է տաճկերէնից։

***ՊԿԱՄ** «ծորի նման խնկահոտ խէժով մի տեսակ ծառ». ունի միայն Ոսղք. որից ՀԲուս. § 2559, իբր լտ.* picea, *վայրին՝* piceastra։

=Թրք. بقّم baqam «շիկափայտ, bois de Brésil»։—*Աճ.*

***ՊՂԱԿՈՒՆԴ** «կարկանդակ» Ոսկ. մ. բ. 23. կող. էջ 569. Հռոմմ. 41. գրուած նաև* պղակունտ, պղակունդա, պղակունտոր, պղակուն *(Ոսկ. մ. բ. 692—3 լուսանցքի վրայ),* պաղակունտոր, պլակինդի, պլակունտա *վրք. հց. Բ. 358—9. Հին բռ. որից* պղակունտոռագործ «կարկանդակ շինող» Ոսկ. մ. գ. 17։

=Յն. πλακοῦς, *սեռ.* πλακοῦντος «կարկանդակ», πλακούντιον «փոքրիկ կարկանդակ», *որից նաև ասոր.* ܦܠܩܘܢܛܐܣ plāqūnṭās «Semidalis», *լտ.* placenta, placentula, *վրաց.* პლაკუნტი պլակունտի, პალეკუნტი պալեկունտի, პალეკუნთი պալեկունթի «գաթայ, նազուկ»։ *Ծագում է* πλακόεις «տափակ, տափարակ, հարթ» *բառից. նախապէս ասուել է* πλακίεις ἄρτος *կամ* πλακοῦς ἄρτος «տափակ հաց», *յետոյ ածականը իբր գոյական է առնուել* (Boisacq 790)։—*Հիւբշ. 372։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

***ՊՂԱՅԻՒԱ** «աստղի անուն է» Խոր. աշխ. 586 (այլ ձ.* զլուպա*). չունին բառարանները։*

=Յն. πλειάδα «բոյլք», *ինչպէս ունի բնագիրն էլ. համմտ. Պատկ.* Арм. reorp, *էջ 4։ —Աճ.*

ՊՂԱՆ «ձուով և պանիրով շինուած մի տեսակ խմորեղէն». գիտէ միայն Կոյլաւ, Բառ. գերմ. 488 ա։

***ՊՂԱՏԱՆ** «մի տեսակ մայրի» Յայտմ. որ և* պլատան ԱԲ։

=Յն. πλάτανος *նոյն նշ. որից և լտ.* platanus, *ֆրանս.* platane *ևն։—Հիւբշ. 373։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՊՂԵՂ «անծանօթ մի բոյս է» (տարբեր պղպեղից) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2561։

***ՊՂԵՄԲԱՏ** «կապարեայ գունտ և այդպիսի գնտակով ձեռ՝ ձաղկում» Ճառընտ.։

=Լտ. plumbatae *նոյն նշ. կազմուած է* plumbum «կապար» *բառից. անշուշտ փոխառեալ է յունարէն* *πλουμβάτα *տառադարձութեան միջոցով, որ չգիտէ* Sophocles։ *Կայ նաև նոյնի ասորի ձևը՝* ܦܠܘܡܒܛܐ *(որ անշուշտ պէտք է կարդալ* plumbatā*)* «virgae plumbatae»։—*Հիւբշ. 373։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ։

ՊՂԵՐԳ *(յետնաբար* ի, ի–ա *հլ.)* «հեղգ, ծոյլ» Ճխ. Խոր. Պիտ. *որից* պղերգանալ Ոսկ. յհ. բ. 30. պղերգիլ Փիլ. քհ. Նանայ 332. պղերգութիւն Սիր. դատաս. 160. պղերգարար Ոսկ. յհ. ա. 19. Փիլ. այլաբ. պղերգագոյն Պիտ. ևն։

Հիւնք. երկ բառից՝ իբր «ատեցող երկոց»։

***ՊՂԻՆՁ**, ո *հլ.* «պղինձ մետաղը» ՍԳր. «սառակ, դրամ, փող» ՍԳր. «կաթսայ» Երզն. երկն. զ. Վստկ. 81, 161. որից* պղնձի ՍԳր. պղնձագործ *Իմ. ժե. 9. Եզն. Ոսկ. մ. ա. 20. Ագաթ.* պղնձաձուա *Եւս. պտմ. և քր.* պղնձաձոյլ *Ագաթ.* պղնձատ «պղնձէ դրամ» Բրս. մրկ. 168 (Նորագիւտ բառ) (Այրին որ զերկու լումայս պղնձատ միայն ունէր=այրին արկ երկու պղնձի փող. անդ՝ էջ 235). պղնձանիգ Գ. Թագ. դ. 13. պղնձապատ ՍԳր. Ոսկ. մ. գ. 16. պղնձուր *(Նորագիւտ բառ)* «պղնձագոյն» Զենոն. խմաստ. *(ըստ Հ. Ակինեանի հաղորդագրութեան).* անագապղինձ, պղնձամորթ *(նոր բառեր) և այլն։*

=Իրանեանից փոխառեալ բառ. համմտ. պրս. برنج birinǰ *կամ* پرنج pirinǰ «արոյր, պղինձ», *որի հին ձևերը յայտնի չեն. յայտնի չէ նաև բառիս ծագումը* (Horn § 208

bis), *որովհետև պատահական նմանութիւն միայն ունի* bronze, *որ յառաջանում է ստ. լտ.* aes Brundisinum *ձևից և նշանակում է «Բրինդիզոյ պղինձ»* (Kluge 74)։ *Պարսկերէնից են փոխառեալ նաև քրդ.* birinǰ, pirinǰok *«արոյր», բելուճ.* brinǰ, *թրք.* پرنج pirinǰ, *վրաց.* ბრინჯაო **բրինջաօ**, *աբազ.* prinǰ-žeš *«արոյր», ասոր.* ܦܪܢܓ parnōg *«պղինձ»։ Հայերէնի ձ ձայնի համար համմտ.* **բրինձ**< *պրս.* birinǰ։—*Հիւբշ. 231։*

Ուղիղ մեկնեցին նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 153, Klaproth, Asia pol. *էջ 102։ ՆՀԲ լծ. իտալ.* bronzo, *թրք.* **փիրինճ**: Lag. Urgesch. 811, Müller SWAW 38, 588, Diefenbach KZ 12, 76, *Պատկ.* Изслед. *10 զնդ.* bereǰya, *պրս.* birinǰ: Justi, Zendsp. 187 *զնդ.* parō-bereǰya *ձևի տակ՝ պրս. և քրդ. ձևերի հետ, ասելով թէ ըստ* Pott ZKM 4, 264 *բառս արեամ տեան ծագում պէտք է ունենայ։ (Զնդ.* bərəǰya *կարծեօք միայն «պղինձ» է նշանակում. իսկ պրս.* birinǰ *բառի հետ համեմատութիւնը համարում է շատ անապահով՝ ըստ* Horn § 208.— Bartholomae, Altir. Wört. 958 *զնդ.* bərəǰya- *մեկնում է «աստուածուհիան մի անուն», իսկ էջ 859* parō. bərəǰya- *թողնում է անյայտ իմաստով)։ Պատկ.* Истор Монг. *72 և Հիւնք. թրք.,* pirinǰ*։ Ա. Ուղուրիկեան, Ամէն. տարեց. 1908, էջ 36 կգում է* bronze *բառին! Յ. Գ. Մ. Պատմ. դրակ. էջ 15 երր.* պրտիլ: *Մատ,* О полож. абхаз. *7 յարեթեական* hpil, spil *արմատից, որից և ասիսագ.* by *«պղինձ»։*

ԳԻՒ.—Պահուած է «պղինձ (մետաղը) կամ կաթսայ» նշանակութեամբ. այսպէս՝ Աղշ. Երև. Մկ. Մղ. Շմ. Զղ. Սլմ. Վն. պղինձ *և Ախց.* պղինճ *«մետաղը և կաթսայ», Տփ.* պղինձ, *Կր.* պղինճ, *Մրղ.* պիղինճ *«կաթսայ», Ռ. Սեբ.* բղինճ *«մետաղը», Ակն. Խրբ. Հմշ. Սչ. Տիգ.* բղինճ *«կաթսայ», Գոր. Ղրբ.* պըղենճ *«մետաղը», Սվեդ.* բղենճ *«կաթսայ», Ագլ.* պղայնճ *«մետաղը», Հճ.* բողինճ *«մեծ կաթսայ» (նշանակութեան զարգացման համար համմտ. գւռ.* խալկին *«կաթսայ»*<*յն.* χαλκίον *«կաթսայ»՝* χαλκός *«պղինձ (մետաղը)» բառից)։ Նոր բառեր են* պղնձի *«սուր ականջով»,* պղնձաճամ, պղնձաճոտ, պղնձաոսխ, պղնձկալ, պղնձկալճ *կամ* պղնձկարգ, պղնձեղէն *«բոլոր պղնձէ ամաններըմիասին» (-եղեն հաւաքական մասնիկով. ինչ. խարեղէն, ոսկեղէն, արծաթեղէն, երկաթեղէն, փայտեղէն և ն)։*

ՓՈԽ.—Վրաց. ბოლეճი **պիլեճի** *կամ* **ճօլեճօ** սպիլեճի, *սվան.* **ճօլեճ սպիլեճ**, *ուտ.* պիլինջ, *թուշ.* **ճօլեճ սպիլեճ**. *«պղինձ մետաղը»։*

Պղովտոս *տե՛ս Լուտաս։*

***ՊՂՊԵՂ** *(գրուած նաև* պղպիղ*) «տաքդեղ» Սահմ. Ճառընտ. Խոր. աշխ. 615. որից* պըղպեղիկ *«մի տեսակ բոյս.* piperitis siliquastrum, lepidium latifolium» *Ռուշք. համմտ. նաև* **կոճապղպեղ, դարապղպեղ**:

=*Պհլ.* *pilpil *հոմանիշից, որ աւանդուած չէ. համմտ. պրս.* پلپل pilpil *հոմանիշը։ Սա հնդկական մի բառ է, որ հետզհետէ արեւմուտք յառաջանալով՝ տարածուած է բոլոր լեզուների մէջ. ինչ. սանս.* pippalī, *քուչ.* pippāl, *յն.* πέπερι (Boisacq 768)>*լտ.* piper, *նյն.* πιπέρι, *թրք.* ببر biber, *հսլ.* pĭprŭ, *գերմ.* Pfeffer (Kluge 365), *հոլլ.* peper, *իսլ.* piparr, *անգլ.* pepper, *իտալ.* pepe, pevere, *ֆրանս.* poivre *և յատկապէս պարսիկ ձևից յառաջացած՝ վրաց.* ბოლბოლი **պիլպիլի**, *արաբ.* فلفل fulful, *ասոր.* ܦܠܦܠܐ felfəlā *«պղպեղ»), ուտ.* pimpil *«պղպեղ» (տարանմանութեամբ փխ.* *pilpil*)*:—*Հիւբշ. էջ 231։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Ջնջուած է. փոխարէն գործածւում է տաքդեղ *(թրք.* isotə*=«տաք խոտ») և կամ նոր փոխառութեամբ թուրքերէնից՝* բիբաո, բիբէո:

ՊՂՊՁՈՒՆ *«լեփլեցուն, բոլորովին լիքը» Փիլ. լին. (ստէպ). Սասն. 59. սխալ գրչութեամբ* պղպղուն *Մագ.։ Ուղիղ ձևը հաստատում են՝*

ԳԻՒ.—Մշ. պըղբըզուկ, պըղբըզման, *Աղշ.* պըռբըզման *«լիուլի»։ Բոլորի մէջ* -ուկ, -ուն, -ման *մասնիկները ցոյց են տալիս, որ պարզ*

արմատն է պղպզ- (ձայնաւորը անյայտ)= պրպզալ Բլ. «լցուիլ»։

*ՊՂՊՂԱՅ «թուխթակ». մէկ անգամ ունի Վրդն. առ. 297։

=Արաբ. بَبَغَا babγā հոմանիշիյ ձևափոխութեամբ կամ թերևս կար սրա հետ ժողովրդական աւելի մերձաւոր մի ձև։ Աւելի ընդարձակ տե՛ս Պապկայ։—Աճ.

+ՊՂՊՂԱՔԱՐ «տեղից չշարժուելիք մեծ քար». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրանում եմ գործածուած Լմբ. ժբ. մարգ. էջ 216, ուր Լամբրոնացին Ջաք. ժբ. 3 «եդից զերուսաղէմ զքար մի կոխան ամենայն հեթանոսաց» հատուածը մեկնելով գրում է. «Քայց երրայեցին պղպղաքար ասէ»։ Ակնարկուած տեղում երր. բնագիրն ունի իսկապէս אֶבֶן מִצְמָה eben ma'əmāsā «ծանր (դժուարակիր) քար», որով և պարզւում է պղպղաքար բառի իմաստը։

=Բնիկ հայ բառ, որ պարզական պալ ձևի միջոցով կապւում է հնխ. bal արմատին՝ իբրև ձայնդարձ և կրկնական. աւելի ընդարձակ տե՛ս վերը Պալ։—Աճ.

ՊՂՊՂՈՒ «մի տեսակ թռչուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Տաղ. ըստ Ամատունի, Հայ. բառ ու բան 561. «Պղպղուն գլուխն է քար, ինքն ի Հնդկաց աշխարհն կայր, ի գլուխն ծեծեն երկաթ ու քար, նայ իսկի չասէ թէ ցաւ կուտայր»։ Զեւով նման է պղպղայ «թուխթակ» բառին, բայց նկարագրութիւնը տարբեր թռչուն է ենթադրում։

+ՊՂՊՋԱԿ, ի-ա հլ. «ջրի երեսին ձևացած բշտիկ» Վեցօր. դ. էջ 47. Պիտ. Շիր. որից պղպջականաձև Յայտմ. պղպջակել «ջերմուկի ջրի դուրս բխիլը» Պիտն. 383 (ասկեղարեան բառ), «ջրի երեսին պղպջակ կազմել» ՅՀ. կթ. Ճառընտ. պղպջակիչ Պիտառ. գրուած է նաև բղբջակ Ջքր. կթ. պաղպաջակ Նփր. խչ. 77. պարզ արմատն է *պղպուջ, ինչպէս ցոյց են տալիս պղպջանալ «խմորի ուռչիլը» Փիլ. եկ. (որ և փղփջանալ Կիւրղ. Թգ.), պղպջաձև Յայտմ. պղպջումն Փիլ. բագն. միջին հյ. բխբուճ «գիրգ» Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 28. գուռ. բխբնալ, բղբնջիլ, պխպնալ, փխպնիլ և մանաւանդ բխբուճ, բղբուճջ, փխպուճ «փափուկ ուռած հաց», պղպուճ «պղպջակ»։ Նոյն բառի այլայլուած ձևը (գուցէ և տպագրական սխալ) եմ համարում պղպկալիլ «խմորի թթուելով պղպջալը», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տարօն. Ա. § 97, էջ 202. «Պղպկալելն և ուռչիլն խմորոյն և թթուութեամբ բացախիլն»։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bul- «ուռչիլ» արմատից, որ երևան է գալիս նաև bol-, bhel-, phel- ևն հոմանիշ ձևերով. առաջին ձևի ժառանգներն են՝ յն. βολβολίς «պղպջակ» (Հեսիւք.), βολβός «սոխ» (իբրև կոճղէզ), լտ. bulla «պղպջակ, կոճակ», bulbus «սոխ», լիթ. burbulas «պղպջակ», bulbė, bulwis «գետնախնձոր», bumbulỹs «շողգամ», bulìs «չետոյք»=սանս. bulih «բունոց. 2. չետոյք», լեթթ. burbulis «պղպջակ», bulbes, bulwas «գետնախնձոր», bumbuls «ուռուցք», ֆրիդ. pol «կլոր, լիքը», հոլլ. puilen «ուռչիլ», peul «ընդեղէնների պատիճ», անգլս. pulse «պատճառ ընդեղէն», մգերմ. poll «գլուխ», իսկ bhel- ձևից յիշենք յատկապէս յն. πομ-φόλυξ «պղպջակ», φλυκτίς «բշտիկ» և ռուս. булка «փափուկ ուռած հաց, բուլկի» են։ Հյ. պղպջակ կրկնական է՝ ինչպէս դող-դոջ, բաղ-բոջ և կազմուած է *պուղ- պարզ արմատից, իբր *պուլ-պուջ-ակ >*պլպջակ>պղպջակ (լ դարձած ղ՝ յայտորդ բաղաձայնի պատճառաւ)։ Նոյն արմատի ժառանգներից են հայերէնի մէջ և պալար (հնխ. bl̥- ատորին ձայնդարձից), բողբոջ, բողկ, բող (հնխ. bhel-, bhol- արմատից), նաև գոթ. պլուզ «ուռած՝ դուրս ցցուած (աչքեր)» (որից պլզել, պլոզել, պլզացնել «աչքերը չռել», պլզան «չռած աչքերով»), պլուզ «այծի կղկղանք» (Սեբ.), (որից պլզել «այծի կղկղալ». նմանութեամբ այծու պլուզ «մի տեսակ պտուղ. Թրապուղան խուրմաի= Ննխ. բստան խուրմա»). առաջինի հետ նոյն են սերբ. bùljiti, iz-buljiti «աչքերը չռել, պլզել», bùljo-ok «ուռած աչքերով», չեխ. vy-bouliti «աչքերը պլզել» (Berneker 100), երկրորդի հետ յն. βόλβιτος, βόλιτος «այծի թրիք»։ Առանձին տե՛ս պուց (Pokorny 2, 111 և 176—9, Walde 101, Boisacq 126, 803, 1030, Berneker 100)։—Աճ.

Նշբ լծ. յն. πομφόλυξ *և լտ.* bulla *«պղպջակ» (որոնք ճիշտ համեմատութիւններ են)։ Հինք. փայլ բառից։ Պատահական նմանութիւն ունի ասոր.* ܒܘܓܒܘܓܝܬܐ bagbugītā *«պղպջակ»։*

ԳԻՒ.—*Ջղ.* պրպճել *«մածնի թթուելով պճպճալը»,* փխպուճ *«փափուկ՝ ուռած (հաց)»,* երև. փխպուճ, փխպուջ՝ *նոյն նշ. Դվ.* պխպճալ *«հացի լաւ եփուելով ուռչիլը».—անփոփոխ կրկնութեամբ Եւդ.* բղբղիլ *«օճառի լաւ փրփրիլը»* (<*պուլպուլիլ).—* պողոճ, պղոճ *«միջատ» բառի նմանութեա՞մբ են Մկ.* պօղօճակ *«ջրի պղպջակ», Ալշ.* պօղօջգել *«մարմնի վրայ բշտիկներ դուրս գալ», որի հետ նոյն են Թեհ. Վն.* պօղօճկել, *Ասպ.* պղոճկիլ, *Ասպ. Վն.* օղօճկել *«մարմնի վրայ բշտիկներ դուրս գալ, այրուելով կամ հարուելով կոշտ կապել» են, արմատը* պղոճակ *Բլ. «աշխատելուց յառաջացած կոշտեր»։—Այս բոլորի մէջ կարելի էր պ, բ, փ ձայնների փոխանակութիւնը վերագրել հնխ.* b, bh, ph *ձայներին, բայց աւելի բանաւոր է վերագրել բաղաձայնների յարմարեցման, ինչպէս են նաև խ, ղ և ճ, ջ ձայները։*

ՊՂՎՏԱԿ *կամ* ՊՂՎԻՏԱԿ, *որ և* պլվիտակ *«օշինդր» Բժշ. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2558 և 2570։ Արմատական ձևն է անշուշտ* պղվ-, պլվ *(ձայնաւորը անկայուն), սեռ.* պղվի, պլվի, *բարդուած ատկ բառով։*

Բառիս վրայ մի քննութիւն ունի Նոր բայր ՀԱ 1923, էջ 163։ Տե՛ս նաև աղուիճակ։

—ՊՂՏՈՐ *(յետնաբար ո հլ.) «կեղտոտ, անմաքուր, մրոտ» Ամբակ. բ. 15. որից* պղտորել *ՍԳր. Ագաթ. Բուզ.* պղտորութիւն *Եզն. Ագաթ.* պղտորումն *Փարպ.* պղտորիչ *Յճխ.* կրկնապղտոր *Նար. ևն։*

=*Կազմուած է պիղծ բառի արմատական *պիղտ ձևից՝ -որ մասնիկով. ծ-տ ձայների առնչութեան համար համմտ.* աղտ—աղծեալ, խայտ—խայծ, խաղդ—խաճն *ևն. իսկ -որ մասնիկի համար համմտ.* ճատ-որ, բեկ-որ, *մանաւանդ* աղու-որ։

Նշբ լծ. հյ. պիղծ *ջուր, Թրք.* պուլանըգ, պուլուալու, պուլաշըգ... *ժխորհալ աղտով։ Հինք. նոյն Թրք. ձևերի հետ ուղիղ մեկնութիւնը տուաւ վերի ձևով* Pedersen, *Հայ. դր. լեզ. 110, 144. Նոյնը դարձեալ* Scheftelowitz BB 29, 31: Karst, *Յուշարձան 422 *պիղ արմատից (որից և* պիղծ*), իբր Թրք.* bulanəq, bul-an-maq *«պղտորիլ», չաղաթ.* bol-ga-mak, *ալթայ.* pulga *«խառնել», չուվաշ.* pəl-čik *«տիղմ»։*

ԳԻՒ.—*Ախց. Կր.* պղոօր, *Մկ.* պղոուր, *Ջղ. Սլմ.* պխոոր, *երև.* պխոօր, *Ալշ.* պրղդոր, *Մշ.* պղդոր, բղդոր, *Վն.* բխոոր, *Խրբ. Նախ. Սչ.* բղդօր, *Հմշ. Սեբ.* բղդէօր, *Տփ.* պխոուր, *Տիգ.* բղդուր, *Սվեդ.* բղդիւր, *Ասլ.* բղդէօ՛ր, *Զթ.* բէօղդիւյ, բէօղդիւր, *Գոր. Ղրբ.* պրտէօղ, *Շմ.* պխրտօղ, *Ագլ.* պուռուղ, *Հճ.* բուղդոյ, *Մրղ.* պուխախր, *Ասն.* bəγdərič *«պղտորիչ». բայը Ագլ.* պուռա՛ղիլ *«պղտորիլ»։*

—ՊՂՕՂ *«ձու՝ որ աքլորից բեղմնաւորուած չլինելով՝ ձագ չի հանում» Քիմիաբ. ունի միայն նորայր, Բառ. ֆր. 249 աւ Սրա հետ նոյն է* բղող *Վն. «ապականեալ ձու, որ թուխս դրուելով ձագ չի տալ»։ Երկուսը միասին՝*

=*նոյն են* բոր *«պղտոր» բառի հետ, որ տե՛ս առանձին։—Աճ.*

ՊՃԵՂՆ, ն *հլ. (պեղաճ, -ղամբ, -ղուճք, -ղաճց) «ոտքի կոճը» Տոբ. բ. 3. Ագաթ. Ոսկ. ես. յայնաբար «ոտք» Եփր. Թգ. էջ 408. Կիւրղ. Թգ. գրուած նաև* պեճղ, պեճիղ *և* ո *հլ.* պեղով՝ *Եւս. պտմ. 634. (անսովոր մի ձև է զպեղմամբ Ոսկ. ես. 36). որից* պեղճաւոր *«կճղակաւոր» Ոսկիփ. Յայսմ. մրտ. 22. «մինչև ոտքը հասնող երկար և ծոպաւոր զգեստ» ՍԳր. (գրուած է նաև* պեեղճաւոր*). այս զգեստը յետոյ յատկացուեց կրօնաւորներին և նրա երկարութիւնն համար է որ Բուզ. կրօնաւորներին կաճաճցաճաճղեր է կոչում. (եկեղեցականների զգեստների մասին լուրջ մի յօդուած ունի Ս. Վ. Պարոնեան, Արեւելք 1890, մայ" 19). ըստ այսմ էլ* պեղճաւորիլ *«պճղնաւոր հագնիլ, այն է՝ կրօնաւորական կարգ մտնել» Կանոն. 232։*

Նշբ լծ. Թրք. փաչա *(իմա՛ պրս.* pāča *«փոքրիկ ոտք, տոտիկ», որ նուազականն է* pā, pāy *«ոտք» բառի)։ Հինք. պրս.*

պիւճիւլ, պիւժիւլ «վէգ» (իմա՛ بژول bužūl «ոտքի կոճ», بجل buǰul «վէգ», որից նաև արևել. թրք. بوجول buǰul խաղալու վէգ»։ Նշանակութեամբ նոյն, բայց ձևով տարբեր են. ծագումն ու հընագոյն ձևերը անյայտ)։ Petersson, Ar. u. Arm. Stud. 101 –եղն համարում է մասնիկ, ինչպէս ասեղն, աղեղն, տառեղն, բաղեղն բառերի մէջ։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 96 վրաց. ბრჯალი բրնալի «ոտքի կրունկ»։

ԳԻՒՐ.—Ղղ. Սլմ. Վն. պճեղ, Ախց. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. պճէղ, Տփ. պճիղ, Շմ. պճրղ, Ալշ. Մշ. պչեղ, Զթ. բր՝չեղ, Խրբ. Համշ. Պլ. Ռ. Սեբ. բչէղ, Ննխ. բչէղ, բչղագ, բչըղ, Ասլ. բչէ՝ղ, Սվեդ. Տիգ. բչիղ, Հճ. բոչեղ.—սրանք ստացած են զանազան նշանակութիւններ. այսպէս՝ Խրբ. Ննխ. Տփ. «ոտքի մատ», Երև. Ղրբ. Հճ. Շմ. Սլմ. Վն. «անասունի ոտքի կճղակ», Ախց. Երև. Կր. Խրբ. Ասլ. Սլմ. Պլ. Սվեդ. «սխտորի գլխի իւրաքանչիւր բաժանմունքը», Ղրբ. «կեղև, կճեպ»։ Նոր բառեր են պճղել, պճղուիլ, պճղովի, պճղոտել, պրճղրտել «մէջտեղից երկու ճեղքել» են։

ՊՃԻՆ, ի Հլ. «զարդ, զարդարանք» Շնորհ. տաղ. (ՆՀԲ դրած է սխալմամբ առանց ձայնաւորի պճն, որի փոխարէն ԱԲ ունի պճին). որից պճնել «զարդարել» Նւագր. պճնիլ «զարդարուիլ» Ոսկ. եբր. պճնաճ Ոսկ. կող. պճնապաճոյճ Յհ. կթ. Անան. եկեղ. պճնաւորեալ Կանոն առաք. 329. պճնասէր Առ որս. գեղապճնեալ Նար. կուս. պճնասիրութիւն (նոր բառ) են։

Հիւնք. պճեղն բառից։ Ղափանցեան, Ինստիտ. Տեղեկ. 2, 90 պչրել բայից։

ՊՃԻՒ «քնարի թելերը զարնելը». արմատ առանձին անգործածական, որից պճռել «քնարի թելերը զարնել» ԱԲ. տաւիղապճիռ «քնարի թելերը զարնող» ԱԲ.—բայց ի՞նչպէս կապել սրանց հետ պճռել «յօնքերը վեր վերցնել՝ իբրև նշան մերժման կամ արհամարհանքի» Ոսկ. Հռովմ. 312։

ՊՃՂՆԱՒՈՐ տե՛ս ՊՃԵՂՆ։

*ՊՆԱԿ, ի–ա Հլ. «ափսէ, կերակուր ուտելու աման» Ղկ. ժա. 39. Ոսկ. բ. տիմ. գ. Եփր. ծն. էջ 96 (գրծ. պճակաւ), «գաւաթ, բաժակ» Զքր. սարկ. Բ. 92, որից պճականձև Խոր. պճակալէզ (նոր բառ), որ կազմուած է ճիշտ այնպէս, ինչպէս պրս. كاسه‌ليس kāsa-līs համանիշը։

=ՅՆ. πίναξ (սեռ. πίνακος) «պնակ», πινάκιον «պնակիկ», որից փոխառեալ են նաև ասոր. ܦܝܢܩܐ pīnkā «ափսէ», վրաց. ბინაკი պինակի, ბინაჟი պինաճի, ბინა պինա, ուտ. պինակ «փայտէ պնակ» (Թերևս հայերէնի միջոցով)։ Յոյն բառը ծագում է բուն «փայտ, տախտակ» իմաստից (նիւթից առնելով). համմտ. սանս. pīnākam «գաւազան, լախտ», հսլ. pĭnĭ «ծառի կոճղ», որոնք ցեղակիցներն են յոյն բառի (Boisacq 785)։—Հիւբշ. 373։

Նախ Schröder, Thesaur. 44 դռնակ, որդեակ են բառերի հետ դնում է նուազական –ակ մասնիկով. իսկ էջ 47 յն. πίναξ-ից։ Ուղիղ է մեկնում Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. 154, նոյնպէս և ՆՀԲ, Lag. Gesam. Abhd. էջ 118 ևն։

ԳԻՒՐ.—Ննխ. Սեբ. բճագ, Մշ. պճագ «կաւէ խոր աման, չանախ», Մկ. պճակ «փայտէ լականն».— ունինք նաև Խրբ. բ'նագ, Պլ. փճագ «տախտակի վրայ կպցրած այբուբենն՝ փոքրերին կարդալ սովորեցնելու համար». այս բառերը նոյն են ձևով պճակ բառի հետ, բայց նշանակութեամբ յաջորդ պճակիտ բառի հետ, որ սակայն միևնոյն ծագումն ունի. համմտ. յն. πίναξ «պնակ, աղիւսակ, ցուցակ, գիր գրելու կամ նկարելու տախտակ»։

*ՊՃԱԿԻՏ (ի, ի–ա Հլ. յեռնաբար) «այբուբենն սովորելու տախտակ» Ոսկ. մ. ա. 21. Կող. էջ 570. Նւագր. 174. Փիլ. «Մովսէսի տասնաբանեայ պատուիրանքի տախտակները» Բրս. մրկ. 109. գրուած է նաև բճակիտ Լաստ. ժէ. էջ 76, Յայտմ. ապր. 4։

=ՅՆ. πινακίς (սեռ. πινακίδος), πινακίδιον «այբուբենի տախտակ», որից փոխառեալ է նաև ասոր. ܦܢܩܝܕܬܐ penaqīdtā «տախտակ»։ Յոյն բառի ծագումը տե՛ս պճակ։—Հիւբշ. 373։

ԳԻՒՐ.—Գրականից են փոխառեալ պճակիտ Ննխ, իսկ Սեբ. բճարճիտ։

ՓՈԽ.—Kraelitz—Greifenhorst WZKM 27 (1913), 131 հայերէնից փոխառեալ է

դնում թրք. بنكيدى binegid *«խմորի տաշտ» (ըստ* Zenker*), որ և գիտէ* Будаговъ, Срав. слов. 1, 320 *նոյն նշանակութեամբ, բայց* پنكيدى penegid *ձևով։—Այբուբենի տախտակից ի՞նչպէս կարող է «խմորի տաշտ» դուրս գալ։*

ՊՆԳԵԼ *«հրամայել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սմբ. դատ. 202 մէկ ձեռագրի մէջ. ուր բնագիրն ունի «Ասուած է հրամայել», այդ ձեռագիրն ունի պրնգել է։*

***ՊՆԴԵՂ** *«կաղին». ունի միայն Բռ. երեմ. էջ 272։*

=Արաբ. بندق bunbuq *«կաղին» բառից. բուն աղբիւրն է յն.* πόντος *«ծով». այս բառով հասկացւում էր յատկապէս Եւքսինեան Պոնտոսը, որ է Սև ծով, և նրա հարաւում տարածուած երկիրը. կաղինը այս երկրի գլխաւոր բերքը լինելով՝ կոչուեցաւ* κάρυα Ποντικά *«Պոնտական կաղին» կամ աւելի յատկանշաբար՝* δένδρεον Ποντικόν *«Պոնտական ծառ, որ է կաղինի ծառը»։ Սրանից յառաջացան փոխառութեամբ լտ.* pontica, *պհլ.* pndk, *ասոր.* pendəqā, *արաբ.* بندق bunduq, *թրք.* fəndəq *ևն։ Այս բառն է որ այժմ եղած է գուռ պնտուկ «կաղին», որ յիշում է* Rivola, *Բառ. Հայոց*[2] *պնդուկ ձևով, որից էլ դնում է պնդենի «կաղինի ծառ», պնդենոց «կաղինի ծառերի պարտէզ» (երկուսն էլ առանց ղ ձայնի)։—Անսովոր չէ լեզուների մէջ պտուղը կոչել երկրի անունով. լաւագոյն օրինակը տալիս է սրա համար դեղձը, որ կոչւում է լտ.* persicum *(սրանից ֆրանս.* pêche*),* рус. персикъ, *արաբ.* فرسك firsik *(Իբն-ի-Բատուտա Ա. էջ 359), իբր «Պարսկական պտուղ»։—Աճ.*

ՊՆԿԻՓԱՆ *«տակ ունեցող մի բոյս» Բժշ. ունի միայն Հռուս. § 3390։*

ՊՆՋԱՆ *«տակառի շրջանակ կամ գօտի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. ճծթ. «Այլ և կազմին փայտեայ անօթ իբրև զկարաս, ճոթճոթ յիրեար ձգած և փայտեայ պրնջանով պրնդած, որ ինչ ի ներս լնուն՝ պահէ։ Այսպէս զսիրտս մեր պնդեսցուք տասն գօտով»։—Արդեօք պէտք էր կարդալ* պնդան *«պինդ պահող»?*

ՊՆՏՈՒԽ. *անծանօթ մի բոյս է. Բժշ. ունի միայն Հռուս. § 2571։*

ՊՇԼԻԼ *«յիմարանալ, շուարիլ, այլայլիլ». ունին միայն Բառ. երեմ. էջ 272 և ՓԲ։*

Թւում է թէ շփոթուած է *բլշիլ ձևից, որ է բլշանալ «աչքը տկարանալ, մթագնիլ» ևն (տե՛ս այս բառը)։*

Պշնուլ
Պշրիլ } *տե՛ս Պիշ։*

***ՊՈՊԻՐԻ** *«պճղնաւոր, մինչև ոտքերը իջնող երկար հագուստ» Դամասկ. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. ποδήρης *«պճղնաւոր», որից նաև հայ.* podirī *նոյն նշ. ծագում է* πούς, ποδός *«ոտք» բառից։—Հիւբշ. 373։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՊՈՋ *«եղջիւր, կոտոշ». արմատ առանձին անգործածական, որից* կոապոզ *«ծուռ եղջիւրներով» Մագ. թղ. էջ 87 (չունի ՆՀԲ) և յգ.* պոզան *«եղջիւրներ» Փիլ. լիւս. 136 (որ ՆՀԲ կարդում կամ հասկանում է* պոչ*)։*

ՆՀԲ նոյն ընդ թրք. پوينوز buynuz *«եղջիւր», որի ցեղակիցներն են ըստ* Будаговъ *2, 266 չաղաթ.* müğüz, *Կազանի թթր. և կիրղիզ.* مويز müyüz, *ալթայ.* müüs *և սիբերական թթր.* پووس püüs (?)*, որ շատ համապատասխան է գալիս մեր բառին. սակայն կարո՞ղ է այսքան հին մի բառ (չհաշուելով կասկածելին Փիլ. լիւս., Մագ. ԺԱ դարու առաջին կէսից) թուրքականից փոխառեալ լինել։*

ԳԻՒ.—Երև. Ղրբ. Շմ. պօզ, *Տփ.* պուզ, *Ջղ.* պոզդ, *Ագլ.* պուզտ, *որոնք նշանակում են «կոտոշ, եղջիւր»։ Նո՞յն է նաև Մշ.* պօզ *«ջրամանի թորակը, տճկ. խպիկ», որ ունին դարձեալ Երև. Կ. Մրղ. Վն.։ Նոր բառեր են* անպոզ, պոզաճարել, պոզանի, պոզատ, պոզատուր, պոզապտուկ: *Իսկ* պոզ *«ամանի թորակ» բառից* պոզկալ, պոզել *«ջրամանի թորակից ջուր լցնել. փիսր. մէզը ուժեղ գալով՝ շատրուանաձև խփել. յայնաբար՝ միզել», որից և* պոզ *«մէզ»։—Վերջին խումբը սակայն (*պօզ *«ջրամանի թորակ» են) աւելի*

հաւանական եմ համարում փոխառեալ դնել քրդ. پۆز poz «քիթ» *բառից, որի ցեղակիցներն են պրս.* پۆز pūz «շուրջանակ բերանոյ, և մերթ պարզապէս՝ բերան կենդանեաց» (ԳԴ), *կամ* «Partie um die Nase» (Horn § 335), *բելուճ.* pōz *կամ* pōñz, *աֆղան.* pōza, paza, *մինջ.* foska, *օսս.* finje «քիթ», *որոնց* Horn *միացնում է նաև հյ.* պինչ: *Կարծիքիս սոսւգութեան ապացոյց է Մշ.* պօզ *ձևի օ ձայնը, որ պիտի լինէր* ո, *եթէ* պոզ «եղջիւր» *բառի հետ նոյն լինէր:*

*[*ՊՈՋՏԵԼ *«յօնքերը պռաստել՝ իբրև նշան զոռոզութեան». մէկ անգամ գործածուած է հետևեալ վկայութեան մէջ. «կայր գյօնսն պոզտեալ՝ փքացեալ... կոկոզաբանէր ի վերայ մեծամեծ գործոցն գործելոց». ունի միայն ՀԲ՝ իբր անստոյգ բառ. գրուած է նաև պոզտել, որից երևում է որ սխալ դրչութիւն է և պէտք է կարդալ պռաստել:]*

ՊՈԹՈՐ *«սեղան». ունի միայն Բառ. երեմ. էջ 272:*

+ՊՈԼՈԿԵԼ *«սկրթել, քերթել հանել, կեղեքել». իբր մհյ բառ ունի Նորայր, Բառ. ֆրանս. 436 ա* (écorcher *բառի տակ): Կենդանի է երև. Ղրբ. Շմ. Ջղ. Տփ.* պլոկել *ձևով և «վաշին՝ կեղևը՝ մորթը քերթել. 2. փխբ. ունեցած չունեցածը կողոպտել» նշանակութեամբ: (Իմաստի զարգացման համար համմտ. Թրք.* صومق soy-maq *«քերթել. 2. կողոպտել», չեխ.* loupati, *լեհ.* łupić, *լիթ.* láupit *«սկրթել. 2. կողոպտել» են): Պլոկել բայը գիտէ նաև Բռ. երեմ. էջ 205, ուր կայ նաև* պլոկ *արմատը՝ «մաշկ» իմաստով, մինչդեռ* Rivola *ունի* պլոկ *«տկլոզ, մերկ, մերկացուած»: Նոյնը ունինք* պլկել *(փխ.* պլոկել*) ձևով էլ, որից ՆԲ.* պլկոռել *«վէրքի վրայ կապած փաթը քերել պոկել»: Այս բոլորը շրջուած ձևեր են՝ փոխանակ* լոպկել, լպոկել, լպկել, *որոնք գործածական են այժմ ուրիշ բարբառներում՝ «վաշին քերթել հանել, կողոպտել են» նշանակութիւններով. կայ նաև* լողպել: *Սրանցից էլ* լոպկուկ *«փետրաթափ (հաւ)»,* լողպռտել *«կողոպտել»,* լպուկ *«լերկ, անմազ. փխբ. չքաւոր, անկուտիճ»:*

=Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ. lob- *«կեղևուել, վրայի կեղևը կամ վաշին քերթիլ հանել. 2. կողոպտել» արմատից: Այս արմատը աւանդուած է մեզ երկու կերպարանքով.* 1) lep-, lup, leup, 2) leub-, lub-, lōub-: *Առաջինի ժառանգներից են յն.* λέπω *«կեղևել»,* λέπος *«խաղողի կեղև»,* λεπίς *«կըճեպ»,* λέπρα *«բորոտութիւն»,* λοπός *«պտուղների ստակած կեղևանք», լիթ.* lupù, lùpti *«կեղևել, կճպել»,* lupinaĩ *«պտղի կեղևանք»,* lãpas *«տերև»,* ablaupýti *«ունեցածը ամբողջովին կողոպտել, պլոկել», լեթթ.* lùpu, lupt *«կճպել, կեղևել, գողանալ»,* làupu *«կեղևել, տերևները պոկել, գողանալ, կողոպտել»,* lupis *«աւազակ», հսլ.* lupiti>*բուլգար.* lupja *«կեղևել», չեխ.* loupiti *«կեղևը հանել, վաշին պլոկել, կողոպտել, թալանել», լեհ.* łupić *«կեղևը հանել, ունեցածը պլոկել», ռուս.* лупить *«կեղևել»,* лупёжъ *«գողութիւն, աւազակութիւն», ևն: Երկրորդի ժառանգներից յիշատակելի են հսլ.* lubĭnū *«ծառի կեղևներից շինուած», սերբ. սլով.* lûb, *լեհ.* łub, *ռուս.* лубъ *«կեղև»,* лубочка *«կողով (ծառի կեղևներից շինուած)», լիթ.* lūbas *«ծառի կեղև»,* lubà *«տախտակ», լեթթ.* luôbu *«կեղևել», հրգ.* loub, *գերմ.* Laub, *հհիւս.* lauf, *անգլ.* leaf *«տերև», հպրուս.* lubbo *«տախտակ», ալբան.* l'abε *«կեղև», լտ.* liber *(հին ձևը* luber*) «ծառի փայտի և կեղևի միջև գտնուած մաշկը. 2. այդ մաշկի վրայ գրուած բան, գրութիւն. 3. գիրք» են* (Pokorny 2, 417—419, Boisacq 591, 569, Trautm. 164, 150, Walde 425, Berneker 741, 746): *Նշանակութեան կողմից լիովին համապատասխանում է մեր բառին ռուս.* лупить, *որ է «կեղևները հանել, փխբ. կեղեքել, քերթել, պէտք եղած գնից աւելին պահանջել, սաստիկ թանկ վաճառել, կողոպտել, յափշտակել», որոնք ճիշտ* պլոկել *բայի նշանակութիւններն են միանգամայն: Երկրորդ ձևի մէջ կարելի չէ եղած որոշել թէ արմատի վերջաձայնը նախալեզուում* b *էր թէ* bh, *որովհետև բալթիկ-սլաւական և այլ լեզուներ երկուսն էլ վերածում են* b.—*Հայերէնի պ ձայնը ցոյց է տալիս հնխ.* b. *(բուն այսմ* Pokorny 2, 417 leub(h?) *ձևը պէտք է ուղղել* leub-, *և էջ 418 դերմանական ձևերի*

մասին եղած տարակուսանքները փարատել)։—Ա՛ճ.

*ՊՈԼՈՃ «միջատ, ճճի». նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ գործածուած Լծ. սահմ. 260. «Եւ այս առաքինութիւնքս են պատուականք, որք ջանիւ և ուսմամբ լինին, քան որք բնական լինին ողջախոհք. որպէս պօղճքն. զի այս անսպառճառ ողջախոհ է և ո՛չ կրթութեամբ, այլ ի ցուրտ խառնուածոյ»։ Գործածական է արդի բարբառներում պոլոճ, պլոճ, պողոճ, պղոճ, բոլոճ, բլոճ, բողոճ, բղոճ և բոլոնճ ձևերով. բայց նաև առանց վերջաձայն ճ-ի պլօ, պոլօ, բոլօ, ինչպէս և բորող (վերջինս Գնձ. ըստ Ազգ. հանդ. Ջ. 285). բոլորն էլ նշանակում են «միջատ»։ Ստացել է «երևակայական էակ, ուրուական, երեխաներին վախեցնելու էակ, ճիւաղ» նշանակութիւնը և այս նշանակութեամբ գործածւում է բոլօ, բոլոլաճ, բոբոլ, բոբօ, բողոլա, բոբոխ ձևերով (այս նշանակութեան զարգացման համար տե՛ս վերը ժժմակ բառի տակ)։

=Կովկասեան փոխառութիւն պէտք է լինի. հմմտ. վրաց. ბობოლი բոբոլի «մեծ որդ», լազ. boboli «միջատ»։ Այս բոլորի համեմատութիւնից երևում է որ արմատն է bol= հյ. բոլ, որից կրկնութեամբ վրացին և լազը. հայերէնի մէջ պարզ ձևն է բոլո, բ>պ ձայնաշրջութեամբ՝ պոլո, լ>ղ սովորական ձայնափոխութեամբ՝ պողո, բողո, և մասնիկի յաւելումով (հմմտ. ճատիճ, ուտիճ)՝ բոլոճ պոլոճ, բողոճ և առաջին ձայնաւորի անկումով՝ բլոճ, պլոճ, պլո ևն։ վերջապէս բորող կրկնական է՝ ճշտիւ համապատասխան վրաց. և լազ. ձևերին։—Ա՛ճ.

Այս համեմատութիւնս տե՛ս իմ Գւո. բառ.[1] էջ 201 աւ։

ՊՈԼՏՐՈՆ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. էջ 63. Պատարագ էին... պարուէզ ծաղկալից, պոլտրոն գեղեցիկ։

Անշուշտ յունարէն բառ է. կարող է լինել πολτάριον «մի տեսակ խմորիղէն» և կամ աւելի հաւանարար πωλάριον «մատաղ ձի». վերջին պարագային տ ուղղելով ա՝ պէտք է կարդալ պոլարիոն։

Պոկ տե՛ս Պուկ։

ՊՈՂ «կայծ, կրակ». արմատ որ առանձին չէ աւանդուած հին գրականութեան մէջ, բայց պահուած է գաւառականում. որից պողփայլ «հրավայլ» Աղթամ. (հրտր. Կոստ. էջ 126), կայծապող՝ իբրև համապատասխան յն. στιγμή «կայծ» բառին՝ Աբեղկիոս ՀԱ 1900, էջ 309, տող 11։

ԳԻՒՌ.—Ղրբ. Ղրդ. Շամ. պող «կարմիր կրակ կտրած ածուխ, կրակի կտոր», որից կրծրպո՛ւռուն (<կայծապողուն) «կրակ կըտրած, հրավառ»։ Նո՞ւնն է ուս. պիլ «հրավառ ածուխ, պող»։

ՊՈՂԵԼ «ցրուել, վանել, փախցնել» Բ. մկ. ժբ. 22. որ և պուղել Խոր. բ. 63, 82=Ասող. բ. ա. պարզ արմատը պող, որից երկնապող «ցածրից վերև նետուած» Սիր. իէ. 28. Վրդն. ծն. սխալ գրուած երկնապողող Վեցօր. էջ 70 (տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. 58)։

ՆՀԲ լծ. լտ. pello, pepuli «պարնել, վանել, փախցնել»։

ԳԻՒՌ.—Այստե՞ղ են պատկանում պողել Սվ. «հողի երեսից փորել. 2. Սվ. զոհել, մաքրել. 3. Ակն. տանիքից ձիւնը թիով ցած թափել. 4. Կր. երկար ձողի ծայրին մի շոր կապելով՝ առաստաղը մաքրել»։

*ՊՈՂԻՊՈՂ, ՊՈՂԻՊՈՂԷՍ «ծովային բազմոտանի մի կենդանի. βρχ. ἐχινόπους» Վեցօր. 140 (ձեռ. պիղիպողոմ), 144 գրուած է նաև պօղիպողէս, որ սխալ է օ-ի պատճառուս։

=ՅՆ. πολύπους, սեռ. πολύποδος, յգ. πολύποδες նոյն նշ. կազմուած է πολύ «շատ» և πούς «ոտք» բառերից. բուն նշանակութիւնն է «բազմոտանի». սրանից են փոխառեալ նաև լտ. polypus, ֆրանս. polype, գերմ. Polyp ևն։—Հիւբշ. 373։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՊՈՂՈՍԱԿ «առաքեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 272։

ՊՈՂՈՍԱԿ «մամուլի սեղմիչ պտուտակը կամ անիւը» Ստ. լեհ. (վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 250 բ clef բառի տակ). որ և պողոսիկ Առաք. լծ. սահմ. 316 (Քեղին՝ որպէս պողոսիկ բարձր գերանն է ցից ի մէջ

նաւին). որից պողոսկապնդիչ «պողոսակով պնդող՝ սեղմող» Տաղ. (Հրտր. ի Վկ. գէ. էջ 72), պողոսկածև (չունի ԱԲ) «խղնջածև, պտուտակածև» (ականջի արտաքին ձևի համար ասուած) Տաթև. ձմ. լէ։

ԳԻՒ.—Նբ. Մշ. պօղօսակ, Ալշ. պօղօսագ, Շիր. պօղօսիկ «մամուլի փայտեայ հաստ պտուտակը», որից Տփ. պօղօսկապան «պողոսակ շինող»։

*ՊՈՂՈՎԱՏ «մխած երկաթ, պողպատ» Մագ. «պողպատից շինուած» Տօնակ. Ուտհ. «պողպատէ սուր» Ուտհ. գրուած է նաև պողոպատ Մխսր. եր. փողովպատ Սուտ-Շնորհ. 19. նոր գրականի մէջ ընդունուած է միայն պողպատ: Սրանից են պողովատատաշ Ասող. պողովատիկ Իմ. ժզ. 16. Ջքր. բ. 13. Ագաթ. Բուզ. պողպատեայ (նոր բառ)։

=ՊՀլ. *pōlavāt կամ *pōlāpat ձևից (առանդուած է pūlāfat ձևը). որից պՀլ. pōlāpatēn կամ pōlāfaten «պողպատեայ», պրս. پولاد pōlād «պողպատ», որից էլ փոխառութեամբ ասոր. פלדה pulad, եբր. pəlāδā, արաբ. فولاذ fūlāδ, աֆղան. pōlād, քիւրմ. polād, pūlāt, օսս. bulat', քրդ. pulad, pola, pila, վրաց. ფოლადი փոլադի, Բուշ. ფოლად փոլադ, միջ. հյ. փոլատ, չհէն. buōlat', ռուս. (Թուրքերէնի միջոցով) булатъ, հչխս. bulát, լհհ. bułat, կարակաս. mōlat, բոլորն էլ «պողպատ», հաքուդ. bolot «Թուր» (Berneker 100) ևն։—Հիւրշ. էջ 231։

Պրս. բառի հետ համեմատեցին Klaproth, As. polygl. էջ 105, Böttich. ZDMG 1850, 367, Lag. Urgesch. 813, Ges. Abhd. 75, Justi, Dict. Kurde 84. վերջինը նաև քրդ. և պՀլ. ձևերը։ Հիւնք. յն. πλατῦς «պողոտայ» և պրս. բուլատ: —ՊՀլ. բառիս ծագումը և առուգաբանութիւնը յայտնի չէ. Müller WZKM 5, 186 համարում է յունարէնից փոխառեալ՝ իբր πολύπαταξ «շատահնչիւն», բայց այս մեկնութիւնը չէ ընդունուած (Horn § 340):

ԳԻՒ.—Գոր. Ղրբ. պո՛ղվատ, Սլմ. պողվատ, պողատ, Մկ. վն. պողպատ, Ալշ. Մշ. պողբադ, Սեբ. բողբադ, Տիգ. բողբոդ, Ջղ. պոխպատ, Երև. պօխպատ, Մրղ. պողղատ, իսկ Ագլ. նոր փոխառութեամբ՝ փօ՛լաթ: Այս բոլորը յանգում են 4 ձևի, այն է՝ պողվատ, պողպատ, պողղատ, պողատ. առաջինը ներկայացնում է պՀլ. pōlavāt, երկրորդը՝ պՀլ. pōlāpat, երրորդը յառաջանում է ղ և վ ձայների համանմանութեամբ, իսկ չորրորդը (պողատ) ո՛չ թէ նախորդների ինչ որ աղաւաղեալ ձևն է, այլ յառաջանում է պրս. پولاد pōlād ձևից մի քիչ աւելի հին *pōlāt ձևից։

*ՊՈՂՈՏԱՅ, ի հլ. «հրապարակ, քաղաքամէջ, լայն ճամբայ» Ագաթ. Բուզ. էջ 16 (յգ. սեռ. պողոտայից). Ոսկ. ես. 248. Սեբ. 23. Շնորհ. ընդհ. գրուած նաև պաղատայ 3հ. կթ. պողոտ ՋՔ և ԱԲ։

=Ասոր. ܦܠܛܝܐ plāṭīā «հրապարակ, հասարակաց փողոց», որ իր հերթին փոխառեալ է յն. πλατεῖα հոմանիշից։ Այս բառը πλατύς բառի իգականն է. նշանակում է «լայն ու հարթ» (ցեղակից հյ. լայն բառին, որ տե՛ս) և առնուելով ὁδός (իգ.) «ճամբայ» բառի հետ՝ πλατεῖα ὁδός «լայն ու հարթ ճամբայ», որից գոյականաբար πλατεῖα «մեծ փողոց»։ Սրանից է փոխառեալ նաև լտ. platea և սրա միջոցով էլ գոթ. plaθja, հոլլ. plaats, գերմ. Platz, անգլ. ֆրանս. place, իտալ. piazza «հրապարակ» (Kluge 373), որից վերջապէս թրք. piasa «դրամական կուրս», ռմկ. Պլ. փիացա «գրօսանք, շրջագայութիւն. 2. դրամական կուրս»։ Ըստ այսմ հայերէնի լայն, պողոտայ և փիացա բառերը, որոնք՝ իմաստով իրարից շատ տարբեր, արտաքին նմանութեան ո՛չ մի կէտ էլ չունին, ծագմամբ և ձևով միևնոյնն են։—Հիւրշ. 315։

ՆշՔ յն. լտ. իտալ. ձևերը։ Peterm. 17 լտ. platea բառից է հանում։ Lag. Arm. St. § 1892 դնում է ասորուց։ Այսպէս նաև Müller WZKM 8, 284, Թրգմ. ՀԱ 1894, էջ 294, ասելով Թէ յունարէնից լինելու դէպքում պիտի ունենայինք *պողոտի, ինչպէս ունինք եկեղեցի:—Հիւնք. յունարէնից։ Հիւրշ. 315 -այ վերջաւորութեան պատճառաւ դնում է ասորուց, բայց կարծում է Թէ կարելի է նաև դնել յունարէնից։

*ՊՈՄՊԻԼՈՍ «մի տեսակ ձուկ» Փիլ. լիւս. էջ 155. ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. πομπίλος «մի տեսակ ձուկ է, որ իբր թէ նաւերի առաջն ընկնելով ճանապարհ է ցոյց տալիս. ֆր. pilote»։—Հիւրշ. 373։ Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՊՈՅՏՆ, ն հլ. (պուտան, -տունք, -տանց) «պտուկ, հողէ աման» ՍԳր. Եփր. Քգ. 359. որից պուտնաւոր «մեծ կաթսայ» ՍԳր. գրուած նաև բոյտն Ագաթ. յետնաբար պոյտ Միր. (նոր) ժգ. 3. Վրք. հց. որից պուտուկ Ագաթ. Եւագր. Վրք. հց. Յայտմ. պիտուկ Բժշ. պըտուկ Վրք. հց. Վստկ. պտեկ «փոքր փարչ» ԱԲ. որ և պտեակ Նիւս. մեկն. Հայր մերի (ըստ Հացունի, ճաշեր էջ 77)։ Անշուշտ այստեղ է պատկանում նաև պոտիճ «պտուկ» Դրնդ. 502, որ գտնում է նաև արդի գաւառականներում. ինչպէս են Սվ. «լայն բերանով փոքր կուժ», Համշ. «ջրի փոքրիկ տակառ փայտեայ»։

ՆՀԲ յծ. Թրք. pota «հալոց»։ Հիւնք. պրս. bat «կուռք»։ Müller, Armen. IV լիթ. pùdas «պտուկ» բառի հետ՝ իբրև բնիկ հայ։ Karolides, Γλ. σσγχρ 79 դնում է կապադովկ. vutókko, votókko «դոյլ» բառից, իսկ այս էլ աղաւաղուած է համարում բիւզ. ἐμπότης բառից (Sophocles 457 չունի այսպիսի ձև. դիտէ միայն ἔμποτος, որ է «խմելու չարմար»։ Karolides կպդվկ. vutókko ձևի հետ համեմատում է հյ. պուտուկ. բայց հյ. պուտուկ ծագում է պոյտն արմատից (-ուկ նուազական մասնիկ է). և եթէ մին կամ միւսը փոխառեալ է, բնդհակառակը կապադովկացին պիտի փոխառեալ լինի հայերէնից, քան որում արմատը վեր ջինիս մօտ է միայն գտնում)։ Scheftelowitz BB 29, 40 շվէդ. put «ուռկըր», իսլ. púss «քսակ», սանս. bud-buda «պղպջակ» բառերի հետ, որոնց բոլորի արմատն է համարում հնխ. bud- «ուռիլ, ուռչիլ»։ Petersson KZ 47 (1916). 254 հայերէնին է կցում հհիւս. pottr «հողէ աման կերակուր եփելու համար», մ. հիւս. գերմ. pot, անգսք. pott. մ. անգլ. ֆրիզ. pot «պտուկ», որոնց նախաձևը դնում է *bud-nó-, մինչդեռ հայը՝ beud-no- կամ boud-no-։ Այս մեկնութիւնը ընդունում է Pokorny 2, 116, հնխ. bu, bhu «ուռչիլ» արմատի տակ՝ d ածականով։ — Յիշեալ գերմանական բառերը, որոնց հետ նոյն են նաև հոլլ. pot, շվէդ. potta, դան. potte և թևրևս լիթ. pùdas, լիթթ. pods «պտուկ», յատուկ չեն միայն նոյն ընտանիքին, այլ դանուում են նաև ռոմանական ընտանիքում. ինչ. ֆր. pot «պտուկ»։ Kluge 376 ցոյց է տալիս որ բոլորի աղբիւրն է մ. լատ. pottus, ստ. լտ. pôtus «ըմպանակ, ջրաման» (շուրջ 600 թուից), որ է լտ. pōtus «ըմպելիք, խմելիք»։ Այստեղից յառաջացել է ֆր. pot, որ փոխառութեամբ տուել է (1200—1300 թուերին) մի կողմից գերմանական ձևերը և միւս կողմից կելտական ձևերը, այն է բրբտ. կորն. կիմր. pot։ Աւելի ուշ՝ գերմանական խմբից է փոխառեալ ֆիննն. pata, օստյաք. put, püt, վօգուլ. pöt «պտուկ» խումբը։ Գերմանական խումբը բնիկ համարելու համար պէտք էր նախ ապացուցանել թէ ֆրանս. բառը փոխառութիւն է գերմանականից։ Ըստ այմ գերմանական բառերի նմանութիւնը հայերէնի հետ պատահական է, ինչպէս են նաև իսլ. biða, նորվ. գւս. bidne, լտ. fidelia, յն. πίθος «հողէ աման», որոնք միասին հանւում են հնխ. bhidh- արմատից (Pokorny 2, 185, Boisacq 782, Walde 288)։

ԳԻՒ.—Ախց. կր. Մկ. վն. պուտուկ, Սլմ. պտուկ, Ալշ. Մշ. պուդուգ, Խրբ. Պլ. Ռ. բուդուգ, Տիգ. բուդդուգ, Սեբ. Սչ. բդուգ, Ասլ. բդիւգ, Մրզ. պտիկ[1], Հճ. բտդուգ, Զթ. բօդուգ։ Նոր բառեր են պտուկկոտրուկ, պտուկկոտրող, պտկիկոտրիչ, պտկումայր, պտուկճերիչ, պտկակ։—Համաձայն ածանցման օրէնքներին գրբ. պոյտն արմատից ստացուած է պուտուկ, որին համապատասխան են գաւառականներից շատերը։ Արեւմտեան գրականում՝ պտուդ>ուկ. պուտուդ են ձևերի օրինակով կարծուելով թէ պուտուկ ձևը ռամիկ է, սխալմամբ առաւելութիւն է տրուած պտուկ բառին, որ յետին ազեալ ձև է։

ՊՈՅՐ (գրուած նաև պուր) «գլուխ». այս

պէս՝ «ձիու գլուխ» Կղնկտ. Հրտր. էմ. էջ 47, 51. «հկեղեցու գմբեթի գլուխը» Կղնկտ. 71. որից բոլորապոյր «կլոր գլխով (գմբեթ)» Օրբել. էջ 250. պուրակ «գմբեթ» Կղնկտ. էջ 172։

Նորագիւտ բառս գոյաւ ու մեկնեց Ա. Ճաո. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 31—34։ Պատմահայկան նամանուիին ունին բասկ. buru «գլուխ» և ուտ. bul «գլուխ»։

ՊՈՉ (յետնաբար n հլ.) «ագի» Յայտմ. փիլբ. «առնանդամ» Փիլ. լին. 219 (նշանակութեան զարգացման համար համմտ. չադաթ. kotak «պոչ և առնի»). որից **պոչաւոր, անպոչ, պոչատ, պոչազգեստ** (նոր բառեր)։

Böttich. ZDMG 1850, 361, Arica 73, 187, Lag. Urgesch. 968 սանս. puччha «պոչ»։ Justi, Zendsp. 191 և Kürd. Gram. 31 սանս. puччha «պոչ», զնդ. pusa «պատկ», պրս. buš «բաշ»։ Պատկ. Изслед. 18 սանս. puччha և քրդ. bōt։ Justi, Dict. Kurde 58 սանս. puччha, քրդ. bezu, bisk: Müller, Armen. VI յն. πόσθη, πέος «առնիթ», πόσθων «մեծանդամ», լատ. penis, սանս. pasas, puччha, լիթ. pyzda «բունոց» բառերի հետ, իբր բնիկ հայ՝ հնխ. pas-ka ձևից։ Թիրեաքեան, Բազմավէպ 1913, 342 ցեղակից է դնում Թրք. փօշ, փէօշ ձևին։ Մատ Яз. и Лит. I. էջ 274 ռուս. хвост հոմանիշի հետ նոյն։—Պատմահայկան նամանուիին ունի սանս. puччha «պոչ», որ Walde 625 լտ. puppis «նաւի ցոուկ», յն. πύματος «վերջին», πύννος «սրբան» ևն բառերի հետ դնում է հնխ. pu- «յետևը» արմատից (չի յիշում այլևս Pokorny 1, 48), որ յամենայն դէպս չպիտի տար հյ. նախաձայն պ։

ԳԻՒ.—Ագչ. Մշ. Ջղ. վն. պոշ, Ախց. Երև. կր. պօշ, Խրբ. Նոխ. Պլ. Ռ. Տիգ. բօշ, Մկ. Տփ. պուշ, Սլմ. պուէշ, Մրզ. պրի՛շ, պրէշ, Հմշ. Սեբ. բէօշ.—այս բոլորը նշանակում են «ագի».—նշանակութեան զարգացմամբ Ղրբ. Շմ. պօշ (յոգնակի պօ՛շէր ձևով) «ճակատի երկու կողքից կախ ձգուած ծամեր»։ Նոր բառեր են պոշուկ, պոշիկ, պոշակտուր, պոշկտուկ, պոշատակ։

ՓՈԽ.—Վրաց. ბოჩი պոչի «եղչերուի, այծի ևն պոչ», Թրք. գւռ. կր. poč «պոչ», počik «պոչիկ» (Բիւր. 1898, 627), Ատն. pöč «պոչ, այծի պոչի միսր» (Արևելք 1888 նոյ. 8—9), Ււդ. pöč, pöčük (Բիւր. 1899, 314, Յուշարձան 329), կս. poč «պոչ» (օր. qoyunun poču «ոչխարի պոչը»), poč kemiyi «պոչի ոսկոր» (Բիւր. 1898, 712), Ակն. boćig «ոզնաշարի ծայրի ոսկորը» (այսպէս նաև հյ. գւռ. Ակն. և Նբ.).—Էնկիւրիի Թուրքաց, ինչպէս նաև Թրքախօս հայոց և յունաց բարբառով՝ poč «պոչ» (Բիւր. 1898, 789), S. pöč «պոչ» (Բիւր. 1899, 799), չևրեմիս poč «պոչ» (Patrubány SA 1, 202—3), քրդ. bōč «պոչ», počik «հրացանի կոթ» (Justi, Dict. Kurde 58, 83). Համմտ. նաև Erckert, Die Spr. d. Kauk. St. էջ 311 արչ. oč «պոչ» (նիէ սխալ գրուած չէ)։

₀**ՊՈՉ** «արջառի ձայն». որից **պոչիւն** «բառաչիւն» Կոչ. 98. **պոչուն** «բառաչող (եզ)» Ա.Բ։

=Բնաձայն բառ, որ գալիս է պ պարզ ձայնից՝ չ ածանցով. արմատի համար համմտ. պնչել, պոռոչել, պռռալ, պապաչել, իսկ ձևի համար համմտ. գոչել, կոչել։—Ա.Ճ.

Հիմնք. բառաչ բայից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ. 1899, էջ 203 բ։

ՊՈՊՉԱԿ կամ նաև պոպզար, պոպղակ, պոկղակ, պոպպղակ, կոպզար (ըստ այսմ անորոշ ձևով) «մի տեսակ բոյս» (hypericum բստ ՆՀԲ և ՋԲ, hieropteris բստ ՀԲուս. § 2580, hypericum androsaemum Z, որ և արեւոտիկ, գռնատորուս՝ բստ Տիրացուեան, Contributo § 134, ֆր. hypéricon, millepertuis բստ Նորայր, Բառ. ֆր. 811 բ. վերջին երկուսն էլ ընդունում են միայն պոպղակ ձևը) Գաղիան։

Ա.Բ (պոպզակ, պոպզար ձևով) համարում է յն.։ Bailly-ի բառարանում չգըտայ համապատասխան մի բառ π, β նախաձայնով և ο, ω ձայնաւորով։

—**ՊՈՊՈՒ** «ընկոյզի կանաչ կեղև» Բժշ. Առ՝ զընկուզին զպոպոկն... ծեծէ և զջուրն քամէ (այս վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ.

ֆրանս. brou *բառի տակ*). *գաւառականներում ստացել է «ընկոյզ» նշանակութիւնը, որի հնագոյն յիշատակութիւնն ունի Բառ. հրեմ. էջ 112. որից* պոպոկել *«ընկոյզի կանաչ կեղևը հանել» (Նորայր, Բառ. ֆրանս.* écaler), *«պլոկել, կողոպտել» (անգ.* écorcher *բառի տակ),* պոպկել *«կեղևել, կճպել»* (Rivola² 320), պոպկել *Ագթ. Ալշ. Ախց. «փետել, պլոկել, քերթել (հաւի փետուր, մորթ, կաշի ևն)», Ախթ. «կողոպտել, թալանել»,* պոպկած *խոջ. «աներես, անամօթ, լիրբ» (իմաստի զարգացման համար համմտ.* ակրած *պլ. «պլոկած, կաշին հանած. 2. անամօթ»)։ Այս բոլորը ցոյց են տալիս որ* պոպոկ *բառի նախնական իմաստն է «կեղև» և թէ՝* պոպոկ

=կրկնուած է պոկ *արմատից, որ գործածական է գաւառականում «ծիլ, զոխ, ընձիւղ» իմաստով. այսպէս* պոկ *ՀԹ. Սեբ. «սոխի ծիլ», Բն. «ուռիի ճիւղը մաշկելով շինուած սուլիչ»,—Ավետ. բիւ «սոխի ծիլ» (դժբախտաբար զուգադիպուած է* պուկ *«փող, շնփոր» բառի հետ և յաճախ յայտնի չէ թէ գաւառական այսինչ ձևը երկուսից որի՞ն է պատկանում. տե՛ս* պուկ)։ *Նոյնից կրկնաբար* պոպոկ *Խրբ. «ծիլ, զոխ՝ սոխի, ծաղկի»։ Բայական ձևն է* պոկել *«փրցնել»,* պոկ գալ *(Ղրբ.* պուՀ կ՚ըլ*) «պոկուիլ, փրթիլ» ևն։ «Ընկոյզ» նշանակութիւնը յառաջացած է նրանից, որ սովորաբար այս պրտուղը քաղում են երբ դեռ կանաչ կեղևը (պոպոկը) վրան է լինում և չհասյ մի առ մի կեղևը հանում (պոպոկում), ինչպէս որ ուխի չհասյ էլ մէջ են ածում։ Այսպէսով* պոպոկ *(ընկոյզ) իսկապէս նշանակում է* պոպոկած ընկոյզ *(կեղևը հանած ընկոյզ)։ Իմաստի զարգացման այս երևոյթին ճիշտ համապատասխան է գալիս կաղաղ՝ որ Լոռիի գաւառականում նշանակում է «կեղև» (ընկոյզի), իսկ Ղրբ. «կեղևը դեռ վրան խակ ընկոյզ» (որից քաղցրաւենիք են պատրաստում)։—Աճ.*

Աճառ. ՀԱ 1899, 232 կրկնուած է ընդհամ պոկել «փրցնել» բայից՝ առանց այլ բացատրութեան։

ԳԻՒ.—Երև. Ղզ. պօ՛պօկ *«ընկոյզ», որից* պոպոկեճի, պոպոկի *«ընկուզենի»։*

ՓՈԽ.—Թրք. գւռ. Կր. bobig *«ընկոյզ» (Բիւր. 1898, 627)։*

**ՊՈՌՆԻԿ, ի-ա Հլ. «տպօրի խառնակուղ այր կամ կին» Ա. կոր. ի. 10. գ. 9. «բոզ» ՍԳր. Ոսկ. յՀ. բ. 16. «կին արամբի շնացեալ» Առակ. լ. 20. Ովս. գ. 1. որից* պոռնըկիլ *ՍԳր.* պոռնկեցուցանել *ՍԳր. Ոսկ. ա. կոր. Թ.* պոռնկանալ *Սեբեր.* պոռնկագոյն *Ոսկ. մ. ա. 6.* պոռնկորդի *Օր. իգ. 2. Ես. ծէ. 3. Եփր. Թգ.* պոռնկոց *Եզեկ. ժզ. 25, 31, 39. Ոսկ. մ. ա. 10 և ա. կոր. Եւագր.* պոռնկարան *Եւագր. ևն։ Նախաձայնի թաւացմամբ* փոռնիկ, փոռընկութիւն, փոռընկանալ *ձևով ունի* Cl. Galano, Gram. et log. inst. Romae 1645, *էջ 27 բ։—Շուն և* պոռնիկ *հոմանիշների տարբերութեան վրայ տե՛ս Մաթ. ԵՒագր. 24։*

=Յն. πόρνος «պոռնիկ մարդ», πόρνη «պոռնիկ կին» բառն է, որ յառաջանում է πέρνημι *«արտահանելով վաճառել» բայից, որ հնդեվրոպական բառ է՝ ցեղակից հիւլ.* renim (*prinami) *«վաճառում» բային* (Boisacq 805).—*Նախնաբար պոռնիկները գերուհի էին լինում, այն է վաճառքի առարկայ։ Յունարէնից է փոխառեալ նաև ասոր.* ܦܪܢܐ pōrnā *«պոռնիկ»։ Հայերէնի* -իկ *վերջաւորութիւնը ըստ* Meillet REA *1, 12 ցոյց է տալիս թէ բառը նախ անցել է Պարթևներին և այնտեղից էլ հասել է մեզ։—Հիւրշ. 373։*

Աւգերեան, Մեկն. Թղ. պօղ. Գ. 292 առաջին անգամ դրաւ յն. πόρνη բառից փոխառեալ։ ՆՀԲ «նոյն բառն է և յն. πόρνος»։ Peterm. *38 յն.* πορνικός *և լտ.* fornicarius: *Հիւնք. յն. πόρνη իգականից։ Հիւրշ. 373 Հայերէնի* -իկ *վերջաւորութիւնը բացատրելու համար* պոռնիկ *դրնում է* πορνικός, *իգ.* πορνική *«պոռնկական» ձևերից։* Thumb *ցոյց է տալիս որ յն. շեշտայանգ բառերը ամբողջութեամբ պահում են հայերէնում և հետևաբար* πορνικός *պիտի տար հյ. *պոռնիկոս։ Ուստի մեր ձևը մեկնում է կազմուած* -իկ *մասնիկով* πόρνος *բառից։ Ընդունելով ըստ* Meillet *պահլաւակա-*

նից՝ -իկ վերջաւորութիւնը բացատրում է աւելի պատշաճ ձևով։

ԳԻՒ.—Ունինք Բբ. ponðig «երեք անգամ կոյսի հետ ամուսնացած մարդ», Մշ. պօոնիգ «չորս անգամ ամուսնացած», իսկ Սեբ. ponðig «բոզ»։

ՊՈՈՒՈՁ «արջառի բառաչ», որից պոռոշիւն Կոչ. 98. պոռոշել Սասն. էջ 40 (չունի ՆՀԲ)։

=Բնաձայն բառ. կազմուած է պոչ բնաձայնից՝ ո սաստկականով. պարզ արմատն է պ ձայնը. համմ. գոռոշել, կոռոշել, կամ ա ձայնաւորով՝ բառաշել, բառաշել, կառաշել, հառաշել, շառաշել։—Աճ.

Հիմնք. բառաչ բառից՝ վերի ձևով Աճառ. ՀԱ. 1899, 204։ Գազանճեան, Տարեց. Պապիկեանի 1905, 126 լծ. Բրբ. bayər-maq «բղաւել»։

ԳԻՒ.—Նոյն են պոռշալ Սեբ. Տր., պառշել Խրբ. պոռշել Հնգ. Համշ. Տր., պոռշտալ Պլ., պոռշտուլ Պլ.։

ՊՈՌՈՏ «խռշոտ և յոխորտ, մեծաբան» Պիտառ. «խռպոտ (ձայն)» Փիլ. նխ. բ. 77. որից պոռոտախօս Պատմ. աղէքս. էջ 132. պոռոտող Պատմ. աղէքս. 132. գրուած նաև պռոտաբան Արծր. նոր գրականում պոռոտալ։

=Անշուշտ նոյն է պոռոճ «պոռոտախօս» բառի հետ և երկուսը միասին ցոյց են տալիս պոռ- արմատը. -ոտ և -ոճ մասնիկ են։—Աճ.

ՀՀԲ պոռալ «բղաւել» բայից է հանում։

—ՊՈՌՈՁ «պոռոտ, պոռոտախօս, մեծաբան» Մագ. Թղ. 58. որից պոռոճաբան Սեբ. էջ 38 (չունի ՆՀԲ)։

=Կազմուած է պոռ- արմատից՝ -ոճ մասնիկով. տե՛ս վերը Պոռոտ։—Աճ.

ՀՀԲ պռոալ բայից՝ ՆՀԲ ունենալով միայն պռոճ ձևը՝ մէկ անգամ գործածուած Մագիստրոսի մօտ, կարծում է որ վրիպակ դրչութիւն է և պէտք է ուղղել պռոտ։ Սեբէոսի օրինակը, այն էլ բարդութեան մէջ պահուած, փաստում է կատարը։

*ՊՈՌՓԻՒՒԻԿՈՆ «ծիրանի, ծիրանի գոյնով գործուած ընտիր կտոր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 204 մուխ մի հատուածի մէջ. «...և զպատկանալն պռոփիւռիկոն թևամափռոնացն այսպանին և որք զկնի նառեանն լիդոնի ակիւրրափաւռնացն սփռղին...»։

=Յն. πορφυρικόν «ծիրանեգոյն» բառից. կազմուած է πορφύρα բառից, որ է «ծիրանի գոյնով ներկուած կերպաս, հագուստ կամ գորգ, հռովմէական ծերակուտականների ծիրանի ժապաւէնը», -ικός, չեզ. -ικόν մասնիկով. համմ. նաև πορφυρίς «ծիրանի հագուստ», πορφύρεος «ծիրանեգոյն կերպաս» ևն։ Յն. πορφυρικόν բառը չունին ո՛չ Bailly 1609 և ո՛չ Sophocles 911. բայց գտնում եմ նոր յունարէնի առձեռն մի բառարանում (Λεγράνδιου Λεξ. νεοελλ. κ. γαλλ. Paris անթուական, էջ 732) և համաձայն վկայութեան Մագիստրոսի՝ պէտք է մտցնել Բիւզանդական յն. բառարանի մէջ։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 206։

ՊՈՍԻՊՈՍ. նորագիւտ և անստոյգ բառ, որ երկու անգամ ունի Կիչառ. Ո՛վ վաշուէր Նեղոսեանոս, որ Թագաւոր էիր յԵգիպտոս, ո՛չ Թէ հզօր ձեռամբ հարուս, այլ լակոնով պոսիպոս. Այս քեզ խրատ Ալեքսանդրոս, որ չխազաս այլ պոսիպոս։

Բառս երևան հանեց Նորայր (Արրատ. 1888, էջ 317), որ համեմատելով պօսպօսող բառի հետ՝ կցում է կա՛մ գտ. պոսիպոս տալ «պատերի տակ կուշ եկած ման դալ» ձևին և կամ համարում է մի տեսակ խաղ։ Տե՛ս և պօսպօսող։

Պոտագրոս տե՛ս Պատագրոս։

*ՊՈՏԱՏ «կէս ոսկի դահեկան, որ արժէր 7, 8 ոսկի ֆրանկ=2,92½ ոսկի ռուբլի=36½ դրուշ» Մխ. դտ. էջ 372. Յիշատ. (տե՛ս իմ Յուցակ Ձեռ. Սանասարեան վրժ. էջ 1—2, յիշուած 8 անգամ). Հայկազեանում էջ 448. գրուած է պոտատ, պատատ, պատատ, պօպատ, պատատ, պոտ ձևերով։ Նորագիւտ բառ։

=Բիւզանդական botinat կոչուած դրամն է, որ իր անունը ստացել է Նիկեփոր Գ. Բոտանիատ կայսեր մականունից. նոյն դրամը

գործածւում էր նաև Վրաստանում՝ potonat, patinat ձևերով (Զուբինով[2] 115 Բոտինատի):

Բառիս վրայ առաջին անգամ ուշադրութիւն է դարձրել Բաստամեան, Մխ. դաս. էջ 372, ծան. 794, որ և կարծում է պողպատ բառից։ Ռ. Աւդալբէգեան, Տեղեկ. ինստիտ. 2 (1927), 49 հանում է պեռսերեան բառից։ Մանրամասն մի քննութիւն ունի Մանանդեան, Տեղեկ. Համալս. 4 (1928), էջ 65—72, ուր ճշդում է բառի ուղիղ ձևը, ծագումը և դրամական արժէքը վերի ձևով։

Պոր *տե՛ս Փոր։*

Պորել *տե՛ս Փորել։*

ՊՈՐՄ *«շինուած չորեքկուսի վրանաձև, քէօշք, pavillon». ունի միայն Նորայր, Բառ. ֆրանս. 916 բ (որից և ԳԲ). «գաւիթ» Բառ. երեմ. էջ 272։*

*[***ՊՈՐՈՄԻԿ.** *մէկ անգամ ունի Պատմ. ադէքս. 175. «խօսելով անյայտս և անհաւատս, վասն զի լեզուն ահա անդէն իսկ պորոմեցաւ (ի մահագեղոյն)»։—ՆՀԲ մեկնում է «թթու կամ լեղի բանից լեզուն փոթորիկ, ատոպիլ». այս իմաստին հասնելու համար ՆՀԲ բառս կցում է թրք. bur-uš-maq «տրտպիլ» բառին (որանից ազդուելով նաև Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 դնում է թրք. bur-ul-maq «ոլորիլ», bur-uš-maq «լեզուն ատպիլ»)։ Բայց ինչպէս ատուգաբանութիւնը կեղծ, նոյնպէս և տրուած նշանակութիւնն էլ սխալ է. լեզուն ատպիլը անվնաս բան է և դա պատճառ չէ որ մարդ «անյայտ և անհաւատս» խօսի։ Ըստ իս բառը պէտք է կարդալ—**տորոմիկ**, որ է «ուռչիլ, այտուլ». թուենաւոր դերը կիզիչ յատկութիւն ունէր, որով լեզուն այրուելով ուռաւ և ուղիղ խօսել չէր կարող։ Պ և տ տառերի շփոթութեան օրինակ է տակաո, որ վրիպակով գրուած կայ* **պակաո** *(տե՛ս անդ)։]*—**Աճ.**

ՊՈՐՏ, ո հլ. *(գրծ. -ի ձևով կայ Յ. խ. 11) «պորտ» ՍԳր. լայնաբար «որովայն, փոր» ՍԳր. Կոչ. 287, 290. Եփր. ծն. և ա. կոր. 61. Համաթ. 109, 110. Եւս. պատմ. «միջավայր» Դատ. Թ. 37. «գիրքիթի մէջտեղի քարը» Արիստ. աշխ. «ազգականութեան առաքեան» Տաթև. Հարց. էջ 611. որից* **պորտաբոյծ** *Խոսրովիկ. Կանոն. պորտապարար Պիտ. դատարկապորտ Տիգ. ա. 13. Եփր. բ. Թես. 184.* **բանձրապորտ** *ԱԲ.* **մշկապորտ** *Խոր. Հռիփ. պորտիվեր «կոնակի վրայ պառկած» Վրդ. առ. 63=պորտ ի վեր (պառկիլ) Վրք. Հց. բ. 100 (որ այլ ձ. բերան ի վայր)։*

=Ձևով նայն է հլ. bedro, *ռուս.* бедро́, *ուկր. բուլղ. սերբ. չեխ.* bedro, *լհհ.* biodro, biodra *բառերի հետ, նշանակութիւնն է «ազդրը, երանք, դիատ»* (Berneker 47)։ *Բոլորի նախաձևը կարելի է դնել* bed-ro-, *կազմուած* bed- *«ուռչիլ»? արմատից,* -ro *մասնիկով։ Նոյնի միջին ձայնդարձից հնխ.* bod-ro-, *որից շրջմամբ՝ նախահայ.* bordo-*>***պորտ***ո. հմմտ. հնխ.* k'ubhró-*>հյ.* ***սուրբ>սուրբ**։ *Անյարմար է միայն նշանակութիւնը։*

Հիւնք. **պարարտ** *բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ* Petersson LUÅ 1915, *29—30, որ յիշում է* Pokorny 2, 109 *վերապահութեամբ։*

ԳԻՒ.—Զղ. **պորտ**, *Ախց. Կր. Շմ.* **պօրտ**, *Մշ.* **պորդ**, *Ակն. Խրբ. Նոխ. Պլ. Ռ. Սչ.* **բորդ**, *Վն.* **պոռտ**, *Գոր. Երև. Ղրբ.* **պօռտ**, *Ագլ. Մկ.* **պուռտ**, *Տփ.* **պուրտ**, *Տիգ.* **բուրդ**, *Սլմ.* **պուէռտ**, *Մրզ.* **պըէրտ**, *Սհբ.* **բէօրդ**, *Ասլ.* **բէօ՛րդ**, **բէ՛օր***, *Սվեդ.* **բիւտ**, *Հմշ.* **բէօյդ**, **բույդ**, *Հճ.* **բոյդ**, *ԶՖ.* **բիւյդ**, **բիւրդ**։ *Նոր բառեր են* **պորտաբաց**, **պորտակարի**, **պորտիկ**, **պորտիվայր**, **պորտիդուրս**, **պորտաւեր**, **պորտաճաշի**, **պորտոնի** *են։ Արդի բարբառների* **պորտ** *«ազգականութեան առաքեան» իմաստը՝ որ գոյանք նաև Տաթեւացու մօտ, շատ հին է. հմմտ. զնդ.* nabānazdištō *«ամենամօտ ազգականը», խրվաթ.* od puporizine plemeniti *«ազնուածին», բառացի «պորտի լարի հատումից սկսեալ»։*

ՓՈԽ.—Գնչ. bor, por, pol *«պորտ» (այս բառերը* Paspati *հանում է սանս.* nābhila *հոմանիշից՝ nā- վանկի անկումով). հմմտ. նաև* **փոր**։

***ՊՈՐՓԻԻՐ** *«մի տեսակ ազնիւ քար». ունին միայն ՀՀԲ և ՋԲ առանց վկայութեան. գործածական է արդի գրականում։*

=Յն. πορφύρα *«ծիրանին տուող խեցեմորթը», որից* πορφυρίτης *«պորփիւր կոչուած*

աղնիւ մարմարիոնը». բուն ծագումը անյայտ է, թերևս սեմական փոխառութիւն լինի (Boisacq 805—6). *յոյնից են նաև ֆրանս.* porphyre, *ասոր.* ܦܘܪܦܘܪܐ pōrfōrōn, *վրաց.* პორფირი *պորփիրի, ռուս.* порфиръ *են։*

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

***ՊՈՒԵՏԷՍ** կամ **ՊՈՒԵՏԻԿՈՍ** (կայ նաև պւետիկոս, պիէտիս, պիիտէս, պւեաէս, պուէտ, պւէտ, պւէտէս, պւէտիկոս) «բանաստեղծ, քերթող» Եւս. քր. Ելթաղ. 112, 165. Ոսկ. ատհ. 301. Եփր. ա, կոր. 54 (սեռ. պւեաէից). «իմաստասէր, իմաստուն» Վանակ. հց. 36. կթ. Վրդն. պտմ. Նար. որից* **պուետական** *Մագ.* **պուետել, պուետիկոսել** *Մագ.* **պուետիկոսաբար** *Մագ.* **պուետիկոսութիւն** *Մագ. են։ Մեր գրականում այժմ գործածական չէ. բայց արևելեան գրականում շատ անգամ պատահում են* **պոետ, պոէտ, պուետ** *ձևերը՝ «բանաստեղծ» նշանակութեամբ։*

=Յն. ποιητής «բանաստեղծ», ποιητικός «բանաստեղծական», *որից փոխառեալ են նաև լտ.* poëta, *ֆրանս.* poète *են. բուն նշանակում է «առեղծող, գործող, արհեստաւոր» և ծագում է* ποιέω «շինել» *բայից։ —Հիւրշ. 373։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

Պուլ *տե՛ս Բուլ։*

***ՊՈՒԼ, կամ ՊՕԼ** «անստոյգ մի բոյս. լտ.* cucumis indicus *կամ* Oegle marmelos» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2582։*

=Արաբ. بل bul *նոյն նշ. (տե՛ս* WZKM 11, 319 Steinschneider-*ի հաւաքածոն)։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

***ՊՈՒԿ** «պատերազմական փող». Նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ Սմբ. դատ. 21 և մի անգամ էլ Թլկր. 53. «Հարին զփող պատերազմին, զպուկն, ու զնաֆիրն զգաւ հարկան». սրա հետ նոյն է պուկ կամ պուկ «երգեհոնի եղեգնափողը», որ ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ԱԲ։*

=Արաբ. և պրս. بوق būq «եղջերեայ փող, շեփոր» (Կամուս, Քրամ. Քրք. Բ. 874), *որ յետին տառադարձութեամբ բոլորովին յարմար է պուկ ձևին։ —Արաբականից է փոխառեալ նաև վրաց.* ბუკი «պատերազմական փող, եղջերեայ փող», *որից և* **ցեբუკე** *մերուկե «փողահար»։ —Աճ.*

Նորայր, Բառ. ֆր. 606 ա դնում է պուկ՝ իբրև նոյն ընդ պուկ «կոկորդ, փող»։ Պատահական նմանութիւն ունին յն. βυκάνη, *լտ.* bucina «եղջերեայ փող» *են, որոնց նախաձևն է հնխ.* buq- «փչել, սուլել» (Boisacq 137)։

ԳԻՒ.— Անշուշտ նոյն է բառիս հետ պոկ Գնձ. «փող զուռնայի են» (տես *Մամիկոնեան, Հազարիւ մէկը, էջ 248), բայց անապատելի է նախաձայն պ՝ փոխանակ բ= արաբ. b: ՀՀԲ, ՋԲ պուկ «շեփոր» բառին են կցում նաև գւռ.* **պոկ** *«սոխի և նման բոյսերի ցօղունը, ղոխ», որի հետ նոյն են պուկ Ակն. Սեբ. «ուռիկ սուլիչ», պկու Լ. Ղ. Ղրբ. Տփ. «մի տեսակ սրինգ՝ որ զուռնայի նման լեզուակ ունի»։ Աւելացնենք դարձեալ. Ջղ.* պուկ, *Սվ. բուֆ, Ագլ. պօկ «օրօրոցի մէջ հաստատուած միզախողովակը»։ Այս բոլորի համար տե՛ս յատկապէս* պոպոկ (պոկ) *բառի տակ արած նկատողութիւնս։*

Պուղել *տե՛ս Պողել։*

ՊՈՒՃՈՒՄ, *մի տեսակ անստոյգ բոյս. Բժշ. մեկնուած է «արաբ. սամար-ըլտարֆա կամ յատպէ և կամ մոշու պտուղ». ունի միայն ՀԲուս. § 2584, որ համարում է «*fruit de tamarix *կամ հասարակ անուն նման պտղոց վայրի ծառոց»։*

Պուպալ *տե՛ս Փուփլէ։*

ՊՈՒՊՈՒԿ «աչքի մատերից մէկն է» Լծ. Նար. ժը. (չունի ԱԲ). «Զարտեանունսն, զթարթափան, զկոպան, զսպիտակուցն, զսեւուցն, զպուպուկան, զբիբն՝ որ է լուսընկալն»։ —*Մասերի յիշատակութիւնից երևում է որ կամ յօնքերն են, որոնք չեն յիշուած, և կամ աղբերակները։*

ՊՈՒՍԻԼԱ «նոտան ծաղիկ» Ամիրտ. *ունի միայն ՀԲուս. § 2587։*

***ՊՈՒՍԻՐ** կամ **ՊՈՒՍՐ** «չոր արմատ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2588 (տե՛ս և պասուր)։*

=Արաբ. بسر busr «արմատ»։

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ, 1924, 73։

ՊՈՒՏ, ո հլ. «հարսնուկ, ծաղկոտրուկ, կէլինճիք չիչէյի,* anémone» *Ոսկ. պօղ. ա. 160 (ըստ գեղեցիկ նկատողութեան Վարդանեա-*

նի, Բառաք. դիտ. Դ. 104), Գաղիան. «երկնագոյն շուշան» Բժշ. «մի տեսակ վայրի բանջար» Վանակ. որ և աստում է պոյտ, պոյտն Տաթև. հրց. 349, պոի ծաղիկ, պուտ-պուտ: (Կայ այս բոյսի առանձին մի տեսակը՝ որ կոչւում է anemone armena Boiss. տե՛ս Տիրացուեան, Contributo § 177):

=Կարելի էր դնել հյ. պոյտն «պտուկ, պուտուկ, հողէ աման» բառից, յետին հայերէնի ոյ>ու ձայնափոխութեամբ ձևացած. իմաստի զարգացման համար հմմտ. արդի գւռ. և միջին հյ. պտուկկոտրուկ, ծափկոտրուկ, ամանկոտրուկ հոմանիշները, որոնց վկայութիւնները տե՛ս Նորայր, Բառ. ֆր. էջ 61 բ: Այս բոլորը կապուած են այն նախապաշարման հետ թէ ով որ այս ծաղիկը քաղէ, տանը բոլոր պտուկները կկոտրին: Բայց աւելի հաւանական է ընդունիլ թէ նախապաշարմունքն է սարքուած անուան վրայից, քան անունը յօրինուած նախապաշարմունքից: Այս պարագային հայերէնից ազդուած սխալ է համարել Թրք. չանագ չիչեղի գըբըղը «պուտ ծաղիկը» (գիտէ ՆՀԲ), որ բառացի նշանակում է «կոտրած աման-չաման»:

ԳԻՒ.—Երև. Սլմ. Տփ. պուտ, Ալշ. պուդ, Խոջ. բուդ, Մշ. պդուգ և շրջևալ ձևով՝ Ղրբ. ոօպ (շրջման համար հմմտ. Ղզ. ոուպ «կաթիլ», որ շրջուած է պուտ բառից): Նոյնից է տպագոխ Ղրբ. «պուտ ծաղկի ծիլը»:

ՊՈՒՏ «կաթիլ». յետին հայերէն բառ, որ գտնում եմ գործածուած Առաք. պատմ. էջ 457. յիշում է նաև Բառ. երեմ. էջ 246՝ շիր բառի բացատրութեան մէջ: Կենդանի է գաւառականներում պուտ ձևով, որի շրջուածն էլ կայ ոուպ ձևով. այս ձևն էլ է յիշում Բառ. երեմ. անդ: Նշանակում է նաև «կէտ», որից տպտպիկ «կէտ կէտ խայտերով» Առաք. յծ. սահմ. 555, գւռ. տպտպուրիկ (վերկայութիւնը տե՛ս նկատ):—Նոյն է վերջապէս գւռ. պուտ «նիշ պիտակի, մատնի վրայ խալ», որ յիշում է ՆՀԲ, յաւել. էջ 1066 բ:

ԳԻՒ.—Ալշ. Մշ. պուդ, Նախ. Պլ. Ռ. բուդ «կաթիլ», Խրբ. բուդ «կէտ», նոյն է նաև Տփ. պուտ «մի քիչ, մի փոքր կաթ» (օր. մի պուտ հաց), որ բխում է «կաթիլ» գաղափարից, իբրև նշան փոքրութեան. հմմտ. Պլ. բուդ մը, բուդիգ մը (<պուտ մի, պուտիկ մի) «մի քիչ, սակաւիկ ինչ» (նախ հեղուկ բաների համար ասուած, յետոյ ընդհանուր գործածութիւն ստացած). այսպէս նաև Ղրբ. մի՛կա «մի քիչ», որ յառաջանում է մի կաթ «մի կաթիլ» ձևից:

+ՊՈՒՏ «այտումն փոքրիկ ի վերայ մորթոյ» (իմա՛ «բշտիկ»). գիտէ միայն Նորայր, Բառ. ֆր. 169 բ (bouton բառի տակ), իբր միջին հյ. բառ:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bud- «ուռչիլ» արմատից. ցեղակիցներն են սանս. budbuda- «պղպջակ», յն. (but- ձևից) βύτανα «յօդաւորութեանց ուռչիլը, բռունցք», βυζόν «հնպարտ, փքուած», կիմր. both «կումբ, վահանի մէջտեղի ուռուցքը», bothell, pothell «բշտիկ», հգերմ. puddig «ուռած», մդերմ. buddeck «շատ ուռած, հաստ», անգլսքս. puduc «այտոյց, կոծիծ», մ. անգլ. budde «կոկոն», անգլ. to pout «ցցուիլ, ռնկուիլ, ծռկտիլ, ծամածռութիւններ անել», bud «կոկոն», ֆրիզ. püt «ուռուցք», հոլլ. bot «կոկոն», նորվ. pūta «հաստ կնիկ», շվէդ. puta «ուռչիլ», put «այտոյց, ուռեցք», puta «բունոց», բաւար. butz «կարճ ու հաստ մարդ» ևն: Նոյն արմատին է պատկանում նաև հյ. պուկ, որ տե՛ս առանձին: Հնխ. bud- աճած է bu- «ուռչիլ» պարզականից d (ինչպէս նաև t) աճականով, ճիշտ ինչպէս bul- (որից հյ. պղպջակ. տե՛ս այս բառը) աճած է l աճականով (Pokorny 2, 115):—Աճ.

ԳԻՒ.—Այստեղ են պատկանում Սեբ. բղել (<պտել) «խմորը լաւ եկած չլինելով՝ հացի երեսին բշտիկներ ձևանալ, որոնք եփուելիս անհետանում են» (հացը պտեց), բուդ (<պուտ) «այդպիսի այրուած ուռուցքներով՝ մէջը դեռ հում մնացած հաց», Ղրբ. պիւտ (<պուտ) «մեղրով կամ ոուպով շաղախուած և դունդ դունդ չորացրած փոխիներ (մի բռունցքի մեծութեամբ)», որից պիւտել կամ պիւթել «խաշոր պատառներով ուտել»:

*ՊՈՒՏԻՆԱ «դաղձ» Ամիրտ. «անանուխ» Կամրկ. ունի միայն ՀԲուս. § 2592:

=Պրս. پودنه pūdana «դաղձ, վայրի անանուխ»: Նոյն բառի արաբացեալ ձևից է Ֆոտանջ, որ տե՛ս առանձին:

ՀԲուս. համարում է բառ պրս. ըստ Կամրկպ.։ Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1923, 62։

—ՊՈՒՏՈՒՏԱԿ *«սիսեռ» Կամրկ. ունի միայն ՀԲուս. § 2595.—Նոյնը Բռ. երեմ. յաւել. 575 ըստ Գաղիանոսի մեկնում է «լապլապի», որ է «խորոված սիսեռ»։*

=Ձևացած է պոպոյ արմատից՝ իբր պռատա-ակ. հմմտ. գլուխ «ոլոռն. 2. բրտինքի մեծ կաթիլներ. 3. բրնձի մէջ գտնուած կլոր անպէտք հատիկներ» ևն։—Ա՛ճ.

ՊՈՒՐԱԿ *(սեռ. -ի) «անատառակ, փոքրիկ անատառ» Բուզ. գ. 14. աւելի յաճախ գործածուած է պրակ Փիլ. լիւս. Արծր. Եպիփ. բարոյ. սխալ ձև է պարուկ Պատ. վրաց. արդի գրականում ընդունուած է միայն պուրակ։ Սրանցից են եղեգնապուրակ կամ եղեգնապրակ Խոր. պուրակացիր (գրուած նաև պարկացիր) «անտառի մէջ գրուած» Խոր. Գ. 23. պրակագեղ Վեցօր. բ. էջ 29։*

=Թերևս պհլ. մի ձևի միջոցով փոխառնել սանս. पौरक pauraka «քաղաքի մօտ գտնուած գրօսավայր պարտէզ» բառից, որ ծագում է पुर pura «քաղաք» բառից (Böhtlingk, Sans. Wört. IV 889):—Ա՛ճ.

ՆՀԲ լծ. պրս. bark «տեղ, սաղարթ»։ Հիւնք. պրս. buryā «սէզ»։ Հիւբշ. Ոս. փոխառ. բառից 39 կցում է պրակ բառին, որ սակայն այլ ևս չի կրկնում Arm. Gram.:

ԳԻՒ.—Մշ. պուրագ, պրագ, վն. պրակ, Ղրբ. Ղրդ. պռակ։

ՓՈՆ.—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից է դնում ալբան. pul «անտառ», որ բոլորովին պատահական նմանութիւն ունի։—Հայերէնից է սակայն վրաց. პრაკი պրակի «թաւ անտառ», ինչպէս նկատում է Մառ, Физіологъ, էջ 56 (Զուբինով չունի այս բառը)։

—ՊՈՒՐՄ *«աղաւիլը». արմատ առանձին անգործածական, որից պրծանիլ «ազատիլ» ՍԳր. Կոչ. Եփր. Թգ. պրծանիլ յուշոյ «մոռանալ, մտքիցը դուրս գալ» Ոսկ. յհ. ա. 1. պրծել «ազատել» Ագաթ. պրծնուլ Մամիկ. 35. մազապուրծ «հազիւ ազատած» Վրդն. պատ. Երզն. մտթ. անձնապուրծ Փարպ. Պիտ. սրա հետ նոյն է փուրծ, որից են փրրծանիլ. «հազիւ ազատիլ» ՍԳր. Կոչ. էջ 277. Ոսկ. յհ. բ. 16. ա. 1. Շիր. 34. կթ. փրծուցանել «ազատել» Արծր. փրծնուլ «ազատիլ» Նոր վկ. էջ 506 (ժէ դար). ճողոպրեալ փրծիցէ Իրեն. ցոյցք 7. արմատական ձևն ունի փուրծ «թել թել դուրս ևկած բրդի մանրուք» Նար. խր. առ Լեհ.։ Միևնոյն բայը ունինք դարձեալ փրթանիլ և փրչել ձևերով, որոնք տես առանձին։*

=Նոյն է ապուր բառի հետ, ինչպէս ցոյց են տալիս մազապուր և մազապուրծ նոյնանիշ ձևերը. ա նախաձայնը կարելի է բացատրել այնպէս, ինչպէս ճօթի—աճօթի, ճօսըր—աճօսր.—արմատի վրայ ազդեցել է նախ թ աճականը (փուրթ, փրթչիլ), որ յետոյ եղել է ծ (պուրծ, փուրծ)։

Bugge KZ 32, 44, IF 1, 445 ապրուստ *բառից՝ իբր *պրստաճել։ Հիմնք. փրկել բայից։* Patrubány *ՀԱ 1903, էջ 221 հնխ.* ap-uorg *ձևից. այն է* ապ+գործ *«գործից ազատիլ». հմմտ. գերմ.* ab-werken: Pedersen, *Հայ. դր. լեզ. 148 ապուր արմատից՝ ծ յաւելուածով, որ ձևափոխում եմ վերի ձևով։—Տե՛ս և փուրծ։*

ԳԻՒ.—Շմ. Տփ. պրծնիլ, Գոր. Երև. Ղրբ. պրծնել, Ագլ. պռծա՛նիլ, Ջղ. պռծաճել, պռծնել, Մկ. պռծնիլ, Վն. պռծճել, Սլզ. պռծնել, փոցնել, Մշ. փռծնալ, Սլմ. պըրզնել, Մրզ. պըրզնել։ Բոլորն էլ «վերջանալ կամ ազատիլ» նշանակութեամբ։ Խմաստի զարգացման համար հմմտ. Թրք. qurtardə *«ազատուել, վերջացաւ», Նխճ. խալսիլ «ազատիլ, վերջանալ», Ն. ասոր.* p'räkt'ä *«ազատիլ, վերջանալ, նպատակին հասնիլ» և վրաց. ჭրոմა «վերջ», ծարմորչոմა «ազատիլ»։ Նոր բառեր են պրծուկ, պրծում. հմմտ. նաև փրթանիլ։*

**ՊՈՒՐՃ «բուրգ, աշտարակ» Բրս. մրկ. (որ և պուրջ Միխ. ատ. 430, Մխն. Համդ. էջ 65). «գոդիակոս, կենդանակերպ» Վստկ. 33. Նոյնը յդ. պրներ Երզն. երկն. ատ. էջ 44, որից զանգակապուրճ (նորագիւտ բառ) «զանգակատուն» Հայել. 44. Հնագոյն և վստահ-*

լի վկայութիւնը բառիս ունինք բուրջ *ձևով՝ գործածուած 1160 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. առ. 31)։*

=*Արաբ.* برج burj «բուրգ, զոդիակոս», *որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս* բուրգն։ *Արաբերէնից է փոխառեալ նաև վրաց.* ბურჯი բուրջի «աշտարակ, մոլորակ, համաստեղութիւն»։—*Հիւբշ. 393։*

*ՊՈՒՐՃԷՍ «քաղաքացի». *գործածուած է Ռուբինեանց պետութեան դիւանական գրութեանց մէջ։ Բառիս վկայութիւններն են այլ փոփոխականերով՝ Թլ բուրհէս լեռի մեր և կամ բնակիչ երկրիս (Պարզեւագիր Լևոն Դ-ի՝ 1330 թ. հրատ. Սիսուան, էջ 364 ա). Փառաւոր խաւճանոյդ և պուռնէանոյդ, իմաստուն վաճառականագդ (Կոնդակ 1390 թ. հրատ. Ալիշան, Կամենից, էջ 9)։ Այս վկայութիւնները մէջ է բերում Թ. Ավդալբեկեան, Հովհ. Հովհաննիսյան, Երևան 1934, էջ 8 ծան.)։*

=*Լտ.* burgenses, *Ֆրանս.* bourgeois, *իտալ.* borghese «քաղաքացի», *որ արդի* բուրժուա *բառն է։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Karst, *Գաւառն. II. 97։*

ՊՈՒՐՄ *կամ* **ՄՈՒՐՄ** «մի տեսակ բոյս, mimosa gummifera» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2596։*

+**ՊՈՒՅ** «բունոց, համք». *միջին հյ. բառ, ըստ Նորայր, Բառ. ֆր. 1290 բ։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* bul-sk'- *համանիշ ձևից. ծագում է* bul- «ուռչիլ» *արմատից, որի ժառանգները տե՛ս վերը* պղպջակ *բառի տակ։ Յիշենք դրանցից յատկապէս սանս.* buli- «բունոց. 2. յետոյք», *լիթ.* bulis, bùle, *յգ.* bùlys «յետոյք» (Trautmann 39)։ *Այսպէս են կոչուած իրենց ուռած կամ կլորակ ձևի պատճառով, ճիշտ ինչպէս նոյն արմատի համազօր հնխ.* bhel- «ուռչիլ» *ձևից ունինք ի մէջ այլոց յն.* φαλλός, φάλης «առնի», *հիւլ.* ball «անդամ», *հիւլ.* bǫllr «ամորձիք», *անգսք.* beallucas *նոյն նշ., հնսս.* bulle «բունոց», bille «առնի», *հոլլ.* bil, *հրգ.* (ars)belli, *մհգ.* (ars)bille «յետոյք» (Pokorny 2, 177—9)։—*Հնխ.* bul- *արմատից են ուղղակի հյ. գտ. Ախց.* պուլի «փոքրիկ ու կլորիկ, թմփլիկ», *երզ.* բլիգ (<պլիկ, *որ ծագում է* *պուլ-իկ *ձևից, անշեղ ու ձայնաւորի կրճատմամբ, լ-ի կրկնութեամբ և -իկ մասնիկի յաւելմամբ, ինչպէս սովորական է նման դէպքում. օր. տճկ.* am=*Կովկասի թրք.* amǰəγ «բունոց» -ǰəγ *նուազական մասնիկով) «իգական ամօթոյք»։ Հնխ.* bul- *արմատի ածած* bul-sk'- *ձևից է հյ.* *պուղց, *որից ղ-ի անկումով (հմմտ. Ագլ.* կաղց=*հյ.* կաթ-ն)՝ պուց, *ճշիտ համազօր գտ.* պլիկ *երզ. «իգական անդամ» բառին։—Ա.Ճ.*

Պատահական նմանութիւն ունին նոյն. puči, *չին.* pá'-tse, *չեչեն.* bud *համանիշները։*

ՊՁՐԻԼ «խնդնշանալ, կոտրատուիլ» *Ոսկ. ա. տիմ. ժե. որից* պչրանք «կանացի պատճուճանք, հասպատանք, լկտութիւն» *Ոսկ. ա. տիմ. բ. խոր.* պչրութիւն *Նար. նոր գրականի մէջ* պչրիլ *նշանակում է «ճոխապէս զարդարուիլ»։*

Հիւնք. ապարանջան *բառից։*

+**ՊՊԼՈՒԿ** «ընձիւղ, բողբոջ, ծիլ» *Վասկ. 63 (որ և* պպլուկ *Վասկ. 109) «նարմուշկ» Բժշ. (ըստ ՀԲուս. § 2600). որից* պլպլկել «ծլիլ» *Վասկ. 36, 140, որով արմատական ձևերն են լինում* պպլուկ *և* պլպլուկ, *ինչպէս հատաստատէս գտնում ենք նոր գաւառականներում։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* bul- «ուռչիլ» *արմատից. ցեղակիցները տե՛ս պղպջակ բառի տակ. նոյնիմաստ ձևերից յիշենք այստեղ լտ.* bulla «պղպջակ, կոճակ, բոյսի ծիլ կամ կոկոն», *մգերմ.* pull «բոյսի պատիճ», *հոլլ.* peul *նոյն նշ., անգլ.* pulse «պատճառուր ընդեղէն» *և զանազան բոյսերի անուններ։ Նոյն արմատի* bhol- *ձևից են հյ.* բող-բոջ, *յն.* φύλλον «տերև», *լտ.* flos «ծաղիկ» *են։ Հնխ.* bul- *արմատը տուած է նախ հյ.* *պուլ, -ուկ *մասնիկով* *պուլ-ուկ>*պլուկ, *կրկնութեամբ* պլպուլ, պլպլուկ, պպլուկ։—*Ա.Ճ.*

Գիմ.—Սվեդ. բլբուլ «կոկոն», *Այն.* բիլ բիւգ, *Մշկ.* բլբլուգ, *Տր.* բումբուլագ, *խրբ.* բուբուլա, *Մշ.* պբուգ՝ *բոլորն էլ «ծաղկի կոկոն», խն.* բբուգ «ծառի կոկոն, ծիլ», *Մշ.* պպլուկ «ծլիկ»։

ՊՌԱԼ «զեղիլ». *ունի միայն Բառ. երեմ.*

էջ 272. Թուի Թէ պետք է հասկանալ «զեղխել»։

ՊՌԱԽՑՆԵԼ «մագերը յարդարել և թողնե՞լ». մէկ անգամ ունի Վստկ. 201. «Չէ փոյթ զագեստակն սրբել, այլ սանտրել և պռախցնել»։

=Թերևս արաբ. برق barq «փայլեցնել, զարդարել», براق barrāq «պայծառ, յրսատակ», որից Պլ. ռմկ. **պէրախ** «յրսատակ, պայծառ փայլող» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 867)։

Կայ Թրք. براق braq, արևել. Թրք. brax «Թո՛ղ, բա՛ց Թող», բայը braqmaq «բաց Թողնել»։

ՊՌԱՌԵԼ «կկզել». ունի միայն Բառ. երեմ. էջ 272։

ՊՌԵՄՆ, ի հլ. «արու վայրի Թզենի. ածկ. պապա ինճիրի». մէկ անգամ ունի Եփր. մրգ. 361. «Եւ ի Թզենեացն են որ բերեն պտուղ, և որք զնոյն ոչ ընկալեալ զտուեր զարուի զպռեմնիոյն՝ դոյնպէս և լինին»։

***ՊՌԵՍՏԵՐ** կամ **ՊՐԵՍՏԵՐ** «աղդ հրաշեսիլ ցոլմանց յամպոց՝ հանդերձ ուռուցիկ մրրկաւ հողմոյ» Արիստ. աշխ. 612. երկրորդ անգամ՝ էջ 613 գրուած պրեսաներ։

=Յն. πρηστήρ «կայծակով ու փայլակով ուրագան». որից նաև լտ. prester «հրային պտուտկող քամի». ծագում է πρήσω «այրել» բայից։—Հիւրշ. 374։

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

Պռնք տե՛ս Պռոյգ։

ՊՌՉՈՂ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Եղն. 250. «Ասեն. օտարին՝ գնովք գնեալ է գմեզ՝ ի տեառնէն արարածոց... ապա օտարին՝ զոր նմա պռոզող մուծանէ, չէր պարտ նորա արարածոցն ցանկանալ»։ ՆՀԲ մեկնում է «զովող կամ յափշտակող զօտարին ինչ, զոր կրծող գիրս այլոց». ՋԲ «զովող կամ ոտխ», ՓԲ «կցորդ հաւասար» (որից շինել է նաև պռզել բայը). Թոռնեան Հատընտ. 1866, Ա. 49 «մասնակից, բաժանորդ, ընկեր», Բաբգէն վրդ. ՀԱ 1907, 315 գնում է «գործակից, զովող», համարելով Թէ ն դարու ժողովրդական բառ է։ Հաւանական է երևում «գործակից ընկեր» նշանակութիւնը։ Համմտ. նաև վռզող։

***ՊՌԻՄԻԿՈՒՐ**, ի–ա հլ. որ և **պռիմիկեր**, պռիմիկիւռոս «առաջին աւետադպիր, նախագահ իշխան» Ճառընտ.=Վարք. և վկ. Ա. 414, Բ. 49. Յայտմ. հոկ. 7։

=Յն. πριμικήριος «առաջին պաշտօնեայ», որ փոխառեալ է լտ. primicerius «առաջին, գլխաւոր. 2. գործավար, գործապետ. 3. կայսերական արքունեաց առաջնակարգ պաշտօնեայ. 4. մեծ սենեկապան» բառից. որանից նաև ֆրանս. primicier, իտալ. primocero են։—Հիւրշ. 374։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ, Աւգերեան, Լիակ. վրք. սրբոց Գ. 162 և ՆՀԲ։

ՊՌԻՆԹԻՈՆ «պինտրական մի գունդ». մէկ անգամ ունի Կիւրղ. Թգ. այս բացատրութեամբ. «Պռինթիոնն գունդ ինչ զօրական էր»։

=Անշուշտ օտար բառ. մայր ձևը անյայտ։

***ՊՌԻՍՏԻՄՈՆ** «գրաւ գրուած գումար՝ որ իբր աուգանք վճարում էր պայմանագիրը խախտող անձը». նորագիւտ բառ, որ բանից անգամ գործածուած է չիտին հայերէնում. օր. Սմբ. դատ. 7, 149, Լմբ. օր. 37, Յիշատ. (տե՛ս իմ Ձեռ. Կարնոյ Սանաս. վարժ. էջ 2). ուղիղ ձևն է **պռոստիմոն**, որ մի անգամ գտնում եմ գործածուած Ասոր. դատ. էջ 48. «Եթէ առնու բան ինչ մարդ հետ ընկերի իւրում, և լինի նմին հաստատութիւն կամ գրի Թուղթ և դնին գրաւ համար ոսկոյ կամ երդումն, որ ոչ հնազանդի պայմանին, տայ գրաւն՝ որ եդաւ ի մէջ, յայն՝ որ հնազանդի։ Եւ հրամայէ օրէնքս առնուլ վրէժ ի նմանէ վասն երդմանն և առնուն ի նմանէ գպռոստիմօնն, զոր եդաւ»։

=Յն. πρόστιμον նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց բառս Karst, Դատաստ. II. 208. տե՛ս նաև Բասմաջեան, Լմբ. օր. 43. և վերջին անգամ Մանանդեան, Տիղեկ. Համալս. 4, 65։

ՊՌՃՈՒԿԵԼ «փրցնել, փետել, պոկել». ունի միայն Բառ. երեմ. էջ 273. գործածական է նոյն ձևով երև. Ղզ. Տփ. լ. Շլ. Շմ. են։

***ՊՌՈԹԵՍ, ՊՌՈԹԵՍՄԻՈՍ** «առաջադրութիւն, վճիռ, պայման» Մխ. դտ. օր. Թգ.։

=Յն. πρόθεσις, προθέσμιος, իգ. προθεσμία

«պայմանաժամ, առաջուց որոշուած ժամանակ»։—Հիւրշ. 374։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՊՌՈՄԻԱԿԱՆ «Պռոմեւսի նման». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 13, 57. «Յորս անկայ փորձութիւն առաւել քան զպռոմիականն, յորս ոչ բարերջանիկ գոլ նմա եհաս հանդէս. իբրու ի պռէմէականն գրէ՛ զիս անկեալ փորձութիւնս»։ Թէև վերջինիս մէջ մի ձեռագիր ունի պռոմէական, բայց բնագրում անուշադրութեամբ առաջինի մէջ գրուած է պռոմիական, երկրորդի մէջ պռէմէական։ Երկուսն էլ պէտք է ուղղել Պռոմէական, իբր՝

=յն. Προμεύς, Προμέως յատուկ անունից։—Ա.Ճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 203—4։

*ՊՌՈՅԴ, ի–ա հլ. «օժիտ (աղջկայ կողմից արուածը փեսին)» Ասոր. դաս. 9. Մխ. դտ. 289, 291. Լմբ. օր. 19. Մաշտ. ջահկ. Ուռհ. 122. գրուած է նաև պռոյխ Անսիզք 19, պռեւիժ. յն. որից պռուգել «օժիտով ճոխացնել» Մարթին. Մին. համդ. 133. պռուգած Ասոր. դտ. 54. Մխ. դտ. անպռոյգ Ասոր. դաս. 9. Լմբ. օր. 19. Մխ. դտ.։

=ՅՆ. προίξ, προῖξ, սեռ. προικός. նյն. προυκίν, προῖκα «հարսի բերած օժիտը», որից προῖξασθαι «պռուգել, օժիտ տալ». ծագում է πρό «առ, ի» և ἴχω «գալ» բառերից։—Հիւրշ. 374։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Գիհ.—Հճ. պրիգ «օժիտ» (ըստ Թէրզեան, Ամէն. տարեց. 1924, 198), Մրշ. պռաֆ «հարսի օժիտ» (Գարիկեան, Ամէն. տարեց. 1922, 325)։

Պռոստիմոն տե՛ս Պռիստիմոն։

ՊՌՈՏԻԿ «օժիտ, պռոյգ». անստոյգ բառ, որ գտնում եմ Բորոսեան, Տետր. հմ. բառարանի, Նախիջեան 1794, էջ 47։

*ՊՌՈՏԻՔՏՈՌՈՍ, ի–ա հլ. «պահապան զինուոր կամ թիկնապահ». նորագիւտ բառ, որ շատ անգամ գտնում եմ գործածուած Անկ. գիրք առաք. էջ 223—7. «Եւ էին առաքեալքն ի թագաւորէն արք վեց, մեծամեծ իշխանութեամբ և ունէին ընդ ինքեանս այլ արս տասն պռոտիքտոռոսք և արարեալ զգուշութիւն ի վերայ Յովհաննու և զան հարին զիս... տասնեքին պռոտիքտոռոսքն (երկիցս). ...հիւանդացեալ մի ոմն ի պռոտիքտոռոսացն»։ Դարձեալ նոյն բառն է հռոտիկտոռաս, նախատառի սխալ գրչութեամբ. Առաքեցին որպէս ի թագաւորէն հռոտիկտոռաս, այս է նախարարս. Վրք. սեղբ. 710։

=ՅՆ. προτίκτωρ, προτήκτωρ, προτέκτωρ, πρωτίκτωρ և այս բոլորից ուղղագոյն ձևով՝ πρωτέκτωρ, սեռ. -ορος, լգ. հյց. τορας «անձնապահ կամ թիկնապահ արքայի», որ փոխառեալ է լա. prōtector «արքանեակ, թիկնապահ» (բուն. նշ. «պաշտպան, պահապան)» բառից (Sophocles, էջ 953 և 957)։

Ուղիղ մեկնեց Մ. Վ. Տէր-Մովսէսեան, Սոկրատի հրատարակութեան մէջ, էջ 710։

*ՊՌՈՏՈՆ կամ ՊՌՈՏԻՆ «առաջին». կայ միայն Պռոտին Արմենիան «Առաջին Հայք» ձևով՝ Խոր. Ա. ժդ. (Անուանեն զկղիմայն զայն Պռոտին Արմենիան, որ Թարգմանի Առաջին Հայք). նոյնը նաև Թղթ. դաշ. 18 ևն. գրուած նաև պրօտոն։

=ՅՆ. հյց. πρώτην Ἀρμενίαν «Առաջին Հայք» (ար. և չեզ. πρῶτον)։—Հիւրշ. 374։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ՊՌՈՏՈՆՊԱՏՐԻԿ «մեծ և առաջին պատրիկ» կղնկտ. հրտր. էմինի, էջ 143—4 (ունի միայն Ա.Բ). գրուած է պռատնապատրիկ Մագ. թղ. 225 (իմա՛ պռոտոպատրիկ)։

=ՅՆ. πρωτο-πατρίκιος՝ նոյն նշ. (Sophocles 958), որ է πρῶτος πατρίκιος (հյց. πρῶτον) «առաջին պատրիկ»։—Ա.Ճ.

Այս մեկնութիւնը տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 203։

*ՊՌՈՏՈՊԱՊ (գրուած է պռոտապապ) «հայրապետ, քահանայապետ» Թղթ. դաշ. 24 (Հռոմի պապի համար ասուած)։

=ՅՆ. πρωτοπάπας «առաջին հայր» (Sophocles 958)։—Հիւրշ. 370։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

*ՊՌՈՏՈՍՊԱՆԹԱՐ «յունական մի բարձր աստիճան. կայսերական թիկնապահ գնդի առաջին կամ ամեն սուսերակիր» Սմբ. պտմ. 36. (գրուած է պռօթօսպաթարն, իսկ տպ.

Մոսկ. 17 պրօօսպաթարն). *որ և* պռոօսպաթար *Ուռհ. 27, 28. աւելի հնից Մագ. թղ. 104* պռոաւպաթար, *էակաց գրքի յիշատակարանում* պռոյսպաթար *(հրտ. Սրուանձտեանց, Հնոց և նորոց, էջ 87), նաև Յիշատ. 1007 թուից (տե՛ս Հայցունի, Պատ. տպրպին, էջ 172)։*

=*Յն.* πρωτο-σπαθάριος *նոյն նշ.* (Sophocles 959). *կազմուած է յն.* πρῶτος «առաջին» + σπαθάριος «թրաւոր, սուսերակիր» *բառերից. վերջինը մեր մէջ գործածուած է նաև առանձին՝* սպաթար «դահճապետ, բանտապետ, զինակիր» *ձևով, որ տե՛ս առանձին։ Յունարէնից են փոխառեալ նաև լտ.* protospatharius *և ասոր.* ܦܪܘܛܘܣܦܬܪܝܘܣ prō̆tospā̆thar:

Ուղիղ մեկնեց նախ Խոսրիկեան, David der Philosoph, Bern *1907, էջ 16, որից Գ. վ. Յովսէփեան, Արրտ. 1907, 963 և վերջին անգամ Ա.Ճաո. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 204։*

***ՊՌՈՏՈՍՏՐԱՏՈՐ** «ձիաւոր զինուորների գլխաւոր զօրավար» Ժղ. Հռոմկլ. Շնորհ. ընդհ. տպ. եմ. էջ 87. գրուած նաև* պռօտոստռատռօռ, պռոօստռատռօռ, պռօստռատռօռ, պռոստռատռռ *Վրք. շնորհ. 50։*

=*Յն.* πρωτοστράτωρ «մեծ ախոռապետ» (Sophocles 959) *բառից, որ կազմուած է* πρῶτος «առաջին» + στράτωρ<*լտ.* strator «ախոռապետ» *բառերից։—Հիւրշ. 374։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՊՌՈՏՈՖՐՈՆՏԻՍ,** *որ և* պռոտոֆրօնդէս «նախաթոռ պատրիարք» *(տիտղոս Սիւնեաց մետրապոլտի) Օրբել. ղ. ժե. իե. «մեծ վարժապետ, իմաստասէր» Յիշատ. Օրբել. ողբ.* պռօտաֆրօնդէս *Օրբ. հկճռ. ժբ. էջ 168.* պռաւտաֆռաւնտէս *Արձ. 1295 թ. (Վիմ. տար. 137)։*

=*Յն.* πρωτοφροντιστής «առաջին խորհող կամ խնամակալ». *կազմուած* πρῶτος «առաջին» + φροντιστής «խորհող, իմաստասէր. 2. խնամակալ, մանաւանդ հասարակական գործերի» *(չունին ո՛չ* Bailly *և ո՛չ* Sophocles)։—*Հիւրշ. էջ 374։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՊՌՈՒԿ «շուրթն», *յգ.* պռկուեմ «շրթունք», *որից և ն յաւելուածով* պռունկ *Բ Կր. 27. իբրև ամմական բառ յիշում է ՆՀԲ, սրա հետ նոյն դնելով* պռուկ «հզան քիթը, ցռուկ» *Սարգ. յկ. որից* պռուաւոր «շրթնաւո՞ր» *Ա. Ռաք. լծ. սահմ. 316 (Որպէս ճրագ պռուաւոր է)։*

Մառ. հյ. բեռան *և վրաց.* ბაძი պիրի *բառերի հետ. աւելի ընդարձակ տե՛ս* բեռան։

Գիմ.—Մկ. Սլմ. Վն. պռուկ, *Մրդ.* պռոուկ, *Մշ.* պռուգ, *Տիգ.* բռուգ, բռուեգ, *Ախց. կր.* պռունկ, *Ալշ. Երև.* պռուեգ, *Տփ.* պրուեգ, *Սչ.* բռուեգ, *Ննխ.* բռուռուեգ, *Սվեդ.* բոօեգ, *Պրտ. Սեբ.* բոգուեմ, *Ասլ.* բոգիւեմ, բոգիւ*, *Զթ.* բը՝ոգրնիյմ, բը՝ոգրնիրմ, *Ռ.* բոգուեմ, բուոգուեմ, *Հմշ.* բրբուեմ *(իսկ բառ Մառ, Зап. Колл. Востоковедовъ I, էջ 73—80 Համշէնի Թրքացած հայոց բարբառով՝* բէրբուէ), *նշանակում են «շրթունք. 2. ծայր, եզերք»։ Սրանց դէմ Զղ. ունի* պռնչուկ, *որ գիտէ նաև Բառ. երեմ. էջ 216 և որի ծագումը անյայտ է։ Նոր բառեր են* պռկապռուկ «մինչև եզերքը լցուած», պռկօշ «կախուած շրթունքներով», պռնկկալ «լայնակ»։ *Բ.* բրռբուեմ, *յգ.* բրռբրնէր «շրթունք. 2. ամանի եզերքները», որոնք յառաջացած են պռուկ *և* շրբուեմ, շրբներ *բառերի խաչաձևմամբ։*

ՊՌՈՒԻՍԵԼ «առել». *ունի միայն Բառ. երեմ. 272, որից ՓԲ յաւել.։*

***ՊՌՈՓՍԵՏՕՐՍ.Յ** «Թագաւորի յուղարկաւոր. նոքա են՝ որք զդագաղսն և զահոյան բառնան». *մէկ անգամ ունի Մխ. գռ. 263 շատ խաթարեալ ձևերով. ինչ.* պռօֆսեռօրեայն, պռովսէտարայն, պռոռմֆսեռօրայն, պրէֆսէտօրայն. *նոյնը Մխ. այրիվ. 4՝* պռոֆսեռռրայ֊. *իսկ Ամբատի Գառնատանագրքում, էջ 87* պռաւֆսաւռորայն, պռօֆսռռրայն։

=*Յն.* προσεκσυτόρες *ձևից (չունի* Sophocles), *որ արդէն գործածուած է Բասիլիկեանց մէջ և առառադարձուած է լտ.* prosecutores, proexitores, proquisitores *կամ նման մի ձևից. Հմմտ. նաև* prosequator «մեռելի յուղարկաւոր», *որ ծագում է* prosequi «մեռելի յուղարկաւոր լինել» *բայից։*

Բառատմհան, Մխ. դտ. դնում է լտ. portitor *«կրող, տանող» բառից՝ վերի ձևով մեկնեց* Karst *Դասան. II. 76՝ վերջին լտ. ձևերը դնում է Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 69՝*

ՊՈՉՈՒՆ *«խողովակ». յիշում է Ալիշան՝ վասնակոց գրոց բառացանկի մէջ, էջ 257, առանց տեղը յիշելու. բնագիրը բառաքաղելիս այսպիսի ձևի չեմ պատահած՝*

ՊՈՍՏԵԼ *«քամահրել, անարգել, չտեսել» խոր. որ և* պոզոտել՝ *նոյն նշ. Արծր. 154.* պոստել զյօճս *կամ յումօք «յօնքերը կիտել» Վրդն. սղ. ճլ. էջ 442. Արծր. Կիր. պատ. նոյն է նաև* fոստել՝ *որ տես՝ (—Իսկ Փարպ. «նըստին դիմարկեալք, պատառոտեալք երեսօք» Մալխասեան* ZAPh *2, 231 ուղղում է պրըստեալ երեսօք):—Տե՛ս և* պոզոտել՝

Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 342 Թրք. buruś-dur-maq *«ճոթռթիել, ուռտիել»՝*

Գիհ.—Սեբ. բոսդել *«յօնքերը կիտել»՝*

***ՊՈՏՈՒԿՈՒՐԱՊԱՂԱՏ** *«առաջին և գլխաւոր կիւրապաղատ» ԱԲ (չունի ՆՀԲ). մէկ անգամ այս ձևով գործածուած եմ գտնում Արծր. 310 և երեք անգամ էլ Հաւաք. 31, 35, 36՝* պռոտուկուռապաղտին, -պաղն, -պաղին *ձևերով՝*

=Յն. πρωτοκουροπαλάτης՝ *նոյն նշ. (չունի* Sophocles. *Lexicon of the Byzantine Period եմ հայերէնի վրայից), իբր կազմուած* πρῶτος *«առաջին»+* κουροπαλάτης *«կիւրապաղատ» բառերից՝—Աճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 208՝

***ՊՈՏՕՍԵԻԱՍՏԻՈՍ** *«իշխանական մի տիտղոս՝ որ Յունաց կայսեր կողմից տրուեց Բորոս Ա-ին» Պատմ. ռուբ. 214՝*

=Յն. πρωτοσεβαστός *«առաջին և աւագ պատուական» (չունի* Sophocles. *Lexicon of the Byzantine Period եմ հայերէնի վրայից), իբր կազմուած* πρῶτος *«առաջին»+* σεβαστός *«պատուական» բառերից՝—Տե՛ս նաև* սեբաստոս՝—*Աճ.*

***ՊՈՕՍԻՕՓԻՕՍ** *«մերձեցի՛ր, ո՛վ Աստուած» բացագանչութիւն՝ որ ժողովուրդը կարձակէ, երբ սարկաւագը* պռոսխումէ *ասելով պատրաստում է աւետարան կարդալու. համապատասխանում է մեր «ասէ Աստուած» ձևին. համմտ. Լմբ. մատ. էջ 208. «Քահանայն. Սրբոյ Աւետարանիս.— Սարկաւագն միայն. Պռոսխումէ.—Ժողովուրդն. Պռոսէօքէօս»՝—Նոյնը գտնում եմ նաև Պարզ. (Հրատր. Գաթրճեան-Տաշեան) (Լամբրոնացւոյ) էջ 535* պռոսէօքէօս, *այլ ձ.* պռաւսէաւքէաւս, *էջ 563* պռօսաւրէաւս, *կամ միայն* աւրէաւս՝ *էջ 657,* օքէօս *Յհ. արճիշ. 89.— Բառ. հրեմ. էջ 272 ունի* պռօսօքէօս *«առ քեզ տէր Աստուած մեր»՝*

=Յն. πρόσει ὁ Θεός *նոյն նշ.՝—Աճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 122՝ — Հներից Տաթև. *Հարց. 645* **«օքէօսն** *աստուած թարգմանի»՝*

***ՊՈՕՍԽՈՒՄՔ** *կամ* **ՊՈՕՍԽՈՒՄԷՆ** *(սեռ.* պռօսխումին*) «Աւետարանը եկեղեցում կարդալ սկսելուց առաջ աստուած բանաձևերից մին» խոսր. պարզ. ժմ. Պարզ. էջ 154. Կիր. երզն. խր. դրուած նաև* պռօսխումէն՝

=Յն. πρόσχωμεν *«ուշադրութիւն անենք, մխա դնենք», որ* προσέχω *«մխա դնել» բայի հրամ. յոգ. ա. դէմքն է՝—Հիւբշ. 374՝*

Հներից խոսր. պարզ. էջ 55 ուղիղ է մեկնում. «Պռօսխումէ. բարբառս այս յունական է. ի մերս՝ ունկն դիք կամ ի վեր նայեցէք թարգմանի»՝ նոյնպէս և Լմբ. մատ. 182. «Զի նոցա (յունաց) բարբառովն ուրեք ուրեք եղեալ են բանք և անուանք, և ոչ յեղաշրջեալ, առ ի պատիւ աղգին. որպէս զՔրիստոսն անուն, և զամէնն, զտէր ողորմեայն յայլ աղգս, և զպռօսխումէն ի մերս»՝ Ասելի ընդարձակ ունի նոյնը՝ էջ 473. «Բայ բարբառոյս ի յունականն է լեզու. վասն հնագանդութեան աթոռոյն եղեալ է ի մերս անյեղաշրջելի. այլ զթարգմանութիւն սորին ոմն ասէ՝ նայեցուք, և այլ որ՝ զգուշութեամբ, որք ի մի հային դիտաւորութիւն ասացեալքս, քանզի զմի ունին զօրութիւն»՝ Սրանցից համառօտելով Յհ. արճիշ. 52 «պռօ՞սխումէ. այսինքն ուղիղ ի վեր հայեցէք». նոյնը՝ էջ 126. «Բառս այս յունական է. իսկ ի մերս՝ ունկն դիք կամ ի վեր հայեցէք թարգմանի»՝ Նոյնը դարձեալ Տաթև. ամ. 153 «Պռօսխումէ, այսինքն ի վեր

նայեցէք յաւետարանս սուրբ, զոր գրքա երգեցին»։—Նորերից ուղիղ են ՀՀՔ և ՆՀԲ։ Գաթրճեան, Պտրգ. 155 խ ձայնի պատճառով ասորերէնից մտած է համարում (բայց յետին յունարէնի մէջ χ հնչում է խ)։

**ՊՍԱԿ, ի–ա հլ. «պսակ, թագ, գլխի վրայ դրուած զարդ» ՍԳր.. «հարսի ու փեսի գլուխը գրուած մանեակը» Ես. կա. 10. Գէ. ես. «շրջանակ» ՍԳր. «արևի շուրջը բակ» Ոսկ. ես. «ամուսնութեան խորհուրդը կամ օրհնութիւնը» ՅՀ. իմաստ. վրք. հց. Կանոն. «եկեղեցականների գլխի կուլակը» Մարթին. «տարեշրջան» Սղ. կգ. 12. որից* պսակել *ՍԳր. պսակակալ Դատ. ը. 26. Ես. գ. 19. պսակաճամբար Ագաթ. պսակաճաս Կորիւն. պսակաւոր Իմ. դ. 2. Գ. մկ. ը. 14.* Խարապսակ *«բարձրաւանդակ, քերծ» Նորագիւտ բ. մնաց. իէ. 12.* Նուռապսակ *Ժղ. Հոմիկլ.* Կըրկնապսակ *Վանակ. յոբ.* Մարգարտապսակ *Մամիկ.* Ոճապսակ *Մխ. դտ.* Խաչապսակ *Նար. խշ.* Լուսապսակ *Շար. Գնձ. ևն։*

*=ՊՀլ. *pusāk «թագ, պսակ». Հմմտ. գնդ.* 𐭯𐭥𐭮𐭠𐭪 pusā- *«թագ, պսակ» (բառիս ստուգաբանութիւնը անյայտ է բստ* Bartholomae, Altiran. Wört. 912)։ *ՊՀլ. ձևը աւանդուած է Թուրֆանի* pusay, *սոգդ.* 'ps'k *ձևերով և փոխառութեամբ տուած է նաև Թոխար.* psuk *«պսակ». պահլաւ բառին է կցւում բստ* Zidén՝ *յն.* ἄμπυξ *«կանանց մազերը ճակտի վրայ կապելու կապ» (ստուգաբանութիւնը անյայտ էր բստ* Boisacq 56). Benveniste BSZ № *103, էջ 41, որից քաղում եմ այս տեղեկութիւնը, վստահելի է գտնում այս համեմատութիւնները։—Հիւբշ. 232։*

ՆՀԲ պրս. փիսակ *(բայց այսպիսի բառ անծանօթ է)։* Müller SWAW *78, 431 գնդ.* pusa: *Հինք. պրս.* պէսաճ, բէսաճ *(իմա՛* basāk, pasāk *«մանկական ծաղկեայ պսակ»)։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 196 պրս.* باسك basāk *«ծաղկեայ պսակ» բառից։—*

ԳՒՒ.—Աբց. Կր. պսակ, *Ալշ. Մշ.* պսագ, *Խրբ. Համշ. Սեբ.* բսագ, *Պլ.* բսագ, փսագ, *Գոր. Ղրբ. Մկ. Մրդ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ.* փսակ, *Երև. Նախ. Ռ. Սչ.* փսագ, *Ասլ.* բսագ, փսագ, բսայ, փսայ, *Տիգ.* բսսոգ, *Ագլ.* փսօկ, *Հճ.* բmսսօգ, *Զթ.* բօսօգ, բօսոգ, *Սվեդ.* բսսիւգ. *Թրքախոս հայերից՝ Ատն.* բսսագ, *բոլորն էլ «պսակի խորհուրդը», այսինքն իբր եկեղեցական բառ։ Նոր բառեր են* պսակադրամ, պսակաճաշ, պսակուկ, պսակգնացէֆի, պսակտես։

ՓՈԽ.—Ուտ. փուսակ *«պսակ, ամուսնութեան կարգը»,* փուսակբեսուն, փսակբեսուն *«պսակել, ամուսնութիւնը օրհնել». այս բառերի մէջ գտնում ենք մեր բառի հնագոյն ու ձայնաւորը։*

**ՊՍԵՄՆ *«վարդի փուշ». մէկ անգամ ունի Ոսկ. պօղ. Ա. 399. «Ընդդեմ միմեանց կայցեն հակառակք և միմեանց նմանիցեն, որպէս ցորենոյ՝ որոմն և վարդի պսեմն»* (յն. բնագրում *«փուշ»*)։ *Նոյն բառն է անշուշտ որ յետնաբար ունի Վստկ. 136 գրծ.* պրսմով *ձևով, իբր «մի տեսակ վայրի փշեղէն». այսպէս՝ «Պրսմով կամ այլազգ չոր փշով զբերանն կալ»։ Ուղղականը անյայտ է. բայց դատելով նախորդից՝ պիտի լինի* պսեմ։—*Վաստակոց գրոց յանկի մէջ, էջ 257 անուշադրութեամբ բառս դարձած է պլամ, որ անշուշտ ուղ. պրսմ ձևից է յառաջացած (բս և լա նոյն ձևն ունին)։*

**ՊՍՈՒՐ *«մի տեսակ անծանօթ բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2598։*

=Արաբ. بسر bisr *կամ* busur *«արմաւ»։ Տե՛ս նաև* պուսիր։

Այսպէս է մեկնում ՀԲուս.։ Ըստ այսմ պատահական նմանութիւն ունի արաբ. بسعير bas'īr *«fougère» (տե՛ս* Steinschneider-*ի հատաքածոյի մէջ՝* WZKM *11, 316)։*

**ՊՍՊՈՒՂԵԼ *«ճակատամատել». ունի միայն Բառ. երեմ. էջ 273. այս բառն է որ դարձել է պապուզել «ճամարտակել» ՀՀՔ (առանց վկայութեան)։*

Պատիկ *տե՛ս Պզտիկ։*

ՊՏԱԿ *«պսակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 273։*

Պտեկ *տե՛ս Պոչոն։*

Պտեղն *տե՛ս Պտուղ։*

ՊՏԵՐ *«մի տեսակ բոյս. լտ.* aspidium filix mas» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2604։*

=Յն. πτερίς, լտ. pteris, արաբ. بطزيس bitārīs նույն նշ.։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՊՏԻՈ *«որոնում, փնտռտուք». արմատ առանձին անդորձածական, որից ունինք* ապրապտիւ *էմբ. առակ.* պտռել *«հողը փորփորելով պրպտել» Ճառընտ. սրա նորագոյն ձևն է* փնտռել *կամ* փնդռել՝ *որ տես առանձին։ Զարմանալի է պտռող «անյայտ մի արհեստաւոր», որ յիշուած ենք գտնում 1262 թ. մի արձանագրութեան մէջ (Վխմ. տար. 104). «ՁՄիմէոն պտռող յիշեցէք. աղաչեմ»։ (Կոստանեան, Վխմ. տար. էջ XVII համարում է «փորագրիչ», անշուշտ որովհետև* պտռել *նրշանակում է «հողը փորփորելով որոնել». բայց սրա բուն նշանակութիւնը «որոնել» է և ո՛չ թէ «փորել»։ Պօլսում կայ առային, որ է «կորսուած բաներ փնտռելով գբաղող արհեստաւոր». աւելի ընդարձակ տե՛ս իմ Թուրքերէնէ փոխառեալ բառեր, էջ 80)։*

ԳԻՒ.—Տփ. պտռիլ, *Ղրբ.* պըտրռել *«որոնել, քիթը՝ առամնները փորփրել»։ Ակն* բ'ըռել, բ'ըդրռել *«փնտռել», Մշ.* փնդռել, *Պլ. Ռ.* փնդըռել, *Տիգ.* փնդըռիլ, *Ախց.* փնտռել, *Սեբ.* փռռել, *Բ.* փռդել *«քչփորել, փորփրելով որոնել» (օրինակ՝ աղբը փռդել)։ Կրկնականը՝ Մրզ.* պտրռռել, *բոլորն էլ «որոնել»։ Նոյնպիսի մի կրկնական է երևում պրպտել «որոնել, փնտռտուկել»>ՀԹ.* բրյբրդիլ, *այն է* *պպռել։ *(Ամատունի, Հայ. բառ ու բան, էջ 571 դնում է պրպտել իբր Պօլսի բառ, վկայութեան կոչելով ՀԱ 1904, 33 իմ մի նախադասութիւնը։ Պօլսի գաւառականում այդպիսի բառ չկայ. և իմ գրածը գրական լեզուով է)։—Նոր բառեր են* պտռոցմ, պտռտել, կեռիֆպտռելի։

ՊՏԼՒԿ, *նշանակութեամբ անասոյզ բառ. երկու անգամ ունի Յայտմ. դկտ. 11 և մրտ. 4. «Եւ ի հատանիլն ի տահանցն նոյնպէս եկաց (ի պահս) և ոչ պտիղացաւ ի կերակուրս զատկաց. բնաւ ոչ պտիղացաւ ի պտղոյ դրախտին»։ ՆՀԲ, որին առաջին վկայութիւնն է միայն ծանօթ, մէկնում է «շաղախիլ, մրխիլ», ՋԲ «պատռտիլ, անձնատուր լինել», ԱԲ «մօտենալ, ձեռք զարնել, ինքդինքը բանի մը տալ»։*

Պտղակ *տե՛ս Պտուղ։*

***ՊՏՂԻ** *«մի տեսակ անպտուղ ծառ. թեղի, կնձնի,* ulmus campestris L» *(ըստ Արթինեան, Ածաշնչի տունկերը 142) Վստկ. Յայտմ. աւելում է նաև պտեղածառ, պտեղեայ ծառ, փտեղեայ ծառ։*

=Յն. πτελέα կամ πτελία Հոմանիշ ձևից փոխառեալ. նոյն յն. բառի ցեղակիցն է հյ. թեղի, որ տե՛ս առանձին։—Հիւբշ. 374։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԳԻՒ.—Նո՞յն է արդեօք պցղի *Տր. տճկ. «ղըղըլ աղաճ»։*

ՊՏՈՅՏ, *ի հլ. «ջրի՝ դեսի յորձանք» Յոր. իր. 10. Սղ. կր. 16. Իմ. ժթ. 7. Ոսկ. փիլիպ. որից* պտուտիլ, պտուտել *«ոլոր ոլոր դառնալ՝ դարձնել» Նար. ՅՀ. կթ. Բրս. մրկ. Ճառընտ.* պտուտաճալ *Եպիփ. կուս.* պտուտարար *Շիր. ՅՀ. կթ.* պտուտկել *Շնորհ. Հեղս. Բրս. մրկ.* եռանիգապտոյտ *Անան. եկեղ.* ճերմիգապտոյտ *Սիւն. տաղ. խչ.* շրջանապտոյտ *Նար. տաղ.* շրջապտուտկեալ *Դիոն. թղթ.* ոլորապտոյտ, պտուտակ, պտուտակաւոր *(նոր բառեր) են։ Նոյնից է նաև* պտուտուտակ *«սխտոր», որ տե՛ս առանձին։*

Հիմնք. պատատել և փաթոյթ բառերի հետ։

ԳԻՒ.—Ղզ. պտտել, *Երև.* պտրտել, *Ագլ. Ախց. Կր.* պտրտիլ, *Ղրբ. Տփ.* պտուտ գալ *«պտտիլ, դառնալ»,* պտուտ տալ *«դարձնել», Ալշ. Մշ.* պղօղել, *Պլ.* բրդրդիլ, *Հմշ.* բրդրդուշ, *Սեբ.* բդրդել, *Ռ.* բրդդել *(երկու վանկով). Ասլ.* բդրդէ՛լ, *Շմ.* պիւտիւտ տալ, *Ակն.* բրդօղ, *Սվեդ.* բտդ՛վիլ *«պտտիլ, շրջիլ, զբօսնուլ. 2. որոնել»։—Նոր բառեր են* պտուտկուն *«մեծ մրրիկ»,* պտտան, պտտացնել, պտտկիլ, պտտուիլ, պտտուկ, պտտուն։

ՓՈԽ.—Քրդ. potut *«մրրիկ հողմոյ»* (Justi, Dict. Kurde 74)։

ՊՏՈՒԿ, *ո հլ. (յգ.* պտկունք, պտկանց*) «ընձիւղ, ծիլ, բողբոջ» Ագաթ. Սիբ. Համառ. 221. Ոսկ. Համր. Փիլ. լիւս. յովն. և լին. «ատինքի ծայրը» Առակ. լ. 33. (նշանակութեան զարգացման համար համմտ.* ծիլ *և* ծրլիկ*). որից* պտկել *կամ* պտկիլ *«ծլիլ, բողբոջիլ» Իմ. գ. 4. ընշապտուկ Եզն. ծայրապտուկ Վրդն. երգ.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* bud- «ուռչիլ» արմատից, *հյ.* -ուկ *մասնիկով. ցեղակիցները տե՛ս պուտ բառի տակ, որ պահում է պարզ արմատը. յիշենք այստեղ ի մէջ այլոց մ. անգլ.* budde, *անգլ.* bud, *հոլլ.* bot «կոկոն»։

Հիմնք. պոյտն, պուտուկ *բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ* Petersson KZ 47 *(1916), 253—4, որ յիշում է նաև* Pokorny 2, 116: *Պատահակա՞ն են վրաց.* ბუტკო բուտկի, ბუტკო բուտկո «ծիլ, կոկոն»։

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Մկ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. պուտ, *Ալշ. Մշ.* պղուգ, *Հմշ. Սեբ. Տիգ.* բդուգ, *Ասլ.* բդիւգ, բդիւյ, *Ագլ. Գոր. Ղրբ.* պոօկ, *Զթ.* բօդուգ, *Հճ.* բողուգ, *Սվեդ.* բուդիւգ, *Ննխ. Պլ. Ռ.* բուդուղ, *Թրքախօս Հայեբից էլ՝ Առն.* բդուղ. *բոլորն էլ «ծծի ծայր կամ կովի ծիծ» նշանակութեամբ (վերջիններին մէջ ղ ձայնը յառաջացած է շփոթելով պուտուղ բառի հետ)։ Նախաւոր «ծիլ» իմաստը պահում են Վն. Գոր. Ղրբ. վերջինիս մէջ նշանակում է նաև «ծայր» (ինչպէս՝ լիտան, ղրչի են), որից էլ* պակիլ, պոկուիլ «գոյանալ, յառաջ գալ, նոր երևան գալ». *Հմմտ.* ծագ *և* ծագիլ: *Նոր բառեր են* պոկալ, պրտկակար, պոկատ:

ՊՏՈՒՂ, ո *հլ. «միրգ, փոխ. բերք, արդիւնք, գործ» ՍԳր. «եկեղեցական տուրք, պաղի» Բուզ. 235. որից* պաղաբեր *ՍԳր. Եւս. քր.* բազմապաղաբեր *Մծբ.* պաղազուարճ *Ոսկ. ես.* պաղալի *Եփր. ծն.* պաղամաղ *Օրին. իդ. 21. Ղեւտ. ժթ. 10.* պաղամաղել *Եւագր. 54.* պաղի «եկեղեցական հարկ՝ բերքով» *(հմմտ. ֆր.* fruit «պտուղ» *և իրրև իրաւագիտական բառ՝ «մուտք, առացուածք, տուրք») Զքր. սարկ. Գ. 8.* անպտուղ *ՍԳր.* լիապտուղ *Ոսկ. յհ. ա. 31. Փարպ.* միապտուղ *Կիւրղ. թգ.* ձիրապտուղ *Ոսկ. հիես.* հասարակապտուղ *Փարպ.* պաղատու «պտուղ տուղ» *Փիլ. նար. «պտղի, այն է՝ եկեղեցական տուրք տուղ» Լմբ. մատ. 430.* կաղնապտուղ *Փիլ. լին.* պաղատատ *(նոր բառ) ևն։—Պտուղ մասնաւորապէս նշանակում է «խաղողի մէկ հատիկը». ինչ. «Հացն ի բազում ցորենոյ բաղկանայ և գինին ի բազում պտղոց խաղողոյ» (Տաթև. ամ. 161). որից փոխաբերաբար նշանակում է նաև «աչքի բիբ» Եփր. այլակ. Նահայ. Միխ. ատ. «մատի ծայրը» Առակ. լա. 20 (երկուսն էլ կլորակ ձևից առնելով)։ Առաջինից պիտի լինի նաև* պղակն *«աչքը տկար կամ պակասաւոր» Ղեւտ. իա. 20 (հմմտ. գւտ.* պղիլ *«աչքի պտուղը բնկնիլ դուրս, աչքը պայթիլ»). երկրորդի հետ նոյն է* պտեղն *«մատի ծայրը» Լմբ. իմ. Վստկ. սրանք ունին* պղաձ, ի պղաձէ, *հոլովաձևերը, որոնցից ՆՀԲ հանում է ուղ.* պտեղն ձևը. *բայց* պտեղն *չէ աւանդուած, գաւառականներում առհասարակ ունինք* պըտուղ *Պլ. «մատի ծայրի փափուկ միսը», Խ. Վն. «պաղունց, մատի ծայրով առնուած քանակութիւն» (օր. մէկ* պտուղ խուճկ. *այս ձևը ունի նաև Մաշտ. Կիլիկ., որ ՆՀԲ սխալ է մեկնում «բոլորակ հատ խնկոյ», իբր թէ լինէր խնկի տեսակը, մինչդեռ չափն է). և միայն Հճ. ունի* բտղեղ<պտեղ *«պաղունց». սրանից են կազմուած նաև* պաղունց *«մատների ծայրով առնուած քանակութիւնը»,* փտղել *(իմա՛* պաղել*) «մատի ծայրով պտուղը ճզմիլ՝ հատունութեան աստիճանը իմանալու համար» Վստկ. որոնք ցոյց են տալիս թէ բառի բուն ձևն է* պտուղ *և ո՛չ* պտեղն։

Աւետիքեան, Քերակ. 1815, 312 պատել *(կճեպով պատած) կամ* պէտ *(ծառին պիտանի) և կամ* պտուկ *«ծառի ծիլ» բառից։—ՆՀԲ* պաղակն *լծ. յն.* πτίλλος τοῦ ὀφθαλμοῦ: *Մատ* ЗВО 5, *319* պտուղ *կցում է դնդ.* fśúša *հմմտ. նիշինն։ Հիմնք. արաբ.* badal «փոխարկին» *բառից։* Patrubány SA 1, 311 *հնխ.* pat «բնկնել» *արմատից՝ -ուղ մասնիկով։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 15 հնխ.* bhidu-lo-m *ձևից, որ է «պայթիլ» արմատից. հմմտ. լտ.* findo «ճեղքել», *ինչպէս սանս.* phala- «պտուղ» *ծագում է* phal- «ճաքիլ» *արմատից։* Petersson KZ *47, 253* պտուկ *բառի հետ դնում է հնխ.* bud- «ուռչիլ» *արմատից, որի ժառանգները տե՛ս պուտ բառի տակ։* Walde 293 *ընդունում է* Pederson-*ի մեկնութիւնը, բայց* Pokorny *2, 116 և 139 մերժելով այն՝ ընդունում է* Petersson-*ի մեկնութիւնը։ (Ձևապէս անընդունելի չէ*

այս մեկնութիւնը, որովհետև հնխ. budպիտի տար հյ. պտ-. իսկ -ուղ մասնիկ է, ինչպէս տես-իլ, կենց-աղ. կարևոր է միայն գտնել ժառանգ մի ձև «պտուղ» նշանակութեամբ)։ Պատահական նմանութիւն ունին արաբ. فَتْلَة fatla «պատիճ, որոշ ծառերի պտուղի պատեանը», فُتُل futul «զանազան անտառային ծառերի պտուղի պատճանման բերքը», اِفْتَال iftāl «յիշեալ տեսակի ծառերի կճեպ կապելը» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 310)։

ԳԻՒՒ.—Աիսց. Երև. Մկ. Ջղ. Սլմ. Տփ. պըտուղ, Շմ. պուտուղ, Ագլ. պտօղ «միրգ, աչքի բիբը», Ալշ. Մշ. պդուղ «բիրթ, խազողի հատ, աչքի բիբ», Մրղ. պուտուղ, Խրբ. բդուղ «խազողի հատ, բիբ», Սչ. Տիգ. բդուղ «միրգ», Զթ. բօղուղ, Պլ. բուդուղ «բիբ, պղպջակի մէկ պնտիկը», Սվեդ. բդէօղ «ձիթապտուղ»։ Նոր բառեր են ծառապտուղ, աչքապտուղ, պրտղատել, պտղաւոր, պտղիլ, պտղուիլ, պրտղուցց, պտղտաճ, պտղտուճ, պտղտել, պտղտուիլ, պտղտուկ։ Թրքախօս հայերից՝ Ամն. բարիբդուղ «բարի պտուղ», բղղի «պտղի», գասընբդուղ «ձիթապտղի նման մի պտուղ՝ որ իբր հինայ են գործածում» (Արեւելք 1888 նոյ. 8—9)։

ՓՈԽ.—Վրաց. პტული պտուլի «թաց պտուղ. 2. նուրբ. 3. հազուագիւտ բան»։ Ամանայի թուրքերը և թրքախօս յոյները հայերից փոխ են առած gasnəbəduγ «կասնապտուղ» (տե՛ս վերը)։ Թրք. գւռ. Աչն. buduγ «ձիթապտուղ» (Կոչնակ 1928, 15)։

*ՊՏՊՏ «հովուի բիր կոչուած բոյսը, sanguinaria, polygonium, scribonius largus» Մխ. բժշ. 68։

=Արաբ. بَطْبَاط bṭbāṭ նոյն նշ. որ ծագում է بَطْبَيْط šbṭbāṭ ձևից, այն է ասոր. ܫܒܛܒܛܐ šəbatbaṭā „πτολύγονον, equisetum ramosissimum» (Brockelm. 364 ա), որ ծագում է ասոր. ܫܒܛܐ šabṭā «գաւազան» (անդ 363 բ) բառից։ — Այս բոյսի անունը շատ լեզուների մէջ կապուած է «գաւազան, ցուպ» բառի հետ. ինչ. հյ. հովուի բիր, արաբ. عَصَا الرَّاعِي ʿaṣā-ar-rāʿī, Թրք. çoban deynegi, հյ. հովուի գաւազան (Ամիրտ.), նաև ասոր. վերի ձևը։

Ուղիղ մեկնեց Seidel, Հրտր. Մխ. գտ. § 186։

ԳԻՒՒ.—Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 552 և աղշրաեմ բառի տակ յիշում է գւռ. պատպատ «թունաւոր մի բոյս»։

Պտռել տե՛ս Պտիռ։

ՊՏՍՊԵԼ կամ **ՊՏՍԿԵԼ** «փոքր երեխաների և անասնոց ձագերի ցատկռտել խաչտալը» Գենեսադ. Յայսմ. յուլ. 15. Վրդն. սղ. ՃԼ, էջ 442. Վրք. և վկ. ա. 694 (այլ ձ. ունի **պտըզգել**). նոյն բառը Յայսմ. փետ. 4 գրուած է պատսել. «Մինչև սանդեայ տղայքն՝ որք ի գիրկս մարցն, պատսէին ասելով...», իսկ Յայսմ. յուլ. 15 (երկրորդ անգամ) **պտռտալ**. «Աքսոտէր և նետէր զիշխանն և զերեսն ի նմանէ ի բաց դարձուցանէր, պտռտայր և ի մայրն հայէր»։

*ՊՐԱԿ, ի–ա հլ. (գործածուած է անեզաբար) «Գործք Առաքելոց» Մսկ. կող. Թ. էջ 624 և յհ. բ. 42. որանց մէջ գործածուած է առանց առաքելոց բառի յարադրութեան. աւելի յետոյ ասւում է **պրակ առաքելոց** Վեցօր. Թ. էջ 196. ՅՀ. խմ. նկեղ. Սարգ. իսկ յունարան հեղինակներից սկսեալ գործածւում է **պրակ** «գրքի գլուխ կամ մաս» նշանակութեամբ. Սահմ. Պորփ. Վրք. հց.—նոր գրականում եզ. **պրակ** նշանակում է միայն «գրքի մաս, fascicule»։

=Յն. πρᾶξις, յգ. πράξεις «գործք, գործունութիւնք», յատկապէս πράξεις τῶν ἀποστόλων «Գործք առաքելոց». իսկ «գլուխ, հատուած» նշանակութեամբ առնուած է πρᾶξις «ընթերցուածք, հոգեորի բանախօսութիւնը» ձևից։ Ծագում է πράσσω «ընթանալ, գործադրել, վերջացնել» բայից։—Հիւբշ. 315, 375։

Նախ Schröder, Thesaur. 46 ասոր. ܦܪܩ pəraq «մաս, կտոր» բառի հետ։ ՀՀԲ և ՆՀԲ (որ պուրակ և պրակ բառերը սխալմամբ իրար է խառնում) յն. πρᾶξις, Spiegel, Huzw. Gram. 189, որից և Müller և Պատկ. պհլ. parāk, պրս. pāra «մաս, կտոր»։ Հիւբշ. 315 չի ընդունում կապել **պրակ** «հատուած» հր. פרק pāreq, פרקא perqā «գրքի տա-

բաբաժանում», ասոր. ܦܪܩܐ perqā *«շորի կտոր, պատառիկ» բառերի հետ, որովհետև Դաւիթ Անյաղթի պրակների դէմ գոնում ենք յն.* πρᾶξις։

ՓՈԽ.—Վրաց. პრაკი **պրակի** *«պրակ» (տե՛ս* Физіологъ, *հրատր. Մառ, էջ XXXVII)։*

***ՊՐԱԿՍԱՒԱԹԱՅՔ,** *կամ* **պրակսաւթոյք, պրակս աւաթայք, պրակս աւաթեայք, պրակֆսաւաթայք** *«անվաւերական գիրք գործոց Առաքելոց» եւս. պտմ. 147, 148, 200, եփր. բ. և դ. կոր. 81. 117. Սարգ. բ. պետր. ա. յոջ. ա տպ. էջ 509, բ տպ. էջ 399։*

=Ասոր. ܦܪܩܣܒܛܐ prqsvtā *ձևից, որ տառադարձուած է յն.* πράξεις αὐτῶν *«Գործք նոցա» բառերից. հայերէնին անցել է ասորական թարգմանութեանց միջոցով (եւս. պտմ. և եփր.)։—Հիւբշ. 375։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՊՐԱԿՏՈՐ** *«հարկահան» Վրդն. սղ. գնում և մեկնում է իբր օտար բառ. «Քննեցէք փոխառուն զամենայն ինչս նորա. Սիմաքոս (Թարգմանէ) պրակտոր, որ է հարկահանն»։*

=Յն. πράκτωρ *«հարկահաւաք»։—Հիւբշ. 375։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՊՐԱՍ** *(գրուած նաև* **պրասխ, պրախ**), *ի հլ. «մի տեսակ ուտելի բանջարեղէն՝ սոխերի ընտանիքից» Թուց ժա. 5, Մծբ. 240. եփր. երաշտ. 204։*

=Յն. πράσον *«պրաս», որից փոխառեալ են նաև թրք.* اصپرچ, prasa, *վրաց.* **პრასა պրասա,** *թուշ.* **პრას պրաս,** *լազ.* prasa, praska, proskya, *ռում.* prajă, *հլ.* prasŭ *են, յոյն բառը կցւում է լտ.* porrum, porrus *հոմանիշին և երկուսը միասին հանւում են հնխ.* prso- *ձևից, որ եթէ հայերէնում ունենայինք, պիտի գոնէինք *հաս ձևով* (Boisacq 810, Walde 601, Pokorny 2, 84)։—*Հիւբշ. 375։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԳԻՒՐ.—Կր. **պրաս,** *երև. Տփ.* **պռաս,** *Հմշ.* **բռաս՝** *նոյն նշ. իսկ Սլզ.* **փուրաս** *«սոխի ու սխտորի միջև՝ կծու համով՝ կոճղէզաւոր մի ընդեղէն» (Նաւասարդ 1914, էջ 71)։*

***ՊՐԱՍԽ,** *որ և* **պրասխի, պրասի** *«մի տեսակ բոյս» Գաղիան. պրասին Բառ. երեմ. յաւել. 571.—Ոսկեան համարում է «marrubium», նշէ «մի տեսակ գուիրակ, prasium», Հիւս. § 2613 «ballota», Տիրացուեան, Contributo § 463 ballota nigra L», իսկ Բառ. երեմ. էջ 273* **պրասղ** *«ձմերուկ» (որ հանած պիտի լինի Մծբ. էջ 240 հատուածից. Պրախիան և մեղրապոպիան և սեղխով)։*

=Յն. πράσιον *«marrubium բոյսը», լտ.* prasium *«մի տեսակ գուիրակ», արաբ.* فاراسيون farāsiyūn՝ *նոյն նշ.—Հիւբշ. 375։*

***ՊՐԱՍՏԻՆ** *«քաղաքի արուարձան, նախաքաղաք» Սոկր. էջ 89, 112. գրուած նաև* **պռաստին** *Սոկր. 194. Վրդն. պտմ. տպ. Վենետ. էջ 92, 98, 102 (հասկանում է «գիւղ», ինչ. էջ 102՝ եւ զպռաստինս հարիւր, որ է գիւղեան). Յայտմ. փետ. 17. Ճառընտ. Պտմ. ամաս. 60.* **պրաստ** *կամ* **պռաստ** *Ճառընտ. որից* **պռաստնոց** *«գաւառ, երկիր» Մագ. թղ. 157։*

=Յն. προάστειον, προάστιον *«նախաքաղաք, արուարձան», որից նաև վրաց.* **პრასტიონი պրաստիոնի** *«мѣстопребыванія բնակավայր» (Զուբիանով[2] 1022), թևրևս հայերէնի միջնորդութեամբ, ինչպէս երևում է ձևից՝ յոյն բառը ծագում է πρό «առաջի» և ἄστυ «քաղաք» բառերից։—Հիւբշ. 375։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՊՐԱՍՏՈՒԿ *«հերակալ, վարտակալ, ծամակալ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 273, որից ՓԲ յաւել.։*

***ՊՐԱՍՈՂ** *«վիճաւորական բաղպան, բազկի զրահ». երկու անգամ ունի Սմբ. դատ. Բազկնոց պրացալն է (էջ 87). Այլուայ պրացալ (էջ 88)։*

=Միջ. լտ. brazalis, brazarolus *նոյն նշ. կազմուած է լտ.* brachium *«բազուկ» բառից։*

Ուղիղ մեկնեց Karst, *Դատաստանագիրք, II. 77։*

***ՊՐԱՔՍԻՍ** *«գործ». մէկ անգամ ունի Մագ. թղ. 234. «պատուհասարոյն պրաքսիս», այն է «գործի մէջ կաղ»։*

=Յն. πρᾶξις *«գործ, գործողութիւն» (տե՛ս վերը* **պրակ**)։—*Ա.Ա.*

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատեն. հտ. Բ. էջ 202, 204։

***ՊՐԵՏՈՐ** *«նախագահ դատաւոր Հռովմա-*

յեցոց. 2. խորհրդարան, տեղի առնելի» Վրք. հց. բ. 322. նոյն է նաև պռետոր «փոխանորդ առաքելոց» Բղթ. դաշ. 24. որից պռետորական Սկր. էջ 419։

=Յն. πραίτωρ «առաջին իշխան, նախագահ, պետ», πραιτώριον «կառավարչապետի պալատը». երկուսն էլ փոխառեալ են լտ. praetor, praetorium ձևերից. հայերէնը յունարէնի միջնորդութեամբ է։—Հիւբշ. 375։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ, Աւետիքեան, Մեկն. Բղ. պօղ. բ. 654 և ՆՀԲ։

*ՊՐԷՖԱՑ, որ և պրէֆացիօ, պրէֆացիօճ, պրէֆասիօճ, պրէֆէսիոն, պրէֆէսիօճ «նախաբան աղօթից ունիթոռական պատարագի» Պտրգ. 484—9։

=Լտ. praefatio, յգ. praefationes նոյն նշ.։

*ՊՐԻՆԿ «վայրի խաշխաշ, ապրանճ կամ մի ուրիշ տեսակ բոյս» Բժշ. ոմնի միայն ՀԲուս. § 2614։

=Արաբ. بِرْنِك birink, برنق birinq, برنج birinǰ «վայրի խաշխաշ» (տե՛ս ի Stein schneider WZKM 11, 315)։—Ա՛ճ.

*ՊՐԻՈՆԻ «սղոցաձուկ». մէկ անգամ ունի Վեցօր. 153. Որ անուանեալ կոչի խսիփիւ, պրիոնի (ձեռ. պրոնի, լուս. պռորնի). ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. πρίονας, որ յոգնակին է πρίων «սղոցաձուկ» բառի։—Հիւբշ. 375։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՊՐԻՍԿ «մի տեսակ բոյս է» (քատ Գաղիան. «thapsia», քատ Բժշ. «thapsus, սկիւթական փայտ»)։

Եթէ այս նշանակութիւնները ճիշտ են, պէտք չէ ուղղել բառը պրինկ, որ տե՛ս վերը։

*ՊՐԻՄԱՆ (պրիմայ ձևի՞ց է և յօդով) «մետաքսեայ կտոր» Սմբ. դատ. 21, որից պրիամեղէն Մաշտ. ջահկ.։

=Արաբ. إبريسم ibrīsum «մետաքս» ձևից. աւելի ընդարձակ տե՛ս ապրիշում։—Ա՛ճ.

*ՊՐԻՍՏ «սղոցաձուկ» Վանակ. յոր. ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. πρίστης «սղոցաձուկ»։—Հիւբշ. 375։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ՊՐԻՏԱՆ «առեղնակալ յունական քաղաքաց կամ ծերակուտական ժողովի ևն». մէկ անգամ գործածուած է Ոսկ. մտթ. ա. 11. «Եւ առաքինութեան պարգև ոչ տերև դափընոյ, և ոչ ոստ և պսակ ձիթենւոյ, և ոչ ոռճիկք պատուիրանաւ, և ոչ պատկերք պղծընձիք. քանզի այն ամենայն ոյժ և արհամարհեալ էր»։ Այս հատուածի մէջ պատուիրանաւ խանգարեալ գրչութիւն է, որ իմաստ չունի և պէտք է կարդալ պրիտանաւ՝ համաձայն յոյն բնագրին։

=Յն. πρύτανις «յունական քաղաքների գլխագոյն մագիստրատ, ծերակուտական», πρυτανεῖον «յունական քաղաքների մէջ այն հասարակական հաստատութիւնները, ուր պահւում էր նուիրական հուրը և ուր խնամւում էին հասարակական հիւրերը և պետութեան թոշակաւորները»։

Ուղիղ մեկնեց նախ Ոսկեբերանի (Վենետ. 1826) հրատարակիչը. յետոյ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 1005 ու կրկնում է Ա՛ճառ. Հյ. նոր բառեր հին մատեն. Բ. 262—3։

Պրծանիլ տե՛ս Պուրծ։

ՊՐՃԵԼ. յետին ժամանակի բառ՝ անստոյգ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Պղնձ. 14. «Ականջ ոսկի ու արծաթ, ակն ու մարգարիտ ունէի, որ պրճելով լցեր էի, ու ապրեցայ հարիւր տարի»։—Թերևս նշանակում է «յափշտակել, գլխել, կողոպտել»։

ՊՐՃՈՒԿ «ձիու պոչի վերի ծայրի պինդ մասը» Վտակ. 199, 202։ (ՆՀԲ մեկնում է «ջիղ, նեարդ», որ յարմար չէ վերի վկայութեանց)։

Պատահական նմանութիւն ունի ԹՒր. بِرچاق burćak «դանգուրք, խոպոպիք» (Будаговъ II, 252)։

ՊՐՇԱԿ (որ և պշրակ, պչրակ, բրշակ) ի–ա հլ. «առաստաղի վրայի տախտակէ զարդերը» Բառուք գ. 54. Եփր. աւետ. 324. Լծ. կոչ. Նիւս. երգ. Վրդն. երգ. էջ 94. Բենիկ (տպ. Սոփերք ԻԱ. 81). Արծր. Պիտառ. (Հին բռ. մեկնում է «պրշակ, շինուած մարգակով և տախտակով». Բառ. երեմ. էջ 58 բրշաշակ «զարաւանդ». բայց այս զարաւանդը պէտք

է հասկանալ ճիշտ ինչպէս ինքը էջ 74 մեկնում է «պրշակ, որ է մարդակ և տախտակ շինուածոցն կամ կոճ». որին մատղիր չլինելով փբ՝ մեկնում է սխալմամբ «բրաշակ, բարձր սար! դարաւանդ»)։

ԳԻՒ.—Համմտ. պրջակ, պրջիկ Մշկ. «ձող»։

***ՊՐՈԺԻԱՋՄԵՆՈՍ** «նախասրբելոց պատարագ, որ միայն Մեծ Պահոց մէջ էր մատուցւում» (յետին ժամանակներս թարգմանուեց հայերէնի և գործածական էր թերևս հայ-հոռոմների մէջ) Պտրգ. 414. «Աստուածային պատարագ քառասնորդացն պրօժիալմենօս!, արարեալ սուրբ հօր մերոյ Վասիլիոս»։

=Յն. προηγιασμένος «նախասրբեալ». առնում է λειτουργία τῶν Προηγιασμένων «Պատարագ նախասրբելոց»։

Ուղիղ մեկնեց Տաշեան, Պտրգ. էջ 349, 414։

ՊՐՈՄ «վարսակի նման մի խոտեղէն է» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 2616։

ՊՐՈՅՆ «քաջ, կտրիճ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Սիմ. ապար. 56. «Տեսին զՎահան սէք և պրրոյկ, լինդ յաջողիլն մախայինն»։

Գրուածքս սխալագիր և սխալատիպ մի գրութիւն լինելով՝ կարելի է կասկածիլ որ մի՛ գուցէ պէտք է ուղղել **աոոյգ>աոոյկ>պրոյկ** (**ա** և **պ** *տառերի նմանութիւնից յառաջացած մի սխալ)։*

***ՊՐՈՊՈՍԻՏՈՍ** «նախագահ, վերահսկող». առանձին չէ գործածուած. սրանից ունինք **պրոպոսիտոսութիւն** «պաշտօն նախագահի» Ճառընտ.=Վրք. և վկ. ա. 413 (ձեռ. **պրոպոսիդոսութիւն**). *ուրիշ օրինակ չկայ։*

=Յն. προπόσιτος ձևից, որ փոխառեալ է լտ. praepositus «գլխաւոր, գինուորական հրամանատար, պալատական կառավարիչ ևն» բառից. կազմուած է prae «յառաջ» և positus «եդեալ» բառերից և նշանակում է «յառաջադիր»։—ՀԲուշ. 375։

Նշ՛ր դրաւ յատինից։

Պրոտոս, Պրոնթոս *տե՛ս Լուսաւս։*

***ՊՐՈՒԽ** «շրէշ բոյսը» Ասար. ունի միայն ՀԲուս. § 2618։

=Արաբ. بروق birvāq «շրէշ» (*տե՛ս* Steinschneider WZKM 11, 316)։ *Թթէ ջընջուէր Ի նշանը* (بروق) *կկարդացուէր* brūq։—Ա՛ճ.

***ՊՐՈՔՍԻՄՈՍ** «օտար մի պատուանուն» Լմբ. առ Լև. 1865, էջ 240, որ և **պռոխիմոս** Յիշատ. 1007 թուից (*տե՛ս* Հացունի, Պտմ. տարազի էջ 172), Ուտ. 157, 158, 216, Պտմ. կիլ. 211։

=Յն. πρόξιμος «պատգամաւոր, երևսփոխան». գալիս է լտ. proximus «տեսուչ, վերահսկող» բառից. բուն նշանակում է «մերձաւոր, մօտիկ»։—ՀԲուշ. 375։

ՊՐՏՈՒՒ, ո հլ. (իսկ վեցօր. 83 սեռ. պրտուի) «կնիւն, ճիլ, սէղ, շամբուտի եղէգ» Յոբ. ը. 11. ի. 16. ես. ժբ. 6. Եփր. ևն. 93. Փիլ. որից **պրտուամած** լծ. կոչ. **պրտուեայ** Ել. բ. 3. **պրտուեղէն** Տօնակ. Յայտմ. Վրք. հց.։

ԳԴ պրս. بردی burdī «սէղ, կնիւն»։ Նշ՛ր արաբ. պէրտի, պէրտիյէ։ Հիմնք. ըստ ԳԴ։ Բառս բնիկ արաբերէն է (*տե՛ս* Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 575) և ձայնական տեսակէտով անյարմար մեր բառին։

ՊՐՐԻ «հուն, չոմ», որից **պրեննի** «հունի ծառ» Գաղիան. բժշ.։

ՀԲուս. § 2621 յիշում է անգլ. berry «մացառուտի պտուղ»։ (Այս բառի հետ կցւում են ըստ Kluge 45՝ գերմ. Beere, մբգ. bęr, հբգ. bęri, գոթ. basi, հոլլ. bes, անգսք. berie, որոնց համեմատութեամբ նախադերմ. ձևը լինում է paso, որ կապ չունի այլ ևս հայերէնի հետ)։

***ՊՐՔԷ** «ջրի աւազան կամ գուբ» Վտակ. էջ 5. աւելի լաւ է **բրեայ** Պղնձ. 17, 37, որ և գրուած **բրգայ** Աղթամ. (տպ. Կոստ. էջ 41)։

=Արաբ. بركة birka «աւազան», որից նաև քրգ. birkė, birk «աւազան»։ Բնիկ սեմական բառ է. համմտ. եբր. בְּרֵכָה bərēkā, հեթպտ. birakati «գուբ կամ աւազան». բուն արմատը յայտնի չէ՝ ըստ Gesenius[17] 118.—ՀԲուշ. 274։

Ուղիղ մեկնեց Նշ՛ր. յետոյ ՀԲուշ. ZDMG 35 (1881), էջ 662։

ՊՐՕՆ «այծի մազ, թիֆթիֆ» Յայտմ. փետ. 13. որից **պրօնագործ** Յիշատ. Սամ. անեց.

շար. 152. Սմբ. պտմ. 125. գրուած պրուն Ամիրտ. (վկայութիւնը տե՛ս Նորայր, Բռ. ֆրանս. 724 բ)։

ՀՀԲ պրակ բառի՞ց։

ԳԻՒ.—Մշ. պրօն, Սբ. բրօն «թիֆթիկ»։

*ՊՕՉ «գորշագոյն» Վստկ. 199. Երազ. որ և պօզլախ (գրուած պաւզլախ) Ցայտ. գ. 8 լուսանցքի վրայ (յետին գրիչներից աւելացուած իբր բացատրութիւն շլոռոս բառի). բոլորն էլ գործածուած են ձիու համար։

=Պրս. بوز bōz, Թրք. بوز boz, بوزلاق bozlaq «գորշ, գորշասպիտակ», չաղաթ. boz «գորշ», արևել. Թրք. boz «կապուտակի մօտ գոյն, սպիտակորակ կապոյտ», քրդ. boz «գորշ» (բոլորն էլ ձիու համար ասուած)։—Հիւբշ. 278։

ՆՀԲ սխալուելով Ցայտ. գ. 8 լուսանցագրութիւնից՝ դնում է «գոյն կանաչ ֆըստըխի և դեղին կամ բացագոյն կանաչ. ըստ մեզ բացատրի չն. բառիս չհաւրծ, շլոռոս»։ Թրք. բառերը իրեն ծանօթ չեն, ինչպէս նաև գւռ. poq «գորշ ձի», որ Թուրքերէնից նոր փոխառութիւն է։

*ՊՕԽՏԱԽ «Թաթար աղնուական կանանց գլխարկ», որից պօխտախաւոր «պօխտախ ունեցող, գլխարկաւոր». նորագիւտ բառ, որ ունի Մաղաք. աբ. 17. «Տաթար խաթուն պօխտախաւոր»։

=Թրք. بوغداق boγtaq «գդակ պատուաւոր Թաթար կանանց»։

Ուղիղ մեկնեց Պատկ. տպ. Մաղաք. աբ. 64։

ՊՕՌՈՑ «էշի առնի»? իբր միջին հյ. բառ ունի նորայր, Բառ. ֆր. verge։

*ՊՕՍՊՕՍՈՂ «կեղծաւոր, խաբեբայ, շողոքորթ» Սկևունդ. «Աղուէս պատսպաւող» (Տաշեան, Das Leben... des Phil. Secundus, էջ 26). նոյնը էֆիմ. 371 գրուած է պօսպօզօղ։ Անշուշտ ծագում է պօսպօսել բայից և արմատն է պօսպօս։

=Արաբ. بصبص baṣbaṣa «շունը պոչը երկու կողմ շարժելով շողոքորթելը», որից تبصبص tabaṣbuṣ «շնթռիլ. 2. սուտակապատութիւն» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 365, Աբիկեան, Ընդ. բռ. տաճկ. հայ. Պօլիս 1892, էջ 142 բ)։—Ա՛.

ԳԻՒ.—Ղրբ. պօ՛սպօս աՒել «այս ու այն տեղ պահվռտիլ և Թաքուն նայիլ». կայ և պոս տալ «աղուէսի՝ իր յետևից ընկած շների ձեռքից ազատուելու համար անակնկալ կերպով ուղղութիւնը փոխելով՝ յանկարծ ուրիշ կողմ ցատկելը» (ըստ Միւրաձեի՝ Արրտ. 1888, էջ 317), պօսել Կր. «Թաքուն հետևել»։—Նուպարեան, Բառ. ֆր. էջ 161 chat-temite բառի տակ ունի իբր գաւառական բառ պօսպօսող «ածուշերես, խոնարհերես մարդ». բայց երևի սխալման արդիւնք է գաւառական նշանակելը և պարզապէս առած է Առձեռնից, ուր արդէն յիշուած է իբր «ամէնօրէն բառ»։

*ՊՕՏՈՒՌՈՒՄ «կրկէս, ձիարձակարան» Մարթին. որ և պօտռոմն «ձիարշաւ» Ուտհ. 284, պաւտռումն «կրկէս» Պտմ. աղէքս. էջ 23 (յաւելուած նոր գրչից)։

=Յն. ἱπποδρομία «ձիարշաւ», ἱππόδρομος, ἱπποδρόμιον «ձիարշաւարան, ասպարէզ» բառի ռամկական ձևն է. համմտ. նյն. ποδρούμι, μπουδρούμι, որից փոխառութեամբ հալ. podrumŭ, լհհ. podruna, ռում. podrum, podrom, Թրք. بودورم bodurum «գետնափոր նկուղ», պրս. پدرام pidrām «հանդիսավայր, զուարճալի տեղ» են։ Մայր ձևը կազմուած է ἵππος «ձի» և δρομάω (այս ձևը չի աւանդուած) «վազել» բառերից։ Հին ձևից են փոխառեալ լատ. hippodromos, ֆրանս. hippodrome «ձիարձակարան» են։—Հիւբշ. 375։

ՆՀԲ դնում է «բառ ոմկ. որ է գետնափոր նկուղ»։ ԱՒ «Թէատրոն, ծածուկ տեղ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Müller WZKM 5, 68։

Ջ

***ՋԱԲԻՍՏՐ** «գրքի գլուխ». նորագիւտ բառ. գործածուած է ՉՉէ=1338 թ. գրուած մի Աստուածաշնչում։

= Հֆրանս. chapistre>ֆրանս. chapitre <լտ. capitulum «գրքի գլուխ»։

Գտաւ ու մեկնեց Մ. վ. Մաքսուդեանց, Արրատ. 1914, 1047։

ՋԱԲՈՑԵԼ. նորագիւտ բառ, անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք թղ. 196 մի շատ մութ հատուածի մէջ. «...լսօղս և պատմիչս յարդեան ժամանակիս ի մէջ հիւսիսոյ կողմանդ տաղաւարողք զբոլոր լսօղս տարաբերմամբ, մանաւանդ սակս ջարոցել, զի խորհուրդ սևեռոմն». թերևս նշանակում է «մեկնել, ըմբռնել, պարզաբանել»։

Տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատեան. Բ. 251։

***ՋԱԲՐՈՆ կամ ՋԱԲՐՈՒՆ** «վեղար, կրօնաւորի գլխու ծածկոց» Մխ. ապար. (ստէպ). Մարթին. գրուած ջբրուն Մ. Մաշտ. 277. որից ջաբրունաւոր «վեղարաւոր». Մխ. ապար.։

=Հֆրանս. chaperon «գլխանոց» (ստ. լտ. cappa «ծածկոց» բառից), որ և ֆր. chaperon, իտալ. ciapperone «գլխանոց»։— Հիւբշ. 390։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՋԱԹԱՂԻԿ** «կաթուղիկոս Հայոց» Կաղընկտ. հրտր. էմ. էջ 237 (ձ. սեռ. ջաբկիդ, ջաբդիդ, գաբռղկիդ), ըստ արաբական յորջորջման։

=Արաբ. جاثليق ǰatalīq կամ جاثليق ǰaθalīq, որ տառադարձուած է հյ. կաթուղիկոս բառից։

Ուղիղ մեկնեց նախ Կ. վ. Շահնազարեան, հրտր. Կաղնկտ. բ, 16. ծան. վերջին անգամ Ածառ. Հայ. նոր բառեր հին մատեան. Ա. էջ 35։

ՋԱԹԱՆ «թաթար խանի որդի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. այրիվ. էջ 83. «Հուլաղուն կոտորեաց զամենայն ջաթանս, որք են զանորդիս»։

=Անշուշտ թաթարերէն բառ է։

ՋԱԼ «կոտոր փայտի բոլորշի առ ի այրել. rondin» միջ. հյ. բառ, որ ունի նորայր, Բռ. ֆր. 1099 ա. նոյն է նաև ջալ «փոքր փայտ՝ որին գաւազանի մի հարուած տալով թողնում են օդը՝ տուշփայտ խաղի մէջ. ֆր. bêle», որից ջալուրիր «տուշփայտ խաղը, bâtonnet». երկուսն էլ իբր միջ. հյ. բառ յիշում է Նորայր, Բառ. ֆր. էջ 141 բ և 135 բ։

=Թրք. կամ պրս. բա՞ռ է. համմտ. նոյն խաղի զանազան անուններից, թրք. čelik-čomaq, վրաց. ჩիկա-ջոխի, գռ. Դրբ. չինգի, Ախց. ղօլա-չոլլիւմ. ըստ Будаговъ 1, 486 պրս. چلیك čilīk, چلنك čiling, چلوك čuluk, որոնք չգիտէ ԳԴ։—Մեր բառը ենթադրում է պարզ ձևը, որի թերևս նուազականն է čelik, իբր «փայտիկ, չալիկ»։—Աճ.

ՋԱԼ «ջոկ կամ հօտ». ունի միայն Բռ. ևրեմ. էջ 273։ Տես և ջայլ։

Ջալճանք տե՛ս Ջաշանք։

ՋԱԼՈՑ (գրուած նաև ջայլոտ, ջալաւտ, ջալօտ), ի հլ. «բիր, ծեծի գաւազան» Խոր. Սիսիան. (Սուիերք ժր. 33). Ոսկիփ. Յայսմ. կիր. էջ 10. Ղև. խ. էջ 164. կայ նաև ջալոտի ձևով՝ Եփր. վկ. արև. 215 (ոչ-ոսկեդարեան), Վրք. և վկ. Ա. 100, 123։

*ՆշՀԲ լծ. հյ. ջլուտ և ջայլ՝ իբր խուրձ կամ բազմութիւն գաւազանաց ի մի տրցակ, թրք. ջալը (իմա čalə) «խոր»։ —Եթէ իրօք տրցակ է գաւազանների, կարող է կազմուած լինել -ոտի մաս-

նիկով և այն ժամանակ արմատը կլինի ջալ, որ և տե՛ս առանձին։

ԳԻՒ.—Սրանից է ջլատկել Սեբ. «սաստիկ ծեծել»։

*ՋԱԼՈՒՆՋ «դատական բողոք, դանգատ» Անսիզք 19, 49, 51, 69, որից ջալնջել «դատարանին բողոքել» Անսիզք, էջ 19, 23, 51. ջալնջող «դանգատաւոր» Անսիզք 69, անջալունջ «առանց դատական բողոքի» Անսիզք 23 (ուրիշ ձևով է բացատրում Նորայր, Բառ. ֆր. 749 ա)։

=Հֆրանս. chalonge «դատական բողոք», chalonger «բողոքել դատարանին», անգլ. challenge «կոչ, հրաւէր, պահանջ, դատական մերժում»։—Հիւբշ. 391։

Ուղիղ մեկնեց նախ Անսիզքի հրատարակիչը, էջ 19։

ՋԱԽԵԼ կամ ՋԱՂԽԵԼ «ամուր զարնել, խորտակել, փշրել» ՅՀ. կք. Շար. Ղևոնդ լէ, էջ 156. որից ջախումն, ջաղխումն Խոր. կրկնութեամբ՝ ջախջախել կամ ջաղջախել «խորտակել, փշրել» ՍԳր. ջախջախ «խորտակեալ» Ես. լղ. 6. Դան. բ. 42. «կցկտուր, փուճ, անպիտան» Սիր. տիտ. 265. ՅՀ. կք. ջախջախանք ՍԳր. (նաև «տատապանք» Ոսկ. Հռոմ. 344, 346). անջաղխջախ «անխորտակելի» Անյ. բրբր. այլ ձևով՝ ջանջախել Վստկ. 100, 115. ջանջխնած Մխ. բժշ. 107, որ և ջնջխած Մխ. բժշ. 43։ Բոլորի պարզ արմատն է ջախ, կրկնուած ջախջախել, սաստկութեան համար հնչուած և գրուած ջաղխել, ճիշտ ինչպէս ունինք նաև բախ, կրկնութեամբ բաբախել, սաստկականը բաղխել։—Նոր բառ է ջախջախիչ։

=Նոյն է մի խումբ կովկասեան բառերի հետ. ինչ. վրաց. ჯახება ջախերա «բաղխել, զարնել», ჯახაჯუხი ջախաջուխ «աղմուկ, շռինդ», ჩეხა չեխա «կոտրել, ջարդել (փայտ ևն)», լազ. jax «մուրճով զարնել», ուտ. ծախփեսուն «ծեծել, փշրել, կոխոտել», ցախփեսուն «քամել, ճմլել, ճզմել», ցախցախփեսուն «խորտակել, ջախջախել», ծախկալ «դռան մուրճը, թակիկ, ուճկ. չախչախ»։ Բայց սրանց յարաբերութիւնը ճշտուած չէ։—Ա՛ճ.

Հիմնք. պրս. چاک čāk «պատռել», چاکچاک čākčāk «պատառատուն» բառերի հետ։ Մատ ИАН 1919, 408 վրաց. ջախ, ջխ արմատին ցեղակից է դնում։

ԳԻՒ.—Ջղ. չ՛ախչ՛ախել, Տփ. ջախջրխիլ, Մրզ. ճոխճխել, Ասլ. չախչրխէ՛լ, Շմ. չախ աճիլ, չախչախ աճիլ, Գոր. Ղրբ. ճճէ՛խել.—2. *ջանջախել ձևից են՝ Երև. ջրնջրխել, Մշ. չ՛նջխել, Ալշ. չ՛նչ՛խել, Խրբ. չ՛ընչ՛խիլ, Սլմ. ճոնջրխել, Մկ. ճոնճխիլ, Վն. ճնջխել, Եւդ. ջրշխել (<*ճրնջխել) «փշրել, խորտակել»։ Սրա սաստկականն է ճնջխոտել։ Պարզ արմատը պահում են ջախուրուդ, ջախրուդ Երև. Ղզլ. Ղրբ. «ջախջախուած, ջարդուբուրդ եղած»։

ՓՈԽ?—Նոր ասոր. čaxčaxta «խորտակել, ջախջախել»։

ՋԱՀ, ի հլ. «բոցավառ մարխէ ձող, վառուած լոյս» ՍԳր. «կանթեղներով կախուվի մեծ հրաց» Յիշատ. որից ջահաւոր Ոսկ. Ես. ջահացուցանել Ագաթ. ջահափայլ Սիր. պհ. 169. ջահաբորբոք Ասող. Եօթնաջահեան Եղիշ. դտ. Եառագայթաջահ Կիւրղ. Խչ. Երագաջահ Տագ. Լն։

Lag. Ges. Abhd. 9 սանս. čātra, որ մերժում է Arm. Stud. § 1897 նախաձայն č-ի և նոյն ձևը իրանական խմբի մէջ չգտնուելու պատճառով։ Հիմնք. համաոտուած Եառագայթ բառից, Ա. Մ. Գարագաշեան (անձնական) ջերանիլ բայից, ինչպէս ունինք մեռանիլ բայից մաճ։ Մատ ИАН 1918, 341 նոյն ընդ (Հր)դեհ։

ԳԻՒ.—Ագլ. ջահ, Տիգ. ջոհ, Ախց. Կր. Սեբ. Սչ. չ՛ահ, Խրբ. չ՛այ, Մշ. չ՛ախ, Մկ. ճոխ.—Շմ. Տփ. ճաղ.—Մշ. չ՛ար, ճար, Մրզ. Ջղ. ճար, Ննխ. Պլ. ջար, Ռ. ջար, ջառա, Զթ. չ՛օհյը, չ՛օհրը.—վերջիններից մատնանշում են *ջարհ ձևը, որ աւելի հին է քան ջահ։

ՓՈԽ.—Ոսս. ճար «ջահ»։

Ջաղացք տե՛ս Ջուր։

ԳԻՒ.—ր ձայնը պահում է Տփ. ջրաղացկ, բայց նաև ջաղացկ. նոյնը պահում են տեղափոխութեամբ՝ Խրբ. չ՛աղարչ՛, չ՛աղարց (նաև. չ՛ախչ՛ի, բց. չ՛ախչ՛ի), Տիգ. չոդորց, Զթ. ճաղօյցք, չ՛աղարցք, Հճ. չ՛աղօյցք.—ր ձայնը կորցրել են՝ Ագլ. ջաղաց, Երև. Ջղ.

ջ՛աղաց, Գոր. Շմ. ճաղաց, Ախց. Կր. ջ՛աղացf (յգ. ջ՛աղջ՛ըճէր), Հմշ. ճաղացf (սեռ. ճաղցուց), Մկ. Վն. ճողաց, Սվեդ. ջ՛ողուցf, Ալշ. ջ՛աղաջ՛, Մշ. ջ՛աղաճ, Ննխ. ջաղաչf, Մրղ. Սլմ. ճողոմշ, Սեբ. ջ՛աղաշգ, Սչ. ջ՛եղացf, Ղրբ. ճէ՛ղաց, Ասլ. ֆէղաշf, ֆէղաշ. վերջինիս մէջ նախաձայն f՝ յաջորդ շ ձայնի տարանմանութեամբ է ձեւացած՝ համաձայն Meillet-ի օրէնքի MSL 14, 288 և ՀԱ. 1905, 254։—Նոր բառեր են ջաղացպան, ջաղացատեղ, ջաղացաքար, ջաղացքաղաջ։

ՋԱՂԲ (ի հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «տեղատարափ անձրեւ» ՅԿ. կԲ. 326. Տաթև. ամ. 227. որից ջաղրագոյն շիբի՝ նոյն նշ. Արիստ. աշխ.։ Գրուած կամ տպուած է ջաղջ Տաթև. ձմ. լի. «Ջաղջ անձրեւն հեղեղէ զսերմանիսն»։

Հիւնք. հանում է խիղր բառից։ Աճառ. ՀԱ. 1908, 124 յիշում է նախուս. čalbax «ճահիճ, մօր, տիղմ», արևել. թրք. چالپا čalpa կամ چالپوق čalpuq «անձրևից ցեխոտուած տեղ», چالاد čalad «ցեխ, կաւ, տիղմ», որոնք պատահական նմանութիւն միայն ունին։ Petersson տե՛ս ջոլիր։

ՋԱՂԵԼ «ուժովցնել». ունի միայն ԱԲ։

Ջաղխել տե՛ս Ջախել։

Ջաղել «ողբալ» տե՛ս Ջալլ։

ՋԱՂՁ կամ ՋԱՂՋ, ի հլ. «բնկրնկհալ, խենէշ, ցոփ, շուայտ». անստոյգ բառ. ունի միայն ՀՀԲ. (իսկ սրա տուած երկրորդ նշանակութիւնը՝ «փայտի կտորտանք», գաւառական է բստ ՆՀԲ, բ. 1066 բ)։

*ՋԱՂՋԵՐ «վարտիք (Կիլիկեան ասպետների)». ունին միայն Քաջունի, հտ. Գ. 208 և Հայսմաւուրք, Պատմ. տարագի, էջ 262. բստ Սիսուան, էջ 481 յիշուած է Թագաւորօրհնէքի մէջ և Մխ. Գօշի մի ձեռագրում։ Որից ջաղջեռակապ «վարտիքի կապը, խոնջան» Քաջունի, անդ։

=Պրս. چغجير čaxjīr կամ چغشور čaxšūr «անդրավարտիք, զոր ագանին յուսս», որից թրք. چاقشر կամ چقشير čaqšər, ռմկ. čašqər, časxər «մի տեսակ նեղ ու կարճ վարտիք». (Будаговъ, I. էջ 460)։

Ուղիղ մեկնեց Հայսմաւուրք, անդ։

*ՋԱՄ «գումար, համագումար». քանիցս ունի Սմբ. պտմ. 140։

=Արաբ. جمع jam՝ «գումար»։—Աճ.

ՋԱՄԱՂ «ուղտի տեսա՞կ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յովսիմ. (Համառօտ խմբագրութիւն), էջ 30. «Եկն Եհաս օտար այլակերպ գազան մի ահեղ, մեծ, զարմանալի, նմանութեամբ որպէս ջամաղ ուղտոյ»։

=Կայ արաբ. جمل jamal «արու ուղտ»։

ՋԱՄԲ «ուտելիք, կերակուր» Ոսկ. մ. ա. 16. Վրք. Հց. որից ջամբել «մանր մանր ջարդելով կերցնել (մանուկին, թռչունի ևն), սընուցանել, խնամել» ՍԳր. Ագաթ. Վեցօր. 171. ջամբակեր Եղիշ. Հյր. մեր 199. ջամբեցուցանել Խոսրովիկ. Նար. Յայտմ. կաթնաջամբ Իգնատ. Բղ. 148. Տօնակ. օձաջամբ ՅԿ. իմ. եկեղ. Ստ. ժմ. 494. (ջամբ Լ. «տպուր»)։

Brosset JAs. 1834, 369 ևն վրաց. ճամա, մանչու թթր. jemen։—ՆՀԲ. լծ. ծամ և ումպ։ Տէրվ. Altarm, 23 իբր բընիկ հայ՝ սանս. jambh, jabh «բերնով խածնել», jambha «խածուածք», հսլ. зобати «ուտել» բառերի հետ։ Մորթմանն ZDMG 26, 589 բևեռ. zipparçima «ջամբել»։ Հիւնք. ամպ բառից։ Շէֆթելովից BB 28, 297 նոյն է Տէրվիշեանի հետ։—Բառիս հետ նման են հնչմամբ և իմաստով մի կողմից պրս. čam «ուտելը», čamīdan «խմել» (չունի Գ. դիտէ Horn § 444), սանս. čāmati «խմել», օսս. çimin «խմել», և միւս կողմից մի խումբ կովկասեան բառեր. ինչ. վրաց. ჭამა ճամա «ուտելը», ჭამადი ճամադի «ուտելիք», მჭამელი մճամելի «կերող, ուտող», ჭამება ճամեբա «անուցանել», ինգիլ. ճամայ, մինգ. ճկումուա «ուտել», չամա «անուցանել», լազ. օչամու «կերակրել, անուցանել» (Մառ, Լազ. քերակ. 208 սրա արմատը դնում է պարզապէս չ)։ Բայց այս երկու խմբերն էլ յարմար չեն։ Պարսիկ ձևը փոխառեալ լինելու դէպքում պիտի տար հյ. *ճամ։ Աւելի հետաքրքրական է կովկասեան խումբը։ Այստեղ բառի ընդհանուր տարածումը, նշանակութեան նախնական

ձևը, միանգամայն և ևամ պարզական արմատի գոյութիւնը, մինչդեռ հայերէնը աւելացած է նոր բ թարմատարով, ցոյց են տալիս որ հայերէնը փոխառեալ է կովկասեաններից. բայց այստեղ էլ սպասելի էր *ևամբ և ո՛չ ջամբ:

ՋԱՄԲԹԱԿ «ջուխտ, զոյգ» Կոչ. ժբ. էջ 230 (այսպէս նոր տպագրութիւնը՝ ըստ մի ընտրելագոյն ձեռագրի. իսկ հին տպ. ունի ջուխտակ). որ և գիտէ Բառ. երեմ. էջ 274 ջամբակ «զոյգ հաւուց» ձևով: Տե՛ս և ջուխտ:

ՋԱՄԲՈՒ կամ **ՋԱՄՈՒ** «սենեակ, արքունի դիւանատուն» Բղբ. դաշ. էջ 30. Սմբ. պտմ. 101. «արքունի գանձարան» Սմբ. դատ. 18: Տե՛ս և ջամռայ:

=Հֆրանս. փոխառութիւն, որ է արդի ֆրանս. chambre, անգլ. chamber «սենեակ»:

Ուղիղ մեկնեցին նախ Վխտանեանք, Թրգմ. Խոր. էջ 216, յետոյ ՀՀԲ: Իսկ ՆՀԲ մեկնում է «բառ լտ. յն. գա՛մէռա, գամա՛ռա, գղ. շամպր, անգղ. չէմպր, հյ. կամար, Թրք. գէմի»: Սրա համեմատ ԱԲ մեկնում է բառը «կամարով խուց, արքունի դիւան»:

***ՋԱՄԲՈՒԱՅՆ** «Թագաւորի սենեկապան» ԱԲ. գրուած նաև ջամռլա Մխ. դտ. 262 (մի ձեռագրի լուսանցքում). ջամբլայն, ջամպլայն:

=Հֆրանս. chambrelan, որ և ֆր. chambellan, անգլ. chamberlain «սենեկապան». ծագում է chambre «սենեակ» բառից. տե՛ս ջամբու:

Dulaurier JAs. 1861, էջ 296 գրում է ջամբլայն, ջամպլայն և փոխառեալ է դնում Ասորիքի լատիններից:

***ՋԱՄՈՒԱՅ** կամ **ՋԱՄԸՈՒԱՅ** «սենեկապան» Շնորհ. առակք 74, 89:

=Նոյն է ջամբու բառի հետ, որ արդէն կայ նաև գրուած ջամո. տե՛ս անդ:—Ա՛ճ.

ՋԱՅԼ, ի հլ. «մեռելի վրայ լացողների խումբ» Նար. կր. 174. Օրբել. ողբ. Ածաբ. մկրտ. «բազմութեամբ լայ, ողբ» Մխ. երեմ. որից ջայլել «մեռելը խմբուելով ողբալ» Բուզ. 125. ջայլական (որ և ջալական) «ողբական» Երզն. քեր. ջայլանք «ողբ, կոծ» Հին բռ. անշուշտ այստեղ է պատկանում նաև ջաղել «ողբալ», որ դիտէ միայն ՓԲ յաւել. (եթէ ստոյգ է, մի գեղեցիկ օրինակ է յ=ղ լծորդութեան. ինչ. նշոյլ և նշող, բոյլ և բող, յոյլ և յողալ): — Ջայլ աւելի ընդհանրանալով նշանակել է «խումբ մարդկանց» Կանոն. (Քահանային զմեղս՝ եթէ ոք [ի] հրապարակի ջայլի ձաղեսցէ, ոչուն ոլորէ դատաստան), «կենդանիներ» Ա՛Բ. որից ջայլական «ջոկ, խումբ» Լծ. նար. ջայլիլ «պար առնուլ» Արիստ. գրչ. ջայլիք «հօտ (ոչխարների)» Մագ. Թղ. 219, «մարդկանց խումբ» Մագ. Թղ. 148:—Բոլորովին ուրիշ է ջայլակոծել «դանակոծել, ծեծել» Բռ. տեսիլ. լեհ. որ ծագում է ջալ «փայտ» բառից. տե՛ս այս բառը և համմտ. ջալ «ջոկ կամ հօտ», որ է ջայլ:

***ՋԱՅԼԱՄՆ** կամ **ՋԱՅԼԵԱՄՆ**, ն հլ. (-ման, -մանց) «բարձրահասակ մի թռչուն է. տճկ. տէվէ խուշի, ֆր. autruche, գերմ. Strauss, ռուս. страусъ, անգլ. ostrich, որ և պարսկական բառով՝ իշտրմուղ» ՍԳր. (գործածուած է 8 անգամ). յետնաբար գրուած ջալամ Վրդն. առ. 59. ջալապու ձու փխ «ջայլամու ձու» Վրդ. առ. 61:

=Սեմական ծագումով բառ պէտք է լինի, ըստ որում Հայաստանի բնիկ թռչուն չէ ջայլամը. համմտ. արաբ. ظَلِيم ẓalīm «արու ջայլամ», յգ. ظِلمان ẓilmān կամ ẓulmān (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 508):—Ա՛ճ.

Հիմնք. ջայլ-=Թրք. čaylaq+իմն: Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ. 1908, 124 առ ԳԲ դնում է պրս. բայց առանց յիշելու պրս. բառը:

ԳԻՒ.—Խրբ. չայլամ «մի տեսակ թռչուն է». իսկ Սեր. չ'այլամ պահուած է միայն բարձր հասակ ցոյց տալու համար. օր. չ'այլամի պէս բան մ'է:

+**ՋԱՆ**, ի հլ. (թիւ անգամ նաև n, ու հլ.) «ճիգ, փոյթ, աշխատանք» ՍԳր. Վեցօր. Ագաթ. Եւագր. Ոսկ. յհ. ա. 20. որից ջանալ ՍԳր. ջանացուցանել Եւագր. ջանասէր Կոչ. անջան Ագաթ. Եւս. քր. Ոսկ. Կոչ. 30. Եւագր. բազմաջան Պիտ. ապաջան Նար. զրաջան Ոսկ. Եփր. պհ. մեծաջան Ոսկ. յհ. ա. 37. Փարպ. մշտաջան Եփր. պհ. գիշերաջան Մանդ. ընդունայնաջան Ոսկ. յհ. ա. 1. ընդ-

վայրաջան ճառընտ. ժրաջան Ասող. վրք. հց. ջանադիր, ջանադրութիւն (նոր բառեր) ևն.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ye, yo «հոսել, եփուիլ, պղպջալ, փխբ. ներքին հոգեկան շարժումներ ունենալ» արմատից. համմտ. սանս. yásati, yasyati «տաքանալ, հոսել, յոգնիլ, պատասխլ», զնդ. yah- «հոսել», յն. ζέω «հոսել, եփիլ, պղպջակել», ζόη «փրփուր», ζῆλος (դոր. ζᾶλος) «հոսելը, պղպջալը, եռանդ, ջանք, նախանձ, ջանադրութիւն», կիմր. iās «հոսել, եփուիլը, եռանդ», հբգ. jesan «խմորիլ, փրփրիլ, պճպճալ», jerian «փրփրեցնել, խմորիլ տալ», հհիւս. ǭsa (*jōsjan) «ուժեղ շարժման մէջ դնել», նորվ. asa (*jasàn) «խմորուիլ, ադմկել, կատաղիլ, գայրագնիլ» ևն (Walde 570, Boisacq 309, Pokorny 1, 208)։ Հայերէնը գալիս է հնխ. ye-; yo- արմատի սաորին ձայնդարձից. նախաձայն y բառ օրինի դարձել է ջ (համմտ. ջուր), որ է յն. ζ վերջաձայն և մասնիկ է ճիշտ այնպես, ինչպէս բան, բան բառերի մէջ։

ՆՀԲ լծ. հյն. գուն և լտ. conatus «ջանք»։ Պատկ. Изслед. 17 զնդ. yāna «երջանկութիւն», պրս. jān «հոգի» բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 100 հնխ. yam, yat, yan «բռնել, ջանալ» արմատից. համմտ. սանս. yam, զնդ. yat, յն. ζητέω «խնդրել», ζημία «պատիժ», հյ. յամել, յամառ, յամր, ջատագով: Հիւնք. ենիջ բառից։ Patrubány SA 1, 312 պրս. jān «հոգի»։ Margoliuth, Բրամ. Բիւր. 1900, 334 սանս. yatna «աշխատութիւն» և պրս. jān «հոգի». իսկ հյ. ջանաւոր ձևից է դնում եբր. גִּבּוֹר gibbōr «հզօր, քաջ, արի»=ասոր. ganbār. (դժբախտաբար սրանք բնիկ սեմական բառեր են. համմտ. արաբ. جَبَّار jabbār «բռնակալ». բոլորի արմատն է սեմական gbr)։ Scheftelowitz BB 29, 31 սանս. dhī «մտածութիւն, նպատակ», dhiṣā «ջանալով», զնդ. doisi «հոգ տանել»։ Ներսէսեան, Արև. մամ. 1909, 18 պրս. جنگ jank «կռիւ, պատերազմ»։ Քիւրկեան, Բազմ. 1910, 153 ենիգն, ոգի, ուշ բառերի հետ ոգ>ոյժ արմատից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 323 պրս. جنگ jank «կռիւ» բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet MSL 21, 251։

ԴԻՒ.—Սչ. չ'անալ, Ջղ. չ'անանալ. որից գլխի չանալ Սչ. «վնասել», չանհալ Տփ. «աշխատասէր, ժրաջան, գործունեայ (մարդ)»։

ՋԱՆԱԿ «քերթող». ունի միայն Բառ. երեմ. էջ 274։

ՋԱՆԴ «պահապատար, խեղաթիւր (նորածին երախայի համար ասուած)» Նեմես. էջ 139. որից ջանգիեծ «պահապատար» (լուանի մահիկի համար ասուած) Գիւտ Թուղթ առ վաչէ. (Թերևս իրր երկու տարբեր բառեր՝ գրելի ջանգ, ճեծ)։

*ՋԱՆԴԱՐ «գինակիր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սամ. անեց. 137. «Եւ Ուսուֆ՝ որ անուանեցաւ Սալահատին, էր ջանդար առաջի Նուրադինին, և էր հաճոյ յաչս նորա»։

=Պրս. جاندار jāndār «գինակիր». կազմուած է jān «անձն» և -dār «կրող, պահող» բառերից, որով բուն նշանակութիւնն է «անձնապահ»։—Աճ.

*ՋԱՆՈՒՆ «լատինական եկեղեցու կրօնաւորական մի աստիճան, կանոնիկոս» (նորագիւտ բառ) Սմբ. դատ. 33, յգ. ջանուննի (անդ.)։

=Ֆրանս. chanoine բառից, որ ծագում է լտ. canonicus ձևից։

Ուղիղ մեկնեց Karst, անդ։

Ջանջար տե՛ս Ջարջար։

ՋԱՆՋԻԼ «մի տեսակ ազնիւ և մաքուր կտաւ» Բրս. մրկ. էջ 381. «բարակ կտաւ՝ գործածուած իրր բամիշ» Բժշ.։

Ջանջիւն տե՛ս Ջարդան։

*ՋԱՆՍԱԼԵՐ «Ռուբինեանց ժամանակի պատկան մի աստիճան». յիշուած է օրինակ 1283 Թուին գրուած մի Սաղմոսարանում, որ պատկանում է Լեոն Գ. Թագաւորին (ՀՍ 1922, 142). որից ջանսլերութիւն՝ գործածուած 1330 Թուի մի հրովարտակում (REA 1, 247). գրուած նաև ջանցլեր։

=Ֆրանս. chancelier «արդարադատութեան նախարար, կնքապահ» (հին միապե-

տութեան օրով). արդի գերմ. Kanzler> *ռուս.* канцлеръ, *անգլ.* chancellor *բառն է։ Սկզբնական ծագում է լտ.* cancellus, *յգ.* cancelli *«ճաղեր, վանդակապատ», որ յն.* κάγκελον *տառադարձութեան միջոցով դարձած է հյ.* կանկեղոն *«վանդակապատ» (տե՛ս այս բառը)։ Նախապէս այս բառով հասկացւում էր եկեղեցու այն մասը՝ որ մի վանդակապատով բաժանուած՝ յատկացուած էր կրօնաւորներին։ Աւելի յետոյ ամէն պաշտօնեայ՝ որ այդպիսի մի վանդակապատով առանձնացած պաշտօնավարում էր, կոչւում էր նոյն բառով. յատկապէս նրանք որ Պաղեստինում կամ Արեւելքում պատշգամի վանդակապատից կարդում էին ժողովուրդին՝ պետական պաշտօնական դրութիւնները։* «Aui vero epistolas missas recitare volebant populo in regione Palaestinae antiquitus, ascendebant super tectum et de cancellis recitabant et inde inolevit usus ut qui litteras principibus missas habent exponere Cancellarii usitato nomine dicantur—*Հին ժամանակ Պաղեստինում նրբանք որ առաքուած պաշտօնական թղթերը ուզում էին ժողովուրդին կարդալ, բարձրանում էին կտուրի վրայ և վանդակապատից (ճաղերից) կարդում. սրանից սովորութիւն յառաջացաւ, որ ովքեր իշխաններից ուղարկուած դրութիւններ էին յայտարարում, սովորական անունով* cancellarius *էին կոչւում» (Du Cange, Kluge 241)։ Հին լատիներէնով նոյն բառը նշանակում է «դռնապան, բարապան (կայսեր կամ իշխանի). 2. վանդակում դիրացած (խող ևն)»։*

ՋԱՇԱՆԿ. *անսովոյ բառ, որ և ջալիանկ ձևով գործածուած է 2 անգամ. «Անկոյս տուներաւ պարիսպակալ նստէաք ի խաւարի դիւցազանցն տօնից և ջաշանցն հեթանոսականաց» Սիոն. առ գերմ. = Գիրք թղ. 374. «Ջալհանց տօնից տարեկանաց հեթանոսաց չհաւասարել» Եւագր. էջ 139 (տպ. ջաշանց, մի ձ. ջալանց. ՆՀԲ յիշում է նոյն վկայութիւնը ջալիանց ձևով)։—Հին բռ. մեկնում է «զոհ, նուէր» կամ «դիւապաշտ, դիւանուէր», Բառ. երեմ. էջ 274 (գրում է ջանջանայ) «դիւապաշտ կամ դիւանուէր»։ ՆՀԲ «հեթանոսական ջայլք կամ նուագք կամ ջահք», ՋԲ «ճիւաղական, դիւանուէր, դիւապաշտ»։*

Ալիշան, Հին հաւ. 458 հանում է պրս. ջէշ կամ ջաշ «տօն» բառից։ (Այսպիսի բառ չկայ Դէորգ Դպրի բառարանում)։

ՋԱՋՈՒՈՒ *«դէր, յայր». միջին հյ. բառ, որ ունի նորայր, Բառ. ֆր. (տե՛ս* potelé *բառի տակ). Համմտ. Հետևեալ տաղը՝ Գամառ-Քաթիպա, Ազգ. երգարան, 1856, է 137.—Ջաջուռ բազկիկըն դադարի, ձեռքն ի սիրտն կցեալ կասի (մանկիկի համար ասուած)։—Այլ է ջաջուռ «նորաբողբոջ բոյս»։*

ՋԱՌ *«խումբ, շարք». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մխ. այրիվ. էջ 9. «Ի սկզբան աւուրն զարեգակն ջերմ և չոր և անուադնաց, իսկ յերեկոյնն զլուսինն լի անթիերի գողար և կակուղ, նաև զջաուս աստեղաց ցրուեաց ի վերայ օդոց ցուրտ բնութեամբ»։—ՆՀԲ մեկնում է «իմա՛ կամ ընթերցիր* կաճառ, շար»։

ՋԱՌ *«այր, քարայր»? Նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Օգոստ. բաջ. 18. «Տեղն կոչի Քաթաքումբայ այս եկեղեցումս կայ բազում ջառներ, որ կռապաշտի ժամանակին քրիստոնեայքն հոն թաքչել ին ելիլ». նոյնը նաև էջ 19։*

ՋԱՍՄ *«եղջերուաքաղ, ուրուական». մէկ անգամ ունի Անան. եկեղ. «Ջնջեաց յերկրէ զամենայն պատկերս... հեթանոսական դիցակրօն ջասմ մասանցն մոլորութեանցն»։ Անստոյգ բառ։*

ՆՀԲ *«նոյն բնդ արար.* جسم Jism *«մարմին»։ ՋԲ դնում է պարսկերէն։*

***ՋԱՍՏԵԼ** *«պատժել» Անսիզք, էջ 65։*

=Հֆրանս. chastier, *ֆրանս.* châtier, *անգլ.* chastise, chasten *«պատժել»։—Հիւբշ. 391։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Անսիզքի հրատարակիչը, էջ 64։

***ՋԱՍՏԻԼ** *«դղեակ». Կիլիկեան շրջանի բառ. «Շինեցաւ ջաստէլ բլրին բերդ Դամբլւոց». Հեթ. ժմնկ.։*

= Հֆրանս. chastel, *ֆրանս.* château, *որոնց մայրն է լտ.* castellum *«դղեակ, ամրոց»։*

*ՋԱՏԱԳՈՎ (ի, ի-ա *հլ. ըստ ՆՀԲ. բայց կայ միայն յառնաբար ի հլ.*) «դատական պաշտպան, բարեխոս» Եզն. Բուզ. Սերեր. Եփր. պհ. «դատախազ, ամբաստան» Պզատ. սոկր. (ստէպ). որից ջատագովութիւն Սերեր. ջատագովել Նիւս. կազմ. Իսիւք. Ճառընտ. ջատագովական (նոր բառ)։

=Պհլ. jātagōw (գրուած է jātakgōb) «միջնորդ, բարեխոս», jātagōwīh (գրուած է jātakgōbīh) «միջնորդութիւն, բարեխոսութիւն», պազ. jādagō (գրուած է jādango) «միջնորդ, բարեխոս, պաշտպան, փաստաբան», jādagōī «պաշտպանութիւն», իբր հպրս. *yātagauba- «ի կողմն խօսող», gaub «առել, խօսիլ»>պհլ. պրս. guftan «առել» արմատից։—Հիւբշ. էջ 232։

ՀՀԲ շատ դովող։ ՆՀԲ ի գով և շատ կամ դատ, դատ, ջանք «ջանք» են։ ՓԲ դնում է ջատ «կից»+գով, իբր «կից գովեստի» (տե՛ս և յաջորդը)։ Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG 46, 324, Քրգմ. ՀԱ 1892, 353։ Հիմնք. դատագով ձևից։

ՋԱՏԱԿԻՒ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Տաղ.* «Ջատակեցար յանկղ աջոյն, զարդարեցար ի սուրբ հոգւոյն»։—ՆՀԲ մեկնում է «որպէս ճատակիլ («նմանիլ») և կամ ի հատատառուն յատակի հիմնարկիլ». (երկրորդը ընդունում են նաև ՋԲ և ԱԲ). ՓԲ մեկնում է «կցիլ, յարիլ, յարմարիլ», իբր թէ *ջատ «կից» անյայտ բառից, որ պահում է նաև աճ-ջատել «բաժանիլ», ջատագով և ջատուկ (!) բառերի մէջ։

ՋԱՏԱԿՈՒԿ «անծանօթ մի բոյս» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2624։

ՋԱՏԱՏԵԼ. «տանջել». ունի միայն Բառ. հբեմ. էջ 274։

ՋԱՏՃԱԿ «խաբող». ունի միայն Բառ. հբեմ. էջ 274։

ՋԱՏՆՕՂ «բաժանող». ունի միայն Բռ. հբեմ. էջ 274։

*ՋԱՏՈՒԿ (ի-ա *հլ. յառնաբար*) «կախարդ (այր կամ կին)» Ոսկ. մ. բ. 4. Կանոն. Նար. 146. Նար. լծ. սխալ գրուած ջամուկ Լաստ. իդ (տ. Նորայր, Հայկ. բառաք. էջ 19)։

—Պհլ. jātūk «կախարդ, վհուկ» բառից. սրա հին ձևն է yātūk, այն է գնդ. 𐬌𐬀𐬙𐬀𐬎 yātu- «կախարդ», սանս. यातु yātú- «կախարդութիւն. 2. կախարդութեան դէր». աւելի նոր ձևերն են պազ. jādu, պրս. جادو jādū, որից փոխառեալ են քրդ. jadu, թրք. jādə «շար պառաւ կին», բուլգար. džadadžija։—Հիւբշ. 232։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ կցելով պրս. ճատու բառին։ ՆՀԲ լծ. թրք. պրս. ճատու, ճագիւ։ Պատկ. Изслед. ժանր բառի և պրս. գնդ. ձևերի հետ։ ՓԲ դնում է պրս., բայց և մեկնում է ջատ «կից» բառից՝ իբր «կարկամեալ, կծկեալ» (տե՛ս ջատակել)։ Տէրվ. Altarm. 23 պրս. jādū։

ԳԻՒ.—Նոր փոխառութիւններ են Ախց. չ'ադու, Ալշ. Կր. Ղրբ. Մշ. Տփ. ջադու, Վն. ջադիւ, Պլ. ջադը՝ «շար պառաւ»։

ՋԱՐԴ (կամ ջայդ) «ծմակ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 208։

ՋԱՐԴ «կոտորած». արմատ՝ որ հների մէջ առանձին չէ գործածուած. կայ նոր գրականում և գաւառականներում. որից ջարդել «մանրել, խորտակել, կոտորել» Երեմ. ղ. 6. Յուդթ. բ. 17. Ագաթ. Փարպ. ջարդոց ՅՀ. կթ. 373. ջարդումն ԱԲ. բռաջարդ Մարթին. գլաջարդ Մամիկ. Լաստ. ֆարաջարդ Ճառընտ. ջարդարար (նոր բառ)։

Հիմնք. ճարթ բառից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, էջ 85 շերտ բառից։

ԳԻՒ.—Ագլ. ջարդիլ, Մշ. չ'արդ'ել, չ'արաել, Ախց. Կր. չ'արդ'էլ, Խրբ. չ'արդ'իլ, Պլ. ջարբէլ, Տփ. ջա՛րբիլ, Ննխ. ջարբել, ջաշբել, Երև. չ'արբէլ, Ասլ. չ'արբէ՛լ, Սեբ. չ'արդ'ուփշուր, Ղրբ. ճա՛րբէլ, Մկ. ճուրբիլ, Վն. ճուրաել, Զթ. ճայդ'ել, չ'արդ'ել, Համշ. ճայթուշ, Ալշ. չ'առդ'ել, Ջղ. չ'առբել, Սլմ. ճուռբել, Մրղ. ճուռբէլ, Ռ. չարբէլ, Տիգ. չուրբէլ. այս բոլորը նշանակում են «չարդել, կոտրատել». իսկ Շմ. չարբիլ «շարտել, ածելիով մարմինը ճեղքրտել»։—Նոր բառեր են ջարդուկ, ջարդուփշուր, ջարդուրուրդ, ջարդուկոտոր, ջարդոտել, ջարդռաել, ջարդուխ։

ՋԱՐԴԱՆ, որ և ջարդայ, ջարդոյ «մարեմխոտ, երինջնակի տակ» Ոզբ. Կամրկ. ունին միայն ՀՌուս. § 2625 և Բառ. երեմ. յաւել.

571. (կայ նաև ջանջիւն «հրնջնակի տակ» Բառ. հրեմ. էջ 274)։

ՋԱՐՋԱՐ «մանր բակլայ». ունին միայն Բառ. հրեմ. յաւել. 571 և ՀԲուս. § 2626 (վերջինս Կամրկապցուց առնելով). նոյն բառն է նաև ջանջար «մանր բակլայ» Բառ. հրեմ. 274, որ դիտէ նաև Քաջունի, հմ. Գ. 208 féverole.

ՋԱՒՋԱԼԱԿ «սակամոնի, convolvulus scammonia» Գաղիան. դիտէ միայն ՀԲուս. § 2627։

ՋԱՓՈՒ (կամ ջափրի, ջաբրիկ) «մի տեսակ ծաղիկ կամ անուշահոտութիւն երջանիկ Աբարիոյ» Խոր. աշխ. 612. յիշում են միայն ՀՀԲ և ԱԲ (չունի ՀԲուս.)—իսկ Կոյլաւ, Բառ. գերմ. էջ 393 ա ջափու «արաւիուշ, crataegus oxyacantha»։

Պատկ. Խոր. աշխ. 57 իբր պրս. جبه jaba «մի գեղի անուն» (Vullers)։

+ՋԵՐ, ո հլ. «տաքութիւն» Սիր. գ. 17. «տաք, տաքուկ» եզն. «պարզ, բարեխառն և պայծառ օդ» Մաթ. ժգ. 2. Ոսկ. մ. ա. 6, բ. 28. Սեբեր. որից ջերանիլ «այրիլ, հիւանդութեամբ, ցաւով կամ մոլութեամբ տոչորիլ» Ա. մկ. ա. 6. նաև. բր. Սեբեր. Ոսկ. ա. տիմ. մաթ. նս. ջերիլ Անան. եկեղ. ջերին «տաքուկ» եզն. «պարզ օդ» Պիտ. փիլ. ջերոտ Ագաթ. ջերոց Վստկ.։ — Այս արմատի միւս ձևերն են՝ ՋԵՒ-, որից կազմուած են ջեռնուլ կամ ջեռանիլ ՍԳր. Եփր. թգ. ջեռուցանել ՍԳր. Ոսկ. մաթ. ջեռումն Ոսկ. բ. կոր. ջեռիլ Տօնակ. ջեռացուցանել Խոր. Պեբրիարմ. Ասող. ջեռլի Ոսկ. նս. ջեռուցիչ «կաթսայ» Գ. թագ. է. 40, 45. ոսկեջեռայք «հանդէսի վերջաբանը» Նորագիւտ բ. մն. է. 9. դիւրաջեռ Դիոն. երկն.—**ՋԵՐՄ, ո** հլ. (յաճախարար նաև ի հլ.) «տաք» ՍԳր. Ոսկ. ա. տիմ. Ագաթ. Կիւրղ. եւ. «օդի տաքութիւն» Ագաթ. եղիշ. «մտերիմ, ընտանի» Ոսկ. մ. բ. 2. Փիլ. 15, 518, «ջեր օդ» Ոսկ. մ. ա. 24. որից ջերմագոյն Ոսկ. նս. ջերմանալ Մրկ. ա. 30. Ոսկ. յհ. ա. 3, բ. 33. ջերմաջերմ Տոբ. բ. 11, 18. Ոսկ. մաթ. Կիւրղ. եւ. Եւագր. Եփր. գ. կոր. ջերմագութ Ոսկ. ջերմակիծ Ագաթ. Վեցօր. ջերմն «տենդ» ՍԳր. (յգ. ջերմանիմ եղիշ. Կանոն. 364). ջերմեռակալ «ջերմոտ» Ոսկ. բ. տիմ. ա. ջերմեռանդն Ագաթ. Սեբեր. Եփր. թգ. ջերմեռոտ Ոսկ. մաթ. բ. տիմ. ջերմեռեակ Մծբ. ջերմուկ նս. պատմ. Վեցօր. ջերմակաջուր (ուղղել ջերմաջուր) Վեցօր. դ. 79. ջերմիկ Վրք. հց. Նոր բառեր են ջերմել, ջերմոց, ջերմանոց, ջերմաչափ, ջերմագին, ջերմամիզութիւն են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gʷher- արմատից. ժառանգներից համմտ. սանս. घर् ghar, घृणोति ghṛṇóti «այրել, վառել, լուսաւորել», घृण ghṛṇá- «տաքութիւն», घृणि ghṛṇi; घर hára- «կիզիչ տաքութիւն», գնչ. jar «տաք», յն. θέρος «ամառուայ տաքր, ամառ», θέρμασσα «հնոց», θέρομαι «ջեռնումայ», հիւլ. gorim, guirim «այրեմ, տաքացնեմ», gor «տաքութիւն, կրակ», կիմր. gor «թուխս», gwres «տաքութիւն», բրբտ. gor «կրակ», լիթ. gãras «շոգի», լեթթ. gars «տաք դոլորշի. 2. ոգի», հսլ. gorěti «վառել», grěti «տաքացնել», žeravĭ «կիզիչ», po-žarŭ «հրդեհ», ռուս. гореть «այրիլ», горе «ցաւ, վիշտ», горячій «տաք», горячка «ջերմ», горькій «կծու» (որ է «այրող»), горчица «մանանեխ», горнъ «հալոց, հնոց», жаръ «շոգ, տապ», жаркое «խորոված», жарить «խորովել», по-жаръ «հրդեհ», ոսկր. hority, բուլգար. gorʹъ «այրել, վառել», չեխ. hořim, լհհ. gorzejȩ, պոլար. ǵüörë-sa «այրել», ալբան. ngroh «տաքացնել», zjar «կրակ, տաքութիւն, հանդ», լտ. fornax «փուռ» են են։ Հնխ. gʷher- արմատից -mo- մասնիկով ձևացած է հնխ. gʷhermó- «տաք», որից յառաջանում են յն. θερμός «տաք», փռիւգ.-թրակ. germo-, ալբան. zjarm «տաքութիւն» և հյ. ջերմ։ Նոյն արմատի *gʷhor- ձայնդարձից է յառաջանում հնխ. gʷhormó- «տաքութիւն», որի ժառանգներն են սանս. घर्म gharmá- «տաքութիւն, շոգ, հանդ», գնդ. ᴎ ᵹ ᵋ ᒧ ᔑ garə-ma- «տաք», հպրս. garma-, պհլ. garm, պրս. گرم garm «տաք», աֆղան. γarma, γārmą «կէսօր, օրուայ տաք ժամանակը», բելուճ. garm, քրդ. germ «տաք», germik «ջերմուկ», օսս. γarm, qarm «տաք» (Horn §

911), լատ. formus «տաք», հպրուս. gorme «տաքութիւն», գոթ. warmjan «տաքացնել», հրգ. նրգ. հոլլ. անգլ. warm «տաք», հհիւս. warmr «տաք» (Walde 308, Boisacq 341, Berneker 334, Trautmann 79, Pokorny 1, 687, Kluge 518)։ *Հնդեվրոպական նախալեզուի մէջ ձայնդարձը գործածւում էր բառի տեսակը որոշելու համար. այսպէս՝ e ձայնդարձը ածականի համար էր, o ձայնդարձը գոյականի համար։ Հայերէնի մէջ սակայն երկուսը միանալով e ձևը տարածուած է և o ձայնդարձը ժառանգ չունի հայերէնի մէջ։— Հիւբշ. 486։*

Ուղիղ համեմատութիւններ տուել նախ Klaproth, Asia pol. *էջ 106։ Նոյնը նաև ԳԴ, որ համեմատում է պրս.* garm, garmāgarm = **ջերմաջերմ** *բառերի հետ։* Brosset JAs. 1834, *էջ 383 ևն յն.* Θερός **ՆՀԲ ջեր դնում է նոյն ընդ հյ. շոր, βրբ. αἠρίη, լտ.** serenum, **ջերմ՝ յծ. արար. ճէրմ, պրս. կէրմ, յն. բէրմօ՛ս։** Peterm. *26, 35 անս. յն. և գնդ. ձևերը։* Windisch. 9 *սանս.* gharma-*։ Ուղիղ են նաև* Böttich. ZDMG 1850, 361, Lag. Urgesch. 965, Müller, Justi, *Տէրվ. ևն։* Canini, Et. étym. *էջ 5—6* **ջեր** = *սանս.* čur, *լիթ.* kurti «վառել» *և* **ջերմ** = *պրս.* garm*։ Հիւնք.* **ջերմ**՝ *բառ ՆՀԲ, իսկ* **ջեր** = *պրս.* **բիյր** «Հերմէս» *և յն.* Θέρος*։ Սրմադաշեան, Արմէնիա* **ջեր** *ձևի հետ է դնում ռում.* ger «սաստիկ ցուրտ»*։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* جرم jarma «խարոյկ»*։*

ԳԻՒ.—1. **Ջեր** *արմատից՝ Մշ.* **չ'եր** «պարզ և տաքուկ օդ»*, Լ.* **ջէր** «ոչ-պարզկայ դիշեր»*, Տփ.* **ջիրանալ** «տաքանալ»*, Վն.* **ճեր** «ոչ-պարզկայ դիշեր»*,* **ճէրել** «երկինքը պարզել»*, ՋԲ.* **չիրճոլ** «տաքանալ» (*պատկանում է այս արմատին, բայց ազդուելով շոր բառից՝ պարձել է այսպէս։ Մրկ. ժդ. 54 գրուած է* կու չիրճեր*, բայց դա գրականի ազդեցութեամբ է. բուն հնչումն է չ ձայնով*)*։—2.* **Ջերմ** *արմատից՝ Նախ.* **ջէրմ**, *Ախց. Կր. Սեբ.* **չ'էրմ**, *Ագլ.* **չիրմ**, *Շմ.* **ճէրմ**, *Ասլ.* **չէ'րմը**, *նշանակում են «տենդ, ջերմ հիւանդութիւնը», որից Գոր. Ղրբ.* **ճէրմել** «ջերմ ունենալ»*,—Եւդ.* **չէրմուգ** «ջերմուկ»*։*

ՓՈԽ.—Թրք. գաս. Եւդ. čermig, čermüg «ջերմուկ» *(Բիւր. 1899, 314 և Յուշարձան 329), Կր.* čermax «ջերմուկ»*,* Sovux-čermax *(վայրանուն)։ Փոքր-Ասիոյ զանազան կողմերը կան ածկ.* čermik *կամ* čermük *ձևով զանազան գիւղեր կամ աւաններ, բոլորն էլ մի որևէ ջերմուկից ստացած իրենց անունը։ —Հայերէն* **ջերմ** «տենդ» *բառից եմ համարում բիւզ. յն.* τζίρρα «ջղաձգութիւն, σπασμός, convulsion»*, որի համար* Sophocles 1080 *ասում է թէ՝ հին* σύρρα *բառի աղաւաղութիւնն է, պէտք է գրել* τζύρρα*.—արաբերէն ևս կայ* جرم jarm «տաք. 2. շատ տաք երկիր»*, բայց այս բառը ըստ Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 414 պրս.* گرم garm *ձևից արաբացնել է։*

ՋԵՐԻ «մի մոլորակի անուն». *մէկ անգամ ունի Մեկն. ծն. «լուծ՝ հող, և ջերի՝ ջուր, որ է այծ... ծպաւոր՝ օդ, փառազնուտ՝ հուր»։ Ըստ ՆՀԲ կոչւում է նաև* **եղջերու**, *ուստի վերի բառն էլ թերևս պէտք է կարդալ* **եղջերու**. *նախաւոր և բառի նախատառը պատճառ է եղած շփոթութեան։*

Ջերմ *տե՛ս* **Ջեր**։

ՋԵՔ *կամ* **ՋԷՔ**, *ի հլ.* «շատ մեծ ու բարձր, դերազանց. 2. իբր ձյն. ո՜հ, ի՜նչ լաւ, ի՜նչ գեղեցիկ» Քեր. Բր. 33. Համամ. քեր. 275. Երզն. քեր.։—Համմտ.* **բեՀ**։

ՆՀԲ «որպէս և պրս. **ջի՞**, *արար.* **գիեի՞** «քանի՞, ո՞վ, ո՞րչափ»*, իսկ* **բեՀ** *բառի տակ՝ «որպէս Թրք.* **չէ՛ֆ, չօզ, եիւսէֆ»*։ Պատահական նմանութիւն ունի ալթայ. ԹԹր.* چيك ček «ամբիծ, մաքուր, անպարսաւելի, անարատ» (Будаговъ *1, 506*)*։*

***ՋԻԳԻ** «վրէժ, ոխ»*, որից* **ջգրու** «ի վրէժ, ի հեճուկս»*. ըստ Գաբրիկեան, Ամէն. տարեց. 1922, 322 գործածուած է Քուչակի, Բժշկարանի և Ախտարքի մէջ։ Այժմ գործածական է երև. Տփ. Ղրբ. որից* **ջգրուիլ** *երև. Տփ.,* **ջգրացնել** *երև. Ղրբ. Տփ.,* **ջգրիլ** *Սեբ. Շհ.,* **ջրտուիլ** *Սլմ. «բարկանալ, նեղանալ, սրդողիլ»։*

=Թրքական բառ է, թէև այժմ ո՛չ օսմանեբէնում կայ և ոչ էլ Ատրպատականի թուրք բարբառում, բայց համմտ. կիրգիզ. جيكرمك

jigirmek «մէկի վրայ բարկացած կանչել» (Будаговъ, Срав. слов. 1, 449)։—Ա՛ճ.

+ՋԻԼ, ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ջիղ, փոքր. ուժ, զօրութիւն» ՍԳր. Ոսկ. մ. բ. 7, Եփր. պհ. աստում է նաև ջիղ, ջեղ Ոսկ. ես. Եզիշ. որոնցից ջլանիգ ՅՀ. կք. փիլ. ջլապինդ Փիլ. Գէ. ես. ջլել «անդամալոյծին ոտքի հանել» Խոիւք. ածած. 300. ջլաւել Պիտ. ջլուտ կամ ջղուտ Պիտ. Նիւս. ջլեայ, ջղեայ Խոր. արջառաջիլ ՅՀ. կք. Վրք. Հց. ամոլաջիլ Մն. լբ. 25, 32. վարազաջեղ Մծբ. բնաջեղ Վստկ. լայնաջիլ Դամատկ. մանրաջիլ Ա՛ր. ջղալուծ «տանջանքի գործիք՝ որով ջղերն են պրկում» (չունի ՆՀԲ) Վկ. գէ. 30։ Նոր բառեր են ջղային, ջղայնանալ, ջղայնացնել, ջղայնութիւն, ջլախտ, ջլախտաւոր, ջլախտաբոյծ ևն։—Նոյն արմատից պէտք է լինի նաև ջլացնել «բարակացած», որ գրաբարում եմ գործածուած Վրդն. սղ. լբ. էջ 114. «ժողովէ ի ծովէ, ի գետոց և յաղբերաց ջուր և կապէ ի ջլացնել և ի ծակոտնել օդ իբրև ի տիկ»։ Սրա անցողականն է ջլացուցանել «բարակացնել». «ի ջուրց ծովուց՝ որ շուրջ են զեզերօք երկրի, ջլացուցանելով օդն և արարեալ ծակոտկէն, արկանէ ջուր ի ներքս՝ իբր ի տիկս և հողմով ի վեր առեալ՝ տանի յո՛ և կամի». Վրդն. սղ. ճղ. էջ 453 (Ա՛ր բառս մեկնում է «պնդացնել, զօրացնել», որի հետ նոյն է Բառ. երեմ. էջ 275 «սերտել»)։ Նոյնը կայ և Շիր. 45. «իսկ (ի) գարնանային ժամանակին օդն պարարի խոնաւութեամբ և յարեգակնային ջերմութենէն ջլանայ զհարստութիւն»։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gʷhiṣla- ձևից. ժառանգներն են լիթ. gýsla «երակ, ջիղ, նևարդ», լեթթ. dzîsla, dzîksla, հին պրուս. gisło «երակ», հսլ. žila «երակ», ռուս. жила, սերբ. žîla, չեխ. žila «ջիղ», լտ. fīlum «թել», ալբան. dei «ջիղ, երակ, նևարդ» (Walde 291, Trautmann 90, Pokorny 1, 670, Ernout-Meillet 345)։ Միւս լեզուները չեն պահած այս արմատը։—Հիւրշ. 486։

Տէրվ. Altarm. 23 անգամ. ǰyā, զնդ. zya, յն. βιός «աղեղի լարը» բառերի հետ՝ ղ մասնիկով։ Հինք. ջոլիր բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Müller Armen. VI, 54։

ԳԻՒՐ.—Կր. ջ'իղ, Ալշ. Հճ. Մշ. Սչ. ջ'եղ, Սեբ. ջ'էղ, Տիգ. ջիղ, Խրբ. ջէղ, Սլմ. Վն. ճեղ, Մկ. ճէղ, Ննխ. ջըղ, Ջղ. Տփ. ջիլ, Մշ. ջ'իլ', Ագլ. Ախց. Գոր. Երև. Ղրբ. Մրղ. Շմ. ճիլ։—Նոր նշանակութեամբ են Մրղ. «կօշիկի կամ գուլպայի ոտքին», Ակն. Մշկ. «ոլոքք», Երև. «անծամելի, պինդ», Սվեդ. ջղվա «ոտքեր» (իմաստի զարգացման համար հմմտ. ջիղ Ակն. «ոլոքք»)։ Նոր բառեր են ջիլոտ, ջիլջիլոտ, ջլակոտոր, ջլամոր (հմմտ. ճլլամաճ Առաք. պատմ. 389), ջլատ, ջլատել, ջլատոտել, ջլրաց կամ ջլերաց։

*ՋԻՀԱՆԳԻՐ «աշխարհակալ» Կիր. 222. «Գրնալ զանձն Ջիհանգիր և տէր ծովու և ցամաքի»։

=Պրս. جهانگیر jihāngīr «աշխարհակալ»։—Հիւրշ. 275։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Ալիշան, Հրատ. Կիր. (անդ)։

+ՋԻՆ, ի–ա հլ. «գաւազան, ծեծի բիր, մահակ» Փիլ. նխ. 19. որից ջնել «գաւազանով ծեծել, տանջել» Պիտ. Նար. էջ 151. Ոսկիփ. Տիմոթ. կուզ 79. «ականջին խորթ թրւիլ» Տիմոթ. կուզ 116, 152. ջնումն Տիմոթ. կուզ 275 (տե՛ս Ակինեան և Աճառեան, Տիմոթ. կուզ, էջ 48, 96). կայ նաև ոջին «ճիւղերի կապոց, տրցակ» Վրք. Հց. ա. 267 (չունի ՆՀԲ)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gʷhen- կամ gʷhēn «ծեծել, զարնել» արմատից, որի gʷhəni կամ gʷhṇni ձևից յառաջանում է հյ. գան «ծեծ»։ Բառիս միւս ցեղակից ձևերի վրայ տե՛ս գան։ Համմտ. նաև ջինջ։

ՆՀԲ լծ. գան։ Հինք. պրս. նիւնաղ «փոկ»։ Karst, Յուշարձան 404 սումներ. gin, gi «հղէգ, ձող»։ Ուղիղ մեկնից նախ Patrubány KZ 37 (1904), էջ 428, որ համեմատում է հյ. գան և յն. θείνω բառերի հետ։ Սրանից անշուշտ անկախաբար Scheftelowitz BB 29 (1905), 17, որ յիշում են Walde 224 և Boisacq 336, և որ կրկնում է Դափանցեան ՅԲՕ 23, 354։ Ընդունում է Meillet (նամակ 21 ապրիլ, 1927 թ.)։

+ՋԻՆՋ «մաքուր, յատակ, վճիտ» Եզեկ. իա. 10. Մծբ. Ագաթ. որից ջնջել «սրբել, մաքրել, վերացնել, անհետ դարձնել» (իմաստի զարգացման համար հմմտ. սուրբ, սրբել) ՄԳր. ջնջոց «սրբիչ, շորի անպէտ կտոր, քուրջ. 2. բուժումն» Եզեկ. ժզ. 21. Եւս. քր. ջնջան «սրբիչ, շոր» Առակ. իա. 18. ջնջագիր Փարպ. անջինջ Եւագր. Եղիշ. բնաջինջ Դտ. իա. 3. Եւս. քր. դժուարաջինջ Փիլ. սաստկաջինջ Վեցօր. էջ 31. մաքրաջնջել «բոլորը սրբել վերջացնել» (չունի ԱԲ) Պարզ. 712. սրբաջինջ Սուտ-Սեբ. 8 (ՀԱ 1913, էջ 33 ծանօթ.), արմատաջինջ Ճառընտ. համայնաջինջ Պիտ. Նար. համաջինջ Եւս. քր. անջնջելի Բուզ! Դ. ժե։ Արմատի երկրորդ ձևն է ՋՈՒՆՋ, առանձին անգործածական, որից ունինք համաջունջ Ոսկ. մ. ա. 7 և ա. տիմ. էջ 138. Մանդ. Գնձ. անջունջ Ոսկ. յհ. ա. 2. սրբաջունջ առնել «բոլորն էլ ջնջել, կոտորել» Սուտ-Սեբ. էջ 8.—սակայն ջնջ- ձևով ածանցները կարող են թէ՛ առաջին և թէ երկրորդ ձևից յառաջացած լինել։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gʷhen- արմատից՝ -ye- բնով, որ տալիս է հյ. ջ. ժառանգակից ձևերը ու՛մ գան բառի տակ։ Յիշենք այստեղ ի միջի այլոց զնդ. jan, jainti «զարնում, սպանում է», յն. θείνω «զարնում», հիւլ. gonim «վիրաւորել, սպանել», հսլ. žena «զարնելով քշել, վանել», ռուս. гонить «վարել, քշել, հալածել»։ Հայերէնի մէջ հնխ. gʷhen- պարզ արմատը տուել է ջին (տե՛ս այս բառը), նրա աւտրին ձայնդարձը՝ gʷhn̥- տուել է գան, -ye- բնով աւտացուել է ջինջ, որի միջին ձայնդարձից էլ ջունջ։

Տէրվ. Altarm. 53 առնս. niǰ «լուալ, մաքրել», յն. νίζω<νιγιω «լուալ, մաքրել» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Հիւնք. ենթադրում են բառից։ Ուղիղ մեկնեցին միաժամանակ Patrubány և Meillet. առաջինը IF *14 (1903), 58* ջնջել դնում է ջին, ջնել բառերի հետ՝ ջ մասնիկով և KZ *37 (1904), 427—8* կցում է յն. θείνω բային. այսպէս և վերի ձևով նաև Meillet, Esquisse *1903, էջ 29 և 79*։ (Ընդունում է Brugmann, Gr. d. vergl. Gram. *II² 3, էջ 180*, բայց աւելի լաւ է համարում դնել կրճատ կրկնաւոր, ինչ. սանս. ján-ghanti): Karst, *Յուշարձան 407* տումեր. sun «քանդել, ոչնչացնել», *426* թրք. sön-mek «չիջանել»։

*ԳԻՒ.—երև. ջնջել, Ագլ. Տփ. ջնջիլ, Ջղ. ջ'նջել, կր. ջ'նջէլ, Մրղ. ճնջէլ, Հւր. ճինջէլ, Շմ. ճինջիլ, Հճ. ջ'mնջ'ել.—Ախց. կր. ջ'ընջօց, Սեբ. ջրնջէօց, Վն. ճնջոց, Մշ. ջ'նջոծ, ճէնջոց, Ռ. ջինջօց, Շմ. ճինջօց, Ննխ. ջինջօց, ջուջօց. Էնկիւրիի թրքախօս հայոց մէջ էլ jənjos «ջնջոց» (Թիւր. *1898, 865*).—սրանցից մի քանիսի մէջ նախաձայն ջ չի դարձած ըստ օրինի չ', այլ տուած է և կամ ճ-ից անցնելով ջ, որովհետև բառը կապուած է ճեճճ գաղափարի հետ (ջնջոց իբր «ճննճի շոր»)։

*ՓՈԽ.—Վրաց. ჯინჯი ճինճի (ըստ Գուրիացոց), ჯენჯო ջենջո, ჯინჯიო ջինջիբի «հին շորի կտոր, փալաս, փաչավրա»։

*ՋԻՏԱՅ «երկարութեան չափ է» Յիշատ. *1591* թուից (Դիւան ժ. էջ *37*). «երկու ջիտայ ունի բարձրութիւն»։

=Թրք. جِدْ jida, ույղուր. چِدا čida, ալթայ. يِدَ yida «նիզակ» (Будаговъ *1, 433*).—նիզակաբունը վերցրած է իբր չափ։—Աճ.

ՋԻՐԴ «առընդհատ, մշտական» Բրս. հց. որից ջրդիլ «հանապազորդել, անդադար ջանալ» Պիտ. 471։ Այս բառը գործածում է նաև Ջուղ. 59 (Ջրդեալ ջանայցեմք), անշուշտ Պիտոյից գրքից առնելով։ (Հին բռ. և Բառ. երեմ. էջ 274 մեկնում են «առոյգ, ճիշտ», որով ՆՀՔ համեմատում է լտ. certus «առոյգ» բառի հետ)։

ՋԻՔ «վերին ևթեր. արևի մօտ եղած տեղերը» Պիտառ.։

*ՋՀՏԱՔԱՐ «պարտիզաքար, լազվարդ քարը. ձիթապտղի նման մի քար է, որ գործածական էր հին բժշկութեան մէջ» Բժշ. (սրխամամբ գրուած ջշդաքար). Հին բռ. (տե՛ս ՆՀՔ պարտիզաքար բառի տակ). նոյնը նաև ջիուա քար Մխ. բժշ. *144* կամ ջիտի քար Ամիրտ. (վկայութիւնները տե՛ս Նորայր, Բառ. ֆր. *719 բ*)։

=Կազմուած է արաբ. جهود ǰuhūd «հրեայ» բառով՝ թարգմանաբար արաբ. حجر الجهود ḥaǰar-al-ǰuhūd կամ حجر اليهود ḥaǰar-al-yahūd հոմանիշից, որ բուն նշանակում է «Հրեայի քար» (այսպէս է կոչուած Հրէաստանի մէջ առատօրէն գտնուելու պատճառաւ). Համմա. նոյնի հոմանիշները՝ ֆր. pierre judaïque, պրս. سنگ يهودان sang-i-yahudān, յն. Γουδαϊκὸς λίθος, լա. lapis judaïcus։ Ընդարձակ բացատրութիւնը և նկարագրութիւնը տե՛ս Seidel, Մխ. բժշ. § 383։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բառ. ֆրանս. 719 բ։

ՋՂՈՒ «տիզկանափայտ, ricin, տճկ. kčnčkkčrčdž». ունի միայն Քաջունի, Հա. Գ. 209, որից և ԳԲ։

Ջղջ տե՛ս Ճղճիմ։

ՋՂՋԵԼ «ամրացնել, զօրացնել, պնդացնել». նորագիւտ բառ, որ մեկ անգամ գրտնում եմ գործածուած Ոսկ. գծ. էջ 352. «Ոչինչ այնպէս սիրելիք առնել և ի միասին կապէ և ջղջէ զանձինս հաւատացելոց՝ որպէս նեղութիւն»։—

Ջղջիկաև տե՛ս Չիղջ։

ՋՆԱԿ «մի տեսակ բոյս. gentiana» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2631։

ՋՆԱՐ, ի-ա հլ. «քնար, տաւիղ, կիթառ» Նաւում. գ. 8. Սերեր. 136. Տօնակ. Նար. էջ 244. որից ջնարաւոր Ոսկ. կողոս. 641. Ես. 292. ջնարահար Խոր. Մագ. Թղ. 209. Նար. 104. պէտք չէ կարծել թէ ինար բառի ձևափոխութիւնը լինի, որովհետև երկուսը միասին կողք կողքի գործածուած ունինք Ոսկ. կողոս. 614՝ ջնարն և ինարն։

ՆՀԲ ինար բառի հե՞տ։ Lag. Urgesch. 849 երբ. kinnōr «քնար» բառից։ Նոյն, Armen. Stud. § 1904 սրա հետ յիշում է նաև հյ. ջին, ջնել «զարնել»։

*Փոխ?—վրաց. ჭიანჭრი ճիանճուրի և թուշ. ჭინჭრ ճինճուր «ջութակ», որից էլ վրաց. მეჭიანჭრე մեճիանճուրե «ջութակահար»։

ՋՆԱՐԱԿ կամ **ՃՆԱՐԱԿ** «սանդարակ խէժը, sandaraque» Գաղիան. բժշ. «մի տեսակ ներկ» Գաղիան. (ըստ ՀԲուս. § 1889). որից ջնարակագոյն «ջնարակի պէս փայլուն» Բռ. տեսի. լհհ.։ Սրա հետ նոյն է ջնարէկ «կարմիր ծծմբատար զառիկի, sulfure rouge d'arsénic, sandaraque, réalgar», որ գիտէ միայն Նորայր, Բառ. ֆր. 1036 ա, որից և Քաջունի, Գ. 197։ Արդի գրականում ջնարակ նշանակում է «սըր, հողէ ամաններին ներսի փայլուն ապակեփայլ ներկը»։

Lag. Arm. Stud. § 1905 կցում է յն. σανδαράκη ձևին։ Հիւբշ. 232 սրա հետ միասին պարսկականից փոխառեալ է համարում։

ՋՆԴԵԼ «շորթել». ունի միայն Բառ. երեմ. էջ 275, որ կայ նաև գուռ. ջնդել Ախց. Ախք., չնդել Ջղ., չանթել Երև. կ. Ղրբ., չոնթել Վն., չնթել Նբ., չմթել Երև., չալթել Ակն. Բն. ձևերով։

***ՋՆԻՐԱՅ** «երկրորդական ձի, նժոյգ ի ձեռանէ». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գրտնում եմ գործածուած վրդն. պատմ. էջ 132. «Այլ նա ընդ պարիսպն իջեալ և երկու ջնիրայով (հրտր. էմինի, էջ 173 ջնիփով) չոգաւ ի Մանծկերտ»։

=Արաբ. جنيبة ǰanība, որ և جنيب ǰanīb, յգ. جنايب ǰanāyib «նժոյգ ի ձեռանէ, ձի՝ որ քաշելով տանում են». կազմուած جنب janb «կող, կողք» բառից (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 96). որից փոխառեալ է նաև վրաց. ჯიბიბი ջիբիբի «պահեստի ձի», მეჯიბიბე մեջիբիբե «ձիապան»։

Ուղիղ մեկնեց Ալիշան, Հրտր. վրդ պատմ. 132, ծան. 1։

Ջղդաբար տե՛ս Ջհտաբար։

ՋՈՓ «անասունների մէզը», որից **ջոբել** «անասունների միզելը». գիտեն միայն Քաջունի, Հա. Գ. 209 և ԳԲ։

ՋՈՒԻՐ, ի-ա հլ. «խումբ, բազմութիւն, հօտ (մարդոց կամ անասունների)» Ոսկ. փիլիպ. Կանոն. էջ 44. Փիլ. 34. կք. որ և ջոլոր կամ ջոլորիկ Օրբել. որից ջոլորել «հաւաքուիլ, խմբուիլ, իրար հետ միանալ» Ճարտնտ.=Վրք. և վկ. Ա. 162. Սարգ. յուդ. գ. (ք. տպ. էջ 664). ջոլրաբար Իրեն. ցոյցք, էջ 17. բազմաջոլիր «որսի անասունները շատ» Օրբել. ժ. ջոլրեալ Անան. գիտ. էջ 6. գրուած է ջայլիր Մագ. Թղ. 209։

ՆՀԲ բոլոր կամ ոլոր արմատի՞ց։

Հիմնք. օղ, ոլոր, բոլոր բառախմբի մէջ է դնում: Petersson IF 43 (1925), 71 ջաղբ, ջոլիր, ջոլորել դնում է իբր հնխ. ghel-or-o. Համմ. սանս. ghaṭate «ջանալ, հասնիլ, կարենալ», պալի ghaṭā «խումբ, բազմութիւն», յն. χαλινός «սանձ», անս. vigulpha «ճոխաբարբ», անգսք. gielm «խուրձ»:

Գիմ.—Շիր. ջ'օլրվիլ «շորս կողմը շարուիլ նստիլ» (կարող է եկած լինել թէ՛ ջոլրիլ և թէ ջոլորիլ ձևից):

*ՋՈՒԽ «գաւազան, փայտ, բիր» վրք. հց. ա. 694. ուրիշ վկայութիւն չկայ:

=Վրաց. ჯოხი ջոխի «փայտ, գաւազան» բառից փոխառեալ:—Ա.Ճ.

ՆՀԲ լծ. Խուխ, ձող, ճիւղ: Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1908, 124:

Գիմ.—Տփ. ջօ'խի «փայտ, մահակ, բիր», Երև. ջօ'խի «ծառի դալար ճիւղ», երկուսն էլ նոր փոխառեալ վրացերէնից.—Համշ. նոյն բառը կայ ջօխ ձևով, որ վրիպակով տպուած է ջօփ (Ագգ. հանդ. 9. 141):—Նո՞յն է արդեօք Ղրբ. ճէխ, ճէ՛խի «վառելափայտ»:

Ջոխիր տե՛ս Ճօշիր:

*ՋՈՒԿ, ի, ո հլ? «խումբ» վեցօր. 140. Ոսկ. մ. գ. 8 և յհ. ա. 27. Եւս. քր. Կիւրղ. ծն. «տոհմ, ցեղ» Ուռհ. 109. որից ջոկապան «երամակի պահապան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 122. «Սուր ի ձեռին արիք և անարիք և ջոկապանք մտանէին ի մայրիան և ի ծերպս և ի ծակս վիմաց», ջոկատ «փոքր խումբ» Խոր. ջոկարան Նար. ջոկադրել Արծր. ջոկել «բաժանել, անջատել» Օրբել. Հրտր. Էմինի, էջ 58. Յայսմ. Գնձ. «զանազանել, տարբերել» Անկ. գիրք հին կտ. 321. մարտիրոսաջոկ Օրբել. երկջոկիլ «երկու խմբի բաժանուիլ» Աբ. անջոկական «անզանազանելի» (նորագիւտ բառ) ժմ. 960. սրովբէաջոկ Գնձ. ջոկամանել «իրար հետ կապել» Աբ և Բառ. երեմ. 275. ջոկաման «բազհիւսական շաղկապ» Աբ (բայց տարօրինակ կերպով Բառ. երեմ. էջ 275 մեկնում է «անարան»):

=Պհլ. *Jōk ձևից, որ չէ աւանդուած. համմ. պրս. جوخ jōx «մարդոց կամ անասունների բազմութիւն», արաբ. (իրանեան փոխառեալ) جوق jauq կամ ձև جوقة jauqa «մարդոց խումբ»: Արաբ. առաջին ձևը աւելի հարազատութեամբ ներկայացնում է պահլաւ ձևը և աւելի մօտիկ է հայերէնին, քան նոյն իսկ պարսիկ ձևը:—Հիւբշ. 232:

Նախ ԳԴ համեմատեց պրս. (արաբ.) jauq ձևի հետ: Peterm. 26 արաբ. Jauq: Պատկ. Изсл. պրս. jōx, արաբ. Jauqr, Տէրվ. Altarm. 24, Մասիս 1882 յունիս 7 և Նախալ. 100 հնխ. yug արմատի տակ՝ իբր սանս. yōga, yuJ, պրս. Jōq ևն: Հիմնք. պրս. նուգ: Karst, Յուշարձան, էջ 428 ՔՔր. čob «հաւաքել», օսմ. čoq «շատ»:

Գիմ.—Ջղ. ջ'ոկ, Ալշ. ջ'ոճ, Մշ. ջ'ոգ, Ախց. կր. ջ'օկ, Երև. Ննխ. ջօգ, Գոր. Ղրբ. Մկ. ճօկ, Տփ. ջուգ, Վն. ճէօկ, Մրղ. Շմ. Ալմ. ճէօկ՝. բոլորն էլ նշանակում են «առանձին, անջատ». այս իմաստի հին վկայութիւնն ունի Օգոստ. բաջ. 15. բուն «խումբ» նշանակութիւնը պահում է միայն խոջ. ջօգ «ջորիների, էշերի ևն խումբ»: Նոր բառեր են ջոկուիլ, ջոկճուիլ, ջոկովի, ջոկողութիւն, ջոկածուրիկ, ջոկու, ջոկուճ, ջոկջոկել, ջոկջոկատել, ջոկռտել:

Փհխ.—Վրաց. ჯოგი ջոգի «ձիերի երամակ», დაჯოგება դաջոգեբա «ամբոխել, խմբուիլ, խուժել», Թուշ. ჯოგ ջոգ «ձիերի երամակ», մինգր. ჯოგი ջոգի, սվան. ǰveg «նախիր», օսս. jūg, jog «ոչխարի հօտ», ուտ. ջոկ «գառ, տարբեր», ջոկջոկ «առանձին առանձին, գառ գառ», ջոկբեսուն «բաժանել, ջոկել», վախտ ջոկ «բեղնից բացի», վրաց. მეჯოგე մեջոգե «կուտպան», ჯოგჯოგად ջոգջոգադ «խմբովին»:

ՋՈԿԱՒՈՒ «յառաջ». ունի միայն Բառ. երեմ. էջ 275:

*ՋՈՀԱՐ կամ ՋՈՒԱՐ «գոհար» Թղթ. դաշ. (հրտր. Շահն. 27 նուհարական), որ և ջուհար Կոստ. Երզն. 81, 143, 102, ջուհար Թլկր. 25, ջաւհար Օրբել. 185, 298:

=Արաբ. جوهر jauhar, jūhar «գոհար», որ փոխառեալ է պրս. گوهر gōhar ձևից. մանրամասն տե՛ս գոհար: Այս բառից է նաև ջոհարի «գոհարավաճառ, ակնավաճառ»

Կոստ. երզն. 102, 143, որ է արաբ. خوهری ǰauharī *«ակնավաճառ»։—Հիւբշ. 275։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ։

Ջոշիր *տե՛ս* Ճօշիր։

Ջոպ *տե՛ս* Ջով։

ՋՈՋ *«մեծ, աւագ» Մարթինի։*

Գիւռ.—Ալշ. Մշ. ջ'ոջ', Վն. ճոշ (սեռ. ճիւշի), Մրղ. ճուշ, ճէօշ, Սլմ. ճէօշ, Մկ. ճիւշ, Ռ. շօշ. բառս գործածական է նաև Ասպ. Արճ. Բլ. Բգ. Խ. Խլ. Նփ. Սր. Ոզմ. Տիգ.։ Նոր բառեր են ջոջաճալ, ջոջագլուխ, ջոջիկ, ջոջկիկ, ջոջուր, ջոջպապ, ջոջտոր, ջոջցնել, ջոջճաճ, ջոջաճոգի, ջոջագլխաճակ։—Հին հայերէնից աւանդուած է մեզ Ջոջիկ անունը. այս անունով յայտնի են Ջոջիկ եղբայր Վաղգէնի՝ բդեշխի Վրաց. ամուսնոյ ս. Շուշանիկայ (ե դար), Ջոջիկ վաներէց Արամունից (608 թ.), Ջոջիկ իշխանաց իշխան Տայոց (ժ դար)։ Այս վկայութիւնները հասցնում են ջոջ բառի հնութիւնը մինչև ե դար։

Փոխ.—Հայերէնի հետ կապ չունի ուս. ճոճա (Քամալեան, Երկասիրութ. 158), որ ինչպէս սառուցի ուսէացի ուսիագէտ Պաստուխան Քուշմանեանից, նշանակում է ո՛չ թէ «մեծ, աւագ», այլ «կարմիր»!

ՋՈՃՈՊ *«գաճաճ». պիտէ միայն Քաջունի, հա. Գ. 209։*

+ՋՈՎ (ո, ու *հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) *«բոյսի ծիլ կամ ընձիւղ» Վեցօր. 87. «զդմենու արձակած թևերը» Մծբ. 327, 369. «խուրձ կապելու կեմ, խոտէ չուան» գւռ. (տե՛ս տակը). որից ջովանալ «բոյսը ծիլեր արձակել, աճիլ մեծանալ, ուռճանալ» Ագաթ. հին. հլ. էջ 150. հաստաջով «հաստ ծիլերով (ցորեն)» Թէոփ. խ. մկ. բառասնաջով «բառասուն ծիլ արձակած (արմատ)» Թէոփ. խ. մկ. (Հին բռ. և Բառ. հրհմ. էջ 275 ջով մեկնում են «բազմաստեղն», ինչպէս ունի նաև Հին հաւ. 115)։*

*=Բնիկ հայ բառ՝ հնխ. yoyo- ձևից, որ միջին ձայնդարձն է *yeyo- բառի. նշանակում է «ցորեն, գարի, կորեկ կամ նման մի բոյս, խոտ, արօտ». ժառանգներից համմտ. սանս.* यव yava- *«ցորեն, գարի, կորեկ»,* यवस yavasa *«խոտ, արօտ, մարգ», գնդ.* 𐬬𐬀𐬎 yava- *«ցորեն», yəvīn- «արտ», ya-*vaïïha- *«արօտատեղի», պհլ. ǰav, yav, պրս.* جو ǰav, *քրդ. je, ǰau, yō «գարի», օսս. yau, yäu, yeu «կորեկ», բելուճ. ǰo, ǰav «գարի», լն. ζειαί, ζεαί «կարմրահատ ցորեն», լիթ. javaĩ «ցորեն», javienà «ցորենի արտ», jauja «ցորենի չորանոց», ռուս.* овинъ, *ուկր.* óvyn *«ցորենի որանները չորացնելու յարկ». միջին ձայնդարձն է ներկայացնում յն.* φυσί-ζοος *«ցորենաբեր, պաղաբեր, անուցիչ» բարդի երկրորդ եղրը (*Pokorny 1, 202, Boisacq 307, Walde 400, Trautmann 107, Horn § 428)։—*Ա՛ճ.*

Karolides, Γλ. σγχρ. 91 *մերժում է կցել Կապադովկ.* čionō *«ծագիլ արևու, բողբոջել բոյսի»։ Հիւնք.* չու, չուել *արմատից։* Scheftelowitz BB 28, 301 *սանս.* ghabasti *«թև, ղեկ», լտ.* gabalus *«կախաղան» բառերի հետ, որ մերժում են* Lidén, Arm. St. 32 *և* Pokorny 1, 533, Walde 331: Karst, *Ծուշարձան 422 թրք.* čop *«փայտի կտոր»,* čubuq *«ցուպ, գաւազան»։ Թիրեաքեան, Արիա-հայ բռ. 325 պրս.* جوان ǰuvān *«մատաղատի»։*

Գիւռ.—Մշ. Նր. ջ'օվ, Մկ. ճով *«խուրձը կապելու խոտէ կեմ»։—Քաջունի, հա. Գ. էջ 210 ջով մեկնում է «կեմ ի ծեղոյ աշորայի», և էջ 209 ունի նաև ջոպ «խոտեղէն չուան, կեմ»։*

Փոխ.—Քրդ. čāv *«խոտի կեմ» փոխառեալ է հյ. ջով ձևից, որից յետոյ յետ է փոխառեալ Մկ.* ճով։

ՋՈՎԹԱԿ *«մուրհակ». ունի միայն Փր. նոյնը Բառ. երեմ. էջ 275 «ձեռագիր», անատոլգ բառ։*

***ՋՈՎԼԻ** *«մագն կամ երկաթի բարակ թելերով հիւսուած քամիչ կամ շերեփ» Վստկ. 93. «Պատահ է որ ձարէ կամ երկաթէ ջովլի շինես և դվերայի փրփուրն ի բերանոցն բռաէպ սրբես շերեփովն և դջովլին մինչև յատակն կարասին ածես»։*

=Պրս. چاولی čavlī *«սկաւառակ որ իցէ հիւսեալ յռճից ցորենոյ» ԳԴ. Աստրպատականի Թուրքական արտասանութեամբ բառս պիտի դառնար* čovli *(համմտ. օսմ.* av *«որս»,* avjə *«որսորդ»>սարպ.* ov, ovči), *որից և*

մեր բառը։ Անշուշտ այժմ սպակ կոչուած ծղօտեայ ամանն է, որի վրայ ձուկ կամ կանաչի են լուանում, լաւագ հաց թրջում են։

Ուղիղ մեկնեց Հացունի, Ճաշեր, էջ 98։

Ջորդան *տե՛ս Ջուր։*

ՋՈՐԵԱԿ, ի–ա *հլ. «փորը մորեխ» ՍԳր. (Անատոյգ նշանակութեամբ դրուած է Վստկ. 72. յոյն բնագրի համապատասխան բառն է «բորենի».—Քաջունի, Հտ. Գ. էջ 210 ունի* ջորեակ «bruche. 2. *թռչուն ինչ», և* ջորիկ «*ձաստանդր,* scolopandre, *տճկ. քըրք այաք»)։*

ՆՀԲ «որպէս թե ջորի փոքրիկ»։ Մատ. Вступительныя и закл. строфы... Шоты, *էջ XIX վրաց.* ტანაჯორი *տանաջորի միջատի անունը ջորի բառից դնելով՝ ուժ է տալիս այս համեմատութեան։*

ՋՈՐԻ (ջուոյ, –ուց, –եաց, –եօք) «*ջորի, կիսէշ*» *ՍԳր. Վեցօր. 142. Բուզ. եղն. որից* ջորեաես «*ջորի պահող*» *կլիմաք.* ջորեան «*ջորիներ*» *Ուռհ.* ջորեպան (*չունի ԱՔ*) *Ջրբ. սարկ. Ա. 32.* ջորեքաշ «*ԲՁ ձայնին պատկանող մի եղանակի անուն*» *Մանրուս. (Ամատունի, Հայոց բառ ու բան 576)։*

Տէրվ. Նախալ. 114 և Երկրագունտ 1884, 100 համեմատում է սանս. starī, *յն.* στεῖρα, *գոթ.* stairo, *լտ.* sterilis «*ամուլ*» *բառերի հետ՝ ջորին համարելով իբր «ամուլ». բստ այսմ ջորի գալիս է հնագոյն *ստորեա ձևից և նոյն է պրս.* استر astar «*ջորի*» *բառի հետ։ Հինք. պրս.* gōr «*ցիւռ*»։ Patrubány SA 1, 193 *հնխ.* kĮorio *փխ.* kĮoro, k'Įotero-*ինչպէս կայ հնխ.* ek'vo-tero>*սանս.* açva-tara «*ջորի*»։ *Նոյն ՀԱ 1908, 188 իբր «դիոդ» հանում է* dhya *արմատից, համմտ. հյ. դիել, դալ, դայեակ։* Karst, *Յուշարձան 405 սումեր.* kur «*ձի*» *և հյ. Ֆուռակ։ Մատ.* Яфет. сбор. *1, 48 յարիբական* raš «*ձի, գրաստ*» *բառից, որից նաև պրս.* raxš, *զերմ.* Ross, *անգլ.* horse «*ձի*» *են։*

Գիւմ.—Ջղ. ջ'որի, *Տփ.* ջ'օրի, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Սեբ.* ջ'օրի, *Վն.* ճորի (*սեռ.* ճուրու), *Գոր. Համշ.* ճօրի, *Ղրբ.* ճօ'րէ, *Ռ.* չօրի, *Ասլ.* չ'էօ'րի, *Շմ. Սլմ.* ճէօրի, *Ագլ.* չէ'րի, *Մղր.* չի'ւրէ, *Զթ.* ճիյէ, չ'իրէ, *Սվեդ.* չ'իրա, *Մկ.* ճիւրը՛, *Հճ.* չ'իյի։ *Նոր բառեր են* ջորաբեռ, ջորեճալ, ջորիլ «*ոխ պահել*»!

Փոխ.—Վրաց. ჯორი ջորի «*ջորի. 2. ջութակի էշը*», მეჯორე *մէջորե «ջորեպան»,* ჯორიო ტერფა ջորիս տերփա «*մի տեսակ բոյս է*», ტანაჯორი տանաջորի «*մի տարեկան ջորի. 2. մի տեսակ միջատ.* notonecta glauca *(տե՛ս* ջորեակ)», *գնչ.* čori (*ջորի*)։

Ջորիկ *տե՛ս Ջորեակ։*

***ՋՈՒԱՊ** «*պատասխան*» *Երզն. այբուբ. =Արաբ.* جواب javāb «*պատասխան*» (*այժմ ամկ. ճօղապ, ճուղաբ*):—*Հիւբշ. 275։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Հիւբշ. ZDMG 35 (1881), 662։

ՋՈՒԱՐՋ «*կովու լեղի*». *ունի միայն Բռ. երեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 558, որից և Քաջունի, Հտ. Գ. 210, նիւթի մասին մանրամասն տե՛ս* խաւազայ։

=Պրս. گاو زهره gāv-zahra *համանիշն է, որ նախ անցել է արաբերէնի՝ փոխելով բստ օրինի* g>ǰ. (*իբր *ǰāvzahra*) *և յետոյ կրճատուել ու ձևափոխուել։—Աճ.*

ՋՈՒՃԱԿ, ի–ա *հլ. «մի տեսակ լարաւոր նուագարան» Նար. էջ 243. նոր գրականում նշանակում է «violon», որից* ջուրակաճար, բաւջուրակ, բաւջուրակաճար։

***ՋՈՒՀԱԿ** «*ոստայնանկ*» *Յաամ. փետ. 1. Վրդն. առ. 293. «ԱՁ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամատունի, Հայոց բառ ու բան 576). գրուած է* ջուխակ *Տաթև. ամ. 454։*

=Պրս. جلاهک julāhak «*ոստայնանկ*» *բառից փոխառեալ. ծագում է պրս.* جول jūlāh *բառից, որից փոխառեալ են նաև արաբ.* جلّاه jullāh, جلّه jullah, *քրդ.* ǰulanḱ, ǰulfa, *Քրք.* چولحا čulha «*ոստայնանկ*»։—*Հիւբշ. 233։*

ՆՀԲ դրած է «բառ ոմկ» և յիշած է ջիւլահ, ճիւլահ, չիւլհա *ձևերը։ Հիւբշ. 239 չունենալով պրս.* ǰulāhak *ձևը, որից կանոնաւորապէս գալիս է հյ.* ջուլահակ>ջուխակ, *և խաբուելով հայերէ-*

նի -ակ վերջաւորութիւնից, դնում է հին իրանեան փոխառութեանց մէջ, իբր պրս. ǰōlāh, ǰōlāha, անշուշտ ենթադրելով պհլ. ǰōlāhak ձևը։

Գիհ.—Մշ. Սլմ. Տփ. ջուլհակ *(Մշ. սեռ.* ջուլգի*)*, *Շմ.* ջիւլհակ, *Տփ.* ջո՛ւլակ, *Երև.* ջուլհագ, *Ջղ.* ջուխլակ, *Ախց.* ջ՛ուֆլակ, *Կր.* ջուլֆակ, ջուֆլակ, ջուլֆա, *Ջթ.* ճհալօգ, ջ՛հալոգ, *Տիգ.* չուֆլոգ, չվլոգ, *Հճ.* ջուլճօգ, չուլճօգ, *Ջմ.* չուվուլագ, *Սվեդ.* ջ՛ըլհիւգ, *որոնք բոլոր նշանակում են «ոստայնանկ», բայց նաև լայնաբար «ոստայն» Համշ, փոխաբերաբար «սարդ, մամուկ» Ջթ. Կ. Կր., «սարդի ոստայն» Ջմ.։—Նոր բառեր են,* ջուլհականոց, ջլհաճոր, ջլհուփայտ։

**ՋՈՒԽՏ «ղոյգ» Տաթև. Հարց. 641. Սամ. աննց. 100 (մի ձեռագրում). Առաք. պատ. 133. որից* ջուխտակ *«մի ղոյգ» Կոչ. ժբ. (նոր տպ. էջ 230՝ ըստ մի ընտրելագոյն ձեռագրի ունի* ջամբրակ*). ուրիշ վկայութիւն չկայ։*

=*Պհլ.* ǰuxt *«ղոյգ»,* ǰuxtīh *«յոգնակի, բազմաթիւ», բելուճ.* ǰuxt *«հաւասար», պրս.* جفت ǰuft *«ղոյգ, լծակից, ամուսին, կին»,* جفته ǰufta *«կիսք, երկու ոտքով սրուած հարուած, աքացի»,* جفتك ǰuftak *«անբաժանելի» (իմա՛ «ղուգուած»)։ Իրանեաններին հնագոյն ձևը ներկայացնում է պնդ.* ᵛᵒᵍᵈᵃ yuxta *«լուծ, լծուած», որ անցեալ դերբայն է* yuǰ *«կցել, զօդել, լծել» բայարմատի և որի բնիկ հայ ձևն է լուծ (տե՛ս այս բառը)։ Պարսկականից են փոխառեալ թրք.* چفت čift *«ղոյգ, հերկ»,* چفتجی čiftǰi *«հերկրագործ», քրդ.* ǰot, ǰut, *զազա* ǰit *«արօր».—Թուրքականի միջոցով են բուլգար.* čift, čuft *«ղոյգ. 2. լուծ եզանց», սերբ.* čīft, čīv *«ղոյգ», ռուս.* ЮФТЬ, ЮХТЬ *«մի տեսակ կաշի» (այսպէս է կոչուած ըստ որում այդ կաշիները ղոյգ ղոյգ են աղաղում), գուռ. ռուս.* ЮХТЬ *«հռետակ արտ, որոնցից միշտ երկուսն են մշակում և միասը թողնում»։—Ռուսերէնից փոխառութեամբ գերմ.* Juften. Juchten *«նոյն ռուսական կաշին», որից էլ շեխ.* juchta, *լեհ.* jucht, juchta *և սրանից էլ ուկր.* jucht, júchta *«նոյն կաշին» (*Berneker, 156, Kluge 233*)։—Հիւրշ. 233։*

Laq. Arm. Stud. § *1907 սանս.* yuǰ> yukta *բառի պհլ. համապատասխանն է։ Տէրվ.* Altarm. *24 Թուի փոխառեալ պրս.* juft *ձևից։*

Գիհ.—Ալշ. Երև. Շմ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. ջուխտ, *Ախց. Կր.* չ՛ուխտ, *Սեբ.* չ՛ուխդ, *Ռ.* չուխդ, *Մկ.* ջօխտ, *Գոր. Վրբ.* ճօխտ.—*Համշ.* չուխտագ, *Ասլ.* չիւխդագ, չիւխդայ *«ջուխտակ», իսկ Ջթ.* չ՛ուխդօգ, չ՛ուխդոգ *«պատեղ»։— Թուրքերէնից և քրդերէնից նոր փոխառութեամբ՝ Սչ.* ջուփդ՛, *Պլ.* չիֆդ, *Տիգ.* չուբ, *Վն.* չիւֆբ, *Ննխ.* չիֆբ, ջուֆբ, ջուբ։—*Նոր բառեր են՝* ջուխտեֆեաճ, ջուխտաճաց, ջուխտակուիլ, ջուխտիշ, ջուխտուփարտ, ջուխտուկեճաի, ջուխտակապ, ջուխտակակապ, ջուխտակաւր, ջխտալափակ, ջխտակեմ, ջխտաճոց, ջխտաճց, ջխտկուկ, ջխտկագլուխ *ևն։*

**ՋՈՒՀԻ, «խեղկատակ, ծաղրածու» (Նարագիտ բառ), որ և ճուճի, ճոճի ձևերով ունի Վրդ. առ. 26—27, 175։*

=*Արաբ. գուռ.* جحى ǰuḥī *«նասրէդդինի մոլլայի նման մի խեղկատակի անունն է և շատ տարածուած Ասորիքում, Եգիպտոսում, Բերբերիատանում, Կաբիլների մօտ, ինչպէս և Ալբանիա և Իտալիա», պրս.* جحى ǰuhī *«է անուն առն միջոց, որ էր առակախօս և ծաղրածու, որպէս և յաշխարհին Հոռոմոց կոչեցեալն Նասրէդտաին խոճա, որոյ պատմութիւնքն լցեալ է աշխարհ»։*

Ուղիղ մեկնեց նախ Մառ, Վրդ. առ. I, էջ 248, որ կգում է և ասոր. ܫܟܝܐ *še'yā «խեղկատակութիւն»։ Սրանից յետոյ անկախաբար Աճ. որ տե՛ս վերը, հտ. Դ. էջ 689։*

**ՋՈՒՄԼԱՅ, «գումար». հնագոյն մէկ անգամ գործածել է Կղնկտ. Հրտր. Էմինի, էջ 95, Հրտր. Շահն. Ա. 226. յետին հայերէնի մէջ աւելի սովորական է. ինչ.* ջումլայ *«բոլոր, ամբողջ» Կոստ. երզն. 158 (Թուի իմ հոգոյ խօսքն ի յիր սրտին ջումլայ զալատ). նումլայ Որոտ. պօղ. էջ 102,* ջումլայ՝ *անդ. էջ 108,* ջումլի *«Համագումար» Սմբ. պատ. էջ 140։*

=*Արաբ.* جملة jumla *«գումար, ամբողջ, ամէն»։ (Հիւրշ. այս բառը համարում է ա-*

մենահին արաբական փոխառութիւնը. բայց նկատենք որ Դիրք Թղթոցի մէջ, ուր կայ նաև Կաղանկատուացու աւանդած նոյն նամակը, էջ 82, յիշեալ բառը չի գտնւում։ Բացի սրանից Կաղանկատուացին ժ դարի խմբագրութիւն է)։—Հիւբշ. 516։

Ուղիղ մեկնեց Petermann, ZDMG 15 (1861), 403:

ՋՈՒՆԹ «ոսոխ». յետնագարեան բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ջքր. սարկ. Ա. 62. «Եւ մտրակեալ զձին և շեշտակ ջունթ առեալ Թռեաւ և էանց յայնկոյս»։

Արդիօք պրս. جنبد junbad «ընդոստումն» բա՞ռն է։

ՋՈՒՆԿ «զառ, նարդի քար», որից ջուճկ խաղալ, ջուճկ ձգել. ունի միայն Բառ. երևմ. յատկ. Գէորգ գպրէ, էջ 558, որից էլ ՓԲ, Քաջունի, հա. Գ. 210 և ԳԲ։

†ՋՈՒՐ, ո հլ. (նաև ջուրբ, ջուրց, ջուրբք) «ջուր» ՍԳր. Եփր. ծն. Ագաթ. Եզն. որից բազմաթիւ ածանցներ. յիշենք դրանցից մի քանիսը. ինչ. ջրել ՍԳր. Եզն. Ագաթ. Եփր. Թգ. Ոսկ. մաթ. ջրիչ «ջնջող, ոչնչացնող (գեղ)» Ոսկ. փիլ. 501, (խոսվութեան) Ոսկ. հոռվմ. 255 (երկուսն էլ չունի ՆՀԲ), ջրի Սեբեր. Վեցօր. ջրաբաշխ Բուզ. ջրածին Ագաթ. Վեցօր. ջրարբի ՍԳր. Վեցօր. Կոչ. Ոսկ. ես. ջրգող նաագր. ջրմուղ ՍԳր. ջրբաժիկ «արբունքի հասնիլ» Բուզ. Յայտմ. յնվ. 3 (հմմտ. պրս. ābpušt «սերմն մարդոյ»), անջրդի ՍԳր. (ներգ. յանջրդոջ Ոսկ. ես. էջ 308), ջրհեղ «առնի» Տաթև. հարց. 241 (չունի ԱԲ). ձիւնաջուր Մծբ. աղաջուր «մարդոց տականք» Ոսկ. ես. 318 (աղաջուրք ի փիլիսոփայիցն). ջրաառուն «արտաքնոց» Վրդ. առ. 126. շնջրի Վեցօր. ոտղխաջուր Ա. մակ. ժէ. 37. խորաջուր Մծբ. յաղթաջուր, յորդաջուր Վեցօր. ջրձգել «ջուր սրսկել» Փոնց. էջ 47, ջրմուռ «առուն ներս մտած տեղը» Սմբ. պատ. 123. ջրել «առուն դուրս հկած տեղը, ջրի հլբ» Սմբ. պատ. 123, ջրկից «գետախառնուրդք կամ երկու առուների միացման տեղը» Օրբել. 50, ջրբաւ, ջրաբաւ «ջրվէժ» Օրբել. 169, 149 (հինգն էլ նորագիւտ բառ)։ Նոր բառեր են անդրջրհեղեղեան, ջրաբաշխական, ջրաբուժութիւն, ջրհաճակիր, ջրալի, ջրաճգիռ, ջրոտ, ջրաճերկ եև.—Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. 1788 Սանկտպետ. էջ 104 ունի ջրատ «դատաք, крушка»։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. yuro- ձևից. այս արմատը նախալեզուում երկու ձև ունէր՝ wor և ur, և նախաձայնի ձայնդարձով՝ yur, your. առաջինից են ծագում վեդ. vâr «ջուր», սանս. vâri «ջուր», զնդ. vār- «անձրև» (պհլ. vārān>պրս. bārān «անձրև»), vairi «լիճ», -vārayā «կաթիլ ջրոյ», սոգդ. wār «անձրև», Թոխար. wāṛ «ջուր», հանդլ. waer, ēar «ծով», հիսլ. vari «ջուր», ūr «բարակ անձրև, խոնաւութիւն», aurigr «թրջուած», յն. ὄρσον «մէջ», լա. ūrīna «մէջ», ūrīno «ջրի տակ ընկղմել»,—իսկ երկրորդից՝ հպրուս. iūren «ծով», լիթ. júres, júrios «ծով», jáura, jáuras «ճախճախուտ», լեթթ. jūra «ծով»։ Երկու խմբերի կապը ցոյց է տալիս հպրուս. wurs «ճահիճ»։ Հայերէնի մէջ նախաձայն y ըստ օրինի դարձել է ջ. հմմտ. ջաւ, ջով (Pokorny 1, 268, Trautmann 335, Boisacq 729, 1099, 1120, Walde 860):

Klaproth, Asia pol. 106 բրբտոն և վալ. dur, Թիբեթ. ču «ջուր»։ Peterm. 26, 30 և 39 սանս. kšīra «կաթ» բառի հետ։ Windisch. 9 սանս. jala: Müller SWAW 38, 581 սանս. kšīra, պրս. šīr «կաթ»։ E. Boré JAs. 1841, 658 պրս. čahra «մարդու դէմք» և զնդ. čiθra «ցեղ» բառերի հետ. հմմտ. պրս. āb «ջուր» և «սերմ»։ Էմին, Հայ հին. կր. Թրգմ. Յոյս 1875, 286 և Ист. Асохика 274 Արտվիսուրա բառի վերջի մասի հետ։ Müller SWAW 88 (1877), 12 սանս. kṣara-։ Տէրվ. Altarm. 25 սանս. jala «ջուր»։ Justi, Dict. Kurde քրդ. šurik «ջրվէժ», šörrýk «ջրորդան», սանս. kšar, զնդ. γžar «հոսիլ», պրս. šaran, šurīdan բառերի հետ։ Canini, Et. étym. 191 հյ. սոռել բայի հետ= սանս. sara, çara «ջուր»։ Müller WZKM 6 (1892), էջ 268 մերժից սնս. kšīra «կաթ» և առաջին անգամ մտածից կցել լիթ. jurès «ծով» բառի հետ։ Հիւնք. դնում է ճուտ «դիք ջրոց առ Հընդիկս», Zour «նուիրական ջրոց ամէնէն

զօրաւորը՝ Մազդեզեան պաշտամանց», պրս. շուր «լուացում», նույ «գետ», ճիւր «թամբ», թրք. չայ, չաղաթ. սայ «գետ, ջուր»։ Patrubány SA 1, 175 հնխ. k´suros «հոսուն» ձևից. համմտ. սանս. kšar, զնդ. γžar «հոսիլ»։—Յիշում են Հիւբշ. IF Anz. 10, 49 և Boisacq 1026: Margoliuth, Բրգմ. Բիւր. 1900, 334 սանս. udan։ Ա. Գ., Բիւր. 1900, 475 պրս. جُرْاب jurāb «ջուր»։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 168 փարսի զուր, որ է զնդ. qaoprw «օրհնեալ ջուր»։ Meillet, Esquisse 29 լիթ. júres, հպրուս. juryaiy «ծով» բառերի հետ։ Scheftelowitz BB 28, 297 սանս. jūrī «թուք», զնդ. zu «հոսիլ»։ Pedersen, Հայ. դր. լեզ. 115 մերժում է Meillet-ի լիթ. և հպրուս. ձևերը, որովհետև սրանք կցւում են սանս. vār «ջուր», յն. οὖρον, լտ. urina «մէզ» բառերի հետ. և էջ 151 մեկնում է -ուր մասնիկով (իբր յն. -ωρ, ինչ. ὕδωρ, νύκτωρ) ջ արմատից<հնխ. dhi- համմտ. սանս. dadhi «մածուն», dhayati «ծծել, խմել», հյ. դիել են։ (Կրկնում է Walde, էջ 281)։ Գալանճեան, Տարեց. Պապիկեանի 1905, 125 և Արև. մամ. 1907, 934—5 թրք. սու «ջուր» բառի հետ։ Մառ, О полож. абх. 38 փոխառնել լազական խմբի ենթադրելով *čoγor բառից, որի համապատասխան ձևերն են վրաց. ծղալի, ափխազ. aǰò «ջուր»։ Petersson, Ar. u. Armen. Stud. 41 համարում է խառնուրդ նախնական հայ. *ջեր (<հնխ. gher- «կաթկթիլ») և *ուր (=լտ. urīna, սանս. vāri «ջուր» են) բառերից։ Նոյն, անդ, էջ 23—24 յիշում է Tomaschek, Die alten Thraker II 88 համեմատութիւնը, որ է Γερμίζερα =հյ. ջերմաջուր (Թակիոյ մէջ մի ջերմուկի անունն է), որով-ζερα= հյ. ջուր։ Petersson գտնում է որ իրօք ζερα պէտք է նշանակէ «ջուր», բայց մերժում է կցել հյ. ջուր բառին, որ պիտի ծագէր հնխ. dhiōro- dhiuro- կամ ghiōro- ghiuro- ձևից, մինչդեռ ζερα «ջուր»< հնխ. g´herā «ջուր»։ Մառ ИАН 1920, 134 և ՀԱ 1921, էջ 81 երկրորդ անգամ վրաց. ծղալ «ջուր» բառի հետ, որին կցում է նաև բասկ. iδuri «աղբիւր»։ Թիրեաքեան, Հայ-հրան. ուսումն. 1922, էջ 54 պրս. جور jūr (?)։ Երրորդ անգամ Մառ ЗВО 1925, 683 վրաց. ծղալի «ջուր» են, Яз. и Лит. I, 231 բասկ. šur «ջուր», ИАН 1926, 390 ափխազ. ծը «ջուր», և 354 չուվաշ. šur «ճահիճ», բասկ. u «ջուր» և խալդ. šuri «ողորմութիւն»! Վերի ձևով ուղիղ մեկնեց վերջին անգամ Meillet MSL 21, 251 և BSL 23, 76: Պատահական նմանութիւն ունի արաբ. ءجر ǰur'a «մի կում ջուր» (Կամուս, թրք. Թրգմ. Բ. էջ 556)։

ԳԻՒՒ.—Ննխ. Պլ. Տփ. ջուր, Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ. Սեբ. Սչ. ջ'ուր, Ռ. Տիգ. շուր, Ագլ. Մղր. ջիր, Ասլ. չ'իր, Համշ. ճուր, Գոր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Սլմ. Վն. ճիր, Ակն. չ'իր, Սվեդ. չ'էօր, ՋՓ. ճօյ, չ'օր, Հճ. չ'ույ.—սրանից կազմուած են շատ բազմաթիւ ոճեր ու ածանցներ, որոնք տե՛ս իմ Գաւառ. բառարանը, էջ 940—6։ Ծիշելու արժանի են ջրաղաց և ջրորդան «ջրի խողովակ» բառերը։ Սրանք ր-ի կորուստով արդէն միջին հայերէնի մէջ տուել են ջաղաց Յայսմ. Յիշատ. Գաղիան. Երզն. Երկն. ջորդան Վստկ.։ Ջրաղաց բառի վկայութիւնները ըստ ՆՀՌ հասնում են ԺՌ դար, բայց ըստ Ռ. Աւդալբէգեանի, Տեղեկ. ինստիտ. 3, 69 գնում է մինչև 966 թ. (տե՛ս Վիմ. տար. 8)։ ր-ի կորուստը պատճառ է դարձած բոլորովին մոռանալու բառիս ծագումը և ասում է օր. Ճամու ջաղաց, ելեկտրական ջաղաց, և մինչև անգամ ջրաջաղաց! Առաք. լծ. սահմ. 618։ Գաւառական ձևերի համար Ջաղացի տե՛ս վերը առանձին. իսկ ջրորդան բառի ձևերն են՝ Մկ. ճուռաքան, Ոզմ. ճուռաքան, Վն. ճոռոքան, ճոռքան, ճօլօռան, Խրբ. ջոքօն, Մշ. ճօլօռան, Սվ. ջօրդէն, Այն. ջէօրդէն, Բզ. ջլօզդրան, Ագլ. շռի՛դոն, շըռուշօ՛դոն, շռի՛ղդոն, Ղրբ. շռօ՛քիան, Ջղ. շռճօքակ, Ղրդ. շռճօք, Ախց ճօռճակաք, Սլմ. ճօռճրկաք, Նբ. չօռճաղաք։ (Սրանց մէջ ժողովրդական ստուգաբանութիւնը մեծ դեր ունի. այսպէս Վն. անշուշտ կապուած է ճօռ

«խողովակ» բառի հետ, այլուր շռռալ և կաք, կաքիլ բառերի հետ)։ Այս բոլորի դէմ աւելի հնից ունինք շօռռ Տաթև. ձմ. ձգ. Շօռռ՝ որ ջուրն առնու յաղբերէն և հեղու (ըստ այսմ նշանակում է «աղբիւրի առջև շինուած խողովակը»)։—Գաբիկեան, Երիտ. Հյատ. 1921, ժէ. Թ. 86, մոռանալով ջուրգան ձևը, գուռ. ճրոբօն մեկնում է իբր ջուր+բօն «անձրև» կամ իբր բնաձայն բառ։

ՓՈԽ.—Մեր գանազան ածանցներից փոխառեալ են՝ վրաց. ჯურღმული ջուրղմուլի «հոր, ջրհոր» (կազմուած է հյ. ջրհոր բառի վրայից՝ առաջին մասը (ջուր) տառադարձելով և երկրորդ մասը (հոր) թարգմանելով վրաց. ღმული «խոր, խորունկ» բառով՝ ըստ Մառ ЗВО 11, 58), արևել. թրք. چورتن čortan «ջրանցք, տանիքի վրայից անձրևաջուրը դուրս հոսեցնելու խողովակ, ջրորդան». (այս բառը ունի նաև Будаговъ 1, 493 ըստ Zenker-ի, որ օրինակ է բերում Լհհջեթ-իլ-Լուղէթի հետևեալ վկայութիւնը.

چورتن بروی نادان یعنی میزاب

Čortan be-rūmi nāvdān, ya'ni mīzāb «Ջորթան ռումի լեզուով նաւդան, այն է խողովակ». որից երևում է թէ Լհհջեթը գիտէր արդէն թէ բառը փոխառեալ է, միայն սխալմամբ յունարէն էր կարծում). գործածական է նաև արդի լեզուով. Համմ. թրք. գուռ. Ĵərton (Գաբիկեան, անդ), թրք. գուռ. հրր. čortum, ինչպէս և կապադովկ. յն. τζουρτάν (Karolides, Γλ. σογκρ. 215), քրդ. شۆرتان šuretan «ջրորդան» (Justi, Dict. Kurde 256 դնում է ջուր և տանիլ ձևերից, որ սխալ է).—թրք. գուռ. Ակն. čərban «ջրբաշխ, այգիների ջրերը բաժանող պաշտօնեան» (<ջրպան).—արաբ. جرور Jurūr «շատ խոր ջրհոր» կամուս, թրք. թրգ. Ա. 794 (որի տուած ստուգաբանութիւնը իբր «չուանը իրեն քաշող» շատ անյարմար է).—ն. ասոր. šorat'an «ջրորդան». երևի նաև արաբ. جرموز Jurmūz «աւազան կամ ջրհոր» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 164), որին այնպէս նման է գալիս Ղզ. ջրմուզ «ճմճմայ», ուս. jühär «ջրբաշխ»։—

—Պատահական նմանութիւն ունին աւար. čurize «լուալ», čurdize «լոգնալ», պհրմ. դիրեան. šor, վոտյակ. Šur «գետ», ալբան. sour «ջուր» (որ Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից է դնում)։

ՋՈՓՈՒՅ «մրուր, դիրտ, faex». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լատ-հայ. էջ 201 ա։

ՋՈՔ «մի տեսակ բոյս. լտ. veratrum» Ոսկ. ունին միայն ՀԲուս. § 2638 և Քաջունի, Հտ. Գ. 210։

ՋՋՆԻ. Նորագիւտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. էջ 148, որի բացատրութիւնը տալիս է ինքը Մագիստրոսը, բայց բաւական մութ ձևով, երբ խօսքը ուղղելով ճգնակեաց մի անապատականի, ասում է. «բանս ոչ կամի զբեզ ջըջնի (այլ ձ. ջնջնի) յորջորջել, վասն զի ջատագով ջայլեաց գազափար հարանցն կոչի այն, որք յաւէժարարն անուանին։ Այլ կամիմ զբեզ խոուացեալ հերովք և թաղկեալ վարսիւք...»։ Թուի թէ ջջնի նշանակում է «թաւամազ» և կատակով ասուած ծաղրական բառ է (տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Բ. 205)։

ՋՎՆԱՍԱՅԵԱԼ «տգիտացեալ» ունի միայն Բառ. երեմ. էջ 275։

Ջրդիլ տե՛ս Ջիրդ։

Ռ

***ՌԱԲԲԻ** *«վարդապետ, տէր» ՍԳր. Կոչ. 107 (գրուած է* ռաբի *Կոչ. 243). Հմմտ. նաև* **rabbi** *Մագ. Թղ. 236?*

=*Եբր.* רַבִּי rabbi *«Տէ՛ր իմ» ձևի յն.* ῥαββί *տառադարձութիւնից. նոյնից նաև լտ.* rabbi, *գոթ.* rabbei, *վրաց.* რაბბი **rabbi** *են։ Բառս բնիկ սեմական արմատ է. հմմտ. ասուր.* 𒁹𒁀𒌨 ra-bu-u (rabū) *«մեծ», որ ծագում է* rabū *«մեծանալ, աճիլ» բայից* (Strassmaier, Alphabetisches Verzeich d. Assýr. u. Akkad. Wörter, *էջ 903*, Delitzsch, Assyr. Handwörterb. *էջ 609*), *ասոր.* ܪܒܐ rabbā *«մեծ, տէր, մեծաւոր»,* رب rabbi *«ռաբբի», արամ.* רבא rab *«մեծ», եբր.* רַב rab *«մեծ, շատ», արաբ.* رَبّ rabbī *«տէր, Աստուած»,* يا ربّى ya rabbī *«Աստուա՛ծ իմ» (>ժող. եա՛ռաբ), եթովպ.* ራቡ rababa *«տարածուիլ» են* (Gesenius 740):—*Հիւբշ. էջ 375։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

***ՌԱԲԲՈՒՆԻ** *«տէ՛ր իմ, վարդապե՛տ իմ» Մրկ. ժ 51. ՅՀ. ի. 16 են. գրուած է նաև* **ռաբունի** *ՅՀ. ի. 16. Մագ. Շար. ժմ.* **ռաբուն** *Շնորհ. Գնձ. Նար, որից* **ռաբունապետ** *ժմ. (ևռաբունապետ՝ Շողակաթ, էջ 33),* **ռաբունական** *Օրբել. Շար. Տաղ.* **ռաբունաւրան** *Օրբել. Հրտր. էմինի, էջ 82.* **ռաբունել** *Գնձ. Տաղ. Սիսիան. են։*

=*Հր.* רִבּוֹנִי rabbōnī, ribbōnī *«տէ՛ր իմ» բառից. նոյնը նաև ասոր.* ܪܒܘܢܝ rabūnī *«ռաբբունի, ուսուցիչ». մեր բառը փոխառեալ է յն.* ῥαββουνί *(որ և* ῥαββονί*) ձևի միջնորդութեամբ։ Բուն ծագումը տե՛ս* **ռաբբի**։—*Հիւբշ. 376։*

Նախ Schröder, Tvesaur. *էջ 46 ասոր.* rabbōnī *ձևից։—ՀՀԲ յիշում է եբր. և ասոր. ձևերը. ՆՀԲ յունարենի՞ց։*

***ՌԱԲԴՈՆ** *«ցուպ». ունի միայն ՀՀԲ. նոյնը Բառ. երեմ. 281 վրիպակով գրում է* **սապգոն** *(ռ շփոթուած ս-ի հետ, բ նոր տառադարձութեամբ պ, դ շփոթուած գ-ի հետ) և էջ 277* **ռաշրոն**. *տե՛ս նաև* **ռաւդոս**։

=*Յն.* ῥάβδος, ῥάβδον *«գաւազան»։*

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

***ՌԱԲՈՒՆԱՅ**, *որ և* **որուճայ** *կամ* **րորուճայ** *«առհասարակ, գրաւականն». մի մի անգամ ունին եփր. Գ. 88 և եղիշ. ը. էջ 118. Գրոշմեաց զմեզ ի ձեռն ռաբունային Հոգւոյն, զոր եւ ի սիրտս ձեր. Եւ ի ձեռին նոցա զանշուշտ որունայն։ Ունինք նաև* **առաբօն** *«առհասարակ» էֆիմ. 314. տե՛ս և* **վառառաբան**։

=*Ասոր.* ܪܗܒܘܢܐ rahbōnā *«գրաւ, աւանդ» բառից. սրա հետ նոյն են եբր.* צֵרָבוֹן ʿērāwōn *«աւանդ, գրաւական», արամ.* עֲרַבּוֹנָא ʿarəbbōnā, *արաբ.* عربون ʿarabūn, ربون rabūn, اربان arbān, اربون urbūn *(Կամուս, Բրբ. Բրդմ. Գ. 635 և 668) «առհասարակ, գրաւ, երաշխիք», փոխառութեամբ՝ պրս.* ربون rabūn *«խանութպանի օրական առաջին առուտուրը, սիֆտահ. 2. առուտուրից եղած շահը. 3. գումարի հաւաքման համար տրուած մասնավճար, թերհաշիւ»,* رامون ramūn>*հյ.* **ռեմոն**, *յն.* ἀῤῥαβών (Boisacq 82), *լտ.* arrhabo, arrabo, arrha, arra (Walde 62), *ֆրանս.* arrhes *«գրաւականն» են։ Բոլորը ծագում են սեմ.* ערב erb *«աւանդ դնել, փոխանակել, առևտրական փոխանակութիւն անել» բայից. հմմտ. յատին եգիպտ. և խալդ.* arēb *«գրաւ»։—Հիւբշ. 316։*

Հին բռ. մեկնում է «պսակ», ասելով. «Ռբունայն՝ ասաց (ոմն). թէ չէ պարսիկ

(բառ). բայց յայտ է ի նախատես բանից մոգպետին, զի պսակն է»։ Սրան հետևելով ՆՀԲ և ՋԲ դնում են «բրաբիոն, բրաբիոնեան, պսակ»։ Ուղիղ նշանակեց նախ Բագրատունի, Քեր. զարգ. էջ 659, միացնելով յն. լա. եբր. և արաբ. ձևերին։ Նրան հետևելով ԱԲ «առհասարակ»։ Պատկանեան, Mamep. I. 14 դնում է պրս. և յն. ձևերի հետ։ Վերի մեկնութիւնը տուաւ Müller WZKM 8, 284 (դնում է արամ. ձևը), Բրգմ. ՀԱ 1894, 294։ Վերջին անգամ նոյնը Վարդանեան, Բառաբ. դիտ. Դ. 105 և Ազաո. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 277։

***ՌԱՋԻԱՆ** «հոտոտ սամիթ, foeniculum vulgare Mill» (ըստ Տիրացուեան, Contributo § 289) կամ anethum foeniculum L (ըստ Seidel § 68), որ և բոազիան, բոզիան, ոզիան Բժշ. Վստկ. 105, 107, 109, ոազիենայ Բառ. երեմ. էջ 276։*

=Պրս. رازیانه rāzyāna, որից էլ փոխառեալ արաբ. رازیانج rāzyānaj և Բրբ. ⵔⴰⵣⵣⵉ rezene, բոլորն էլ «հոտոտ սամիթ» նշանակութեամբ։—Հիւրշ. 279։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

***ՌԱՋՄ** (ի հլ. ըստ ՆՀԲ, յեռնաբար կայ նաև յգ. -մունմ, -մանց) «պատերազմ, կռիւ» Բուզ. Փարպ. Եղիշ. դ. էջ 74. որից ոազմիկ «մարտիկ, կռուող» Մեսր. եր. ոազմաճառ Մեսր. եր. ոազմամուռ Թղթ. դաշ. Մեսր. եր. ոազմաուր Օրբել. ոազմիլ «կռուիլ, պատերազմիլ» ԱԲ. գրուած է նաև բոազմ, բոազմիկ են։ Նոր բառեր են ոազմաբեմ, ոազմագլխ, ոազմագիտութիւն, ոազմագիտական, ոազմամթերք, ոազմանաւ, ոազմունակ, ոազմունակութիւն, ոազմանաւատուրմ, ոազմանակատ են։*

=Պհլ. 𐭫𐭦𐭦 razm «պատերազմ, ճակատամարտ», պրս. رزم razm «կռիւ», որ է դնդ. rasman «զօրաբանակ, ճակատ» (Horn § 612 չի ընդունած, բայց այսպէս է ըստ Հիւրշ. 233)։ Իրանեան բառերը ծագում են դնդ. raz- «շարել, դասակարգել, կարգաւորել» արմատից (Bartholomae, Altir. Wört. 1514), որ է հնխ. reg'- «ուղղել». սրա այլ ժառանգներից յիշատակելի են յն. ὀρέγω «տարածել, փռել», ὀρεκτός «մօտից կռուելու համար պէնքը երկարած», լա. rego «ուղղել, վարել, կառավարել, իշխել, թագաւորել», rex «թագաւոր», rectus «ուղիղ», rector «վարիչ, կառավարիչ, տէր», regimen «կառավարութիւն»>ֆր. régiment «զօրաբանակ», գնդ. ərəzu «ուղիղ», raziśta «ուղղագոյն», հպրս. rāśta, պրս. rast «ուղիղ» (բայց նաև «դաս, խումբ», որից հյ. եռաստ «խումբ, կարգ»), գոթ. raihts, հբգ. reht, գերմ. recht, անգսաք. riht, անգլ. right «ուղիղ», հիւլ. recht «օրէնք», ռուս. су-разина «կարգ կանոն» են են (Waide 647, Boisacq 710)։—Հիւրշ. 233։

Ուղիղ մեկնից նախ ԳԴ՝ իրրև պրս. ոէզմ։ Նոյնը նաև ՆՀԲ, ՋԲ, Peterm. 22, Müller SWAW 38, 580 (նաև գնդ. rasmaoyō)։ Justi, Zendsp. 254 գնդ. rasman ձևի տակ։ Հիմնք. պրս. ոէզմ և լա. Mars (շրջուած ձևով)։

Փոխ.—Վրաց. რაზმი ոազմի «ոազմական կարգ՝ շարք», **მორაზმვა մոոազմվա, დარაზმვა** դաոազմվա «ճակատ յարդարել», **დარაზმული** դաոազմուլոթա «ոազմաճակատ»։*

***ՌԱԿԱՅ** «տխմար, յիմար» Ագաթ. մ. ա. 15 (էջ 214), Եւագր. 139, ԺՄ. 39, Խոսր. 252 (որ Հին բռ. մեկնում է «անղգամ կամ ա՛յ դու անմիտ»). գրուած ռակկայ Ագաթ. մ. գ. էջ 22։*

=Յն. ῥακά (Մտթ. ե. 22, ուր հյ. Բրգմ. յիմար), լա. raca, գոթ. raka, Ֆրանս. raca, վրաց. რაკა ռակա «յիմար, տխմար». բոլորն էլ փոխառեալ են յունարէնի միջոցով սեմականից։ Sophocles 967 դնում է Եբր. רֵיק rēiq, רָק req «դատարկ, պարապ. 2. անպէտք, ոչինչ. 3. խեղճուկրակ. 4. անմիտ, դատարկամիտ» (Gesenius 758) բառից, իսկ Brockelm. Lex. syr. 359 ասոր. ܪܩܐ rāqā «ընկած, անարգ» բառից, որ գրւում է ասոր. ܒ; raq=եբր. רקק rqq «թքել» արմատից։—Հիւրշ. 376։

Հներք գիտէին բառիս օտար ծագումը. համմտ. Ագաթ. մ. ա. 253. «Իակայն մեծ իմն թշնամանք են հեբրայեցերէն և ար-

*համարհանաց և անդոսնելոյ... և որք զասորի լեզուն դիտիցեն, փոխանակ ընդ ա՛յ դուն ասելոյ՝ ի սանգասատականաց տեղի՝ զոակայն ասեն»։ Սրանից առնելով երզն. մոթ. 114 «Բայց յհբրայեցի լեզուն ոակայ կոչիցաւ, որ մեծ իմն և ծանր նախատինս յայտնէ լսողացն և արհամարհանաց տայ ծանօթութիւն, որպէս մեք յորժամ սաստանք ծառայից և կամ վատթար արանց, սրատգոանօք ասեմք թէ ա՛յ դու ծօլայ, քե՛զ ասեմ»։— ՀՀԲ բառ եբր. և ասոր.։ ՆՀԲ վերի ձևով. իսկ Հիւնք. ասորուց։

*ՌԱՀ, ի հլ. «ճամբայ, ճանապարհ» Զքր. կթ. Նար. Շար. Անան. խոստ. 6. Տաղ. որից ռահվիրայ «ճամբայ բացող» Բուզ. գ. 20 (այս բառը ցոյց է տալիս, որ ռահ արմատը Ոսկեդարում գոյութիւն ունէր). ռահահոդ Շնորհ. ռահել Շնորհ. յիշ. սոզ. ռահապուռն ճառընտ. առռահավար Մագ. ե>խ հնչումով՝ ռախուճակ «առաջնորդ» ճառընտ.։

=Պհլ. *rāh ձևից, որի հետ համմտ. պհլ. ռաստ rās=rāϑ, պրս. ol. rāh կամ o. rah, պազ. rāh, աֆղան. lār, քրդ. rî, բելուճ. rā «ճամբայ». համմտ. նաև սանս. rathyá- «մեծ փողոց, պողոտայ» (Horn § 607)։—Հիւբշ. 233։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ. նոյնը ԳԴ, ՆՀԲ (աւելացնում է եբր. אֹרַח ōrax հոմանիշը, որի նմանութիւնը պատահական է), Müller SWAW 38, 588 ևն։

ՌԱՀ «պիտոյք, դոյք, իրեր» Անտիպք 45 (Զարթէլ է պատիկելեցն և ի բաղնեց բոահէն և յայտ ցեղ սարութենէդ.—բացի անկողնի և բաղնիքի պարագաներից և նման կազմածներից), Սմբ. դատ. 60, 62 (Հալաւն, ոզիերն և գօտին և այլ այսպիսի բոահ). որից բառեղէն «տան իրեր» Սմբ. դատ. էջ 151 (մի ձեռագրի ընթերցուած է)։

*ՌԱՀԱԿ «անդգամ կամ բախած». ունի միայն Բառ. երեմ. էջ 276։

*ՌԱՀԱՆ «անուշահոտ մի բոյս. basilicum» Բժշ. Տօնաց. յետնաբար ռեհան Թլկր. 25. նոր գրականում գործածական է ռեհան ձևով։

=Արաբ. ريحان raiḥān «ռեհան», որից նաև քրդ. rihan. ըստ Seidel. Ս խ. հեր. § 418 արաբ բառը նախապէս ընդհանուր անուն էր զանազան անուշահոտ բոյսերի։— Հիւբշ. 275։

ՆՀԲ ռմկ. ռէյհան։ Հիւբշ. ZDMG 35 (1881), 662 արաբ. raihān ձևից։ Հինք. նոյն և պրս. յն. ὀρείχανον «դաղձ»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Մշ. Ջղ. ռէհան, Տփ. ռէ՛հան, Գոր. կր. Ղրբ. Մշ. ըռէհան, Սեբ. ըռէհան, Ակն. ըռահան, Ագլ. ռո՛հոն, Մկ. ռբհոն, Ասլ. ըռբհո, Խրբ. Սլմ. ըռհան, Վն. ըռհոն, Շմ. ռէյհան, Ռ. ըռէյհն, Տիգ. ռոհոն, Զթ. ըռահօն, ըռահոն, Սվեդ. ըռոհհուն։

Փոխ.—Ուտ. irchan «ռեհան»։ Մեկանի՞ց են վրաց. რეჰანი ռեհանի (ե-ի պատճառաւ) և էնկիւրիի Բրքաց և Բրքախօս հայոց ու յունաց մէջ գործածական ərahän հոմանիշը (Բիւր. 1898, 789), նախաձայն ə-ի պատճառաւ, որ հայկական յատկուած է։

*ՌԱՀՎԱՐ «քալուկ, քալական, լաւ քայլող (ձի կամ ջորի)» Վստկ. (Թէ կամիս ռահվար ընտրել ի յայնց և թէ շալական)։ Նոյն բառն է ռահվար «յետաւար» Բս. երեմ. էջ 315 «հեռից վազող» Փբ։

=Պրս. رهوار rahvār «արագընթաց ձի»։ —Աճ.

*ՌԱՄ «կախարդութիւն» (չունի ԱԲ) Բրս. մրկ. 423. Առաք. պտմ. 503 (պրուած բառ). որից ռամախս «դրբաց» Տաթև. Հարց. 429. ռամզարկի առուեստ «մի տեսակ կախարդութիւն» ԱԲ. ռամզարկութիւն «հողահմայութիւն, géomancie» (Նորայր, Բառ. ֆր. 596 բ), որի հետ նոյն է ըռամբզարկ՝ նոյն նշ. Մաշտ. ջահկ.։ Նո՞յն է արդեօք աւելի հնից Սոկր. 127՝ ռամնական. Քանդի հայհոյիւր որպէս զռամնականսն (յն. τὴν μαθηματικήν) նգնեալ։

=Արաբ. رمل raml «աւազով համայութիւն, géomancie». բուն նշանակում է «աւազ». նոյնից փոխառեալ են նաև վրաց. რამლი ռամլի «կախարդական արուեստ», მერამლე մերամլե «կախարդ», բրբ. rem «գուշակութիւն, կախարդութիւն» և նոր բարբառներով՝ վն. ռամ, Պլ. ըռէմ։—Աճ.

Նշ֊ի բորմբզարկ դրած է Հյ. ռումբ բառից։

*ՌԱՄ, ի Հլ. «հասարակ ժողովուրդ. 2. աւորին, ռամկական, ռահիկ» Կնձ. ժմ. 44. Տաղ. Յայսմ.։

=ՊՀլ. *ram «հօտ, մարդոց խումբ. 2. ժողովուրդ», որ թէև չէ աւանդուած, բայց համմտ. սոգդ. ram «ժողովուրդ», մանիք. պՀլ. rm «հօտ, ժողովուրդ» ИАН 1912, 48, رمیی rmii «ժողովուրդ» ИАН 1907, էջ 548, պրս. رم ram «հօտ, խումբ, երամ մարդոց». համմտ. նաև երամ և ռամիկ. իմաստի զարգացումը ճիշտ այնպէս է, ինչպէս արաբ. رعیت ra'yat «հօտ. 2. ժողովուրդ»։—Հիւբշ. 233։

Նշ֊ի նոյն ընդ երամ։ Ուղիղ մեկնեց Lag. Arm. Stud. § 1912։ Մառ, Кавк. культурный міръ, էջ 30 յաջորդ ռամիկ բառի հետ հանում է Արմէնն ազգանունից, որ կազմուած է -էն յոգնակերտով. Արմէնները Հին Հայաստանի նախարնիկներն էին։

ՌԱՄԱՆ «լուր. 2. գաւառապետ», ունի միայն Բառ. երեմ. էջ 276։

*ՌԱՄԱՏԵՍ «մի տեսակ հիւանդութիւն». Նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 164. «(Հազար բոյսը) ռամատես ցաւոյն օգտէ, առաւել երբ մկնտխած բացախով ուտես»։

=Յն. ῥευματισμός «ներքին հիւթերի հոսում», որ ծագում է ῥεῦμα «հոսում» բառից. սրանից է ֆրանս. rhumatisme «յոդացաւ». մեր բառը ստացուած է արաբական տառադարձութեան վրայից, ուր, ինչպէս սպասելի է, ընկած պիտի լինէր վերջաձայն m. այսպէս և այսօր Պլ. ռմկ. romatpiq «յոդացաւ» փխ. ֆր. rhumatisme։—Աճ.

Ալիշան, Վստկ. 164 ծան. մեկնում է «կա՛մ աչացաւութիւն, բեմեռ բան արաբաց և կամ քոսոտութիւն»։ Բայց աչացաւութեան համար նկատելի է որ Վստակոց գիրքը մի քիչ վեր ասում է թէ հազարը «զաչաց լոյսն պակասեցուցանէ և բալ տայ աչացն տեսանել»։

*ՌԱՄԻԿ, ի–ա Հլ. «հասարակ ժողովուրդ, գիւղացի կամ քաղաքացի հասարակ մարդիկ» ՍԳր. Եւս. քր. «ռամկական, ռահիկ» Ոսկ. մ. ա. 22 և ես. վեցօր. 114. Փարպ. Եղիշ. որից ռամիկապաս Բուզ. ռամկավար Ոսկ. մտթ. անռամիկ ՅՀ. կթ. ռամկապետ Եւս. քր. Նոր բառեր են ռամկանալ, ռամկապետական, ռամկավարական, ռամկացում, ռամկօրէն են։

=ՊՀլ. *ramīk ձևից. համմտ. մանիք. պՀլ. ramkārīk „ἐθνικός“ ИАН 1907, 548. տե՛ս ընդարձակ ռամ և երամ։—Հիւբշ. 233։

Նշ֊ի և Lag. Arm. Stud. § 1912 ռամ բառից։ Հիւնք. Հյ. երամ և յն. τρίμυ «փողոց, հրապարակ»։ Մառ տե՛ս Ռամ։ Ադոնց, Арм. въ эпоху Юст. 436 արամայեցոց անունից, որոնք հպատակ ու նուաճուած ժողովուրդ էին։ Բառիս վերայ տե՛ս և Մանանդեան, Տեղեկ. համալս. 1, 24։

Գիմ.—Մկ. ռամիկ, Մշ. ռամիգ։

ՌԱՄԻՒՏ «գծուծ կամ տկար». ունի միայն Բառ. երեմ. էջ 277։

ՌԱՄՈՒՆՈՍ «ժողովասէր». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 277.—Թուի ռամ բառից, որ է «ժողովուրդ»։

[ՌԱՄՔ «ցանց, վարմ». ունի միայն Տիրոյեան, Հանրագրութ. էջ 583 և 254 (երկիցս)։

=Հյ. դամ «ուռկան, ցանց, թակարդ» բառի յոգնակի դամք ձևն է՝ բոլորգիր ո և դ տառերի նմանութիւնից շփոթուած։—Աճ.]

ՌԱՅ[1] «սառոյց». ունի միայն Բառ. երեմ. էջ 277։ Տե՛ս տակը ռայ[3]։

ՌԱՅ[2] «բազմութիւն, հանդէս». գործածուած է երկու անգամ. ուր Հարսանիք և ռայք կաքաւացան կայցեն (Ոսկ. ես. էջ 343). Անդէն զարդուցն ռայք (Ոսկ. ա. տիմ. ը)։

Նշ֊ի միացնելով յաջորդի հետ՝ մեկնում է «դրօշ, նշան արքունի, նշանակ յաղթութեան, շուք, հանդէս» և հանում է պրս. (իմա՛ արաբ.) رایة rāya «դրօշակ» բառից։ Տէրվ. Altarm. էջ 102 մեկնում է «պերճութիւն, շուք» և կցում է գնդ. rāi «փայլ», սանս. rāi «ինչք, կայք», rayi «գոհարեղէն, ակունք», լտ. res «իրք» բառերին, իսկ Նախալ. 104 միայն սանս. rayi և լտ. res։—Lag.

Arm. Stud. § 1913 ընդունում է ՆՀԲ-ի մեկնութիւնը, բայց Հիւբշ. 275 Ոսկեբերանի վկայութեանց պատճառաւ կարծում է որ կա՛մ յիշեալ վկայութիւնները խարդախուած են և կամ բառը արաբ. փոխառութիւն չէ։ (Ռայ «դրօշակ» անշուշտ արաբ. փոխառութիւն է, ինչպէս երևում է յաջորդ բառից, բայց Հիւբշ. ուշադիր չէ եղած որ Ոսկեբերանի յիշեալ վկայութեանց մէջ ռայ չի կարող ունենալ «դրօշակ» իմաստը, այլ, ինչպէս Թունեան, Հատրնտ. Ա. 319 հասկանում է, «բազմութիւն, հանդէս»)։

*ՌԱՅ[3] «դրօշակ». մէկ անգամ ունի Գր. տղ. Թղթ. «Յառաջին ռայք ճշմարտութեան». (այս բառն է երևի, որ Բառ. երևմ. էջ 277 դնում է ռայ «առոյգ»)։

=Արաբ. رَايَة rāya «դրօշակ»։—Հիւբշ. էջ 275։

Համմտ. նախորդը։

*ՌԱՅԻՍ «գլխաւոր, պետ». Ուռհ. էջ 91 (Կոչեաց ռայիս մի քուրթ, որ էր իւր սահմանակից. Եւ արար ռայիսն այնպէս. Եւ գայր ռայիսն և պատմեաց Հասանայ). Համմտ. նաև՝ Ռոսիս մեծանուն գեաղչն Օշականոյ. Արձ. 1210 Քուից (Վիմ. տար. 50), Արտաշիր՝ Օշականայ ռայիս. Արձ. 1211 Քուից (անդ՝ էջ 52)։

=Արաբ. رَئِيس raīs «գլխաւոր, պետ» բառից, որ ծագում է رَأْس ras «գլուխ» բառից։ Նոր գաւառականներում դարձած է ռէս «գիւղապետ»։—Աճ.

Այս մեկնութիւնը տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Ա. 195։

*ՌԱՊԱՏ. յիշում է միայն Բառ. երևմ. էջ 267 պատրուակ Հայկին բառի բացատրութեան մէջ, այսպէս «կամ շրջապարիսպ կամ ռապատ»։

=Արաբ. رِبَاط ribāṭ, rabāṭ «իջևան, քարվանսարայ»։—Աճ.

*ՌԱՍԱՆ. իբր դեղ գործածելու մի նիւթ է. Մխ. բժշ. 146 (յիշում է շուր ռասան)։

=Արաբ. պրս. راسن rāsan «կղմուխ, անտուզ, որ է inula helenium L կոչուած խոտը» (ըստ Seidel), «է ծառ իմն որ փիլլ կիուշ («փղի ականջ») ևս ասի. և է օգտակար բովանդակ պալարաց և ցաւոց. մանաւանդ ի ցրտութենէ գոյացեալ ցաւոց» (ԳԴ)։

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. հեր. § 399, ուր և տե՛ս բոլոր բնդարձակ բացատրութիւնը։

*ՌԱՍԻՄ «սուրհանդակների զինուորական գունդ». ունի միայն Ա.Բ. երկու անգամ գրտնում եմ գործածուած Դ. Թագ. ժա. 4, 19. «Առ զհարիւրապետսն և զքոռին և զռասիմ և աց զնոսա ի տուն Տեառն. Եւ առ զհարիւրապետսն և զքոռին և զռասիմ և զամենայն ժողովուրդ երկրին»։—Հին բառարանների մէջ էլ գտնում ենք ռասիմ «զղիր, սուրհանդակ, շքրիկ», ռասմիմ «սուրհանդակ», որոնց հետ Մէնէվիշեան Հմ. 1911, 558 միացնում է Մագ. գամագա. 13 ռասիմալ բայը՝ որ շատ զանազան բնթերցուածներ ունի և որ մեկնում է «օգնել»?

=Եբր. רָצִים rāṣīm «սուրհանդակ» բառի յն. թασίμ տառադարձութիւնից։ Վերի հատուածը բնագրում այսպէս է. תַּבְּרִי וְהָרָצִים ha-kārī və ha-rāṣīm, որ յոյն թարգմանութեան մէջ տառադարձուած է պարզապէս τῶν χορρὶ καὶ τῶν βασίμ։ Առաջինն է kārī «թիկնապահ» (թերևս Կարիացի ժողովուրդի անունից), երկրորդը rāṣīm «սուրհանդակ» (եբր. רוּץ rūṣ «վազել» արմատից). հատուածը թարգմանւում է «թիկնապահք և սուրհանդակք» (Gesenius[17] էջ 362 և 752)։—Աճ.

ՌԱՍԼԱՅ «Հռոմի մէջ նշանաւոր մի շէնք է». մէկ անգամ ունի Սամ. անեց. 67. «Հռոմայեցոց Գրատիանոս շինէ զրռասլայն»։—Եւսեբիոսի Քրոնիկոնում կարելի չեղաւ ինձ գտնել սրա համապատասխանը։

*ՌԱՍՄ «տուրք». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած 867 Քուի մի արձանագրութեան մէջ, տպ. Շողակաթ 177. «Հաւատարեցի զջուրն ընդ Կոշ և ընդ Յարուճ, զինչ իւրեանց բնիկ ռասմ էր լել։ Ա և կէս Կոշա և Ա Արճո. արդ եթէ այլ ոք հակառակել ջանա, այլ աւելի ռասմ յուղէ... նզովեալ լիցի»։

=Արաբ. رسم rasm «տուրք», յգ. رسوم rusūm, رسومات rusūmāt «տուրքեր»։—Աճ.

ՌԱՍՄԱՄԲ «տեսիլ». ունի միայն Բռ. երեմ. էջ 277։—

ՌԱՍՄՈՍ «գրապետ». ունի միայն Բռ. երեմ. էջ 277։—Համմա. ռասիմ։

*__ՌԱՍՈՒԻ__ «մարգարէ մահմեդականաց». Շնորհ. եղես. Մխ. այրիվ. էջ 69 (Ասա Թամամ սուտ ռասուլն)։

=Արաբ. رسول rasūl, որ բուն նշանակում է «առաքեալ», բայց գործածւում է իբրև սիրաղոս Մուհամմէդի։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՌԱՍՏ «վիշապ համաստեղութեան գլուխը». Վրդն. սղ. ճգ. էջ 344. («Վիշապն՝ որ ասեն զամենայն երկիրս բոլորեալ է. զորոյ գոռան և զգլուխն ռաստ և զանապ կոչեն աստեղագէտքն և դիտաւորումն արեգական և լուսնին անտի ասեն)։ Որ և Վրդ. պատմ. 137. Յորժամ ի միում կենդանակերպի դիպին արեգակն և լուսին, և ժամ իցէ ծննդեան լուսնի, և անդ դիպին քանձր ամպքն կոչեցեալ ռաստ և կամ զանապն։

=Որովհետև **զանապ** նշանակում է «տուտ, պոչ»=արաբ. ذنب ðanab, ուստի յայտնի է որ ռաստ բառն էլ պիտի նշանակէ «գլուխ». Համմա. ֆրանս. la tête et la queue du dragon (հանգոյցք լուսնի ի վերայ խաւարման ծրին.—տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 422 ա)։ Արաբ. կայ رأس ras «գլուխ», որ յարմարում է մեր բառին, միայն ս ձայնը աւելի է։—Ա.Ճ.

ՆՀԲ մեկնում է «աջ, աջող և աջողուած, դէպք», իբր պրս. راست rāst։ ՋԲ «պրս. հանդիպեալ, դէմ ընդդէմ պատահեալ, քանձրախիտ»։ ԱԲ «յաջող. 2. քանձր ամպ»։ Ալիշան, Վրդ. պատմ. ծան. արաբ. راحت rāḥat «կէտ յորում դիպի աստղն»։

*__ՌԱՍ__ «գլխաւոր, մեծ». մէկ անգամ ունի Եղիշ. ը. էջ 141. «Մովսիսան Մովսէս ռաս՝ յազէ»։ (Նոյն է նաև Երզն. քեր. «Կուռ, ռայն է ռաս՝ ներկրելոցն բերբողացն ի դէպ առնուն կամ ձայն».—ուզում է ասել թէ կուռ բառի մէջ ռ տառը քաւ կամ հաստ է, որով և բառը բերբողներին շատ յարմար է գալիս)։

=Պհլ. راد rād «մոգերին տրուած մի տիտղոս»։—Հիւբշ. 233։

Բառ. երեմ. էջ 277 և ՀՀԲ մեկնում են «առատ, ճոխ, շատ. 2. առոյգ, քաջ, բարի», որից և ռատնագոյն։ ՆՀԲ «բառ պրս. խմաստուն, ներհուն, հմուտ, ճոխ, պատուաւոր, մեծ»։ ՋԲ «առատ, պատուաւոր, ճոխապէս»։ ԱԲ «բանիբուն, պատուաւոր, գիտուն»։ Lag. Beitr. bktr. Lex. 19 զնդ. ratu «տէր» բառի հետ, որ Armen. Stud. § 1915 մերժելով՝ դնում է նոյն ընդ առատ։ Վերի ձևով նախ Պատկ. Матер. I. 14։ Բազմ. 1895, 7 (=Փորթուգալ փաշա, եղիշէ 439) մերժելով պրս. راد rad «առատ, առատաձեռն. 2. քաջ, կորովի. 3. գիտուն, մրցատի և բանախօս, բանաստեղծ», համեմատում է պհլ. rad, պազ. rad, զնդ. ratu «տէր, գլուխ» բառի հետ, որ իբր պատուանուն տրւում էր Մոգպետաց Մոգպետին։ Հիւբշ. 233 վերի մեկնութիւնը տալուց յետոյ՝ էջ 514 յիշում է կասկածով զնդ. ratu, պհլ. rat «տէր»։ Մէնէվիշեան ՀԱ 1911, 555 Մագիստրոսի ռատնագոյն բառը մեկնելով «քաջագոյն», հանում է պրս. rād «քաջ, կորովի» բառից։

ՌԱՏԳՈՒՆԱՍ «պարգևատու». ունի միայն Բառ. երեմ. էջ 277։

*__ՌԱՏԻՆԷՃ__ «առճու խէժ, առնոպրի ծառի խէժը» Վստկ. 197. գրուած որնդիճէճ Վստկ. 214։

=Արաբ. رانج rāṯinaj «նոյն նշ.», որ ծագած է յն. ῥητίνη>ռետին բառից։—Հիւբշ. 275։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*__ՌԱՏՊԱՅ__ «առուոյտ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2661։

=Արաբ. راظبة raẓba «առուոյտ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 144, Steinschneider WZKM 12, 87)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

*__ՌԱՒԱՆԴԻՍՆԻ__, որ և ռևանդ, ռևանդսկեն, բռևանդ «գարծիլ, խաւարծիլ, rhubarbe» Բժշ. յիշում են ՀՀԲ, Նորայր, Բառ. Ֆրանս. էջ 1091 ա և ՀԲուս. § 2662։

=Պրս. راوند rāvand կամ ریوند rēvand նույն նշ.։

*Ուղիղ մեկնեց նախ Նորայր (անգ.) և յետոյ Աճառ. ՀԱ 1908, 124։

*ՌԱՓԱՅ «հսկայ, յաղթանդամ». մէկ անգամ ունի Մագ. դամագր. 13. «Ռաամնագոյն յայտմ և ռափայ՝ ախորժիմ սիտանել և ռասիմալ». (տե՛ս ՀԱ 1911, 555 ձեռագրական տարբերութիւններով և յատկապէս եռափա ձևը)։

=Եբր. רפה Rāfā «Ռափայիմների սերունդի նախահայրը», որից רפאים Rəfāīm «Ռափայիմների ցեղը». սրանք բնակում էին Քանանու երկիրը (Համմա. Յես. ժէ 15՝ Ջ Փերեզացիան և ղՌափայիման) և հրեականների սերունդ էին համարւում. այս մտքով էլ յիշում է Եոր. ա. 5. «Ակլ զՏիտանան և զՌափայիման յիշեն Աստուածային գիրք»։ Ս. Գրքի հայերէն թարգմանութեան մէջ Ռափայիմ բառի տեղ դրուած է սկայ. այսպէս Ծն. ժդ. 5, Յես. ժբ. 4 ևն, որից էլ ձևացաւ ռափայ «հսկայ» բառը։—Աճ.

Այս բառը ունի Բառ. երեմ. էջ 277 «հսկայ» իմաստով։ ՀՀԲ դնում է իբր «այլազգական»։ Առաջինից առնելով Մէնէվիշեան ՀԱ 1911, 555, իբր եբր. բառ։

*ՌԱՓԻԿ «ընկեր, բարեկամ» ԱԲ, «սիրելիս» Բառ. երեմ. էջ 277. որից ռափկութիւն «հաւասար բաժիններով կազմուած ընկերական կոչունք, հանգանակ» (Նորայր, Բս. Ֆրանս. 436 բ), որից երևում է թէ ռափիկ նշանակում էր մասնաւորապէս «գինու ընկեր, հանգանակող». այս նշանակութեամբ գտնում եմ գործածուած Շնորհ. առ. դպումի հանելուկի մէջ. «Ի՞րբ մի կայ ու ինքն է ջրեր. Հանց գիննեիում մարդ չէ տեսեր. Եամէ ձգէ գտնայ ի վեր. Գարտակ նա չէ ռափկի ընկեր»։

=Արաբ. رفيق rafīq «ընկեր»։—Աճ.

Ուղիղ մեկնեց Աճառ. ՀԱ 1908, էջ 124։

ՌԱՓԻՆԵԿ «օրհնութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 277։

ՌԱՔԱՄ «ընթացք». ունի միայն Բառ. երեմ. էջ 277։

*ՌԱՔԻԱ. «ալիքի պատռիլը ծովեզրին զարնուելով. տեղատուութիւն». երեք անգամ ունի Նոնն. 46, 49։

=Յն. ῥαχία «քարքարոտ ծովեզր. 2. ծովի ալիքների շառաչիւնը. 3. տեղատուութիւն»։—Հիւրշ. 376։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Ռբուճայ տե՛ս Ռաբունայ։

ՌԵՐՈՆ «դատողութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 277։

ՌԵՎ, ի–ա հլ. անասոյգ բառ. մէկ անգամ ունի Մագ. թղ. 62. «Յոևկացն մանրամասնից... ճահեցուցանէ հանդէպ ճակատուն»։

ՆՀԲ և ՋՔ մեկնում են «պատառուածք», իբրև յն. ῥηγή, ῥαγάς համանիշից։ ԱԲ աւելացնում է նաև «զարկած ու կոտրտած ալիք»։

*ՌԵՀ «հոգմ». ունի միայն Բառ. երեմ. էջ 277։

=Արաբ. ريح rīḥ «քամի», որ է=եբր. רוּחַ rūxa, ասոր. ܪܘܚ rūxā, արամ. רֵיחָא rēixā «քամի»։—Աճ.

Ռեհան տե՛ս Ռահան։

Ռեմ տե՛ս Ռիմ։

ՌԵՄ «ապդ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 277։

*ՌԵՄՄՆ «պրաւական, առհասարակ» Մխ. դտ. ոիմոն Ասոր. դատ. 10. 14 (եթէ ոք ծախէ ինչ և առնու առհասարակ, այսինքն է ոիմոն). 41 (հինգ անգամ), բոիմոն Անսիզք 83. վրիպակով գրուած ռեսին վրք. հց. ա. 143 (Նորայր, Հայկ. բառաբ. 19), ուղղելի ռեմին։

=Պրս. արաբ. رمون ramūn, որից նաև վրաց. რამონი ramoni, რიმონი rimoni «պրաւ». ընդարձակ տե՛ս ռաբունայ։—Հիւրշ. 275։

ՆՀԲ ոմկ. ոէնին։ Ուղիղ մեկնեց Պատկ. Матер. I. 14: Brockelmann, Ուս. փոխ. բառից 114 յն. ἀῤῥαβών բառից՝ իբր ժողովրդական ձև։

ՓՈԽ.—Արդեօք հայերէնի միջոցո՞վ է վրաց. ორომონი ոռոմոնի «պրաւ»՝ նախաձայն յատկուածական ո-ի պատճառու (իբր. հյ. բոամոն)։

ՌԵՍՓԱՆԷՍ «զարդարեալ բանիւ», գիտէ միայն Բառ. երեմ. էջ 277, որի հետ նոյն պիտի լինին ռփաեէս «առի» (էջ 278), ռափաես «առիս» (էջ 277), որոնց ի՛նչ լինելը յայտնի չէ։

***ՌԵՏԻՆ**, ի հլ. «իղային բոյսերից կաթած խէժ, խունկ, բալասան» Ոն. լէ. 25, խգ. 11, երեմ. խգ. 11, կամ նաև ռետն, և հլ. գրծ. ռետամբ Եզեկ. իէ. 17. սրանցից է ռեսինական կամ ռետական Տազ։

=Յն. ῥητίνη «ռետին», որից փոխառեալ են նաև լտ. resina, իտալ. recina, պրս. رایان rātiyān կամ رایانا rātiyāna, راتین rātīn (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 635), արաբ. راتینج rātīnaǰ>հյ. ռատինէ։—Յոյն բառը թուում է ծագած հնխ. sreu- «հոսիլ» արմատից (Boisacq 840): Meillet, Dict. étym. թէ՛ յն. ῥητίνη և թէ՛ լտ. resina համարում է փոխառեալ ոչ-հնդևրոպական մի լեզուից։—Հիւբշ. 376։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

Ռեատոր *տե՛ս Հռետոր։*

Ռևաճդ *տե՛ս Ռաւանդիսեանի։*

***ՌԵՓԱՆԻՆ** «բողկ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 571։

=Յն. ῥαφανίς, ῥάφανος, ῥαφάνη «բողկ», ῥαφάνινος «բողկից շինած» (որ և լտ. rapa ևն)։—Աճ.

ՌԵՔԻՆԱՐ «թագաւորի առաջ տեղեկագիրներ կարդացող պաշտօնեան», մէկ անգամ ունի Մխ. գտ. 267 (այլ ձ. ռեսիճար):

Բառատմեան, անդ, լտ. requiro «քննել» *բայից.* Karst, *Դասան. II. 80 լտ.* recitator *կամ* arcanarius։ *Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 70 լտ.* recitator *հոմանիշից ազատագեալ։*

***ՌԵՔՏՈՌ** «իշխանական մի աստիճան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 104. «Զայս արար մի և նոյն Հոգի ի ձեռն բարեփառ առնս ռեքտաւրս և իմոյ ծառայի»։

=Յն. ῥέκτωρ ձևից (Sophocles 968ա), որ փոխառեալ է լտ. rector «տէր, կառավարիչ, իշխան» բառից՝ բիւզանդեանց ժամանակ։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 205։

***ՌԷՍՄ** «տուղորութիւն, ձև, եղանակ» Վատ. էջ 201. Որպէս այլ ձիթի ռէսմ է։

=Արաբ. رسم rasm (նոր հնչումով resm) «սովորութիւն, ծէս, օրէնք»։—Աճ.

***ՌԻԶԱՅ** «արմատ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 571։

=Յն. ῥίζα «արմատ», յատկապէս «բժշկական արմատ»։—Աճ.

ՌԻՀԱՐ «խայտառակ» ունի միայն Բռ. երեմ. էջ 137 և 147 խայտառակ և խրտուիլ բառերի բացատրութեան մէջ, իբրև այն ժամանակ կենդանի բառ։

***ՌԻՃ** «հարուստ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բռ. երեմ. 144 խոպացու բառի բացատրութեան մէջ հետևեալ ձևով. «խոպացու. ոիճ. վհոհ կամ ճոխ»։

=Ֆրանս. riche «հարուստ»։—Աճ.

ՌԻՄ «չարութիւն» Հին բառ.=Բռ. երեմ. էջ 278. նոյն է ռեմ «ոխ, քէն» ՀՀԲ. որից ռեմական կամ ռիմական «ոխակալ» Թէոդ. խշ. էջ 160։

Նշբ ռեմական դնում է ռեմոն կամ հարամ ձևերից։ Պատկանեան, Мамер *I. 14 յիշում է պհլ.* rīm «անմաքրութիւն, պղծութիւն»։

Գիւռ.—Նո՞յն է Ղզ. ռիմ «միտք, նպատակ, մտադրութիւն»։

***ՌԻՆՏ** «լաւ, գեղեցիկ» Քուչ. էջ 75, որից ռնտութիւն «գեղեցկութիւն» Քուչ. 72. գրուած են բռինտ, բորնտութիւն: Չունի ԱԲ։

=Պրս. رند rind «գեղեցիկ», որից رندی rindī «գեղեցկութիւն», քրդ. rind, rend, rənd «սիրուն, գեղեցիկ»։ Վերջինս նշանակում է նաև «առողջ». օր. rənd bu (Մտթ. ը. 13) «առողջացաւ»,—Աճ.

Մասեաց Աղաւ. 1863, էջ 12 բնտիր *բառից աղաւաղուած է կարծում։ Վերի մեկնութիւնս տե՛ս իմ Գաւառ. բառ. 948։*

Գիւռ.—Կենդանի է շատ բարբառներում ռինտ, ռոնտ, ռուինտ *ձևով (հնչիւն բռինդ ևն)։*

Որից ռնտիկ, ռնտնալ «առողջանալ» (*հմմտ. քրդ.* rənd bu), ռնտուրիւն, ռնտցնել:

ՌԻՇՏ (ի, ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան. յեռնաբար կայ սեռ.* ոշտի *Սարգ. ա. պետր. ա. էջ 185 ա (բ տպ.)* «ժլատ, կծծի» (*գրուած նաև* ռիշդ, ըռիշտ, ռիժտ, ռիժդ, ըռըշտ) *Ոսկ. մ. գ. 3, 8. Պիտ. Նիւս. կուս. Ասող. որից* ոշտուրիւն (*գրուած նաև* ոշդուրիւն, ռժդուրիւն, ըռժդուրիւն) «ժլատութիւն» *Բ. մկ. գ. 50. Բուզ. գ. 10.* ոշտանալ *Երզն. մաթ. 502.* բազմոիշտ *Խոսր. էջ 252:*

ՆՀԲ ճիշտ, ճշտող *հոմանիշի՞ց: Հիւնք. պրս.* rašt «ցամաք»: *Իրանեանների մէջ ունինք պհլ.* 𐭪𐭫𐭦𐭣 rūžd = *մանիք. պհլ.* 𐭫𐭥𐭦𐭣 ruzd, *պրս.* دژ ruždd, رزد razd «ագահ, շատակեր» (*ИАН 1912, էջ 48*), *բայց սրանք ո՛չ միայն ձեւով չեն ծածկում մեր* ռիշտ *բառը, այլ և իմաստով էլ հակառակ են:*

ՌԻՈՆ «քաղաք պատուական». *ունի միայն Բառ. երեմ. էջ 278:*

***ՌԻՊԱՍ** *կամ* **ՌԻՎԱՃ** «դարծիլ, խաւարծիլ, խաշնդեղ, rheum ribes Gron.» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2670:*

=*Պրս.* ریباس ribās *կամ* ریواس rīvās, rēvās «նոյն նշ.» *Թևհրանի արդի պրս. բարբառով* livas, *որ անցել է նաև տեղացի հայոց բարբառին: Սրա հետ նոյն է արաբ.* ریواج rīvāǰ, ریباج ribāǰ *նոյն նշ.* (Steinschneider-*ի հատուածոյի մէջ* WZKM 12, 88, Будаговъ *1, էջ 601*):—*Աճ.*

***ՌԻՏԴԻ** «վերարկու». *մէկ անգամ ունի Մագ. քեր. 229* = *Երզն. քեր.* «Իսկ մեր ի Պարսից բազում ինչ ընտանեաբար ուսեալ զգեստս, որպէս դուռայ և ռիտդէ (*այլ ձ.* ռիդդէ, ռիդէ)» (*ՆՀԲ տե՛ս դուռայ բառի տակ*): *Սրա հետ նոյն է ռտէ «զլխանոց», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սուտ Շապհ. 53.* «Եւ էր արքայն հագել սև և ռտէ սև ի գլուխ նորա»:

=*Արաբ.* رداء rida «վերարկու. մարմնի կէսից վեր հագնելու կամ փաթաթելու որևէ բան» (*Կամուս, Քրք. Քրգմ. Գ. 822*), *որից փոխառեալ են նաև պրս.* ردا ridā «վերարկու, veštis exterior», *վրաց.* ჩოდე რიდჱ «չալմա, գլխի փաթթոց» (*Ջուբինով², էջ 1038*): *Ըստ այսմ վերի ընթերցուածների մէջ ուղղագոյնը պէտք է համարել ռիդէ: Շապուհի տուած իմաստը նոյն է վրացու հետ:—Հիւբշ. 264:*

ՆՀԲ պրս. رداء «ուսանոց»: *Հիւբշ.* ZDMG *35 (1881), էջ 658 պրս. և արաբ. ձևերի հետ: Վերջին անգամ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 64:*

ՌՈԱՏԻՆ «նուռ». *ունի միայն Բառ. երեմ. յաւելուած ի Գէորգ դպրէ, էջ 71:*

=*Կա՛մ է յն.* ῥοιά «նուռ» *և կամ S և Մ տառաձևերի շփոթմամբ եբր.* רִמּוֹן rimmōn = *արաբ.* رُمَّان rummān = *ասոր.* ; rūmānā = *եթովպ.* ሮማን rōmān = *խալտ.* herman = *ասուր.* armannu, *որ է «նուռ».—Աճ.*

***ՌՈԿԵՂ** «ազգ քարաքոսոյ որ տայ գոյն կապոյտ մանուշակագոյն. *ֆր.* orseille? *ունի Նորայր. Բառ. ֆր. 882 բ. իբր նորակերտ բառ:*

=*Լտ.* roccella, *իտալ.* oricello, *ֆր.* orcelle, orseille, *նոյն նշ.:—Աճ.*

***ՌՈՃԻԿ**, ի–ա *հլ.* «օրական ուտելիք պարէն, թոշակ» *ՍԳր. Մծբ. Նար. քր. Բուզ. որից* ռոճկակեր *Եփր. թգ. 423,* ռոճկել, ռոճկիլ «պարենաւորել, պարենաւորուիլ» Rivola, *Բառ. հայոց², 330,* ռոճկացուցակ *(նոր բառ):*

=*Պհլ.* *rōčīk «օրական պարէն» *բառից, որ կազմուած է պհլ.* 𐭫𐭪 rōč, *պրս.* روز rōz, rūz, *հպրս.* rauča «օր» *բառից: Թէև պհլ.* *rōčīk *ձևը չէ աւանդուած, բայց նոյնն են հաստատում հայերէնի հետ նաև պրս.* روزی rōzī, rūzī «օրական ուտեստ, պարէն, ուտելիք», *փոխառութեամբ ասոր.* ܪܘܙܝܩܐ rōzīqā «օրապահիկ», *արաբ.* رزق rizq «ուտեստ, պարէն», *սեմբուք. բրբ.* uruzī «օրապահիկ» (Horn § 629): *Նոյն արմատից ուրիշ մասնիկով կազմուած է պհլ.* 𐭫𐭪𐭩𐭣 rōčīh > *պազ.* rōžī «օրապահիկ»: *Սրանց բուն ծագման, հնդեւրոպական ցեղակիցների, ինչպէս նաև համապատասխան բնիկ հայ ձևերի վրայ տե՛ս Լոյս բառի տակ:—Հիւբշ. 234:*

Նախ ՆՀԲ պրս. ռուզի, *արաբ.* ըզզ

ձևերի հետ։ Ուղիղ են նաև Lag. Urgesch. 1002, Müller SWAW 38, 579, Հիւբշ. KZ. 23, 29 ևն։ Այվազեան, Ուղղագրութ. էջ 44 լծ. ևոոգ։

ԳԻՒ.—Ագլ. ռո՛ճիկ՝ «ամսական վարձք»։ Նոյն բառն է, բայց փոխառուած իմաստով ռոճիկ Արբ. Խրբ. «տանձի, ընկոյզի կամ նուշի շարոց»։

ՓՈԽ.—Վրաց. როჭი ռոճի–կի «նուէր, թոշակ» Ղկ. գ. 14.—առաջինի մէջ –իկ կրճատուած է՝ իբր նուազական մասնիկ համարուելով։

ՌՈՄԻՍ. «մի տեսակ գոհար կամ մարգարիտ» Խոր. աշխ. 614. չունին բառարանները։

=Արդիօք արաբ. رُومِيّة rūmiya «յունական, հռոմէական» բառի՞ց է։— Ա.Ճ.

***ՌՈՅԻԿԵԱՆ** «դիւցազներգական». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. յնվ. 25. Եւ ինքն (Գրիգոր Աստուածաբանն) գիրս ըստ իկեանս և ամբիկոնս, երրականս և չորրորդատիպս։

=Յն. ἡρωϊκός «դիւցազնական», որ կազմուած է ἥρως «դիւցազն» բառից։—Ա.Ճ.

***ՌՈՇՆ** «լուսաւոր». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են ռոշնական «լուսաւոր, պայծառ» Յմ. յն. ռոշնութիւն «լուսաւորութիւն, սրտի հանգստութիւն, պայծառութիւն» Յճխ. էջ 248 (գրուած է մեղմեխութեան իբր հականիշ). ռոշնաբանութիւն «յստակ և պարզ խօսուածք» ԱՒ.—բառիս յետին ձևն է ոօշան, որ տե՛ս առանձին։

=Պհլ. 𐭫𐭮𐭱𐭭 rōšn, պրազ. rōšan «լոյս, լուսաւոր, պայծառ», պհլ. 𐭫𐭮𐭱𐭭𐭩𐭣 rōšnīh, պազ. rōšnī «լոյս», rōšanī «լոյս», պրս. روشن rōšan «պայծառ, լուսաւոր», روشنی rōšanī «պայծառութիւն», սոգդ. rγwšn-, rwxš'n (BSL 29, 104). զնդ. roioxšna- «լուսաւոր, պայծառ»։ Այս բառերի բուն ծագման, հնդեւրոպական ցեղակիցների և բնիկ հայ ձևերի վրայ տե՛ս Լոյս բառի տակ։—Հիւբշ. 234։

ՆՀԲ պրս. ռուշէն։ Նոյնը նաև Lag. Arm. Stud. § 1918։

ՌՈՎԿԻԿ «գոհանալ, բաւականանալ». նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Սմբ. դատ. 71. «վանքն կաշովն բռովկի և զմիսն տառպիլքն ուտեն»։ Սրա հետ անշուշտ նոյն են՝

ԳԻՒ.—Մրշ. ռուռւմվիլ, Արբ. բռովիլ, Խրբ. բռոզվիլ, Սվ. օռովալ, օռովաճալ, Ջն. օռվիլ, Պրտ. Մն. օռոզվիլ «սղմուիլ, տեղատորուիլ, ամփոփուիլ», որ և ռոկուիլ ձևով գիտէ Մխ. աբբա, Գուռն քերակ. էջ 140։

***ՌՈՏ.** «գետ». արմատ առանձին անգործածական. գտնւում է մի խումբ տեղանունների մէջ. ինչ. Մարգոռա, Մարվիռոռա, Աղուաճդռոռա, Ճուաշռոռա, Բաղաճռոռա, Ռոտիբաղա, Ռոտպացեան են։

=Պհլ. 𐭫𐭥𐭲 rōt, պրս. رود rōd, rūd, հպրս. rauta, սանս. srōta- «գետ»։—Հիւբշ. 234։

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. Pers. Stud. էջ 67, 218։ Տե՛ս նաև Հիւբշ. Հին հայոց տեղւոյ անունները (Altarm. Ortsnamen), էջ 284։

***ՌՈՏԱՍՏԱԿ** «գլխաւոր քաղաք, գաւառի կամ նահանգի մայրաքաղաքը». գործածուած է միայն երկու անգամ. «Հասանէր (Գրիգոր) և յառաջին դասատակերտս իւր, յոտոստատակն Այրարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաք». Ագաթ. § 841 (ձեռ. սարբ. ռոդաստակ, ռոդոսատակ, բռոսատակ, ռոյսատատակ, բռոսաճատակ.— յոյն թարգմանութիւնը թերի է այստեղ).—«Յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ՝ երթեալ իջանէր յառոստատակն (տպ. առ. ոսոս տանն!) Գողթան, յառաջին դասատակերտն իւր». Կորիւն § 33։—Նոյն բառն եմ համարում նաև Խոր. աշխ. 606 նորագոյն ձեռագիրների մէջ յիշուած Սիսական Ռոտատակ, այլ ձ. Ըստիսականն Ռատոտատատոռի, որի դէմ էջ 609 գտնում ենք Սիսական ոատաճն։

=Պհլ. rōtastāk «երկիր, բնակելու տեղ» (Salemann, Über eine Parsenhandschr. էջ 68), պազ. rōdastā (Haug, An old Pâhl - Paz. Glos. 1870, էջ 2), պրս. روستا rōstā «գիւղ», رستا rustā «պողոտայք գեղջ, գիւղ», (նո՛յն է նաև պհլ. 𐭫𐭥𐭮𐭲𐭠𐭪 rōstāk, Nyberg, Hilfstuch des Pehl. I, էջ 51 բ), փոխառութեամբ արաբ. رستاق rustāq, رسداق rusdāq, رزداق ruzdāq «մի քա-

ղաքի շրջակայքը գտնուած գիւղերը» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 909—10), رستاق rustāq *«Սպահանի շրջանում այսպէս է կոչւում ամէն գաւառակ» (ըստ Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 579), ասոր.* ʾrūstāqā *«գաւառ»։*

Բառս առհասարակ համարուած էր տեղի յատուկ անուն։ Առաջին անգամ Ալիշան, Այրարատ, էջ 204 ա համեմատեց պրս. رستاق rustāq *(իմ՛ փոխ. արաբ.) բառի հետ. «Այս բառ նորալուր առ մեզ՝ հաւաստի՛ ի պարսկականէն* رستاق *(ռուստակ) ըստ վկայութեան նագութի արաբացւոյ աշխարհագրի՛ ի սկիզբն ԺԴ դարու, նշանակել երկիր մշակեալ՝ յորում իցեն աւանք, այլ և քաղաքք՝ բայց ոչ մեծամեծք»։ Հ. Բ. Սարգիսեան, Ագաթ. էջ 222—3 համարում է հնձանի այգին։ Մառ ЗВО 9, էջ 191—7 համեմատում է վերի բառերի հետ, ինչ որ ճիշտ է, բայց հասկանում է «ջրարբի այգի կամ ամառանոց», ինչ որ սխալ է։ (Մառ աչքի առաջ ունենալով միայն Ագաթանգեղոսի վկայութիւնը՝ կարծել է թէ ռոստակը Լուսաւորչի այգին է Վաղարշապատում։ Բայց Միաբանի (Գորիա և Շմոն, էջ 20) երևան հանած վկայութիւնը Կորիւնից՝ ցոյց է տալիս, որ «այգի» անյարմար է և պէտք է հասկանալ «կենտրոնական քաղաք»։ Նոյնը հաստատում է նաև մեր գտած վկայութիւնը Խորենացու աշխարհագրութիւնից)։ Փառնակ, Անահիտ 1907, 21 ուղղում է առ ռատանն! Բառիս մասին տե՛ս և Ս. Կանայեան, Արրտ. 1913, 975 շար. և մի ընդարձակ պատմական Հ. Ա. Վարդանեան ՀԱ 1921, էջ 332—335։*

***ՌՈՒՆՁ կամ ՐՈՒՆՁ** *«բրինձ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2412 և § 2672։*

=Արաբ. ارز aruz *«բրինձ». սրա վրայ տեղի ընդարձակ տե՛ս որիզ։—Հն.*

ՌՈՒՄԲ *(որ և բռումբ), ի-ա Հլ. «նետելու քար, երկաթ. 2. տէգ, նիզակ» Բդպ. դաշ. ԺԳ. Հռոմկլ. Ուռհ. Երազ. Մաշտ. ջահկ. Մխ. դտ. էջ 266 (մեկնում է «նիզակ». այսպէս՝ «ունին նիզակս, որ է բռումբ»). գրուած* բռում *«նիզակ» Թլկր. 53. որից* **ռմբաճար** *(գրուած նաև* բռմբաճար*) «բաբան, բանով նետելու քար» 3որ. խա. 19. Եզեկ. ժգ. 11, 13. Ա. մկ. ղ 51.* **ռմբաւոր** *«իշխանի նիզակաւոր հետևորդ» Ոսկ. յհ. բ. 18 (էջ 713),* **ռմբափակ** *«զինուորներով պաշարուած» (նորագիւտ բառ) Առաք. պտմ. 12. ՀՀԲ ունի նաև* բռմբարտակ*, բռմբկէն։ Արդի գրականում* **ռումբ** *նշանակում է «ինդանօթի գընդակ», որից և* **ռմբանիգ, ռմբակոծել, ռմբակոծութիւն** *նոր բառերը։*

ՆՀԲ լտ. rumpo *«խորտակել», յն.* ῥήγνυμι *«պատառել, ջաղխել»։ Հիւբշ.* ZDMG *36 (1882), 132 կցում է արաբ.* رمح rumḥ *«նիզակ» բառին, բայց* Arm. Gr. *275 ձայնապէս անհամաձայն է գտնում թէ՛ արաբ.* رمح rumḥ *«նիզակ» (քրդ.* **ռում** *«նիզակ») և թէ ասոր.* ܪܘܡܚܐ rūmxā *«աշտէ»։ Հիւնք.* **բուռն** *բառից։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* რუმბი **ռումբի** *«խորանարդ. 2. տիկ»։*

+ՌՈՒՆԳՆ, և Հլ. (ռնգան, ռնգամբ) «քիթ» *Շար. աւելի գործածական է յգ.* **ռնգուխ** *(սեռ.* ռնգանց *կամ յետնաբար* ռնգաց*) «քիթ, կամ մանաւանդ՝ քթի ծակերը» ՍԳր. Փիլ. Եղիշ. ՅՀ. իմ. նմանութեամբ՝ «դռան փեղկ» Նար. խչ. 380. «ծխնի» ՀԲ. (գրուած է նաև* **ռընգուխ, ըռնգուխ, ըռընգուխ, ռուգխ**)։ *Որից* **առծռուգն** *Պորփ. Արծր.* **առծռնգնութիւն** *Պորփ. Մխ. ապար.* **ռնգավար լինել** *«այս ու այն կողմ հռռոտել» Փիլ. լիւս.* **ռնգեղջիւր** *«մեծ մի անասուն» Խոր. աշխ. Վանակ. Հց. (Թրգմ. յն.* ῥινόκερος *հոմանիշից, որ է ֆր.* rhinocéros*), շնռուգն «շան քթով» (իբր անարգական ածական) Ոսկ. մտթ. ղ. որից և Բրս. մրկ. 87. երկուսն էլ գրուած (դ յաւելուածով) շնդռուգն կամ շնդռուդն, որ Վարդանեան ՀԱ 1921, 360 ուղղում է այսպէս. կարծում եմ սակայն որ դ յաւելուածը ո՛չ թէ սխալ գրչութեան արդիւնքն է, այլ* nr> ndr *ձայնաբանական օրէնքի նոր բառեր են* **ռնգաձայն, ռնգախօս, ռնգական, ռնգային**։

=Թերևս բնիկ հայ բառ՝ հնխ. srungh- *ձևից, որի հետ կցելի է նաև յն.* ῥύγχος *«խո-*

*զի դունչ, շան մռութ, թռչունի կտուց»։ Սբրանց հետ համմտ. դարձեալ յն. ῥέγκω, ῥέγχω «խորդալ, փռնչել», ῥέγκος, ῥέγξις «խորդիւն», հիւլ. srennim (որ է *srenk-nā-mi) «խորդալ», հիւլ. srōn «քիթ», կիմր. ffroen, միջ. բրբտ. froan, նոր բրբտ. fron «քթի ծակիրը» (<*sroknā?), որոնք հանւում են հնխ. srenk- «խորդալ» բնաձայն արմատից (Pokorny 2, 705, Boisacq 837, 845):—Հիւբշ. էջ 486։*

ՆՀԲ յն. ῥὶν, ῥῖνες «քիթ»։ Windisch. 16 յն. ῥὶν, ῥὺγχος։Gosche 24. փռւգ. ϐροῦγγος «քիթ» և յն. ῥὺγχος։ Lag. Urgesch. 674 սանս. nāsā, զնդ. nåŋha, լտ. nasus «քիթ»։ Նոյն, Ges. Abhd. 263 միայն զնդ. ձևի հետ։ Այս բոլորը մերժում է Lag. Arm. Stud. § 1919: Ս. Մուրատեան, Մասիս 1883 սեպ. 26=ՆՀԲ։ Müller SWAW 136 (1897), էջ 34, Armen. VI, թիւ. 55 յն. ῥὺγχος ձևի հետ։ Հիւնք. յն. ῥὶς, ῥὶν և լտ. ringor «ունչս առնել»։ Bloomfield, Amer. Journal of Philol. 12, 9—10 իրար է միացրել մասնիկի համար ռուճգն, ակն, ունկն, ատմունկն, մուկն, ռան, ձեռն և ատամն բառերը, որոնք ուրն էլ ներկայացնում են մարմնի զանազան մասերը և մասնիկով էլ իրար են յարմարուած։ Բառիս վրայ խօսում և վերի համեմատութիւնը պաշտպանում է Oshoff SA 2, 114—115: Karst, Յուշարձան 419 թրք. burun «քիթ» բառի հետ։ Macler, Rev. ét. arm. 1, 270 շեռուճգն բառը մեկնում է շէն+դռուն «թռչուն»+դնէ կամ շուն+դռուն +դնէ (անիմանալի բաներ!)։

Գիմ.—Նո՞յն է Ագլ. ռուճգ «կտուրի հզերքը»։

ՌՈՒՇՏ. *անյայտ իմաստով բառ, որ առանձին գործածուած չէ. սրանից ունինք միայն առիւռուշտ (կամ առիւրռուշտ) «արիւնագոյն, արիւնով ներկուած» Փիլ. Վրք. Հց. Սարգ. Օրբել. «արիւնաշաղախ» Վրք. ոսկ. Ճառընտ. «արիւնախանձ, գիշախանձ» Յհ. կթ. Մաշտ։*

ՌՈՒԿ *«քառորդ, չորրորդ մասը» Բրս. մրկ. 200, 387, որ և բռուպ Առաք. լծ. սահմ. 614—5։*

=Արաբ. ربع rub' «քառորդ», որ ծագում է ընդհանուր սեմական «չորս» արմատից. համմտ. եբր. ארבע arba', արամ. ארבע arba', ասոր. ܐܪܒܥ arba', արաբ. اربع arba', եթովպ. ዐርባዕ arbā', ասուր. arba'u, բոլորն էլ «չորս»։—Հիւբշ. 275։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ. նոյնը նաև Lag. Arm. St. § 1921։

Գիմ.—Մշ. բռուր, բռբիգ «կոտի՝ լիտրի մի քառորդը» (ընդեղէնների չափ է)։ Այստեղի՞ց է նաև ռուպենի Ղրբ. «մի տեսակ տանձ, որ քառորդ ֆունտ ծանրութիւն ունի»։

ՌՈՒՊ կամ ՌՈՒՓ *(որ և բռուպ) «եփելով թանձրացրած քաղցու, մաթ, դօշաբ, փէքմէզ» Վստկ. 68. Բժշ. Մխ. բժշ. 26։*

=Արաբ. ربّ rubb «պտուղը ճգմելով հանուած օշարակ, մանաւանդ եփած և թանձրացրածը» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա, էջ 139), որից փոխառեալ են պրս. رب rub նոյն նշ., ֆրանս. անգլ. rob, իտալ. robe, robbo, սպան. rob, arrope, պորտ. robe, arrobe են։ Արաբ. բառի բուն իմաստն է «թանձր» և ծագում է սեմ. rbb «հաստ, խոշոր, մեծ» արմատից, որից և ասուր. rabū «մեծ» և ռաբբի բառի տակ յիշուած ձևերը։—Հիւբշ. էջ 275։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Lag. Arm. Stud. § 1922, Պատկ. Дарощ. камни, էջ 41։—Արաբ. բառի ծագումը տե՛ս Gesenius[17], 740։

Գիմ.—Մկ. ռուբ, Մշ. ռուբ, բռուր, սեռ. բոբի, Խրբ. վն. բռուր, Զթ. օռուբ, Հճ. էռուբ, Սվեդ. բռոօր, որոնք նշանակում են «խաղողի մաթ», իսկ Սլմ. ուռուբ «նռան կամ կեռասի օշարակ» և Մրդ. ուռուբ «բանդակ, մրգաջուր» (և ո՛չ թէ «մաթ»)։

ՌՈՒՍՏՈՒՊԻԼ *«մի տեսակ մորթային հիւանդութիւն, ֆր. érysipèle» Մխ. բժշ.։*

=Յն. ἐρυσίπελας նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. բժշ. § 202։

ՌՈՒՐ *«պարսէտ». ունի միայն Բառ. հբևմ. էջ 278։*

ՌՈՒՓԷՆ *«ոսպ» Կամրկ. «մի տեսակ ջրային խոտ,* rhopalum» *Ոշղք. որ և* **ռուփիճ** *«ոսպ» Գադիան. (ըստ Բառ. երեմ. յաւել. 575 և Բառ. երեմ. էջ 278), «նունուֆար,* nénuphar» *Քաջունի, Գ. 212, որից* **ռուփէն** *կամ* **ռուփիճ վայրի** *«մի տեսակ վայրի խոտ.* melagria» *Յայտմ. մայ. 15 ՀՀԲ և ՓԲ ունին ըստ տպագրին բուրբին ձևով). Համմտ. ՀԲուս. § 2674—5։*

ՆՀԲ **ռուփին** *կամ* **ռուպին** *ձևը նոյն է դնում* **ռուփ** *բառի հետ, որ յայտնապէս սխալ է։*

***ՌՈՔՈՒՆ** «մահմետականների համար սրբազան մի քար». մէկ անգամ ունի Ղև. էջ 92. «կամ քարին զոր* **ռոխունն** *(այլ ձ.* **ռոխսունն**) *կռնեցեր, զորմէ ոչ գիտես, եթէ ընդէ՞ր երկրպագեալ համբուրես»։*

=Արաբ. ركن rukn *«քար անկիան»։ Այս բառն է որ արդի գաւառականներում դարձել է* **ռուխ** *«անկիւն, անկիւնաքար» (=քրդ.* **ռուգն** *«պատի անկիւն» Մոթ. իւ. 42), որից* **ռուխար** *«շէնքի անկիւնաքարը»* (Rivola)։— *Աճ.*

ՌՈՍԱԳԷՍ** «սոթահեր, խիտ կամ կարծր մազերով». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 127, բացատրութեամբ հանդերձ. «Զոր զարթուցեալ ռոստագէսն (այլ ձ. ռոտակէսն) այն սոթահերն այսինքն, շարժեալ զվարսն իրրու երբեմն Կոռնոս». (խօսում է Ռոստոմ քաջի վրայ և անշուշտ բառախաղ է անում)։— Կազմուած է* **ռուս-** *(ռուստ***)+գէս բառերի բարդութեամբ. առաջինն է՝*

=Պրս. رست rust *«պինդ», որ և* رس rus *«կարծր և ամուր»։—Աճ.*

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 205։

***ՌՕԹԻ** «լիտր». ունի միայն Բառ. երեմ. յաւել. էջ 558։*

=Արաբ. رطل raṭl *«մի տեսակ քաշ է»։— Աճ.*

ՌՕԿ *«ոստ մայրեաց որ չունի մախր». գիտէ միայն Քաջունի, Գ. 213։*

***ՌՕՀՓԱԿ** «երեսծածկոց, քօղ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ջքր. սարկ. Ա. 32. «Հրամայեաց մէն մի երեսծածկոց արկանել ի գլուխս կանանցըն, այսինքն ոսկիփակ»։*

=Առրպ. թրք. اورپاك urpäk, *Կազանի թթր. և կիրգզ.* اورپاك ürpak *«գլուխն ու ուսը ծածկելու շոր. լաչակ» (Будаговъ, 1, 121)։ —Աճ.*

Գ. Շիրմազանեան, Կոստնկ 1861, էջ 436 համարում է պրս. روی rūy *«երես»+ հյ. փակ։*

ԳԻՒ.—Ղրբ. ռուփակ «հարսների գլուխը ծածկելու քօղ՝ ոսկեթելով կարուած», նոյնը կայ նաև Դվ.։

***ՌՕՇԱՆ** «պայծառ». յետնաբար գործածուած բառ. համմտ. Կոստ. երգն. 170. «Նաև գինով զգինին ռաւշան, որ քու տեսուդ նըմանեցաւ»։*

=Պրս. روشن rūšan, rōšan *«լուսաւոր, պայծառ», որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս* **ռոշն**։*—Աճ.*

Պատուրեան, Կոստ. երգն. էջ 203 կրցում է պրս. راوچه rāvča *«մի տեսակ խաղող» բառին, որ բնաւ կապ չունի, ո՛չ ձևով և ոչ էլ նշանակութեամբ։*

***ՌՕՇՆԱ** կամ* **ՌՈՒՇԻՆԱ** *«լուսաքար,* marcassita» *Բժշ.։*

=Պրս. روشنا rōšanā *«լուսաքար», ծագում է* روشن rōšan *«լուսաւոր, պայծառ» բառից, որից և նախորդ* **ռօշան** *«պայծառ» բառը։ Սրա ընկերներն են* **ռոշնական, ռոճիկ**։ *Բուն ծագման, հնդեւրոպական ցեղակիցների և հայերէն համապատասխան բնիկ ձևերի վրայ տե՛ս* **լոյս** *բառի տակ։— Հիւրշ. 275։*

ՆՀԲ պրս. **ռուշէն** *«լուսաւոր, պայծառ» բառից։ Ուղիղ մեկնեցին* Lag. Arm. St. § 1920 *և Նորայր, Բառ. ֆր. էջ 782 ա։*

U

+U. *առաջին դէմքի մերձաւոր առարկան նշանակող ցուցական յօդը, որի հետ նոյն է* **սա** *«այս». Հոլովւում է* **սա, սոբա, սմա, ի-սմաձէ, սովաւ, սոբա, սոցա, սոսա, ի սոցաձէ, սոֆօֆ.** *գրւում է նաև* **սայ, սոբայ, սոցայ, սմայ** *ևն, որոնք գործածական են յօդի հետ. բոլորն էլ հին և ընտիր։ Յունարան հեղինակների ձեռքով յարմարեցրած են* **սայֆ, սայց** *Հոլովմունքը և իգական* **սէ,** *սեռ.* **սեբա, յգ. սէֆ** *կամ* **սայֆ,** *սեռ. տր.* **սացա,** *որոնք յետոյ խափանուած են։ Առաջին դէմքի դիմորոշ յօդը գործած է նաև անձնական դերանուն. ինչ.* **Տէրս և վարդապետս,** *այսինքն «ես Տէր և ես վարդապետ». նոր Հայերէնում նոյնը ծառայում է իբրև սոացական յօդ. այնպէս որ* **Տէրս և վարդապետս** *նշանակում է այլ ևս «իմ տէրը և իմ վարդապետը»։ Իբրև կազմիչ տարր մտնում է* **աւասիկ,** *սա* **աւասիկ, սոյն, այս, ահա աւասիկ, ահաւասիկ, ասա, ասաէն, այսր, այսրէն, ասպի, ասաուսա, ասասպին, ասասաեօր** *բառերի մէջ։*

=Բնիկ Հայ բառ՝ հնխ. k'o- *«այս» դերանունից. սրա ժառանգներն են՝ լիթ.* šis *«այս»,* še *«այստեղ», լեթթ.* šis, *հպրուս.* schis *«սա», հսլ.* sĭ *(իգ.* si, *չեզ.* se*) «այս», սերբ.* sāj, *ռուս.* сей *«այս», հիսլ.* cē *«այս», հիսլ.* hann *«նա»,* hōn *«նէ», գոթ.* hi- *«այս» (օր.* hidrē *«այստեղ»,* himma daga *«այսօր»), հսաքս.* hē *«նա»,* hō-digo *«այսօր», հրգ.* hē, her *«նա»,* hina *«այն կողմ»,* hēra *«այստեղ»,* hiuru *«այս տարի»,* hiu-tu *«այսօր», անգսք.* he, *անգլ.* he *«նա», լտ.* ci-s *«յայսկոյս»,* ci-ter, ci-tra, ci-trum *«յայսկոյս»,* ci-tro *«այստեղ»,* նաև -c, -ce՝ hoc-ce, hice, hic, sic, tun-c *ձևերի մէջ, ալբան.* si- *«այս»,* si-vje't *«այս տարի»,* so-t *«այսօր»,* so-nte *կամ* sō-nde *«այս գիշեր»,* *եղն.* σή- μερον *(աւտտ.* τή-μερον*) «այսօր», ἐκεῖ «այնտեղ»,* κεῖνος, *դոր.* κῆνος *«այն», փռիւգ.* σεμοῦν *«սմին» ևն. արիականում չէ պահուած այս արմատը* (Pokorny 1, 452, Walde 147, Trautmann 304, Boisacq 233).—*Հիւբշ. 487։*

Rask. Nonnulla de pleno systemata, *էջ 25* **սա**=*իսլ.* sá: Brosset JAs 1834, *369 սանս.* sa, *վրաց.* **սա, ես, իս:** Böttich. ZDMG 1850, 350 *սանս.* ēta: *Պատկ.* Изслед. *12 զնդ.* aiša: *Մորիման* ZDMG 30, 437 *բահտ.* isa՝ *Հիւբշ.* KZ *23, 37 յն.* κεῖνος, *լիթ.* szis *ևն։* Lag. Arm. Stud. § *1579 յն.* κέν *(կասկածական և թէական մասնիկ)։* Bopp, Gram. comp. 2, 348—9 *ասում է թէ չի կարող գալ սանս.* sa *ձևից, որովհետև այս պարագային սպասելի էր հյ. հա. իսկ այս բառը ճիշտ նոյն է դնում զնդ.* aiša, *սանս.* ēša, *օսկ.* eiso *ձևերի հետ։ Տէրվ.* Altarm *99 և Նախալ. 121 սանս.* sa, *զնդ.* ha, *գոթ.* sa, *յն.* ὁ՝ Justi, Dict. Kurde 249 *և* Kurd. Gram. 134 *դուժիկի* si *և ուտ.* sa *«մէկ» բառերի հետ։* Karolides, Γλ. συγκρ. *70 կպզվկ.* ἀσπᾶ *«այսպէս»։ Ուղիղ մեկնութիւնն ունի Հիւբշ.* Arm. St. § 244: Bugge, Lyk. Stud. *I*, 68, 83. *վերիններին աւելացնում է լիւկ.* -s *դիմորոշը և* se *«ես» շաղկապը։ Առանձին մի քննութիւն ունի* Meillet MSL 10, *տե՛ս յատկապէս էջ 244, 254, 261 և* Pedersen, *Հին Հայ. ցուց. դեր.։ Տնտէն,* Hitt. u. Arm. *և ՀԱ 1904, 271 հաթ.* ai, aia, a, aa, i, ais, as *համանիշ ձևերի հետ։*

ԳԻՒ.—Երև. Սեբ. Տփ. **սա,** *Ննխ.* **սա, իսա** *(գիւղերում՝* **սյա***). Ասլ.* **սա, սվի,** *Ախց. Կր.* **աս, ասիկ, իսի, իսիկ,** *Պլ.* **սա, սրվի, սրվիգա, սրվիգագ,** *Ռ.* **սա, սվիգա, սվիգագը,**

խրբ. սբ, *Ագլ.* սօ, զօ, զօկ *(այժմ անգործածական)*, ճօկ, *Համշ.* էս, իսա, *Սվեդ.* ըսսօ, *Ջթ.* ոսօ, ոսո. *(Ալշ. Մկ. ջնջուած են այս, սա ձևերը և նրանց փոխարէն գործածւում է իդա, իճա, ճո)*:

**ՍԱԲԱ «ծեր». միայն մէկ անգամ գործածուած է Եւս. պատ. ը. 41 (էջ 499), ուր յն. բնագիրն ունի ὁ πρεσβύτης.*

=Ասոր. ܣܒܐ sābā, sāwā *«ծեր»— Հիւրշ. 316։*

Ուղիղ մեկնեց Lag. Arm. St. *§ 1926։*

Սաբակ *տե՛ս Սաբաք։*

ՍԱԲԱՅԵՍԱԼ *«ի վերայ կացեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 278։*

***ՍԱԲԱԻՈՎԹ** *(սեռ.–այ. յետնաբար կայ գրուած սաբաւօթ) «երկնային զօրութիւնները, Զօրք». իբրև Աստուածային վերադիր բանիցս անգամ գործածուած է Ս. Գրքի մէջ, տես. Ա. Թագ. ա. 11, Ա. Եղր. բ. 46, Ես. ը. 18, որոնցից առնելով Ոսկ. Ես. Կոչ. 141, Կիւրղ. Ես. Առ որս. Եղն—Ոսկ. Ես. 227 իրար հետևից գրում է* **սաբայովթ** *և* **սաբաւովթ**, *իսկ էջ 309՝* **սաբաովթ**:

=Եբր. צבא ṣābā *«բանակ, զօրք» բառի յգ.* צבאות ṣəbāōθ *ձևն է, որ Ս. Գրքի, Թարգմանութեան ժամանակ յն. ծագած տառադարձութիւնից անցել է հայերէնի. տես. նաև լտ.* sabaoth, *ֆր.* sabaoth *ևն։ Եբր. բառի միւս ցեղակիցներն են հբռվպ.* ḍaba *«պատերազմ վարել», արաբ.* ḍaba *«հետապնդել», ասուր* ṣa-a-bu *և՝ կամ գաղափարագրով* ṣabu *«մարդիկ, ժողովուրդ. 2. մարտիկներ, կրուողներ. 3. բանակ»* (Delitzsch, Assyr. Handwb. 557, Strassmaier, Alphabetisches Verz. d. Assyr. u. Akkad. Wörter, *էջ 865), եգիպտ.* ṣab(i?)ā, ṣaba(?)o *«բանակ»* (Gesenius[17], 670 *համարում է սեմականից փոխառեալ)։*

Հներից Առ որս. և և Ակտս. Ես. ուղիղ են մեկնում՝ ասելով. «Տէր սաբաւօթ, որ է զօրաց կամ զօրութեանց. Սաբաւովթն ըստ եբրայականին՝ զօրութեանց Թարգմանի, այսինքն տէր երկնային զօրաց»։ ՀՀՔ բառ եբր. ՆՀՔ եբր. **ձէպաօթ**, *βրք.* **սիփաճիլէրին**:

ՍԱԲԱՔ «վանդակաձև հիւսուածք, ցանցի պէս մի գործ». երկու անգամ ունի Դ. Թագ. իե. 17. «Սաբաք և նոնաձևք ի վերայ քովթարայն շուրջանակի... ի վերայ սաբաքին» (այլ ձ.* **սապակ):

=Եբր. שבכה səbākā *նոյն նշ. որ է արաբ.* شبكة šabaka *«ցանց, ցանցակերպ պատուհան կամ դուռ». Ս. Գրքի Թարգմանութեան ժամանակ յն. σαβαχά տառադարձութեան վրայից անցած է հայերէնի։*

ՀՀՔ բառ այլազգական։ ՆՀՔ եբր. **սապաք**, **սէպէք**, *յորմէ βրք.* **չէպէքի**:

Սաբբատ *տե՛ս* **Շաբաթ**:

***ՍԱԲԵԿ.** *(սեռ.—այ). անյայտ նշանակութեամբ գործածուած է մէկ անգամ Ծն. իբ. 13. «Եւ ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն սաբեկայ զեղջերացն». այստեղից անցել է նաև Բուզ. 93, եփր. երաշտ. 203—204, 209, Շար.։*

=Եբր. סבך səbak *«ծառի իրար անց կացած բուռ ու խիտ ճիւղերը» բառն է, որի նշանակութիւնը չհամեմատելով ծօթանասունք՝ անփոփոխ պահել են յն.* σαβέκ *տառադարձութեամբ, որից նաև հայերէն ձևը (*Gesenius[17], 535):

Հները հասկացել են զանազան ձևերով. այսպէս Վրդն. ծն. մեկնում է «Սաբեկն ոստ մի ծառոյ Թարգմանի, կամ երկճղի ծառ. իսկ առ ի միոս՝ Թողութիւն կոչի... ոմանք ասեն **բոյլ զոլ»**. *(ՀԲուս. § 2676 վերջընթեր բառը հասկանում է* **բայլ բոյսը**)։ *Առանձին բոյսի տեսակ է հասկանում նաև Թովմաս վրդ. Կիլիկեցի, որ գրում է «Թուզ, նուռն և սաբեկ» (տե՛ս ՀԲուս. անդ)։ Տունկ է նաև ըստ եփր. երաշտ. «Զոր և տունկ անուանեաց սաբեկ.— Տնկեսցէ զտունկս զայս սաբեկ.—Անուն տնկոյն սաբեկ ասի»— Բառ. երեմ. էջ 278 դնում է «սաբեկայ. բարձր»։ Իբր եբր. բառ յիշում են ՀՀՔ և ՆՀՔ՝ զանազան մեկնութեամբ։*

ՍԱԲԻԹԱՅ «22 քսեստ պարունակող մի չափ». մէկ անգամ ունի Շիր. հրտր. Պատկ. էջ 31 (ձեռագրերում եղել է* **սակիտար *կամ* **սայիտ**, *որ Աւգերեան ուղղել է* **սաբիթա**՝ *ըստ*

Եպիփան Կիպրացու. տե՛ս Մանանդեան, Կրշիռները և չափերը հնագոյն հայ աղբիւրներում, Երևան 1930, էջ 80)։

=*Յն.* σαβιδά *նոյն նշ.* (Lag. Symmicta 216):—*Հիւբշ. 376։*

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

ՍԱԲԻ *«խիմուլակաւ,* cimole´e, *մի տեսակ կաւահող». ունի միայն Քաջունի, Տո. Գ. էջ 213։*

+**ՍԱԳ, ի–ա** *հլ. «զազ (հաւեղէնը)» Վեցօր, 173. Մխ. առակ. Յայսմ. «նման մի թռչուն» Փարպ. փիլ. լիւս.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* k´awā *ձևից, որի հետ համմտ. կելտ. (լտ.)* cavannus, *հբրըտ.* couann, *նրրըտ.* kaouen, kaouan, *կիմր.* cuan, *ֆրանս.* chouan *(որ ժողովրդական ստուգաբանութեամբ դարձել է* chat-huant), *հսլ.* sova, *ռուս.* cobá, *հբգ.* hūwo, *մասնիկով՝* huwila, hiuwula, *անգլ.* howl *«բուն», որոնք ծագում են* *k´aṷā *նախաձևից. սրա բուն արմատն է հնխ.* k´aɯ- *«բղաւել, գոչել». համմտ. լիթ.* šaukiù *«բղաւել, գոչել, կոչել, կանչել», հբգ.* hiulen, hiuweln, *նրգ.* heulen *«ոռնալ, կանչել», նոյն արմատը կայ նաև հնխ.* kaṷ-, keɯ- kū- *ձևով, որից ունինք սանս.* kâuti *«գոչել, աղաղակել»,* kôka- *«սագ», յն.* κω-κύ-ω *«գոչել, ողբալ»,* καύαξ, κήξ, κᾶϋξ *«ծովային մի թռչուն, հաւանաբար* sula bassana L», *լիթ.* kaukiù, *լեթթ.* kàukt *«ոռնալ» ևն ևն։ Ըստ այսմ հնխ.* k´awā *բուն նշանակում էր «կանչող, բղաւող (անասուն)» և պատշաճօրէն յատկացուեց բուին կամ սագին, ինչպէս որ սանս.* kôka- *ևս «սագ»* (Berneker 422, Pokorny 1, 331—2, Walde 142):

Klaproth, Asia pul. 101 *սիբյ.* seseg, *պերմ.* düsek, *վոթյ.* säsik *«սագ» բառերի հետ։ Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ա բնաձայնից։* Peterm. 22 *քրդ.* häk, *անգաս.* äg: Pictet 1, 388 *համարում է շրջուած պրս. թրք.* qāz *«սագ» ձևից։* Müller BVS 5, 381 *փոխառեալ չէ, այլ նոյն է պնդ.* zaṇhr, *սանս.* haṃsa *հոմանիշների հետ։ Հիւբշ.* KZ *23, 26, Տէրվ. Երկրագունտ 1884, 102, Նախալ. 83 և 173,* Schmidt KZ *25, 127,* Bittner WZKM *14, 161 կցում են սանս.* haṃsá-, *յն.* χήν(ν)ς, *լտ.* (h)anser, *լիթ.* žąsis, *հբգ.* gans, *հսլ.* gensŭ, *ռուս.* гусь *«սագ» են ընտանիքին. սրա նախաձևն էր հնխ.* g´hans-, *որ տուել է հյ.* *գաս *և շրջմամբ* սագ: *Եազրճեան, Արևելք 1884 նոյ. 16 սանս.* çaka, çakavi: *Հիւնք. պրս.* qāz: Osthoff, Parerga 1, 247, *յետոյ* Patrubány SA 2, 170 Scheftelowitz BB 28, 284 *սանս.* çakuná- *«թռչուն, մեծ թռչուն», յն.* κύκνος *«կարապ», լտ.* cicōnia *«արագիլ», գոթ.* hāhan, *հբգ.* hëhara, *գերմ.* häher *ևն բառերին ցեղակից։* Pedersen ZDMG *57(1903), 561=Հայ. դր. լեզ. 187 կարծում է թէ* սագ<*գաս *շրջումը կատարուած է ձագ բառի ազդեցութեամբ (կցում է դարձեալ հսլ.* gąsĭ *ևն ձևերին)։ Այս բոլորը մերժելով վերի ուղիղ մեկնութիւնը տուաւ* Liden, Arm. Stud. *էջ 80, որին համամիտ են* Walde 159, Boisacq 422, 532, 1058, Berneker 342, Pokorny 1, 332, 456 *և* 536: Karst, *Յուշարձան 425 թրք.* qaz *«սագ»։*

Փոխ.—Pedersen, *Հայ. դր. լեզ. էջ 186—187,* ZDMG 57 (1903), 561 *և* KZ 40, 192 *հյ.* *գաս *նախաձևից փոխառեալ է դնում թրք.* qaz, *նաքուտ.* xās, *որոնցից էլ պրս.* γāz, *քրդ.* qāz, *օսս.* qaz *«սագ»։ Բայց ըստ. որում գոյութիւն չունի հյ.* *գաս *նախաձևը, ուստի գոյութիւն չունի նաև նման փոխառութիւն։ Թրք. բառերը, եթէ իրօք հնդևրոպական են, կարող են ուրիշ մի լեզուից փոխառեալ լինել, յատկապէս թոխարերէնից կամ քուշերէնից։*

*ՍԱԳ *«շենքի կտուրի թեք լանջերը», նորագիւտ բառ, որ 3 անգամ գտնում եմ գործածուած հետևեալ տեղերը. «եւ ի ձեռն մեծահնար ճարտարաց քերածոյ քարամբք և կրաշաղախ ձուլմամբ յօրինէ զսալայարկս ծածկութի զմբեթին և ատրակայ սագիցն և գաւթին, որ ի դրանն (Օրբել. Հրատ. էմինի, էջ 317).—Զհացաւ կամարանման զմբեթն՝ և սագերն ամպեղէն» (Յայսմ. Հոկ. 6).—գրուած սակի՝ Ձքր. սարկ. Գ. 42. «Շինեաց... զանգակատուն և չէ ևս էր կատարեալ զսակք*

տանեացն»։ Սրանից է կազմուած սագաշէն «թեք կտուրներով (ճարտարապետական ձև)» Վրդն. եւ. Գնձ. Օրբել. Պատմ. կիլիկ. գրուած սաճաշէն Տաթև. ձմ. Ճժա. որ և սագանև Յիշատ. ԺԸ դարից (Դիւան, Ժ. էջ 191)։

=Պրս. ساي say «է տեսակ իմն շինուածոյ, որ լինի նեղ և երկայն. 2. ծածք գմբեթի և առաստաղ տանն»։—Ա՛ճ.

Սագ նորագիւտ բառը գիտէ միայն Քաջունի, Գ. 216, որ գրում է սաճ և մեկնում է «քարինք յարկի տանեաց»։ Սրանից առնելով ԳԲ՝ սաճ «տանց յարկի քարեր»։ (Բառիս իմաստը որոշում են պրս. ձևը և տակը գւռ.)։ Միւսները գիտեն միայն սագաշէն բառը, որ մեկնում են հետևեալ ձևով. ՆՀԲ «կա՛մ է քարաշէն (ի պրս. sang, որ և լտ. saxum, այն է քար) և կամ տապանաձև՝ նաւակաձև ի նմանութիւն սագի». այսպէս նաև ՋՔ. իսկ ԱԲ «տափակ քարաշէն»։

ԳԻՒ.—Մշ. սագ՛, յգ. սագ՛եր «վանքի կըտուրի թեք լանջերը». օր. Վանքի սագ՛ի վրա նստուկ էր. (ուրիշ շէնքի համար չի գործածւում)։

ՍԱԳ «նման, սահման, վսով, անկար», որից սագործ՝ «նմանագործ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 278. վսով բառի իմաստն էլ անյայտ է։

ՍԱԳԱՀՈՒՄ. անծանօթ մի խէժ է. մեկնուած է «հումոյ կռէզ» Բժշ. որով բարդուած կլինի սագ «խէժ» և հում «մի տեսակ ծառ» բառերից. ունի միայն Հայ. Բուս. § 2677։

*ՍԱԴԱ կամ ՍԱԴԱՅ «ամենակարող Աստուած» Եզեկ. ա. 24, ժ. 5 (Իբրև զձայն Աստուծոյ Սադայի). որից նաև Նար. խշ. Գնձ.։

=եբր. שַׁדַּי Šaddai բառի յուն. Σαδδαῖ տառադարձութիւնից։ Այս բառը Աստուծոյ անուններից մէկն է. բուն նշանակութիւնը անյայտ, բայց հաւանաբար «ամենակարող». ծագում է שׁדד šdd «ուժեղ՝ զօրեղ լինել» արմատից (տե՛ս Gesenius[17], 808, ուր և զանազան տարբեր մեկնութիւններ)։—Մեր բառարաններում դրւում է ուղ. սադա, սադդա, սեռ. սադդայի. բայց եբր. և յն. ձևերի համեմատութիւնից երևում է որ ուղղականն է սադայի։ Սեռ. են առել նաև Գնձ. և Նար.։

ՀՀԲ բառ եբր.։ ՆՀԲ «բառ եբր. նոյն ընդ լտ. sat, հյ. շատ, լծ. ընդ. հյ. կաթն և թրք. süd, որպէս և սաիճ՝ ըստ եբր. է սատ կատ շատ»։

ՍԱԴԱՂ. նորագիւտ բառ՝ անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 35. Առաքեաց զմի յաշակերտաց իւրոց Յովհաննէս անուն, մականուն սադաղ կոչեցեալ, այր սուրբ և մաքուր հոգւով։

*ՍԱԴԱՅԵԼ (գրուած նաև սատայել, սխալմամբ՝ սամայել) «սատանայ, սատանայապետ» վրք. հց. բ. 383. խոսր. Ոսկիփ. Սանահն. որից սադայելական (նոր բառ)։

=Անշուշտ եբր. բառ է. բայց բուն ձևը յայտնի չէ։

Հներից Անկ. դիրք առաք. 102 մեկնում է «սադայէլ, որ Թարգմանի հակառակ Աստուծոյ և մարդկան»։ ՆՀԲ «բառ եբր. իբր հակառակ Աստուծոյ» (անշուշտ համարում է կազմուած իբրև սատան+էլ «Աստուած»)։

ԳԻՒ.—Ղրբ. Շմ. Սեբ. Սլմ. սաբայել, Ախց. սաբաւիլ, Տփ. սաբայիլ, Մկ. սոտոյել, Մշ. սադ՛ըաել, Պլ. սաբայել կամ սադանա-սաբայել «չար, անօրէն, վարպետորդի, շատ խորամանկ». էնկիւրիի Թրքախօս հայոց բարբառով՝ satayel «անօրէն, չար» (Բիւր. 1898, 865)։

ՍԱԴԱՅՍ «որոգայթ». յիշում է միայն Բառ. երեմ. էջ 151՝ ծօղ «ծուղակ» բառի բացատրութեան մէջ։

ՍԱԴԱՐ «ջրային երիցուկ» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 2678։

*ՍԱԴԵՄՈՎԲ «ձոր, հովիտ, դաշտավայր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դ. Թագ. իդ. 4. «Այրեաց զնոսա արտաքոյ Երուսաղէմի ի սադեմովթ կեդրոնի»։ Բառ. երեմ. էջ 278 գրում է սադեմովթ և մեկնում է «ձոր»։

=բբր. שַׁדְמוֹת šadəmōth բառի յն. ձձնդրώθ տառադարձութիւնից, որ անցել է մեզ Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ՝ բբր. բառը նշանակում է «այգեստան, արտօրայք», բայց այստեղ անշուշտ «ձոր կամ հովիտ» (Gesenius[17], էջ 809)։—Ա.Ճ.

*ՍԱԴԵՐՈՎՔ «զինուորականների կարգը՝ շարքը». գործածուած է երկու անգամ Դ. Թագ. ժա. 8, 15. «Եւ որ մտանիցէ ի սադերովքն՝ մեռցի. Հանէք զդա ի ներքուստ սադերովքայդ». (վերջինը սեռ. հոլով)։ Ունի միայն ԱՔ։

=բբր. שְׂדֵרוֹת sədērōth բառի յն. ձձնդրώθ տառադարձութիւնից, որ Ս. Գրքի թարգմանութեան միջոցին անցել է մեզ։

ԱՔ մեկնում է «մէջտեղի սրահ»։ Ըստ Gesenius[17], 779 հբր. שְׂדֵרוֹת sədērōth յոգնակին է եզ. שְׂדֵרָה sədērā բառի, որ նշանակում է «կարգ կամ շարք մարտիկների». այլուր (Գ. Թագ. ղ. 9) ունի շինարարական անյայտ նշանակութիւն, որից անշուշտ ազդուել է ԱՔ։ Ուղիղ է համեմատում Macler ՀԱ 1927, էջ 614։

*ՍԱԴԻՐ «ձոթոր, ձոթրիճ» վսակ.։

=Արաբ. سعتر sa'tar կամ صعتر ṣa'tar «ձոթրիճ». աւելի ընդարձակ տե՛ս ձոթոր։—Ա.Ճ.

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1908, էջ 124։

ՍԱԴԻՐ. արմատ առանձին անգործածական, որից կազմուած են սադրել «յորդորել, հրապուրել, թելադրել, միջնորդել» նաև. քր. Փարպ. խոր. Նար. 165. 34. կք. «թուել, համարել» Իրեն. հերձ. 90, 176 (ՀԱ 1910, 305), չարասադիր Օրբ. հկճռ. ժբ. էջ 172. սադրանք Պտմ. աղէքս. սադրիչ Փարպ. Ղևոնդ։

ՆշՔ լծ. սաատրել, լտ. suadeo «յորդորել»։ Bugge KZ 32, 38 սայր+դնել ձևերից իբր թէ *սայրադրեմ>*սադրեմ>սադրեմ։ (Յիշում է Pokorny 1, 454 հնխ. k'ōi- «սրել» արմատի տակ)։ Հիմնք. լտ. seducere «մոլորեցնել»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 327 իրան. satar «չար ոգի» բառից։

*ՍԱԴՐԻԼ «մի տեղ դադարիլ, հանգչիլ». անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած վրդն. սղ. ճգ. էջ 340. «ելանեն լեռնանան, յանդգնին և դարձեալ սադրին ի տեղի՝յոր հաստատեցեր զնոսա»։

=Արաբ. سَتَرَ satr «ծածկել, պահել, թաքցնել»։ Իմաստի զարգացման միջին աստիճաններն են ներկայացնում գւռ. սբրիլ «պահել, թաքցնել. 2. մէկի յանցանքը ծածկել. 3. ապաստան տալ», սբարուիլ, սբրուիլ «ապաստանիլ, մի տեղ տեղաւորուիլ, պահվտիլ», սբրիլ «ապաստանիլ, դիշերը մնալ. 2. հանգիստ մնալ, դադարիլ»։—Ա.Ճ.

*ՍԱՁԱՅ «դատարանի կողմից տրուած մի պատիժ՝ ինչքի գրաւումով ևն». նորագիւտ բառ, որ ունի քանիցս Սմբ. դատ. 35, 36, 38։

=Ֆրանս. saisir «բռնել» բայից. աւելի ընդարձակ տե՛ս սայլել։—Ա.Ճ.

*ՍԱՁԵԼ «կազմել, յօրինել, կարգաւորել, յարմարել». նորագիւտ մէյ. բառ, որ գործածում է օր. Կոստ. երզն. էջ 108, 175. «Երկու կամաց ծառայ դժար է ինձ յիրաց սազել. Մարո՛ւլ, դու սազէ ղչաշտան». նշանակում է նաև «դոհացնել, մէկի պահանջները բաւարարել» Անսիզք. 17։ Գործածական է այժմ Կովկասի բարբառներում սազիլ, սազ գալ, սազացնել, սազական «յարմարիլ, պատշաճիլ, վայելուչ լինել» ևն նշանակութեամբ, իսկ արևմտեան բարբառների մէջ «զարդարել, սլճնել» իմաստներով։

=Պրս. ساز sāz «կարգադրութիւն, պատրաստութիւն», سازیدن sāzīdan «կազմել, շինել, յօրինել, յարմարեցնել», سازانیدن sāzānīdan «կազմել տալ, շինել տալ» ևն։

Ուղիղ մեկնեց նախ Հիւնք. (սակայն սրան է կցում նաև յն. σάττω, σάσσω «պատրաստել, հանդերձել», որ կապ չունի)։ Նոյնը կրկնում են Նորայր, Հրաբ. Կոստ. երզն. էջ 203 և Աճառ. Գւռ. բառ. 950։

ՍԱՓ, ի-ա հլ. «մի տեսակ քար. քէհրիբար» Նար. խչ. 383. տաղ. 473. «բուստ, մարջան» խոր. աշխ. (կոչւում է նաև բազմագունի ակն եզեկ. ա. 4), որից սաբնուկ «սպունգ» վրք. հց. ա. 533. սաբբեռուկի

«բուսոի նման ծլած՝ ծաղկած» Նար. տաղ. 465։

Հինք. պրս. sad «հարիւր» կամ sadaf «սաւառափ» բառից։ Մառ, Вступительн. и закл. строфы... Шоты (1910), էջ 18 կրճատուած պրս. بسّاد bussad «բուսաւ» բառից։

ԳԻՒ.—Գոր. Երև. Հւր. Ղրբ. Տփ. սաբ, Ագլ. սօբ, Մշ. սաա։

ՓՈԽ.—Վրաց. ხაო սաբի «սև սաթ, սաթ քարը» (Աճառ. Արրա. 1898, էջ 367ա, Մառ. 1910, անդ), ուտ. սաբ՝ նոյն նշանակութեամբ։

Սաթառիճ տե՛ս Շահթառակ։

ՍԱԹԵԿ «Միջերկրական ծովի մի տեսակ միակայմ նաւ՝ եռանկիւնի առագաստով, tartane, թալութայ». ունի նորայր, Բռ. Ֆրբանս. էջ 1196 ա, իբր նորակերտ բառ։

=Ծագումն անյայտ։

Սաթճուկ տե՛ս Սաթ։

+ՍԱԼ (տես. սալի Սիր. լը. 29, յեռնաբար ի հլ.) «տափակ քարի մեծ հատոր» Փարպ. Նիւս. Յայսմ. Տօնակ. «մեհեանի մեծ կտոր» Վրդն. ծն. Պետռ. «երկաթէ կոճղ՝ որի վրայ դարբինը երկաթ է ծեծում» Յոր. խա. 15. Սիր. լը. 29. Կոչ. 45. Փարպ. Խոր. որից սալաքար «կոկած կարծր քար» Եզեկ. իդ. 7, 8 (նոր ձևով՝ սալքար Օրբել. Հրար. էմինի, էջ 169, սալքարուկ Սմբ. դատ. 124). սալակապ «գետինը սալայատակած» Կանոն. Վրդն. պտմ. սալայարկ «սալած, քար քաշած» Նորագիւտ բ. մնաց. է. 3. սալարկ, սալարկել Յայսմ. սալայատակ Եզիշ. Շիր. Սարգ. ա. պետր. բ (ա տպ. էջ 249). սալանալ «քար կտրիլ» Յոր. խա. 15. Բուզ. դ. 15. Ոսկ. յհ. ա. 1. սալասմբակ Մագ. սալուտ «քարքարոտ» Վստկ. 62. կճասալ յատակ Խոր. բ. 24. սալել «սալայատակ շինել, քար քաշել» (չունի ԱԲ) Հաւաբ. 38, 60. Առաք. պտմ. էջ 499. սալայատակել (նոր բառ). յեռնաբար կայ նաև սալարակապ «սալարկած» Յայսմ. մրտ. 13. Մին. համդ. 63, որ կարծեմ թէ սալարկ բառի վրայից սխալ վազմուած մի ձև է. (համմտ. նաև Վն. սալարսել, սալարսուն).—Բարսեղ Վարագեցու յիշատ. 1591 թուից (Դիւան, ժ. էջ 34) ունի «Ջերկու եկեղեցւոյ սալարս», ուր սալարս կարող ենք թէ՛ իբր եզ. առնել և թէ իբր յոգ. բայց այդ հատուածը ամբողջ վանայ բարբառով է։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'əlâ- ձևից. հմմտ. սանս. çilâ «քար, ժայռ», թերևս նաև հհիւս. hella «տափակ քար, շերտաքար», hallr «քար», գոթ. hallus «ջրի տակին խութեր». ուրիշ լեզուի մէջ չէ պահուած բառս։ Հայերէնի մէջ «դարբինի սալ» իմաստի զարգացման համար հմմտ. սանս. áçman- «քար, ժայռ»=յն. ἄκμων «դարբինի սալ» (Pokorny 1, 454 և 2, 593)։

Նշխ յծ. լտ. silex, յն. χάλιξ, որ է գայլախաղ, պրս. սըլայէ՝ քար, յորոյ վերայ լոսի ներկ. իսկ թրք. սալ «լաստ, լաստափայտ»։ Խ. Յովհաննիսեան, Արձագանք 1892, № 108 սալայատակ հանում է սալայ «կողով» բառից։ Հինք. սայլ բառից։ Ուղիղ մեկնութիւնը տըւաւ Bugge KZ 32, 24, որ անապահով է համարում Հիւբշ. 487, բայց ընդունում են Meillet, Esquisse 22, Brugmann Grdr.² I 173: Մառ ЗВО 13, 0123 վրբաց. սալի հոմանիշին ցեղակից։ Սանտալճեան ՀԱ. 1913, 406 խալտ. sal։ Պատահական նմանութիւն ունին սեմականներից՝ ասոր. ṣlâ' صلا, արաբ. ṣulla' صلع, եբր. sela' סלע «քար, ժայռ»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Խոց. Խրբ. Հմշ. Ղրբ. Մկ. Մշ. Սեբ. Սլմ. Վն. սալ, Սվեդ. սուլ, Ագլ. սօյլ, բոլորն էլ նշանակում են «մեծ և տափակ սալ քար», Զթ. սալ «դարբինի սալ», իսկ Նբ. սալ «դարբինի սալի տակի յենարանը»։ Նոր առումներով են՝ Այն. «միակտուր քարէ փորուած հնձան», Վն. «վէգի ուռած կողմը», Ղրբ. «պանիրի՝ մածունի են հարթ ու պինդ շերտ»։ Նոր բառեր են սալմ «հնձանի մէջ խաղողը ճմռելու տեղը, որ քարից շինուած կրաշաղախ հարթ տեղ է», սալաշար, սալարսել, սալարսուն, սալբանդ, սալմար, սալջարդ, սալճար, սալբրկապ։

ՓՈԽ.—Վրաց. ხალი սալի «ժայռ», որից

նալօ գՍլօ սալի գուլի «քարասիրտ», նալա սալա «լեփ, տղայոց խաղալու տափակ և բոլորակ քար», Թրք. զուռ. S. sal «սալքար» (Բիւր. 1899, 799), ուտ. սալ «նոյն նշ.»։

*ՍԱԼԱ կամ ՍԱԼԱՅ «կողով, կթոց» Ոսկիփ. որից սալազուգ «կողով հիւսող, սալա զուգող» Ոսկիփ. Վրդն. առ. 240. սալակ «փոքր կողով» Տաղ. (Նոր ժողով. Բ. 42, 17)։

=Արաբ. صلا sala «մէջը հաց ևն դնելու կողով» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 248). այս բառը բնիկ սեմական է. համմտ. եբր. סל sal, արամ. sallā, ասոր. ܣܠܐ salā, ասուր. sella «կողով». բայց հայերէնը չի կարող զալ ասոր. salā ձևից, որովհետև, նախ՝ այս պարագային սպասելի էր *սաղայ և երկրորդ՝ որ բառը շատ յետին է։—Արաբերէնից է փոխառեալ նաև Թրք. صله sele «կողով»։—Հիւբշ. 276։

ՆՀԲ բառ ոմկ. սէլէ: Lag. Armen. Stud. § 1929 եբր. sal և արաբ. sallaṭ։

ԳԻՒ.—Ախց. սոլտ «տափակ կողով» (նոր փոխառութիւն Թուրքերէնից), Ջղ. սալակ «զամբիւղ», Ղրբ. սա՛լակ «հաց փոխադրելու յատուկ տափակ մի աման՝ կեղևից գործած. 2. ճիւղերից հիւսուած դուռ այգիներին», որից սալակաւոր Շղ. «գլխարկաւոր, քաղաքացի» (ծաղրական բառ)։

*ՍԱԼԱԹ կամ ՍԱԼԱԹԱ «ցորենի նման մի ընդեղէն է» Բժշ. որ և սալէթին Վստկ. 22 (ըստ Քաջունի, Գ. 213 «գարի մանր և անկեղև», որ և տե՛ս ՀՒուս. § 2681)։

=Արաբ. سلت salat «մի տեսակ ցորեն, spelta, épeautre» (տե՛ս Steinschneider WZKM 12, 97):—Ա՛ճ.

ՍԱԼԱԿ «հանքային մի նիւթ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 31. վկայութիւնը տես ձիղկ (յաւելուածում)։

ՍԱԼԱՄ «դահուճ Թոչունը» Բժշ. Մխ. բժշ. 125 (տես. սալամու). բար. 160. որ և սալամք (ի–ա հլ.) Փարպ. յգ. սալամունք Փիլ. նախ. բ. 103։

ՆՀԲ յիշում է պրս. sulak «ձագ կաքաւու»։ Ըստ ՋՔ պրս. բառ է. բայց չէ յիշում մայր ձևը։

ԳԻՒ.—Մշ. սալամ. գործածական է միայն սալամ–կաֆվու պէս մանն կիզ՛ա ոճով։

*ՍԱԼԱՅ «մահմետականների աղօթքը». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. մրտ. 11. «Հանին զիս ի մնիրայն՝ տալ զՔուղայն (այլ ձ. զսալայն) աղօթից... ի ստիպել զմեզ տալ զսալայն և իջանել»։

=Արաբ. صلا ṣalā «աղօթք. 2. աղօթքի հրաւէր՝ որ միւէզզինը մինարէից կարդում է հաւատացեալներին», որ և صلاة ṣalā, ṣalāt «աղօթք, օրհնութիւն», յգ. صلوات ṣalavāt: —Ա՛ճ.

Սալար տե՛ս Սաղար։

ՍԱԼԱՐ «ամբողջ». նորագիւտ բառ, որ երեք անգամ գտնում եմ գործածուած միջին հյ. մատենագրութեան մէջ. Ձտարին ու զօրն որ նա սալար լինի կեցել (Անսիզք 67). Նա սալար զգինն ի հետն Թող բերէ (Անսիզք 69). Առնու ամէն մէկ զիր բաժինն սալար (Սմբ. դատ. 5ն)։

ՍԱԼԱՐԻԿ «վախից կամ ամօթից պահվըտիլ, մի տեղ ապաստանիլ» Մամբր. բ տպ. էջ 12, Փարպ. Խոսր. պարգ. 26. Արծր. 120. (ՀՀԲ ունի սաղարկել «ծածկել, պահել», որ սրա հետ նոյն է. իսկ Բռ. երեմ. 279 դնում է սալարիլ «զօրիլ կամ սարսիլ»). բոլորի արմատն է սալար «ծածուկ», որ Թէև աւանդուած չէ մատենագրութեան մէջ, բայց պահուած է Հաճինի գաւառականի մէջ՝ սալօյ «ծածուկ, գաղտնի» ձևով, որ ձայնաբանօրէն յառաջանում է սալար ձևից։

ՆՀԲ լծ. Թրք. սալը վէրմէք «արձակել»։

Սալէթին տե՛ս Սալաթ։

*ՍԱԼԻՆԱ «Ս. Գրիգորի ծառ կոչուած բոյս. դարչինի ծառ. laurus cassia» Բժշ. Վստկ. 100, 109, 119. սրա հետ նոյն է Թերևս գելիխա՝ ՀՒուս. § 706.—ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Seidel, Մխ. հեր. § 326։

=Արաբ. سليخة salīxa՝ նոյն նշ. (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 545)։—Հիւբշ. 279։

Ուղիղ մեկնեց նախ ՀՒուս. § 2682։

ՍԱԼԵԼ «անփոյթ լինել, ուշադրութիւն չդարձնել» Անսիզք 29, 33, որից սալեցու–

ցանել «անուշադրութեան մատնել» Սմբ. դատ. 49։

*ՍԱԼՈՆ «խենթուկ, փախուկ, յիմար» Վրք. հց. ա. 350 (իբր մականուն կամ յատուկ անուն գործածուած)։

=Յն. σάλος, չեզ. τάλον «յիմար, փախուկ». ծագում է σάλος «շարժում, ցնցում (հողի, հոգու, մտքի)» բառից. նոյնից են նաև Բրք. saloz «տխմար, ապուշ», վրաց. სალოსი սալոսի «յիմար»։—Հիւբշ. 376։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ։

Սալովբայ տե՛ս Սիղղոբայ։

ՍԱԼՈՐ «սալոր, շլոր» Մխ. առակ. Գաղիան. որից սալորենի «սալորի ծառը» Բժշ. աստւում է նաև շլոր կամ շլոռ՝ Բառ. երեմ. յաւել. 570։

ՀԲուս. § 2683 և յետոյ Patrubány SA 1, 106 կցում են հսլ. sliva, լեհ. šliva հունգ. szilva, լիթ. slyva, հբգ. slēha, նբգ. Schlehe, անգլ. sloe հոմանիշների հետ։ Յիշատակուած ձևերի հետ համեմատութիւնը տուաւ նախ Pictet, բ. տպ. Ա. 281, բայց կասկածով։ Հիւբշ. IF Anz. 10, 49 յիշում է կասկածով։ Յիշեալ բառերը ըստ Solmsen KZ 37, 598, Walde 437, Trautmann 269—230 կցւում են լտ. līveo «կապտիլ», līvor «կապտագոյն», līvidus «կապտաւուն», հիւլ. lī «գոյն, փայլ» են բառերին («սալոր» բուն նշանակում էր «կապտագոյն») և ծագում են հնխ. sleivā ձևից, որից չի կարող յառաջանալ հյ. սալոր։ Այս պատճառով Patrubány ՀԱ 1906, 343 մերժելով նախկին մեկնութիւնը, գնում է հնխ. kalē, kelē «տաքանալ» արմատից (հմմտ. լտ. calere «տաքանալ»), իբր հնխ. kaloris «տաք ժամանակի պտուղ»։ Մառ ИАН 1913, 318 -nr յոգնակերտ մասնիկով վրաց. ქლიավի «սալոր» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի սպան. ciruela «սալոր»։

ԳԻՈ.—Աբաց. կր. Ննխ. Պլ. Ռ. Սչ. սալօր, Սեբ. սալէօր, Ասլ. սալէօ՛ր, Մկ. սալիւր, Զթ. սոլիյ, սոլիւր, Խրբ. սալվօր.—նախաձայնը վերածած չ՝ Ալշ. Մշ. Զղ. շլոր, Երև. շլօր, Տփ. շլուր, Գոր. շլէօր, Ղրբ. շբլլէօր, Ագլ. շբլլիւր։ Նոր բառեր են սալորաչիր=շլորաչիր, շլորթթու, շլորի (Ագլ. շբլլո՛րի), շլրլիք (Ղրբ. շբլբպլիք) «սալորի պատառեղ՝ բլիթի ձևով»։

ՓՈՒ.—Քրդ. şilur «սև սալոր» (Justi, Dict. Kurde 260), զուռ. Քրք. Կր. salor «սալոր» (Բիւր. 1898, 627)։

*ՍԱԽՏԵԼ «ձին հանդերձել, պատրաստել, վրան թամբ դնել ասիական ձևով» Լմբ. առ Լևոն (1865), էջ 239. որից աճապարտ «չկազմած՝ անթամբ ձի» անդ, էջ 240. (սրանցից ՆՀԲ հետևցնում է նաև սախտ «թամբ»)։

=Պրս. ساخت sāxt «ձիու կազմած սարք», ساختن sāxtan «կազմել, պատրաստել», նաև «ձին հանդերձել». օր. asp-rā zīn sāxtan «ձին թամբել»։ Բայիս խոտորնակ ձևերն են sāz-, որից հյ. սազ, սազել (տե՛ս առանձին)։—Հիւբշ. 234։

ՆՀԲ պրս. սախտիյան «կաշի» բառից։ Lag. Arm. St. § 1944 պրս. sāxta, իրան. çač արմատից։ Հիւբշ. ZDMG 36, 132 վերի ձևով։

ՍԱԿ, ի-ա հլ. (կայ միայն սեռ. -ի, բայց սակաւ բառը ցոյց է տալիս որ հոլովումն էր ի-ա) «պայման, սահմանուած չափ, կոպար, կարգ, դաշն, օրէնք» ՍԳր. Ոսկ. մ. բ. 19. «հաշիւ, համարք» (օր. նոցին սակի են «նոյն հաշուումն են, նոյն բանն է») Շիր. 44, որից սակեալ «պայման դրած, որոշուած» Կորիւն. սակ արկանել «գին կտրել» Մտթ. ի. 13. անսակ «անպայման, անճառ» Թէոդ. խչ. ի սակս «վասն, պատճառաւ» Միք. գ. 12. յո՞ր սակս «ինչո՞ւ համար» Ա. յհ. գ. 12. յայն սակս Բ. մկ. ժ. 13. ա. յհ. գ. 5. յետնաբար սակս «համար» Նխ. ա. մկ. Խոր. Վրք. հց. սակս է՞ր Նանայ. սակս այս Մագ. սակս զի Կաղանկտ. հմմտ. նաև սակայն, սակաւ.—նոր բառեր են սակարկել, սակագին, սակարկութիւն, սակառան, սակացոյց։

ՆՀԲ լծ. Բրբ. սայր «թիւ համարոյ»։ Windisch. 39 հբգ. sahha, հհիւս. sakir, անգլ. sake «ի սէր, նկատառումով». հմմտ. ի ձեր սակս=for your sake: Lag. Gesam. Abhd. 300 պրս. sāxtan, արմատը sāz, սանս. çač, որ մերժում

է Հիւբշ. Arm. Stud. էջ 13։ Հինք. 64 տակ բառից, իսկ էջ 314 պսակ բառից։ Pedersen, Յուց. դեր. 39 յաջորդի հետ միասին փոխառեալ պարսկերէնից։ Karst, Յուշարձան 424 ԲԲր. sak-, sag- «հաշուել, համրել», ուղղար. չաղաթ. sak, sag, օսմ. sayə «թիւ, համրանք»։

*ՍԱԿ, ի հլ. «տուրք, հարկ» Բ. մակ. գ. 24. Եւս. պտմ. ե. 28. Ոսկ. մ. ա. 5, գ. 8. Եզիշ. Ճառընտ.։

=Պհլ. ساک sāk «տուրք», sāk u bāž «տուրք և մաքս», պրս. ساو sāv կամ سا sā «հարկ, տուրք», յատկապէս տուում է bāž u sāv կամ sāv u bāź «սակ և բաժ, հարկ ու տուրք»։—Հիւբշ. 234։

ՆՀԲ դնում է կից նախորդին, բայց յիշում է նաև յն. σαλάριον, լտ. salarium, պրս. sā, sāv: Հիւբշ. Pers. Stud. էջ 73, 168 պհլ. ձևից փոխառեալ։ Ադոնց, Арм. въ эп. Юст. 483 ԲՀ իրան. sak բառին է կցում և ԲՀ նախորդ սակ բառին։ Ըստ Մանանդեանի, Տեղեկ. ինստիտ. 1, 28 սակ նշանակում է «գլխահարկ»։ Աւգալբէկեան, անդ, էջ 58—73 գտնում է որ այս նշանակութիւնը ճիշտ չէ. սակ նշանակում է «թիւ, համար, չափ, յատուկ ընդհանրապէս հարկ»։ Այս պարագային երկու բառերը (սակ «պայմանի» և սակ «տուրք») պիտի միանային իրար հետ և որովհետև սակ «տուրք» իրանեան է, ուստի և իրանեան բառի նախնական իմաստը պիտի լինէր «համար, թիւ ևն»։ Իրանեան բառի ծագումը յայտնի չլինելով, կարելի չէ վիճել այս մասին, ոչ էլ միացնել երկուսը իրար։

*ՍԱԿԱՌ, որ և սէգապ «ջրշուն». ունի միայն Բառ. երեմ. յաւել. Գէորգ գպրէ, էջ 558։

=Պրս. سکاب sak-āb «ջրշունք, որ կազմուած է سگ sak «շուն» և آب āb «ջուր» բառերից։—Ա.Ճ.

*ՍԱԿԱՄՈՒՆԻԱ «բժշկական մի խոտ է. convolvulus scammonia L.» Վնասր. էջ 101 (տպ. ի սակամունիայ). նոյն են նաև սակամոնի Վրդն. ծն. ասկամունի Պիսիդ. Վնասր. տող 955, և յետնաբար՝ սակամոնի Մխ. գր. 326, Վստկ. 173 (տպ. սակամոնի, բայց ըստ ցանկին՝ էջ 258 և ըստ ՆՀԲ սակամունի), ասկամոն Յայտմ. մրտ. 22. սխալ գրուած կասկամոն, կաստամոն (ՀԲուս. § 1338, որ ուղղում է նորայր ՀՍ. 1923, էջ 51)։

=Մայր ձևն է յն. σκαμμωνία, σκαμμώνιον, լատին՝ յն. σκαμονέα, նոյն բուժախոտը, ծագում է σκάπτω «փոս» բառից, որ σκάπτω (=ռուս. копать) «փորել» բայից է։ (Այսպէս է կոչուած բոյսը, ըստ որում նրա հիւթը փոսերի մէջ հաւաքելով է ստացվում)։ Յոյներից են փոխառեալ ասոր. ܣܩܡܘܢܝܐ saqmunia, լտ. scammonia, scammonium, արաբ. և պրս. سقمونيا saqmūniyā, հնդ. sakhmunia վրաց. sakmuni, saqmeni են, նոյն նշ.։—Հայ. սակամունիա ձևը իբրև ոսկեդարեան՝ դալիս է ասորականից, որովհետև յոյն ձևը պիտի տա՛ր *սկամոն, *սկամոնիա. յետին ասկամունի<յն. ἀσκαμμωνίαν ձևից, իսկ սակամունի՝ արաբերէնից է։—Բոյսիս ընդարձակ նկարագիրը տե՛ս Seidel, Մխ. հեր. § 283։—Հիւբշ. 376։

ՀՀԲ յիշում է յն. լտ. տեղ. ձևերը։ ԳԴ պարսկերէնից։ ՆՀԲ յունարէնից։ Հիւբշ. 279 արաբերէնից, իսկ 376 յունարէնից։ Վերջին անգամ Վարդանեան ՀՍ. 1920, 335 դրաւ ասորերէնից։

—ՍԱԿԱՅՆ «բայց» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 6. Մծբ. գրուած է նաև ռմկ. սակէն։

=Կազմուած է սակ «պայմանի» բառից՝ -այն մասնիկով։

Աւետիքեան, Քերակ. էջ 132 սակ բառից։ ՆՀԲ «որպէս թէ սակ ա՛յն լիցի, այսինքն այնու պայմանաւ»։ Ուղիղ է Meillet, Altarm. Elementarb. էջ 135։

ՍԱԿԱՅՆ «բոլոր, բովանդակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 279։

Սակաւջնել տե՛ս Ականջ։

ՍԱԿԱՒ, ի-ա հլ. «մեծ կողով» Ագաթ. Ճառընտ. որ և սակաւի (-ուոյ, -ուոց) «կողով» ՍԳր։

Աւգերեան, Բյտր. չփ. և կշռ. 156 Բևրևս յն. σαργάνη «զամբիւղ»։ ՆՀԲ «իբր աման, աոօղ կամ տանօղ

այսչափ ինչ» (ուղում է հանել սակ «չափ» +առնուլ բառերից)։ Scheftelowitz BB 28 (1904), 144 տանս. çakala «բաժակ, կեղև, տաշեղ, մորթ, գանկ», լիթ. szakalỹs «փայտի փշուր» բառերի հետ՝ իբրև բնիկ հայ.։ (Պիտի տային հյ. *սաֆաղ)։

ԳԻՒ.—Մկ. վն. սակառ. Ալշ. սագառ. Մշ. սագոլ (ուղ.!), Սլմ. սաղ'օռ, Ագա սաfor? (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 582 ունի և սակառ ձևը)։

ՓՈԽ.—Քրդ. sekar «ուռուց հիւսած մեծ կողով» (Justi, Dict, Kurde, էջ 242), ն. աստր. sakur «մեծ կողով» ատրպ. թրք. sayar «մեծ կողով»։—Նո՞յն է արդեօք նաև վրաց. საგარი սագարի «պաշարեղէն, ուտելիք» երիմ. ժա. 5։

*ՍԱԿԱՏ «խեղկատակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Կոստ. երզն. էջ 158. «Նա չարկամ զիս տեսանէ, ինձ պացխուն տայ խօսվի սակատ». (գրուած է սատակ, բայց ոտանաւորի չանգը պահանջում է ուղղել սակատ)։

=Արաբ. ساقط saqat «խիղ, խեղանգամ, պակասաւոր, հաշմանդամ», որ այստեղ իմաստի նոր առումով է գործածուել։

Այսպէս ուղղեց ու մեկնեց Նորայր, Կոստ. երզն. էջ 203։

ՍԱԿԱՏ «թոթ». գործածուած է երկու անգամ յետին շրջանի մատենագրութեան մէջ. վատառողջ օդն միշտ շնչելովն վնասէ զսակատն (Գիրք առաք.)—Սակատս կսկծից (Վրդն. առկ. 216, ուր այլ ձ. ունի խարշեցաւ աղիքս)։

ՆՀԲ մեկնում է բառս «ցաւագար, հիւանդ», որի վրայ ՋԲ և ԱԲ ասելացնում են «խելապատակ»։ ՆՀԲ այս մեկնութիւնը տալիս է՝ հանելով բառս արաբ. ساقط saqat «խեղանգամ» ձևից. բայց այս իմաստը անյարմար է տեղին. վատառողջ օդը միայն խեղանգամին չէ՛ վնասակար։ (Երկրորդ վկայութիւնը, ուր «խեղանգամ կամ ցաւագար» բոլորովին անյարմար է, չգիտէ ՆՀԲ)։ Աւելի յարմար էր դնել «խելապատակ» քան ՋԲ և ԱԲ, ինչպէս որ Մատ. Վրդ. առ. I էջ 213 դնում է «գագաթ», հանելով պրս. سکاد sakād? «գագաթն գլխոյ» բառից (չունի ԳԴ. գիտէ միայն سبکاد sabkād «գագաթն լերին»)։ Բայց լատագոյն է «թոթ», քանի որ ունինք՝

ԳԻՒ.—Մկ. Նբ. վն. սակատ, գործածւում է միայն սիրտ բառի հետ կրկնաբար. օր. սիրտ-սակատ, որից գրծ. սրտով-սակատով (աւում է սրտով-սայտով) «հոռանդով, ախորժակով».—Ննխ. սագադ «ստոծանի».—նուազականն է Ակն. սագաթիգ (<սակաթիկ), որ կայ միայն հետևեալ ոճերով. Սակաթիկս կ'այրի, Սակաթիկս կեփի «սիրտս ցաւում մորմոքում է, խղճում եմ». որից սակատամեռ վն. (անիծական ածական)։

ՍԱԿԱՐ «դանկ, զրամ, ստակ, մանր փող». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Կնիք հաւ. 172. Ո՞չ երկու ձագք սակարի վաճառին (=Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանգի միոջ վաճառին. Մտթ. ժ. 29)։

Գտաւ ու մեկնեց Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Ա. 100, սակայն որովհետև վերի հատուածը Կնիք հաւ. օրինակում է Տիմոթէոս կուզից, ուր փոխանակ սակարի գտնում ենք ասսարի, ուստի կարելի է կարծել որ սակարի սխալ ընթերցուած է փխ. ասսարի։

ՍԱԿԱՐԱՆ. անորոշ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ 3 անգամ գտնում եմ գործածուած Անկ. դիրք առաք. 372, 403, 404. «Եւ հատաւ ջուր ի սակարանացն և առ մատուռակն զսափորն և չոգաւ զջրոյ. Մի ոմն ի մատուռակացն յարուցեալ ի սակարանից անտի, ած ապտակ ի ծնօտն Թումայի. Ասէր ցմատուռակն, եթէ պակասիցէ ի սակարանիցդ և երթիցես զջրոյ»։ Երևի նշանակում է «մատուռակների մառանը, պահարանները, բուֆետ»։ Բայց էջ 429 մի տարբեր խմբագրութեան մէջ համապատասխան տեղում կարդում ենք. «Եւ հատաւ ջուրըն ի բազմականին և առ մատուռակն զսափորն և չոգաւ ի ջուրն», որի մէջ բազմական գրուած է սակարան բառի տեղ։

Թերևս կապ ունենայ բառս սակարան «գինու մեծ գաւաթ» (բայց կար-

դա՛ արկարան) և կամ աւելի լաւ արաբ. صاقی ṣāqī «մատուռակ» ձևի հետ վերջին դէպքում սակարան<ṣāqīարան «տեղի մատուռակաց»։

—ՍԱԿԱՒ, ու հլ. «քիչ» ՍԳր. Ոսկ. եբր. որից սակաւ սակաւ Ոսկ. մ. ա. 2. ատ սակաւ սակաւ Օր. է. 22. իմ. ժբ. 2. սակաւիկ մի ՍԳր. արիւնասակաւ Եփր. Թգ. էջ 417. սուղասակաւ Եւս. պտմ. սակաւակեաց Յոբ. ժա. 3. ժդ. 1. Վեցօր. սակաւատուն Եւթաղ. 170. սակաւահաւատ Մտթ. ը. 26. սակաւաձեռն Ա. մկ. գ. 17. սակաւօրեայ Վեցօր. սակաւատր «քիչուր» (երկուսն էլ -ատր մասնիկով կազմուած, ինչպէս նաև սրանց հակառակը՝ բազմատր «շատուր») ՍԳր. Սևբեր. Եւս. քր. սակաւահող, սակաւարիւն (նոր բառեր) են։

=Կազմուած է սակ «չափ» բառի գործիականից, իբրև «չափաւոր, քիչ», ճիշտ ինչպէս ունինք բոլով «քիչ» (տե՛ս բիւ բառի տակ)։

Ուղիղ են մեկնում Աւետիքեան, Քերակ. 1815, 261, ՆՀԲ և Windisch. 39, որոնց համաձայն են նաև Lag. Arm. Stud. § 1930, Meillet, Altarm. Elementarb. 135:

ԳԻՒՒ.—Տփ. սակավ, Մշ. սագաֆ։

ՍԱԿԵԿ «ոտք». ունի միայն Ռ. երեմ. 279։

Սակեր տե՛ս Սակր։

ՍԱԿԻ «համախոհ, գիտակակից, complex». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լո.-հյ. էջ 94առ։

***ՍԱԿՄԻԼ** «յոգնիլ, ոտքերը կթոտիլ» մէկ անգամ ունի Ճառընտ.=Վրք. և վկ. Բ. 74. «Ամենեքեան առհասարակ պարէին՝ լուծեալք և սակմեալք Դիոնիսեայ պարմամբք»։

=Արաբ. سقم saqm «հիւանդանալ», سقيم saqīm «հիւանդ» (Կամուս, Թրք. Բրգմ. Գ. 480)։—Աճ.

ՆՀԲ կարդալով սակտեալ՝ ուզում է հանել սակատ բառից, որ մեկնում է «ցաւագար, հիւանդ» իբր ռմկ. սախտած։

[**ՍԱԿՈՒՂԱՋՈՒՐ** «մի տեսակ խոտի հիւթը՝ հոյզը» Վրք. հց. «մի տեսակ խէժ, ֆր. sagapénum» Քաջունի՝ Տարրաբանութեան մէջ և Բառ. հտ. Գ. էջ 213։

=Ջեռագրական սխալ ընթերցումից յառաջացած անգոյ բառ, որ ըստ Նորայր Հմ. 1921, 340 կարդացւում է Վրք. հց. Ա. 571 «կե՛ր սակաւ աղաջուր և չեն ինչ պետք քեզ եփել ինչ։]

***ՍԱԿՈՒՐ**, ի–ա հլ. «պատերազմական տապար» Բուզ. ե. 32. Նորագիւտ Ա. մնաց. ի. 3. կայ նաև սակր ձևը՝ ր հլ. գրծ. սակերբ Խոր. բ. 8, կամ սակրով՝ Խոր. գ. 39. որից սակրատր «տապարատոր զօրք» Բուզ. Արծր.։

=Ասոր. ܣܩܘܪܐ seqūrā «սակուր», արամ. סקוריא saqūriā, արաբ. صاقور ṣaqūr կամ صوقر ṣāuqar «քարտաշի մուրճը» (Կամուս, Թրք. Բրգմ. Ա. 938—9)։ Ա. բար. բառը փոխառեալ է արամերէնից, որ ասորի ձևի հետ միասին ծագում է լտ. secūris «կացին» բառից։ Սա բնիկ հնդեւրոպական բառ է և ծագում է հնխ. seq- «կտրել» արմատից. հմմտ. լտ. seco, ռուս. сечь, на-секать «կտրել», секира, ուկր. sokýra, բուլղար. sokýra «տապար», գերմ. säge, հոլլ. zaag, անգլ. saw, ֆինն. (գերմանականից փոխառեալ) saha «սղոց» են (Walde 693, Kluge 404, Trautmann 255):—Հիւբշ. 316։

Վիւտենեանք, Բրգմ. խոր. յոջ. էջ 5 կգում են յն. σάγαρις «կացին» բառին, որ համարում են հայկական ծագումից։ ՀՀԲ՝ Խոր. Գ. 28 կացնով և սակրօք կարդացել է սակրօք և սրանից հնարել է անգոյ *ակիր «փայտատր, դուր» բառը, որ կրկնում են նաև ՋՔ և ՓԲ։—ԳԴ արաբ. ṣāḥūr «մսագործի դանակ» բառի հետ։ Ինճիճեան, Հնախոս. Բ. 261 ծան. Սակաց սուր (իբր Սակ կամ Շակ ազգի անունից)։ ՆՀԲ լծ. լտ. securis:—Böttich. Rudim. 48, 179 յն. σάγαρις։ Նոյն, Arica 56, 22 սրա հետ նաև սանս. çakti: Տէրվ. Altarm. 100 յն.—լտ. փոխառութիւն, իսկ Մասիս 1881 ապրիլ 27 լտ-ից։ Հինք. լտ. securis, պրս. սակուր և Թրք. սաբբր։

ՓՈԽ.— Վրաց. მოხაგრე մոսագրե «զին-

ւոր, մարտակից», Ցոնացրեցծա մոսագրեն-բա *«պատերազմ»*, *արմատն է* սագր. *համմտ. հյ.* սակրաւոր *(զօրք)*։

*ՍԱԿՈՒ *«մի տեսակ ագռաւ» Մխ. առակ. ճիաւ Բառիս համար մի հին վկայութիւն էլ է տալիս Սոփոն. բ. 14. «Գազանք գոչեսցեն ի նկուղս նորա և սակուսք (իմա՛ սակոուն?) ի դրունս նորա» (հբր. տաբբեր է այստեղ, հայերէնի համապատասխանն է յն. κόρακες, որի համեմատ էլ մեր հատուածում այլ ձ. ագռաւ՝ փոխանակ սակուս ձևի)։

=Գտնւում է մի խումբ լեզուների մէջ. ինչ. արաբ. صَقْر ṣaqr *«որսի բազէ. շահէն»* (Կամուս, Քրբ. Քրամ. Ա. 938), քրդ. sakkar *«որսական մի թռչուն»* (Justi, Dict. Kurde 270), *արևել. Քրբ.* سوقور soqur *«վայրի բազ»*, *իտալ.* sagro, *ֆր.* sacre *«մի տեսակ մեծ շահէն»*, *մրգ.* sackers, *մյն.* σάκρε, *մլտ.* sacer, *որոնց վրայ տե՛ս* Hehn, Kulturpfl. 3, 537: *Ցայտնի չէ թէ հայերէնը ի՛նչ ճամբով հասած է մեզ։ Հիւրշ. Ուս. փոխ. բառից 66 և* Arm. Gram. 276 *մեր բառը համարիելով շատ յետին (Սոփոն. բ. 14* սակուս *համարում է սխալ ընթերցուած՝ փոխանակ* ագռաւ*), դնում է փոխառեալ արաբերէնից։*

Նշ֊ի և սրանից էլ Հիւնք. յն. πελεκάν *«հավալուսն» բառը դնելով* πέλεκυς *«կացին, սակուր» բառից, հյ.* սակո *ձևն էլ համարում են* սակուր *«կացին» բառից (իբր թէ այս թռչունի բիբը տապարաձև է)։* Böttich. ZDMG 1850, 361 *անս.* çakuna։

Սակս *«համար» տե՛ս* Սակ։

ՍԱԿՍԻ *«սուրհանդակ», ունի միայն Բառ. երեմ. էջ 281։*

*ՍԱԿՍՏԱՆ ԱՆԴԵՐՁԱՊԵՏ *«հոգաբարձու որսականաց». պարսիկ մի զօրավարի տիտղոսն է, որ իբր յատուկ անուն է գործածուած՝ Բուզ. դ. խհ.։*

=Պհլ. sakstān *«շանց տիրոջ, շնանոց»*, andarzpat *«տնօրէն» բառերից։*

Հիւրշ. 99 մեկնում է կասկածով Սագաստան *գաւառի անդերձապետ։ Ուղիղ մեկնեց վերի ձևով* Marquart *ՀԱ 1897. էջ 6։*

*ՍԱԿՐ, ր հլ. *(հյց. սակերս, գրծ. սակերօք)* «արքունի հրովարտակ» Ճառընտ. Կոբիւն. (առաջինը ունի ուղ. սակր, երկրորդը սակերս, սակերօք ձևերով. սրանցից ՆՀԲ, ՋԲ և ԱԲ հանում են սակեր ուղղականը՝ իբր հին ձև, մինչդեռ սակր դնում են իբր յետին ձև։ Ըստ իս այսպիսի խորութիւն դնելու պէտք չկայ. սակերս, սակերօք կարող են կանոնաւորապէս ծագիլ սակր բառից որին համաձայն է նաև յոյնը։ ՆՀԲ դրել է սակեր՝ համաձայնեցնելու համար լտ. ձևի հետ, բայց հայը ուղղակի լատիներէնից չէ)։*

=Յն. σάκρα *«կայսերական հրամանագիր, հրովարտակ»* (Sophocles 977). *ծագում է լտ.* sacer, sacra *հոմանիշից, որ բուն նշանակում է «նուիրական».—Հիւրշ. 376։*

Լատինական ծագումից է դնում հնեից Ճառընտ. «Թագաւոր ոք տպաւորեալով զբանսն ի քարտիսի, որ իտալացւոց բարբառովն սակր *ասի»։ ՆՀԲ հյ.* սակ *«պայման» բառից և կամ մանաւանդ լտ.* sacer:—Lag. Arm. Stud. § 1933 *աւելացնում է յն.* σάκρα։

Սակր *«կացին» տե՛ս* Սակուր։

[ՍԱԿՐԱԿԱՊԵՏ, *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մեսր. եր. «Կապմեցին պատրաստեցին զօրագլխացն սակրակապետօք զվարդան Մամիկոնեան»։ Անշուշտ սխալ ընթերցուած է. ՆՀԲ և ՋԲ ուղղում են* սատրապապետ, *ԱԲ դնում է* սակրապետ *«գլխաւոր իշխան»։]*

Սակրոս *տե՛ս* Սկարոս։

ՍԱՀ *«գունդ, բանակ, զօրագունդ» Ոսկ. երր. և. որից* սահապետ *«զօրապետ, իշխան» կանոն.։*

Սահապետ բառը ՆՀԲ հասկանում է շահապետ *կամ* եահապետ։ *ՋԲ* սահ *դնում է պարսկերէն։*

ՍԱՀ *«բնձիւղ, ծիլ»։*

Այս բառը յիշում են ՆՀԲ և ՋԲ առանց վկայութեան, իբր պրս. շախ, շահ *ձևից։—ԱԲ չունի։*

ՍԱՀ. *արմատ առանձին անգործածական,*

որից կազմուած են սաճիլ «տատանիլ, ծըփալ, տարուբերիլ, ջրի վրայ երերալ, հոսիլ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. ա. 5. սաճել Ոսկ. ա. տիմ. ժէ. սաճեցուցանել «տարուբերիլ, երերցնել, տատանիլ տալ» Ժղ. է. 8. Մհկն. ծն. սաճեցումն «սողալ, սողոսկիլը» Նար. սաճաճ «ջրի հոսանք կամ հոսանքը բռնելու թումբ» ՍԳր. Ագաթ. սաճատր «սահուն, անհատատատ» Ոսկ. բ. տիմ. 264 (չունի ՆՀԲ). բազմասաճ Նար. երկնասաճան ՅՀ. կթ. կարկաջասաճ Խոր. ճեզասաճ Պիտ. Կաղնկտ. յորդասաճ Անան. եկեղ. դիւրասաճ Հայել. 319 (նորագիւտ բառ). յետնաբար ձևացած է «լպրծիլ, սայթաքիլ, գայթիլ» նշանակութիւնը, որ միակ գործածականն է արդի գրականում. համմ. սաճուկ «լպիրծ» Գիրք առաք. սաճուն «սահող, լպիրծ» (մինչդեռ հին լեզուում նշանակում է «թափառական, աստանդական, երերուկ» Մծբ. Պիտ.) ևն։—Իսկ սաճնակ «բալխիր» փոխառեալ է չաղաթ. ساناق sanaq հոմանիշից և յարմարուած է նորերից հյ. սաճ, սաճիլ բայի համեմատ։ (Ջունի Будаговъ, 616)։

Տէրվ. Altarm. 98 և Նախալ. 110 sar արմատի տակ՝ սողալ, սուրալ ևն ձևերի հետ։ Հիւնք. հոսիլ բայից։

ԳԻՒ.—Սչ. սաճել «սայթաքիլ», Ննխ. սաչել, Համշ. սէճուշ, Սվեդ. սիֆիլ.—կրկնաբար նուդ. սաճսճիլ «շատ անգամ սահիլ»։

ՍԱՀԱՃՈՂ «տրմուղ». գիտէ միայն Քաջունի, Գ. 213. աղբիւրը անյայտ է։

Սահապետ տե՛ս Սահ։

ՍԱՀԱԿ «discus, սկուտեղ, paropsis, սկաւառակ». գիտէ միայն Նէրսէսովիչ, Բառ. լատ.-հյ. 157 բ և 380 բ։

*ՍԱՀՄԱՆ, ի-ա հլ. «որոշեալ չափ, ծայր, վերջ (մանաւանդ երկրի կամ գաւառի), կանոն, օրէնք» ՍԳր. Խոր. «տրամաբանական եղր, բացատրութիւն» Դամասկ. Արիստ. վերլ. «Բանական պատճառ» Պրպմ. Դիոն. ածայ. որից սահմանել «որոշել, կարգել» ՍԳր. «վերջացնել» Իգն. «բացատրել» Սահմ. սահմանադրութիւն Գծ. ժէ. 26. սահմանապան Բուզ. սահմանակից ՍԳր. Բուզ. Եւս. քր. սահմանուոդ Ոսկ. ես. անսահման Ագաթ. Կոչ. միասահման Վեցօր. միջասահման Փիլ. Պիտ. զանցասահման Ճառընտ. ևն։ Նոր բառեր են սահմանաբար, սահմանադրական, հակասահմանադրական, սահմանամերձ, սահմանափակ, անսահմանափակ, սահմանագիծ, սահմանագլխային, սահմանային, սահմանակցութիւն, անսահմանաւոր ևն։

=Հին պհլ. *sāhmān ձևից, որից պհլ. sāmān «սահմանորոշ նշան. 2. նշան, որակ, յատկութիւն», sāmānak «սահման, տարածութիւն», պազ. sāmān «սահման, նշան», sāmāna «սահման, տարածութիւն», sāmānmand «սահմանեալ», պրս. سامان sāmān «հանդերձք և կարասիք տան. 2. զարդ կարգադրութեան. 3. կարգաւորութիւն գործոյ. 4. դադար և հանգիստ. 5. աւան. 6. ժողով. 7. զօրութիւն և կարողութիւն. 8. վարկուած գործոյ և չափ խօսից. 9. ողջախոհութիւն. 10. խելք և խոհեմութիւն. 11. նշան՝ որ իցէ հդեալ վասն որոշման սահմանի» (Horn § 693):—Հիւբշ. 235։

Հներից Առաք. լծ. սահմ. 163 սաճել կամ հիմն բառերից։ Neumann JAs. 1829, էջ 69 բառ փիլիսոփայական լեզուի սաճման մեկնում է յն. σῆμα, դոր. σᾶμα «նշան, որոշիչ յատկութիւն»։ ՆՀԲ պրս. սաման։ Lag. Urgesch. 615, 617, Btrg. bktr. Lex. 25 պրս. sāmān, իբր առնս. çaṃs, çās արմատից։ Պատկ. Matep. I. 15 պհլ. և պրս. ձևերը։ Հիւնք. պրս. սահման։ Պատահական նմանութիւն ունի առնս. sīmán- «սահման» (Pokorny 2, 463):

ԳԻՒ.—Շմ. սաճման, Զղ. սաճմանճ, Ախց. սայիման, Սլմ. սայիման, Խրբ. սայման, Մկ. սախման, Գնձ. սամիանճ (մի շրջուած), Գոր. Ղրբ. զա՛հման «երկու արտի մէջտեղի սահմանը», Ղրդ. զա՛հման «սահման, մէկի բնակութեան շրջանը», Ասպ. Երև. սաճմանճ «սովորութիւն, աւանդական օրէնք», Ակն. սայմանել «հնարել, յօրինել».—Մաքսուդեան, Le parler d'Akn, էջ 63 սրանից է դնում նաև Ակն. թայիմանել «հնարել, հնճարել»։—Մշ. սամնել «սահմանել»։

ՓՈԽ.—Վրաց. სამანი սամանի «սահման», Թրք. Աստրպ. և Սլմ. sayman «երկու արտի սահմանը», ուս. саманка «նոյն նշ.»։

*ՍԱՀՄԻ «հայկական երրորդ ամիսը, որ անշարժ տոմարով համապատասխանում է հոկտ. 10—նոյ. 8» Եփր. Համաբ. 19. Տոմար. Յայտմ. Վանակ. տարեմ.։

=Փոխառեալ է կովկասեանններից կամ խալտերէնից. Հմմտ. վրաց. ცამი սամի «երեք», ինգիլ. sam, մինգր. sumi, šum, լազ. sum, šum, žum, սվան. semi «երեք». մեր բառը սեռականի ձևով է, ինչպէս և միւս ամսանուններըը։ Հմմտ. նաև ճոռի «հայկական երկրորդ ամիսը», որ փոխառեալ է կովկասեան «երկու» բառից։

Հներից Վանակ. տարեմ. և Տաթև. հարց. 200 մեկնում են. «Սահմի, զի գնայ հարաւային և գայ հիւսիսային (սահիլ բայից) և դարձեալ արք իմաստունք սահմանեն զտունս իւրեանց առ ի գալ ամերայնոյն»։ Տաթև. ձմ. ա. «Սահմի զերևումն սահմանացն ասէ, յորժամ զհուրն և զջուրն բաժանեաց ի միմեանց»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Brosset JAs 1832, 529: Պատկ. О названіяхъ древн. арм. месяцевъ 40 հետու գտնելով զնդ. haoma և սանս. soma «նուիրական հեղուկ» բառերից, կցում է Կապագովկ. օշոմ «11ող ամիսը» ձևի հետ։ Վրացերէնից են գնում նաև X Բազմ. 1845, 82, Հ. Ե. Տայեցի, Բազմ. 1897, 337, Բասմաջեան՝ անդ 339, Աճառեան, անդ 394։ Հիւնք. 313 վրաց. սամի «երեք» և պրս. savum «երրորդ» բառերից։ Ալիշան, Հին հաւ. 140. երր. Նոյեմի և յն. Սամիա յաւելմահարսի անուան հետ։ Յակոբեան, Բանաս. 1900, 38 բաղդ. sivanu, երր. sivan «երրորդ ամիսը», հպրս. զնդ. spenta, սանս. Çiva աստուածը կամ soma նուիրական հեղուկը։ Պատահական նմանութիւն ունի ինչպէս մեր ամսանուան, նոյնպէս և կովկասեան «երեք» բառի հետ չին 三 san¹ «երեք»։

*Փոխ.—Ագաթանգեղոսի յոյն թարգմանութեան մէջ բառս տառադարձուած է σαομὶ (տե՛ս Lag. Ագաթ. 72)։

*ՍԱՀՐԱ «լուսին». մէկ անգամ ունի Միխ. աս. 64. «ի Կոծնեայ՝ որ է Երեակն, մինչև ի Սահրա, որ է Լուսին»։ Նոյնը «Հարցմունք թագուհւոյն և պատասխանիք Սողոմոնի որդւոյ Դաւթի» գրութիւնից յիշում է Հիւբշ. 517, բայց սաեր ձևով։

=Ասոր. ܣܗܪܐ sahrā, արամ. סהרא sahrā «լուսին», արաբ. شَهْر šahr «լուսին», որ նշանակում է նաև «ամիս»։—Հիւբշ. 517։

*ՍԱՀՐԱԹ «սահման». գործածուած է շատ ուշ ժամանակի հայերէնում. օր. ի յեզերս թագաւորութեան իւրոյ սահմանաց և սահրաթաց. Յիշ. ԺԷ դարից (Դիւան, ժ. էջ 70). Վան... է մեծ փաշայութիւն և սահրաթ (անդ, էջ 76)։—Քաջունի, Գ. 214 իբր գւռ. բառ գրնում է սաեւրաա «սահման»։

=Պրս. سرحد sarḥad «սահմանագլուխ», որ բարդուած է պրս. سر sar «գլուխ» և արաբ. حدّ ḥadd «սահման» բառերից։—Ա՛ճ.

*ՍԱՂ «ծանծաղ». յետին ռամկական բառ. Հմմտ. «Եղևին ցախ է ծանծաղարմատ, այսինքն սաղ է տակն»։ Լծ. Նար.—Ջերէկն սաղ և քարախաղաց է. Լծ. փիլ.—Մաղասխոտ ի սաղերն բուսանի. Բժշ.։

=Քրդ. صیغ sɔγ «ծանծաղ» (յատկապէս ջրի համար)։

Գտաւ ու մեկնեց Նորայր ՀԱ. 1921, 341։

ՍԱՂԱՆԹՈՒՐ. անասուոյ բառ. վկայութիւնը տե՛ս խզրատ։

Ըստ Վարդանեան ՀԱ. 1910, էջ 305 ուղղելի ախեքոր։

*ՍԱՂԱՄԱՆԴՐ, ի–ա հլ. «մողէսի նման մի սողուն, որ իբր թէ կրակին դիմանում է» Նոնն. 20. Խոր. աշխ. Վրդն. ծն. Բրս. մրկ. Նոյն են նաև սաղամիանար Վանակ. հց. սալամանդրա Լմբ. խմ.։

=Յն. σαλαμάνδρα, որից նաև լտ. salamandra, գերմ. Salamander, ֆր. salamandre, պրս. samandar, samandal, samandūl են, բոլորն էլ նոյն նշ.։ Ոյն բառը թուի կա՛մ օտար փոխառութիւն և կամ բարդ բառ, որի առաջին եղրն է *σαλ «պոչ», երկրորդը անծանօթ (Boisacq 859):—Հիւբշ. 376։

ԳԴ պրս. սէմէնաոպ։ ՆՀԲ յն. լտ. Բրք. (իմա՛ պրս.) ձևերի հետ։

ԳԻՒ.—Մկ. սոլոտարոնա «խնչափառ» (որ և վն. սալադրանա՝ բստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 581). Նոյնից փոխաբերաբար՝ վն. սալադրանա «սատանայ-սադայէլ, արբանեակ սատանայի» (բստ Շէբենց, Վանայ սազ Ա. 116). իմաստի զարգացման համար համմտ. սատանայ Ագլ. Ազա, Դվ. Մրղ. Սլմ. «սարդ, մամուկ»։

ՍԱՂԱՊ «անհասատատ, յողդողդ, փոփոխամիտ» ՅՀ. կԲ. 227. «դիզերանք դիտութեան մէջ, ուսման փորձեր» Ոսկ. յհ. բ. յիշ. էջ 960. որից սաղապանեմ «բայլամոլոր, ոնոնալով պատիվով» Խոր. սաղապեցուցանել «մոլորեցնել, խոտորցնել» Խոր. սաղապիլ «սլքտալ» Պիտ. վջ. սաղապումն «դիզերանք, կրթանք» (համմտ. յն.τριβή «սլքտալ, դանդաղիլ, ղբաղմունք, խնամք, գործունէութիւն») Մաքս. հկեղ. անսաղապ «անամոթելի, խիստ» ՅՀ. կԲ. 363. դիւրասաղապ «շուտ սայթաքող՝ մոլորուող» ի դիրս Խոսր. 141. շուտասաղապ «շուտ սխալող» Խոսր. առասդապել «մէկին մի բան վերագրել» Տիմոթ. կուզ 108 (սորկական Բրգմ. բնագրի προστρίβω հոմանիշից, համմտ. Ակինեան և Աճառեան, Տիմոթ. կուզ, էջ 47, 67). սրա հետ նոյն է սողոպումն «սայթաքում, անկում» Բրս. հց. որից դիւրասաղոպ «շուտ գայթող, մեղքի մէջ շուտ ընկնող» Բրս. շար.։

ՆՀԲ «որպէս թէ սողեալ՝ սողոպեալ դանդաղանօք»։

*ՍԱՂԱՊ «սալէպ բոյսը, ազուէսաձուք, լտ. satyrium» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2687։

=Արաբ. ثعلب ṯa'lāb, նոր հնչումով sa'lab, որ է նոյն բոյսը (բուն նշ. «աղուէս», այս պատճառաւ էլ հյ. Բրգմ. աղուէսաձուք). դարձած է Բրբ. سالب saleb՝ նոյն նշ.—Ա.Ճ. Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ, Բ. 1908, էջ 124։

*ՍԱՂԱՐ (ի–ա հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «զօրավար, զօրապետ» Փարպ. Եղիշ. դ. էջ 74. Լաստ. որից սաղարութիւն Կանոն. 76, սաղարանի «զօրավարներ» Ասող. աւելում է նաև սալար Խոր. Գ. 17. Պատմ. ներս. հյր. 69. Մեսր. Եր. սալարանի Գր. երէց (տպ. Ուռհ. էջ 404), գունդսալար Արծր. առանձին տե՛ս նաև սպասալար։

=Սասանեան պհլ. سالار sālār «զօրապետ», որ և մանիք. պհլ. סאראר sārār (կարդա՛ sālār) «գլխավոր, առաջնորդ» (Salemann ЗАН 8 (1908), էջ 102). սրա հետ նոյն են պազ. sālār «զօրապետ, զօրագլուխ», պրս. سالار sālār «զօրագլուխ. 2. առաջնորդ ժողովրդեան»։ Աւելի հին ձևն է Արշակունեաց պհլ. sardār, որ ծագում է հպրս. *sāraδāra «գլխաւոր» բառից։ Գրանւում է նաև զանազան բարդութեանց մէջ. ինչ. puštīkpān-sardār «փուշտիպանաց սալար», pēšīnīkān-sardār «պալատական պաշտօնաւորների գլխաւորը», artēštārān-sardār «բանակի բարձրագոյն հրամանատարը» (տառադարձուած Ἀρταστδαραναισάνης բստ Պրոկոպիոսի), vāstryōšān-sardār «կալուածական տրոց ընդհանուր վերատեսուչ», պազ. spāh-sālār «բանակի հրամանատար, սպասալար», rama-sālār «հօտապետ, առաջնորդ հօտի», պրս. xuān-sālār «արքայական մատակարար, խոհարարապետ»։— Հիւրշ. 235, 514։

Նախ՝ Աւգերեան, Լիակ. վրթ. սրբոց Ը. 39 դրաւ պրս. sālār ձևի հետ. նոյնը նաև ԳԴ, ՆՀԲ, Lag. Urgesch. 618, Beitr. bktr. Lex. 50 ևն։

ՍԱՂԱՐԹ (ի, ի–ա, ու հլ. գրուած նաև սաղարդ) «կանաչ տերև, տերևալից ճիւղ» Խոր. Պղատ. օրին. Լմբ. «փխր. երկար թողած մազ, վարս» Նար. որից սաղարթանալ «ծաղկիլ, կանաչիլ, ուռճանալ» Ոսկ. յհ. ա. 31. սաղարթաթափ Պիտ. փիլ. սաղարթախիտ Թէոդ. խչ. ոսկեսաղարթ, ներգասաղարթ, բարեսաղարթ, գեղասաղարթ, զուարթասաղարթ, բանձրասաղարթ, լայնասաղարթ, լուսասաղարթ, խուռնասաղարթ ևն, բոլորն էլ յետին։

ՆՀԲ յծ. լտ. saliens «դուրս ցատկող, խայտացող»։ Հիւնք. սարդ բառից։ Scheftelowitz BB 28, 282 և 29, 22 իբրև բնիկ հայ կցում է սանս. çala, çalala, çalāka «դաւազան, ճպուռ» բառին, որի ցեղակիցներն են յն. κῆλον

«նետ», իսլ. cail «նիզակ», հին պրուս. kelian «նիզակ» ևն. -արդ մասնիկ է հայերէնի մէջ, կրկնում են Boisacq 448 և Pokorny 1, 431 կասկածով։

Սաղարկել տե՛ս Սալարիլ։

***ՍԱՂԱԻԱՔ** «նուէր, ընծայ». մէկ անգամ ունի Կիր. էջ 223. Ջմի որդի խալիֆային հրամայեաց որդւոյ իւրում սպանանել և զմիւս որդին տալ գետոյն Տիգրիսի սաղաւաթի։

=Արաբ. صلوات ṣalavāt «նուէր»։

Ուղիղ մեկնեց նախ Ալիշան, հրտր. Կիր. (անդ)։ Վերջին անգամ Աճառ. Հայ նոր բառեր հին մատ. Ա. էջ 82։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 45 ա-բար. սաղ «առողջ» բառից, իբր «կենդանութիւն»! (բայց صاغ sağ Թուրքերէն է և կարելի չէ Թուրքերէն բառին արաբերէն մասնիկ կպցնել)։

***ՍԱՂԱԻԱՐՏ** (յեռնաբար ի, ի–ա հլ. գրուած նաև սաղավարտ) «պինւորականի երկաթէ կամ պղնձէ գլխանոց. 2. արքունի պաշտօնեաների խոյր. 3. քահանայի, մանաւանդ եպիսկոպոսի Թագ» ՍԳր. Եղիշ. Ղեւոնդ. Պարզ. որից սաղաւարտաւոր Եզնկ. իդ. 24. լը. 4. Բուզ. դ. 20. սաղաւարտել Եզնկ. լը. 5. Եղիշ.—մհյ. սաղուարտ Անսիղք 31։

=Հիւս. պհլ. *sārawart(i) «գլխանոց»< հպրս. *sāravarti- «գլխի ծածկոց» բառից փոխառեալ. (Հայերէնի մէջ իրան. r–r տարանմանութեամբ դարձել է ղ–r). այս իրանեան ձևերը աւանդուած չեն, բայց նոյնն են հասատատում ասոր. փոխառեալ ܣܪܒܪܬܐ sanvartā «սաղաւարտ» և առանց -ti մասնիկի իրանեան ձևերը, զնդ. sāravāra- և պհլ. sārvār «սաղաւարտ»։ Բոլորն էլ ծագում են sār «գլուխ» և var- «ծածկել» բառերից. -ti մասնիկը գտնում ենք նաև վարտիք բառի մէջ (տե՛ս անդ)։—Հիւրշ. 235։

Նշ. լծ. լտ. galea «սաղաւարտ» և հյ. աւարտ կամ վերտ, իբր սաղարի գլխարկ։ Böttich. Rudim. 48, 173, Lag. Urgesch. 34 (302), Ges. Abhd. 72, Beitr. bktr. Lex. 46 ասոր. sanvart և իրան. sarabara (ըստ Խիդորի), իբր çiras և var բառերից։ Justi, Zendsp. էջ 294 զնդ. sāravāra ձևի տակ։ Տէրվ. Նախալ. 74, 106 սար «գլուխ»+var «ծածկել»։—Հինք. սկաւառակ բառից։ Վերի ձևով մեկնեց Meillet, Յուշարձան 211։

Գիր.—Պլ. Սեբ. սաղավարդ, Մշ. Ջղ. Սչ. սաղավարդ՝, Ախց. Մրդ. Ննխ. Շմ. սաղավարթ, բոլորն էլ «պատարագչի Թագ»։

ՍԱՂԳՐԻԻ «մի տեսակ Թռչուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Տաղ. «Սաղգրիւն երթայր ընդ սաղն ի վայր, Շատ մի ճանապարհ ու չիտնչենայր, Բոլոր ծովուն առնու չամբար, Մարդ ի յիրեանց հոգըն չկայր»։

Գտաւ ու մեկնեց Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 582։

ՍԱՂՄՆ, ն հլ. (սեռ. սաղմին ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «սերմ արգանդի մէջ» Ել. իա. 22. Կոչ. Ոսկ. յհ. ա. 11. նաև սաղմ, ի հլ. «նոյն նշ.» Մծբ. Կիւրղ. ծն. որոնցից սաղմնաւորիւն Ոսկ. յհ. ա. 24. սաղմնագգեցեալ Կնիք հաւ. 179. սաղմարոյն մզաւճ «տղընդեր, սաղմի շապիկը, ընկերք» Ոսկ. մ. ա. 4. սաղմել կամ սաղմնել «բեղմնաւորել» Պետր. սիւն. 18. սաղմնաճել Յօթնադր. սաղմնաբաճուրիւն (նոր բառ) ևն։

ՆՀԲ սերմն կամ սեղմ բառից։ Տէրվ. Altarm. 91, 99 սերմն բառի հետ (տե՛ս սեր)։ Հինք. սերմն բառից։ Անդրիկեան, Բազմ. 1903, 367 լտ. caro, carnis «միս» բառի հետ։ Meillet, Յուշարձան 211 հյ. սան, սուն, սնանիլ արմատից՝ իբր *սան–մին ձևից, տարանմանութեամբ ն>ղ ձայնի? Scheftelowitz BB 28, 284 սանս. çarīra «մարմին» բառի հետ։

***ՍԱՂՄՈՍ** (յգ. սեռ. –ացւ, գրծ. –իւք, իսկ Ոսկ. ես. 367 ունի սաղմոսից) «քնարերգական նուագ (երբայեցւոց). 2. յատկապէս՝ Դաւիթ մարգարէի երգերը և նրանց հաւաքածոն» ՍԳր. Կորիւն. Եղիշ. 36խ. որից սաղմոսել Նեհմ. ժբ. 28. Ա. Եզր. ե. 60. սաղմոսաճուագ ՍԳր. Ագաթ. սաղմոսասաց ՍԳր. սաղմոսակից Վկ. գէ. 23. սաղմոսարան ՍԳր.

կոչ. Ագաթ. սաղմոսութիւն *նշագր.* սաղմոսերգու *կոչ. ևն։*

=*Յն.* ψαλμός «սաղմոս» *բառից. այս բառը ծագում է* ψάλλω «քաշել, աղեղը լարել, թրթռացնել, քնար հարկանել» *բայից* (Boisacq 1073) *և հին յն. նշանակում է «աղեղի լարում, թելաւոր նուագարան, քնարի վրայ երգ»։ Սրանից ևն փոխառեալ նաև լտ.* psalmus, *անգլ. գերմ.* psalm, *ռուս.* псаломъ, *ֆրանս.* psaume *ևն։ Մեր մէջ դիտական ձևները են համարւում* փսալմոս, փսաղտ *ևն, որ առ՛ս առանձին։ Մեր բառի հետ յատկապէս համեմատելի են հրգ.* psalmo, *որ շրթնականի անկմամբ շատ անգամ դառնում է* salm, salmo, *սպան.* salmo, *դան.* psalme *և շվեդ.* psalm, *որոնք հնչւում և նոր ուղղագրութեամբ գրւում են դան.* salme, *շվեդ.* salm «սաղմոս» (Poestion, Lehrb. d. schweð. spr. 25)։—*Հիւրշ. 376։*

Հներից լմբ. աղ. յոչ. մեկնում է. «Այլ թէ ընդէ՞ր է սաղմոս անուն սորա. յորժամ ի յունականէն զանուանս զօրութիան քննեմք՝ ուսանիմք. քանզի փսալմոս Թարգմանի առ ի մերս փոդովք»։ Վրդն. աղ. ճծա, էջ 514 աւելի նմանութեամբ մեկնում է «Սաղմոսարան, որ է աման և կազմարան բնութեանս յարգանդի մօր» (իբր սաղմ բառից)։ Տաթև. ամ. 153՝ Սաղմոսն երգ լսի։ Նորերից ուղիղ մեկնեց նախ Schröder, Thes. 47, *նոյնը նաև ՀՀԲ, ՆՀԲ ևն։*

Գիւռ.—Ջղ. Սլմ. վն. սաղմոս, սաղմոց, *Ախց. Երև. Համշ. Սչ.* սաղմօս, *Խրբ. Պլ.* սաղմօս, սաղմօց, *Ննխ.* սաղմօս, սաղմօց, սամօց, *Սլշ. Մշ.* սաղմոց, *Ակն. Կր. Ռ.* սաղմօց, *Գոր. Ղրբ. Մկ. Շմ. Տփ.* սաղմուս, *Տիդ.* սաղմուս, *Սեբ.* սաղմէօս, *Սվեդ.* սաղմիւս, *Ասլ.* սաղմէօ՝ս, *ՋԹ.* սաղմիւս, սաղմիւց, *Մրղ.* սաղմուխ, սաղմուխց, սաղմըխ, սաղմըխց։ *Այս բոլորի մէջ* -ց *վերջաւորութեամբ ձևերը յառաջացած են* Գործոց, ճաշոց, Մաշտոց *բառերի նմանութեամբ։*

*ՍԱՂՄՈՍԱՍԱՑ (ի-ա *հլ. բստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի*) «սաղմոսասաց, փոխասաց դպիր» Կանոն. ՅՀ. իմ. առ. էջ 22, որից* սաղմոսողգութիւն *նշագր. 74, Լմբ. մատ. էջ 139, Վրք. հց. Բ. 554։*

=*Յն.* ψαλμῳδός «սաղմոսասաց» *բառից, որ կազմուած է* ψαλμός «սաղմոս» *և* ᾠδός «բան, խօսք» *բառերից։ (Ջունի* Bailly, *բայց դիտէ* Sophocles *էջ 1178ա)։—Աճ.*

ՆՀԲ «ի բայէս ոգել, *յն.* λέγω *կամ* աղաղակել, *յն.* ὀλολύζω, *լտ.* ululo»։ *Հիւրշ. 377 մոռացել է յիշել։*

ՍԱՂՈՅՑ. *անսովոր բառ. մէկ անգամ ունի Կղնկտ. հրտր. Էմինի, էջ 126. «Զարգանակն լափէին և նովին պարարտական սաղոյց անլուայ աղտիւքն...» (հրտր. Շահն. Ա. 272* սառոյց, *իսկ Հայսպատում Բ. 223 բ* պարարտակ անսաղոյց անլուայ)։ *Եթէ սառոյդ է սաղոյց, կարող է նշանակել «իւղոտ, ճարպոտ», իսկ եթէ պէտք է ընդունիլ* անսաղոյց, *նշանակում է «անլուայ», իբր *սաղուցանել «լուալ» բայից։*

Նորագիւտ բառս հրևան հանում և քննում է նախ Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Ա. 35, ուր յիշում և մերժում է եակութ. sāl, *թթր.* šalγan, *կոյբալ. կարագաս.* salgan «իւղ, ճարպ» *բառերի համեմատութիւնը։ (Կայ նաև արաբ.* سلا salā «կարագը հալեցնելով՝ քամել» *կամուս, Բրք. Բրգմ. Ա. 29)։ Մատ.* Тексты и Раз. по Кав. Фил. *Հտ. 1 (1925), էջ 95 ռուս.* сало «ճարպ» *բառի հետ։*

*ՍԱՂՎԻՆ. «մի տեսակ խոտ. տճկ. տիղ օթու». *դիտէ միայն ՓԲ. Հնի՞ց է աւանդուած, թէ նորահնար։*

=*Լտ.* salvia «զոպայ, sauge, *Բրբ. աստա չայի»։—Աճ.*

*ՍԱՃ «մի տեսակ մեծ ծառ. *լտ.* tectona grandis» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2690։*

=*Արաբ.* ساج sāj «հնդկական մի մեծ ծառ». *ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 414։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՍԱՃԱՋՆԻՆ. «անծանօթ մի բոյս է» *Բժշ. (շատ անգամ յիշուած). ունի միայն ՀԲուս. § 2691։*

ՍԱՄ «սմայ կամ չափ», սամէ «նոքայ»,

սեղայ «սմայ». երեքն էլ ունի միայն Բառ. երեմ. էջ 280, 283։

*ՍԱՄԱՂ «մի տեսակ քար» Էփիմ. 247. «Յեսան և սամաղքարն, մահաքն և այլ սոցին նման սալացեալ քարինքն»։

=Արաբ. سمّاقى summāqī «ծիրանաքար» (աղաւ. թրք. somaqi)։—Ա՛ճ.

Սամայել տե՛ս Սադայէլ։

ՍԱՄԱՐՏԻԿՈՍ. անասոյզ բառ. մէկ անգամ ունի 3՛հ. կթ. 30. «Սամարտիկոս շփոթութեամբ զմիմեամբք ելեալ և այր ընդառն ի կռիւ կաքաւեալ»։ Հին բռ. մեկնում է «փառասէր», Լ՛հ. «ծաղրածու», Բառ. երեմ. էջ 280 «փառասէր կամ քերթող», ՆՀԲ և ՋԲ «խռովայոյզ», ԱԲ «բարբարոսական». և անշուշտ այս վերջինն է ուղիղ. Համմ. Խոր. Ա. 31. «Քանզի շփոթ իմն ամբոխից լեալ, այր զարամբ ելանէին»։

ՆՀԲ «յն. լտ. σαμάρδακος «խաբեբայ, ծաղրածու», այլ աստյգ. ևս երևի՝ իբր շամբրտական, սամարացւոց նման, խառնակ, խռովայոյզ»։

ՍԱՄԲԱԿ «բառ». ունի միայն Բառ. երեմ. էջ 280։

ՍԱՄԷՆ «պատրաստ». ունի միայն Բռ. երեմ. էջ 280։

+ **ՍԱՄԻ** (միայն անհզաբար գործածուած, յզ. սեռ. սամեաց) «լուծի երկու ծակերից անցուած կրկին փայտերը, որոնք նրան վզի երկու կողմերից իջնելով՝ վզի տակ կապով միանում են իրար» Բրս. մկրտ. Նար. երգ. և յովէդ. «նաւի ղեկ» Ոսկ. փիլիպ. 488 Բ. տիմ. և տիտ. Սեբեր. որից սամեախ «սամիի կապը» (գրծ.-տեօ) Սիր. իր. 24, լ. 27, որ և սամեակ, երեմ. ե. 5. Սեբեր. Ոսկ. ես. *սամեա (գրծ. սամեախ) Յոբ. լթ. 10, Ոսկ. ա. տիմ. Սեբեր. սամետայք Մխ. երեմ. սամոսիք Ոսկիփ. Նար. տաղ. 473. սամեակեմ Տաթև. ամ. 275։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'am- արմատից կամ k'emiyā-? ձևից. համմ. սանս. ç|ámyā-«լուծի հաւուկը, փայտէ սեպ, յեցակ, ցից», yugaçamya «լուծը և հաւուկը միասին», զնդ. simā- «ձիու խամութ», simōiθrā- «լուծ», պրս. sīm «սամի, այն՝ զոր երկրագործք պարանաւ յերկոցունց կողմանց լծոյն կապեն ի պարանոց եղին», ասս sama «սամի», յն. κάμαξ «ուղղաձիգ եղէգ, գաւազան, ճպուռ, յեցակ, գեղարդի կամ թիի կոթ», հրգ. hamo «կարթի փայտը, կարթ», գերմ. hamen «ձուկ որսալու քսակաձև ցանց», մրգ. hamel «ձող», շվեդ. դան. hammel և նորվ. humul «կառքի կամ սայլի փոկակալ» (Boisacq 401, Pokorny 1, 385, Horn § 764): Pokorny հնխ. արմատը դնում է k'em- k'am- «ձող», որոնցից միայն երկրորդն է յարմար հայերէնի (k'em- պիտի տար *սիմ). Հիւբշ. դնում է սամի<հնխ. k'emiyā? չի կարող հայ բառը փոխառեալ լինել իրանեանից, որովհետև այս պարագային սպասելի էր *սիմ կամ *սամակ։—Սամեախ ձևի համար տե՛ս ախ «կապ»։—Հիւբշ. 488։

ԳԴ պրս. սէմէ, սէյմ։ ՆՀԲ յիշում է արաբ. սէյմ, երկականն՝ սէմբգ։ Peterm. յն. κημός, Lag. Urgesch. 619 սանս. çās արմատից, յն. κημός, սանս. *çāsma: Պատկ. Изслед. յն. κημός, պրս. sima: Justi, Dict. Kurde 233 քրդ. պրս. արաբ. ձևերի հետ։ Հիւնք. պրս. սէմէ, արաբ. սէյմ, թրք. սէմբ իփի։ Ուղիղ մեկնեց Bugge KZ 32, 34։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Խրբ. Կր. Մշ. Սլմ. Վն. սամի, Գոր. սա՛մի, Ղրբ. սա՛մբէ, ՋԲ. Մկ. սամբ՛, Հւր. սամբ՝, Սվեդ. սամա, Ախց. սամ։ Նոր բառեր են սամեթել, սամեթեռ, սամեխեղդ, սամեփայտ. իսկ Համշ. սամին «սայլի կամ կառքի ձող, որ լուծին են կապում»։

ՓՈՒ.—Քրդ. سامی sami «եղները լուծին կապելու անուր», ուտ. սամի «սամի», սամէա «սամիտիք», թրք. գաս. Թորթումի՝ սամի «սամի» (Շիրակ 1905, 425)։ Հայերէնից պէտք է լինին նաև թրք. كمه semek «սամի», արաբ. سميق samīq «սամիի մի փայտը», سميقان samīqān «սամիի երկու փայտերը». (արաբ. բառերը բոտ Կամուս, թրք. թրգմ. Բ. 929 պարսկերէնից են փոխառեալ. բայց չկայ պրս. *samīk ձևով բառ. կարելի էր սպասել պհլ. *samak ձևը, որ

նոյնպէս անյարմար է. ուստի պէտք է դնել հյ. սամիխ յոդնակի ձևից)։

ՍԱՄԻԹ «մի տեսակ համեմային ուտելի բանջար. տճկ. ռէզենէ, լտ. anethum» *Մտթ. իգ. 23. Վեցօր. 186. Վստկ. 91. Բժշ. Գադիան. որից* **սամբաջուր** *Մանդ. էջ 210= Մանդ. սիր. 13։*

=*Համմ. պրս.* شبث šibit, *գւռ.* šivid, *արաբ.* شبّث šibiθθ, *ասոր.* ܫܒܬ šəbeθθā *որոնք բոլոր նշանակում են «սամիթ» և անշուշտ պատկանում են նոյն ընտանիքին։ Յիշուած ձևերի հետ նոյն են նաև ասուր.* ši-be-tūm=*բբր.* šabītā «anethum gra veolens» *բատ* Muss-Arnolt. Ass. Handwb 1008: *(Կայ նաև արաբ.* سنّوت sannūt *կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 309—310, նոյն նշանակութեամբ)։ Բայց ի՞նչ է հայերէն ձևի ծագումը, որ ո՛չ կարող է պարսկերէնից և ո՛չ էլ ասորերէնից ուղղակի փոխառեալ լինել—Հիւբշ. 236։*

Lag. Ges. Abhd. 82 *և* Arm. Stud. *§ 1939 համեմատում է վերի բառերի հետ։*

Գիւռ.—Ագլ. Ախց. Դոր. երև. Խրբ. Կր. Նախ. Ռ. Տփ. **սամիթ**, *Ասլ.* **սամիթ, սամի՛**, *Ջղ.* **սամիթ, սամեթ**, *Ղրբ.* **սա՛մրէթ**: *(Այս բոլորը նշանակում են տճկ.* **թէրօդօթի**, *ռուս.* укропъ, *ֆրանս.* fenouil, *վն.* **ռէրադօթիկ** *կոչուած ընտանի համեմային բոյսը)։ Նոր բառ է* **սամբահոտ**:

Փոխ.—Բրբ. գւռ. Ակն. semit «*սամիթ*»։

***ՍԱՄՈՑՐ** (ի–ա *հլ. բատ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «*ազնիւ մուշտակ ասող մի անասուն (այս իմաստով չէ գործածուած). 2. նոյն անասունի մորթից շինուած ծանրագին մուշտակ*» *Ոսկ. ես. 439. Բուզ. Եղիշ. է, էջ 106. Արծր. որից* **սամուրենի** *«սամոյրի մուշտակ» Բուզ. գ. 2։*

=*Պհլ.* samör *կամ* samūr *«սամոյր», յն. տառադարձուած* σάμωρ, *պրս.* سمور samūr *«սամոյր». փոխառութեամբ տարածուած է շատ հնուներր. ինչ. ասոր.* ܣܡܘܪܐ samūrā, *արաբ.* سمّور sammūr, *վրաց.* სამური samuri, *բրդ. Բրբ. գնչ.* samur, *յն.* σαμούριον, *նյն. σαμοῦρι, հին ֆրանս.* samarre, *ֆրանս.* simarre, *անգլ.* simar, *հսլ.* samurinŭ, *ռում.* samur, *սպան.* zamarra, *հւրոպականների մէջ ռնգականի փոփոխութեամբ՝ մլտ.* sabellum, *իտալ.* zibellino, *հֆրանս. անգլ.* sable, *ֆրանս.* zibeline, *գերմ.* Zobel, *ֆինն.* sopoli, *լիթ.* sabalas, zabels, *ռուս.* соболь *են։— Հիւբշ. 236։*

Նախ ԳԴ դրաւ պրս. **սէմմուր**: Böttich. Arica *27, 91*, Lag. Ges. Abhd. 71, 226 *պրս.* samūr, *պհլ. ոլմաթ ձևերի հետ։ Մառ,* Тексты и Раз. по Кавк. фил. *1 (1925), էջ 121 դնում է Թուրանական ծագումից. Համմ. գւռ.* **սվորիկ** *«ճագար», վրաց.* წავი ծավի, წვავი ծվավի *«կուղբ»։*

Գիւռ.—Մշ. Պլ. **սամուր**, *Ախց. Սեբ.* **սամուռ** *«մուշտակը»՝ անշուշտ նոր փոխառութիւն են Թուրքերէնից։*

ՍԱՄՈՒԽ *«մկնականջ, անմոռուկ,* myosotis» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2696. (գիտէ նաև ԱԲ* **բզռուկ** *«մկնականջ» բառի տակ). Տիրացուեան,* Contributo § 354 *համարում է* «anagallis arvensis L, *տղրկախոտ կամ անճարակ»։*

Աճառ. ՀԱ 1908, 124 փոխառեալ է դնում արաբ. سمسق samsaq, simsaq, sumsaq, samsuq *«յասմիկ», բայց նաև «մկնականջ,* myosotis» *(Կամուսի Բրբ. Բրգմ. Բ. 351 և 929) բառից և բատ այսմ* **սամուխ** *ձևը ուղղում է* **սամսուխ**:

***ՍԱՄՍԱՐ** *կամ* **ՍԵՆՍԱՒ** *«Թուբինեանց ժամանակ սոորին մի պաշտօնեայ, որ խանութներից հարկ էր հաւաքում». որից* **սամսրշէֆ**. Karst, *Դասան. II 79, 234։*

=*Արաբ.* سمسار samsār, *որ յառաջացած է լտ.* censarius *բառից (այս էլ* censere *«հաշուել» բայից)։*

Ուղիղ մեկնեց Karst, *անդ։*

ՍԱՄՍԱՐԵԼ *«բայլիւղ ժամանակ կոտրատուիլ, նաղել» Ոսկ. մ. բ. 24. ուրիշ վկայութիւն չկայ։*

ՍԱՄՍԻ *«բոզ». ունի միայն ԱԲ իբր անասոյզ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. եփես. 833. Զանգտին և զսամսի անուն կոչես զբոզն և զպոռնիկն։*

*ՍԱՅԱՅ «պարզ, անպարդ» Բրս. մրկ. էջ 383 (Սայայ քթան).—չունի Աբ։

=Աորպ. Թրք. saya «պարզ, հասարակ», որ կարծեմ թէ կրճատուած է պրս. ساده sāda հոմանիշից, ինչ. պրս. ماده māda «մատակ, էգ» դարձած է māya։ Բուրք ձեւը չունի Будаговъ, բայց գործածական է այժմ կովկասեան բարբառներում, փոխառութեամբ նաև Ղարաբաղի հայոց մէջ. օր. սայա բուղր։—Ա՛ճ.

ՍԱՅԱՐ «աղաղակ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 281։

*ՍԱՅՂԱՅ «վէճի տակ եղած մի իրի պրաւումը կամ նրա վրայ դրուած արգելքը՝ դատական իշխանութեան կողմից» Անսիպք 57։ (Նոյնը նաև սազայ, որ տե՛ս վերը և միացրու այստեղ)։

=Հֆրանս. saisia, Ֆրանս. saisie նոյն նշ.։ Տե՛ս և սայզել։

*Ուղիղ մեկնեց Անսիպքի հրատ.։

*ՍԱՅՂԵԼ «բռնել, դրաւել» Անսիպք, էջ 17, 23, 57, 71, որից սայզվիլ «հասկանալ, ըմբռնել, իմանալ» Անսիպք 29։ Տե՛ս և սայզայ, սազայ։

=Ֆրանս. saisir «բռնել. 2. ըմբռնել, իմանալ»։—Հիւրշ. 391։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Անսիպքի հրատարակիչը, էջ 16։

ՍԱՅԹԱՔ «ոտքը սահիլ». այս իմաստից է բխում «դիւրագայթ, շուտ սխալող» Փարպ. «յաջողակ, արագաշարժ» Տօնակ. նոյն արմատից՝ սայթաիլ «սահիլ, գայթիլ, շեղիլ, մոլորուիլ» Բ. մկ. ժե. 17. Ագաթ. եգն. Ոսկ. յհ. ա. 1, 3. Փարպ. սայթաւումն Ոսկ. եա. 436 (գրուած սեթաւոյիմն, այսպէս ուղղելի ըստ Վարդանեան ՀԱ 1910, 368), սայթաքումն Փարպ. անսայթաք Խոր. Նար. Տօնակ. դիւրասայթաք Սկևռ. աղ.։

Նշ՛ գայթել աքեաց կամ աքեօք (իմա՛ գայթ-աք)։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 սաքթաքել ձևի հետ՝ իբր ուճկ. սէքմէք, սէքիքմէք «ցատկել»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 96 մինգրր. zirtua «սահիլ» բայի հետ։

*ՍԱՅԼ, ի հլ. (յետնաբար կայ գրծ. -ով, -oլ) «եզան կոշտ կառք» ՍԳր. «փխր. Մեծ և Փոքր Արջ համաստեղութիւնները, որոնք սայլի ձև ունին» Յոբ. թ. 9. Շիր. 48, 49, 73. Փիլ. «հիւսիսային բևեռ՝ Փոքր-Արջի համաստեղութեան ծայրը, որ երկնակամարի անշարժ կենտրոնն է» Արիստ. աշխ. «հիւսիս» Փիլ. եր. էջ 533. իմ. էջ 75. Իրեն. ցոյցք 26. «առանցք» Նիւս. կազմ. «ԳՉ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամառունի, Հայոց բառ ու բան, էջ 582). որից սայլակ Եփր. ա. թգ. և ա. մն. սայլակերպ աստեղմ Վեցօր. 135. սայլաւուն «թափառական, վաշկատուն» Ոսկ. բ. կոր. ժե. սայլորդ Խոր. կամճասայլ ՍԳր. Ոսկ. մ. բ. 27. Բուզ. սայլաթափ «Մեծ Արջի համաստեղութիւնը» Զքր. կթ. (տե՛ս Հին հաւ. էջ 112), սայլապան (նոր բառ) են։

=Փոխառեալ է փոխադ. *satilja ձևից, որից փոխառեալ են նաև յն. σάτιλλα «Բոլոր աստեղաց, Մեծ Արջի համաստեղութիւնը» (Հեսիքիոս), σατίνη, լգ. σατίναι «սայլ, կուռի կառք». (մէկ մէկ անգամ գործածուած Հոմերոսի և Անակրէոնեան մի հատուածի մէջ)։ Սրանց Փոքր-Ասիական ծագումը յայտնի է։

Հիւնք. հյ. լատ կամ Թրք. սալ «լատ» ձևից։ Վերի համեմատութիւնը տուաւ Lidén, Ett grekiskt lånord, Comm. phil. 159—163 (ՀԱ 1905, 191), որ կրկնում են Boisacq, էջ 854 և Pokorny 1, 339։ Պատահական նմանութիւն ունին սանս. çal «երթալ, վազել», çalāṭa «մի սայլ բեռ»։

ԳԻՒ.—Սեբ. սալ, Խրբ. սոլ, Ալշ. Երև. Կր. ՀԿ. Մշ. Սլմ. Վն. Տփ. սէլ։ Նոր բառեր են անսայլ, սայլգնայ, սայլհարի, սայլրնկեր, սայլտր։

ՓՈԽ.—Թրք. գտ. Կր. sal «սայլ» (Բիւր. 1898, էջ 627)։

ՍԱՅԼԻՏ «աթոռ, գահ». մէկ անգամ ունի Կիր. պոմ. տպ. Վենետ. էջ 53։

Նշ՛ լծ. լտ. sella, sellula, իսկ Կիրակոսի հրատարակիչը դնում է յն. σέλλα, «յորմէ և սելին ասէ Մատթ. Ուռհ. և հնագոյնք քան զնա»։

ՍԱՅՆ «կարգ, վիճակ, աստիճան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տիմոթ. կուզ. էջ 26. «(Քրիստոս)

ընդ ամեն սայնս աղքատութեանս մերոյ անցանելով՝ մինչ ի մահու ժամանեաց փորձութիւն»։

Անստոյգ և կասկածական բառ (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 97)։

**ՍԱՅԱՆ «հովանոց». նորագիւտ բառ, որ գործածւում է յետին հայերէնի մէջ. օր. Զինչ շատ հեծելով սուլտան, զարնեն ցեղք ի ցեղք սայվան, կէսքն սարերովն գան՝ ժողով ի բուրաստան գան (Կոստ. երզն. 173). Իմ սիրոն է դինու սայվան (Կոստ. երզն. 175)։*

=Պրս. سایوان sāyavān (կարդացւում է նաև sāyvān) «հովանոց», որ կազմուած է سایه sāya «հովանի, ստուեր, շուաք» բառից։

Ուղիղ մեկնից Պոտուրեան, հրտր. Կոստ. երզն. 203։

ՍԱՅՏ «պարզ օր». նորագիւտ բառ, որ մէկ քանի անգամ գտնում եմ գործածուած էֆիմ. էջ 149, 153, 155. «Յունվարի 11. պարզ է (օդն) և սայտ. Մարտ 17 սայտ է և սերկևիլի ծառ ծնկելն լաւ է. Ապրիլ 11 սայտ և շնորհաւոր է յոյժ այս երկու օրս»։

ՍԱՅՐ, ի հլ. «Թուրի բերան» Բ. մկ. ե. 11. Գ. մկ. զ. 4. Ոսկ. երր. «լեռան ծայրը» Մաշկ. որից սայրասուր «բերանը սուր» Նար. Լմբ. Շնորհ. Յայտմ. սայրադիր «սուրի ծայր» Սիր. լգ. 31. սայրուց «նաւի քի՞թը կամ կոդերը» Ոսկ. եփես. 871. երկսայրի ՍԳր. երեսսայրի Վրք. Հց. երեսսայր Կնիք Հաւ. 315. եռասայր Մխ. երեմ. միասայրի Նեեմ. դ. 18. կրկնասայր ԱԲ։ Բառիս երկրորդ ձևն է ՍԱՅՈՐ, որ յիշում է ՀՀԲ «լեռան գլուխ» նշանակութեամբ, առանց վկայութեան. որից ձևացած են սեռ «լեռան մէջքը» Օրբել. 150 (Ելանէ ձորովդ ի վայր ի Սևաջուրդ և ի վեր ի սար վանաց ձորոյ սեռիւդ). Արձ. 1323 Բ. =Վիմ. տար. 161, բնասեռ «նոյն նշ.» Օրբել. 149, 169 (Անտի ի բլուրդ որ ի շինագլխիդ, և անտի ջրթափուն յՄաերջաց գաւակ և բնասեռիւդ ի Վարդանայ մարգի խորոն. Եւ ի հիւսիսոյ դհձաց բնասեռովն ի վայր ի գետն հանդէպ Խոտոյ և Քարաձորին մեծ բնասեռովն ի սարն). որ և բնասար Օրբել. 149 (Եւ յարևմտից կողմանէ Լորաձորդ բնասարաւդ. հմմտ. Այտնեան, Քնն. քերակ. էջ 143). միասեռի «միասայրի, մի բերանով (սուր)» Կղնկտ. հրտր. էմինի, էջ 84=Շահն. 209)։

ՆՀԲ լծ. ծայր։ Հիւնք. սէր բառից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 117 հնխ. k'ə «սրել» արմատից. հմմտ. սանս. çiçāti «սրում է», լտ. cōs «սրոց», catus «սուր», նոյն ընդ հյ. սուր, սանս. áçri, յն. ἄκρις։ (Ընդունում են Walde 142, Pokorny 1, 454, Petersson, Ar. u. arm. Stud. 110): Scheftelowitz BB 28, 284 և 29, 55 սար «բարձրութիւն» բառին արմատակից դնելով՝ կցում է պրս. գւռ. sir «գլուխ»։ Թիրեաքեան ՀՄ. 1912, էջ 288 և Արիահայ բռ. 328 պրս. ser «գլուխ» բառից, նոյն ընդ ծայր, սար։

ԳԻՒ.—Բառիս երկրորդ ձևը պահում են Ղրբ. սէռ, Շմ. սըռ «երկու մակարդակների միացման գիծը, ligne d'intersection, arête». օր. պաճի սեռը, ֆարի սեռը, բայց մասնաւորապէս մէջքի սեռը «թիկունքի մէջտեղի ուղղահայեաց գիծը», լեռան սեռը «լեռան՝ հորիզոնի հետ միացման գիծը»։ Սրանք ցոյց են տալիս՝ որ սայր բառի բուն իմաստը պէտք է դնել ո՛չ թէ «սուր կողմ», այլ «ծայր»։

ՓՈԽ.—Մաո, Ипполитов 65 հայերէնից է համարում վրաց. ხერხი սեռի «լեռ», իբր այ>ի, ձայնափոխութեամբ։

ՍԱՆ, ի հլ. (բայց նորագիւտ բ. մն. լե. 13 ունի գրծ. սանուի, որ կարելի է ուղղել սանելի) «մեծ կամ փոքր կաթսայ» ՍԳր. Պիտ. Մագ. որից սանակալ «կասկարայ» (Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. 1788 Սանկպ. էջ 226, ռուս. маганъ)։

Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. 157 Թիֆլս պրս. (թրք. և արաբ.) صحن ṣahn, ṣahan «կաթսայ»։ Հիւնք. արաբ. սահն։ Bugge KZ 32, 86 փոխառեալ է կովկասից. հմմտ. հիւրկ. šang, ավար. ḫag, օսս. ag «սանն»։

+**ՍԱՆ**, ու հլ. «իբր զաւակ ձևոքի տակ սնուցած ու մեծացրած տղայ» Բուզ. Մծբ. Ագաթ. Եղիշ. «կնքահօր կնքած մանուկը» Կանոն. Շնորհ. ընդհ. որից սանական «որ-

դեգրեալ, որդիացեալ» Ագաթ. սանակից *Կանոն.* սանահայր, սանամայր *Գնձ. Մեծոբ.։*

=Բնիկ հայ բառ. ստորին ձայնդարձն է սին, սուն արմատի. նշանակութեան զարգացման համար համմտ. լտ. alo *«սնուցանել» և* alumnus *«սան»։ Ծագումը տե՛ս ընդարձակ ստին։—Հիւբշ. 456։*

Նշ Բ «յորմէ սնանիլ և սնուցանել»։ Lag. Urgesch. 612 *սանս.* çās *և հյ.* սնանիլ *ձևերի հետ։* Canini, Et. étym. 94 *սանս.* sū, sūn *«ծնել» արմատի հետ։ Տէրվ. Նախալ. 73* սուն, սին, սոճի *են ձևերի հետ հնխ.* çu, çvan *արմատից։ Գասապեան, Բիւր. 1890, 155 անդլ.* son *«որդի» բառի հետ։ Հիւնք.* սնանիլ *բայի հետ՝ ծին արմատից։* Osthof, Et. Parerga 7—8 *ծան. տե՛ս* սուն։ Scheftelowitz BB 28, 283 *յն.* κοναρός *«լաւ սնուած» բառի հետ։* Liden, Göteborgs högskolas årsskrift 1933, *էջ 51 մերժելով տրուած մեկնութիւնը՝ կըցում է օսս.* sän-igk *«վեցամսեայ ուլ» բառին։*

Գիմ—Ալշ. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ջղ. Ռ. Մշ. Սեբ. Տփ. սան, *Ասլ.* սա, *Ջթ.* սոն, *Հճ.* սօն, *Սվեդ.* սուն, *Ագլ. Ախց. Երև. Վն.* սանիկ, *Սլմ.* սանիկ[1], *Համշ.* սօնիգ *(որոնք միւսների մէջ փաղաքշական են). իսկ Սչ. միայն* սանրևար, սանրմար *ձևերի մէջ պահուած։ Նոր բառեր են* սանուկ, սանալաք, սանահարանճ, սանապապ. *Թրքախօս հայոց մէջ՝ Ասն. էնկ.* սան, *նաև էնկ.* սանայէր *«պարզամիտ» (Բիւր. 1898, 865), որ ձևափոխուած է* սանահայր *բառից։*

Փոխ.—Ուտ. սանամար *«սանամայր»։*

ՍԱՆԱՄ *«սպանդ խոտը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2698։*

*ՍԱՆԱՄԸՔԻ *«աճալ խոտը» (որի տերևները իբրև լուծողական են գործածում) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2699։*

=Արաբ. سنامكى sanāmākī *«աճալ» (բուն նշանակում է Միքքէի սանա), որ Թրք. գարձած է* sinameki *(գործածական է Պօլսի հայոց բարբառում սինամէքի ձևով). կայ և նոյնի* sanā rūmī *«յունական աճալ» կոչուած տեսակը (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 842)։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՍԱՆԴԱՍՏԱԿԱՆ *«նախատինք, թշնամանք» (անհզական գործածութեամբ). գտնում է հետևեալ վկայութեանց մէջ միայն. 1. Եւ որք զասորի լեզուն գիտիցեն, փոխանակ ընդ «ա՛յ դուն» ասելոյ, ի սանդաստականաց տեղի՝ զոհակէն ասեն. Ոսկ. մ. ա. էջ 253.— 2. Փոխանակ այնր՝ զի չետ այնորիկ ի սանդաստականաց ի բաց լինելոյ՝ առանձնէիր զպատակն վերջին. Սերեր. ժ, էջ 187.—3. Եւ չետ այնչափ սանդաստականաց և թշնամանաց անցեալ նստիցի իբրև զվիշապ և զխրատմանի. Ոսկ. պօղ. ա. 833.—4. մէկ անգամ էլ բառս գործածուած է Սիր. իթ. 35 Ծանր են այսորիկ մարդոյ, որ ունիցի միտս, սանդաստականք տան և նախատինք փոխառուի. (ձեռագրի մէջ գրուած լինելով անդաստականք, այս ձևով էլ մտել է բառարանների մէջ. բայց Ս. Գրքի վննհա. 1860 հրատարակութեան մէջ սրբագրուած գրուած է սանգաստականք, առանց որևէ նկատողութեան. համմտ. Վարդանեան ՀԱ 1921, էջ 115)։ —Սրանցից չոկ կան* սանգաստակ *Ոսկ. նխես. 833 (ի թշնամանս հառաներս, սանդաստակս կապես ի վիրայ) և* սանգաստանք *«արհամարհանք, թշնամանք» Շնորհ. մեկն. մաթ. (ի սանդաստանաց տեղի)։*

Նշ Բ մեկնում է «սարուկ անարգ՝ բախած կամ ոտկայ ձայնեալ. և թշնամանք ծառայական կարգի, անարգանք և գանք». Ջ Բ առաջին վկայութեան մէջ «անարգանք, նախատինք», երկրորդի մէջ «ծառայական սորկական վիճակ կամ վիշտ», Ա Բ «թուքումուր, ծեծուփետ, քշպելը. 2. խենդուկ ծառայ»։

ՍԱՆԴ (ի *հլ. ըստ Նշ Բ, բայց կայ միայն բց. ի* սանդէ) *«անկան, հավան» Նոնն. 31. Կաղանկտ. Վկ. գէ. 30. Լմբ. առակ. Յայտմ. դեկ. 29. որից* սանդահարել *Նոնն. 31.* սանդիտոռն *կամ* սանդատուն *Առակ. իդ. 31. Ճառընտ. գրուած է նաև* սանտ։

Նշ Բ սան *«կաթսայ» բառից, «որպէս թէ ի ձև սանի»։ Հիւնք. լտ.* sanitas *«առողջութիւն» բառից։ Պատահական նմանութիւն ունի ասոր.* ܐܣܬܐ aseθā *«սանդ», որի հետ համեմատում է*

եբր. אסינתא asīntā? (*ըստ* Brockelmann, Lex. syr. 21. *չունի* Gesenius)։

ԳԻՒՐ.—*Ալշ. Ախց. Երև. Խոջ. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Պրտ. Ջղ. Սեբ. Սլմ. Վն.* սանդ, *Համշ.* սօնդ, *Ագլ. Սվեդ.* սունդ. (*Խոջ. նշանակում է «ոտքով դարձնելու մեծ սանդ»*)։— *Նոր բառեր են* սանդարար, սանդալ, սանդաբակի, սանդծեծելուկ։

*ՍԱՆԴԱԼ, ո հլ. «*մի տեսակ հասարակ կօշիկ*» *Ոսկ. եփես. 759. Վրք. Հց. ա. 130, 698. Մշտ. ջհկ. Հին բռ. որից* սանդալաւոր *Բուզ. գ. 14 (տպ.* սանդուղաւոր), սանդալիկ *Վրք. Հց.*։—*Գրուած է նաև* սանտալ։

=*Փոխառեալ է կա՛մ պհլ.* *sandal *ձևից, որի ներկայացուցիչն է պրս.* سندل sandal, *և կամ յն.* σάνδαλον, σανδάλιον *համանիշ ձևերից, որոնք նոյնպէս ասիական ծագում ունին* (Boisacq 851)։ *Յոյնից փոխառեալ լտ.* sandalium, *ֆրանս.* sandale, *անգլ.* sandal «*հողաթափ*» *են*։

ՀՀԲ դնում է յունարէնից, ԳԴ պարսկերէնից, ՆՀԲ յիշում է յն. պրս. և լտ. ձևերը, նաև պրս. սանտալ «*մակոյկ*»։ *Նոյնը նաև Հիւնք.*։

ԳԻՒՐ.—*Ղրբ.* սնդլա «*կօշիկ, քոշ*»։

ՍԱՆԴԱԼ.—«*մի տեսակ բուժախոտ*». *Նոթագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դրնդ. 496.* «*Գառն խոտ մի կայ, որ տաճիկն չուխլամայ ասէ և հայն՝ սանդալ, որ չէ սանդալ. այլ սանդալն փայտ է կարմիր և իսպիտակ, որ ի Հնդկաց գայ. այս խոտ դեղ է ուռեցի, կրծոց, ձիոց, ջորոց և իշուց և կարի դառն է*»։

ԳԻՒՐ.—*Նր.* սանդալ «*երիցուկ, տճկ. փաթարիա, ռուս.* ռամաշկա»։

ՍԱՆԴԱԿ «*հալում, ձուլում*». *անյայտ բառ, որ մէկ անգամ ունի Ներսէսովիչ, Բառ. լտ-հյ. 220ա* (fusorius սանդակագործ)։

ՍԱՆԴԱՏ «*մի տեսակ բոյս*» (*մեկնուած է արաբ.* ալճաճարի, *որ չգիտէ Կամուս*) *Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2700*։

*ՍԱՆԴԱՐԱԿ «*մի տեսակ ներկ, կարմիր զառիկ*». *ունի միայն ՓԲ, առանց վկայութեան*։

=*Յն.* σανδαράκη, *որից և լտ.* sandaraca «*զառիկի կարմիր ծծմբուկ*». *յոյն բառը ասիական ծագում ունի. համմտ. սանս.* çandrārāga «*լուսնափայլ (որ լուսնի փայլն ունի)*» Boisacq, *էջ 851.*—*ուրիշ է* սանտարաք «*ջնարակ*» *ՀՌուս. § 1889, որ է ֆրանս.* sandaraque:—*Ա.Ճ.*

*ՍԱՆԴԱՐԱՄԵՏ, ի–ա *հլ. (յաճախաբար նաև* ի *հլ.)* «*երկրի խորագոյն անդունդները, սաորերկրեայ վիհ*» *Եզեկ. լա. 16. Ագաթ. Վեցօր. էջ 14, 16. Կոչ. Եփր. Թգ. 384. «Դժոխքի իշխանը, սադայէլ» ՅՀ. կթ. Շնորհ. Շար. որից* սանդարամետական «*սաորերկրեայք, անդնդային ոգիներ, մեռելները*» *Փիլիպ. բ. 10. Ագաթ. Մծբ.* սանդարամետային *Պատմ. աղէքս. Կիշատ. աղէքս.* սանդարամետապետ «*դժոխքի իշխանը*» *Կոչ. 97, Խոր. (կամ կրճատ՝* սանդարապետ *Կոչ. այլ ձ.), սանդարապետական Եփր. փիլիպ. 158. Նոյն է և բառիս աւելի հին ձևն է ներկայացնում* սպանդարամետ «*Դիոնիսոս կամ Բաքոս դիք շուայտութեան*» *Բ. մկ. ղ. 7. Արծր. ա. 3 (երկիր պանդոկի՝ սպանդարամետ ասաուած է), որից* սպանդարամետական «*բաքոսական*» *Բ. մկ. ղ. 7։—Ալիշան, Հին հաւ. էջ 311 արմատը դնում է* *սանդար(f) «*խոր վիհ, անդունդ, դժոխք*», *որ իբրև գոյութիւն ունեցող բառ կրկնում է Տիրոյեան, Հանրագր. էջ 586* սանդարմ «*դժոխք*» (*ջընջելի*)։

=*Պհլ.* spandāramat *կամ կրճատ* spandarmat «*երկրի դիք*», *փարսի* bīm sipendārmed «*հող, երկիր*», *պրս.* سپندارمد sipandārmad *կամ* sipandārmud «*երկիր. 2. է անուն հրեշտակի միջոց, որ վերակացու է երկրի և ծառոց և անասնոց*». (*գործածւում է նաև իբրև յատուկ անուն և սրանից են տառադարձուած արաբ.* Ispandarmēð, *արաբ.* اسفندارمذ Isfandārmad)։ *Ձնդ.* spəṅta. ārmaiti- *բառն է, որ կազմուած է* spənta- «*սուրբ*» (=*ռուս.* СВЯТЫЙ «*սուրբ*» *բառն է) և* ārmaiti «*համաստութիւն*» *բառերից. սրանով նշանակւում էր զրադաշտական կրօնի մէջ շատ յարգուած մի ոգի, երկրի ոգին, որ Արամազդի աղջիկը կամ*

հարան էր և որի պահպանութեան տակ էր գտնւում երկիրը։ Դարձել է նաև ամսանուն, իբր համապատասխան յունիսի, որից փոխառեալ է ասոր. ܣܦܢܕܪܡܕ spandarmad նոյն նշ.—Հիւբշ.։

ՀՀԲ սպանդարամետ դնում է սպանդ բառից, ՆՀԲ սանդարամետ ի բառից սան կամ սանդ, դար, մէտ: Lag. Urgesch. 1041 հյ. սպանդարամետ մեկնում է վերի ձևով, առանց յիշելու սանդարամետ բառը։ Նոյնը նաև Müller SWAW 42, 254, որից Justi, Zendsp. 53:—Lag. Ges. Abhd. 265, 293, Beitr. bktr. Lex. 45 աւելացնում է նաև սանդարամետ: Բառիս վրայ ընդարձակ խօսում է Էմին, Հայ հեթ. կրօնը (Թրգմ. Յոյս 1875, 290) և Ист. Асохика 280, որ ընդունում է թէ մեր բառը Դ—ե դարուն փոխառեալ է պրս. սաբենաամադ կամ էսբենաարմադ «աշխարհի ոգի» ձևից։ Թէև Պարսից և հեթանոս Հայոց մէջ գործածւում էր նշանակելու համար աշխարհիս մաքուր և հնազանդ ոգին, բայց քրիստոնեայ հայոց մէջ բոլորովին հակառակ նշանակութիւն ստացաւ. այն է «դժոխային անդնդոց թագաւորութեան չար ոգին»։ Նոյն նիւթի վրայ տե՛ս նաև Կոստանեան, Հայ հեթ. կրօնը, էջմիածին, էջ 28—31։ Հիւնք. և Թիրեաքեան, Պատկեր աշխ. դրակ. 208 ըստ Էմինի։ Հիւբշ. էջ 73—74 Սպանդարամետ (իբր յատուկ անուն) մեկնում է վերի ձևով, բայց չի ընդունում սանդարամետ բառը՝ ձևի և նշանակութեան տարբերութեան պատճառով։ Ուրիշ յետոյ ընդունել է նաև սանդարամետ բառի նոյնութիւնը՝ ըստ Meillet REA 1, 235։ Բառիս վրայ ընդարձակ մի քննութիւն ունի Վարդանեան ՀԱ. 1928, 457—62։

Գիր.—Մշ. սանտարամեդ:

ՍԱՆԴԻԿԱՍ «ձէթ անուանի». դիտէ միայն Քաջունի, Գ. 214։ Թուի օտար։

ՍԱՆԴՈՒՂ կամ ՍԱՆԴՈՒԽ (յետնաբար ո հլ. ոսկեդարեան հայերէնով անեղական է, յետնաբար կայ նաև եզ. սանդուղ, ինչպէս և սանդուխ) եփր. ծն. էջ 91 (երկիցս), սանդուղ՝ անդ և Կոչ. 414. սանդուղդ, սանդուխտ Վրդն. առ. 138, Օգոստ. բաջ. էջ 18) «սանդուխ և նրա աստիճանները» ՍԳր. Կիւրղ. ծն. Եղիշ. որից սանդղաձև Ագաթ. սանդղամատան Վրդն. աւետ. Սիոն. քեր. 188 ա. Մագ. և Երզն. քեր. սանդղատեսակ Պղատ. սանդղակառոյց Տօնակ.։

=Թուի բնիկ հայ բառ՝ հնխ. sqand- «ցատկել, վեր բարձրանալ» արմատից, որի ժառանգներն են՝ սանս. skándati «ցատկել, ժայթքել», ā-skandati «յարձակուիլ», լատ. scando «վեր բարձրանալ», իոլ. scendim «ցատկեմ», sceinm «ոստիւն», յն. σκάνδαλον «թակարդ, ճամբի վրայ լարած որոգայթ» (որ այժմ բոլոր եւրոպական լեզուներում դարձել է սկանդալ), հմմտ. մանաւանդ՝ նշանակութեան կողմից նոյն՝ լտ. scāla (հինը *scand-sla) «սանդուխ, վերելակ», որ յետոյ տուել է իտալ. scala>թրք. iskele>ռմկ. իսկելէ «լաստակ», ֆրանս. échelle «սանդուխ, վերելակ, աստիճան»։ Հյ. ձևի մէջ անսովոր է հնխ. sq>u ձայնափոխութիւնը, որ սակայն բոլորովին անսպասելի չէ։ Ըստ այսմ կրկին վերջաւորութիւններից հնագոյնն է -ուղ, որ այլուստ ծանօթ մասնիկ է. հմմտ. եւկիւղ, կենցաղ, յաչաղել, տեսիլ, ևն.—ածուղ>ածուխ, գազաղ>գազախ ձևերի նըման ղ վերջածայնը վերածուել է յետոյ խ (Pokorny 2, 541, Boisacq 870):

ՆՀԲ սանտրաձև ուղ կամ ուղի։ Տէրվ. Altarm. 27 և Նախալ. 111 տալիս է վերի մեկնութիւնը, նոյն արմատից դնելով նաև հյ. սեղիկ=սանս. skanda։ Հիւնք. պրս. sandana «սանդուխ»։ Պատահական նմանութիւն ունի կիրգիզ. صاتو satu «շարժական սանդուղ» (Будаговъ 2, 407)։

Գիր.—Հճ. սանդուխ, Զթ. սանդօխ, սանդոխ, Զղ. սանդուխ (անշուշտ սանդուղ ձևից) «շարժական սանդուղ», Սվեդ. սանդօղ՝ (ուր ղ՝ Թուի թէ ղ ձայնների գումարն է), Տփ. սա՛նդուխտ:

ՍԱՆՁ, ի, ի-ա, ու հլ. «երասանակ» ՍԳր. Վեցօր. 123. Բուզ. եփր. պհ. որից սանձել Ագաթ. սանձահարել Յհ. ա. 26, գ. 2. եզն.

կիւրղ. ղկ. սանձակոտոր Եւս. պտմ. սանձաբեկ Կանոն. անասանձ Փիլ. ոսկեսանձ Ագ. եզր. գ. 6. Ոսկ. մ. ա. 20. դժուարասանձ Նիւս. կուս. իճճասանձ Պրոկղ. յյտն.։

Lag. Arm. Stud. § 1944 համարելով սանձ՝ միացնում է զնդ. θanj «կցել, կապել» արմատին։ Հիմք. անասալ բայից։ Patrubány ՀԱ 1908, 152 հյ. սան, սուն, լտ. cibus «սնունդ» բառերի հետ հնխ. ek'ō «ուտել» արմատից՝ աճած en և g'h ածականներով. համմտ. լատ. frenum «սանձ» որ ծագում է frendo «ծամել» բայից։ Մառ, Яфет. сбор. 1, 51 յարեթական san «ձի» բառից։

Գիմ.—Տե՛ս սանձ։

*ՍԱՆՃԱՏ «մի անյայտ ծառ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2701, որ է

=Պրս. سنجد sinǰid «փշատ» (կարելի էր նաև կարդալ sanǰad)։

ՀԲուս. ուզում է ուղղել սանճաձի կամ սանդիաձի, որ արաբ. նշանակում է «կաղնի»։ Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1925, էջ 306։

ՍԱՆՄՆ «պանիրի գլուխ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ յգ. սանոնքի ձևով դործածում է Վստկ. 220. Եթէ ուզես որ պանիրն ամրողջ կենայ, լուա զսանոննին և ի նորոյ ցամքեցո՛։

*ՍԱՆՋԱԽ, ի–ա հլ. «դրօշակ» Թղթ. դպշ. 22 (տպ. Շահն. սանճաղ)։

=Թրք. سنجاق sanǰaq, գւս. sanǰax «դրօշակ»։

ՆՀԲ և ՋԲ դնում են տեղ.։

ՍԱՆՏ «արաբական խէժը տուող ծառը» Ամիրա. ունի միայն ՀԲուս. § 2702։

*ՍԱՆՏԱԼ «ճանդան փայտը» Մխ. բժշ. յիշում է միայն ՀԲուս. § 2703։

=Արաբ. صندل ṣandal հոմանիշից, որ ծագում է հնդկականից. աւելի մանրամասն ծագումը տե՛ս ճանդան։

Ուղիղ մեկնեց ՀԲուս։ Վերջին անգամ Seidel, Մխ. հեր. § 73։

*ՍԱՆՏԱՏՈՐ «պալատական մի պաշտօնեայ». մէկ անգամ ունի Մխ. դտ. 264. գրուած է նաև մատատոր, մանդատոր, մանգատոր։

=Պէտք է կարդալ մանտատոր (Ս և Մ տառերի շփոթութեամբ) և համարել «պատգամի սուրհանդակ», իբրև յն. μανδάτωρ, որ է լտ. mandator (աւելին տե՛ս մանտատոր)։

Բաստամեան, անդ՝ համեմատում է լտ. cantator «երգիչ», mangator «ձի՝ սորուկ ծախող», mandator «յանձնարարող» բառերի հետ և յարմարագոյնը համարում է վերջինը։ Կայ նաև լտ. mantator «սպասող» (իբրև «սպասաւոր»), բայց ուղիղ է յն. ձևից դնել։

ՍԱՆՏԷՐ «բիր, հաստ փայտ, palanga». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.–հյ. 377 բ և 378 բ «ցից, բիր, palus»։

Սանտիկոս տե՛ս Սինտեկնոս։

ՍԱՆՏՐ (ո, ի, ր հլ. բաս ՆՀԲ, բայց կայ միայն գրծ. սանտրով և բց. ի սանդրէ. իսկ գւս. սանտեր ցոյց է տալիս ր հլ.) «սանտր» Փարպ. Եփր. ապաշխ. որից սանտրել Յայտմ. Ճառընտ. գրւում է նաև սանդր, որից օձասանդր «մի տեսակ միջատ» Կանոն. Մագ. Թղ. էջ 214. սանդրատարազ «սանտրի ձևով մի տեսակ խնկեղէն» Ա.Բ.—Նոր գրականի մէջ ընդունուած է միայն սանտր. արևելահայ գրականում ոմանք երբեմն գրում են սանր, պատճառաբանելով որ ինչպէս ծանդր, մանդր գաւառական ձևեր են, որոնց գրականն է ծանր, մանր, նոյնպէս սանտր գաւառական է, որի գրականն է սանր։ Ուրիշներ էլ մտածում են, որ ինչպէս հնագոյն ծանր, մանր ձևերից յառաջացել են յետոյ ծանդր, մանդր, նոյնպէս և գրբ. սանտր յառաջացած պիտի լինի հնագոյն հյ. *սանր ձևից։ Երկու կարծիքն էլ սխալ է. 1) սանտր գաւառական ձև չէ և կարելի չէ համեմատել գւս. ծանդր, մանդր բառերի հետ. 2) ն և ր բաղաձայնների միջև արդարև ապագայում նեղմուծում է առաջանական (համմտ. լտ. cinis, cineris և tener>ֆրանս. cendre «մոխիր» և tendre «քնքոյշ»), բայց այդ առաջանականը լինում է դ և ջ ու։

ՆՀԲ յիշում է պրս. չանէ «սանտրը»։ Pictet 2, 106 պրս. šāna, šīna «հեծանոց, սանտր», šānīza «սանտր», սանս. kšan «կտրել, վնասել», մանաւանդ յն. ξαίνω «սանտրել», ξανίον

«սանտր»։ Հիւնք. պրս. šāna «սանտր», šāndan «սանտրել»։ Հիւբշ. 488 յիշում է յն. ձևերը և սխալ է գտնում իբրև բնիկ հայ կցել յն. *ξαντρον ձևին, որովհետև հյ. ջ=չ՛ յն. ξ։ Մառ, Грам. др. арм. 32 բուն ձևը սանր՝ դ յաւելուածով։

ԳԻՒՒ.—Ալշ. Գոր. երև. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Ջղ. վն. Տիգ. Տփ. սանդր, Մչ. սա՛նդրը, Ախց. Կր. Ննխ. Սլմ. սա՛նդրո, Մրզ. սանդը՛ո, Հմշ. սօնդրը, Զթ. սօ՛նդրը, սո՛նդրը, Ագլ. Սվեդ. սո՛ւնդր, Պլ. սանր, սը՛նր, սը՛ր, սանրը, սը՛նրը, սը՛րը, Սհբ. սանյ, Ռ. սա՛ն-յը, Խրբ. Պրտ. սայր, Հճ. սօր, Ասլ. սէ՛օրյը, Ակն. սօյը.—բայական ձևով՝ Ագլ. սա՛նդրիլ, Սվեդ. սոնդրիլ, Պլ. սը՛նրէլ, սանրէլ, Հճ. սաւրվել, Ասլ. սէօրյէ՛լ, Ակն. սօյել։—Նոր բառեր են սանտեր, սանտրէֆ, սանտրատուն, սանտրեգլուխ, սանտրգործի, սանտրօձ, սանտրսապոն են։

ՍԱՆՏՐՈՒԿ «մի տեսակ անծանօթ խոտ» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2804. ըստ Շահրիմանեանի՝ նոյն ընդ սամանտրուկ, լտ. poligonatum, ըստ Կոլլաւ՝ Բառ. գերմ. 660՝ գերմ. Froschbisz բոյսը, որ ըստ Аненковъ-ի Ботаническая терминология, էջ 171 է «լտ. hydrocharis morsus ranae L», ըստ ՆՀԲ (յաւել. գտ. բառից) խոնաւ, ծմակ ու քարքարոտ տեղեր աճող մի բոյս է, որ ձիւնը վերանալուց յետոյ է երևան գալիս. գիւղացիք խաշում, քամում և ուտում են. արմատը ալիւրի պէս փոշիացնելով՝ մածուցիկ նիւթ են պատրաստում։ Կենդանի է Գնձ. Նխ. «կոմգուկ» իմաստով։

ՍԱՊԱՊԵԼ «հաստատել, կրթել, սեղմել». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 281։

*ՍԱՊԱՍ (ի–ա, ու հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կողով» Ես. գ. 26. Փարպ. ծէ. Կաղանկտ. յետնաբար սապար Հայել. էջ 7, 67. որից սապատակ «փոքրիկ կողով» Ոսկ. կող. 572. Գէ. ես. Ճառընտ. սապատաւոր «շրջուն վաճառական, փերիզակ» Ոսկ. բ. կոր. Կոչ. 120. սապատողն «կուռ» Ղեւտ. իա. 19. վերջինը՝ որ կազմուած է փոխաբերութեամբ, ենթադրել է տուած արդի գրականի մէջ սապատ «մէջքի կուզը», որից և կազմուած են սապատաւոր, միասապատ, երկսապատ «մէջքի վրայ կուզ ունեցող, մէկ կամ երկու կուզ ունեցող (ուղտ)»։

=Պհլ. *sapat «կողով, արկղ» բառից, որ թէև աւանդուած չէ, բայց նոյնն են հաստատում պրս. سبد sabad, քրդ. sevi «կողով, կթոց» և իրանեանից փոխառութեամբ՝ ասոր. ܣܦܬܐ sefṭā, արաբ. سفط safaṭ, օսն. sabaδa, քրդ sabat, sebet, թրք. سپت sepet և սրանից փոխառութեամբ՝ սերբ. sepet, ուկր. sepeta, բոլորն էլ «կողով»։—Հիւբշ. 236։

Հներից երգն. քեր. այսպէս է մեկնում բառս. «Առուգաբանութեան գիւտք. սապատ, գլխապատ. յիրէն ունելով գանունն»։ (Այս բացատրիլով ՆՀԲ՝ «որպէս սա պատօղ և կատ գրելի է սարպատ՝ որպէս նոյն ընդ գլխապատ», պրս. sar «գլուխ» բառից)։ Նորերից ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. էջ 157, որ համեմատում է պրս. սէփէք։ ՆՀԲ նոյն ընդ ոմկ. սէրէդ։ Lag. Arm. Stud. § 1946 ասոր և արաբ. ձևերը։

ՍԱՊԵՆԷՔ «Անվաւեր գիրք Գործոց առաքելոց» Գնձ. ուրիշ վկայութիւն չկայ. այլուր սովորաբար պրակապատաբայ, որ տե՛ս։

*ՍԱՊՂԱՐ, ի–ա հլ. «կաղ, հաշմանդամ» Յայտմ. փետր. 26, մրտ. 10. Վկ. դէ. 64. Գնձ. գրուած նաև սաղպղար։

=Անշուշտ Թաթարական բառ է, որից փոխառեալ է նաև վրաց. ხაბყარი սապ'ղարի «ոտքը կտրած»։

Ըստ ՆՀԲ բառ ոմկ. և ըստ ԱԲ բառ Թրք.։

*ՍԱՊՈՆ «օճառ կամ օճառախոտ, օշնան» Մամիկ. 36. Մաղաք. աբ. 32. Վստկ. 80. որ և սապուն Վստկ. 223. որից սապոնած «օճառ քսած» Շնորհ. առակ. էջ 108։

=Յն. σάπων, σαπώνιον «օճառ» բառից, որ փոխառեալ է լտ. sapo, saponis ձևից, իսկ սա էլ գերմանականից։ Գերմանական ձևերն են հբգ. seifa, seiffa, seipfa, մբգ. sēpe, seife, գերմ. Seife, հոլլ. zeep, անգսք. sāpe, հհիւս. sāpa, անգլ. soap, բոլորն էլ «օճառ», որոնցից ենթադրւում է գոթ. *saipjō։ Ըստ

հրում հբգ. seifa և անգսք. sāp նշանակում են նաև «ծառից վազած խէժ», ուստի վերի բառերը կցւում են մբգ. sīfen, հոլլ. sijpelen, անգսք. sīpan, շվեդ. sipa, դան. sibe «ծորիլ, կաթկթելով հոսել», նորվ. sīpa «լաց լինել», ինչպէս և սերբ. sipiti «շաղել, բարակ անձրևել», յն. τρύγ-οιπος «գինի քամելու պարզուտ» (կազմուած τρύξ τρυγός «նոր գինի»+ οἴπος «մաղ»=հբգ. sib, հոլլ. zeef, անգսք. sife, գերմ. sieb «մաղ» բառերից) ձևերին և բոլորը միասին հանւում են հնխ. seip- «ձուլել, կաթկթել, ծորիլ, հոսիլ» արմատից (Pokorny 2, 467, Boisacq 987): Նախապէս օճառը Հռովմայեցոց ծանօթ չէր. նրա գիւտը վերագրւում է Գերմանացոց. առաջին անգամ Պլինիոս (+79) յիշում է sâpo ձևով և «մազերի օծանելիք» նշանակութեամբ, որ գոհ են Գալլիացիք. պատրաստում էին ճարպից և մոխրից. Գերմանացիք, թէ՛ այր և թէ կին, նրանով օծանում էին իրենց մազերը. (Gallorum hoc inventum rutilandis capillis; fit ex sebo et cinere... apud Germanos majore in usu viris quam feminis): Գերմանականից օճառը տարածուեց ամէն կողմ. յոյն հեղինակ Aretaeus յիշում է այն 3. Ք. 180 թուին (Sophocles 978), Դ դարից սովորական է դառնում Լատիններէն մօտ (Kluge 449) և նիւթի հետ բառն էլ տարածւում է ամէն կողմ. այսպէս իտալ. sapone, ֆրանս. savon, սպան. jabon, նյն. σαπούνι, ֆինն. suopa, saippua, saippio, վոգուլ. sōpən, հունգ. szappan, հոլ. sapun, ռում. sŭpon, ալբան. sapun, արաբ. բրբ. صابون sābūn, ԲԲր. sabən, բրգ. sabun ևն.—Ա՛ճ.

ՆՀԲ յիշում է լտ. և իտալ. ձևերը (չունի յն. ձևը):

ԳԻՒ.—Երև. Տփ. սա՛պուն, Ագլ. սո՛ւպան, Պլ. սաբօն (նոր փոխառութիւն Թուրքիէ՞ն) ևն:

*ՍԱՊՈՒ «հալուէ» Վասակ. բժշ. Ոսկիփ. գրուած նաև սապուս Բժշ. կամ սապր Վասակ. 91:

=Արաբ. صبر ṣabr, որից նաև բրբ. sabər կամ sarə-sabər>ռմկ. Պլ. սաբր-սաբրա «հալուէ»:—Հիւբշ. 276:

Ուղիղ մեկնից նախ ՋՔ, յետոյ Lag. Arm. Stud. § 1947:

ՍԱՊՐԱԿ «իշխան». անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ դործածուած Պատմ. Ներս. Հյր. էջ 115. «Արդ յետ այսորիկ ի մի վայր ժողովեալ նախարարք, իշխանք և սեպուհք և սապրակք Հայոց աշխարհին» (սրա դէմ այլ ձ. ունի եպիսկոպոսք, ինչպէս և Վեննայի Մխիթ. № 349 ձեռագիրը՝ ըստ Տաշեան, Յուց. էջ 802 ա):

Թւում է թէ սաստրապ բառն է, որ գործածուած է այլուր նոյն պատմութեան մէջ (էջ 52), և այստեղ գրիչների ձեռքով աղաւաղուելով՝ այս ձևն է առացել:

*ՍԱՍԱՊԻՆ «մի տեսակ խէժ. լտ. sagapenum» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2707:

=Լտ. sagapenum բառից՝ սխալ գրչութեամբ. նոյնից նաև արաբ. سكبنج sakbanaǰ:

Ուղիղ մեկնից ՀԲուս.:

+ՍԱՌՆ, ն հլ. (-ռին, -ռամբ, -ռանց) «սառած ջուր, սառ» ՍԳր. «ցուրտ, պաղ» Լմբ. ժդ. Երզն. Երկն. Ոսկիփ. որից սառնակերպ Իմ. ժԲ. 20. սառնացուցանել Ոսկ. յհ. բ. 4. սառնեղէն Ագաթ. սառնաձյալ Ագաթ. սառնապատ Ագաթ. սառնապան «սառցատան վերակացու» Մին. Համդ. 15. սառնամանիք «սառը քամի» Ագաթ. «սառույց» Խոր. պարզ արմատն է սառ, ինչպէս ցոյց են տալիս ռմկ. սառ «ցուրտ» Բրս. խ. մկ. սառուցանել Եղիշ. սառչիլ Մաշտ. սառոյց Ոսկ. բ. տիմ. սառամանիք «սառույց» Յոր. լէ. 10. Ոսկ. հս. 186. «ցուրտ քամի» Եզն. 17. սառնալ Սիր. դ. 3 (որ ըստ Վարդանեան ՀԱ. 1911, 691 պէտք է կարդալ վառնալ). նախասառոյց Արիստ. աշխ. մշտասառոյց Նար. սառնասառոյց Վեցօր. 124. բերասառոյց Երզն. մտթ. սառնաշաքար, սառնասիրտ, սառնասրտութիւն, սառնարան, սառնարիւն, սառցայիւն, սառցակալել (նոր բառեր) ևն:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'ar- ձևից, որ սառրին ձայնադարձն է k'er- (նաև k'el-) «պաղիլ, ցրտիլ, սառնանալ» արմատի. ցեղակիցներն են՝ սանս. शिशिर çiçira- «գարնան սկիզբը, հով եղանակ, ցուրտ, սա-

ուրն», ղնդ. 𐬯𐬀𐬭𐬉𐬙𐬀 sarəta- «ցուրտ», պհլ. sart>պրս. سرد sard «ցուրտ», պհլ. sarmāk>պրս. سرما sarmā «ձմեռ» (բստ كرما garmā «ամառ» բառի կազմուած), աֆղան. sōṛ, իգ. sara «ցուրտ», sāṛa «ձմեռ», օսս. salui, sälḷi «խիստ ցուրտ է», sald «աստիճ ցուրտ», բելուճ. sard, քրդ. sār «սառն, պաղ, ցուրտ», soher «սառոյց», քուչ. kroççaññe «ցրտութիւն, ցուրտ», լիթ. šarnà, šarmà, šalnà «եղեամ», šerkšnas «եղեամ», šálti «սառչիլ», šáltas «ցուրտ», լեթթ. saŕma, seŕma «եղեամ», հսլ. slana «եղեամ», slota «ձմեռ», նսլով. srên «սառած ձիւն», լեհ. s'rzon «եղեամ», ռուս. serënŭ «սառած ձիւն, եղեամ», գերմ. Horn «յունվար և փետրվար ամիսները» (այլ բացատրութիւն է տալիս Kluge 224). hāl «սառնալ, լպրծուն», հոլլ. hal «սառած գետին», հիսլ. hēla «եղեամ», hjarn «կարծրացած ձիւն» ևն (Pokorny 1, 409, Walde 112, Boisacq 841, Trautmann 303, Horn § 731)։ *Արդեօք արմատի երկրորդ ձևին (հնխ. k'el-) չէ՞ պատկանում գւռ. սղիև, սղօն «սառոյցի բարակ շերտ»։—Հիւբշ. 488։

Klaproth, As. pol. 100, 134, 141 անդի šär, zar, լեզգ. zer, ավար. zuer, բրբտ. šorn, zorn, աւեմոյէդ šar, zyr հոմանիշների հետ։ Ուղիղ համեմատեցին նախ Böttich. Arica 26, 86 և Lag. Urgesch. 304:—Müller SWAW 41, 6 հյ. ցուրտ, պրս. sard, յն. κρύος են ձևերի հետ։ Պատկ. Изслед. 22 ղնդ. sarəta, պրս. sard, քրդ. sār. Տէրվ. Altarm. 48 և Նախալ. 72 լիթ. ղնդ. և պրս. ձևերի հետ հնխ. çar «սառչիլ» արմատի տակ։ Justi, Litt. Blatt. 1883, էջ 64 լիթ. šalnà, ռուս. слана «եղեամ»։ Հիւնք. սեռն բառից։ Karst, Ծուշարձան 425 թթր. qar «ձիւն» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունին անդի sar, ssār, ավար. ǰar, խոնս. çuer, արաբ. ظر ẓar «սառած ջուր» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 38)։

ԳԻՒ.—Ջղ. սառն, Գոր. Ղրբ. սա՛ռնը, Բրև. սա՛որ, Տփ. սա՛րը, Ագլ. սօ՛ռնը «սառը, պաղ, ցուրտ».— բայական ձևով՝ Ջղ. սառել, Գոր. Ղրբ. Շմ. սառչիլ, Բրև. սա՛ռչէլ, Տփ. սա՛րիլ, սա՛րչիլ, Ագլ. սռսօ՛նիլ (որից սռսա՛հած «սառած»),—Ախց. սառուց.—Նոր բառեր են սառցակոլոլ, սառցակ ընկնել, սառցաջուր, սառցառուն.—Համմտ. Նաև սուռ Մշ. «ցուրտ», Գնձ. «փայլուն պաղլորակ» (Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 154, 249).—Մշ. գիտէ նաև սառնամանի ձևը։

*ՍԱՍԱԼԻՈՍ «անճիտան բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. էջ 557։

=Արաբ. ساساليوس sāsālīus, سيسساليوس sīsālīus, որ փոխառնալ է յն. σέσελι, σέσελις ձևից «tordylium officinale» L (տե՛ս Steinschneider-ի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 94 և 101), որից են նաև լտ. seseli, seselis, seselium, ֆրանս. séséli՝ նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 118։

ՍԱՍԱՆ. բուն նշանակութիւնն է «կանգնած տեղը շարժիլ», որից յառաջացած է յիմոյ «դող» Գնձ. սրանից սասանիլ «տատանիլ, խախտիլ, սարսափից դողալ» ՍԳր. Ագաթ. սասանեցուցանել Բ. մն. լգ. 8. սասանութիւն «շարժիլը, խռովութիւն, յոյզ» ՍԳր. Կոչ. 13, «երկրաշարժ» Մտթ. իդ. 7. անսասան Նար. ևն։ Կրկնուած է պարզական սան «շարժիլ» արմատից։

Հիւնք. Նոյն է դնում ծածանիլ, տատանիլ բառերի հետ։ Bugge KZ 32, 65 դնում է *suru նախաձևից, որ հանում է spars<spṛk'- արմատից. համմտ. յն. σπαράσσω «քաշքշել, ցնցել», սանս. spṛç «շօշափիլ». կապ չունին սրանց հետ սարսել, սարսուռ, սարսափ։

ԳԻՒ.—Ախց. խրբ. Կր. Մշ. Սեբ. Պլ. սասանիլ, Ննխ. սասանել, Սլմ. սասանվել, որոնք նշանակում են «զարհուրիլ, սարսափիլ», իսկ Տիգ. սոսոնիլ «լռիլ».—Նոր ձևեր են սասան սասան Ննխ. «սարսափահար», սասանական Ննխ. Պլ. «սարսափելի», սասանահարուիլ Բրև. «ահաբեկուիլ, սարսափիլ», սսնոռիլ Ննխ. «յանկարծ վախենալով սարսռալ»։

+ՍԱՍՍ, ի հլ. «յանդիմանութիւն, չէխ» ՍԳր. Ոսկ. գաղ. եզն. որից սասսել «յանդիմանել» ՍԳր. սասսարար «յանդիմանող»

Սեբեր. 23. սաստիկ «զօրեղ, ուժգին, խիստ, մեծ» *ՍԳր. Ոսկ. Ագաթ.* սաստիչ *Ոսկ. մ. ա. 23.* սաստկագոյն *ՍԳր. Եւս. քր. Եփր. Թգ.* սաստկանալ *ՍԳր.* սաստկութիւն *ՍԳր. Եզն. Ագաթ.* անսաստ *Յուդ. 13. Եզն.* անսաստել *ՍԳր. Եզն. Ոսկ. Վեցօր.* մեծասաստ *Ագաթ. Վեցօր. Մծբ.* հեղեղասաստ *Ագաթ.* իշխանասաստ *ՅՀ. իմ. երև. Կղնկտ.* թագաւորասաստ *Սիւն.* սաստկացուցիչ *(նոր բառ) ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* k'əsti- *ձևից, որ գալիս է* k'ās-, k'əs- «առաջնորդել, ուսուցանել, կրթել» *արմատից. ցեղակիցներն են սանս.* शास्ति çāsti- *կամ* शिष्टि çišṭi- «պատիժ, սաստ, արտօնութիւն, հրաման», शास् çās, शिष् çiš «արտօնել, հրամայել, պատժել, տիրել, կրթել, ուսուցանել», शास्तर çāstár- «պատժող, հրամայող, սաստող, իշխանաւոր», शास्त्र çāstra- «տաման գիրք, ձեռնարկ, դասագիրք, կանոնագիրք», शिष्य çišya «աշակերտ», զնդ. sāstu «տուցանէ» sāstar- «իշխանաւոր, իշխան» (որ և պհլ. sāstār «տիրող, իշխող, բռնակալ»), sāsta «մարդ չարչարող, անգութ, գազանաբարոյ»։— *Ուրիշ լեզուների մէջ այս արմատը չէ՛ պահուած։ Առաջ նոյն արմատի տակ էին դնում նաև լտ.* castigo «պատժել», castus «պարկեշտ», *միւլ.* cāin «օրէնք», *բայց այժմ չեն ընդունում* (Pokorny 1, 358, Walde 138, Brugmann Grdr.² 1, 526):—*Հիւբշ. 488։*

Նշ՝ կցում է վրաց. սաստիկի։ Böttich. ZDMG 1850, *էջ 361 սանս.* çās *արմատի* çāstṛ *և կամ զնդ.* sāsta *ձևից։* Lag. Urgesch. *620 սանս.* çās *արմատի տակ։* Müller SWAW 44, 565 *զնդ.* sāsti, *սանս.* çāsti։ Bopp, Gram. comp. 2, 18 *տի մասնիկով* çās *արմատից, ինչպէս է նաև սանս.* çāsti։ *Հիւնք. ազդոյ բառից։ Սրմագաշեան, Արմէնիա ռում.* sastisire «շուարիլ» *ձևի հետ։ Թիբեաքեան, Հայ-երան. ուս. էջ 135 պհլ.* sazd «սաստ»։

ԳԻՒ.—Կր. սաստէլ, *Ագլ. Տփ.* սա՛ստիլ.—*Ախց. երև. Կր. Ջղ. Տփ.* սաստիկ, *Մշ.* սաստիգ, *Տիգ.* սոստիգ։

ՓՈԽ.—Վրաց. ხანტაკი სასტიკის «անգութ, կարծր, խիստ», ხანტაკი ჭარი սաստիկի բարի «սաստիկ քամի», ხანტაკი კაცი սաստիկի կացի «անգութ և դաժան մարդ», ხანტაკობა սաստիկութիւն, բռնութիւն»։ *Բառս բնիկ հնդևրոպական և -իկ մասնիկն էլ հայկական յաւելուած լինելով՝ վրացին անշուշտ հայերէնից է փոխառեալ։*

***ՍԱՏԱ.** *կամ* **ՍԱՏԱԽԻՆԻ** «մի տեսակ բոյս, stachys germanica» *Ամիրտ. ունի մի այլ ՀԲուս. § 2709։*

=*Արաբ.* سطاخيس saṭāxīs, *որ է լտ.* stachys՝ *նոյն նշ. (տե՛ս* Steinschneider WZKM 12, 94):

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

***ՍԱՏԱԿ** «պարզ, սոսկ, միայն» *Ոսկ. յհ. ա. 28 (յետին). Սոկր. 103.* «անզարդ, պարզ» *Ոսկ. յհ. բ. Թղթ. դաշ. Պտմ. աղէքս. 116.* «անխառն, պարզ, զուտ» *Մաշտ.։*

=*Պհլ.* *sātak *ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց կան պրս.* ساده sāda «պարզ, անխառն, զուտ, միայն», *միջին պարսկերէնից փոխառութեամբ՝ վրաց.* სადაგი «պարզ, հասարակ, լուր օր», *և նոր պարսկերէնից՝ թրք.* sade «անխառն, միայն, սոսկ», *քրդ.* sade «պարզապէս»։ *Պրս.* sāda *ձևից փափկացած եմ համարում՝ թրք.* saya, *որից էլ հյ.* սայայ *(տե՛ս առանձին), Ղրբ.* սա՛յա։ *Այս կարծիքս հաստատում է այն՝ որ մինչ Ղրբ. ասւում է* սայա բուղբ *(վրան չգրուած պարզ թուղթ), Գոր. ասւում է* սա՛դա բուղբ։ *Համմտ. նաև Ղրբ.* սայա՛սէրտ= *Գնձ.* սբյա՛սէրտ, *որ ճիշտ պրս.* سادادل sādadil «պարզասիրտ» *բառն է։— Հիւբշ. 236։*

Նշ՝ տճկ. սաւտ, *լծ. հյ.* յատակ։ Lag. Ges. Abhd. 225 *պրս.* sāda։

ՍԱՏԱՆ «դի, դիակ». *արմատ առանձին անգործածական, գտնւում է միայն նոր գաւառականներում. որից* սատակել «ապականել, բնաջինջ անել, չարաշար մահով սպա-

նել» ՍԳր. եւս. քր. Ոսկ. Վեցօր. սատակամաճ Բ. մկ. թ. 29. Ոսկ. ես. սատակիչ ՍԳր. եզիշ. սատակումն ՍԳր. ևն։

Acoluthus, Obadias armenus, Lipsiae 1680, էջ 35 համեմատում է եբր. שׁוֹד šod «բռնութիւն, ճնշում» բառի հետ և նրա հետ ինչ որ կապ է ուզում տեսնել. (cum quā voce, armenica nonnihil convenire videtur):—ՆՀԲ յատակ բառից՝ իբր ցյատակել: Lag. Btrg. bktr. Lex. 64 u=սանս. uç մասնիկով ատակ բառից՝ իբր յատակել: Մորթման ZDMG 26, էջ 487 բևեռ. sutihu, իսկ էջ 551 բևեռ. zasgubi:—Canini, Et. étym. 90 եբր. kid և արաբ. قَتْل qatl «սպանութիւն»։ Տէրվ. Նախալ. 51. հնխ. kad «անկանիլ, հարկանել, արկանել» արմատից՝ իբր. լտ. cadere, cedere, նաև պարզականը՝ սանս. çān «սատակիլ», զնդ. sāna «սատակումն», հպրս. vi-san «սատակել», իսկ էջ 72 հնխ. çad «անկանիլ, կորնչիլ» արմատից՝ իբր յն. κε-καδ-εῖν և լտ. cadere: Müller, Armen. լտ. cadaver «դիակ» բառին ցեղակից։ Հիւնք. պասեֆ, պասֆա բառից։ Հիւբշ. 110 մերժում է կապել յատակ բառին։ Junker WZKM 28 (1914), 53 հյ. սատակ «պարզ» բառից։ Թիրեաքեան, Աբրահայ բառ. 159 և 329 զատիկ բառի հետ՝ պրս. zadan «զարնել» բայից։ Անշուշտ պատահական նմանութիւն ունի սուր sādu «աւերել, քանդել, սպանել»։

ԳԻՒ.—Ագլ. սատ՛կիլ, Գոր. Ղրբ. ըսատ՛կել, Ախց. Կր. Մկ. Շմ. սատկիլ, Երև. Մրդ. սատկել, Ջղ. Վն. սատկել, Ալշ. Խրբ. Մշ. Ռ. Սեբ. սադգիլ, Սչ. սադգել, Ննխ. սադգել, Տփ. սա՛բկիլ, Հմշ. սադգուշ, Պլ. սաբգիլ, Ջթ. սադգիլ, սոդգիլ, Հճ. Սվեդ. Տիգ. սոդգիլ, Ասլ. սա՛գիլ, Թրքախօս հայերից՝ Առն. սադգիլ օլմաֆ «սատկիլ»։ Նոր բառեր են սատկուկ, սատկոց, սատկոտիլ ևն։ Այս բոլորը գործածւում են վատ իմաստով և յատկապէս անասուններուի համար. բայց այսպէս չէ հին հայերէնում, ուր միայն «չարաչար տանջանքով մեռնիլ» նշանակութիւնն ունի. հմմտ. «Արդ և՛կ է՛ջ առ իս և մի՛ հեղգար. և բնակեսցես յերկրին Գեսեմ՝ յԱրաբիա և եղիցես մօտ առ իս... զի մի՛ սատակիցիս դու և որդիք քո» (ասում է Յովսէփը իր սիրելի հօր՝ Յակոբ նահապետին) Ծն. խե. 9—11. Քահանայք իմ և երիցունք իմ սատէն ի քաղաքին սատակեցան. Ողբ. ա. 19։

*ՍԱՏԱՆ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց չունի վկայութիւն) «հակառակորդ, թագաւորի դէմ ապստամբ իշխան, չարախօս, մատնիչ» Գ. Թագ. ժա. 14, 23. բ. կոր. ժբ. 7. Կոչ. «սատանայ» Սիր. Համառ. և աւետ. Վրդն. եև։

=Սբր. שָׂטָן sāṭān «ոսոխ, հակառակորդ, թշնամի» բառի յն. σατάν սատադարձութիւնից. նոյնից նաև լտ. satan, գերմ. satan ևն. տե՛ս նաև սատանայ։

ՆՀԲ սրանց հետ նաև լծ. Թրք. զըբ (իմա՛ արաբ. zidd) «հակառակ»։

*ՍԱՏԱՆԱՅ, ի հլ. «հակառակ, դիմակաց, չար ոգի, դև» ՍԳր. Եզն. Կոչ. որից սատանայածին Եզն. սատանայական Ոսկ. մ. բ. 13, 26. Ագաթ. սատանայակիր Ագաթ. Կորիւն. սատանայատուր Ոսկ. մ. բ. 26. սատանայոտ Եփր. ա. տիմ. 240. սատանայութիւն Եզն. ևն։

=Ասոր. ܣܛܢܐ sāṭānā «սատանայ» բառից, որ փոխառեալ է եբր. שָׂטָן sāṭān «հակառակորդ, սատանայ» ձևից. ծագում է եբր. שָׂטָן sṭn=արաբ. شَطَن šṭn «թշնամութիւն անել, կռուիլ» արմատից. հմմտ. արաբ. شَيْطَان šayṭān «սատանայ»=ՆԹովպ. 𐤔𐤃𐤈𐤍 sadaṭān, որ փոխառութեամբ տարածուած է բազմաթիւ լեզուների մէջ. ինչ. յն. σατανάς, լտ. satanas, ռուս. сатана, հալ. sotona ևն. տե՛ս նաև սատան:—Հիւբշ. 316։

Հները ծանօթ էին արդէն բառիս ծագումին. հմմտ. Սատանայ յերրայեցւոց և յասորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի. Եզն. էջ 52.—Սատանայ անուն ի խաւսութենէ հակառակութեանն անուանեցաւ. Կոչ. 12.—Սատանայդ բայ եբրայականաւն զապստամբն ազդեցուցանէ. Իրեն. հևրձ. 204.—Սատանայ... ըստ եբրայեցւոց բառիցն՝ հակառակ թարգ-

մանի... և ամենայն՝ որ բարւոյ [հակառակ] կայ, սատանայ անուանի. Յճխ. էջ 228.—Սատանայ ըստ եբրայեցւոցն ընդդիմակաց կամ հակառակ ասի. Մեկն. ղկ.—Սատանայ անուն յեբրայեցւոցն ի մերս թարգմանելով՝ հակառակ ասի. Շնորհ. մաթ. էջ 76։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ Schröder, Thes. 45, *յետոյ ՀՀՒ և ՆՀԲ (դնում են եբր.* sāṭān *բառից)։*

ԳԻՒ.—Ախց. Կր. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. սատանա, *Ասլ. Խրբ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* սադանա, *Մկ.* սոտոնա, *Ալշ.* սոդոնա, *Հճ. Սվեդ.* սադանօ, *ՋԲ.* սադանո, *Համշ.* սադօնա, *Ագլ. Երև. Շմ.* սոանա, *Գոր. Ղրբ.* սոա՛նա, սուտա՛նա: *Նոր բառեր են* սատանաքոյն, սատանաճոլ, սատանորդի, սատանոց, *որոնք ոչ ՔՀ սատան ձևից են ծագում, այլ սատանայ բառից կրճատմամբ։—Ագլ. բառս նշանակում է նաև «սարդ, մամուկ»։*

ՍԱՏԱՊ *«փեգենայ խոտը,* ruta (ruta graveolens L *ըստ* Seidel, *Մխ. հեր. § 430,* thalictrum elatum Murr. *ըստ Տիրացուեան, Contributo § 176)» ԲԺՇ. Վստկ. 52. 168. գրուած նաև* սազապ, սատաֆ *(տե՛ս ՀԲուս. § 2679)։*

=Արաբ. պրս. سداب sadāb *«փեգենայ». միւս ձևերը գալիս են արաբ.* سذاب saḏāb, *Թրք.* sedef *կամ* sadaf *otə հոմանիշներից։ Այս ձևերը տե՛ս* Steinschneider-*ի հաւաքածոյի մէջ՝* WZKM *12, 93 և Համուս, Թրք. Թրգմ. Ա. 158։—Հիւբշ. 276։*

ՆՀԲ բառ ոմկ. սէտէֆ: *Ուղիղ է* Lag. Arm. St. § 1953:

ՍԱՏԱՐ, ի–ա *հլ. «գործող, գործաւոր, մշակ» Ա. մկ. գ. 6. Ոսկ. մ. բ. 7 և ա. Թես. Մծբ. էջ 340. «ոստայնանկ, ասրագործ» Ես. լը. 12=Ոսկ. ես. 239, 241. Պղատ. օրին. «ձեռնտու, օգնական» Բուզ. Ղեղշ. Փարպ. «օգնութիւն, նպաստ, առիթ, պատճառ» Մծբ. Փարպ. Խոր. որից* սատարել *«օգնել, օգնական լինել» Ագաթ. Փարպ. Խոր.* սատարութիւն *«օգնականութիւն» Ագաթ. Ղեղշ. «ոստայնանկութիւն» Պղատ. օրին.* անսատար *Ոսկ. կող. ժբ. (ուղղել* անկատար*):*

Schröder, Thes. 45 *եբր.* שׁטר štr *«պաշտօնաւոր, կուսակալ» բառից փոխառեալ։ Հիմնք. հյ.* սատուկ *կամ պրս.* սատր *«փոխանորդ արքայի» բառից։ Թիրեաքեան, Արիահմյ բռ. էջ 327 հյ.* սադրել *բայից, որ տե՛ս վերը։*

***ՍԱՏԱՓ** *(կամ* սատաֆ*) «գաղտակրայ, մարգարիտի խեցի, սէտէֆ» Վստկ. 78. ունին միայն ՀՀՒ և ՋԲ. իսկ ՆՀԲ յիշում է իբր ոմկ.՝* սատապ *բառի տակ։*

=Արաբ. պրս. صدف ṣadaf, *որից նաև Թրք.* sedef, *սերբ.* sedef, *նյն.* σεντέφι, *վրաց.* սադափի, զադապի *են, նոյն նշանակութեամբ։*

Ուղիղ մեկնեցին ԳԴ և ՆՀԲ։

ԳԻՒ.—Նոր փոխառութեամբ՝ Տփ. սադափ, *Ագլ.* սոդոփ, *Ախց.* սոդոֆ, *Պլ.* սէդէֆ *են։*

ՍԱՏԵՄ *«հեթանոս, այլազգի». ունի միայն Բառ. երեմ. էջ 282։*

***ՍԱՏԵՐ** (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.-ի. յետնաբար գտնում եմ գրծ.* սատեռաւ *Երզն. մաթ. 377) «մի տեսակ դրամ կամ կշիռ, չորեքդրամեան, այն է 4 դրամ. (ըստ Մանանդեան, Կշիռները և չափերը, էջ 39* սատեր*=16, 32 դրամ)» ՍԳր. Մծբ. 369. Եղիշ. յես. Շիր. որ և* սատր, *սեռ.* սատեր *Նար. էջ 111։*

=Պհլ. 𐭮𐭬𐭩𐭫 sater *(գրուած է* stīr, *բայց պէտք է կարդալ համեմատ հայերէնի* sater*), կենտրոնական Ասիոյ նոր արձանագրութեանց մէջ՝ պհլ.* satera, sdera, *սոգդ.* st'yr (Gautniot, Gram. sogd. 159), *որ պէտք է կարդալ* sitīr, *փոխառութեամբ նաև ույղուր.* satīr *(տե՛ս* JRAS 1926, 507), *վրաց.* satiri, *պրս.* استير ister, *արաբ.* استار istār, *բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Պհլ. բառը փոխառեալ է յն.* στατήρ *(որից նաև լտ.* stater*) հոմանիշից, իսկ սա էլ ծագում է հնխ.* sthā *«կանգնիլ» արմատից. ձևապէս նոյն է սանս.* sthāṭṛ *«կանգուն» (*Boisacq *902, 384)։*

Նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 158 դրաւ յունարէնից։ ՆՀԲ յն. և լտ. ձևերի հետ յիշում է նաև պրս. սադիր, սիդիր, խադիր: Lag. Arm. Stud. § 1955 *և Հիւբշ.* Arm. Gram. *377 դնում են յու-*

նարէնից։ Վերի մեկնութիւնը տուաւ Bailey JRAS 1930, էջ 17։ (Հներից Շիրակացին, հրտր. Պատկ. էջ 27 համապրում է եբրայական ծագումից)։

ՍԱՏԵՐԱՆԱՅ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ճառընտ. «Մաքսաւորն սատերանայր և հալածիչն Պօղոս բարձրանայր»։ ՆՀԲ մեկնում է «կա՛մ է որսացեալ լինել որպէս զձուկն՝ յորմէ եւ սատերն և կամ ելանել յառաջին բարև պատիւ, որ է ըստ արաբ. սատր»։ ՋԲ դնում է սրանցից առաջինը, իսկ ԱԲ՝ երկրորդը։

***ՍԱՏԻՃ** «հնդկական մի բոյս է. կաժ, որ և կասկած, լտ. folium indicum կամ malabathrum» Բժշ. Ամիրտ. որ և սադճ Մխ. բժշ. յատկապէս սատիճ-ճիճղի Վստկ. 121. ունի միայն ՀԲուս. § 2712 և 1250։

=Արաբ. ساذج sādaǰ (կարելի է կարդալ նաև sādeǰ), բայց նաև ساذج sādaǰ (sazeǰ), նոյն նշ. (տե՛ս Steinschneider-ի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 92). նոյնից են փոխառեալ նաև պրս. sādaǰ, վրաց. սադիջի իճղի, սազիճի իճղի։ Բոյսիս բժշկական յատկութիւնից վրայ խօսում են Գէորգ դպիր, Գիրք մեծագին և պատուական ականց, Պօլիս 1807, էջ 203 և Sediel, Մխ. հնր. § 251։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՍԱՏԻՃ «քար նման կարմիր ոսպի». ունի միայն Քաջունի, հտ. Գ. 215։

***ՍԱՏԻՐ** կամ **ՍԱՏՈՒՐ** «սակուր, տապար» Ճառընտ. Ցայսմ. օգ. 26 (երկու ձևերն էլ միասին իբր տարբեր բառեր գործածում է Ճառընտ.=Վրք. և վկ. Բ. էջ 416. Առին ի ձեռս տապարս և սատիրս և սատուրս). ՀՀԲ ունի սատրել «սակուրով զարնել», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ցայսմ. փետր. 2. «Ընդ որ բարկացեալ Թրածէծ առնէին զնա. և այնպէս սատրեցին զամենայն անդամս մարմնոյն»։

=Արաբ. ساطور sāǰūr «սակուր, դահնայ, լայն կտրոց», որից և Թրք. satər, ամկ. սաթըր «միս կտրելու տապար կամ լայն դանակ»։

ՆՀԲ «բառ ամկ. սադըր, սադուր, որ է ըստ հյ. սակուր կամ սակր, լտ. securis»։ Ուղիղ է Մառ, Վրդ. առ. հտ. I, էջ 218։

ԳԻՒ.—Այս բառի՞ց են սատոր Վրբ. «հատ կոճղ՝ որ իբր չենարան են դնում և վրան փայտ կոտորում», սատուր սատուր անել Ղրբ. «կտոր կտոր անել, ջարդել, յօշոտել»։

***ՍԱՏԻՐ** «նորածիլ սերմնաբոյս՝ որ հանում և առանձին տնկում են» Վստկ. էջ 166, որից սատրել «սերմը ցանելուց յետոյ, երբ բոյսը բաւական ծլած է, հանել և առանձին տնկել» Վստկ. **38, 59, 160**։

=Արաբ. سدير sadīr «նորաբոյս մարգ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 889), որից և Թրք. sedir «շիթիլ»։—Ա.Ճ.

ԳԻՒ.—Նոյն իմաստով է սատրել Արբ. խն. Համշ. Ջն. որ դարձած է սայել Ակն. արմատական ձևն ունին սատր Արբ., սատիր խն. «սատրած կամ սատրելու բոյս»։

***ՍԱՏԻՐՈՍ** «կապիկ» Նոնն. էջ 6, որ և սատիւրոս Նոնն. 71, որից սատիրական «միմոս, երգիծական, ուրիշներին ծաղրող» Պղատ. օրին. 261—262. (ՆՀԲ և ԱԲ յիշում են սատիր «կապիկ», բայց չէ գործածուած մեր մէջ)։

=Յն. σάτυρος «այծամարդ, կապիկ», որից σατυρικός «երգիծական». (հայերէնի մէջ -ικός մասնիկը փոխանակուած է -ական ձևով)։—Հիւբշ. 377։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։ Ուղիղ է նաև Մանանդեան, Հրատ. Նոնն. էջ 6 ծան.։

***ՍԱՏՆԱՏՈՒՐ** «Քրիստոսի խաչափայտի չորրորդ բևեռը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. Հարց. 495։

=Պէտք է հասկանալ սատանատուր, իբրև «սատանայից տրուած». ըստ այսմ հմմտ. նաև ատուր՝ որ տե՛ս առանձին։—Ա.Ճ.

***ՍԱՏՈՆ** «մար, 50 քսեստ պարունակող չափ», որ և սայտոն. կայ նաև սայիտ «22 քսեստ». բոլորն էլ ունի Շիր. էջ 31։

=Յն. σάτον (>լտ. satum) «հրէական մի չափ է, որ առնում է 1 ½ հռոմէական մոթ=56 քսեստ». ծագում է եբր. סְאָה sā, երկակի סְאָתַיִם sātaim «հատեղէնի չափ, ⅓ էֆա» բառից, որ է արամ. صأ

satā, *փոխառնալ ասուր.* še'u, še'atu, *սումեր.* še «*ցորեննեղէն, ցորեննեղէնի չափ*» *բառից* (Sophocles 980, Gesenius 17, 533):—*Հիւբշ. 377։*

Ուղիղ մեկնեց Աւգերեան, Բյար. չփ. և կշռ. 156. Նոյնը յիտոյ ՆՀԲ։

***ՍԱՏՐ** «*բազմոց, գահաւորակ*» *Մաշտ.* «*պաստառ կամ կապերտ*» *Գէ. ես. (միայն իբր բացատրութիւն լուսանցքի վրայ գրուած՝ «Որպէս յոստայնս կապերտ ինչ գործեալ մերձ առ ի կարելն» Հատուածի դէմ). այս նշանակութեամբ է նաև Անսիզք 45 (Պացին, սատր, սաւան)։ Այս բոլորի տեղ ԱԲ ունի «1. կտաւ. 2. սեղանի սփռոց. 3. նստարան»։*

=*Արաբ.* صدر ṣadr, *որից Բրբ.* سدير sedir «*բազմոց*»։

ՆՀԲ **սատար** «*ոստայնանկ*» *բառից և լծ. Բրբ.* սէտիր, *արաբ.* **սատր**, *լտ.* sedes:

***ՍԱՏՐԱՊ, ի–ա** *հլ.* «*գաւառապետ, նախարար*» *Բուզ. Ոսկ. ի մելիտ. Մեսր. երէց= Պատմ. Ներս. հյր. 52, որից* **սատրապութիւն** *Նոննոս.* **սատրապեա** *Բուզ. դ. 3 (տե՛ս նաև* **սակրակապետ, սապրակ**)։

=*Յն.* σατράπης «*սատրապ*» *բառից, որի այլ ձևերն են* ἐξατράπης, ξατράπης, σαδραπᾶς, ἐξαιτραπης. *Ծագումը ընդարձակ տե՛ս* Շաւասլ (Boisacq 854):—*Հիւբշ. էջ208, 377։*

ՀՀԲ բառ պրս.։ ԳԴ պրս. **սեբրէպ**՝ *որ սակայն բառարանում չի յիշում (կայ միայն* سترا ب sitrab «*նախարար, սատրապ*»)։— *ՆՀԲ պրս.* **սիդրէպ**, *արաբ. և պրս.* **սատր, սատրազամ**: Böttich. ZDMG 1850, 361 *և* Lag. Arm. Stud. *§ 1956 խառնուած հյ.* Շաւասլ *և յն.* σατράπης *ձևերից։ Պատկ.* Матер. *II.* 21 *յունարէնից։*

***ՍԱՏՐԻՆՋ** «*ճատրակի խաղ, շախմատ*». *ունին միայն ՀՀԲ և ՋԲ, իբր գաւառական բառ. բայց հնից գոնում եմ գործածուած* **սատրին** *Տաթև. մտ. 228։*

=*Արաբ.* شطرنج siṭranǰ *կամ* چطرنج šatranǰ, *պրս.* شترنگ šaṭrang, *Բրբ.* satranǰ, *որոնց բուն մայրն է հնդ.* čaturanga. *Աւելի ընդարձակ տե՛ս* **ճատրակ**:

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. յետոյ Lag. Arm. Stud. § 1957: *Չի յիշում Հիւբշ.։*

ԳԻՒ.—Մշ. **սադ'րիջ** *(իբր խաղի անուն գործածւում է հեքիաթների մէջ միայն)։*

+**ՍԱՐ, ո** *հլ.* «*լեռան գլուխ, բարձունք*» *ՍԳր. Ոսկ. Եփր. քրղ. Եղիշ. երէց. որից* **սարարար** *Բուզ. գ. 14.* **սարակ** «*բլրակ*» *Բուզ. 124. Նորագիւտ բ. մն. ի. 16. Ղևոնդ բ. էջ 8. Պատմ. Ներս. հյր. 47.* **սարաճալ** «*բարձրամտիլ, հպարտութեամբ չկամենալ*» *Սեբեր. էջ 158։ Ոսկ. ես. 221.* **սարաւարք** *Փարպ.* ⸢**սարոստանիք** «*լեռնաբնակք*» *Կղնկտ. Համմտ. Նաև* **սարաւանդ, սարաւոյր**:

=*Բնիկ հայ բառ, հնխ.* k'er̥-*ձևից, որ սոսրին ձայնդարձն է* k'er- «*գլուխ, գագաթ, եղջիւր. 2. բարձրանալ, մի բարձր տեղ հլնել*» *արմատի. ժառանգներից համմտ. սանս.* शिर śíra-, शिरस् śíras- «*գլուխ, ծայր*», शीर्षन् śīršán- «*գլուխ*», *հինդուստ.* sir «*ծայր, գագաթ*», *գնչ.* šero, sero «*գլուխ*», *գնդ.* सरो saro (sarah-) «*գլուխ*», *պհլ.* sar «*ծայր, գլուխ*», asar «*անվերջ*», *պրս.* سر sar «*գլուխ, ծայր, գլխաւոր*», *աֆղան. բելուճ.* sar, *օսս.* sär, *քրդ.* ser «*գլուխ, ծայր, գլխաւորը*», *յն.* κάρ, κάρα, κάρᾱνον, καρήνα, *յոն.* κάρη, κάρηνον «*գլուխ, ծայր, գագաթ լեռան ևն*», κέρας «*եղջիւր*», κεφαλτιᾶν «*բարձրամտիլ, հպարտանալ*» (=*հյ.* **սարաճալ**), κόρση «*գլուխ, քունք*», κρανίον «*գանկ*», καρανοῦν «*վերջացնել*» (*համմտ. հյ.* **գլխել**), *լտ.* cerebrum «*ուղեղ*», cervix «*ծոծրակ*», cornu «*եղջիւր*», cervus «*եղջերու*», *հբգ.* hirni, *գերմ.* Hirn, *հիսլ.* hiarne, *հոլլ.* hersen «*ուղեղ*», *հիսլ.* hiarse, *բրբտ.* kern «*գլխի գագաթ*» *և այլ բազմաթիւ բառեր, որոնց վրայ տե՛ս նաև* **սրուակ** (Pokorny 1, 403—8, Walde 153, Horn § 726, Boisacq 411, 413, 438, Ernout- Meillet 171). *Համմտ. նաև յաջորդը։—Հիւբշ. 489։*

Klaproth, As. pol. 99 *հյ.* **սար** «*լեռ*» *համեմատում է հակուս.* zyrr, *վոգուլ.* zorys *ձևերի հետ։ Նախ ԳԴ կցում է պրս.* **սար, սէր** *ձևին։ ՆՀԲ լծ. հյ.* **սայր, ծայր, ժայռ, դար**, *պրս.* **սար, սէր**, *Բրբ.*

bar, յն. գա՛ռա և օ՛nou, եբր. ḥar, roշ, rէշ: *Ազգասէր Կալկաթայի 1847, № 120, էջ 379 մեզանից է դնում պրս.* sārvān *(կամ* sārbān*) «ուղտապան», կազմուած հյ.* սար *«գլուխ» և վանել բառերից:* Böttich. ZDMG 1850, 361, 226 *գնդ.* sara *և սանս.* çiras, *որոնց* Arica 68, 123 *աւելացնում է պրս.* աֆղան. sar, *օսս.* sär, *յն.* κάρα: *Սրանց համեմատ են նաև* Lag. Urgesch. 301, Müller SMAW 38, 576 *և 44, 565,* Justi, Zendsp. 292, *Տէրվ. Նախալ. 74 են: Մորթման* ZDMG 26, 588 *պրս.* sar *և բևեռ.* çirani *«գլուխ»: Հիւնք. պարսկերէնից: Այս բոլորը զանազանութիւն չեն դնում այս և յաջորդ բառի մէջ (*սար *«գլուխ, գլխաւոր»): Առաջին անգամ Հիւբշ.* Arm. St. § 274 *և* Arm. Gram. *236, 489 տարբերելով երկուսը՝* սար *«բարձունք» դնում է բնիկ, իսկ* սար *«գլխաւոր»՝ փոխառեալ իրանեանից: Սրա պատճառն ի հարկէ այն է՝ որ իրանեանների մէջ առանձնապէս «լեռան գագաթ կամ լեռ» նշանակութեամբ գործածուած չէ բառը, թէև կարելի է փխբ. ասել* sar-i kōh *«ծայր լեռան, լեռան գագաթ, այն է գլուխ լերին»:* Meillet *(անձնական) բոլոր իմաստներով էլ իրանեանից փոխառեալ է համարում և երկու տեսակ* սար *զանազանելու կարիք չի տեսնում: Սրան հակառակ է սակայն* սարաւել *«բարձրամտիլ», որ զուտ հայկական կազմութիւն ունի և կարելի չէ փոխառեալ համարել պրս.* sar *«գլուխ» բառից:* (Pokorny *1. 403 որ ընդունում է հնխ.* k'er- *«գլուխ, գագաթ», անապահով է համարում տալ նոյն արմատին նաև «բարձրանալ» իմաստը: Հյ.* սարաւել *ձևը միանալով յն.* κερουνιάν *բառին՝ հաստատում է հնխ.* kér- *«բարձրանալ, բարձրամտիլ» նշանակութիւնը): Յակոբեան տե՛ս* Պար: *Մառ,* Основн. табл. *էջ 6 եբր.* הר har *«լեռ» և վրաց.* სერი *սերի «լեռ, լեռան գլուխ» բառերի հետ. սեմական արմատն է* hrr, *որի յարեթական է* srr: *Մառ,* Крит. и мелк. ст. *էջ 28* սար *(լեռան) ուղղելի է համարում* սայր, *ինչպէս ցոյց է տալիս վրաց. սերի: Թիրեաքեան ՀՄ. 1912, էջ 288 նոյն ընդ* սայր *և* ծայր:

ԳԻՒ.— Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Երև. Ղրբ. Կր. Հմշ. Մկ. Մշ. Ջղ. Շմ. Սեբ. Սլմ. Վն. Տփ. սար, *Մրզ.* սառ, *Ագլ.* սօր *«լեռ»:— Նոր բառեր են* սարւոր, սարաչափ, սարապարան, սարեցի:— *Սրա՞ն պէտք է կապել, թէ պրս. նոր փոխառութեամբ պէտք է մեկնել Ղրբ.* սար *«գործ գործելու կամ ջուլհակի ոստայնի ամենաբարձր գերանը», որից և* սարագաբայ, սարավայր:

ՓՈԽ.—Վրաց. სერი *սերի «բլուր»:*

**ՍԱՐ «գլուխ, գլխաւոր». այս իմաստով առանձին գործածուած չէ. բայց սրանից են* սարապետ *«գլխաւոր, իշխան» Թէոդ. կուս.* աղանդասար *«աղանդաւորների գլուխը» Երզն. մտթ. 303 (հմմտ.* աղանդագլուխ *Ուռհ. 239),* կախարդասար *(ի–ա հլ.) «կախարդների գլխաւորը» (տե՛ս առանձին).* մեծասար *«երկավանկ բառ, որի առաջին վանկը երկար է, երկրորդը՝ սուղ» Թր. և Երզն. քեր.:*

=Պհլ. sar, *պրս.* sar *«գլուխ» բառից. աւելի ընդարձակ տե՛ս նախորդ* սար *բառի համեմատութեանց մէջ:— Հիւբշ. 236:*

ՆՀԲ կախարդասար *բառը հանում է* արաւօղ, սարաս, սարօֆ, սարֆ *ձևերից:*

Միւսները տե՛ս նախորդի տակ:

+ՍԱՐ, ու հլ. *«կազմած, կահ, կարասիք, սպաս» (անեզաբար գործածուած) Ուռհ. Շար. Տօնաց. «ձիու կազմած, թամբը ևն» Արծր. 285. Առաք. պտմ. 426. «պատրաստ, սրամադիր» Մխ. բժշ. 40, 43 (տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. 93), Անսիզք 15, 27, 59, Վստկ. 144, որից* սարել *«կազմել, պատրաստել» Սմբ. պտմ. տպ. Մոսկ. էջ 17, 67, տպ. Շահն. էջ 36, 82. Վստկ. 43. «պատրաստ լինել» Անսիզք 35, «ծածկել» Բառ. երեմ. էջ 282,* սարուած *«գործիք» Բրս. մրկ. 14. Վստկ.* սարուրիւն *«հանդերձանք, կազմութիւն» Բրս. մրկ. «զոյք» Անսիզք 45, «սարք, կազմած ձիոյ» Անսիզք 31,* ոսկեսար *«ոսկի կազմածով (ձի)» Թղթ. դաշ.* ոսկե-

սարեայ կամ ոսկեսարեան Կղնկտ. (Հրտ. էմ. 138, ՇՀ. Ա. 291), ոսկիասար Յայսմ. սեպ. 7։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'r̥- արմատից. ընդարձակ տե՛ս սարի-f:—Աճ.

ՆՀԲ չէ՛ բաժանած սար «գագաթ» բառից. իսկ սարճել կցում է սարկաւագ բառին։ Հոդոն, Բանաս. 1907, 10 անս. çri, զնդ. sar «յարել, հաւաքել, միացնել»։ Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 48 այստեղ է դնում մեծասար որ յարմարեալ է համարում պհլ. msā-sār անծանօթ ձևից, հայերէնի օգնութեամբ կարդալով այս բառը մեսասար և թարգմանելով «մեծարուէստ, հոյակապ»։

ԳԻՒ.—Սրանից են սարել Վն. «յարդարել», Ղրբ. Շլ. «լարել», Խն. «մանել», Սս. «դուրս ժայթքել, ցայտել», Խն. Սս. Տիգ. «նետել, գցել, մի կողմ ձգել», այս զանազան առումների համար հմմտ. հյ. արկանել, յարկ ևն։ Նոր բառեր են սարադրել «լարել, յարդարել», սարադրուկ «յարդարուած», սարուկ, և f յաւելուածով՝ սարֆ, սարֆել (Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. սարֆ, Երև. սա՛րֆէլ, Շմ. Տփ. սարֆիլ, Մրղ. սառֆէլ ևն), սարֆուիլ, սարֆոսել, սարֆռսել, սարֆռվի, սարֆուկ, սարֆռրիլ, որոնցից առաջին երեքը ընդունուած են արևելեան գրականում և վերջերս էլ սկսան գործածուիլ արևմտեան գրականում։

*ՍԱՐ «ապիկի, ջնարակ», որից կայ միայն սարած աման «ջնարակած ամանն Վստկ. 186։

=Թրք. سر sər կամ صر sər «ապիկի, ջնարակ»։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս նախ ՀԱ 1908, 123։

*ՍԱՐԱԽ «անասոյզ մի բոյս» Կամրկպ. ունի միայն ՀԲուս. § 2713, որ նոյն է համարում նաև սարախս, սէրախս «պտեր, fougère»։

=Արաբ. سرخس saraxs «պտեր». (տե՛ս Steinschneider-ի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 93), պրս. سرخس saraxs «է անուն դեղոյ իրիք... է փայտ ինչ սեաւ» (ԳԴ)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՍԱՐԱԿ «էգ ձի». ունին միայն ՀՀԲ, ՋԲ, ԱԲ։ Վկայութիւնը անյայտ։

*ՍԱՐԱԿ «բանուոր, գործաւոր». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Հաւաք. էջ 56 (իսկ Գաւաշուց երկիրն՝ տուն վեցքիմ, տուն սարակ մ', տուն հաւ մ') և ժմնկզր. ԺԸ դարից (Դիւան, Ժ էջ 123)։

=Արամ. סָרָךְ sārak «թագաւորական պաշտօնեայ, նախարար» (որ ըստ Gesenius[17] 918 ոմանք բնիկ սեմական են համարում, ուրիշներ պարսկերէնից փոխառեալ)։ Նշանակութեան տարբերութեան համար հմմտ. լտ. minister «ծառայ, նախարար»։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 143։

ԳԻՒ.—Գործածական է Մկ. Շտ. Սլմ. Վն. սարակ ձևով և «օրականով աշխատող բանուոր» իմաստով, որից սարակախափան «գործից դադար՝ որևէ արգելքի պատճառով»։

*ՍԱՐԱՂՈՒՃ «կնգուղ, վեղար». ունի միայն ԱԲ. սարաշուն ձևով (առանց վկայութեան), որ սխալ է և պէտք է ուղղել սարաղուն, ինչպէս ցոյց են տալիս տակի գաւառական ձևերը, և ինչպէս գտնում եմ մէկ անգամ գործածուած Քուշակին վերագրուած մի տաղի մէջ (Հրտր. Արեգ 1924, էջ 194)։ Սխալը յառաջացած է ղ և շ տառերի ձևական նմանութիւնից։

=Պրս. سراغوج sarāγūj «վարսակալ, որի մէջ կանայք իրենց մազերն են ամփոփում». որ և سراغوش sarāγūš կամ سراکوش sarāgūš։ Սրանցից են փոխառեալ նաև թթր. سراغج seraγuǰ (Будаговъ 1, 624), թրք. صورغوچ sorγuǰ կամ صورغوچ sorγuč «ցցունք», վրաց. სარაღუჯი սարաղուջի «մի տեսակ հին ձևի գլխարկ. 2. ցցունք»։—Աճ.

Սոյն մեկնութիւնս տպուած է նախ ՀԱ 1908, 123։

ԳԻՒ.—Նոյն են սարախուն ՋԲ. «աղջկանց ֆէսի վրայ՝ ծոպի շուրջը՝ իրրև զարդ խիտ

առ խիտ շարուած 4—5 կարգ արծաթեայ մէկ փարանոցներ», սարաղուճը Վն. և Խոջ. *«մէկ քիլ լայնութեամբ և արծաթէ դրամներով, վահանակներով, ուլունքներով և նախշերով զարդարուած մետաքսէ կտոր, որ կանայք իրենց յետևից՝ մէջքից ցած կախ են տալիս»։*

ՍԱՐԱՆ *«կայմը հաստատ պահող չուանը,* hauban*». իբր նորակերտ բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 633ա։*

Ինչպէս է կազմուած՝ յայտնի չէ։ Կայ թրք. سرن seren *«նաւի կայմ»։*

ՍԱՐԱՍ, ի, ո *հլ. «տարազ, ձև, կերպ» Խոր. Պիտ. Արծր. Նար. որից* սարասիլ *Պիտ. Քեր. քերթ.* ևմանասարաս *Գնձ. լուսասարաս Գիւտ. իւրեանցասարաս Պիտ. սխրասարաս Նար. խչ. Օրբել. Հրտր. էմ. էջ 34.* ծովասարաս *ԱԲ. նաև* սարասել *«յարմարել, կարգել?» Տիմոթ. կուզ. էջ 320։*

Նշ՛ Թուի կցել հյ. տարազ, *թրք.* դարզ *բառերին։*

ՍԱՐԱՍԻ *«յաղթահասակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պտմ. աղէքս. 134 (սէդ և սարասի բարձրութեամբ)։*

ՍԱՐԱՍԱԽԻ *«կանացի մի գլխազարդ, որ ճակատին են կապում». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Այրիվ. 8 ա. «Սա դամոանկի քում գլխի և սարասախի ճակատի»։*

=Պրս. سرجس Saraxs *քաղաքի անունի՞ց է. համմտ.* շուշքարի, բաղդադի։—*Աճ.*

ՍԱՐԱՏԱԿ *«մի տեսակ թռչուն» Մագ. (յիշուած է բուի հետ. ըստ Քաջունի, հտ. Գ. 215 լտ.* buteo, *ֆր.* buse*)։*

*ՍԱՐԱՏԱՆ *«խեցգետին կենդանակերպը» Երզն. երկն. Թ. որ և* սարաթան *«խեցգետին հիւանդութիւնը» Մխ. բժշ. 113։*

=Արաբ. سرطان saraṭān *«խեցգետին»։—Հիւբշ. 276։*

Նշ՛ պրս. սէրէդան։ Lag. Armen. Stud. § 1959 *ասոր. և արաբ.* saraṭān*։*

[ՍԱՐԱՐԱՅ, *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած է Եւս. պտմ. 173. Ի նոսա և մաքառումն առ Ափիոն գրամարտիկն սարարայն՝ զոր գրեացն. ընդդէմ Հրէից. և յայնմ ժամանակի և առ այլս, որ կամեցան չարախօսել զազգէն Հրէից. (յոյնն ունի՝ Ընդդէմ Ափիոնի գրամարտիկոսի որ ի ժամանակին յայնմիկ՝ գրով հակառակէր Հրէից և այլոց ոմանց չարախօսաց).— համապատասխան մի բառ չգտնուելուց յայտնի է, որ յետին աւելադրութիւն կամ խաթարեալ մի բառ է, որ Վարդանեան, Բառաք. դիտ. Ա. 94 ըստ ասորի օրինակին, որ հայերէնի բնագիրն է, ուղղում է «գրամարտիկն* սարար՝ այն nr գրեացն»։]

ՍԱՐԱՒԱՆԴ *«հրուանդան, ծովի կողմը բարձրացած տեղ» Պտմ. աղէքս. որից* սարաւանդակ *Ագաթ. կղնկտ. Հրտր. Էմինի, էջ 189. Պիտ. որ և* սարևանդակ *Կղնկտ. Հրտր. էմ. 163, 173.* սարաւանդել *«բարձունքի վրայ մի շէնք կանգնեցնել» Պղատ. օրին. 162.* սարաւանդիլ *«մի բարձր տեղ նստիլ» Մագ. թղ. 140, 182։*

=Կազմուած է հյ. սար *և* -ւանդ *բառերից. վերջինիս վրայ ընդարձակ տե՛ս* բարձրաւանդակ։

*Նշ՛ «*սար... կարկառել աստի և անդր*»։* Lag. Urgesch. 302 սար *բառից՝* -vat *մասնիկով։ Հիւնք. նաւասարդ բառից։* -ռանդ *բառը պրս. լինելով՝ կարելի էր կարծել, որ ամբողջ բառը իրանեան բարդութիւն է՝ իբր* *sarband *ձևից փոխառեալ, որից հետևելու էր նաև թէ* սար *«գագաթ» էլ պրս. փոխառութիւն է. բայց համմտ.* բարձրաւանդակ, *որ կազմուած է նոյն պրս.* -ւանդ *ձևի և բնիկ հայ* բարձր *բառի բարդութեամբ։*

ՍԱՐԱՒՈՅԹ *«բարձրաւանդակ, դիտանոց կամ բարձր պալատ» Մխ. այրիվ. էջ 61. Կիր. պտմ. (Տրդատի ապարանքի համար է ասում). գրուած* սարաւուք *«հեկեղեցու բակի մէջ կրօնաւորի յատուկ բնակարան, առաջնորդարանի շէնքը» Առաք. պտմ. 225. նոյն բառն է և* սարոյթ, *որ ունի Բառ. երեմ. էջ 81՝ դստիկոն բառի բացատրութեան մէջ։*

*ՍԱՐԲԻՆԱՅ *կամ նաև* սարփինայ, սարբնայ *«խեչակ, բոյսը բարձրացնելու նեցուկ» Վստկ. 56, 61, 63, 181. արդի գրականում*

«խաղողի որթը վրան բարձրացնելու համար շինուած փայտեայ կազմած, թրք. **ասմալըխ»**։

=*Կազմուած է պրս.* سر sar *«գլուխ»* +بنا binā *«շէնք» բառերից,* sar *«գերան, սիւն, կազմածի փայտ, նեցուկ» նշանակութեամբ գործածուած ենք գտնում Ղրբ.* **սար** *«գորգ գործելու կամ ջուլհակի ոստայնի ամենաբարձր գերանը, որի վրայից կախուած են հինածները», վրաց.* **ხარი սարի** *«որթատունկի տակի նեցուկը», հյ.* **սարի** *«կայմ, սիւն», վրաց.* **ხარვა սարվա** *կամ* **მოხარვა մոսարվա** *«որթատնկի տակ յենարան դնել».— իսկ* binā, *որից արևել. թրք.* bünä *նշանակում է «որթատունկի առջև բարձրացած թումբի թեք մասը կամ լանջը, որի ետին գտնւում է որթատունկը». գործածական է նաև Սալմաստի հայոց բարբառում։ Ամբողջը փոխառեալ է պարսկերէնից, որի գոյութեան ապացոյց է ասոր.* صرصد sarbinā *«ցից կամ սարբինայ», գործածուած արդէն Սիր. իր. 18* (Brockelm. Lex. syr. *505 բ)։ —Ա՛ճ.*

ԳԻՒ.—Խրբ. **սmրբ'mնm** *կամ* **սmրբ'ինի**, *Զթ.* **սայբ'ուն**, **սարբ'ուն** *«խաղողի որթի նեցուկ»։*

ՓՈԽ.—Թրք. գւռ. Եւդ. سرپنا särpänā *«սարբինայ» (Յուշարձան 329)։ Հայերէնից փոխառեալ պէտք է համարել ի ձայնի պատճառով։*

ՍԱՐՊ, *ի հլ. «Լիբանանի մայրի,* cedrus Libani» *(այսպէս ըստ Արթինեան, Ածաշնչի տունկերը 144. սխալ է դնել ըստ ՆՀԲ «դափնի կամ նոճի») ՍԳր. Ագաթ. Փիլ. լիւս. 169. Եփր. երաշտ. 209. որից* **սարդի** *Վեցօր. 92. Մխ. առակ.* **սարդիատունկ** *Նար. տաղ. 465.* **սարդենի** *Պղատ. օրին. Երզն. քեր. Մագ. Թղ. էջ 221.* **սարդենեան** *Մագ. ոտ. խչ.* **սարդենասեր** *«սարդենի ծառից յառաջացած» Նար. խչ.։*

Lag. Ges. Abhd. 29 *յիշում է պրս.* saraxs *ծառը։ Հիւնք.* **սա(ղաւա)րտ** *բառից համառօտուած։ Արթինեան, Ածաշունչի տունկերը 144 պրս.* سدر لبان sadr-i-Libān *հոմանիշ ձևից փոխառեալ. (բայց այսպիսի ձև չունի ԳԻ. կայ արաբ.* سدر sidr *«մի տեսակ ծառ, որ ունի ընտանի և վայրի տեսակներ», ըստ Կամուս, թրք. Թրգմ. Ա. 889)։*

+**ՍԱՐԴ**, *ի հլ. «մամուկ, գործարար մի-ջատը» ՍԳր. Վեցօր. 121. Փիլ. լիւս. Նար. 257, որից* **սարդիոստայն** *ՍԳր. Վեցօր. 121. Ոսկ. մ. բ. 24. Ճառընտ.* **սարդաճկու** *«նըրբահիւս» Փիլ. տեսակ. 20.* **սարդարոյն** *(նոր բագիւտ բառ) «սարդի ոստայն» Վրք. և վկ. Բ. 447։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* k'r̥-ti *ձևից. մանրամասն տե՛ս* **սարի**:

Canini, Et. étym. 121 *պրս.* كارتنه kārtana *հոմանիշի հետ։ Գարագաշեան (անձնական)՝ ծագում է* **սարդ** *«դափնի» բառից՝ ըստ նմանութեան չն.* δάφνη *«դափնի» և պրս.* تفين tafīn *«սարդոստայն» բառերի։* Müller, Armen. *VI Բ. 57 չն.* ϰϫώϑω *«մանել» բառի հետ՝ իբր բնիկ հայ։ Հիւբշ. 489 չի ընդունում այս մեկնութիւնը, որովհետև* r *և* l *տարբեր են և յունարէնի նախաձևը կասկածելի է։* (Osthoff *կցում է լտ.* colus *«իլ» բառին. հայը ենթադրում է միայն հնխ.* k'r̥ti- *կամ* k'r̥dhi-*ձևը)։ Ուղիղ մեկնութիւնը տուել է* Petersson *(տե՛ս* **սարի**):

ԳԻՒ.—Կայ միայն Համշ. **զայր** *«սարդ».—* **սարդոստայն** *բառից է կրճատուած Ախց.* **սարդօստ** *«սարդի ոստայն» (ՆՀԲ ունի նաև* **սարդոյ**՝ *իբր գւռ. բառ), իսկ **սարդոստայնիկ *ձևից են Ալշ. Բլ.* **սարաւնդօստիգ**, *Վն.* **սարաւնդէօստիկ**, *Մշ.* **սալաւնդօստիգ**, *Մկ.* **սmրmնդէօստիկ** *«սարդի ոստայն կամ սարդ».— Տիրոյեան, Հանրագրութ. 586 գիտէ նաև* **սանտրոստի** *«մամուկ, սարդ» բառը.—Հին հայերէնի* **սարդարոյն** *ձևն է ներկայացնում* **սարդրոյն** *Համշ.։*

ՓՈԽ.—Վրաց. **ზარდლი զարդլի** *կամ* **დედა-ზარდლი դեդա-զարդլի** *«սարդ». վերջինս բուն նշանակում է «մայրիկ սարդ», որի համար հմմտ. գւռ.* **մամուկ** *«սարդ»՝ մամ «մեծ մայր» բառից.— նախաձայն* **գ**-*ի համար հմմտ. Համշ.* **զայր**:

ՍԱՐՊ *«մի տեսակ թռչուն.* **սարնակ**, **տարմահաւ** *Գաղիան.։*

*ՍԱՐԴԻՈՆ, ի հլ? «մի տեսակ ազնիւ քար» ՍԳր. խսիւք. Տօնակ. Մագ. Խոր. աշխ. որից սարդեղունգն Բրս. ընչեղ.։

=Յն. σάρδιον «cornaline կամ sarde կոչուած ազնիւ քարը». ծագում է Լիւդիոյ մայրաքաղաք Σάρδεις-ի անունից? (Boisacq 853). յոյնից են փոխառեալ նաև լտ. sardius, վրաց. ხარდიონი սարդիոնի. (իսկ հյ. սարդեղունգն թարգմանաբար շինուած է յն. σαρδόνυξ «sardoine» բառից)։—Հիւբշ. 377։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՍԱՐԴՈՅ «Սարդինիա կղզուն յատուկ թունաւոր մի խոտ» Ոսկ. ունի միայն ՀԲուս. § 2717։

=Լտ. sardoa (herba) «mélisse խոտը, որ Սարդինիայում թունաւոր է»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՍԱՐԴՈՒՀ, ո հլ. «այծի կամ ձիու մաղից շինուած չուան». ունին միայն ՀՀԲ և ՓԲ. անստոյգ բառ։

*ՍԱՐԵԱԿ «մի տեսակ թռչուն. կեռնեխ, տարմահաւ ևն» Վեցօր. 163, 174. Մխ. առ. Բժշ. Արշ. փիլ. (լուսանցքի վրայ). բոլորի մէջ էլ գրուած է ռմկ. սարիկ կամ սարեկ ձևով. (սրանից նաև ցախսարեկ Մխ. առակ). այնպէս որ բառարանների նշանակած և արդի գրականի մէջ ընդունուած սարեակ ձևը վկայուած չէ։

=Պհլ. *sārīk ձևից փոխառեալ. հմմտ. պհլ. sār, պրս. ساری sārī «է թռչուն իմն», سار sār «սարեակ», سارسبز sār-i-sabz «է տեսակ իմն սարեկի, որ լինի կանաչեգանգ», ڤرچ سار sarīča «է փոքրիկ թռչուն իմն, որ ունի զտուտն երկայն և յաճախ յափունս ջուրց շրջագայեալ՝ փերևեաք զտուտն իւր» (որից թրք. چرچ serče «ճնճղուկ»), سارج sāraǰ, sāruǰ, سارنج sārunǰ «է անուն փոքրիկ թռչնոյ միոջ յաղգէ լուսիննկի, որ քաղցր և անոյշ երաժշտեալ եղանակէ», سارك sārak «է թռչուն ինչ քաղցրաձայն, որ լինի յոյժ սեաւ ըստ մեծութեան յոտպի, զոր ոմանք կարծեն լինել հէզարուէսթան», سارو sārū «է թռչուն իմն քիևգանգ, որ լինի ի Հնդիկս»։ Սրանց մէջ ամէնից աւելի յարմար ձևերն են sārī՝ որ տալիս է պհլ. sārīk (սրանից կարող է գալ հյ. սարիկ) և sarīča՝ որի նուազական մասնիկը կարող էր թարգմանուել հյ. -եակ։—Իրանեան ձևերի հետ կարելի է համեմատել սանս. çārі, çārikā, sārikā, լիթ. šárka, հպրուս. sarke, սերբ. sräka, լեհ. sroka, ռուս. copóka, հսլ. svraka, ալբան. sorе, բոլորն էլ թռչունների անուններ, որոնց նախաձևը դրւում է բնաձայն k'er, k'or-, k'ṛ- արմատը (Pokorny 1, 414, Trautmann 299):—Հիւբշ. էջ 236։

Նախ ԳԴ կցեց պրս. սար, սարէճ, սարէֆ ձևերին։ Böttich. Arica 67, 101, Lag. Urgesch. 765 պրս. sār: Lag. Arm. Stud. § 1963 յն. σελευχίς սրանից յունացած մի ձև՞ է։ Հիւնք. պրս. šārak «սոխակ»։ Petersson KZ 47, 270 իբր բնիկ հայ կցում է սանս. çārі-, çārika-, ռուս. copoka, լիթ. šarka ձևերին, առանց նկատի առնելու իրանական ձևերը։ Նոյնը օրինակում է Pokorny 1, 414։ Պատահական նմանութիւն ունի յն. ψάρ «սարեակ»։

ԳԻՒ.—Զղ. վն. սարէկ, Ալշ. Մշ. սարեգ, Խրբ. սարէֆ՛, Մկ. սիվ-սարիկ (որ է սևսարեկ)։

ՓՈԽ.—Սրանի՞ց է լազ. սուրիկի «սարեկ» (Աճառ. Արրատ. 1911, 418)։—Patrubány SA 1, 312 մեզանից է դնում հունգ. seregély «սարեակ»։

ՍԱՐԵԼ «դողալ, կայծակահարել, սարսռեցնել» Բառ. երեմ. էջ 282, «խիզախել, խրոխտալ, սպառնալ, գոչել, մռնչել ի վերայ ուրուք» ըստ ՀՀԲ, ՋԲ և ԱԲ (որի փոխարէն ՆՀԲ ունի սաարեաց. մէկ անգամ գործածուած է Մծբ. ձ. իբրև կենդանի զօրեղ մոլութեան սաստկման սարեաց)։

ՍԱՐԻՄԻՋ «գեղարդ». ունի միայն Բռ. երեմ. էջ 282։

+ՍԱՐԻ (-եաց,-եօ. գործածւում է անեզաբար) «շղթայ, կապանք» Բուզ. 130, 212. Խոր. կայ նաև գրծ. սարիւ Նեղոս 648, որ ենթադրում է ուղ. սար (բայց նոյն վկայութիւնը ՆՀԲ դնում է սարեօ ձևով և իբր վրք. հց.)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'r̥- արմատից, որ ստորին ձայնդարձն է k'er- «կապ, հիւսուածքի թել, հիւսել, կապել» արմատի։ Սրա ժառանգներն են սանս. çṛn-kha-la «կապանք, շղթայ», յն. καῖρος «հիւսուածքի կապի թել», καιροσέων «լաւ հիշուած, լաւ պատրաստուած», καίρωμα «հիւսուածք, առէջք», καιρόω «հիւսուածքը միասին կապել», κειρία «անկողնի կապ մեռելի պատանք», καιρωστίς «ոստայնանկուհի»։ Հայերէնի մէջ նոյն արմատը (k'r̥- ստորին ձայնդարձով) տալիս է սարել, սարֆել, սարի, սարդ.—սրանցից սարել, սարֆել «կազմել, պատրաստել» նոյն են յն. καιροσέων բառի նշանակութեան հետ, բայց մանաւանդ կայ գւռ. սարել «մաննել». երրորդը՝ սարի «կապանք, շղթայ» նոյն է սանս. բառի հետ. իսկ սարդ բառի համար, որ գալիս է հնխ. k'r̥-ti- ձևից, համմտ. գւռ. գործարար, որ է «սարդ» և «ոստայնանկ» (Pokorny 1, 409, Boisacq 393):

ՆՀԲ սիրայ բառի հետ, «լծ. և ձար, շար, Թրք. սըրա, սարկը, սարմագ», Böttich. Rudim. 54, 233 ասոր. śārā, հբր. śērā. և յն. σειρά «կապ» բառերի հետ։ Pictet 2, 165 սանս. sarat ևն։ Հիւնք. սեռն բառից։ Bugge KZ 32,65 յն. σπάρτον «չուան» բառին ցեղակից։ Սագըզեան ՀԱ 1909, 335 և Karst, Յուշարձան 407 սումեր. sar, sur «կապել»։ Սարի և սարդ բառերը վերի ձևով մեկնեց Petersson, Studier tillegn. Es. Tegnér 1918, էջ 227—8 (տե՛ս Pokorny 1,409), որի վրայ աւելացնում եմ սարել բայը։

*ՍԱՐԻ «կայմ, սիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած լծ. Նար. իե. «Կայմն՝ սարին է, այսինքն սիւնն կամ որ ի ծայր սեանն է խոտորնակ ձողն, որ պարզէ զկտաւն»։

=Իբր պարսկական փոխառութիւն տե՛ս սարբինայ։—Աճ.

*ՍԱՐԻԱՔ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կեղծ-Շապհ. էջ 73. Եւ ի գիշերի սարիաթ արար Հապիպն և հասաւ ի վերայ զօրացն Սմբատայ։

=Արաբ. سرعت sur'at «արագացնել, շտապում» բառն է. Կամուսի ծուռածաւալ բառարանում (Թրք. Թրգմ. Բ. 597) չկայ sar'at ձևը, որով ենթադրում եմ թէ վերի բառն էլ պէտք է կարդալ սուրիաթ։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 64—65։

ՍԱՐԻԿ «պարկերէ. մի տեսակ կենդանի». ունի միայն Տիրոյեան, Հանրագրութ. էջ 204 և 587. աղբիւրը անյայտ։

Սարիսախ տե՛ս Խարիսխ։

Սարկաւաճ «գինու մեծ գաւաթ» տե՛ս Արկ-անել։

Բառս գործածուած է մէկ անգամ Սեբեր. Բ. էջ 164. «Եւ այն իսկ են զարմանալիք, զի մատուռակը արբեալ առաւելութեամբ սպասաւորութեանն ծանրանան, և դուք որ այդչափ զսարկաւագս աստուածեղէն բանիւն քամեցէք և յետ արբեցութեանն ծարաւի էք»։ Բառարանները նշանակած են սարկաւագ Վարդանեան ՀԱ 1911, էջ 19 ուղղում է սարկաւաճ՝ կազմուած սարկանել բայից, իբր Թրգմ. յն. κρατήρ «գինու աման» բառից։ (Յն. κρατήρ գալիս է κεράσω «խառնել» բայից և բուն նշանակում է «խառնարան». այսպէս է կոչուած գինին ու ջուրը միասին խառնելու պատճառաւ։ Յն. κεράσω Թարգմանւում է հյ. խառնել կամ սարկանել (ջուր, գինի). ուստի κρατήρ ձևն էլ պիտի Թարգմանուէր խառնարան կամ սարկաւաճ):—Հացունի, Ճաշեր 78 պրս. սէրկիւրան «գլխագարութիւն ի գինւոյ», որով ենթադրում է «մեծ ըմպանակ, որով կարելի էր արբենալ»։— Համմտ. նաև սակաւաճ։

ՍԱՐԿԱՒԱԳ, ի-ա հլ. (յգ. նաև -գունք) «սպասաւոր, ծառայ» Փիլ. տեսակ. Միխ. աս. Ոսկիփ. «եկեղեցական պաշտօնեայ՝ որ սպասաւորում է պատարագչին» ՍԳր. Ոսկ. Փիլիպ. «ԴՍ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամատունի, Հայոց բառ ու բան, 585). որից սարկաւագել «ծառայել» Փիլ. նխ. Սարկ. քհ. սարկաւագունի Ոսկ. ա. տիմ. (այս վկայութիւնը ստոյգ չէ՝

քատ Յուշարձան 310). սարկաւագութիւն *Եփր. ա. տիմ.* կիսասարկաւագ *Լմբ. պտրգ.* նախասարկաւագ *Ճառընտ. Մաշտ.* յառաջ-սարկաւագ *Բուզ. ռամկաձև գրուած է բառս* սարկաւարգ *Եփր. փիլիպ. 154, տիտ. 262,* նաև սարգաւարգ:

Հներից Լմբ. մատ. էջ 263 տուգաբանելով բառս՝ ասում է. «Սարկաւագն պաշտօնեայ թարգմանի և սպասաւոր». այս բացատրութեամբ բառը օտար է համարում, բայց թէ ո՛ր լեզուով՝ յայտնի չէ: Ճիշտ նոյնը կրկնում է Յհ. արճիշ. 41: ՀՀՒ սար «գլուխ» և աւագ *բառերից: Աւետիքեան, Մեկն. թղ. Պօղ. Գ. 455 յիշելուց յետոյ Լամբրոնացու մեկնութիւնը, աւելացնում է. «այլ մարթ է և ընթեռնուլ սա կայր աւագ, ոմանք զայլ և տուգաբանութիւնս յարմարեն»: ՆՀՒ լծ. լտ.* sacr *և սարկամ որպէս թէ մատուցանող սարկաբանի, սպասարկու կամ մատուցակ աւագ. կայ և պրս. սէրակ «մատուցակ և բաժակ», իսկ սէրհեար «աւագն ծառայից», սէրիհեար «վերակացու գործոյ»: Նոյն, յաւել. էջ 1066 գւռ.* սարգել *կամ* սարկել *(իմա՛* սարհել, *որի արմատն է* սար) «կազմել, հանդերձել» *ձևից է դնում: Հիւնք. սկաւառակ բառից: Յակոբեան (ո՞ւր) դրել է պրս. սէրխավան «դպրապետ» բառից, իսկ Կուրտիկեան, Արևելք 1899, № 4060 դնում է իբր պրս.* սարխավակ «գլխաւոր պաշտօնէից» *(իմա՛* سر sar «գլուխ» +خوگ xavag «սպասաւոր», *որի ծագումը չգիտէ* Horn. *բայց կայ արաբ.* خول xaval «սպասաւոր», *որ ունի Գ Դ, բայց չգիտէ Կամուս): Ընդունում է Յակոբեան, Ծաղիկ 1899, նոյ. 4/16, մերժելով իր մեկնութիւնը:*

Գիհ.—Երև. Կր. Մրզ. Ջղ. Սլմ. սարկավաք, *Վն.* սարկավաք՝, *Ռ. Սեբ.* սարգավաք, *Մկ.* սուրկավաք՝, *Տիգ.* սուրգուվուք, *Շմ.* սարկավակ, *Ննխ. Պլ.* սարգավաք, սարգավարք, *Գոր.* սրկա՛վաք, *Ղրբ.* սրկա՛վաք՝, սրկա՛վարք՝, *Ախց. Տփ.* սարկավարք, *Մշ.* սարգավարք, սարգէվարք, *Սվեդ.* սուրգուվիւք, *Ասլ.* սարգըվաք, սարգըվա*, *Զթ.* սայգավօյք, սարգավորք:

Փոխ.—Մտել է Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ՝ Փիլ. ա. 1՝ Պը եպիսկոպոսան ու սարկավագան (եպիսկոպոսակցօք և սարկաւագօք):

ՍԱՐԿԱՒԻՒ. *անծանօթ մի բոյս. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2720:*

ՀԲուս. մեկնում է սար «լեռնային» +կաւի, *որ գտնում է նաև օձկակաւի բառի մէջ:*

Սարկեաւաւ *տե՛ս Արկ-անել:*

Այս բառը մէկ անգամ գործածել է Վեցօր. ը. 161. «իսկ գիշակերք հաւուցն՝ որ յորսոյ կեան և ճիրանունք և սարկեաւաւք տուան»: ՆՀՒ, ՋՔ և ԱՔ մեկնում են սարկեաւաւ *«մագիլ, ճիրան, սուր եղունգներ»: Առաջին անգամ Մատթէոս Այվատեան, Մասիս 1853 մարտ 25, մի բնաիր ձեռագրում գտնելով «ճիրանունք և արկեաւաք տուան» ընթերցուածը, համարում է այս ուղղագոյն ձևը և մեկնում է* արկանել և առնուլ *բառերից: Այսպէսով* արկեաւ *ո՛չ թէ գոյական է, այլ ներաո բառի ածականը՝ «յափշտակող» նշանակութեամբ: Նոյնը ունի նաև Նորայր, Հայկ. բառաք. 25, որ բառիս կազմութեան իբր օրինակ է բերում* առուեաւ, հասեաւիկ:

ՍԱՐՂԱՆՊ «մի տեսակ բոյս. telephium imperati» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2721:

=Արաբ. سرغنت sarγant *նոյն նշ. (տե՛ս* Steinschneider-*ի հաւաքածոյի մէջ՝* WZKM *12, 93):*

Ուղիղ մեկնեց ՀԲուս:

ՍԱՐՄԱԽ «մի տեսակ բոյս, թաղթ, թայլ, լտ. atriplex, *ֆր.* arroche» *Բժշ. ունին միայն ՀԲուս. § 2722 և Նորայր, Բառ. ֆրանս. 91ա:*

=Արաբ. سرمق sarmaq *նոյն նշ. (տե՛ս* Steinschneider-*ի հաւաքածոյի մէջ՝* WZKM *12, 94):*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 1796:

ՍԱՐՈՅ «նոճի» ՍԳր. Ագաթ. (սխալ է գրուած սարոյց *Պտմ. աղէքս. 145). որ և* սարուէն *Բառ. երեմ. յաւել. 571. (Քաջունի, հտ. Գ. 216* սարոյ *համարում է «platane»). որից* նոճսարի՞ *Օրբել. ողբ. ժդ:*

=Պհլ. անծանօթ մի ձևից, որի հետ նոյն է պրս. سرو sarv, sarū կամ سرون sarūn «նոճի». սրանից են արաբ. سرو sarv (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 837), Թրք. سروی servi կամ سلوی selvi (ռմկ. սէվլի) «նոճի». սըբրանցից նաև սաուէ «կիպարիս» Գաղիան.:— Հիւբշ. 237։

Նախապէս բառիս իմաստը որոշ չէր. ՆՀՒ, ՋՒ և ԱՒ տատանում են բազմազան նշանակութեանց մէջ. ՆՀՒ դնում է սար «լեռ» կամ Թրք. sarə «դեղին» բառից։ Lag. Urg. 816 պրս. sarv բառի հետ կապակցով, որովհետև սարոյ բառի նշանակութիւնը «Pinus» է կարծում։ Pictet 1, 235 սանս. śarǰa «shorea rosusta ծառի տեսակը», Lag. Ges. Abhd. 79 պրս. sarw,ասոր. ܣܪܘ ṣarū։ ՀՒուս. § 2723 սար «լեռ» բառից։ Հիւբշ. 237 դրաւ կապակցով պրս. sarv՝ սարոյ բառի նշանակութեան անստուգութեան պատճառով։ Բառիս վրայ մանրամասն քննութիւն ունի Արփինեան, Ածաշունչի տունկերը, էջ 99—110, ուր հիմնաւոր կերպով ցոյց է տալիս որ բառիս նշանակութիւնն է «նոճի». (այս հաստատելու համար կարելի է օգնութեան առնել նաև վրացին). համեմատում է պրս. sarv, saru, բայց նաև խալդ. սարու, որից փոխառեալ է զլնում ասուր. շուրմանի, շուրուէնի, ասոր. ܫܘܪܒܝܢܐ, քաղդ. ܫܪܒܐ, արաբ. śarbīn «նոճի»։

Փոխ.—Վրաց. նահռ սարո «նոճի, կիպարիս», իմերել. սարո «նոճի», լազդ. ցարօ, ցարու «գիհի»։

ՍԱՐՈՅ «երկայն զգեստ կանացի». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 216, որից առնում է և ԳԲ։

*ՍԱՐՈՒ «կանաչ մողէս». նորագիւտ բառ. մէկ անգամ գործածում է Վասակ. 155. «էրէ մի կայ՝ որ իւր անուն սարու ասէն»։

=Յն. σαῦρος «մողէս» բառն է, որ գործածուած է յոյն բնագրում, յետոյ անցել է արաբերէն թարգմանութեան և այստեղից էլ հայերէնի։

Ուղիղ մեկնեց Ալիշան, հրտր. Վասակ. էջ 155։

Սարուն տե՛ս Տորոն։

*ՍԱՐՈՒՓԱՐՏԱՅ «արքայական վրա՞ն». մէկ անգամ ունի Մեծոփ. 72 «ետող զառ և զաւար, զվրան և զսարուփարթայն և զամենայն զանձանակս»։

=Պրս. سراپردہ sarāparda «կառուցայ որմ՝ որ թագաւորի և իշխանների վրաններն է շրջապատում» (Vullers), «թագաւորական վրան» (Rosen), «արքունական պալատի մէջ կանանոցի առաջ ձգուած վարագոյրը» (Գ), որից և վրաց. სარაფარდა կամ სრაფარდა սրափարդա «պատի գորգ, գորգապարդ սենեակ»։—Հիւբշ. 276։

ՆՀՒ մեկնում է «կազմած, հանդերձանք» և հանում է սար «կազմած» և ռմկ. փարթալ «կահ կարասի» բառերից։

ՍԱՐՍԱՏ «չոր, ցամաք» (գիտէ միայն ՓԲ), որից սարսատիլ «չորանալ, ցամաքիլ» Վեցօր. 76. Փիլ. լին. 121. սարսատեցուցանել «չորացնել» Վկ. արև. 102, Ճառընտ. սարսատումն վրդն. ծն.։

ՆՀՒ ճարճատիլ կամ սարսիլ ձևից է հանում։

Գիւմ.—Ալմ. սարսրտել, Նխմ. սարսրդել, Ալշ. սարսրտիլ, Բլ. Մշ. սարսրդել, սարսրդդել, սարսրնդել։

ՍԱՐՍԱՐԱԿ «մի տեսակ թռչուն» Մխ. առ. ձխե. (Քաջունի, հտ. Գ. 216 դնում է ֆր. barge)։

=Նոյն կամ նման են հնչում վրաց. ხარხარაչი սարսարակի «canepetière, ազգ ինչ արօսի, ռուս. стрепеть» (Ջուբինով² 1110), քրդ. sürsiârik «մի տեսակ թռչուն», sisâlik «բազէ», simsiyâr, sisiyâr «սև թևերով և աղաւնուց երեք անգամ մեծ՝ որսի սպիտակ թռչուն», պրս. سیسالک sīsālak, شیشلنک šīšalank կամ شیشالنک šīšālank «խաշնահաւ, խաղտտնիկ, bergeronnette». բայց ի՞նչ է այս բոլորի կապը։—Աճ.

Այս համեմատութիւնը հրատարակած եմ նախ ՀԱ. 1908, 123։

Գիւմ.—Կր. սրսրիկ, Մշ. սրսրիգ, Սվեդ.

սրսրօգ.—*Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 600 ունի* սրորիկ, *որ սխալ է։*

ՍԱՐՍԱՒ *«օրինակ». ունի միայն Բռ. երեմ. էջ 283։*

—ՍԱՐՍԱՓ *«սոսկալը, սաստիկ վախ» Գնձ. որից* սարսափել *«սաստիկ վախենալ, դողալ» Ագաթ.* սարսափիլ *Մանդ.* սարսափիւն *«ոսկորների մէջ դող» եզն.* սարսափումն *խոր.* սարսափեցուցանել *Նանայ.* սարսափելի *խոր. Յճխ. Նար.* դիւսասարսափ *Անան. եկեղ.* կայծակնասարսափ *Անան. եկեղ.* սարսափահար *(նոր բառ).—արմատը Բառ. երեմ. 282 ունի* սարս *«երկիւղ» ձևով, բայց սխալ է։*

=*Կազմուած է կրկնութեամբ* սափ *«շարժիլ, երերալ, դողալ» պարզական արմատից, որի այլ կրկնականներն են* սօսափիւն *կամ* սօսափիւն *(տե՛ս անդ)։—Աճ.*

Նշբ «սարսիլ յոյժ հանդերձ սօսափմամբ կամ սարսռալով»։ Հիւնք. սարսել, սարսուռ *և* սրսկել *բառերի հետ՝ Թրք.* sarṣmaq *«ցնցել» բայից։ Նոյնը նաև Թիրեաքեան Բազմ. 1913, էջ 342. իսկ Արիահայ բռ. 329 պրս.* sar āsīma *«գլուխը դարձած»։*

ԳԻՒ.—*Կր. Մկ. Մշ. Շմ. Զղ.* սարսափ, *(Մշ. նաև* սարսապ, սարսապիլ*), Սչ.* սարսափել, *Երև.* սարսափէլ, *Տփ.* սարսափիլ, *Տիգ.* սարսփիլ, *Խրբ. Պլ.* սարսըփիլ, *Ագլ.* սրսա՛փիլ, *Վն.* սէրսփալ *«դողալ, սարսափիլ», նաև Խրբ. Պլ. Սեբ.* սրսըփալ *«մարմնից յանկարծ սարսուռ անցնիլ», Սլմ.* սրսըփալ *«դողալ», Մշ.* սօրսփալ *«սարսափիլ»,* սօրսփմանց *«սարսափահար».—Ննխ.* սարսափ *«խիստ շատ, սոսկալի քանակութեամբ», Թրքախօս հայերից՝ Առն.* սարսփել օլմաք.*—«դողալ, սարսռալ» իմաստի համար իբր հին վկայութիւն համմտ. Վրք. հց. ա. 164. «Ծտիս աղքատ մի մերկ սարսափեալ ի ցրտոյն»։*

ՍԱՐՍԱՓ *«մի տեսակ քամի». վկայութիւնը տե՛ս Հռասափ։*

ՍԱՐՍԵԼ *«դողալ, սոսկալ» ՍԳր. եզն. Ոսկ. յհ. ա. 17. որից* սարսելի *«սարսափելի, սոսկալի» Ոսկ. յհ. բ. 39 և ննջ.* սարսեցուցանել *Եփր. հրաշտ. Խսիւք.* սարսումն *Ջրր. կթ.։*

Նշբ չդ. շարժել, *Թրք.* sarsılmaq*։*

Հիւնք. տե՛ս սարսափ*։ Գազանճեան, Արև. մամուլ 1907, 934—5 Թրք.* sarsmaq *«ցնցել»։ Նոյնը նաև Թիրեաքեան, Բազմ. 1913, 342։*

[ՍԱՐՍԵՆԻԿ *«կասլայ» (որ է դափնի). գիտէ միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 216։ Ըստ իս պէտք է ուղղել* սարդենիկ *և կամ* սարդենի*, որ է «դափնի»։]—Աճ.*

ՍԱՐՍՈՒՌ, ո *հլ. «ցրտից կամ վախից դող» Օր. իր. 22. Ոսկ. մ. բ. 20. Եփր. աղ. Նւս. պոմ. Մծբ. Սերբ. որից* սարսռալ *կամ* սարսիլ *«դողալ, սարսափիլ» Ա. Եզր. թ. 6. Ոսկ. գղ. և յհ. բ. 42 և մ. բ. 24.* սարսռացուցանել *Եւագր.* սարսռալի *Ոսկ. անոմ. և երր.* սարսռագին *Եւագր.* սարսռասէր *Ագաթ.* դիւսասարսուռ *Նար.* դիւրասարսռելի *Բրս. արբեց.* սարսռեցուցիչ, սարսրռազդեցիկ *(նոր բառեր). արմատը գրուած է նաև* սառսուռ*, որի համեմատ՝ բայը* սառսռալ*,* սառսրռել*,* սառսռուլ*, կայ նաև* սարսաուիլ *Եղիշ. կանոն. 364.* սռսռալ *Մխ. բժշ. 81. 83։*

=*Կրկնուած է *սառ պարզականից՝ ձայնաւորի փոփոխութեամբ և բաղաձայնի կրճատումով. փխ. *սառսառ>սառսուռ>սարսուռ։*

Կրկնական է համարում Այտն. Քնն. քեր. էջ 309։ Վերի ձևով մեկնից Աճառ. ՀԱ 1899, 232։ Սագըզեան ՀԱ 1909, 334 Թրք. sar-səlmaq *«խախտիլ»։* Meillet, Altarm. Elementarb. *էջ 43 վերի ձևով, բայց էջ 206* սարսիլ *բայի հետ։ Մաքսուդեան, Շողակաթ 164 կրկնուած՝ իբր* սար+սուռ*։ Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 342 Թրք.* սարսմաք *«ցնցել»։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* صرصر ṣarṣar *«սաստիկ և ցրտաշունչ հողմ» (Աբիկեան, Բառ. տճկ. 1892, էջ 360)։*

ԳԻՒ.—*Տիգ.* սարսոիլ*, Ալշ. Խրբ. Պլ. Սեբ.* սառսռալ*, Տփ.* սարսրալ*, Ախց. Երև. Պլ. Զղ. Ննխ.* սռսռալ*, Շմ.* սռսռիլ*, Թրքախօս հայերից՝ Առն.* սրսռել օլմաք *«սարսռալ, դողալ»։ (*Սռսռել *«դողալ» բայի հին յիշատակութիւնն ունի Բառ. երեմ. էջ 282)։*

ՍԱՐՏ *«գրոյ չափ» կամ* սարտ *«գրչաչափ». ունի միայն Բառ. երեմ. էջ 283, 289։ Ի՛նչ լինելը անհասկանալի։*

ՍԱՐՏ *«խրտչիլ, փախչիլ, բաժանուիլ», արմատ առանձին անգործածական, որից* **սարտրնուլ** *կամ* **սարտչիլ** *(կար.* **սարտեայ***) Միր. խ. 7. Դատ. ժթ. 2. Սղ. ճլ. 2. Մծբ. 312. Եղիշ. Մամիկ. որ և.* **խոռվիլ, մէկի դէմ ոխ պահել** *Եփր. Նին. 116.* **սարտուցանել** *Եփր. Թգ. 356.* **սարտուցիլ** *Ճառընտ.։*

ՆշՀ յիշում է «հարթնուլ, շրտնուլ, խրտնուլ, և սարսմամբ ի բաց ոստնուլ»։ Müller, Kuh. u. Schleich. Btrg. 5, 140 *սանս.* çṛdh *«խրոխտալ»։* Lag. Arm. Stud. § 1966 u=uç+ud+ar: *Տէրվ. Նախալ. 51 հնխ.* kard *արմատից, որ* skard *«խրտնուլ» արմատի նուազական է. համմտ. յն.* ἀ-σκαίρω· *Հիւնք.* **սերտ** *բառից։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 347 պազենդ. և պրս.* سرد sard *«ցուրտ»։ Պատահական նմանութիւն ունին եբր.* שׁרד srd, *ասոր.* صرد srd, *արաբ.* شرد šrd *«վախենալ, փախչիլ»։*

ՍԱՐՏԱԿ *«անծանօթ մի բոյս կամ բժշկական մի նիւթ» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2727։*

Սարփինայ *տե՛ս Սարբինայ։*

***ՍԱՒԱՆ** *(ի–ա հլ. ըստ ՆՀՌ, բայց առանց վկայութեան) «մեծ կտաւ, պատառակալ» Բրս. մրկ. 381, 383. Վրք. հց. Մխ. բժշ. նոր գրականում «անկողնի կտաւ, կամ նրա նման մեծ ու լայն շոր»։ Այս նշանակութիւնն ունի Գիրք մոլութ. 73բ։*

=Յն. σάβανον *«կտաւ, բաղնիսից դուրս գալու ժամանակ վրան չորացնելու շոր». որից փոխառեալ են նաև մլտ.* sabanum, *գոթ.* saban, *հրգ.* saban, *հլ.* savanŭ, *ռուս.* саванъ *«պատանք», սպան.* sabana, *հֆրանս.* savène, *վրաց.* **სამანო** **սաբանի** *«վերմակ», թուշ.* saba *«ծածկոց», նաև պրս.* ساون sāvna *«նորածինը փաթաթելու շոր?» (Հնդկաստանի պրս.* صیوان ṣaywān *«հովանի անելու շոր, թէնթէ» (Իրն-ի Բատուտա, Գ. 415) ծագում է պրս.* سایبان sāyabān *կամ* سایوان sāyavān *«հովանի» ձևից և կապ չունի նախորդի հետ)։—Յոյն բառը արևելեան ծագում ունի. համմտ. արաբ.* سبنيّة sabaniyya *«սև մետաքսեայ սաւան՝ որ կանայք իրենց վրայ են առնում»,* اسبان asbān *«նուրբ շոր՝ որ կանայք իրենց գլուխն են ծածկում». սրանք յառաջանում են* سبن Saban *գիւղաքաղաքի անունից՝ որ գտնւում է Բաղդադի մօտ (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 645—6,* Boisacq *848)։—Հիւբշ. 377։*

Ուղիղ մեկնեց նախ Du Cange 1313:

Հիւբ. պրս. sāvna-*ից։*

ԳԻՒ.—Մշ. Նախ. Ջղ. Սչ. Վն. **սաւան, Զթ. սաւօն, սաւոն** *«անկողնի սաւան», Մկ.* **սաւան** *«անկողնի ծալքի ծածկոց՝ շալից», Խրբ.* **սաւան** *«լայն պատառ՝ որ կանայք իրենց վրայ են առնում», Երև. Ղրբ. «կնքահօր նուիրած շորևղէնը». Սլմ.* **սաւան** *«կնունքի սաւան», Հճ.* **սաւօն** *«շալ», Սվեդ.* **սաւուն** *«անկողնի սաւան»։*

ՓՈԽ.— Ատանայի Թուրքերը, ինչպէս և Թրքախօս հայերն ու յոյները ունին **սաւան** *«մի տեսակ հաստ կտաւ՝ որ լեռնցիք են գործում բամբակի թելով»։*

ՍԱԼԱՌՆԻԼ *«Թոչելու ժամանակ թևերը բանալ և տարածել, թևապարել» Եղեկ. ա. 23, 24, գ. 13, «սարսափիլ, սոսկալ» Խլաթ. յիշ. 6. որից* **սաւառնաւաղ** *Տաղ. Ներ.* **սաւառնապատ** *Անան. եկեղ.* **սաւառնածայն** *Արծր.* **սաւառնաթև** *Շար. նոր բառեր են* **սաւառնակ, սաւառնորդ։**

Հիւնք. **սևեռել** *բայից։* Petersson, Ar. u. Arm. Stud. 130 *լիթ.* šẽbras *«ձկան լողակ» բառի հետ՝ իբր բնիկ հայ, հնխ.* k'ebh-r̥-n *ձևից։*

ՍԱԻԱՏ. *անորոշ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գործածում է Կոստ. երգն. 159. Ջաշխարհիս զամէն գնացք ես ցուցանեմ զերդ զսաւատ։—*

=Կա՛մ է արաբ. سواد savād *«սևութիւն» և կամ պրս.* سواد savād *«մրուր գինւոյ»։*

Այսպէս է մեկնում Պոտուրեան, Կոստ. երգն. 57, 204, բայց երկուսն էլ անյարմար են թւում։

ՍԱԻՈՐԴ, *ի–ա հլ. «վերնակողմն, բարձունք, բլրակ, սար». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Վրդն. աշխ. «Մշկավանքն ի վերայ սաւորդաց Զորոյգետին»։*

Սաւոք *տե՛ս Սօսւ։*

***ՍԱՓ** *«մաքուր կամ պարզ սրտով». նո-*

բազիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Անկ. Գիրք հին կտ. էջ 398. «համաստուն, քաղցածաղր, տեսանող, խորհրդական, սափ, հեզ, հանդարտ»։

= Արաբ. صاف ṣāf «մաքուր, վճիտ, պարզ»։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 233։

*ՍԱՓ «անուն երկուց երակաց սրտեան. saphène». միջին հյ. բառ, որ ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 1117ա և Քաջունի, Հա. Գ. 216. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. բժշ. 133։

= Արաբ. صافن ṣāfn՝ նոյն նշ. որից փոխառեալ են նաև յն. σαφήν, σαφηνής, լտ. saphena, ֆր. saphène՝ նոյն նշանակութեամբ։

Այսպէս մեկնեց Seidel, Հրատ. Մխ. Հեր. § 367։

ՍԱՓԱՌՆԻՍ «ծնեփեկ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2729։

+ՍԱՓԱՍՈՒՏ «բոլորովին սուտ». մէկ անգամ ունի Եզն. 156։

=Կազմուած է սուտ բառից՝ սափ սաստկականով, որ յարմարեալ է սուտ բառից. Համմտ. կամակոր, ծամածուռ, և զուտ. նեղ-ճերմակ, նոփ-նոր են։

ՆՀԲ յն. σάφα «յայտնի, ակնհայտ, հաստատ» և ψευδής «սուտ» բառերից է դնում, Տէրվ. Altarm. 6 և Նախալ. էջ 115 սուտ բառի *սփուտ նախաձևի հետ կրկնուած։ Հիւրշ. 377 կասկածով դնում է յն. σάφα, σαφῶς և հյ. սուտ բառերից բարդուած։ Ուղիղ մեկնից նախ Այտնեան, Քնն. քեր. էջ 310, որից անկախաբար Աճառ. (անտիպ)։

*ՍԱՓԱՐԱՅ «մի տեսակ սրինգ կամ սուլիչ». ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ԱԲ իսկ ՆՀԲ, Հա. Բ. էջ 1066 դնում է իբր գուռ. բառ. սաւառայ.—երկու անգամ սաֆարայ ձևով գտնում եմ գործածուած Վրդ. առ. 296—7։

=Արաբ. صفّارة ṣaffara՝ նոյն նշ.։—Հիւրշ. 276։

Ուղիղ մեկնից նախ Müller WZKM 8, 284, Թրգմ. ՀԱ. 1894, 295։

Գիհ.—Խոջ. սավառա «սրինգ՝ որ սովորաբար արծիւի ոսկորից են շինում»։

ՍԱՓԻՉ. ձևով և նշանակութեամբ անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Փիլ. նխ. p. 86. Եւ ապա յաղագս ծովուն պատճառս ասելով՝ ասէ, պնդեցնելոյ այնր որ բմբռնեցեալ յանկութիւնն էր սափչին. (Աւգերեան լտ. Թարգմանում է concreta est extremitas orae, որով վերոյիշեալ բառը հասկանում է «եզերք, ափունք»)։

*ՍԱՓԻՐԱՅ «շափիւղայ քարը» Ածաբ. մակաբ. Վրդն. առ. 332—3. որից սափիրական «շափիւղայից շինուած» Յիշ. ոսկ. յհ. նոյնը նաև սոփորեայ Ոսկ. հս. սոփեր Օրբել. ողբ. ժե. (Համմտ. ոսկի սոփերայ Յհ. կթ. 249=հս. ժգ. 12)։

=Ասոր. ספירא sapīlā «շափիւղայ» բառն է՝ եբր. סַפִּיר sappīr կամ յն. σάπφειρος ձևից ազդուած. տե՛ս նաև շափիւղայ։

ՀՀԲ «բառ այլազգական»։

ՍԱՓՈՐ, ո հլ. «հեղուկների խեցեղէն աման» ՍԳր. Եփր. դտ. էջ 331, Համաբ. էջ 129։

ՀՀԲ և Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 313 բառ հին քերականների՝ սա է փոր։ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 160 պրս. سبو sabū «սափոր» կամ շաֆուլ(?)։ ԳԴ պրս. սէպու։ ՆՀԲ «որպէս թէ փորով աման, լծ. և այլազգ. սէպու, շաֆուլ»։ Հիւնք. պրս. սէպու։ Յակոբեան, Բիւզանդիոն № 743 պրս. սէպու, եբր. էսբար, եթովպ. սաֆարա, մասիֆարի։ Պատահական նմանութիւն ունի ասոր. زابورا zābūrā «մի տեսակ հողէ աման»։

ԳԻՒ.—Սլմ. սափոր, Ագլ. Մկ. սափուր, Մրդ. սափ՚ր.—իսկ Մշ. սափոր «կերակրի պղնձեայ աման՝ կոթով, նման տապակի, բայց խոր»։

*ՍԱՓՐԱՅ «մաղձ» Բժշ. Ոսկիփ. որ և սփրայ Մխ. Հեր. 90։

=Արաբ. صفرا ṣafrā «դեղին մաղձ», որից նաև տճկ. safra, ռմկ. զաֆրա՝ նոյն նշ.—Հիւրշ. 276։

ՆՀԲ «բառ ռմկ. սաֆրայ». Lag. Arm.

Stud. § 1969 *ասոր.* ṣaprā *հնթաղրեալ ձևից։*

***ՍԱՓՐԵԼ** *«մազերը կարել, ածիլել» Փիլ. լատտ. իբ. Իսիւք. Մաշտ. որից* սափրական *եփր. խրատ.* սափրիչ *Փիլ. սամփս. և նխ. բ.* սափրողական *ԱԲ.* սափրիչատուն, սափրիչութիւն *(նոր բառեր)։*

=Ասոր. sappar *«ածիլեց»,* sapārā *«մազերը խուզող»,* sūpārā *«մազերը խուզելը». Համմտ. հբ.* spr *«մազերը կտրել»,* sappār *«սափրիչ»։—Հիւբշ. 316։*

ՆշԲ լծ. Թրք. սիփիրմէք *«աւլել». Ուղիղ մեկնեց* Lag, Arm. Stud. § 1979: *Հիմնբ. արբել բայից։ Խ. Յովհաննիսեան, Արձագանք, 1892, № 108* սափրայ *«մաղձ» բառից։*

ՍԱՓԱՓԱԹԱՆՔ, *ի–ա հլ. (պարզ արմատը իբր *սաֆաւթաք). անսռոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Ոսկ. ես. 138. «Զի եթէ շաղափքն սաքափաթանաց և թովչութիւնք ինչ ստաբանք՝ յորժամ թովիցին, կարեն անաղղակաև առնել զմարմինս ի թունաց չար գազանաց, որչա՞փ ևս առաւել օձուիւն Հոգւոյն»։*

ՆշԲ մեկնում է «նշանակ հմայից և թովչութեանց կամ վնասակարութեանց. Թերևս որպէս յն. σκοροφαντία, *որ և «զրպարտութիւն»։ ԱԲ մեկնում է «ձեռնածուներու խաղերը, որ կը ձևացնեն թէ սուր կամ գչիր կը խոթեն մարմիններուն մէջ»։ Տէրվ.* Altarm. 76 *կարծում է «յն.* περίαμμα, *վրից կախուած յուռթուլունք» և մեկնում է* սաֆ *(=սանս.* sajj *«կախել», լիթ.* segti *«կապել», Թերևս նաև լտ.* saga *«կախարդութիւն»)+փաթաթիչ «շոր, քուրջ» (=հյ. փաեղամ, զնդ.* pai-ti-dāna *«շորի կտոր, որ փարսիները աղօթքի ժամանակ իրենց բերնին են կապում»)։ Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 1185 և 1406) «փխ.* սաֆարփաթաթիֆ, *պրս.* սիեռպազի, *աճպարարի խաղ, որով, օրինակի համար՝ մարմնոյն մէջ սուր մը խոթել կը ձևացնէ»։*

ՍԱՓԹԱՓԵԼ, *անսռոյգ բառ. մէկ անգամ ունի Եփր. Թգ. «Սկսաւ սաքթաքել՝ ճշմարտասոյզ բանիւք խօսել»։*

ՆշԲ մեկնում է «սայթաքել կամ բանդուզել»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 սայթաթել *բառի հետ իբր Թրք.* սէմմէք, սէմիթմէք *«ցատկել, ոստոստել»։*

***ՍԱՓՈՒԱՅ** *«աբեղայի խոշոր գդակ, զոմփ». երկու անգամ ունի Լմբ. առ Լև. տպ. 1865, էջ 218 և 240. «Հագնիմ գիշտ, որպէս Հաղբատայ եպիսկոպոսն, և երկու թիզ կընդուղ վրացի սաքուլայով. Կատարե՞մք զպատարագն սաքուլայով»։—(ՆշԲ երկրորդ վերկայութեան մէջ* սարֆուլայ)։

=Պրս. سر کلاه sar-kulāh *«գլխանոց», որ կազմուած է* sar *«գլուխ» և* kulāh *«գլխանոց, գլխարկ» բառերից, ըստ այսմ բառիս ուղիղ ձևն է* սարֆուլայ, *որ Հասատատում է նաև գտ.։—Հիւբշ. 276, 377։*

ՆշԲ լծ. լտ. sacculus *«պարկ, քսակ»,* cucullus *«կնդուղ»։* Lag. Arm. Stud. § 1967 *տուաւ, վերի մեկնութիւնը։ Հիւբշ. 276 և 377 սրանց հետ նաև վրաց.* սաղ'ելո *«օձիք» (կասկածով)։*

ԴԻՒ.—Մշ. սարֆուլա *«մի տեսակ սրաձայր գլխարկ, որ դնում են քրդերը»։*

ՍԱՔՐԵԼ, *կամ* **ՍԱՔՐԻԼ** *«վախից մէկի մօտ ապաստանիլ, պահվտիլ, ծածկուիլ» Փիլ. այլաբ. 135. Սաան. 19. Պետ. Անյ. բենիկ. Անան. նկեղ.։*

ՆշԲ լծ. լտ. sacernor *«որոշիլ»,* secretum *«գաղտնիք»։* Karst, *Յուշարձան 424 և Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 Թրք.* saqla-maq *«պահել»։*

***ՍԱՖՏԱՖ** *«անսռոյգ մի բոյս» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2731. պէտք է կարդալ բուս իս* սաֆսաֆ *(սխալը յառաջացած է բոլորդիր u և m տառերի նմանութիւնից) և հասկանալ՝*

=արար. صفصاف ṣafṣāf *«ուռի» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 794), որ գործածուած է մեր մէջ իբրօք* սաֆսաֆ *ձևով. Համմտ. «Ասէ Պաւէհին թէ այսօր տերևին (խլեփի) սաֆսաֆ կասեն և պարսիկն պէտ (=* بید bīd*) կու ասէ և Պալխցիքն պահրաճամ կասեն» Ամիրտ. (տե՛ս Վասակ. էջ 247)։—Աճ.*

ՍԵՒԱՄ, ո *հլ. «դրան սեմը, շեմք. լյնք. կողմնական բարաւորները» ՍԳր. հին լեզուում անեղական է. եղակի գործածութեամբ գտնում եմ Նորագիւտ Ա. մնաց. իզ. 16՝ սեմոյն, եթէ չէ ուղղելի սեմոցն.—գրծ. սեմօք ունին Դտ. ժզ. 3, Ա. Թգ. և. 4, Եփր. դտ. 343, 345. յեռնաբար գրուած է սեմ Եփր. Թգ. 435, շեմ կամ շեամ և գործածուած է նաև եղակի՝ Գէ. ես. Ոսկիփ. նոր գրականի մէջ արևմտեանն ունի սեամ, սեմ, իսկ արևելեանը՝ շեմ, շեմմ, որի հնագոյն վկայութիւնն ունին սեռ. շեմոց ձևով՝ Վրդ. առ. 211, Արձ. 1676 Թ. (Վիմ. տար. 193)։*

Klaproth, As. polygl. *էջ 105 գերմ.* saum? Böttich. ZDMG *1850, 361,* Arica 75, 234, Lag. Urgesch. 160, Gesam. Abhd. 13 *նոյն են գնում պրս.* سنان sitān *կամ* تاسنان tāsitān *համանիշի հետ։* Justi, Dict. Kurde 250 *քրդ.* siwder *«նախագուռ» բառի* siw *մասի հետ։ Հիւնք. լտ.* semita *«ճանապարհ»։ Յակոբեան, Բիւզանդիոն № 743 եբր.* սաֆ *«պնակ, տաշտ, սեամ», աստր.* սէֆա, *յն.* ֆիօն *ևն։* Patrubány *ՀԱ 1908, 214 հնխ.* k'eyā- *«պատկիլ» արմատից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* مساما masāma *«դրան շեմքի մեծ և լայն տախտակը» (Կամուս, Քրբ. Քրգմ. Գ. 487)։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. շեմ, շեմմ, *Ջղ.* շեմմ, *Սլմ. Վն.* շեմմ[1], *սեռ.* շիման, *Ակն. Ասլ. Կր. Ննխ. Սեբ.* շէմ, *Ախց. Գոր. Երև. Ղրբ.* շէմմ, *Տիգ.* շէմիկ, *Խոյ. Համշ.* շիմ. *Սվեդ. Տփ.* շիմմ, *Մկ.* շիմմ[1], *Զթ.* շիմիճմ, *Շմ.* շումմ[1], *Ագլ.* շումմ, շուճմ.—*(Շմ. բառս նշանակում է «դուռ»)։—* Նոր բառեր են շեմմակապ, շեմմառակ, շեմմափայտ, շեմմաքար, շեմմուկ։

ՓՈԽ.—Հայերէնից են փոխառեալ քրդ. شیمک šimik *«սեամ»* (Justi, Dict. Kurde *262*) *(Համմ.* շեմիկ *ևն. Մշ. Տիգ. և* շեմիճ *Արբ.), Քրբ. գւս. S.* šem *«սեամ» (Բիւր. 1899, 799)։*

***ՍԵՒԻ** (ի, ո *հլ. ըստ ՆՀԲ, բայց վկայութիւնները չեմին են) «սև» ՍԳր. Սեբեր. «թանաք, մելան» Փիլ. իմաստ. որից* սևանալ *երգ. ա. 5.* սևակ *«թանաք» երեմ. լղ. 18.* սևագործ *եզն. 155.* սևագունդ *Ագաթ.* սևաղեղ *Սեբեր.* սևագգած *Ոսկ. ես.* սևաներկ *Վեցօր. և առանց սղման՝* սեաւական *Ոսկ. փիլիպ. յեռնաբար ոմկ.* սև *Վրք. հց. Վրդն. երգ. Բրս. մրկ. որից* կիսասև, *Խոր. աշխ.— նոր բառեր են* սևաներ, սևաչեայ, սևայօն, սևամորթ, սևաճոպ, սևաճոգի, սևասուր *ևն։*

=*Պարթև.* *siyāv *«սև» ձևից փոխառեալ. սրա մայրն է հպրս.* *siyāva=*զնդ.* 𐬯𐬌𐬎𐬁 syāva- *«սև», որ պահուած է միայն յատուկ անունների մէջ. հմմտ. սանս.* श्याव śyāvá- *«թուխ, սևաթոյր», օսս.* sau *«սև», և փոխառութեամբ՝ մանդ.* סיאוא syāve *«սև»* (ZDMG 33, 147)։ *Այս* *siyāv *ձևի հետ կար նաև պհլ.* *šāv *համանիշ ձևը (հմմտ. սոգդ.* šāw *«սև», վախի* šu, *սանգլ.* šói *«սև»* Horn *§ 761), որից փոխառեալ են վրաց.* შავი *շավի «սև», ինգիլ.* შავ *շավ «սև» և հյ.* *շաւ *(պահուած միայն Շաւարշ, Շաւասպ յատուկ անունների մէջ)։ Աւելի յետոյ երկու ձևերն էլ գործածութիւնից ընկնելով՝ փոխանակուեցան պհլ.* 𐭱𐭩𐭧𐭪 siyāk *և* siyāh *ձևերով, որոնց յաջորդներն են պրս.* سیاه siyāh, *սեմն.* sūah, *քրդ. բելուճ.* siyāh, *զազա* siá *«սև» ևն։ Բայց* *siyāv *ձևը շարունակում էր անշուշտ Պարթևականում, որից էլ անցաւ Հայերէնին (ըստ* Meillet REA 3, 6), *որովհետև, ինչպէս այժմ հաստատուած է, Հայերէնի իրանական փոխառութիւնները պարթևական են և ո՛չ պարսկական— Իրանեան բառի նախնականն է հնխ.* *k'leuā-, *որ ծագում է պարզական* k'ei- *արմատից՝ «մութ կամ մուգ գոյնով». սրանից զանազան աճականներով յառաջանում են 1)* r *աճականով՝ միոլ.* cīar *«մութ», հհիւս.* hārr, *անգսք.* hār *«ծերութիւնից գորշ կամ սպիտակ գոյն առացած», հբգ.* hēr *«պատուաւոր (տարիքի մեծութեան պատճառով, իբրև ախսախկալ)», գերմ.* Herr *«տէր, պարոն»,* herrschen *«իշխել» (*Kluge *208—9, 215—6),—2)* m *աճականով՝ սանս.* çyāma- *«սև», լիթ.* sēmas *«մոխրագոյն» լտ.* sīmex *«մլուկ» (իբր «թիաառնիլ»), հյ.* ն–սեմ *(տե՛ս այս բառը).— 3)* n *աճականով՝ հսլ.* sini, *ռուս.* синій, сине, *սերբ.* sînji, *չեխ.* siný

«կապոյտ».—և 4) վերջապէս v աճականով՝ սանս. çyāvá- «թուխ», հսլ. sivŭ «մուխ մոխրագոյն», սերբ. sīv «գորշագոյն», լիթ. šývas «ճերմակ ձի», չեխ. sivy, սլով. sìv, ռուս. сивый, հին պրուս. sywan «գորշ», որոնց պատկանում են նաև իրան. *siyāv և հյ. սեաւ (Pokorny 1, 361, Walde 107, Boisacq 456, Trautmann 306): «Սև» բառի նման մի շատ հասարակ բառի փոխառեալ լինելը իրանեանից՝ մեկնւում է (բացի այն՝ որ բոլոր գլխաւոր գոյները փոխառեալ են իրանեանից, ինչ. կարմիր, կապոյտ, սպիտակ,— գոյն, երանգ) նաև թաբուով։ Արդի բերբերական լեզուների մէջ ընդհանրապէս խուսափում են արտասանել «սև» բառը և ամէն մի գաւառ ունի առանձին մի ձև՝ արտայայտելու համար այս իմաստը։ Դրա համար է որ հնդեւրոպական լեզուների մէջ չկայ «սև» իմաստով ընդհանուր բառ։ Հին է սանս. kṛṣṇá-=հպրուս. kirsnan=հսլ. črŭnŭ «սև», բայց այս խմբից դուրս՝ ուրիշ լեզուների մէջ չի գտնւում (Meillet BSL № 84, էջ 45—46)։—Հիւբշ. 489։

Klaproth, Asia pol. էջ 105 պրս. siyāh բառի հետ, իսկ Mémoires 1, 432 նաև սանս. chiama, օսս. saw։ Գ՚ պրս. սիեահ «սեաւ»։ ՆՀԲ վրաց. շա՛վի, սիա՛վի, թրք. սիյահ, սիյէհ։ Peterm. 21, 34 սանս. çyāma, պրս. siyāh: Windisch. 19 սանս. çyāva, çyāma, յն. κυάνεος «մուխ կապոյտ, թուխ»։ Böttich. ZDMG 1850, 361, Arica 82, 374 սանս. çyāva, զնդ. syāva, օսս. sau յն. κυάνεος, լատին. cyanus «սև»։ Սրանց համհամաւ են նաև Lag. Urgesch. 773, Müller SWAW 38, 576, Justi, Zendsp. 305 են։ Karolides, Γλ. συγκρ. 91, 182—3 աւելացնում է սրանց կպգովկ. čivo, čino «մուխ կապոյտ, սև»։ Bugge KZ 32, 67 հնդ. çyāva-, լիթ. šývas «ճերմակ ձի», հին պրուս. sywan «գորշ», հսլ. sivŭ «գորշ» են ձևերի հետ՝ իբր բնիկ հայ, բայց աւելի ուշում է կցել սանս. çyāmá- ձևին, Հիւնք. պրս. սիեահ և արաբ. էսվէտ, սէվար։ Հիւբշ. KZ 23, 402, Arm. Stud. § 248 և Arm. Gram. 489 շարունակ տատանում է փոխառեալ կամ բնիկ դնելու մէջ. բայց վերջինի մէջ տուած պատճառաբանութիւնները այնպէս են, որ աւելի փոխառեալ լինելն են հաստատում։ Էնզէլթ, Արրտ. 1915, 498 արաբ. سوداع savdā' կամ պրս. سیاه siyāh «սև»։

ԳԻՒՐ.—Ազ. սև, սեվ, Ալշ. Հճ. Մշ. Սլմ. Վն. սեվ (սեռ. Վն. սիվու), Ագլ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեր. սէվ, Ասլ. սէ՚վ, Ղրբ. սրէվ, Ջթ. Համշ. Մկ. Մրզ. Սվեդ. Տիգ. Տփ. սիվ։ Նոր բառեր են սևագլուխ, սևագնտիկ, սևաշոր, սևատաւար, սևուցք, սևջրկիլ են են։

ՓՈՒԽ.—Յն. Σαξαρτοιάσφαλοι իբր հյ. սևորդի ձևից փոխառեալ՝ տե՛ս Սրդի բառի տակ։—Հայերէնից է նաև sev «էսբար, ծխելու ափիոն, հաշիշ», որ շատ գործածական է Պօլսի տաճիկ բանտարկեալների ծածկալեզուի մէջ (տե՛ս Թէոդիկի Ամէնուն տարեցոյցը, 1920, էջ 221)։

ՍԵՓ «խուփ, operculum», գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 369ա (եթէ չկայ վրիպակ)։

ՍԵՓԱՍՏԵՆԻ «տուն գեղեցիկ կամ խաղաղութեան». ունի միայն Բառ. երեմ. 283. բայց նոյնը էջ 278 դառնում է սաբաստանի «տուն գեղեցիկ կամ խաղաւրան»։ (Վերջինը բոյսի անուն լինելով, արդեօք տուն բառն էլ պէտք է հասկանալ տուՆկ, որին յարմար է գալիս -ենի վերջաւորութիւնը. համմտ. սերենի)։

*ՍԵՓԱՍՏ «օդոստափառուհի, վհհափառուհի» նւս. քր. յետնաբար սևաստ, և՝

*ՍԵՓԱՍՏՈՍ «օդոստափառ, վհհափառ» նւս. քր. ա. 105. նւս. պտմ. 653—4 (գրուած սաբեստոս). Շիր. քրն. (Հռոմէական կայսրներին և կայսրուհիներին արուած տիտղոս), սեբաստեան Գծ. էէ. 1. նիթազ. նւս. քր. ա. 196. յետնաբար սեբաստոս «կոմս, իշխան» Պտմ. լմբ. 225—7, սևաստոս Սմբ. պտմ. 112. սևաստուքիւն Ժղ. Հռոմկլ. սևաստուս Սիմ. տպար. 128. սևաստիոս Պտմ. ռուբ. 217. սեպաստաւոն Պտմ. աղէքս. 99 (Դարհհի կօշիկների համար է ասում)։

=Յն. σεβαστός (ար.), σεβαστή (իգ.) նոյն նշ. ծագում են σέβω, σεβάζω «վախենալ», աւելի ուշ՝ «պատկառիլ, յարգել» բայից (Boisacq 857) և թարգմանաբար յարմարեցրած են լտ. augustus, augusta «օգոստափառ» բառերին։ Իսկ սաբեստոս ձևը ասոր. ܣܒܣܛܘܣ sbstos ընթերցուածի տառադարձութիւնն է՝ ըստ Վարդանեան, Եւթաղ. 101։—Հիւրշ. 377։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՍԵՓՆԻ, որ և սեփիլ, սեփիճայ, սեբիւն, սևեռ «արմաւենուց հիւսուած բան (զգեստ կամ խոհր)» Վրք. հց. ա. 709, բ. 22, 390, 615։

=Յն. σεβένιον կամ σεβέννιον «արմաւի ծաղկի վրայի բարակ պատիճը կամ մաշկը», σεβένιος «այս մաշկով հիւսուած (բան)» (Sophocles 982):—Lag. Armen. Stud. § 1974 յիշեալ յն. բառը համարում է բուն եգիպտական, որ եգիպտական ճգնաւորներն ու անապատականները նիւթի հետ տարածել են. համմտ. խպտ. beni, benne «արմաւ», որից še 'mbeni «սեբենի» (յիշուած Zoega Catalog 11, 27 իբր Պօղոս անապատականի ցōēn-ի նիւթը), fōi ənte šenbeni իբրև ճգնաւորների ձեռարուեստի նիւթ՝ յիշուած անդ, 72, 34։—Հիւրշ. 377։

Ուղիղ մեկնեցին ՆՀԲ, յետոյ Lag. անդ։

ՍԵՓՈՒԿՔ «միայնութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 283։

[ՍԵՓԱՔՈՅԻՄՆ. մէկ անգամ գործածուած է Ոսկ. ես. 436. ի բաց արարէք ըզխոչ ի ճանապարհէ ժողովրդեան իմոյ. Ակիւղաս՝ գայթակղութիւն ասէ, Սիմաքոս՝ սեբաքոյիմն ասէ։—Պէտք է ուղղել՝ սայբաքումն, իբր համանիշ խոչ և գայթակղութիւն բառերի, ըստ Վարդանեան, Բառաքն. դիտ. Ա. 96։]

ՍԵՓԵԻԵՔ (ո հլ. յետնաբար) «աւելորդ զարդ» Տօնակ. «պաճուճուած» Յայտմ. որից սեթևեթել «պճնել, արուեստակել» Ոսկ. յհ. ա. 1. 3հ. կթ. սեթևեթաբար Պրպմ.։

=Կրկնուած է պարզական *սեբ արմատից, որ առանձին չէ գործածուած. համմտ. ծեթևեթ։

ՆՀԲ թուի հանել հեթեթաճ բառից։

ՍԵԼ «կաղմել կամ դիր». ունի միայն Բառ. երեմ. էջ 283։

*ՍԵԼ, ՍԵԼԱՍ, ՍԵԼԱՅ (սեռ. սելայից) «երկնային մի օդերևոյթ. աստղ» Արիստ. աշխ. 613, 614։

=Յն. σέλας «լոյս, ցոլք, հրային օդերևոյթ»։—Հիւրշ. 378։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՍԵԼԵՄՈՒԿ «բոյս ինչ որ լինի առ աղբեր». ունի միայն Քաջունի, Գ. 217։

*ՍԵԼԷՈՆ, ՍԵԼԻՆ, ՍԻԼԻՆ «պատրիարքական ոսկի աթոռ» Գնձ. Ուռհ. 105. Վրք. դիոն. ՀԱ 1914, 211, Յայտմ.։ Տե՛ս և սեղէն։

=Յն. σελλίον, σέλλα «աթոռ, գահ», որ փոխառեալ է լտ. sella հոմանիշից. յետնարէնից են նաև ասոր. ܣܝܠܝܢ sīlīn և արաբ. سِيلِين sīlīn? (Վրք. դիոն. ՀԱ 1913, 654)։—Հիւրշ. 378։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։ Ակինեան ՀԱ 1913, 654 սիլին ձևը արաբականից է դնում։

ՍԵԽ, ո հլ. «սեխ» Թուց ժա. 5, վկցօր. 89. (սեռ. սեխոյ). Եփր. երաշտ. 205. Մխ. առակ. Գաղիան. որից սեխասատան կամ սեխաստանի Կոչ. 351. սեխենի Ես. ա. 8. Թիւք ի. 5, Պիտ. գրուած նաև սեղխ Մծբ. 240 և սեխղ. ըստ այսմ Կոչ. 351 երկու անգամ տպ. ի սեղխեստանի, Իրեն. 16 ի սեղխենիս։

=Նման է հնչում յն. σέκυς, σίκυς, σίκυος, σικύα «վարունգ, սեխ կամ դդում» բառին, որ կցւում է հաւանաբար հսլ. tyky=ռուս. тыква «դդում» բառին և համարւում է թրակո-փռիւգական փոխառութիւն (Malde 206, Boisacq 532, 864): Այս պարագային հայերէնն էլ դառնում է փոխառեալ փռիւգականից։

ՆՀԲ յն. σίκυος, Pictet 1, 311 յն. σίκυς, σικύα, որ դնում է սանս. sič արմատից։ Հիւնք. սոխ բառից։ Patrubány ՀԱ 1908, 153 համմտ. սոխ, իսկ էջ 246 հնխ. k'eja- «պտուկիլ» արմատից։ Պատահական նմանութիւն ունին ասոր. ܣܝܟܐ sīxā «artemisia» եբր. שִׂיחַ sīxa «անապատային մի թուփ», ասուր. sāḫu «աճիլ»։

ԳԻՒ.—Սչ. սեխ, Ախց. Կր. Ննխ. Սեբ. սէխ:

Սեխի «լուացքի աղտոտ ջուր». մէկ անգամ ունի Յայտմ. «Արկին ի խաւարային և ի ժահահոտ բանտ, յորում անցանէին սեխիք ձեռալուացի»:

ՆՀԲ մեկնում է «ցեխ կամ սիկ»: ԱԲ ջնջած է:

Սեկ «կաշի, կոկած մորթ (դրբի կողի, կօշիկի, վահանի ևն), մէշին» Մաշտ. Մարթին. Վստկ. 189. Միխ. առ. 164. Մխ. դտ. 245, որից **սեկափերք** Մարթին:

Աճառ. ՀԱ 1908, 121 համարում է թաթարական ծագումով բառ. հմմտ. մանչու թիր. suko «կաշի» (ուրիշ է պրս. چکی čakī «սեկ»): Patrubány ՀԱ 1908, էջ 213 հնխ. k'ei «պատկիլ» արմատից: Յիշատակելի են նաև առնս. çik- «կապ, ցանց», լիթ. šikšnà «բարակ կաշի», յն. κίσσηρις «արջառաջիլ», որոնք միասին հանւում են հնխ. k'iq- «փոկ, կաշի» բառից (Pokorny 1, 451):

ԳԻՒ.—Ախց. երև. սէկ «այծի կաշի», Ալշ. ՀՃ. Մշ. սեգ. Ռ. սէգ «կօշիկի երեսի կաշին», Սեբ. սէգ «կաշի, սափոխյան», Եւդ. սէգ «մոմապատ շոր, որի վրայ շոհողն են դնում», խրբ. սէֆ¹ «ամանի բերանը ծածկելու կաշեայ կափարիչ, սերկ»,—նոր բառեր են **սեկել** «այծի կաշիով պատել», **սեկեմուկ** (հմմտ. **կաշաթև, մաշկաթև**) «չղջիկ»:

***Սեկէք** «շիգղ, օղ-կոճակ, նաւ-մատայ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 558 (պէտք է հասկանալ **կեռմայր Ղրբ.**= օղակկոճակ Ննխ.=չէնկել-կոճակ Պլ.):

=Պրս. سکاسر sagak (նոր հնչումով sägäk, օսմ. արտասանութեամբ segek) բառն է, որ բուն նշանակում է «շնիկ» (պրս. سگ sag «շուն» բառից նուազական), բայց նաև «է խոտ իմն՝ որ կուու ի հանդերձս մարդոյ, որոյ և զատանիլն դժուար է» և անշուշտ պէտք է ունեցած լինի նաև վերի նշանակութիւնը:—Աճ.

***Սեկոինդիկուի** «երկրորդ կարգի պաշտօնեայ» (առաջինը կոչուած պռիմիկուս). մէկ անգամ ունի Յայտմ. Հոկտ. 7. «էր սուրբըն Սարգիս պատուհասլ պռիմիկուս դասուց կենդիլիանայ և սուրբն Բագոս էր պատուհասլ սեկունդիկուս նոյն գնդի»:

=Յն. δεκουνδιχάριος «երկրորդ պաշտօնեայ», որ փոխառեալ է լտ. secundicerius հմմտ. Հիւբշ. 378:

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Լիակ. վարք. սրբոց, Գ. էջ 162:—ՆՀԲ և ՋԲ դնում են լատինից:

***Սեկոիս** «ուտի» Նոր բժշ. ունի միայն ՀԲուս. § 2735:

=Թրք. سکوید sögüd, söyüd «ուտի»:

Ուղիղ մեկնեց ՀԲուս.:

***Սեղանկ** «աճառապատ մեծ ձուկ՝ որ թևի փոխարէն պարզ մաշկ ունի» Վեցօր. 138, 141 (երկրորդ վկայութեան ձեռագիրն ունի **սիկաղ**):

=Յն. σέλαχος նոյն նշ. որ սովորաբար գործածւում է յոգնակի τὰ σελάχη ձևով. բատ այսմ մեր բառը պէտք է ուղղել **սեղաք**:—Հիւբշ. 378:

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ:

***Սեղան** «թամբ». ունի միայն Բառ. երեմ. էջ 283:

=Լտ. sella «նստարան», որ և «թամբ», որից Ֆրանս. selle «թամբ»:—Աճ.

Սեղան, ո հլ. (իսկ Յուդթ. դ. 10, Եզեկ. գ. 5 գրծ. **սեղանօք**) «սեղան, մանաւանդ ճաշի. 2. կերակուր, հացկերոյթ, կոչունք. 3. լումայափոխի ևն սեղան. 4. զոհի սեղան, զոհարան, բագին. 5. տաճարի սեղանը. 6. Քրիստոսի խաչը» ՍԳր. Ագաթ. Ոսկ. Եփես. «ծամող ատամ» Տաթև. ձմ. խզ. որից **սեղանատուր** ՍԳր. **սեղանակից** Վեցօր. **սեղանայարդար** Ոսկ. Եփես. **սեղանայօրէն** Ոսկ. մ. գ. 17. **սեղանազերծ** Բ. մկ. դ. 42. համասեղան Փիլ. կամ հոմասեղան Բրս. պհ. նոր բառեր են նաշասեղան, **սեղանատամ, սեղանապետ, սեղանատուն, սեղանատուրութիւն** ևն:

ՆՀԲ պրս. ջիլան (իմա՛ شیلان šēlān «թագաւորական սեղան», որից են արևել. Քրք. شیلان šilan «սուլթանների և էմիրների սեղան, հասարակաց ճաշ», քրդ. šilan «խնջոյք, պատրաստուած սեղան, սեղանի վրայ դրուած բաժիններըը»), եբր. շօլխան: La Croze (առ

Lag. Urgesch. 827, Gesam. Abhd. 18) *եբր.* שֻׁלְחָן šulxān *«սեղան», որ մերժում է Հիւբշ. 316։ Հինք. պրս.* չիլլան։ *Ալիշան, Հին հաւ. 434 լտ.* sella *«թամբ, աթոռակ»։* Patrubány SA 1, 188 *իսլ.* clár *«սեղան»։ Մառ.* Тексты *XIII, էջ 23 եբր.* שלחן sulxān *ձևի հետ. հայը ծագում է* selqan *ձևից։*

ԳԻՒ.—Ջղ. Սլմ. Սչ. վն. սեղան, *Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Պլ. Սեբ.* սէղան, *Ագլ.* սէ՛ղոն, սէ՛ղան, *Ասլ.* սէղա, *Հճ. Համշ.* սէղօն, *Զթ.* սէղօն, սէղոն, *որոնք նշանակում են «սեղան». իսկ Սվեդ.* սիղուն *«կերակրի սալա», Նախ.* սէղանի *«սեղանատամ», Տփ.* սուրփ-սիղան *«մեռելի բառատունը և այդ առթիւ որուած ճաշը»։ Նոր բառեր են* սեղանատախտակ, սեղանահաց, սեղնակ։

Փհլ.—Գնչ. salan *կամ* selan *«սեղան»։ Տառադարձութեամբ մտած է Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ. Սեղան քի ժի մը տի (Գոհ բադին մի). Գծ. ժէ. 23.—Սէղանան թալան տրքի՞ (Ջսեղա՞ն կողոպտես). Հռովմ. բ. 22։— Պատահական նմանութիւն ունին արաբ.* sexan, *կաբ.* sexan, *սվան.* sayn, *շապս.* saxane *«պնակ», որոնք ծագում են արաբ.* صحن ṣaḥn *«աման» բառի թրքացած* sahan *«սկաւառակ» ձևից։*

Սեղեխ, ի–ա *հլ. «շնացող մարդ, կնոջ ապօրինի սիրականը» Եղեկ. ժզ. 33, 34. Կոչ. 98. Խոր. Փիլ. որից* սեղեխաբար *Խոր. Կղնկտ.* սեղեխասպանութիւն *Պիտ. բազմա-*սեղեխ *Սփր. յես. էջ 302. գրուած է նաև* սեղեղ, սիղեխ, սիղեղ *Վրք. Հց. ա. 82, 83,* սիղիխ, սիղիղ, *որոնցից նոր գրականը ընդունել է միայն* սեղեխ *ձևը։*

Հինք. սէր *բառի՞ց։*

***Սեղննդիւար** *«արքունի պալատի առաջնակարգ մի պաշտօնեայ». բառս ունի նախ Մխ. դտ. «Առաջին դաս պաղատանն եղեննդիարք (էլէնդիարք, են դիարքն), որք են պահապանք ոսկի վաղարին...»։ Սրանից առնելով Սմբ. դատ. 86. «Յառաջ* եղեննդիարքն *են, որ են թագադիրք». նոյնը Մխ. այրիվ. 4* եղեննդիարք։ *Գրչագրական սխալ է, փոխանակ գրելու* սեղեննդիարք *կամ* սեղեննդիար, *որ է՝*

=յն. բիւզ. σελεντιάριος, σιλεντιάριος, *այս էլ <լտ.* silentiarius *«կայսերական պալատի բարապան, որ հսկում էր լռութիւն պահելու վրայ» Sophocles 989 (լտ.* silentium *«լռութիւն» բառից)։*

Նշբ ունենալով դիարք բնթերցուածը՝ մեկնում է յն. τιάρα *«խոյր» կամ լտ.* tiāra *«իշխան պաշտօնաւոր»։* Brockelmann, *Ուս. փոխ. բառից 114 յն.* τιάρα *«խոյր»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Karst, *Դատաստան. I. 86 և II. 75։—Ըստ այսմ պատահական նմանութիւն ունի լտ.* lintiarius, lintearius *«կտաւավաճառ»։*

***Սեղէն** *«առաջնորդական գահ կամ աթոռ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Օրբել. Հրտ. էմ. 330. «Թարմատար և եղկելի անձին Ստեփաննոսի՝ Սիւնեաց այցելուի և նախագահ սեղենի՝ որ ի տանն տէրունի»։*

=Յն. σελλίον *«աթոռ, գահ» բառից. աւելի ընդարձակ տե՛ս* սելէս։

Ուղիղ մեկնեց Շահնազ. Հրտ. Օրբել. Բ. 359. «Ելեալ ի լատին կամ յոյն sella *բառէն. նշանակէ աթոռ կամ գահ. և փոխաբերաբար՝ առաջնորդութիւն կամ թէմ»։*

Սեղէօրէ *«եղեամն». ունի միայն Բռ. երեմ. էջ 283։*

Սեղմ (ի *հլ. բստ Նշբ, բայց առանց վկայութեան*) *«հոծ, խիտ, կուռ, սեղմած»* Վեցօր. *Շիր. որից* սեղմել *«պնդել, ամրացնել» Ա. մկ. ի. 47. Ագաթ.* սեղմանալ *եղն.* սեղմութիւն Վեցօր. սեղմում, սեղմիրան *(նոր բառեր)։*

Տէրվ. Altarm. *100* սեռն *և* սերտ *բառերի հետ՝ սանս.* sāra *«ամրութիւն»։ Նոյն, Նախալ. 128 վերջաձայն մ համարում է մասնիկ։ Հինք.* սաղմն *բառից։ Գաղանճեան, Արև. մամ. 1907, 934—5 թրք.* sɔγ-maq *«պարփակուիլ, ամփոփուիլ, տեղաւորուիլ»։*

ԳԻՒ.—Մշ. սէղմել, *Զթ.* սէղմիլ, *Տփ.* սիղմիլ, *Ախց. Կր. Նախ. Պլ. Ռ. Սեբ.* սըխմէլ,

Ասլ. սրխմէլ, *Ագլ. Սվեդ.* սխմիլ, *Համշ.* սրխմուշ, *Ակն. Առ.* գխմէլ, *Խրբ.* զրխմիլ, և *շրջուած ձևով՝ Արբ.* ղսմէլ. նշանակում են «սեղմել, ճնշել». այս ձևերը ազդուած են *Թրք.* صیقماق səq-maq «սեղմել» հոմանիշից և անկանոն կերպով վերածած են ե>ը և ղ>խ. *տե՛ս Աճառ.* MSL *10, 324 և Բազմ. 1897, 260։* Նոր բառեր են սխմուիլ, սխմուն, սխմոտել, սխմոտկել:

*ՍԵՂՄ «*մի տեսակ ծանր հիւանդութիւն, հալեմաշ կամ բարակցաւ*». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի *Մխ. բժշ. էջ 4.* «*Իսկ այն ազգ չերմն, որ պատճառն չոր և պինտ անդամունքն լինին, հոռոմն լխթկօն ասէ, և տաճիկն դեկ, որ Թարգմանի հալեմաշ. և այլ ոմանք սեղմ ասեն. և Հայք բարակ ասեն*»։

=*Արաբ.* سقم saqm «*հիւանդութիւն*» (*Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 480*), «*նիհարացում, հալումաշ լինելը*» (Dozy, Supplément des dict. arabes, *1881*)։

Շփոթելով հյ. սեղմ *բառի հետ՝ սոյն բառի վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձրած։* Seidel, *Մխ. հնր. § 29a* մեկնում է վերի ձևով, բայց միևնոյն ժամանակ յիշում է *արաբ.* سهم sahm «*նիհար*». Անշուշտ ուղիղ է միայն առաջինը՝ ղ ձայնի պատճառով, որ է *արաբ.* ق (*և ոչ* ը), առանց որի *հյ.* սեղմ *բառի հետ շփոթութիւն չպիտի յառաջանար։*

*ՍԵՄԱԴԻՐ «*սղագիր, սղագրող արագագիր քարտուղար*» *Եւս. պատմ. ղ. 23, էջ 468։*

=*Յն.* στηνεογράφος *հոմանիշից, որ կազմուած է* στηνεῖον «նշան» և γράφω «գրել» *բառերից։ Յոյն բառի առաջին մասը տառադարձուած, երկրորդ մասը Թարգմանուած է հյ.* գիր, *ճիշտ ինչպէս վրաց.* ნიშნაწერ-მწერალი սիմիաթա-մծերալի «*արժանայիշատակ բաններիր գրող*, писатель достопримечательностей» (*Ջուբինով*[2] *1174*)։— *Հիւրշ. 378։*

Նշ. սեմիաթի *հետ յն.* սիմա, սիմի՛օն «նշան»։ *Վերի ձևով մեկնեց* Brockelmann, *Ուս. փոխ. բառից, էջ 106։*

Փոխ.—Մատ ЗВО *17, 303 վրացի ձևը ո՛չ Թէ անկախաբար յունարէնից առնուած, այլ հայերէնից կազապարուած է համարում։ Այդ ճիշտ կլինէր անշուշտ, եԹէ վրացի ձևը լինէր* ნიშნაწერ-მწერალი սեմիաթա-մծերալի, *ինչպէս ունի Մատ, բայց Ջուբինով գրում է* o *ի-ով, որ համապատասխանում է յունարէն* η *տառի յետին ի հնչման։*

*ՍԵՄԵՔ «նմանութիւն». *ունի միայն Բառ. հրեմ. էջ 284. անշուշտ խաթարուած ձև է, իբր՝*

=*լտ.* simile «նմանութիւն»։— *Աճ.*

*ՍԵՄԻՈՒՐ «*սղագրող արագագիր քարտուղար*». *մէկ անգամ ունի Բուզ. էջ 89։*

=*Յն.* *σημειάριος *հոմանիշ ձևից, որ Թէև չէ աւանդուած ո՛չ հին և ոչ բիւզանդական յունարէնում, բայց ևսԹադրելի է հայերէն բառի վրայից. համմ.* սեմագիր։—*Հիւրշ. 378։*

Նշ սեմագիր *բառի հետ յն.* սիմա, սիմի՛օն «նշան»։ *Վերի ձևով մեկնեց* Gelzer, Anfänge ver arm. Kirche 111 *ծան.։ նոյնը նաև* Brockelmann, *Ուս. փոխ. բառից, էջ 106։*

*ՍԵՄՓՈՐ (սեռ.-ի) «*մի տեսակ հիւանդութիւն*». *մէկ անգամ ունի Պատմ. վր. 108.* «*եղև ի նոսա ախտ սեմփորի (տպ.* սեմբորի, *նշ* սեմփորի) *և պիտացին Թէ ի խաչէն է պատուհասն*»։

=*Յն.* συμφορή *կամ* συμφορά «*դանագան հիւանդութիւնների հաւաքում*», reunion, rencontre de maladies» (*յն.* συμ-φέρω «*հաւաքել*» *բայից*)։ *Ըստ այսմ հայ ձևը պէտք է ուղղել* սիմփորի *կամ* սիմփոր։—*Աճ.*

Նշ դնում է իբր անատոյգ բառ։ Ջ և Աբ չունին։ Brosset *համարում է «dysentérie», որով անշուշտ կապում է փոր բառի հետ, ինչպէս որ Վենետկան հրատարակիչն էլ սրբագրում է «ախտս իմն փորի» փխ.* ախտ սեմփորի։ *Վերի ձևով մեկնեց Աճառ. Հյ. նոր բառերի հին մատ. Բ. 15—16։*

ՍԵՆ «*մի տեսակ մետաղ. գինկ?*» *իբր միջին հյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 1292 ա.—իսկ Քաջունի, Գ. 217 և Տիրոյեան, Հանրագր. 588 դնում են «կապար»։*

*ՍԵՆԱՏՈՐ, ի–ա *հլ. «ծերակուտական, ծերակոյտի անդամ»* Ճառընտ. *գրուած է նաև* սենոտոր, սենաղուր *Մին. Համդ. 61,* սենատուր *Մին. Համդ. 88,* սենոտորոս *Վրք. և վկ. Բ. 301։*

=*Յն.* σενάτωρ, *որ փոխառեալ է լտ.* senator *(նաև* senatorius*) հոմանիշ բառից (*Sophocles 984*):—Հիւբշ. 378։*

Նշ Բ դրաւ լատինից։

*ՍԵՆՈԳԵԼՈՍ, *որ և* սինգելոս, սիւնկելոս *«եպիսկոպոսի մօտ դպրապետ կամ սարկաւագապետ» Ուռհ. 106։*

=*Յն.* σύγκελλος *«եպիսկոպոսական կամ աբբայական ձեռնասուն, կրօնական տեսուչ» (*Sophocles *1020), որից նաև լտ.* syncellus. *բստ այսմ հայերէնի մէջ ուղիղ ձևն է* սինգելոս *(ս տառի յետին ի արտասանութեամբ), ինչպէս ունի Ուռհայեցին. տառերի շփոթութեամբ ձևացած է* սենգելոս *(ե փխ. ի), իսկ* սիւնկելոս *հին դիտական տառադարձութիւնն է, որ չկայ տպագրեալում։ Յոյն բառը ծագում է* συν- *մասնիկով* κέλλα *«խուց» բառից և նշանակում է բուն «խցակից»։—Հիւբշ. էջ 378։*

Ուղիղ մեկնից Նշ Բ։

ՍԵՆԵԱԿ, ի–ա *հլ. «սենեակ, խուց, սրբարկապան, ներքին բնակարան, շտեմարան, մթերանոց, մառան, դանձարան» ՍԳր. «կանանոց» Փիլ. նխ. «հարս, հարճ» Ագաթ. Ագաղդ. (յետնաբար գրուած կայ* սենէկ *Սուտ-Շապհ. էջ 9). որից* սենեկապան *ՍԳր.* սենեկապետ *ՍԳր. Բուզ.* սենեկիկ *Ոսկ. ա. տիմ.* սենեկապետութիւն *Բուզ. նոր բառեր են* ննջասենեակ, գրասենեակ, հիւրասենեակ, առանձնասենեակ *են։*

Նշ Բ «որպէս թէ ճենակ, *քնարան»։ Մորթման* ZDMG *26, 528 բևեռ.* çainukan, Müller, Armen. *VI յն.* σκηνή *«վրան, հիւղ» բառին ցեղակից։ Գարագաշեան, Ծաղիկ 1891, էջ 89 յն.* συνοικία *«կից բնակարան»։ Հիւնք. յն.* συνοίκημα *«տնակցութիւն, բնակակցութիւն»։* Patrybány *ՀԱ 1908 246 հնխ.* k'eyā- *«պատկիլ» արմատից, իսկ էջ 315 սիւն բառից։ Մառ,* Отчетъ аніиск. музея *1917, էջ 40 արմատը սիճ. համմտ. խալդ.* šir-sini *«քարաշէն տուն», sini «տուն, սենեակ», šina «տուն»։*

ՓՈԽ.—վրաց. სენაკი *սենեակի «խուց, փոքրիկ սենեակ», մեգրել.* ჭენაკე *մեսենեակ «ճղնաւոր»։*

ՍԵՊ *«երիթ, սրածայր փայտ կամ երկաթ, դամ» Մխ. առակ. «ցցուած ժայռ, քար, լեռան գլուխ» Խոր. Լմբ. սղ. և իմ. «ցցուած, շեպ, անհարթ» Վեցօր. 143. որից* սեպաձեալ *«ցցուիլ, սրածայր լինել» Սարգ. Լծ. կոչ. նոր բառեր են* սեպաձև, սեպագիր, սեպագրութիւն, սեպագրական։

Klaproth, As. pol. 104 *պրս.* چوب čōb *«ցուպ, գաւազան»։ Նշ Բ (բևեռ. բառի տակ) լծ. Բրք.* čivi *«դամ»։* Lag. Urgesch. 1056, Btrg. bktr. Lex. 18 *ղնդ.* safa *«հղչիւր, սմբակ»։ Հիւնք. սեռ. բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 300 նոյն ընդ շեպ։*

ԴԻՒ.—Երև. Շմ. սէպ, *Մշ.* շեպ, *Գոր. Ղրբ.* սէպ, սրպ *«երիթ, տուամ», Ակն.* սիպ *«դամ».—նոր բառեր են* սեպաւոր *«սուր ծայրը դուրս ելած (ժայռ)»,* սեպոիկ *«առջևի տուամները ընկած»,* սեպել *«խոթել, մէջը խրել»։*

ՓՈԽ?.—նո՞ւն է վրաց. ხიპი *սիպի կամ* ხიპი ჟვა *սիպի խվա «կարծր և կոլոր քար, մեծ գայլախաղ»։*

*ՍԵՊԱՃ *«սև սաթ». ունի միայն Պատկ.* Драгоц. камни, *էջ 42։*

=*Արաբ.* سبج sabaj *կամ* sabǰ *«սև սաթ, jais, raratъ» (չունի Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 410)։*

Այսպէս մեկնից Պատկ. անդ։

*ՍԵՊԵԱՆ *«մելանաձուկ» Լաստ. իգ. որ և* սպին *Վեցօր. 140,* սիպէ *Նեմես. 29։*

=*Յն.* σηπία *«մելանաձուկ», որից նաև լտ.* sepia, *իտալ.* seppia, *վրաց.* ხიპინი *սիպինի «каракатица (моллюксъ), слизь морской» (Զուբինով[2] 1178).—Հիւբշ. 278։*

Ուղիղ մեկնից Նշ Բ։

ՍԵՊԵԼ *«մախաղել, սեղմել, խթել». ունի միայն Բառ. երեմ. էջ 284. Ըստ իս պետք է կարդալ «մախաթել», որին համաձայն է գալիս «խթել», որով բառը կհանուի սեպ «սրածայր փայտ ձևից»։—Աճ.*

***ՍԵՊՈՒՀ**, ի–ա *հլ. (կայ և սեռ.* սեպուհեաց) *«ասպետ, ազնուականութեան մի աստիճան» Եղիշ. Փարպ. Լաստ. (Հին բռ. մեկնում է «հարկևոր, մեծարգոյ», նոր գրականում «գլխաւոր, առաջնակարգ» (օր.* սեպուհ պարտականութիւն). *որից* **սեպհական** *(նաև գրուած* սեփական, սեփհական*) «առանձնական, իրական, իրեն պատկանած, սէր եղած» ՄԳր. Աբաղ. Ոսկ. մ. բ. 20.* սեպհականեալ *Եզն. էջ 8.* սեպհականութիւն *Կոչ. Սեբեր.* սեպհականագոյն *Փարպ.* սեպհականատէր *(նոր բառ). Հնագոյն ձևն է *սեպուրհ, ինչպէս ցոյց է տալիս վրաց.* საზეპურო *սազեպուրո փոխառնալ ձևը (տե՛ս տակը)։*

= *Իրաննան փոխառութիւն է. համմ. գնդ.* vīsō-puθra *«(իշխանական) տան որդի», հիւս. արևմ. պհլ.* vispuhr, *մանիք. պհլ.* vīspuhr *(Salemann* ZAH 8, 75), *հր. արևմտ. պհլ.* vis pus *«իշխան», սոգդ.* višpuś *«ժառանգ», որի թարգմանութիւնն է արամ.* bənē baitā כְּבֵי בַיְתָא *«որդիք տան» (որ է «աւագանին, արքայական իշխաններ»)։ Հայերէնը ենթադրում է իրան.* *visya-puθra, *որի մէջ բարդութեան իբր առաջին եզր դրուած է գոյականի տեղ ածականը, որից* *վսեպուրհ> *վսեպուհ *և վ–ի անկումով՝* սեպուհ։

ՆՀՒ նոյն է դնում հյ. սպայ *կամ* պսպաճ, *պրս.* սիփահի *բառերի հետ էմին, ռուս. Թրգմ. Ասող. էջ 254 (արտ.* Истор. М. Хорен. *1893, 303)* սպահի *բառի հետ հանում է* ասպ *«ձի» բառից։* Müller SWAW 42, 256 *պահլ.* šahputr شهپوتر *«արքայորդի»։ Տէրվ.* Altarm. *98* սեպհական *բառը սրանից բաժանելով՝ մեկնում է դերանուանական *sabha արմատից, իբր յն.* σφεῖς, σφός, *հպրուս.* subha, suba *«ինքն, իրեան», գոթ.* silba *«ինքն» են։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ առաջին անգամ Մառ* ЗВО *5, 288—9 (Թրգմ. ՀԱ. 1892, 165), որ համարում է գնդ.* vīsō-puθra *«տան որդի» ձևից կրճատուած։ (Նոյնը Ադոնց,* Арм. въ эп. Юст. *401)։ Մերժում է Հիւբշ.* ZDMG 46, 327—8, *Թրգմ. ՀԱ. 1892, 355, ընդունում է Աճ. Խաչատրեան, Լումայ 1896 Ա. էջ 294։ Հիւնք. էջ 282* սեպուհ *= պրս. իսբէհ,* սեպհական *< սեպ բառից, իսկ էջ 344* սեպուհ *= պրս. շապուր «արքայորդի»։ Մառ* ЗВО *11, 165—170 պնդում է ընդդէմ Հիւբշմանի, իբր կռուան առնելով վրաց.* საზეპურო *սազեպուրո բառը, որ երևան է հանում հնագոյն հյ. *սեպուրհ և աւելի է մօտեցնում գնդ.* vīsō-puθra *ձևին = պհլ.* vis-pūhrak։—*Գ. Փառնակ, Անահիտ 1907, 21 Սեբէոսի մէջ գտնելով ի սեպհական գնդին կողմանեսՙ դրուած իբրև Վասպուրական, այս երկու բառերն էլ դնում է = գնդ.* vīsō-puθra> *վսպուհր>*սպուհր>*սպուհ> սեպուհ։ Salemann, Manich. Stud. ZAH 8 (1908), *էջ 75 մանիք. պհլ.* vīspuhr *ձևի հետ՝* Marquart *ՀԱ. 1911, 541—2 բուն ձևը դնում է *սեփուհ, Թրգմ. վրաց.* սեփեծուլի *ձևից.* –ուհ, *իգ.* –ուհի՝ *ծագում է հպրս.* puthra *«որդի» բառից՝* Meillet MSL *17, 248 համարում է իրանական փոխառութիւն. բառի երկրորդ մասը հիւս. պհլ.* puhr *(= puθra) «որդի» բառն է. անծանօթ է սե–, որ կապ չունի* vis- *«տուն» բառի հետ՝ Վերի ձևով պատճառաբանեց ու մեկնեց վերջին անգամ* Benveniste *ՀԱ. 1927, 762 և* REA, *9 (1929), էջ 9՝* Lidén, Göteborgs högskolas årsskrift *1933, Յ 52—54 ալբան.* θερ *«սեպ ժայռ» բառի հետ, իբր հնխ.* k'eppo-։

Փոխ.—Ըստ Մառ՝ ЗВО *5, 289 և 11, 166—170,* Иппол. 64, Физіологъ 1904, *էջ XXXVI հայերէնից են փոխառնալ վրաց.* სეფე სეფხ *(ամկ. ნეფხ, მეფხ) «թագաւոր» (որից* სეფეცულო სეფხեցուլի *«ազնուական»),* ზეპური զեպուրի *«սեպուհ»,* საზეპურო սազեպուրո *«սեպհական». վերջինը գործածուած է Օր. ժդ. 2, իշ. 18 և տառադարձութեամբ ձևացած է հյ.* սեպուհ, սեպհական *բառից, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղերը։ Ըստ այմ վրացին նախապէս ունէր *ზეპური սասեպուրո ձևը, որ յետին մեկնիչները վրաց.* ზეპური

գեպուրի *«երկնային հաց»* ձևից համարելով՝ այսպէս են սրբագրել։

*ՍԵՊՏԵՄԲԵՐ *«Հռոմէական իններորդ ամիսը»* Իգնատ. Թղ. 95 (ոսկեդարեան). Տամար. Յայտմ. (գրուած նաև ռմկ. սեկտեմբեր)։

=Յն. σεπτέμβριος, *որ փոխառեալ է լտ.* september *ձևից. նշանակում է բուն «ութներորդ ամիս» և ծագում է լտ.* septem *«ութը» թուականից. (հին հռոմէական տարին սկսում էր մարտից և սեպտեմբերը լինում է ութներորդ ամիսը). մտած է բազմաթիւ լեզուների մէջ, ինչ. ֆրանս.* septembre, *ռ.* сентябрь *անւ։ Ամսանունները, որովհետև ասւանդուած են ե դարից, պէտք է փոխառեալ լինին յունարէնից և ո՛չ թէ լատիներէնից։ Ըստ ձևի յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս և օգոստոս թե՛ յն. և թէ լտ. նոյն են, այնպէս որ չեն կարող նպաստել ծագումը որոշելու յուլիս (յն.* ἰούλιος) *և նոյեմբեր (*νοέμβριος, november) *յունաձև են, իսկ սեպտեմբեր, հոկտեմբեր և դեկտեմբեր լատինաձև (յն. վերջաւորութիւնն է* -βριος, *լտ.—*ber). նոյեմբեր *ամսանունը առաջին կէսում յունաձև է, երկրորդ կէսում լատինաձև։ Այս բոլորը ի նկատի առնելով՝ պէտք է եզրակացնել թէ ամսանունները նախապէս ունէին յունական ձև, ասելի յետոյ վերածուեցին լատինականի. Համմտ. յատկապէս փետրուար, որ ե դարում ունէր* փեբրուարիոս *ձևը, շատ յետոյ դարձաւ* փետրուար։—*Հիւբշ. 367։*

Գիմ.—Գործածւում է սեկտեմբեր *(Շմ.* սէկտէ՛բէր*) ձևով, որի մէջ կ յառաջացած է* հոկտեմբեր *և* դեկտեմբեր *բառերի ազդեցութեամբ. այսպէս են նաև վրաց.* սեկտեմբերի, *Քուշ.* սեկտեմբեր։

Սեռ *տե՛ս Սայր։*

+ՍԵՒ, ի *հլ. «ոչխար, ցեղ, տոհմ» Փիլ. Շար. Մագ. Յայտ. իր. 16. «ըստ տրամաբանից՝ առաջինն ի հինգ ընդհանրից» Պորփ. Արիստ. աստրոգ. «ըստ քերականաց՝ անունների արական, իգական կամ չեզոք լինելը և բայերի ներգործական, կրաւորական կամ չեզոք լինելը» Թր. քեր. որից* սեռական, սեռային, սեռաբար, սեռակատար, սեռանալ, եռասեռ-ան, կիսասեռ, յոգեսեռ *են, բոլորն էլ յետին։*

=*Բնիկ հայ բառ, որ տե՛ս* սեր *արմատի տակ։*

Նշբ լծ. հյ. սեր, *արաբ.* զիւրի, զիւրիէք, *թրք.* սիւրիւ։ Lag. Urgesch. 1009 *գնդ.* sarəδa *«տեսակ, կերպ»։* Müller SWAW 42, *253 սրա հետ նաև պրս.* sarda(?)։ Justi, Zendsp. 292 *գնդ.* sarəδa *ձևի տակ՝ սանս.* çárdhas, *հպրս.* θarda, *պրս.* sarda *են ձևերի հետ։ Հիւնք.* սեր *արմատից, իբր լտ.* sero *«սերմանել»։ Թիրեաքեան, Արիահայ բս. 330 պհլ.* zarxunt *«սերունդ» բառից։*

Փոխ.—Ըստ Փառնակ, Անահիտ 1906, էջ 238 սեռ *ձևից է փոխառեալ ալբան.* siri *«սեռ, տեսակ»։*

*ՍԵՌՆ *(նշբ գնում է սեռ.* սեռին, *բայց չունի վկայութիւն) «անիւի առանցք» Սիր. լզ. 5. Փիլ. լիւս. 154. Պիսիդ. վեց. 341. Լծ. փիլ. որից* սռնակ *«առանցք» Եսագր. Լծ. փիլ. Արիստ. աշխ.* սռնի *«առանցք» (չունի ԱԲ) Տաթև. ձմ. խէ (երկիցս). Ճծթ. Հարց. 182.—յգ. սեռ.* սռանց *վրք. և վկ. 80. Համմտ. նաև* լիսեռն։

=*Ասոր.* ܣܪܢܐ sarnā, *արամ.* סרנא sarnā, *եբր.* סרן seren, סרזי sarnē *«առանցք», որոնց հետ կցում են նաև բաբել.* šurinnu *«նշանաբան» (*Gesenius *553)։—Հիւբշ. 316։*

Lag. Arm. Stud. § 1982 *վարանելով յիշում է եբր. և ասոր. ձևերը։ Հիւնք. լտ.* sera *«նիզ, սոզնակ»։*

Գիմ.—Ղրբ. սէ՛ռնը, *Ալշ. երև. Մշ. Սլմ. Վն.* սռնի *(սեռ.* սռնու*) նոյն նշ.։*

Փոխ.—Քրդ. sərni *«առանցք, բռնի» (Ա-ճառ. MSL 16, 365)։*

ՍԵՒՆ *«զուտ, անխառն, պարզ, մաքուր» Ոսկ. գղ. և մաթ. Սեբեր. Փիլ. որից* սեռնութիւն *«յատակութիւն» Սեբեր. Ոսկ. մաթ. ղ. Ասող.—նշանակում է նաև «սերտ, հոծ, խիտ, պինդ», որից ունինք* սեռնիլ *«լցուիլ, խտանալ» Սեր. իգ. էջ 79 (լցեալ սեռնեցան վայրքըն բուսով դալարոյ),* սեռել *«պնդացնել, ամրացնել» Դամասկ.։*

Նշբ գնում է սեռ *(սերունդ) արմա-*

տից. հմմտ. յն. γνήσιος «հարազատ, ազնիւ, ստոյգ»՝ γένος «սեռ, սերունդ» *բառից։ Տէրվ.* Altarm. 100 *հյ.* սերտ, սեղմ, *առնս.* sāra «ամրութիւն» *բառերի հետ։ Հինք. լտ.* sincerus «անխառն, զուտ ևն»։ Meillet, Esquisse 108 *լստ նշ*։

+ՍԵՐ *(յեռնաբար ի, ո հլ.) «ցեղ, տոհմ, ծնունդ, սերունդ» Փարպ. Արիստ. աշխ. Նոնն. Մագ. «սերիլ, աճիլ, բազմանալը» Վեցօր. 93. «քերականական սեռ» Թր. քեր. որից* սերել *կամ* սերիլ *«սերունդով աճիլ՝ բազմանալ» Եզնկ. լղ. 12. Վեցօր. Եզն. Մծբ. Եւս. բր. Ագաթ. Ոսկ. մաթ.* սերաճալ *Մծբ. Եփր. թգ. և օրին.* սերուն *Խոր.* սերուն *Փիլ. բազմասեր Պիտ. մօտասեր Փիլ. զաւակասերութիւն Պիտ. եղեգնասեր Փարպ. մանկասերութիւն Փիլ. բոլորասեր «բոլորատեսակ» Ագաթ. (տե՛ս ՀԱ 1913, 625)* սերնդագործութիւն *(նոր բառ). այստեղ են պատկանում* սեռ, սերմն, *որոնք տե՛ս առանձին։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ke′r- «աճիլ, աճեցնել, սնուցանել» *արմատից. ժառանգներն են՝ լտ.* creo «ստեղծել, գոյացնել, յառաջ բերել, արտադրել, զաւակ կամ ձագ սերիլ», cresco «ծնիլ, աճիլ, զարգանալ», cerus «արարիչ», Ceres «երկրագործութեան աստուածուհին», procerus «երկար, մեծ, բարձր, աճած», creber «խիտ աճած, թաւ, յաճախակի», *օսկ.* caria «հաց», *յն. առտ.* κόρος «տղայ, երիտասարդ», *յատնաբար «ընձիւղ, մատաղ ոստ»,* κορέσω «յագեցնել», *հոմեր.* κοῦρος, *դոր.* κῶρος, *առտ.* κόρη «օրիորդ, երիտասարդուհի», κέλωρ (<*k′érōr) «որդի, սերունդ», *լիթ.* šeriù, šérti «սնուցանել», pašaras «կեր», šermens, šermenys «մահելահաց» (Walde 200, Boisacq 433, 497, Ernout-Meillet 223, Pokorny 1, 408):

Նշ. Նոյն ընդ սեռ. Windisch. *20 լտ.* sero «սերմանել»։ *Տէրվ.* Altarm. *91* սաղմ, սերմն, զարմ *են ձևերի հետ՝ յն.* χιόη «դալարիք», *լիթ.* želti «աճիլ, կանաչիլ», želmn «թարմ դալարիք», *գնդ.* zarəmaya «կանաչ», *իսկ էջ 99 առնս.* sar «սուրալ, վազել» *արմատի հետ, որից նաև հյ.* սուրալ, սողալ *են։ Հինք. լատ.* sero: Bugge KZ 32, 64 սեր, սեռ *և* սերմն *դնում է հնխ.* spér-si, spéros *ձևից. հմմտ. յն.* σπέρμα։ *Ուղիղ մեկնութիւնը մատածեց նախ* Patrubány SA 1, 216, *որ բառս կասկածով կցեց լտ.* creo *ձևին։ Նոյնը հաստատում է մի առանձին մենագրութեան մէջ* Osthoff, Etymol. Parerga *էջ 1—71, յատկապէս էջ 6 և 33, նաև* Scheftelowitz BB 28, 283, Meillet Esquisse 108: *Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 16 պհլ.* զերմունդ=*հյ.* սերունդ: *Սպրպեան ՀԱ 1909, 336 սումեր.* sar «սերունդ, աճիլ»։ Karst, *Յուշարձան 400 ասուր.* zēru «սերմ, ցանք», zaru «սեռ, սերունդ», *407 սումեր.* sar «սերունդ»։

ՍԵՐ «կաթի երեսը, սեր» *Մծբ. Վստկ. Տաթև. ձմ. կա. որից* սերգաս *(նոր բառ)։*

ԳԳ պրս. سر شیر sar-šīr «սեր» *(բուն նշ. «գլուխ կաթի»)։ Նշ. սրա հետ նաև լտ.* serum «շիճուկ»։ *Տէրվ.* Altarm. *99 առնս.* sāra «թթու սեր, սեր»։ *Հինք. պրս.* šīr «կաթ» *և* sar-i-šīr «սեր»։ *Գաբրիէլեան, Բազմ. 1908, 501 նոյն ընդ. հյ.* կեղ «վէրք», *լտ.* cera «մոմ»։ Pictet *բ. տպ. Բ. էջ 39 առնս.* sara «սեր» *կամ* kśira, *պրս.* شیر šīr «կաթ»։

Գիւր.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Սչ. Վն. սեր, *Ախց. երև. խրբ. Կր. Նախ. Շմ. Սեբ.* սէր, *Ասլ.* սէրիւց, սէրիւգ. *Ագլ. (այժմ անգործածական). Հմշ. Մկ. Սվեդ. Տփ.* սիր *(իսկ Ղրբ. ի՛րէս և Ագլ. կիսի՛րիս՝ իբր «կաթի երես». միւսները իբր. ղայմաղ, խայմախ). Նոր բառեր են* սերակալել, սերակեր, սերոտուիլ, սերոց, սերուց:

ՍԵՐԱԼՈՏ *«ալիւր». ունի միայն Բտ. երեմ. էջ 284։*

*[*ՍԵՐԱԼՈՒԻ *«աշխարհալուր». ունի միայն Բառ. երեմ. էջ 284։*

=*Անշուշտ պէտք է կարդալ* սխրալուր։*]* —*Ա՛ճ.*

**ՍԵՐԱՍՏԷՍ, ի, ի–ա հլ. «մի տեսակ հոգեվարական հղձիւրաւոր օձ». ունին միայն ՀՀԲ և ՋԲ, առանց վկայութեան։*

=*Յն.* κεράστης «եղջիւրաւոր օձ», որից

նաև լտ. cerastes՝ նոյն նշ. հայերէնը պէտք է ուղղել ուրեմն *կերաստէս:

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՋԲ:

Սերափիմ *տե՛ս Սրովբէ:*

ՍԵՐԵԿ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) *«սեկ, կաշի» լծ. նիւս. որից* **սերեկել** *«ամանի բերանը կաշիով պատելով կապել» Թուց ժթ. 15. Ոսկ. ա. տիմ. էջ 114:*

ՆՀԲ լծ. յն. σειράω, σειρεύω «կապել»: Հիւնք. թրք. saɣrɣ «ծածկոց»? Արեղեան, Հայոց լեզ. տեսութ. էջ 211 **սեր+եկ** *(գալ բայից), իբր* **սերեկ** *«սեր գալը, երեսը սեր բռնելը». սակայն այս նշանակութիւնը այլուստ ծանօթ չէ և* **սերեկ** *միայն խնոցու կամ կաթնամանի կաշէայ կափարիչը չէ, այլ ամէն տեսակ ամանի. հմմտ. Թուց ժթ. 15 «Ամենայն աման բաց, որ ոչ իցէ խփեալ կամ սերեկեալ, պիղծ լիցի»:*

ԳԻՒ.—երև. սէ՛րէգ *«սերեկ», Սեբ.* սէրէգ *«երեսը կապած բարակ խաւ (վէրքի, կաթի ևն)», Ալշ. Բլ. Մշ.* սաւեգ, *Վն.* սաւէկ, *Սլմ.* սաւէկ՝, *Խրբ.* սաւէք՝, *Մկ.* սաւիկ, *Ղրբ.* սի՛րէկ, *բոլորն էլ «սերեկ». որից* **սաւեկել**, **սաւեկթել**, **սեւեկաճամ**, **սեւեկել** *«երեսը բարակ մի խաւ կապել»:*

ՓՈԽ.—Եթէ պատահական նմանութիւն չունի, մեզանից է փոխառեալ կիրգիզ. سوروك sürük *«հորթի ևս կաշի»* (Будаговъ, *1, 645):*

***ՍԵՐԵՖԻԿ** *«սեղանաւոր». նորագիւտ բառ, որ մի քանի անգամ գործածում է Անսիպք՝ էջ 81:*

=Արաբ. صرّاف ṣarrāf *«սեղանաւոր, լումայափոխ», որից աճկ.* saraf:—*Աճ.*

ՍԵՐԿ *«այսօր» երգն. քեր. Տիմոթ. կուզ. 77, 194. Իրեն. ցոյցք (գրուած մեր. այսպէս են ուղղում Անդրիկեան, Բազմ. 1911, 43 և Ակինեան ՀԱ 1911, 307). որից* **սերկեան** *«այսօրուայ» Պիտ. Մագ. ճշ. Սկ. կթ. արմ.* **սերկածին** *«այսօրածին» Թէօդ. խշ. Անյ. էջ 496.* **սերկս** *«այժմ, հիմայ, արդ» Տիմոթ. կուզ, էջ 52:*

ՆՀԲ և Հիւնք. գնում են **ցերեկ** *բառի՞ց: Ջամինեան (անձնական) այս երեկ ձևից համառօտուած:*

ԳԻՒ.—Կենդանի է Հւր. իսէկի, իսէրկի *«այսօրս», իսկկի «այժմ» ձևերով, որոնցից երևում է որ յիշեալ* **սերկ** *բառը յունաբանների ձեռքով շինուած կեղծ մի ձև չէ, այլ բնիկ ժողովրդական:*

ՍԵՐԿԱՆ. *անսովոյգ բառ, որ մէկ անգամ ունի Մխ. դտ. 367. «Միղուք վաճառեալ յաշնան, ըստ մեղեր, զոր ունին, հասատութեցի սերկանն» (այլ ձ.* **սեռականն**, **տէր կանն**, *ըստ սեռմանն):*

ՆՀԲ մեկնում է «իբրու սերկկալ և անբաց, կամ որպէս է ի սերկեան վիճակի ամբողջ». ՋԲ և ԱԲ չունին. Բասամեան (անդ) ընտրում է **սեռականն** *ընթերցուածը, իբր «գարնան սերունդը» կամ* **սերկեան** *«վաճառման նոյն օրը հղածը»:*

ՍԵՐԿԵԻԻԼ *«այվա» Ագաթ. Խոր. աշխ. վսակ. 41 (ունի* **սերկիւիլ**), *Մխ. բժշ. որից* **սերկևլի** *«սերկևիլի ծառ» Մխ. առակ. գրուած է* **սրկևիլ** *Մծբ. 189: Հին գաւառական ձև է* **սոռովիլ**, *որ երկու անգամ ունի Խոր. աշխ. հրատր. Սուքրեանի, էջ 35, որի դէմ Վենետ. 1865, էջ 610 գտնում ենք* **սերկեւիլ**:—

=Նոյն են արաբ. سفرجل safarjal, سفرجلة safarjala, *յգ.* سفارج safarīj *(Կամուս, թրք. թրգմ. Գ. 247), պհլ.* sapejarǰeleh (Anquetil 2, 404), sapelǰalva (505), *վրաց.* šorokali *(չունի Ջուբինով²), յն.* σαφαρντζιάλ (Du Cange) *հոմանիշները. բայց ի՞նչ է սրանց կապը. արաբերէնը անշուշտ փոխառեալ է, ըստ որում 5 արմատական բաղաձայն ունի. յոյնը ուշ ժամանակի տառադարձութիւն է արաբերէնից:*

Պատկ. հրատր. Խոր. աշխ. 1877, էջ 52 արաբ. և պհլ. ձևերի հետ: Հիւնք. արաբ. **սէֆէրճէլ**-*ից: Հրուս. § 2738 արաբերէնը դնում է հայերէնից փոխառեալ:*

ԳԻՒ.—Ախց. կր. սէրկէվիլ, *Ալշ. Մշ.* սէրգէվիլ՛, *երև.* սրգէ՛վիլ, *Նոր (և Երևանի այլ գիւղեր)* **սերկէֆիլ**, *Շմ.* սիրկէվիլ, *Մկ.* սըր–

կըվիլ, *Ագլ.* սըրկի՛վիլ, սըրկէ՛վիլ, սըրկվի՛լ, *Վն.* սիրկիվիլ, սիկիվիլ, *Զղ.* սարկիվիլ, *Սլմ.* սէվկէլիւ, սէվկէլիւկ, *Ղրբ.* սրվգէ՛լուկ, սրվկէ՛լուկ, սրլկրեի՛վիլ, *Գոր.* սրլկրեի՛վիլ, *Ջթ.* սինգիվիլ, *Հճ.* սիվուգուլիյ:

Սերկս *տե՛ս Սերկ:*

+ՍԵՐՄՆ, ն *հլ.* (-ման, -մանէ, -մանց. *կայ նաև յետնաբա՞ր* սերմունէ) «բոյսի կամ կենդանական սերմ, ցեղ, սերունդ» *ՍԳր. աստում է նաև* սերմ *Ղևտ. ժբ. 2. Ոսկ. մ. ա. 5. ածանցման մէջ մտնում է 3 ձևով. 1.* Սերմն. *ինչ.* սերմնակաթ *ՍԳր.* սերմնբղնկալ *Եզն. 135.* սերմնարկութիւն *Ոսկ. եբր. իգ.* մանկասերմնութիւն *Փիլ. լին.* չարասերմըն *Ճառընտ. 2.* Սերման. *Ինչ.* սերմանիէ *Եւս. պատմ.* սերմանաբաղ *Գծ. ժէ. 18. Վեցօր.* սերմանել *ՍԳր.* սերմանիչ *Եւագր.* սերմանարկու *Եզն. 135.* սերմանական *Ոսկ. ես.* սերմանահան *Մաթ. ժգ. 3. 3.* Սերմ. *ինչ.* սերմակրել *Յայտմ.* սերմահեղնութիւն *Շնորհ.* սերմառել *Տօնակ.* դիւասերմ *Մարաթ.* բարեսերմութիւն *Նար. ևն: Սրանցից հնագոյնը երկրորդն է, միջինը՝ առաջինն է, նորագոյնը՝ երրորդ ձևն է:*

=*Բնիկ հայ բառ. կազմուած է* -մն *մասնիկով* սեր-<*հնխ.* k'er- *արմատից. Համմ.* ջեր-ջերմն, կող-կողմն. *աւելի մանրամասն տե՛ս* սեր:

Klaproth, Asia pol. 104 *լս.* semen «սերմ» և *արաբ.* zar' «ցանել»: *Նշբ լծ. յն.* σπέρμα, σπόρος, σπορά, *լս.* semen: Windisch. 20 *լս.* semen: Pictet 2, 99 *սեմ.* zar' «ցանել» *արմատից՝ արիական մատնիկով:—Պատկ.* Изслед. *լս.* semen:—*Տէրվ. տե՛ս* սերել: *Հիւնք. յն.* σπέρμα-βιος: Bugge KZ 32, 64 *լիովին համապատասխան է դնում յն.* σπέρμα Patrubány SA 1, 216 սերել=*լս.* creo *ձևից, որ ընդունեցին նաև* Osthoff, Meillet, *որ տե՛ս* սերել: *Գաբրիէլեան ՀԱ 1909, էջ 222 գրմ բառից: Էսգէթ, Արրա. 1915, 499 արաբ.* ثمر ϑamar *(օսմ.* semer *հնչումով) «պտուղ»:*

Գիւտ.—Ալշ. Մշ. Զղ. Սլմ. Վն. սերմ. *Խրբ. Ախց. Կր.* սէրմ, *Գոր. Երև.* սէրմը, *Ղրբ.* սէրմ, սր՛րմը, *Ասլ.* սէ՛րմ, *Ագլ. Համշ. Մկ. Մրղ. Սվեդ. Տփ.* սիրմ:—*Նոր բառեր են* սերմակալել, սերմահան, սերմառիլ, սերմացու, սերմել, սերմագարի, սերմացորեն, սերմահաճար, սերմակորեկ, սերմագցի:

Փոխ.—Patrubány SA 1, 224 *հայերէնից է դնում հունգ.* szárm-azik «արտադրուիլ, յառաջ գալ»:

Սերովբէ *տե՛ս Սրովբէ:*

ՍԵՐՏ, ի *հլ.* «պինդ, կարծր, հոծ, խիտ, հարազատ, ստոյգ» *Ա. պետ. գ. 8. Ոսկ. ես. եբր. տիմ. գաղ. Եփես. 841. Սեբեր. որից* սերտիւ *Ա. պետ. ա. 22. Ոսկ.* սերտել «պընդացնել, հաստատել» *Դիոն. Պիտառ. խոր.* սերտանալ *Գնձ.* սերտաշէն *Վրդն. ծն. գերասերտիլ Շիր. Դիոն. նախասերտեալ Դիոն. Բղթ.—Նոր իմաստս է* սերտել «գասը (լաւ) սովորիլ», *որից* սերտողութիւն, սերտարան:

Նշբ լծ. Բրբ. սէրբ «խիտ, պինդ», *լս.* certus «ստոյգ» և *հյ.* սէր, սիրտ, սեռն: *Տէրվ.* Altarm. *100* սեռն և սեղմ *ձևերի հետ՝ առնս.* sāra «հաստատութիւն, ամրութիւն»: *Հիւնք.* սիրտ *բառից:* Müller WZKM 5, 269 *յն.* κρατύς «ուժեղ, զօրեղ», *գոթ.* hardus *են բառամբի հետ, որ մերժում է Հիւբշ. էջ 459:* Karst, *Յուշարձան 407 առմեր.* sir «կապել»: *Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 Բրբ.* sert «ամուր, պինդ»: *Պատահական նմանութիւն ունին. յն.* στερρός, *գալլ.* serth «հաստատուն», *իսլ.* seirt «ուժ» *են, որոնց արմատն է հնխ.* ster- *(Boisacq էջ 910):*

Գիւտ.—Սչ. սեռտ «խիտ» *(օր. սեռտ առնորը), Մշ.* սեռդ «պինդ» *(ձմերուկի, բողկի համար ասուած), Սլմ. Վն.* սեռտ «թարմ, առոյգ, բաջառողջ», *Երև.* սէռտ «պինդ» *(ձու, փայտ), Տփ.* սիռտ «քանձր»:—*Նոր նշանակութեամբ Մշ.* սեռդ «գասը լաւ սովորած», *բայական Մշ.* սէռդել, *Ախց. Կր.* սէռտել, *Պլ. Սեբ.* սէռդել, *Ագլ.* սէ՛ռտիլ, *Ասլ.* սէռդէ՛լ, *Խրբ.* սէռդիլ, *Մկ.* սէռտիլ «լաւ սովորիլ գասը»:

Փոխ.—Կայ պրս. صاردج ṣārdiǰ «լոկոն. և է այն, զի զկիրն կամ զդաճն իւղով կատուտի և բամբակով խառնեալ, և խմոր արաբեալ, և այնու զփողրակս ջրոց ընդ իրեարս

մածուցեալ ամրացուցանեն» (ԳԴ)։ Այս իմաստը իսկոյն յիշեցնում է հյ. սերտիչ մի ձև, մանաւանդ որ պարսկերէնի մէջ ص ṣ տառը ենթադրում է օտար ծագում։ Բայց վերոյիշեալ պրս. բառը ըստ իս սխալ ընթերցման արդիւնք է և պէտք է ուղղել صاروج ṣārvīǰ *կամ* sārūǰ, *որ է պրս.* ساروج sārūǰ *«գաճ», արաբացեալ* صاروج ṣārūǰ *«գաճ, յատկապէս ապակի կամ ջրի փողրակ կպցընելու գաճ կամ լոկոն» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 417)։*

Սևաստոս *տե՛ս Սեբաստոս։*

Սեխեմ (ի հյ. յետնաբար) *«բևեռ, գամ, մեխ» Նար. կպ. էջ 170. Բէռդ. խչ. որից* սեւեռել *«գամել, մեխել, կպցնել» Նար. Շար. Անյ. պորփ.* սեեռագոյն *«պնդագոյն» Բէռդ. խչ. Մագ. գամագտ.* սեեռակապ *Նար. խչ.* սեեռապինդ *Բրս. մրկ.* սեեռումն *Տագ. ևն։ Բոլորն էլ յետին։*

ՆՀԲ կցում է բևեռ բառին։ Հիմնք. լտ. severus *«պինդ. ամուր», Բրբ.* սաւի *«կոթ»,* սիվրի *«սրածայր»։ Մատ* ИАН *1917, 318 նոյն ընդ* բևեռ, *արմատը վեռ։* Petersson, Ar. u. Arm. Stud. *111—2 բուն ձևը դնում է *սև<հնխ.* k'eu̯-o, *իբր առնս.* çūka- *«միջատի խայթոց», զնդ.* sūkā, *պհլ.* sūčan, *պրս.* sōzan *«ասեղ» բառերին ցեղակից, որ յետոյ բևեռ բառի նմանողութեամբ դարձել է սեեռ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* سمر samr *«գամել», որից* مسمار mismār *«գամ, մեխ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 901)։* Lidén, Göteborgs högskolas årsskrift 1933, *էջ 52 սեպ և բևեռ բառերի խառնամիամբ յառաջացած, մերժում է* Petersson-*ի մեկնութիւնը։*

Սեխեմ *«անասոյզ մի բոյս» Կամրկ. ունի միայն ՀԲուս. § 2742։*

Սեհի *տե՛ս Սեհենի։*

Սեխակ *(գրուած սեբսկի) «մանրագործ» Գաղիան, ունի միայն ՀԲուս. § 2743։*

***Սեփ**, ի–ա *հյ. «իշխան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սիմ. ապար. էջ 125. «Իսկ Թէոդոս չառեալ յանձին, հանդերձ վրօք և աղուանօք և մեծ սեփաւ Սիւնականին, մտեալ յամուրն յԱղթամար, մարտս յօրինեալ ընդ Կոստանդին»։ (Թէոդորոս Ռշտունու ապստամբութիւնն է յունաց դէմ, որ առնուած է Սեբէոսի լև գլխից։ Պէտք չէ կարծել թէ սեփ յատուկ անուն է, որովհետև, նախ՝ նման անուն այլուստ ծանօթ չէ, և երկրորդ՝ Սիւնեաց իշխանի անունը չի յիշում նաև Ապարանցու աղբիւրը Սեբէոս և պարզապէս գրում է. Եւ էին ընդ նմա միաբան վրացին և աղուանն և սիւնին, որք ըստ հրամանի նորա գնացին յիւրաքանչիւր աշխարհս և ամրացան ի նմին)։*

=Կարելի էր կարծել վրաց. ცეცხ *սեփն «թագաւոր» բառից. բայց որովհետև «մեծ թագաւոր» տիտղոսը պէտք եղածից աւելի է Սիւնեցի իշխանի համար, ուստի լաւագոյն է. կարդալ մեծ սեպհաւ (սեպուհ բառից)։—Ա՛ճ.*

Սեփարեմ *տե՛ս Սրովբէ։*

+Սէգ (ի–ա *հյ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «հպարտ, ամբարտաւան, խրոխտ» Բ. մկ. է. 9. Վեցօր. 163. Ագաթ. «այր իգացող» Եւագր. 245, Իրեն. հերձ. 94, 176 (Վարդանեան ՀԱ. 1910, 305, բայց ունի արդէն Բառ. հրեմ. էջ 285). որից* սէգ առնուլ *«սիգալով ճեմել» Նար. տաղ.* սիգալ *«հպարտանալ, պարծիլ» Առակ. լ. 31. Սիր. ժ. 10. Ոսկ. բ. Կոր. Ագաթ. «իգանալ, կնատիլ, զեղխիլ» Ոսկ. մ. բ. 24.* սիգութիւն *«իգացում, կնաւորութիւն» Փիլ. 277—8. Կանոն. 46.* սիգաճի *Ոսկ. մ. գ. 13.* սիգամայլ *Արծր. գրուած ունինք նաև* սեգ, սեգութիւն։ *Նոր բառ է* սիգանազ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'eigh- «յառակել, աշխոյժ, առոյգ» արմատից, որի ժառանգորդներն են առնս. çīghrá- «աշխոյժ, արագ», անգսք. hīgian «շտապել, յառաջանալ, յառաջ դիմել», անգլ. hie «աճապարել», ռուս. сигать, сигнуть *«ցատկել», զռ.* sigaé, signuć *«մեծ մեծ քայլերով քայլել», ինչպէս նաև ռուս.* сигъ *«մի տեսակ ձուկ», որից փոխառեալ են լիթ.* sykis, *հհյուս.* sīkr *են (Pokorny 1, 363)։ Հայերէնի բուն նախնական իմաստը պէտք է լինի «հպարտ քայլող», ինչպէս ցոյց են տալիս* սիգալ, սիգամայլ *ևն։—Ա՛ճ.*

ՆՀԲ լծ. սոճի, չուխ, չխեղ։ Karst, *Յուշարձան 407 սումեր.* sag «գլուխ, գլխաւոր», *415 մոնգոլ.* tşik, *բուրեաթ.* seke «ուղիղ», *թրք.* čun, čin «ուղիղ» են։ *Պատահական նմանութիւն ունին արաբ.* شَجِيع šajī' «քաջ», *ասոր.* ܫܓܐ səgā «մեծ, շատ», *եբր.* שגא sgā «աճիլ»։

ՍԷՂ, ո հլ. «դալար կանաչ հասարակ խոտ» ՍԳր. Վեցօր. *83, 87.* «վնասակար խոտ» Եզիշ. մատն. Կանոն. էջ *58. (ըստ* Տիրացուեան, Contributo § 23 agrostis alba L, § 27 cynodon dactylon Pers., § 283 pimpinella saxifraga L.) *որից* սիզուռ Վստկ. սիզական Գնձ. սիզաբոյս Ագաթ. սիզաբերիլ Խոր. աշխ.։

ՆՀԲ լծ. *թրք.* صاز կամ ساز saz (և *քրդ.* ساز saz) «կնիւն, պրտուս»։ Աճառ. ՀԱ. *1905, էջ 346 կրկնակ ձև* սինձ *բառի, որի նախաւոր ձևն էր* *սէնձ. Համմ. կորիզ և կողինձ։ Patrubány ՀԱ. *1908, 343* հնխ. k'ėi- «պատկիլ» արմատից։

ԳԻՒ.—Սրև. Խրբ. Կր. Մկ. Մշ. Ւր. Վն. սէզ, Զթ. սեզ, Սվեդ. սիզ՝ *որոնք գանագան բոյսեր են. ունինք նաև* սազուն Մշկ.։

ՍԷՒՆ «28րդ օր ամսոյ». ունի միայն Քաջունի, Գ. *218։*

*ՍԷՀԼ «ծովեզր, ծովափ». *յետին ոամիկ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած* Սամ. անեց. շար. *142. «ի սոյն ամի էառ Սալահատինն զԵրուսաղէմ և զամէն սէհլն, բաց ի Սրոյ և ի Տրապօլսէ». (չունի ԱԲ)։*

= Արաբ. ساحل saḥil «ծովեզր»։—Աճ.

*ՍԷՅԼԱՆ «կարկհան կամ յակինթ». ունի միայն Պատկ. Драгоц. камни, էջ *16։*

=Պրս. سیلان seylān նոյն նշ. (ըստ Պատկ. անդ. չունի ԳԴ). որից փոխառեալ են վրաց. ცეილანი սեիլանի «цирконъ *քարը» (*Զուբինով², *1163), Կազանի ԹԹր.* سيلان silan «ուլունք» (Будаговъ *1, 657)։*

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

ԳԻՒ.—Նոյն են սիլան (Rivola) «amethistus, *իտալ.* granata», *Բլ. «մանր ուլունքների շարան ոտքի կապելու», Վն. «փայլուն իր»։*

+ՍԷՐ, ո հլ. «սէր, բարեկամութիւն, մտերմութիւն, սիրահարութիւն» ՍԳր. «ագապէ» (*թարգմանաբար յունարէնից*) Վրք. հց. ա. *284 են. որից* սիրել ՍԳր. սիրիչ Ագաթ. սիրուն Ա. տիմ. ղ. *2, 18. Եւս. պտմ.* սիրելի ՍԳր. սիրելութիւն Ագաթ. բարեսէր ՍԳր. գինեսէր Ա. տիմ. գ. *8.* դիցասէր Եւս. պտմ. կենասէր Կոչ. լռասէր Եւագր. եղբայրասէր ՍԳր. զարդասէր Վեցօր. Ոսկ. մտթ. զբաղասէր Ոսկ. յհ. ա. *1.* բշնամասնասէր Առակ. գ. *30.* լեռնասէր Վեցօր. խաշնասիրութիւն Մծբ. զարդասիրիկ Ոսկ. ես. սիրապէս «սիրով» Լաբուբ. *48 (տպ.* սրբապէս, *ըստ* Վարդանեան ՀԱ. *1921, 605 ուղղելի այսպէս՝ համաձայն ասորւոյն և մէկ հայ ընթերցուածի).* սիրահարիլ Հայհլ. էջ *333,* սիրառն «հոմանի» Փոնց. էջ *34, 46, 127, 194, 168 (երեքն էլ նորագիւտ բառ)։ Այստեղ է պատկանում նաև* սիրեցեալ «Սողոմոնի իմաստութեան գիրքը», *ինչպէս կոչում է* Տաթև. ամ. *641 բ. 642ա, 629ա, ոսկիփ. էջ 130, առնելով նոյն գրքի առաջին տողից. Սիրեցէք զարդարութիւն ոյք դատիք զերկիր։—Նոր բառեր են* սիրաբանել, սիրաբանութիւն, սիրաբանական, սիրակարօտ, սիրակէզ, սիրակցորդ, սիրահար, սիրահարուիլ, սիրահարութիւն, սիրահարական, սիրայօժար, սիրաշահիլ, սիրաշահութիւն, սիրասուն, սիրավէպ, սիրատոչոր են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'ei-ro- ձևից, որ կազմուած է -ro- մասնիկով՝ պարզական k'ei- արմատից։ Այս արմատը նշանակում է նախ «պատկիլ, հանգստանալ», յետոյ անցնելով «տուն, բնաւանիք» իմաստից, հասնում է «սէր, սիրելի, սիրական» նշանակութեան։ Պարզ արմատից են օր. սանս. çéte «պատկիլ», çáyate «պատկիլ, հանգստանալ», çayā «պատկելու տեղ», զնդ. saēte «պատկիլ», յն. κεῖμαι «պատկիլ», հոմեր. κειέμεν, κείω «քնել ցանկանալ», κοίτη, κοῖτος «պատկելու տեղ», ἄκοιτις «կողակից, կինը», են։ Նոյն արմատից m մասնիկով ածանցուած ձևեր են՝ յն. κοιμάω «անկողին մտնել, քնել», անգսք. hoéman «մէկի հետ պատկիլ, կին առնել», ham=անգլ. home, հբգ. heim «տուն, բնակարան, հայրենիք». գոթ. haims

«գիւղ», հհիւս. heimr «հայրենիք, աշխարհ, երկիր», լիթ. šeimà, šeimyna «ընտանիք, ծառաները», լեթթ. sàime, հպրուս. seimīns՝ նոյն նշ., հսլ. sěmĭ «անձ», sěmija «ծառաները», ռուս. семья «ընտանիք», հին կիմր. cum, ն. կիմր. cu «ընտանի, քաղցրաբարոյ, սիրելի», հիռլ. cōim, cōem «սիրելի, սիրուն»։ Նոյն արմատից ų մասնիկով ածանցուած ձևեր են՝ սանս. çéva, çivá «սիրելի, լաւ, բարի, օգտակար», լտ. civis «քաղաքացի», օսկ. ceus՝ նոյն նշ., անգսք. hīwan «ընտանիք», hīw-cund «ընտանի», գոթ. heiwa-fráuja «տանտէր», հհիւս. hjón «արնեցիք, այր ու կին», հբգ. hīwo, hīo «փեսայ, ամուսին», hiwa «հարս, կինը», լեթթ. siēva «կինը», անգսք. hī-rēd, հբգ. hī-rāt, գերմ. Heirath «ամուսնութիւն», որոնց վրայ աւելանալով դարձեալ -ro- մասնիկը՝ հհիւս. hyrr «բարեկամական, բարի», անգսք. hēore, hīere «հանդարտ, քաղցրաբարոյ, հեզ», գերմ. geheuer «քաղցրաբարոյ, անվտանգ, ապահով», որոնք թէ՛ իմաստով և թէ մասնիկով արդէն նոյն են հայերէնի հետ (Pokorny 1, 358—9, Boisacq 426, Walde 164, Ernout-Meillet *185* (որ լտ. civis բառի կապը սանս. çeva «սիրելի» ձևի հետ՝ մերժում է. ընդունում է սակայն այլ համեմատութիւններ, առանց յիշելու հյ. ձևը)։ Trautmann 301).—*Հիւրշ. 420*?

Հներից Առաքել Սիւնեցին առուգրանում է «սա էր». այսպէս Ագաթանգեղոսում, էջ 131 կարդում ենք՝ Սէրն Աստուծոյ է նմանած, ի սկզբանէ կայր ընդ Աստուած. վասն այն զանունն սէր ասաց, Որ է, սա էր միշտ ընդ Աստուածն է Աստուծոյ անունն Որ էն, Այսպէս և սէրն յայն անուանէին, Չի միևնոյն է էրն և էն, Որ ցուցանէ զի սկզբանէն։ Klaproth, Asia pol. 103 *սամոյէդ.* sorañ։ Peterm. *22, 37 յն.* ἐρᾶν «*աժգին սիրել*» Müller, Kuhns u. Schleich. Btrg. 2, 485 *տեսնում է թաթարական ազդեցութիւն (համմտ. թրք.* sevmek «*սիրել*»?), *իսկ անդ. 4, 255 սանս.* ghṛnā «*գութ, կարեկցութիւն*»։ Նոյն SWAW 44, 578 *սանս.* ghṛ-: Justi, Zendsp. *307 զնդ.* srī «*գեղեցկանալ*» ձևի տակ։ Նոյն, Dict. Kurde 246 *զազա* sinena «*սիրել*»։ *Մատ* ЗВО *5, 286, թրգմ. ՀԱ 1892, 164 զնդ.* zaoša «*կամք, փափագ*»։ *Հինք. յն.* σειρήν «*յուշկապարիկ*», *պրս.* sar «*իղձ, փափագ*», *թրք.* sev-mek «*սիրել*»։ Bugge KZ *32, 25 մերժում է յն.* κῆρ «*սիրտ*», *վեդ.* hārdi, *հպրուս.* seyr *ձևերին կցել* (J. Schmidt, Pluralb. 224) *և սանս.* çīla- «*սովորութիւն, ազնուութիւն*» *բառի հետ դնում է հնխ.* K'éiro-, K'éirā- *նախաձևից։ Հիւրշ. 490 անապահով է համարում* Bugge-*ի մեկնութիւնը, որովհետև առոյգ չէ դնել սանս. բառը* *k'īro- *ձևից. կարելի էր, ասում է, սէր դնել հնխ.* k'oiro- *ձևից, արմատը* k'ei-, *իբր սանս.* çéva-, çivá- «*սիրելի*»։ *Ըստ այսմ վերի մեկնութեան առաջին հեղինակն է Հիւբշմանն*։ Jensen, Hitt. u. Arm. 124 *հաթ.* -sərə, *որ երևում է յատուկ անունների մէջ*։ Patrubány SA 1, 190 *կցում է լտ.* cārus «*սիրելի*», *լեթթ.* kārs «*ցանկալ*», *հիռլ.* caraim «*սիրել*» *են բառերին՝ իբր հնխ.* k'ṛ- «*սիրել*» *արմատից։ (Այս մեկնութիւնը ուղիղ չէ, որովհետև յիշեալ բառերը ըստ* Walde *136 գալիս են հնխ.* qā- *արմատից, որ չի կարող տալ հյ.* սէր)։ *Անդրիկեան, Բազմ. 1903, 367* սուղ *բառի հետ՝ լտ.* carus, *որ նշանակում է «սէր» և «թանկ, որ է սուղ»։ Վերի ձևով մեկնեց* Scheftelowitz BB 28, 284: *Սագըզեան ՀԱ 1909, 335 սումեր.* sal «*բանող*»։ Karst, *Յուշարձան 425 թրք.* sev «*սիրել*»։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 331* սեռ, սերիլ *բառերից*։

Գիմ.—Ախց. խրբ. Մշ. Վն. Տփ. սէր.—*Ալշ. Մշ. Զղ. Սլմ. Մշ.* սիրել, *Ախց. Ակն. Երև. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* սիրէլ, *Գոր. խրբ. Շմ. Սվեդ. Տփ.* սիրիլ, *Մրզ.* սիրէլ, սիրալ, *Համշ.* սիրուլ, *Զթ.* սիյիլ, սիրիլ, *Հճ.* սիյյէլ, *Ղրբ.* սէ՛րիլ, սի՛րիլ, *Ասլ.* սիրէ՝լ, *Ագլ.* սա՛յրիլ.—*Համշ. Տիգ.* սիրուն, *Ագլ.* սա՛րիւն *(բացեալ է նաև ընդհանրապէս «լաւ» իմաստը), Ղրբ.* սէօ՛րիւն *(որի մէջ էօ ձևացած է*

յաջորդ վանկի իւ ձայնաւորի ազդեցութեամբ), Հւր. սիւրիւթուն «գեղեցկութիւն»:— Նոր բառեր են սիրական, սիրադեղ, սիրակըտիկ, սիրատրիլ, սիրամաճ, սիրափախ, սիրահատկուիլ, սիրի-սիրի «երիքնուկ խոտը», սիրուկ, սիրվռիլ, սիրուճադէմ, սիրուճատես, սիրսիրատել.— Թրքախօս հայերից՝ Ատն. seron «սիրուն» (Բիւր. 1900, 454), էնկ. səreli «սիրելի, սիրած», jamaser «ժամասէր, եկեղեցասէր» (Բիւր. 1898, էջ 865):

Փոխ.—Վրաց. ხერი սերի «ընթրիք, ճաշ, խնջոյք», ხორცბა սիրեբա «ընթրիել, նախընթրել», ხერობა սերոբա «ընթրիք, Մեծ Պահոց երեկոյեան ժամասացութիւն» (այս իմաստների համար համմտ. հյ. սէր «ագապ». Ուտէին հղբարքն սէր, այսինքն ագապ, կերակուր ընդունելութեան (Վրք. հց.):— Patrubány SA 1, 3 հայերէնից է դնում հունգ. szeret «սիրում է», szerelem «սէր»: Ռատ. սիլիբիլի «շողոքորթութիւն»<գւս. սիլիբիլի «սիրային հաճոյախօսութիւններ» ձևից:

Սէրարփի տե՛ս Սրուվբէ:

Սէրոճսիրտ տե՛ս Սիրդ:

***Սէրսէրիմ** «երգ երգոց գիրքը». իբր եբր. բառ յիշում է Եւս. պտմ. գ. 25, էջ 472. որի հետ համմտ. նաև «Զօրհնութիւնն օրհնութեանց, զոր նոքա Սիր ասիրիմ կոչեն» Ցհրոն:

=Եբր. שִׁיר הַשִּׁירִים šīr haširīm «երգ երգոց» (գերագոյն երգ) բառն է, որ յունական տառադարձութեան միջոցով անցել է հայերէնի. համմտ. լտ. sir assirim:

Ուղիղ մեկնեց Վարդանեան ՀԱ. 1920, 424:

***Սէքին** «հեզ, հանդարտ, անդորր» Կոստ. երզն. 144 (Սէքին սիրտ և հեզ հոգի):*

=Արաբ. ساكن sākin նոյն նշ.:

Ուղիղ մեկնեց Նորայր (Հրտ. Կոստ. երզն. 204):

Սէօն «նուագիալ» ունի միայն Բառ. երեմ. էջ 285:

***Սէր** «հողէ ամանի ջնարակ. ապիկի». ռամիկ բառ, որի հնագոյն գործածութիւնը գտնում եմ Բրս. մրկ. 190. «Բրուան... սրոով՝ հողն ոսկի երևնցուցանէ և արծաթ». Սովորական է արդի ռամկօրէնի մէջ: Տե՛ս նաև սար, սարած:*

=Թրք. صر sər նոյն նշ. որ գալիս է մոնղոլ. šir «նկարկ» բառից, ըստ որում Թաւրիզում ևս šir «ջնարակ»:

Ուղիղ մեկնեց Աճառ. Թրք. փոխ. բառեր, էջ 316:

***Սթաւր** «ձիու վրայ գցելու օթոց» Ուռհ. առ Լեհ. որից սթարել «ձիու վրայ փոռց դնել» Իրեն. առ Լեհ. սթարեալ «ծածկած» Հին բռ. սթարումն «ծածկոյթ» Մագ. գամագ.— Անստոյգ բառ է սթարաճալ, որ մի անգամ ունի Իրեն. ցոյցք 48. «եմուռ յերուսաղէմ սթարանալովն (սթարելով) և նստելով նմա» (Վարդանեան ՀԱ. 1910, 305):*

=Արաբ. ستر satr «ծածկել, պահել», ستارة satara, ستارا sitāra «ծածկոյթ, քող», մանաւանդ պարսկացեալ ձևով ستار sitār «սուտան, որ է ծածկոյթ գլխոյ կանանց»:

Նշ՛ յն. στρῶμα, լտ. stratum =սթար, և յն. στρώννυμι, լտ. sterno=սթարել: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Նորայր, Բանաս. 1900, 137, Հոդոն, Բանաս. 1907, 12 մերժելով այս՝ դնում է սանս. str «սփռել» արմատից: Վարդանեան էլ (անդ) առնելով միայն Իրենիոսի օրինակը՝ դնում է լծ. յն. στρώννυμι «փռել»:

Գիմ.—Երև. սթար «հացի սփռոց», սթար անել «սպրուիլ», երև. վն. սթար, Մշ. սաար «սպասատարան, սպրելու տեղ» ևն:

***Սթաւր** «փոքր մի կշիռ՝ մօտ 26 գրամ», մէկ անգամ ունի Մխ. բժշ. 146. «Ա՛ռ զաֆէթի քամուքս վեց դրամ, կարմիր վարդ, սումպուլ երկու երկու. ըսթար, թառանկոյն վեց դրամ...»:*

=Պրս. արաբ. استار istār նոյն նշ. որ յն. στατήρ =հյ. սաաթր բառն է:

Մխիթարի սոյն հատուածի մէջ, երկու բառից յառաջ մի կէտ ընկած լինելով՝ ըսթար անցել է յաջորդին և համարուել է «բժշկական մի խոտ»: Այսպէս է ԱՐ, որ և Քաջունի, հտ. Գ. էջ 218 համարում է «caparaçon»: Առաջին անգամ Seidel, Մխ. հեր. § 402 տալիս է վերի ուղիղ մեկնութիւնը: Ըստ այսմ

պատահական նմանութիւն ունի պրս. استرک istarak «անուշահոտ մի արմատ, թրք. գարակիւնլիք»։

—ՍԹԱՓ տե՛ս Թափ։

=Կազմուած է ս առաջականով՝ թափ արմատից։

Ուղիղ մեկնից նախ ՆՀՔ։ Böttich. ZDMG 1850, 361, Arica 88, 432, Lag. Urgesch. 155 անս. sthāpayati ձևի հետ՝ իբրև sthā արմատի անցողականը։ Մերժում է Հիւբշ. Arm. Stud. էջ 13։ Տէրվ. Նախալ. 53 դնում է հնխ. stap արմատից, որից նաև թափ. ուսոի և ս արմատական և յետոյ ընկած։ Այս մերժելով ուղիղ մեկնութիւնը տալիս է Լիդու 1887, էջ 16, ինչպէս նաև Հիւնք.։

ՍԹԵՐ «վայրի նարդոս, asarum» Գաղիան. (ըստ Նորայր, Բառ. ֆր. 93 բ asaret կամ nard sauvage? ըստ Կոյլաւ, Բառ. գերմ. baldrian, valeriana), չունի ՀԲուս.։

Նո՞յն է արդեօք պրս. استرک istarak «անուշահոտ մի արմատ»։

*ՍԻԱՂՈՍ «կշիռ» ունի միայն Բառ. երեմ. էջ 285։ Պէտք է ուղղել սիկղոս։

=Յն. σίκλος «կշիռ, որ առնում է մէդիմնոս=51, 84 լիտր»։—Աճ.

*ՍԻԱՍԱՔ «պատրաստութիւն» Մաղաք. ար. 18. «Յուղարկեցին զնոսա մեծ սիասաքով ի կեսարիա»։

=Արաբ. سياست siyāsat «կառավարութիւն, վարչութիւն, քաղաքականութիւն»։

Այսպէս մեկնեց Պատկ. Հրտր. Մաղաք. ար. 64, բայց արաբերէնում siyāsat չի նշանակում «պատրաստութիւն»։

ՍԻԲԱՆ «փայտաստան». ունի միայն Բառ. երեմ. էջ 285։

*ՍԻԲԻՂՂԱ «գուշակ կամ մարգարէուհի, խորհրդաղգած քերթողուհի» Նար. քր. որ և սխալ գրչութեամբ սիբեղղա, հին հնչումով սիբիւղղայ, բցո. ի սիբեղղեայ Խոր. ա. 7. յիշուած են իբրև յատուկ անուն (և ո՛չ իբր հասարակ անուն)։

=Յն. σίβυλλα, որից և լտ. sibylla «մարգարէուհի»։

Ուղիղ մեկնից ՆՀՔ։

ՍԻԲՆԿՈՆ «մի տեսակ կախարդական պահպանակ». մէկ անգամ ունի Մանդ. բ. էջ 83. «եւ ելեալ պահարանք և սիբնկոնք ի կապաշտութիւն տանին, որչա՞փ ևս առաւել յուսոյք և համայք դիւականք»։ Սրա հետ նոյն են՝ սնիկոն Ոսկ. ա. տիմ. էջ 85 (Հըմայքն, կիւսքն, խտիրքն, ծնունդքն, պատահարքն, սնիկոնքն, դիւթութիւնք) և էջ 105 (Ի սնիկոնս հատանել), Եւագր. էջ 139 (սնիկոնս չարկանել), սենիկոն Մանդ. իգ. էջ 194, որ Հին բռ. մեկնում է «հմայողական դիւթութիւնք», իսկ Լծ. Եւագր. «գաղընկեցութիւն»։ Բոլորի մէջ լաւագոյն ձևը համարելի է սնիկոն։

ՆՀՔ նոյն է համարում սիբնկոն և սենիկոն։ ՋՔ և ԱՔ երկուսը իբր տարբեր են նշանակում և սիբնկոն մեկնում «յն. խոզի մորթէ պարկ կամ քսակ» (իմա՛ συβήνη, συβίνη «պատեան», որ հանում են σῦς «խոզ» բառից)։ Այսպէս նաև Ալիշան, Հին հաւ. 403։

*ՍԻԳԻԼ (սեռ.-ի) «հրամանի, կնիք» Յիշատ. «կալուածագիր» Օրբել. Հրտր. էմ. էջ 167, որ և սիգղ (սիգեղ, -աց, -օվ) «կնիք» Մարբին. սիգեղ Կեղծ-Շապհ. 55. Անսիզք 21, 23, գրծ. սիգեղիւ Պատմ. կիլիկ. 207. սիկել Տաթև. ձմ. ժա.։

=Լտ. sigillum «կնիք» կամ սրանից փոխառեալ յն. σιγίλλιον «կնիք», σιγίλλον «կայսերական հրամանագիր» (Sophocles 187) բառից։ Լատին բառը կազմուած է signum «նշան» բառի նուազականից (Walde 710)։ Նրանից են փոխառեալ նաև գերմ. siegel «կնիք», իտալ. sigillo, արաբ. سجلّ sijill «մատեան, գաղտնագիրք» են։—Հիւբշ. 378։

Ուղիղ մեկնից ՆՀՔ։

*ՍԻԳՆԱՅ, ի-ա հլ. «դրօշակ» Ղեւ. դաշ. 17. Սմբ. դատ. 88. «դրօշակակիր» Մխ. դտ. 266։

=Լտ. signa, որ յոգնակին է լտ. signum «նշան, դրօշ, դրօշակ» բառի. համմտ. յաջորդը։

ՆՀՔ կգում է յաջորդին։

*ՍԻԳՆՈՆ կամ ՍԻԻԳՆՈՆ (սեռ.-ի) «դրօշակ» Խոր. բ. 83. Նար. խչ. 400։

=Յն. σίγνον որ փոխառեալ է լտ. signum «նշան, դրօշ» բառից. հմմտ. նախորդը։— Հիւբշ. 378։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՍԻԴԱ «բուրվառ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Լմբ. ժբ. մարգ. էջ 63 (Ամովս. բ. 1). «Զի այրեցին նոքա զոսկերս թագաւորին Եդովմացեացց ի սիդա, այսինքն ի բուրվառս»։ Այս նոյն բառն է, որ ունի Բառ երեմ. էջ 285 «սիթայ և սիդոս՝ բուրվառ»։

=Ասոր. ܨܝܕܐ saidā (կարելի էր և կարդալ sīdā), եբր. שִׂיד sīd բառն է. սրանք գործածուած են Ամովս. բ. 1 հատուածում, որ հետևեալ ձևն ունի. «Զի այրեցին զոսկերս թագաւորացն Եդովմայեցւոց לַשִּׂיד lassīd»։ Այս բառը ասոր. և եբր. նշանակում է «կիր» և «այրեցին զոսկերս ի կիր» ասելով հասկացւում է թէ «ոսկորները այնպէս այրեցին, որ կիր կամ մոխիր դարձրին». հմմտ. Ս. Գրքի աշխարհաբար թրգմ. տպ. Պօլիս 1906 «այրեց ոսկորները կիր շինեց». ըստ այսմ շատ ուղիղ է մեր գրաբար թարգմանութիւնն էլ, որ նոյն տեղը դնում է «այրեցին զոսկերս թագաւորացն Եդովմայեցւոց ի մոխրել» (=յն. εἰς κονίαν «ի կիր կամ ի մոխիր»)։ Սակայն մեկնիչներից ոմանք «ի կիր» ասելով՝ հասկացել են թէ ոսկորները կրի մէջ դնելով այրեցին։ Անշուշտ այսպէս է հասկացել Լամբրոնացու աղբիւրն էլ և ասորի ու եբրայական բառը պահելով՝ դրել է «ի սիդա». մի ուրիշ մեկնիչ էլ այս բառը բացատրելով դրել է «ի բուռ վառ» (վառած կիր), որ յետոյ շփոթուելով դարձել է «ի բուրվառ», որով և ձևացել է սիդա «բուրվառ» անդոյ իմաստը։—Աճ.

Սիդոն տե՛ս Սինդոն։

ՍԻԹԱԼԻՍ «մի տեսակ վնասակար օձ». ունի միայն ՀՀԲ։ Մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք մոլութ. 375 բ. «Իբրև զօձն սիթալիս, զորմէ ասէ Իղիտորոս, թէ այնքան փայլէ երփն երփն բունովք, մինչ զի յամենցունցանէ զհայեցօղսն ի յինքն. քանզի է յամր ի սողալն, և զորս արագ ընթանալով ոչ կարէ ըմբռնել, հիացուցանելովն ընդ ինքն՝ մահացուցանէ. որ և այնքան ջերմաբնութիւն է, մինչ զի ի ժամանակս ձմերայինս շրջի ի մէջ ցրտաշունչ օդոց»։

ՍԻԹԵՑՔ «ճանապարհ». անստոյգ բառ. պահուած է միայն անսիթեցք «անճանապարհ» բառի մէջ, որ մէկ անգամ գործածում է Մագ. գամագտ. 1. (տե՛ս Նորայր, Բանաս. 1900, 129)։ Մէնէվիշեան (Գամագտ. էջ 22) կարդում է ընթացք և ջնջում է սիթեցք՝ համարելով անդոյ բառ։

ՍԻԼ «սէզ. cynodon dactylon Pers.» Ամիրտ. ունի միայն Տիրացուեան, Contributo § 27։

ՍԻԼԱՅ «խաղող կոխելու հնձան». Նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 87. «Եւ թէ զսիլայն որ ի ներքս ի մառանն առնու, լաւն այն է»։

Սիլիկոն տե՛ս Սիղիղոն։

***ՍԻԿ**, ո հլ. «ցեխ. գետի կամ ջրի տակ նստած տիղմը» Ոսկ. ես. 351 և մ. պ. 7. վէցօր. 141, 142, 183. Փիլ. Վստկ. 103. որից սկսական «ցեխոտ» վէցօր. 137. սկաճալ Ոսկ. ես. 324. մաճառասիկ Շիր. սկիլ «ջրի տակ սուղիլ՝ մրուրի պէս» Ոսկ. գծ. 578. Յայսմ. տղմասիկ Նար. ժղ. 36 (տպ. տղմասիգ). Շնորհ.— ըստ ՀՀԲ կայ նաև գրուած բսկախառն։

=Իրան. գւռ. *sik «աւազ» ձևից, որի գոյութիւնը հաստատւում է սանս. sikatā, հպրս. θikā, մար. sikaya, և նոր իրանական բարբառների six, šəga, sagª, səgá, səgya, sigioh և մանաւանդ Xūr և Mihreǰan բարբառների sik, sig ձևերով (ըստ Benveniste BSL № 89, էջ 60 և № 93, էջ 74)։ Բոլորն էլ նշանակում են «աւազ»։—Աճ.

ՆՀԲ լծ. ցխիլ, ցեխ։ Հիւնք. ոսկի բառից։ Patrubány ՀԱ 1908, 343 հնխ. k'ei- «պաոկիլ» արմատից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 բրբ صيغ səγ «ծանծաղուտ»։ Պատահական նմանութիւն ունի հբր. סִיג sīg «մետաղների դիրտ»։

ԳԻՒ.—Վն. սիկ «ջրի տակ նստած դիրտ» (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան 589), Մշ. սիգ «կարմիր և գեղին կաւ ունեցող հող» (օր. սիգ աւտ), Սեբ. սիգ «գետի ե-

*զերքից հանուած մանր աւազահող, որով ոսկերիչները զանազան բաներ են ձուլում». որից Ալշ. կր. Նբ. սկիլ, Երև. սկվիլ, Մրղ. սըկկել, Սլմ. սկել, սղ'ել «խորասուզուիլ, ընկղմիլ», իսկ Մշկ. Ք. «ջուրը պարզուիլ, պղտորութիւնը անցնիլ», սկռիլ Վն. «ծանր ծանր ջրի տակ իջնել»։

*ՍԻԿԱՐԵԱՆ «աւազակ, մարդասպան, սըրիկայ» Գծ. իա. 38 (ուրիշ վկայութիւն չունինք)։

=Յն. σικάριος բառից տառադարձուած Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ. այս էլ փոխառեալ է լտ. sicarius «աւազակ» բառից (արմատը sica «դաշոյն»), որից նաև ֆրանս. sicaire, գերմ. Sikarier.—Հիւրշ. 378։

ՀՀՔ և ՆՀԲ դնում են լատինից։

*ՍԻ ԿԻՐԻՔ «քե՛զ, Տէր» Պարգ. 370. ուրիշ տեղ գործածուած չէ։

=Յն. σοὶ, κύριε։

Ունի և ուղիղ է մեկնում Տաշեան, Պարգ. 370։

*ՍԻԿՂ, ղ հլ. (տես. սկեղ) «մի տեսակ հին չափ և դրամ» (որ ըստ Մանանդեանի, Տեղեկ. ինստիտ. 2, 30, կշռում էր 1/4 ունկի, որ է 6,8 գրամ) ՍԳր. Շիր. էջ 28, Բրս. մրկ. էջ 381։

=Յն. σίκλος կամ σίγλος «պարսկական, հրէական կամ եգիպտական մի դրամ», որ ծագում է եբր. שֶׁקֶל šeqel համանիշից. արմատը šaqal «կշռել»=արաբ. ڤقل ṯaqal «կշռել ծանրութիւն», ասուր. 𒋗𒆪𒅗𒁺𒇻 ša-ḳa-lu «կշռել» (յետոյ «հաշուել»), šiḳlu «սիկղ» (Strassmaier, Alphabetisches Verz. d. Assyr. u. Akkad. Wörter. էջ, 994, Delitzsch, Assyr. Handwört. 685—6)։ Յոյնից են նաև լտ. siclus, ֆրանս. sicle, գերմ. Sekel, վրաց. sikili, ռուս. СИКЛЪ են։ Նոյն բառից է կազմուած յն. σίγλοι «ականջի դինդ», որ արևելեան սովորութեամբ ոսկի կամ արծաթ դրամ է լինում (Boisacq 863)։ —Հիւրշ. 378։

Նախ ՀՀՔ դրաւ իբր եբր. բառ Աւգիրեան, Բցտր. չփ. և կշռ. 163 յն. σίκλος։ ՆՀԲ եբր. շեկլ։

Փոխ.—Ըստ Մառ. Иппол. 66 հայերէնի՞ց է վրաց. ხიკლა սիկլա համանիշը։

ՍԻՂԵՂԱՒՈՐ «չար, մեղանչական». անստոյգ ընթերցուած, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 36խ. էջ 202. «Ախութիւն և նախանձ և ատելութիւն, որ թէ ոչ ազատեսցի յայսոցիկ չարեաց, մահ անձին և այլոց ստանայ. զի քինայ և զչարի ի խորհուրդս սիղեղաւորս և զթոյնս դառնութեան հեղու» (երկու հնագոյն ձձ. ունին մեղաւորս, երկու ձձ. շեղաւորս և երկու ո՛չ-հնագոյնները միայն սիղեղաւորս)։

*ՍԻՂԻԴՆ «բարակ ալիւրով շինուած հաց» Վրք. հց. ա. 272։

=Յն. σιλίγνιον «գերմակ ալիւրէ հաց», որ ծագում է լտ. silīgo «առաջին կարգի ընտիր ալիւր», silīgineus «գերմակ ալիւրով շինուած» բառերից։— Հիւրշ. 379։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ՍԻՂԻԴՈՆ, որ և սիղիկոն, սիլիկոն, սղիկոն «մի տեսակ ներկ, սուր, minium» Կաղիան. բժշ.։

=Արաբ. سيلقون sīliqūn՝ նոյն նշ. (Կամուս, Բրք. Քրդմ. Ա. 412), որից նաև Բրք. سولوكن sülügen (տե՛ս և ասրուճն, սրիկոն)—Աճ.

ՆՀԲ և ՋԲ արդէն սիղիգոն հասկանում են իբր տճկ. սիլիւկէն. ուստի չարաշար սխալւում է ՀԲուս. § 183, որ բառս մեկնում է յն. σιλίγνιον, լտ. siligo «հասարակ ցորեան կամ ցորենի տեսակ մի». (աւելի ընդարձակ տե՛ս ասրուճն)։

*ՍԻՂՂՈՒԱՅ, ի հլ. «վանկ, հեգ, տառ», [որ և ասւում է սիղորայ, սիղորէ, սիւղորայ, սիւղորայ, սիղուրայ, սալովբայ, սուղորայ Պտմ. սահ. 8. 38, սուղոյրայ Արծր. 193, սողորայ Ոսկ. մ. ա. 248. Պրպմ. 447, սողաբայ Մագ. Թղ. 77, սողորէ Նար. առաք. 433, սիլլաբայ, սողովբայ Մայրագ. (Շողակաթ 116)] Կորիւն. Եւս. քր. ա. 37. Խոր. Փարպ. Արշ. Դիոն. ածայ.։

=Յն. συλλαβή «վանկ, տառ». ծագում է συν «միասին» + λαμβάνω «առնել» բառերից և նշանակում է բուն «փաղաքութիւն». յոյնից են փոխառեալ նաև լտ. syllaba, ֆրանս.

syllabe, հբգ. sillaba, գեր. Silbe (Kluge 453), ասոր. ܣܝܠܒܐ sūlabī, ܣܠܒܐ sulbā? որի վերջաւորութիւնը գտնում ենք հայերէնի մէջ էլ։—Հիւբշ. 379։

Ուղիղ մեկնեցին ՀՀՌ և ՆՀՌ։

ՍԻՃ. անստոյգ բառ. մեկնուած է «արաբ. սելլըմ, լտ. սելէն», որոնց ինչ լինելը յայտնի չէ. Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2750, որ կարծում է «լախուր, լտ. selinum»։

ՍԻՄ «կոթող». ունի միայն Բառ. երեմ. էջ 286։

ՍԻՄ «փոխարէն հատուցում?» նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Սմբ. դատ. 207. «Ի քո դրացնին արտէն ի հետ չհնձես. թէ ոչ նա հարամ է, և զքոյին սիմն տանի». Karst թարգմանում է «Entgelt փոխարէն հատուցում»։

***ՍԻՄԵՒԻԿՈՆ** «մասնակից, հաղորդակից»? մէկ անգամ ունի Մագ. Թղ. 205. Այլ բնականքս այս թեպէտև յօդոյ սիմեւիկոնն անուանեալ, սակայն մատց և մակացութեան ընդունակ։

=Թուի թէ յն. σύμ-μερίζω «մասնակից լինել, հաղորդակցիլ» բայից է։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 206։

ՍԻՄԻԻ «կանանց գլուխը կապելու մետաքսէ թաշկինակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. աննկ. 48. «Քո մօրն ծիրանի գլխադիր սիմէի կամէի դնել» (այլ ձ. ծիրանի ապրիշումի)։

***ՍԻՄԷՍ** «կէս դահեկան կամ 12 կերատի ծանրութիւնը. ըստ Մանանդեան, կշիռները և չափերը, էջ 22՝ կշռում է 2,26 $^{2}/_{3}$ գրամ» Շիր. 27։

=Յն. σημίσσιον, լտ. semis, semissis նոյն նշ.—Հիւբշ. 379։

Աւգերեան, Բցատր. չփ. և կշռ. 162 լտ. semis բառից։ ՆՀՌ սրա հետ նաև յն. ἥμισις «կէս»։

***ՍԻՄԻՆԴՐ** (ի–ա հլ. ըստ ՆՀՌ, բայց առանց վկայութեան) «նաշիհ, բարակալիւր» Զքր. ծործ. Վատ. 201. Դամասկ. (գրուած է նաև սիմիճար)։

=Յն. σεμίδαλις «բարակ, նաշիհ ալիւր», որ թերևս լտ. similа հոմանիշի հետ փոխառեալ է միջերկրեան մի լեզուից (Boisacq 859). յունարէնից են նաև ասոր. ܣܡܝܕܐ simīdā «շարմաղ ալիւր» ZDMG 40, 446, արաբ. سَمِيذ samīδ «բարակ ալիւր, սպիտակ հաց», թրք. سميد simid «բոկեղ, օղակաձև հացիկ», պրս. شَمَنْد šamand «ընտիր սպիտակ հաց», սանս. samitā «նաշիհ», վրաց. სემიდალი սեմիդալի, სამინდალი սամինդալի, სამინდო սամինդո «բարակ ալիւր» Մգ. ա. 13. სიმინდი սիմինդի, სიმიდი սիմիդի «հդիպատասրեն», մինգ. სიმინდი սիմինդի, ինգիլ. სმიდ սմիդ, սվան. სიმინდ սիմինդ «հդիպատասրեն»։ Հայերէնը տարբերւում է յոյնից և-ի յաւելումով, որ ունին նաև վրացական լեզուները և r վերջաւորութեամբ փխ. λ։ Ձևի համար հմմտ. նաև կըղմիներ։—Հիւբշ. 379։

ՆՀՌ յիշում է վերի ձևերը անորոշ կերպով։ Ուղիղ մեկնեց Brockelmann ZDMG 47, հյ. Քրդմ. Ուս. փոխ. բառից 106։

ԳԻՒՒ.— Տփ. սիմինդր և երև. սիմինդ «հդիպատասրեն», իսկ Մշ. սմինդր, ՀՓ. սիմինդրը, Վն. սըմբ՛ինդր, Սվեդ. սըմբընդրուգ, կր. սմընդրիկ, Տիգ. սմընդրիգ, Արբ. սմինդ, Բր. սմբրդիճ, ՀՃ. սիմիր, Ակն. Պրտ. սմռուգ, Սեբ. սոմուգ, Ետ. սըմէռ, որոնք բոլոր նշանակում են «մանր ձաւար» կամ «ձաւարի խաշոր ալիւր»։

+**ՍԻՆ**, ո հլ. «ունայն, պարապ, թափուր, մէջը փուճ» Ոսկ. փիլիպ. և բ. տիմ. որից սին ի սնոյ Եփր. Թգ. 423. մն. 494. սնանալ Ամբակ. գ. 7, եզն. 180, սնոտի ՍԳր. Սեբեր. սնոտիլ Դ. Թագ. ժե. 15. սնուիլ Մանդ. սինեալ Ագաթ. սնակուշտ ՍԳր. Եփր. Թագ. սնաբանութիւն Ոսկ. զղ. սնամանեակ կամ սնամանիկ «անվարձ, պարապ տեղ աշխատած» Ոսկ. հս. և Փիլ. 492. սնամէջ Վեցօր. 88. սնապարծ Գաղ. ե. 26. Վեցօր. Ոսկ. մ. գ. 3. սնավաստակ Ագաթ. սնահաւատ, սնոտիապաշտ, սնոտիապաշտութիւն, սնոտիապաշտական (նոր բառեր) են։ Նոյն արմատի երկրորդ ձևն է ոսին «սին, վտիտ, աղաղուն» Մն. խա. 6, 7, 27. որից ոսնիլ «սնանալ, աղաղիլ» Ագաթ. ոամկաձև՝ նոսնիլ, նոսնե-

ալ *Լծ. կոչ. կայ նաև* սնիճ *ձևը՝ Լմբ. առակ. և* ցնոտի *«անարգ» Բառ. երեմ. էջ 318։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* k'eno- *ձևից. հմմտ. յն. հոմեր.* κενεός, *attic.* κενός *«պարապ, սին, փուճ, ոչինչ»,* κενεών *«խոռոչ»,* κενοῦν *«պարպել, դատարկել»* (Boisacq 434, Pokorny 1, 365, 390)։ *Հայերէնից և յունարէնից դուրս այս արմատը ուրիշ որևէ լեզուի մէջ չէ պահուած։—Հիւբշ. 490։*

Նշ Լծ. հյ. **ոսին** *և յն.* κενός։ Windisch. 19 *յն.* κενός։ *Զուրինով*[1] *վրաց.* **ცენი** սենի *«ախտ, հիւանդութիւն» բառի հետ։* Böttich. ZDMG 1850, 361 *և* Arica *81, 366 սանս.* çūnya, *յն.* κενός Lag. Urgesch. 533 **ոսին** *ձևի դէմ դնում է սանս.* *pāçana(?), *գոթ.* faginon *«ուրախանալ»,* fagrs *«պատշաճ, յարմարաւոր»։* Müller SWAW *38, 576 յն.* κενός։ *Հիւբշ.* KZ, 23, 17 *և* 34 *սանս.* çvanya, çūnya, *յն.* κενεός։ *Սրանց համեմատ նաև Տէրվ. Նախալ. 73։ Հիւնք.* **սան** *բառից։* Scheftelowitz BB 28, 283 *սանս.* çūna, *զնդ.* sūna *«թերութիւն, պակասութիւն»։* Patrubány IF 14, 59 **ոսին** *միացնում է լիթ.* pészti *«մաղերը քաշել», յն.* πέκω *«սանտրել», լտ.* pecten *«սանտր» բառերի հետ։*

Գիր.—Մշ. **հոսնիլ** *«թառամիլ, դեղնիլ, թարշամիլ», Բլ. Մշ.* **հոսին** *«աւօտի մէջ չհրնձուած ու չորացած խոտ»։ Տե՛ս և* սին-լը-որ։

ՍԻՆ *«հաղորան պտուղը, տճկ. իւ վէզ, Ննխ.* օվազ, *ֆր.* sorbe» *Բժշ.։*

Lag Ges. Abhd. 29 *կցում է պրս.* sinǰad *(աւելի* sinǰid*) «փշատ» բառին։ Հիւս. § 2751* **սին** *«դատարկ» բառից (իբր չնչին պտուղ) կամ գրելի* **սինձ**, *որ է «փշատ»։ Հիւբշ. 276 կասկածով դնում է պրս.* sinǰid-*ից։*

+**ՍԻՆ** *տե՛ս Սուն, սնանիլ։*

***ՍԻՆԱԳՈՎԴԱՅ.** ի հլ. «հրէական ժողովարան». ունի միայն ՀՀԲ. հներից աւանդուա՞ծ է։*

=*Յն.* συναγωγή *«ժողովարան (յատկապէս հրէիցը)», որից նաև լտ.* synagoga, *ֆրանս.* synagogue. *Ծագում է յն.* συν-άγω *«հաւաքել» բայից։*

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

ՍԻՆԳ *կամ* **ՍԻԳ** *«կշիռ չորս կերատի» (որ է բատ Մանանդեան, կշիռները՝ էջ 20, գրամ 0,75 5/9) Շիր. 27։*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 162 պրս. سنگ sang *«քար, կշիռ»։ ՆշԲ սրանից առնելով՝ պրս.* **սինկ**։ Lag. Gesam. Abhd. 71 *և* Symmicta *48, 39 ասոր.* ܣܝܢܩ sīnq, *որ Թերևս նշանակում է «կէս դրախմի» և փոխառեալ պիտի լինի պրս.* سی si-yak *«մէկ երրորդ» բառից։ Պատկ. Շիր. 27 պրս.* sank *«կշիռ», si-yakī «մի երրորդ մաս»։ Հիւբշ. 237 ասորի ձևի հետ միասին՝ կասկածով իբր իրանեան փոխառութիւն։*

Սինգեղոս *տե՛ս Սենգելոս։*

***ՍԻՆԴԻԿՈՍ** «հոգաբարձու հասարակաց ի վարել զգաստ իւր և պահանջել զիրաւունս». ունի միայն ՀՀԲ և ՋԲ։*

=*Յն.* σύνδικος *«փաստաբան», որից նաև վրաց.* **სინდიკოსი** სინդիկոսի *«փաստաբան»։*

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

***ՍԻՆԴՈՆ,** ի հլ. «բարակ կտաւ, բեհեզ, պաստառակալ» (գրուած նաև* **սիդոն, սենդոն, սենդուն, սենդու, սենդոյ, սեմոս**) *Վրք. հց. բ. 224. Մաշտ. կիլիկ. Լմբ. մտ. էջ 130 (սբ-ղոնի, ի սենդոնի). Պտրգ. աթան.։*

=*Յն.* σινδών *«հնդկական բարակ կտաւ վուշէ կամ բամբակէ». համարւում է ծագած* Ἰνδός *բառից՝ իբր հնդկական (Boisacq 866). որից փոխառեալ են նաև լտ.* sindon *«բարակ կտաւ, մուսլին», վրաց.* **სინდონი, სენდონი** სինդոնի, սենդոնի *«բարակ կտաւ», ասոր.* ܣܕܘܢܐ sidōnā, *քրդ.* sīndān *«քող»։— էջ 380։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ՍԻՆԵԴՐԻՈՆ** «ժողով, աստեան». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան։*

=*Յն.* συνέδριον *«ժողով, խորհրդարան»։*

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

***ՍԻՆԷՀԻՍ** «մի տեսակ ջերմ» Մխ. հեր. 64։*

=*Յն.* πυρετὸς συνεχής «febris continua»։

Ուղիղ մեկնեց Seidel, *Մխ. հեր. § 8։*

***ՍԻՆԻ** «ափսէ, սկուտեղ» (չունի ԱԲ) Սմբ.*

պատմ. 88. Յոլաց կայծակն ի Մաժառուսաստանն, եղեւրկ զարծաթի սինին և տարաւ ի տան մէկ այլ կողմն։

=Պրս. سینی sīnī «մեծ պղնձէ ափսէ», որից փոխառեալ է ռմկ. սինի «սեղան, ափսէ»։—Ա՛ճ.

Տե՛ս իմ Թուրքերէնէ փոխառեալ բառեր, էջ 319։

*ՍԻՆԻՋԱԼ «Լուբինեանց ժամանակ պետական մի բարձր պաշտօնեայ» Սմբ. պատմ. 137, որ և սինէգալ Սամ. անեց. շար. 155, սենեսկալ, սենեսչալ Սմբ. դատ. 89։

=Հֆրանս. senescal, · ֆրանս. sénéchal «աւատական իշխանութեան մէջ մի պաշտօնեայ՝ որ դատական իշխանութեան գլուխն էր». հմմտ. նաև իտալ. siniscalcō, մլատ. siniscalcus, մբգ. sineschalt, sene.chalt։ Բոլորի աղբիւրը հին գերմանականն է, իբր գոթ. *sinaskalks, որ է «ծառայապետ, ծառաների աւագը». բարդուած է sina- «ժեր, հին» (հմմտ. գոթ. sinista, լտ. senex, հիւս. sen, հյ. հին) և գոթ. skalks (=հբգ. scalc, մբգ. schalc, գերմ. Schalk, անգսք. scealc, հին հիւս. skálkr) «ծառայ» (փոխառութեամբ իտալ. scalco «խոհարար վարպետ») բառերից (Kluge 412, 451):

Ուղիղ մեկնեց Հացունի, Պատմ. տարբաղի, էջ 13։

+ՍԻՆԼՔՈՐ, ի–ա հլ. «յետամնաց, անպիտան մնացորդ, փախստական կամ դասալիք ռամիկ և հասարակ ժողովուրդ» ՍԳր. Բուզ. 151. Փարպ. Լաստ. գրուած սինլիճոր Սիմ. ապար. 49։

=Կազմուած է սին և լճեալ բառերից՝ -որ մասնիկով, ինչպէս ցոյց է տալիս սինլճեալ ձևը, որ մէկ անգամ գործածուած է Երեմ. լթ. 9 փխ. սինլճոր։

Այսպէս են մեկնում ՀՀԲ, ՆՀԲ, Տէրվ. Altarm. 8, Նախալ. 103։ Հիւբշ. 490 յիշո՛ւմ է միայն այս մեկնութիւնը։ Հիւնքք. սինկլիտոս բառից։

Գիմ.—ՆՀԲ յիշում է սինլիճոր ձևը։

ՍԻՆԿ «երեքգլխանի շուն, որ ըստ առասպելին՝ դժոխքի պահապանն էր» Կանոն. գրուած նաև սիգղ Սիւն. սիկղ Գիրք Թղ. 231. սինկող Ալիշան, Հին հաւ. 175։

Հիմնք. յն. σκύλαξ «շուն»։

*ՍԻՆԿՂԻՏԻԿՈՍ, որ և սիւնկղիտիկոս, սինկլիտիկոս, սինգղիտիկոս, ի–ա հլ. «ժերակուտական, ժերակոյտի անդամ» Եւս. քր. (ատէպ). Եւս. պատմ. 34. Վրք. հց. ա. 719 (որ և սխալմամբ գրուած սինկղիտոս Վրք. ոսկ. բայց. տե՛ս նաև սինկղիտոս)։

=Յն. συγκλητικὸς «ժերակուտական», որից փոխառեալ է նաև վրաց. სინკლიტიკოს սինկլիտիկոսի՝ նոյն նշ.— Հիւբշ. 380։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՍԻՆԿՂԻՏՈՍ, որ և սինկլիտոս, սինգղիտոս, սիւնկղիտոս և ճշդագոյն տառադարձութեամբ՝ սիւնկղետոս, ի–ա հլ. «ժերակոյտ, հռովմէական աւագանեաց ժողով» Ոսկ. մ. գ. 3. ա. տիմ. էջ 207. Եւս. պատմ. Խոր. (ատէպ). Ղազիշ. գ. էջ 55. Վրք. հց. «ժերակուտական, իշխան» Յայտմ. փետր. 11 (երկիցս). Վրք. ոսկ. որից սինկղիտոսութիւն Պիտառ. Երզն. մտթ. 146։

=Յն. σύγκλητος «ժերակոյտ», որից փոխառեալ է նաև վրաց. სინკლიტი, სვინკლიტო սվինկլիտի՝ նոյն նշ. (տե՛ս և սինկղիտիկոս)։—Հիւբշ. 379։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՍԻՆՁ, ո հլ. բոյս՝ որ մեկնում է զանազան ձևերով. այսպէս «մի տեսակ խիժաբեր ծառ» Ոսկ. «սին, փշատ կամ ալոճ» Տաթև. ձմ. ձդ. Բժշ. «անուշ խնձոր, melimoluni» Դաղիան. «ուտելի մի տեսակ խոտաբոյս. scorzonera hispanica (ՀՊուս. § 2753)» Կամրկ. «քօշմօրուք, Բրք. էմլիք» Հին բժշ. «շակակուլ» Նոր բժշ. «սին, sorbus domestica L» և «քօշմօրուք, tragopogon coloratum C. A. Mey» Տիրացուեան, Contributo § 204 և § 570.—արդի գաւառականներում սինձ կամ սէզը անունով զանազանւում է երկու բոլորովին տարբեր բոյս. մէկը ծառ է՝ ծիրանի ծառի բարձրութեամբ, տալիս է կաղինի մեծութեամբ քաղցրահամ կարմրաւուն մի պտուղ, որ ալոճի մի տեսակն է (Վն. կոչւում է մկնալոճ, Բաւրիդի Թուրքերէնով եմիշան). միւսը մի հասարակ խոտաբոյս է, որ հում ուտւում է։ Որից սնձենի «սինձի ծառը» Յայսմ. սնձնի Յայսմ. դեկ. 17. Վասկ. 143. սնձի Վասկ. 155 (սեռ. սնձեաց՝ որ է ալու-

ճրեն)։ Թուի թէ սրանց հետ նոյն է նաև սինձ կամ սինճ «մածուցիկ նիւթ» Փիլ. լին. 21, Անյ. պերիարմ. Պիտ. 391. Երզն. մաթ. 390 (համմտ. շրէշ խոտը և մածուցիկ նիւթը), եթէ սակայն այս բոլորը պէտք չէ փոխել սոսինձ, հակառակ այսքան յաճախ գործածուած լինելուն։

Տէրվ. Altarm. 100 սինձ և կրկնուած սոսինձ կցում է սանս. snih «պարարտանալ, կպել», snēha «կպչունութիւն, ճարպ, իւղ» բառերին։ Bugge KZ 32, 86 և IF 1, 451 սինձ «մածուցիկ նիւթ» և սոսինձ փոխառեալ է դնում ոչ-հնդեւրոպական մի լեզուից. համմտ. կապիկում. sina. ավար. ssino «սոսինձ», ssedéze «սոսինձով կպցնել»։ Հիւնք. սաճն և ցանց բառերի հետ։ Աճառ. ՀԱ 1908, 121 նոյն է դնում սկզ բառի հետ և նախաձևը համարում է *սկնճ։ Patrubány ՀԱ 1908, 343 հնխ. ek'ōi «ուտել» արմատից։ Պատահակա՞ն նմանութիւն ունին արդեօք արաբ. سنجsunj (կարելի էր նաև sinj կարդալ) «յունաց» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 414), քրդ. sonji «փշաոտ»։

Գիւմ.—Մկ. Ջղ. սինճ, Ջթ. սը՛նճ, Ղրբ. սէ՛գնը, Շմ. սը՛գնը, Գնձ. սի՛գը, Ագլ. սա՛գնը, Ղզ. սիգ, Սվհդ. սնճոգ (ծառը՝ սրնճգինա) «անտառի ալոճ, մկնալոճ» (նոյն է նաև սինճ Տիվրիկում՝ «ալոճ»), որից Ղրբ. սգնէ «սնձենի».—Ալշ. Երև. Մկ. Մշ. Ջղ! Սեբ. Վն. սինճ, Ախց. Կր. սինճ «խոտը» (ըստ Արթինեան, Տունկերը 30 tragopogon pratensis L)։

Փոխ.—Տիրացուեան, Contributo § 204 Տրապիզոնի թուրքերէնով դրած է անիծ աղաճի (հարցականով և հակառակ իր սովորութեան առանց խտաձերէն ևս տառադարձելու). համարում եմ ա և ս տառերի նմանութիւնից յառաջացած սխալ մի ձև, որի ուղիղը հայերէնից փոխառեալ մի ձև պէտք է լինի, «մկնալոջ» նշանակութեամբ. ըստ այսմ համմտ. վերի արաբ. և քրդ. ձևերը։

*ՍԻՆՏԿՆՈՍ կամ ՍՆԴԿՆՈՍ «որդիացեալ ի սուրբ աւազանէն, որպէս կնքահայր և սան» Մխ. դտ. օր. թգ. Վրդն. առկ. 52, 90. սխալ գրուած սաճտիկոս Կանոն. 186=սնիկոս Շողակաթ 44, սաճտիկնոց, սաճտիկոս Տաթև. մեկն. ես. խգ. ժ., որից սեճդնկնոսութիւն (անշուշտ շփոթուած սնդիկ! և ստնդի բառերի հետ) «որդեգրութիւն» Անկ. գիրք նոր կտ. 387, 396, 405, 413։

=Յն. σύντεκνος «կաթնեղբայր, կաթնքոյր, կնքահայր, կնքամայր»։—Հիւբշ. էջ 379։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։ Տե՛ս և Գաբրիելին վրդ. Շողակաթ, էջ 44 ծան., Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 168։

*ՍԻՆՕՌ «սահման, պայման, որոշումն» Ուռհ. 372, Անսիպք 39, Մխ. դտ. օր. թագ. Շնորհ. առակ 116, Վստկ. 200. որից սինաւոռալ «սահմանը քաշած» Ուռհ. 216. սինաւորկից «սահմանակից հարևան» Մխ. դատ. 9. սինաւորական «սահմանապահ» Մխ. դատ. 21։

=Յն. σύνορος «յարակից, սահմանակից», միջին և նոր յն. «սահման» (Sophocles 1052). ծագում է σύν «կից» և ὄρος «սահման» բառերից. որից փոխառեալ է նաև Բրբ. سينور sinor «սահման»։

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

ՍԻՊԱՏ «պատանէշ կամ շրջապարիսպ?». յիշում է միայն Բառ. երեմ. էջ 267՝ պատանէշ բառի բացատրութեան մէջ՝ հետևեալ ձևով. «պատանէշ. շրջապարիսպ կամ սիպատ»։

ՍԻՊԵՂ կամ ՍԻՎԵՂ «ուտելի մի բանջար է. coronopus, bunium falcaria» (ըստ Արթինեան, Տունկերը 65 falcaria Rivini, արևել. Բրբ. ղազ այադի, որ է «սադի ոտք») Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2754։

Գիւմ.—Մշ. սիբեղ, Ագլ. սիբեխ, Երև. Ղրբ. սի՛բէղ, Վն. սիվեղ, Սլմ. սվեղ, սվեղ՝ ևն։

Սիպէ տե՛ս Սեպեան։

ՍԻՍԱԿԱՑՔ կամ ՍԻՉԱԿԱՑՔ «գնացք». ունի միայն Բառ. երեմ. էջ 285—6։

*ՍԻՍԱՄԲԱՐ կամ ՍՈՒՍԱՄԲԱՐ «ուտելի անուշահոտ մի բոյս է. նամամ» (ըստ Արթինեանի՝ բուսաբան-բժիշկ Նանսիի հիւանդանոցի, որին ուղարկել էի նոյն բոյսը գիտականօրէն ճշտելու համար, լտ. tanacetum balsamita L. ֆր. baume-coq. տճկ. մարսէ-

մանի) *Մխ. հեր. 83. Բժշ. որից կրճատուած կամ ուրիշ բառի հետ շփոթելով՝* սօսամբ *Կոստ. երգն. 113։*

=*Պրս.* سیسنبر sīsanbar *կամ* susanbar *(Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 893) բառն է, որ յայտնի էր նաև հին դասական հեղինակներին. համմտ. յն.* σισύμβριον *(Դիոսկ. Թէոփրաստ, Պլինիոս), լտ.* sisumbrium, *որոնցից փոխառեալ են իտալ.* sesembrio, *վրաց.* ხუხამბარი սուսամբարի։

Ուղիղ մեկնից նախ Նորայր, Բանաս. 1901, 126, որից յետոյ Աճառ. ՀԱ 1908, 121։ Ընդարձակ քննութիւն ունի Արթինեան REA *1, 117—120 և Ամէն. տարեց. 1921, էջ 183—5։— Ըստ* Seidel, *Մխ. հեր. §§ 53 և 61 յն.* σισύμβριον *թէև ձևով նոյն, բայց նշանակութեամբ տարբեր է և չի ներկայացնում ճիշտ նոյն բոյսը։*

Գիմ.—երև. Մշ. Ջղ. Տփ. սուսամբար, *Ախց. Շմ. Սլմ.* սիւսամբար, *Ղրբ.* սամբար, *որոնք բացի բոյսը նշանակելուց, նաև իգական յատուկ անուն են։*

+ՍԻՍԵՌՆ, ն *հլ. (սեռ.* սիսեռան *կամ* սիսառան*) «սիսեռ, տճկ. նոհուտ» Ագաթ. Գազիան. Վրք. հց. բ. 367. գրուած* սիսառն *Վրդ. առ. 193. որից* սիսեռնախոտով *(նոր բառ)։*

=*Բնիկ հայ բառ.՝ հնխ.* k^{u}/$_{o}$ik'er- *ձևից, որի դէմ միւս լեզուներն ունին* k'ik'er-. *համմտ. լտ.* cicer, *մակեդ.* κίκερρον, *յն.* κριός *(ծագած *κικριός կամ *κικρός ձևից), սանս.* çiçna *«ոլոռ» (նրէ միայն ճիշտ է այս նշանակութիւնը), և լատինականից փոխառութեամբ հբգ.* kichurra, chihhira, *մ. և նրգ.* kicher, *հպրուս.* keckers *«ոլոռ», սլ.* kîhra *«սիսեռ» և աւելի ուշ փոխառութեամբ հբգ.* ciser, *նրգ.* zisern, *սլ.* cizara, *չհխ.* cizrna, *լհգ.* cieciorka, ciecіereczka (Pokorny 1, 451, Boisacq 519, Berneker 503, Walde 158, Ernout-Meillet)։— *Հիւրշ. 490։*

ՆՀԲ լտ. cicer *բառի հետ։ Նոյնը նաև* Lag. Arm. St. *§ 1996, Հիւնք. Հիւրշ.* Arm. Stud. 13 *(կասկածով)։*

Գիմ.—Գոր. Ղրբ. սի՛սէռնը, *Ալշ. Զթ. Մշ. Վն.* սիսեռ, *Սլմ.* սիսեռ, սսեռ, *Ախց. երև. Խրբ. Կր. Տիգ.* սիսէռ, *Սեբ.* սիսէ՛ռ, *Հճ.* սիսէր, *Մկ. Ննխ.* սրսէռ, *Տփ.* սի՛սիր, *Ագլ.* սա՛յսռն։ *Նոր բառեր են* սիսեռակեր, սիսեռնոց։—*Սվեդ.* սիսիռ։

Փոխ.—Վրաց. ხახრო սիսիրի *«սիսեռ» (Ջուբինով[2] 1180), փոխառեալ Տփղիսի հայկերէն բարբառից։*

ՍԻՍՂԱՆԻ *«մի տեսակ բոյս. ճանկիկ, տճ. հանըմ էլի ծաղիկը, լտ.* caprifolius, *ֆրանս.* chèvrefeuille» *Ամիրտ. ունի միայն Հիւս. § 2758։*

*ՍԻՍՊԱՐ *«մի տեսակ սիսեռ կամ դկուղ,* Dolichos seisban» *Ամիրտ. ուղիղը* սիսպան *Պէյթար. ունի միայն Հայիւս. § 2759։*

=*Արաբ. պրս.* سیسبان sīsbān, *որ սխալ գրչութիւն է, փոխանակ լինելու* سبستان sabastān՝ *ըստ* Steinschneider, WZKM 12, 93, *որ ըստ իս պրս.* سپستان sapistān *բառի արաբացեալ ձևը, և «է դեղ իմն անուշահոտ, գոլով սորա միրգ ինչ որ լինի ի չափ շլորոյ. և ունի ի միջի իւրում հիւթ ինչ անհամ, զոր ի գործ ածեն յոմանս բաղադրութիւնս. նախագոյն էր* سکبستان sak-pistān, *այսինքն «ստին շան», զոր ապա թեթևացուցեալ ասացին* sapistān»։

Հիւս. պրս. sīsbān *բառից։*

ՍԻՍՐ *կամ* ՍԻՍՈՒ *«խոտ որոյ արմատն որոման աչերը զանգեալ բժշկէ զարդանդն ուռուցեալ»։ Ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 218. այլուստ անյայտ։*

*ՍԻՏՂ *«ջրի աման, դոյլ» Բրս. մրկ. 323։*

=*Լտ.* situla *«դոյլ» բառն է, որ կարող է ուղղակի անցած լինել Հայերէնի, ինչպէս կարծում է* Meillet MSL 18, *էջ 349 և կամ ն.* σίτλα *«դոյլ» ձևի միջոցով, ինչպէս ունի Հիւրշ. բառի յետին գործածութիւնը վերջինի կողմն է, բայց չի թոյլ տալիս վճռապէս ընդունել հարցը։ Ծոյնից են փոխառեալ նաև ասոր.* ܣܝܛܝܐ sīṭīā, *պրս. արաբ.* سطل sitīl *«կէս ֆնտանոց մի աման», արաբ.* سطل saṭl, سطيل sayṭal *«ունկերով մի աման» (Կամուս Բրբ. Բրգմ. Գ. 246). Բրբ.* سطل sitil, *Թուշ.* ხტილ սաիլ, *ուս.* istil *«մի ֆոնտոց» են— Հիւրշ. 379։*

ՆՀԲ լտ. situla։

ՍԻՐ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի*

Մագ. իև. «Տարրական իմն նուիրաձիր իբրու զսիր զովացուցիչ և զտարափ ի տապացեալ ժամանակս»։ ՆՀԲ մեկնում է «խոնաւութիւն, անձրև, տարափ», ՋԲ «պարզ օդ», ԱԲ թացութիւն, ցօղախառն մեղմ օդ»։ Թուի թէ ուղղելի է պարզապէս սիւ։

ՆՀԲ պրս. քիր, քէրի, *յորմէ թրք.* քէր *«քիրան», իսկ* սէրին *«զով»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 331 պրս.* سیر sīr *«կլիմայ» բառն է. ինչ.* garmsīr *«տաք կլիմայ», sardsīr «ցուրտ կլիմայ»։*

ՍԻՐ. *անստոյգ բառ, որ առանձին էլ անդործածական է. սրանից ունինք* **մեծասիր** *և սրական աստղաբաշխական բառերը, որ մէկ մէկ անգամ գործածուած եմ գտնում Շիր. էջ 65, 66. «Մեծասիր գօտին, որ կոչին անդոն կոռոնաւոր (երկնքի հօթը գօտիներից մին). Սրական գօտի՝ ուր են երկոտասան կենդանակերպք»։*

ՍԻՐ *«մեղկ, թոյլ, կանացի, վաւաշոտ». մի անգամ ունի Փիլ. լին. 324. «Լիրք հայեցուածք և վիզ բարձր և սէպ սէպ շարժումն յօնաց և սիր գնացք»։*

ՍԻՐ *«արքայ, իշխան» Լմբ. առ լև. 1865, էջ 240. Սամ. աննց. շար. 148. Անսիզք, էջ 3. Բլկր. 56։*

=Ֆրանս. sire *«տէր՛ արքայ», որ ծագում է լտ.* senior *«ծերագոյն» բառից (տե՛ս ներքև):—Հիւբշ. 390։*

ՆՀԲ «բառ դաղղիացւոց»։ Էմին, Переводы *(1865), էջ 180 յն.* κύριος։

ՍԻՐԱԿ. *անյայտ իմաստով. գործածուած է մէկ անգամ Մխ. բժշ. 146* սիրակ նուշ՝ *իբր դեղ։*

Seidel, *Մխ. հնր. § 405 համարում է* սուր *«scharf» բառի նուազականը, որ անյարմար է։*

ՍԻՐԱՄ *«ճակտին սպիտակ նշանով եզ» Վրդ. առ. հրտր. Մառ. էջ 12 (=Նորայր, Բառ. ֆրանս. 497 բ)։*

Մառ, Վրդն. առ. I, էջ 32 ծանօթ չհինելով բառիս նշանակութեան, մեկնում է պրս. سارماج sarāmāǰ *«լուծ» կամ արաբ.* ثيران ṯīrān *(օսմ. հնչումով* siran*) «եզներ»։*

Գիհ.—Սեբ. վն. սիրամ։

***ՍԻՐԱՄԱՐԴ,** ի–ա *հլ. «գեղեցիկ մի թռչուն է. լտ.* pavo, *ռճկ.* թաւուս» *Գ. թագ. ժ. 22. բ. մնաց. թ. 21. եզն. վեցօր. 163. Փիլ. Պիտ. որ և գրուած* սիրամարհ *Վրդ. առկ. 35. որից* սիրամարգաշատ *Խոր. բ. 81։*

=Իբր Հայաստանում չգտնուող մի թռչունի անուն, անշուշտ օտար է. ծագում է, ինչպէս ցոյց են տալիս գաւառականները, *սիւնամարգ ձևից և փոխառեալ է իրանեանից. համմտ. զնդ.* saēnō-mərəγō, *պհլ.* sēn(o)-murūk, sen-i-murūk, *պազ.* sīmmurū, *պրս.* سیمرغ sīmurγ *«պատկուճ» (ըստ ԳԴ «թռչուն ինչ անդոյ ըստ իրին և ասի գնմանէ թէ է յաղթանդամ և զարմանալի ըստ որպիսութեան».—մեր գաւառականների մէջ էլ սինամարգը առասպելական մի թռչուն է և ո՛չ «սիրամարգ»)։ Պարսկերէնից է փոխառեալ ասոր.* ʒ ܣܝܡܘܪ sīmūr *«առասպելական մի թռչուն»։*

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 և ՆՀԲ սիրող մարգաց։ Lag. Urgesch. 778, Ges. Abhd. 227, 39, Beitr. bktr. Lex. 65 *տալիս է վերի մեկնութիւնը։* Müller SWAW 64, *453 մերժելով այս՝ գնում է հյ.* սէր+մարգ=*պրս.* مرغ murγ *«թռչուն», իբր «սիրելի թռչուն»։ Պատկ. Խոր. աշխ. 84 պրս.* مرغ سين murγ-i-sīn *«չինական հաւ»։ Հիւբշ. 237 ծանօթ չհինելով գաւառական ձևերին և նրշանակութեան, մերժում է վերի մեկնութիւնը. բառի վերջի մասը միայն հաւանական է համարում կցել* լոր–ամարգի *բառի երկրորդ մասին։ Մառ* ИАН *1918, էջ 2086* սիր– *համարում է վրաց.* ხოჩ **սիր** *«թռչուն, ճնճղուկ», որից* ხოჩ-აქლემ սիր-աքլեմ *«ջայլամ»։*

Գիհ.—Ախց. սիրամարհ, *Մշ.* սինամարհ, *Ալշ.* սինամահաֆ, *վն.* սինամախաֆ, *Բզ.* սիմամոն խաֆ։

***ՍԻՐԱՅ,** ի *հլ. «չուան, սէղէ հիւսուած պարան» Ոսկիփ. Վրք. Հց. Միխ. աս. 207 (տպ.* Սիրա՝ *իբր յատուկ անուն), «շարք, կարգ» Պրոկղ. (ըստ Տաշեան, Մատ. մանր. ուսումն. Ա. էջ 39 և Նորայր, Բառ. ֆր.* série)։

=ՅՆ. σειρά «շղթայ, չուան, գիծ, շարք, արմաւի տերեւներից հիւսուած չուան», որից փոխառեալ են նաևասոր. ܣܝܪܐ sirā, արաբ. سير sair «առասան, չուան», վրաց. სირა սիրա «кромка у корзинки կողովի եզրը»:—Հիւբշ. 379:

ՆՀԲ յն. σεῖρα, լծ. և լտ. series, հյ. շար և թրք. սըրա: Սագրզեան ՀԱ 1909, 335 սարիճ բառի հետ՝ սումեր. sar «կապել»:

ՍԻՐԱՅ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Տաղ. հետեւեալ ձեւով. «Ջի՞նչ արդիւնաւոր վայելչաւոր կային (զարդք կամ հիւսք դառեր Հերովդիադայ). սէր ի սիրայէ քաղցրաշնչեալ օդոյն». (Հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 71): ՆՀԲ մեկնում է «շար ի շարէ», որպէս բառ յն. և թրք. սըրա սըրա կամ երգ յերգոյ, որպէս բառ երր.:

ՍԻՐՊ «եղեմնաբեր բարակ քամի». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Շիր. էջ 44. «Իսկ նոյն ցրտութեանն (որից յառաջանում է ձիւնը) ի պարզ ժամանակին յորժամ չինչ երկինն լինիցի՝ ի խոնաւութենէ վերնոյն ձիւնակերպ իջեալ սփռամամբ անօսրութեան հողմոյն, զոր սիրդ կոչեմք, դնի ի վերայ երկրի, զոր եղեամն անուանեմք»: (Այսպէս սիրդ ունի Պատկ., սէրոնսիրա ունին ՆՀԲ, ՋԲ և ԱԲ բառերի շարքում, բայց վկայութեան մէջ ՆՀԲ դնում է սէրոնսիրա):

ՆՀԲ լծ. ջերին, որպէս թէ զովացուցիչ սրտի: Պատկ. անդ՝ կասկածով յիշում է պրս. سرد sard «ցուրտ», որ բնական է չի յարմարւում այստեղ՝ նշանակութեան և ձևի տարբերութեան պատճառաւ:

ՍԻՐԵԴՈՆ «սրբոց նշխարները պահելու պահարան» Ձեռնբ. էջ 24:

ՆՀԲ յն. σίρος, σιρέδιον: (Առաջինն է «ցորեն պահելու աման», երկրորդը չգիտեն ո՛չ Bailly և ո՛չ Sophocles):

*ՍԻՐԻՍԻՇՏ «բուսական օգտակար մի դեղ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ճիա. «Մեղուն առնու զցօղն և բաղդր մեղր շինէ. և ծառն և քարն զազպէն առնեն և խոտ մի կայ՝ որ սիրիսիշտ առնէ, որ է յոյժ դեղ օգտակար»:

=ՊՐՍ. سرخشت sirxišt «է սա իր ինչ որ տեղայ ի վերայ ուրի ծառոց ի Հերաթ գաւառի, զոր երբեմն ընդ ալեր գարուոյ զանդեալ, տան ուտել տեղացիք մարդոյ. որում լինի և դեղ և սնունդ կերակրական և է յոյժ օգտակար, որ և ասի šīrxušk» (չոր կաթ):—Տե՛ս նաև շէրխիշտ:—Ա՛ճ.

ՍԻՐՈՆ «նոան ծաղիկ, ճուլինար» Գաղիան. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 571 և ՀԲուս. § 2765:

ՍԻՐՈՒԻՐԴ. ինչ որ տեղ ցոյց տուող անբաւոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած անթուական մի արձանագրութեան մէջ՝ Վիմ. տար. 249, ներձաճ, այգի, գիւղ, երկիր բառերի հետ. «Վաշուվաշաց սիրուրդն իր ձորովն»:

+ՍԻՐՏ, ի հլ. «սիրտ» ՍԳր. Ոսկ. եղն. ևն. որից սրտացուցանել Երգ. դ. 9. սրտաբախ Ոսկ. Կող. և Եփես. վեցօր. սրտաբեկ Բ. մկ. է. 39. Սերեր. Ագաթ. Ոսկ. ես. սրտագէտ Գծ. ա. 24, ժե. 8. Ագաթ. սրտալիր Կորիւն. Ագաթ. սրտառուչ Ոսկ. Բուզ. եղն. Կորիւն. Սերբր. սրտկեղ Բուզ. սրտմտիլ ՍԳր. սրտնուլ Ոսկ. մ. բ. 7. սրտնուրիւն Նւագր. 28 (և յաճախ). սրտաց (իբր սրտանց) Աթան. 463. այրասիրտ Խոր. Արծր. խաչասիրտ Բ. մկ. ե. 10. հայկասիրտ Արծր. քանձրասիրտ Ոսկ. ես. անսրտնուրիւն Լմբ. սղ. գազանասիրտ Եփր. թգ. 430. խստասիրտ ՍԳր. խօրասիրտ ՍԳր. նեղասրտիլ Ոսկ. մ. բ. 28. միասիրտ Ագաթ. սրտակրանք «սիրտը պատող մաշկը՝ նիրսի կողմից» Տաթև. Հարց. 619. սրտապանակ (չունի ԱԲ) «ձիու կրծքի ծածկոցը» Ձքր. սարկ. Ա. 22, 86. նոր բառեր են սրտագրաւ, սրտակէզ, սրտամորմոք, սրտոտ են:

=ԲՆԻԿ հայ բառ՝ հնխ. kʻērdi- ձևից. ցեղակիցներն են յն. καρδία, յն. κραδίη, κῆρ, կիպր. κορδίᾱ, լեսբ. κάρδᾱ, լտ. *cord> *cors>*corr>cor, սնս. cordis, գոթ. hairtō, անգսք. heorte, անգլ. heart, հհիւս. hiarta, հսաքս. hërta, հոլլ. hart, հբգ. hërza, գերմ. Herz, լիթ. širdis, լեթթ. sirds, հպրբուս. seyr (հյգ. sīran), հսլ. srŭdĭce, ռուս. сердце, չեխ. srdce, սերբ. sȓce, հիռլ. cride, ն. իռլ. croidhe, բրբտ. kreiz («միջավայր»

համատով), կիմր. craidd, *կամխ.* kardiš *բոլորն էլ «սիրտ» նշանակութեամբ, որոնք գալիս են հնխ.* k'red, k'erd, k'rd- *ձևերից* (Pokorny 1, 423, Walde 191, Trautmann 302, Boisacq 412, Ernout-Meillet, Kluge *216)։ Հայերէնի հետ յատկապէս համաձայն է յն.* κῆρ *որ ծագում է հնխ.* k'ērd-*>յն.* *κῆρδ *ձևից։— Այս բոլորից շեղւում է նախաձայնի կողմից արիական խումբը, որ ներկայացնում է հնխ.* g'hṛd—. *Համմտ. սանս.* hṛd-, hṛdaya, hārdi. *զնդ.* zərəd-, zarəδaya-, zərəδaya-, *հիւս. արևմ. պհլ.* zird, *պհլ.* dil, *պազ. պրս.* دل dil, *քրդ.* zar, *աֆղան.* zṛa, *օսս.* zärdä, *բելուճ.* zirdē «*սիրտ*» (Pokorny *1, 641,* Horn *§ 571*)։—*Հիւբշ. 490։*

Հներից Մաթ. Եւագր. 75 սրտմտութիւն *բառը սոուգաբանում է «ի սիրտն մտութիւն, սիրտը մտած»։* Schröder, Thesaur. 58 *հայերէնից է դնում ռուս.* сердце «*սիրտ*»։ *Ուղիղ համեմատութիւններ ունի* Klaproth, Asia pol. 101: Brosset JAs. 1834, 369 *են սանս.* hṛt: *ՆՀԲ «որպէս* սիրոյ *տեղի... և* սիրտ *մասն. յորմէ և յն.* φαρυ-α՛, *լտ.* fŏn, fŏnaꝑu, *որպէս և* φա՛ρηγξ՝ *է սէր,* φա՛ρυιξ՝ *սիրելի, սանս.* hṛda, *զազմ.* սէ՛ռուցէ»։ *Ուղիղ համեմատութիւններ ունին* Peterm. 21, 22, 30, 37, Windisch. 19, Böttich. ZDMG 1850, 361, Arica 71, 168, Lag. Urgesch. 700, Müller SWAW 35, 199, Justi, Zendsp. 123, *Հիւբշ.* KZ *23, 35,* Bopp, Gram. comp. 1, 393, *Տէրվ.* Altarm. *31, 92, Նախալ. 125 են։* Müller SWAW 41, 158 *Հայերէնի նախաձևը ըստ իրանեանի դնում է* *զիրդ։ *Հիւնք. հանում է շուրք բառից։*

Գիւմ.— Ախց. երև. կր. Մրղ. Ջղ. Տփ. սիրտ, *Ալշ. Խրբ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սվեդ. Տիգ.* սիրդ, *Ասլ.* սիրդ, սիր*, *Վն.* սիռտ, *Սչ.* սի՛ըրդ, *Գոր.* սէրտ, *Ղրբ.* սըէրտ, սըռտ, *Մկ.* սէռտ, *Հւր. Շմ.* սըրտ, *Հճ.* սիյդ, *Զթ.* սը՛յդ, սը՛րդ, *Ագլ.* սառտ, *Սլմ.* սիտ *(սեռ.* սռտի), *Համշ.* սիդ։ *Նոր բառեր են* սիրտխառնուկ, սիրտկոտրում, սիրտճաթուկ, սրտաբաց, սրտազդալ, սրտադող, սրտաճաք, սրտամնայ, սրտոտիկ *(Սչ.* սօրդօդիկ*) են։*

ՍԻՒԱՆ «հրեայական երրորդ ամիսը՝ որ համապատասխանում է յունիսին» Բառուք. ա. 8. ունի միայն ՀՀԲ։

=*Եբր.* סִיוָן sīvān *Համանիշի յն.* σιουάν *տառադարձութիւնից, որ գործածուած է համապատասխան տեղում՝ մի խումբ ձեռագրերի մէջ. (միւսներն ունին սովորաբար* σιουάλ, *որ է* šavvāl *ամիսը)։ Եբր. բառը փոխառնալ է ասորեստ.* si-ma-nu *(գաղափարագրով* simanu), *որ և* siwānu *ձևից, այն է ասորաբաբելական 3ե՛ր ամիսը, որ նուիրուած էր Լուսին աստուծուն։ Ծագում է* sîmânu *հասարակ անունից, որ նշանակում է «ժամանակ, շրջան լուսնի»* (Delitzsch, Assyr. Handwrtrb. 491, Strassmaier, Alphab. Werzeich. der assyr. u. akkad. wörter 807, Gesenius, *էջ 541)։*

ՀՀԲ դնում է եբր.։

+ՍԻՒՆ, ն *հլ.* (սեռ., սեռից, *յետնաբար* ի *հլ.*) «*սիւն, կանգնեցրած փայտ*» *ՍԳր. Ադաթ. որից* սիւնակ *ՍԳր. Ոսկ. ևս. (արևելեան ըրականում ընդունուած է* սիւնեակ, *որ սխալ ձև է).* սիւնաձև *Ագաթ.* սիւնակեաց վրդ. *հց.* եօթնսիւնեայ *ԱԲ.* սիւնազարդ *(նոր բառ) են։*

=*Թնիկ հայ բառ՝ հնխ.* k'īōn- *կամ* k'īyōn *ձևից, որի ժառանգն է նաև յն.* κίων «*սիւն*». *ուրիշ լեզուի մէջ այս բառը չէ պահուած։— Հիւբշ. 490։*

Աւգերեան, վարք Սրբոց Ղ. 68 համեմատեց նախ յն. κίων *ձևի հետ, ԳԴ պրս.* ستون sitūn «*սիւն*»։ *ՆՀԲ և* Windisch. 19 *յն.* κίων։ Böttich. ZDMG 1850, 361 *և* Arica 75, 233 *սանս.* sthū-ṇā, *պրս.* sutūn: Riggs, *Քերակ. էջ 60 եբր.* tsiun: Lag. Urgesch. 161 *և* Justi, Zendsp. 301 *սանս.* sthuna, *զնդ.* stūna, *պրս.* sutūn *և կամ յն.* κίων։ *Պատկ. Изслед. այս բոլորը մէկ ծագումից է ըղնում։* Lag. Ges. Abhd. 13 *յն.* κίων *ձևի հետ է կցում եբր.* כִּיּוֹן kiyyūn «*արձան*»։ *Ըստ այսմ* Schrader, Sprachw. u. Urgesch. *յոյնը դնում է սեմական ծագումից, ինչպէս որ* Wissen, Pompeia-

nische Stud. Leipzig *1877, էջ 618 (ըստ ՀԱ. 1893, 219 ծան.)* դնում է փիւնիկևրէնից։ *(Սակայն եբր.* kiyyūn *բառը ըստ* Gesenius 343 *անառոյգ է և թևրևս ասուր.* kaiwanu, *պրս. արաբ.* كيوان kaywān *«երևակ» բառն է)։ Տէրվ.* Altarm. 102 *յն.* ϰίων *ձևի հետ, բայց ո՛չ սանս.* sthūṇā, *որին կցում է հյ.* ցից *բառը։* Müller BB 1, 290 *տալիս է ուղիղ մեկնութիւնը։ Հիւբշ.* Arm. Stud. § 251 *կցում է յն.* ϰίων *-ին, որի նախաձևը դնում է* *ϰῖϝων, *որով և հայերէնը* *սի՛ւան *կամ* *սէվան։ Osthoff SA 2, 53 և* Parerga *1, 290 հյ. և յն. բառերի նախաձևը դնում է* *k'īson, *որին կցում է նաև սանս.* s'iṣ *«աւելորդ մնալ»։ (Յաջորդ քննիչները,* Bartholomae Stud. *II.* 36, Brugmann *II²* 1, 298, Boisacq 463 *և* Pokorny *1, 451 դնում են* k'īǒn- *կամ* k'īsǒn-, *և այլ ևս սեմական ծագման մասին չի խօսւում)։ Յակոբեան, Բիւզ. № 479 պրս.* սիւրուն։ *Պատահական նմանութիւն ունին արաբ.* اسيان isyān *«սիւն» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 760) և եբր.* שִׁיּוּן ṣiyyun *«շիրմի կոթող» (*Gesenius *682)։*

ԳԻՒ.—Ագլ. Գոր. Ղրբ. սիւն, *Ալշ. Ախց. կր. Համշ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Սլմ. Վն. Սեբ. Տիգ. Տփ.* սուն, *Երև.* սուն, սիւն, *Խրբ.* սօն, *Հճ.* սիւն. *Սվեդ.* սայն.—*Նոր բառեր են* սեաւական, սեափայտ, սեագղակ, սեգլուխ, սրճդուրս, սեմար։

**ՍԻՒՆԲՈԼՈՆ «հանգանակ, դաշն հաւատոյ» Պրպմ. 428. Լծ. պրպմ. 767։*

=Յն. σύμβολον, *որից նաև լտ.* symbolum *«նշան, դաշն, հանգանակ հաւատոյ»։— Հիւբշ. 379։*

Ուղիղ մեկնեցին ՀՀՒ և ՆՀՒ։

**ՍԻՒՆԻՔՈՍԱԿԱՆ «շարունակուղ, անընդհատ (ջերմի համար ասուած)» Մագ. Թղ. 74, 135։*

=Յն. συνεχῶς *«անընդհատաբար, շարունակեալ կերպով» մակբայից՝ հյ. -ական մասնիկով կազմուած. (Ֆրանս. ևս* synoque). *ըստ այսմ մեր բառը կարելի է ուղղել* սիւնեհոսական։—*Հիւբշ. 379։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

Սիւնկղիտոս *տե՛ս Սինկղիտոս։*

**ՍԻՒՆՀՈԴՈՍ (ի, ի–ա հլ. ըստ ՆՀՒ) «եկեղեցական մեծ ժողով» Բուզ. Սեբեր. էջ 140, Նար. Շնորհ. Տօնակ. Յայտմ. որից* սիւնհոդոսական *Ագաթ. Կորիւն։*

=Ասոր. ܣܘܢܗܘܕܘܣ sunhodos, *որ և* ܣܘܢܘܕܘܣ sunodos *ձևից (կէտադրեալ չինելով ընթերցանութիւնը անորոշ է), որ իր հերթին փոխառեալ է յն.* σύνοδος *«ժողով, մանաւանդ գիտական կամ եկեղեցական ժողով» բառից։ Սրանից են նաև լտ.* synodus, *ֆրանս. դերմ.* Synode, *վրաց.* სინოდი სიონელი, *ռուս.* синодъ *(որից և արևելեան դրականի մէջ՝* սինօդ *«էջմիածնի Սինօդը»), և մինչև իսկ քրդ.* سنودوس sinodus (Justi, Dict. Kurde 246)։ *Հայերէնը ուղղակի յունարէնից չէ՝ և ձայնի պատճառաւ, որ չկայ յունարէնում, բայց գտնւում է ասորերէնում։ (Այս և ձայնը Յակոբ Եդեսացին (+708) պատուիրում է չգրել՝ համաձայն յունարէնի.* Brockelm. Lex. syr. *231ա)։ Յառաջացած է անշուշտ յն. բառը ստուգաբանելով* σύν *«կից» +* ὁδός *«ճանապարհ» բառերից. Համմտ. Կնիք հաւ. էջ 58 «Սիւնհոդոս, որ է ժողով, որ Թարգմանի զուգաճանապարհք», նաև ՅՀ. իմ. խոստ. 12 «Սիւնհոդոս ժողովոյն, որ անուանի զուգաճանապարհ»։*

ՀՀՒ, ՆՀՒ և Հիւբշ. 280 դնում են յունարէնից։ Միայն Նորայր, Կոր. վրդ. 124 հիմնուելով և ձայնի վրայ՝ դնում է ասորերէնից։

Սիւս *(սեռ.* սիւսի*) «չորս կողմը պատ քաշած արհեստական մեծ որաստեղ». ունի միայն Բուզ. երեք անգամ՝ տպ. Վեն. 1889, էջ 120, 123, 124 (ձձ.* Սիւնեացն, նիւսին, ի սիւնսն*), բոլորն էլ Դ. պլ. ժե։*

Քննիչները առհասարակ համարել են յատուկ անուն։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Տեղեկ. Համալս. 1, 169—170։

—Սիւրուիջ «զօրահաւաք կազմակերպող պաշտօնեայ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պտմ. ԺԲ դարից (Դիւան ժ. էջ 449). «Կոչեաց սպարապետն զմէհմանատ փաշային և նա նա

գիր հրամանի կարգեալ զնա սիւրուջ բղբազում սահմանաց, այս է զօրաժողով»։

Անշուշտ թրք. բառ է. բայց չունին ո՛չ Будаговъ, ոչ ԳԴ և ո՛չ էլ Կամուս։

*ՍԻՓԻՒՈՆ «մի տեսակ պարարտ և մշտադալար խոտաբոյս, գառնաղմակ, վայրի ազոխ, փերփեր քարի, ֆր. joubarbe» Գաղիան. ունի միայն նորայր, Բս. ֆրանս. 715բ։

=Լտ. sempervivum «մշտադալար» բառից։

Ուղիղ մեկնեց Նորայր՝ անդ։

*ՍԻՓՈՆ «տղայոց նուագելու փչողական մի գործիք». ունի միայն ՓԲ՝ առանց վկայութեան. որով յայտնի չէ թէ հի՞ն է, թէ նորամուտ։ Միջին հայերէնում գտնում եմ սիֆուն «գինին տակառից քաշելու խողովակ» Վստկ. 98. «Եւ այլք երկայն սիֆուն շինեն և մինչև ի վայր ի յատակն ի մրուրն մխեն»։

=Յն. σίφων «խողովակ, ջրհան, բերանով ջուր ցայտեցնելու մի գործիք», որից ֆրանս. siphon «խողովակ». պէտք է լինի նաև արաբ. سيفون *sīfūn, որ վաստակոց գրքի թարգմանութեամբ յունարէնից անցել է արաբերէնի և այս տեղից էլ հայերէնի։—Աճ.

*ՍԻՔ, ո հլ. «բարակ բամի» Եղն. 92. Ագաթ. Ոսկ. եբր. փիլ. Նիւս. կազմ. որից սֆախառն ճառընտ. սիքաշարժ Երզն. լս. խաղաղասիք Փարպ. Տես. սահ. 48. ճառընտ. դժնդակասիք Նար. առաք. 424 (չունի ՆՀԲ). խաղցրասիք Ոսկիփ. վրք. հց. Վանակ. յոբ.— Հիւսիսային Հայաստանում գործածական բառ էր, որի տեղ հարաւայիններք ունէին այս (տե՛ս այս բառը)։ Գրուած է նաև սիւք, սիգ, սիկ, իսկ արդի գրականի մէջ կայ միայն սիւք ձևով։—Աբ կասկածով նշանակում է նաև սիք «հրաժշտական գործիք մը»։

=Ասոր. գւռ. անծանօթ մի ձևից փոխառնալ. հմմտ. ասոր. ܙܝܩܐ zīqā «փոքրորիկ», արաբ. زيق zīq, ասուր. zīqu «բամիք». բուն գրական ասորի ձևը յարմար չէ, որովհետև պիտի տար հյ. *զիկայ կամ *զիկ. բայց անշուշտ կար սրա հետ նաև գաւառական մի ձև՝ ս նախաձայնով. հմմտ. արաբ. صيق ṣīq «հողմ, քամի» և մանաւանդ սումեր. sig «քամի»։—Հիւբշ. 316։

ՆՀԲ յծ. յն. ψυχή «շունչ, ոգի», հյ. սղոխ, թրք. soluq «շունչ»։ Տէրվ. Altarm. 6 թերևս յն. ψυχή։ Այսպէս նաև Հիւնք. (բայց յն. ψυχή նշանակում է «շունչ, ոգի, հոգի, անձ» և չունի «քամի» նշանակութիւնը)։ Karst, Յուշարձան 407 սումեր. sig «քամի», sug «փոթորիկ»։

ԳԻՒ.—Մշ. սիկ «հովիկ, քամի»։

ՍԼԱԼ «դիտել, ուշադրութեամբ նայիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած ԺԶ դարու մի տաղի մէջ. հրտր. Ակինեան ՀԱ 1930, էջ 594. Տաղ վասն ակռայի, տող 35. «Զիս կու խաբէ թէ չի ցաւիր, Տեսնամ քանի օր մի անցնի, Ակռաս սըլայ ու կու հայի, Զվայ կուտայ խորված մսի»։

ԳԻՒ.—Խրբ. սլալ՝ նոյն նշ.։

+ՍԼԱՆԱԼ «արագ թռչիլ, վազել, սուրալ» ՍԳր. Եղն. Փարպ. որից սլացումն Խոր. Փարպ. սլացուցանել Լմբ. իմ. սլացք Տօնակ. սլացուիւն Թէոդ. խշ. Երագասլաց Վեցօր. Ֆաջասլացիկ Ասող.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'ul- արմատից. հմմտ. ալբան. sūl'em «յարձակիլ, վազել, վրան վազիլ», sul'm, sūl'mε «աճապարանք», vert-sul'em «յարձակիլ, խոյանալ», թերևս նաև հլ. sŭlŭ «դեսպան», sŭlati սերբ. šlăti, šĭljati, ռուս. слать, сылать «ուղարկել»։

ՆՀԲ «սրանալ որպէս սլաք նետի»։ Justi, Zendsp. 307 սրանալ ձևի հետ՝ զնդ. sri «երթալ» բառի տակ, իբր սանս. çri, çráyati։ Տէրվ. Altarm. 98 սրանալ, սուրալ, սողալ և ուրիշ բազմաթիւ բառերի հետ՝ սանս. sar «հոսիլ, սուրալ»։ Bugge, Etr. u. Arm. 131 սրանալ բառից։ Հիւնք. սուլանալ բայից։ Scheftelowitz BB 28, 283 և 29, 48, 61 սանս. çálati «վեր կենալ, շտապել», լիթ. šalinu «այս ու այն կողմ վազվզել»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. 77: Karst, Յուշարձան 424 օսմ. sal-maq «ուղարկել», ԹՔր. sal, sul, sil (թրք. sal-lan-maq) «երերալ»։

ԳԻՒ.—Մշ. սլալ, սլվլալ «թռչունների ա-

բաղ թռչելը». բայց սա արդեօք սլլալ *Աղբ. Երև. Տփ. «սահիլ». բայի հետ նո՞յն է։*

+ՍԼՍՔ, ի–ս *հլ. «նետ կամ աշտեայ» Առակ. իե. 18. Սղ. ծդ. 23. Բուզ. դ. 51. և. 35. Եփր. պհ. որից* սլամալիզու *Մծբ.* սլաֆարզել *Յայսմ.* սլաֆեալ *Եփր. ծն. էջ 106։*

=*Բնիկ հայ բառ, որ կազմուած է* –աֆ *մասնիկով հնխ.* k'ul- *«սուր, սրածայր» արմատից. սա էլ աճած է* k'u- *պարզականից, որ կրճատ ձևն է* ak'-u *արմատի (տե՛ս հյ. ասեղն): Այլն հնխ.* k'ul- *արմատից են նաև սանս.* çūla *«տէգ, նիզակ, ցից, սուր ցաւ», լտ.* culex, *հիւլ.* cuil, *կիմր.* cylionen *«մրժեղ». իսկ* k'u- *արմատից՝ տարբեր մասնիկով՝ սանս.* çūka- *«խայթոց», զնդ.* sūkā *«ասեղ» ևն։ Ըստ այսմ հյ.* սլաֆ *բառի նախաձևն է* *սուլ–աֆ *(*Walde 207—8, Pokorny 1, 33 *և* 465, Ernout-Meillet 229—230)*:*

ՆՀԲ լծ. Բրբ. սիլաճ *«զէնք» և հյ.* սլաճալ*։ Ուղիղ մեկնութիւնը մոռացեց նախ Տէրվ.* Altarm. 4, *որ համեմատում է սանս.* çūla *«տէգ» բառի հետ։* Karolides, Γλ. συγκρ. 211 *կապադվկ.* σιλευτέρ *«խաղի սկաւառակ», սանս.* çila *«քար», լտ.* silex *«կայծքար» են բառերի հետ։ Հիւնք.* սլաճալ *բայից՝ վերի ձևով մեկնեց* Lidén, Arm. Stud. 78, *որ համոզիչ է գտնում նաև* Meillet *(նամակ 1931 թ. դեկտ. 18-ից)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 332 պհլ.* çūlāk *«սլաք, տէգ», որ շատ լաւ պիտի յարմարի, եթէ գոյութիւնը հաստատուի։ Պատահական նմանութիւն ունի եբր.* שֶׁלַח šelax *«ձևորի նիզակ»։*

***ՍԼՆՀ** *կամ* **ՍԼՆՁ**, ի *հլ. «զէնք» Բղբ. դաշ. 18. Գնձ. վրդն. պատ. 94. Ուռհ. 426, Կոստ. երզն. 109. Քուչ. 93. գրուած է* լսեն, լսեխ *վրդ. առ. (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան 259 բ)։*

=*Արաբ.* سلاح silāḥ *«զէնք»։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ԳԻՒ.—Լ. Զգ. սլէճ *«վարպետի ժանիք»։*

[ՍԼՆԱՅԵՆԱԼ *«շէկ գոյն առացած, լտ.* subrufus*». գիտէ միայն Նիրսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 516 բ։*

=*Պէտք է ուղղել* լսնացեալ*։—Աճ.]*

+ՍԼՈՒՐ *«սուր» Էֆիմ. 179 (Գլուխ որ է սլուր դէպ ի գագաթն)։*

=*Կազմուած է* սուր *բառից՝ –ուլ մասնիկով, իբր* *սուրուլ>*սրուլ>սլուր*. նոյն բառից նման ձևափոխութեամբ յառաջանում են նաև* սուլուլ, սուլուլիկ, սուրուխ, սուրուխիկ *համանիշները, որոնք գործածական են բարբառներում։—Աճ.*

ԳԻՒ.—Երև. սլուր *«սուր, սրածայր»։*

+ՍԽՍԱԼ *(հոլովումը յայտնի չէ) «թիւրութիւն, պակասութիւն, յանցանք» Գծ. իէ. 9. Եղիշ. «թուով պակաս,* minus*» Եւս. քր. (օր. միով սխալ «մէկ պակաս» Եւս. քր. ա. 371, 372, երկու սխալ «երկու պակաս,—2» Եւս. քր. ա. էջ 372). որից* սխալել *կամ* սխալիլ *«վրիպիլ, խոտորիլ. դայթիլ, սխալ գործել» ՍԳր.* սխալել ի ծնդեղեն *«վիժել» ՍԳր.* սխալաւոր *Ոսկ. մ. ա. 5.* անսխալ *Առակ. ժե. 7. իմ. գ. 15. Եւս. քր.* առագաստխալ *Ոսկ. եփես.* հանապազաստխալ *Սկեւռ. աղ. Նար.* դիւրասխալ *Իգն. Շնորհ.* երդմնասխալ *Վրք. ոսկ. Մաշտ.* բազմասխալ *Նար.* սխալական *«սխալ» Վրդն. ծն. և ել.* սխալագրութիւն*,* սխալմունք *(նոր բառեր). գրուած է նաև* սղալ*.— միջին հայ. կայ* զաղալ *Անսիզր 81։—Տե՛ս նաև յաջորդը։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sqhal- *արմատից. հմմտ. սանս.* skhal, skhalatē *«սխալիլ, երերալ, տատանիլ, դողդոջել, թերանալ», անց. դերբ.* skhalita- *«դողդոջուն, վարանոտ, երերուն, դողդոջ, սխալ, թերի, սակաւիկ, պակասաւոր»,* skhalana- *«երերումն, դողդոջիւն, սխալանք», և նւազ հաւանաբար յն.* σφάλλω *«սահեցնել, սխալեցնել, խաբել»,* σφάλλομαι *«սահիլ, սայթաքիլ, ընկնել, սխալիլ, թերանալ»,* σφάλμα *«սխալանք, վրիպակ, թերութիւն, արկած, աղէտ»,* σφαλερός *«սահուն, անհաստատ, վտանգաւոր» (*Pokorny 2, 599, Boisacq 927, Walde 269, Brugmann Grdr.² *I* 432, 587)*: Տե՛ս նաև շեղ և փուլ։—Հիւրշ. 490։*

Müller SWAW 38, 582 *սանս.* skhal *ձևի հետ։ Այսպէս նաև Տէրվ.* Altarm. *28, Նախալ. էջ 112, Մասիս 1881 մայիս 12, և* Meillet MSL *8, 294՝ որ չի ընդունում յունարէնի կապը և կցում է*

fallo «սխալիլ» բառին։ Հիւրշ. ZDMG *1882, 119* յն. σφάλλομαι ձևի հետ և Armen. Stud. § *252* վերի ձևով։ Karolides, Γλ. συγκρ. *94* աւելացնում է սրանց կապադովկ. kšîlao «սահիլ ընկնիլ»։ Justi, Dict. Kurde 148 քրդ. xariyan «մոլորիլ, կորչիլ», գերմ. scheren, անգլ. scare «վախեցնել»։ Հիւնք. յն. σόλοικος, σολοικισμός և σφάλμα, արաբ. ɣalat «սխալ»։ Մառ. ЗВО *13, 122* փոխառեալ ասոր. ܣܟܠ skl «մեղանչիլ, սխալիլ» արմատից։

Գիւտ.—Ագլ. Ախց. Գոր. Կր. Ղրբ. Մշ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. սխալ, *Տիգ.* սըխալ, ըսխալ, *Ննխ.* սխալ, զղալ, *Երև. Մրզ. Ջղ. Տփ.* սղալ, *Ակն.* զղալ, *բայական ձևով՝ Մշ.* զաղլել «սխալիլ»։— *Ժողովրդական լեզուում հնարուած է նաև* սխալութիւն, *իրարից զանազանելու համար* սխալ *ածականը* սխալ *գոյականից (որ է* սխալութիւն)։

+ՍԽԱԼԱԿ «հարբած» *Ես. իդ. 20, որից* սխալակել «հարբիլ» *Բուզ. դ. 14. Փիլ.* սխալակութիւն «արբեցութիւն» *Տօնակ.* սխալակումն *Բրս. յուղիտ. գրուած է նաև* սխաղակութիւն *Իրեն. հերձ. 125,* գխաղականալ *Ոսկ. հռովմ. 162 (որ հրատարակիչը զուր տեղը սրբագրում է* գեղխանալ)։

=*Բնիկ հայ բառ. նոյն է նախորդ* սխալ *բառի հետ. համմտ. յն.* μεθυσφαλέω «հարբածութիւնից կանգնած տեղը երերալ», *որ կազմուած է* μέθυ «գինի» և σφάλλω «երերալ» *բառերից։—Հիւրշ. 490։*

Մէնէվիշեան WZKM *3 (1889), 62 համարում է թէ շինուած է յն.* μεθυσφαλέω *ձևի վրայից։ Այս կարծիքին հակառակ է՝*

Գիւտ.—*Ննխ.* զղալել «հարբիլ», *որ ո՛չ միայն ցոյց է տալիս թէ* սխալակիլ *յունարէնի վրայից թարգմանաբար կազմուած մի ձև չէ, այլ և թէ բառիս պարզ արմատն է* սխալ։

ՍԽՈՒՐ «վարձք, իբր փոխարէն վճարուած դրամ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են շանսխուր «շնութեան վարձք, բոզութեան գին» *Օր. իդ. 18.* անսքխուր «անվարձ, անկաշառ» *Հին բռ.* անսքխուրան «անվարձ, անփոխարէն» *Փիլ. յն. 277։*

=*Ասոր. գւռ. մի ձևից, որ չէ աւանդուած, բայց կան նրա միւս սեմական ցեղակիցները. ինչ. եբր.* שֹׂכָר sekher, *կամ* שָׂכָר sākhār, שְׂכַר səkhar «վարձ, քահանային՝ *գործաւորին ևն վճարուած դրամը»,* שָׂכִיר sākhīr «օրավարձով բանող մշակ, սարակ», *արաբ.* ǰكر sakarat «սարակ», ǰكا sakāra «վարձով մշակեալ հող», *խպտ.* śgor, škar «վարձումն», *եթով.* ሠ ካ ር səkūr «վարձուած» (Gesenius[17], *էջ 786)։—Աճ.*

Հիւնք. պրս. խիւսէր «աներ» բառից?

Սխտոր *տե՛ս* **Խտոր**։

ՍԽՐԱՆԱԼ «հիանալ, զարմանալ, սքանչանալ» *Սիր. խ. 7. Սփր. Թգ. Ոսկ. մրգ. որից* սխրագործ «հրաշագործ» *Ագաթ.* սքխրալի *Արծր. 322. Մագ. Նար.* սխրացուցանել *Ոսկ. կուս.* սխրագործութիւն *(նոր բառ)։*

Հիւնք. սխուր «վարձք» *բառից։ Կապ ունի՞ վրաց.* ხახრვა սախրվա «հմայք. դիւթութիւն», მხახრვალი մսախրվալի «դիւթիչ, հմայիչ»։

ՍԽՐԻԿ «նիհարիլ, տկարանալ». *մէկ անգամ ունի Ոսկ. լս.։*

ՀՀՔ սխրաճալ *բայից։ ՆՀՔ* սղարել «պաշարել» *բայից!*

ՍԿԱԼԻԿ «չորանալուց կաւի պէս ճաքճքիլ» *Փիլ. լիւս. 141։*

ՆՀՔ սիկ «ցեխ» *բառից։*

***ՍԿԱԼԻՆՆԱՆ** «անհաւասարակողմեան (եռանկիւն)» *Նեմես. 65։*

=*Յն.* σκαληνός «խոտորնակ, շեղ, անհաւասար», σκαληνὲς τρίγωνον «անհաւասարակողմեան եռանկիւն»։

ՆՀՔ մեկնում է «սանդղաձև, խոտորնական», իբր յն. σκαληνός։ *Ուղիղ մեկնեց ՋՔ։*

***ՍԿԱՀ** «մեծ բաժակ, թաս» *Ել. իե. որ և* սկիճ «բաժակ, գաւաթ» *ՍԳր. «Հաղորդութեան բաժակը» Կանոնք սահ. 93. Մաշտ. լմբ. մատ. 84. Ոսկիփ. գրուած նաև* սկի *Եւագր. 337. Մագ. Սոկր. Օրբել. Հրաթ. էմ. էջ 80, սկեճ Աբեան. էջ 495. որից* սկահակ

«փոքր գաւաթ» ՀՀԲ. սկաւնձև «բաժակաձև մի զարդ» ՍԳր. սկէօծկոց ԱԲ։

=Ասոր. ܐܣܩܦܐ esqəfā «բաժակ» բառից (Brockelmann, Lex. syr. 20 բ), որ գործածուած է Մն. խդ. 2, ուր հայերէնն էլ ունի ճշտիւ սկիհ. (Ու զսկիհն իմ արծաթի դիջիք յամանի կրտսերոյն)։ Ձևի համար հմմտ. ասոր. ܢܫܝܦܐ nəšīfā>նաշիհ: Ասորի բառը փոխառեալ է յունարէնից. հմմտ. σκάφη, σκαφίς, σκάφος, σκαφίον և σκύφος «նաւակ, ջրաման, լական, բաժակ», որից նաև լտ. scaphium, scapium, scapha «նաւակ, աման, բաժակ»։ Համարւում է ծագած հնխ. sqabh «քերել» արմատից (Boisacq 871—2, 882)։ Սրանց հետ նոյն են հսաքս. skap, հրգ. skaf, գերմ. Schaff «ջրաման», որոնք ամանք դնում են փոխառեալ լատինականի միջոցով (Kluge 416 բ), ուրիշներ ցեղակից յունարէնի՝ իբր ծագած նոյն sqabh արմատից (Boisacq)։

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 165—6 սկաճ և սկիճ կգում է յն. σκύφος բառին։ ԳԴ պրս. سکی sigī «գինի»։ ՆՀԲ լծ. յն. σκύφος։ Lag. Urgesch. 28 ապակի բառի հետ։ Karolides, Γλ. συγκρ. էջ 97—98 իրար է միացնում կպղվկ. σκουρά «բաժակ», յն. σκεῦος, σκύφος, հրգ. skiura, սանս. sku, լտ. obscurus, հյ. սկիճ, սկաւառակ, սfoղել: Bugge KZ 32, 11 կպղվկ. σκύκκο «բաժակ»։ Մբ-նակեան, Հայրենիք 1893 նոյ. 2 առաջարկում է կարդալ բառը ըսկիճ և ո՛չ սրկիճ: Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. 207 և Հիւնք. պրս. սիկի «գինի»։ Ուղիղ մեկնեց նախ բևեռագիր (Բառամաջեան), Բիւր. 1899, 65, որ կարծում է թէ Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ ասոր. էսկիֆո, էսկիֆո հոմանիշից տառադարձուած է հայերէն։ Յակոբեան, Բիւզանդիոն № 742 սկիճ=պրս. sigi, իսկ սկաճ=յն. σκίφος: Հացունի, Ճաշեր 74 պրս. sigī կամ յն. χρυσῷ σκύφει «ոսկեղէն անօթով»։

ԳԻՒ.—Կր. սրկիճ, Սեբ. սրգիճ, Ագլ. ըսկիճ, Պլ. սիգիճ, Ակն. սիգիյճ, Սլմ. վն. Տփ. սրկի, Հմշ. Շմ. ըսկի, Ալշ. սրգի, Մշ. սրգի, սրգիճ, Ռ. Սչ. սիգի, Ասլ. սիգիյ, Ախց. Ջղ. Մկ. ըսկիճ, Խրբ. Տիգ. սիգիճ, Սվեդ. սրգէճ, բոլորն էլ «Հաղորդութեան բաժակ»։

*ՍԿԱՂԻԴ «երկժանի բրիչ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. սեղբ. 738 շատ խաթարեալ մի հատուածի մէջ. «ի պաղատան նորա սիղատուր կիսիոյ առեալ սկաղիդ, ինքն և իւրայովքն ձեռօք նախկի սկսաւ փորել»։ Խաթարեալ մասի դէմ բնագիրն ունի τῷ λεγομένῳ Λατερανησίῳ διχελλί «կոչեցեալոյ Լատերանեանոյ երկժանի»։ Ըստ այսմ սիղատուր կիսիոյ պէտք է կարդալ իբր մէկ բառ և յապաւելով սի նախաւանկը՝ դատուրկիսիոյ դնել իբր տառադարձութիւն Լատերանեանոյ բառի. որով սկաղիդ կմնայ իբր հոմանիշ «երկժանի— διχελλί» ձևի և թերևս նոյնպէս խաթարեալ տառադարձութիւն, ինչպէս ցոյց է տալիս -χελλί-կաղի վերջաւորութիւնը։—Ա.Ճ.

*ՍԿԱՄԻՆՈՍ «թուխ». ունի միայն Բռ. երեմ. յաւել. 572։

=Յն. σκάμινος «թուխ»։

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ. 1925, էջ 306։

ՍԿԱՅ, ի հլ. «հզօր, յաղթանդամ, վիթխարի մարդ» ՍԳր. Եւս. քր. Խոր. որից սկայազործ Բուզ. սկայազն Եփր. Թգ. ծն. և Բուզ. Բուզ. սկայազor Ագաթ. սկայանման Փարպ. սկայաբար Խոր.—Նոյն բառից ճ տառականով՝ ճսկայ ՍԳր. Եզն. որից ճսկայազն Մծբ. Եփր. յհս. և Թգ. (կրճատ ճսկազն). ճսկայազor Ագաթ. ճսկայանն Կալլիսթ. ևն։

Բազմ. 1844, 156 Հայերէնից է դնում յն. γίγας և լտ. gigas «հսկայ»։ Böttich. Arica 76, 255 և Lag. Urgesch. 940 հյ. ճսկել և պրս. pasyada (իմա՛ basayda) «պատրաստ»։ Մսերեան, Ճռաքաղ 1861, 136 իբր ճասակեայ: Müller SWAW 42, 256 ճասակ բառից։ Տէրվ. Altarm. 20—21 հյ. ճսկել, սfաճչ են, հսլ. čuđŭ, študŭ «հսկայ», գոթ. us-skav-an, անգսք. scav-ian, հրգ. scawōn «դիտել», լտ. caveo «զգուշանալ», լիթ. kavóju «պահպանել» են բառերի հետ՝ հնխ.

sku «նկատել, զգուշանալ» արմատից։ Հիւնք. յն. σκιά «ստուեր, շուք»։ Karst, Յուշարձան 404 սումեր. gisgal «կայմ», gislah, kisak «բարձրութիւն», 407 sug «աճիւն», 409 zig «բարձրանալ»։

Սկանջնել տե՛ս Ականջ։

***ՍԿԱՐՈՍ** «մի տեսակ ձուկ՝ որ որոճում է» Վեցօր. 142 (ձեռ. սակրօս տպ. սկարօս). նոյնը Վրդն. ծն. և Յայտմ. մրտ. 21 գրուած սակրոս ձեւով։

=Յն. σκάρος «ծովային մի ձուկ». բուն նշանակում է «ցատկոտող», որ և լտ. scarus, իտալ. scaro, ֆրանս. scare, վրաց. ხკაროზი սկարոսի՝ նոյն նշանակութեամբ։—Հիւբշ. 518։

Ուղիղ մեկնից նախ ՀՀՒ (սակրոս), յետոյ ՆՀԲ։

ՍԿԱԻ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Վրք. հց. «եղ զնա ի վերայ քաղաքի և սկաւ մի ի սնարսն»։ ՆՀԲ մեկնում է «բարձ, թիկնայից կամ փսիաթ», ԱՒ «խարի կտոր»։

***ՍԿԱԻՈՒԱԿ**, ի–ա հլ. «կերակրի ամանն» ՍԳր. որից սկաւառակ գլխոյ «ուղեղի ամանը» Պղատ. տիմ. խոր.։

=Պհլ. *sukavarak? հոմանիշ ձևից, որ աւանդուած չէ. հմմտ. պրս. ٥ سكور sukōra, ٥ سكّر sukurra, ٥ سكر sukra, ٥ سكر uskara «կաւէ փոքր պնակ», և սրանից փոխառութեամբ վրաց. უსკურა ուսկուրա, աւոր. ٥ ؛ ٥٥٥٥ sīqūrqā, արաբ. سكرجة sukurǰa կամ sukurraǰa «պնակ», կպտվկ. յն. σκουρά «բաժակ», թրք. üsküre «կաւէ պնակ», քրդ. uskure «թաս, բաժակ, ջրաման», ալբան. skyüre «պնակ»։—Հիւբշ. 237։

Schröder, Thesaur. 46 արար. sukūra ձևից։ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 165 պրս. իսկէրէ, սիկիուրէ։ ՆՀԲ «որպէս թէ սկաւեակ կամ սկաւ՝ որ առնու ինչ ի մէջ իւր. ոմկ. սկուռա»։ Böttich. Rudim. 49, 179 և Lag. Ges. Abhd. 73 աւոր. sqrūq։ Lag. Urgesch. 29 սկի բառից։ Justi, Dict. Kurde 10 քրդ. uskure և պրս. uskara։ Karolides տե՛ս սկաւ։ Հիւնք. յն. σκάφη, թրք. ուսկուֆա «գլխանոց», Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. 207 պրս. sigī «բաժակ»։ Փառնակ, Անահիտ 1906, 233 ի զուր ալբաներէնը հայերէնից փոխառեալ է դնում։

ԳԻՒ.—Պարսկերէնից կամ քրդերէնից նոր փոխառեալ ձևեր են ուսկուր Բն. «կոթաւոր պղնձեայ գաւաթ», ուսկուրայ Բլ. Մշ. «հողէ փարչ»։

Սկսիլ «տքնիլ, արթուն մնալ և ուշադիր լինել» ՍԳր. Եզն. Ոսկ. մ. ա. 6, 19. բ. 7. նոյնը և սաստկականով՝ հսկել Ա. Կոր. ժզ. 13. Ա. պետր. ե. 8. Վեցօր. 172. հսկեցող Վեցօր. հսկումն Բ. կոր. ը. 5. Սեա. պտմ. հսկաբար «հսկելով» ճառընտ. հսկուն Մծբ. էջ 340. նոր բառեր են հսկիչ, վերահսկիչ, վերահսկողութիւն են։

ՆՀԲ լծ. զգալ։ ՓԲ յոջ. էջ բ հանում է հսկայ բառից, «զի քաջն արթուն է», Տէրվ. Altrm. տե՛ս սկայ։ Հիւնք. յն. σκευωρέω «հնարախուզել»։ Karst, Յուշարձան 407 սումեր. sigal «ուշադրութիւն»։

***ՍԿԵՊՏՈՐ** «աստեղագիր» Յայտմ. (ՆՀԲ ասում է թէ սխալմամբ գրուած է սկենդարոս. ուրիմն ուսկի՞ց է հանում այս սկեպտոր ձևը)։

=Յն. ἐξκέπτωρ «ընդօրինակող» ծագում է լտ. exceptor «դատաւորի մօտ նստող և վճիռները գրող քարտուղար» բառից։—Հիւբշ. 380։

ՆՀԲ դնում է լատինից։

***ՍԿԵՊՏՐՈՆ** «իշխանական գաւազան, մականն». մէկ անգամ ունի ճառընտ. սխալագիր մկպտրոն ձևով. «Ունէր աշտիճան փառաւոր և մկպտրոն, որ թարգմանի գաւազան իշխանական»։

=Յն. σκῆπτρον «մական, իշխանական գաւազան». ծագում է σκήπτω «նեռնել. արձակել» բայից։

ՆՀԲ դնում է «յն. սգի՛բդռոն կամ վագդի՛ռիոն»։

***ՍԿԵՌԱՏ** «ընտիր կերպաս». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. հա. «Զպատուական սկեռլատն յորժամ հանդերձ կարեն, օրըստօրէ երկայնանայ»։

=Թրք. اسكرلت iskerlet, Նոր յն. σκαρλάτον, իտալ. scarlatto, մլատ. scarlatum, հֆրանս. escarlate, ֆրանս. écarlate, անգլ. scarlet, գերմ. scharlach «վառ կարմիր կտոր». այս բոլորը փոխառեալ են իրարից. ըստ Kluge 414 մայր աղբիւրը արևելքից է, իբր Թրք. iskerlet, մինչդեռ Թրք. ձևը ըստ Будаговъ 1, 46 իտալերէնից է։—Ա՛ճ.

+ՍԿԵՍՈՒՐ, ի–ա հլ. «կնոջ ամուսնու մայրը» ՍԳր. Եզն. Ոսկ. Կողոս. Փիլ. որից սկեսրայր, սկեսրեայ «ամուսնու հայրը, կեսրոջ այրը» ՍԳր. Մխ. դա. Բրս. մրկ. որ և գրուած ամկաձև կեսուր:

=Բնիկ հայ բառ. նախալեզուն զանազանում էր իգական *sյek'rû- «կեսուր» և արական *sյék'uro- «կեսրայր». Առաջինից են ծագում սանս. श्वश्रू çvaçrû-, պրս. خسورا xusūra, خسو xusū, خسر xusra «զոքանչ», քրդ. xosî, xesū, xasru, աֆղան. xvāša, բելուճ. vasī, vasē, vassō, սոգդ. 'γwšh, յն. ἑκυρά, լտ. socrus, գոթ. svaihro, հբգ. swigar, նբգ. schwieger, անգսք. sweger, հհիւս. svōēra, հսլ. svekry, ռուս. գս. svekrý, գրակ. свекровь, կորն. hweger, կիմր. chwegr, ալբան. vjéhɛrɛ «կեսուր». Երկրորդից են սանս. श्वशुर çváçura, զնդ. xvasura, պրս. خسر xusur, خور xusūr, քրդ. xazūr, xozīr, xaur, աֆղան. sxar, բելուճ. vasarik, յն. ἑκυρός, լտ. socer, գոթ. svaíhra, հբգ. swëhur, նբգ. schwäher, անգսք. swēor, հսլ. svekrŭ, ռուս. свёкоръ, լիթ. šẽšuras, կորն. hwigeren, ալբան. vjehɛr «կեսրայր». Սրանցից ամանք ուղղակի համապատասխանում են հնխ. ձևերին, իսկ միւսները երկուսը իրար են խառնել. ամանք էլ մի կամ միւս ձևը ջնջելով նոր ձևեր են հնարել. այսպէս օր. գերմ. «հայր» և «մայր» բառերի բարդութեամբ՝ Schwieger-mutter «կեսուր», schwieger-vater «կեսրայր». իտալ. suocera «կեսուր» և suocero «կեսրայր». ֆրանս. beau-père «կեսրայր», belle-mère «կեսուր», անգլ. mother-in-law «կեսուր», father-in-law «կեսրայր» են։ Հայերէնի մէջ արականը կորած է. (և յետոյ կպած կեսրայր «կեսրոջ այր» ձևը)։ Իգական հնխ. sյek'rū- բառի մէջ՝ նախաձայնը ազդուելով երկրորդ վանկից՝ յառաջացել է նախ *k'յek'rū, ինչպէս ունին նաև սանս. և լիթ. ձևերը. այնուհետև *k'յek'rū- ձևը ազդուելով արական *sյék'uro- ձևից, եղաւ *k'uek'urā (ինչպէս ունի նաև յն. ἑκυρά), որից և ձևացաւ հյ. սկեսուր:—Հնխ. ձևերի արմատը համարւում է *sյe- «ինքն, իւր» դերանունը (Pokorny 2, 521, Walde 719, Trautmann 295—6, Boisacq 235, Horn § 486—7, Ernout-Meillet 907—8 (շեշտում է այն հանգամանքը որ նորահարսի համար աւելի կարևորը ամուսնու մայրն էր և ոչ հայրը. սրա համար է որ հայերէնի մէջ անաղարտ մնում է սկեսուր բառը, իսկ նրա վրայ շինուած է սկեսրայր բառը)։ Հայերէն բառի ձայնական կազմութեան վրայ քննութիւններ տե՛ս Scheftelowitz BB 28 290 և Lidén, Studien 383—4)։—Հիւրշ. 491։

Ուղիղ համեմատութիւններ ունին Peterm. 25, Windisch. 19, Diefenbach, Berl. Jahrb. 1843, 445, Böttich ZDMG 1850, 361, Arica 64, Müller SWAW 38, 573, 576, Pictet 2, 369, Justi, Zendsp. 89, Lag. Arm. Stud. § 1152, Տէրվ. Altarm. 64, Նախալ. 75, 163 են, Windisch. նախահայ ձևը դնում է *սեսկուր կամ *fեսուր, Lag. Arm. Stud. § 1152 *fեսուր: Թիրեաքեան, Պտկ. աշխ. գրակ. 207 և Հինք. դնում են պարսկերէնից։

ԳԻՒ.—Ջղ. սկեսուր, Գոր. Ղրբ. Տփ. սկէ՛սուր, Հմշ. Տիգ. ըսգէսուր, Սչ. սfեսուր, Ագլ. սկռսuմr, Շմ. ըսկիսuօr, Սվեդ. իւսգիսէօr, Հւր. իւսfիսuիր, Ջթ. ouգօսuյ, ouգօսuur, Ախց. Երև. Կր. Մշ. կէսուր, Խրբ. Պլ. Ռ. Սեբ. գէսուր, Ալշ. Մկ. Վն. կիսուր, Սլմ. կ'ըսիր, Ակն. Ասլ. գէսիր, Ոզմ. կէսuօr, Մրղ. կիւսիր.—Հետաքրքրական են՝ Ջղ. սկեsuroր և Խրբ. գէսuմr «կեսրայր»։ Նոր բառեր են անսկեսուր, կեսրակ, կեսրիկ, կեսրաճք, կեսրօճք, սկեսուրպապ:

*ՍԿԵՏԱ, որ և սկէտեայ, սկիտիա «փոկ, կաշեայ խարազան» Պտմ. աղէքս. 86 (ըստ զանազան ձեռագիրների)։

=Յն. σκυτίς, σκῦτος, σκύτον «կաշի, խարազան», որից փոխառեալ է նաև լտ. scutica.—Հիւբշ. 380։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Սկեհին «խաչը պարունակող արկղը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կեղծ-Շապհ. էջ 13։ Նոյնից է նաև **Սկեռայ (վանքը)**։

=Յն. σκευάριον (σκέβριον) բառից, որ հնապէս նշանակում էր «փոքրիկ կարասիք», բայց յետոյ ստացաւ «արկղ» նշանակութիւնը։ (Յն. σκεῦος «կարասիք, անօթ» բառի նուազականն է)։ Սրանից են փոխառեալ նաև ասոր. ܐܣܩܘܪܝܢ asqurīn կամ ܣܩܘܪܝܢ səqurīn «ման, փոքրիկ ման, երկար արկղ, կողովիկ» (Brockelm. Lex. syr. 20, 237, 490), վրաց. სკევრი սկեվրի, სკივრი սկիվրի «անգուկ, արկղ»։—Աճ.

Բառս երևան էր հանել նախ Ալիշան, Հայապատում, էջ 222, որ և դնում է յն. σκευόφορον «բեռնակիր» բառից։ Մերժում է Մառ, Тексты IX, էջ 49 և կցում է վրաց. սկեվրի «արկղ» բառին։ Երկրորդ անգամ խօսում է բառիս վրայ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 65, 297 և տալիս է վերի մեկնութիւնը։

Սկի *տե՛ս Սկահ։*

Սկիզբն *տե՛ս Սկսանիլ։*

***Սկիթռոն** «աստղաբաշխական մի գործիք» Խոր. աշխ. 587, Հրտր. Պատկ. էջ 2. «ի ձեռն երևելոյ աստռողաբոն և սկիթռոն գործարանաց»։*

=Յն. σκιόθηρον «արևի ժամացոյց»։

Աբ դնում է յն.։ Վերի ձևով մեկնեց Պատկ.։

***Սկիլաց** «երեքգլխանի առասպելական շուն» Բրս. մրկ. 87 (Սկիլայն՝ զոր շուն երեքգլխի ասեն)։ Նոյնը Բառ. երեմ. էջ 286—287 (երկիցս) սկիլայ «շուն». Հին տառադարձութեամբ սկիւղ «առասպելեալ գազան, ապուռ գազան» Ոսկ. պօղ. Ա. 602. որ և սկիղ Կանոն. 84, 162 (Գիրք ասեն սկիղ և հիդրա ծովայինք. սկիղն շուն ասի երեքգլխեայ). Ոսկ. մտթ. ղ. (տես. սկղին ձևով), սկիւղայ Կալիսթ. 169 (իբր յտ. անուն զրուած և տես. հոլով)։ Սրա ուրիշ աղաւաղ գրչութիւններն են՝ սիւղ, սինկողին Յովսիմ. 23—24։ Այս բառն է որ Բռ. երեմ. աղաւաղ ձևերով գրում է սկիոճ՝ էջ 286, սկտուղ՝ էջ 287 «սպանօղք»։*

=Յն. σκύλλα «Սիկիլեան նեղուցում մի քարայրի մէջ բնակող ծովային մի հրէշ»։

Աբ բառ յն.։ Ուղիղ մեկնեց Գալէմքեարեան, Մասիս 1900, 403։ Վերջին անգամ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 168—9։

***Սկիպտոս** «գաւազանաձև շանթ արձակեալ յօդոյ յերկիր» Արիստ. աշխ. 613։*

=Յն. σκηπτός նոյն նշ.—Հիւբշ. էջ 380։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Սկիտիա *տե՛ս Սկեռայ։*

***Սկիթիքիոն** «զմրո՞ւխտ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 46. «Սիւնիկիա, որ է ճենք. և լինի անդ դարիճենիկ և կասիմոն, ի կասիա լեռնէ, և սկիթիքիոն, որ է ատրագոյն ինքնեց»։*

=Յն. σκυθικόν «սկիթիական», որից լտ. scythicum, որ է Պլինիոսի scythis «զրմռուխտ». ատրագոյն բառն էլ յիշեցնում է լտ. scythici ignes «հրաւառ ինչպէս զրմռուխտ»։

Այսպէս մեկնեց Սուքրեան, անդ, էջ 61։

Սկիւղ *տե՛ս Սկիլայ։*

***Սկիւռ** «ազնիւ մորթով մի անասուն է. Թրք. սընճապ, Ֆր. écureuil». Հնից չէ աւանդուած. գործածական է միայն արդի գրականում։*

=Յն. σκίουρος «սկիւռ» բառից փոխառեալ. ծագում է σκιά «շուք» և οὐρά «պոչ» բառերից. բուն նշանակում է «պոչով իր վրայ շուաք անող» (այս անասունը ընդհանրապէս իր թաւ ու գեղեցիկ պոչը բարձրացնում է գլխից վերև և տակին նստում). սրա համար հայերէն յարմարցուած է նաև նռվանագի (տե՛ս Նորայր, Բառ. Ֆր. 439ա), որ սակայն ընդունելութիւն չէ գտած։ Յոյնից են ծագում նաև լտ. sciurus, անգլ. squirrel, Ֆրանս. écureuil հոմանիշները։ Հայը կարող է նաև լատինից կազմուած լինել։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս նախ ՀԱ 1908, 122։

***ՍԿԻՏԱՂ** «խարազան, ցուպ» Պտմ. աղէքս. 150 (ըստ Նորայր, Բառ. ֆր. 1126 բ «ծածուկ թուղթ կամ նամակ մագաղաթեայ գալարեալ ի վերայ գլանի»)։*

=Յն. σκυτάλη «արջառաջիլ, լախտ, ճըպոտ»։—Հիւբշ. 380։

Առաջին անգամ ուղիղ մեկնութիւնը տուաւ Տաշեան, Ուսումն. ստոյն Կաթիսթ. էջ 207։

ՍԿԼՕՐ «լերկ ու ողորկ». ունի միայն Բռ. երեմ. էջ 256, իբր բացատրութիւն **ոտոր** բառի, որ պէտք է կարդալ **ողորկ**։ Սրանից հետևում է որ **սկլօր** այն ժամանակ գործածական մի բառ էր։ Գաւառականներից ունինք **սպլոր** Բլ. Մշ. «ճաղատ, մազերը թափած», որ սրա հետ նոյն է։

ՍԿՂԱՎ «անծանօթ մի բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2770։

ՍԿՆԴԵԼ. *անստոյգ բառ, մէկ անգամ ունի Յայսմ. ապր. 20. «Գրեցին երիս արս ընտրեալս յինքեանց և թուղթ մի ղՔրիստոս անուն և եդին ի մէջ սկնդեալ մոմոյ և ծածկեցին»։ ՆՀԲ մեկնում է **սկնդեալ** «դնտեալ, դնտացեալ կամ կնքեալ»։*

ՍԿՆԴԻԿ կամ ՍԿՆԴՈՒԿ «ամուլ՝ այրի կամ ամուսնուց արձակուած կին» Ես. ծդ. 1. Գաղ. դ. 27. Ոսկ. գղ. և ես. 365. Բուզ. Մխ. խչ. (Հրատր. Բազմ. 1911. 263 բ)։

*ՆՀԲ **սկուճդ** «շուն» բառից՝ իբրև նախաատական ձև։ Տէրվ. Altarm. 62 սանս. çvan «դատարկանալ», çunya «պարապ, անտէր, մինակուկ»։*

ՍԿՈՍՏԻԿՈՍ «աստեղագիր կամ բժիշկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 287։

***ՍԿՈՐԴՕՆ** «վայրի սխտոր». Նորագիւտ բառ... մէկ անգամ ունի Վստկ. 169. «Եւ վայրի սխտոր, որ է սկորդօն, շատ ուժով է քան զտանուդ»։ Նոյն բառն է որ Բառ. երեմ. յաւել. էջ 572 գրում է **սկորդն** «սխտոր»։*

=Յն. σκόρδον, σκόροδον «սխտոր»։

Ուղիղ մեկնեց Ալիշան, Վստկ. էջ 259։

+ՍԿՈՒՆԴ (ի–ա *Հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «շուն, շնիկ» Մագ. Շնորհ. Թղթ.։

*=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'yont- ձևից, որին համապատասխան են գալիս գոթ. hunds, հբգ. hunt, գերմ. Hund, հոլլ. hond, հհիւս. hundr «շուն», անգլ. hound «որսի շուն», լեթթ. suntana «գամփռ»։ Նախաձայն k'y պիտի տար սգ, որ բնականաբար դառնալու էր **սկ**–։ Բառիս հետ զուգորդ է շուն, որի ձայնական յօրինուածքը լաւ չէ բացատրուած (տե՛ս Ernout-Meillet 138—9, որ հյ. բառի նախաձևը դնում է kwon-ta, իսկ այս էլ ածանցուած kwon «շուն» բառից. նման աճումներով են կազմուած գոթ. hunds լեթթ. suntana «մեծ շուն» են)։*

Müller SWAW 38, 573 *սանս.* çvan *և գոթ.* hunds *ձևերի հետ։ Նոյն 78, 429 դնդ.* spā *պրս.* sag<*swag։ Հիւբշ.* KZ *23, 16 և 48* **սկ**– *դնում է* çv- *ձևից և կցում է փռիւգ.* kun *բառին։ Տէրվ.* Altarm. *62* **ֆենք** *հոմանիշի հետ=գոթ.* hunds: *Նոյն, Նախալ. 75, Մասիս 1882 յուլիս 24, Երկրագունտ 1884, 101 և Լիպու 160 սման արմատից՝ դ յաւելուածով, ինչպէս է և գերմ.* hund, *գոթ.* hunds *են խումբը։* Thomaschek SWAW 96, 761 *պամիր.* skön, *հսլ.* štenĭcĭ «ձագ»։— Bugge KZ 32, 54 *կցում է շուն բառին և շեշտի տարբերութեան պատճառով դնում է հնխ.* k'yōn>շուն, k'yṇnós> **սկուճդ**։ *Հիւնք. պրս.* **ֆուճտիւզ** «շնչրի» *բառից։ Վերի ձևով մեկնեց* Meillet MSL 8, 160: *Հիւբշ. 480 անցողակի յիշում է սանս.* çvā, *իսկ* Strassburger Festschrift 71 *բոլորովին բաժանելով* κύων=«շուն» *ընտանիքից՝ կցում է յն.* σκόλαξ «անասունի ձագ, շան ձագ, շուն» *և* σκύμνος «ձագ» *բառերին։* Brugmann, Grdr² *I* 140, 304, 564, 900, *II*. 296, 421 *հնխ.* k'yon-to *ձևից, իբր գոթ.* hunds *են։* Bartholomae *(առ* Osthoff, Parerga *1, 273) պամիր.* skön «շնիկ» *և յն.* σκόλαξ։ Pedersen *նպաստ 6 և* Vergl. Gr. kelt. spr. 1, 120 *և* 185 *հսլ.* štenę, *ռուս.* щенокъ, *լհհ.* szczenię «շնիկ», *կիմր.* cenaw «շնիկ», *սանս.* kánishṭha «փոքրագոյն», *հսլ.* čędo «տղայ», *որ հաստատում է նաև* Gram-

mont MSL *20, 217 (յիշում են* Walde 645, Pokorny 1, 398, Boisacq 391): Scheftelowitz BB 28, 290 *և* 29, 18 *շուն և* սկուտ *բառերի մէջ գաւառական տարբերութիւն է տեսնում։ Բառիս վերաբերեալ ընդարձակ խօսում են* Lidén, *Յուշարձան 381—384,* Osthoff, Parerga *1, յատկապէս էջ 241 են, և շուն, սանս.* çvâ, *գոթ.* hunds *բառերի հետ ցեղակցութիւնը ձայնական անյարմարութեան պատճառով մէկ կողմ են դնում։*

ԳԻՒ.—Նո՞յն է կոնղիկ Եւդ. «փոքր շուն, շնիկ»։

ՍԿՈՒՐ. *անասոյզ բառ. մէկ անգամ ունի Շիր. «Մարդկան իշխանաց գործիք են տանջանաց, պէսպէս մեքենայք և մարդիկք, բաւասուրք և սկուռք»։ ՆՀԲ մեկնում է «որպէս սակուռ, սակր և կամ սակրաւոր», ԼՀՀ. «սիկարիան», ՋԲ «գահիճ կամ սակրաւոր», ԱԲ «գահիճ կամ տապարաւոր» (իբր լտ. բառ)։*

ՍԿՈՒՏՂ, ղ *հլ. (սեռ.* սկաեղ, *գրծ.* սկաեղբ, *յգ.* սկտեղք, *հյց.* սկտեղս. *Եզ-ուղ. հյց. Հաղուածքիւս ձևը գործածուած է Ոսկ. պօղ. Ա, էջ 852, Վահր. 194, Ճշ. 634. բ. Տաթև. ձմ. ժբ՝ հրիցս) «ափսէ, սկաւառակ» Մաթ. ժդ. 8, 11, Մրկ. ղ. 25, 28, Ագաթ. Վեցօր. 181. Ոսկ. ես. էջ 143, 264. յետնաբար ուղ.* սկուտեղ, սկտեղ, *սեռ.* սկուտեղի *են Յայսմ. մրտ. 13. Լմբ. մատ. 494 են։ Գրուած* սկտել *Եւագր. 162 (մի ձ.)։*

=Լտ. scūtella *«պնակ, ափսէ» բառից հին փոխառութիւն. լատին բառը* scutra *հոմանիշի նուազականն է (*Walde 692), *որից ձևացած են նաև ֆրանս.* écuelle, *իտալ.* scodella, *յն.* σκουτέλα, σκουτέλλιον, *հբգ.* scuzzila, *լիթ.* skutelis, *հիսլ.* skutell, *սերբ.* zdjêla *են։*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 165 յն. σκυτάλη *ձևից։ ՆՀԲ լծ. յն.* σκυτάλη *և լտ.* scutella: *Հիւնք. լտ-ից։ Հիւրշ. 380, դնում է յունարէնի միջոցով։ Յակոբեան, Բիւզանդիոն № 743 պրս.* իսկիւդար *«պայուսակ» և յն.* սֆուտէլա: *Լատինարէնից հին փոխառութիւն լինելը հաստատում է* Meillet MSL 18, 349, *հյ. Քրգմ. ՀԱ 1914, 230։*

ԳԻՒ.—Նոյն է կտեղ Համշ. «կողով, սէպէտ»։

ՍԿՒԵԼ *«չուանով խեղդել». մէկ անգամ ունի Սարկ. Հանգ։*

ՍԿՍԱՆԻԼ *«ձեռք զարնել, սկսիլ, ռմկ. պաշլայիլ» ՍԳր. աւտում է նաև* սկսնուլ *Ագաթ. Մծբ.* սկսաճուլ *Պղատ. տիմ. որից* սկսուած *Վեցօր.* սկսնակ *Վրք. հց. բուն արմատն է *սկիս, ինչպէս ցոյց է տալիս* -ըս-կիզբն, ն *հլ. (սեռ.* սկզբան, *գրծ.* սկզբամբ, *յգ.* սկզբունք, -բանց, -բամբք) *ՍԳր. Ոսկ. որից* սկզբնաւոր *Վեցօր. Ագաթ.* անսկիզբն *Ագաթ.* անսկզբնական *Ագաթ. Ոսկ. ես.* անսկզբնակից *Եզն.* զազրասկիզբն *Շիր.* ճախասկիզբն *Պիտ.* չարասկիզբն *Բրս. մախ.* սկզբնագիր, սկզբնաւոր, սկզբնաւորութիւն, սկզբունք, սկզբունքային *(նոր բառեր). աւտում է նաև* սկիզմն, սկիսմն *Փիլ. եւ. 445 (7 անգամ), որից նաև* սկսմնական *Փիլ.* սկսմնաւոր *Փիլ. եւ. ևն։—Բառ. երեմ. էջ 287 արմատ ձևով դնում է* սկիս *«սկսիր կամ կապի՛ր»։*

Տէրվ. Նախալ. 54—55, 110 հնխ. skak *«դուրս» մէջտեղ ելլել, երևան գալ» արմատից. հմմտ. սանս.* khać, *յն.* κιχάω, *հյ.* խոչ, խոչընդոտ, խոչընդոտիլ, *գերմ.* ge-scheh-en *«պատահիլ»,* Meillet MSL 9, 153 *հնխ.* sweik'- *արմատից, հմմտ. յն.* ἴκω, ἱκάνω, ἱκνέομαι *«հրթալ, գալ. հասնիլ, մօտենալ», հիսլ.* rosíacht *«հասաւ», սանս.* viçáti: *Հիւնք. կէս բառից. հինը դնում է* սկիսմն, *իբր կէս իմն։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 148 հիսլ.* intin-scann *«սկիզբն»։* Patrubány *ՀԱ 1908, 187 հիսլ.* cinim *«ծնիլ» են։ Մառ* ЗВО *22, 79* սկիզբն *համարում է բարդ բառ, որ կազմուած է* սկիզ *(<*սկսանիլ*)+*-բն *(<*բուն *«արմատ») բառերից։ Նոյն* ИАН *1918, էջ 346* սկիս=*վրաց.* սկուճա *«կապիլ»* +բն= *սվան.* libne *«սկսիլ», վրաց.* բմա *«կապիլ»։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. սկսել, *Ագլ. Ախց. Կր. Տփ.* բսկըսիլ, *Գոր. երև. Ղրբ.* բսկըսել *(-ի՞նչ ծագում ունի Տփ.* կցիլ=*Սչ.* գցել *«սկսիլ»)։*

ՍԿՐԹԵԼ *«մորթը պլոկել, լոպկել հանել». իբր միջին հյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆրբանս. 436ա (écorcher): Կենդանի է արդի դաւառականների մէջ։*

Պատահական նմանութիւն ունի թրք. صیرمق səyərmaq *«սկրթել»։*

ՍՀԱԿ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Համառօտաբան Ոսկ. Ես. «Այգի և սհակ և դուբ»։ Նշ. մեկնում է «աշտարակ, բուրգն», Աբ «աշտարակ»։*

—ՍՂԱԼ *«սագերի հանած ձայնը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վրդ. առ. 89. «Ադուէսն եմուտ առ սագերն ուտել զնոսա և նոցա բնութիւն է որ սղան ձայնիւ» (Մատ Թարգմանում է цыкать, էջ 546)։ Նոյնը նաև սղալ «սուլել» Յայսմ. մրտ. 22, դրուած սուղել, սուղղել «սուլել» (տե՛ս սոյլ), սուղումն «սուլումն» Պիտ. փիլ. սղղումբն «սոյլ, սուլոց» (յիշում է իբրև ընտիր բառ՝ Վարդան Յունաննան, Ճեռքածութիւն 1671, էջ 332, որ և մեկնում է ռմկ. «սլվլումն»)։*

=Նոյն է սոյլ արմատի հետ. երկուսի յարաբերութիւնը ճիշտ այնպէս է, ինչպէս նշող և նշոյլ, թող և թոյլ, յողալ և յոյլ։—Աճ.

ԴԻՒ.—Մկ. Սլմ. սղալ, Վն. սղալ, սողալ, կրկնաբար սղսղալ «շարունակ սուլել». այս բոլորի մէջ ամէնից նախնական ձևն է սողալ։

***ՍՂԱՄԻՇ** *«իշխանական պարգևատրութիւն» Մաղաք. աբ 17. «Արարեալ զնա սղամիշ և տուեալ մեծ իսուրախ և փայիզայս ոսկիս և տաճար խաթուն պօխտախաւտր»։*

=Թրք. سیورغامیش siurγamiš *«հաճութիւն, պարգև» (Будаговъ 1, 658 իբրև չաղաթայերէն բառ)։*

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ, էջ 63։

ՍՂԱՆԴՆ *կամ* **ՍՂԱՆԿՆ** *«դրևանդ խոտը, լա. aristolochia» Մխ. հեր. Դաղիան. բժշ.։*

ԴԻՒ.—Մշ. Բլ. Վն. սղանգ «բոյս որ թթու համ ունի. կերակրի վրայ են լցնում. նրանով կաշի են սղոցում»։ (Նշ դնում է ռմկ. սրդանկ, սղնկան. տե՛ս և Արև. մամուլ 1896, էջ 63 և Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 593)։

ՍՂԱՏՈՒՂ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մծբ. 350. «Անկողինք մեծատանց զահոյք երիզապատք, սղատուղք, պաստառաւիք»։ Նշ մեկնում է «շղաշիւք կամ շղաշատեսիւք զարդարեալ», Աբ «բարակ լաթերով սազած»։*

ՍՂԱՐ *«կարգից դուրս անկուած տունկ». ունի միայն Գաբ. բառ. որի դէմ Քաջունի ունի սղալ։ Ո՞րն է ուղիղ։*

***ՍՂԱՐ** *կամ* **ՍԽԱՐ** *«պաշարումն. փխբ. անձկութիւն, նեղութիւն» Բրս. մրկ. 146. Վրդ. պտմ. Վահր. ոտ. Ուտ. որից* **սղարել** *կամ* **սխարել** *«պաշարել (բերդը), փխբ. նեղը դնել» Բրս. մրկ. 146. Վահր. ոտ. Ուտ. Սամ. անեց. շար. 149. Սմբ. պտմ. 103։*

=Շրջուած է **խսար** *բառից, որ փոխառեալ է արաբերէնից. հմմտ. Վրդ. պտմ. տպ. Վենետ. էջ 150* **սղար**, *իսկ հրտր. էմինի, էջ 197* **խսար**։ *Բուն մեկնութիւնը տե՛ս* **խսար**։

Նշ բառ ռմկ. **սէճր.** **մուճասէրէ**։ *Այտընեան, Քնն. քեր. 335 արաբ.* **ս'ար, սր'ար** *«պաշար» բառից, որ հայոց անցնելով՝ պաշարել բառի սղղկութեամբ այս իմաստն է ստացել։ Ալիշան, հրտր. Վրդ. պտմ. էջ 150 ծան. արաբ.* **ճիսար** *«պաշարումն»։*

***ՍՂԿԵԼ** *«փշրել, մանրել, սանդի մէջ ծեծելով փոշի դարձնել» Բառ. երեմ. էջ 287. յետին հայերէն բառ, որ գործածուած եմ գտնում հետևեալ տեղերը. Առաք. պտմ. 454 և 464 (Թէ սղկէն ի յաչքն քաշեն՝ զաչաց բորն տանի. Սղկեն ու քացախով քսեն). Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր 75, էֆիմ. 286։ Կենդանի է արդի բարբառներում* **սղկել, սխկել** *ձևերով (Ակն. Բլ. երև. Զթ. Խն. Մկ. Մշ. Մշկ. Մրշ. Վն.) «մէկին ծեծել կամ մի իր փոշիացնել» նշանակութեամբ։*

=Արաբ. سحق saḥq *«մի բան ծեծելով մանրել, տրորել, ինչպէս կոճապղպեղը սանդի մէջ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 924)։—Աճ.*

ՍՂՈԽ *(ի հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «բարակ քամի» Փիլ. տե՛ս 12. Խոր. Լաստ. «սաստոյցի կտո՞ր» Պիտ. որ և* **սողոխ** *«բարակ քամի» Վեցօր. 78. Ոսկ. բ. տիմ. 265։*

ՆՀԲ լծ. Թրք. soluq «շունչ», *որ կըրկընում է նաև Հիւնք.*։

ԳԻՒ.—*Բլ. Բղ. Մշ.* սղոխ, սխոխ «*ջրի երեսը կապած բարակ սառոյց*», *Մկ.* սխուխ «*խոնաւ հող՝ որ ցրտից սառել է*». *և սրա միջոցով էլ՝* սղոխ *Վն.* «*խոնաւութիւնից մըշրուած թաւուած՝ շինութեան հող ու ծեփ*» (*Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 594*)։ *Սրանից* սխոխիլ *Բլ. Վն.* «*հողէ ամանի կաւը խոնաւութիւնից թաւուիլ*», *Բլ.* «*ցրտաւոտ լինել, սառչիլ (սոխ, շողգամ, գետնախնձոր, մարդու ոտք ևն)*»։

—ՍՂՈՑ, ի–ա *հլ.* «*փայտ կտրելու մի գործիք*» *ՍԳր.* «*ծովային մի գաղան, սղոցաձուկ*» *Բար. 139. որից* սղոցել *ՍԳր. Կոչ. էջ 240.* սղոցաձև *Ես. խա. 15. Ոսկ. մ. ա. 11.* սղոցաձուկն *Խոր. պատ. Հռիփ. Մխ. առակ.* սղոցեղջիւր *Պիտառ.* սղոցումն *Մանդ.* սղոցի «*մի տեսակ ծառ,* quereus ilex L «*Դան. ժգ. 58. Ոսկ. պօղ. բ. 653 (Թրգմ. յն.* πρῖνος «*սղոցի*» *բառից, որ ծագում է* πρίω «*սղոցել*» *բայից*)։

=*Կազմուած է* սուղ *արմատից՝* –ոց *մասնիկով. Համմտ.* խառոց. *տե՛ս և* սուղ։

Հներից Սիւն. քեր. 189, 190=Մագ. և Երզն. քեր. ատուգաբանում են սղոցել *բայից. «Սղոցն սղոց է. Սղոցն ատուգեալ ասի սղոց, որ սղոցայ»։ ՀՀԲ տալիս է ուղիղ մեկնութիւնը։ ՆՀԲ* սղոցել *բայից (որ սղելով իմն հատանէ), լծ. իտալ.* segare «*սղոցել*»։ *Հիւնք.* սուղ *բառից։* Karst, *Յուշարձան 422 չաղաթ.* silmak «*սրբել, քերել*», siz-mak «*փոքրել*» *ևն։—Սղոցի բառի նշանակութեան համար Վրդն. դան. տե՛ս* ճերմի *բառի տակ։ Այս բառի վրայ խօսում և ուղիղ են ատուգաբանում Յ. Վ. Մ., Բանասէր 1902, 378—380, Արփինեան, Ածաշնչի տունկերը, էջ 12—18*։

ԳԻՒ.—*Ալշ. Զղ. Սլմ. Վն.* սղոց, *Մշ.* սղոց, սղոծ, *Ախց. Երև. Խրբ. Կր. Ննխ.* սղօց, *Մկ. Տիգ.* սղուց, *Ագլ.* սո՛ւղուց, *Սեբ.* սղէօց, *Ասլ.* սղէօ՛ց, սղէօ՛ս, *Սվեդ.* սղիւց, *Մրղ.* սուղից, *Զթ.* սէօղիւց.— *նշանակութեան ձևափոխութեամբ* սղոց *Բզ. «դանակ»,* գլուխ սղոցիլ *Տփ. «շատ և չարաչար աշխատիլ»,* սղոցիկ *Նբ. «մի տեսակ բոյս»*։

ՍՂՈՒՆ, *որից* սղուն քար «hämatite. *քարը». ունի միայն Պատկ.* Драг. камни 72. *մէկ անգամ գործածուած եմ գտնում Առաք. պտմ. 457. «խամահի, որ է երկաթ չինի, որ է սանկհատիտ և հայերէն սղուն քար ասեն»*։

ՍՂՈՒՏ «քթին քաշելու դեղ» Մխ. բժշ. էջ 120։

=*Արաբ.* سعوط su'ūṭ «*քթին քաշելու դեղ*» (*Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 479*)։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Seidel § 330:

ՍՄԱՐԱՔԹՈՍ «զմրուխտ». ունի միայն Բատ. երեմ. էջ 287։

=*Յն.* σμάραγδος «*զմրուխտ*». *Ընդարձակ բացատրութիւնը տե՛ս* զմրուխտ։—*Աճ.*

*ՍՄԲԱԿ, ի–ա *հլ.* «*կճղակ, ձիու և ուրիշ անասունների ոտքի եղունգը*» *Ես. ե. 28. Եղեկ. իղ. 11, լբ. 2. Եզն. որից* սմբակաւոր *Մծբ. կամ* սկբակաւո՞ր *Եփր. վկ. արև.* սալասմբակ *Մագ.* սմբակակոխ *Խոր. ՅՀ. կթ.* սմբակատր *Վրդն. ղևտ.* միասմբակ *Նիւս. բն.* սմբակած «*սմբակակոխ եղած*» *Վստկ. 178.* լայնասմբակ (*չունի ԱՒ*) *Զքր. առակ. Բ. 24. գրուած է* սնպակ *Վրդն. առակ. 25,* սմբատակ «*սմբակ*» *Դամասկ.*։

=*Պհլ.* *sumbak «*սմբակ*» *ձևից փոխառնալ. Համմտ. պհլ.* sumb, sunb, *պրս.* سم sum, سمّ summ, سنب sunb, *քրդ.* sim, *աֆղան.* sum, swa, *օսս.* säft'äg, *զնդ.* 𐬯𐬀𐬐𐬀- safa-, *սանս.* शफ çaphá- «*սմբակ*»։ *Պհլ. *sumbak *ձևը թէև չէ աւանդուած, բայց նոյնն է հաստատում արաբ.* سنبك sunbak «*սմբակ*» (*նաև* sunbuk *քան Կամուս, Թրք. Թրգմ. Գ. էջ 95*)։—*Արիական ձևերը ծագում են հնխ.* k'apho- *բառից, որից նաև հբգ.* huof, *գերմ.* Huf, *հսաքս.* hôf, *անգլ.* hoof, *հոլլ.* hoof, *հհիւս.* hofr «*սմբակ*» (Kluge 225, Horn § 745): *Բառս բնիկ հայ լինելու պարագային պիտի ունենար *սափ ձևը։—Հիւբշ. 237*։

Böttich. Arica 73, 184 *առնս.* çapu, *գերմ.* huf, *լիթ.* szumpis, *հսլ.* kopuito «*եղունգ*», Müller SWAW *38, 578 ևն*

պհլ. պրս. և զնդ. ձևերի հետ։ Նոյնը Justi, Zendsp. 292 զնդ. safa ձևի տակ։ Lag. Beitr. bktr. Lex. 17 արաբ. sunbak: Lag. Arm. Stud. § 2010 մերժում է զնդ. և սանս. ձևերը և պահում միայն պրս. *sunba, արաբ. sunbak։ Հիւնք. պրս. սիւնպ։

Գիր.—Կայ միայն ամբակած Ակն. «ոտնակոխ եղած, տրորուած»։

*ՍՄԲՈՒԼ «անուշահոտ մի ծաղիկ. jacinthe, nardus» Գազիան. բժշ. Վատ. էջ 109. գրուած է նաև սմպուլ, սումբուլ, սմֆուլ, սնբուլ, սնֆուլ, զմբուլ։

=Պրս. سنبل sunbul «նարդոս ծաղիկը», որից նաև Թրք. سنبل süubül, زمبل zümbül, سمبل sümbül, քրդ. sunbul, simbel, sumbül, վրաց. სუმბული սումբուլի, ზუმბული զումբուլի, նյն. σουμπούλ, σουμβούλ ևն. ըստ Seidel, Մխ. հեր. § 252 նախնականն է արաբ. سنبلة sunbula, յգ. سنابل sanābil «հասկ», ինչպէս որ յն. էլ նոյն ծաղիկը կոչւում է νάρδου στάχυς, ναρδόσταχυς «նարդոսի հասկ»։—Հիւրշ. 277։

ՆՀԲ Թրք. զիմպիլ։ Lag. Arm. St. § 2011 պրս. sunbul, երբ. šiblet, արաբ. sunbulat, իբր բնիկ սեմական բառ։

Գիր.—Տրև. սմբուլ, Ախց. սիմբիլ, Պլ. զիմբիլ ևն, իբր նոր փոխառութիւն Թուրքերէնից։

ՍՄԲՈՒԿ «նաւակ». գիտէ միայն Rivola, որից առած պիտի լինի Քաջունի, հտ. Գ, էջ 220։

ՍՄԲՈՒԿ «պատինճան, ֆր. aubergine» ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 107 բ և ՀԲուս. § 2776 (իբր Նոր բժշկարաններից և դաւառականներից)։

=Իբր մեր երկրի համար օտար և նորամուտ բերք, պէտք է որ ունենայ օտար ծագում։ Ըստ իս արաբ. انب anab «պատինճան» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 75) բառն է, որ տուել է նախ հյ. *ամբուկ և յետոյ ա և ս տառերի նմանութիւնից շփոթուելով՝ սմբուկ։—Աճ.

ՀԲուս. արմատը դնում է սումբ, որից նուազական սմբուկ։ Սակայն ինչպէս դաւառական ձևերը, նոյնպէս և այս սումբ արմատը զուտ ենթադրութիւններ են։

*ՍՄՆԱԿ «անծանօթ մի ծաղիկ» Ագաթ. նաև Բժշ. ըստ Հայբուսակի՝ § 2779.—Ագաթ. հին տպ. ունի կամնակ, ինչպէս դնում են ՀՀԲ և ԱԲ։

=Պհլ. *sumnak ձևից՝ որ հաստատում է պրս. ډنمه sumna «անուշահոտ մի ծաղիկ, souchet» (Steinschneider WZKM 12, 98. չունի ԳԴ)։—Աճ.

ՍՄՆԵԼ «միսը կճմթել». ունի միայն ՓԲ՝ առանց վկայութեան։ Բառ. երեմ. էջ 287 ունի սմնել «ողրել», որի հետ նոյն է (երկաթագիր Մ և Տ տառերի շփոթմամբ) էջ 292 սռնեալ «ողրեալ». բառս մի անգամ էլ յիշուած է անդ՝ էջ 302 վսնեալ «ընտրեալ կամ սմնեալ» ձևով. սրանից երևում է որ ուղիղ ձևն է սմնել. բայց նշանակութիւնը մնում է անորոշ, որովհետև մէկ դրուած է «ընտրել» և մէկ էլ «ոզրել». որ զուտ նշանակում է «ոլորել (ճիւղ ևն)». այս իմաստը իրօք յարմար է ՓԲ-ի տուած նշանակութեան։

*ՍՄՊԱՏԱԿ (սեռ.-ի) «փորձաքար, տճկ. մէհէնկ թաշի» Բրս. գոհ. ուրիշ վկայութիւն չկայ։

=Պհլ. *sunbātak ձևից, որ աւանդուած չէ, բայց նոյնն են ենթադրում պրս. سنباده sunbāda կամ ساباد subāda «է տեսակ իմն քարի, զոր յեսան առնեն և ակնագործք փըշրեալ և մանրեալ՝ նովաւ ակունս տաշեն և յղկեն», փոխառութեամբ արաբ. سنباذج sunbāḏaǰ (կամ haǰar-ul-sunbāḏaǰ) «մի տեսակ քար է, որով սրի ժանգն են առնում, ածելի են սրում և առամներն են փայլեցնում» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 414 և 727), Թրք. sünpare, sämpara, յետին հայ տառադարձութեամբ (արաբերէնից և Թուրքերէնից) ռմկ. սնպատիճ, սունպաճիճ, սնփառա Բժշ., գւռ. զրմփառա, զրմփարա «աւազաթուղթ»։—Հիւրշ. 238։

Ուղիղ մեկնեց նախ Հիւրշ. Pers. Stud. էջ 177։

ՍՄՔԻԼ «քաշուիլ, ցամաքիլ, չորանալ». գործածական է արդի գաւառականներում,

որից ամբեցուցանել *«ցամաքեցնել»* Վստկ. *44, 135։*

ՆՀԲ ցամաքիլ *բառից աղաւաղեալ է կարծում։*

Սնաճիլ *տե՛ս* Սուն։

ՍՆԱՐ, ի *հլ. (Ոսկեդարում անեղական) «գլխի հատը, ծոծրակ, գլխի վերևը» ՍԳր. «անկողնի բարձ» Նղիշ. Ճառընտ. «սարի գլուխ» Ագաթ. որից* սնարնոց *«գլխի բարձ» Տիմոթ. կուղ. էջ 95.* սնսնար *«առանց բարձի» ԱԲ։*

Հիւնք. **ճնար** *կամ* **սրունճ** *բառից։* Scheftelowitz BB 28 (1904) 284 *հբգ.* hnol, *անգսք.* hnoll, *մբգ.* nol *«սնար, գլուխ, ծոծրակ» բառերի հետ՝ հնխ.* k'nəl- *ձևից։* Patrubány *ՀԱ 1908, 277 հնխ.* kē- *«սուր լինել» արմատից։—* Karst, *Յուշարձան 409 սոմեր.* zana, zanaru *«վեր, վերին»։*

ԳԻՒ.—Համշ. **սնարճ** *«բարձ», վն.* **սնար** *«յենարան. 2. յենուիլը, կոթնիլը».—ըստ Ամատ. Հայոց բառ ու բան 268 Սլմ.* **սնարճ** *«կարճ փայտ, որ չուանով կախում են սայլի ցուռկից և սայլի կանգնած ժամանակ իրրև նեցուկ դնում ցուռկի տակ. տճկ. տայաղ, տայագ» (որ է յենարան)։*

ՓՈԽ.—Հայ բոշ. **սնարճ** *«բարձ»։*

ՍՆԳԻԼ *«ձիու խրոխտարար փռնգալը, խրխընջալը» Վստկ.։*

ՆՀԲ «իբրու **սրնգել, սռնչել»**։

***ՍՆԳՈՅՐ**, ի–ա, ո *հլ. «հրեսը ներկելու կարմիր ներկ, շպար» Իմ ժգ. 14 (արձանի հրեսը ներկելու համար), Եզնկ. իգ. 40. Ոսկ. ես. երբ. 514. «շիկատակ բոյսը» Գաղիան. (վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 141 բ). որից* **սնգուրիլ** *«շպարուիլ» Մծբ.* **սնգոյրատակ** *«atropa belladonna L» (Տիրացուեան,* Contributo *§ 391). գրուած է նաև* **սնկոյր**։

=Փոխառեալ է իրան. անծանոթ մի ձևից. հմմտ. պրս. شنگار šangār, *արաբացեալ* شنجار šanǰār *«anchusa tinctoria, շիկատակ, շիկխարի, սնգոյրատակ», ըստ Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 925 «փշոտ մորթով մի բոյս է, որի արմատը խիստ կարմիր գոյն ունի և հենց որ ձեռք դիպչի, իսկոյն կարմիր կներկէ. սրանից պատրաստւում էր հին ժամանակ մի տեսակ ներկ, որով կանայք իրենց երեսն էին ներկում»։ Այս բոյսը պատկանում է շնխաղողի ընտանիքին. պրս.* sagangūr *նշանակում է «շնխաղող» (կազմուած* سگ sag *«շուն» +* انگور angūr *«խաղող» բառերից), որից կրճատմամբ կազմուած է ըստ իս *sangūr—սնգոյր։*

Նախ Lag. Arm. Stud. *§ 2012 տուաւ վերի մեկնութիւնը։ Էմին,* Династическій спис. *1884 (արտ.* Изслед. *էջ 186) կազմուած* **–ոյր** *մասնիկով։ Հիւրշ. 238 վերի նմանութիւնը կատարեալ չի գրտնում։ Հիւնք. պրս.* **նէնկեար, ժէնկեար** *«նոյն նշ.» և* **սէնկէր** *«կենդանի ինչ կարմրամորթ»։*

ԳԻՒ.—Շմ. **սուճգուր**, *որից և* **սուճգուրիլ** *«շպարուիլ»։*

ՓՈԽ.—Վրաց. **სინგური** *«киноварь»։*

***ՍՆԳՈՒՐ** *կամ* **ՍՆԳՆԳՈՒՐ** *«մի տեսակ ձուկ» ըստ ԱԲ, իսկ ըստ Նորայր, Բառ. ֆր. 1125ա «scinque, սողուն ինչ Արևելից՝ թիւնահալած և շարժող ափրոդիտականին (ըստ կարծեաց նախնեաց)».—Քաջունի, Հտ. Գ. 214 գրում է* **սաղանղուր** *և մեկնում է «ձուկն ինչ»։ Այս վերջին ձևը միջոց է տալիս մեզ այստեղ կցելու նաև* **սնղուր** *«թռչուն անստոյգ» (ըստ Ամատունի, Հայ. բառ ու բան 595) Տաղ. «Սնղուր բազայն երբ բարձրանայր, Ձիր շուքն ի ջուրն տեսնոյր, Գիտէր թէ հաւ էր կռուարար, իջնոյր խեղդէր ի ջուրն ի վայր»։*

=Արաբ. سقنقور saqanqūr *«ձուկն ինչ հանգոյն կովադիայի՝ որ կարծեն թէ յառաջագայի ի կոկորդիլոսէ և գոյացեալ արտադրի յաճախ ի ջուր գետոյն Նեղոսի ի սահմանս Եգիպտոսի, և այն՝ որ ի ջուրս գոյանայ, կոկորդիլոս լինի ասեն, և որ ի մէջ աւազոյ,* **սէգանգուր** *եղանի. և է ձուկն ինչ քանակութեամբ փոքր, որ և առաւել ո՛չ մեծանայ» (ԳԴ)։ Այս առասպելական կենդանու վրայ խօսած է նաև Գէորգ դպիր, Գիրք մեծագին և պատուական ականց, Պօլիս 1807, էջ 200, և համարում է «կենդանի իմն նման կովադիայի... զոր մինչ ուտիցեն, ոյժն մերձաւորութեան անզօրին այնպէս*

յաղթական առնէ, որ դադարիլ ոչ գիտէ»։ Այսպէս է ասում նաև Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 898 և աւելացնում է որ թէ՛ արուն և թէ էգը զոյգ ծննդական գործարաններ ունին։

Ուղիղ մեկնից Նորայր։

*ՍՆԳՐՈՒՆԳ կամ ՍՆԿՐՈՒՆԳ «Յէլլոն կըղզուց արտահանուող մի բոյր՝ յիշուած պըղպեղի հետ» Խոր. աշխ. 615, «կոճապղպեղ» Ամիրտ.։

=Փոխառեալ իրան. անծանօթ մի ձևից, որի հետ համմտ. սանս. çṛṅgavēra-, պալի siṅgivēra, պհլ. šangavīr, պրս. شنكليل šankalīl, նաև šangalīl, šangabīz, šangawīz, šangavīr, արաբ. زنجبيل zanǰabīl, ասոր. ܙܢܓܒܝܠ, zangabīl, ռճկ. zenǰefil, յն. ζιγγίβερις, լտ. zingiber, իտալ. zenzovero, ֆրանս. gingembre, մրգ. gingebere, ingewer, նրգ. Ingwer, հոլլ. gember, անգլ. ginger, հունգ. gyömbér, լհհ. imbier, չեխ. zazvor, ռուս. имбирь ևն, «կոճապղպեղ» իմաստով։ Այս բոլորի մայրն է համարւում սանս. çṛṅgavēra-, որ բուն նշանակում է «եղջիւրաձև» (կազմուած çṛṅga- «եղջիւր, բողկուկ»+vēra «մարմին» բառերից) (Boisacq 310, Berneker 259, Kluge 229)։ Ըստ Seidel § 268 բոյսիս նախահայրենիքը դեռ վէճի տակ է, բայց պէտք է լինի Սոնդեան արշիպելագոսը և կամ Հարաւային Արաբիա։—Հիւբշ. 238։

Պատկ. Խոր. աշխ. 81 սրբագրում է *սնդրուկզ և մեկնում պրս. سندروس sandarūs «resina flava», յն. σανδαράκη, կամ պահելով սնգրուեղ, տալիս է վերի մեկնութիւնը։

ՍՆԴԻԿ «ժիպակ, ռճկ. ջիվա» Նիւս. կազմ. Տաթև. ամ. 162. գրուած նաև սնտիկ Վստկ. 223։

Klaproth, Asia pol. էջ 104 պրս. zanda «կննդանի» բառի հետ։ Նշր «որպէս թէ ցնդելի»։ Böttich. Horae Aram. 19, Rudimenta 33 Թալմուդի אספדין a s p d ī k ձևի հետ, որ անստոյգ բառ է՝ ըստ Lag. Arm. Stud. § 2013։ Տէրվ. Altarm. 27 և Նախալ. 111 սանս. skanda «սնդիկ» հոմանիշի հետ՝ հնխ. skand «ցատկել, ելնել» արմատից։ Հիւնք. զանդիկ բառից։

Գ.Ի.—Սեբ. սնթիգ։

Փոխ.—Վրաց. ხინდიკი սինդիկի «սնդիկ»։

*ՍՆԴՄԱՅ, ի հլ. «կապ, կապանք». մէկ անգամ ունի Պտմ. աղէքս. 55 (ըստ Տաշեան, Ուսումն. Ստոյն-Կալիսթհենեայ, էջ 200, 236 համապատասխան յն. բառն է κόραξ, իսկ էջ 207 σύνδεσμος «կապ, կապանք»), գրծ. սնդմայիւք ձևով։

=Յն. σύνδεσμα «կապանք» բառից տատադարձուած Թարգմանութեան ժամանակ. ըստ այսմ մեր բառը ուղղելի է *սինդեսմայիւք և կամ Թարգմանչի գործածած ձևատադրում յն. բառը խաթարուած էր և Թարգմանիչը չկարողանալով ըմբռնել՝ պարզապէս տատադարձրել է սխալ ձևի տակ։

Նշր դնում է յն. σύνδεσμος «կապ» բառից. անշուշտ աւելի լաւ է դնել յգ. σύνδεσμα ձևը։

Սընդոն տե՛ս Սինդոն։

*ՍՆԴՈՒԿ, ի–ա հլ. «արկղ» Կղնկտ. Վրք. հց. Միխ. աս. Յայսմ. Վստկ. 41 (արևմտեան գրականում սնտուկ ձևով)։

=Արաբ. صندوق ṣandūq կամ ṣūnduq «արկղ, սնդուկ», որ իբրև քառատառ օտար ծագում պէտք է ունենայ։ Կարծում եմ որ փոխառեալ է յն. σανθήκη բառից, որ բուն նշանակում է «համադրութիւն (σαν-τίθημι «համադրել, միացնել, կազմաւորել» բայից), կարգաւորութիւն, պայման», բայց նաև «դագաղ». համմտ. Պլ. սնդուկ, որ թէ հայոց թէ թուրքաց մէջ ունի նաև «դագաղ» նշանակութիւնը։ Արաբներէնից են փոխառեալ նաև պրս. sändūq, Բրբ. sandəq, գնչ. senduki, նյն. σανδούκιον, σενδοῦκι, σάνδυξ, ռում. sînduk, լհհ. sundak, ֆիննն. sunduka, ռուս. сундукъ, վրաց. ზანდუკი զանդուկի ևն։—Հիւբշ. էջ 277։

Նշր ռմկ. սանարգ։ Lag. Arm. Stud. § 2014 արաբերէնից է դնում։

Գ.Ի.—Ախց. Կր. սնտուկ. Տփ. սնդուկ, զանդուկ (վերջինը վրացերէնից փոխառեալ), Ալշ. Երև. Հմշ. Մշ. Սեբ. Սչ. Տիգ. սնդուգ, Ննխ. Պլ. Ռ. սուենդուգ, Հճ. սունդուգ, Սվեդ. սնդէօգ, Զթ. սօնդօգ, սօնդոգ. նոր փոխա-

ռութեամբ թուրքերէնից՝ Ղրբ. Ջղ. սանդուղ, Շմ. սանդուխ:—Կայ նաև սնդխտել Խ. Վն. «պահել», որ թրք. sandəx (գւռ.) ձևից է ծագում:

***ՍՆԴՈՒՍ** «մետաքսէ կտոր, դիպակ. տճկ. ճանֆէս» Եզեկ. ժզ. 10. Գէ. ևս. Կղնկտ. հրտր. էմինի, էջ 138 (հրտր. Շահն. Ա. 292 սնդոյ ձևով, որ տե՛ս սինդոն բառի տակ):*

*=Պհլ. *sundus ձևից, որ աւանդուած չէ, բայց նոյնը հաստատում է պրս. سندس sundus «մետաքսեայ նուրբ կերպաս». սրանից են փոխառեալ յն. σενδές, արաբ. سندس sundus՝ նոյն նշ.—Հիւբշ. 238, 515:*

ՆՀԲ յգ. հյց. կարծելով սնդուս՝ ուղ. դնում է սնդու, որ և կցում է սնդոյ, սինդոն բառին. լծ. թրք. սաճաղ, արաբ. և պրս. սիւճաիւս:

ՍՆԴՐ *անստոյգ և ի հարկէ խաթարուած բառ. մէկ անգամ ունի Սուտ-Սեբ. հրտր. ՀԱ 1913, 34 «Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ, և զարդարէ զնա ի սնդր և ի վականս»:*

Մատ ЗВО 14, 88 դնում է ասոր. ܚܘܪܬܐ xnurtā «ուղարկինք», որ իմաստով անյարմար է տեղին: Թոփճեան, Politische und k'irchengesch. Armen. Berlin 1905, էջ 110 պրս. سندر sndr «խէժի նման մի սաթ»:

ՍՆԴՐԻ *կամ* **ՍՆՏՐԻ** *«մի տեսակ բոյս. tordylium secacul (ըստ Տիրացուեան, Contributo § 290 tordylium officinale L.)» Բժշ. ունի ՀԲուս. § 2784:*

***ՍՆԻԿ** «պէտք, կարիք, կարօտութիւն». մէկ անգամ ունի Անսիզք 75 (Ու ես ի սնիկ եմ ի յիմ դրամն [ի պէտս եմ]), 2. «պէտք, գործածութիւն», մէկ անգամ գործածում է Կոստ. երզն. 150 (Ով ունի կին շնացող կամ պոռնիկ, հանց որ ինք ի յայլոց այր երթայ սնիկ): Այս արմատից են ծագում հետևեալ ածանցները. սնկիլ կամ սնգիլ «պէտք ունենալ, կարօտիլ» Շնորհ. առակ. իզ (Թէ սրնկիս՝ վառես կրակ [գայլախազի համար է ասում]). Մխ. հեր. 148 (Այլ յառաջ ջրէ պատրաստ կենայ պարտ է՝ որ չանկի յայտ, զի մահօրն ի մօտ է). Կեղծ-Շապհ. 62 (Գնա և շինէ աւերած երկիրն քո և տամ ձեզ զամենայն պէտք և գանձք, որ և սնկիք դուք). Վստկ. 117, 135, 200 (Զամչի կուտ առնուս և պահես, և երբ սնկիս՝ դու մունֆախդէճով թրջեա. երբ սնկիս՝ կեր, անուշ լինի (դամոնի համար է ասում). Զի որ սնդի ի պառակիլ և ի հանգչիլ). Անսիզք 45, 93 (եւ թէ չսնկի որ զամէն հայրենեաւտանն ծախէ. Ով ոք որ զսա ունի՝ նա բնաւ ի յայլ դիրք չսնգի). սնկութիւն կամ սնգութիւն «պէտք, կարիք, պահանջ» Վստկ. 39, 158. Անսիզք 31, 33. Սմբ. դատ. 158. սնկող «կարօտութիւն քաշող» Վստկ. էջ 6:*

=Ասոր. ܨܢܩ səneg «զուրկ ու կարօտ լինել. պէտք ունենալ».)ܨܢܝܩܐ sənīqā «կարիք՝ պէտք ունեցող. կարօտ», և ܨܘܢܩܢܐ sūnqānā «պէտք, կարիք» (Brockelmann, Lex. syr. 231—2):—Ա.ճ.

ՆՀԲ ունենալով միայն Վստկ. էջ 135 վկայութիւնը, բառս մեկնում է «փորը պնդանալ, փխբ. նեղուիլ»: Այս նշանակութիւնը անշուշտ հետևցնում է նախ նրանից, որ յիշեալ վկայութիւնը դամոնի համար է ասուած (և դամոնը իբր լուծիչ կարող է գործածուիլ) և երկրորդ՝ թրք. səq-əntə բառի ձայնական նմանութիւնից: Բայց իրօք վաստակոց գիրքը բժշկական նպատակ չունի և պահենի պատուհանների մասին է խօսում այնտեղ. երկրորդ՝ թրք. səq-əntə «նեղութիւն» շատ պատահական նմանութիւն միայն ունի. և վերջապէս միւս վկայութիւնները և ածանցները բառիս նշանակութեան վրայ կասկած չեն թողնում: Ուղիղ իմաստով է հասկանում նախ Անսիզքի հրատարակիչը (Ալիշան) և յետոյ Նորայր (տե՛ս Կոստ. երզն. էջ 204): Seidel, Մխ. հեր. թարգմանում է (էջ 105) sïch quālen «նեղուիլ, չարչարուիլ» ըստ ՆՀԲ, որ սակայն ինքն էլ § 421 անտեղի է գտնում: Քաջունի, հտ. Գ. էջ 220 սնկութիւն դնում է «constipation փորի պնդութիւն»! Մեսրոպ եպս. հրտր. Կեղծ-Շապհ. 62 սնկիւ համարում է անհասկանալի բառ: Բառիս ընդարձակ բացատրութիւնը (ոչ սուտպարանութիւնը)

վերի ձևով տուաւ Աճառ. Հայ նոր բառեր հին մատ. Բ. 66։

Սնիք «պտուղ եփեալ կամ շաքարեալ». դիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 220։

Սնդուր տե՛ս Սնգուր, Սնգնգուր։

Սննիկոն տե՛ս Սիբննկոն։

*ՍՆՈՊԱՐ «գինձ, coriandrum». մէկ անգամ ունի Ոսկիփ. առնելով Իշոխ ատորուց. «Եղաւ ի սիրտն բնական ջերմութիւն ըստ կերպի սնոպարի գոյնն թուխ և կարմիր և խիտ և պինդ անյաղթելի»։

=Արաբ. սնբբար, սնէուբար «գինձ»։

Հիւս. § 2786 նոյն է կարծում սոնոպրի «փիճխ» բառի հետ։ Նորայր ՀԱ 1923, 160 մեկնում է վերի ձևով, բայց դժբախտաբար արաբ. բառը բնիկ այբուբենով կամ գիտական տառադարձութեամբ չէ նշանակած, որպէս զի կարելի լինէր ստուգել։

*ՍՆՊԱՏԻՃ տե՛ս Սմպատակ։

=Արաբ. سنباذج sunbāḍaǰ։—Աճ.

Պատկ. Драг. камня, էջ 73 դրաւ պրս. سنباده sunbāda (աւելի ընդարձակ տե՛ս անդ)։ Նոյն է նաև՝

*ՍՆՓԱՐԱ «փորձաքար, լոսիչ և արծնիչ քար» Բժշ. Տաթև. ձմ. կթ. (գրծ. սնփարով)։

=Թրք. سنبار sənpara, ռմկ. սըմփարա «աւազաթուղթ». աւելի ընդարձակ տե՛ս ամպատակ։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՍՆՔՆՈՏ «երբիւնոտ». յիշում է Տաթև. հարց. 371, իբր բացատրութիւն երմւնոտ բառի. նոյնպէս և սնմոնոտ «որբիւնոտ», յիշում է Բառ. երեմ. էջ 256 որբիւնոտ բառի բացատրութեան մէջ. նոյնը վրիպակով էջ 252 գրում է ոնմիւնոտ «ոնքռոնոտ». երկուսն էլ ցոյց են տալիս որ բառը գործածական էր ժամանակակից լեզուի մէջ։

*ՍՈՓ «պինդ, կարծր, հաստատուն» Անյ. հց. իմ. Յայտմ. որից սոբեալ «հաստատուա՞ծ» Վեցօր. 195 (Ոչ եթէ միայն ի լերինս մեծամեծս պարտիմք զարմանալ, որք բոլորեալն և սուրեալն ի բարձրաբերձ բարձրութիւն ամպոցն հաստանին). սոբաւոր «խիտ կամ կարծր մազերով» Մագ. Թղ. 127.—գրուած է նաև սուր, սոր և սար։ Երկուսը միասին գործածուած է Յայտմ. սեպ. 23. «Այնքան սաթ և սոփ է կճղակն՝ որ աննման է» (ընձուղտի համար է ասում)։

=Պհլ. *saft ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց նոյնն է հաստատում պրս. سفت saft «հաստատուն, ամուր, հոծ, խիտ». վերջին նշանակութեան բոլորովին համապատասխան է գալիս հյ. սոբաւոր։ Իրանեան ձևի դէմ հայերէն սպասելի էր *սաւբ> *սօբ և ըստ իս այս էր նաև բառիս հնագոյն ձևը, որ յետին գրիչների մօտ աղաւաղուելով դարձաւ սոբ։ Բնիկ ձևի հետքերը պահում են դեռ սուր և սար գրչութիւնները։—Աճ.

ՆՀԲ լծ. իտալ. sodo, լտ. solidus «հաստատուն»։

ՍՈՓ, ի հլ? «ուժեղ մրրկաշունչ քամի». նորագիւտ և անկախ չգործածուած բառ, որ անուղղակի կերպով ակնարկում է միայն Օրբել. հրտր. Էմինի, էջ 6, Սոբի գաւառի անուան ստուգաբանութիւնը տալ ուզելով. «Սոբից գաւառ, որ սակս հանապազորդեան բքոց և զառնաշունչ օդոյն կոչեցաւ Սոբք»։

ՆՀԲ առանց մտադիր լինելու ակնարկին՝ սոբ կցում է նախորդ «պինդ, կարծր» բառին, որ սրա հետ կապ չունի։ Համմտ՝.

Գիւմ.—ՆԲ. սոբ «զառնաշունչ արևելեան քամի Սևանի վրայ, որի ժամանակ նաւագնացութիւնը անկարելի է դառնում և գրիթէ ժայռերն են տեղահան լինում» (Հովիւ 1906, 116, նաև Ազգ. հանդ. ժէ 54)։

ՍՈՓՈՓ «ամփոփ». մէկ անգամ ունի Վասակ. 199՝ որ նկարագրելով լաւ ձիու արտաքինը, ասում է. «Զուքն (ամորձեաց պարկը) սոփոփ և հաւկիթն մեծ և պինդ, և հաւկիթին բնաջիղքն հաստ և ուժով»։ Սրա բայական ձևն է *սոբոքել «ամփոփել», որ հնից աւանդուած չէ, բայց միջին ձայնաւորի անկումով տուած է մհյ. սոբքել «ամփոփել, վերև քաշել, հանդրիճել» Վասակ. 20 (Զներքին շուրթն կալ և ձիգ ի դուրս քարշեա և պահ մի ի պինտ կալ և փրթո՛. եթէ շոյտ քարշէ ի վեր զշուրթն և սոբքէ յիւր տեղն...)։ Շատ սովորական է նոր գաւառականներում։ Ունինք նաև սոբոբ՝ անձի համար

իբրև ածական գործածուած. «Երկու սև արք երկայնք և սոխոիք և ահաւորք» (սաստանայի համար ասուած) Վրք. և վկ. Ա. 648։

ՆշՒ առաջին վկայութեան մէջ ձուկն բառի տեղ ունենալով ձուրն, իսօքը մնում է անիմաստ. և այսպէս անյայտ նշանակութեամբ սոխոք միացնում է սոխ «պինդ» բառին։ Առանձին է դնում սոխոել։

ԳԻՒ.—Գնձ. սօ՛քօք, Խաչ. սօքօքիկ «լաւ ու կոկիկ հագուած, շիք». բայական ձևով Պլ. սօքդել, Ասլ. սէօ*դէ՛լ, Սեբ. սօղդել, Զթ. սքվիլ, Արբ. սօփդել «թևերը վեր քաշել, հանգրիճել» (նաև Պլ. «հաւը փետրատել», Երզ. Զն. Պլ. «կողոպտել»), որից սոքոուիլ, սոքվըռիլ, սոքոուռիլ, սոքոըռոել։

ՓՈԽ.—Կապ ունի՞ վրաց. ხოხო սոքի «գեղեցիկ քիթ» (Ջուբինով², 1189).—ևթէ այո, ներկայացնում է մեր բառի պարզ արմատը։

*ՍՈԽ, ո հլ. (յեռնարար ի հլ.) «սոխ» Թուց ժա. 5, Ոսկ. մ. ա. 8, Կոչ. էջ 97. որից մկնսոխ կամ մկնասոխ Վսակ. էջ 120։

=ՊՀլ. *sōx ձևից, որ աւանդուած չէ. սակայն նոյնն է հաստատում պրս. خوس sōx «սոխ». բառիս ծագումն ու ստուգաբանութիւնը յայտնի չէ։—Հիւբշ. 238։

ՆշՒ յիշում է պրս. սուխ, Թրք. սօղան և վրաց. խախու հոմանիշները։ Պրս. ձևն ունի նաև Lag. Beitr. bktr. Lex. 21։ Մորթմանն ZDMG 24, 80 ևն Թրք. soyan «սոխ» բառի հետ, ինչպէս ունի նաև Դաշնճեան, Արև. մամ. 1907, 934—5. իսկ Յուշարձան 325 հայերէնից՝ հին ժամանակ կատարուած փոխառութիւն է համարում։ Patrubány ՀԱ. 1908, 213 հնխ. ak'ēo «սուր լինել» կամ k'ɐ̯o «ուռչիլ» արմատից։ Кипшидзе, Грам. мингр. 1914, էջ XX սոխ=սոխի յաբեթականից համարում է անցած պարսկերէնին (Մառի կարծիքն է)։

ԳԻՒ.—Աղշ. Հճ. Մշ. Զղ. Սլմ. Վն. սոխ, Ախց. Երև. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սչ. սօխ, Մկ. Տիգ. Տփ. սուխ, Ակն. Հմշ. Սեբ. սէօխ. Մրզ. սուէխ, սէօխ, Զթ. Սվեդ. սիխ, Ասլ. սէօ՛խ, Ագլ. սուճ։ Նոր բառեր են սոխած, սոխաջուր, սոխեպլուզ, սոխնոց, սոխուկ, սոխացեցկոց։ (Նկատելի է որ այս շատ հասարակ բառը, որ մինչև անգամ Պլ. և Ննխ. պահուած է, անհետ կորած է Ղրբ. և Շմ., փոխանակուելով Ղրբ. Թրք. սօ՛ղան և Շմ. կուծու՛ (<կծու) բառերով։ Սրա պատճառը ըստ իս պէտք է վերագրել euphémisme-ի.—արևելեան Թրք. sóx (=օսմ. sóq «կոխիր») առիթ է տուել անպարկեշտ համարելու բառիս գործածութիւնը. համմտ. տաճկական հանրածանօթ առածը՝ բառիս վերաբերմամբ. Ermeninin dilini seveyim, ki soyana sox derler, sarməsaya soxdur—Հայի լեզուն սիրեմ, որ soyan-ին սոխ (=Թրք. «կոխիր») է ասում, sarməsay-ին («սխտոր») soxdur (=Թրք. «կոխել տուր»)։

ՓՈԽ.—Թրք. զւռ. Նւդ. سوخاریج soxariǰ «սոխած» (Յուշարձան 329), Բալուի Թրք. զւռ. soxraǰ «սոխրած». տեղիս հայերը գործ են ածում ոչ թէ սոխրած, այլ խշիկ (Հաղորդեց Յովհ. Մանուելեան)։

ՍՈԽԱԿ (ի—ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.-ի) «ծիրանեակ Թռչունը, լտ. purpurio» Օր. ժդ. 17. Ղեւտ. ժա. 18. «բըլբուլ» Վեցօր. 172. Ոսկ. փիլիպ. (նոր գրականում վերջին նշանակութեամբ միայն).—գրուած է սողակ (Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկտպետ. 1788, էջ 111)։

Lag. Beitr. bktr. Lex. էջ 21 պրս. *sōxa ձևից՝ իբր պրս. surx, զնդ. suxra «կարմիր» բառից։ (Հիւբշ. 238 յիշում է այս մեկնութիւնը և մերժում. թէև ընդունում է որ հայերէն բառը իրանական փոխառութիւն պէտք է լինի)։ Մառ ЗВО 5, 317 պարզապէս զնդ. saŋ̃h «ասել» բառի հետ. իսկ Грам. др.-арм. 29 աւելի զարգացնելով իր ասածը, հին ձևը համարում է *սանխակ, որ կցում է զնդ. saŋ̃h «ասել» բային։ Patrubány ՀԱ. 1908, 153 խօսիմ բայից՝ իբր խօսակ։—Հիւնք. պրս. سخن suxan «խօսք» բառից, իբր հյ. խօսնակ։ Այսպէս նաև Կուրտիկեան, Արևելք 1899 նոյ. 18։

ԳԻՒ.—Ախց. սօխակ։

ՍՈԿԱՍ *«մի տեսակ բոյս. ֆր.* laiteron». *ունի միայն Քաջունի, հմ. Գ. էջ 220։*

***ՍՈԿՔՈՎԹ.** *անծանօթ նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Սասն. 56, 58. Քանզի որ երևեցաւ նմա ի սոկքովթ թաթ ձևոին գրել ի սալ սրտին՝ որպէս Բաղդասարայ, ո՛չ հեռացաւ. Գուցէ գիեցից ընթանալ ընդ անկոխս սոկքովթ (լուսանցքում մեկնուած են «խորան, տաղաւար»)։*

=*Եբր.* סכות sikkūt, *բատ ոմանց* sokkōt. *«վրան կամ տաղաւար, որ իսրայելացիք անապատում իրենց հետ էին կրում»։—Աճ.*

ՍՈՂ *«փորի վրայ քսուելով երթալը» Փարպ. «սողացող» Պոմ. աղէքս. 7 որից* սողալ *Ոսկ. մ. բ. 27, ունի գործածական՝* սողիլ *«փորի վրայ երթալ, կամացուկ ներս մտնել, սպրդիլ, սողոսկիլ» ՍԳր. Սեբեր. Ոսկ. մ. դ. 27. «երեսի վրայ ընկած աղաչել» Գ. մկ. ա. 10.* սողեցուցանել *Կոչ.* սողուն *«զեռուն» ՍԳր. Կոչ.* սողնական *«սողացող» Անան. պետր.* սողնական ախտ *«քաղցկեղ» Փիլ. ժ. բան.* սողնակ *«սողուն» Վանակ. յոբ. «նիզ, պարզունակ» Վրք. հց. բ. 189. Ոսկիփ. Յայտմ. փետ. 14.* գետնասողութիւն *Ոսկ. բ. կոր.* դիւրասողութիւն *Երզն. քեր.—*սողալ *նշանակում է նաև «կաղալ» Ոսկ. մթթ. 743, որից* սողուն *«կաղ» Կոչ. 388. Վրք. հց. ա. 218 (Հմմտ. ՀԱ. 1910, 369 բ), «ոտքերը բռնուած անդամալոյծ» Շիր. քրոն. 72։ Այս արմատից աճած ձևեր են՝* ՍՈՂՆ, *որ գտնւում է միայն* սողնագնաց *«հողի երեսից իբր սողալով գնացող, երեսկունկ մեծացող (բոյս)» Վեցօր. 96,* սողնական *«սողալով եղած» Ոսկիփ. բառերի մէջ.—*ՍՈՂՄ, *որ գտնւում է միայն* սողմիլ *«սողիլ, սողոսկիլ, սպրդիլ, կամացուկ ներս մտնել» Ոսկ. մ. բ. 12, էջ 557 բառի մէջ. «Եւ տես զիարդ զամենայն զարիս թողեալ և զայն ևեթ գնէ՝ գեռ առժամայն սողմեալ մտեալ արծարծէր». (Վարդանեան ՀԱ. 1921, 604 ուղղում է պարզապէս* սողեալ մտեալ, *քանի որ* սողմիլ *ձևը բնաւ ուրիշ տեղ գործածուած չէ մեր գրականութեան մէջ).—*ՍՈՂՈՍԿ, *որից ծագում են* սողոսկիլ *«սահիլ, ընկնել, ներս սպրդիլ» Նիւս. կազմ. Շիր. քրոն. իդն. Երզն. մթթ.* սողոսկուտ *«լպիրծ» Մագ. թղ. 145. Երզն. քեր.* սողոսկումն *Փիլ.* սողոսկաճիմ *Անան. եկեղ.* սողոսկիչ *Լմբ. առակ.* դիւրասողոսկելի *Մաքս. եկեղ. նոյն են նաև* սողուսկ *«լպրծուն» Փիլ. լին. ա. 41, կրճատ* սողոսկել *Երզն. մթթ.։*

Հներից Տաթև. Հարց. 216 սողուն *մեկնում է «կա՛մ զի* սողալով *գնան կամ սղացեալ են ոտիւք կամ զի* սուղ *են ձայնիւ»։* Sehröder, Thesaur. 45 սողալ *դնում է սեմ.* zxl (>*եբր.* זחל zxl, *արաբ.* زحل zaḥl, *ասոր.* ܙܚܠ zxlā) *«սողալ, սահիլ, հոսիլ» արմատից փոխառեալ։ Ինճիճեան, Հնախ. Գ. 22* սողուն *համարում է* ս *բնաձայնից։ Նշբ* սողուն *լծ. թրք.* սողուլեան *«բռնուած»։ Տէրվ.* Altarm. 98—99 *և Նախալ. 110 հնխ.* sar, sarp *արմատից է հանում՝ հյ.* սողալ, սողոսկել, սողոպել, սաճիլ, սուրճալ *են, սանս.* sar, sarp *«սողալ»,* sarpa *«օձ», յն.* ἕρπω *«սողալ»,* ὁρπετόν *«սողուն», լտ.* serpere *«սողալ»,* serpens *«օձ»։ Հիւնք.* սողալ *և* սողուն *հանում է* ձող *բառից։* Patrubány SA 1, 196 *յն.* κόλαξ *«շողոքորթ»,* κολακεύω *«շողոքորթիլ» բառերին ցեղակից։ Գազանճեան, Տարեց. Պատիկեան 1905, 125 և Արև. մամ. 1907, 934—5* սողալ=*տճկ.* սիւրմէք *«քշել»,* սիւրիւնմէք *«սողալ»։* Karst, *Յուշարձան 426* սողուն=*թրք.* yəlan *«օձ»։* Petersson KZ 47, 256 *սանս.* tsárati *լիթ.* seléti, *զնդ.* sravant. *«սահիլ, սպրդիլ» բառերի հետ, հնխ.* t-sol- *արմատից։ Կրկնում է նոյնը* Pokorny 2, 505 *հնխ.* sel- *«սահիլ, սողալ» արմատ տակ, որ* ad- *«դէպի» նախդիրով առել է* d-sel-, *յետոյ* t-sel- *և* ts *ձայնախմբի միացմամբ հյ.* սողալ։ *Իր մեկնութիւնը մերժում է* Petersson, Ar. u. Arm. Stud. 84 *և այժմ էլ համեմատում է լիթ.* szülỹs *«քառատրուի ընթացք», լիթթ.* sūlis *«քայլ», մրգ.* schel *«ցատկռտուղ» բառերի հետ։*

Գիմ.—Ջղ. սողալ, *Մշ.* սողալ, սօղալ, *Ախց. Երև. Ալշ. եբր. Կր. Մկ. Ննխ. Պլ. Սեբ. Սլմ. Վն. Տփ.* սօղալ, *Տիգ.* սօղալ, *Ասլ.* սէօ-

ղալ, *Սվեդ.* սուղիլ, *Ջթ.* սուղօլ, սուղոլ, *Մրղ.* սօղղալ, զօղղալ: *Նոյն արմատից են նաև* սող լինել *Ղզ. «սահիլ»*, սող տալ *Ղզ. «սողալ»*, սողան *Վն. «սողացող (անասուն)»*, սողսողիկ *Վն. «մողէս»*, *Գոր. Ղրբ.* փուռուսօղ տալ *«փորի վրայ սողալ»=Շմ.* փօռասօխտ, *որ ձևացած է գւռ.* փռռասող *և* փռռասոռ *բառերի խաչաձևմամբ. վերջապէս Թրքական ձևով Հճ.* սօղուլմիշ նօլ *«սողալ»:*

ՓՈԽ.—Սողուն *բառը անցած է Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ. Հէմի չարփէ հայվանէդ արտէ ու ճանավարան ու սողունան (Ամենայն չորքոտանիք երկրի և գազանք և սողունք) Գծ. ժ. 12, ժա. 6:*—Պատահական նմանութիւն ունի Կազանի *Թթր.* شوغالاق šoγalaq *«սահուն»:*

ՍՈՂԱԿԱՆ *«դիւթութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 288:*

*ՍՈՂԷՆ *«խողովակ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կնիք. հաւ. 108. «Ո՛չ բղխմամբ սերմամբ՝ բաւ օրինակի ամուսնութեան, այլ հանգուցեալ ի Մարիամ զօրութեանն... ո՛չ որպէս ընդ սողէն անցեալ, որպէս Վաղենտիանոսք և Մայդանացիք և Մարկիոն հայհոյեին». Նշանակութեան համար հմմտ. Ոսկ. մտթ. դ, էջ 48. «Որք ասեն եթէ իբրև ընդ ցնցուղ ինչ էանց Քրիստոս»:*

=*Յն.* σωλήν *«խողովակ, անցք»:*—Աճ. *Նորագիւտ բառիս նշանակութիւնը ճշտեց Ա. Զամինեան (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 101): Յունարէնի համեմատութիւնը վերջնականապէս հաստատում է այն:*

ՍՈՂԻԿ *«զուիրակ». ունի միայն ՓԲ. չգիտէ ՀԲուս.:*

—ՍՈՂԿ *Տե՛ս Սող:*

—ՍՈՂՄ *տե՛ս Սող:*

ՍՈՂՈՅ *«ծառ ինչ». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 220:*

—ՍՈՂՈՍԿ *տե՛ս Սող:*

ՍՈՂՈՓ *«չոր կամ սահո՞ւն». Նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վստկ. էջ 222. Մաղն ի չափն թանձր և սողոփ (լաւ տեսակի շան համար է ասում):*

ՍՈՃԻ *«վայրի պիստակենի, pinus» Արիստ. աշխ. Մագ. թղ. 221. որ և շոճ Ագաթ. շոճի Նոնն. էջ 81. Ածաբ. կարկտ. և կիպր. Պղատ. օրին. 118. Պտմ. վր.*—շոճի ձևի մէջ շ ծագած է նախաւտր ս-ից՝ յաջորդ ճ-ի ազդեցութեամբ. հմմտ. աստուճ>աշտուճ, աստիճան>աշտիճան, *պատսաճ>պատշաճ, և մինչև անգամ գւռ. սուջուխ>շուջուխ:

Pictet *1, 233 ռուս.* сосна *ձևի հետ պրս.* sōxtan *«այրել» բառի մօտ;* Lag. Beitr. bktr, Lex. *21* çuč *արմատից, իբրև ընդ.* saočya *«այրելի»: Վերջին մեկնութիւնը Հիւբշ. 238 յիշում է ու մերժում:* Patrubány *ՀԱ 1908, 246 հնխ.* k'eyo- *«ուշիլ» արմատից; Պատահական նմանութիւն ունի պրս.* ساج sāj *«հրենոսի նման հնդկական կարծր մի փայտ»: Բայց թուի թէ մի կապ կայ* սոճի, փիճի, նոճի *եռհակ ծառանունների* –ճի *վերջաւորութեան մէջ:*

ԳԻՒՐ.—*Խոջ.* շօջի:

ՓՈԽ.—*Վրաց. իմերել. օսս.* սոճի՝ *նոյն նշանակութեամբ:*

ՍՈՄ *«փորձ». ունի միայն Բառ. երեմ. էջ 288:*

*ՍՈՄԱՐ *«մի տեսակ չափ է» Դրնդ. 36. Մէկ սոմար ցորենն, որ է չորս գրիւ. նոյն, էջ 159՝ Երեսուն սոմար, որ տեղացս չորս քիլան է:*

=*Վրաց.* ხომარი სոմարի *«6 փութ առնող չափ (ցորենի ևն)»:*—Աճ.

ԳԻՒՐ.—*Երև.* սօմար:

ՍՈՑՉ *«խորը մտնել, ծածկուիլ» Շիր. «գետնի տակ ծակ. որչ» Փիլ. լին. որից* սուզանել *«խորն իջնել, ընկղմիլ» Առակ. իզ. 26. Ագաթ.* սուզել *Խոր. Նար. Արծր.* սուզական *Խոր. աշխ. Գնձ.* ճարտարասոյզ *Սփր. թգ. 418.* ծովասոյզ *Փարպ. Վրդն. պտմ.* ճշմարտասոյզ *Սփր. թգ.* ջրասոյզ *Կղնկաս.* ձիւնասոյզ *Ագաթ.* որջասոյզ *Մագ.* իրաւասոյզ *Մծբ.* խորասոյզ *Սփր. ծն.* աճսուզան *Ճառընտ.* սուզակ, սուզանաւ *(նոր բառեր) ևն:*

R. Ellis, The sources of the Etrusk. *էջ 68 հտրուսկ.* suθi *«շիրիմ»=հյ.* սոյզ =*վիշ.* cudd «condere *կառուցել (շիրիմ ևն)»: Հիւնք.* ցուցանել *բայից,*

Bugge, Etr. u. Arm. 79 և KZ *32, 38* հետուպ. suθi, s'usi «շիրիմ» բառի հետ՝ յն. κεύθω «ծածկել, պահել»։ Յոյն ձևի հետ համեմատութիւնը տե՛ս և Pedersen KZ 38, 381, որի վրայ Liden, Arm. St. *122—3* և Meillet BSL № 79, էջ *5*, ուր բոլորովին անճիշտ է համարւում այս համեմատութիւնը։ Պատահական նմանութիւն ունի թրք. süz-mek «քամուիլ»։

ՓՈԽ.—Փառնակ, Անահիտ 1906, 233 մեղանից է դնում ալբան. zus «սուզանիլ»։

ՍՈՅԷ «պսակ». ունի միայն Բառ. երեմ. էջ *288*։

ՍՈՅԼ «սուլել, շվվացնելը». արմատ, որ հների մօտ գործածուած չէ, բայց ընդունուած է նոր գրականում. որից **սուլել** (գրուած նաև սուիլել, սուղղել, սղալ) «շվվացնել» *Փիլ. 34. իմ. Սարգ. Գէ. Ես.* **սլել** *Մագ.* սուլիչ *Լմբ. առ.* սուլումն կամ սուղումն *Պիտ. փիլ. Մագ. Վրդն. ծն.—սրա կրկնակն է* սղալ, *որ տե՛ս* **սղալ**։

Böttich. Arica 84, 408 և Lag. Urgesch. *1007 պրս.* سفلیدن siflīdan «սուլել»։ *Հիւբշ. 239 դժուար է գտնում այս մեկնութիւնը։ Հիւնք. հյ.* **սրինգ** *բառից, ինչպէս որ յն.* συρίζω «սուլիկ» *ծագում է* σῦριγξ «սրինգ» *բառից։* Karst, *Յուշարձան 424 թթր.* yil, sil «քամի, շունչ, շաւակել» *բառի հետ։ Պատահական նմանութիւն ունին լտ.* sibilare, *գւտ. լտ.* sifilare, *որից ֆրանս.* siffler «սուլիկ», *վրաց.* **ხვიელი სიվრცი** «սոյլ, շաչիւն (օձի, նետի)»։ Petersson, KZ 47, 255 *սանս.* çūt-kārá «սոյլ», çv-ásiti «շնչել, փչել», *լիթ.* šv-ĩpti «շրթունքներով սուլել», *շվ.* hvissla, *անգսք.* whistlian «սուլել» *բառերի հետ։ Կրկնում է* Pokorny *1, 475*, պարզ արմատը դնելով *հնխ.* k'u-, k'eu- «սուլել»։

ԳԻՒ.—Կրկնաբար ունինք **սլվլանք** «սոյլ, սուլումն, sibilatio» (*Ներսէսովիչ, Բառ. լտ-հյ. 494 ա*), **սլվլումն** «սոյլ» (*Վարդան Յունանեան, Քերթածութիւն 1671, էջ 332, յիշուած իբր ոմկ. բառ*), **սլվլել** *Սվեդ. Ջթ.* «սուլել», *Համշ.* «սուրուրի կամ այլ թռչունի սուլելը», **սլվլուկ** *Սվեդ.* «սրինգ» և *յատկապէս՝ Վն.* **սուլսուլել** «սուլէլը»։

+**ՍՈՅՆ** (*Հոլովւում է* **սոյին, սմին, սովին** *կամ* **սովիմբ, սոֆին, սոցին, սոցուն** *կամ* **սոցուն, սոֆիմբ, սոֆումբ** *կամ* **սովիմբ**) «նոյն այս, էլի այս» *Ես. քր. Խոր. Եղիշ.* որից **սոյնպէս** *Մագ.* **սոյն օրին** «այսօր իսկ» *Հռութ. գ. 18.* **սոյն օրինակ** *Գ. մկ. ը. 24. Ես. քր. և պատմ. Ագաթ. Բուզ.* **զսոյն ինեւսոյն** *Նիւս. բն. Դիոն. ածայ.*։

=*Բնիկ հայ բառ. կազմուած է* **-ին** *մասնիկով՝ սա դերանունից, որ այստեղ երևան է գալիս իր նախնական* **սո-**<*հնխ.* k'o- *ձևով. կազմութեան և գործածութեան մասին տե՛ս ինչ որ ասուած է* **դոյն** *բառի տակ։*

Բառիս ընդարձակ քննութիւնը տե՛ս Meillet MSL 10, *241—271, յատկապէս էջ 257—8,* Pedersen, *Հայ. ցուց. դեր.*։

ՍՈՅՐ «արագ վազելը». արմատ առանձին անգործածական, որից **սուրալ** կամ **սուրճալ** «վազել, սլանալ» *Եզն. Խոր. ա. 10. Փիլ. լիւս. 152* (**սուրճալ** *ձևը թուի թէ ունի նորապիւտ բ. մնաց. իգ, 12, իսկ* **սուրճանալ** *Ոսկ. փիլ. էջ 482*). **արշաւասոյր** *Ագաթ. 34. կթ.* **գալտասոյր** «ծածուկ ներս սպրդող» *Դևոնդ.*

ՆՀԲ լծ. թրք. **սիւրսալ, սէյիրմէք**, *լտ.* curro, *յն.* τρέχω։ *Տէրվիշ. տե՛ս* **սղալ**։ *Հիւնք.* **սուր** *բառից։ Թիրեաքեան, Աբիսահայ բռ. 334 դնդ.* sri «յառաջանալ, թափանցել»։ *Պատահական նմանութիւն ունին արաբ.* سرع sar', سرعت sur'at «արագ ընթանալ», *վրաց.* **სრიალი** **սրիալի** «նետի, դնդակի, մարդու շաչելով թռչելը, յարձակիլը»։

ԳԻՒ.—Ողմ. (ծծկ.) **սուրալ** «փախչիլ»։

ՍՈՅՔ «լոյսք». ունի միայն Բառ. երեմ. էջ *288*։

ՍՈՆԹ «կրօնապէս բաժանեալ, հերձեալ». *իբր Սաոյ գւտ. բառ յիշում է Մխ. ապար. մեկնելու համար* **Սոնթ** *ցեղանունը. «Ոմանք կոչին* **Սոնթ**՝ *բան Սաացւոց կոչելոյն և բարբառոյն, որ ասի բաժանեալք կամ թափնալք»։*

Ըստ Ադոնց ՀԱ. 1912, 160 և 270 **Սոնթը** *գնչունների մի ցեղ էր՝ հաստատուած Հայաստանում։ Սա* Sinte *բառն է, ո-*

բով գնչուները անուանում են իրենց. ծագում է հնդկական Sindi *ցեղանունից։*

***ՍՈՆԻՃ** «արջնդեղ, լտ.* nigella sativa L, *ֆր.* gerzeau *կամ* nielle, *տճկ. չէօրէկ օթի» Դադիան. Գէ. ևս. Բժշ. Վստկ. 223. որ և* շոնիզ *(գրուած* սոնի՛ր՝ *Վստկ. 219)։*

=*Պհլ.* *sōnīč *ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց համմտ. պրս.* سونیز sōnīz *կամ* سنیز sunīz *«արջնդեղ», սանս.* çaṇiǰa *«սև պղպեղ», և պրս. ձևից փոխառութեամբ՝ քրդ.* šuniz, *արաբ.* شونیز šūnīz *«արջնդեղ». վերջին ձևից է հյ.* շոնիզ։—*Հիւբշ. 273։*

Նախ ՆՀԲ յիշում է պրս. սիւնիզ։ Lag. Arm. Stud. § 1707 *աւելացնում է նաև արաբ. ձևը։*

ԳԻՒ.—Մշ. սոնիջ, *Երև.* սէվասօնիճ, *Կր.* սէվսօնիճ, *Վն.* սեվսունիճ, *Ագլ.* սէվսո՛նիճ, սէվշո՛նիճ։

ՓՈԽ.—Վրաց. სონჯი სոնջի, სოლონჯი սոլինջի *(<*սոնիջի>*սոնինջի),* სოინჯი սոինջի *«черныха, nigella» հթէ միջին պահլաւերէնից չէ փոխառեալ, այն դէպքում հայերէնից է։*

***ՍՈՆՈՊՐԻ** *(գրուած նաև* սնովպար, սինոպրի, սոնոպար, սնօպար, սօնապարենի*) «փիճի ծառը,* pinus *Օրբել, հրտր. Էմինի, էջ 304 (սնոպար մայրափայտ). Վստկ. 42, 58, 107. Լծ. փիլ.—բառս սխալ գրչութեամբ եղել է* նոպարենի *(ՀԲուս. § 2215), որ 20 տարի առաջ ուղղել էի* սնոպարենի, *նոյնը յետոյ Նորայր ՀԱ 1923, 160։*

=*Արաբ.* صنوبر ṣanaubar *«փիճի», արդի պրս.* sinoubär *«եղևին»։—Հիւբշ. էջ 277։*

ՆՀԲ ռմկ. սէնէվպէր, սէնէվիր։ *Պատկ.* Истор. Монгол. *էջ 43 արաբերէնից։ Նոյնը նաև* Lag. Arm. Stud. § 2020։

ՍՈՆՔ *«առուտր, յայր, գէր, քաւ» Նչ. քեր. «երեք երկար վանկերից բաղկացած բառ» Թր. քեր. որից* սոնքանալ *«դիրանալ, քաւանալ, առուտրանալ» Ոսկ. ա. թես. թ. Ա. Կոր. ժգ. Եւագր. Փարպ.* սոնքաձև *«առնկուած, հասած» (Թութակի կտուցի համար է ասուած) Կղնկտ. հրտ. Շահն. Ա. 322.—գրուած է* սունք *«molossus, pes carm». (Cl. Galano, Gram. et log. inst. Romae 1645, էջ 24բ)։*

Տէրվ. Altarm. 4 *և Նախալ. 73* f *մասնիկով* սոն *արմատից. համմտ. սանս.* çūna *«ուռած, փքած»,* çū *«ուռիլ»,* çūnya *«պարապ», յն.* κενός *«պարապ», հյ. սին ևն, իբր հնխ.* çu, çvan *արմատից։ Հիւնք,* սունկ *կամ* սպունգ *բառից։*

***ՍՈՆՔՈՆ** «մի տեսակ բոյս. լտ.* cicerbita, sonchus, *տճկ. պազլէթի ճէհուտիէ». ունի միայն ՓԲ։ (ՆՀԲ* սունկ *բառի տակ յիշում է* սոկաս «sonchus» Դադիան.)։

=*Լտ.* sonchus *կամ յն.* σόγχος *հոմանիշից։*

ՍՈՊԱԼ *«ցնծալ». ունի միայն ՓԲ։*

ՍՈՊԱԲԱՆ *«վիպաբան. պատմագիր». ունի միայն Բառ. երեմ. էջ 288։*

[**ՍՈՊԵԼ** *«համարձակիլ, յանդգնիլ». անսառյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկ. ևս. էջ 264. «Որք գառագղի և կարկնի և սկտեղ և լկան և այլ ինչ այսպիսեաց սոպեն նմանեցուցանել ղերկիր»։ Կարելի էր կարդալ նաև այսպիսեացս ոպեն, որով բառը կլինի ոպել։— Այս ընթերցուածը ունի ՆՀԲ. բայց տպագրում այժմ գտնում ենք «...այլ ինչ այսպիսեաց սովոր են նմանեցուցանել» (տե՛ս լիկն բառի տակ)։ Ըստ այսմ ԱՐ ջնջած է այս բառը։*]

ՍՈՊԻ *«բիրտ, կոպիտ» Մեծոփ. յիշ. 85. ևս. պտմ. 44. Զքր. սարկ. Գ. 40. Առաք. պտմ. 348. Յայտմ. նոյ. 29, փետ. 19, 27. որից* սոպոութիւն *ևս. պտմ. 19 (երկուսն էլ նորագիւտ բառ)։*

ԳԻՒ.—Ակն. սօքռ, *Երև.* սօպռ *«բիրտ, կոպիտ», Ղրբ.* սո՛ւպռուռ *«աներես, անամօթ»։*

ՍՈՒՈՓԱՅ *«խուճապ». ունի միայն Բռ. երեմ. էջ 288։*

***ՍՈՍ**, ի հլ. «60 տարուայ մի շրջան՝ ըստ քաղդէական հաշուի» ևս. քր. ա. 11. Արծր. հրտր. Պատկ. էջ 21. Սամ. տնեց. 12. ուրիշ վկայութիւն չկայ։*

=*Յն.* σῶσσος, *լտ.* sossus, *նոյն նշանակութեամբ. սա էլ փոխառեալ է քաղդէարէնից. համմտ. ասուր.* šuššu, šušu, *որ նշանակում է «վաթսուն» և է բաբելական* 𒐊 *գաղափարանշանը (*Delitzsch, Assyr. Hndwört. 694)։ *Բոլորի աղբիւրն է սումեր.* šuš *«վաթսուն», որ կազմուած է* uš *«երեսուն» բառի*

կրկնութեամբ (իբր uš-uš *30+30). իսկ* us *«երեսուն» բառն էլ յառաջանում է* a *«տասը»* xeš *«երեք» բառերից* (Bertin, Lang. of the cun. inser. *էջ 7)։—Հիւբշ. 380։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՍՈՍԵՄ *«անծանօթ մի բոյս, որ աղալով հաց են պատրաստում» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2794։*

ՍՈՍԻՆՁ, n *հլ. «կպցնելու մի նիւթ է. տճկ. թութխալ» Ես. խգ. 13. Փիլ. Յայտմ. որից* **սոսնձել** *Մեկն. ղկ.* **սոսնձմունիւ** *Պիտ.* **սոսընձային, սոսնձանման** *(նոր բառեր)։*

Patrubány *ՀԱ. 1908, 343 հնխ.* ék'oi *«ուտել»>սինձ բառից կրկնութեամբ։ Տե՛ս և* սինձ։

Գիւտ.—Ջղ. **սոսինջ** *(ձ>ջ ձայնափոխութեան համար կարելի է համեմատել նրև.* **սպիտակուջ**<**սպիտակուց, դ'եղնուջ**<**դեղնուց, Պլ. անբամալուջ**<**անդամալոյծ)։*

ՍՈՍԿ *(յետնաբար* n *հլ.) «մինակ, պարզ, լոկ» Յոբ. լգ. 21. Ոսկ. անում. Բրս. հց. «զուրկ» Ոսկ. յհ. ա. 17. Պիտ. վրք. հց. «հասարակ անձ, ռամիկ» Պրպմ. Ղևոնդ. Սարգ. «հետևակ, հետիոտն» Արիստ. աշխ. «զուր, պարապ տեղ» Բրս. հց. Սարգ. իգն. որից* **սոսկաբար** *Ոսկ. յհ. ա. 14, 19. 36.* **սոսկագոյն** *Ագաթ.* **սոսկութիւն** *Եւս. պտմ.* **սոսկանալ** *«մերկանալ, թափուր մնալ» Բղիշ. միանձ. Ոսկիփ.։*

Հիւնք. **ոսկր** *բառից։* Bugge KZ 32, 29 *սանս.* çúṣka, *զնդ.* huška, *հսլ.* suchŭ *«չոր» ևն բառերի հետ։ Կրկնում է նոյնը* Brugmann, Grdr². *I* 741։

ՍՈՍԿԱՆԱԼ *«վախենալ, զարհուրիլ» ՍԳր. «գանիլ, զզուիլ» Մծբ. 238. որից* **սոսկալի** *Իմ. ը. 15.* **սոսկումն** *ՍԳր. Եզն.* **սոսկացուցանել** *Ճառընտ. ևն։*

Գարագաշեան (անձնական) դնում էր **սոսկ** *«մենակ» բառից, ըստ որում մենակութիւնը վախ է պատճառում։*

Գիւտ.—Ախց. կր. **սօսկալ**, *Պլ. Սեբ.* **սօսգալ**, *Համշ.* **սօսգուշ**, *Ջթ.* **սիսգօլ, սիսգալ**։

ՍՈՍՈՐԴ, n *հլ. «կոկորդ» Սեբեր. 136. Նորագիւտ երգ. բ. 3 (որ յետոյ փոխուած է* **կոկորդ**), *Վեցօր. 89 (ըստ ընտիր օրինակների, որ տպագրում եղած է* **կոկորդ**). *Նիւս. կազմ. Վրդն. ծն. որից* **սոսորդել** *«խաղխաղել, բերանը կամ կոկորդը ողողել» Նեղոս առ Լեհ. պերճասոսորդ «վիզը փառաւոր կամ փառաւոր խրխնջացող (ձի)» ԱԲ. գրուած է նաև* **սոսոր, սոսր** *Գաղիան.։*

Մ. Այվազեան, Մասիս 1853 մարտ 25 **սոր** *և* **սոռոր** *բառերից, որոնք բուն նշանակում են «սորել, ծծել»։ Տէրվ. Երկրագունտ 1883, 170 թերևս* **-որդ** *մասնիկով* **սոս** *արմատից։* Lidén, Armen. Stud. 134 *կրկնուած* **սոր** *«ծակ» բառից։* Patrubány *ՀԱ. 1908, 277* **-որդ** *մասնիկով՝ հնխ.* ek'ōi *արմատից՝ կրճատ կրկնութեամբ։ Պատահական նմանութիւն ունին վրաց. ხახა* **սասա** *«քիմք. 2. կոկորդ», արաբ.* صرّ sarr *«կուլ տալ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 478).*

Գիւտ.—Նոյն է **սոռոռիկ** *Բլ. «որկոր չորթոտանեաց» (Ագգ. Հանդ. հ. 144), «սրտի հատ խողովակը» (Էմ. ագգ. ժող. Ա. 333)։*

*—***ՍՈՍՈՓԻԼ** *տե՛ս Սօսափիւն։*

ՍՈՎ, n *հլ. (կայ նաև սեռ.* **սովու** *Մն. խա. 31, Երեմ. լր. 9) «պարէնի նուազութիւն, հացի պակասութիւն, թանկութիւն, քաղցածութիւն» ՍԳր. որից* **սովիլ** *«սաստիկ քաղցածանալ» Մն. խա. 55. Սղ. ծր. 7, 15. Ոսկ. ա. կոր.* **սովեցուցանել** *Եւագր.* **սովաբեկ** *Օր. ը. 3. Ոսկ. փիլիպ.* **սովամահ**. *Բ. Թագ. գ. 29. Առակ. ժ. 3. Ղկ. ժե. 17. Կոչ. Ոսկ. մ. ա. 13 և մտթ. Սեբեր.* **սովամահիլ**. *Ա. մկ. ժգ. 49.* **սովալուկ** *Սարգ.* **սովասատակ** *«քաղցից սատկած» (նորագիւտ բառ) Վրդն. այգեկ. 86.* **սովահար, սովահարութիւն, սովամահութիւն** *(նոր բառեր) ևն։*

=Թերևս փոխառեալ է պհլ. sōi *«քաղց», մանիք. պհլ.* soig *«քաղցած, անօթի»* (Salemann ЗАН *8 (1908), էջ 103) բառից։*

ՆՀԲ լծ. **սուաղ** *և* **սուղ**։ Böttich. ZDMG 1850, 361 *վեդ.* kšap *«սովել»։* Lag. Btrg. bktr. Lex. 73 *պհլ.* sūi: Justi, Zendsp. 310 *զնդ.* šuda *«քաղց», սանս.* kšudh, *պհլ.* sōi, sūi, *բելուճ.* šúō *ևն։ Հիւնք. ևզով բառից։* Patrubány SA 1, 195 *յն.* κοος, κοῦλος, κοῦλος *«սին» բառերի հետ։* Karst, *Յուշարձան 407*

սումեր. šuku «*քաղց, սով*»։—*Ըստ այսմ վերի մեկնութեան առաջին հեղինակն է* Lagarde, *որ անկախաբար մտածելով՝ առաջարկեցի* Meillet-*ին. պատասխանեց թէ* «la seule possibilité de rapprochement est en effet l'emprunt, *համեմատութիւնը կարելի է բացատրել միայն փոխառութեամբ*» (*նամակ 1931 թ. դեկտ. 18-ից*)։

Գիր.—Ագլ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. ասվ, *Սչ.* սօւ, *Ալշ. Մշ.* սօֆ։ *Նոր բառեր են* սվաած, սվաածանալ, սվաածացնել, սվացնել։

***ՍՈՎՈՒՈՆ.** *անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուտհ. 27. «Գրեցաք առ զօրավարդ մեր, որ ոչ բերդն առնու և ոչ ղցորեանն, զոր սերմանեցեր. դի այժմ չեղև առ մեզ պէտք. բայց զքառասուն հազար սովոլոնն* (*ձձ.* սովօլօն, սովալօն, սովալաւն), *զոր յուղարկեցաք, տուր տանել առ զօրավարն մեր, որ առաքէ առ թագաւորութիւնս մեր*»։

=*Անշուշտ յունարէն բառ է. սակայն* Bailly-*ի և* Sophocles-*ի ճոխ բառարաններում չկայ նման մի բառ։ Կարծում եմ որ պէտք է կարդալ* ովոլոն<*յն.* ὀβολός (*հյց.* ὀβολόν) «*15 սանտիմ արժողութեամբ մի դրամ*» (*40, 000 ոբողոներ անում է 6000 ֆրանկ*)։—*Ա.Ճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 196։

ՍՈՎՈՐ, ի *հլ.* «*ընտել, վարժ, ծանօթացած*» *Փիլ. Բրս. արբեց. Պրպմ.* «*սովորական, հասարակ*» *Ոսկ. գղ. Փիլ.* «*սովորութիւն*» *Ոսկ. եփես.* սրանից սովոր լինել *ՍԳր.* սովորական *Ագաթ. Եղիշ.* սովորիլ *Ամիր. իգ. 20.* սովորութիւն *ՍԳր. Եփր. ծն. Ոսկ. մ. ա. 6 և ես.* խաւարասովոր *Ագաթ. ընդդիմասովոր Ագաթ. ևն*։

Տէրվ. Altarm. *64 և Նախալ. 72 հլ.* sovo-s>suus «*իւր*» *դերանուան հետ. Համմտ. լտ.* suescere «*սովորիլ*», con-suetudo «*սովորութիւն*»։ *Հիւնք. հբր.* սօֆէր «*դպիր*» *կամ պրս.* վէրզիյտէն։ Patrubány SA 1, 195 *յն.* κῦρος„¦ *հիւլ.* caur, cur «*կորիճ, քաջ*», *սանս.* çūra «*զօրեղ, դիւցազն*»։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 191* ուսանիլ *բայից՝* -ւոր *մասնիկով, իբր* *(ու)- սաւոր։ *Ղաֆանցեան, Տեղեկ. ինստ. 2, 102 վրաց.* սծավլա։

Գիր.—Մշ. սօվոր, *Ախց.* սօվօր, *Երև.* սօվօրէլ, *Տփ.* սօվօ՛րիլ, սօ՛րվիլ, սօվրիլ, *Ալշ. Մշ.* սօվրել, սօրվիլ, *Ջղ.* սաւոր, սաւորել, *Ագլ.* սվա՛րիլ, սա՛վուր, սրվըրօ՛բին, *Գոր. Ղրբ.* սրվըէ՛րել, *Վն.* սօվրել, *Սչ.* սօրվել, *Ախց. Ակն. Խրբ. Կր. Մկ. Շմ. Պ. Ռ. Սեբ. Տիգ.* սօրվիլ, *Նմխ.* սօրվիլ, սօրվէնալ, *Մրղ.* սօրվըէլ, *Ասլ.* սէօրվիլ, *Սվեդ.* սուրվիլ, *Համշ.* սօվռուշ. *Թրքախօս Հայերից՝ Ասն.* սօվօրուբին։ *Նոր բառեր են* սովորովի, սովորցուկ, սովրուկ։

***ՍՈՏԵՐԱԿԱՆՔ** «*ընծայք տուեալ վասն ընկալեալ առողջութեան*». *ունի միայն Քաջունի, Հտ. Դ. 221։ Հի՞ն է թէ նոր։*

=*Յն.* σωτήριος, *յգ.* τὰ σωτήρια *հոմանիշ ձևից՝ Հյ. -ական մասնիկով. ծագում է* σωτήρ «*փրկիչ*» *բառից։*

Ուղիղ մեկնեց Կարապետ Մելիք-Օհանջանեան (անձնական)։

ՍՈՐ «*նեղութիւն կամ հօսանն*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 288։*

+**ՍՈՐ,** ո *հլ.* «*ծակ, խոռոչ, ծերպ, քոչունի բոյն՝ ծակի մէջ շինուած, գաղանի որջը, սողունի ծակ*» *Ես. բ. 19. երեմ. խր. 28. Բուզ.* որից սորամուտ *Ագաթ. Կորիւն. Փրպ.* սոր-սոր «*ծերպ, խոռոչ*» *Կլիմաք. Յայսմ.* սորել «*ծակը մանել*» *երեմ. դ. 29.* «*ծորիլ. վազել, իբր նեղ ծակից հօսիլ*» *Եղիշ. Վրք. Հց.* «*աչքը տկարանալ, ծիւրիլ*» *ՍԳր.* սորեցուցանել «*աչքերը տկարացնել*» *Ղևտ. իգ. 16.* «*հօսեցնել, վազեցնել*» *Վրդն. սղ. և ել. Երզն. մտթ.* սոսորել «*վխտալ, ցրուիլ, դուրս վազել*» *Բ. մկ. թ. 9. Բուզ. 163.* սահանասոր *Անան. եկեղ.*։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* k'ovros. *ձևից. սրա ցեղակիցներն են յն.* κύαρ «*խոռոչ, ականջի ծակը*», κῶος «*որջ, քարայր*», κοῦτ «*ծակ*», κοῖλος (<*κόϝιλος) «*մէջը փոս*», κοίλωμα «*գոգաւոր տեղ*», κύαθος «*գաւաթ*», *լտ.* cava «*փոս*», cavo «*փորել*», cavus «*խոր, պարապ, ծակ*», caverna «*խոռոչ,*

ծառի ճեղք, որջ», ալբան. vetɛ (<*k'ovilo) *«խորունկ», լեռն.* šāwa *«ծառի խոռոչ», միւլ.* cūa *«մէջը փոս»,* cūass *«խոռոչ», բրբտ.* kéô *«քարայր», սանս.* çv-áyatē *«ուռչիլ», գնդ.* sūra- *«ծակ». պրս.* سوراخ sūrāx *«ծակ», քրդ.* sūrāx, *աֆղան.* sūrai, sūlāγ *«ծակ» են։ Այս բոլորի պարզ արմատն է հնխ.* k'eu̯- *«ուռչիլ, կամարաձև լինել», որից յետոյ դրական առումով «բարձրութիւն ձևացնել» և բացասական առումով «փոս ձևացնել, փոս, խոռոչ»* (Pokorny 1, 365—6, Walde 146, Boisacq 530, 481, Horn § *754,* Ernout-Meillet 162): *Հյ. բառի հետ յատկապէս համաձայն են գալիս յն.* κύαρ *և լտ.* caverna' *կազմուած* -ro *մասնիկով։ Քայնական յարաբերութիւնը ա՛յնպէս է, ինչպէս հնխ.* novros>**նոր**։

ՆՀԲ *յծ.* **ծոր, բոր, ձոր, խոր, սող** *են։* Justi, Zendsp. 308 *գնդ.* sru *«հրթալ», սանս.* sru, sravati։ *Տէրվ.* Altarm. 99 *սանս.* sar *«սրանալ», լտ.* salio *«ցատկել», յն.* ὁρμή *«շտապ», հյ.* **սողալ, սուրալ** *են։* Canini, Et. étymol. *էջ* **101 սոր** *և* **փորել**=*իտալ.* foro, *պելասգ.* vörö *«ծակ», իսկ էջ* **191 սորել** *և* **ջուր** =*սանս.* sara, çara *«ջուր»։—Հիւնք.* **սոր** *հանում է* **սար** *բառից, իսկ* **սորիլ** *են* **ծորիլ** *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *10, 278, որ յիշում է Հիւբշ.* IF Anz. 10, 49: Scheftelowitz ZDMG 59, 707 *փոխառեալ է դնում գնդ.* sūra- *«ծակ» բառից. (ընդունելի չէ, որովհետև գնդ.* sūra- *պիտի տար հյ.* ***սուր**): Karst, *Յուշարձան* **407 սորել** *և* **ծորել**=*սումեր.* sur *«անձրևել», 420 թուր.* sub, suv, su *«ջուր»։*

Դիմ.—վն. **սոր** *«ցորենի անընդհատ հոսիլը ջաղացքի կրիճակից», Ղզ.* **սոր տալ** *«փեթակի ծակից մեղուների անընդհատ դուրս գալը». ունինք նաև խրբ.* **սուռ** *«ինքնիրան հոսելով ցած թափուիլ» (օր. սարի վրայից հողերն ու քարերը). Համմտ.* **սուռալ**՝ *նոյն նշանակութեամբ Քուչ. 52. «Այդ ո՞վ է երդիքս եկել, որ օտար հողն կու սորայ»։*

Փոխ.—Վրաց. **სორო սորո** *«ծակ, որջ», օր.* **დათვის სორო դաթվիս սորո** *«արջի որջ», որից յետ է առնուած Տփ.* **սո՛րո** *«բոյն, սոր, որջ», ուս.* soro *«սահիլը,* sorop'sun *«սահիլ»։*

***ՍՈՐԱԿԱԼ** *«ախոռապետ». որ երկու անգամ գործածուած է Բուզ. էջ 128՝ «ախոռապետ» նշանակութեամբ. «Սպանանէր զսորակալ ասպաստանին արքային Պարսից» (ցանկում գրուած է* **զորակալն**):

=*Պհլ.* stōr *«ձի» բառից [որ է գնդ.* stāora *«մեծաքաշ (այսինքն ուղտ, ձի, եզ, էշ)», պրս.* ستور sutūr *կամ* استور ustūr *«հեծանելի անասուն, յատկապէս ձի», օսս.* sturt'ä *«ձի»=դոթ.* stiur, *գերմ.* Stier *«ցուլ»]+հյ. կալ։ Ըստ այսմ հյ.* **սորակալ** *պէտք է ուղղել* **սառրակալ** *(սխալը յառաջացած է բոլորագիր «սառրակալ» գրութեան մէջ բաղմաթիւ տառասիւնները իրար խառնելուց, ինչպէս որ նոյնը է՛լ աւելի շփոթելով յառաջացել է* **զորակալ**): **Սորակալ** *կարող է կազմուած լինել հայերէնի մէջ (ուստի պէտք կլինի ենթադրել* **սառր** *«ձի» բառի անկախ գոյութիւնը մեր լեզուում) և կամ թարգմանուած լիներ պհլ.* stōrpān *«ախոռապետ, մարշալ»=պրս.* ستورنان sutūrbān *«նախարարած, այսինքն այն որ պահպանէ ղշոկս եղանց և ձիոց», որ և* ستوردار sutūrdār *«ախոռակալ և թարգմանի դրաստակալ»։ (ԳԴ) ձևի վրայից։—Ա.Ճ.*

Ա.Ճառ. Հետազր. սրբագր. Փաւստոսի մէջ (Բանաս. 1904, 246—7) ուղղում է բառս ձիակալ: Նահապետեան, Ուղղագր. ազգ. մաս. 95 ուղղում է **ախոռակալ**: Peters REA *1, 15* **սովորակալ**: *Առանձին մի յօդուած ունի բառիս վրայ Վարդանեան ՀԱ. 1924, 65—68, ուր ուղղում է* **խոռակալ**, *ինչպէս ունինք* **խոռապետ** *(տե՛ս այս բառը)։ Աւելի ընդարձակ է խօսում Նահապետեան, Բազմ. 1924, 161—6 և 193—200, և կցելով պրս.* sur *«պարիսպ» բառին՝ հասկանում է «պարրսպապատ որսատեղի կառավարիչ»։ Խաչիսար (Խաչիկ Սառաճեան) ՀԱ. 1924, 379 գնում է պրս.* سور sūr, sōr *«հարսանիք» բառով, իբր թէ «թագաւորի փեսան»։ Աւգեր. Բազմ. 1925, 171* **սոր**

դնելով=լտ. cura, սանս, ura, անգլ. sorry «հոգս, խնամք» բառերին, սուրա-կալ հասկանում է «խնամակալ»։

Բառիս վրայ խօսում է Մ. Թիրեաքեան, Բազմ. 1924, 389—91 և իր նախորդների մեկնութիւնները հերքում է, յատկապէս ցոյց տալով որ sūr «պարիսպ» բառը արաբերէն է և ո՛չ պարսկերէն։ Նահապետեան, Բազմ. 1925, 10—13 պատասխանում է թէ արաբ. sūr պարսկերէնից է փոխառեալ և պընդում է իր մեկնութեան վրայ։ Թիրեաքեան, Կոչնակ 1925, № 34 մերժում է բոլոր այս մեկնութիւնները և համարում է խաթարեալ բառ։ Մեր տուած մեկնութեամբ իրաւացի է դուրս գալիս միայն այս կարծիքը։ Վերի մեկնութիւնս ընդունեց և համառօտիւ հրատարակեց նախ Մ. Թիրեաքեան, Կոչնակ 1933, № 42, էջ 997։

ՍՈՐԱՅՔ «լայնութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 289։

***ՍՈՐԵԿ**, որ և սորէկ, սովրէմ, զուրեկ «ընտիր, աղնիւ, պատուական (տեսակ որթի կամ խաղողի)» Ես. ե. 2. Ոսկ. ես. 47. Կիւրղ. Թգ. Շնորհ. Եգես. Թէոդ. խշ. Օրբել. հրտ. Էմինի, էջ 185—186։

=Եբր. שׂוֹרֵק կամ שֹׂרֵק soreq «մի տեսակ ընտիր խաղող» բառն է, որ յն. σωρήχ տառադարձութեան վրայից անցած է մեզ. նոյնպէս նաև վրաց. ხორბა սորեա։ Եբր. բառը՝ որ գործածուած է բնագրի նոյն տեղում, բնիկ սեմական է և նշանակում է բուն «կարմիր». համմ. աստր. 𒊭𒅖 šar-ku «կարմիր արիւն», արաբ. شَرِق šarq «կարմրիլ. 2. արևը ծագիլ. 3. արևելք, արևելեան կողմ» (Gesenius[17], 794, Delitzsch. Assyr. Handwört. 692, Strassmaier, Alphab. Verzeich. 1000)։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։ Թաղիադեան, Առաջն. մանկ. 71 համարում է բնիկ հայ և սուուգաբանում է «սորելով գայ, կամ ի ձորոյ, և կամ զի՝ գինի նորա ի սորս պահի»։

Գիմ.—Բոլորովին տարբեր բառ է սորեկ (Երև. սօրէկ), որ և սորոկ, սորի, սօրմ (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 508) «մի տեսակ բոյս, որից իւղ են հանում». ըստ Տիրացուեան, Contributo § 25 սորեակ կամ գաւառ. «holcus lanatus L», որ մի տեսակ վայրի դարի է։

ՍՈՐԽՈՒՆ «ուռի» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2799։

Գիմ.— խրբ. սօրխին, սօրխուն «մի տեսակ ուռի»։

***ՍՈՐՆՋԱՆ** «մի տեսակ բոյս. լտ. colchicum autumnale, որ ձնծաղիկի մի տեսակն է, հնասէս կոչուած hermodactylus» (մանրամասն տե՛ս Seidel, Մխ. հեր. § 385) Բժշ. Ամիրա. (ունին միայն ՀՀԲ, ՋԲ, ՓԲ և ՀԲուս. § 1779, § 2800. չունին ՆՀԲ և ԱԲ, իսկ Բառ. երեմ. յաւել. 572 դնում է սոլնջան «ձիւնածաղիկ, կաո թօփու»)։

=Արաբ. سورنجان sūrinǰān նոյն նշ. որից նաև վրաց. სურინჯანი սուրինջանի «մի տեսակ բոյս, ռուս. клубень, корень шишковатаго ириса» (Զուրինով[2] 1201)։—Հիւբշ. 277։

Ուղիղ մեկնեց նախ. Lag. Armen. Stud. § 2024։

ՍՈՐՍՈՐ «փայլածէ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 289. արդեօք ուզում է ասել «փայլածո՞»։

ՍՈՒԱՂԻԿ «քաղցից նուաղիլ». ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Եղիշ. տիր. 331. «Ոչ ի զգայութիւննէդ ասեմ, այլ ի մտացդ սուաղեցելոց, որ ոչ աճեցուցին զաստուածային տունկսն». բայց նշանակութիւնը համաձա՞յն է։ Արմատը սուաղ գտնում ենք նաև անսուաղ «անօթի, քաղցած» Ոսկ. լուս. Վրք. Հց. անսուաղական Ստեփ. սեան. անսուաղանալ ՅՀ. կթ. Երզն. լուս. անսուաղութիւն Փիլ. ՅՀ. կթ. Վրք. Հց. զուգասուաղութիւն «միասին ուտելը, հասարակական ճաշ» Նոնն. էջ 8 բառերի մէջ. այս բոլորի մէջ սուաղ բառի նշանակութիւնն է ընդհակառակը «ուտել»։ Նոյն խմբին է պատկանում նաև սուաղ «չարքաշ!» (չունի ԱԲ) Տաթև. ձմ. ճիր.— Ջսուաղ և զբարակ կեանս քահանային՝ որ

հարկաւորօքն միայն շատանայ. (իմաստի համար տե՛ս տակը)։

Տէրվ. Altarm. *100 և նախալ. 115 հնխ.* svar *«ուտել» արմատից. համմտ. զնդ.* svar, *պրս.* xōrdan *«ուտել»։ Հիւնք.* սով *բառից։*

ԳԻՒ.—կրկնաբար ունինք Ակն. աճօթի-սվաղ, *Սեբ.* աճօթի-աճսրվար (ղ *դարձած* ր)։

ՍՈՒԱՐԻԼ *«փաթաթուիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Բառ. երեմ. էջ 154. «Կայմն քեզին է նաւու, որ զառագաստն սվարեալ ունի ի վերայ իւր, որ ի ծայր սհանն է, որ զառագաստն սփռեալ ունի ի վերայ նաւին»։*

***ՍՈՒԱՐԻՄ** *«ժանտ, վատ տեսակի (թուղ)». մէկ անգամ ունի Երեմ. իթ. 17. «Արարից զդուստ իբրև զթուղ ժանտ սուարիմ, որ ոչ ուտիցի ի ժանտութենէ իւրմէ»։ Սխալ է մեկնում Մխ. երեմ. «Սուարիմ, անագանահաս, որ է յետին գերութիւն»։*

=*Եբր.* שְׂעִרִים śo'ārīm *բառն է, որ գործածուած է Ս. Գրքի հրայական բնագրի նոյն տեղում և յն.* σουαρείμ *տառադարձութեան վրայից անցած է հայերէնի։ Եբր. բառը* שְׂעָר śo'ār *«սոսկալի, վատ, գէշ» ձևի յոգնակին է (*Gesenius[17], 855):

Ուղիղ մեկնեցին ՀՀՌ և ՆՀՌ։

ՍՈՒԲԱՓ *«խոնարհ». ունի միայն Բռ. երեմ. էջ 289։*

***ՍՈՒԲԱՅ** *«միայն, լոկ». նորագիւտ և յետին բառ. մէկ անգամ գտնում եմ Դիւան ժ էջ 22, յիշատ. 1531 թուից. «Ջօրդուն ի տեղն եթող և սուբայ հեծելով իլղար արար ի վերայ Վանայ»։*

=*Ատրպ. թրք.* سوبای subay *«ամուրի, չամուսնացած մարդ», որ երևի ունեցել է նաև այս նշանակութիւնը։—Աճ.*

ՍՈՒԲԱՒԻՄ *«իւղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 289։*

ՍՈՒԲՈՍ *«մի տեսակ կենդանի, որ նման է ոչխարի, երկակենցաղ և ձկնակեր. լինում է եթովպիայում» Խոր. աշխ. 599 (այլ ձ.* սուբուս*). ունի միայն ԱԲ։*

Պատկ. Арм. Геогр. *էջ 26 կարծում է թէ աղաւաղուած է յն.* κῆτος *«մի տեսակ կապիկ» կամ* ἀγριόβους *«վայրի եզ» բառից։*

***ՍՈՒԳ**, ո *հլ. «սուգ» ՍԳր. եփր. բ. Կոր. եղիշ. որից* սգալ *ՍԳր. եփր. մն. և թգ. Ոսկ. ես.* սգաւոր *ես. կա. 2. ել. լգ. 4. Մտթ. է. 4.* սգումն *Յուդթ. ժզ. 21.* սգաւորութիւն *եփր. օրին.* սգազգած *Վեցօր. մեծասուգ Պիտ. ևն։ Նոր բառեր են* սգակիր, սգահանդէս, սգատխուր, սգերթ, սգազգեստ, սգահար, սգալի, *ևն։ Գրուած է նաև* զգալ. *ինչ. Յայտմ. փետր. 29, մրտ. 1, մայ. 15 (էջ 528 ա, 533 ա, 748 ա), որի համար համմտ. տակը ննխ.* զուկ *«սուգ»։*

=*Պհլ.* *sūg *հոմանիշ ձևից, որ աւանդուած չէ. կայ միայն պրս.* سوگ sōg, sōk *(արդի հնչումով* sūg*) «սուգ, տխրութիւն»,* سوگوار sōgvār *«սգաւոր», սանս.* çōka- *«խարոյկ, բոց, չարշարանք, ցաւ, վիշտ, սուգ», զնդ.* -saoka *«խարոյկ», որոնք սակայն հնթադրում են պհ.* *sōk։ *Այս ձևը պիտի տար հայ.* *սոյկ *կամ* *սոկ, *ուստի պէտք է կարծել որ բառիս մօտ կար նաև գուռ. պհ.* *sūg *ձևը։—Յիշեալ բառերը ծագում են հնխ.* k'euq- *«լուսաւորել, պայծառ, սպիտակ լինել, կրակով շիկացնել» արմատից, որից համմտ. նաև սանս.* çočiti *«փայլիլ, այրել, ցաւիլ, սգալ», զնդ.* saočant- *«հրաւառ», պրս.* sōxtan *«այրել», հրմ.* sōz *«այրի՛ր» են (*Pokorny *1, 378,* Horn *§ 756)։ «Այրել» և «սուգ» իմաստների զարգացման համար համմտ. ռուս.* гореть *«այրիլ» և* горе *«վիշտ, տառապանք, ափսոս» (*Berneker *333)։ Բնիկ հայերէն նոյն արմատից պիտի ունենայինք* *սուխ *կամ* *սոյխ։

Հներից Շնորհ. մաթ. էջ 90 հանում է զգալ բառից. «Սգոյդ անուն յայտնի ունի գտեսութիւն ասացելոցս. սուգ *ասի վասն զգալոյ դիրս՝ զոր հրեանն յանզգայութեան զոլով ո՛չ զգայր»։ Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որ համեմատում է պրս.* սուկ, սուխ *ձևերի հետ։* Brosset JAs 1834, 369 *են սանս.* çuč *և վրաց.* ծուխի *«սուգ, տխրութիւն», ՆՀՌ պրս. ձևի հետ։* Windisch. *էջ 7 սանս.* çōka: Böttich. ZDMG 1850, 361 *սանս.* çōka, *թերևս նաև զնդ.* saoka *«հաճոյք»։ Նոյ-*

նը, Arica 74, 207 *սանս.* çōka, *պրս.* sōk, *յն.* κωκᾶν «խառնել». *բոլորի արմատը դնում է* çuč: Lag. Urgesch. 339 և Müller SWAW 38, 576 *սանս. և պրս. ձևերը*: Lag. Beitr. bktr. Lex. 21 *նաև զնդ.* saoka «հրդեհ»: *Հիւբշ.* Arm. Stud. § 254 *դնում է բնիկ հայ բառ*: Bartholomae, Stud. 2, 17 և Meillet MSL 7, 58 *համարում են իրանեան փոխառութիւն. իսկ Հիւբշ.* Arm. Gram. 491 *առարկելով որ այս պարագային* *սոյկ, *սոկ *ձևը պիտի ունենայինք, համարում է բնիկ հայ բառ՝ հնխ.* k'uko'- *ձևից: Սակայն ինքն էլ է կասկածում թէ հնխ.* k *կարո՞ղ էր տալ հյ՝.* գ: *Սրա վրայ աւելացնենք նաև բառի նշանակութիւնը, որ արիական մասնաւորում է. բուն նախնական իմաստը, որ է «այրել», չկայ հայերէնի մէջ*: Karst, *Յուշարձան 407 սումեր.* sig «ցաւալի, վիշտ», *424 չաղաթ.* sagu «սուգ», sagun «տխուր», *ույգուր.* sakinmak «ցաւիլ, հոգալ»:

Գիւր.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մրզ. Մշ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Տիգ. Տփ. սուֆ, *Մկ. Վն.* սուֆ[1], *Ասլ.* սիւֆ, սիւ*, *Ագլ.* սէօգ[1], *Ննխ. գուֆ. Թրքախօս հայերից՝ Ատն.* սուֆ: *Նոր բառեր են* սգանց, սգաւոուն, սգաաէր, սգում, սգաճանիկ, սգարիլ: *Հետաքրքրականն են Շմ.* սուֆօօր *և Տփ.* սֆուր, սֆվուր «սգաւոր»: *Մշ. ունի* սֆավօր *բառը, բայց չը գիտէ* սուգ *արմատը*:

*ՍՈՒԴԱՐ (սեռ.-ի, յգ.-ռուն) «թաշկինակ, լաչակ» *Ոսկ. ա. տիմ. Կոչ. 176. (ՀՀԲ դրում է* սուդարուն, սուդարիոն):

=*Յն.* σουδάριον «թաշկինակ», *որ փոխ է առնուած լ.* sudarium *հոմանիշից. այս վերջինը բուն նշանակում է «երեսի քրտինքը սրբելու թաշկինակ» և ծագում է լ.* sudor «քրտինք» *բառից: Յունարէնից են նաև ասոր.* ܣܘܕܪܐ sūdārā «թաշկինակ. 2. խոյր», *վրաց.* სუდარი սուդարի «մեռելի պատանք»:

Ուղիղ են մեկնում ՀՀԲ, Կոշումն Ընծայութեան Հրատարակիչը (Վիեննա 1832, էջ 179) և ՆՀԲ:

*ՍՈՒԻՆ (ո հլ. *ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «տէգի նման երկաթ՝ որ ձողի ծայրն է անցուած» Ես. ք. 4. Խոր. ք. 5. արդի գրականում «հրացանի ծայրը անցկացնելով կռուելու երկաթեայ սրածայր ձող». սրանից ունինք* սուճաւոր *Ագաթ. Բուզ. (յետնաբար* սուիճաւոր *Պիտ.)* սուճակ *Մծբ.* սուճակոր *Եղեկ. լթ. 9.* սուիճամարտ *(նոր բառ). գրուած է նաև* սրիճ (ր *ձայնաւորով),* սուճի *Արծր.—պէտք է* սուիճ *կարդալ Խոր. Ա. 11 հատուածի մէջ էլ, որի վրայ տե՛ս* սուիճ:

=*Փոխառեալ է անծանօթ մի լեզուից. համմտ. ասոր.* ܣܘܝܢܐ sūwīnā «տէգ, նիզակ», *որ մէկ անգամ միայն գործածուած է Ես. ք. 4 յգ.* sūwinyāθā *ձևով. Թարգ.* סופינא sūpīnā «նիզակ» *Դ. Թագ. իա. 16. յն.* σιβύνη, συβίνη, σιγύνη, σιγύνης, σιγύννης, ζιβύνη «տէգ, սուին». *լտ.* sibina, sibyna «մի տեսակ նիզակ», *արաբ. և պրս.* زوبين zōbīn «Գիլանցիների մէջ գործածական մի տեսակ կարճ նիզակ», *պրս.* زوپين žōpīn՝ *նոյն նշ., վրաց.* ზუფანი զուփանի, *Թրք.* سنكی süngi «սուին»: *Այս բոլորը փոխառեալ ձևեր են. ասորին մէկ անգամ միայն գործածուած է և համարւում է ո՛չ-բրնիկ. յոյնը համարւում է կիպրական, մակեդոնական, Թրակեան կամ սկիւթական ծագումից. Թուրքը փոխառեալ պէտք է լինի յն.* σιγύνη *ձևից. բայց այս բոլորի բուն մայրը անծանօթ է, որից պիտի լինի նաև հայերէնը: Բառիս վրայ խօսում է Մարբվարթ* REA 8(1928), 212 *և ցոյց է տալիս որ յոյն և լատին բառերը իլլիւրական, մակեդոնական և կիպրական են. ասորին փոխառութիւն է. պարսիկ բառը* *čōpēn «փայտեայ բառից կազմուած մի դաւառական ձև է. մնում է հայերէնը՝ իբր բնի՞կ:—Հիւբշ. 394*:

ՆՀԲ յն. սիվի՛ճի: Böttich. Rudimenta 47, 165 *ասոր.* sūwīn, *պրս.* žūbīn, *սանս.* kšipaṇī, *յն.* σαυνίον, ζιβύνη: *Նոյն,* ZDMG *1850, 361* kšubh *արմատից, որին թւում են կցուիլ զնդ.* suwrā, sufrā, *պրս.* žūbīn: Pictet 2, 207 *պրս.* šāna «սանտր», *յն.* ξαίνω, ξάνιον,

սանս. kšan *ևն, իսկ* սուճակ՝ *իոլ.* son, sonn; Lag. Gesam. Abhd. 67 *աստր. պրս. ձևերի հետ, ինչպէս նաև յն.* ζιβύνη· *բառը համարում է բնիկ դիւանեան։ Հիւնք. յն.* σιβύνη։

Սուլել *տե՛ս Սոյլ։*

***ՍՈՒԼՈՒ** «հաճար» *Բժշ. Ռոշք. ունին միայն ՀԲուս. § 1902 և Նորայր ՀԱ. 1925, էջ 306։*

=*Թթր.* sulu, *կումուկ.* sullu «հաճար»։— *Ա՛ճ.*

Գիհ.—Սչ. սուլու, *որի համար էլ Ռոշքեան գրում է «մեծ սուլու կոչմամբ»։*

***ՍՈՒԼՏԱՆ** «մահմեդական թագաւոր» *Պատմ. վրաց. Վրդն. պատմ. Կոստ. երզն. 130, որ և* սուլթան *Կոստ. երզն. 140. որից* սուլտանանալ «թագաւոր նստիլ, իշխել» *Պատմ. վր. Վրդ. պատմ. բառախազով շինուած է շուն-թան Յիշատ. ԺԷ դար. (Դիւան ժ, էջ 74, 75). Սպանին զշունթան Իբրահիմն և եդին զսուլ-թան Մահմատն։*

=*Արաբ.* سلطان sultān, *որից փոխառեալ են նաև ֆրանս.* sultan, *իտալ.* sultano, sol-dano, *սպան.* soldan, *պորտ.* soldão, *ֆրանս.* soudan «սուլթան» *ևն։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՍՈՒԿ «փորացաւ». *ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 211։*

***ՍՈՒԿԱՆ** «վերնաշապիկ, blouse». *ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 154 բ, նաև 1161 ա՝* souquenille *բառի տակ, իբրև նորակերտ բառ։*

=*Կազմուած է ստ. յն.* soukania>*հին ֆր.* soucanie *բառից. (ծագումն անծանօթ. տե՛ս* Littré-*ի բառարանը՝* souquenille *բառի տակ)։*

Այսպէս մեկնեց Ստ. Մալխասեան (1935 մայ. 31)։

ՍՈՒՂ (ի *հլ. յեռնաբար*) «քիչ, համառօտ, կարճ» *Ոսկ. մ. բ. 15. Եփր. դատաստ. խոր. Փիլ. «թանկագին» Ճառընտ. որից ունինք* սուղ ինչ *կամ* սուղ մի «մի քիչ» *խոր. Պիտ. Մագ.* սուղական «պարզական» (տպագիրն *ունի հակառակ ձեռագրին* սուզական) *Եզն.* սուղասական *Ես. պատմ. (որ Վարդանեան ՀԱ. 1914, 643 սրբագրում է* սուղ սական), սուղմասնեայ *(նորագիւտ բառ) Պարզ. 248.* սղագոյն *Պիտ. Բրս. Հց.* սղանալ «բարակիլ, կարճանալ» *երզն. քր.* սղավաճառ «թանկ գնով ծախող» *Ոսկիփ.* սղութիւն *կիր. Յայտմ.* սղագիր, սղագրական, սղագրութիւն *(նոր բառեր). առանձին տե՛ս նաև* սղոց։

ՆՀԲ «յորմէ յն. ψιλός, *լտ.* pusillus «սուղ»։ *Հիւնք.* սողուն *բառից։* Patru-bány SA *1, 196 յն.* κόλος «խորտակուած»։ Meillet MSL 11, 399 *կցում է սանս.* çárita-, çṛṇāti «խորտակել», çīr-ṇá- «խորտակեալ», *յն.* κλάω (ἔκ-λασσα)«խորտակել, ճիւղերը կոտրատել» κόλος, κολοβός «խորտակեալ, կտրտած», *յետնաբար «կարճ, փոքր, ցած», հոլάζω «պակասեցնել, ծառերը կտրատել, ա-ւելին յապաւնելով ձիշտ չափին բերել», κολούω «յապաւել, կտրել, կարճացնել» բառերին։ Հայց* Walde *131 և 166 եր-կուսը իրարից բաժանելով՝ սանս. ձև-ւերը դնում է հնխ.* k'er- *արմատից, իսկ յն. ձևերը հնխ.* qolā- *արմատից. երկուսն էլ անյարմար Հյ. սուղ բառին)։ Անդրիկեան, Բազմ. 1903, 367 սկր բառի հետ=լտ.* carus, *որ նշանակում է «սէր» և «թանկ»։* Karst, *Յուշարձան 407 սու-մեր.* sila «կտրել»։

Գիհ.— Ջթ. խրբ. Հճ. Պլ. Սեր. Տիգ. սուղ, *Ասլ.* սիւղ, *Սվեդ.* սէօղ, *բոլորն էլ «թանկ» նշանակութեամբ. որից* սուղնալ, սուղցնել, սուղնոց, սուղծախ։

ՍՈՒՂՐՈՆ «ազգ ինչ վաղահասուկ գարուոյ. escourgeon». *ունի Նորայր, Բռ. ֆր. 489 ա, իբր նորակերտ բառ. նոյնը գիտէ և Քաջունի, հտ. Գ. էջ 221։*

=*Կազմուած է բելգիական* hainaut *բար-բառով* soucrion *ձևից (տե՛ս* Littré-*ի բա-ռարանը,* escourgeon *բառի տակ)։*

Այսպէս մեկնեց Ստ. Մալխասեան (1935 մայ. 31)։

+ՍՈՒՆ «քիչ, սակաւ». *գաւառական ձևն է խուն բառի. հմմտ.* խարիսխ=սարիսխ. *տե՛ս* խուն։—*Ա՛ճ.*

Müller SWAW 88 (1875) *էջ 15* սուն, սիւն *(քիչ) կցում է սանս.* çūnya «գա-

տարկ», յն. χενέος *«պարապ» բառերին։ Նույնը կրկնում է* Pokorny *1, 365։*

+**ՍՈՒՆ** *«պահել, սնուցանել, մեծացնելը». արմատ առանձին անգործածական* (սնոյ տէր *ձևի համար տե՛ս* **Աւն**), *որից կազմուած են* **կաթնասուն** *Գնձ. Շար.* **ընդասուն** *Ծն. իե. 27.* **ձեռնասուն** *Ագաթ. 34. կթ.* **հովասուն** *Նար. քր.* **ջրասուն** *Եղիկ. լա. 14. Ագաթ.* **զառաջասուն** *Ագաթ.* **տնասուն** *Ոսկ. մ. ա. 12.* **ընդվայրասուն** *Սիր. լ. 8. Ոսկ. մտթ. և ես.* **ընդարձակասուն** *Ոսկ. ա. թես* **դատարկասուն** *Ագաթ. Կորիւն։ Այս արմատի ձայնդարձներն են* **սան** *(որ տե՛ս առանձին),* **սին**, *որից միասին «մէկտեղ, միատեղ» (բուն նշ. «հնար սնուած. մէկտեղ մեծացած») ՍԳր. Եղն.* **անսին** *«անանուն» 34. իմ. առ.։ Թէ՛* **սին** *և թէ* **սան** *ձևից կարող են դալ* **սնանիլ** *ՍԳր.* **սնուցանել** *ՍԳր. Ագաթ.* **սնունդ** *Գ. մկ. ղ. 26. Ոսկ. յհ. ա. 1.* **սննդակից** *ՍԳր. Ոսկ. մ. ա. 15.* **որդեսնոյց** *Մծբ.* **միասնունդ** *Գ. մկ. ի. 18. Ագաթ.* **դիւրասնունդ** *Վեցօր.* **հովասնութիւն** *Ոսկ. եփես.* **սննդատուրիւն, սննդատու** *(նոր բառեր) ևն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. psen-, pson-, pšn̥-, *արմատից. մանրամասն տե՛ս* **Սաին**։—

Lag. Urgēsch. 618 *սանս.* çās *արմատից։ Տէրվ. Նախալ.* 42 *և* 73 *հնխ.* çu, çvan *արմատից, իբր յն.* κῦρος *«ոյժ»,* χενέος *«պարապ», սանս.* çūnya *«սին, պարապ» ևն։ Հիւնք.* **ծնանիլ** *բայից։* Müller, Armen. *VI, թ. 59 սանս.* çu, çavas *«ոյժ», գնդ.* sava *«օգուտ»,* Bugge, Etr. u. Arm. *54—55 և* KZ *32, 65 հնխ.* span, spōn, spn̥ *արմատից. համմ. հրգ.* spunni, *մբգ.* spen, spüne, *իսլ.* speni, *լիթ.* spenýs, *հիսլ.* sine, *բոլորն էլ «ծիծ», յն.* σπάω *«ծծել, դիել», ինչպէս և եաբուսկ.* snenaθ *«սնուցանող»։ Ըստ այսմ ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Bugge, *որ ընդունում է* Pedersen, *Նպաստ 10. ինչպէս նաև* Meillet BSL 23, 106:—*Անդրիկեան, Բազմ. 1903, 367* **սին**, **սուն**=*սանս.* sam, *յն.* σύν *«միասին». սրա հետ նոյն է նաև* **սան** *(իմովսանն ևն), իբր գործիականի մասնիկ, ճիշտ ինչպէս լտ.* cum; mecum *«իմովսանն»,* tecum *«քոյովսանն» ևն։* Osthoff, Parerga *1, 7 ծան. հնխ.* ekō *«ուտել» արմատից, որից նաև յն.* κῶμος *«խնջոյք», սանս.* çiçāti *«օթևան տալ», լտ.* cibus *«սնունդ» ևն (այս մեկնութիւնը կրկնում են* Patrubány *ՀՄ. 1908, 152,* Walde 157, Boisacq 544, Petersson Ar. u. Arm. Stud. 18): Sehefteloωitz BB 28, 283 *սանս.* çuna *«աճումն», գնդ.* suyamna *«աճուն»։*

ԳԻՒ.—հբր. **սնիլ** *«վարժուիլ», Տփ.* **սնբնդրվիլ** *«կրթուիլ, դաստիարակուիլ»,* **սնբնդիլ** *«խրատել, կրթել»։*

+**ՍՈՒՆ** *«տասը». այս ձևով և նշանակութեամբ մտնում է տասնաւոր թուականների ծայրը. ինչ.* **երեսուն, քառասուն, յիսուն** *ևն։*

=Բնիկ հայ բառ, հնխ. k'ontə, k'ōntə, k'omtə *նախաձևից, որից ունինք յատկապէս յն.* -κοντα *(ինչ.* τριά-κοντα, τετταρά-κοντα *ևն). միւսներն ունին լտ.* -ginta, *սանս.* -çat, *գնդ.* -sat, *հիսլ.* -cha, -ga, -ca *ևն։—Հիւբշ. 491։*

***ՍՈՒՆԱԹ** *«թլփատութիւն». առանձին գործածուած չէ. որից* **սունաթել** *«թլփատել» Յայսմ. մրտ. 28. Տաթև. տճկ.։*

=Արաբ. سنّت sunnat *«թլփատութիւն»։ —Հիւբշ. 517։*

Ուղիղ մեկնեց նախ **ՆՀԲ**։

ՍՈՒՆԱՅՆԵԼ *«հառաչել, ախ քաշել». ամբողջ հայ մատենագրութեան մէջ մէկ անգամ գործածուած բառ. Այսպէս որ Հալածիցին ի տեառնէ, տեսանիցէ աչօք և սունայնիցէ. Սիր. լ. 20, ունի միայն ԱԲ։*

+**ՍՈՒՆԿՆ** *կամ* **ՍՈՒՆԳՆ**, **ն** *հլ. կրճատուած* **սունկ** *կամ* **սունգ**, **ո** *հլ. «սունկ, տճկ. մանթար. 2. մարմնի վրայ դուրս եկած մի տեսակ սնկանման պալար» Վստկ. 74, 174. Բժշ. Գաղիան. Տօնակ. Յայսմ.։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. spongos *ձևից, որից ունինք նաև յն.* σπόγγος, *տուտ.* σφόγγος *«սպունգ. փխբ. կոկորդի նշագեղձերը». ուրիշ լեզուի մէջ պահուած չէ այս արմատը. կայ միայն լտ.* fungus *«սունկ», որ փոխառեալ է յունարէնից. նշանակութեան տարբերութեան համար համմ. գերմ.* Sch-

wamm *«սպունգ. 2. սունկ»* և յատկապէս Erdschwamm *«սունկ»* (Walde *326*, Boisacq 899, Berneker 340, Pokorny 2, էջ 681): Meillet (Dict. étym. Jt. 386) *միջերկրեան լեզուից փոխառութիւն է համարում յն.* σφόγγος, *լտ.* fungus *և հյ.* սունկն: Lidén, Göteborgs högskolas årsskrift 1933, 52 *նախաձայնը բացատրելու համար նախաձևը դնում է* *psongos?

Նախ Canini, Et. étym. *էջ* 101 *լտ.* fungus *ձևի հետ և էջ* 102 *յն.* σύκεον *լտ.* ficus *«թուզ» բառերի հետ՝ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Bugge, Beitr. 22, *որ ընդունում և պաշտպանում է* Pedersen KZ 38, 200; 39, 422, 209=*Նպաստ* 10: *Սրան հակառակ է* Scheftelowitz BB 28, 283: *Հիմնք. յն.* σπόγγος-*ից կազմուած՝ ՀԲուս. § 2804 լտ.* fungus *բառից՝ Պատահական նմանութիւն ունի սանս.* ঘূঙ্গ çuṅga «ficus indica, spondias mangifera»:

ԳԻՒ.—Ջղ. սունգն, *Երև.* սունգը, *Ախց. Կր.* սունկ. *Ալշ. Ջթ. Խրբ. Մշ. Տփ.* սունգ, *Մկ. Վն.* սունգ՝, *Ագլ.* սո՛նգրն, *Ասլ.* սիւնգ, սիւ*, *Գոր.* սո՛նգներ, *Ղրբ.* սո՛նգ՝ներ, սո՛յներ:

ՓՈԽ.— Վրաց. ხოკო սոկո *«սունկ» (որից յետ առնուած* սոկոն), *ուտ.* sämkal *«սունկ»?*

ՍՈՒՆԱՐ, *որ և* սուռնաբայ, սուռնափայ, սիւռնար, սուռնաբա, սիւռնապ *(գրծ.-աւ) «սատանայ, սատայէլ, ցուլ մոլորութեան, իշխան մահու» Վանակ. յոր. Վրդն. Երզ. Գնձ. գրուած է զուռնափայ Երզն. մաթ. 276 ա, լեառն սուռնաբայ Վրդն. սղ. ճխգ, էջ 484:*

=Անշուշտ օտար է. բայց մայր ձևը անյայտ:

ՆՀԲ «բառ. երր»: Ալիշան, Հին հաւ. 216 Թրք. «ընձուղտ» (տե՛ս զուրափէ):

ՍՈՒՍ *«մատուտակ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2806:*

=Արաբ. կամ պրս. سوس sūs *«մատուտակ» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 249 և* Steinschneider WZKM 12, 99):—*Աճ.*

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1908, էջ 124:

Սուսամբար *տե՛ս Սիսամբար:*

ՍՈՒՍԱՐ *«կուզ անասունը, ֆր.* marte, *տճկ. զերտէվա». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 221:*

=Քրք. صنسار sansar *«կուզ»:—Աճ.*

ՍՈՒՍԵՐ, ի–ա *հլ. «սուր, թուր» ՍԳր. Բուզ. որից* **սուսերաձիգ** *Դատ. ի. 25, 35, Դ. Թագ. գ. 26.* **սուսերամերկ** *ՍԳր.* **սուսերատար** *Ա. մնաց. իա. 5. Երգ. գ. 8. Եզեկ. լը. 4.* **սուսերահար** *Խոր.* **սուսերակիր** *Վրք. Հց. ևն:*

=Ասոր. ܣܦܣܝܪܐ safsērā *«սուր» բառից. այս էլ փոխառեալ է յն.* σαμψήρα *ձևի միջնորդութեամբ պհլ.* šafšēr *կամ* šamšēr>*պրս.* شمشير šimšīr, šamšēr *«թուր» բառից. af>ու ձայնափոխութեան համար հմմտ. մանուշակ> պհլ.* manafšak՝ *նոյն նշ.—Հիւրշ. 316:*

ՆՀԲ նոյն ընդ սուր: Böttich. Horae aram. 48, 177 *և* ZDMG 1850, 361 *ասոր. պրս. և յն. ձևերի հետ է համեմատում:* Müller SWAW 38, 576 *և* 593 *պրս.* šamšēr: Lag. Ges. Abhd. 72 *միայն ասորի ձևն է ընդունում, իսկ* Arm. Stud. § 2030 *սխալ է գտնում կցել պրս. և յն. ձևերին՝ Հիւնք.* սայր *բառից՝* Patrubány SA 2, 14 *և ՀԱ 1907, 17 իբր կրկնական* սուր+սեր, *որի մէջ* *սեր<*Հնխ.* k'eru *«սուր, թուր». Հմմտ. սանս.* çaru, *գոթ.* hairus *«թուր»:*

ՍՈՒՍՈՒՆԻ *«մի տեսակ Հարկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գըտնում Շիրակաւանի անթուական մի արձանագրութեան մէջ. Ո՛չ շարխատ, ոչ համարելէ, ոչ սուսունի, ոչ եղին թաղար... (բոլորն էլ հարկերի անուններ). տե՛ս Վխմ. տար. էջ 247:*

ՍՈՒՍՐ *«մի տեսակ հողային կարմիր ներկ. կարմրադեղ, նօթ, սիղիկոն» Գաղիան, Վտակ. էջ 40, 143:*

=Անշուշտ սեմական փոխառութիւն է, բայց բուն մայրը անծանօթ. հմմտ. եբր. שָׁשֵׁר šāšēr *«կարմիր ներկ», որ ըստ* Gesenius[17], *էջ 866 փոխառեալ է ասուր.* šeršeru *«կարմիր սուտակ» բառից (*Delitzsch, Assyr. Handwb. 694 *այս բառը թողնում է անյայտ):—Աճ.*

ԳԻՒ.—Ալշ. Մկ. Մշ. Ջղ. սուր, երև. Սեբ. սուրս. խրբ. սօրս, Ակն. սիրս, Բն. սուրսօղ (<սուր հող) «կարմիր հող կամ կաւիճ», որի հետ նոյն է Վն. սուրաք «մի տեսակ կարմիր քար, որ հինայի նման ձեռներին են քսում».—Սեբ. սուրս նշանակում է նաև ծածկալեզուով «Փոքր-Ասիոյ Ղզլբաշ»։

+ՍՈՒՏ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ո՛չ-ճշմարիտ, կեղծ» ՍԳր. Եփր. ծն. Եղիշ. Փարպ. «սուտութիւն» Սղ. ե. 7. «սուտ տեղը» Ես. իը. 15. Փարպ. որից ստել «սուտ խօսիլ» ՍԳր. սուտակ «ստախօս, սուղ» Բուզ. գ. 5. սուտակասպաս «կեղծաւոր, շողոքորթ» ՍԳր. Ոսկ. եփես. սուտակասպասութիւն Ոսկ. բ. կոր. և մ. ա. 10, գ. 8. Եւս. պտմ. (գրուած սուտապասութիւն Տիմոթ. կուլ. էջ 256), սուտերդմնութիւն Բուզ. սուտապատում կամ ստապատում Ագաթ. Կորիւն. սուտհրեշտակ ՍԳր. ստաբան Ա. տիմ. դ. 2. ստագիր Վհ-ցօր. ստադատ Բուզ. ստախօս իմ. ա. 11, Եփր. ծն. աճսուտ Տիտ. ա. 2. Ագաթ. հաճապազասուտ Տիտ. ա. 2. Ոսկ. տիտ. երդրմնասուտ Յճխ. չսուտ Մեկն. ղկ. բանսուտ Յհ. կթ. կրկնութեամբ՝ սուտմուտ Կոչ. 325 և սաստկական նախամասնիկով՝ սափսուտ Եզն. (տե՛ս առանձին)։

=Բնիկ հայ բառ, հնխ. psudo- ձևից. սրանից է նաև յն. ψεῦδος «սուտ, ստախօսութիւն, խաբէութիւն», ψευδής «սուտ», ψεύδω, ψεύδομαι «ստել, խաբել», ψῦδρός «ստախօս» (Boisacq 1075). հնխ. ps- նախաձայն խմբի մէջ p ըստ օրինի ընկած, բայց իր միջոցով s անկորուստ պահուած է։ Ուրիշ լեզուի մէջ այս արմատը չէ պահուած։

ՆՀԲ սառյգ բառի հականակն է. սրանից յն. ψευδής Տէրվ. Altarm. 6 և Նախալ. 115 յունարէնի հետ հնխ. spud արմատից։ Վերի ձևով մեկնեց Bugge KZ 32, 25 (կրկնում է Brugmann Grdr.² 1, 511), որ չի ընդունում Հիւրշ. 492, առարկելով թէ այսպիսի ձայնափոխութեան ուրիշ օրինակ չկայ։ Հիւնք. սուտ հանում է սուռեր բառից, իսկ սուտակասպաս դնում է սուտակ «քարը»+յն. ἀσπάζομαι «ողջունել, մեծարել»։ Վերի մեկնութիւնը հաստատում է Osthoff SA 2, 49—53, Parerga 1, 233: Pedersen, Հայ. դր. լեզ. 150 մերժում է յն. ψεύθομαι և կցում է հսլ. sujĭ, սանս. çūnyá «դատարկ» բառերին։ Meillet MSL 22, 61 վերի ձևով։ Պատահական նմանութիւն ունի կաբարդին. փցը «սուտ»։—Canini, Et. étym. 166 սուտմատուտակ բառի մէջ՝ սուտ դնում է= սանս. sudha «հիւթ»։

ԳԻՒ.—Ախց. Կր. Շմ. Ջղ. Վն. Տփ. սուտ, երև. սուտ, սուր, Ալշ. Ջթ. խրբ. Հճ. Հմշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տիգ. սուդ, Մկ. Մրզ. Սլմ. սուբ, Սվեդ. սէօդ, Ակն սիւդ, Ասլ. սիւդ, սիւ*, Ագլ. Գոր. Ղրբ. սօտ. Թրքախօս հայերից՝ էնկ. սուդ «սուտ», սուդդան «սուտ, սուտէն» (տճկ. -dan բացառականի մասնիկով. Բիւր. 1898, 865)։ Նոր բառեր են սուտաճց, սուտասաճ, սուտասիկ, սուտզրոյց, սուտլացուկ, սուտլիկ, սուտխաբան, սուտխօսան, սուտկալ, սուտմանց, սուտմէն, սուտմտայ, սուտուփուտ, ստիլ, ստլիկ։

ՓՈՒ.—Վրաց. ხუტო სუტი «սուտ, ложный» (Ջուբինով² 1202).—բայց պատահական պէտք է համարել լազ. ցուդ «ստել, խաբել», մցուդի «խաբել», ցուդի «սուտ, ի զուր», ցուդաբա «սուտութիւն, կեղծիք», մրեցուդի «խաբեբայ», որոնց դէմ նշանակութեան տարբերութեամբ՝ Բուշ. ցուդար «ծոյլ, անգործ, վրաց. ցուդի «վատ, անօգուտ, պարապ», ցուդի կացի «պարապ մարդ», ցուդաղ «պարապ, անգործ»։

ՍՈՒՏԱԿ «մի տեսակ ծառ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 221։

ՍՈՒՏԱԿ կամ ՍՈՒՏԱԿՆ «կարկհան կամ կայծ կոչուած պատուական քարը» Ծն. բ. 12. Փիլ. այլաբ. Վրդն. ծն. «մեղեսիկ, ամեթովս». Ել. իը. 19, լթ. 12։

Հիւնք. պրս. շիյտէ «յոյժ պայծառ և լուսաւոր»։

+ՍՈՒՏԱԿԱՅ «ճանճ է մեծ քան զմեղու, ինքն անմեղր և մեղուաց թշնամի». ունի միայն Բառ. երեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 559. նոյնը նաև Վարդան Յունանեան, Ձեռաց. 1671, էջ 333. նկարագրութիւնից երևում է որ պիծակն է։

=Կազմուած է սուտ բառից, իբր թէ

«սուտ տեղը կեցող, ձրիակեր, ուրիշի աշխատանքը ուտող»։ Հաւանաբար Վարդան Յունաննանի յօրինած բառերից է՝ ըստ նմանութեան լատիներէնի. հմմտ. իր բառացանկում՝ սուտակա՛=*լտ.* ֆուկուս, սուտակասպաս=*լտ.* ֆուկա՛տուս: *Առաջինն է* fucus *«պիծակ», երկրորդը՝* fucatus *«կեղծ», որոնք թէև իրար հետ ո՛չ մի կապ չունին (*Walde *322), բայց երևի արմատակից էին ըստ Յունաննանի ստուգաբանութեան— Ա՛ն.*

*ՍՈՒՏՐԱ., *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Մագ. քեր. 228՝ հայերէնի մէջ օտար փոխառեալ բառերը թուելիս, իբր օրինակ. «Փակեղն, որ է յունարէն, քանզի ոչ գոյր մեր և ոչ էր սովորութիւն, և* սուտրա, *որ է սպիքուս (այլ ձ.* սպիտուս*), և կաղամար, որ է կալամաս, այսինքն աման գրչի, և այլ ինչ բազում, զոր ընտանացեալ մեզ ունիմք»։ Այլուստ անծանօթ է* սուտրա, *անծանօթ լինելով նաև տրուած բացատրութիւնը (*սպիքուս *կամ* սպիտուս*), անյայտ է մնում բառիս նշանակութիւնը. բայց պէտք է կարծել՝*

=*պրս.* ﺳﻮﺩﺭ sudra *«է տեսակ իմն հանդերձի, որ և ասի* գապաչէ *(փոքր կապայ), որոյ գրակն լինի մինչև ի մէջս, և թեզանիք նորին ի յուսս. և է զգեստ ինչ յատկացեալ պարսկական ազգինն»։*

Ադոնց, Արուեստ Դիոն. քեր. էջ 228 հանում է sudra *բառից, որով անշուշտ հասկանում է վերի պրս. բառը (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 113)։*

+ՍՈՒՐ, ո *հլ. «թուր, կտրելու սրեկ գործիք» ՍԳր. Ագաթ. «ժանտախտ» Ոսկ. մտթ. և ես. «բահի բերանը» Մեծոփ. յիշ. էջ 63 (այս իմաստով չունին բառարանները). «հատու, կտրող», փխբ. «մտքով, տեսողութեամբ, լսողութեամբ, ընթացքով են արագ» ՍԳր. եփր. ծն. և ել. ես. պտմ. Ոսկ. փիլիպ. եւագր. Կոչ. «շուտ, անմիջապէս» Անսիպք 13. «բարակ, պիլ (ձայն)» Փիլ. Պղատ. «կծու (համ ունեցող)» Տիմոթ. կուզ 324. որից* սրել *«դանակը սուրցնել» ՍԳր. Ոսկ. եբր. «դրդռել» Փիլ. լիւս. Զենոբ. 35.* սրանալ *«սուր լինել, սրուիլ» Յա. որդի. «ցցուիլ» Նար. «կրքով վառուիլ» Ոսկ. մ. գ. 8. «արագ յարձակիլ, խոյանալ, վազել» ՍԳր. Ոսկ. ես. եբ. «փախչիլ, հեռանալ» Ոսկ. հռովմ. 212.* սրակուտակ *(նորագիւտ բառ) Պարակ. շար. 47.* սրաբերան *Ոսկ. ես.* սրագոյն *Կոչ.* սրաթև *Վեցօր.* սրածութիւն *ՍԳր. ես. եբ.* սրակտուց *Ոսկ. ա. տիմ. բ.* սրունկն *Կոչ. 24, 248.* յեսանասուր *Եզեկ. ե. 1.* ֆաջասուր *Ոսկ. մ. ա. 7.* սայրասուր *Ճառընտ.* հրասրեալ *Թէոդ. խշ.* սրածայր, սրաշղա *(նոր բառեր), երբեմն նաև առանց սղման, ինչ.* սուրակն *Ոսկ. մ. ա. 2.* սուրակոխ *Ագաթ. § 12,* սուրազէն *Գնձ.—Այս արմատին է պատկանում նաև* սուր *«քաղցածութեան հիւանդութիւն, երբ ուտելով մարդ չի յագենում.* boulimie*», որից* սրալ *«սուր քաղցով հիւանդանալ» Ոսկ. պօղ. ա. 237, 479. (Եւ ի մարմինս է ինչ այնպիսի դժնդակ ախտ, զոր սուրն կոչեն բժիշկք, յորժամ ի բազում կարօտութեան սովիցի և սրայցէ, գասրիցէ և չյագիցէ. Եւ սովով և սրով* սրայի*)=յն.* βουλιμία*, որ բուն նշ. «արջառաքաղց». նոյնը նաև Ոսկ. ես. 21. Գէ. հտ։*

=*Բնիկ հայ բառ, հնխ.* kō-ro- *ձևից, որ կազմուած է* k'ō- *«սրել» արմատից՝* -ro- *մասնիկով. նոյն արմատի այլ ժառանգորդներն են՝ սանս.* çû-la- *«նիզակ»,* çiçā-ti *«սրել»,* çi-tá- *«տաաու»,* çāṇa- *«յեսան», զնդ.* saēni *«սուր ծայր, գագաթ», պրս.* sān *«յեսան», լտ.* cōs *«յեսան»,* catus *«սրամիտ», միջ.* cath *«իմաստուն» են։ (Հնխ.* k'ō- *«սրել» ձևափոխութիւնն է* ak'- *«սրել» արմատի, որի վրայ տե՛ս* ասեղն*) (*Boisacq 545, 66, Walde 141—2, Pokorny 1, 454, Ernout-Meillet 216)*:

Klaproth, Asia polygl. 104 *Բրբ.* sivri *«սուր» բառի հետ* Peterm. *21 զնդ.* suwrā: Gosche 45 *սանս.* çubhra, *զնդ.* suwra *և պրս.* sōzan, sūzan *«ասեղ» բառերի հետ* Böttich. ZDMG 1850, 361, Arica 81, 317, Lag. Urgesch. 935 *սանս.* çō *«սրել» արմատից* Pictet 2, 135 *սանս.* kšuri, čhurī, khurā, kšurā, *քրդ.* šūr, šjūr, *նաև հմմտ. զնդ.* suwri *«դաշոյն, սուր», «որ տարբեր ծագում ունի»։* Müller SWAW 38, 576, 593 *և 40, 12 և 46, 463 զնդ.*

suwri, *սանս.* çubhrí, *աֆղան.* tūra, *քրդ.* šūr, *բոլորն էլ* çubh *արմատից*։ Justi Zendsp. *296 զնդ.* sūra *ձևի տակ՝ իբր սանս.* çūla «*նիզակ*», *հպրս.* σῦρα; «*դանակ*» (*ըստ Հեսիքոսի*)։—*Պատկ.* Изслед. *14 լծ. հյ.* pnir: *Մատ* ЗВО *7, 74 զնդ.* sāta «*սրուած*» *բառից, ինչպէս ունինք* dāta=ստուր: *Հիմնբ.* սուսեր *բառից*։ Patrubány SA 1, 191 *և 2, 14, 171 դնում է հնխ.* k'ōros *նախաձևից և համմտ. գոթ.* hairus, *անգսք.* hjǫrr «*սուր, դանակ*»։ *Յիշում է առանց ընդունելու Հիւրշ.* IF Anz. 10, 49. *Մահերեան, Բանասէր. 1901, 177 Հեսիքոսի համաձայն ենթադրեալ հպրս.* *sura *բառից փոխառեալ է դնում*։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 117 երկու նշանակութեամբ իրարից բաժանելով՝ մեկնում է* սուր «*հատու*»=*լտ.* cōs, catus, *սանս.* çiçāti, *հյ.* սայր, *իսկ* սուր «*թուր*» =*յն.* ἄορ, *սանս.* asi «*սուր*», *լտ.* ensis. «*թուր*», *իբր հնխ.* ŋsōr: *Վերի ձևով մեկնեցին* Scheftelowitz BB 28, 284 *և* Lidén, Arm. Stud. *էջ 80*։ (*Շեֆթէլօվից համարում է* r *մասնիկ, ինչպէս* լիր, դիր, լուր *և* սուր): Karst, *Յուշարձ. 424 ԹՐ.* sür, sjür «*փորել, փորագրել*»։—**Սրալ** (*Հիւանդութեան համար*) *բառը ՆՀՌ մեկնում է «կամ է սրանալ, յարձակիլ և կամ սուր տեսութեամբ ցանկալեաց նեղիլ առ չլինելոյ ձեռնհաս», ԱՌ «բերանաբաց բաղձալ, բերնին ջրերը վազել, փափաքած բանին կարօտովը նեղուիլ». ուղիղ մեկնութիւնը տուաւ Վարդանեան ՀԱ 1914, 645, Բառաք. դիտ. Բ. 90*։ Pictet, *բ. տպ. Բ. 123 պրս.* sūl, sūlī «*խոփ*», *սանս.* çūla «*նիզակ*», *զնդ.* çūra «*աշտէ*» *ևն*։

ԳԻՒՒ.— *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սլմ. Սչ. Սհբ. Տիգ. Վն. Տփ.* սուր, *Մրղ.* սուս, *ՋԲ.* սույ, սուր (*բայց* սէօյիւց, սէօրիւց «*սրոց*»), *Հճ.* սույ, *Սվեդ.* սէօր, *Ասլ.* սիւր, *Ագլ. Գոր. Ղրբ.* սօր, *բոլորն էլ իբր ած.՝ «սուր, հատու» նշանակութեամբ. իսկ Մրղ. Սչ. Տփ. նաև իբր գոյական՝ «սուր, թուր» իմաստով։ Նոր բառեր են* սուրբրաւար, սուրճբանի, սրախոտով, սրացնել, սրճար, սրճարաւար, սրոց, սրոցաքար, սրոտել, սրուորիլ *են։—Նոյն բառից* -ոլ *մասնիկով յառաջացած ձև է* սլուր «*սուր*» (<սրուլ)՝ *որ տե՛ս առանձին. Համմտ. նաև* սուլուր, սուլով, սուրուլիկ, սուսուր, սուրուխ, սուլուլիկ, սլուլիկ, սլլուկ, *որոնցից* սուլուլ *ձևի համար տե՛ս հնից ունինք Մաղաք. աթ. 7. «Կանայքն իւրեանց ունէին զդականի սուլուլ»*։

ՓՈԽ.—Թերևս Հայերէնից է փոխառեալ բոհեմ. sura «*թուր*», *բայց պատահական նմանութիւն ունին բոհեմ.* saerao «*սրել*», šurt «*դանակ*», *վրաց.* სახრეցი საცრեվლი «*սրոց, յիսան*», *քրդ.* šur «*զէնք*», *նաև հունգ.* szúr «*խթել, խայթել*», *որ* Patrubány SA *1, 219 Հայերէնից է դնում*։

Սուրալ *տե՛ս Սոյր*։

***ՍՈՒՐԱՂԱՍՏԱՆԱՅ** «*ծոթբրնի նման մի բոյս է*» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2811*։

=*Արաբ.* سرقسطانة *բառն է, որ գտնում եմ* Steinschneider-*ի հատաքածոյի մէջ՝* WZKM *12, 93 առանց մեկնութեան. ըստ* Leclerc *II, № 1169 կարդացւում է* saraksāna *և է բոյս՝ որ* auron-*ի (գնդածաղիկ) նման տերևներ ունի. կարելի էր սխալմամբ կարդալ նաև* suraqsāna *և մի փոշու յաւելումով* سرقسطانة **suraqastāna*։—*Ահ.*

Վերի մեկնութիւնը տուաւ նախ Ահաո. (անտիպ), որից տասնեակ տարիներ յետոյ նոյնը նորայր ՀԱ 1926, 70։

+ՍՈՒՐԲ, ո *հլ. «մաքուր, անարատ, նուիրական, սուրբ» ՍԳր. Կիւրղ. ծն. Ոսկ. ես. (վերջին կրօնական իմաստի համար համմտ. սոգդ.* zp'rt «*մաքուր*», *որ քրիստոնէական սոգդերէնում ստացել է «սուրբ, saint» նշանակութիւնը). որից* **սրբել** *ՍԳր.* **սրբանալ** *Ղևտ. ի. 3. Եփր. եր. և ղևտ.* **սրբագիր** *Ոսկ. Եփր. և Եփես. Եփր. ա. թգ.* **սրբագոյն** *Ոսկ. մ. ա. 11, գ. 29.* **սրբական** *Կոչ. Ոսկ. մ. ա. 1.* **սրբակեաց** *Եւթգ.* **սրբամատոյց** *Ագաթ.* **սրբասաց** *Ոսկ. ես.* **սրբասէր** *Ոսկ. մ. ա. 3. Բուզ. Կորիւն.* **սրբազան** *Պիտ.* **սրբան** «*հրաստանի անցքը*» *Մծբ. 236.* **սրբիչ** «*մաքրող*» *Ագաթ. «ածելին» Թուց ղ. 5, Եղնկ. ե. 1, Եւս. պամ. Ոսկ. ես. (այս իմաստով համմտ. պրս.* پاکی pākī «*ածելի*», *որ գալիս է* پاك pāk

«մաքուր» բառից). Նոր բառեր են **արբագրել, արբանկար, արբապղծել, արբապղծութիւն, արբատան, արբատեղի** *են։ Նոյն բառի ռմկ. ձևերն են* **արբկիկ, սպրկիկ, սպրկուկ, սպկիկ, սպրիկ** *«մաքուր, ջինջ» Լմբ. մատ. 490. Սմբ. դատ. 48, 120. Վստկ. 9, 57, 85. Շնորհ. առ.* **սրպիկ** *Տաթև. ամ. 97, 361.* **սպրկիկ, սպկիկ** *«ամբողջապէս, յայտնապէս» Անսիզք 11, 37, 59, 67. կայ և* **սպրկիկ** *լեզու,* **սպրկիկ** *խօսիլ Ոսկիփ. (Բազմ. 1921, 368)։*

=Բնիկ հայ բառ, հնխ. k'ubhrò- *ձևից, որից ծագում է նաև սանս.* çubhrá- *«փայլուն, պայծառ, գեղեցիկ, մաքուր»։ Պարզ արմատն է հնխ.* k'u-*>վեդ.* çu-*, որից կազմուած է* bh *ածականով և* -r- *մասնիկով. Համմտ. ուրիշ ածականներով* çundhati *«սրբել, մաքրել»,* çuddhá- *«մաքուր»,* çúmbhati *«փայլիլ, զարդարուիլ»,* çúčis *«փայլուն, մաքուր» են։ Այս բառերը գործածական են Ագնիի և ուրիշ աստուածութեանց համար. յատկապէս* çuddhás *ունի «սուրբ» կրօնական իմաստը, որ և հայերէնի էլ իմաստն է։ Միւս լեզուներից միայն իռլ.* cuanna *«գեղեցիկ, սիրուն, նուրբ» ունի այս բառի համապօրը (*Sommerfelt BSL 24, 222, Pokorny 1, 368*)։—Հիւբշ. 492։*

ՆՀԲ լծ. արաբ. **չեռիֆ**, *պրս.* **սիւրպէ** *և հյ.* **ջուրբ** *«ջրով»։* Böttich. Arica 28, 98 *զնդ.* suwra *«պերճ»,* suwri, *սանս.* çubha, çubhra, *յն.* κομψός *«վայելուչ, նազելի»։* Müller SWAW 38, 578 *սանս.* çubhra, *ուր յիշուած է նաև թէ* Justi *հայ բառի հետ նոյնացնում է* Σαρπ (ηδών) *յատուկ անուանը։ Հիւբշ.* KZ *23, 19 և* Arm. Stud. § 256 *ունի ուղիղ մեկնութիւնը։ Տէրվ. Երկրագունտ 1883, 171 վերի ձևով, Պարոնեան, Երկրագունտ 1885, 486 արաբ.* **չէրէֆ** *և հյ.* **սերովբէ** *բառերի հետ։ Արշէզ, ՀԱ 1896, 270* **արբ** *«ջուր» արմատից. բուն նշանակում է «ջրով մաքրել, լուալ». Համմտ. լտ.* sorbeo: *Հիւնք. ռմկ.* **սիւփիւրմէլ** *«աւելի»։ Ալիշան, Հին հաւ. 376 գոթ.* sifer *«սուրբ»։* Bugge, Lyk. Stud. 1, 40 Σίβρος *գետի անուան և փռիւգ.* παρτοσυβρα *«անմեղ»=պարտասուրբ բառի մէջ։* Jensen *ՀԱ 1904, 271 հաթ.* s..pa *բառի հետ։* Karst, *Յուշարձ. 407 սումեր.* šub, sub *«մաքուր, պայծառ», 424 թիր.* seb, süp, suv *«ողորկ, մաքուր, առողջ», օսմ. չաղաթ.* sipûrmek *«աւելել»։*

Գիւր.—Մշ. **սուրբ'**, *Զթ.* **սույբ'**, **սուրբ'**, *Ագլ. Ալշ. Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Հմշ. Մկ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տիգ.* **սուրփ**. *Ննխ.* **սուրփ, սուփ**, *Տփ.* **սուրփ, սուփ, սբփ**, *Մրզ.* **սուսփ**, *Սվեդ.* **սէօրփ**, *Անտ.* **սիւրփ**, *Ասլ.* **սիւրփ, սիւր***, *Գոր. Ղրբ.* **սօրփ**, *Վն.* **սբփ** *(Ակն. յգ.* **սրփուճաք***), որոնք ունին միայն կրօնական նշանակութիւն։ Սովորական իմաստով են Մշ.* **սէրսուբ'**, *Ալշ.* **սէրսուփ**, *Մկ.* **սոբսուփ** *«մաքուր» (նաև Բլ. Խզ. Խլ. Խն. Հզ. Վն.)։ Բայական ձևով ունինք Ագլ.* **սրբիլ**, *Ջղ.* **սրբ'ել**, *Մշ.* **սրպել**, *Սլմ.* **սրփել**, *Պլ.* **սրփէլ**, *Ասլ.* **սրփէ'լ**, *Գոր. Ղրբ. Տփ.* **սբրփիլ**, *Վն.* **սրպել**, *Հմշ.* **սրփուշ**, *Ատափ.* **զբրբ'էլ**, *Սչ.* **զրբ'ել**, *Շմ.* **սիրփիլ**, *Հճ.* **սույբ'ել**։ *Նոր բառեր են* **սերսփել, սերսփիկ, արբանիճ, արբատեղ, արբատր, արբոտել, արբուճակ, արբորբանալ, արբոտուճ, արբօրէճ**։

Փոխ.—Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ կայ **արբարան** *նբր. ը. 2, թ. 1. Խզմէթճիէ արբարանէ (Սրբութեանցն պաշտօնեայ), ժը տընէռա տայիր արբարան (պաշխարհական արբութիւնն)։*

ՍՈՒՐԽԱՄԱՀԻ *«քաղցր ջրի մի ձուկ է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վրդ. առ. 292։*

=Պրս. سرخ ماهی surx māhī *«կարմիր ձուկ, գեղարքունի»։*

Ուղիղ մեկնից Մատ, Վրդ. առ. I, էջ 221։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ, *ի–ա հլ. «թղթատար» ՍԳր. Եւս. պտմ. որից* **սուրհանդակօրէն** *Նար. խշ.։*

ՆՀԲ **սուր** *կամ* **սուրհալ** *բառից։ Տէրվ. Նախալ. 110* **սուրալ** *կամ* **սուրհալ** *ձևից։ Հիւնք. յն.* ἄγγαρος *կամ* ἀγγαρευτής *«պարսից սուրհանդակ»։* Patrubány SA 1, 217 *պրս.* surx *(սանս.* çukra*)+*andak *«հղեակ»։ Մատ.* Грам. др. арм. *204* **սուրհալ** *բայից։ Հիւբշ.* IF Anz. *10, 36* -andak *մասնիկով պրս. փոխառութիւն։*

ՍՈՒՐՀԱՊ *«մի տեսակ քամի». ունի միայն*

ԱԲ. վկայութիւնը տե՛ս յաւսմն բառի տակ։

ՍՈՒՐՃ «խահուէ, կոֆէ»։ Նոր ժամանակի բառ, որից սրճարան, սրճագործ, սրճեփ, սրճարանապետ, սրճաման, սրճաղաց, սրճամոլ ևն։ Սուրճը ժե դարում Եթովպիայից սկսեց տարածուել ամբողջ Արևելքում, որից անցաւ Եւրոպա։ Բառիս հնագոյն գործածութիւնը 1787 թուից ունի Ջուղ. էջ 203՝ երկու անգամ. «Տան նմա սուրճ, այսինքն զահֆա առ ի ըմպել. և երբ աւարտեաց զարբումն սրճոյն, այսինքն զահֆային...» և 1788 թուից (Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. էջ 110)։

*Ոմանք համարում են բնաձայն. ուրիշներ սարքուած սև ջուր բառից և յատկապէս Վիեննայի միաբաններից մէկի ձևոքով։ (Պլ. ծածկալեզուով սև ջուր նշանակում է «սուրճ»)։

*ՍՈՒՐՍԱԹ «մի տեսակ հարկ» Դրնդ. 569։ Նոյն բառը սուրսուաթ ձևով ունի Առաք. պատմ. էջ 57. Թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեան և բռնութեամբ առին, նոյնպէս և զսուրսաթն՝ որ զկնի զօրացն բերել տային...

=Թրք. թթր. سورصات sürsat «ցորենի փոխադրութեան և ազատ վաճառքի նշան կամ արտօնութիւն, որ տալիս է տեղական իշխանութիւնը՝ ցորենի հարկն առնելուց և բաւարար պաշար հաւաքելուց յետոյ», այս բառը գործածական էր Դանուբի կողմերում. ուելի յետոյ նշանակեց «ժողովրդից իբր հարկ վերցրած ուտելիքէնի պաշար». Բուխարայում նշանակում է «պաշտօնեաներին տրուած թոշակ կամ ռոճիկ՝ դրամով, պաշարով և գարիով». ծագում է թրք. sür «քշի՛ր»+sat «ծախի՛ր» բառերից (Будаговъ, 1, 643)։—Ա.Ճ.

*ՍՈՒՓԱՐ «նեաի բուի ծայրը՝ որ երկճիւղ է և կպչում է աղեղի լարին. coche». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 253 բ, իբր նոր բառ։

=Պրս. سوفار sūfār «ծակ. 2. ծակ ասղան և մախաթի. 3. է այն տեղի նետին՝ որ անցանէ յաղի լարին աղեղան» (ԳԴ)։—Ա.Ճ.

ՍՈՒՔ «ամուլ, զաւակ չունեցող այր». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մծբ. 292. «Եւ ցիսրայէլ ասաց. Մի՛ եղիցի քեզ այր սուք և կին ամուլ. և դարձեալ յաւել և ասաց. Մի՛ եղիցի անճետ և անզաւակ յերկրի ձեր». Համմտ. բ. օր. ե. 14 «Մի՛ լիցի ի ձեզ անծնունդ և մի՛ ամուլ», Ել. իգ. 26 «Եւ մի՛ եղիցի անսերմն և ամուլ յերկրի քումմ»։ Նոյն բառը մի քիչ խառնակ ձևով գործածուած է երկրորդ անգամ Գիրք Թղ. 329—330. «Եթէ ոք կրճատեսցի կամայ կամ ակամայ, կամ յաւագեաց կամ ի բժշկաց կամ յայլ դիպուածոյ իմեքէ, մի՛ իշխեսցէ գալ ի կարգ քահանայութեան... (զի Մովսէս) օրէնսդրեալ գրեաց, թէ Մի՛ մատուցանեսս Աստուծոյ զմոլեկանն, և մի՛ զկրճատականն և մի՛ զմիորձին և մի՛ որ բնաւ սուքն է» (տպուած է բնաւսուքն է)։—Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 241։

*ՍՈՒՔ «բժշկական մի նիւթ» Մխ. բժշ. 96։

=Արաբ. պրս. سك suk «մուշկով և խէժով ու վարդաջրով պատրաստուած անուշահոտ մի բաղադրութիւն»։ Աւելի ընդարձակ տե՛ս Seidel, Մխ. հնր. § 278։—Ա.Ճ.

Վերի մեկնութիւնը տուաւ նախ Աճառ. (անտիպ), որից անկախաբար Seidel։

ՍՈՒՔԱՐ «հովանոց». ունի միայն Բռ. երեմ. էջ 239։

*ՍՈՒՖ «ընտիր ասուելայ կտոր». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Մաթ. Եւագր. 51. «Դու աղտեղի չուխայ ես զգեցեալ, պարտ է քեզ զի սուֆ հոգնիս և շուտ և այլ»։

=Պրս. صوف sōf «ոստայնանկական պաղպաջուն գործուածն զոր կազմեն ի նուրբ մազից այծու, կորզելով զնոսա յատակէ երկայն մազից նորին» (ԳԴ). արաբ. صوف ṣūf «բուրդ. 2. ասուեղէն պատառ»։—Ա.Ճ.

*ՍՈՓԵՍՏԷՍ «իմաստակ, գիտնական» (արդի դրականում «սուտ փիլիսոփայ») Բուզ. 60, 103, Եւս. քր. 584, 589, որ և սոփեսառս Եփր. ա. կոր. 54. սովփեսաէս Նոնն. 14. կրճատ՝ սոփեստ Նար. որից սոփեստութիւն Շնորհ. յուդ.։

=Յն. σοφιστής «իմաստուն», որ գալիս է σοφία «իմաստութիւն» բառից։—Հիւբշ. 380։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՍՈՓԵՐ (ի, ի-ա հլ. ըստ ՆՀԲ. բայց կայ

միայն սեռ. սուփերի Նար. էջ 231, Մծբ. 449) «գիր, գիրք, մատեան, գրուածք» Նար. 231, 268. Մաշտ. Մխ. այրիվ. էջ 3. որից կրճատմամբ (կամ աւելի՝ վրիպակաւ) սուփէ, ի հլ. «գիր, տառ, վանկ» Անան. ակեղ. կայ նաև սեփիր «գիրք» Բառ. երեմ. էջ 285։

=Ասոր. ܣܦܪܐ sefrā «գիրք, գրութիւն». բնիկ սեմական արմատ է. համմտ. եբր. סֵפֶר spr, sfr «պատմել, թուել, գրել», מִסְפָּר mispār «թիւ», סוֹפֵר sōfēr «գրող», סֵפֶר sēfer «նամակ, գիրք, գրութիւն», סִפְרָה sipərā «գիրք», ասոր. ܣܦܪܐ sāfrā «գրող», արամ. סָפְרָא sāfrā «գրող», արաբ. سفر sifr «գիրք», որոնք բոլոր համարւում են հին փոխառութիւն ասուրականից. համմտ. ասուր. šip-ru 𒁹𒊏𒀸 կամ šip-ri 𒁹𒊏𒀀 և կամ ši-pir 𒅗𒁹𒊏 (գաղափարագրով 𒁹𒊏𒀸 šipru) «առաքումն, ուղարկուած բանը, գրաւոր կամ բերանացի մէկին ուղարկուած տեղեկութիւն, հաղորդագրութիւն, լուր, նամակ», որից 𒊏𒁹𒅗𒀸 ša-pi-ru «գրող, նամակ գրող կամ կարդացող». բոլորի բուն արմատը 𒊏𒁹𒊏 ša-pa-ru «ուղարկել», որից «նամակ ուղարկել», յետոյ «նամակ գրել» և վերջապէս «գրել, հաշուել, պատմել» (Strassmaier, Alphab. Verzeichn. 1029, 993, 990, Delitzsch. Assyr. Handwört. 682—3):—Հիւրշ. 317։

Նախ ՀՀՒ համարից եբր.։ ՆՀՒ եբր. սոֆէր, սէֆէր: Հիւնք. եբր. սոֆէր «գրպիր» բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ Müller WZKM 8, 284 (հյ. Քրդմ. ՀԱ 1894, 295)։

Սուփեր «շափիւղայ» տե՛ս Սափիրայ։

*ՍՈՓԻ «իմաստուն»

*ՍՈՓԻԱՅ «իմաստութիւն»} ունի միայն Բառ. երեմ. էջ 289—90։

=Յն. σοφία «իմաստութիւն»։—Ա՛ճ.

*ՍՈՅԻԱ ՈՒԹԻՒ «իմաստութեամբ և ուղիղ կանգնած» Պարզ. էջ 187, 189, 193. «Սոֆիա ոռթիւ, որ է իմաստութեամբ որթիւ, ակայք երկիր պագցուք». նաև «իմաստութեամբ օրթիւ, սոֆիա» Պարզ. 361. «Սոֆիա օրթիւ» Պարզ. 363. պարզապէս «սոֆիա» Պարզ. 419, 437, «սոֆիայ» 424։

=Յն. σοφία ὀρθοί նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց Տաշեան, Պարզ. էջ 187։

*ՍՊԱԹԱՐ, ի–ա հլ. «բանաւոպետ, դահճապետ» Ճառընտ. «զինակիր» Սեբ. Հրտ. Պտկ. 114. «պալատական մի պաշտօնեայ» Սմբ. պատ. տպ. 1856, էջ 18=Շահն. 37. Յայտմ. նոյ. 23. գրուած է նաև սպատիար «զինակիր» Մխ. դտ. 263 (միայն մի ձեռ.)։

=Յն. σπαθάριος, որից լտ. spatharius «թրաւոր», վրաց. ხშათარი սպաթարի, «զինեալ, զինուոր». ծագում է յն. σπαθή «թուր» բառից։ Սեբ. 114 ունի նաև սպաթար և կանխատաս, որ ծագում է յն. σπαθαρόκανδιδᾶτος բառից և որի դէմ ԺԱ դարու մի արձանագրութեան մէջ ունինք երկու անգամ սպաթար կանկիատաս (Վիմ. տար. էջ 27)։—Հիւրշ. 380։

ՆՀԲ յն. σπαθή «թուր» բառից։ Ուղիղ մեկնեց Պատկ. հրտ. Սեբ. էջ 202։

*ՍՊԱՀ, ի հլ. «գունդ, բանակ, զօրական» Ա. մկ. ը. 20. Կոչ. 18. Եղիշ. բ. էջ 23. որից սպահական «իշխանական, ազատական» Սկեւռ. լմբ. սպահապետ «զօրապետ» Ա.Բ. այս բոլորը հնագոյն ձեւեր են, որոնց աւելի նոր վիճակն է՝

*ՍՊԱՅ, ի հլ. «գունդ, զօրք, բանակ» ՍԳր. Կոչ. Խոր. ՅՀ. կթ. որից սպայազօր ՅՀ. կթ. սպայակոյտ ՅՀ. կթ. սպայապետ Կորիւն. սպայասալար Լմբ. առ լև. (յետնաբար կազմուած հայերէնի մէջ՝ փխ. սպասալար բառի, որ զուտ իրանեան բարդութիւն է).— բառիս ընթերցման համար կարեւոր է սրպայուրիւն գրչութիւնը մի ոտանաւորի մէջ՝ Նոր վկ. էջ 509 (Ժէ դարից)։ Նոր գրականում սպայ իր իմաստը փոխելով դարձել է ո՛չ թէ «զօրք կամ բանակ», այլ «զօրքը վարող աստիճանաւորներից մին, օֆիցեր, officier», որից և նեպասպայ։

=Պհլ. 𐭮𐭯𐭲 spāh, պրս. سپاه sipāh, (նաև ispāh, sipah, ispah) «զօրք, բանակ», գնդ. 𐬯𐬀𐬎𐬎 spāδa-, հպրս. spāda- (պահուած միայն Taxmaspāda- յատուկ անուան մէջ), օսս. afsād, älsád «խումբ, բանակ,

գունդ, բազմութիւն» (Horn § 669): *Պարսկերէնից են փոխառնալ Բրք.* sipahi, *քրդ.* spahi, *սերբ.* spahija, *լհհ.* spahi, *ռում.* spahiu, *յն.* σπάχιδες, *ֆրանս.* spahi, cipaye: *Համմտ. Նաև* **սպարապետ, սպասալար**:— *Հիւբշ. 239։*

Նախ ԳԴ դրաւ պրս. **սիփաի** *ձևից փոխառնալ։ ՆՀԲ նոյն է համարում* **սպայ, սպաի** *և* **սեպուհ**, *ռմկ.* **սպաիի**, *պրս.* **սիբաի, սիբաիի**, *երր.* **ձապա, սէպա**, *յորմէ* **սաբաւովր** Spiegel, Huzw. Gram. 189—190 *պրս.* sipāh, *պհլ.* sipās: Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 107 *պրս.* sipāh, *զնդ.* spāδa: Lag. Btrg. bktr. Lex. 8 *պրս.* sipāh։ Justi, Zendsp. *էջ* 303 *զնդ.* spāδa *ձևի տակ՝ ծանօթ բառերի հետ։ Գարագաշեան, Քնն. պատմ. Բ. 10* **սեպուհ** *բառի մի այլ ձևն է։*

ՓՈԽ.— *Վրաց.* **սպա** *«բանակ, գունդ» թուում է հայերէնից. իսկ* **իսպաորա** *«աստիճանութիւն», իսպաեռադ «աստիճանաբար» պարսկերէնից են։ Տարբեր են* **սեփե** *«արքունի պալատ, տէր, թագաւոր», սեփեծուլի «իշխան, սեպուհ» (որից* **սեփծուղ** *խոր.),* **սեփորա, սեփեորա** *«իշխանութիւն»։*

ՍՊԱՅ *«զուսպ». ունի միայն Բառ. երեմ. էջ 290։*

***ՍՊԱՆԱԽ** *«շոմին, ծմել բոյսը» Ժշ. Մխ. առակ.։*

=*Պրս.* اسپناخ ispanāx *հոմանիշից։ Այս բոյսի հայրենիքն է Պարսկաստանը, ուր ըստ* Olivier *(տե՛ս* Voyage dans l'empire ottom. l'egypte et la Perse, 1802) *ինքնաբոյս է։ Այս երկրից հին ժամանակ արտածուելով՝ Արաբների միջոցով տարուեց Սպանիա, որտեղից էլ տարածուեց ամբողջ Եւրոպա և Ասիա։ Արաբացի գրող* Rāzi *յիշում է նոյն բոյսը Թ դարում։ Մեր մէջ առաջին յիշատակութիւնը ԺԲ դարից է։ Բառիս եւրոպական ձևերն են սպան.* espinaca, *իտալ.* spinace, *հֆրանս.* espinard, espinoche, *ֆր.* épinard, *պորտ.* espinafre, *մլտ.* spanachium, spinacium, *նյն.* σπινάκια, σπανάκι, *գերմ.* Spinat, *ռուս.* шпинатъ *ևն, բոլորն էլ արաբ.* اسفاناخ isfānāx *(Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 544) մայր ձևից։—Հիւբշ. 277։*

Մխ. Հերացի ծաղրելով դնում է հին մի բժշկի ստուգաբանութիւնը. «Բժիշկ ոմն բնախօսէր, ստուգաբանելով զանուն բանջարին կոչելոյ սպանախ, եթէ է (ոք) հիւանդ, զի սպանանել արժան է նախ և ապա զնա տալ կերակուր»։ Եւրոպացիք էլ երկար ժամանակ հանում էին բառս լտ. spina *«փուշ» ձևից։ Ուղիղ մեկնեց ՆՀԲ, որից* Lag. Arm. Stud. *§ 2036։*

ԳԻՒՐ. Ախց. **սպանլըղ**։

ՍՊԱՆԱՆԵԼ *«մեռցնել» ՍԳր. Ոսկ. մաթ. Փարպ. պարզ արմատը* **սպան**, *որով գըրուած նաև* **սպաճել**. *այս արմատից են* **սպանութիւն** *ՍԳր.* **սպանող** *ՍԳր. Եզն.* **սպանումն** *ՍԳր.* **մարդասպան** *ՍԳր. Ագաթ.* **նայրասպան** *Եղիշ.* **եղբայրասպան** *Իմ. ժ. 3.* **տիրասպան** *Բ. Թագ. Բ. 31. Ագաթ.* **տիրասպանու** *Ոսկ. կողոս. Բուզ.* **կռակասպան** *Փարպ.* **նոգեսպանութիւն** *Փարպ. ևն։ Ցիշելու արժանի է* **սպանակ** *«հզիպտական մի չափ» Սահմ. էջ 199, իբր թէ Թրգմ. յն.* κανών *հոմանիշից՝* κάινω *«սպաննել» բայից. (այսպէս էին ստուգաբանում, իբրև թէ նոյն չափական գրութեամբ առաջքը առնում էր Նեղոսի ջրի պատճառաւ ծագած կռիւների և սպանութեանց). յետնաբար ձևափոխուելով գրուած է* **ասպանակ**, *գրծ.* **ասպանակաւ** *Մխ. այրիվ. էջ 49,* **ասպանակ** *Լծ. գր. նաղխանդ. (մեկնելով Սառապիսեայ վայոց) վերջին մեկնութիւնը սըխալ հասկանալով Հբուս. § 171 և եգիպտական* **Սառապիսը** *առնելով իբր լտ.* sarapias, *մեկնում է «բոյս կամ եգիպտացւոց Սերապիս չաստուածոյն գլխարկը՝ որ էր գրիւ մի, իբր նշանակ առաւտութեան բերոց»։ Նորայր ՀԱ. 1921, 105 ցոյց է տալիս, որ վերի* **ասպանակն** *է։*

Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, *140 զնդ.* *spāna *«սպանութիւն» ձևից. Համմտ.* spā *«վայր ձգել», *spaya=Հյ.* **սպի**: *Տէրվիշ.* Altarm. *58 գերմ.՝* spannen *«ձգել, պարզել, լարել», յն.* σφήν *«սեպ»,* σφηνοῦν *«գամել, մխել» են բառերի հետ։ Գարագաշեան, Ծաղիկ*

1891, էջ 89 յն. սբէվաօ: *Հիմնք. յն.* σβέννυμι «*շիջուցանել, սպանանել, սպականել*», σφάζω «*զենուլ, սպանել*»: Patrubány SA 1, *էջ 198 զնդ.* spā «*պարսել, նետել*», *իսկ Բանաս. 1901, 30 յն.* σπανία «*պակասութիւն*», *իբր հնխ.* spn *արմատից:*

Գիւր.—Ալշ. Մշ. Սլմ. Վն. ըսպաանել, *Ղրբ. Մրզ.* սպաանել, *Ջղ.* սբպաանել, *Ախց. Երև. Կր.* սբպաանել, *Ագլ. Մկ. Շմ.* սպանիլ, *Հճ.* սբաանել, *Մշ.* սբ'աանել, *Զթ.* սբաանիլ, սպանիլ, սբ'անիլ, *Գոր.* սպա'նիլ, *Սվդ.* սպոնիլ, *Տիգ.* ըսբնել, *Պլ. Սեբ.* ըսբաանել, *Ասլ.* ըսբաանե'լ, *Տփ.* սբպա'նիլ, *Հմշ.* սբօնուշ, *Խրբ.* բաննիլ: Նոր *բառեր են* սպաանոտել, սպաանոտուիլ, սպաանուկ:

—ՍՊԱՆԴ, ի *հլ.* «*զոհ, մատաղ, զոհելը*» *ՍԳր.* «*սպանութիւն (մարդու)*» *Պղատ. օրին. որից* սպանդաանոց «*մի մորթելու տեղ*» *Ա. կոր. ժ. 25.* սպանդարան «*զոհարան*» *Իրեն. ցոյցք 21. Նար. 117.* սպանդագործել «*զոհել, մորթել*» *Փիլ. Լեւ. ա. 10:*

=*Հյ.* սպան(անել) *արմատից առած՝ -դ մասնիկով՝ փոխանակ -անդ. Համմտ.* եռալ-եռանդ:

ՀՀԲ, ՆՀԲ, Տէրվ. Altarm. 58, Meillet, Altarm. Elementarbuch 207 *ա և* BSL *հտ. 25, էջ 134 դնում են* սպան-անել *արմատից: Հիմնք. յն.* σπένδω «*հեղուլ քաւութիւն (ջուր, գինի, արիւն)*», σπένδομαι «*հեղանել քաւութեան, զոհուիլ*»: *Թիրեաքեան, Արիահայ բռ. 335 պրս.* gōspand «*ոչխար*» *բառի հետ:*

*ՍՊԱՆԴ «*կերեզմանատեղիի մէջ բուսնող դառն ու գարշահոտ մի բոյս, վայրի փիգենայ, *լտ.* peganum harmala L. (*Տիրացուեան,* Contributo § 325) *կամ* ruta graveolens L» (*ՀԲուս. § 2815, Արթինեան, Ածաշնչի տունկերը 72*) *Բժշ. Գազիան. Հին բռ. (Բրբ.* üzerlik, *Ղրբ.* զո'ռնիկ, *Երև.* ուզա'ռլիկ):

=*Պրս.* سپند sipand, *որ և* اسپند ispand, aspand, *պհլ.* spand, *աֆղան.* spānda *և փոխառութեամբ արաբ.* اسفند isfand «*վայրի փիգենայ, սպանդ*». *բոլորն էլ ծագում են զնդ.* spənta «*սուրբ*» *բառից, որին ցեղակից են հլ.* svętŭ *և լիթ.* šventas «*սուրբ*» (*բայական լեթթ.* svinêt «*տօնել*», *բոլորի հնխ. արմատը* k'ɥen- «*տօնել, որբագործել*». Pokorny 1, 471): *Բոյսը այս անունը ստացել է իրեն վերագրուած դիցաբանական նշանակութիւնից, ըստ* Lag. Ges. Abhd. 173 *և* Horn, Grdr. § 80: *Մինչև այսօր էլ Պարսիկները իրենց հայրենակից հին զրադաշտականների նման՝ իրենց մեռելները սրանով են պատում և խնկի տեղ սպանդ են ծխում:—Հիւբշ. 277:*

Դէորգ դպիր, Գիրք մեծագին և պատուական ականց, Պօլիս 1807, էջ 256, որից յետոյ ՆՀԲ *տուին ուղիղ մեկնութիւնը: Նոյնը նաև* Lag. Ges. Abhd. 173, Arm. Stud. § 2038:

Գիւր.—Սլմ. Վն. ըսպանդ, *Բլ.* սպանդ *կամ* սպանջ «*փիգենայ*». *շատ սովորական առած է Սլմ.* «*Նա՛ խայի խունկ էք, նա՛ տաշկու սպանդ*».—*Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 598 ունի և* սպանդուկ *ձևը (Վան), Ագլ.* պապունդ *կամ* պապունգ:

Սպանդարամետ *տե՛ս Սանդարամետ:*

*ՍՊԱՌ «*վերջ*» *Ոսկ. ա. Թես. Կոր. գ. 7. որից* ի սպառ «*բոլորովին, ամբողջովին, ցվերջ*» *ՍԳր.* սպառել «*վերջացնել, վատնել, հատցնել*» *ՍԳր.* սպառիչ *Վեցօր.* սպառազէն «*ամբողջովին զինուած*» *ՍԳր. Ագաթ. Ոսկ. Երր.* սպառուած *Դ. Թագ. ԺԹ. 25. Նեհմ. գ. 21. առսպառ Յոբ. լզ. 26. Ողբ. գ. 22. Ագաթ. Եզն. Կորիւն.* առսպառական *Ոսկ. մ. գ. 14. Եզն.* ոգեսպառ *Ագաթ.* շնչասպառ *Նար. յիշ.* կենդանասպառ *Նար. կրկնաբար՝* սպառոսպուռ, ի սպառոսպուռ, սպառ ի սպուռ, ի սպառ ի սպուռ *Ա. մկ. Բ. 42. Դատ. ե. 26. Ագաթ. Եւս. պատմ. ևն:—Կայ նաև* սպուռ *բովանդակ Մծբ. 306. որ ըստ Վարդանեան, Բառաբ. դիտ. Բ. 75 ուղղելի է* սպառոսպուռ:

=*Պհլ.* *spar *և* اسپر spur «*կատարեալ, լրացած, վերջացած*», spurīk «*կատարեալ*», spurīkīh «*կատարելութիւն*», anasparīk «*անկատար*», anavispurīk «*չլրացած, անկատար*», *հիւս. պհլ. (Թուրֆանի),* cispur «*կատարեալ*», *մանիք. պհլ.* עספור ispūr (Salemann, Man. Stud. 3AH 8, 107), *սոգդ.* 'spwrn «*կատարեալ*», *պազ.* spur, spurī «*կատարեալ*», *պրս.* سپری siparī, اسپر

isparī «վերջ, վախճան, կատարեալ», سپریدن siparīdan «կատարել, վերջացնել», զնդ. aspərəna- «լիակատար». կազմուած է par «լցնել» արմատից՝ us- նախդիրով։ Իրանեանից է փոխառեալ արամ. אספרנא asparnā «ուշադիր, խնամող, հոգատար» (բուն նշ. «կատարեալ, հիմնական») եղր. ե. 8 ևն։—Հիւբշ. 239։

Lag. Urgesch. 287 մեկնում է par արմատից՝ us մասնիկով և կցում է պրս. և արամ. ձևերի հետ։ Պատկ. Mamep. II. 2 պհլ. spōr «կատարեալ»։ Տէրվ. Նախալ. 114 կասկածով սփռել և փռել ձևերի հետ հնխ. spar «ցրուել, ցանել» արմատից, իբր յն. σπαίρω, σπείρω, սանս. sphur: Հիւնք. ասպար բառից՝ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. 208 պրս. սիփէրի «վերջ, կատարած»։ Պատահական նմանութիւն ունին ասոր. ܣܦܪܐ səfārā և արաբ. سفر šufr «ծայր, եղերք, սահման»։

Փիլ.—*Վրաց.* სპარაზენი սպարազենի նշանակում է «զօրապետ, գլխաւոր»։

ՍՊԱՌԱՆ «այտումն ի ծունկս ձիոյ. գերմ. Spath». *ունին միայն Քաջունի, Ա. 765, Գ 222 (Ֆր.* éparvin*) և Կոյլաւ, Բառ. գերմ. 1319ա.*։

=*Հֆրանս.* esparvain, *սպան.* esparavan *հոմանիշներից կազմված (տե՛ս* Littré-*ի բառարանը,* éparvin *բառի տակ)*։

Ուղիղ մեկնից Ստ. Մալխասեան (1935 մայ. 31)։

+**ՍՊԱՌՆԱԼ** «պատժելու վախ տալ, յանդիմանել» ՍԳր. Ագաթ. որից սպառնալից *Փարպ.* սպառնալիք ՍԳր. եղն. եղիշ. սպառնութիւն *նւս պտմ.* սպառնումն *նւս. պտմ. փիլ.* սպառնական *Արծր. Լաստ. ևն*։

=*Բնիկ հայ բառ, հնխ.* spr̥- *(լի ձևը* sper-, *բայց նաև* spher-*) «թափահարել, քացով տալ, քացոտել ևն» արմատից, որի միւս ժառանգներն են սանս.* sphurāti «ոտքով հրել, կոխոտել, դողալ, թափահարուիլ», sphúra- «դողդոջուն». vi-spharitam «արձակելը», զնդ. sparaiti «ոտքով կոխոտել», sparman «հարուածծ», պրս. سپردن saparda «կոխան ոտից եղեալ». յն. σπαίρω, ασπαίρω «դողդոջել, թափահարուիլ», լտ. sperno «ոտքի տակ առնել, մերժել, վանել, դէն քցել, արհամարհել, նախատել», իռլ. seir «կրունկ», լիթ. spiriù «ոտքով հրել», spárdau «քացոտել», ātsparas «դիմադրութիւն», լեթթ. speĩt «ոտքով հրել», անգսք. speornan «ոտքով հրել», spurnan «արհամարհել», հհիւս. sperna «ոտքով հրել», անգլ. spurn «աքացել, քացով տալ, մերժել, արհամարհել», հբգ. spurnan «ոտքով կոխոտել, հրել», spornōn «կրունկով հրել», firspirnit «գայթիլ», spor «հետք ոտից», նրգ. spur «հետք», spüren «որոնել», անգլ. spur «խրթան, դրդիռ, մղում, մղել, մտրակել, աճապարել», ինչպէս և «ոտքի խթան, մահմուզ» նշանակող բառերի գերմանական ընտանիքը՝ հբգ. sporo, մբգ. spor. գերմ. Sporn, հհիւս. spori, հոլլ. spoor, անգլսք. spora, անգլ. spur և գերմանականից փոխառութեամբ՝ իտալ. sperone, սպան. espuera, պորտ. espora, ֆրանս. éperon՝ ռուս. шпора, шпоры, աւելացնել կամիս. išpar- «ոտնակոխ անել, չարդել» BSL 33, № 99, էջ 139, տե՛ս Ernout-Meillet 923 (Walde 730, Boisacq 889, Kluge 462, Pokorny 2, 668)։

ՆՀՔ «որպէս թէ սպառեմ զքեզ ասել»։ Հիւնք. սպառել բայից՝ Թիրեաքեան, Աբրահայ բո. 336 հյ. սպառ կամ պրս. ispar «վահան» *բառից՝ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet BSL № 93, էջ 51։

***ՍՊԱՍ**, ու հլ. «պաշտօն, ծառայութիւն» ՍԳր. եղն. եփր. Դևտ. Եւագր. Ոսկ. «կահկարասիք, աման-չաման, տաճարի սուրբ բաժակ, զարդ, հանդէս» ՍԳր. նւս. պտմ. Ոսկ. Եփես. «սեղան, ճաշ, կերակուր» Վրք. հց. «ապուր» (հմմտ.* ոսպնասպաս «ոսպով ապուր» *Վրդն. ծն. հմմտ. նաև* ասպականասպաս *որ լծ. Նար. լե. մեկնում է «շան լափ», անշուշտ այս սպաս «ապուր» բառից կարծելով). որից* սպասել «յուսով կենալ» ՍԳր. Սերբր. «ծառայել, խնամել, հոգ տանիլ» *Մեկն. ծն. Վրք. հց. Շար. Տօնակ.* սպասումն *նւս. պտմ.* սպասաւոր «ծառայ, մատակարար» ՍԳր. սպասեակ կամ սպասիկ «խնամակալ. պահպանող» *Ոսկ. մ. ա. 18 և ա.*

տիմ. թ. վեցօր. 85. Եփր. թգ. 451 (որ և սխալմամբ սպաճիկ ՅՀ. կթ. 34). սպասկապետութիւն. *Ագաթ.* սեղանասպաս *Ոսկ. ղկ.* ռամիկսպաս *Բուզ.* դռացսպաս *Ճառընտ.* սուտակասպաս *ՍԳր. Ոսկ. Եփես.* պինասպասեակ *Փիլ. լիւս.* յատակասպաս *Կոչ.* մեծասպաս *վեցօր. Նոր բառեր են* աճսպասելի, սպասարկու, սպառողական, սպասուիլ *եև*

=*Պհլ.* *spas *«ծառայութիւն» բառից, որ թէև չէ աւանդուած, բայց ունինք մանիք. պհլ.* עסבאס 'spas *(կարդա՛* ispās*), սոգդ.* spās *«հսկել, ծառայել», մանիք. պհլ.* עסבאסיג ispasig *«ծառայ, հյ.* սպասիկ», (Salemann, Manich. Stud. ЗАН 8 (1908), *էջ 106), սոգդ.* spāsāk *«ծառայ», զնդ.* spas-yeiti *«լրտեսել, հսկել, պահպանութիւն տանել»,* spas-, spaštar *«դետ, լրտես», սանս.* spáçati, páçyati *«դիտել, նայիլ»,* spaça- *«դէտ, լրտես, պահապան»։ Սրանց պէտք է կցել նաև պհլ.* ספס spās=*պրս.* سپاس sipās *«շնորհակալութիւն» (*Horn *§ 698), որ անցել է «ծառայութիւն, շնորհակալութեան արժանի գործ» իմաստներից։ Հայերէնի մէջ «դիտել, նայիլ» իմաստը սովորական չէ. բայց նոյնը պահում է* յատակասպաս *«պայծառ տեսութեամբ, յստակ կերպով տեսնուած» (Հրեշտակք տեսանեն ըստ իւրաքանչիւր չափու կարգացն, այլ յստակասպաս տեսիլն Հօր՝ Որդւոյն միայն պահեալ է. կոչ.)։ Այս բառերի նախաձևն է Հնխ.* spek'- *արմատը, որի միւս ժառանգներից են լտ.* specto *«նայիլ, դիտել, ուշադրութիւն դարձնել, հսկել»,* specio *«նայիլ, տեսնել»,* species *«նայուածք, երևոյթ, տեսք, տեսարան, տեսակ, պատկեր, զարդ, առարկայ, կահ-կարասիք»,* speculum *«հայելի»,* aspectus *«երևոյթ, ձև»,* con-spectus *«ակնարկ, հայեացք, ներկայութիւն, քննութիւն, ընդհանուր ակնարկ»,* in-spector *«տեսուչ»,* spectaculum *«տեսարան», յն. (շրջմամբ)* σκέπτομαι *«ուշադրութեամբ նայիլ, դիտել, քննել, խորհիլ, հոգ տանիլ»,* σκοπός *«դիտող, հսկող, պահապան, պաշտպան»,* ἐπίσκοπος *«տեսուչ, եպիսկոպոս», հբգ.* spēhōn, *գերմ.* spähen *«դիտել, լրտեսել» հիսլ.* spā *«նախազուշակել, մարգարէանալ», ալբան.* paše *«տեսայ»։ Գերմանականից փոխառութեամբ՝ իտալ.* spiare, *ֆրանս.* épier *«լրտեսել», որից իտալ.* spione, *հֆրանս.* espie, *ֆրանս.* espion *«լրտես», որից էլ անգլ.* spy, *հոլլ.* spie, *գերմ.* Spion *և սրանից էլ ռուս.* шпіонъ *«լրտես»* (Kluge 458, 462, Pokorny 2, *659—660,* Walde 729, Boisacq 873):

Նշիւ սպաս՝ *լծ.* պաշտօն, պաս, պահ, *իսկ* սպասել՝ *լծ. լտ.* expecto, *պրս.* payistan: Lag. Urg. 544 *սանս.* spaç, speç *արմատների հետ*: Spiegel, Huzw. Gram. 190 *յիշում է պրս.* sipās *և պհլ.* spās *«շնորհակալութիւն»*: Justi, Zendsp. 303 *զնդ.* spaç *ձևի տակ։ Տէրվ.* Altarm. *71 և Նախալ. 114 վերի ձևերի հետ՝ իբր հնխ.* spaç *«սպասել» արմատից։* Lag. *Յն. Ագաթ. էջ 83 ծան.* սպասկապետութիւն *մնկնում է պրս.* sipāhī+պետ, *որ կրկնում են Տաշեան, Ագաթ. էջ 68 և Սարգիսեան, Ագաթ. էջ 241, բայց սխրժում է Հիւբշ. 239։* Bugge KZ 32, 64 *ընդունելով որ հնխ.* sp *տալիս է հյ. u՝ չի հաւատում թէ բնիկ է հյ.* սպաս *և դնում է իրանական փոխառութիւն։ Նոյն կարծիքն ունի նաև* Meillet, Rev, erit. *Թրգ. Բազմ. 1898, 119 ա ձայնաւորի պատճառաւ։ Հիւբշ. 492 կարծում է որ բնիկ է, որովհետև հյ. ա կարող է երբեմն հնխ. e, o ձայներին համապատասխանել. ինչ.* տասն, վաթսուն: *Այժմ ընդհանուր ընդունուած է այն կարծիքը թէ* սպաս *փոխառութիւն է։ Հիւնք. դնում է u մասնիկով* պաս *բառից՝ իբր պրս.* pās *«պահպանութիւն դիշերոյ», թրք.* baqmaq *«նայիլ»,* beklemek *«սպասել»։ Թիրեաքեան, Կարնամակ 51* զ-պաս՝ *իբր* զ-պահել: *Սանտալճեան,* L'idiome 15 *բևեռ.* sebas, *յն.* σέβας *«պաշտամունք»։ Պատահական նմանութիւն ունի արաբ.*

صفصف ṣa'fasa *«թանապուր, գուռ. սպաս» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 384):*

Գիմ.—Զլ. սպաս *«ծառայութիւն», Ալշ. Մշ.* սպասել, *Ախց. Ղրբ. Նխն.* սպասկ, *Ագլ. Շմ.* սպասիլ *«սպասել», Պլ.* բսփասալօր

«սպասաւոր» (փոխառեալ գրականից), երև. Ղրբ. սրպաս «թանէ սպաս, թանապուր», որ և Օվ. բասագան, վն. պաս, բուվան պաս, Ննխ. թանուպաս, երև. Ղզ. Տփ. բանէսպաս:

***ՍՊԱՍԱԼԱՐ** (ի–ա *հլ. բատ ՆՀՔ, բայց առանց վկայութեան*) *«զօրապետ» ՅՀ. կք. Յիշատ. որից* սպասալարութիւն *Յիշատ. աստւում է նաև* ասպասալար, *վրիպակով՝* սապասալար *Ուռհ. (ատէպ). Հայկական բարդութեամբ կազմուած՝* սպայասալար *Լմբ. առ լև։*

=Սասան. պհլ. spāh «զօրք, բանակ»+ sālār «սալար, զօրագլուխ», *պազ.* spāhsālār, *պրս.* sipāhsālār *«զօրագլուխ» (որ և* sipahsālār*), իրանեան հին ձևից էլ վրաց.* სპარსალარი սպարսալարի *«զօրապետ»։—Հիւբշ. 239։*

Աւգերեան, Լիակ. վրբ. սրբոց, ը. էջ 39 սպայ+*պրս.* sālār *բառերից։ Ուղիղ է մեկնում ՆՀՔ։* Dulaurier JAs. 18. 291 *դնում է* ասպ *բառից, իսկ արաբ.* isfahsalār *տառադարձուած է հայերէնից։*

***ՍՊԱՏԱՂԱՆՔ** «փափկութիւն, բարեկեցութիւն». *մէկ անգամ ունի Կիւրղ. Լև. «Որ յերկուց նիւթոց իցէ, սպատաղանաց հանդերձ իցէ»։*

=Յն. σπατάλη «հաճոյք, մեղկութիւն, շռայլութիւն, պերճանք (luxe), զարդարանք (օղ, ապարանջան են)»։

Ուղիղ մեկնեց ՆՀՔ։

Սպար *տե՛ս Ասպար։*

***ՍՊԱՐԱԿ** «դեղին կամ ծիրանի նիւրկ տուղ ծառ է.* arbor flava (ՆՀՔ), curcuma (*ՀՔուս. § 2817*), rhus cotinus L (*Տիրացուհան,* Contributo § 306), *ֆրանս.* fustet *(Քաջունի, Գ. 222)» Բժշ. գրուած նաև* սպուրակ, զապարակ, զաբարակ *(ՀՔուս. § 690)։*

=Պրս. اسپرک asparak *կամ* isparak «դեղին կոճ»*։—Հիւբշ. 277։*

Ուղիղ մեկնեց ՆՀՔ, որից Lag. Arm. Stud. § 2043:

***ՍՊԱՐԱՊԵՏ**, ի–ա *հլ. «զօրագլուխ, զօրապետ» ՍԳր. Ագաթ. Եղիշ. որից* սպարապետութիւն *Ագաթ.* սպարապետական *ՅՀ. կք. նոյն է նաև* ասպարապետ *Մծբ. Փարպ. որից* ասպարապետութիւն *Բուզ. իսկ հայկական բարդութեամբ է* սպայապետ *Կորիւն։*

=Հպրս. *spāδapati-, *պհլ.* spāhpat, *պրս.* سپهبد sipahbaδ, سپاهبذ sipāhbaδ *«սպարապետ», կազմուած* spāh *«բանակ»+*pat *«պետ» բառերից։ Արշակունեան շրջանին բառս տուել է հյ.* սպարապետ, *իսկ աւելի նոր սասանեան շրջանին՝ երկրորդ անգամ փոխառնուելով՝ եղել է* ասպահապետ:—*Հիւբշ. 240։*

ՀՀՔ ասպար *բառից։ Ինճիճ. Հնախ. Բ. 275 պրս.* սիփահի *բառից։ ՆՀՔ իրր սպայապետ և պրս.* սիբէհպէտ: Dulaurier JAs. *18, 291 և էմին,* Ист. Вардана *90,* Ист. Асохика *254* ասպ *«ձի» բառից։* Lag. Ges. Abhnd. 186 *հպրս.* *asabārapati *և պրս.* *suwārbaδ *«պետ հեծելազօրաց»։ Վերի ձևով ուղիղ են մեկնում* Müller SWAW 88 (*Բ. 1877*), *էջ* 15, *Հիւբշ.* ZDMG 36 (1882), 133 *և Պատկ.* Матер. *II.* 18: *Հիմնք. ասպար բառից։*

ՓՈԽ.—Ագաթանգեղոսի թարգմանութեամբ հայերէնից յունարէն և յունարէնից արաբերէն է տառադարձուած բառը اصبرابادس asbarābātas *«սպարապետ» ձևով (Մառ* ЗВО *16, 201)։*

ՍՊԱՐԴԻՒ *«գոյնը թոխլ, գունաթափ լինիլ, դժգունիլ». նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ գործածուած Կիչառ. 190. «Բերան իմ և լեզու ևս երկիւղիւ, որ և վարդ ի շրթանցս հոսէր. այժմ սպարդեալ լռեալ անբանութեամբ, հոտեալ ծորեալ ապականեալ և երեքն առեալ»։ Նոյնը ունի* սպուրդիլ *ձևով՝ երկու անգամ Առաք. լծ. սահմ. 308—9։*

ԳԻՒՒ.—Կենդանի է Ախց. Երև. Լ. Ղզ. Ղրբ. սպրբնիլ, սփրբնիլ, սփարբնիլ, *ինչպէս նաև* սպռիլ *(Երև. Վն.) ձևով. վերջինս ցոյց է տալիս որ* -դն- *մասնիկ է։*

***ՍՊԵՂԱՆԻ** (-ևոյ,-ևաց) *«վէրքի օձանելիք, մահլամ» Իմ. ժզ. 12. ևս. ա. 6. որից* սպեղանել *Մարաթ. Վրդ. առկ. 32.* սպեղանող *Յայտմ. սեպ. 4. գրուած* սպաղանի *Վրդ. առկ. 32։ Սրանից* էսպեղանապատ *«սպեղա-*

նի քսող» (նորագիւտ բառ). Սպեղանապատ թաթդ կիսամահին. Վրդ. անեց. 22։

=յն. σπλήνιον «վիրակապ» կամ սրանից փոխառեալ ասոր. ܣܦܠܝܢܝܐ esplēnyā «սպեղանի» բառից։ Ձևի կողմից երկուսն էլ մի քիչ տարբերւում են հայերէնից, բայց նշանակութեան կողմից համաձայն է ասորին։—Հիւբշ. 381։

ՆՀԲ վրաց. սալբունի։ Böttich. Rudimenta 33 դնում է ասորուց։ Հիւբշ. Ուս. փոխառ. բառից, Թրգմ. Տաշեան, էջ 42 դնում է ասոր. բառերի շարքը՝ կասկած յայտնելով թէ հայը յոյնի՞ց թէ ասորուց է փոխառեալ. իսկ Arm. Gram. 381 առանց տարակոյսի յոյնից է դնում։ Հիւնք. յն. σπίλας «սպի» բառից՝ հյ. -անի մասնիկով։

ՍՊԵՏԱՓԱՌ. *մէկ անգամ ունի Արծր. Հրտր. Պատկ. 303. «Հնր դլխոյ նորա ուղեբեկ (իմա՛ աղեբեկ) ջոկացեալ ի վերայ սպէտափառ ճակատուն»։ Բառ. երեմ. էջ 290 մեկնում է «պայծառ»։ Անշուշտ պէտք է հասկանալ սպիտակափառ «ճերմակ, պայծառ». Ագաթ. Խոր.։*

ՆՀԲ մեկնում է «սասպետափառ կամ սպիտակափառ»։ Müller SWAW 66, *276 ընդունելով երկրորդը՝ մեկնում է գնդ.* spaēta+փառ. *իսկ* Lag. Arm. Stud. *§ 2046 ընդունելով առաջինը՝ մեկնում է իբր գնդ.* aspōpaitiparəna: *Հիւբշ. 240 կարդում է սպիտակափառ, որով և մերժում է այս մեկնութիւնը։*

ՍՊՆՐՈՒԿ. *անծանօթ մի բոյս. մեկնուած է յն. իեբոս. Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 2818 և համարում է սպարա՞կ։*

Սպնուտ *տե՛ս Սպի։*

ՍՊՂՏ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Արշ. «Թագուցաւ յինէն գործս և եղաւ ի սպէտ մորթիղէն տապանակիս ի Սամուէլէ և ընկեցաւ ի խաղս գրանոցիս»։ ՆՀԲ համարում է նոյն ընդ սապատ «կողով»։*

ՍՊԻ (սպւոյ, սպեաց) *«վէրքի տեղը՝ նըշանը» ՍԳր. Ոսկ. Եբր. Եւս. պտմ. Կոչ. 415. որից* սպիանալ *Եփր. Համաբ. Անյ. բրձր.* սպի, սպիացուցանել *Ոսկ. ղկ.* սպնուտ *Պիտ. ըստ ԼԵՀ.։*

ՆՀԲ լծ. յն. σπίλος *«սպի»։* Müller, Kuhns u. Schl. Btrg. 5, 140 *գնդ.* *spaya *ձևից, իբր* spā *«վայր ձգել» արմատից=հյ.* սպանանել։ *Հիւնք. ըստ ՆՀԲ։ Թիրեաքեան, Բզմ. 1913, 339* բիծ, պիս(ակ), փիծ, պիղծ *բառերի հետ կըցում է Թրք.* փիս *«աղտոտ» ձևին։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. սբբա *«վէրքի նշան»։*

ՓՈԽ.—Կեսարիոյ Թուրքերը ունին esbe *Čəqarasən «էսպէ՛ հանես» անէծքի ձևը. Տ. Վ. Պալեան, Բիւր. 1898, 712* esbe *բառը կցում է հյ.* ասփուռ *բառի հետ, որ ծանօթ չէ և Թրք. ձևին էլ նման չէ։ Արդեօք ուզում է ասել* սպի՞։

Սպիճ *տե՛ս Սիպեան։*

ՍՊԻՆՏՐ *«մի տեսակ շաղախ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Հաւաք. 18. «Եւ սկսան արկանել զհիմն տաճարին ի մեծամեծ քարանց ի վերայ 12 սահանց. արճիճ ու պղինձ ու սպինտրաւ հալեցին հիման մէջ լցին ի հետ բոլխատին, որ պատն ո՛ւր ո՛ւր քան զպողպատ կու լինէր ի համէն մինչ ի գլուխն»։ Նոյն բառը գիտէ* Rivola, *էջ 126 ըսպետռոյ «aes cyprium արոյր, պղինձ»։*

Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեան. Բ. 144 նոյնացնում է ֆր. ciment, *լա.* caementum, *իտալ. > Պլ.* չիմէնթօ, *ռուս. > երև.* ցեմենտ *բառի հետ։*

***ՍՊԻՏԱԿ,** ի–ա *հլ. «ճերմակ» ՍԳր. եզն. «հրեսի սպիտակացուցիչ ներկ» Մծբ. Ոսկ. ես. «արծաթեայ մի դրամ» կիր. 219. Մաղաք. ար. 22. Տաթև. ամ. 315. հնից համմտ.* արծաթասպիտակ *(յն. «լաւ դրամ») Ողբ. դ. 3. յեռնաբար գործածուիլ սկսաւ իբր համապատասխան Թրք.* aqče *«դրամ» (բուն «ճերմակ») բառին. համմտ. Տաթև. ամ. կթ. արծաթն սպիտակ՝ զոր դրամ կոչեմք. որից էլ կրճատումով՝* ստակ, *որի հին վկայութիւնն ունի Տաթև. ամ. 320։ Սրանից* սպիտականալ *ՍԳր. եփր. ծն.* սպիտակարար *եզն.* սպիտակացուցանել *Մրկ. Բ. 3. Սերբր.* սպիտակածի *բ. մկ. ժա. 8.* սպիտակամազ *Ոսկ. ես.* սպիտակամորթ, սպիտակուցային *(նոր բառեր) են։ Ունինք նաև* սպիտ *«սպի-*

տակ» Հին բռ. և սպեա, որից սպեատփառ «սպիտակափառ» (տե՛ս առանձին)։

=Պհլ. spētak, պազ. spēda, պրս. sipeda «աչքի սպիտակուց, ձուի ճերմկուց, երեսը սնդուրելու սպիտակադեղ». ըստ այսմ մեր բառի նախաձևն է *սպէտակ, ուր անշեշտ է յետոյ դարձել է ի. հմմտ. նաև սոդդ. spet, ᵒspétᵒk «սպիտակ», պհլ. ʼspēt, պրս. سپید sipēd, سفید sifēd (նոր հընչումով sefid) «ճերմակ», քրդ. sipi, sipan «ճերմակ», sipik «ձուի սպիտակուց», աֆղան. spīn, բելուճ. ispēt, գնդ. 𐬯𐬀𐬎𐬌𐬙𐬀 spaeta- «ճերմակ», որոնց համապատասխանն է հյ. սպետ: Իրանեան բառերը ծագում են հնխ. k'ɥeit- «փայլիլ, պայծառ, սպիտակ» արմատից, որի այլ ժառանգորդներն են սանս. श्वित् çvētá- «սպիտակ, լուսաւոր», श्वेतक çvētaka «սպիտակ», श्वित् çvit «սպիտակիլ, պայծառանալ, լուսաւորուիլ», հսլ. světŭ «լոյս», ռուս. свѣтъ «լոյս», լիթ. švaitýti «պայծառացնել», գոթ. hʻeits, հբգ. hwiz, wīz, հիսլ. hvītr, անգլ. white, դերմ. weiss, հոլլ. wit «սպիտակ», նաև դերմ. weizen «ցորեն» են (Pokorny 1, 470, Trautmann 311, Kluge 524, Horn § 708): Իրանեանից են փոխառեալ նաև արաբ. اسفیدج asfīdaj «սպիտակադեղ», թրք. üstübeǰ նոյն նշ., վրաց. სუფთა սուփթա «սպիտակ», შვენტი շվենտի «սպիտակադեղ»։—Հիւբշ. 240։

Ուղիղ մեկնեց նաև Klaproth, Asia pol. 106 (նոյնը նաև Mémoires *1, 433* անս. chweta, պրս. sefid)։ ԳԴ պրս. սիփ բաֆ «սպիտակ (դեղ շպարելոյ)» և սիփիյա «ճերմակ»։— ՆՀԲ վրաց. սպէտա՛կի, պրս. իսփիտ, իսֆիյա: Սանս. և գնդ. ձևերը յիշում են Peterm. 17, 21, Windisch. *11, 19* Böttich. ZDMG *1850, 361*, Arica *32, 373* են։ Տէրվիշ. Մասխ *1882* յուլ. *24* և Լեղու *159* նախաձևը դնում է *սվայտա, որից բնիկ հյ. պիտի ունեներինք *սուէտ կամ սկէտ: Հիւնք. էջ *45* պրս. սիբբաֆ, սիբիյբաֆ: Աղբալեան ՀԱ *1929, 552* համարում է բնիկ հայ. (սխալ է, որովհետև այս դէպքում պիտի ունեներինք թ և ոչ տ, չհաշուելով դեռ -ակ վերջաւորութիւնը)։—Ստակ բառը Ինճիճեան, Հնախ. Ա. *242* հանել է սպիտակ կամ ստակ բառից։ Dulaurier JAs. *VII* 1856, էջ *483* սպիտակ բառից։ Հիւնք. յստակ բառից, որ սխալ է։

ԳԻՒ.—Տիգ. սբբդտգ, Սվհգ. իսբիւդիւգ, Ակլ. սպա՛յտակ, Հճ. իսբիդօգ, Գոր. Երև. Ղրբ. սի՛պտակ, Տփ. սի՛պտակ, սի՛պտա, Մրզ. սիպտակ՝, Շմ. սիպտագ՝, Ալշ. Մշ. սիբդագ, սիվդագ, Վն. սիվտակ, Մկ. սվտակ, Սլմ. սբվտակ՝, սբֆտակ՝, Խրբ. բիդագ (<սպիտակ<սպիտակ) «ճերմակ», իսկ Պլ. Ռ. իսբիդագ «յստակ՝ որոշ՝ պարզ երևացող»։—Ստակ բառն ունին Պլ. ըդագ. Սչ. ըդ՛ագ, Խրբ. սդագ են (Պլ. «ստակ» բառը, բացի ընդհանրապէս «դրամ» նշանակութիւնից, յատկապէս նշանակում է տաճկական փորր մի դրամ, որ է 1/3 փարա=1/15 կոպէկ, տճկ. aqče: Ստակի և սպիտակի մասին տե՛ս երկար Ե. Աւդալբէկեան, Տիղեկ. Ինստիտ. 2, *51—53*)։ Նոր բառեր են սպիտակուց, սպիտակուկ, սպիտակեճի, սպիտակաճաս, սպիտակաճող, սպիտակաւուն են։

ՓՈԽ.—Վրաց. სპეტაკი սպետակի «ճերմակ», სიսპეტაკე սիսպետակե «ճերմակութիւն», განსპეტაკება գանսպետակեբա «ճերմկկցնել», სპეტაკი պետակի «ճերմակ» ներկայացնում են հնագոյն հյ. *սպէտակ ձևը. իսկ სპეტი սպետի «սպիտակ» և სპეტი սպետի կամ სპეტი պետի «սպիտակադեղ» հյ. սպետ ձևը։—Ըստ Մառ, վրդ. առ. I, էջ 57 հայերէնից է առառաջարձուած Առակապրքի թարգմ. արաբ. اسبید isbīdaj «սպիտակադեղ»։

ՍՊԼՈՒԽ «բոլորովի՞ն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. 18. «Եթէ փոփոխ ոք զհերմանքն յետ բնական տեղւոյն ի յայլ տեղի, նա այլ առաւելուն և դիրանան... բայց տե՛ս զի փոխելն ի վատ տեղւոյն՝ յայլ աղէկն լինի, կամ պակաս («դոնէ») ի միջակն լինի, որ չլինի սպլուխ ի վատն։— ԳԴ (տե՛ս Վստկ. էջ 260) մեկնում է «ցած հող»։

*ՍՊՈՅԺ *«դանդաղում, յապաղում». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են անսպոյժ «անդանդաղ» Նեղոս, էջ 710,* սպուժել *«տնտնալ, դանդաղիլ, գործը ձգձգել՝ ուշացնել» Գիրք Թղ. 70, Սոկր. 133, Արծր. Ճառընտ. Վրք. և վկ. Բ. 463,* սպուժումն *«դանդաղանք, անհոգութիւն» Սոկր.* անսպուժելի *Ոսկ. սղ. Նար. էջ 103. գրուած է նաև* սբուժել. *իսկ* տպուժել *«արդելուլ, նահանջել» ՓՔ զուտ վրիպակ է։*

=Պհլ. 𐭮𐭯𐭦𐭦 spōž *կամ* spōǰ *«յապաղում, ձգձգելը»,* 𐭮𐭯𐭪𐭧𐭲𐭠𐭭 spōxtan *«հանել», պազ.* spōžā *«մէկդի դնել»,* spōxtan *«հեռացնել, մէկ կողմ ձգել, արհամարհել», պրս.* سپوختن sipōxtan, *ներկ.* sipōzam *«ձգձգել», բայ ԴՐ «բանի մաժանել»,* سپوزکار sipōzkār *«զանցառութեամբ գործը ձգձգող՝ յապաղող»։—Հիւբշ. 240։*

ՆՀՔ սպասել *բայից։ Ուղիղ մեկնեց* Lag. Arm. Stud. § 2049. *իրանեան բառերը* Horn § 706 *ուղում է կցել լտ.* pungo *«խթել, խայթել» ձևին. ստուգաբանութեան մի նոր փորձ ունի* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 61։*

Սպորդիլ *տե՛ս Սպարդիլ։*

ՍՊՈՒԴ, ո *հլ. անստոյգ բառ. մէկ անգամ գործածել է Արծր. Գ. 2. «Ջփրինս կապարճիցն սրպոգով ծածկեալ՝ զաստուածական զօրութիւն թուղցանէր ընդդէմ սրբոցն» ՆՀՔ մեկնում է. «եթէ գկայցէ սխալ գրչաց, լինի որպէս պրս. սէպէր. կերակուր իւղով և չոր թանով կազմեալ, ախորժ ուտելի, խայծ, կեր... Այլ լաւ ևս երևի ընթեռնուլ՝ սպեղով, որ լինի այլ փոխարերութիւն...» Իսկ* սպուեգ *բառի տակ էլ՝ յիշելով Ոսկ. ապաշխ. էջ 49 «ընդ սպունկաւն ծածկեալ ունէր զերկաթն (նաթան ի յանդիմանելն զԴաւիթ ոճով)», աւելացնում է «ի սոյն նմանութիւն թուի բերիլ և բանն Արծր.» ՋՔ դնում է «կերակուր կազմեալ իւղով և չորթանով», իբր պրս. բառ. ԱՔ «կերակուր մը, կեր» կամ փխ. ընդ* սպեգով *կամ* սպեգով ծածկէմ զերկաթ, զնետ *«վարպետութեամբ խրատել կամ յորդորել»։ Հրտր. Պատկ. էջ 129 բառիս տեղ ունի* սպեգով։ *Վարդանեան ՀԱ 1920, 337 ընդունելով* սպուգ *իբրև «սպունգ», կցում է ասոր.* ܣܦܘܓܐ spūgā *ձևին, որ նոյնպէս զուրկ է և ձայնից։*

ՍՊՈՒԹԵԱՅ «վանական, ճգնաւոր, միանձնեան». գործածուած է միայն յգ. սպուդէ՛, *սեռ.* սպուդէից *ձևով՝ Խոր. գ. 49, 67, Մխ. դտ. 269, 270։*

=*Յն.* σπουδαῖος *«ժիր, գործունեայ, փութաջան». յգ.* σπουδαῖοι, *իբր փխբ. արևմտեան խարազնազգեստ ճգնաւորներին տրուած տիտղոս։ Մագում է յն.* σπεύδω =*հյ.* փութալ *բայից։—Հիւբշ. էջ 381։*

ՀՀԲ մեկնում է «սփրիդեայ հագուստ հագած» և հանում է սփրիդ *բառից։ Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Լիակատ. Վարք սրբոց Բ. 161, յետոյ ՆՀԲ, Բաստամեան, Մխ. դտ. 269։*

ՍՊՈՒՆԳ, ո *հլ. (յետնաբար ի–ա հլ.) «սաթնուկ, սպունդ, տեղ. սիւնկէր» ՍԳր. Ոսկ. մաթ. Կոչ. Վեցօր. 80. գրուած է նաև* սպուն՛կ, բսպուն՛գ. *որից* սպնգատեսակ *Նիւս. բն.* սպնգագոյն *ԱԲ.* սպնգանման, սպնգային *(նոր բառեր)։*

=*Յն.* σπόγγος *«սպունդ», որից փոխառեալ են նաև լտ.* spongia, *իտալ.* sponga, *ֆրանս.* éponge *հրդ.* spunga. *ասոր.* ܣܦܘܓܐ spūgā *(տե՛ս* սպուգ*), արաբ.* اسفنج isfanǰ, *նոյն.* σφουγγάρι, *որից էլ բրք.* sünger, *սերբ.* spugar, sungal, *ալբան.* sundjer *են համանիշները։ Յոյն բառի բուն ծագումը տե՛ս* սունկն, *որ նրա միակ ցեղակիցն է (*Pokorny 2, 681, Boisacq 899*):—Հիւբշ. 381։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Սչ. սբ՛ունգ։

ՍՊՈՒՒՆ. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Խոր. աշխ. (վկայութիւնը տե՛ս* Կենոռոս*)։ Սուքրեան կարծում է «ապուռ գաղանը»։*

+ՍՊՌԻԿ *«բոլորովին, ամբողջապէս, կատարելապէս». գործածուած է մի անգամ Սոկր. 362. «Ի բազմաց ապա յայնմժամ Արիանոսք և արիանոսացեալն Եւսոմիոս բանաւորքն կարծեալ գոլ, ընդ որս առ Բասղին և Գրիգորին հանդիպելով, անխրատք սպռիկ երևէին»։ Համապատասխան տեղում*

յոյն բնագիրը (Oxford 1893, էջ 202) ունի ἀπαίδευτοι τελείως εὑρίσκοντο, որ τελείως = =սպոկի նշանակում է «բոլորովին, կատարելապէս»։ Նոյնին համաձայն է գալիս նաև Փ. Սոկր. (անդ, էջ 362), որ ունի. «և յամենայնէ նկուն եղեալ յերանելեացն ի Բարսղէ և ի Դրիգորէ»։

=Միջ. հյ. սպրիկ, սպրկիկ, սրբկիկ «մաքուր, ջինջ, բոլորովին» բառն է, որ ծագում է սուրբ բառից. համմտ. գւռ. բամուզ (Բրբ. «մաքուր») նոյնպիսի իմաստով. օր. բամուզ կոտորեցին. տե՛ս Սուրբ։—Ա՛ճ.

*ՍՊՍԱՆ կամ ՋՊՍԱՆ «մի տեսակ սալորանման բոյս կամ պտուղ. լտ. cardia mixa, ֆրանս. sébeste» Մխ. բժշ. 52, 54, 146 (սխալ տպուած սպոտան), Բժշ. Ամիրտ.։

=Արաբ. سبستان sabistān հոմանիշից, որ ծագում է պրս. سپستان sapistan ձևից. այս էլ ծագում է سگ پستان sag pistān «շան ծիծ, ցորց» բառից (տե՛ս Steinschneider WZKM 12, 93). այսպէս կոչուած՝ պըտուղի նմանութեան պատճառով։ Արաբերէնից է փոխառեալ նաև ֆրանս. sébeste։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Հայկ. բառաք. 95, Բառ. ֆրանս. 1126 բ, յետոյ ՀԲուս. § 2825, վերջին անգամ Seidel, Մխ. հնր. § 161։

ՍՊՏՈՒՐ կամ ՍՊՐՏՈՒՐ «ուղտի, այծի, ոչխարի են քակոր» Վրք. հց. Բ. 366. Ոսկիփ. նփր. պհ. 177 Վստկ. 163։

Գիմ.—Մշկ. սբրբլդուր, Խրբ. բդուր, Մկ. Սլմ. վն. պրտրտուր, Բլ. պդրուգ, Մշ. բըդրդուգ, Դվ. կարտուր, Ախց. Կր. Ղրբ. կըրտոր։

ՍՊՐԱՄ «աւելուկի նման մի բանջար» Վանակ. ունի միայն ՀԲուս. § 2826։

Աճառ. ՀԱ 1908, 124 պրս. isparam «ռեհան», որ սակայն նշանակութեամբ յարմար չէ վերինին, եթէ տրուած նշանակութիւնը ստոյգ է։

ՍՊՐԴԵԼ «ծածուկ ներս մտնել, սողոսկիլ» ՍԳր. Եւս. քր. որից սպրդանել Նփր. աւետ. 268. սպրդումն ԱԲ. սպրդութիւն (չունի ԱԲ) Թղ. պրոկղ. ՀԱ 1921, 23. սպրդիլ «վրիպիլ, ձեռքից սահիլ՝ փախչիլ» (նոր գրականի մէջ). Վարդան Յունանեան, Ձեռաւածութիւն 1671, էջ 332 սրանից դուրս գիտէ նաև սպրծել «բռնութեամբ և գրոհիւ ներսամտեմ կամ դիմեմ ի ներքս մեծաւ յանդգնութեամբ»։

Lag. Btrg. bktr. Lex. 37 զնդ. spərəd: Պատկ. Изслед. 105 աֆղան. سپرډل sapardal: Տէրվիշ. Մասիս 1881 մայ. 8 պրս. սիփիւրտէն «կոխել, երթալ» (իմաստ պրս. سپردن sipirdan «ոտիւք կոխել», պհլ. spustan, համմտ. զնդ. spar-, սանս. sphur-, sphuráti «շտապել, կոխել, յանկարծ երևան գալ», որոնք պատահական նմանութիւն ունին)։ Հիւրշ. Arm. Stud. 14 մերժում է թէ՛ զնդ. spered և թէ սանս. spardh: Հիւնք. պրս. սիրուխտէն «բռնի մուծանել»։

Դիմ.— Ջթ. սր՝փր՝ողր՝լ «սահիլ, սայթաքիլ», Հճ. սոբոտղել «սահելով մի տեղից ցած իջնել», Նխճ. սրփրրուլ «սահիլ, ազատիլ, ձեռքից սպրդիլ, աչքից վրիպիլ», Ջղ. սպլտալ, սլպլտալ «սահիլ», նաև Սեր. սրգրրի՞լ «սահիլ» Բ. փռսղրոնել «գայթիլ, ձեռքից սահիլ փախչիլ», Սվեդ. սրբրրցիլ «բաց թողնել, թողնել»։

Սպրկիկ տե՛ս Սուրբ։

ՍՊՕՔ «ցորենի նման մի ընդեղէն» Մեկն. Բրս. հց. խդ. ունի միայն ՀԲուս. § 2827։

°ՍՌԻՆՁ «փսփսոց, մրմունջ» Բր. քեր. էջ 7, «երգ, լկոի երդ» Մատ. թղ. 40, որ և սոիչ Սիւն. քեր. 193. Երզն. քեր. սոին Կղնկտ. հրտր. էմ. էջ 191. Մխ. առակ ճլդ. որից սոնչանէ, սոնջանէ Մատ. թղ. 47. 50. եռասոիչ կամ եռաստոիչ Նար. տաղ. 471.— սոինչ բառի «երդ» իմաստի համար համմտ. Բառ. երեմ. էջ 217 «մրմունջ և սոինչ ասի, զոր ձայնիւ նուագեն»։

=Բնաձայն բառ. կազմուած է պարզ ս ձայնից՝ ո սաստկականով և ն, չ ածանցիչներով. համմտ. ճոչել, կոչել, ճոչակ, խոչակ և կոնչել, ճոնչել, դոնչել, ճոնչիւն ևն։—Ա՛ճ.

Այս մեկնութիւնս տպուած է նախ ՀԱ 1899, 204ա։

ՍՌՆԱԿԱՎ «ելեկտուոն, սաթ». ունի միայն ԱԲ. երկու անգամ դնում եմ գործածուած Ոսկ. ճառք. էջ 590. «Ահա ամպ. ասէ, ի հիւսիսոյ կայր և ճառագայթք շուրջ և հուր

փայլատակեալ, և ի մէջ նորա իբրև զտեսութիւն սոնակալի և ճառագայթք ի նմա... եւ տեսի իբրև զնմանութիւն սոնակալի ի տեսութենէ միջոյն և ի վեր»։ Այս հատուածը ակնարկում է եղնկ. Ա. տեսիլքը, ուր սոնակալ *բառի դէմ դրուած է բազմագունի ակն, որ է «սաթ». «եւ ի մէջ նորա իբրև զտեսիլ բազմագունի ականց և ճառագայթք ի նմա» (եղնկ. ա. 4)։ Այսպէսով ճշտւում է* սոնակալ *բառի նշանակութիւնը։*

*=Բարդուած է *սիռն կամ *սուռն «յարդ» +կալ բառերից, ճիշտ ինչպէս ունինք պրս.* کاه kāhrubā *«սաթ», կազմուած* کاه kāh *«յարդ +* ربا rubā *«քաշող» բառերից։—Աճ.*

Այս մեկնութիւնս տպուած է նախ ՀԱ 1908, 122 ա և Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 217։

Սոնապան *տե՛ս Սրունք։*

Սոնչան *տե՛ս Սոխնչ։*

***ՍՏԱԴԻՈՆ** *«մասպարէզ, մրցարան, կրկէս» նւս. քր. ա. 288. Սարգ. Պզատ. օրին. «600 ոտնաչափ կամ 125 քայլ» Արիստ. աշխ. 609. «մրցանակ» ճառընտ. գրուած է նաև* սաադին *նւս. քր. ա. 274, 277, Մծբ. Մագ. (որ և «ճեմարան, բազմութիւն» Մագ. գամագտ. ժբ),* ստատին *Մծբ. 339, 340,* ստադի *ճառընտ.* ստանդ *(իմա՛* ստադն*) ճառընտ.։*

=Յն. στάδιον *«մրցարան, մասպարէզ», որից լտ.* stadium *նոյն նշ., ֆրանս.* stade։ *—Հիւրշ. 381։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

Ստախտի *տե՛ս Տխտիլ։*

Ստածել *տե՛ս Տածել։*

Ստակ *տե՛ս Սպիտակ։*

ՍՏԱՀԱԿ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «անառակ, խեղ, ըմբոստ» Ա. Թես. ե. 14. Ոսկ. ա. Թես. և ես. և մթթ. որից* ստահակս *«ստահակութեամբ» Բ. Թես. գ. 6.* ստահակել *«ըմբոստանալ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 20.* ստահակեցուցիչ *Ոսկ. մ. ա. 17.* ստահակութիւն *Բ. Թես. գ. 11, բ. մկ. Թ. 3 ևն։—Տարօրինակ ձև և գործածութիւն ունի* ստահականութիւն *«օդի անբարեխառնութիւն» Տաթև. ամ. 66 ա. (Արտաքին օդոց բարեխառնդն՝ առողջութիւն առնէ և ստահականութիւնն հիւանդութիւն)։*

*=Թերևս փոխառեալ իրան. *stāhak ձևից. սրա հետ համմտ. պհլ.* vistāxv *<Հպրս. *vistāhuva, գնդ. *vistāka >Հյ. վստահ, կազմուած* stak *«դէմ կանգնել» արմատից՝ vi- նախդիրով։ Առանց նախդիրի ունինք պհլ.* staxmak, *գնդ.* staxra *«ամուր, հաստատ», և յատկապէս ստահակ բառի համաձայն՝ պրս.* ustāx *«յանդուգն» (Horn, Grdr. § 920), որ դժբախտաբար չէ վկայուած։*

Աւետիքեան, Մեկն. Թղ. պօղ. Բ. էջ 897 «հակումն արտաքոյ կարգի». որով հասկանում է բստ+հակիլ։ ՆՀԲ իբր ի հնստութիւն հակ կամ բռնհակևալ. լծ. և յն. սդասիո՛տիս, լտ. seditiosus: Lag. Urgesch. 146 *սանս.* *sthāsaka *ձևից, 151 վստահ բառի հետ։* Müller, Kuhns u. Schl. Btrg. 5, 139 *գնդ.* staxra—: *Հիւրշ. 249 կասկածով կցում է Հյ. վստահ բառին և սրա իրանեան ձևերի հետ։ Մատ.* ЗВО *11, 165 պհլ.* vistaxv *«վստահ» բառից՝ -ակ մասնիկով և նախավանկի անկումով։ Թիրեաքեան, Աբիհայ բռ. 374 Աժդահակ անունից։ Պատահական նմանութիւն ունի պրակրիտ* sthaga *«խաբեբայ, ստախօս»* BB 10, 134:

***ՍՏԱՄԲԱԿ** *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ըմբոստ, խիստ, բուռն, անստոյգ». Ղկ. ժԹ. 21, 22, Ագաթ. որից* ստամբակութիւն *Փարպ.* ստամբակել *Փիլ. իմաստ. Եղիշ. բ. էջ 28, Դ. էջ 54—55,* ստամբակերէն *Փիլ. ժ. բան. 259. կեղծ ձևեր են* խստամբակ *Վրք. Հց. խստամբակութիւն Մագ. որոնք ձևացած են խիստ բառի զուգորդութեամբ։*

=Պհլ. stambak *«անգութ, բռնակալ, անարդար, նեղիչ, կատաղի» (Արտավիրաֆի մէջ գործածուած. տե՛ս* Haug *և* West, *Բառացանկ, էջ 158),* stambakīh *«ստամբակութիւն» (*Nyberg, Hilfsbuch des pehlevi *I. էջ 56 ա), պրս.* sitanba *«գոռ, հուժկու, խռովարար, կռուասէր», Հպրս. *stambaka- (*Horn *§* 718), *որոնց արմատն է գնդ.* stəmba, stənba

«կռիւ» (Bartholomae *1606*), սանս. stambha «հպարտութիւն, գոռոզութիւն»։ Նոյն արմատից է նաև հյ. ապստամբ, հին ձևը ապաստամբ *(տե՛ս այս բառը)*։—Հիւբշ. *240*։

ՆՀԲ. խստամբակ *բառի հետ*։ Lag. Urgesch. *147* հանում է սանս. *stambhaka ձևից։ Spiegel, Huzw. Gram. 188—189 տալիս է ուղիղ մեկնութիւնը՝ կցելով պհլ. stāmb, stāmbak *բառերի հետ*։ Lag. Symmicta 505 պրս. sitanba: *Տէրվ.* Altarm. 41 *և Նախալ. 113 հյ.* ապստամբ, *յն.* στέμβω, *սանս.* stambh, *ինչպէս և նոյն պրս. պհլ. բառերի հետ հնխ.* stabh, stambh «կանգնիլ, խեռնել» *արմատից։ Պատկ.* Матер. *I.* 15 *պհլ. և պրս. ձևերի հետ։ Հիւնք.* համբակ *բառից։ Հիւբշ. 240 դնում է միայն պրս.* sitanba *և ծանօթ չէ պհլ.* stambak *բառին. այսպէս նաև* Horn, Grdr. § *718։ Վերի ձևով մեկնեցին* Meillet *և Աճառ. Քննութ. Եղնկայ նորագիւտ ձեռ. էջ 72։*

*ՍՏԱՄՈՔՍ (ի–ա *հլ. բառ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.-ի, բց.-է) «մարտղութեան դրծարանը» Ա. տիմ. ե. 23. Եզն. կրճատմամբ եղել է* ստամոք *Ոսկ. բ. տիմ. էջ 175, Եփր. ծն. էջ 79. Նիւս. բն. Յայտմ. նաև* ստամաք *ձևով Կեղծ-Շապհ. 74 (բց. ի ստամաքաց). որից* ստամոքսացաւ *կամ* ստամոքացաւ *Վստկ. Տօնակ. Շնորհ. ընդհ. ծանրաստամոք Ոսկ. ապաշխ.* ստամոքսային *(նոր բառ)։*

=*Յն.* στόμαχος «ստամոքս» *բառից, որ բուն նշանակում է «բացուածք, կոկորդ, ծոծրակ, ստամոքսի ծակը և վերջապէս՝ ստամոքս». ծագում է* στόμα «բերան» *բառից։ Յունարէնից են փոխառեալ նաև լտ.* stomachus, *անգլ.* stomach, *ֆրանս.* estomac, *հնդ.* stomahũ, *սասր.* ʃʃʃ

cono-snaim *«դադարիլ, չեռ կանգնել»* են, որոնց հետ նաև հյ. **սառնալ** (Walde 229, 741, Boisacq 384, Ernout-Meillet 942, Pokorny 2, 603—610): *Հայերէնի մէջ «հաստատուն» և «ձևոք բերել» իմաստների զարգացման համար համմտ. վերի լտ. ձևերը։ Մեր բառի նախաձևն է ըստ* Brugmann Grdr². *II* 303 *հնխ.* stə-nā- *կամ* st-n̥nā—։

Նշ. «շահիլ» և «ստեղծել» նշանակութիւնները. ծագած է համարում յն. κτάομαι *«շահիլ, ստանալ» և* κτίζω *«ստեղծել» բառերի հոմաձայնութիւնից. իսկ շան բառի տակ լծ. է դնում պրս.* sūd *«օգուտ»։* Müller SWAW 38, 574 *և* 576 *պրս.* sitādan *«առնել»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Bugge KZ *32, 26։ Չի ընդունում Հիւբշ. 492, որովհետև կարծում է թէ վերի ցեղակիցների մէջ արմատն է հնխ.* sten-, *մինչդեռ հայերէնի արմատն է* ստա-: *Այժմ ընդհանուր կարծիք է թէ այդ բոլորի մէջ* n *յաւելուած է։ Հիմնք. յն.* κτάομαι, *պրս.* sitādan *«առնել»,* **սիբանեմն** *«առնել»,* **սուտ** *«շահ»։* Patrubány SA 2, 12 *հնխ.* sed>նի-ստ *արմատից։* Nyberg, Hilfsb. 2, 208 *փոխառնել է դնում պհլ.* statan=*պրս.* sitādan *«առնել» բառից։*

Գիր.—Ախց. Սրև. Ննխ. Շմ. Տփ. **ըստանալ**, *Ագլ.* **ըստա՛նիլ** *«ստանալ, ձևոք բերել». իսկ Ջղ.* **ստանալ** *«հիւր ընդունիլ»։*

ՍՏԱՆՆ *«հպատակ, հլու, հնազանդ». ունի միայն Թորոսեան, Տետրակ համ. բառարանի, էջ 50։*

***ՍՏԱՇԵՆ**, ե *հլ.* (-խին,-խամբ) *«զմուռսի ծառի խունկը, իւղը կամ խէժը» ՍԳր. որ և* **ստաշխ**, *կամ նախաձայն ս-ի անկումով՝* **տաշխեն** *Սիր. իդ. 21, Նար. կուս. 410,* **տաշխ** *Նար. երգ. 273. Սանն. 55. Գնձ. Շար. Պարգ. 636. Վստկ. 197. Համմտ. նաև* **ստատկէ** *և* **ստամոխկէ**։

=*Պհլ.* *staxša *ձևից, որ չէ աւանդուած. այս բառը չեռոյ անցնելով յունարէնի, տուաւ* *σταξή, *որ ժողովրդական ստուգաբանութեամբ նմանեցուելով* στάκτος, στακτή *«կաթկթող, կաթիլ կաթիլ դուրս ծորող» բառերին, դարձաւ եղաւ* στακτή *«ստաշխ»։ (Իրանական ծագման համար համմտ.* **Ստատ-Կալիսթ.** *էջ 126. «Ստաքն արտօսր ունէին իբրև զպարսիկ ստաքտիկէ»)։—Յն.* στακτή *ձևից փոխառնալ են յեռնաբար լտ.* stacte, *իտալ.* statte *և հյ.* **ստատկէ**, **ստամոխկէ** *ձևերը։— Հիւբշ. 241։*

Նշ. վրաց. **ստախսի**, *յն.* **սդամդի՛**: Lag. Arm. Stud. § 2058 *աղգակից է դնում յն.* στακτή *բառին։ Հիւբշ. 241 չի ընդունում ո՛չ նախկին աղգակցութիւն, որ մերժելի է այս կարգի բառերի համար, և ոչ էլ յունականից փոխառութիւն, որ անկարելի է ձայնական խոշոր տարբերութեանց պատճառաւ, և տալիս է վերի մեկնութիւնը։ Հիմնք. յունարէնից է դնում։*

Փոխ.— Վրաց. **ხტახნი** ստախսի *կամ* **შტახნი** շտախսի *(շրջուած *ստախշի ձևից)՝ նոյն նշ.։*

***ՍՏԱՇԽԻԿ** *«ստաշխ» Ոսկ. ես. 243 և կամ՝*

***ՍՏԱՔՏԻԿ** *«ստաշխ» Պտմ. աղէքս. 126 (մէկ անգամ). սրանք գիտական ձևեր էին և ժողովրդի մէջ անգործածական. ժողովուրդը դիտէր միայն* **ստաշխ**. *Համմտ. Ոսկ. ես. 243. «Ջոսկոյ և զարծաթոյ և զստակտէից, որ է ստաշխն»։*

=*Յն.* στακτική *նոյն նշ. (Raabe, Ἱστορία Ἀλεξ. 71), որ հազուագիւտ ձև է, փխ.* στακτή *բառի. ընդարձակ տե՛ս* **ստաշխ**։— *Հիւբշ. 381։*

Նշ. յն. στακτή, *հյ.* **ստաշխն** *բառերի հետ է միացնում։*

Ստգտաանել *տե՛ս Գիւտ։*

Patrubány *ՀԱ 1910, 119* **սուտ+գտանել**:

Ստեղաանալ *տե՛ս Տեղ։*

+ՍՏԵՂԾ *«մի նոր բան կազմել, հնարել, արարչագործել կամ մարդկային ճարտարութեամբ յօրինել». գործածւում է միայն իբր կտ. եզ. գ դէմք* **ստեղծաւեն** *կամ* **ստեղծուլ** *(արդի գրականում* **ստեղծել**) *բայի՝ ՍԳր. Ոսկ. մ. բ. 28. բուն նշանակութիւնն է «ձև տալ», որի համար համմտ. Ոսկ. ես. 317. «Բրուտն ո՛չ եթէ նիւթոյ կաւոյն արարիչ իցէ, այլ միայն ստեղծուածոյ»։ Որից* **ստեղծա-**

կան «շինուած, արարած» Ագաթ. «շինծու, արուեստով յառաջ բերուած, կեղծ» Փիլ. Սոկր. Պիտ. ստեղծիչ, ՍԳր. ստեղծուած ՍԳր. Ոսկ. ես. բաւաստեղծ Եւս. քր. աճստեղծական Ագաթ. աշխարհաստեղծ Կոչ. 196. կենդանաստեղծ Փիլ. ձեռաստեղծ Փիլ. նախաստեղծ Իմ. է. 1, ժ. 1, շարաստեղծ Նոնն. ևն։

=Բնիկ հայ բառ. հնխ. stel-, sthel- «դնել, դետնղել, կանգնեցնել» արմատից, որ stā «կենալ, կանգնիլ, հաստատուիլ» պարզ արմատի աճումն է (սրա և կամ սրա n-ով աճած ձևերը տե՛ս ստանալ)։ Բազմաթիւ ժառանգներից յիշենք սանս. sthálati «կանգնիլ», յն. στέλλω (*στελjω) «կարգի կանոնի դնել, ոտքի վրայ կանգնեցնել, պատրաստել, հանդերձել, հագուեցնել, ուղարկել ևն», στολή «պատրաստութիւն, սարքուածք, կազմութիւն ևն», στολίζω «պատրաստել, սարքել, հագցնել», լտ. stolidus, stultus «փայտի պէս կանգնած, տխմար», հսաքս. stellian, անգլսք. stellan «դնել, դետնղել», հրգ. stellen «ոտքի կանգնեցնել, դնել, դետնղել, ուղղել, կանոնաւորել» = գերմ. stellen, նաև նրգ. still «լուռ (կանգնած)», հպրուս. stallīt «ոտքի վրայ կանգնիլ», հսլ. stelją «տարածել» ևն (Pokorny 2, 643—6, Boisacq 908)։ Հայերէնի մէջ արմատը աճած է ծ-ով, ինչպէս միւս լեզուները ունին g, d, b աճականներով աճած ձևեր (տե՛ս Pokorny 2, 645—6). պարզ ձևն ունի հյ. ստեղն։

Աւետիքեան, Բերակ. 1815, 217 բստ+եղծ, իբր «եղծմանէ կամ խանգարմանէ դուրս, այսինքն գոյացած»։ Հ. Գ. Ինճիճեան, Եղանակ Բիւզ. 1820, էջ 211 «ի բայէս հաստել, իբր հաստեղծել, հաստեղել, որոյ բացառականն է եղծել»։— Տէրվ. Լեզու 1887, 112 բստ նախդիրով եղծանել բայից, ինչպէս ունինք fherել>fherբել։ Հիւնք. եղծանել բայից։ Bugge KZ 32, 26 արմատը ստեղ, իսկ -ծ ձևացած է կատարեալի g-ից։ Patrubány SA 1, 193 լիթ. stelgiù stėlgti «նայիլ» բայի հետ։ Pedersen, Հայ. դր. լեզ. 148 տուաւ ուղիղ մեկնութիւնը։ Սանուալճեան, L'idiome 10 հյ. հաստեմ բառի հետ՝ որ տե՛ս. Անանիկեան, Կոչնակ 1921, էջ 786 մեկնում է ս-տեղ-ածել, այսինքն ս մասնիկով տեղ գոյականից՝ ածել բայով։

ԳԻՒ.—Ջղ. Սլմ. բստեղծել, Ախց. Կր. Մրղ. բստէղծել, Ագլ. Մկ. ստէղծիլ, Ալշ. Մշ. ստեղծել, Շմ. ստէղծիլ, Սչ. սդեղծել, Պլ. Սեբ. Տիգ. բսդէղծել, Տփ. ստի՛ղծիլ, սի՛ղծիլ, Ռ. բսբէղծել, Խրբ. դէղծիլ։

ՓՈԽ.—Հյ. բոշայ. steɣçoɣ «արարիչ» (դրնում է Finck, Die spr. d. arm. Zigeuner ЗАН 1907, էջ 121, բայց չի նկատում թէ հայերէնից է փոխառեալ)։

+ՍՏԵՂՆ, ն հ. (սեռ. -ղան (յետնաբար -ղին), յգ. -ղունք, -ղանց) «բոյսի ցօղուն, ծիլ, ճիւղ» ՍԳր. Ագաթ. Կոչ. 410. փխբ. «ծուխի սիւն, աշտանակի թև» ՍԳր. «եռավանկ բառ՝ որի առաջին վանկը երկար է, վերջին երկուսը կարճ» Երզն. և Թր. քեր. «ծանր եղանակ՝ շարականն» Քեր. քերթ. Տօնակ. «ա տառի ճիւղերը՝ սիւները» Տաթև. ոսկիփ. 165, 456. որից ստեղնիլ «ծլիլ, բողբոջիլ» Շար. Շնորհ. տաղ. ստեղանալ «բողբոջիլ» (չունի ԱԲ) Տաթև. ձմ. ժէ. ստեղնաւոր վրդն. նրգ. ստեղնաձիգ Նար. խչ. ստեղնաշիտակ «ուղղաբերձ» Նար. տաղ. բիւրաստեղն Նար. մծբ. գեղեցկաստեղն Նար. մծբ. եօթնաստեղրն Արծր. հաստաստեղն Նար. խչ. երբաստեղն Սօթնագր. ստեղնաշափուրիւն Քերթ. նկեզ. ստեղի «ծանր եղանակով դեղդեղնալ» Շար. ժմ. 847. Տօնաց. որ և ստղի Նար. տաղ. 465. ստեղնաշար (նոր բառ.)։—Այստե՞ղ է պատկանում նաև ստեղագուն «մանկիկին քայլել սովորեցնելու յատուկ անուանուր գործիք» լծ. փիլ., որի դէմ Փիլ. նխ. բ. 88 ունի ստեղէն գինդ կամ ստեղէն գունդ անատոյգ բառը, որ Աւգերեան լտ. Քրգմ. դնում է vacuos discos «դատարկ շրջանակներ», անշուշտ ըմբռնելով իբր սուտ-եղէն։

=Բնիկ հայ բառ, հնխ. stel- «բուն, կոճղ, ցից, կոթ, ցօղուն» արմատից, որ նոյն է stel- *դնել, դետնղել, կանգնեցնել» արմատի հետ, իսկ այս էլ աճած է պարզական stā- արմատից։ Ցեղակից ձևերը տե՛ս բստանալ և ստեղծ բառերի տակ. այստեղ յի-

շում ենք միայն այն ձևերը, որոնք նշանակութեամբ էլ բոլորովին նոյն են.—յն. στέλεχος «ծառի բուն, կոճղ, ցողուն», στήλη, դոր. στάλα, թես. στάλλα «սիւն», στελεά, στελεόν «կացինի կոթ», στάλιξ «ցից», լա. stolo,-onis «արմատի կողքից դուրս եկած երկրորդական ծիլ», հրգ. stôllo «ցից, յենարան», անգսք. stela, steola, անգլ. stale, steal, հիսլ. stjǫlr, նորվ. stjol, գերմ. Stiel «կոթ, ցողուն», լիթ. stulms «ծառի կոճղ, մարմնի անդամ, սրունք, բազուկ, թև», և գանազան ածականներով՝ անգլ. stalk «կոթ, ծիլ», stilt «ցից, մահճ», հիսլ. stolpi «սիւն, ցից», ռուս. столбъ, столпъ «սիւն, ցից» են (Boisacq 908, Pokorny 2, 643—6 Ernout-Meillet 943, որ համեմատում է լա. stolo և յն. στελίς «մակաբոյա» բառերի հետ):—Հիւրշ. 492?

ՆՀԲ լծ. հյ. ծեղ և ստեղացեալ «հաստատուած», յն. στέλεχος, իսկ սիւն բառի տակ՝ լծ. յն. στύλος: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Bugge KZ 32, 43 (բայց կցելով նաև ծեղ բառին):— Հիւնք. ստեղն=յն. στιγμή «վայրկեան, նշանակը առոգանութեան», ստեղի=յն. στίχος «ոտանաւոր տաղաչափութիւն»:

*ՍՏԵՊՂԻՆ «գազար, հավուճ» Մխ. առակ. վստկ. 74. Բժշ. (daucus carota L քան Տիրացուեան, Contributo § 292) որից ստեպղին վայրի «ներկաւոր բոյս ինչ. daucus» Գաղիան. գրուած է նաև ստեպեղին, ստեփղին, բստպղի (վերջինը Բառ. երևմ. յաւել. 574):

=Բն. σταφυλῖνος, որից նաև լա. staphylinus, սուր. ܐܣܛܦܠܝܢܐ esṭafllīn, արաբ. اصطفلين iṣṭafllīn (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 131), վրաց. სტაფილო ստափիլո, բոլորն էլ նոյն նշանակութեամբ:—Հիւրշ. 381:

Ուղիղ մեկնից նախ Lag. Arm. Stud. § 436. նոյնը նաև Հիւնք., ՀԲուս. § 2831:

ԳԻՒ.—Մկ. բստապղին, Աբր. բսդաղրին, ՋԹ. ը՛սբ՛ըդղը՛ն, Վն. տապղին, Ալշ. Մշ. տաբղին, Խրբ. դաբղին, դաղրին, Երզ. դէղբին, դէղրինդ (տեղացիք ստուգաբանում են տեղ+պինդ բառերից, իբրև թէ «տեղում պինդ նստած»):— Գաւառականներում երևցած ա աւելի համապատասխան է յն. α ձայնին:

ՍՏԵՍ «մի տեսակ բոյս. լա. thapsia-Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2833:

Ստերիւրել տե՛ս երիւր:

+ՍՏԵՐՋ (գրուած նաև բստերջ, ստերդ) «չբեր (անասուն)» Եփր. ծն. քս. 28 (ստերդ ձևով). Շիր. որից ստերջանալ կամ ստերջիլ (կտ. ստերջացան, ստերջեցան) ծն. լա. 38:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ster- արմատից, ածած ջ կամ դ ածականով. ցեղակիցներն են սանս. starī- «չբեր կով», յն. στεῖρα, στέιρφος, «ամուլ (կով)», լա. sterilis «ամուլ», գոթ. stairō «չբեր», հրգ. stëro «խոյ», գերմ. նւս. Stārke «մատաղ կով, որ դեռ ծնունդ չունի», անգսք. styrc «հորթ», իսլ. stirtla (*sterd, հմմտ. հյ. ստերդ) «չբեր կով», բուլգ. sterica «ամուլ», ալբան. štjerë «ներբինջ, դառ», թևրևս նաև պրս. ستر sa-tarvan կամ استرون astarvan և քրդ. əst'o-vor «ամուլ» (Horn § 716, որ յիշում է թէ ժողովրդական ստուգաբանութեամբ այս բառը պարսիկները հանում են պհլ. պրս. استر astar «ջորի» բառից): Հնխ. ster- «ամուլ» հանւում է ster- «խստանալ, ամրանալ, պնդիլ» արմատից, որի բազմաթիւ ժառանգներից յիշենք՝ յն. στερεός «հաստատուն, ամուր, կարծր», իսլ. seirt «ուժ», գալլ. sertn «հաստատուն, պինդ», գերմ. starr «անշարժ. հաստատուն», լիթ. stóras «հաստ», հսլ. starŭ, ռուս. старый «հին, ծեր» են. իսկ այս ster- արմատն էլ հնխ. stā- «կանգնիլ» արմատից (Boisacq 906, 910, Walde 737, Pokorny 2, 627—635 և 640, Ernout-Meillet 931. հայերէնի նախաձևը դնում է *steryā.):—Հիւրշ. 492:

ՆՀԲ լծ. հյ. ստերիւր և յն. στερητής, ὑστερῶν: Ուղիղ մեկնից Böttich. ZDMG 1850, էջ 361, Arica 65, 53, Lag. Urg. 729, նոյնը նաև Տէրվ. Altarm. 24, Նախալ. 114 են:

ԳԻՒ.—Ախց. կր. ստէրշ, Ալշ. Մշ. ստեղջ՛, Երև. ստէղշ, Վն. ստեռճ, Մկ. ստէռճ, Համշ. սդիյշ, Խրբ. դէրշ(<տերջ):

+ՍՏԾԻ, ո հլ. «անասունի՝ մանաւանդ ուղտի բուրդ» Մաթ. գ. 4. Մրկ. ա. 6. Լմբ. յայտ. որից ստեղէն Ոսկ. մ. ա. 10 և Փիլիպ. ժբ. խոզաճատև Ագաթ. ստեագիսակ Նար. կուս. 411։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. steu- արմատից, որի սորին ձայնդարձն է stu-. ժառանգներն են սանս. stu-pá- «մազերի փունջ», stú-kā «մազերի փունջ, բրդի քուլայ, մազի հիւսք, խոիր», երկուսն էլ աճած -pa-, -kā- մասնիկներով, իսկ պարզ stu- ձևը պահում է pṛthu-ṣṭu- «մազերի լայն փնջերով», յն. στύπη կամ στύππη «հիւսելի բոյսերի թելերը, խծուծ», στυππεῖον «խծուծի մի կապ», որից փոխառութեամբ լտ. stupa, stuppa> ֆրանս. étoupe, ինչպէս և Բրբ. üstüpü «խծուծ» (Boisacq 922, Walde 747): Այս բոլորը Pokorny 2. 620 միացնելով մի խումբ այլանիշ բառերի հետ՝ հանում է հնխ. steu- «խտանալ, կծկուիլ» արմատից։—Ա՛ճ.

Lag. Urgesch. 148 սանս. stambha, յն. τάφος «դամբան», σταφυλή «խաղող» բառերի հետ։ Հիւնք. յն. στύππη «խծուծ» բառից։ Patrubány IF 14, 59 յն. στέφω «տարածել, շրջապատել», լիթ. stebulė «անուի պորտ» բառերի հետ։ Petersson KZ 47, 269 սոյգ բառի հետ հնխ. steu- «ուղիղ կանգնիլ» արմատից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. سبد sabad «մի քիչ մազ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 918)։

ՓՈԽ.—Վրաց. ხტევი ստեվի «ուղտի սուն». բառիս գործածութեան միակ տեղն է Մարկ. ա. 6 ხტევითა აჭმელობაჲთა ստեվիթա ամմելիսայթա=«հյ. զսուն ուղտու», որ ըստ Մառ, Христ. Вост. 2 (1913), էջ 26 պահուած է միայն 897—1001 թուին գրուած Սվանական մի Աւետարանի մէջ և յետոյ փոխուելով՝ այժմ ընդհանրապէս դարձել է თმისაგან აჭმელობა թմիսագան ամմելիսա։ Հնագոյն հաղուագիւտ այս ձևի յայտնարերումը նշան է որ բառը փոխառեալ էր հայերէնից Ս. Գրքի Թարգմանութեան ժամանակ։

ՍՏԵՒՈՂ «արարող», որից ստեղական «աստուածարանական». երկուսն էլ ունի միայն Բառ. հրեմ. էջ 291։

ՍՏԻՈՒ «ոստայնի կարճ ձողը, որով գործուածքը դարձնում կամ պրկում են» Մխ. առակ. ճկդ. գրուած նաև ստեծ Ոսկ. եփես. 806։

ԳԻՒ.—Վն. ստեծ, Մկ. ստէոն (Ամատունի, Հայոց բառ ու բան 599 ունի նաև իստեց, ստեռծ ձևերը) «գետին ցցուած մի մետր բարձրութեամբ ցիցեր, որոնց վրայ ոստայնանկը հինածն է հինում՝ գործել սկսելուց առաջ՝ մանածը պատրաստելու համար». որից ստիծգլուխ Վն. «ստէծներից երկու գլխաւորները», ծոցաստէծ և ջրաստէծ «ստէծների տեսակներ»։

*ՍՏԷՃ «վէճ, կռիւ». գտնւում է միայն բանաստեղծ «բանավէճ, բանակռիւ» բառի մէջ, որ ունի Բառ. հրեմ. էջ 48 և սրանից առնելով ՀՀԲ և ՓԲ։

=Պհլ. stēǰ, զնդ. stiǰ-, պրս. ستيز sitēz «կռիւ, պատերազմ» (Horn § 722), կիմ չհայ գրչի սխալ։—Ա՛ճ.

+ՍՏԻՊ, ի–ա, ո հլ. «շտապումն, աճապարանք» Եղիշ. Լմբ. պորտ. «յաճախ, շատ անգամ, անդադար» ՍԳր. Փարպ.. «յաճախադէպ» Ա. տիմ. ե. 23. որից ստէպ ստէպ Բ. մկ. ե. 6, ը. 7. Ագաթ. ստիպաւ «փութով» Ա. մկ. բ. 15. ստիպով Ոսկ. յհ. ա. 16. Փարպ. 84. կիմ. ստիպել ՍԳր. Եղիշ. ստիպեցուցանել Փարպ. ստիպոջ կալ Ոսկ. փիլ. էջ 502. ստիպագոյն Ոսկ. յհ. բ. Փարպ. ստիպողական, ստիպողականութիւն, ստիպողաբար (նոր բառեր) են։

=Բնիկ հայ բառ հնխ. steib- արմատից, որի ժառանգներից յիշատակում ենք միայն այն ձևերը, որոնք նշանակութեամբ մերձաւոր են մեր բառին.—յն. στείβω «ոտքի տակ կոխոտել, կոխոտել ամրացնելու համար, ճանապարհը շարունակ յաճախել», στίβος «բանուկ ճանապարհ», στιβαρός «կոխոտուած, սեղմ, ուժեղ, հաստատուն», στιπτός «հաստատուն», լիթ. staibus «ուժեղ, կորովի» են։ Այս արմատը համարւում է աճած -b- աճականով՝ պարզական stāi-, steja- «խտանալ, խտացնել» արմատից, որի այլ աճած ձևերն են՝ 1) -bh- աճականով՝ steibh-, որից յն. στῖφος «դէզ» (փոխառութեամբ Բրբ. istif>Պլ. իստիֆ «իրար վրայ խիտ ու

կուռ դարսած դէզ»), στιφρός «*կոխոտած, սեղմ, խիտ, ուժեղ, հսկայ*».—[2]) -p- աճականով՝ steip-, *որից լտ.* stipo «*սեղմել, խտացնել, դիզել, ճնշել*», stipulus «*հաստատուն*», *լիթ.* stìpti «*խտանալ*», stiprus «*ուժեղ, կորովի*», *հհիւս.* stifr, *անգսք.* stîf «*խիստ*», *մբգ.* steppen «*սրածայր մի բանով խթել*» (Pokorny 2, 646—8, Boisacq 905—906, Ernout-Meillet 936, Walde 739):

*Նշ*Բ *նոյն ընդ* ճեպ և շտապ? Lag. Urgesch. *155 լտ.* stipare «*դիզել, սեղմել, խճողել*» *բառի հետ՝ նոյն,* Beitr. bktr. Lex. 20 *զնդ.* staēvya, stipti «*վաթ, գէշ*» *բառի հետ՝ Հիւբշ.* Arm. Stud. *էջ 14 մերժում է ինչպէս զնդ.* stipti «*վաթ, գէշ*», *նոյնպէս և* stōi «*միշտ*»՝ Bugge KZ *32, 61 ընդունում է միացնել լտ.* stipare *ձևի հետ՝* Meillet MSL 9, 154 *դնում է յն.* στείβω՝ *Հիւբշ.* Arm. Gram. 493 *ամբողջութեան համար աւելացնում է նաև վերի ձևերը են, բայց համեմատութիւնը անապահով է համարում, որովհետև յն.* στιβ *դրում է հնխ.* stig[2] *արմատից (*Fick, Wörterb[4]. *I 568), իսկ լտ.* stip- *ձևի դէմ սպասում էր հյ.* *ստիւ՝ *(Այժմ ընդունուած է թէ հնխ. արմատներն են* steib-, steibh-, steip-, *երեքն էլ* b, bh, p *աճականներով կազմուած, որոնցից առաջինի ժառանգորդների մէջ մտնում է նաև հայերէնը)՝ Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. 208, Կարնամակ ծան. 41 և Հիւնք. հյ. շտապ, պրս.* շիբաղ *ձևերի հետ՝*

*Գ*Ի*Ո.—Ախց. երև. Կր.* ստիպէլ, *Տփ.* ստիպիլ, *Շմ.* ստիբիլ՝

ՍՏԻ «*կարգ, պատշաճութիւն*». *մէկ անգամ ունի միայն Ոսկ. եփես. 833՝ հոլովելով ձևով.* «*Թնպէտ և զիւրոյ անձինն շուք արկանիցէ և դիւացեալ անկանիցի ի սուտոյ և ի համոյ՝ Սրանից* անսպի «*անկարգ, ստահակ, անհրնազանդ*» *Ոսկ. պօղ. ա. 910.* «*եթէ եպիսկոպոսութեան չիցէ արժանի որ որդիս անստիս (յն.* ἀνυποτάκτους) *և ստահակս ունիցի... եթէ կին ստահակ ունիցիմք կամ որդիս անստիս (յն.* ἄτακτον)»՝ *Նոյնը* անսաու *ձևով Վեցօր. էջ 185.* «*Արջ... տգեղ անդամօք անստու և անպատշաճ*»՝

Ստի բառը ունի միայն ԱԲ, որ մեկնում է «պատիւ, բարեկրթութիւն»՝ Բացատականը գիտեն անստի «*անպատիւ, անկիրթ*» *ԱԲ,* անստու *կամ* անտուս «*անկարգ կամ անհամ*» *Բառ. երեմ. էջ 24, 25, որից և ՀՀԲ՝—Վեցօրէից վկայութեան մէջ Վենետկի օրինակն ունի* անօտու, *որ հրատարակիչը ուղղում է* անյօդ. *Վիեննայի Մխիթարեանց թ. 249 ձեռագիրն ունի նոյնպէս* անօտու, *թ. 612 ձեռագիրը* անոտու. *իսկ Այվազեանի ձեռագիրը (Մասիս 1853, թ. 11—60)* անսաու, *որ Այվազեան կցում է Հին բառարանի* անսաու *ձևի հետ՝ Այվազեան այս ընթերցուածը ուղղում է* անսաև «*անմաղ, լերկ*», *որ գոնէ արջի համար յարմար ածական չէ՝ Բառիս ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Հ. Ա. Վարդանեան, ՀԱ 1911, 303 և 1914, 643, Բառաք. դիտ. Բ. 87՝*

ՍՏԻ «*թաւ, մազոտ*». *ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 580ա՝—Անշուշտ նոյն է* սաև *բառի հետ՝*

***ՍՏԻՆԱՐԻՆ** «*կրօնաւորական մի զգեստ*». *նորագիւտ բառ. որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. իլար. էջ 132.* «*Եւ էր ժառանգութիւն Աւետարանն, զոր քահանայական ձեռք Իլարիոնի գրեցին մինչ տակաւին ևս մանուկ էր, և փիլոն ստիխարին, և կուկուլն մազեղէն, զոր կրօնաւորքն այսպէս անուանել սովոր են*»՝

=*Յն.* στιχάριον «*կրօնաւորական վերարկու, յատկապէս քահանայի կամ սարկաւագի*» (Sophocles 1012*ա*)՝—*Ա*ճ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 212՝

+**ՍՏԻՆ**, ն *հլ.* (ստեան, ստենէ, ստեանց, ստեամբ) «*ծիծ*» *ՍԳր. Ագաթ. եփր. ծն. որից* ստնաու *Մաթ. իդ. 19. Մրկ. ժգ. 17. Ղկ. իա. 23.* ստնդիել *Պատմ. աղէքս.* ստնանաւոյց *Ոսկ. ես.* ստնդիայ, ստնդիաց *(նաև* ըստընդիաց, ստնդիեաց, ստինդիաց, ստնդի *են) «կաթնկեր» ՍԳր. եփր. ծն. միաստնի Բ. մն. ժգ. 15.* կրկնաստին *Շնորհ. տաղ.* դի-

rաստին «որ դիւրին է կամ հեշտ է ծծել՝ դիել» կնիք հաւ. 311։

*=Բնիկ հայ բառ, հնխ. pstēn- արմատից, որ գոնում ենք արիական ճիւղի մէջ. համմտ. զնդ. fštāna- (<*pstāna- ձևից), պրս. پستان pistān, աֆղան. pistān, սոգդ. 'štnh «ատինք, ծիծ», սանս. stana- «ծիծ», stanaṁdhaya- «սանդեայ»։ Իրանեանների մէջ նախաձայն pst- խումբը ամբողջապէս պահուած է, իսկ սոգդիականի, սանսկրիտի և հայերէնի մէջ, ինչպէս սպասելի էր, նախաձայն p ընկած է։ Եւրոպական լեզուները նոյն pst- խումբը դարձրել են sp-, որով արմատը եղել է spen-, spon-, spŋ-. համմտ. հբգ. spunne, մբգ. spen, spüne, հանգլ. spane, հիսլ. speni, հոլլ. speen, լիթ. spenỹs, հիռլ. sine, հպրուս. spenis, բոլորն էլ «ատինք կամ ծծի պտուկ», յն. σπάω «ծծել, դիել», բայց նաև στήνιον «կուրծք» (Հեսիքիոս)։ Նախաձայնների այսպիսի բարդ խմբի տեղափոխութեան իրր օրինակ լինին լիթ. skutù=յն. ξύω, լիթ. skubùs և գոթ. -skiuban=սանս. kṣúbhyati։ Հայերէնը՝ որ գիտէ pst>ստ ձևը, ունի նաև ps ձևը, որով արմատը ստանում է երկու ձև՝ psten->ստին և psen-, pson-, psŋ-, որոնց արդիւնքն է հյ. սին, սուն, սան (անանիլ)։ Սրանց վրայ տե՛ս վերը սուն բառի տակ* (Pokorny 2, 663, Boisacq 912, Trautmann 275):—*Հիւրշ. 493։*

ՆՀՐ «սանս. սթանա, արմատն է շիր, կաթն, թրք. սիւտ, լծ. և ծուծ, ծիծ, որ և տիտ»։ Ուղիղ են համեմատում Windisch. 11, Böttich. ZDWG 1850, *էջ* 362 Müller SWAW 38, 574 *են։ Թօփուզեան, Արծիւ վասպ. էջ 42 «անանիլ ի տինս»։ Տէրվ. Նախալ. 113 հնխ.* stana *ձևից։ Հիւնք. էջ 228 վերի ձևերի հետ նաև յն. στῆθος «լանջք, կուրծք»։ Մառ,* Грам. др.-арм. яз. *33 և* Вступительныя и закл. строфы... Шоты *էջ 18 p ձայնի անկումով փոխառեալ պրս.* pistān *բառից. համմտ. սաղմոս<յն. ψαλμός։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* بَدْ badi *«ատինք»։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ* Meillet BSL 23, 106:

[ՍՏԻՆ. *սխալ գրչութիւն, որ մէկ անգամ գտնում ենք Խոր. Ա. 11. «Գօտևորեալ զմէջսըն և յահեկէ զսաինն երկասյրի և նիզակն արի ի ձեռին իւրում աջոյ և յահեկումն վահան»։ Ստորագծեալ բառի տեղ ձեռագիրներն ունին* զսաին, զսաինն, զսուինն։ *Սովորաբար առնուած է մեր մէջ* զսաին *ձևով՝ իրր գիսա բառի սեռականը. բայց ձեռագիրների միջամտանութեան կրկին ն–երը խանգարում են գործը։ Նոր Հրատարակութեան մէջ Արեղեանը սրբագրել է* սուր՝ *որ շատ դուր է։ Մառ* ЗВО *9, 309 ընդունում է ուզ.* սաին, *հյց.* զսաինն *և մեկնում է իրր պրս.* ستی satī *«պողպատ, երկաթ, նիզակ», որ սակայն նոյնպէս անյարմար է, քանի որ այս իրանեան բառը պիտի տար հյ. *սատիկ կամ *սաթիկ։ Լաւագոյնն է կարդալ* զսուինն, *ինչպէս ունին հօթը ձեռագիր և ինչպէս պատշաճում է տեղին, ուր երկասյրի ածականը պահանջում է մի գոյական։ Մեզ պէտք չէ շփոթեցնէ այն, որ* զսաինն *հայցական է, իսկ նիզակ և վահան ուղղական։ Այսպիսի անտրամաբան ձևեր շատ առատ են մեր թէ՛ հին և թէ նոր գրողների մօտ։]*

ՍՏԻՆՈՍ *(գրուած* ըստինոս*) «փայտատրեալ». այսպէս ունի Բառ. երեմ. 113. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

*ՍՏԻՐԱԿ *«շեր կոչուած ծառի խեժը, մի տեսակ խունկ» Խոր. աշխ. 602. որից* ստիւրակեայ *«շերի ծառի փայտից շինուածք» ճառընտ.։—Կայ նաև* ստորաքս *ձևը, որ յիշում է ՆՀՐ առանց վկայութեան. իսկ ՀՀՐ գրում է* տիւրակիք։

=Յն. στύραξ *«շերի թուփը և խունկը»,* στυράκινος *«ստիւրակեայ». յոյնից են փոխառեալ նաև լտ.* storax, styrax, *ռուս.* стиракъ, *թրք.* اِستِرَك isterek (Gustav Meyer, Türkische studien SWAW 1893, 128), *վրաց.* ხტურაკი სთուրակი, ხტურაკოი სთուրակոսի։ *Ըստ* Boisacq *922 յոյն բառն էլ սեմական ծագում ունի. համմտ. հբր.* צרי ṣārī, ṣorī, *ասոր.* ܨܪܒܐ ṣarvā *«կուենի, ռետինի ծառ»* (Gesenius *695*), *որ տակայն ձևափոխուած է յն.* στύραξ *«նիզակ, տէգ» բառի համեմատ։—Հիւրշ. 381։*

Ուղիղ մեկնեցին ՀՀՐ և ՆՀՐ։

*ՍՏԻՔԵՐՈՆ, ի–ա *հյ. «ոտանաւոր, տաղա-*

չափեալ գրուածք» Եւթաղ. 155, որ և գրուած սաիէէրոն Կամրջ. սաիճերովն Կոչ. 70. սաեճերոն Կնիք հաւ. 252. սաիճիրոն Տօնակ. Կնիք հաւ. 99. սաիւիրոն փ. Սոկր. 338. Նխ. յոբ. սաիճիոն Կնիք հաւ. 256. սաիճիուա Սոկր. 338. ըսաիկիր ՀՀԲ։

=Յն. στιχηρός, չեղ. στιχηρόν «տառանաւոր չափով գրուած», որից նաև վրաց. ხტოჭაճონი սաիճառոնի «եկեղեցական երգ». ծագում է στίχος «շարք, տառնաւորի տող» բառից, որ տե՛ս յաջորդ բառի տակ։—Հիւբշ. 381։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

Բառիս վրայ քննութիւններ ունին Սարգիսեան, Եւագր. ներած. էջ ղԲ և Վարդանեան, Եւթաղ. էջ 1 ծան., էջ 155 ծան.։

*ՍՏԻՔՍ (որ և սաիւճս, սաիճի, սաիւճի, սաիւճիս, սաիճ, ըսաիճս) «տարր, տարերք» Ոսկ. կողոս. էջ 575 (գրուած է մեկնութեամբ հանդերձ՝ Սաիւքիք, այսինքն համօրէն իսկ երևելի արարածքս), 585 (սեռ. սաիւճեաց, հյց. սաիւճիսս), 586, 594 և մ. ա. 1, յհ. ա. 4. Ոսկ. տիտ. 307 (սաիճի). «տառանաւորի տող» Լմբ. իմաստ. «սաորակէտ կամ միջակէտ» Ոսկ. մ. բ. էջ 413. «գիր, տառ?» Պտմ. սահ. 39 (սեռ. ստճսի). «նշանախնդ, փոքր կէտ. կիտուած, նիշ» էլ. արիստ. 118 (Զսաիքսըն՝ այսինքն զնշանսն, զօրութեամբ արժան է առնուլ). Տօնակ, Վրդն. սղ. և ծն. որից ստճսել «տնատել, տների վերածել» Եւթաղ. 108. գրուած սաիճսել Վանակ. յոբ. Վրդն. սղ. յոչ, Տաթև. հրց. էջ 321։

=Յն. στοιχεῖον «տարր, կէտ, գիծ», στίχος «շարք, տառնաւորի տող», στιχίζω «տողի վերածել, տնատել», որոնցից են նաև վրաց. ხტოხი սաիխի «տառնաւորի տող», ռուս. стихіа «տարր, սկզբնատարերք», стихъ «տող տառնաւորի, տուն Սաղմոսի», ասոր. ܣܛܘܟܝܐ stukiā կամ ܐܣܛܘܟܣܐ asṭuksā «տարերք» (Brock. Lex. syr. 223ա)։—Հիւբշ. 381։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։ Վարդանեան ՀԱ 1920, 338 ասորերէնի աղդեցութիւն է ենթադրում։ Յունարէն բառի բուն ծագումը տե՛ս Աստիճան բառի տակ։

ՍՏԿԵԼ «շողոքորթել» Ոսկ. փիլիպ. 400, երր. 513 (երիցս). որից ունինք նաև ստկող «շողոքորթող» Ոսկ. փիլիպ. 400, ստկու կամ ըստկու «մեղմախօս, խորամանկ, նենգաւոր» ՀՀԲ և Բռ. երեմ. 113, ստկուղ «մեղմախօս, նենգաւոր, խաբեբայ» ՓԲ. ստկանք «շողոքորթութիւն» Ոսկ. պօղ. Ա. 49, 50, 115, 399, 400 (չունի ՆՀԲ), սեռ. ստկանաց Ոսկ. հս. 32. սխալ գրչութեամբ ստկսակ «մեղմախօս» Բառ. երեմ. էջ 291։

ՆՀԲ «որպէս թէ սուտակասպաս լինել կամ սկնդել»։

Ստղի տե՛ս Ստեղն։

ՍՏՆԱՆՆԼ «կարողանալ չարիք հասցնել, վնասել» Յոբ. խա. 17. Ա. մկ. թ. 9. երեմ. ա. 19, ժհ. 20, Ոսկ. մ. ա. 4, 15 և ես. Ագաթ. եփր. համառ.։

ՆՀԲ. լծ. յն. σθένω «զօրել», δύναμαι «կարենալ»։ Հիւնք. յն. στένω «հնձել, հառաչել, ողբալ»։

ՍՏՆԱԻՈՐ «վարձուոր», գիտէ միայն Բառ. երեմ. էջ 291։

ՍՏՆԳԱԼ «ջղերը պրկուիլ՝ քաշուիլ (հիւանդի կամ հոգեվարքի)» Եւս. պտմ. ա. 8։

ՆՀԲ «որպէս ծնգիլ և ծնգութիւն կամ ցգնութիւն»։

ՍՏՈՄՆԼ «բաժանել, անջրպետել, իրարից ջոկել» Բառ. երեմ. էջ 292. որից ստոծանի «լանջքը որովայնից բաժանող հաստ մաշկը. diaphragma». այս երկուսն էլ գիտեն միայն ՀՀԲ, ՋԲ և ՓԲ. չունին ՆՀԲ. և ԱԲ. ստոծանի ընդունուած է նոր գրականում։

Տէրվ. Altarm. 106 ստոծանի բառը՝ յն. στέγω «ծածկել», լիթ. stegti «երդիկով ծածկել», stogas «տանիք» են բառերի հետ դնում է հնխ. stag>հյ. բաւ արմատից։

ՍՏՈՂԿԻԼ «թաթաւիլ, թաթախուիլ, մալամկոնուիլ». նորագիւտ բառ, որ մէկ անդամ գտնում եմ գործածուած Ոսկ. ճառք. (էջ 128). «Թագաւորն բիւր իրօք պատանդեալ է և բիւր յալեկոծութեան բազում ուստիք մըխրճմճի (այդպէս գրուած ձեռագրում) և յոլով ստողկի ընդ մեղս»։ Կարելի էր նաև

կարդալ «...յոլովս տողկի ընդ մեղս», և այն ժամանակ բառը կդառնայ տողկիլ *(տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 218)։*

***ՍՏՈՂՈԳԻ** *«կցուրդ, ժամու առաւօտեան երգ. փոխաստացութիւն» Տօնակ, ժմ. էջ 661. որ և* ստողոգիական *սաղմոս Քերթ. եկեղ.։*

=Յն. στιχολογία «առն առ առն ոտանաւոր կարդալը», նոր եկեղեցական իմաստով «փոխաստացութիւն, առն առ առն սաղմոս երգելը». կազմուած է στίχος *«ոտանաւոր» և* λόγος *«բան, խօսք» բառերից։—Հիւբշ. 381։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

***ՍՏՈՄ** *«Թրի բերան» Սեբեր. 75 (մէկ անգամ)։*

=Յն. στόμα «բերան» (ընդհանուր առումով), մասնաւոր առումով «Թուրի բերան»։— Հիւբշ. 382։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Justi, Zendsp. 298 *դնդ.* staman *«բերան, դունչ» բառի տակ, որ մերժում է* Horn, Grdr. *էջ* 267: Müller SWAW 136 (1897), 36 *վերի ձևով։*

***ՍՏՈՄԱՆ, ի–ա** *հլ. «հեղուկների աման, սափոր» Գ. Թագ, ժդ. 3. Մրկ. է. 4. Սեբեր. 205. եփր. Թգ. 352, 382, երր. 216, գրուած նաև* ստուման *Սանահն.* ստոմանի *լմբ. ժղ.։*

*=Յն. στάμνος, σταμνίον «հողէ սափոր». այս բառը տուած է նախ հյ. *ստամն, որից *ստամոն>ստոման։ Յունարէնից են փոխառեալ նաև վրաց.* ხოճი ստամնի, *սվան.* staman *«5—6 շիշ պարունակող սափոր»։— Հիւբշ. էջ 382։*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 167. նոյնը նաև ՆՀԲ։

***ՍՏՈՅԱ** *(բց. ի* ստոյայ*) «սրահական կամ ստոյիկեան (դաս փիլիսոփայից)». մէկ անգամ ունի Փիլ. ել. 547. «ի ստոյայ իմաստասիրակն էն»։*

=Յն. στοά «սրահ», որից ἀπὸ τῆς στοᾶς «ի ստոյայ իմաստասիրակը, ստոյիկեան փիլիսոփաները». յոյնից է նաև վրաց. ხოა ստոա *կամ* ხოვა ստովա *«գաւիթ, սրահ, փորը խորան». Համմ. նաև* ստոյիկեան։— *Հիւբշ. 382։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

+ՍՏՈՅԳ, ի–ա *հլ. (բայց կայ նաև* ստուգի *մակբայը, որ ենթադրում է ի հլ.) «իրաւ, ճշմարիտ» ՍԳր. Մծբ. Եւս. պտմ. և քր. Սեբեր. եփր. Թուց և Թգ. «արդար մարդ» Մծբ. 392. որից* ստուգել *ՍԳր.* ստուգիւ *Եւս. քր.* ստուգագոյն *Գծ. իդ. 22.* ստուգապէս *Սեբեր.* ստուգութիւն *ՍԳր. Ոսկ. մ. ա. 3.* ստուգաբանութիւն *Փարպ. Երզն. քեր.* ստուգաբանական *(նոր բառ) են։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. steuwā- *ձևից, որ ծագում է* setu- *և որ աճելով եղել է նախ* setewo- *և աստկութեան համար միջին բաղաձայնի կրկնութեամբ* seteuwā-. *այս տեղից նախավանկի ստորին ձայնդարձով* steuwā->ստոյգ: *Պարզ ձևը ցոյց են տալիս յն. ἐτά «ստոյգ» (Հեսիւքիոս), աճած՝ ἐτυ-μος «ստոյգ», ἐτεός «ճիշտ», համմ. նաև սանս.* satyá-, *զնդ.* haiθya-, *հպրս.* hašiya, *գոթ.* sunjis, *անգսք.* sōþ, *հին հիւս.* sannr, *բոլորն էլ «ստոյգ, ճիշտ», հատկապէս նոյն ծագումն ունին նաև հսլ.* istŭ, istŭ, jistovŭ *«իրական, ստոյգ»։ Այս բոլորը ծագում են պարզական* es- *«լինել» արմատից, որից* -to- *մասնիկով դերբ.* setó- *«եղած»* (Pokorny 1, 160—161, Boisacq 291):—*Ըստ այսմ հյ.* է *(<*est*) և* ստոյգ *միևնոյն բառերն են։*

Նշ. «որպէս թէ յար և նման ըստ ոգելոյն. լծ. և յատակ և շիտակ կամ ըստ երր. արաբ. սատրգ, *որ է արդար»։* Böttich. Arica 65, 54 ստուար *բառի հետ սանս.* sthavira *ձևին է կցում։ Տէրվ.* Altarm. 36 *և Նախալ. 113 համեմատում է լտ.* di-stinguere *«բաժանել, որոշել» ձևի հետ. Հայը ծագում է *ստաւգել<*ստաճգել ձևից. բոլորն էլ հնխ.* stag, stig *«խայթել, սրել» արմատի տակ։ Մորթման* ZDMG 26, 531 çtā *արմատից է դնում հյ.* ստոյգ=*բևեռ.* istuiguni: *Գաղանճեան, Արև. մամ. 1907* ըստ+ոյգ *(համմ.* առ+ոյգ*)։ Քիւրէղեան, Բազմ. 1910, 153 արաբ.* صدق ṣidq *«ճշմարտութիւն»։* Karst, *Յուշարձան 409 սումեր.* zid, zida *«ուղիղ, ճշմարիտ»։* Petersson KZ *47, 269 յն.* στύω *«բարձրանալ, կանգնիլ», լիթ.* stůgti *«վեր բարձրանալ», լտ.* re-stau-

rāre «վերանորոգել», սանս. sthāvará- «սառուցար» են բառերի հետ հնխ. stēu̯- «հաստատ կանգնել» արմատից։ Մերժում են Pokorny 2, 608 և Meillet MSL 22, 61—62։ Վերջինս տալիս է ուղիղ մեկնութիւնը։

ԳԻՒ.—Սեբ. ըստուխ. ասւում է օր. «ըստուք գիտե՞ս»։

*ՍՏՈՅԻԿԵԱՆ «սրահական փիլիսոփայ» Գծ. ժէ. 18 (գրուած նաև ստուիկեան, ստուկեան). Լմբ. իմ։

=Յն. στωϊκός «ստոյիկեան», որ կազմուած է στοά «սրահ» բառից և նշանակում է բուն «սրահական» (այսպէս կոչուած, որովհետև Զենոն փիլիսոփան այդ վարդապետութիւնը քարոզում էր յայտնի մի սրահի մէջ)։— Հիւրշ. 382։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՍՏՈՐ, ի հլ. «տակը, ներքև, վայր» Նանայ. Վրք. Հց. Մագ. Նար. մծբ. (մէկ անգամ ընտիր մատենագրութեան մէջ ունինք բց. ի ստոր կամ ի ստորուէ Սղ. ժգ. 37, որի դէմ այլ ձ. ի ստորև. նոյնպէս ի ստորէ ձևն ունի Նորագիւտ բ. մնաց. ի. 6՝ ըստ սրբագրութեան Վարդանեանի՝ ՀԱ 1911, 49)։ Այս արմատից են ստորին ՍԳր. ստորնեայ կամ ստորնեայք Եղն. 92 (տպ. ասորնեայք), Ոսկ. յհ. ա. 9. ստորոտ ՍԳր. Ոսկ. մ. ա. 17. ստորամարշ Կոչ. 231. ստորև Փիլ. Մեկն. զգ. Նար. Մագ. կիսաստոր Գրչ. արիստ. գետնաստոր «խոիր» Փիլ. տես. ստորնակ «տակի պատմուճան» Փիլ. եր. ստորանալ, ստորացում, ստորացուցիչ, ստորնայարկ (նոր բառեր) են։—Յետոսկերարեան մատենագրութեան մէջ ստոր դարձած է նախամասնիկ՝ համապատասխան յն. ὑπο- և κατα- մասնիկներին. Համմ. ստորաբաժանել = ὑπομερίζω, ստորագրել = ὑπογράφω, ստորադասել = ὑποτάσσω, κατατάσσω, ստորակէտ = ὑποστιγμή, ստորասել = καταφήμι են։

ՆՀԲ «իբր ըստ որմէ, այսինքն յետ, որոյ ըստ կարգի... յծ. յն. κατὰ ըստ և κάτω ի ստոր»։ Böttich. Arica 65, 53 star արմատի տակ։ Lag. Urgesch. 263 թերևս սանս. uttara, յն. ὕστερος «յետին»։ Հիւնք. աշտարակ բառից։ Մառ. Грам. др. арм. яз. 33 р նախաձայնի անկումով (Համմտ. սաղմոս) պրս. پست past «ցած» բառից փոխառեալ։ Pedersen, Հայ. դր. լեզ. 155 լտ. posterus «յետագայ» բառի հետ, ինչպէս ըստ=լտ. post։ Յիշում են կասկածով Walde 604 և Pokorny 2, 79։ Բոլորովին մերժում է Meillet (Նամակ 18 դեկտ. 1931 թիւ)։ Patrubány IF 14, 59 յն. στόρνυμι և լտ. sterno «տարածել» բառերի հետ։

ԳԻՒ.—Կայ միայն ստորել Ղրբ. «վայր իջնել, խոնարհիլ (արևի)»։

Ստորաքս տե՛ս Ստիւրակ։

+ՍՏՈՐԻ «ջուլհակի այն գլանը, որի վրայ փաթաթւում է գործուած կտաւը» Բ. Թգ. իա. 19. Ա. մն. ժա. 23. ի. 5. որից վերստորի՝ որ նոյն բառի փոխարէն գործածուած է Նորագիւտ Ա. մն. ժա. 23 և ի. 5։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. stor- «ծառի կամ փայտի կոճղ» արմատից, որի բարձր ձայնդարձն է ster-. Համմտ. յն. στεῖρα «նաւի առջևի կոր ու հաստ գերանը», στῆριγξ «նեցուկ, յենարան», Հբգ. storro և մրգ. storre «ծառի՝ փայտի կոճղը»։ Հնխ. ster- նշանակում է նաև «ամուր, պինդ, հաստատուն» և յետոյ «ամուլ, չբեր, աներջ». երկուսի միութիւնը ցոյց է տալիս յն. στεῖρα «նաւի գերանը», որ միևնոյն ժամանակ նշանակում է «ամուլ, չբեր». միւս օրինակները տե՛ս աներջ բառի տակ (Pokorny 2, 627—8, Boisacq 906—7)։—Ա.Մ.

Հիւնք. յն. ὑστόπυδες «կտաւը ոտայնանկաց գործարանին մէջ ձգող փայտերը»։ Աճառ. Հայ. նոր բառեր Մնաց. գրոց. մէջ 32 վերստորի բառից հետևցնելով՝ հանում է վեր և ստոր բառերից, իբր «վերև ներքև, բարձր ու ցած»։

ՍՏՈՐՄԻ «մթին խորշ, ծածուկ տեղ» Ոսկ. երր. լա. 565. սրանից ստորմակերպ «խառնագոյն» Վանակ. յոբ.։

ՆՀԲ երևի թէ հանում է որմ բառից, իբր ըստ որմի։

*ՍՏՈՐՈՎԵՆԻ «մի տեսակ ծառ». մէկ անգամ Ճառընտ. և մէկ անգամ էլ Անկ. գիրք առաք. 25. ուղիղ ձևն է ստորոդոն «սոճի»,

վայրի պիստակենի» Եփր. երաշտ. 203 (մէկ անգամ), որ ՀԲուս. § 2837 գրում է **ստրն-փողոն:**

=Յն. στρόβιλος, στροβιλέων *«մի տեսակ սոճի», որից էլ լտ.* strobilus *«սոճիի պտուղ». բուն նշանակութիւնն է «ծուռ ու մուռ». համմտ.* στρεβλός *«ծուռ ու մուռ»,* στράβων *«շիլ» են (*Boisacq 918):—*Հիւբշ. 382։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

ՍՏՈՐՓԱՅՈՒԹԻՒՆ *«նուաստութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 292։*

=Եթէ առաջին մասն է **ստոր** *«ցած», ի՞նչ է վայ:*

***ՍՏՈՒԱՐ** (ի–ա *հլ. յետնադար) «հաստ, թանձր, հոծ, ծանր» Գ. Թգ. ժբ. 10. Ա. մկ. դ. 30. «թաւ (ձայն)» Բր. և Երզն. քեր. որից* **ստուարանալ** *Օր. լբ. 15. երեմ. ե. 27. Ոսկ. բ. կոր.* **ստուարացուցանել** *Կիւրղ. Թգ.* **ստուարագոյն** *Բ. մնաց. ժ. 10. Փարպ.* **ըստուարութիւն** *Փարպ. ևն։*

=Պհլ. stavar *«թանձր, հաստ, ստուար» բառից փոխառեալ, որի հետ համմտ. նաև պրս.* استوار ustuvār *«ամուր, հաստատուն», քրդ.* stur, ustūr *«հաստ, թանձր, ուժեղ», օսս.* st'ur *«մեծ, խոշոր, զօրեղ», բելուճ.* istūr, *աֆղան.* star *«մեծ, լայն, խոշոր», դնդ.* stawra- *«ուժեղ, զօրաւոր»,* stavah- *«ստուարութիւն, հաստութիւն»,* stūi-, stvi- *«ստուար», սանս.* sthāvará- *«ստուար, թանձր, հաստատուն»,* sthūrá- *«թանձր, լայն»,* stūla- *«հաստ, թանձր» են։ Այս բառերի ցեղակիցներն են յն.* σταυρός *«ցից»,* στεῦμαι *«ուրի կանգնիլ, հաստատիլ, վաւերացնել», լտ.* re-staurare *«վերականգնել»,* in-staurare *«կանգնել, հաստատել», գոթ.* stiurjan *«հաստատել», հբգ.* stūri *«զօրաւոր»,* stiura *«ցից»,* stiuren *«կառավարել, վարել, նեցուկ դնել», լիթ.* stóras *«հաստ», հիսլ.* staurr *«ցից» են, որոնց նախաձևն է հնխ.* stēu-, stāu- *«կանգնիլ, ուրի վրայ հաստատ մնալ» և* -ro- *մասնիկով՝ հնխ.* stēuro-, stəuro-, stūro-, steɣero-, *որոնք իբր բնիկ հայ պիտի տային* *ստոյր, *ստօր, *ստուր, *ստոր:— *Իրանեան* -av- *ձևի դէմ հյ. երբեմն գտնում ենք* -ով-. *համմտ.* խոսրով՝<Xusrav *և* դրով՝<dusrav:—*Բոլորի պարզագոյն արմատն է* stā- *«կանգնիլ», որի բազմաթիւ ածանցները տե՛ս* Pokorny 2, 603—609, *նաև* Boisacq 902 *և հյ.* **ստանալ** *բառի տակ։ Անշուշտ իրանեանից է նաև ուս.* ostavan *«ամուր, պինդ, ժլատ»։*

Klaproth, Asia pol. 99 *հբգ.* stor *բառի հետ։ ՆՀԲ յն.* στιβαρός, στερεός, *պրս.* **սիդէպր, իւդիւար,** *սանս.* **սթա՛վառա:** Windisch. 20, Böttich. Arica 65, 54, Müller SWAW 38, 574, Justi, Zendsp. 299 *սանս. զնդ. և պրս. ձևերի հետ։ Տէրվ. Նախալ. 114 սանս.* **սթա՛վարա, սթո՛ւրա,** *լտ.* restaurare, *գոթ.* stiurjan *ձևերի հետ՝ հնխ.* stu, sti *«ցցուիլ» արմատից։ Հիւբշ.* Arm. Stud. *էջ 50—51 չի յիշում բառս, որից իմացւում է թէ իբր փոխառեալ է ընդունում։ Յայտնապէս փոխառեալ է համարում* Horn, Grdr. 158, *ծան. 2 (այսպէս և Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. 208 և Հինք.)։ Սակայն Հիւբշ.* Arm. Gram. *493 առանց պատճառաբանութեան, ընդունելով հանդերձ թէ հայ բառը բնիկ լինելու պարագային* *ստուր *կամ* *ստևար *ձևը պիտի ունենար,* **ստուար** *համարում է բնիկ և ոչ փոխառեալ։* Scheftelowitz BB 29, *20 սանս.* sthūra- *կամ լիթ.* stiprùs *«ուժեղ», հպրուս.* po-stippan *«բոլորովին» բառերի հետ համարում է բնիկ հայ։—*Viggu Brondal, Mots scythes en nordique primitif (Kobenhavn 1928) *աշխատութեան մէջ, սկիւթական և սարմատական ցեղերի միջոցով փոխառեալ է համարում՝ իսլ.* storr *«մեծ, ուժեղ», ֆրիզ.* stôr, *հանգլ.* stór, *հբգ.* stûr, *հշվէդ.* stur, *ֆինն.* suuri, *լապ.* šuf, *վեպս.* sur, *վոթյ.* sur *և դան.* stor, *որոնք բոլորն էլ նշանակում են «մեծ, խոշոր»։*

ՍՏՈՒԳՆ, ն *հլ. (գրծ.* ստգամբ) *«որկոր, կերակրի ճանապարհը». մէկ անգամ միայն գրծ.* ստգամբ *ձևով ունի Նիւս. երգ. այս պատճառով ՆՀԲ և ՋՔ դնում են ուղ.* ստիգն *կամ* ստուգն. *իսկ ԱԲ դնում է միայն* ստուգն, *որ նոր գրականի էլ ընդունած ձևն է։ Տաթև. ձմ. ճէ գրում է կրկին ձևով՝* ստոմ *և* ստոմս. *«Ստոքսն, ընդ որ մտանէ կերակուրն ի ստա-*

մոքսն...թէ լինի ինչ արգելումն կամ ցաւ ի ստոքին՝ ընդ որ մտանէ կերակուրն»։

ՆՀԲ լծ. ընդ ծծումն, ծծոց: Բառիս նշանակութեան վրայ ընդարձակ խօսում է Մ(էնէվիշեան) ՀԱ 1887, 43։— Անստոյգ ձևը թոյլ չի տալիս որոշելու թէ իբր բնիկ հայ կապ ունի՞ հնխ. stomen- *«բերան», որից զնդ.* staman *«շան դունչ», յն.* στόμα *«բերան», στόμαχος «կոկորդ, սուզ, ստամոքս» (կազմուած* -gho- *մասնիկով) են բառերի հետ* (Boisacq 914—5, Pokorny 2, 648):

ՍՏՈՒԵՐ, ի–ա *հլ. (յետնաբար ի հլ.) «շուք, շուաք, հովանի» ՍԳր. «մեռելի ուրուական, հոգեղէն» Ճառընտ.— Ժ դարուն արդէն ջնջուած էր բառս ժողովրդական լեզուի մէջ, տեղի տալով շուք բառին. Համմ. Խոսր. պարգ. էջ 29. «Ստուեր ասի, զոր շուք մեք կոչեմք, որ անկանի ի մարմնոյ. եթէ ի կենդանւոյ և եթէ յայլ ինչ իրէ»։—Որից* **ստուերացուցանել** *Եւագր.* **ստուերանի** *«ստուերներ» Մագ. մեծ ևն. էջ 37.* **ստուերագիր** *իմ. ժն. 4 Կոչ.* **ստուերածս ածել** *Բ. Քագ. ի. 6.* **ստուերական** *Ոսկ. ես. մ. ա. 1. Եւագր.* **ստուերամած** *Ագաթ.* **ստուերանիստ** *Ագաթ.* **անստուեր** *Ագաթ. Վեցօր.* **նսեմաստուեր** *Նար.* **խշ. առ.** **ստուերագիր** *Եղիշ.* **բարեստուեր** *Շնորհ. յուզ.* **երկաստուերեան** *Վեցօր.* **ստուերախիտ, ստուերաշատ, ստուերոտ** *(նոր բառեր) ևն։*

Թօփուզեան, Արծիւ վասպ. 44 **ստուեր**: *Հիւնք.* **ստուեր** *բառից։*

Ստուի *տե՛ս Զիստ։*

ՍՏՈՒԿ *«պրգիտ». ունի միայն Բռ. երեմ. էջ 293։*

Ստուճգանել *տե՛ս Ունկն։*

Հներից Գր. Տաթեւացի՝ լծ. պրպմ. 628 մեկնում է «Ստուճգանելն յանցանելն է. այլ՝ ստուգաբանի **ստուգ գտանիլ** *կամ* **ստուիանն ունկն դնել»։**

ՍՏՈՒՆԳՆ *«ծմակ կամ շուք». ունի միայն Բառ. երեմ. էջ 150՝ ծմակ բառի բացատրութեան մէջ, այսպէս՝ «ծմակ. ստունգն կամ շուք». որից հետևում է թէ այն ժամանակ գոյութիւն ունեցող ժողովրդական բառ էր։*

ՍՏՈՓԱԼ *«սաւել». ունի միայն Բռ. երեմ. էջ 293։*

ՍՏՈՓՈՆԻՈՆ. *նորագիւտ բառ, անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 240. «Զօրութեամբ ծիծաղականն բառնի (ուղում է ասել կարելի է զսպել ծիծաղը), որպէս որք ընդ ստոփոնիոնն անցեալք, ասէ, առանց ծիծաղելոյ մնացին»։*

ՍՏՈՔՓԻՍ *«մի տեսակ ծովային կենդանի, երկծակ, ծովու օձ,* biphorə, salpa*». ունի միայն Քաջունի, Բ. 555, Գ. 223 (տե՛ս և Ա. 278)։*

***ՍՏՈՈՐԻԼՈՍ** *«հողմ պտուտեալ ներքուստ ի վեր» Արիստ. աշխ. 612 (գրուած* **ստռոբիլոս**)։

=Յն. στρόβιλος *«մրրիկ, պտուտկող քամի»։—Հիւբշ. 382։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՍՏՐԱՏ** *«զօրապետ». մէկ անգամ ունի Բուզ. ե. 5։*

=Յն. στράτιος *«բանակի գլխաւորը»։*

Այսպէս է մեկնում ՆՀԲ.—իսկ Brockelmann, *Ուս. փոխ. բառից 91 և Հիւբշ. 382 ուղղում են* **ստրատեղատ**։

***ՍՏՐԱՏԵԼԱՏ** *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «զօրապետ, զօրագլուխ» (իբրև յունական տիտղոս) Բուզ. Խոր. Վկ. գէ. 14 (Ստրատելատք՝ որ կոչին զօրավարք). որ և* **ստրատեղատ** *Ճառընտ. որից* **ստրատելատութիւն** *Վրք. Հց. Յայտմ.։*

=Յն. στρατηλάτης *«զօրավար». կազմուած է* στρατός *«բանակ» և* ἐλαύνω *«վարել» բառերից. նոյնից է նաև վրաց.* **სტრატელატი** **ստրատելատ**։—*Հիւբշ. 382։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ, Ինճիճ. Հնախօս. բ. 277 և ՆՀԲ։

***ՍՏՐԱՏԻԳԻՆ կամ ՍՏՐԱՏԻԳԻՈՆ** *«զօրապետի օթևանը». մէկ անգամ ունի Խոր. բ. 85, իբր օտար բառ. «Շիննաց յիշատակ իւր զասացեալն* **ստրատիգին**, *քանզի ի նմա զպատերազմականսն յօրինեաց կազմութիւնս»։*

=Յն. στρατήγιον *կամ* στρατηγεῖον *«զօրապետի վրանը. 2. Աթէնքի մէջ այն ժողովարանը, ուր ռազմագէտները նիստ էին գումարում»։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՍՏՐԱՏՈՐ *«արքունի պաշտօնեայ՝ որ թագաւորի ձին էր թամբում և թագաւորին օգնում էր հեծնելու» Մխ. դտ. էջ 265*, որ և սարաատրոս *Մմբ. դատ. 88*, յգ. սարաատրայք *Մխ. այրիվ. էջ 4*։

=Յն. στράτωρ, ορος, յգ. στράτωρες, *որ տառադարձուած է* լտ. strator *«կայսերական ախոռապետ» բառից* (Sophocles *1015ա*)։

Բաստամեան (անդ) դրաւ լտ. ձևից՝ Karst, *Դատաստ. էջ 88* յն. ձևից, *որ ճիշտ է*։

ՀՍՏՐԻԿ «famelicus, *սոված, քաղցած». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-Հյ. 201 բ, որ էջ 243ա մեկնում է «տկար, ախտաժէտ», իսկ էջ 514 բ. «ստրիկ, սայեայ,* subditus». *վերջին բացատրութիւնից երևում է որ Հյ.* սարուկ *բառն է։]*

*ՍՏՐՈԲՈՂՈՆ *տե՛ս Ստորովնի*։

*ՍՏՐՈՄ *«պատուհասած ձևով մի խեցեմորթ». մէկ անգամ ունի Վեցօր. էջ 140. «կոնքն և կաինքն և կոքղիք և ստրոմք»*։

=Յն. στρόμβος, *որից նաև լտ.* strombus *«նոյն նշ.»*—*Հիւրշ. 382*։

Ուղիղ մեկնեցին ՀՀՔ և ՆՀԲ։

*ՍՏՐՈՎՔԻԻՂ *«երախայական խաղալիք, շռնչան» Վեցօր. 104. «Ջոր օրինակ ստրովքիւղք... շրջանս հանապազորդս առնուն և ինքեանք յինքեանս շրջին»*։

=Յն. στρόβιλος *«շռնչան». բառս նշանակում է նաև «պատուհասող բամի» և այս նշանակութեամբ տառադարձուած է* ստորբիլոս, *որ տե՛ս վերը*։—*Հիւրշ. 382*։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՍՏՐՈՒԿ, ի–ա *հլ. «գերի, գնուած ծառայ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 21. որից* սարկութիւն *ՍԳր. Ագաթ. Կոչ. Եփր. Թգ.* սարկանալ *Առակ. իէ. 8,* սարկել *Ոսկ. Հոռվմ. 133,* սարկացուցանել *Լմբ. առակ.* սարկագոյն *Նիւս. կուս.* սարկածին *Նար. խչ.* սարկասէր *«ստրուկին կամ ծառային սիրող» (նորագիւտ բառ) Սկևռ. ազ. 51,* սարկական, սարկաւոգի, սարկամիա *(նոր բառեր) ևն*։

ՆՀԲ ստորին *բառից?* Lag. Urgesch. 262 ուշ- *մասնիկով* tar *արմատից. Համմ.* վտարանդի։ Müller SWAW 41, 9, 84 (1877), 229 *և* WZKM 7, 381 *տանս.* çatru *«թշնամի» բառի հետ։ Տէրվ.* Altarm. 44 *տանս.* star *«ցրուել, գետին խփել, գետին նետել» բառի հետ՝ համարելով* սարուկ *բուն «գետին զարնուած, տապալուած, գերի»։ Նազրճեան, Արեւելք 1884 Հոկտ. 17 տանս.* sudhra *«հնդկական չորրորդ դասակարգը, այն է գերիների դասակարգը»։ Հիւնք. յն.* ἐστουργός *«ոստայնանկ» բառից։* Jensen, Hitt. u. Arm. *96, 170 հատ.* str *«ծառայ»*—*Սրմադաշեան, Արմէնիա ռում.* strug *«ճախարակ» բառի հետ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 339 պրս.* ستروك satrūk *կամ* satūrk *«չարաբարոյ, կուռարար, անինչ, անարդ, անազգի, յոռեմոյն»։ Աբեղեան, Հայոց լեզ. տեսութ. 278 –ուկ մասնիկ է դնում*։

ՓՈԽ.—Վրաց. ხტრუკი սարուկի *«ոչնչութիւն»։ (Հայերէն ձեռագիրների յիշատակարաններում գրիչը յաճախ իրեն կոչում է* սարուկ, *ի նշան խոնարհութեան։ Այս առումն է որ անցել է վրացերէնի)*։

ՍՏՐՈՓԵԼ, *անսովոր բառ. մէկ անգամ ունի Եօթնադր. «Երկիր պագ, զի տարուիցէ զբեզ»։ ՆՀԲ մեկնում է «տրուիելով շարժել կամ շարժել որպէս տառորիլոս»։ Նոյնը նաև ՋՔ. իսկ ԱՔ «կլոր պտտեցնելով շարժել կամ վար զարնել, գետին զարնել»։ Ըստ այմ՝*

ՆՀԲ հանում է տրուփել *կամ* տառորիլոս *բառից, իսկ ԱՔ հանում է յն.* στρέφω *«դարձնել» բայից*։

ՍՏՐՋԱՆԱԼ *«դղջալ, փոշմանիլ» ՍԳր. Կիւրղ. ծն. Ագաթ. Ոսկ. մ. ք. 15. որից ունինք* սարջացուցանել *Ոսկ. երր. և մ. ա. 8, ք. 18,* սարջաւիմ *Ոսկ. մտթ.* սարջումն *Եփր. դևտ. էջ 211*։

ՆՀԲ «արմատն է սաբրջ *և զեղջ»։*

Հիւնք. սիրտ *բառից, ինչպէս* սարմսիլ։

Սրալ *տե՛ս Սուր*։

*ՍՐԱՀ, ի *հլ. «մեծ սենեակ, դահլիճ. 2. սրահի մէջ կախուած վարագոյր կամ պատի զարդ» ՍԳր. որից* սրահեակ *«փոքր սրահ կամ վրան. 2. սենեակի մէջ կամ դռան վրայ կախուած վարագոյր, առագաստ» ՍԳր. Ագաթ. Բուզ. Ոսկ. (յաճախ սխալմամբ գրուած* սրահանգ, *որ տե՛ս). Եղիշ. ք. 156.* սրահակա–

ձև *Ագաթ.* սրահականք *«սաոյիկեան փիլիսոփաները» Ոսկիփ.* ընդարձակասրահ *Եփր. վկ. արև. 38,* երեքսրահեան *Եզեկ. խր. 3, 6։ Նոր բառեր են* ճաշասրահ, թատերասրահ, խաղասրահ, պարասրահ, նախասրահ։

=*Պհլ.* *srāh *ենթադրեալ ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց ունինք փոխառութեամբ պարսկական հր.* סראה srāh *«նախասրահ», մանդ.* סראדקא srādqā *«վրանի գլուխը՝ տանիքը», արաբ.* سراديق surādiq *«վրանի վերի կողմը՝ տանուտէրի բնակարանը բաժանող վարագոյրը. 2. առագաստ» (Կամոս, Թրք. Թրգմ. Բ. 925)։ Սրանցից առաջինը (մեր բառի հետ) ենթադրում է հպրս.* *srāδa-, *իսկ միւս երկուսը՝ հպրս.* *srāδaka->*սրահակ*։—*Հիւրշ. 241։*

Schroder, Thesaur. 46 *ասոր.* שרה s r h *ձևից փոխառեալ։* Lag. Btrg. bktr. Lex. *69 կցում է իրանեանից փոխառեալ արաբ* surādiq *բառի հետ։* Justi, Zendsp. 139 *զնդ.* θrāiti *«սրնունդ», պհլ.* srāyašn, *պրս. աֆղան.* sarāi *«տուն» բառերի հետ։ Նոյնը նաև* Horn § 727, *Փ. Տէր-Մովսիսեան ՀԱ 1893, 190 շատ նման է գտնում պրս. և Թրք.* سراى saray *«պալատ» բառի հետ։ Հիւնք. արաբ.* սարհ, սէրա *«ապարանք», սարա «գետին, հող», պրս.* սէրաչէ *«տնակ»։ Վերի ձևով մեկնեց Հիւրշ.* Pers. Stud. *էջ 199։*

ԳԻՒ.—Գոր. Երև. Ղրբ. սրահ *«գիւղական տների առջևը գտնուած մասը, որի երեսը բաց է և սիմնապարդ, և որի տակը գտնում են սենեակները» (ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Փ. Տէր-Մովսիսեան,* Arm. Bauernhaus 140, *Թրգմ. ՀԱ 1893, 189 ևն), Մկ. Սլմ.* սրախ, *Ալշ. Մշ.* սրախ *«միջանցք», Ջթ.* սօյօֆ, սօրոֆ։—*Նո՞յն է նաև* սրա *«մառան» (Մշ.)։*

ՓՈԽ.—Վրաց. სრა სრა *«պալատ»։*

*ՍՐԱՀԱՆԴ *«զօրաց սպայ». գործածուած եմ գտնում երեք տեղ. «Հինգհարիւր արս սրահանգս բարձրացոյց ի փայտ մահու ի Տփխիս քաղաքի» Վրդն պտմ. (տպ. Վենետ. էջ 119 այսպէս, իսկ Հրտր. էմ. 156* սրահանիս*). «Արս հինգհարիւր սրահանգս ի փայտն հանեալ սատակէր չարաչար» Ուռհ. 350. «Յաւուրսն յայնոսիկ գայ Մելիքշահ սուլտանն... և թողեալ անդ ամիրայ զՍրահանդն... Զկնի աւուրց եկն Սրահանդն» Պտմ. վր. 114։—Նոյն բառը մի քանի տեղ գործածուած կայ «աստեան, դահլիճ կամ վարագոյր» նշանակութեամբ. ինչ. Ոսկ. պօղ. Ա. 220, Ես. 62, մտթ. բ. 621. բայց այս բոլորը ըստ Վարդանեան ՀԱ 1921, 604 իրօք պէտք է ուղղել* սրահակ՝ *համաձայն յունարէնի։* Սրահակ *բառը յետին շրջանում լեզուից ջնջուած լինելով, գրչագրողները նրա փոխարէն դրել են իրենց առօրեայ գործածութեան մէջ սովորական դարձած* սրահանգ *բառը։*

=*Պրս.* سرهنگ sarāhang *կամ* سرهنگ sarhang *«յառաջընթաց զօրաց, բանակի գլխաւոր». կազմուած է* sar *«գլուխ» +* āhang *բառերից։ Պարսկերէնից է փոխառեալ նաև վրաց.* სარანგი სარანგი *«աստիկանական պաշտօնեայ»։—Ա.Ճ.*

ՆՀԲ՝ որ գիտէ միայն Ուռհայեցու վրկայութիւնը, մեկնում է բառս «իբրու զրահանգ, շղջակոյտ սպանելոց». Ա.Բ դնում է «սրիկայ» (թէ ի՞նչ պատճառով Ա.Բ սրահանգ *մեկնել է «սրիկայ», տե՛ս* գրահանգ. *անշուշտ սուտագրանուած է բառս «սրահան, սուր հանող, դանակ քաշող սրիկայ»)։ Ա.Բ-ի տուած նշանակութիւնը հաստատում է Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 113, աւելացնելով վարդանի վկայութիւնը. բայց յետոյ (անդ, հտ. Բ. էջ 16) գտնելով Ջուանշիրի վկայութիւնը (իբր յատուկ անուն գործածուած), մերժում է նախորդները և տալիս է վերի մեկնութիւնը։ Բառիս վրայ խօսում է նաև Սարգսեան, Բազմ. 1928 մայիս, էջ 142—3 և մեկնում է «սուր հագնող»!*

Սրահալ *տե՛ս Սուր։*

Justi, Zendsp. 307 սլահալ *ձևի հետ՝ զնդ.* sri *«երթալ» բառի տակ։ Տէրվ.* Altarm. *98* սղել, սլահալ *են ձևերի հետ սահս.* sar *արմատի մօտ։* Lag. Arm. Stud. § 2072 *ՆՀԲ-ի հետ ընդունում է դնել* սուր *բառից։*

ՍՐԹԱԼ «վազելուց հևալ» Փիլ. իմաստ. էջ 80. «հառաչել» Սասն. 72։

ԳԻՒ.—Սրա կրկնակա՞նն է **սրսրթալ, սռսրթալ, սռսրթալ** «ցրտից դողալ»։

ՍՐԻԱՆ «մանգաղ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սեբ. իբ. էջ 74. «Ընկալ անտի բազմութեան մանկատուց գերանդօք և սրիանօք անկան ի վերջոյ նոցա և գործեցին մեծ օճիս վնասուց, թողին վիրաւորս»։

Գտաւ ու մեկնեց Աճառ. Արարատ 1911, 231։ Սրա հետ կապ չունի վրաց. **სრიალი** սրիալի «շկահիւն»։

ՍՐԻԿԱՅ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «գող աւազակ մարդ» Դտ. Բ. 4. ժա. 3. Խոր. բ. 7. ՅՀ. կԲ. 403. որից **սրիկայութիւն, սրիկայական** (նոր բառեր)։

ՀՀԲ **սուր** ի նա կայ։ ՆՀԲ նոյն է համարում **սիկարեան**<լտ. sicarius բառի հետ և մեկնում է «ոյր կայ սուր կամ որ ի զուր կայ, այն է դատարկապորա»։ Հիւնք. **սիկարեան** բառից։ Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 1222 և 1406) համմ. շուտիկ «դատարկապորա»։ Աւգեր. Բազմ. 1925, 171 անգաք. cearu, cearig:

ԳԻՒ.—Կր. **սրիկա**, Խրբ. Ռ. **սրիգա**, Պլ. **սիրիգա** (փոխառեալ դրականից). Նշանակում են «անամօթ, լպիրշ», ճիշտ իբրև համապատասխան Թրք. čapqən (ամկ. չափխրն) բառի, որ է «փողոցային»։

ՓՈՒ.—Սրանի՞ց է Թրք. գւռ. Խրբ. sədəka «սրիկայ»։—Justi, Dict. Kurde 242 մեր բառի հետ է կապում քրդ. سرێغ sirig «լիրբ, լկտի», որ սակայն պէտք է կցել ամկ. սըյրբխ<Թրք. səyrəq «սրիկայ» բառի հետ։

***ՍՐԻԿՈՆ** «նօթից հանուած աղնիւ մի ներկ» Խոր. աշխ. 616 (այլ ձ. **սորիոն, սկիւրիկոն**). ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ԱԲ։

=ՅՆ. **սուրկոն** «սուսր» կամ պրս. سریقون sariqūn (Justi, Kurd, Gram. 71), որոնց հետ նոյն են քրդ. zerikun, արաբ. sīlīqun և սրանից հյ. **սիղիգոն** (տե՛ս այս բառը). յոյնից է փոխառեալ նաև ասոր. صرقعا srīqaun «կարմիր թանաք»։

Ուղիղ մեկնեց ՀՀԲ, Պատկ. Խոր. աշխ. 83 մեկնում է «մետաքս», իբր յն. σηρικόν, լտ. sericum:

***ՍՐԻՆԴ**, ի–ա հլ. «շեփորայ, փչելով նուագելու մի գործիք, դուդուկ» ՍԳր. Մծբ. «Գ2 ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամատունի, Հայոց բառ ու բան, 600), որից **սրնգել** «սրինդի ձայն հանել» Մագ. թղ. 125. Արծր. **սրնգահար, սրնգական** Ա.Բ. գրուած է նաև **սրինկ** և **սրիմ**՝ որ տե՛ս ՀԱ 1913, էջ 623։

=Թուի թէ փոխառեալ է փռիւգականից, որից փոխառութիւն պիտի լինի նաև յն. σῦριγξ «սրինգ, սուլիչ», որից συρίγγιον «փոքր սրինգ», σύριγμα կամ συριγμός «շչիւն, սուլ», συρίζω «սրինգով նուագել»։ Յունական երաժշտութիւնը և շատ յունական երաժշտական գործիքներ իրենց անուններով հանդերձ փոխառեալ են Փոքր-Ասիոյ փռիւգացիներից։ Այսպէս Ստրաբոն (Գիրք Ժ, գլ. գ, § 10—17) բաւական երկար խօսելուց յետոյ յոյն երաժշտութեան Թրակիական և ասիական ծագման վրայ, աւելացնում է καὶ τῶν ὀργάνων ἔνια βαρβάρως ὠνόμασται νάβλας καὶ σαμβύκη καὶ βάρβιτος καὶ μαγάδις καὶ ἄλλα πλείω —երաժշտական գործիքներից շատերը կրում են բարբարոսական անուններ, ինչպէս նաբլաս, սամբիակէ, բարբիտոս, մագադիս և այլն»։ Չէ յիշուած σῦριγξ, բայց երկար խօսում է մի ուրիշ տեսակ սրինգի մասին (αὐλός), որի ծագումը նոյնպէս փռիւգական է դնում։ Կայ σῦριγξ-ի մասին հետևեալ առասպելը. «Սրինգը փռիւգացի մի նիմֆայ էր. Ապոլլոնը սիրահարուեց նրան. Սրինգը փախաւ. Ապոլլոնը վազեց հետից. Սրինգը տեսնելով որ հասուհաս է, կանգնեց և եղէգ դարձաւ։ Ապոլլոնը կտրեց եղէգը և իբր սրինգ նուագեց»։ Այս առասպելը ցոյց է տալիս, որ սրինգը փռիւգական ծագում ունի։ Բայց բառի ձևը այնպէս է, որ նա չի կարող լինել հնդեւրոպական։ «Յն. σῦριγξ, ինչպէս նաև φόρμιγξ «քնար», անպայման փոխառեալ են. և եթէ իրօք փռիւգական լինին, այդ նոյն փռիւգական բառն էլ փոխառեալ է ոչ-հնդեւրոպական մի լեզուից» (Meillet, նամակ 1931 դեկտ. 4)։ Տե՛ս նաև **փանդիռն**։

ԳԴ պրս. ciring «ձայն հնչման զանգակի և լախտի», յն. սիրինքա: ՀՀԲ և ՆՀԲ յն. σύριγξ ձևից: Այսպէս նաև Հիւբշ. 382: Բայց յն. σύριγξ չի կարող տալ հյ. սրինգ. պիտի լինէր *սիւրինքս կամ *սուրինքս ևն: Այս պատճառով մեր համալսարանի դասախօսներից Պ. Ստոնիկեան մերժում է յունարէնից փոխառութիւն ընդունել և հիմնուելով Ա-պոլլոնի առասպելի վրայ, համարում է փռիւգական փոխառութիւն: Յոյն բառ Boisacq 935 և Pokorny 1, 752 դնում են նուագական *σῡ-ρος ննջադրեալ ձևից և այս էլ կցում են σωλήν «խողովակ», սանս. śuṣa-, հսլ. tulъ «կապարճ» բառերին, ինչ որ շատ անբաւարար ստուգաբանութիւն է: Հայ. բառը իրրև բնիկ կարելի էր թերևս կցել նաև սանս. çṛ́ṅga- «եղջիւր» բառին (արմատը հնխ. k'er- «եղջիւր» Pokorny 1, 403—4), բայց ձայնական օրէնքները համապատասխան չեն:

*ՍՐԿԲՈՒՆՔ «արքունի մի պաշտօնեայ» Մխ. դտ. 264. պէտք է կարդալ սկրիբուռք, իբրև՝

=Բիւզ. յն. σκριβας «քարտուղար, գրագիր», որ է լտ. scriba ձևից փոխառեալ և կամ σκρίβων (յաճախ յգ. σκρίβωνες ձևով գործածուած) «քիչնապահ կամ անձնապահ արբայի» (Sophocles 998ա): —Ա.Ճ.

Բաստամեան, անդ՝ դրաւ լտ. scriba:

*ՍՐՄԱՅ «ոսկեթել». առանձին գործածուած չէ, բայց կայ նոր գաւառականներում. որից սրմակերպ «ոսկեթելի նման» Լծ. կոչ. (Ոսկեգոյնը և ոսկեթելը և սրմակերպը):

=Քրդ. سەرما sərma «ոսկեթել»:

Ուղիղ մեկնեց ՆՀԲ:

ՍՐՈՀՈՒՆԴ «մի տեսակ բարձր խոտաբոյս, ոզկանեփայտ, լտ. ricinus» Գաղիան. (Ֆր. millepertuis, լտ. hypericum ըստ Քաջունի, հտ. Գ. 224, որի համար ասում է թէ «համարէին ևս ունել զօրութիւն հալածելոյ դևս, և տային խելագարաց և լուսնոտաց»): ՀԲուս. § 2949 և § 2840 դիտէ սրոյ նունդ, որ ցոյց է տալիս թէ բարդուած է սուր + նունդ բառերից. բայց համմտ. նաև լ. ղք. pro'նունդ, որ է «լտ. lappa fomentosa, ռուս. лопухъ, лопушникъ» կոչուած բոյսը՝ բոլորովին տարբեր նախորդ երկուսից:

Lag. Btrg. bktr. Lex. 19 զնդ. *sraoθravant «կախարդական երգերով լի»:

*ՍՐՈՎԲԷ կամ ՍՐՈՔԷ, ի հլ. «առաջին կամ երկրորդ կարգի հրեշտակ» Ես. ղ. 2, 6. Ոսկ. Ես. աստւում է նաև սեռովբէ Շար. սեռովբիմ Եփր. աւետ. Մարգ. ա. պետր. ը (ա տպ. էջ 420, բ տպ. էջ 329), սեռովբին Իրեն. ցոյցք 8, սեռափիմ, սռովբիմ Շար. Շնորհ. հրեշտ. բառախաղով յարմարեցրած է սէրաբիմ կամ սեռաբիմ «հրեշտակ կամ սիրով արփիացեալ» Նար. խչ. 398 և մծբ. 439. որից սռովբէագունդ Ագաթ. սռովբէական Գնձ. սռովբէական 3՜. կթ. սռովբէափակ Շար. Բննիկ. ևն: Նոր գրականում ընդունած է միայն սեռովբէ, որ նաև յատուկ անուն է:

=Ասոր. ܣܪܦ srāfē, յն. σεραφίμ, լտ. seraphim ևն, բոլորն էլ նոյն նշանակութեամբ և բոլորն էլ հբր. שְׂרָפִים sərāfīm ձևից, որ saraf բառի յոդնակին է և նշանակում է բուն «այրուող» (արմատը հբր. שרף sraf «այրել» =ասուր. 𒊭𒀀𒉿𒅗 ša-ra-pu «այրել» =եգիպտ. srf «տաք». Gesenius[17], 794, Delitzsch, Assyr. Hndwörtb. 691, Strassmaier, Alphab. Verzeich. 998): Հայ ձևը աղղուած է սեռովբէ բառից և սրանից ստացած բ փոխանակ փ-ի. տե՛ս և սեռովբէ:—Հիւբշ. 320:

*Ուղիղ մեկնութեան ծանօթ էին հներից՝ Ոսկ. Ես. 64 (ի հերրայեցի լեզու՝ հրեղէն բերանք թարգմանին սրոբէք), եղիշ. հրց. 9—49 (Սերովբէքն որ թարգմանին կիզիչք կամ ջեռուցիչք), Գիրք առաք. 232 բ մեկնում է «Սերօբէից, որք թարգմանին կիզիչ կամ ջեռուցիչ», Տաբև. ձմ. ճիզ և ամ. 566 (Սերովբէն անուն որ թարգմանի յերրայեցւոցն ի մերս, կիզիչ կամ ջեռուցիչ), Բառ. երեմ. 284 (Սեփարեմ. հոգիք համբարձեալք լուսով): Նորերից նախ ՀՀԲ դրաւ երբ. ՆՀԲ յն. և երբ. ձևերը, Հիւբշման՝ ասորուց:

Գիւմ.—Իբր հասարակ անուն կայ Մշ.

սէրոպէկ, սէրոպէհ. *այլուր իբր յատուկ անուն, ինչ. Ախց.* Սէրովբ'է, *կր.* Սէրոփէ, *պլ.* Սէրոփ, Սէրոփէ, Սէօրէփ, Սէօրէօփէ, *Զթ.* Սբյրբ'բ'ե:

*ՍՐՈՒԱԿ, ի–ա *հլ. «իւղի շիշ» ՍԳր. Եփր. Թգ. 434—5. «չորս քահան պարունակող մի չափ, կամփսակ» Շիր. «մարմնից արիւն առնելու եղջիւր» Վեցօր. էջ 57. 133, Շիր. Երզն. երկն. նոր գրականում «փոքրիկ բարակ ու երկար շիշ»:*

*=ՊՀլ. *sruvak ձևից, որ բուն նշանակում է «եղջիւր». Համմտ. պՀլ.* sruv, srūv *(գրուած* srūb*), զնդ.* srvā-, sruvā-, *պրս.* surū, sarūn *«եղջիւր», որոնցից փոխառեալ բելուճ.* surum, srunbē *«ամբակ», հունգ.* szaru, szaro *«եղջիւր» (*Horn § 734*): Արևելքում եղջիւրը մինչև այսօր էլ գործածւում է իբր շիշ զանազան հեղուկների համար. Համմտ. եգիպտ.* ḫnw.t *«եղջիւր. 2. գինու աման» (*MSL 23, 303*): Բացի սրանից սրուակ իբրև արիւն առնելու եղջիւր՝ պահում է իր նախնական նշանակութիւնը: Վերջապէս երկու գաղափարների նոյնութեան շօշափելի ապացոյց է Դ. Թագ. Թ. 1՝ «Ա՛ռ զսրուակ իւղոյս ի ձեռին քում», որ Ա. Թագ. ժզ. 1, 13 դառնում է «Լիր զեղջիւր քո իւղով... և առ Սամուէլ զեղջիւրն իւղոյ և օծ զնա»— Իրանեան բառերը ծագում են հնխ.* k'er- *«եղջիւր» (*u- *բնով* k'eru-*) ձևից, որի զանազան ժառանգներից յիշենք յն.* κέρας *«եղջիւր»,* κεράς *«եղջիւրաւոր»,* κερατίας *«եղջիւրաւոր», նյն.* κερατᾶς *«կաւատ» (որ է «եղջիւրաւոր»=Թրք.* كرات kerata*>ռմկ.* էրաբա *«կաւատ»),* κεράτιον *«եղջիւրիկ, 2. շատ փոքրիկ մի քաշ, կերատ» (>ռուս.* карáтъ, *արաբ.* قيراط qirrat*>ռմկ.* ֆրաք *«ադամանդի կշիռ». տե՛ս* կերատ*), լտ.* cornu *«եղջիւր»,* cervus *«եղջերու», կիմր.* carw, *կորն.* carow, *բրետ.* karô, *հբգ.* hiruz, *անգսք.* heorot *«եղջերու». գոթ.* haúrn, *հբգ. հհիւս. գերմ. անգլ.* horn, *հոլլ.* horen *«եղջիւր», գերմ.* Hirsch *«եղջերու», լիթ.* kár-vė *«կով», հպրուս.* kurwis *«եզ», հսլ.* krava, *ռուս.* корова *«կով» (այն է «եղջիւրաւոր»), ալբան.* kā *«եզ» են են, տե՛ս և սար բառի տակ (*Pokorny 1, 403—8, Walde 156, 193, Trautmann 119, Berneker 577, Boisacq 437, Kluge 224*):*

Սոյն գեղեցիկ մեկնութիւնը տուաւ Ա. Խաչատրեան, 1898 Թ. Հիւրշմանին գրուած մի նամակի մէջ (անձնական): Հիմնք. հանում է սուր *բառից:*

+ՍՐՈՒՆ, ի *հլ. «ուռք, ճիւ» ՍԳր. Ոսկ. յՀ. ա. 29. Խոր. գործածւում է անեզաբար* սրուն *ձևով. եզակի* սուն *ձևը նշանակում է ԱԲ. յետնաբար գրւում է նաև* սուննգն *կամ* սուննկն, *և հոլովւում է* սրնց, սրանց *Շիր. 71, Վրդն. դան. և, էջ 261.* սրուանց *Նոնն. 31.* սրնկունք, սրնկանց, *նաև* սրօնք *Վրդն. առ. 79,* սրօնից *Վրք. Հց. ա. 217.— որից* սռնապան *(փխ. *սրնապան, ուր* ր *դարձած է* ռ *յաջորդ* ն*–ի պատճառաւ) «սրունքի պահպանակ» Ա. Թագ. ժէ. 5. Մծբ.* ճաւասարասրուն *Պզատ. օրին. Եւկղիդ.* բարձրասրուն *Պզատ. տիմ.* սրնգել *«չորս վազելը» Ոսկ. կողոս. 664, որ և* սրնկել *«նոյն նշ.» Բրս. մրկ. 65,* սրնգել *«կիպ արձակել, քացի տալ» Ոսկ. մ. գ. 6, էջ 25,* սրնգել *«պարի մէջ սրունքներով ցատկել» ԱԲ (վերջիններիս վրայ տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 263):*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'rūsnī- *և* k'rūsn- *ձևերից. առաջինը տալիս է հյ.* սուն, *սեռ.* *սրնից, յետոյ սրունից, երկրորդը՝* սրուն, *սեռ.* սրուան, *յգ.* սրուանց *(Համմտ. ձեղուն, ձեղուան կամ աճուն, աճուան). որից* –կն *մասնիկով կազմուած է* սրուն–կն *(Համմտ. մուկն, արմուկն): Ձեղակիցներից այս արմատը՝ պահում է միայն լտ.* crūs *(<հնխ.* k'rūs-*) «սրունք», սեռ.* crūris, *յգ. ուղ.* crūra*: Տարբեր ընտանիք են կազմում սանս.* çrōṇi-, *զնդ.* sraoni-, *պրս.* سرون surūn, *պՀլ.* sarīn, sarīnak, *բելուճ.* sarēn, *յն.* κλόνις, κλόνιον, *լտ.* clūnis, *լիթ.* šlaunis, *լեթթ.* slauna, *հպրուս.* slaunis, *կիմր.* clūn, *հիսլ.* hlaun, *որոնք ընդհանրապէս նշանակում են «յետոյք, զիստ, զատոկր են» և յառաջանում են հնխ.* k'lou-ni- *ձևից, որ պիտի տար հյ.* *սլուն *կամ* *սղուն: *Այս ձևը կորած է մեր մէջ, բայց նրա նախաւոր գոյութեան ժամանակ՝ թերևս ազդուել է նրանից հյ.* սրուն *(*Pokorny 1, 489, 499, Walde 204, Traut-

mann 306, Boisacq 472, 476, Horn § 737): —*Հիւբշ. 493։*

ՆՀԲ լծ. հյ. **կրուկ, կրունկն,** *լտ.* sura. crus, *որպէս թէ* **սրինգ,** *սրնգաձև ոսկր ոտքաց։* Böttich. ZDMG 1850, 362, Arica 72, 177, Lag. Urgesch. 709 *կցում են սանս.* çrôni- *ընտանիքին, որին հետևում են նաև* Müller SWAW 38, *576,* Justi, Zendsp. 306, *Հիւբշ.* KZ 23, *35 և 38, Տէրվ.* Altarm. 68, *Նախալ. 74, 144։ Այս ձևերը մերժելով ուղիղ համեմատութիւնը տալիս է Հիւբշ.* ZDMG 35 (1881), 176 *և* Arm. Stud. § *260։—***Սրունք** = *լտ.* crus *կապակցութիւնը ձայնապես անհնարին է համարում* Meillet, Dict. étym. Lt. 226: *Հիւնք.* **սրինգ** *բառից։ Համմ. նաև* Pedersen KZ 39, 343:

Գիհ.—Մկ. **սրունգ**[1] *«ցորենի խոզան, հընձելուց յետոյ հողից դուրս մնացած ծղոտը».— այստե՞ղ է պատկանում նաև Ախց. Կր.* **սրճխիլ** *«ոտքը սահելով ցած ընկնիլ»։*

*[***ՍՐՈՒՆ.** *ըստ Գաղիանոսի մեկնուած է «անտիկիմոն է», որ ՀՌուս. § 2841 անծանօթ մի բոյս է կարծում։— Կեղծ բառ, որ ըստ Նորայր ՀԱ 1921, 342 լաւագոյն ընթերցուածով է. «Անդիկնիմ. սրունկ», այն է յն.* ἀντικνήμιον *«սրունք»։]*

***ՍՐՍԿԱԳԱՆ** (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.-ի*) *«վարագոյրով բաժանուած ներքին սենեակ, հարսի սենեակ, անկողնի վրանաձև կազմած, վարագոյր» ՍԳր. Նիւշ. ը. 156. Խոր.։*

=Իրան. *srisk-pān *բառից, որ թէև աւանդուած չէ, բայց նոյնն է հաստատում պրս.* سرشکوان sirišḳvān, *որ և* سرشکان sirišḳān, سرشکون sirišḳūn. *այս բառը կազմուած է* srisk *«արցունք» (սրա ծագումն էլ տե՛ս տակը՝* **սրսկել**) +pān *«պահող» բառերից և բուն նշանակում է «արցունքը պահող՝ ծածկող»։ Այս բանաստեղծական բացատրութեամբ հասկացւում է «քօղ հարսին զոր արկանեն վերեսօք հարսին յայնմ դիշերի, յորում դնելոց իցեն զնա յառագաստ»։ Արդարև հարսը իր հօր տնից բաժանուած ժամանակ լաց է լինում և նրա երեսը ծածկող քօղը իբր նրա արցունքն է ծածկում։ Այս մասնաւոր նշանակութիւնը պարսկերէնի կամ հայերէնի մէջ յետոյ աւելի լայնաբար առնուելով՝ դարձել է «առագաստի վարագոյր». այսինքն այն մեծ քօղը՝ որ հարսի անկողինը միւսներից բաժանում է, և աւելի լայնաբար՝ «հարսի սենեակ, առագաստ», ճիշտ ինչպէս* **առագաստ** *«փռելու շոր, նաև առագաստ» նշանակում է նաև «հարսի սենեակ». —Աճ.*

ՆՀԲ «թերևս որպէս վրան պահօղ ի սրսկմանէ անձրևաց»։ Հինք. պրս. **սիրիշվան** *«քօղ հարսին արկեալ վերեսօքն. ի մտանելն յառագաստ», որ ձևաւորում եմ վերի ձևով։*

***ՍՐՍԿԵԼ** *«ցրցնքել, ասդին անդին ցանել, ցօղել (ջուր կամ արիւն, նոր գրականով՝ նաև փոշի ևն)» ՍԳր. որից* **սրսկումն** *Թուց ժթ. 9, 13, 20, 21. Ջրբ. ժգ. 1.* **սրսկարան** *«ղոհի արիւնը սրսկելու տաշտ» Ճառընտ.* **սրսկողազոյն** *Ածաբ. մկրտ.։*

=Իրան. *srisk- *ձևից փոխառեալ. համմտ. դնդ.* srask- *«կաթկթիլ, ցօղել, ցրցնքել, կաթիլ-կաթիլ սրսկել» (*Bartholomae, Altir. Wört. 1845—6), sraska- *«լաց, արտասուք», պհլ.* srixt *«կաթկթիլ», պրս.* سرشک sirišk *«կաթիլ, արտասուք», պազ.* srišk *«կաթիլ»։ —Հիւբշ. 241, 494?*

Lag. Urgesch. 383 sṛj *արմատից իբր դնդ.* *useharska—: Müller SWAW 38, 576 *և* 43, 300 *դնդ.* sraska *պրս.* sirišk, *փարս.* srisk *բառերի հետ։* Justi, Zendsp. 307 *դնդ.* srasč *արմատի տակ։ Հինք. 217* **սարսել** *բառի հետ՝ =Բրբ.* sars-əl-mag *«ցնցուիլ»։ Հիւբշ. 241 և 494 վարանում է փոխառեա՞լ թէ բնիկ հայ ընդունելու մէջ. եթէ հնխ.* sk *տալիս է հյ.* սկ, *ուրեմն* **սրսկել** *բնիկ է և դալիս է հնխ.* k'rēsk *կամ* k'rōsk *ձևից. իսկ եթէ* sk>հյ. կ, *ուրեմն փոխառեալ է իրանեանից։ Աւելի յետոյ Հիւբշ.* IF Anz. 10, 28 *տեսնելով որ ըստ* Horn *հպրս.* sk *արդէն պհլ. դարձած էր* šk, *այլ ևս չի կարողանում հայ բառը փոխառեալ համարել։ Ըստ մեզ բառը փոխառեալ է հետևեալ պատճառներով.*

[1]) *Այս արմատը գոյութիւն ունի միայն իրանեանների մէջ և ուրիշ տեղ չկայ։* [2]) Pokorny 2, 705 *նախաձևը դնում է հնխ.* sresq- *(իմա՛* sresk-*), որի նախաձայն* sr *խումբը պիտի տար հայերէնի մէջ* ար- *և ոչ* ուր-, *(հմմտ. հնխ.* sru>*հյ.* առու*) և կամ* ար- *(հմմտ. հնխ.* sṛbh->*հյ.* արբ*)։* [3]) *Նոյն հանգամանքների մէջ գտնուող սրսկապան բառը անշուշտ փոխառութիւն է և ո՛չ բնիկ հայ։ Այս պատճառներով պէտք է ենթադրել հայը գուռ.* *srisk- *ձևից, որով պհլ.* šk *այլ ևս չի կարող արգելիչ հանգամանք դառնալ։ Փոխառութիւն է համարում նաև* Meillet *(նամակ 18 դեկտ. 1931)։*

Գիմ.—Ննխ. սրբսկել, *Տփ.* սրբսկիլ, *վն.* սրսրկել, սրսնփել, *Մրղ.* սբսբկել, *Մշ.* սրսրգել, *խրբ.* սբսբփիլ, *Բն.* ցրբսկել, *Քրքքախօս հայերից՝ Ասն.* սրբսգել-լէմէք *(Քրքքական բայական վերջաւորութեամբ)։*

ՍՐՏԻԼ *«շտապել, աճապարել». անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վեցօր. 71. Արդ քանզի եղև ի վերայ նոցա (ջուրց) մեծաստաստ հրամանի ժողովոյն՝ ամփոփել ի մի վայր հաստանել, սրտին գրնացս և ընթացս ճեպել տրիպել հաստանել արգելուլ. զիւրաքանչիւր տեղիսն հաստակալըս։ (Տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Ա. 162)։*

ՍՐՓԱՆ *«մի տեսակ արմատ» Հին բռ. ունի միայն ՀԲուս. § 2844 (տե՛ս և ՆՀԲ* արմատ *բառի տակ)։*

***ՍՐՕՍ** *«ձիու սրունքի վրայ կարծր այտուցք» Բժշ. գրաստու (Հրտր. Բազմ. 1867, էջ 357, որից և Նորայր, Բառ. ֆր. 1184ա)։*

=Ֆրանս. suros *նոյն նշ. (կազմուած է* sur *«վրայ» և* os *«ոսկոր» բառերից և նշանակում է բուն «ոսկորի վրայ»)։*

Ուղիղ մեկնեց Նորայր, անդ։

Սփածանել *տե՛ս Փած-անել։*

***ՍՓԵՆԴՆՈՆ** *«մատանու գլուխը». նորագիւտ բառ, որ 4 անգամ գտնում եմ գործածուած Նոնն. 18. «Յաղագս բստշրջմանն սրփենդնոնին Գիւգէսի... յորժամ շրջէր զսփենդրնոնն մատանոյն ...և շրջեալ զսփենդնոնն (այլ ձեռ. զսփենդոնն)»։*

=Յն. σφενδόνη *«մատանու ակնակապիճ կամ ակ»։—Ա՛ճ.*

***ՍՓԵՈՒ** *«գունդ» Դամասկ. որից* սփեռաձևութիւն *«գնդաձևութիւն» Դամասկ.։*

=Յն. σφαῖρα *«գունդ», որից և լտ.* sphaera, *ֆրանս.* sphère *ևն, նոյն նշ.—Հիւբշ. 382։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

+ՍՓԻՒ *«ցրուած, տարածուած, ցիրուցան» Վեցօր. 68, 74, Սիր. ծն. 5, որ և* սփիւս *Վեցօր. Սեբեր. որից ի սփիւսս կամ ի սփիրս «ամբողջ տարածութեան մէջ» ՍԳր. Ելագր.* սփռել *«տարածել, ցրուել» ՍԳր.* սփռիչ *«ճարմանդ» Ել. իզ. 17, լզ. 22.* լուսասփիւռ *ՅՀ. կթ.* համասփիւռ *կամ* համասփիւս. *Ջքր. կթ.* ընդհանրասփիւռ *Անան. ևկեղ.* լայնասփիւռ *Վեցօր.* խաչասփռել *Կլիմաք.* հագագասփիւռ *Կոչ. 187.* հագագսփռուրիւն *Կոչ. 187։*

=Կազմուած է ս *սաստկականով* փռել *(արմատը* *փիւ*) ձևից, որ տե՛ս։*

ՆՀԲ սփիւռ*=լծ. յն.* սփի՛ռա, սփո՛ռա *և Քրք.* սէռիմէք, *իսկ* սփռել՝ *«սրսփռել, մանաւանդ* բսփռել, *ի ձայնէս* սփիռ, սփիւռ, *որպէս և ոմկ.* փռել, *յն.* σπείρω, *լտ.* spargo», Pictet *2, 99 «արդեօք յոյնից փոխառեա՞լ է. հմմտ. նաև հիւլ.* pór *«հատիկ» <*spór*»։ Տէրվ. Նախալ. 114 հնխ.* spar *«ցրուել, ցանել» արմատից է դնում սանս.* sphur, *յն.* σπαίρω, σπείρω, *հյ.* սրսփռել, փռել, *թևրևս նաև* սպառել։ Meillet MSL 8, 294 *հյ. փաստաւ ձևին իբր կրկնակ՝ դնում է սանս.* sphuráti *«արձակել, թօթափել, փայլիլ ևն»։ Հիւնք. յն.* σπείρω*-ից։ Հիւբշ. 494 կասկածով կցելով յն.* σπεῖρα *բառին՝ արմատը դնում է հնխ.* spēr-*։ Ադամեան, Բիւզանդիոն 1898, թ. 431 մի երկար յօդուածով ուզում է ապացուցանել թէ պէտք է կարդալ* բսփռել *և ոչ* սրսփռել։ *Այս առթիւ Մէնէվիշեան ՀԱ 1898, 156 ստուգաբանում է բառս վերի ձևով, բայց* փռել *միացնում է յն.* φῦρω, φύρσω *«ցրուել, մի բանի մէջ խառ-*

նել, տարածել» բառին՝ Scheftelowitz BB 29, 37 սանս. çipha «մազմզոտ արմատ», Meillet, Dial. indo-eur. 82 յն. σφυρόν, σφῦρα, սանս. sphurati: Թիրեաքեան, Արիահայ բռ. 341 պրս. سپهر sipihr «տիեզերք» բառից՝ պատահական նմանութիւն ունի արաբ. سفر sufra «սփռոց»:

*ՍՓԻՐԻԴ (յետնաբար ի հլ.) «զամբիւղ, կողով» Ոսկ. մ. ք. 24. 28. Վրք. հց. գրուած է նաև սփրիդ, ըսփրիդ, սփիրիդ, սպրիդ, սփրիբ, և նախաձայնի անկումով՝ փիւրիդ կամ փիւրիա, սեռ. փիւրտան, բց. ի փիւրտանէ, յգ. փիւրտունք, Վրք. հց. ա. 54, 572, բ. 478, Աթան. էջ 580. Եղիշ. այլակ. 238, փիւրիդայ Երզն. մաթ. էջ 342:

=Յն. σπυρίς, սեռ. σπυρίδος «կողով», նուազական՝ σπυρίδιον «կողովիկ», որից փոխառեալ են նաև վրաց. սփիրիդի, լազ. սպիրիդի, ասոր. ܐܣܦܪܝܕܐ asprīdā համանիշներ—Հիւրշ. 382:

ՀՀԲ դրաւ յունարէնից՝ Հ. Գ. Աւետիքեան, Մեկն. Թղ. պօղ. Բ. էջ 248 յն. սփիւռ՛բի: Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. 169 յն. σπυρίς: ՆՀԲ վերի յն. բառերի հետ նաև լա. sporta, sportula: Lag. Ges. Abhd. 297 փիւրիդ կցում է յն. σπυρίδ-ձևին:

Սփռել տե՛ս Փռ-ել:

*ՍՓՈՒՓ «դեղագործական փոշի, դեղափոշի» Մխ. բժշ. 150, որ և սփուֆ՝ էջ 127 (նորագիւտ բառ. Seidel, Մխ. հնր. § 356):

=Արաբ. سفوف sufūf նոյն նշ.—Ա՛ճ.

ՍՓՈՓ «մխիթարանք» Վանակ. յոր. որից սփոփել «խմխիթարել» Ծն. ծ, 21, Սիր. լ. 24, Ա. Թես. բ. 11. սփոփութիւն Ա. կոր. ժդ. 3. Փիլիպ. բ. 1. սփոփումն Շնորհ. վիպ. սփոփանիմ Պիտ. փիլ. սփոփիչ (նոր բառ):

=Կազմուած է *փոփ արմատից՝ զ սաստկականով, որ յետոյ դարձել է ս, յաջորդ փ ձայնի պատճառաւ. արմատը առանձին չէ պահուած, բայց նոյնը գտնում ենք (ն)ամ մասնիկով՝ ամ-փոփ բառի մէջ. Համմտ. նաև փոփոգել:

Տէրվ. Altarm. 6. Մասիս 1882 մայիս 24 և Նախալ. 38, 46, 50, 93 Համարում է պարզական pu «փչել, հոտիլ, փտիլ» արմատի spa, spu ձևից, որից նաև կրկնութեամբ և զ յաւելուածով՝ փոփոգել «շունչ տալ, ոգևորել». պարզ փոգ ձևից է *փոգի, որից ճոգի և ոգի. Համմտ. սանս. pū, որից pāvana «քամի», pavana- «կրակ», յն. πνέω, πνεῦμα «շունչ», πῦρ «հուր», πύω «հոտիլ», լա. putere «հոտիլ, փտիլ» են: Հիմնք. ամփոփել բառի հակառակից: Ուղիղ մեկնեց Meillet MSL 16, 124:

ՍՓԱՆՉ (յետնաբար ի հլ.) «հրաշք, հրաշալի բան» Ոսկ. եփես. 714, նխ. եւ. Նահայ. 19, 51. Ոսկ. դծ. 172. Տիմոթ. կուզ, էջ 95, 96, 119, որից սմանչանալ «հիացած զարմացած մնալ» ՍԳր. սմանչանք Ոսկ. եփես. սմանչացուցիչ Վեցօր. նորասմանչ Իմ. ժթ. 5. Ա. եղր. զ. 9. Ոսկ. մ. ա. 2. մեծասմանչ Ոսկ. Վեցօր. նաճնարասմանչ Գնձ. սմանչելի ՍԳր. Ոսկ. մ. ք. 11. սմանչելաբար Ոսկ. ես. սմանչելագոյն Ագաթ. Կոչ. սմանչելաշուք Բուզ. են:

Տէրվ. Altarm. 20 նաւ-եայ ձևի հետ՝ հնխ. skudh արմատից. Համմտ. հսլ. čudo «հրաշք», սանս. khav, գոթ. skavas «գէտ, դիտող», յն. θυό- σκοπ-ος «դիտադէտ» են: Հիմնք. յն. σκάνδαλον «որոգայթ ատից, գայթակղութիւն» բառից՝ Meillet MSL 16, 124 u<զ սաստկականով *ֆանչ արմատից՝ Scheftelowitz BB 28, 313 յն. φθονέω «նախանձիլ»:

*ՍՓԱՍՏՐԻԿ «ճախարակի չուան» Արիստ. աշխ. էջ 621:

=Յն. σχαστυρία «նոյն նշ.»—Հիւրշ. էջ 518:

*ՍՓԵՄ «կրոնաւորական տարազ կամ հագուստ» Վրք. հց. Արծր. Մաշտ. որից սփեմաւոր Ոսկիփ. սփեմաւորիլ Վրք. հց. սփեմաւորութիւն Կանոն. սփեմարկէք Ոսկիփ. սփեմանալ Արծր.:

=Յն. σχῆμα «ձև, կերպիք, տարազ», որից փոխառեալ են նաև վրաց. ხქემაսփեմա, ხქიმა սփիմա «ձև, պատկեր, նկար, քահանայական զգեստ», ռուս. схима, ֆրանս. schéma, schème են: Յոյն բառը ծագում է ἔχω

«ունենալ, մի վիճակ ունենալ, լինել» բայից (Bosiacq 303):—*Հիւբշ. 518։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՍՔԵՓՈՆ *«հղչիւրաւոր իժ, céraste». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. 225 բ։*

***ՍՔԹԱՅ** «կաթուած կամ նուաղում». միջին հյ. բժշկական բառ, ինչպէս ունի Մխ. բժշ. 142. Ջղերոյն յիրար գալն և թաշանիշն և սքթայն։*

=Արաբ. سكتة sakta, sikta «դադար, ընդմիջում, խափանում. 2. ուշագնացութիւն, կաթուած»։—Աճ.

Նոյն մեկնութիւնն ունի նաև Seidel, *թրգմ. Մխ. հեր. § 45։*

ՍՔԻ *«սիրամարգ». գիտէ միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 225։*

***ՍՔԻՆՈՍ** «պրտու, սէզ և պրտուեղէն չուան» Նիւս. կազմ. լբ։*

=Յն. σχοῖνος նոյն նշ.—Հիւբշ. 518։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՍՔԻՆՈՍ** «մի տեսակ խիժաբեր ծառ, հերձի,* lentisque» *Վեցօր. էջ 101. «Այլազգի կերպարանս ունի հոյզն ծառոյն՝ որ անուանեալ կոչի սքինոս». ունին միայն ՀՀԲ, Նորայր, Բառ. ֆր. 740 բ, ՀԲուս. § 2845, Քաջունի, Հտ. Գ. 225։*

=Յն. σχίνος «հերձի»։

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։ Ջունի ՆՀԲ. իսկ ՀԲուս. նոյն է դնում նախորդի հետ՝ նկատելով հանդերձ թէ խիժաբեր ծառն ու կնիւնը տարբեր բաներ են։ Վերջին անգամ ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1924, 73։

Սքող *տե՛ս Քող։*

***ՍՔՈՂԱՍՏԻԿՈՍ, ի–ա** հլ. (սեռ.–ացւ Վրք. և վկ. Բ. 493) «դպրոց անցած մարդ, ուսումնական, իմաստասէր» Վրք. հց. ա. 224, 226. Ճառընտ. Սոկր. Կանոն. որից* **սֆողաստիկոս–եան** *«գիտնական» Մագ. գամագր. ժա (ՀԱ 1911, 544). գրուած է նաև* **սֆողոստիկոս, ֆողոստիկոս** *Վրք. և վկ. Բ. 493,* **ֆողաստիկոս** *Վրք. հց. ա. 224, նոր յունարէնի հրնչումով՝* **սխոլաստիկոս** *Աստր. դատ. 53։*

=Յն. σχολαστικός «ուսումնական, գիտուն». ծագում է σχολάζω «պարապիլ, ուսմամբ պարապիլ» բայից. յոյնից են նաև լտ. scholasticus, *ֆրանս.* scolastique *«միջնադարեան վարդապետութեանց հետեւող»։—Հիւբշ. 518։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

***ՍՔՈՂԱՐ** «պալատական նիզակաւոր ու վահանաւոր պահապանների մի կարգ». մէկ անգամ ունի Մխ. դտ. 266, նոյն բառը գրուած է* **սֆաւղար** *Սմբ. դատ. 88 և սխալմամբ* **ճոֆողար** *Մխ. այրիվ. 4։*

=Յն. σχολάριοι «արքունի պալատի պահապանների մի բաժանմունք», որ յոգնականն է σχολάριος բառի և այս էլ փոխառեալ ու մտած է նաև լատիներէնի մէջ scholares *ձեւով (*Sophocles *1064 ա)։*

Ուղիղ մեկնեց Karst, *Դատան. I. 88 և II. 78, որից անտեղեակ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 70 միացնում է լտ.* scutarius *«վահանակիր» բառին և սրա համեմատ էլ ուղղում է *սֆողար։*

***ՍՔՐԹԹ** «պատարագիչ քահանայի ծածուկ կարդալու աղօթքները». նորագիւտ բառ. ունի միայն լատիներէնից թարգմանուած Պորգ. 459. «Եւ ապա ասէ ըզսքրեթն»։*

=Լտ. secretus, secretum *«գաղտնի, գաղտնիք»։*

Ուղիղ մեկնեց Տաշեան, անդ։

***ՍՕԴ** «մի տեսակ բոյս. մշկի ծաղիկ, Բրբ. Թօփալաք, Ֆր.* souschet» *Բառ. երեմ. յաւել. 572 մեկնում է «զրմբաւս», որ է* curcuma zerumbat *(ՀԲուս. § 727). իսկ Նորայր, Բառ. ֆր. 1156 բ և ՀԲուս. §§ 602, 2129 և 2847 ըստ Բժշ. և Ամիրտ. դնում են* cyperus rotundus, *ֆրանս.* souchet odorant, *որ է «կոնձեղ, ապտիլլէդիդ» (Քաջունի, Հտ. Գ. 225 գրում է սօդ)։*

=Արաբ. سعد su'd, *որ Կամուս, Բրբ. Թրգմ. Ա. 629 մեկնում է «Բրբ. Թօփալաք».*

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆր. և ՀԱ 1923, 61։

ՍՕՓ *«տունկի միջուկը» Վստկ.։*

ՆՀԲ մեկնում է «հոծեալ կամ ձիւթային միջուկ», որով ուզում է հանել **սոփ** *«հոծ» կամ ձիւթ բառից։*

***ՍՕԼ** կամ **ՍՈԼ** «կօշիկ, տրեխ» Մարթին. Ոսկիփ. Վստկ. 23 (բց. ի սօլեացն), Սմբ. դատ. 60. Վրդ. առ. 233* (սօլեաց, սօլերով).

գործածուած է միայն ոմկ. յգ. սօլեր ձևով, որի եզ. սօլ ձևը գտնում ենք գաւառականներում։

=լա. solea «սանդալ, փայտէ կօշիկ» բառն է, որ Ռուբինեանց ժամանակ փոխառեալ է եւրոպական մի լեզուի միջոցով. համմտ. ֆրանս. soulier «կօշիկ», sole «սրմբակի տակը», իտալ. soletta «կօշիկի կրունկ», soleretta «կօշիկի պայտ»։

ՆՀԲ սօլեր ձևը համարելով եզակի, դնում է հֆրանս. souler «կօշիկ» բառից։ Justi, Dict. Kurde 248 լա. solea ձևից է դնում։ Հիւնք. լա. solea, solearis «կօշիկ, մուճակ»։ Հիւբշ. 518 ըստ ՆՀԲ եզակի համարելով սօլեր՝ դնում է ֆրանս. soulier «կօշիկ» բառից։

Գիւր.—Ալշ. Ախց. Արբ. Բդ. Դվ. Խ. Խլ. Հշ. Մկ. Մշ. Մրղ. Նբ. Ոզմ. Սլմ. Սս. Վն. ունին բառս սօլ ձևով, որից կազմուած են սօլիկ «կօշիկ», սօլկար «կօշկակար», սօլկրնց «կօշկակարների շուկայ»։

Փիւս.—Քրդ. sol «կօշիկ. 2. ձիու պայտ», sôle, զազա. saul «կանացի կօշիկ», soldur «կօշկակար», solker «կօշկակար, պայտար», solbend «պայտար», solǰi «կօշկակար», նոր ասոր. sōiltā, յգ. solē (ըստ Калашевъ soli), քաղդ. סוליא sōliā «կօշիկ». (այս բոլորը Justi, Dict. Kurde 248 և Kurd. Gram. 30 դնում է լա. solea բառից)։

*ՍՕԼ «միջին դարուն գործածական եւրոպական մի դրամ» Անսիզք 29, 57, 61, 71։

=լա. solidus>իտալ. soldo բառն է, որ հֆրանս. sol (ֆրանս. sou) ձևի միջոցով անցել է հայերէնի. բոլորն էլ դրամի անուն։

ՍՕՍ, ի հլ. «անտառային բարձր ծառ է. չինար. platanus orientalis L» (ըստ Արքինեան, Ածաշնչի տունկերը 51 և Տիրացուեան, Contributo § 80) Սիր. իգ. 19. Ես. խա. 19. խդ. 14. կ. 13. Ագաթ. վկայօր. 93. որից սօսի «նոյն նշ.» (տես. սօսոյ, սօսեաց) Մն. լ. 37. Նէեմ. ը. 15. վկայօր. 92 (գրուած սուսոյ Եփր. երաշտ. էջ 209 կամ սաւսոյ Կալիսթ. 169, որի յոգնակին է սօսոյք Եզեկ. լա. 8, Կալիսթ. 156), սօսաճուէր «Հին Հայոց Սօսեաց արքային անտառին ձօնուած» ՅՀ. կթ. սօսաստարաս Նար. խշ. 373. Օրբել. Հրտր. էմ. էջ 34. սօսինաթագ? (տե՛ս ՀԱ 1928, 228)։ Փոխաբերական իմաստով է սօս «պերճ, հպարտ, սէգ» Խոր. ա. 11, ՅՀ. կթ. 172, 249, Անկ. գիրք հին կտ. 378.—սխալ ձև է սաւոտ վկայօր. որ ՆՀԲ ուղղում է իրաւամբ սաւսոյ։

Նախ ՆՀԲ և յետոյ Lag. Urgesch. 817 և ՀԲուս. § 2848 համեմատում են հսլ. լեհ. sosna «եղևին» բառի հետ, որի ծագումը անյայտ է. ԵՔէ ըստ Walde 677 ծագում է *sap-snā ձևից, ուրեմն կապ չունի հայերէնի հետ, որովհետև այս պարագային սպասելի էր *օն, *հօն կամ *ասն, *հասն։ Հիւնք. ոսկր բառից։

Գիւր.—Սվեդ. սուսա «սօսի ծառ»։

ՍՕՍ «պայծառ գոյնով». անստոյգ բառ, որի համար ՆՀԲ տալիս է հետևեալ վկայութիւնները. «Եւ այս ինչ է նշան հողոյն. կանաչ և կապոյտ, սև և դեղին, սօս և սպիտակ» Ճառընտ. «Անտառից սաղարթ սօս երփնից (կամ սօսերփնից), բարձր ի ծագ ծառոց զարդարին» Շնորհ. տաղ։ ՋԲ մեկնում է «է անուն անծանօթ գունոյ կամ պայծառ». չունի ԱԲ։

ՆՀԲ ուղում է հանել սօսի բառից, երբ գրում է. «Թերևս ի գոյն սպիտակ կաղամախի»։

Սօսամբ տե՛ս Սիսամբար։

*ՍՕՍԱՄՆ «կնճիթ, շուշմայ». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. sésame, որից սօսամենայ ճաց «կնճիթէ հաց» վնկն. մեկն. (տե՛ս ՀԲուս. § 2794)։

=Յն. σησάμη «կնճիթ, սուսամ» (ընդարձակ տե՛ս շուշմայ)։

Ուղիղ մեկնից Նորայր, ՀԱ 1925, էջ 306։

ՍՕՍԱՒԻԻՆ «թևերի շարժումից դուրս եկած ձայնը» եզն. «ծառերի տերևների խշրտոցը» Խոր. ա. 19, որ և սօսափիւն «օդի մէջ շշընկոց» Ցոր. դ. 16, «սոսկում, սարսափ» Ես. բր. բ. որից սոսոփիլ «զարհուրիլ, վախենալ, սոսկալ» ՅՀ. կթ. 409 (որ Հրտր. էմինի, էջ 177 ունի սոսափեալ ձևով) փխ. սօսափիլ, ինչպէս գրում է ԱԲ. համաձօսեալ ձևով է սօսիւն Հին բռ.։

=Պարզական *սափ արմատից, որից կըր-

կընութեամբ սափսափիւն և փ-ը ձայնաւորից յետոյ ւ-ի վերածուելով՝ սաւսափիւն, սաւսաւիւն (իմա՛ սօսափիւն, սօսաւիւն). Հմմտ. թօթափել, շօշափել՝ կազմուած թափ, շափ արմատներից։ Սօսափիւն բառի երկրորդ նշանակութիւնը «վախ, երկիւղ, սարսափ» և միանգամայն խարխափ, թարթափ, կարկափ, գարգափ, շարշափ բառերի համեմատութիւնը (կազմուած խափ, թափ, կափ, գափ, շափ արմատներից)՝ ցոյց են տալիս, որ այստեղ է պատկանում նաև սարսափ «երկիւղ», որ կազմուած է սափ արմատից՝ սար յաւելականով։ Ըստ այսմ սափ արմատի բուն նշանակութիւնը լինում է «շարժիլ, երերալ», որից «դողալ, վախենալ»։

ՆՀԲ «սիւն. կամ աղդումն ի սօսեաց»։ Գարագաշեան, Քնն. պատմ. Ա 271 և Ալիշան, Հին հաւ. էջ 71 սօսի բառից։—Հիմնք. յն. φόφος «աղմուկ» բառից։

ՍՕՐՂՈՒՃ «աւազուտ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 225։

*ՍՖԻՏԱՄՈՆ «մի տեսակ խոտ». Վստկ. 218 (նե թէ զխոտն որ ասեն սֆիտամօն՝ նման զտակն)։

=Յն. σφένδαμνος «թղթի, լտ. acer, ֆր. érable, ռուս. кленъ»։

Այսպէս է մեկնում Ալիշան, Վստկ. 260, բայց թղթին բարձրահասակ մի ծառ է և ո՛չ խոտ, ինչպէս ասում է Վստկ.։

ՍՓՈՓ տե՛ս Սփոփ։

Վ

Վագել տե՛ս Վարգիլ։

***ՎԱԳՐ**, ր հլ. «ինձի նման վայրի գիշատիչ մի գազան» Վեցօր. Նիւս. կազմ. Խոր. աշխ. Մխ. առակ. որից վագեռաձի «zèbre» Խոր. աշխ. վագրակերպեան Կղնկտ. Օրբել.։ =Պհլ. *vagr (vaγr) հոմանիշ ձևից, որ նոյնպէս փոխառեալ է սանս. 𑀯𑁆𑀬𑀸𑀖 vyāghrá «վագր» բառից։ (Այս բառը ըստ Boisacq 1085 կազմուած է vi և ā մասնիկներով ghrá «դեղին»=յն. ὠχρός «դեղնաշորթ» բառից)։ Պհլ. *vaγr, որի մէջ միջաձայն γ նմանուելով նախաձայնին՝ ձևացել է պրս. بَبر babr «վագր»։ (Horn § 180 պրս. babr ձևի դէմ դնում է պհլ. bapr, papr և սանս. vyāghrá- ձևի հետ համեմատութիւնը անորոշ է գտնում)։ Վագրը գոյութիւն չունի Հայաստանում. ուստի բառն էլ օտար պէտք է լինի։ Հնդեւրոպացիք էլ չէին ճանաչում այն. ո՛չ Ձենդ-Աւեստայի և ո՛չ էլ Ռիգ-Վեդայի մէջ է յիշւում (Böhtlingk, Sans. Wört. 6, 1465). առաջին անգամ հարաւային Ասիայից յառաջացել է Հնդկաստան, այստեղից անցել է Պարսկաստան (հրևում է Մազանդարանի շրջանում), մինչև Սիբերիա և ամբողջ արևելեան Ասիա։ Տարբեր բառ է յն. τίγρις, որից լտ. tigris, ֆր. tigre, գերմ. Tiger, ռուս. тигръ «վագր», որ փոխառեալ է նոյնպէս իրանեանից. համմտ. զնդ. tigri «նետ» (Walde 779, Boisacq 969):—Հիւբշ. 242։

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ա բնաձայնից։ Lag. Urgesch. 740 սանս. vyāghra-, միայն հայը ava- մասնիկով՝ փխ. vi-: Նոյնը նաև Müller SWAW 38, էջ 576, Pictet 1, 426, Հիւբշ. KZ 23, 20: Հիւնք. յն. ἄγριος «վայրենի» բառից։ Thomaschek, Deutsche Litteraturz. 1883, էջ 1254 վրաց. ვარხვი վարխվի (որ է ըստ Ջուբինով[2] 503 «հաւալուսն թռչունը»!)

ՓՈԽ.—Վրաց. ვოგრი վիգրի կամ ვოგრი իգրի «վագր»։ Լտ. tigris «վագր» բառը Varron համարում է հայերէնից փոխառեալ. tigris qui est ut leo varius, qui vivus capi adhuc non potuit. Vocabulum e lingua armenia: nam ibi et sagitta et quod vehementissimum flumen dicitur Tigris. Լտ. tigris փոխառեալ է յն. τίγρις ձևից և այս էլ իրանեանից։ Վարրոնի ժամանակ Հայաստանը Պարթևների ձեռքին լինելով, հայերին շփոթել է նրանց հետ. իսկ գետի անուան հետ համեմատութիւնը ժողովրդական ստուգաբանութեան արդիւնք է (Meillet, Dict. étym. Lt. էջ 997—8)։

ՎԱԶ (ի հլ. յետնաբար) «ցատկելը, ոստիւն, արշաւ, արագ հոսիլը» Երգ. բ. 8. Յոբ. լթ. 25. Եւս. քր. Վեցօր. Սերեր. «սրտի թըրթըռում» Նիւս. բն. Ոսկիփ. որից վազել «ցատկել, արշաւել, վրան վազել» ՍԳր. Ագաթ. Սերեր. «ապստամբիլ» Ովս. է. 13. «սիրտը տրոփել» Փիլ. նխ. բ. «վերանալ երիվարի ի զամբիկն» մհյ. բառ (Նորայր, Բառ. ֆր. 826 ա), վազվազել Գծ. գ. 8. ժդ 9. վազեցուցանել Յայտմ. վազումն Բրս. բարկ. անվազ կոչ. ֆաջավազիկ Մագ. վազք «զուգաւորութիւն ձիոց» մհյ. բառ (ըստ Նորայր, Բառ. ֆրանս. 825 բ). արագավազ, ագեվազ (նոր բառեր)։— վազ գործածուած է նաև «անդունդ» նշանակութեամբ՝ Ուխտ. Ա. էջ 6. բայց սա հյ. վախ «անդունդ» բառն է, որ սխալմամբ գրուած է վաղ և այս էլ երկրորդ

սխալով վազ (տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Բ. 132)։

ՆՀԲ լծ. հյ. վէժ, պրս. պազ, թազ, թրք. թէզ, յն. βαδίζω, լտ. vado: Windisch. 18 սանս. vah, լտ. vehi: Böttich. ZDMG 1850, 362 և Arica 88, 433 սանս. vaǰ արմատից։ Lag. Urgesch. 657 սանս. vah, գոթ. gavigan: Այս ընտանիքին են պատկանում նաև զնդ. vazaiti «վարել, քշել, թռչիլ», պհլ. vajītan, պրս. vazīdan «փչել», par-vāz «թռիչ», քրդ. ðaz «վազք, ընթացք», գազա vāz, յն. ὀχέομαι, լտ. veho, գոթ. wagjan, հբգ. wegan, հսլ. vezą, vesti, voziti, լիթ. vežù, կիմր. cy-wain, որոնց մայրն է հնխ. weg'h- «վարել, քշել, կառքը վարել» (Pokorny 1, 249): Այս ձևերի հետ են համեմատում Müller, SWAW 42, 253; 43, 299; WZKM 8, 356 (պհլ. ווזע vaǰītan), Պատկ. Изслед. 4. Justi, Zendsp. 264 և Dict, Kurde 34, Bopp Gram. comp. 3, 123, Հիւբշ. KZ 23, 34, Պատկան. Փորձ 1880 մարտ, էջ 87, Տէրվ. Նախալ. 106 (նաև հյ. վագիլ, վարգիլ, աւազակ)։ Բայց հյ. վազել չի կարող կապուիլ այս ընտանիքի հետ, որովհետև իբրև բնիկ հայ պիտի ուննայինք *գեձ կամ *գեզ, իսկ իբրև իրանեան փոխառութիւն ընդունելու համար՝ նշանակութիւնը համապատասխան չէ։ Lag. Arm. St. § 2082 մերժելով վերիններըՙ կցում է պրս. bāxtan, bāzam «խաղալ» (նաև «ցատկել», արմատը vaz) բառին, որ Հիւբշ. 242 մերժում է։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 164 պրս. tāzam «վազել, արշաւել» բայից, իսկ էջ 342 պհլ. vazitan, պրս. وزیدن vazīdan, զնդ. vaz «երթալ»։ Պատահական նմանութիւն ունի արաբ. وفض vafz «արագ վազել» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 453)։

Դիմ.—Հին հայերէնի նշանակութիւնը պահում է միայն Սվեդ. վոզգիլ «ցատկել», իսկ միւսները ունին միայն «ընթանալ» նշանակութեամբ. այսպէս են Հճ. Մշ. Սչ. վազել, Ակն. Երև. Ննխ. Պլ. Սեբ. վազէլ, Ասլ. վազէ՛լ, Զթ. Խրբ. վազիլ, Տփ. վա՛զիլ, Ալշ. վոզել, Մկ. վոզիլ, վոզկիլ, Սլմ. վոզնել, վոսկել, Ջղ. վազզել, Ախց. Կր. Պրտ. Ւր. Տիգ. վազզէլ, Գոր. Ղրբ. Շմ. Տփ. վազ տալ, Ագլ. վէզ տօլ (սրանք չունին վազել բայաձևը). իսկ Վն. ունի վոռզել, որից երևում է որ նախաձևն է *վարզել: Իմաստի զարգացման համար հմմտ. թրք. atlamaq «ցատկել» և արև. թրք. atalamaq «վազվոտել». հնից կայ նաև Եւս. պտմ. 156 վազվազելով ընթանայինՙ որ երկու նշանակութեանց միջին տեղն է բռնում։ Նոր բառեր են վազան, վազկան, վազման, վազեվազ, վազնիվազ, վազուկ, վազուն, վազրոտել, վազվոտել, վազվզել, վազվզոտել, վազվրոտկել են։

—ՎԱՋ «խաղողի ուռ» Վրդ. առ. 207 (որ և կենդանի է Երև. նոյն ձևով, նաև Լ. Հմշ. Ղզ. Շլ. Տփ. «խաղողի որթ» նշանակութեամբ)։ Ձիշում է Բառ. երեմ. էջ 255՝ որթ բառի բացատրութեան մէջ։

=Կազմուած է հյ. վազել «ցատկել, դուրս ցատկել» բայից. հմմտ. ռուս. побег «դըլխաւոր արմատի կողքից ծլած երկրորդական ճիւղեր, ընձիւղներ», որ յառաջանում է побег «փախչիլը, փախուստ», бегать «վազել, փախչիլ» բայից, գերմ. sprosse «ծիլ», spriessen «ծլիլ», հոլլ. spruiten, անգսք. sprútan, անգլ. sprout «ծլիլ», որոնք յառաջանում են գերմ. sprut «դուրս ցատկել» արմատից (Kluge 464), հյ. ցոկիլ «դուրս ցատկել» և գռ. ցոուկ «նոր ծիլ»։

Մառ, Яз. и. Лит. I. 227 կցում է վրաց. vaz և բասկ. maç «խաղող» բառերին։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Մ. Աբեղեան (անձնական)։

Գիմ.—Տե՛ս վերը։

Փոխ.—Վրաց. ვაზი վազի «խաղողի որթ», უხუცვაზი ուսուրվազի «վայրի խաղող», ხავაზე սավազե «յօտոց», ավան. դվազ «խաղողի որթ» (Մառ ЗВО 22, 42)։

+ՎԱՓՍՈՒՆ, ի հլ. «60» ՄԳր. (նաև գրուած վատսուն Աբան. տպ. 1899, էջ 231 չորս անգամ, վացուն Սոկր. էջ 193). որից վաթսնեւորդ Ա. մկ. ա. 1, 21. վաթսնեակ Փիլ. Տօնակ. վաթսնական Ղևտ. իէ, 3, 7. Ա.

տիմ. ե. 9. վաբսնաւար *Մաթ. ժգ. 8.* վաբսունամեակ, վաբսունեանց *(նոր բառեր)*։

=*Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են սանս.* šaští-, *դնդ.* xšvaštī-, *պրս.* šast. *Թոխար.* skaska, *յն.* ἑξήκοντα, *կրետ.* ϝεξήκοντα, *լտ.* sexaginta, *և նոր կազմութեամբ հսլ.* šestĭ desętŭ, *լիթ.* szēszios dēszimtys, *գոթ.* saihs tigjus, *հրդ.* sehszug, *գերմ.* sechzig *են։ Հնխ. ձևը պարզ չէ, թէև յայտնի է որ կազմուած է* suek´s- *«վեց» բառից՝* -k´omt *«10» վերջաւորութեամբ։ Հայերէնի մէջ ա յառաջացած է ըստ* Meillet BSL *22, 18 յաջորդ ու ձայնի ազդեցութեամբ՝ փոխանակ հնագոյն *վեբսուն ձևի։—Հիւբշ. 491, 495։*

Ուղիղ համեմատից նախ Windisch. *32. նոյնը ունին նաև բոլոր միւսները. առանձին գլխով խօսում է Տէրվ.. Երկբագունս և Լեզու 176։*

Գիւռ.—Ալշ. Երև. Շմ. Ջղ. Վն. Տփ. վաբսուն, *Մկ.* վոբսուն, *Հմշ. Նախ.* վաբցուն, *խր. և Նախ. գիւղերը՝* վասուն, *Սվեդ.* վոբցուն, *Սեբ.* վաբձուն, *Ջթ.* վաբծօն, վաբձոն, *Գոր. Ղրբ.* վա՛ցուն, *Մշ.* վասսուն, վածուն, *Ակլ. Ախց. Կր. Մրղ. Ռ.* վացցուն, *Հճ.* վածՙձ՚ուն, *խրբ.* վաձՙձ՚ուն, *Պլ.* վաձձուն, *Ասլ.* վա*ձիւն, *Սլմ. Սչ.* վացուն։

ՎԱԹՎԱԹ. *«գիշերամուկն». դիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 225 ատ։*

***ՎԱԼԱՅ** *«բրդեայ կտոր» Դրնդ. 505. (Միայն մէկ իսպիտակ վալա շալ չուխայ ունելով վերարկու անձին). Վրդ. առ. 210։ Նոյնը ըստ Հացունի, Պատմ. տարազի 226 «ներքնակ» իմաստով ունի Հճ. երզն. (Հադեր վալա, վրան ճուպայ. Հրտր. Վ. Փափազեան, Պատմ. զրակ. Երևան 1908, էջ 88 տաղ մօր վրայ)։*

=*Պրս.* ﻭﺎﻟﻪ vālā *«է նուրբ գործուած ինչ ոտաչնանկեալ ի մետաքսէ, զոր առնեն բոպիտակ, նաև գոյնզգոյն, որ և ասի* ﺑﺎﻟﻪ vāla»։ *Պարսիկ բառը փոխառեալ պէտք է լինի ասոր.* ﻭﺎﻠﻐ vālā *կամ* ﻭﻠﻐ vēlā *«քօղ, առագաստ» բառից* (Brockelm. Lex. syr. 88) *և այս էլ յն.* βῆλον, *լտ.* velam *հոմանիշից։—Ա՛ճ.*

Հացունի, անդ, պրս. վալա *«վեհ, վերին» բառից։*

Գիւռ.—Խտջ. վալա *«մի տեսակ բրդեայ կտոր, որից հագուստ են պատրաստում, շալախ», Ախց. Ախք.* վալա *«երեսի քօղ», Ախց. Ախք. Ակն. Առ. Բն. Մէրտ. Սեբ.* վալա *«իմաստի տաշտի վրայ ծածկելու շոր», Ակն.* վալա *«սաւան՝ որ անկողնի տակ են փռում կամ միջին թուք են թափ տալիս»։*

Փոխ.—Բրբ. գտ. Ակն. vala *«թուք թափելու կամ անկողնի տակ փռելու սաւան»։*

ՎԱԽ, *ի հլ. «գահաւանդ, գահավէժ տեղ» Ոսկ. յհ. ա. 2, 6, 38. Փիլ. Նխ. 3հ. կթ. Վրք. հց. որից վախուտ «աւփաւթայ» Պտմ. աղէքս. վախ ի վախէ «գահավիժուտ» Եւագր. 41. գրուած է նաև վաճ Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 77 (իսկ պախ ձևի վրայ տե՛ս պախ «երկիւղ»)։ Նոյն բառն է ըստ իս նաև* վազ *«անդունդ», որ* վախ>վազ *սխալ գրչութիւնից յառաջացած պէտք է լինի. Համմտ.* վազ f ար աճ ա ւաց *ճառընտ.=Վրք. և վկ. ա. 357 (տե՛ս և վերը* վազ)։

Հիւնք. յն. χάος «քաոս» բառից կազմուած, Անդրիկեան, Բազմ. 1905, 512 վիհ բառից։

ՎԱԽ *«երկիւղ». գործածական է միայն արդի գրականում և բարբառներում. հնից չէ աւանդուած առանձին. բայց նոյնից են վախել կամ վախիլ «վախենալ, երկիւղ կրել» Վրք. հց. Մագ. Յայտմ. Սմբ. պտմ. տպ. 1856, էջ 92. Ճառընտ.* վախող *Նիւս. բն.* վախեցուցանել *«վախեցնել» Ոսկ. բ. կոր.* վախկոտ *Ոսկ. յհ. բ. 30.* վախվախել *Վրք. հց.։*

Նշՙր վախ *«գահաւանդ» բառից։ Հիւնք. պակնուլ և պախիլ ձևերի հետ՝ պրս.* bāk *«երկիւղ» բառից։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 41 աճ, պախ, պակ բառերի հետ։ Ղափանցեան տե՛ս պակ։*

Գիւռ.—Ալշ. Ախց. Ակն. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Հմշ. Ղրբ. Նախ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սչ. Սեբ. Մշ. Տփ. վախ, *Մկ. Մրղ. Սլմ. Վն. Տիգ.* վոխ, *Ագլ. Հճ.* վօխ, *Ջթ.* վօխ, վոխ, *Սվեդ.* վիխ *(բայց բայը՝* վոխնիլ *«վախենալ»)։— վախկոտ>Ռ.* վախօղ, *Տիգ.* վոխգուղ, *Մրղ.* վոխկուհա. *Ջթ.* վոխգիւղ, *Սչ.* վախբՙդ, *Պլ.* վախգօղ։— *Հետաքրքրական ձևեր են Ասլ.* վըխըմ *«կարծեմ», Մրղ.* վՙխոնալ, վէխէ-

նալ «վախել»։—Նոր բառեր են վախակալել, վախակօխ, վախաւորուիլ, վախենակ, վախլաճ, վախլկոտ, վախլութիւն, վախլուկ, վախութիւն, վախչուկ են։ Թրքախօս հայերից՝ կրվրխելլէմէք «վախենալ» Առն. կազմուած հյ. կը ահմանականի մասնիկով և թրք. lemek բայակերտով (Արևելք 1888, նոյ. 8—9)։

ՎԱԽՃԱՆ, ի–ա հլ. (յետնաբար կայ նաև ի հլ.) «վերջ» ՍԳր. Կիւրղ. Թգ. որից վախճանիլ «մեռնիլ, կեանքը վերջանալ» ՍԳր. Եղիշ. վախճանեցուցանել Դատ. ե. 26. վախճանել «վերջացնել (խօսքը, գործը են)» ՍԳր. Ագաթ. Ոսկ. ա. Թես. Բ. անվախճան Եբր. է. 16. Գ. մկ. դ. 12. Ագաթ. դիւրավախճան Սարգ. երազավախճան Պիտ. նախավախճան Եպիփ. Բաղմ. Շար. սակավավախճան Իմ. ժե. 9. գրուած է նաև վաղճան, վաղչան։

ՆՀԲ «վաղ ծանուցեալ, կանխաւ դիտեալ»։ Տէրվ. Altarm. էջ 24 վերջ և աւարտ ձևերի հետ՝ կցում է սանս. varj «դարձնել», apavarj-ana «վերջ», apa-varj «վերջացնել» և սանս. vart, լտ. vertere։ Նոյն, Նախալ. 70 պահում է միայն հայ ձևերի համեմատութիւնը։ Մառ ЗВО 5, 318 գնդ. *varya բունից, որից կազմուած է գնդ. vairyastāra «ձախ»=հյ. վերջին։ Հիւնք. «իբր ի հակառակէն բառիս վաղ, պրս. ֆերեամ»։ Nyderg-ի մեկնութիւնը տե՛ս Հաւաք բառի տակ։ Patrubány SA 1, 309 փոխառեալ իրանեանից, համմտ. սանս. vakšána «խոռոչ»։

ԳԻՒՒ.—Ջղ. վախճանել, Ալշ. կր. Մշ. վախճանիլ, Մրղ. վախճանուրէլ, Մկ. վոխճոնիլ, Սլմ. վոխճանվել, Ղրբ. վրխճա՛նվէլ, Ագլ. վրխճա՛նվիլ, վօխճա՛նվիլ, Ասլ. Պլ. Սեբ. վախջանիլ, Ջթ. վախջանըլ, Տիգ. վոխջոնիլ, Ախց. վաղճանիլ, Ննխ. վաղջանէլ, վօղջանէլ, Սվեդ. վողջոնիլ, Տփ. վօխճանվիլ, Երև. վօխճանվէլ, Շմ. օխճանվիլ, բոլորն էլ «մեռնիլ» նշանակութեամբ և միայն կրօնաւորների համար, փոխառեալ հնդեցական լեզուից։ Նոյնպէս է նաև Թրքախօս հայերից Առն. վախջանիլ օլմամ «կրօնաւորի մեռնիլը»։ Արմատական ձևով պահուած է Ջղ. մախ ու վախճանիճ «մահ, վախճան»։

ՓՈԽ.—Վրաց. ოხჯანი ոխճանի «վախճան, վերջ» Սղ. ճժը. 96, որից უოხჯნო ուոխճնո «անվախճան»։

*ՎԱԽՄ «իբրև բարեպաշտական նուէր եկեղեցուն կտակուած հող կամ կալուած». առաջին անգամ գործածուած եմ գտնում երկիցս 1183 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. 35)։ Գրուած է նաև շատ զանազան ձևերով. այսպէս 1) ոխֆ, ոխվ, ոխւ, ոխու, ոճրւ և 2) ողճ, ողչ, ողր!

=Արաբ. وقف vaqf, տաճկական արտասանութեամբ vaqəf, գւռ. vaquf, ռմկ. վախրվ՝ նոյն նշ.։

*Ուղիղ մեկնեց Մառ, Վիմ. տար. էջ XIV։ Բառիս զանազան ընթերցուածների թուումն ու վիճակագրութիւնը կատարել է Թ. Աւդալբէգեան, Նորք, II. յնվ–մարտ, 1923, էջ 156—7։

ՎԱԽՆԱԽԻ «իսկապէս». ունի միայն Բռ. երեմ. էջ 294։

ՎԱԿԱՆԱԿ «լաւ հասած, հասուն» (ցորենի համար ասուած). մէկ անգամ ունի Երեմ. ծա. 33. «Տուն բաբելացւոց որպէս զօրան վականակ կասցի»։ Այս բառը մեկնելով Մխ. մեկն. Երեմ. գրում է. «Այսինքն օրան ջախջախ դիւրակաս», ուր ըստ ՆՀԲ հետևել է Ղևոնդի (պլ. է, էջ 22) հետևեալ բացատրութեան. «Իբրև զօրան վականակ (հին տպ. համարուած է աղաւաղեալ բառ և դուրս ձգուած. նոր տպ. վանակ) փխրեալ, զոր առնն կոխեալ խոզից»։ Այս երեքից դուրս ուրիշ վկայութիւն չկայ։

Բառ. երեմ. էջ 294 գնում է «չոր կամ դիւրաջախջախ»։—ՆՀԲ «լծ. Թրք. վագըր կելմիշ, օլմուշ, որպէս և յն. ὥριμος, իբր օրահաս, ժամահաս»։ Nyberg-ի մեկնութիւնը տե՛ս Հաւաք բառի տակ։

ՎԱԿԱՍ (սեռ.–ի) «ըստ երբայեցոց՝ քահանայապետի կրծանոցը, իսկ ըստ մեր եկեղեցու՝ քահանայական շուրջառի օձիքը կամ սաղաւարտի յետևից կախուած մասը, որ մինչև ուսերն է իջնում» ՍԳր. Եփր. գտ. 344, «խոյր, պսակ, թագ» Կոչ. 31. Կալիսթ.

159. որից վակասակիր Ագաթ. վակասաւոր Մծբ.։

ՀՀԲ ուս բառի՞ց։ ՆՀԲ լծ. Թրք. yaqa «օձիք»։ Հիւնք. պրս. պէսաֆ, բէսաֆ «ծաղկեպսակ»։ Nyberg-ի մեկնութիւնը տե՛ս Հաւաֆ բառի տակ։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. վագաս։

ՓՈԽ.—Վրաց. ვაკახი վակախ (տե՛ս Մառ, Հայ-վրաց. յարաբերութ. էջ 41)։

ՎԱԿԱՍԻՐ. անստոյգ բաո. մէկ անգամ ունի Նար. տաղ. 482. «Քրքում վակասիր պտուղն սնանէր խուռն տերևով»։ ՆՀԲ համարում է «թերևս որպէս վկանակ հասուն» կամ իբր սիր «խոնաւութիւն, մեղմ, թոյլ, կանացի». ԱԲ մեկնում է «կպչող», ՋԲ չունի։

ՎԱԿԵԼ «կատուի մլաւել». մհյ. բաո. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 809ա։

ՎԱԿԺՈՅԺ. առանձին չէ գործածուած. ոճով ունինք վակժոյժ լինել «ամուր փակչիլ, բռնել ու կպչիլ» Վեցօր. 69, 87. Ոսկ. փիլիպ. ժ. և մ. ա. 12. վակժուժել «նոյն նշ.» Փիլ. հլ. Ոսկիփ.։

Հին բո. մեկնել է «ապաժոյժ կամ անոյժ», ըստ ՆՀԲ անշուշտ շփոթելով վատոյժ բառի հետ։ ՀՀԲ մեկնում է ըստ Հին բո. «անհամբեր», որով հանում է ժոյժ բառից։ ՆՀԲ ի վակասն ուժել «զօձեաց բուռն հարկանիլ»։ Nyberg-ի մեկնութիւնը տե՛ս Հաւաֆ բառի տակ։

ՎԱՀ «հին». ունի միայն Բառ. երեմ. էջ 294, եթէ չէ գրչի սխալ՝ փոխանակ վաղ «հին»։

*ՎԱՀԱՆ, ի–ա հլ. «ասպար» ՍԳր. որից վահանաւոր ՍԳր. Ագաթ. վահանափակ Բուզ. վահանակ «փոքր վահան» Ագաթ. Եփր. ծն. քս. 30, «կոճակ, ճարմանդ» (Թրգմ. կամ նմանութեամբ) ՍԳր. վահանակիր Ա. մն. ժբ. 24. Ա. Թգ. ժէ. 42 ևն. նոր բառեր են վահանաձուկ, վահանաձև ևն։

=Իրանեան փոխառութիւն պէտք է լինի. համմտ. զնդ. 𐬯𐬀𐬹𐬎𐬀𐬵𐬀 vərəθra- «վահան», օսս. vart' «վահան», սանս. वर्त्र vartra- «թումբ, պատնէշ», որոնք ծագում են զնդ. 𐬯𐬀𐬹 var «ծածկել», սանս. वर् var «ծածկել, բռնել, կասեցնել, պաշտպանել, արգիլել» բայից (Bartholomae, Altr. Wört. 1421): Զնդ. բառը պիտի ունենար համապատասխան հպրս. *vrθra-, հպհլ. *varhra- ձևերը, որոնց հետ հյ. բառը համաձայնեցնելու համար պէտք է ենթադրել, -an մասնիկով՝ հպհլ. *varhran, որից հյ. *վարհան և r-ի սովորական անկումով՝ վահան։ Զևի կողմից համմտ. զնդ. Vərəθrayna-> հյ. Վահագն։ Վեդ. vṛtra- և զնդ. vərəθrayna բառերի վրայ մի առանձին մենագրութիւն հրատարակեցին Benveniste և Renou, Paris 1934. ուր. հյ. վահան բառն էլ մեկնուած է այնպէս՝ ինչպէս մենք, այս մեկնութիւնը ընդունում է նաև Meillet, BSL, հտ. 35. № 105. էջ 31։

ՆՀԲ. լծ. ևովանի։ Lag. Btrg. bktr. Lex. 74 դնում է զնդ. vərəθra> հյ. *վահ, որից բայական ձևով *վահել և սրանից էլ դերբ. վահան։ Նոյնը ունի Müller SWAW 66, 277: Գարագաշեան, Քնն. Պատ. Ա. 269 Վահ «Աստուած» բառից, որ տե՛ս Վեհ բառի տակ. (Հին ժամանակ վահանի վրայ աստուած էին նկարում)։ Հիւբշ. 242 ո՛չ իբր փոխառեալ և ո՛չ իբր բնիկ կարող է, ասում է, ապահովութեամբ կապուիլ վերի ձևերի հետ։ Հիւնք. պրս. fahāna «սողնակ, նիգ»։

ՓՈԽ.—Վրաց. ვაჰანაკრაყ վահանակրաւ «վահանակրեայ» ըստ Մառ, Текст. и Раз. VI, Физіологъ 1904, էջ XXXVI փոխառեալ է հայերէնից՝ Բարոյախօսի թարգմանութեան ժամանակ։

*ՎԱՀՇԻԺԱԿ, որ և վահշիզակ, վաշիժակ, վախշիրակ «մի տեսակ բոյս. աղուիճակ, խաղողախոտ, լտ. staphysaria (ըստ Տիրացուեան, Contributo § 406 veronica anagallis L)» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2854։

=Արաբ. وخشيرق vaxšīraq նոյն նշ. (չգիտէ Կամուս), որ անշուշտ նոյնպէս փոխառութիւն է։

Այսպէս մեկնեց ՀԲուս.։

ՎԱՀՈՑ «մտաւախ, փոքրոգի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Իրեն. ցոյցք 49. «Մխիթարեցարուք

կարճոդի վահոտք մտաւք, զօրացարուք, մի՛ երկնչիք»։ Հատուածիս հետ նոյն է ես. լև. 3. «Մխիթարեցարուք, կարճամիտք սրտիւք, զօրացարուք և մի՛ երկնչիք»։ Վաճոտ *բառը պակասում է այստեղ. բայց յայտնի է որ համանիշ է* կարճամիտ *բառին։*

=*Անշուշտ կազմուած է* -ոտ *մասնիկով* վան *արմատից, որ այլուստ անծանօթ է։ Արդեօք* ա՞ճ։

Նկատելի է որ բառս չէ յիշած Վարդանեան՝ Իրենէոսի նոր բառերի շարքում, ՀԱ 1910, 281 և 301։

ՎԱՀՐ *«թարախ», որից* վաճրոտ *«թարախոտ». հնում չէ գործածուած. կայ միայն երև. Ղրբ. բայց ունինք* վաճրոտեալ *«թարշամեալ, փտած,* mareidus» *Ներսէսովիչ, Բառ. լա. հյ. 320 աւ։*

Կայ արաբ. ورى varī *«թարախ» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 946)։*

**ՎԱՂ *«առաջ, հին, շաւոնց. 2. շուտ, շուտով» ՍԳր. Ագաթ. Եզն. Սերեր. Եւս. քր. «յաջորդ առաւօտ կանուխ» Ղկ. իգ. 1. Գնձ. Վրդն. աղ. որից* վաղագոյն *ՍԳր.* վաղաճաս *Ոսկ. և եփր. Բ.Թես.* վաղու ևս *Մտթ. ժա. 21.* վաղուց, ի վաղուց, ընդ վաղուց *ՍԳր. Ոսկ. ևս. Ագաթ. (յետնաբար կայ ի վաղեաց կեղծ-Շապհ. 73),* վաղիւ *«վաղը, յաջորդ օրը» ՍԳր. Սերեր. (իմաստի զարգացման համար համմտ.* այգ-ուց, *կազմութեան համար տե՛ս* Meillet BSL 21, 33), վաղնջուց *ժղ. ը. 12. Փարպ. Եղիշ. Խոր. Պիտ.* ի վաղնջենէ *Ագաթ.* վաղորդայն *ՍԳր.* վաղուեան *Գծ. իգ. 11.* վաղ-վաղ *Սղ. հը. 8. Ճխէ. 5. Բուզ. Կոչ.* վաղվաղել *«շտապել» ՍԳր.* վաղվաղակի *ՍԳր.* վաղվաղկոտ *Սիր. ժգ. 4. Եւագր.* վաղ-վաղուն *Վհցօր.* կանխավաղ *Արծր.* նախավաղ *Պղատ. օրին. Նանայ. 402. Նոնն.* վաղեմի=վաղի-ամի *«շատ տարիների, վաղուցուայ, հին» Յայսմ.* վաղաժամ, վաղածաճօք *(նոր բառեր) ևն։*

=*Նոյն է վրաց.* ხვალ խվալ, ხვალა խվալա, ხვალე խվալե *«վաղը, էգուց»,* ხვალიბ ხვალ խվալիս խվալ *«վաղուայ վաղը, վաղանդ», ինգ.* խուվալ, խուալ *«վաղը» բառերի հետ։ Սրանք վ-ից առաջ ունենալով նախաձայն խ չեն կարող փոխառեալ լինել հայերէնից։ Միւս կողմից հիմնական իմաստը (առաջ, շուտ) գտնուելով հայերէնի մէջ, չի կարող հայերէնը փոխառեալ լինել վրացականից։ Ուստի և ենթադրւում է մի երրորդ աղբիւր, որ ունէր* xval *ձևը՝ «առաջ, հին» նշանակութեամբ, որից փոխառեալ է նաև հայերէնը։ —Աճ.*

ՆՀՌ *լծ. յն.* πάλαι, παλαιός, *երր. և արաբ.* պալա, վալա, *թրք.* էվվել։ *Տէրվ.* Altarm. 51 վաղ, գարուն *են բառերի հետ=սանս.* uš *«վաղիւ»,* ušas *«արշալոյս»,* uṣā *«գիշեր»,* uṣrā *«առաւօտ» են։ Մառ* ЗВО *5, 319 զնդ.* ušaiθi *«արշալոյս»։ Հիւնք. յն.* πάλαι? *իսկ էջ 220* վաղել, վաղվաղել=*լտ.* vago *«թափառիլ», յն.* βιβάσω *«ընթանալ»։* Jensen, Hitt. u. Arm. *97 են* վաղեմի *բառի մէջ* -եմի *համարում է «մեծ» (մինչդեռ ամ «տարի» բառն է!) և կցում է հաթ.* imia, im, mia, mii, mi, m', ma, m, emio *բառերի հետ։* Patrubány SA 1, 195 *լտ.* velox *«արագ, ճարպիկ»։* Scheftelowitz BB 29, 49 *լտ.* volare *«թռչիլ»։* Կ'apaչ, Объ отнош. абхаз. яз., *էջ 28 համեմատում է վրաց.* ձალი *մալի և ափխ.* àlas *«արագ, շուտ» բառերի հետ։*

ԳԻՒՒ.—երև. Շմ. Տփ. վաղ *«կանուխ», Ալշ. Մշ.* վաղ, *Տփ.* վաղ, վաղիր *(այսպէս ըստ Սայեաթ-Նովայի, որ սակայն այժմ գործածական չէ), Ասլ. Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* վաղր, *Մկ. Վն.* վոդ, *Տիգ.* վոդր, *Մրղ.* վոդո, *Հճ.* վօդր, *Զթ.* վօդր, վոդր, *Սվեդ.* վիդր *«վաղը, վաղիւ, էգուց»։ Նոր բառեր են* վաղօրօֆ, վաղնցէ, վաղնօֆու, վաղուենկուց։

ՓՈԽ.—ուտ. վաղի *«անցեալ, հին»։*

ՎԱՂԱԿԱՒՈՐ (ի–ա *հլ. յետնաբար) «կարճ թուր, մի տեսակ դաշոյն, խարբ» Երեմ. ծ. 42. Եզեկ. իա. 3—5, Բարուք դ. 14, Եփր. Թգ. 391 և ծն. էջ 57. սխալմամբ դրւում է «սուսերաւոր, թուր կրող զինուոր» ՅՀ. կթ. իբր թէ արմատը լինէր* վաղակ *«թուր», որի համար էլ Գնձ. գրում է «Ահա մերկացաւ սուրն վաղակաւ»։*

ՆՀՌ *լծ. Թրք.* փալա, *յն.* πέλυξ, πέλεκυς։ *Հիւնք.* վաղր *բառից։ Հացունի, Պատմ.*

տարազի, էջ 156 պրս. վաղա «մարտ» բառից։

ՎԱՂԱՄԱՒՈՐՀ «հակառակախորհ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 295, որից հետևում է վաղամ «հակառակ»։

ՎԱՂԱՆՋԵԼ «երկար կենալ, աշխատիլ». իբր անստոյգ բառ ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ճառք. էջ 191. «Եւ ո՞ աղքատագոյն քան զՅովբ եղև, որ քան և որք ի բաղանիսն ընկեցեալ են և ի հնոցի իմն վաղանջեն և պարզաբար քան զամենայն իսկ մարդիկ աղքատագոյն էր»։

Վաղար տե՛ս Վեղար։

ՎԱՂՆԱՏԻՆ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Մխ. դատ. 261—2. «Առաջին դաս պալատանն սեղենդիարք, որք են պահապանք ոսկի վաղարին. սքեմ է նոցա զրաւոք մեառքսեայք վաղնատին կազմաւ (այլ ձ. վղնատին, վզնատին)». այսպէս է որոշ ձեռագիրներում, իսկ ըստ այլոց «զգեստ է նոցա դիպակ ոսկեթելով կազմաւ»։ Սրանից առնելով Սմբ. դատ. 86 «ոսկի դիպակ վըշճառաշեմ» (այլ ձ. վզնատշեմ՝ ըստ Հրտր. Ղլտճեանի, էջ 41)։

Karst, Դատան. II. 76 համարում է յն. βαλαντίης «կաղինի ձևով թանկագին մի քար»։

Վաղամ, Վաղամոն տե՛ս Բաղամոն։

ՎԱՂՎԱՂԿԻԻՆ «լացի՝ ողբի ձայն». մէկ անգամ գտնում եմ գործածուած Պատմ. աղէքս. 141 (3 ձեռ.), իբրև սխալ ընթերցուած. բայց հնարաւոր եմ որ այն ժամանակ գոյութիւն ունեցող մի բառ պէտք է լինի։

ՎԱՂՐ, ր հլ. (գրծ. վաղերբ) «կարճ թուր, վաղակաւոր» Խոր. բ. 43. ՅՀ. կբ. 311, 379. Օրբել. որից վաղրաւոր «վաղր կրող զինուոր» Բուզ. դ. 15, 20։

ՆՀԲ և ԱԲ թւում են կցել վաղակաւոր բառին։ Հիւնք. վազր բառից։ Գոյումճեան, Բիւզանդիոն 1898, թ. 508 համարում է «ջախող, ջախջախող, ուռնաձև մի գործիք» և իբր սխալ գրչութիւն՝ ուղղում է վազր, ինչպէս գրուած է գտնում Կարնոյ Աղջկանց Վարժարանի Բուզանդայ ձեռագրում, Դ. 15 և 20, և ինչպէս որ ունինք արդէն հյ. վարզ< պհլ. vazr. ըստ այս հնարաւորութեան՝ վաղր ձևը գոյութիւն չունի և յետնաբար միայն ծագած է տառերի շփոթութեամբ։ Հիւբշման (անձնական) այս բացատրութիւնը վերջնական չի համարում։ Նոյն նիւթի վրայ խօսում է Վարդանեան, ՀԱ. 1922, 293 և նախ. վկ. արև.=Սուիերք Ի. 127 գտնելով վազրաւոր ընթերցուածը, **վաղր և վաղրաւոր** ձևերը ջնջել է հրամայում։— Թուիճեան, Mitteilungen des Seminars f. Orient. Spr. Berlin 1904, էջ 138 պրս. وقر vaqra բառի հետ, որ մեկնւում է ըստ ԳԴ «է այն հատու կարիչն երկաթեայ, որով անկանողք, այսինքն գործողք գադիֆէի («թաւիշ»), զհատն նորա նովին հատանեն»։ (Վաղր բառի ղ ձայնը՝ որ է l ընդդէմ զ-ի, չի թոյլ տալիս ընդունել այս առուգաբանութիւնը)։

*ՎԱՃ, որ և ոաճ, ոճ «բաղշատակ խոտը, ակիր, լտ. acorus» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2391 և § 311։

=Արաբ. وج vajj «ակիր» (տե՛ս Կամուս, Թրք. Բրգմ. Ա. 448), որ փոխառեալ է հնդ. vačā «acorus calamus» Հոմանիշից. հմմտ. նաև սոր. ܘܰܟ vaṣ «iris pseudacorus L»։

Ուղիղ մեկնից ՀԲուս.։

*ՎԱՃԱՌ, ի—ա, ու հլ. (յետնաբար ո հլ. ինչպէս ունի կրկնագիր Ագաթ. էջ 6 բ) «առուտուր, ապրանք» ՍԳր. Ագաթ. Եփր. Թգ. «սակարկութիւն» Պղատ. օրին. «շուկայ, վաճառանոց» Ես. իգ. 17. Եզեկ. իէ. 12—22. ՅՀ. բ. 16. Եփր. ա. կոր. 70. «գնում, ծախու առնելը» Կոչ. «վաճառելուց ստացածը, համարժէքը» Լաստ. ժ. «նուէր, ընծայ» Տաղ. «գանձ» Բուզ. Գ. 21. «գանձատուն, գանձարան» Կղնկտ. Բ. ժդ. «գանձապետութիւն, հարկապետարան, դիւան, աշխարհագիր» Սեբ. Դ. ժբ. (վերջին հինգ նշանակութիւնները տալիս է Թ. Աւդալբէգեան. Տեղեկ. ինստ. 1, էջ 93—95). որից վաճառել ՍԳր. վաճառական ՍԳր. Եզեկ. Փարպ. վաճառապետ Եփր. Թգ. վաճառանի (յգ.) Մագ. մեծ են. էջ 46. կաղամբավաճառ Բուզ. ճատավաճառ Մաթ. իա. 12. ՅՀ. բ. 15. աղաւնեվաճառ

Մտթ. իա. 12. Մրկ. ժա. 15. ծիրանեվաճառ *Գծ. ժզ. 4. Ոսկ. մ. բ. 18.* գինեվաճառիկ *Ոսկ. ես.* ժամավաճառ *Դան. բ. 8. Փարպ.* շահավաճառ *ՍԳր. Եւս. պտմ.* ոչխարավաճառ *Ոսկ. երր.* ճշդավաճառ *Եւագր.* մսավաճառաձոց *Եզն.* վաճառիկ «տամղա, մաքս, վաճառահարկ» *Վիմ. տար. 149 (ըստ Ք. Աւդալբէգեանի, Տեղեկագ. ինստիտ. 1, 94).* նոր գրականի մէջ վաճառականապետ, վաճառականական, ածխավաճառ, կաթնավաճառ, ջրավաճառ, մնձավաճառ, ածխավաճառաձոց, վաճառորդ *ևն։*

=ՊՀլ. vāčār «շուկայ», vāčārakānīh «վաճառականութիւն», պազ. vāzār «շուկայ», vāzargān «վաճառական», պրս. بازار bāzār «շուկայ, վաճառականութիւն», bāzārgān, bāzargān «վաճառական», bāzārī «վաճառականական, վաճառական» (Horn § 166): *Պրս. բառը փոխառութեամբ անցել է եւրոպական և ասիական բազմաթիւ լեզուների. ինչ. քրդ.* bāzār, *թրք.* pazar, *չերքէզ.* bizir, bəzər, *նյն.* παζάρι, *բուլգ.* pazar, *ռուս.* базаръ, *հունգ.* vásár, *սպան. ֆրանս.* bazar, *բոլորն էլ «շուկայ, վաճառանոց»։— Հիւբշ. 242։*

Նախ ԳԴ դրաւ պրս. պազար, վ'աշառ: *ՆՀՒ լծ. թրք.* պազար, *վրաց.* վ'աճառի: *Եւրոպա, 1850, 15 պրս.* վ'աշար: Böttich. Arica 76, 249 վաճառական=*պրս.* bāzārgān: Lag. Urgesch. 488, Müller SWAW 38, 586 *պրս.* bāzār: Justi, Zendsp. 277 *զնդ.* vičarana «բաժանումբն» և *պրս.* bāzār: *Հիւնք. նոյն ընդ* պաշար և = *պրս.* bāzār: *Ադոնց,* Арм. въ эп. Юст. 392, 448 *իրան.* habaćaris, *պՀլ.* vaćar: *Պատահական նմանութիւն ունի արաբ.* فجر faǰar «շատ ապրանք» *(Կամուս, թրք. թրգմ. Բ. 64)։*

ԴԻՒ.—Ասլ. վաջառ «փեսի կողմից հարսին ուղարկուած օժիտը, որ զգեստեղէնից է բաղկացած լինում»։ *Գրականից են փոխառեալ Ագլ. Կր. Տփ.* վաճառական, *Պլ. Սչ.* վաջառագան:

ՓՒԽ.—Վրաց. ვაჭარი վաճառական», ვაჭრო սալաճրո «վաճառականական շուկայ, ապրանք», მოვაჭრე մովաճրե «վաճառական», დიდ-ვაჭარი դիդ-վաճարի «առաջնակարգ վաճառական», შევაჭრება շեվաճրեբա, დავაჭრება դավաճրեբա «գինն իմանալ, սակարկել», ვაჭრობა վաճրոբա «առուտուր անել», *սվան.* ნვաճար «վաճառական», լիղվճար «առուտուր անել», *մինգ.* վաճարի «վաճառական», վաճրուա, վարճուա «առուտուր անել», *ափխ.* ախվաջար «վաճառական», *կայ.* վիշար-բարիր «վաճառականութիւն անել», *թուշ.* վաճար «վաճառական», վաճարբադդար «վաճառականութիւն անել»։

**ՎԱՃԱՌԴԱՀ «առևտրի տեղ, շուկայ». Նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Սոկր. 455 և 574. Եւ յարդարէր ժողով... ի Սանգարոն ծովեզերին. վաճառգահ (յն. ἐμπόριον) է սա Բիւբիւնիոյ, որ մերձ ի Հեղինուպողիս կայ. ի տեղւոջ քաղաքիս, որոյ անուն Քսիռողոփոն, որ այժմս վաճառգահ Արկադի (յն. ἀγορὰ) անուանի։*

=ՊՀլ. vāčār «շուկայ»+gāh «տեղ» բառերից, իբր պրս. بازارگاه bāzārgāh «վաճառատեղի»։—*Ա.Ճ.*

ՎԱՅԵԼ (ի հլ. յեռնաբար) «հաճոյք, զբաղմունքիւն» *Փիլ. Պիտ.* «գործածութիւն» *Եզն. (անեզաբար գործածուած), «արժանի, պատշաճ, յարմար» ՍԳր. Ոսկ.* որից վայելել *ՍԳր. Ոսկ. Եզն.* վայելելի *Եզն.* վայելչացուցանել *Ագաթ.* վայելուչ *ՍԳր. Ոսկ. ես.* վայելչութիւն *ՍԳր. Կոչ.* բարեվայելուչ *Կղնկտ. ՅՀ. իմ. ատ.* գեղեցկավայելուչ *Պիտ. Փիլ.* ակնավայել *Ագաթ. § 775.* խոտավայել *Արծր.* ծառավայելուչ *Մաթս. դիոն.* նոր բառեր են թագաւորավայել, իշխանավայել, արքայավայել, անվայել, մարդավայել, վայելչագրութիւն, վայելչահասակ, վայելչակազմ *ևն։—Արևմտահան գրականում զանազանւում է* վայելել «jouir, վայելքը առանալ», վայլել «seoir, սազ գալ». *վերջինիս հնագոյն օրինակն է* վայլ Գնձ.։

Տէրվ. Altarm. 49 *անես.* vī «ցանկալ, տենչալ»։ *Հիւնք. պրս.* ویل vīl «գտումն իրին ի ժամանակի իւրում ըստ հաճոյից»։ Scheftelowitz BB 29, 42 *անես.* vēti «վայելել», *զնդ.* vaya «փափագ», *յն.* ἑαμαι «դիմել, գնալ դէպի»։ Peder-

sen, *Հայ. դր. լեզ. 164* վ նախդիրով հայիմ *բայից? Թիրեաքեան, Ատրպատ. էջ 26* պհլ. վայելնիկ, *պրս.* վայեսա, պայեա *«պէտք է»։*

ԳԻՒ.—Սչ. վայելել, *Վն.* վայելել, վէլել, լէվել, *Երև.* վայէլէլ, *Ագլ. Մկ. Շմ.* վայէլիլ, *Մշ.* վայլել, վէլել *(ուր և* վելէ *«վայելք»), Ակն. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* վայլէլ, *Ասլ.* վայլէ՛լ, *Ախց. Կր.* վայլիլ, *Ալշ.* վէլել, *Տիգ.* վէլէլ, *Տփ.* վայիլիլ, վէլիլ, *ՋԹ.* վէլիլ, *Խրբ.* վոլիլ, *Սվեդ.* վիլլիլ, *Սլմ.* լէվել, *Մրղ.* լէվէլ. *Թրքախօս Հայերից՝ Առն.* վայէլէլ էթմէք *«վայելել» (Արևելք 1888 նոյ. 9)։ Նոր բառեր են* վայլում, վայլեցկուն, վայլիչկուն, վայլածք, անվայլում։

ՎԱՅԹԵԼ *«դուրս կամ ցած թափել, պարպել» Բ. Թագ. ի. 10. ՅԶ. կԹ. Ուտ. տպ. Եմ. էջ 181, որից* վայթիլ *«վայր թափուիլ, նետուիլ (մարդոց)» Միխ. առ. 288. գրուած նաև ոմկ.* վաթել, վոթել *Վրք. Հց. Յայսմ.* վաթիլ *Առաք. պտմ. 277.* վիթեալ *«վայր թափուելով (մարդոց համար ասուած)» Օրբել. Հրատր. էմ. 293։*—Վայթել ձևով են ուղղում Նորայր, *Կոր. վրդ. 222 (կասկածով)* և Նահապետեան, *Բազմ. 1906, 499* նաև *Բուզ. դ. 59 «Որչափ ի վայր վայրէին ոսկերքն»* և *Բուզ. և. 3 «Ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ» Հատուածներէ մէջ* վայրիլ *բառը։*

ՆՀԲ լծ. իտալ. svodare, *լտ.* votum reddere։ *Հիւնք.* պայթիլ *բայից։*

ԳԻՒ.—Խրբ. վոթիլ, *Ռ. Սեբ.* վաթէլ՝ *Ասլ.* վաթէ՛լ, *Հճ.* վէդ՛դ՛ել, *ՋԹ.* վէդ՛իլ, *Տփ.* վի՛թիլ, *Սչ.* վօթել, *Ննխ.* վօթէլ, *Սվեդ.* ֆիթիլ։ *Նոր բառեր են* վաթվրել *կամ* վոթվրել *«թափթփել»,* վաթուկ *«մարդու սերմ»։*

ՎԱՅԼ *«գիլը». ունի միայն Բառ. երեմ. 295. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ՎԱՅՂՆ *«անծանօթ մի բոյս» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2860։*

ՎԱՅՎԱՂԱՅ *«վայ, աւաղանք, կոծ» Մծր. (այլ ձ.* վաղվաղայ)։

ՆՀԲ պրս. (իմա արաբ.) وَيْلٌ وَاوَيْلَا vāvaylā *«վայնասուն»։*

ՎԱՅՐ, ի–ա *հլ. (յետնաբար նաև* ի, ու *հլ.). ընդարձակ զարգացում կրած բառ է. առաջին և հիմնական նշանակութիւնն է՝* 1 *«բացատան, բնակութիւնից դուրս եղած տեղ, դաշտ, չմշակուած հող» ՍԳր. այս նշանակութիւնից են վայրաբնակ «դուրսը՝ բաց տեղ բնակած» Ա. մն. ժէ. 5, «գիւղացի» Մագ.* վայրագ *«անբնակ տեղեր ազանող, բացօթեայ (իբր յն.* ἀγροικός*) և բիրտ, վիրագ, վայրենի, գազանաբարոյ» Մն. ժզ. 12, իե. 27, Փիլ. Պիտ.* վայրագասուն *«բացօթեայ տեղեր ազանող և սնանող» Ագաթ.* վայրասուն *Մծբ.* վայրի *ՍԳր.* վայրենի *ՍԳր. Եւս. քր. (Հմմտ. Ոսկ. յհ. ա. 15 «մարախ և մեղր ի վայրէ», որ բստ Մտթ. գ. 4 ասում է «մարախ և մեղր վայրենի»),* վայրավատին *Վեցօր. Ոսկ. ես. Սեբեր. իջավայր Ոսկ. մ. ա. 15. Եղն. Հմմտ. նաև վիրագ.—*2. *«ընդհանուր առմամբ՝ որևիցէ տեղ, տեղ» ՍԳր. Եւս. քր. և պտմ. Կոչ.* որից վայրական *«տեղական» Սեբեր.* դաշտավայր *Դտ. ա. 9. Բ. Թգ. իգ. 31.* բացավայր *Վեցօր.* շինավայր *Ոսկ. ես.* հեղեղավայր *Նար.* դիւրավայր *Բրս. սղ.* դժուարավայր *Ճառընտ.* լեռնավայր *Յհս. ժհ. 48.* միջավայր *Վեցօր.* ցայսվայր *Բ. մկ. է. 42. Սեբեր.* վայրաշարժ *(նոր բառ.)*—3. *«մի փոքր ժամանակ» (տեղի գաղափարից ժամանակի գաղափարին անցնելու մասին տե՛ս առեաւ բառի տակ). որից են* վայր մի *«մի քիչ ժամանակ» Հռութ. դ. 1. Տոբ. է. 9. ժա. 14.* առ վայր մի *Փարպ.* վայրիկ մի *Տոբ. ե. 3. Կոչ.* վայրկեան *Յհս. ժգ. 22. Իմ. ժբ. 12. Ղկ. դ. 5. Վեցօր. Ագաթ. Ոսկ. փիլիպ. (նոր գրականում ընդունուած է՝ արևելեան բարբառով «seconde», արևմտեան բարբառով «minute». այս երկուսից ուղիղ է երկրորդը. Հմմտ. Վեցօր. 118 «զմի մի ի 60 ժամուցն ի 60 վայրկենի հատանեն»).* ցայնվայր *«ցայնժամ» Եւս. քր.* երկվայրկեան, վայրկենաբար, վայրկենական, վայրկենապէս *(նոր բառեր).*—4. *«վարը, ցածը, տակը, ներքև». այս իմաստը յառաջանում է «հող, գետին» իմաստից. այսպէս ի վայր արկանել բուն նշանակում էր «գետին գցել», որից զարձաւ «ցած գցել». այս իմաստից ունինք* գլխիվայր *Ագաթ. Եւս. պտմ.* զառիվայր *ՍԳր.* վայրաձիգ *Վեցօր.* ընդվայրընկեցիկ *Ոսկ. մ. ա. 1.* վայրարկու *«յետոյք» Տաղ. Շնորհ. վիպ.* վայրագաւիթ *Եզեկ. խէ. 1.* վայրանկեալ

Շնորհ. տաղ.—5. նիւթական ցածրութեան գաղափարին հետևում է բարոյական ստորութեան, հետևաբար նաև դատարկութեան և ունայնութեան գաղափարը. համմտ. ի վայր արկանել «վար զարնել, գետին գցել, փխբ. աղարտել, անուանարկել» *Ոսկ. յհ. բ. 3, 5.* ընդ վայր ճարկանել «լքանել, երեսի վրայ թողնել» *ՍԳր.* վայրել «ցած թափել» *Բուզ. (տե՛ս* վայթել *բառի տակ),* «ցրուել» *Եփր. մն. 491.* վայրիլ «ցրուիլ, ցնդիլ (գաղափարները)» *Եփր. համաբ. 212. որից* ընդ վայր «ի զուր, պարապ տեղը» *Եղն. Եւագր. Ագաթ.* ընդվայրաբոյս *Ագաթ.* վայրաբար *Փիլ. լին.* վայրապար *ՍԳր. Կիւրղ. Թգ.* ընդվայրախօս *Ոսկ. ես. ևն։*

Վարդան Յունանեան, Ձեռքածութիւն 1671, էջ 334 վայրկեան, *որ գրում է* վարկեան *(ինչպէս արտասանում ենք այժմ), ստուգաբանում է* վարկ «կշռի ամենափոքր քանակը» *բառից։ ՆՀԲ լծ. հյ.* ուր, *Թրք.* եէր, աւա, աւալըգ: Bopp, Gram. comp. *IV* 393 ի վայր=*սանս.* avaras «ստորին»։ *Տէրվ.* Altarm. 76 *խօսում է* վայրագ *բառի վրայ, որ տե՛ս* վիրագ։ Justi, Dict. Kurde 429 *զնդ.* vara, *քրդ.* var «կացարան»: Canini, Et. étym. 197 *գերմ.* Jahr, *յն.* ὥρος *բառերի հետ։ Հիւնք.* վայր *դնում է* վեր *բառից, իսկ* վայրիկ, վայրկեան՝ *լտ.* virgula «փոքր ճիւղ»։ Müller WZKM *6, 188 և 9, 289 պրս.* بير bīr=dwairya? *որ գտնում է պրս.* بيرون bīrūn «դուրս» *բառի մէջ։* Jensen ZDMG 48, 480, Hitt. u. Arm. 103 *հաթ.* ptr, wtr= watirā «քաղաք կամ վայր»։ Patrubány SA *I*, 196 վայրի<*հնխ.* vn̥trios, *իբր բնիկ հայ ձև փոխառեալ* անտառ <*vanatara *բառի*։ Scheftelowitz BB *29 (1905), 42 սանս.* vara «ընդարձակ տեղ, երկիր», *զնդ.* vara «միջավայր, շրջան», *պրս.* ber «երկիր», *պհլ.* gērāk «տեղ, վայր» *բառերի հետ։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 117 կցում է* վարեմ *բային՝ յ եկամուտ համարելով։ Դարձեալ* Patrubány *ՀԱ 1910, 93* վեր <*uperos *բառին արմատակից։*— Karst, *Յուշարձան 401, 403 սումեր.* bur, pur «վար, ցած» = ի վայր, *404, 408 սումեր.* eri, uru «քաղաք, բնակութիւն» = վայր «տեղ»։ *Մառ* ИАН *1920, 138,* Яз. и Лит. *I. 226 վրաց.* վելի «վայր, դաշտ», *մինգ. արէ «վայր», վրաց.* վելուրի «վայրի», բար «դաշտ», *բասկ.* baś «անապատ», ibar «դաշտ» *ևն։ Տէր-Պօղոսեան ՀԱ 1929, 549* շահապետ վայրաց *դնում է* = *զնդ.* xšaθra vairiya: *Պատահական նմանութիւն ունին ասոր.* ܒܥܝܪܝܐ bə'īrāyā «վայրի», *վրաց.* ველი վելի «դաշտ» *Ղկ. բ. 8,* ველური վելուրի «դաշտային, վայրի». ველობა վելոբա «վայրենիք» *Ջաք. է. 7.* ველური ვარდი վելուրի վարդի «վայրի վարդ», *Թուշ.* ველ վել «ձոր»։

Գիւմ.— *Պահուած է միայն Բլ. Մշ.* վէրմ *յոդնակի ձևով. ինչ. Բլ. Ի՞նչ կոլրախս իդա վէրթեր «այդ տեղերը ի՞նչ ես ման գալիս» (էմ. ազգ. ժող. Բ. էջ 399)։ Մշ.* վէրկ ու վէրիկ «տեղ, վայր»։ *Ուրիշ տեղեր սովորական է միայն* վայր «ի վայր, դէպի ներքև, ցածր» *իմաստով. ինչ. Սվեդ.* իվար, *Ախց. Ակն. Ասլ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սչ.* վար, *Խրբ. Տիգ.* վոր, *Զթ.* վոյ, վոր *կամ* իվոյ, իվոր, *Հճ.* վայ, *Ագլ. Գոր. Երև. Համշ. Շմ. Ջղ. Տփ.* վէր, *Ղրբ.* վըէր.—*կայ նաև* վայրի, վայրենի *ձևը, ինչ. Ասլ.* վայրընի, *Խրբ.* վարյէնի, *Ղրբ.* վրինի՛, իվի՛րի, *Գնձ.* վրի՛ւնի, վի՛րած «կատաղած», վի՛րու «վայրի» *Բլ.* վէրու, *Ալշ. Մշ. Վն. Տփ.* վէրի, *Գոր.* իվէ՛րի, վէրի, *Ղզ.* վի՛րու, *իսկ Զթ.* վէյէ, վէրէ «եղնիկ».—*նոր բառեր են* վարդի, վարկեկ, վարնոց, վարտաճ, վարցաւ, վարօֆ, վարվարիկ-վերվերիկ:

ՎԱՅՐԱՊԱՆ «աւեր, բարուքանդ». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վկ. սուբ. էջ 34. «Այնուհետև զօրս գումարեալ, զաշխարհն ջանայր վայրապան առնել և խոպանացուցանել զգաւառսն Հայոց»։*

*ՎԱՅՔԱԲՈՎԹ «անփառունակ, թշուառական». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պտմ. էջ 40. «Արդ կարդասցուք գանուն աղիս մերոյ*

վայքաբովթ, քանզի բարձեալք են փառք յիսրայելէ քան ի հնումն առացելում»։

=Եբր. אִי כָּבוֹד i kābōd յատուկ անուան յն. Ὀϊαῖχαβώθ (նաև Ὀϊαιβαρχαβώθ) առառպարձութիւնից. բուն նշանակում է «անփառունակ, անպատիւ». համմտ. Ա. Թագ. դ. 21. «Եւ կոչեցին զմանուկն Վայքաբովթ... և ասեն. բարձեալ են փառք Իսրայելի յառնուլ տապանակին Տեառն»։—Աճ.

*ՎԱՆ «վռնտելը, քշելը, դուրս վտարելը» Ոսկ. ամբակ. որից վանել «յաղթելով վռնտել, դուրս քշել» ՍԳր. «հետը կռուիլ» վրք. հց. լմբ. պտրգ. վանումն Փիլ. եկ. վանիչ Շար. ճնդկավան «հնդիկներին նուաճող» Պատմ. աղէքս. ճանճվան «ճանճ քշելու գործիք», վանողական (նոր բառեր)։

=Պհլ. vānītan «նուաճել, ընկճել», vānītār «նուաճող, ընկճող», vānišnih «նուաճում, ընկճում», զնդ. van «հարուածել, նուաճել», սանս. van, vánati «յաղթահարել».—պարսկերէնի մէջ կորած է այս բառը. տե՛ս Horn, էջ 298։ Այս բառերի միւս ցեղակիցներն են սանս. vána-, vani- «տենչանք, փափագ», vánati «սիրել, փափագիլ, ցանկալ, ձեռք բերել, նուաճել», զնդ. vanaiti «շահիլ, նվաճել, ցանկալ», լտ. venus «սէր, սիրոյ կիրքը», Venus «Սիրոյ աստուածուհին», veneror «կրօնական յարգանք ցոյց տալ, մեծարել», գոթ. wunan «հրճուիլ», հրգ. wunsken, գերմ. wünschen, անգսք. wȳskan «փափագիլ», հիսլ. una «գոհանալ», osk «փափագ», հին սաքս. winnan «կռուիլ», անգսք. wr̄ferwinna «հակառակորդ», հհիս. vinna «աշխատանք», հրգ. winna «կռիւ» են։ Այս բոլորի արմատն է հնխ. ven-, որի հիմնական նշանակութիւնն է «ջանալ, ջանք գործ դնել», որից մի կողմից «աշխատիլ, ձեռք բերել, նուաճել» և միւս կողմից «սիրել, ցանկալ» (Walde 818, Pokorny 1, 259): Հայ բառը փոխառեալ է իրանեանից. բնիկ ձևն է գուն «ջանք», որ ծագում է հնխ. von- կամ vōn- ձայնդարձից (տե՛ս Ցուխլ. գուն բառը). «նուաճել» իմաստը յատկապէս իրանեանների մէջ ենք գտնում։—Հիւբշ. 243, 494?

Նախ Böttich. ZDMG 1850, էջ 362 և յետոյ Arica 88, 434, Wurzelforsch. § 8, Lag. Urgesch. 440, Müller SWAW 38, 586, Justi, Zendsp. 266, Հիւբշ. Arm. St. § 261, Տէրվ. Նախալ. 106 կցեցին սանս. և զնդ. van բառի հետ։ Bugge, Etr. u. Arm. էջ 9 գերմ. Wunde «վերք» բառի հետ։ Հինք. լտ. bannire «վանել»։ Հիւբշ. 243 և 494 կասկածում է բնի՞կ թէ փոխառեալ ընդունելու մէջ, որովհետև իրանեանից դուրս ուրիշ համեմատութիւններ չունի։

*ՎԱՆ, ի–ա հլ. (Բուզ. ե. 27. կայ վանիւմ, յետնաբար նաև ու հլ.) «բնակութիւն, բնակարան» Մծբ. 374, 359 (համմտ. ՀԱ 1911, 748), բայց յատկապէս անհզաբար վանք «հիւրանոց, իջևան, օթևան, բնակավայր» ՍԳր. Սերբ. Եղիշ. «կրօնաւորների մենաստան» Բուզ. խոր. Ջենոբ. որից վանական «բնակակից» Մծբ. վանական Ոսկ. մ. ա. 7, 23. վանատուր Ոսկ. յհ. ա. 5. վանապան «կարաւանապետ» Ա. Թագ. ժէ. 22, լ. 24. վանատու Ոսկ. մ. գ. 26, Փիլիպ. կամ վանատուր Բ. մկ. ղ. 2. Ագաթ. վանիկ «յարկ, բնակարան» Ոսկ. մ. բ. 25 (յգ. վանկուանք Թղթ. բարուք. Ոսկ. մ. բ. 25, Փարպ.) վանեար Բուզ. վանեւայր Բուզ. վանուայ Ոսկ. Փարպ. արգելավանք Ագաթ. իջաւան ՍԳր. (որ և իջևան խոր.) օթևան ՍԳր. Փարպ. շնավանք Մագ. վանահայր, վանամայր, վանքապատկան (նոր բառեր), վանուիլ «կրօնաւորուհի» (նորագիւտ բառ) Անկ. գիրք նոր կտ. 393—4, 410 (Սորա վանուհիք էին և ի պռոնկութիւն ընթացան. վանուհիք էին դորա, ի պռոնկութիւն ընթացան). տե՛ս նաև հարևան։

=Իրան. *wahana «բնակութիւն» ձևից համմտ. սանս. वसन vasana «բնակութիւն, բնակիլը, մի տեղ օթևանիլը» (वस् vas «բնակիլ» արմատից), որ պիտի տար իրան. *vahana, ինչպէս որ սանս. वसन vasana- «զգեստ, հագուստ» տալիս է զնդ. vanhana- «զգեստ» (սանս. वस vas «հագնիլ»=զնդ. vah- «հագնիլ» արմատից)։ Իրանական բառս դոյութեան և հայերէնի մէջ ստացած ձևաւորման ապացոյց են [1]) նոյն արմատից ā մասնիկով կազմած հպրս. āwahana->հյ.

աւան (Bartholomae, Altir. Wört. 333). 2) *Հյ.* հարևան *«դրացի», բուն «բնակակից», որ կազմուած է* հար-<*գնդ.* haδa- *«միասին» +*վան *բառերից. Համմ.* հարազատ, հարակաշ: *Որովհետև* հար- *ձևը առանձին գոյութիւն չունի հայերէնում, ուստի* հարևան, *ինչպէս և* հարակաշ *ու* հարազատ, *ամրողջապէս իրանեան բառեր են, և հետևաբար* վան *իրանեան բառ է:*

Brosset JAs. 1834., 369 *են Հյ.* աւան, *առնս.* vani, *վրաց.* vani *բառերի հետ: Նշի լծ.* աւան, *յորմէ և* Վան *քաղաք:* Böttich. Wurzelfor. 8 *արմատը դնում է* wan: Lag. Urgesch. 22 vas *«բնակիլ» արմատից:* Pictet *2, 240 առնս.* vana *«անառատ»: Մորթման,* ZDMG *31, 421 առնս.* vas *«բնակիլ»,* āvasana *«քաղաք» բառերի հետ: Տէրվ. Նախալ. 107 առնս.* vas, *գնդ.* vanh, *գոթ.* visan, vas *ձևերի հետ՝ հնխ.* vas *«բնակիլ» արմատի տակ: Սրուանձտեանց, Համով հոտով 1884, 63 խաղաք համարելով օտար՝ բուն հայերէնը դնում է* վան: *Հիւնք.* վանել *բայից:* Müller WZKM *9 (1895), 299 ասում է թէ սխալւում է Հիւբշման, երբ* վան *դնում է Հպրս.* wahana=*առնս.* vasana *«բնակութիւն». պէտք է դնել առնս.* va-na- *«անառատ», իբր «վանականի տեղ»: Ըստ այսմ ուղիղ մեկնեց նախ Հիւբշման, բայց ո՞րտեղ. չկայ* Arm. Gram.: *ՀԱ 1897 նոյ. (կողի վրայ) պրս.* ban *«պարտէզ, արտորայ» բառից փոխառեալ. Համմ. նաև գերմ.* wohnen *«բնակիլ»: Մաս* ЗВО *22, 67 իբր յարեթակեան բառ՝ կցում է Հյ.* աւան, բան *«գործ», երկրորդ սիւնակի լեզուով* human *«քաղաք», վրաց.* ubani *«գիւղ, հրապարակ»,* bani *«կտուր»,* dabani, dabay *«գիւղ» բառերին: Իբրև իրանեան փոխառութիւն է ընդունում* Meillet REA *9 (1929), 133: Պատահական նմանութիւն ունին չերքէզ.* wunə *«տուն», արաբ.* وطن va'n *«ապաստարան» (Կամուս, Քրք. Քրմ. Գ. 717),* وتك vank *«բնակիլ, հաստատուիլ» (անգ. 121) և ափխազ.* аγnə *«տուն», որ* Ч'арая, Объ отнош. абхазск. яз. *էջ 21 միացնում է վրաց.* vani *«տուն» ևն բառերին:* Pictet, *Բ տպ. Բ. 310 առնս.* vana *«տուն», Հբգ.* wohnên *«բնակիլ են» բառերի հետ:*

Գիւմ.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Սլմ. Տփ. վանք, *Գոր. Ղրբ.* վանք, բվանք, *Մրզ.* վանք, ուանք, *Տիգ.* վոնք, *Մկ. Վն.* վանք՝, *Հճ. Համշ. Ոզ.* վօնք, *Զթ.* վօնք, վոնք, *Ագլ.* վունք, *Սվեդ.* վիվունք, *Ասլ.* վանք, վա*, *Թրքահօս Հայերից՝ էնկ.* վանք *(Բիւր. 1898, 865):*

Փոխ.—Վրաց. ვანი վանի *«տուն, բնակարան»,* სავანე սավանե *«վանք, բնակարան»,* მევანე մեվանե *«բնակիչ»,* უსავანო ուսավանո *«անբնակ»,* დავანება դավանեբա *«դադրիլ, հաստատուիլ»,* დავანებული դավանեբուլի *«հաստատաբնակ»:— Ըստ Թուրեան, Բիւր. 1899, 799 Տարէնտէի թուրքերն էլ ունին հայերէնից փոխառեալ* fenk *«վանք», բայց ի հարկէ իրրև յատուկ անուն տեղւոյ, որովհետև թուրքերը վանք չունին:*

ՎԱՆ *«բիւրեղ». արմատ առանձին անդրծածական, որից կազմուած են* վանի *«բիւրեղեայ» Եզնկ. ա. 22 (սեռ.* ական վանի *ձևով), Սասն. 67 (դուռն վանի «վանականից շինուած դուռ»), Եփր. արմաւ. 56 (բց. յականց վանեաց),* վանագոյն *«բիւրեղագոյն» Ոսկ. Ես. 370.* վանական *Վեցօր. գ. էջ 50, 51, Շիր.* վանեայ *«բիւրեղեայ» Ես. ծգ. 12. Ոսկ. Ես:*

Պատկ. Драгоц. камни, *էջ 30* վանական *մեկնում է* Վանի *(Վան քաղաքի) ակն: Հիւնք. պրս.* بانو bānū *«բարակ շիշ». (բառիս ծագումը անյայտ է): Կայ նաև արաբ.* وَنِيَة vaniya, وَانَات vanāt *«մարգարիտ» (Կամուս, Քրք. Քրմ. Գ. 953):*

ՎԱՆ *«բոտում, բևեկնի», որից* վանի խաժ *«բոմի ծառի խէժը, արաբ.* فاوانيا-ուլդատրա *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2861:*

ՎԱՆԱՊ *«ամսի 14րդ օրը». ունի միայն Քաջունի, Հտ. Բ. 101, Հտ. Գ. 226:*

ՎԱՆԱԿ *«ոչխարների մեծ հօտ». ունի Քաջունի, Հտ. Բ. 101, Հտ. Գ. 226:*

Վանական *տե՛ս* Վականակ:

ՎԱՆԳ «ոսկոր». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Տիմոթ. կուզ, էջ 37 և 282. «Տեսցեն զվանգս մարդկան՝ յանցաւորացն». առնուած է Ես. կղ. 24 համարից, որ մեր Ոսկեդարեան թարգմանութեան մէջ այսպէս է. «Եւ տեսցեն զոսկերըս մարդկան առ իս յանցուցելոց» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 99)։

*ՎԱՆԳ կամ ՎԱՆԿ, ի հլ. «հնչիւն, ձայն» Նիւս. բն. Մագ. Նար. «հեգ» Բր. քեր. «երգի եղանակ» Արծր. «երաժշտական մի խազ» ԱԲ. որից վանգել «հնչել» Երզն. քեր. Իրեն. առ լեհ. վանգիւն Արծր. վանգաճալ Քեր. քերթ. երկվանկ Երզն. քեր. երկավանգ Փիլ. լին. եռավանգ Փիլ. լին. շարավանգել «ձայնակցիլ» Շիր. փափկավանկ ՅՀ. կթ. նոր գրականում գործածական է միայն վանկ «հեգ» ձևով, որից նոր բառեր են վանկական, վանկատուրիւն, վանկաբաժանում, ևն։

=ՊՀլ. ʾ ש ו vāng «ձայն, աղաղակ», մանիք. պհլ. אונ vāng (Salemann 3AH 8, 71), պազ. vāng «ձայն, աղմուկ», vagined, vagined «ճչում, ճռում է», պրս. آواز bāng «ձայն, հնչիւն», bāngīdan «ձայն տալ», բելուճ. gvānk՝ «արձագանք, գոչիւն, հնչիւն», քրդ. bank կամ vank, զազա veng, veiî «ձայն, աղաղակ, միւզղինի կոչը» (Horn § 177)։—Հիւբշ. 243։

ՆՀԲ պրս. պանգ, լծ. լտ. vox: Müller SWAW 38, 576 և 39, 404 պրս. bāng, քրդ. veng, փարսի vāng: Justi, Zendsp. 263 զնդ. vač արմատի տակ՝ վերի ձևերի հետ։ Lag. Btrg. bktr. Lex. 73 պրս. bāng ևն։ Տէրվ. Նախալ. 105 հնխ. vak «գոչել, խօսիլ» արմատի տակ՝ սանս. զնդ. vač, լտ. vocare, vox, պրս. bāng, āvāz ևն բառերի հետ։ Հիւնք. պրս. պանկ:

ԳԻՒՒ.—Շմ. վանգ-վանգ «հեգել». օր. Այրբեն-գիմը պրծալ ա, վանգ-վանգ ա սօրվում։

ՎԱՆԳԱԼԱՐ. անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ամբակ. (տպ. Լմբ. ժբ մարգ. էջ 156), որ մեկնելով Ամբակում մարգարէի Գ. 9. «Զարթեաւ աղեղն քո, զնետս կապարճից քոց արբեցուցեր» հատուածը, ասում է. «Զարթնութիւն՝ եռօրեայ յարութիւնն ասէ. և զի աղեղնաւորեալ յԱստուծոյ ի վանգալարի՝ պրկման ձեռին իւրոյ չարդեաց զամուրս Բելիարայ»։ Թուի թէ բարդ բառ է, կազմուած լար բառով, որով վանգ «աղեղ»։

ՎԱՆԴ. արմատ առանձին անգործածական, «հալածել, վանել, աւերել» նշանակութեամբ. որից վանդել «հալածել, վանել» Պիտ. «բռնել» Իրեն. հերձ. էջ 182 (գրուած է երկիցս վանգել. ուղղել. այսպէս՝ ըստ Վարդանեան ՀԱ 1910, էջ 306), վանդիլ «հիւանդութեամբ կամ ցաւով բռնուիլ» Ոսկ. մ. բ. 15. վանդումն «հալածում, աւերում» Պիտ. անվանդ «անպարտելի» Իմ. ե. 20 (փխ. անվկանդ), հինաւանդ «աւերիչ» Ոսկ. ես. 97. հինաւանդութիւն «թալան» Ոսկ. ես. 81։

ՆՀԲ վանդել և վանդակ կցելով իրար՝ դնում է «լծ. հյ. պնդել, պրս. پختن, իբր արմատ բառիս հիւանդ, որպէս և պրս. վէնա է աշխատութիւն, տարժանումն»։ Bugge, Etr. u. Arm. էջ 7 եւրուսկ. vanθ «մահուան աստուածուհին» և KZ 32, 27 սանս. bandh=գերմ. binden «կապել» բառերին ցեղակից. վ ձայնի անկանոնութեան համար ենթադրում է ni- մասնիկով nibhndho-> *նվանդեմ նախաձևը, որից ն-ի անկումով էլ՝ վանդել: Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. 208 վանդակ բառի հետ պրս. band «կապել»։ Հիւնք. վանել բայից։ Bugge, Lyk. Stud. 1, 11 կարիական βανδα «յաղթանակ»։ Scheftelowitz BB 29, էջ 21, 43, 62 կցում է գոթ. wunds «վիրաւոր», յն. γατάλαι «վէրք» և ἄτη «պատուհաս» բառերին։ Յիշում է Pokorny 1, 212 հնխ. u̯en- «զարնել, վիրաւորել» արմատի տակ և մերժում վ-ի պատճառաւ։ Կապ չունի պհլ. ʾ ו נ ד ו vānītan, մանիք. պհլ. אנידן vānīdan (3AH 8, 71) «հարուածել, յաղթահարել», որ է հյ. վանել:

*ՎԱՆԴԱԿ, ի-ա հլ. «թելից, ճիւղերից, չուանից, ուռուց, երկաթից հիւսուած որևիցէ բան. ինչ. ցանց, վարմ, ուրկան» ՍԳր. «կասկարայ» Ել. լ. 3. լէ. 16, «զամբիւղ, կողով» Գծ. թ. 25, Ռ. կոր. ժա. 33. «վանդա-

կապատ, ճաղեր» Պտմ. աղէքս. «վերնատուն» Ճառընտ. Վրք. Հց. (գրուած է վանդանակ Պտմ. աղէքս.), որից վանդակել *«կապել» Եզեկ. իէ. 24, «զօրք հաւաքել» Բուզ. դ. 11 (այս բառը Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1906, 398 ուղղում է* բովանդակել*), «կողովի մէջ դնել» Ճառընտ.* վանդակագործ *ՍԳր.* վանդակապ *Ա. մկ. ղ. 37. Եփր. մն. 469. ունինք նաև հրավանդ «կրակի կասկարայ» Նորագիւտ բ. մնաց. ղ. 16, որ ցոյց է տալիս թէ պարզ արմատն է* վանդ *«կապել կամ հիւսել»։*

=ՊՀլ. *vandak ձևից փոխառեալ, ինչպէս ցոյց են տալիս Հյ. բառի նախաձայնը և -ակ վերջաւորութիւնը։ Բառիս արմատն է *vand, որ ծագում է հնխ. yendh- «ոլորել, հիւսել» արմատից և որի բնիկ Հյ. ներկայացուցիչն է գինդ (ցեղակից միւս ձևերը տե՛ս անդ)։ Ո՛չ պահլաւերէնի և ոչ էլ իրանեան որևէ բարբառի մէջ չէ պահուած այս արմատը և միայն հայերէնն է, որ ապացուցանում է նրա երբեմնի գոյութիւնը։ Պարսկերէնում հնխ. yendh->իրան. *vand պիտի դառնար* band, *որով և շփոթուէր ու միախառնուէր հնխ.* bhendh->պրս band *«կապէլ» նոյնաձայն և մերձանիշ արմատի հետ։ Եւ թերևս այս շփոթման պատճառով է *vand արմատի կորուստը պարսկերէնում։ Սակայն կայ պրս.* بندك bandak *«բամբակի քուլայ՝ մանելու համար», որ պրս.* بند band< *հնխ.* bhendh *«կապել» արմատից աւելի պրս. *band<իրան. *vand<հնխ. yendh- «հիւսել, ոլորել» արմատն է ցուցահանում։ —Աճ.*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 169 վանդակ *հանում է պրս.* بند band *«կապ» բառից։ ՆՀԲ տե՛ս* վանդել*։ Տէրվ. Մասիս 1881 մայիս 11 գոթ.* vidan *«կապել, մանել», գնդ.* vadh *«հագցընել»։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գրակ. 208 պրս.* band *«կապել» բառից։ Հիւնք.* վանել *բայից։ Կուրտիկեան, Արեւելք № 4185 սանս.* բանդ, *պրս.* պէնտ *«կապել»։* Scheftelowitz BB 29, *էջ* 21, 43 *և* 62 *գոթ.* windan, *գերմ.* wenden *«դարձնել» բայերի հետ իբրև բնիկ հայ։ Պատահական նմանութիւն ունի իրան. վախի բարբառով* vandak *«կապել»։*

ՎԱՆԶՆԱՏ *«մի տեսակ պանիր» Վստկ. 220—221 (հինգ անգամ գործածուած՝ առանց ձեռագրական տարբերութեանց. ուստի յայտնի չէ ինչո՞ւ ՆՀԲ հակառակ սրանց և արդի գաւառականների վկայութեան՝ գրում է* վարձնատ. *ունի նաև* վարձն, վարձնեաւ՝ *առանց վկայութեան)։*

ԳԻՒ.—Ըստ ՆՀԲ վանճնատ, *որ դարձել է Ախց. Ախք. Բբ. Կր.* վազնատ, *Համշ.* վօզնադ *(վերջինիս մէջ օ ցոյց է տալիս որ նախաձևն է* վանճնատ*)։ Շատ հետաքրքրական ձև է մածնատ, որ յիշում է Բիւր. 1900, 325 բ և որ ցոյց է տալիս թէ բառը կազմուած է* մածուն+նատ *ձևերից։ Ձևափոխութեանց շարքը կարելի է ներկայացնել հետևեալ ձևով. [1]) մածնատ, որից ն կրկնուելով նախորդ վանկում (նախատութիւն), [2]) մանճնատ, որից մ-ն ձայնների տարանմանութեամբ, [3]) վանճնատ, որից էլ նճ բաղաձայնից առաջ դառնալով զ՝ [4]) վազնատ (հմմտ. բնակալ>բզկալ)։ Տե՛ս և տակը փոխ.—Աճ.*

ՓՈԽ.—Լազ. vaznaki *«թելպանիր» (փոխառեալ է հայերէնից նճ, նճ>զ ձայնափոխութեան պատճառաւ), վրաց.* ანძლატი *անձլատի «творогъ» ըստ Ջուբինով[2] 40 (որ լ յառաջանում է ն-ից տարանմանութեամբ, փխ. *անձնատի)։ Բայց ի՞նչ կապ ունին Բրբ. գւռ.* միճնի, *լազ.* միճջի, *հյ. գւռ. Տր.* միճնի *«թելպանիր»։*

Վաշախ, Վաղաղ *են տե՛ս Ասղակ։*

ՎԱՇԽ, ի Հլ. (յետնաբար նաև ու, ո Հլ.) «անիրաւ և չափից աւելի տոկոս» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 36. որից վաշխել *«վաշխ առնել» Կանոն. էջ 113. Երզն. մտթ. 409. Վրք. Հց. բ. 163.* վաշխավաճառ *Մծբ.* վաշխառ *«առնուած վաշխը» Աթան. 448.* վաշխառու *Կանոն. Լմբ. առակ.* վաշխառու *Կանոն.* վաշխաժողով *Մանդ.* վաշխամիտ *Սարգր. 133։*

=ՊՀլ. ʍʃʌ) vaxš *«դրամի բերած տոկոսը». բուն նշանակում է «յաւելուած, յաւելում, մեծանալը», հմմտ. պՀլ.* ʍʃʌ)ʍʃʌ) vaxšītan *«մեծանալ»,* ʍʃʌ)ʍʃʌ)

vaxšišn «մեծանալը. մեծութիւն», գնդ. 𐬬𐬁𐬵𐬌 vaxšaiti «աճեցնել», uxšyeiti «աճիլ», սանս. वक्ष vakš वक्षति vakšati, वक्षयति vakšayati «աճեցնել»։ Սրանց նախաձևն է հնխ. aveq-s, որ աճած է aveg-, aug- «աճիլ» պարզական արմատից, որի միւս ցեղակիցները տե՛ս աճել. հայերէնի մէջ բնիկ ձևն է աճել։— Հիւբշ. 243։

ՆշՒ վրաց. վա՛սխի և վա՛խշի։ Տէրվ. Altarm. 24, Մասխ 1881 ապրիլ 30, նախալ. 105 իբր բնիկ հայ կցում է վիրի ընտանիքին՝ հանելով հնխ. vag, vaks արմատից։ Ուղիղ մեկնեց Հիւբշ. ZDMG 46, 329, Թրգմ. ՀԱ 1892, 355։ Հինք. բաշխել բայից։

ՓՈԽ.—Վրաց. ვიხი վասխի, ვახში վախշի «ապօրինի տոկոս», ვახვება վասխեբա «փոխ տալ, դրամը տոկոսի դնել», ხვახშე սավախշե «պարտք», მოვახშე մովախշե, მევახშე մեվախշե «վաշխառու», ვახვებითი վասխեբիթի «փոխադարձ»։

ՎԱՇԵՍԻՆ «խօսակից կամ ասաց». ունի միայն Բառ. երեմ. էջ 296։

ՎԱՇԿԱՒՆ «մի տեսակ թռչուն». ունի միայն Քաջունի, Գ. 226։—Արդիօք բաշկո՞ւլ։

Վաշոր «բաղշտակ, acorus calamus կոչուած բոյսը». ունի միայն Քաջունի, Գ. 226.—անշուշտ այլ բնթերցուած հյ. բաշխ (որ և վաշ, պրս. وجه) հոմանիշ ձևի։

ՎԱՇՏ, ու հլ. (յետնաբար ի հլ.) «մի դրօշակի տակ եղած մի խումբ զօրք» Բուզ. խոր. որից վաշտանալ «վաշտերի բաժանուիլ» Ագաթ. վաշտիկ «զինուոր» Օրբել. վաշտական «զինուոր» Բուզ. 198. խոր. Բ. խզ. վաշտակուրիւն ՅՀ. կթ. առ լհհ.։

=Փոխառնալ պէտք է լինի պհլ. *vašt «զօրագունդ» նշանակող մի բառից. այսպիսի բառ չէ աւանդուած իրանեան գրականութեան մէջ, բայց կայ պհլ. gast (հինք vašt) «զարձած», vaštan «դառնալ», որ իրանեան rt>št ձայնափոխութեան հիման վրայ յառաջանում է vartītan, gartītan «դառնալ», vartišn, gartišn «պտոյտ, շրջան», սանս. vart, vartate «դառնալ», պրս. گردیدن gardīdan «դառնալ, շրջագայիլ, պտուտկիլ», گاشتن gāštan «դարձնել», ગ્રદન gardana> գրտնակ (=լտ. verto «դարձնել», հին բարձր գերմ. werdan, գերմ. werden «դառնալ, լինել», ռ. вертеть «դարձնել, պտոյտ տալ, շրջել, ծակել», вертел «շամփուր», լիթ. verčiu, veřsti «դարձնել» են) բառից։ Բոլորի արմատն է հնխ. vert- «դառնալ, դարձնել» (Pokorny 1, 274, Horn § 886)։ Առհասարակ «խումբ» նշանակող բառերը կապ ունին «բոլորակ» գաղափարի հետ. ինչ. գունդ, պար, գումարտակ, ճամբար («մանևակ. 2. բանակ» <պհլ. čambar «շրջանակ»), տճկ. pop, լտ. circulus, ֆր. cercle, ռուս. кругъ, кружокъ, որոնց հետևողութեամբ նաև աշխ. շրջան «կլորակ, բոլորակ. 2. խումբ մարդոց»։—Ա.Ճ.

ՆշՒ լծ. լտ. vexillum «դրօշ», veles velitis «թևթևակէն զինուոր»։ Հինք. էջ 168 վաշխ բառից։

ՓՈԽ.—Վրաց. ვაშტი վաշտի «ձիաւոր զինուոր, հեծեալ» Օր. իա. 1։

ՎԱՋ, ի հլ. «սայլ, մանաւանդ վրան մորթով ծածկուած» Ոսկ. մ. գ. 16. Ղև. ժա. էջ 39, 40, որ և վաշէ «նոյն նշ». Ասող. Սիմ. ապար. 31. որից վաշկատուն «վրանաբնակ, թափառաշրջիկ, սայլերի մէջ բնակող բոշոր» Բուզ. գ. 7 (ենթադրում է արմատական *վաշիկ ձևը)։

Տէրվ. Նախալ. 106, 124 սանս. vāha, յն. ὄχος, հալ. vozŭ, լտ. vehiculum (աւելացնել նաև լտ. vehis, յն. ἔχος, հիսլ. vagn, լիթ. vežimas, հիսլ. fon) հոմանիշների հետ հնխ. vagha- «սայլ» բառից. արմատը vagh «երթալ»>հյ. վագել, վաջ, որից վաշ։ Հինք. լտ. vectura «սայլ»։ (Այս բառերը ըստ նոր լեզուաբանների ծագում են հնխ. veg'h «վարել, քշել, կառքը վարել» արմատից, որի վրայ տե՛ս վազ բառի առուգաբանութեանց պատմութեան մէջ. հայերէն բառը բնդհանրապէս նման է հնչում, բայց մանրամասնութեանց մէջ ո՛չ իբր բնիկ կարող է յարմարուիլ և ոչ իբր փոխառեալ բառ)։

ՎԱՌ *«վառած, փայլուն» Ոսկ. յհ. բ. 4. Խոր. Տաղ. «բորբոքում, այրիլ վառիլը» Նար. տաղ. Շնորհ. այրուր. որից* վառել *«այրել, բռնկցնել» ՍԳր. Եղն. Ոսկ. ես. Եփր. ծն.* վառիվառ *Լաստ.* վառ ի վառեալ *Նար. տաղ.* վառ ի վառեան *Տաղ.* վառումն *Եղիշ.* վառարան *Շար.* վառվառիլ *Յայտմ.* բոցավառեալ *Ոսկ. լուս.* լուսավառ *Խոր. Հռիփ.* կրակավառ *Գնձ.* հրավառ *Վրք. Հց.* ջահավառ *Մաշտ.* վառվառուկ *«մի տեսակ բոյս.* alyssum alpestre L*» (ըստ Տիրացուեան, Contributo § 156)» Գաղիան. բժշ. (տե՛ս* ալուսան *բառի տակ)։ Միջնադարեան ձև է* վառչիլ *Մխ. բժշ. 70, 90, Վրդ. առ. 333։ Նոր բառեր են* լապտերավառ, վառելափայտ, վառվռուն, խանդավառ *են։*

=*Բոլորովին նոյն է հնչում կամիս.* war *«վառել» բառի հետ. բայց ըստ որում հյ. նախաձայն վ-ով բառերը ընդհանրապէս բնիկ չեն, ուստի և* վառել *պիտի լինի փոխառութիւն կամ կամիսական ընտանիքից և կամ իրանեան համազօր մի բառից։ Կամիս.* war *«վառել» բառին նման են հսլ.* vrěti *«եռալ»,* variti *«եփել»,* varŭ *«տաքութիւն», լիթ.* virti, *լեթթ.* vir't *«եփել», ռուս.* варить *«եփել»,* варение *«եփում, եփ, կերակուր»,* вар *«խորշակ, եռացած ջուր, արեգական տաքութիւն» են։ Այս բառերը ոմանք դնում են առանձին հնխ.* ver *«եփել» արմատի տակ, ուրիշներ հնխ.* ver *«խոնաւութիւն, թաց» արմատին են միացնում, իբր թէ ջրի հոսելու, բխելու, եռալով դուրս ժայթքելու գաղափարից* (Berneker 334, Boisacq 729, Pokorny 1, 268—9)։—*Ա.Ճ.*

ՆՀԲ լծ. հուր, այրել, *յն.* πῦρ, *լտ.* uro, ardens: Lag. Urgesch. 241 *հսլ.* wariti *«եփել»։* Pictet 2, 263 *պրս.* war, warazm. warāγ *և հսլ.* wariti *«եփել» են։ Տէրվ.* Altarm. 51 or, *վաղ են բառերի հետ՝ կցում է սանս.* uš *«այրել»,* uša *«փայլուն» են բառերին։* Canini, Et. étym. 27 *սանս.* vīra *«պղպեղ» բառի հետ։ Հիւբշ.* Arm. Stud. *§ 262 հսլ.* vrěti *«եռալ»,* variti *«եփել»,* varŭ *«տաքութիւն», լիթ.* virti *«եփել» բառերի հետ իբր բնիկ հայ։ Տէրվ. Նախալ. 106 հնխ.* var *«վառել, եռալ» արմատի տակ, համմտ. գոթ.* varmjan *«տաքացնել»,* vulan *«եռալ», լիթ.* virti *«եփիլ», յն. ատտ.* ἀλέα *«տապ», սանս.* ulkā *«հրդեհ», լտ.* Vulcanus *«Հրոյ դիք»։* Müller WZKM 9, 297 *գոթ.* varmjan, *գերմ.* warm *«ջերմ», պրս.* var *«տաքութիւն» են։* Bugge, Etrusk. u. Armen. 77 *հետուսկ.* verse *«կրակ»։* Bugge KZ 32, 56 *մերժում է համեմատել հսլ.* vĭrja *են բառերի հետ՝ իրարից տարբեր համարելով «վառել» և «եփել» նշանակութիւնները։—Հիւբշ. 494 նոյնպէս առանց պահով է համարում։ Հիւնք.* վարանիլ *բայից։ Յակոբեան, Բանաս. 1900, 37 զնդ.* haurva, *արաբ.* վուէ, վար *են։* Patrubány IF 14, 60 *լտ.* vēr, *յն.* ἔαρ *«գարուն» բառերի հետ է կապում։* Scheftelowitz BB 29 (1905), *էջ 42 սանս.* varṇu *«արև»,* varṇi *«ոսկի», հսլ.* varŭ *«տաքութիւն»,* variti *«եփել» բառերի հետ իբր բնիկ հայ։ (Մերժում է* Pokorny 1, 269, *որովհետև հնխ. u տալիս է հյ. գ)։ Սագըզեան ՀԱ 1909, 335 սումեր.* bar, *թրք.* parlamaq *«փայլիլ»,* Karst, *Յուշարձան 401, 403 սումեր.* bar *«փայլիլ, փայլակ, արեգակ», 408 սումեր.* ur *«տաքութիւն, կրակ, այրիլ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 367 փառ բառից! Մարտիրոսեան ՀԱ 1924, 458 Հաթ. (կամիս).* var *«վառել»։ Նոյնը անկախաբար Աճառ. Նորք 1925, № 5, էջ 393։* Scheftelowitz KZ 53 (1925), *էջ* 269, 252, 255 *ալբան.* vale, *հյ.* գոլ, *մրգ.* walm, *հսլ.* varŭ *«տաքութիւն», պրս.* var *«տաքութիւն», սանս.* varṇu *«արեգակ»,* urváši *«առիւծ»։ Պատահական նմանութիւն ունին արաբ.* وری varī *«բոցավառիլ» (Կամուս, թրք. Թրգմ. Գ. 946),* وار vār *«կրակ վառելու համար օջախ պատրաստել» (անդ, Բ. էջ 137)։ Տե՛ս և* վառել *«կպցնել»։ Կամիս.* war *«այրել» ձևին է կցում նաև* Benveniste BSL 33, *№ 99, էջ 136 և դնում հնխ.* wer-s- *արմատից, առանց անդրադառնալու թէ նախաձայն* w *տալիս է հյ. գ։*

ԳԻՒ.—Ալղ. Մշ. Ջղ. Սչ. վառել, *Ախց. Երև. Կր. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* վառէլ, *Ագլ. Ջթ. Խրբ. Շմ. Սվեդ. Տփ.* վառիլ, *Ասլ.* վառէ՝լ, *Սլմ. Վն.* վոռել, *Մկ.* վոռիլ, *Հճ.* վառել, *Համշ.* վառուղ (*բայց Ագլ.* վօռ «վառ, վառուած»)։ *Բրբախօս հայերից՝ Առն.* վառ «բոց»։ *Նոր բառեր են* վառման, վառոտել, վառուկ, վառվռիլ, վառվռի տալ, վառ *են։*

ՓՈԽ.—Վրաց. ვარვარი «վառ ի վառ փայլիլ, բոցավառիլ, առանց ծուխի վառիլ»։

ՎԱՌ «զինուիլ». *արմատ առանձին անգործածական, որից* վառել «զինել, զրահել, կռուի պատրաստել» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 8.* վառիլ «զինուիլ» *ՍԳր.* վառելիք «զէնք, զրահ» *Ճառընտ.* վառեալ «զինուած» *ՍԳր.* վառեցուցանել «սպառազինել» *Բ. մկ. դ. 40. Եփր. յես.* զրաւեալ վառ *Մծբ.* վառուած «սպառազինութիւն» *Ոսկ. Հռոմ. 65։—Համմտ. նաև տակը* վառել «կպցնել» *նշանակութեամբ։*

Pictet 2, 225 *առնս.* varman *են։* Justi, Zendsp. 268 *զնդ.* var «ծածկել, պահպանել», *258* vairi «զրահ»։ *Եագըճեան, Արեւելք 1884 հոկտ. 17* var «ծածկել» *արմատից։ Հիւբշ. 494 անապահով է գտնում համեմատել գոթ.* varjan, *գերմ.* wehren «արգիլել» *բառերի հետ։*

ՎԱՌ (*ի հլ. յետնաբար*) «բազաւորական քօղ» *Բուզ. Ե. 38. 3Հ. կթ. 181.* «դրօշակ» *Ուռհ. Մաշտ. ջահկ. որից* խաչվառ «եկեղեցական խաչանիշ դրօշ» *Մաշտ. (չունին ՆՀԲ և ԱԲ), որ է գուց.* խաչալեմ (*կազմուած հյ.* խաչ +*արաբ.* علم ʿalam «դրօշակ» *բառից)։*

=*Կայ պրս.* بار bār «քօղ», *որ ևթէ ծագում է պհլ.* *vār *ձևից, հայերէնը պէտք է սրանից փոխառեալ համարել։—Հիւբշ. 243?*

ՆՀԲ վառ «փայլուն» *բառից է ուզում հանել։* Lag. Arm. Stud. § 2096 *պրս.* bār, *որ յիշում է Հիւբշ. կասկածով։ Գ. Փառնակ, Անահիտ 1903, էջ 39 պրս.* farr «պերճութիւն», farri kayāni «շուք արքայական» (*հյ. փառ բառն է և կապ չունի այստեղ*)։ Karst, *Յուշարձան 401, 403 սումեր.* bar «պատուի պատմուճան»։ *Հացունի, Հայ դրօշները, էջ 8* վառ «դրօշ» *համարում է* վառել «զինել» *բայից, ինչպէս եւրոպական* arma «զէնք» *և «զինանշան»։ (Սխալ է, որովհետև* վառ *նախ նշանակում էր «քօղ» և յետնաբար միայն «դրօշակ» նշանակութիւնը ստացաւ։ Սակայն Հացունի Բուզ. Ե. 38 «Եւ թագաւորն Պարսից տանել թագ և պատմուճան, և զվառ թագաւորացն՝ տիկնոջն Զարմանդխատոյ» հատուածի մէջ* վառ *հասկանում է «դրօշակ»)։*

ԴԻՒ.—Սչ. խաչվառ։

ՎԱՌ «երաժշտական մի եղանակ. երրորդ կողմ, Գկ» *Քերթ. եկեղ. Ուռհ.։*

=*Յն.* βαρύς «ծանր», *որ երաժշտական լեզուով նշանակում է «բամբ ձայն, ցածր ձայն», իբր հակառակը՝* ὀξύς «սուր, զիլ, բարձր» և μέσος «միջին» *ձայների. որից նաև* βαρύτονος «baryton» (Bailly *350ա*, Sophocles *300*)։

Հներից Քերթ. եկեղ. մեկնում է «Իսկ կողմն նորին՝ բերկրալից ձայն, որ և վառ իսկ կոչի. այսինքն խիստ ձայնս։ Վերի ձևով մեկնեցին ՆՀԲ և Հիւնք.։

Վառապան *տե՛ս* վարապան։

ՎԱՌԵԱԿ (*կամ* վառեկ) «հատու ձագ՝ քիչ մը մեծցած (*ԱԲ*), մանաւանդ էգը (*ՀՀԲ*).» *չունի ՆՀԲ։*

=*Սրա հետ նոյն են վրաց.* ვარჩა **վարիա** «ընտանի թռչունի ձագ, հաւի վառեակ», *քրդ.* firik «վառեակ», *արև. Թրք.* ferik «թրուշնիկ». *բայց յայտնի չէ թէ ո՛րը որից է փոխառեալ։—Աճ.*

Հիւնք. արաբ. فارخ fārax «մուկ» *բառից է հանում։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1908, 122։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* فرخ farx «վառեակ, անասունի ձագ, ծառի ընձիւղ» (*Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 552*)։

ԳԻՒ.—Ախց. Կր. վառէկ, *Ալղ. Խոջ. Մշ.* վառեգ, *Մրղ.* վառէկ՝, *Համշ. Ննխ. Սեբ.* վառէգ, *Ասլ.* վառէգ (վառէ*, վառէյ), *Խրբ.* վառէ՛, *Վն.* վոռէկ, *Սլմ.* վոռէկ՝, *Երև. Ջթ. Սվեդ.* վառիգ, *Շմ.* վառիկ՝, *Տփ.* վարիկ, *Մկ.* վոռիկ, *Ջղ.* վառնէկ։ *Ունինք նաև փխբ.* վառեկ *Ոզմ. (ծծկ.) «Հարս», վառեկ աղջիկ*

Շլ. «9—12 տարեկան աղջիկ», վառեկիլ Արբ. «տունկերի թփաւորուիլ՝ աճիլ զարդանալը»։

ՎԱՌԵԼ «կպցնել, կապել, փակցնել». անաստոյգ բառ, որ երկու անգամ գործածում է Ոսկ. ես. 40. «Յորժամ կին մարդ զամենայն ինչ զառնն առեալ՝ զանդամօքն վառիցէ, տառապանք են առն և ընչիցն ծախք և թշնամանք՝ կնոջն անուղղայ զարդարանքըն։ Զի յորժամ զոսկի ի գլուխ և յականջս և ի բազուկս վառիցէ, կարճին այնուհետև ձեռք առնն յողորմութիւնս առնելոյ և ի անանկացըն խնամածութենէ»։ Այս հատուածների մէջ կա՛մ թարգմանիչը շարաշար սխալած է յն. ἅπτω «վրան կապել, վիզը անց կացնել» բառը շփոթելով ἅπτω «վառել, բորբոքել» բայի հետ և կամ թէ իրօք հյ. վառել ունի «կապել, կպցնել» նշանակութիւնը։ Վերջին պարագային հյ. վառել «դինել, զէնքերը վրան կապել» և վառել «այրել, բորբոքել» կարող են դառնալ նրա երկրորդական առումները. համմտ. գւռ. բռնել և բռնկիլ, կպիլ «կրակը բռնել, բորբոքիլ», կպցնել «վառել», կպչան, փակոց «բռնկցնելիք, մարխ»։

ՎԱՌՆԻԿ «մերձաւոր, մօտիկ մարդ». յիշուած է Հին բռ. հոմանիշների մի շարքի մէջ. «մերձ, հուպ, դրացի, առաջի, վառնիկ». ունի միայն ՆՀԲ. չեն յիշում ՋԲ և ԱԲ։

Վառօդ տե՛ս Բարուտ։

ՎԱՍՆ, անաստոյգ բառ. մէկ անգամ ունի Պիտ. 578. «Առից վասնցից զծերութեանս միտս իմաստից կորովիւք», ՆՀԲ մեկնում է «վարսել, հարստել, լծ. յն. βάσις «խարբսխումն»։

*ՎԱՍԻԼԻՈՍ «թագաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 296։

=Յն. βασιλεύς «թագաւոր», որի ծագումը անաստոյգ է դեռ (Boisacq, էջ 115)։—Ա՛ճ.

*ՎԱՍԻԼԻՍԿՈՅ «արքայիկ օձ, քարբ» Վրք. հց. բ. 379 (երկիցս)։

=Յն. βασιλίσκος՝ նոյն նշ. որի համաձայն վերի բառն էլ պէտք է ուղղել վասիլիսկոս. աւելի ընդարձակ տե՛ս բասիլիսկոս։

*Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

*ՎԱՍՄԱ «նիլի՝ լեղակի տերև» Կամրկ. «մի տեսակ օծանելիք կամ ներկելիք» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2866։

=Պրս. ماسما vasma «տերևն լեղակի, զոր կանայք Պարսից ծեծեալ և եռացուցեալ, այնու սևացուցանեն զյօնս իւրեանց. նաև զսպիտակացեալսն ի հերաց՝ նովին ներկանեն» (ԴԴ), արաբ. ماسما vasma «լեղակի տերև» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. էջ 575). սրանցից էլ վրաց. ბასმა բասմա «մազի սև ներկ»։—Ա՛ճ.

Այս մեկնութիւնս տպուած է ՀԱ 1908, 124. նոյնը յետոյ Նորայր ՀԱ 1925, 307։

*ՎԱՍՆ «համար, պատճառաւ. 2. միջոցաւ, շնորհիւ» ՍԳր. Ոսկ. ևն. սրանից են վասն զի «որովհետև, որպէս դի» ՍԳր. Ագաթ. վասն է՞ր «ինչո՞ւ», վասն այնորիկ, վասն որոյ ևն։ Միջին հայերէնում բառը դարձած էր վանց. ինչ. Կոստ. երզն. 135, 138. Անսիզք 13, 19 ևն։

=Պհլ. *vasn ձևից. համմտ. սոդդ. wás^{n} «վասն, պատճառաւ», մանիքէական պհլ. (հիւս.-արևմ. բարբառ) וסנאד vasnād «պատճառաւ, համար» (Salemann, ZAH 8 (1908), էջ 76), հպրս. vašna «շնորհիւ կամ ըստ կամաց, կամօքն», զնդ. وشنا vasna «ըստ կամաց», փոխառութեամբ դնչ. vaš «վասն», vašosi «վասն է՞ր»։ Հին պրս. արձանագրութեանց մէջ սովորական բանաձև է 𐎠𐎢𐎼𐎰𐎹 𐎢𐎼𐎰𐎹 𐎠𐎫𐎼𐎹𐎢𐎼𐎹𐎣𐎹 vašna Auramazdaha «կամօքն (կամ շնորհիւն) Արամազդայ»։ Այս բառերի այլ ցեղակից ձևերն են սանս. वच् vaç (ներկ. vâçmi) «ուզել, ցանկանալ, կամիլ, փափագիլ», uçant- «կամաւ, կամովին», զնդ. وشن vas «կամենալ», وشمی vasmi «կամիմ», وسه vasah- «կամք, փափագ, ցանկութիւն», յն. ἑκών «ըստ կամս, ազատակամ», ἄκων «ակամայ, հակառակ իր կամքին», ἕκητι «շնորհիւ, ի շնորհս, ի կամս, վասն, պատճառաւ», ἕνεκα (ἑνέκα) «պատճառաւ» ևն։ Այս բոլորի արմատն է հնխ. vek'- «փափագիլ, ցանկանալ», որ բնիկ լինելու պարագային պիտի տար հայերէնի մէջ *գես ձևը (Pokorny 1, 244, Boisacq 236—237)։

Ուղիղ համեմատեց նաև Ուրոպա 1849, էջ 200, որ կգում է հպրս. vasna, vašna *ձևերի հետ։ Նոյն իրանեան և սանս. ձևերի հետ են միացնում* Böttich. ZDMG 1850, 362, Lag. Urgesch. 548, Justi, Zendsp. *էջ 271։—Հիւբշ.* Arm. Stud. § 263 *իբր բնիկ հայ կգում է նոյն բառերին։ Բնիկ է ընդունում նաև Տէրվ. Նախալ. 105՝ իբր հնխ.* vaç, vask *«բաղձալ» արմատից։ Հիմնբ. յն. φάσις «բան, ասացուածք» բառից։ Բառիս ծագման վրայ վիճում են մի կողմից* Bugge KZ 32, 56, BB 17, 93, Meillet, Rev. crit. 1897, *էջ 388 (հյ. թրգմ. Բազմ. 1898, էջ 119) և* Pedersen, *Նպաստ էջ 2, որոնք նախաձայն վ-ի, միջին ա-ի և նշանակութեան պատճառաւ իրանեան փոխառութիւն են համարում հայերէն բառը, և միւս կողմից Հիւբշ.* Arm. Gram. 494 *և* IF Anz. *10, 46, որ բնիկ է համարում, առարկելով թէ իրանեան* vašn *ձևը պիտի տար հյ.* *վաշն *և ո՛չ թէ* վասն։ *Վճռական մեկնութիւնը տալիս է* Meillet MSL *17, 354 նորագիւտ մանիքէական գրուածքների մէջ գտնելով իրան.* vasn- *ձևը, որից ուղղակի փոխառեալ է հայը։*

Գիւռ.—Զթ. վանց, *Մշ.* վասն *«համար»։*

ՎԱՍՊԱՏՄԵԼ *«զանգիտել». ունի միայն Բառ. հրեմ. էջ 296։*

***ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ** *«ազնուական». Հաղուագիւտ գործածութեամբ բառ, որի սակաւաթիւ օրինակներն են՝ վասպուրական համարակար «ազնուականների հարկահաւաք» Սեբ. էջ 48, վասպուրական գունդ «ազնուականների բանակը» Սեբ. 45. կողմն վասպուրական գնդին «ազնուականների նահանգը» Սեբ. 45. (այս բառով Սեբէոս հասկանում է Վասպուրականը, որ դեռ այս անունը չունէր 6 դարում. առաջին անգամ Խորենացին է գործածում Վասպուրական՝ իբրև նահանգի յատուկ անունը, որ այնուհետև սովորական դարձաւ և անցաւ նաև օտարներին. Համմ. արաբ.* Basfurrajān, al-Basfurjan), **վասպուրականագոյն** *«ազնուականագոյն, առաւել ազնուական» Գիրք Թղ. 170 (Աստուած զարքայից արքայ անմահ արասցէ, և զքեզ. Տե՛ր, աւելի տերանց վասպուրականագոյն արասցէ զաւակուդ հանդերձ)։*

=Պհլ. vāspuhrakān *«Սասանեան պետութեան ազնուականների բարձրագոյն դասակարգը կամ ամէնից ազնուական ծոթը ընտանիքների անդամները»։ Նոյն բառը դարձել է սոգդ. նորագիւտ մի հատակոտորի մէջ* vīšpušī *«ժառանգ» (տե՛ս* Jackson IF 25, 181): *Ծագում է* vāspuhr *«աւագ» բառից, որից փոխառեալ է ասոր.* ܒܣܦܘܪܐ vaspurā (?) *«մեծամեծք, իշխանք»։ Բուն ծագումն է գնդ.* 𐭥𐭩𐭮𐭯𐭥𐭫 𐭯𐭥𐭮𐭥 vīsō-puθra *«որդի տան կամ ազգատոհմի», ճիշտ ինչպէս անգլսքս.* cyn-ing *«թագաւոր»=բուն «որդի տոհմի»։ Աւելին տե՛ս* սեպուհ *բառի տակ։—Հիւբշ.* Altarm. Ortsnamen *էջ 262, 470։*

Ուղիղ մեկնութիւնը տուել էր նախ Պատկ. Marep. *II. 22՝ ըստ* Olshausen, Zur Erläuterung, Berl. Monatyber. 1880 *թ.։*

ՎԱՍՏԱԿ, *ո հլ. (իսկ ժղ. բ. 19, Բ. կոր. ժ. 15, ժա. 23 ունին ի–ա հլ.) «աշխատութիւն, յոգնութիւն, գործ» ՍԳր. Սիբիր. Ագաթ. Փարպ. «շահ, աշխատութեան բերած վարձքը» Վեցօր. «յոգնած» Յուդթ. ժգ. 2. որից* վաստակել *«յոգնիլ, ձանձրանալ» ՍԳր. Ագաթ. վաստակ լինել «յոգնիլ, աշխատիլ» Ես. խե. 14, խէ. 15. վաստակաւոր ՍԳր. Վեցօր. Ագաթ. վաստակասէր Ոսկ. բ. տիմ. Եւագր. Բուզ. վաստակակից Ա. կոր. ժզ. 16. Վեցօր. վաստակաբեկ Ագաթ. գուրավաստակ Ագաթ. դժուարավաստակ Ոսկ. յհ. ա. 17. ծովավաստակ Ագաթ. մեծավաստակ Ոսկ. մ. ա. 1. նախավաստակ Բուզ. սնավաստակ Ագաթ. կիսավաստակ «կիսովի բաժնեկից ընկեր» Մխ. դտ. 432։*

ՆՀԲ լծ. վիշտ: Spiegel, Huzw. Gram. 190 *փարսի* vastāx, *պրս.* gustāx, *որոնցից փոխառեալ է հյ.* վստահ: Kuhns, u. Schl. Btrg. 3, 85 *յիշում է նոյնը։ Գարագաշեան, Մաղիկ 1891, էջ 89 և Հիւնք. յն.* βαστάζω *«բառնալ, բնոր տանիլ», βαστάγα «բառնալն զծանրութիւն»։ Թիւրեաքեան, Արիահայ բռ. 344 պրս.* بسدك basdak *«մշակական աշ-*

խաւտութիւն» և էջ 22 համավաստակ =*պհլ.* համաբաստակ: *Պատահական նմանութիւն ունին քրդ.* westan «*յոգնութիւնից կանգ առնել*», westek «*շուտ յոգնող ձի*», westandin «*ձին յոգնեցնել*» (*տե՛ս* Justi, Dict. Kurde, *էջ 299*):

Գիւր.—Ջղ. վաստակել «*յոգնիլ*», *Աղլ. Ղրբ.* վաստակ «*յոգնած*», վաստա՛կիլ «*յոգնիլ*», *իսկ Ախց. Կր.* վաստակ, *Ալշ. Երև. Մշ.* վաստագ, *Խրբ. Պլ. Սեբ.* վասդագ, *Սչ.* վասդ՛ագ, *Ր.* վասբագ, *Մկ. Վն.* վոստակ, *Մրղ.* վոստոկ՛, *Սլմ.* վոստոկ՝, *Տիգ.* վոսդոգ, *Ասլ.* վասդագ (վասդա*, վասդայ), *ՋԹ.* վասդօգ, վասդոգ, *ՀՃ.* վասդօգ *նշանակում են «շահ, օգուտ», որով և Վն.* վոստակել *(երկավանկ), Պլ.* վասդրգիլ, *Ննխ.* վաստրգել:

**վԱՏ, ի–ա *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «գէշ, չար» Մն. լէ. 17. Բ. մկ. է. 34. Ագաթ. Եփր. Թղ. «անպիտան, ծոյլ, անարի, թոյլ» ՍԳր. Եղիշ. Փարպ. Խոր. որից* վատիլ «*կուրանալ, աչքի լոյսը խաւարիլ*» *ՍԳր. Ոսկ. տիտ. վհեցօր.* վատանալ «*դանդաղիլ, ծուլանալ*» *Դատ. ժր. 8. Ոսկ. Եզն.* վատախորհուրդ *Օր. լբ. 31. Բուզ. Մծբ. Փարպ.* վատամտիլ *(չունի ՆՀԲ) Ոսկ. փիլ. 356.* վատամաճ *Կիւրղ. Թղ.* վատշուէր *(տե՛ս* շուէր). վատակոխ «*վատ ճանապարհ, որ ցեխոտ լինելով՝ անցնելը դժուար է*» *Կղնկտ. Հրտր. ՇՀնդ. Ա. էջ 165 (Հրտր. էմ. 53 ունի* վարակոխ). վատանձան *Բուզ. Կոչ. Ոսկ.* վատանուն *Կոչ. Եզն.* վատարի *Եւագր. 333.* վատասիրտ *ՍԳր. Նար. քր. ևն: Նոր բառեր են* վատաբանել, վատաճամբաւ, վատատես: *Նոր գրականի մէջ արևելեանը գործածում է սովորական «յոռի, գէշ» նշանակութեամբ, իսկ արևմտեանը «փոքրոգի, վատասիրտ,* lâche»:

=*Պհլ.* 𐭥𐭮𐭩 vat, *պազ.* vad, *մանիք. պհլ.* 𐭥𐭣 vad (Salemann ЗАН 8 (1908), *էջ 71), պրս.* بد bad «*գէշ, չար, վատ*». *բարդութեամբ ունինք պհլ.* vatbaxt=*պրս.* بدبخت badbaxt = *հյ.* վատաբախտ, *պրս.* بدنام badnām «*վատանուն*» *են: Պարսկերէնից են փոխառեալ բելուճ. աֆղան.* bad, bed, *քրդ.* bed (*բնիկ է* be «*գէշ*» Justi, Dict. Kurde *61), տճկ.* bet «*տձև, անվայելուչ, տգեղ*», *լազ.* badi, beyati «*տգեղ, վատ, չար*», badoba «*չարութիւն*» *են: Առանձին տե՛ս* վատար, վատախտարակ, վատգոհար, վատմիհր:—*Հիւբշ. էջ 243:*

Schröder, Thesaur. 46 *փոխառեալ պրս.* bad *ձևից, որին կցւում է հոլլ.* quaed «*չար*»: *ԳԴ պրս.* bad: *ՆՀԲ պրս.* պէդ, պէքէր: Windisch. 18 *անգլ.* bad «*վատ*» (*որի նմանութիւնը պարսկերէնի հետ բոլորովին պատահական է*): *Նոյնը նաև* Riggs, *Քերակ. էջ 61: Պրս.* bad *ձևին են կցում նաև* Böttich. Arica 82, 379, Lag. Urgesch. 945, Müller SWAW 38, 574 *են: Մորթման* ZDMG 26, 589 *բևեռ.* uedaçini *թարգմանում է «վատակուրծ», մեկնելով* ueda =*հյ.* վատ, *պհլ.* vat, *պրս.* bad+çini= *պրս.* sīne «*կուրծք*»: *Հիւնք.* վատ «*գէշ*» =*պրս.* bad, *բայց* վատ «*երկչոտ*»=*հյ.* վհատ *բառից: Սանուալճեան,* L'Idiome *10 խալդ.* badušini «*աւերեալ*» *բառի հետ:* Karst, *Յուշարձան 401 սումեր.* bad «*մեռնիլ*», *422 ՔՔր.* bat, baj «*ցած, հասարակ*»: *Մարզարեան, Ժամանակ 1927 օգ. 3* վեհ+հատ–անել:

Գիւր.—Ջղ. վատ, *Սլմ. Մրղ.* վոտ, *Երև. Մշ. Տփ.* վադ «*յոռի, գէշ*». *որից* վատիլ *Ակն. Խրբ. Ննխ.* «*նիհարիլ*» (*համմտ. Վրք. հց. բ. էջ 157 Որչափ վատի մարմին, այնչափ գիրանայ հոգին*). վատամարդի *Երև.* «*հետը թշնամացած, վատ մարդ դառած*»:

Փոխ.—Յունիներ մեր բառի հետ է միացնում վրաց. ვად ენ ավադի «*անարգանք, արհամարհանք*», ვადობა ավադոբա «*անարգութիւն*», *որոնց նմանութիւնը պատահական է:*

**վԱՏԱԽՏԱՐԱԿ «թշուառ, դժբախտ» Եղիշ. ը, էջ 111:*

=*Պհլ.* *vataxtarak>*պրս.* بداختر badāxtar «*վատաբախտ, չարաբախտ, թշուառ*», *որ կազմուած է* vat «*վատ*»+axtar «*աստղ*» *բառերից (որի աստղը վատ է):—Հիւբշ. 243:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ:

**վԱՏԳՈՀԱՐ «գոհիկ, ստոր ցեղից». արմատական ձևով չէ գործածուած, որից ունինք* վատգոհարութիւն «*վատազգի լինելը, ցեղի ստորութիւն*», *որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. յհ. բ. 37, էջ 900ա.*

«Չի եթէ զտնանկութիւնն թշնամանիցէ կամ զվատգոհարութիւն՝ ծաղր արա դարձեալ»։ Տպագրի մէջ իբրև երկու բառ գրուած է **վատ գոհարութիւն**, *իսկ* ՆՀԲ, *որից և* ԱԲ, *ունի* **վատագոհութիւն**: *Այսպէսով յիշեալ հազուագիւտ բառը չէ մտած բառարանների մէջ։*

=*Պհլ.* vatgōhar>*պրս.* بدگوهر badgōhar *«վատազգի, վատ ցեղից, վատաբարոյ», որ կազմուած է* vat>*պրս.* bad *«վատ»*+gōhar *«տարր, գոյացութիւն» բառերից (տե՛ս և* **գոհար** *«ակն, ակունք» բառի տակ)։—Ա՛հ.*

***ՎԱՏԹԱՐ**, *ի–ա Հլ. (յետնաբար ի Հլ. գրուած նաև* vappar, vapar*) «անպիտան, գէշ, յոռի» ՍԳր. Սեբեր. Եզն. «չար, ախտաւոր, մոլի» Արիստ. ստոր. Լծ. կոչ. որից* **վատթարել** *«յաղթել, նկուն դարձնել, խայտառակել» ՍԳր. Եղիշ. Խոր.* **վատթարիկ** *Ոսկ. բ. կոր. և յհ. ա. 2.* **վատթարութիւն** *Ա. կոր. ղ. 7. Բ. մկ. գ. 24. ժա. 13. Եզն.* **վատթարագոյն** *Իմ. ժե. 19, Եզն. Ոսկ. ես.* **վատթարանալ** *Ագաթ. ևն։*

=*Պհլ.* vattar, vatar, *պազ.* vadtar, *պրս.* بدتر badtar, بتتر battar, بتر batar, *որոնք նախորդ* vat>vad>bad *«վատ» բառի բաղդատական աստիճանն են ներկայացնում և նշանակում են «աւելի վատ, աւելի գէշ, աւելի չար». մասնիկն է* -tar*։ Պրս. ձևից են փոխառեալ քրդ.* batar, betir, *թրք.* beter, *ոմկ. պէթէր «աւելի գէշ»։—Հիւբշ. 243։*

Նախ Schröder, Thesaur. 46 *գնում է պրս.* badtar: *ԳԴ պրս.* **պէքէր, պէտքէր**, *ՆՀԲ «լծ.* **վբար**, *նոյն է ընդ պրս.* **պէքէր, պէտքէր»**, *իսկ ապականել բառի տակ՝ լծ. յն.* φθείρω*։ Պրս. ձևի հետ են համեմատում նաև* Spiegel, Huzw. Gram. 189—190, Lag. Btrg. bktr. Lex. 73 *են։ Թօփուզեան, Արծիւ Վասպ. էջ 45* **վատ**+**բիր** *բառերից։*

ԳԻՒ.—Տփ. **վաբար, վաբբար** *«աւելի գէշ»։*

ՎԱՏԻՆ *«պարապ տեղը ցրուել, տարտղնել». արմատ առանձին անգործածական. ամբողջ ձևով երևան է գալիս վայրավատին «զուր ցրուած, տարտղնած» Ոսկ. ես. Վեցօր. 64. Սեբեր. բարդի մէջ. սղեալ ձևով ունինք՝* **վատեել** *«փճացնել, պարապ տեղը ծախսել, սպառել» ՍԳր. Ագաթ. Մանդ. Եղիշ* **վատնութիւն** *Ոսկ. մ. գ. 4.* **վատնումն** *Պիտ. Փարպ. ՅՀ. կթ. գայլավատնեալ Մանդ. դիւրավատնելի Ճառընտ. Սարկ. քհ.* **վայրավատնիլ** *Եղիշ. Մանդ. սրանց հետ ունինք նաև* **ընչավատն** *Տօնակ.* **վայրավատիլ** *Եղիշ.* **չարախտավատ** *Ագաթ. § 21 (ՀԱ 1911, 55),* **փոխանակ ընչավատին, վայրավատնիլ, չարախտավատին**։

ՆՀԲ **վատ** *բառից։ Հիւնք.* **վաճ** *բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 320 պրս.* بربد barbād *«աւերուած» ձևից դնում է* **վայրավատ**, *որից* **վարատել, փարատել, վատնել**։

ԳԻՒ.—Ախց. **վատնել**։

ՎԱՏԻՐԱԿ *(որ և* **վատեռակ, վատիրոն**) *Գաղիան, որ մեկնում է «յն.* **որոկոմ»**։ *Այս բառով ՆՀԲ հասկանում է* ὀροκάρυνος *«լեռնային կամ վայրի կաղին»։ ԱԲ և ՀԲուս. չունին։*

ՎԱՏԿԵԱԼ. *անստոյգ բառ. դիտէ միայն Բառ. երեմ. էջ 297 և մեկնում է անծանօթ կամ սխալատիպ բառերով՝ «նպատեալ, խոցացեալ, հարեալ, վատնեալ»։*

***ՎԱՏՄԻՀՐ** *«վատշուէր, գէշ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Արծր. 244. «նոր ումն նաբուզարդան կամ Զամբի յայտնեալ ի յաղանդոյն նեսաորի, երիքթշուառեան վատաշուէր, վատմիրհ (այսպէս ըստ Պատկ. իսկ Պօլսի տպ.* **վատամիրն**), *զազահութեանն չարիս ախտացեալ»։ (Տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատեն, Ա. 208)։*

=*Կազմուած* **վատ** *«յոռի, չար»*+**Միհր** *աստուծոյ անունից, որ այն ժամանակ ժողովուրդի մէջ վատ ածական էր դարձել։ Ըստ այսմ բառիս կազմութիւնը նոյն է, ինչպէս արդի գռ.* **չարլիանոս**=**չար Յուլիանոս**։

Ուղիղ մեկնեց Ր. Աւդալբէգեան, ՀԱ 1928, 416—7։

Վատնել *տե՛ս* **Վատին**։

ՎԱՏՈՒՏ *«տնանկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 297։*

***ՎԱՐ** *«հողը հերկելը, վարուցան կամ հերկած հող» Մն. խե. 6. Ագաթ. Ոսկ. ես. և մ.*

Վեցօր. «գործածութիւն, կիրառութիւն». *Փիլ. Լմբ. (մանաւանդ ոճերի մէջ՝ ի վար արկանել, ի վար առնուլ, ի վար տալ «գործածել» Պիտ. Փիլ. Նիւս. կազմ.), «կեանքի ընթացքը, կեանք» (ու հլ. և միայն անեղաբար) Յոր. է. 1. Ա. պետ. բ. 12. Ոսկ. մ. բ. 11. Ես. պատմ. որից* **վարել** «հերկել, մշակել» *ՍԳր. Ագաթ.* «քշել, տանիլ» *ՍԳր.* «ուղղել, ղեկավարել, գործը առաջ տանիլ» *ՍԳր. Եզն.* «ապրիլ, կեանք անց կացնել». *Ա. կոր. է. 31. Ա. տիմ. բ. 3.* «գործածել, հետը այնպէս շարժիլ» *Ես. քր.* «վռնտել, դուրս քշել» *Տաթև. ամ. 424.* **վարելիք** «ձիու սանձը» *Ոսկ. երր. 564.* **վարիչ** *ՍԳր. Վեցօր. Եզն. Ես. քր.* **վարչաւոր** *Ոսկ. բ. կոր. ժէ.* **վարչապետ** *(նոր բառ).* **վարուն** «բանուկ ճանապարհ» *Առակ. ժե. 20.* **վարոց** *Սակր. 3Հ. կթ.* **վարոցաւոր** *Ոսկ. մ. ա. 23. գ. 13.* **խաչագլուխ վարոց** «եկեղեցական մի սպաս» *Օրբել. Հրար. էմ. էջ 81.* **վարոցել** «ձեւծել» *(չունի ՆՀԲ) Վրք. և վկ. Բ. 313.* **վարոտել** «բոլորն էլ քշել» *(նոր բազիւտ բառ) Սիւն. քեր. 213.* **վարնորդ** «վարուցանք անող» *(չունի ԱԲ) Առաք. պատմ. 234.* **կառավար** *ՍԳր. Եզն. Ոսկ. փիլիպ.* **բրոնավարել** *Ագաթ.* **գերեվար** *ՍԳր.* **գիշերավար** *ՍԳր. Կոչ.* **գործավար** *ՍԳր.* **զօրավար** *ՍԳր.* **ժողովրդավար** *Կոչ.* **ամբոխավարութիւն** *(նոր բառ).* **իշավար** *Ոսկ. Վեցօր.* **խաուճավար** *Կոչ. 415.* **խոշորավար** *Եւագր.* **մարդավար** «մարդածախ» *Եզնկ. լզ. 13, 14. Եփր. յես. ևն ևն։ Բոլորի հիմնական նշանակութիւնն է «քշել»։ Իմաստների զարգացման համար հմմտ. լտ.* colo «մշակել. 2. ապրիլ» *(ինչ.* colere agros *հող մշակել,* colere vitam *կեանք վարել, ապրիլ), թրք.* sürmek «քշել. 2. մղել. 3. դուրս վտարել. 4. աքսորել. 5. հերկել, հող վարել. 6. տևել. 7. բուսնիլ, աճիլ» *(որից* sürgün *աքսորեալ,* sürü *հօտ,* sürünmek *թշուառ կեանք վարել,* sürüji *ձիապան,* sürtük *դատարկաշրջիկ,* ömr sürmek *լաւ կեանք վարել, լաւ ապրիլ։*

=Իրան. vað- «վարել, քշել» *ձևից, որ թէև յետոյ կորած է, բայց կայ զնդ.* vāδayeiti «վարել, քաշել, քաշ տալ»։ *Պատկանում է հնխ.* vedh- «վարել, քշել, տանիլ, առաջնորդել» *արմատին, որի այլ ժառանգներն են հիւս.* feθim «վարել, առաջնորդել», *կիմբ.* ar-weddu «վարել, բերել», *լիթ.* vedù, *հպրուս.* weddē, *լեթթ.* vedu, *հսլ.* vedą, vesti «տանիլ, առաջնորդել», *ռուս.* водить «առաջնորդել, տանիլ», воевода «զօրավար», водитель «վարիչ», веденіе «տանելը», поведеніе «վարք»։ *Նոյն արմատը հենց նախալեզուեան շրջանում նշանակում էր նաև «ամուսնանալ», այն է «կին տուն տանել», որի շարունակութիւնն են՝ հռուս.* водить жену «ամուսնանալ», *նաև հսլ.* veθą «ամուսնանալ». *լիթ.* veθù, *կիմբ.* dy-weθθĩo «ամուսնացնել», *զնդ.* vaδrya «կարգելու ա՛ղջիկ», vaδū «կին, հարս», *սանս.* vadhû «հարս», *լեթթ.* vedama «հարս», *ինչպէս նաև յն.* ἕδνον «օժիտ», *հրգ.* widomo, *գերմ.* witthum «օժիտ, տուայր», widmen «ձօնել» (Pokorny 1, 255, Trautmann 344, Boisacq 215)։ *Նոյն արմատը կայ նաև ուգրո-ֆինական լեզուախմբի մէջ. համմտ. ֆինն.* vetä, *էստն.* veda, *մորդ.* väd'a, *չերեմ.* büd-, *հունգ.* väzä-, *բոլորն էլ նշանակում են «վարել, քաշել, տանիլ»* (Szinnyei, Finn-ugr. Sprachwiss. *էջ 21)։—Ա՛ճ.*

ՆՀԲ **վար** «ցանք» *=յն.* ἄρουρα, ἀρότρίασις, *լտ.* aratio, **վարել** *=պրս.* **վարանեէն**, *նոյն է և յն.* ἀρόω, *լտ.* aro: Peterm. 18 *սանս.* vah: Diefenbach, Berl. Jahrb. 1843, 446 *սանս.* vah, *բայց ո՛չ գոթ.* faran, *լտ.* vehere: Lag. Urgesch. 240, 242 *զնդ.* vərə, xšaθra vairya, Böttich. Arica 24, 74, Lag. Urgesch. 242, Gesam. Abhnd. 192 *Պրոկոպիոսի* οὐαρίζης *բառը մեկնում են հյ.* **վարիչ**, *բայց* Lag. Arm. Stud. § 2112 *շրջմամբ կարդում է* οὐαζίρης *= արաբ.* vazīr «նպարքոս»։ *Տէրվ. Նախալ. 48, 106 հնխ.* var «ծածկել, պատել» *արմատից, իբր սանս. զնդ.* var, *գոթ.* varjan *ևն։ Հիւնք. պրս.* վառանիէն, *իսկ* **մարդավար** «մարդածախ» *մեկնում է լտ.* de-vor-atrix *ձևով, որով* **վար** «սպառել»։ Meillet MSL 10, 280 *լիթ.* varaũ, varýti «վարել, առաջ քշել» *ձևի հետ, իբր բնիկ հայ։ Ցիշում է Հիւրշ.* IF Anz. 10, 49: *Նախաձայն վ-ի պատ-*

Հաստով մերժում է Pedersen, *Նպաստ 3 և Հայերէնի նախնական նշանակութիւնը դնելով «հերկել», կցում է* uror, *հարատութիւն բառերին, իբր* ar- *«հերկել» արմատից՝* up- *մասնիկով՝* *up-ar->վար: Scheftelowitz BB 29, 42 յն. ἐρύω «քաշել», լիթ.* varaũ *«վարել» բառերի հետ։* Karst, *Յուշարձան 401, 403 սումեր.* bar *«վարել», 424 ՖՓր.* bar, var *«երթալ, դիմել», չաղաթ.* bariš *«կերպ»,* bariq=*օսմ.* barq *«աուն»։* Oštir, Wörter u. Sachen 3, 206 **վարf**=*յն.* ὕπαρ *«ոչերազ, իրականութիւն», Թիրեաքեան, Արիահայ բռ. 346 պրս.* ورز varz *«գործ» բառից։* Scheftelowitz KZ 53 (1925), *էջ 254* ἔρύω *«քաշել», ալբան.* vёri *«ակօս», լտ.* urvus *(իմա՛* urvum, urbum) *«մահճ»։ Նոյնը* IF 33, 142 **վարոց** *կցում է լիթ.* varša *«արմատի բնձիւղ» բառին, որ յիշում է և մերժում* Pokorny 1, 289: *Պատահական նմանութիւն ունի արաբ.* ﻭﺭ var *«քշել, վանել» (Կամուս, Քրք. Քրգմ. Ա. 62)։—Վերի մեկնութիւնս* Meillet *(նամակ 1925 թ. փետր. 12) համարում է կարելի, բայց ոչ ապահով։* Nyberg, Hilfsb. 2, 233, **վարf** *փոխառեալ է դնում պհլ.* varišn *«վարմունք, կենցաղավարութիւն» բառից։*

ԳԻՒ.—Ալշ. Մղ. Ջղ. **վարել**, *Գոր. Երև. Կր. Ղրբ. Նախ. Ռ. Սեբ.* **վարէլ**, *Ասլ.* **վարէ՝լ**, *Խրբ. Շմ. Տփ.* **վարիլ**, *Սլմ. Վն.* **վոռել**, *Տիգ.* **վուռէլ**, *Ագլ. Մկ.* **վորիլ**, *Զթ.* **վայիլ**, **վարիլ**, *բոլորն էլ «հողը մշակել, հերկել», իսկ Ղրբ. «ցանել», ծծկ. Ոզմ.* **վարիլ** *«երթալ», Սչ.* **վարել** *«վանտել»։ Թրքախօս հայերից էնկ.* hokovard olmaq *«անհանգիստ լինել» (իբր հյ.* **հոգեվար**), garavellemek *«կառավարել, ճարել» (Բիւր. 1898, 865, 789)։ Նոր բառեր են* **վար** *«նաւի թիթ»,* **վարած** *«արտ»,* **վարատեղ**, **վարբնկեր**, **վարիչք**, **վարնուդ**, **վարովի**, **վարոտել**, **վարուիլ**, **վարելաւոդ**, **վարուցանել** *են։*

ՓՈՒՆ.—Վրաց. არტავარი *արտավարի (<հյ.* արտաւար*) «7 փթանոց չափ». տե՛ս նաև* **զor** *բառի տակ։*

վարագ *տե՛ս վայրագ (վայր բառի տակ)։*

ՎԱՐԱԳՈՅՐ, ի–ա *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ծածկոց, փարդա (պատուհանի, դռան, վրանի են)» ՍԳր. որից* **վարագուրել** *«ծածկել» Ագաթ.* **վարագուրանիգ** *«սենեակ» Ա. մկ. դ. 38, 57.* **վարագուրակալ** *(նոր բառ)։*

ՆՀԲ «ծածկոյթ վերուստ ի վայր կամ ի վերայ ապուցեալ»։ Նարդճեան, Արեւելք 1884 հոկտ. 17 սանս. var *«ծածկել» արմատից։ Հիւնք. պրս.* فرازیر farāzēr *«վերջաւորք, սփռոց»։* Karst, *Յուշարձան 401, 403 սումեր,* bara *«վրան, խորան»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 345 զնդ.* var *«ծածկոյթ»+պրս.* گیز gīr *«բռնել» բառերից։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Կր. Մշ. **վարագ'ուր**, *Համշ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ.* **վարաֆուր**, *Տփ.* **վարաֆուր**, **վարաֆուլ** *(համմտ.* **Գրիֆուլ**<**Գրիֆուր**<**Գրիգոր**), *Սլմ.* **վուրուֆիր**, **վուրուֆիւ**, *Վն.* **վուրուկ'ուռ**, *Մկ.* **վուռուկ'իլ**, *Զթ.* **վառագ'օլ**, **վառագ'ոլ**, *Երև.* **վարարֆու**, *բոլորն էլ «նկեղեցու խորանի վարագոյր»։*

***ՎԱՐԱԶ**, ի–ա, ու *հլ. «արու վայրի խոզ» Ագաթ. եղն. 66, 148. Բուզ. խոր. Փիլ. որից* **վարազագիր** *Բուզ.* **վարազաթև** *Վեցօր. 170. Եփր. Թգ. 358.* **վարազախառն** *Բ. մկ. ժ. 11.* **վարազանալ** *«կատղիլ» եղն.* **վարազօրէն** *Բուզ. երբեմն առնում է «մեծ, հասու» իմաստով. ինչ.* **վարազաչեղ** *«հասու չիղեր» Մծբ.* **վարազափողոց** *«լայն փողոց» Պոմ. աղէքս.։*

=*Պհլ.* varāz *(գրուած* varāč*), պրս.* ورز varāz, ورّاز vurrāz, گراز gurāz, *քրդ.* beraz, baraz, baras, *զնդ.* vārāza, *սանս.* वराह varāha *«վարազ»* (Horn § 896): *Իրանեանից է նաև ասոր.* ʾwrzʾ varzā *«վարազ»։—Հիւբշ. 244։*

ԳԻ պրս. **վիւռազ**: *ՆՀԲ լծ. պրս.* **վիւռազ** *լտ.* verres *«խոզ»։ Վերի ձևերի հետ համեմատում են* Klaproth, Mémoires 1, 435, Windisch. 21, Böttich. Horae 31, 49, Rudim. 40, 94, ZDMG 1850, 362, Arica 66, 73, Lag. Urgesch. 748, Pictet *1, 371*, Müller SWAW *38, 580 են*, Justi, Zendsp. 268, Lag. Ges. Abhd.

41, Bopp, Gram. comp. 1, 13 *են։ Մորթման* ZDMG *31, 417 կարծում է գտնել բևեռ.* artuharçav *կամ* artuharaçav *ձևի մէջ, որ մեկնում է* artu «մեծ»+ harçav «վարազ»։ *Հիմնք. նոյն է ընդ* ՆՀՐ։

Գիմ.—Գոր. Դրբ. վարազ, *Սվեդ.* վոռուզ, *երկուսն էլ «վարազ». իսկ Լ.* վարազ «արու խոզ»։ *Քրդերէնից է փոխառեալ Մշ.* բարազ։

Փիմ.—Հայերէնից է տառադարձած արաբ. بَرَاز barāz *Առակագրքի Թարգմանութեան մէջ՝ ըստ Մառ, Վրդ. առ. I. էջ 57։*

ՎԱՐԱԿ «կապ, հանգոյց. 2. ծառի ոսոխ ծունկ, ճիւղի կցման տեղը» *Բռ. առ. լհ. որից* վարակել «կապել, կապկպել, շղթայով կամ չուանով կապել, փխբ. և կրաւ. բմբռնուիլ, հիւանդութեամբ են բռնուիլ» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 26 և Փիլիպ. Փարպ.* ոսոսվ՛ վարակեալ *Իմ. ժգ. 13, որ և պարզապէս* **վարակոտ** «ոսոտղեր ունեցող (փայտի համար)» *Բռ. առ. լհ.* **վարակեցուցանել** *Լմբ. առակ. և աղ. սխալ գրուած* **վարկել** «կապկպել», **վարկեալ** «կապկպուած» *Ոսկ. մ. բ. 2 (ուր նաև կայ* **վարակեալ** «կապկպուած» *ձևը).* **վարակիչ** *(նոր բառ)։*

ՆՀՐ *պրս.* պարագ, վարագ, *Բրբ.* **հաբրագ** «տերև, սաղարթ, ծղօտ» *Տէրվ. Նախալ. 48, 107 հնխ.* varg *արմատից, իբր լտ.* vergere «հակիլ, ծռիլ», valgus «կոր», *սանս.* vṛjana «կոր»։ *Հիմնք.* վարկել *հանում է վարգիլ բայից, իսկ* վարակել՝ պարանոց *բառից։* Karst, *Յուշարձան 403 տումնր.* bar «կապ» և *հյ.* պարան, պարաւանդ։ *Թիրեաբեան, Աբրահայ բռ. 345 պրս.* بَرْك bark, وَرْك vark «տերև» *բառից։* Scheftelowitz KZ *53 (1925), 255 սանս.* urvári «շորից հանած թել, խծուծ», *հսլ.* vrŭvĭ, *լիթ.* wirwė։ *Պատահական նմանութիւն ունի վրաց.* ვარი վարի «վարակ, заража»։

ՎԱՐԱՀՐԱՄ «մատուտակ» *Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2869։*

ՎԱՐԱՆ *(սեռ.-ի, մանաւանդ անեզական, յետնաբար ի, ի-ա հլ.)* «տարակոյս, տագնապ, *մտմտուք» ՍԳր. Ոսկ. ես. և Եփես. Սեբեր. որից* **վարանել**, **վարանեցուցանել** *ՍԳր. Մանդ. Վրք. հց.* **վարանիլ** *ՍԳր. Ագաթ.* **վարանումն** *Եփր. աղ.* **վարանական** *Նար. ամենավարան Նար. էջ 2.* **վարանոտ**, **վարանիմ** *(նոր բառեր) են։*

ՆՀՐ լծ. **որոնումն**, պարան, **վարակումն**: *Տէրվ. Նախալ. 106* **վարել**, **վարմ են** *ձևերի հետ՝ հնխ.* var «ծածկել, պատել» *արմատից։ Հիմնք.* **վարաւել** *կամ* **վարակել** *ձևից։* Nyberg, Hilfsb. 2, 232 *փոխառեալ է դնում պհլ.* varan «փափագ, ցանկութիւն» *բառից։ Իմաստի տարբերութիւնը չի թոյլատրում այս նոյնացումը։*

ՎԱՐԱՆԵՔԱՏԵԼ «ցրուել», *որից* **վառանկոտ** «օտարական, չքոտ». *երկուսն էլ ունի միայն Բառ. հրեմ. էջ 296—7։*

ՎԱՐԱՊԱՆ (ի-ա *հլ. ըստ ՆՀՐ, բայց առանց վկայութեան*) «սանձ, հրասանակ» *Ես. լէ. 29. Եփր. ծն. էջ 52. Նար. էջ 240. որից* **վարապանակ** «նոյն նշ.» *Մծբ. 84։*

ՆՀՐ «գործի վարելոյ՝ վարակելոյ՝ վարանելւոյ»։ Ըստ Հիւբշ. 244 յարաբերութիւն չունի յաջորդի հետ։

***ՎԱՐԱՊԱՆ** «կուրծքը պահող գրահ» Ագթ. գրուած է վառապան «պահող՝ ազատող բան» Մծբ. 208 (առնուած է բարոյական առումով. տե՛ս ՀԱ. 1913, 489). աւելի սովորական է* **վարապանակ**, ի-ա *հլ. «զրահապատ թիկնոց՝ կռուի ժամանակ հագնելու համար» Ա. Թղ. ժէ. 38, 39. ժբ. 4. Բ. Թագ. ի. 8. (Հին բռ. մեկնում է «լանջանոց կամ վէշմակ»)։*

=Պհլ. *varapān, *varapānak *համանիշ ձևերից, որոնք կազմուած են պհլ.* Ա var> *պրս.* بر bar, *պնդ.* ورپان varah- «կուրծք, լանջ»+pānak «պահպանակ» *բառերից և նշանակում են բուն «կրծանոց, կուրծքի պահպանակ»։—Հիւբշ. 244։*

ՀՀՐ և ՆՀՐ **վարիլ** «գինուիլ» *բայից։ Ուղիղ մեկնեց* Lag. Arm. Stud. § 2105: *Սաղրճեան, Արեւելք 1884 հոկտ. 17 սանս.* var «ծածկել» *արմատից։*

Փիմ.—Վրաց. ჩოქანაგი ռոպանագի «панталоны на подкладке, шитые ватой»։

[ՎԱՐԱՌԱԲԱՆ կամ ՎԱՌԲՈՒՆ «առհասարակ ուսուցիչ». ունի միայն Բառ. երեմ. էջ 296—7։ Ռաբունայ բառի սխալ գրչութիւնն է. նախատառը հյգ. զ նախդիրն է, որի համար էլ Բառ. երեմ. երկու տեղում ևս գրած է «զառհասարակ ուսուցիչ»։]

ՎԱՐԱՏԵԼ «ցրուել, հեռացնել, մի կողմ քշել» Բ. մկ. ը. 17. Եփր. Թգ. 402. Ագաթ. Ոսկ. մ. և տիմ. որից վարատական «զաղթական, թափառական» Եւս. քր. վարատումն Եզեկ. ղ. 8. վարատեցուցանել Գնձ. Տաղ.։

ՆՀԲ լծ. փարատել, ի բաց վարել, պրս. վարանդեն: Հիւնք. վարել բայից։ Մառ, Грам. др-арм. 44 վայրածել բայից։ Karst, Յուշարձան 403 սումեր. bar «կարել, բաժանել, կէս»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 320 դնում է կրճատուած վայրավատ ձևից։

ՎԱՐԱՐ «յորդ, վեղուն» (գետի, ջրի համար ասուած). հնում առանձին չէ աւանդուած, բայց սրանից ունինք գետավարար, նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. էջ 31. «Երանելին Տիրոտ ի գետավարարս հանապազ նշան խաչի արարեալ՝ անցանէր ընդ գետն աներկեղբար». նշ. «գետի յորդիլը, ջրերի վեղուլը կամ յորդած գետ»։ Համմտ. յաջորդը։

Գիւմ.—Ագլ. Գնձ. Երև. Կր. Ղրբ. վարար «յորդ, առատ (գետ, ջուր, աղբիւր)», որից վարարիլ «յորդիլ», վարարացնել «յորդացնել»։

ՎԱՐԱՐ (ըստ ՆՀԲ ի, ի–ա հլ. բայց կայ միայն ի հլ.) «վաւաշոտ, արուին հետամրտող կին կամ մատակ անասուն» Խոր. Բ. 37. Մագ. թղ. 59. Միխ. աս. 199. Նոնն. 13 («իգամոլ անասուն»), Սարկ. Հանգ. Սամ. աննց. 44. որից վարարել «շուայտիլ, խենեշանալ, ցոփանալ» Փիլ. լիւս. Լաստ. ժէ. (տպ. 1844, էջ 72 վարաներ): Բառիս երկրորդ ձևն է վրիրակ, որից ունինք վրիրակ խաղալ «խենեշանալ, պոռնկանալ» Նորագիւտ Յայտ. ժբ. 9. վրիրակութիւն «խենեշութիւն, ցոփութիւն» Նորագիւտ Յայտ. ժբ. 3. վրիրակել «ցոփանալ» Նորագիւտ Յայտ. ժբ. 7 (սրանց դէմ այլ ձ. վիրարկ, վիրարկութիւն):

=Արդեօք նախորդ բառի մի նոր առո՞ւմն է։

ՆՀԲ զնեա վարիլ ձևի՞ց։ Հիւնք. վարազ բառից։ Նորագիւտ վրիրակ ձևը գտաւ ու մեկնեց նախ Հ. Բ. Սարգիսեան, Քնն. ՅՀ. Մանդ. Վենետ. 1895, էջ 44, յետոյ Ֆ. Մուրատ, Յայտ. յովհ. էջ 289, և վերջին անգամ Տաշեան ՀԱ 1906, 77։ Այս երկու բառերի հետ կապ ունի՞ արդեօք ուտ. վար «կատաղիլ»։

ՎԱՐԱՐԿԵԼ «պատել, շրջապատել (նեղութեամբ, փորձանքներով)». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ստ. ժմ. (Արրատ. 1915, էջ 361). «Լցոյց, ասէ, չարշարանօքն զհոգի իմ, և որ զկնի սաղմոսն պատմէ զանապատն փորձութեանց վարարկեալ որպէս զվարմ»։

*ՎԱՐԱԻԱՆԴ «ձիու մի զարդ. թամբ կամ սա՞նձ». առանձին չէ գործածուած. որից ոսկիվարաւանդ «ոսկեզէն վարաւանդ ունեցող» Բուզ. դ. 12. Ոսկ. եփես. 769. վարաւանդապատ «ձիապան, ձիավար, սանձակալ» Բուզ. ե. 43։

=Պհլ. *varband ձևից, որ կազմուած է Ϡ, var «կուրծք» և band «կապ» բառերից. հմմտ. պրս. بربند barband «կրծակապ, թրք. կիւմիւշխիւրիւմ. և է իրն այն զոր արկանեն ի կուրծս երիվարաց. և ևս նշանակէ զայն իրն, զոր կապեն կանայք ի կուրծս իւրեանց, որ է կազմեալ ի մարգարտոյ, յոսկւոյ, ի մեղեսկէ, և ի զմբխատոյ». քրդ. بربن bārbān «մէկ գինդից մինչև միւսը ձգուած ոսկի շղթայ» (Justi, Dict. Kurde, էջ 43)։—Հիւբշ. 244։

ՆՀԲ յիշում է վարապան և պարաւանդ ձևերը։ Lag. Beitr. bktr. Lex. 73 պրս. barband։ Տէրվ. Նախալ. 95 բառիս երկրորդ մասը դնում է հնխ. bhandh, պրս. band «կապ»։

ՎԱՐԳԻԼ «վազել, սրանալ, արշաւել» Եղն. որից վարգիչ «արագասլաց, սրաթռիչ» Ագաթ. էջ 5 (հմմտ. Վարդանեան, ՀԱ 1921, 608), որից ՅՀ. կթ. կամրջ. ր-ի անկումով վագել «վազել» Հին բռ. մէկ անգամ ունի Մագ. խթ.՝ վիպասանական հատուածում. «Զվազիլն եղանց և զվագիլ եղջերուացն»։

ՆՀԲ լծ. լտ. vergo, pergo *«դէմ եղեալ ուղիլ ի մի կողմն»։ Տէրվ. Մասիս 1881 սեպտ. 16 և Նախալ. 106* վազել, աւազակ *բառերի հետ հնխ.* vagh *«կառքով կամ նաւով երթալ». համմտ. սանս.* vah, *զնդ.* vaz, *լտ.* vehere, *հսլ.* vĕžą, *գոթ.* vigan *ևն։ Հինք.* վագր *բառից (ինչպէս* խոյանալ՝ խոյ *բառից)։* Scheftelowitz BB 28, 306 *զնդ.* vərəč *«փախչիլ»։* Oštir, Wörter u. Sachen 3, 207 *սանս.* ṛghāyáti *«շարժիլ, կատաղիլ», յն.* ὀρχέομαι *«պարել, դողալ» բառերի հետ՝ v մասնիկով։ Ղափանցեան, Տիղեկ. ինստիտ. 2, 89* վազել *բայից։*

ՎԱՐԴ, ի հլ. (յետնաբար նաև n, ու *հլ.) «վարդ ծաղիկը» Իմ. բ. 8. Սիր. լթ. 17. որից* վարդաբեր *Գ. մկ. է. 12.* վարդագոյն *Բ. մկ. ժ. 28.* վարդայատակ *Եսթ. ա. 6.* վարդենի *Սիր. իդ. 19. լթ. 17. Վեցօր. 92.* վարդենիւ *Ոսկ. մ. բ. 13.* կարմրավարդ *Տաղ.* նազրեվարդ *Նար. տաղ. 471.* վարդավառ *Տոմար. Տօնաց. (այս անունը առած է իրար վրայ վարդաջուր ցանելու հին հայկական սովորութիւնից, որ յետոյ փոխանակուեցաւ պարզ ջրով. համապատասխանում է Պարսից* ابریزاگان ābrēzagān *կամ* برزگان barazgān *կոչուած տօնին, որ տեղի է ունենում Տիր =յունիս ամսի 13-ին, այն է խեցգետնի արևադարձի չորրորդ օրը. մեզ նման այդ օրը Պարսիկները իրար վրայ վարդաջուր կամ պարզ ջուր են սրսկում)։* Նոր բառեր են վարդաբոյր, վարդախտ, վարդարան, վարդափունջ։

=*ՊՀլ.* *vard<*Հպրս.* *varda- *ձևից, որ աւանդուած չէ. համմտ. պՀլ.* Vardakī *«վարդիկ» (իբր յտ. անուն), զնդ.* varəδa *«վա՛րդ», պրս.* gul *«վարդ» (գւս.* vâle), *գազա* vile *«ծաղիկ»։ Պահլաւերէնից են փոխառեալ նաև ասոր.* vardā, *ն. ասոր.* värdä, *արաբ.* ورد vard *«վարդ». ասորերէնից յետ փոխառութեամբ պՀլ.* vartā *(իմա* vardā*) «վարդ» (Horn § 927)։ Իրանականից փոխառութիւն է նաև յն.* ῥόδον, *եոլ.* βρόδον *«վարդ», որից լտ.* rosa, *և այստեղից էլ իտալ.* rosa, *ֆրանս.* rose, *հբգ.* rôsa, *գերմ.* Rose, *հոլլ.* roos, *անգլաք. անգլ.* rose *(*Kluge *398) և վերջապէս ռուս.* роза, *բոլորն էլ «վարդ»։ Երկրորդ փոխառութեամբ յառաջացել է արաբ.* جل Jul *«վարդ կամ ծաղիկ», որից* جلاب Julāb *(իմա՛ պրս.* گلاب gulāb*) «վարդաջուր», որ և փոխառութեամբ առել է իտալ.* giulebbe, *ֆրանս.* julep, *սպան.* julepe *«դեղագործական օշարակ»։ Իրանեան բառը ծագում է հնխ.* u̯rdho- *«փշոտ թուփ, փշաթուփ» ձևից, որի այլ ժառանգներն են անգսք.* word *«փշաթուփ», նորվ.* ōr, ōl (*ord) *«հաղարջենի» (*Pokorny 1, 316, Walde 658, Boisacq 843)։ *Թէև* Pokorny *չի յիշում, բայց անշուշտ այս հնխ.* u̯rdho- *բառն էլ պէտք է դնել հնխ.* u̯eredh-, u̯erədh- *«աճիլ, բարձրանալ, բարձր» արմատից, որի ժառանգներից են սանս.* várdhate *«աճեցնել», զնդ.* varəd- *«աճիլ», պրս.* varəδa- *(որ է «վարդ»), նաև «աճեցնել, շատացնել» (ածանցմանց մէջ),* varəδā- *«թուփ» (որ* Bartholomae, Altir. Wört. 1370 *դնում է* varəd- *«աճիլ» արմատից), պրս.* بالیدن bālīdan *«աճիլ, առաւելուլ», յն.* ὀρθός, *դոր.* βορθό- *«ուղիղ կանգնած, շիտակ, ճշմարիտ», հսլ.* roditi, raždati, *ռուս.* родить, раждать *«ծնիլ», պրս.* родители *«ծնօղք»,* родъ *«ազգ, սեռ, սերունդ, պատաբերութիւն, տեսակ» ևն* (Pokorny 1, 289, Boisacq 711)։ Meillet (Dict. étym. lt. 831) *թէև հայերէնը դնում է իրանեանից, բայց լատինը յունարէնից չի ընդունում, ինչպէս նաև յունարէնը իրանեանից, ոչ էլ ընդունում է հնդեւրոպական ծագում. այլ թէ՛ իրանեանը, թէ՛ յոյնը և թէ՛ լատինը փոխառեալ միջերկրեան մի քաղաքակրթութիւնից, որ սովորել էր մշակել վարդը, ինչպէս շուշանը, մանուշակը ևն։—Հիւբշ. 244։*

Նախ ԳԴ կցեց պրս. վէրտ *ձևին։ ՆՀԲ վրաց.* վարդի, *պրս. արաբ.* վարտ, վէրտ, *յն.* ῥοδάκινον, *լտ.* rosa: Peterm. 18 *արաբ.* vard: Lag. Urgesch 823 *պրս.* gul, *յն.* ῥόδον *և խալտ.* urt: Müller SWAW 38, 586, 39, 394 *ևն արաբ.* vard, *պրս.* gul *ևն։ Նոյն,* Kuhns u. Schl. Btrg. *1, 318 սանս.* vṛdh *արմատից։ Մ. Փ., Մասիս 1882 յուլ. 21 պՀլ.* վարդա, *պրս.* կիւլ, *քաղդ.* վարդա։ *Հինք. արաբ.* վէրտ, *եոլ.* βρόδον։ *Մատ*

ЗВО 25, 306 հյ. որթ, յն. ῥοά «նուռ» և այլ բառերի հետ յաբեթական արմատից։

Վարդավառ բառը հներից Մով. քերթ. ճառ վարդ. մեկնում է արդ աւար: Աւելի երկար խօսում է Յայսմ. օգոստ. 6. «Յայնմ աւուր հնթանոսք Ափրոդիտեայ տօնէին և... կոչէին զնա վարդամատն և ոսկեծղի, և զվարդն նմա ընծայ մատուցանէին։ վասն այսորիկ անուանէին զտօնս դայս վարդավառ: Իսկ ի նորս ասի վարդավառ, զի Քրիստոս ըստ նմանութեան վարդի՝ մինչ ի յայլակերպութիւնն որպէս թէ վարդ ի կոկոնի եր. և յայլակերպիլն ի թաբոր՝ իբր թէ վարդ վառեցաւ» վարդավառ բառի առուգաբանութիւնն է ակնարկում Նար. գնձ. 482 Գոհար վարդն վառ առեալ ի վհիից վարսիցն արիւննից (տաղ Վարդավառի. նկատողութիւն Ստ. Մալխասեանի)։ Մանրամասն խօսում է Տաթև. ամ. 485 և հանելով վարդ բառից, գնում է վարդի և Քրիստոսի համեմատութիւնը։ Նոյնը կրկնում է էջ 498, ուր աւելացնում է բառախաղով արդ աւար և վարդապետ բառերի համեմատութիւնը։ Նորերից ՀՀՔ և ՆՀՔ վարդ վառեալ: Հինք. պրս. վէրաէ «առաւելեալն» և վառանեէն «վարել, քշել» բառերից (այսպէս կոչուած՝ վարդավառին աղաւնի թռցնելու սովորութիւնից)։ Հերպետ, Բազմ. 1902, 291 առնս. վարդա «ջուր» + վառ «սրսկում»։ Պարոնեան, Անահիտ 1903, 13 գնդ. ակբրա «կրակ» և հյ. վառել, իբր «հրավառութեան տօն»։ Փառնակ, անդ՝ 39—40 առնս. vardh «բարձրացնել» + վառ «քօղ արքայական», իբր Պարսից farr -i- kayānī տօնի օրինակութիւնը։ Լեոնեան, Աւետարեր 1914, 906 =բարդավառ (խոսի բարդեր այրելու սովորութիւնից հանելով)։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. վարդ՝, Ախց. Գոր. Դվ. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Տփ. վարբ, Մկ. Մրղ. Սլմ. Վն. Տիգ. վոբբ, Ասլ. վարբ (վար*), ՋԲ. վօյդ՝, վարդ՝, Հճ. վօյդ՝, Ագլ. վէօդ, Սվեդ. վուրբ. բոլորն էլ «վարդ» նշանակութեամբ, իսկ Դվ. Մրղ. «ծաղիկ», ինչպէս որ պրս. gul «վարդ» այժմ նշանակում է ընդհանրապէս «ծաղիկ»։— Նախ. վարբ, վաշբ «վարդ»։—Վարդավառ բառի ձևերն են՝ Սչ. վարդ՝ավառ, Ախց. Պլ. վարբաւառ, Տիգ. վոբբովառ, Մկ. վոբռովառ, Մշ. վարդ՝էվառ, Ասլ. վարբէվառ, Ալշ. վարդ՝էվար, վարդ՝էվոր, Սեբ. վարբէվար, Ակն. վարբէվար, սեռ. վարբէրվի, Կր. Ռ. վարբէվօր, Նախ. վարբէվօր, վաշբէվօր, Ջղ. վարդ՝իվոր, Երև. վարբիվօր, ՋԲ. վայդ՝իվօյ, վարդ՝իվոր, Հճ. վայդ՝իվօյ, Սլմ. վոբբվոր, Տփ. վարբէվուր, Մրղ. վոբբըվը՛ր, Շմ. վարբօօր, Ղրբ. վըրբէ՛վիր, Ագլ. վրադո՛վիր, Հմշ. վաշտէվօր:—Նոր բառեր են վարդածոց, վարդակաղնի, վարդաձոռ, վարդաշալակ, վարդավառենի, վարդևորի, վարդևորշէ, վարդենիս:

ՓՈԽ.—Վրաց. ვარდი վարդի «վարդ» ვარდიანი վարդիանի «վարդենէն», ვარდის ზეთი վարդիս գեթի «վարդի ձէթ», ვარდის ჩაი վարդիս չիտի «վարդի ծիւ, սոխակ», ვარდის ალაგი վարդի «վարդարան, աղօթքի համրիչ», ვარდენა ալավարդե «վարդանոց», իմիրել. vardi, Թուշ. սվան. vard «վարդ», ուս. վաովարբև ախսիրայ «վարդավառի տօն» (Քամալեան, Երկասիրութ. Ա. 161), կպդվկ. ვარტი «վարդ», ვარტისბარი, ვარტისბარ, ვერტისé «հոդևգալուստից մէկ շաբաթ առաջ կատարուած տօն ծաղկանց՝ ճիշտ մեր Վիճակի նման» (Karolides, Γλ. σογκρ. էջ 71, որ դնելով բառը փթրա արմատից, համարում է բնիկ կապադովկիան և ո՛չ հայկական, որովհետև այս ձևերը ևնթադրում են հյ. վարդաբեր և ո՛չ թէ վարդավառ), ուս. վարբ «վարդ»։

*ՎԱՐԴԱՊԵՏ, ի–ա հլ. «ուսուցիչ, վարժապետ, առաջնորդ ուսման» ՍԳր. Ոսկ. հին. «արհեստաւորաց պետ, վարպետ, ուսուցչապետ» Նորագիւտ բ. մնաց. բ. 2, լդ. 13, Խոր. ա. 15. «դրդիչ, սադրիչ, գրգռիչ» Վեցօր. (նոր առումով կրօնական մի աստիճան է). որից վարդապետել «սորվեցնել, քարոզել» Խոր. Նխ. սղ. Վրք. հց. վարդապե-

տանց *Ոսկ. մ. ա. 7, բ. 27.* վարդապետութիւն *Մգր. Ագաթ. ևն։*

=Պհլ. *(հարաւային արևմտեան բարբառ)* *varda=հպրս. -varda «գործ, աշխատանք»+պետ (pati) բառից, որով ամբողջը լինում է *vardapati։ Այս արմատի այլ ձևվերն են գնդ. varz «աշխատիլ նոանդուն կերպով», պհլ. varz, պրս. ورز varz «ցանք», varza «սերմանում», varzand «սերմնացանութիւն և շահ օգտութեան, և ուսումն», varzīdan «ջանալ, գուն գործել, նկրտիլ, սովորութիւն առնել զգործ ինչ, սերմանիլ», varzī «սերմանացան»։ Առաջին ձևը պահում են հպրս. Artavardiya *(յատուկ անուն, բուն նշ. «բարին գործող»)* և քրդ. ward «a patch of ploughing»։ Հին պարսկականից տառադարձած ձև է ելամ. ir-du-mar-ti-ya։ Նախաւոր «գործ, աշխատանք» իմաստը ունէի յետոյ ձևափոխուելով դարձել է Աւետաւոյում «նոանդուն աշխատանք ուղղափառ հաւատքի համար» *(հմմտ.* varəzəmča haomanaiiəmča «գործունէութիւն և բարի խորհուրդ») և մասնաւորուել է երկրագործական աշխատանքի համար *(հմմտ. գնդ.* aiwi-varəz «հողի վրայ գործել, երկրագործութիւն անել», և վերի պրս. ու քրդ. երկրագործական բառերը)։ Պահլաւերէնի մէջ կար նաև «ուսման աշխատանք, ուսումնասիրութիւն, ուսում» իմաստը, որին ապացոյց է պրս. varzand «ուսում»։ Այս նշանակութիւնից է փոխառեալ արաբ. ورد vird *(կարդալու է* vard) «աշակերտ կամ ընթերցուածք» *(տե՛ս* Բուրհանի Կաթի և Ջոնսընի բառագիրքը. չունին Մենինսկի, Vullers և ԳԴ)։ Այս իմաստը գտնում ենք նաև հայերէնում, որով վարդապետ<իրան. *vardapati լինում է «աշակերտապետ կամ գործապետ»։

Հներից Տաթև. ձմ. լգ. մեկնելով բառս՝ գրում է. «Այլ որ կոչի վարդապետ, այսինքն ուսուցիչ, կամ վարդապետ՝ վարուցն պետ, այսինքն գործով կատարեալ. կամ վարդապետ՝ դեղեցկութիւն մարդկան բանն. այսինքն բանիցն պետ։ Արդ՝ վարդն ծաղիկ՝ ունի բազում յատկութիւնս, որ յարմարի վարդապետին», Աւետիքեան, Քերակ. 1813, *312* վար+դաս+պետ, *այն է վարելու կամ առաջնորդելու և դասելու վրակեցու։ ՆշՒ «ի բառէս* վարժ *և ոչ* վարդ. *պետ վարժից»։* Ducange, Glossarium mediae et infimae latinitatis, *տպ.* Paris *1840, հտ. 1, էջ 528* հանում է *լտ.* bactroperatae *բառից, որ կազմուած է յն.* βάκτρον «գաւազան»+πέρα «պարկ» *բառերից. գործածւում էր աշխարհն արհամարհող այն փիլիսոփաների համար, որոնք միայն մի պարկ և մի գաւազան ունէին. յետոյ էլ յատկացուեց աբեղաներին (տե՛ս* REA IX *1 (1929) էջ 1—3)։* Ewald GGW *10, 80* վարդերի պետ! Müller SWAW 64, 454 varəδa «աճում» *բառից։ Էմին,* Ист. М. Хор. *(հին տպ. 1858, նոր տպ. 1893, էջ 278)* գնդ. herbed «գլխաւոր»։ *Տէրվիշ. Մասիս 1882 յունիս 1* նախաւոր *վարդ «խօսք» բառից. հմմտ. գոթ.* vaurd, *հսաքս. անգլ.* word, *գերմ.* wort, *լտ.* verbum, *ֆրանս.* verbe. *պարզ արմատն է* var «խօսիլ», *որից յն.* ῥήτωρ, *ևոլ.* βρήτωρ «հռետոր». *որով* վարդապետ *նշանակում է բուն «պետ, առաջնորդ, ուսուցիչ բանիի»։—Այս յօդուածի վրայ մի երկար վէճ բացուեցաւ Մասիսի մէջ։ Պօլսեցի մի արհեստաւոր (Ձուլարար, տէօքմէճի) Մկրտն Հ. Տէօքմէճեան, Մասիս 1882 յունիս 4 և 22 դրաւ պրս.* վիրտ, վէրտ «աշակերտ» *բառից, որով վարդապետ «գլուխ՝ պետ աշակերտաց»։ Տէրվիշ. Մասիս 1882 յունիս 17 և յուլ. 17 մերժելով Թէ՛ իր նախորդ մեկնութիւնը և Թէ* վիրտ՝ *իբր արաբ. բառ,* վարդապետ *կցում է հպրս.* վարդանա «քաղաք», պրս. گرد gird «ժողով, շրջանակ» *բառերին, իբրև նախաւոր «քաղաքապետ, ժողովրդապետ կամ քաղաքպետ»։ Մ. փ., Մասիս, անդ՝ յուլ. 21 ցոյց է տալիս Թէ* վիրտ *(իմա՛* վարտ) պրս. է և ո՛չ արաբ. *բայց* վարդապետ= =գնդ. aōθrapaiti, *որ պհլ.* պարպէդ ձևն առնելուց անմիջապէս առաջ՝ անցել է վարպէդ ձևից. *Տէրվ. յուլ. 26* վերջին անգամ պատասխանելով՝ ցոյց է

տալիս որ զնդ. aēθrapaiti *պիտի տար հյ.* ճայրապետ *կամ* այրապետ, *բայց ո՛չ* վարդապետ. *այս վերջինը կա՛մ պէտք է դնել* վիրտ «աշակերտ» *բառից և կամ իբրև «թաղապետ» մեկնելու է պրս.* gird *բառից, ինչպէս որ յն.* տէսբոդիս «տանուտէր» *բառը հիմայ դարձել է «վարդապետ»։ Այս յօդուածով բանավէճը փակւում է։ Սրանի՞ց թէ անկախաբար Պատկ.* Матер. I. 15 *պրս.* vird «աշակերտ»+bad «պետ»։ *Աւելի յետոյ Տէրվ. Լեզու 150—152 և Նախալ. 106 հնխ.* var «խօսիլ, սովորեցնել» արմատի տակ դնում է «զնդ. var, յն. εἴρω, լտ. verbum, գոթ. vaurd և հյ. թերևս վարդապետ. *Համմմ. պրս.* ᴅᵧᵩ «աշակերտ»։ Գարագաշեան (Ամէն. տարեց. 1908, 153) վարդան «ուսեալ» անուան հետ։ Հիւնք. լտ. veritas «ճշմարտութիւն»։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. 208 *պրս.* վիրտ «աշակերտ»։ Carrière (տե՛ս REA 1 (1929), էջ 1—2) «պսակուած վարդերով», ինչպէս է լտ. coronatus, *որ նշանակում է «պսակեալ» և աբեղաների տիտղոս էր։ Յակոբեան, Բանասէր 1900, 37 զնդ.* atrapaiti։ *Նոյնը նաև Պարոնեան, Անահիտ 1903, 12 և Փորթուգալ փաշա, Եղիշէ 166։ Հիւբշ. ZA 1906, 223 մերժում է դնել արաբ.* ᴅᵧᵩ vird, *որ իրանեաններից մէջ սոյպ գոյութիւն չունի։ Ոմն (Ձեռ. թ. 120 Ղալաթիոյ Ազգ. մատ. տե՛ս Ամէն. տարեց. 1908, 153) «գրոց ծաղկանոցէն վարդեր փետող»։ Ե. Ներսիսեան, Ամէն. տարեց. 1908, 153 արաբ.* vird «տէրունական աղօթք» *բառի հետ։ Ե. Փափազեան (անդ) իբր «պետ զվարս յարդարողաց»։* Տ. Պապիլ, Աւետարեր 1914, էջ 135 աար «կրակ» *բառից՝ իբր աւրուշանի պետ։ Մ. Ադամեան, Բիւզանդիոն 1914 յուլ. 29 վ+արդ՝ որ է պրս.* աար «կրակ» +պետ, *այն է «հրպետ, աւրուշանի պետ»։ Ա. Ահարոնեան* REA 9 (1929), էջ 2 var, vard «գործ, աշխատանք» +պետ, *իբր «գործապետ»։ Ա. Ջոպանեան, անդ, սանս.* warda (անգլ. word) «խօսք» *բառից, որով վարդապետ «խօսքի պետ»։ Գ. Սինանեան, անդ, սանս.* vart, vrt «ուսում, ուսուցում»+պետ։ Վարդապետ *բառի ստուգաբանութեանց (բոլորն էլ անհիմն) պատմութիւնն ունի* Paul Alphandéry REA 9 (1929), *էջ 1—3։ Այս բոլորից դուրս ուղիղ մեկնութիւնը վիրի ձևով տուաւ* Benveniste REA 9 (1929), 10 *և* BSL № 93, *էջ 67, որին միացրի նաև պօլսեցի արհեստաւորի մեկնութիւնը։*

Դիմ.—Իբր կրօնական բառ պահուած է ամէն տեղ. այսպէս՝ Ջղ. վարդ՛ապետ, *Ալշ. Մշ. Սչ.* վարդ՛արեդ, *Ախց. Երև. Կր.* վարբապետ, *Ագլ.* վարբապէ՛տ, *Սլմ.* վորբպետ, *Խրբ. Շմ. Պլ. Ռ. Սեբ.* վարբարէդ, *Ննխ.* վարբարէդ, վաշբարէդ, *Հմշ.* վարբարէդ *(բայց աւելի հարազատ ձևով՝* վաշդարէդ), *Տփ.* վարբա՛պիտ, *Սվեդ.* վարդ՛արիդ, *Մրզ.* վորբապրի՛ս, *Ակն.* վարբրբէդ, *Ասլ.* վարբրբէդ (վարբրբէ՛), *Գոր. Ղրբ.* վրբա՛բէդ, *Վն.* վոռոտպետ, *Մկ.* վոռոտպիտ, *Տիգ.* վոռբոռիդ, *Զթ.* վայդ՛արիդ, վարդ՛արիդ։ *Գաւառական այս բոլոր ձևերը փոխառեալ են կրօնական լեզուից. բայց անկախ և ինքնուրոյն ձև է* վարպետ «հին ոճի տնային վարժապետ. 2. արհեստապետ. 3. վարժատուն, դպրոց, ուսումնարան. 4. բանիմաց» *(օր. Ջղ.* վարպետ, *Երև.* վարպէտ, *Սչ.* վարբեդ, *Ակն. Խրբ. Պլ.* վարբէդ *են), որ կազմուած է* վարդպետ *միջին ձևից՝ դ ձայնի անկումով (տե՛ս իմ յօդուածը՝ Բազմ. 1898, 372)։ Նոր բառեր են* վարդապետաւուտ, վարդապետիկ, վարպետուդի, վարպետչէֆ, վարպետութիւն *են։*

Փոխ.—Վրաց. ვარდაპეტი վարբապետի «հայ վարդապետ»։ *Այս բառն ունի և գերման ուղեգիր* Burchard, *որ 1271—95 թթ. գրել է* Descriptio Terrae sanctae *և նկարագրել նաև հայ կրօնաւորների կեանքը. գրում է* verthabite, *որ տպագրեալ օրինակում (Վեննա. 1519՝* Chrysostome Giavelli-*ի ձեռքով) դարձել է* vatrapetae։

*ՎԱՐՉ «կռուի մի տեսակ զէնք. ծայրը գունտ գլխով կոպալ, լախտ». *մէկ անգամ ունի Ղևոնդ, բ. էջ 8. սրա ուղղագրյն ձևն է*

*վազր, որից վազրաւոր «լախտ կրող զինուոր» վկ. արևել. էջ 71։ Տե՛ս նաև վաղր։

=Պհլ. 𐭥𐭦𐭧 varz «լախտ», պազ. vazra, պրս. گرز gurz «մեծ լախտ երկաթի, զոր ի հնումն ի գործ ածէին քաջամարտիկք ի պատերազմի», ojگ gurza «լախտ. 2. արական անդամ. 3. օձ մեծագլուխ», քրդ. gurz «կոպալ, լախտ», որ է զնդ. 𐬬𐬁𐬰𐬀 varza- «լախտ»=սանս. वज्र vajra- «Ինդրայի շանթաքարը» (Horn § 906)։ Ծագում են հնխ. veg´- «ուժ» արմատից. համմտ. սանս. vaja- «ուժ, արագութիւն, կռիւ, մարտ» (Pokorny 1, 246)։ Իրանեանից են փոխառեալ նաև մանդ. gurzā, արաբ. جرز jurz «լախտ»։— Հիւբշ. 244։

Նշբ, Ջբ և Աբ սխալ են նշանակում «բարեմունք, գաւազան, ցուպ, վարիչ, վարող», իբր լծ. լտ. virga և հյ. վիրգ։ Ուղիղ մեկնեց նախ Lag. Arm. Stud. § 2109։

*ՎԱՐԺ (ի հլ. յետնաբար) «կրթութիւն, դաստիարակութիւն, ուսմունք» Ժղ. ժբ. 12. Փարպ. Պիտ. «վարժուած, համուտ, փորձառու» եզն. Խոր. որից վարժել «կրթել, հրահանգել» Յոր. լ. 24. վարժիլ «սովորիլ, հրահանգուիլ» Դծ. է. 21. Պիտ. Խոր. վարժոց Ոսկ. մ. ա. 17. վարժումն Սիր. լթ. 11. վարժուն «վարժ» Նանայ. 53. վարժեար «վարժապետ կամ վարժարան» Բուզ. ի. 27. վարժելիմ «սանձ» Ոսկ. մ. գ. 6 և երբ. լա. (որ և վարելիմ «սանձ» Ոսկ. երբ. 564). բերավարժ նաս. պտմ. Բուզ. անվարժ Սիր. լ. 8. Սևբեր. մանկավարժ Պիտ. մտավարժ Դան. ա. 4. Իմ. ը. 9. եզն. Ոսկ. բնս. ձիավարժ Խսիր. անս։

=Պհլ. varž «դիտութիւն, իմաստութիւն, խոհականութիւն», varz «աշխատութիւն, գործ, փորձ, վարժութիւն», սոգդ. warž «արուեստ, եղանակ», պրս. ورزvarz «արհեստ, գործ, զբաղմունք», varzīdan «սովորութիւն առնել զգործ ինչ, ջանալ և գուն գործել կամ նկրտիլ», varzīda «սովոր, ընտել, վարժ, փութաջան», varziš «սովորութիւն, ջանադրութիւն, հրահանգ», որից ուղղակի փոխառեալ են վրաց. ვარჯიშო վարջիշի, վարջիսի, վարջիշոբա «բերանացի կըրկնութիւն, հրահանգ», ն. ասոր. värǰis «սովորութիւն»։ Այս խմբի հետ նոյն են պհլ. varž «վարժել, հրահանգել», պրս. varz «երկրագործութիւն, մշակութիւն», varzīdan «ցանել, սերմանել», զնդ. varz, varəz «գործել, առնել, կատարել» և բոլորը միասին ծագում են հնխ. u̯erg´- արմատից, որի ներկայացուցիչն է հյ. գործ։ Իմաստի զարգացման համար համմտ. հյ. գործ, և գործել զերկիր, երկրագործ (Horn § 197, Pokorny 1, 290)։ Benveniste գտնում է որ նոյն իրան. varz, varž արմատի տարբեր գաւառական ձևն է varə, որից հյ. վարդապետ, որով հյ. վարդապետ և վարժապետ դառնում են միևնոյն իրանեան բառի երկու տարբեր գաւառական ձևերը։ Աւելի ընդարձակ տե՛ս վարդապետ բառի տակ։—Հիւբշ. 245։

Նշբ յիշում է պրս. վէրզիյտէն «վարժիլ, սովորիլ», վէրզիշ «վարժմունք»։ Gosche 45 սանս. vṛš «կարող լինել», vṛh և զնդ. vərəz «գործել»։ Lag. Btrg. bktr. Lex. 73 պրս. barzīdan (=varzīdan)։ Տէրվ. Նախալ. 107 հնխ. varg «ազդել, գործել» արմատի տակ՝ զնդ. varəz, պրս. varz, յն. ἔργον, ῥέζειν, գոթ. vaurkjan և բառերի հետ։ Հիւնք. և Թիրեաքեան, Պատկ. աշխ. գր. 208 պրս. վէրզիտէն։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Մշ. վարժ (Մշ. նաև վարջ), կր. Մշ. Շմ. Պլ. Սչ. վարժըվիլ, Երև. վարժըվել, Նխճ. վարժըվել, վաժըվել, վարջըվել, Սլմ. վոռժըվել, Մրղ. վոռճըրըել։— Իբր ուսումնական բառ՝ ամէն տեղ գոյութիւն ունի վարժապետ, որի գլ. ձևերն են՝ Ջղ. վարժապետ, Ագլ. Ախց. Երև. կր. Շմ. վարժապէտ, Սչ. վարժարեդ, Մշ. վարժարեդ, վառջարեդ, Պլ. Ռ. վարժարէդ, Վն. վոռժապետ, Տփ. վարժապիտ, Մկ. վոռժապիտ, Սվեդ. վարժարիդ, Տիգ. վոռժոռիդ, Ջբ. վաժարիդ, վայժարիդ, վարժարիդ, Գոր. Ղրբ. վրժա՛րէդ, Սլմ. վոռժըպետ, Սեբ. վաժարէդ, Նխճ. վաժարէդ, վաջարէդ, վաժբէդ, Մրղ. վոռճապըիտ, Համշ. վարջըրէդ։

ՎԱՐԺ. անստոյգ բառ, որ ունի միայն Բառ. երեմ. էջ 297 և մեկնում է «ործխիլ կամ պինտ ունիլ կամ կիրթ». վերջին եր-

կուսը կարող են կապել բառս նախորդի հետ. բայց ի՞նչ է ուրվխիդ:

ՎԱՐԺԿՈՂ. *անստոյգ բառ, որ ունի միայն Բառ. երեմ. էջ 297 և մեկնում է «անկղ». բայց յաջորդ էջն էլ դնում է վարշ «կոճ կամ անգղ»: Ո՞րն է ուղիղ:*

ՎԱՐԿ *(յետնաբար ի, ի–ա հլ.) «համարում, կարծիք, որոշում, վճիռ» Փիլ. Պիտ. Խոր. Արծր. որից* **վարկանիլ** *«համարիլ, սեպիլ, կարծել» Խոր. Պիտ.* **վարկադրել** *ՅՀ. կք.* **վարկած** *Նար.* **վարկանումն** *Մաքս. ի դիմն.* **վարկաւորել** *Անթիպատր. նախավարկել Մաքս. եկեղ. նոր բառեր են՝* **վարկաբեկ, վարկաբեկել, վարկաբեկիչ, վարկաբեկութիւն, վարկաւորել** *են:*

Նշ Ր ւծ. հյ. **փառ, յարգ** *և Բրբ.* **ֆարգ** *և վէրկի: Հիւնք. գրաւ բառից:* Pedersen, *Հայ. դր. լեզ. 164 վ նախդիրով* **ճարկանել** *բայից: Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 1243 և 1406) պրս.* بَرگ barg *«կարգադրութիւն, եղանակ, խոհականութիւն, պատրաստութիւն պիտոյից ճանապարհի» (բառիս հին ձևը յայտնի չլինելով՝ համեմատութիւնը անստոյգ է): Թիրեաքեան, Արխահայ բռ. 348* **յարգ** *բառից:*

Փոխ.—Վրաց. **ვარგი** **վարգի** *«օգտակար, պիտանի»,* **ვარგება** **վարգեբա** *«արժել, պէտք գալ»,* **ვარგი კაცი** **վարգի կացի** *«պիտանի մարդ»:*

ՎԱՐԿԱՊԱՐՏԵԼ *«զրկել». ունի միայն Բառ. երեմ. էջ 297:*

Վարկել *տե՛ս* **Վարակել:**

ՎԱՐԿՊԱՐԱՁԻ *«վերի վերոյ, անփութօրէն, բան պատահմանն» Կոչ. 131. Ոսկ. յհ. ա. 30. «աննշան, ոչինչ, յետին» Ոսկ. յհ. և մաթ. «հասարակ, անզարդ, պարզ» Ոսկ. մաթ. (վրանի համար ասուած). գրուած է* **վարկապարազի** *Տիմոթ. կուզ, էջ 185, 192:*

Նշ Ր «նոյն ընդ ձայնիցս վայրապար և հարեանցի, կամ առանց վարկի. որպէս և յն. παρεκβάσει*»:*

***ՎԱՐՁ,** *ու հլ. «աշխատութեան փոխարէն տրուած վճարք, պարգև» ՍԳր. Եղիշ. որից* **ի վարձու** **ունել** *«վարձքով բռնել» ՍԳր.* **վարձս առնել** *«գին կտրել» Մաթ. ի. 2.* **վարձել** *ՍԳր. Եփր. մն. Սեբեր.* **վարձաճաոյց** *Կորիւն.* **վարձաճ** *«վարձատրութիւն» Ջենոբ. էջ 20. «փեսայի տուած օժիտը հարսին» ՍԳր. Կոչ. 224. «սխուր, շնութեան գին» Մխ. ա. 7.* **վարձատր** *կամ* **վարձուտր** *Տոբ. ե. 5, 17. Եւագր.* **վարձկան** *ՍԳր.* **վարձկանագրիչ** *Բուզ. դ. 8.* **վարձկանութիւն** *Եւս. քր. նախավարձել Մծբ? Նոր բառեր են օրավարձ, աշխատավարձ, վարձակալ, տողավարձ:*

*=Պհլ. *varz ձևից. համմտ. պրս.* ورزه varza *«շահ, վաստակ»,* ورزیدن varzīdan *«շահիլ, վաստակիլ»:—Հիւրշ. 245:*

Պրս. բառերի հետ համեմատուից նախ Lag. Arm. Stud. § 2113: *Հիւրշ.* Arm. Stud. § 264 *և* Arm. Gram. 245 *համեմատում է պրս. ձևի հետ, բայց կարծում է թէ հայ բառը բնիկ է. իսկ էջ 515 աւելացնում է թէ հայերէնը բնիկ լինելու դէպքում՝ ա՛յն ժամանակ միայն կարող է համեմատուիլ պրս. բառի հետ, երբ այս վերջինը ծագած լինի հնխ.* verg´h *արմատից և այսպէսով բաժանուի գնդ.* vərəz *«գործել» ձևից: Սաղրճեան, Արեւելք 1884 հոկտ. 17 առում է թէ կապ չունի* misdha *բառի հետ, այլ գալիս է գնդ.* varəzana *«վարձկան մշակ» (?) բառից: Հիւնք. պրս.* **ֆարսխ** *կամ* **բարսխ** *«մուրացկանութիւն, երգեցիկ կանանց տրուած վարձը»:* Pictet, *բ տպ. Գ. 115 առնս.* vṛt *«գարձնել», գոթ.* vairth *«արժէք, գին», լիթ.* wersti *«փոխանակել» բառերի հետ:*

Դիմ.—Մրդ. **վոռծ** *«տան վարձ», բայաձև Սչ.* **վարցել**, *Երև.* **վարցէլ**, *Վն.* **վոռծել**.—*իսկ* **վարձ** *«երկնային վարձատրութեան արժանի բարի գործ» իմաստով ունինք՝ Խրբ.* **վարց**, *Ագլ. Ախց. Կր. Ննխ. Ռ. Սչ.* **վարցճ**, *Ալշ. Շմ. Ջղ. Տփ.* **վարցկ**, *Մկ. Տիգ.* **վոռցճ**, *Պլ.* **վարցգ**, *Մշ.* **վարծկ**, *Վն.* **վոռցճ**, *Ասլ.* **վարց** (**վարս**), *Սլմ.* **վոռսճ**[1], *Սեբ.* **վարսգ**, *Մրզ.* **վոռսկ**, **վոսկ**[1], *Բրբախօս հայերից Ատն. և Էնկ.* varsk *(Արեւելք 1888 նոյ. 9 և Բիւր. 1898, 865):*

***ՎԱՐՁԱՒ,** *ի–ա հլ. «թատրոնի կամ խընջոյքի մէջ երգող կամ պարող կին» Բ. Բագ.*

ժթ. 35. Բուզ. Ոսկ. փիլիպ. եբր. եփես. ա. տիմ. Խոր. գրուած է նաև վարձաճ *Կիր. էջ 11,* վարձական *Կանոն. Ոսկ. պօղ. ա. 642։*

=*Պհլ.* *varzak *ձևից, որի ժառանգորդ պրս.* *barza *ձևի տառադարձութիւնն է Սուիդասի* βάρζα *բառը՝ «ψάλτρια, դուսան, վարձակ» նշանակութեամբ։*

Նշ Բ «իբր վարձեալ կամ վարժեալ կամ վարուք արձակ»։ Lag. Symmicta 91 *յն.* βάρζα *ձևի հետ միայն։ Հիւրշ. 245 կցում է* վարձ *բառին՝ յիշելով նաև* Lag.-ի *համեմատութիւնը։ Հիւնք. պրս.* ֆարսէ, բարսէ *«գուսանի վարձք»։*

ՎԱՐՃՈՒ, *որ և* վարճող, վարժող *«մի տեսակ անպիտան խոտեղէն» Վստկ. 32 (Նշ Բ համարում է «վարսակ», Հ Բուս. § 2885 «վարսնակ» արաբ. և լտ.* alba*). որից* **վարճոխուտ** *«վարճոխներով լի (հող)» Վստկ. 33։ Բառիս նշանակութիւնը ճշտելու համար հմմտ.՝*

Գ Ի Ր.—Մշ. վարժոխ *«մի տեսակ խոտ, որ տաւարը ուտում է»։*

ՎԱՐՄ, ի–ա *հլ. «ցանց, թակարդ, անասուններ բռնելու ծուղակ» ՍԳր. «մի տեսակ հիւսուածանման ցանցակերպ զարդ» Նորագիւտ բ. մնաց. դ. 12, 13 (սեռ.* **վարմաց** *ձեւով). Մհյ. յղ. գրծ.* **վարմբնով** *Քուչ. էջ 90. որից* **վարմել** *«որոգայթել» Բառ. երեմ. 298.* **վարմարկել** *«ուռկան ձգել» Ոսկ. ես. 18։*

Böttich. Arica 76, 259 var *«ծածկել» արմատից։ Նոյն արմատից է համում նաև Տէրվ. Նախալ. 106՝* **վարել**, որմ, **վարաճել** *են բառերի հետ։ Հիւնք.* պարանոց *բառից։* Patrubány SA 2, 14 *հունգ.* verem *«փոս» բառի հետ։ Սպրզեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձան 403 սումեր.* bar *«հիւսել»,* bara, par *«որսի ցանց», թրք.* örmek *«հիւսել» և հյ. վերա։*

***ՎԱՐՇԱՄԱԿ**, ի–ա *հլ. «թաշկինակ, սրբիչ, դլուխ կապելու շոր» ՍԳր. Կոչ. 176, 389, 412. որից* **վարշամակապատ** *ՅՀ. ժա. 44.* **վարշամակեայ** *Մամբր.։*

=*Պհլ.* *vāršāmak *հոմանիշ ձևից, որ հաստատուում են հայերէնի հետ՝ պ.* واشامه vāšāma *կամ* باشامه bāšāma *«կանանց գլխի ծածկոյթ՝ մետաքսով ոստայնանկեալ»։ —Հիւրշ. 245։*

Հներից Յայսմ. օգ. 16 համարում է հրէարէն «Հայք դաստառակ ասեն, յոյնք մանդիլ, ասորիք թաշկինակ և հրէայք՝ վառշամակ»։ Ուղիղ մեկնեց նախ Գ Դ, որ համեմատում է պրս. վաշամէ *ձևի հետ։ Նշ Բ վրաց.* վարշամանգի։ *Ուղիղ է նաև Հիւրշ.* ZDMG *35 (1881), 662։ Հիւնք. պրս.* վաշամէ *և* վէրշէֆ *«շորի կտոր»։*

Գ Ի Ր.—Ալշ. Մշ. վարշամագ, վաշամագ *«շոր, որ մեռելի երեսի վրայ են դնում և յետոյ պատանք կարում»։*

Փ Ո Խ.—Վրաց. ვარშამანგი վարշամանգի, *որ Ջուբինով[2] մեկնում է «головотяжь, кидаръ, наглавіе, повясло, клобукъ»։*

ՎԱՐՈՐՆԱԿ *«արևելեան մի բոյս, խիարշանպար,* cassia fistula*» Բժշ. ունի միայն Հ Բուս. § 2887։*

ՎԱՐՈՒԺԱՆ (ի–ա *հլ. ըստ Նշ Բ. բայց կայ միայն սեռ.* –ի*) «արու թռչուն» Ոսկ. տոբ. տող 3. Վիցօր. 170. Նար. երգ. 285. Արծր. որից* **վարուժանակ** *Եփր. յոր. ՀԱ 1912, 671. Մագ. և Երզն. քեր.* **վարուժնակ** *Եփր. վկ. արև. 69 (Սուիերք Ի. 125). Մաշկ. «ԳԿ Հայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամաուունի, Հայ. բառ ու բան 605),* **վարժանակ** *Վանակ. յոր. ՀԱ 1912, 673 (որի տեղ Նշ Բ ունի* **վարուժանակ***). Մհյ.* **վարճինակ** *Քուչ. 54, 92,* **վարօժ** *Քուչ. 92. որից* **վարժնականիշ** *«վրան վարուժան նկարուած դրօշակ» Բուզ. գ. 2։*

=*Թւում է իրանեան փոխառութիւն, բայց մայր ձևը յայտնի չէ. նկատելի է որ նոյն իսկ Ոսկեդարից ունինք* վարուժան, վարուժնակ, վարժնակ- *(որից* վարժնականիշ*) ձևերը. հմմտ. պրս.* ورش varš, ورشان varšān *«տատրակ», որ Կամուս, թրք. Թրգմ. Բ. 360 համարում է արաբ. և դնում է* ورشان varašan *«արու տատրակ»,* ورشانه varašāna *«էգ տատրակ» (յգ.* viršān, varāšīn*), փոխառութեամբ նաև ասոր.* ܘܪܫܢܐ varšānā *«վայրի աղաւնի»* (Brockelmann, Lex. syr. *89 բ)։*

ԳԴ 530 ա բուն բառարանում պարսիկ բառի դէմ դնում է հյ. «վարուժանն», բայց գրքի վերջում տուած հայ և պարսիկ ցեղակից բառերի համեմատական տախտակում չի յիշում։ Հիւնք. պրս. վէրշ, վէրշան։

*ՎԱՐՈՒՆԳ կամ ՎԱՐՈՒՆԿ (սեռ. -ոյ, -ի, ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «խոտ» Բուզ. ե. 7. Մխ. առակ. «կիտրոն, ոմկ. աղաճ խաւունի» Գաղիան. Հին բռ. «աշնանային հասուն պտուղ» Պտմ. աղէքս. որից վարնգենի կամ վարնկենի Խոր. աշխ. Վրդն. ծն.։

=Իրանեան անծանօթ մի ձևից, որի այլ ներկայացուցիչներն են պհլ. vātrang, vātrēng, vātrēg, պրս. بادرنگ bādrang, bādirang «սերմացու խոշոր վարունգ, կիտրոն», որ և وارنگ vārang, بالنگ bālang, մազանդ. vāreng. իսկ Տաշքինդի և Թուրքեստանի թաթարական բարբառով badreng «վարունգ» (Будаговъ 1, 220)։—Հիւրշ. 245։

ՆՀԲ յիշում է պրս. վարէնգ, պատրէնգ։ Նոյնպէս և Պատկ. Арм. reorp. 52։ Թիրեաքեան, Պատկ. աշխ. դր. 209 և Հիւնք. պրս. վարէնճ։ Հիւրշ. դժուար է դանում ձայնապէս միացնել այս բոլորը։

*ՎԱՐՍ, ի հլ. (գործածւում է մանաւանդ յոգնակի) «երկար մազեր, ծամ» ՍԳր. փիլբ. «աստղի ճաճանչ» Յոթ. լը. 32. Նար. յովէդ. Մաղաք. աբեղ. «ծառի սաղարթ» Պիտ. որից վարսաւոր «մազերը շատ» Ոսկ. ա. կոր. և ես. «գիսաւոր աստղ» Փիլ. Ղևոնդ. Բրս. ծն. «սաղարթախիտ» ՍԳր. Ագաթ. վարսակալ Բուզ. վարսամ «գիսաւոր աստղ» Դամասկ. վարսամճաճար «լուսնոտ, քնաշրջիկ» Կղնկտ. Հրտր. էմ. էջ 130. վարսավիրայ Եզնկ. ե. 1, Դատ. ժզ. 19. Ոսկ. մ. ա. 4. վարսաւորիլ Սեբեր. բարձրավարս Պիտ. Նիւս. երգ. բաղկավարս Մագ. ծաղկավարս Ճառընտ. սպիտակավարս Պիտ.։

=Պհլ. vars, սոգդ. vars, գնդ. ᵛᵃʳˢᵃ varəsa «մազ, վարս (յատկապէս գլխի)», պրս. گرس gurs «խոպոպիք» (Horn § 908)։ Իրանեաններին ցեղակից են հլ. vlasŭ, չեխ. vlas, ռուս. волосъ «ծամ, մազ (թէ՛ գլխի և թէ մարմնի)», յն. λάχνη «գանգուր կամ գոյզ մազ», λάχνος «գեղմն»։ Այս բոլորի պարզական արմատն է հնխ. ųel- «ոլորել, գալարել», որ ունի բազմաթիւ ածած ձևեր. յն. λάχνη յառաջանում է ųlk'-snā ձևից. հայերէնի մէջ նոյն արմատից ունինք գեղմն, որ տե՛ս առանձին (Pokorny 1, 297, Boisacq 562, Trautmann 341): Իրանեանից են փոխառեալ նաև օսթյակ. wāres «ձիու բաշ», բոշ. վալիշ, վալիս «մազ»։—Հիւրշ. 246։

ՆՀԲ կցում է բարշ, բաշ, ոմկ. բէրշէմ ձևերի հետ։ Böttich. ZDMG 1850, 362 սանս. vr̥jina, մակեդ. ἀβαρχνᾶ։ Lag. Urgesch. 668 գնդ. vwarəsa, հլ. wlasŭ: Նոյնը նաև Müller SWAW 42, 253: Justi, Zendsp. 270 գնդ. varəsa, պհլ. vars: Lag. Ges. Abhd. 275 աւելացնում է նաև լիւդ. βα(ρ)σάρα։ Canini, Et. étym. 35 սանս. vr̥kša «ծառ» բառի հետ։ Տէրվ. Նախալ. 107 գնդ. varəsa, լիթ. varsà, հլ. vlasŭ բառերի հետ հնխ. varsa ձևից։ Հիւնք. պրս. բէրշէմ բառից։

ԳԻՒ.—Ալշ. Բլ. Գոր. Ղրբ. Մշ. Շմ. Ջղ. վարս «կնոջ մազ» (անէծքների մէջ միայն գործածուած), Ագլ. վէօրս «խոպոպիք»։ Նոր բառեր են վարսակտուր, վարսավարար, սպիտակավարս։

ՓՈԽ.—Վրաց. կայ ვარხოშო վարսիմի «սափրիչ՝ որ մազ է խուզում և արիւն առնում». բայց հաւանաբար ուղղակի պհլ. փոխառութիւն է, որովհետև հայերէնի մէջ *վարսիմ «սափրիլ» բառ գոյութիւն չունի։

*ՎԱՐՍ «դեղնախուռնկ, դեղին կոճ, զէրտէչաւ, memocylon tinctorium» Գաղիան. Ամիրտ. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 575 և ՀԲուս. § 2890։

=Արաբ. ورس vars «դեղին կոճ» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 304)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

*ՎԱՐՍԱԳ «մի տեսակ կարճ սուր, որ կախում են ազդրից». գիտէ միայն ԳԴ, որ գործածում է էջ 50 բ պրս. եէֆավիյզ բառի բացատրութեան մէջ։

ՎԱՐՍԱԿ, ո հլ. «մի տեսակ արմտիք, եուլաֆ, լտ. avena fatua L» (Տիրացուեան,

Contributo § 26) *Ագաթ. Վեցօր. 88 (սեռ. վարսակոյ ձևով)։*

Նշբ դնում է վարս *«մազ» բառից։ Նույնը նաև* Lag. Urgesch. 669: Lag. Arm. St. § 2117 *և Հիւբշ. 246 մերժում են։ Հիւնք. պրս.* فرز farza *«զալարիք, մարդ» բառից։* Patrubány, Monde oriental *հտ. 2 (1907/8), էջ 221 և* Petersson. Ar. u. Arm. Stud. 97 *դարձնալ* վարս *բառից։ Պատահական նմանութիւն ունի պրս.* barza, barzah *«սերմն, կանեփհատ»։* Pictet, *բ. տպ. Ա. 350 սանս.* varzeas *«սնունդ» բառի հետ։*

ՎԱՐՍԱՄ *«զաւազան, փայտ, բիր, ցից» Վստկ. 166, 179։*

Յիշեցնում է պրս. برسم barsam, *որ է* բարսմունք *«զրադաշտականների ճիւղերի կապոցը՝ զոհի ժամանակ» (տե՛ս* բարսմունք*). բայց այսպիսի զուտ իրանական մի կրօնական բառ կարո՞ղ էր այնպէս հասարակ իմաստ ստանալ մեր մէջ և այն էլ այդքան ուշ ժամանակ։*

***ՎԱՐՍԱՄ**, *որ և* վարսամն, վարսաման *«անուշահոտ մի բոյս, սուսամբար,* tenacetum balsamita L, *Բրք. մարսէմանի» Գաղիան. բժշ.։*

=*Արևելեան բառ է. հմմտ. Բրք.* marsema, mársemani *նոյն նշ.։*

Սխալ է մեկնում Նշբ՝ իբրև հոմանիշ դրուած փրենի կամ փռենի բառը հասկանալով «φρένωσις, ախտ մտաթափութեան»։ Ուղիղ է հասկանում Հիւս. § 2892, որ սակայն դնում է thimus serpyllum *և հանում է հյ.* վարս *և պրս.* պէրսամ, պէրսէման *«բարսմունք» բառերից։ Վերի ձևով մեկնեց Արթինեան,* REA *1, 119 և Ամէն. տարեց. 1921, 183։*

ՎԱՐՍԱՆԱԻԵՏ, ի *հլ. «սանդարամետական». ունի միայն Բառ. երեմ. էջ 298։*

ՎԱՐՍԵԼ *«գետին գամել, հողի մէջ մխել, պատին մեխել» ՍԳր. Ոսկ. մ. ա. 18 (տե՛ս նաև* վասել*). որից կազմուած է* վարսաւորել *«նոյն նշ.» ՁՀ. կթ. Շնորհ. Բարձր.։*

Նշբ վարել *բայից։ Հիւնք. հանում է* պարսել *բայից։*

***ՎԱՐՏԻՔ** *(սեռ.* վարտեաց*. միայն անեզրաբար գործածուած) «կէս մէջքից ցածր հագած զգեստը» Դան. է. 21, 94. Բուզ. ե. 6. Վրդն. դան. նոր գրականի մէջ՝ արևմտեանը գործածում է «մսի վրայ հագնելիք սպիտակեղէն, տակի վարտիք» նշանակութեամբ, իսկ արևելեանը «տափատ, դրսի վարտիք». Հմմտ.* անդրավարտիք*, որի «ներքնավարտիք» նշանակութիւնը ցոյց է տալիս թէ* վարտիք *հին հայոց մէջ նշանակում էր «դրսի վարտիք», համաձայն արևելեան հայոց գործածութեան։ Սրանից է* անվարտի Ջքր. սարկ. Ա. 72*։*

=*Պհլ. **varti *հոմանիշ ձևից, որ ծագում է* var *«ծածկել» արմատից. նոյն ձևից՝* andar *«մէջ, միջին» նախադրութեամբ կազմուած է պհլ. **andarvarti *«ներքնավարտիք», որից ամբողջութեամբ փոխառեալ է հյ.* անդրավարտիք*։ Իրանական ձևերը՝ բացի* var *արմատից, աւանդուած չեն. բայց նոյնն է հաստատում փոխառեալ արաբ.* اندرورد andarvard *կամ* اندرورديّة andarvardiyya *«մի տեսակ վարտիք, որ ներքնավարտիքի վրայից են հագնում՝ շալվարի և չաշքերի նման... պարսկերէն բառ է և արաբներից ևս գործածուած» (ըստ Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 570)։ Նոյն արմատից նոյն ձևով կազմուած է նաև պհլ. **sārawarti*, «գլխանոց»<հպրս. **sāravarti*, որոնք նոյնպէս աւանդուած չեն, բայց պահուած են փոխառեալ հյ.* սաղաւարտ *(փխ. **սարաւարտ*) և սոգ.* sanvartā *«սաղաւարտ» ձևերով։ Իրանեան այս ձևերի դէմ՝ առանց* -ti *մասնիկի ունինք գնդ.* sāravāra *և պհլ.* sārvār *«սաղաւարտ», որոնց համապատասխան է գալիս. պրս.* شلوار šal-vār *«անդրավարտիք» (բառացի «սրբունքները ծածկող», ըստ* Horn *§ 789)։ Վերջապէս նոյն* var *«ծածկել» արմատից են կազմուած գւռ. պրս.* var, werá *«տափատ»,* verâh *«զգեստ»* (MSL 19, 154):

Müller SWAW 66, 277 *գնդ. ենթադրեալ **varəti *ձևից։* Lag. Arm.

Stud. § 2119 չի ընդունում, ասելով թէ այս պարագային սպասելի էր հյ. *վառ, *վարբ: Պատկ. Матер. I. 16 պհլ. vartītan «դարձնել» բայից. Համմ. rāno-vartin «դիտը պատող հագուստ»: Եաղրճեան, Արևելք 1884 Հոկտ. 17 var «ծածկել» արմատից: Տէրվ. Նախալ. 106 դնում է նոյն արմատից՝ վարել, վերմակ ևն բառերի հետ:—Հիւնք. պրս. քէրաէ «վարագոյր» և ճամէի պատուռ «վարտիք»: Müller WZKM 8 (1894), 363 war «ծածկել» արմատից, իբր հիբրան. warti-, որից և փոխառեալ քաղդ. אזורתקין (պրուած אזורקסין) «վարտիք<հիբրան. āwartikā: Patrubány SA 2, 14 սանս. vṛ «ծածկել», իսկ ՀԱ 1908, 245 բերել բայի հետ Վերի ձևով միևնեց Աճառ. ՀԱ 1908, 122: Հացունի, Պտմ. տարազի, էջ 98, պրս. պարտակ «վարտիք» և վարտաք «հանդերձեղէն օժիտ հարսի»:

ԳԻՒՒ.—Ախց. կր. վարտիք, Ննխ. Պլ. Ր. Սեբ. Սչ. վարդիք, Ասլ. վարդիք (վարդի*), Ակն. վարդիք, վայդիք, Մշ. վարդիգ, Տիգ. վտրդիք, Խրբ. վարդիք¹, Այն. վարդի (տ. Բիւր. 1900, 685), Ագլ. վա՛րթիկ², Սվեդ. վարդաք, ՀՃ. Համշ. վայդիք, ՋՓ. վայդը՛ք, վարդը՛ք: Նոր բառեր են վարտեքաի, վարտեգկապ:

ՎԱՐՓԵՌՈՆ «զարդարուն». ունի միայն Բառ. հրեմ. էջ 298:

*ՎԱՐՔԱՅ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «նաւակ». մէկ անգամ ունի Յայսմ. ապր. 14. «Տարան զնա ի գետն և կապեցին վէմ մի մեծ յոտն և արկին ի վարքայ մի և տարան ի ներքս»:

=Յն. βάρκα «նաւակ» բառն է, որ նոր հընչումով արտասանւում է varka: Բառս բուն եգիպտական է (Համմտ. խպտ. barī) և նշանակում էր Նեղոսի վրայ բանող մի տեսակ նաւ. սրանից փոխառեալ յն. βᾶρις, որից լտ. bāris և նւազականը՝ լտ. *bārica>barca. վերջին ձևով անցաւ բազմաթիւ լեզուների, ինչ. բիւզ. յն. βάρκα, իտալ. barca, ֆրանս. barque, գերմ. barke, անգլ. bark, ռուս. барка ևն, բոլորն էլ «նաւակ» (Walde 83, Boisacq 115, Kluge 40 բ):—Հիւբշ. 383:

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ:

ՎԱՐՔԱՅ «մաշ, լոբի». ունի միայն Բառ. հրեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 560:

ՎԱՒԱՇ կամ ՎԱՎԱՇ (ի, ի-ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ցանկասէր, տուիտա, բղջախոհ» Նխ. ծն. Պտմ. աղէքս. Խոր. Մագ. Տօնակ. Պիտառ. որից վաւաշոտ Փիլ. իմաստ. վաւաշոտել Կղնկտ. Նիւս. բն. վաւաշալից Պիտ. վաւաշանալ Փիլ. իմաստ. Խոր. չարավավաշ ՅՀ. կթ.:

ՆՀԲ «ձայնակից հեշտական մակբայի վա՛շ վա՛շ»: Տէրվ. Մասիս 1881 մայիս 8 և Նախալ. 105 հնխ. vaç, vansk «բաղձալ» արմատից. Համմտ. սանս. դնդ. վաս, սանս. վա՛ञ्छ, վա՛ञ्ज, յն. ἐχών «յօժարակամ», գերմ. wunsch «բաղձանք». հյ. կրկնութեամբ վա–ւաշ. գուտ արմատը աւշ ձևով պահած են զաւշանել, աւշ թէ. հնագոյն կերպարանքն ունի վա՛շ: Հիւնք. յն. βέβιλος «պիղծ, աննուէր»:

ՎԱՒԱՐՏ. անստոյգ բաո. մէկ անգամ ունի Եփր. վկ. արև. էջ 142. «Նովաւ ապատ կանայք ապրեցան ի պէսպէս նկարագործ անօթոց և առ ի զաւարտան (այլ ձ. առ ի զաւարտունս) ատէպ ատէպ Թօթափելոյ». այսպէս հրտր. էջմ. իսկ Սուիերք, Ի. 51 ունի վաւարտ: Ասորի բնագրի լատին թարգմանութիւնն է «feminaeque item liberae a textrinae artis opificio et seculorum negotio conquieverunt», որ որևէ լուսաբանութիւն չի տալիս բառիս համար:

ՆՀԲ ուղում է կարդալ զ'աւարտ. ՋՓ պահում է վաւարտ և մեկնում է «ինչք, ստացուածք». ԱՓ չունի. Ալիշան, Սուիերքի հրատարակիչը, էջ 158, համարում է պրս. ավուրտ (իմա՛ թրք. آورت avurt «թուշ»): Աճառեան, Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 11 մերժում է այս համեմատութիւնը: Անդրիկեան, Բազմ. 1905, 254 վաւարտ ձևով, իբր «աշխարհական զբաղանք, կիրք»: Վարդանեան ՀԱ 1922, 294—5 հաւաքելով եղած բոլոր կարծիքները, գտնում է որ լաւագոյն

ընթերցուածն է զաւարտուս *և նշանակում է «աւարտածները, շինուած վերջացածները». ամբողջը թարգմանում է այսպէս. «անով է որ ապատ կանայք հանգստացան նկարագործ անօթներ շինելու հարկէն և աւարտածները ծախելու ստիպումէն»։*

*ՎԱԻԵՐ *«ստոյգ, հաստատուն» Եփր. Թգ. 425. որից* վաւերական *«նոյն նշ.» Եւս. քր. Ոսկ. մ. բ. 7 և Ես. «պաշտօնական թղթերը կնքելու մատանի» Եղիշ. Օրբել. Կրպտ. ուս.* անվաւեր *Եփր. աւետ. Ոսկ. գծ.* անվաւերական *Եւս. քր.* վաւերացնել, վաւերացում, վաւերագիր *(նոր բառեր) են։*

=*Պհլ.* vāwar *(պրուած է* 𐭥𐭠𐭯𐭫 vāpar*) «հաւատալի, ստոյգ», պազ.* vāwar *«հաւատալի, ստոյգ», պրս.* باور bāvar *«հաւատ, հաւատալը, ստոյգ, վաւերական»,* bāvar kardan, bāvar dāštan, bāvarīdan *«հաւատալ»,* bāvarī *«հաւատ ընծայելը», աֆղան.* bāvar *«վստահութիւն, հաւատարմութիւն», քրդ.* baveri, baveria, bauar *«վստահութիւն», մանիք. պհլ.* 𐫀𐫁𐫗𐫀𐫍𐫀𐫏𐫀𐫍 vāwarīgān *(լ՚ ՝լ֏ւ) «վաւերական, հաստատուն»* (Salemann, Manich. Stud. ЗАН 8, 69)*: Կազմուած է* var *«հաւատալ» արմատից* u-pā *(որ է* upa+ā*) մասնիկով. համմ. զնդ.* vāura, *պրս.* āvar, *պհլ. պազ.* ēvar *«հաւատալի, ստոյգ»* (Horn § 178 bis)*: Այս* var *«հաւատալ» արմատն էլ ծագում է հնխ.* uel- *«ցանկալ, փափագիլ, ընտրել» ձևից (ընդարձակ տե՛ս գեղձ բառի տակ, որ հյ. համապատասխանն է՝ աճած ձ-ով): Իմաստի զարգացումը ցոյց է տալիս զնդ.* var- *«ընտրել, իրեն համար մի բան ջոկել, մի բանի համար համոզում գոյացնել, հաւատալ»* (Bartholomae, Altir. Wört. 1360, Pokorny 1, 294)*:—Հիւբշ. 100։*

ՆՀԲ լծ. պրս. պաւէր *«հաւատ, հաւատալի»,* պաւէր գէրտէն *«հաւատալ», յն.* վէվ՚օս, *լտ.* վա՚լիտուս *«հաստատուն, զօրեղ»։ Հիւբշ.* ZDMG 35 (1881), *էջ 175, պրս.* bāvar: Müller WZKM *6 (1892), 79 նոյնպէս պրս.* bāvar, *որ մերժում է* Horn, *էջ 41, ծան. 2՝ նշանակութիւնը «շատ տարբեր» գտնելով։ Հիւնք. հանում է* բեեռ *բառից, բայց յիշում է նաև պրս.* պավէր։

ՎԱՔ *«աստղի անուն է» Շիր. էջ 73. ունի միայն ԱԲ։*

Պատահական նմանութիւն ունի արաբ. ﻓﻜﺔ fakt *«մի համաստեղութիւն» (Կամուս, Թրք. Թրմ. Գ. 108), որ սակայն պարսկերէն թարգմանութեան մէջ աւելի լաւ բացատրուելով դառնում է «շատ կարմիր մի աստղ՝ հիւսիսային կողմը»։*

ՎԱՔԵԱԼ *«բացեալ». ունի միայն Բո. երեմ. էջ 298։*

*ՎԱՔԻԱՅ *«մէկ օխա (քաշ)». մհյ. բառ, որ ունի միայն նորայր, Բառ. ֆր. (*ocque *բառի տակ)։*

=*Արաբ.* وقيّة vaqiya, *որ և* اوقيّة ūqiya *նոյն նշ. որից փոխառնել են Թրք.* اوقه oqqa, *ռմկ.* օխա, *ֆր.* ocque*։*

Ուղիղ մեկնից նորայր, անդ։

ՎԵԳԱՅ *«ամբարտաւան». ունի միայն Բո. երեմ. էջ 298։*

*ՎԵՀ, ի *հլ. «բարձր, վերին, վսեմ, պատուականագոյն» Փիլ. խոր. Պիտ. Եղիշ. «երկնային էակներ» Պիտ. Եղիշ. «Աստուած» Պիտ. Նար. որից* վեհագոյն *Յհ. իմ. երև. խոր. Պիտ. Պզատ. օրին. Նիւս. բն.* վեհագի *կղնկտ.* վեհափառ *Նար.* վեհանձն *կղնկտ.* վեհապետ *Երզն. քեր.* վեհավայր *Պիտ. են. յգ.* վեհուհի *Տագ. բոլորն էլ յետին։ Ոսկեդարեան հեղինակների մօտ պատահած* վեհ, վեհագոյն *հաղուագիւտ բառերը պէտք է ուղղել՝* վեր, վերագոյն *(Վարդանեան ՀԱ 1921, 609)։ Սրանից են կազմուած նաև մի խումբ իրանեան յատուկ անուններ. ինչ.* Վեհմիհրշապուհ, Վեհշապուհ, Վեհարտաշիր, Վեհիկ, Վեհղենշապուհ, Վեհ-Անջատոհ-Խոսրով, Վեհկաւատ, Վեհոռտ, Վեհսաճան, Վեհ-վեհեամ*: Նոր բառեր են* վեհաժողով, վեհաշուխ, վեհանձնութիւն, վեհապետական, վեհարան, վեհափառութիւն, վեհութիւն *են։*

=*Պհլ.* 𐭥𐭩𐭣 vēh *(իմա՛* veh*), պազ.* veh, *հպրս.* vahyah- *(պահուած միայն* Vahyazdāta *յատուկ անուան մէջ), զնդ.* vaŋhuš *(չեզ.* vohu, *բաղդ.* vahyâ, vaŋhâ, *գերադր.* vahišta-*). պրս.* بِ bih *«լաւ, լաւագոյն»*

(Horn § 241)։ Ծագում են հնխ. ues- «լաւ» ձևից, որի այլ ժառանգներն են՝ սանս. vásu- «լաւ, բարիք, հարստութիւն, ինչք», vasīyān «լաւագոյն», հիւլ. febas «վեհափառութիւն, վսեմութիւն», կիմր. gwych «ուրախ», բրետ. gwiou «ուրախ», ուրիշ տեղեր պահուած միայն յատուկ անունների մէջ. ինչ. գերմ. Wisurīh, Wisu-mār, Wisi-Gothae, գալլ. Bello-vesus, Sigo-vesus, Vesu-avus, Visu-rix, հին իլլիւր. Ves-clevesis են (Pokorny 1, 310)։—Հիւբշ. 246։

Peterm. Gram.² 17 դնում է վեր բառից՝ ուղիղ մեկնեց նախ B. Boré JAs. 1841, 653 համեմատելով պրս. bih և պհլ. vokhia(?) բառերի հետ։ Windisch. 18 հպրս. wazark «մեծ»։ Զուրինով վրրաց. վե «իսկ, բայց» բառի հետ՝ ուղիղ են մեկնում նաև Բուրնուֆ 1849, 200 (հպրս. վաճու «դերազանց»), Böttich. Arica 82, 378, Lag. Urgesch. 609, Պատկ. Изслед. 4, Սեր. 200 են։ Lag. Arm. Stud. § 2121 հյ. վեհագոյն կամ վեհական բառին է կցում արաբ. bahkanaẗ «փառաւորութիւն, պերճութիւն արտաքին կերպարանաց», որ բոլորովին անապահով է գտնում Հիւբշ. 246։ Գաբրագաշեան, Քնն. պատմ. Ա. 269 դնում է վահ «Աստուած» բառից, որ է բագ-bag, և որ գտնում է նաև Վահէ, Վահան, Վահագն են բառերի մէջ։ Bugge IF 1, 459 համարում է վեհ<*վերհ, իբր բնիկ հայ, ծագած հնխ. uperteros «վեհագոյն» բառից, ինչպէս հյ. վեր<հնխ. uper- ձևից։ Հիւնք. յն. εὐ «լաւ» բառից։ Ալիշան, Հին հաւ. էջ 376 գոթ. wih, wiha «վեհ, սուրբ, տաճար», weiha «քահանայապետ»։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 28 պհլ. զնդ. վաս «մեծ»։

ՓՈԽ.—Վրաց. ցo՞o վեհի (տե՛ս Մառ, Հայ-վրաց. յարաբերութ. էջ 41)։

վեհԵր (ի, ո հլ. բստ ՆՀՐ, բայց կայ միայն յետնաբար ո հլ.) «վախկոտ, պղերգ, թուլասիրտ» Ոսկ. յհ. ա. 43. Ճառընտ. որից **վեհերել** կամ **վեհերիլ** Ոսկ. յհ. ա. 12, 30 և մ. ա. 1. բ. 8. **վեհերեալ** Վեցօր. 67. Եփր. փիլիպ. **վեհերոտ** Հռ. ժբ. 11. Կոչ. 6. **վեհերոտել** Մծբ. **վեհերութիւն** Ոսկ. յհ. ա. 43. Սերբեր. **անվեհեր** Ագաթ. Փարպ. են։

ՆՀՐ «ի բառից աի և վախ... երկուցեալ ահիւ ի վեհ իրաց և կամ ի վնաց և ի վախից», **անվեհեր** «լծ. հյ. աեաո, անվախ, որ և յն. ἄφοβος, իսկ լտ. impiger «անպղերգ»։ Հիւնք. հյ. **երևոյթ** բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 18 պրս. bāk, հյ. պակնուլ, վախ բառերի հետ։

***վեՂԱՐ** «կնգուղ, կրօնաւորի գլխանոց» Լմբ. առ լև. որի հետ նոյն է **վաղար** «թագաւորական ոսկեայ մի զարդ» Մխ. դտ. 261, որ և գրուած է **բեղար** Մխ. դտ. էջ 267. նոր բառեր են **վեղարաւոր, անվեղար**։

=Բիւզ. յն. *βελάριον ձևից, որ չէ աւանդուած և որ փոխառեալ պէտք է լինի լտ. velarium «քօղ, ծածկոյթ, վարագոյր» բառից, ինչպէս որ Բիւզ. յն. βῆλον «ծածկոց, վարագոյր» փոխառեալ է լտ. velum «քօղ, վարագոյր» բառից (Sophocles 307)։ Այս նախաձայն β-ի համար է որ մեր բառը ունինք թէ՛ **վեղար** և թէ **բեղար** ձևով։—Ա՛ճ.

ՆՀՐ **վեղար** և **վաղար** իրար լծորդ է համարում. բայց առաջինը մեկնում է լտ. velum, velamen «ծածկոյթ, քօղ», իսկ երկրորդը յն. φάλαρον «արքունի թագ, խոյր»։ Հիւբշ. 382—3 երկուսը բաժանում է իրարից և **վեղար** բառը կասկածով դնում է լտ. velarium, իսկ **վաղար** մերժում է կցել φάλαρα «սաղաւարտի զարդ» բառի հետ։

ԳԻՒՒ.—Իբր կրօնական բառ՝ պահուած ունինք շատ տեղ. ինչ. Ջղ. Սլմ. **վեղար**, Ախց. Ասլ. Երև. Կր. Մշ. Ննխ. Մկ. Պլ. Սեբ. Վն. **վէղար**, Տիգ. **վէղոր**, Ջթ. **վէղօյ, վէղոր**, Տփ. **վիղար**, Սվեդ. **վիղուր**։

[**ՎեՂենԴիԱՐ** «պալատական մի պաշտօնեայ». մէկ անգամ գտնում եմ գործածուած Թղթ. դաշ. 22. «Զորոյ զօրինակն (խաչին) հատու դնել ի դրօշակին իմոյ և նկարել ի վառս սանճաղացն և որմպացն, նաև ի նշանս պատերազմական զինուցն և ի կուրտակս վեղենդիարացն, որովք զօրացեալ զօրացն իմոց»։

=Յն. բիւզ. σελεντιάριος բառն է, որի դանազան աղաւաղեալ ձևերը տե՛ս սեղեն-դիար. այսպէս պէտք է ուղղել նաև վերի բառը։—Ա՛ճ.]

Պատահական նմանութիւն ունի լտ. valentior «ուժեղագոյն, զօրաւորագոյն»։

վեշմակ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Լծ. փիլ. բացատրելու համար վարապետական բառը (Ձևռ. Վենետ. № 1244, գրուած 1307 թ. ըստ Հացունի, Պտմ. տարեգրի, էջ 224)։

Հացունի, անդ կարծում է որ հեղինակը սխալ է հասկացել վարապետ բառը և մեկնել է վեշմակ, որ է պրս. وشمق vašmak «կօշիկ, մուճակ», որ և թրք. باشماق baśmaq «կօշիկ» (որից փոխառեալ են նաև լեհ. baczmag, bačmag, baszmak, սերբ. pàšmag, ուկր. baśmák, ռուս. башмакъ «կօշիկ» Berneker 45)։ Սպասելի էր *վաշմակ և ո՛չ վեշմակ։

վեՌ «կամապաշտ, վէս». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ախտարք. «լինի վեռ, կամապաշտ, լեզուանի»։ Թերևս պէտք է ուղղել խեռ կամ վէս։

վեՍ կամ **վէՍ** «ազատ, ազնուական, իշխան» Մագ. Թղ. 104, 213 (գրուած վէստ). Սամ. աննդ. 106, կիր. պտմ. ամէնից վաւերական վկայութիւնն ունի Խծկոնից արձանագրութիւնը՝ 1033 թուից, որ վէստ ձևով է (տե՛ս Շողակաթ, էջ 180 և տախտակ ԺԱ). նշանակութիւնը ճշդում է Սամ. աննդ. 107, որ գրում է. «Տէր Պետրոս և ազատ Սարգիս (այլուստ գիտենք վեստ Սարգիս) և Գրիգոր Բջնեցին նննգեցին զԴապիկ և զԱնի եռուն ի կայսրն Յունաց»։

նշՒ սրանից է դնում վստահ։ Վարդան Պատմչի հրատարակիչը՝ Վենետ. 1862, էջ 105, ծան. 1 դնում է լտ. a veste «պաշտօնեայ զգեստաւորիչ»։ Էմին, Вахаги-вишапаках և Ответъ. Патк. Москва 1874, էջ 23 (արտ. Изслед. 75 և 100) զնդ. vahišta «լաւագոյն» (իբր «վեհագոյն») բառից։ Բիրնաքեան, Արիահայ բառ. էջ 350 պհլ. veh «վեհ» բառից։

*վեՍՏԱՐԻՍ «հանդերձապետ» Վրք. հց. հա. բ, էջ 234։

=Բիւզ. յն. βεστιάριος «դերձակ», որ փոխառեալ է լտ. vestiarius «հանդերձավաճառ» բառից (Sophocles 306):—Ա՛ճ.

նշՒ «բառ լտ. և յն. վէսթիա՛րիուս, էսթիա՛րիս»։

*վեՍՏԻՏՈՐԱՅ «պալատական մի պաշտօնեայ. պատկանել արքայի». մի մի անգամ գտնում ենք գործածուած Մխ. դտ. էջ 262 (վեստիտորայ ձևով), Մխ. այրիվ. 4 և Սմբ. դատ. 87։

=Յն. բիւզ. βεστίτωρ «դերձակ. 2. թագաւորի հագուստները հագցնող պաշտօնեան», որ փոխառեալ է լտ. vestitor բառից (Sophocles 306). արմատը vestis «հագուստ», vestio «հագցնել»։

Բաստամեան (անդ) դրաւ լտ. ձևից՝ Karst, Դատան. I. 87, II. 76 յունարէնից՝ Nyberg, Hilfsb. 2, 116 և 248 փոխառեալ է դնում իրան. *viyastaձևից. համմտ. պհլ. vyastakīh «առաջ ցայտածը», նախաձայնի vy>gy>j ձայնափոխութեամբ պհլ. jahišn «արդիւնք, յառաջ գալը, յաջողիլը», պրս. jāh «բարձր դիրք, արժանիք» ևն։

+**վեՐ** «վերևը, վերի ծայրը». այս իմաստով ունի Յհ. բ. 7. «լցին դնոսա մինչև ի վեր». սովորաբար գործածւում է նախդիրով. ինչ. ի վեր «դէպի վեր» ՍԳր. եզն. Ոսկ. «այն ժամանակից մինչև այժմ» Շնորհ. ա. պետ. կանոն. «աւելի բարձր, գերագասելի» եզն. և ի վեր «աւելի այն կողմ» ՍԳր. ի վեր քան «աւելի վեր» ՍԳր. եզն. ի վեր և ի խոնարհ «անդադար, միշտ» Ոսկ. ես. վեր ի վայր «տակնուվրայ» Ոսկ. բ. տիմ. «միշտ, անդադար» Ոսկ. մտթ. և յհ. վեր ի վերոյ «երևանից, հարևանցի» Եղիշ. Պետ. «դրսից, երևից» Գ. մկ. գ. 1. ի վերայ ՍԳր. Ագաթ. Կոչ. ի վերոյ Ել. լղ. 19. լթ. 30. Ծն. ա. 7. Կորնթ. ի վերոյ քան ՍԳր. Ոսկ. մ. ա. 4. ի վերուստ ՍԳր. Եւս. քր. Ագաթ. Ոսկ. ա. կոր. մասնիկների յաւելումով՝ վերստին ՍԳր. եզն. փիլ. վերստեայք Եւս. պտմ. 720. վերին ՍԳր.

եզն. բարդութեանց մէջ՝ զառիվեր *ՍԳր.* զառիվերակ *Նորագիւտ բ. մնաց. ի. 16. Եփր. թգ. էջ 449.* խաչվերաց *Խոսր. Յայսմ.* նախավերակ *Շիր.* գլխիվեր *Վրդն. պատմ.* ծառավերաց *Տօնակ. բարդութեանց սկիզբը* վերունի *կրկին գործածութիւն. ոսկեդարեան նշանակութիւնն է «վերը, վրան, բարձրը», համմտ.* վերակացու *ՍԳր. Կոչ.* վերարկու *ՍԳր.* վերագոյն *ՍԳր. եզն. Ագաթ. Եփր. Հռ. երր. և տիտ.* վերամբարձ *եզնկ. գ. 15. Ագաթ. Ոսկ. ես.* վերաճալ *ՍԳր. եզն. Եփր. թգ. ևն. իսկ յետին յունաբան հեղինակների մօտ դարձել է մասնիկ՝ «վերատին, կրկին, նորից, դարձեալ» նշանակութեամբ, իբր համապատասխան յն.* ἀνα- *նախդիրին. համմտ.* վերաբանութիւն=ἀναλογία, վերագրել=ἀναγράφω, վերածել=ἀνάγω, վերծանել=ἀναγιγνώσκω *ևն։ Նոր բառեր են* վերնամաշկ, վերաբանալ, վերաբացում, վերաբերմունք, վերաբնակիչ, վերակազմութիւն, վերակազմել, վերակենդանութիւն, վերաիաստատել, վերաիսկել, վերաիսկիչ, վերամշակել, վերամշակութիւն, վերաձորոգել, վերաձորոգիչ, վերաշինութիւն, վերաշինել, վերաշինական, վերապահութիւն, աձվերապահ, աձվերապահօրէն, վերապատուելի, վերաստուգել, վերաստուգութիւն, վերաստուգիչ, վերացական, վերացականութիւն, վերաքննել, վերաքննութիւն, վերաքննելի, վերաքննիչ վերելակ *ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* uper- *ձևից, որ ծագում է պարզական* upo>*հյ. նուպ արմատից. ժառանգներից համմտ. սանս.* upári, *հինդուստ.* اوپر ūpur, *գնչ.* oprė, *գնդ.* upairi, *հպրս.* upariy, *պհլ.* apar, *պազ.* awar, *խոթանի իրան.* vīra, *պրս.* بر bar, *քրդ.* ber, *աֆղան.* bar, pre-, *օսս.* uol, ol, välä, *բելուճ.* par, *վախի* war, *զազա* vēr, *բոշ.* ու'prա, *յն.* ὑπερ, *լտ.* s-uper (>*ֆրանս.* sur), *գալլ.* ver-, *կորն. կիմր.* gor, *հիռլ.* for, *գոթ.* ufar, *հրդ.* ubir, *գերմ.* über, *հիսլ.* yfir, *հսաքս.* obar, *անգսք.* ofer, *անգլ. հոլլ.* over, *բոլորն էլ «վեր, ի վերայ» նշանակութեամբ* (Pokorny 1, 192 *և* 267, Walde 824, Boisacq 282, 1003, Kluge 501, Ernout-Meillet 951, Horn § 191): *Հնխ.* uper- *դարձել է նախահայ* *ուբր, որից* վեր:

Klaproth, As. pol. 106 ի վերայ=*գերմ.* über, *101* վեր=*իռլ.* orða: *ԳԴ մեկնում է* վեր, ի վերայ=*պրս.* bar, վերին=barīn, վերնատուն=varθān: *ՆՀԲ լծ. հյ.* գեր, *պրս.* պէր, ֆէր, զեպէր, *յն.* ὑπέρ, *լտ.* super: Peterm. 35 *պրս.* bar: Wind. 7, 19, 41 *հյ.* գեր, *սանս.* upari, *յն.* ὑπέρ, *գոթ.* ufar, *գերմ.* über: Gosche 26 *փռիւգ.* ὄρος, *սանս.* upari, *պրս.* bar, abar: Böttich. Arica 38 *և* Lag. Urgesch. 227 var *արմատից (վերջինը՝ էջ 224 նաև* վերին=*սանս.* varuṇa): Müller SWAW 38, 586 վերաճալ=*յն.* ἀείρειν<ἀϝερ-ε-ειν, *Մասեաց աղաւ. 1863, 144 կարծում է թէ ի վեր «հետէ, այն ժամանակից սկսած» նշանակութեամբ՝ բրբ.* պէրի, պէրու *«ի վեր, հետէ» բառն է, ինչպէս որ խրիմի և նոր-նախիջևանի հայերն էլ ունին* վէրի *փխ. տճկ.* beri. *այսպէս «երկու օրէն վէրի. Անկից վէրի. Ջինքը տեսածէս վէրի»։ (Այս մեկնութիւնը յայտնապէս սխալ է, որովհետև նոյն ձևը հների մէջ էլ գտնում ենք գործածուած. համմտ. Շնորհ. ա. պետ. ծե. կանոն)։* Justi, Zendsp. 62 *սանս.* upari, *պրս.* bar, *փռիւգ.* ὄρος *ձևերի հետ՝ գնդ.* upairi *բառի տակ։* Pictet 2, 298 վերարկու *կցում է սանս.* varutra, *անգլ.* wearing *ևն բառերին։ Այվազեան, Ուղղագր. էջ 44 լծ.* վեն: Fick KZ *7, 365 մերժում է պհլ.* a par, awar, *որոնք պիտի տային հյ.* վար, *և մեր բառը իբր բնիկ հանում է հնխ.* varsu *ձևից, որի ժառանգներն են՝ սանս.* váršman *«բարձրութիւն, վերը, վերինը»,* váršīyas *«բարձրագոյն, վերնագոյն»,* váršišṭha- *«ամենաբարձրը, ամենավերինը», լիթ.* virszùs *«վերինը», հսլ.* vrŭchŭ *«գագաթ», հիռլ.* ferr *«լաւագոյն», փռիւգ.* ὄφος, ὄρος։ *Հիւբշ.* KZ *23, 34 և 48 յն.* ἀϝερ, ἀείρω *«բարձրացնել», փռիւգ.* ὄρος։ Lag. Arm. Stud. § 2124 *պրս.* bar, abar, war, *գնդ.* upairi, *սանս.* upari։ *Մորթման* ZDMG *26, 531 բևեռ.* uri, curi *«ի վերայ» և 526* vara *«վրայ»։—Հիւբշ.* ZDMG 36

(1882), 121 և Arm. Stud. § 265 *ընդունում է* Fick-ի *մեկնութիւնը՝ Տէրվիշ. Նախալ. 52—53 հնխ.* vardh «*վերանալ, աճիլ*» *արմատի* var *պարզականից. համմտ. սանս.* vardh, *յն.* ὄρθος «*ուղիղ, վեր*», *գւռ.* βορθός; *Հիւնք. պրս.* վէր և պէր: Bugge, Btrg. 24 և KZ 32, 56 *առարկելով թէ հնխ.* rs>*հյ* r (*ուշացնենք նաև ա՛յն, որ հնխ.* v- *տալիս է հյ.* g. և ոչ v), *մերժում է դնել ըստ* Fick և *Հիւբշ. հնխ.* vers- *արմատից և հին քերականների առաջարկած մեկնութիւնը ձևակերպում է վերի ձևով՝* Bugge, Lyk. Stud. 1, 84 *լիկ.* vel- *բառի հետ՝ Մառ, Արաքս 1890 Ա. 111* վեր, գեր և լեառն *կցում է դնդ.* gairi «*սար, լեռ*» *բառին՝* Meillet MSL 7, 164 *չի ընդունում թէ հնխ.* rs>*հյ.* r, *իսկ հնխ.* w *ձայնի դէմ սպասելով հյ.* g, *հաւանական է համարում դնել* *vers> վեր, *որի հետ նոյնացնում է հյ.* գեր, *ինչ.* գեր ի վերոյ՝ *Հիւբշ.* Arm. Gram. 495 *խնդրական է գտնում* գեր, *որովհետև հների մօտ գոյութիւն չունի, և հնխ.* *vers- *ձևի հետ յիշում է նաև հնխ.* upero- *կատարեալ՝ Վերջապէս* Pedersen, *Նպաստ, էջ 1 ընդունում և պաշտպանում է ուղիղ մեկնութիւնը՝* Meillet, Dial. indoeur. 85 *ընդունելով հնխ.* rs>*հյ.* r *ձայնափոխութիւնը, բնականաբար նոյնպէս անցնում է նրա կողմը՝ Սանտալճեան,* L'idiome *10* վերսին *բառի մէջ* -սան=*ուրարտ.* sidi, *իսկ* վեր=teruni, *անդ՝ էջ 13՝*— Karst, *Յուշարձան 403 սումեր.* bar «*բարձրը, գագաթ, մակերևոյթ*», *406* meri «*բարձրացած*», *422 թրք.* giru, geri «*յետ*», *425 ԹԹր. ույղ.* örü, öri, *չաղաթ.* üri, ur «*վերև, բարձր*» *Վերջին անգամ* Meillet BSL *№ 79, էջ 9 ընդունում է* վեր<*հնխ.* uper-, *բայց* գեր ի վերոյ *ձևի մէջ* վեր *բաժանելով ծանօթ* վեր *բառից, միացնում է հյ.* գեր, գերել, *յն.* ἀείρω *բառերին՝ Պատահական նմանութիւն ունին մորդվ.* vär «*վերևը*», vära «*վրայ*», *ճապոն.* 上 ue «*վերև*»

. *Գիմ.*—Վեր, ի վեր *ձևերի դէմ ունինք Մշ. Սլմ. Սչ. Վն.* վեր, *Ախց. Խրբ. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* վէր, *Ասլ.* վէ՛ր, *Համշ. Ագլ. Մկ. Մրղ. Տիգ.* վիր, *Տփ.* վիր, վի, *Մշ. Ալշ.* վի, *Շմ.* (տի)վէ՛ր, վէ(կալ), վ(ելլիլ), *Հճ.* վեյ, *Գոր. Ղրբ.* յէր, տիյէր.—*իսկ ի վերայ դարձած է Ջղ.* վերա, *Շմ.* վէրտ, *Ախց. Ասլ. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տփ.* վրա, *Սլմ.* վրտ, *Ագլ.* վո՛րտ, *Տիգ.* վրտն, *Մշ.* վրէն, *Վն.* վէրէն, *Մրղ. Հւր.* վիրտ, *ՋԹ.* վիյտ, վիրտ, *Հճ.* վիյօ, *Գոր. Ղրբ.* յրա:—*Նախդիրը պահում է Սվեդ. ի վիր «վերև», այլուր միայն պատն ի վեր, երեսն ի վեր և նման կապակցութեանց մէջ՝—Յատուկ ուշադրութեան արժանի է վերև ձևը (Ալշ.* վէրեվ, *Երև.* վէրէվ, *Տփ.* վէրիվ, *Մկ.* վիրիվ), *որ աճած է և մասնիկով (համմտ.* ներքև, միջև, ստորև)՝ *յատկապէս զանազանելու համար* վեր «*ի վերև*» *և* վայր «*ցած, ներքև*» *բառերը, որոնք շատ անգ ստացել են միևնոյն ձևը, ճիշտ ինչպէս որ նոյն պատճառով Ջղ. ձևացած է դավեր «դէպ ի վեր, վերև» բառը՝ Նխ. ունի* -իկ *մասնիկով աճած ձևով՝* վրակս, վրակդ, վրակը «*վրաս, վրադ, վրան*»՝ *Համշ.* վռէն «*ի վերայ, վրան*»՝ *նոր բառեր են* վելլել «*հեծնել, բարձրանալ*» *(իմա՛* վեր ելլել), վերավզտուկ, վերաբաշու, վերդի, վերևաճալ, վերկար, վերևանց, վերնակ, վերնաշապիկ, վերնամամի, վերնեի, վերնամար, վերուինստա, վերուդիր, վերվեր, վերվերի, վերվերուկ, վերվերիչ, վերոք, վրակար, վրակոխ, վրակոունկ, վրաճաս, վրածգոց, վրանոց, վրատեսք, վրավրոուց *են.—Թրքախօս հայերից՝ Ատն.* վէրադաստու «*վերակացու*»՝

վԵՐԱՀԻԿ «*սրահ*»՝ *ունի միայն Բռ. երեմ. էջ 299, որ և էջ 303 գրում է* վրահիկ «*սրահ կամ փանակ*»!

*վԵՐՄԱԿ (ի–ա *հլ. ըստ* ՆՀԲ, *բայց առանց վկայութեան*) «*անկողնի ծածկոց, հօրդան*» *Մատ. և Երզն. քեր.*՝

=*Պհլ.* ورماك «*վերարկու, ծածկոց*»՝ *որ գործածուած է Կարնամակ ԺԲ. 1 և անորոշ ընթերցում ունի. կարելի է կարդալ* veramak, verhamak, verhmak *են. Հայերէնը ցոյց է տալիս, որ պէտք է ընտրել* vermak *ընթերցուածը, որից փոխառեալ է* վերմակ՝

Հներից Մագ. և Երզն. քեր. ստուգաբանում են **վեր** *բառից. «Ստուգաբանութեան ձևք. ներքանոց, վերմակ, յիրէն ունելով զանունն»։ ՀՀԲ արմատը դնում է վերմ «վերին», որ առանձին էլ նշանակում է։ Սրանց համեմատ ՆՀԲ մեկնում է «որ ինչ մակագրի ի վերայ ընկողմանելոյն ի մահիճս»։ Նագրճեան, Արևելք 1884 հոկտ. 17 և Տէրվ. Նախալ. 106 հնխ.* var, vṛ *«ծածկել, պատել» արմատից։* Scheftelowitz BB 29, 43 *անս.* varman *«ծածկոց», զնդ.* var *«ծածկել»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 103։*

[**ՎԵՐՄԻՔ** *«բարձր տեղուանք». ունի միայն ԱԲ. սրա արմատն է* **վերմ**, *որ գիտէ միայն ՀՀԲ (տե՛ս* **վերմակ** *բառի տակ). երկուսն էլ անստոյգ։ Անշուշտ այն է, որ դործածուած է Ոսկ. պօղ. ա. 372. «Որպէս և ի բարձրաւանդակս ինչ ելեալ ամրացեալ չանկանիցի ումեք ի բուռն, որ ի ներքուստ ի վերմիք լիցին՝ այնպիսի էր և Պաւղոսի ոգիս»։ Ըստ Վարդանեան, Բառաք. դիտ. 106 ուղղելի է ի* **վեր** *մագլիցեն, ինչպէս ունին ուրիշ ձեռագիրներ և ինչպէս ցոյց է տալիս յոյնը։ Ըստ այսմ* **վերմիք** *կամ* **վերմ** *բառը գոյութիւն չունի։*]

ՆՀԲ «նոյն ընդ վզեաւ, յորոց նիհ ի բաց դիցի տառդ վ, լինին նաս, որպէս լտ. և թրք. noxa, noqsān, և զեան, ամկ. զիան, սանս. վինա՛սա «կորուստ»։ Ուղիղ համեմատութիւններ ունին Windisch. 19, Böttich. ZDMG 1850, 362, Arica 84, 405, Spiegel, Huzw. Gram. 190, Lag. Urgesch. 528, Müller SWAW 38, 576, Justi, Zendsp. 169, Տէրվ. Aitarm. 104, Մասիս 1882 ապր. 15, Նախալ. 90 ևն։ Հիւնք. վասն բառից։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մշ. Մրղ. Շմ. Ջղ. Սեբ. Սլմ. Տփ. վնաս, Տիգ. վնաս։

ՓՈԽ.—Վրաց. უნახი ունասի (=վունասի) «յանցանք» (ըստ Մառ, Ипполл. 67)։

ՎՆԿԵԼ «մլաւել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Միխ. աս. 289. «Իբրև ղչուն հաչէին և իբրև կկաւու վնկէին»։ Նոյն է գւռ. վնգալ «մանուկների լալը, հիւանդի հառաչելը», որից վնգատալ, վնգվնգալ «շան կաղկանձել» ևն։

=Բնաձայն բառ։

ՎՇՈՎԵԼ «ժողովե՞լ». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկիփ. «Բազում ինչս վշովեցաք» (ըստ նոր ձ. սովաւ շահեցաք)։

ՎՈՀՄԱԿ (ի–ա Հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «զաղաններու խումբ» Ոսկ. մ. բ. 8. Սարգ. գրուած նաև յոհմակ Եփր. յոբ. «Հապա՛ տեսից յոհմակս խաւարեայս» (ՀԱ 1912, 671). ՆՀԲ գրում է ոհմակ։

ՆՀԲ պրս. պէհիմ, պէհէմ, պիհիմ (իմա՛ ba-ham «միասին»)։ Հիւնք. վհուկ բառից։ Պարոնեան, Բանաս. 1900, 172 զնդ. վոհումանճո «բարի միտք»։

*ՎՈՅՎՈՏԱՑ «պետական պաշտօնեայ՝ որ հարկերն է հաւաքում» Պատմ. ԺՀ դարից (Դիւան ժ, էջ 114, գրուած վօյվօյատայ, վայվօտայ)։

=Փոխառնալ է թրք. voyvoda ویوده «քաղաքապետ. 2. իշխան» բառից, այս էլ սերբերէնից, որ է ռուս. воевода «զօրավար»։—Աճ.

*ՎՈՒՒ, ի Հլ. «հիւսիսային ցուրտ քամի» Արիստ. աշխ. 611, 612. որ և վռուէաս Արիստ. աշխ. 612. վօռէաս Տաթև. հարց. 205. վաւէաս Առաք. կենդ. էջ 70. վաւէ Տաթև. հարց. 205. վաւէք Առաք. կենդ. 70. բօրէաս Վասակ. 96, 97 (ունի միայն ՀՀԲ). որից վօռէասական Առաք. պատմ. 434, 435։

=Յն. βορέας, որից նաև լտ. borea, տճկ. poryaz پوديار «հիւսիսային քամի»։ Բուն նշանակում է «լեռների քամի» և կցում է հլ. gora, սանս. giri-, զնդ. gairi- «լեռ», լիթ. gìrė «անտառ», ալբան. gur «քար, ժայռ» բառերին (Boisacq 127).—Հիւբշ. 383։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

ՎՈՐԱԿ *«մորեխ, locusta» (կամ թերևս «ծովային խեցգետին», որովհետև լտ. locusta ունի այս երկու նշանակութիւնները). գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ-Հյ. էջ 308ա։*

ՎՈՒ ՎՈՒ *«աղաւնու ձայն» Արշ.։*

=Բնաձայն բառ։

Վուլ *տե՛ս Բուլ։*

ՎՈՒՇ, ն *հլ. «բարակ կտաւ, քթան, կտաւի բոյսը. linum usitatissimum L» Մխ. առակ. Վրդն. սղ. Վրք. հց. «խծուծ, քուղ, կանեփի խոշրտուք, Թրք. իւսթիւշիւ» Ես. ա. 31, Դան. գ. 46. Սիրաք իա. 10. որից վշագործ «վուշ մանող» ԱԲ։*

ՆՀԲ «նոյն ընդ ձայնիս բեհեզ, ամկ. պեզ, յն. βύσσος, լտ. byssus»: Canini, Et. étym. 153 պելասկ. pushi «բուրդ» բառի հետ։ Հիւնք. բեհեզ բառի հետ՝ յն. βύσσος։ ՀԲուս. § 2901 յիշում է հրգ. flahs «վուշ»։ Պատահական նմանութիւն ունին արաբ. وشو vušu՝ «սարդի ոստայն» և وشيعة vašī'a «թելի ևն կծիկ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 688—9)։

ԳԻՒ.—Մշ. վուշ։

ՓՈԽ.—Գնչ. vuš «կտաւ, վուշ», որից vušeskoro կամ vušengoro «վշագործ, վուշ պատրաստող կամ ծախող». (Paspati գրում է vus կամ pus և հանում է սանս. buša, vusa «յարդի մանրուք» բառից, որ անյարմար է։ Առաջին անգամ Müller SWAW 66, 278 դրաւ հայերէնից)։

Վուռ *տե՛ս Ուռն։*

ՎՈՔ *«թեղի, պաղի, կնձնի, ulmus campestris L» Բժշ. (գիտէ միայն Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ 142—3. չունի ՀԲուս.)։*

ՎՈՒՁ *«շտապ» Դրնդ. էջ 62. Տաղ. հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 88. Փահլ. էջ 62 (Զարժէ այս կենացս իրքն, այն կենաց ո՛չ մէկին մի մաղ, յորժամ բաժանի հոգին, կմնայ շատ մարդոյ վուազ)։ Գործածական է արդի գաւառականներում (Աժտ. Ալշ. Երև. Կ. Պլ. Պրբ. Նր. Շիր. Զթ. Վն. Տփ.), որից վուազացնել, վուազել, վուազնալ, վուազկոտ։*

ՎՈՁՈՂ *«յանդուգն, ապստամբ». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Հռոմ. 189. «Աստ խոնարհ լինիս, իսկ յետ աղօթիցն վոզող և ստամբակ»։—Արմատը* **վոզ-** *գտնում է թերևս նաև* **վոզիք** *«դուրս ցցուած քիթ» բառի մէջ՝ Վստկ. 198. Համմտ. նաև* **պոզող**։

[ՎՈՆԴԻԼ *«վարակիլ, շաղախիլ». ունի միայն ՓԲ։*

=Սխալագիր ձև, որ յառաջացած է Ոսկ. մտթ. Ա. էջ 598 հատուածից. «Այնպիսի ժանտ ախտիւք վոնդեալ իցէ». ՆՀԲ ունի վանդեալ, ինչպէս ուղղում է նաև Վարդանեան, Բառաքնն. դիտ. Ա. 1913, էջ 102։]

ՎՈՋԱԼ *«հիւանդի հառաչելը». յետին ժամանակի բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Զքր. սարկ. Բ. 70. «Մտանէր ի ներքոյ մահճի և վոչայր»։ Նոյն ձևով և նշանակութեամբ գործածական է Երև. Ղզ. Շլ. Տփ. գաւառականներում։ Բնաձայն։*

ՎՈՇՇ *«կորկոտէ կամ ձաւարէ ապուր». նորագիւտ բառ՝ յետին ժամանակի. մէկ անգամ գործածուած եմ գտնում Առաք. պտմ. 130. «Իսկ պառաւն բացեալ զթոնիրն եհան պուտկով եփեալ կորկոտապուր, զոր ամանք վոշ ասեն»։ Կենդանի է Վն. Զղ. բարբառներում՝ վոշ ձևով և նոյն նշանակութեամբ։*

Ըստ այսմ սխալ է ՀԲուս. § 2904 **վոշ** *«ձաւար», ինչպէս նկատում է Նորայր ՀԱ. 1921, 342։*

ՎՍԳՈՀ *«լայն ու անկարգ բաց արած» (դրքի համար է ասում). նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած ԺԸ դարու մի տաղի մէջ (Հրտր. ՀԱ. 1930, էջ 52). «Ով որ զդիրքըն վրսգոհ պարզէ, նա յանասուն կու նմանէ, զշարուածքն զամէն կու քակտէ, և կապին վնաս կու գործէ»։*

ՎՍԵԱՄ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան. յետնաբար կայ ի–ա հլ. Սասն. էջ 64) «գերագոյն, վեհ, բարձր» Ճառընտ. որ և վսամ Կղնկտ. Հրտր. Եմ. էջ 68 (երկիցս) =Կանոն. էջ 197. Սասն. էջ 64 (վսամ, վսամաց ձևով). աւելի սովորական է վսեմ Ոսկիփ. որ արդի դրականի ընդունած միակ ձևն է. որից վսեմական կամ վսամական Պղատ. տիմ. 36. կթ. Մաթս. և Անան. եկեղ. վսեմանալ կամ վսամանալ Խոր. վսեմապետ կամ վսամապետ Արծր. ևն. բոլորն էլ*

յետին։ Նոր բառեր են վսեմաշուք, վսեմապատիւ, վսեմափայլ, վսեմութիւն և այլն։

ՆՀՔ «լծ. վէս, վիզ, վզան, վեստ, ոստ, թրք. իւստ, եիւնէ, սէմա, ազիմ, ազիզ և յն. օսիօ՛ս «սուրբ» և այլն»։ Էմին, Ответъ Паткан. 24 վէս բառից։ Հիւնք. յն. εὔσημος «բարենշան, երևելի»։ Ադոնց, Арм. Юстин. էջ 402 իրան. *viθya-ma «ցեղի անդամ» ձևից։ Թիրեաքեան, Ատրպատ էջ 27 հյ. վէս, վրաստան, վսեր բառերի հետ՝ պհլ. vistāx բառին է կցում։

ՎՍԵՀ «վտարեալ կամ հեռի». ունի միայն Բառ. երեմ. էջ 302. բայց նոյնը վսեր բառը մեկնելու ժամանակ՝ դնում է «չար, հակառակ, վտարեալ, հեռի», որից կարելի է կարծել որ վսեհ ձևը վսեր բառի մի սխալ գրչութիւնը լինի։

ՎՍԵՍՏԱԿ «առճիկ, թոշակ, բանտարներին տրուած վարձ պաշարելէնով». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Նորագիւտ բ. մնաց. բ. 10. «Եւ ահաւասիկ գործաւորացդ փայտահարիդ ծառայից քոց հրաման տուաք տալ վսեստակ ցորենոյ քոռս քսան հազար, և գարոյ քոռս քսան հազար, և ձիթոյ մարս և գինոյ մարս քսան հազարս»։

Նորագիւտ բառս առաջին անգամ ծանօթացրեց Ն. եպս. Դուրեան, Մասիս 1900, 518՝ մեկնելով կասկածով «չափ»։ Սրանից անկախաբար և վերի ձևով մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր Մնաց. գրոց մէջ, էջ 32։ Ամատունի, Հայ. բառ ու բան 612 «ծնծած ցորեն (ձաւար, կորկոտ)»։ Վարդանեան ՀԱ. 1911, 502 ուզում է կարդալ խեստակ՝ իբր խեստ <յն. ξέστης բառի նուազականը։ Բայց այն ժամանակ ի՞նչ միտք կունենայ «տալ խեստակ ցորենոյ քոռս քսան հազար», այսինքն միևնոյն առարկայի համար երկու չափ, որոնցից առաջինը 500 անգամ պակաս է երկրորդից. (մի քսեստը արժէ մօտ $^1/_2$ լիտր, քոռը 286 լիտր)։

ՎՍԵՐ «յանդուգն» Գառն. 14, 73. Բենիկ (տպ. Սոփերք ԻԱ 107). որից ի վսեր գալ «յանդգնիլ, մարտնչիլ, կռուիլ» Ոսկ. մ. ա. 20. բ. 8. Փիլիպ. ե. վսերեկեալ «յանդգնող» ճառընտ. վսերական, վսերամիտ, վսերային «յանդուգն» Բենիկ։ Բառիս նշանակութիւնը անորոշ է։ Հին բռ. մեկնում է «չար նախանձ», Բառ. երեմ. էջ 302 «չար, հակառակ, վտարեալ, հեռի», ՆՀՔ և ՋՔ դնում են «վէճ, ոգորիլ, յանդգնիլ, հէգ, թշուառական, չար». բայց մէջ բերուած օրինակները ցոյց են տալիս որ ճշտագոյն մեկնութիւնը պիտի լինի ի վսեր գալ «risquer, մի բանի ակընկալութեամբ անձը յանդգնաբար վտանգի ենթարկել, որի արդիւնքը կլինի փորձանք և թշուառութիւն»։

Էմին, Ответь. Патк. 24 (Исслед. 101) վէս բառից. Հիւնք. սևեռ բառից։ Թիրեաքեան, Ատրպատ էջ 27 հյ. վէս, վստահ բառերի հետ՝ պհլ. vistāx:

ՎՍՆԵԱԼ «ընտրեալ կամ սմնեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 302 (սմնել բառի վրայ տե՛ս առանձին)։

ՎՍՈՎ. Նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 278 սագ բառի բացատրութեան մէջ. այսպէս՝ սագ «նման, սահման, վսով, անկար»։

*ՎՍՏԱՀ «ապահով, վրան հաւատ ունեցած, համարձակ, աներկիւղ» ՍԳր. Եւս. քր. որից վստահութիւն ՍԳր. Ոսկ. փիլիպ. վըստահաճալ ՍԳր. վստահել Ոսկ. յհ. ա. 36 և Փիլիպ. վստահապէս Նար. բարեվստահութիւն Կիւրղ. ես. անվստահ Փարպ. վստահի «անշուշտ, ապահովապէս, իրօք» (չունի ԱԲ) Անսիզք 65. Նոր բառեր են՝ աննենավստահ, ինքնավստահ, անվստահելի, վստահելի, վստահաւորէն, անվստահաբար են։

=Հպրս. *vistāhuva-, պհլ. vistāxv «վրաստահ, անպատկառ», պազ. vastāx «վստահ, ապահով, համարձակ, ինքնավստահ, յանձնապաստան, լիրբ, անպատկառ», պրս. گستاخ gustāx (նաև bustāx, սխալմամբ kustāx, համառօտուած ustāx, ūstāx, istāx) «անհամեստ կերպով խօսող, լրբաբան» (Horn § 920)։—Հիւրշ. 249։

ՆՀՔ «որպէս թէ վեստ կամ տճկ. իւստ՝ այսինքն գեր ի վերոյ՝ քան զաճ, լծ. և պրս. ֆիւստախ «անահ, յանդուգն» և

սէրպէսա». *իսկ ճաւասա բառի տակ լծ. յն. բի՛սդիս: Պրս.* gustāx *ձևին են կցում* Böttich. Arica *84, 405 (նաև սանս.* visthā), Lag. Urgesch. 151, Müller SWAW 41, 7, Lag. Ges. Abhd. 33 *են՝ էմին,* Вахагн-вишап. *և* Ответъ Патк. *23 (արտ.* Изслед. и Стат. 75 *և* 100*)* **վեստ** *բառից: Հիւնք. պրս.* **սիւրա, իւրա** *«Զննտ Աւեստա» ձևից:*

ԳԻՒ.—Ախց. Մշ. **վստա:**

ՎՍՏԱՄ, ի–ա *հլ. «վտիտ, նիհար». գիտեն միայն Բառ. երեմ. 302 և ՓԲ յաւել:*

ՎՍՏՈՀԵԼ *«անարգել». ունի միայն Բառ. երեմ. էջ 303:*

***ՎՏԱԿ, ի–ա** հլ. «առու, գետակ» ՍԳր. Խոր. Եղիշ. (յգ.* **վտակաձի** *Մագ. մեծ են 19). որից* **վտակալից** *Նփր. Բուզ, էջ 253,* **վտակախադաց** *Պիտ.* **վտակային** *Փիլ.* **վտակիլ** *ՅՀ. կՓ.* **երեքվտակեան** *Խոր. աշխ.* **չորեքվտակեան** *Արծր. Նար.* **ճամավտակ** *ԳՆԱ.* **մեծավտակ** *ԳՆԱ. ևն:*

=*Պհլ.* *vitak<*գնդ.* *vītāka- *ձևից, որ կազմուած է* vi- *նախամասնիկով* tak, tač *«հոսիլ» արմատից. հմմտ. գնդ.* 𐽅𐽇𐽉 taka- *«վազող, հոսող. 2. վազք, հոսումն (ջրի, արցունքի)»,* 𐽅𐽇𐽆𐽉𐽀𐽅 vīxti *«ձնհալք»=պհլ.* 𐭅𐭉𐭕𐭠𐭫𐭲𐭭 vitāxtan>*պրս.* گداختن gudāxtan *«հալիլ». այս մեկնութեան համաձայն է գալիս* **վտակ** *բառի գործածութիւնը. այսպէս՝* **վտակիւ ջրոյ** *«ջրի հոսանք»,* **վտակք ջուրց իջին յաշաց իմոց** *(արցունքի համար ասուած, ինչպէս գնդ.* taka.): *Ձևի համար հմմտ. պրս.* تاختن tāxtan, *հրմ.* تاز tāx = *պհլ.* 𐭅𐭉𐭕𐭠𐭫𐭲𐭭 tāxtan, tazad, tak<*գնդ.* tač, taka-, *որոնցից հյ. ասպատակ «ձիով վազք»:*

ՆՀՌ լծ. **վէտ, վէժ, վազ**: Peterm. 77 **գետակ** *բառից:* Lag. Urgesch. 311 tak *«հոսիլ» արմատից:* Müller SWAW 38, 576 **գետ** *բառի հետ՝ գնդ.* vaiδi, *պրս.* ǰuy: *էմին,* Ответъ Пакт. *24* **վետ** *բառից:* Justi, Zendsp. 273 *գնդ.* vāiδi *են:* Lag. Btrg. bktr. Lex. 64 *գնդ.* tač *արմատից՝ վերի ձևով: Հիւրշ.* KZ *23, էջ 16, 18, 32, 405 իբր հնիկ հայ՝* vad *արմատից. հմմտ. հյ.* **գետ,** *հսլ.* voda *«ջուր» են: Տէրվիշ.* Altarm. 88 *և Նախալ. 106 հնխ.* vad *«թրջիլ, բխիլ» արմատից բնիկ հայ բառ. հմմտ. սանս.* ud, udra *«ջուր», յն.* ὕδωρ, *լտ.* unda, *հսլ.* voda, *գոթ.* vato, *գերմ.* Wasser, *հյ.* **գետ**: *Թևրևս և ուրդ: Հիւնք.* **վէտ** *բառից: Հիւրշ. 249 անապահով է գրոնում վերի մեկնութիւնը, բայց պատճառաբանութիւն չի տալիս:* Scheftelowitz BB 29, 28 *հնխ.* vēdo *«գիտ» բառից+*ակ *մասնիկով: (Թէ՛ այս և թէ նախորդները անընդունելի են նախաձայն վ–ի պատճառաւ):*

***ՎՏԱՆԳ** (ի հլ. ըստ ՆՀՌ, բայց կայ միայն սեռ–ի՝ ոսկեդարեան վկայութեանց մէջ, յետնաբար ի, ի–ա հլ.) «փորձանք, աղէտ, նեղութիւն» ՍԳր. Ագաթ. «յանցանք, պատուհաս» Արիստ. աշխ. Կանոն. որից* **վտանգել** *Դտ. ժզ. 16. Ագաթ.* **վտանգիլ** *ՍԳր.* **վտանգագործ** *Ոսկ. գազ.* **վտանգակից** *Ոսկ. բ. տիմ.* **վտանգուիլ** *Ոսկ. ես.* **անվտանգ** *ՅՀ. կՓ. Մագ.* **բազմավտանգ** *Նար. գրուած է նաև վտանկ:– Բառիս մի նոր առումն է «հիւանդ, տկար». հմմտ. Անկ. գիրք Նոր կտ. 229—230. «Աղքատ եմ յոյժ և տնանկ գոլով և վտանկ մարմնով... Տեսանես զիս որ այսպէս վտանկ եմ և ոչ կարեմ կանգնել... Ոչ տեսեալ որ զայսպիսի վտանկս կարող իցէ մարդ դեղով ողջացուցանել». (տե՛ս իմ Հայ. նոր բառեր, Բ. 234):*

=*Պհլ.* *vitang<*հպրս.* *vitanka- *«նեղութիւն, վտանգ, դժբախտութիւն» բառից, որ կազմուած է* vi- *մասնիկով* tanč *«սեղմիլ, ճնշիլ» արմատից. հմմտ. նոյն արմատից պհլ.* 𐭲𐭭𐭪 tang *«նեղ»,* 𐭲𐭭𐭪𐭩𐭥 tangīh *«նեղութիւն», պրս.* تنگ tang *«նեղ, ճնշեալ, սեղմ», սանս.* अतङ्का ātaṅka *(կազմուած* ā *մասնիկով) «մարմնի կամ հոգու ցաւ, անհանգստութիւն, վիշտ, տագնապ, երկիւղ»: Թէև պհլ. բառը չէ աւանդուած, բայց կայ նրա աւելի նոր ձևը, այն է՝ մանիք. պհլ.* 𐭥𐭣𐭩𐭲𐭪 =𐫐𐫀𐫤𐫐 vidang *«վտանգ, դժբախտութիւն»* (Salemann ЗАН 8, 72):—*Հիւրշ. 249?*

ՆՀՔ «վատ կամ ի վատ ինչ անկումն»։ Böttich. Arica 84, 405, Lag. Urgesch. 325 *համեմատում են սանս.* ātaṅka- *բառի հետ։ Հիւբշ. 249 ձևակերպում է վերի ձևով, բայց կասկածելի է համարում։ Հիւնք. տագնապ բառից։* Salemann, Manich. Stud. 3AH 8 (1908), 72 *գտնելով պհլ.* vidang *ձևը, ուղղակի կցում է հյ.* վտանգ *բառին։*

Գիւտ.—Ախց. վտանք, *Ալշ. Մշ.* վդանգ՝։

ՎՏԱՌ (ի–ա *հլ. ըստ ՆՀՔ. բայց առանց վկայութեան). «անասունների խումբ». այսպէս՝ «ձիների խումբ» Վեցօր. 139, 141, 147. «ձիերի երամակ» Բրս. ապաշխ. «մատակների խումբ» Ճառընտ. որից* վտառապան *«երամակների պահապան» Երեմ. լ. 4։*

ՀՀՔ մեկնում է վտառ *«սրահ, գաւիթ, հօտ»։ ՆՀՔ «լծ.* վտակ. *հոյլք կենդանեաց՝ որպէս ուղխիւ հորդան տուեալ»։* Lag. Btrg. bktr. Lex. 74 վտառապան *բառը յաջորդ* վտառ *բառից կարծելով՝ կցում է պրս.* guδarbān *«ճանապարհի պահապան» բառին։*

ՎՏԱՌ (ի *հլ. յետնաբար) «մարմնի վրայ գտնուած ծակերը. ինչ. աչքը, ականջները, ռնգունք, բերան, սրինքները, պորտ, միզուկ, սրբան» Նեմես. 16, 101, Ոսկիփ. Սարկ. քհ. որից* վտառանիք *«նոյն նշ.» Մխ. դտ.։*

ՆՀՔ լծ. պատառ։ Lag. Urgesch. 260 *և* Arm. Stud. § 2164 *դնում է* tar *արմատից՝ իբր *vītarəna. Հմմտ. զնդ.* vītar, *պրս.* guδāštan։ *Հիւբշ. 249 յիշում է պհլ.* vitār *«անցք, ճամբայ», զնդ.* vītāra- *«ծառուղի», Հպրս.* vitar *«վրայից կամ միջից անցնիլ», պրս.* guδar, guδār, guδargāh *«անցք, ճամբայ»,* guδāštan *«անցնիլ», բայց այս բոլորը անապահով է գտնում։*

ՎՏԱՌԻԼ *«հասանիլ». ունի միայն Բռ. երեմ. էջ 303։*

**ՎՏԱՐ. արմատ առանձին անգործածական, որից* վտարել *«քշել, հետու վանել, վռնտել, տարագրել» Ոսկ. յհ. բ. 31. Նիւս. բն. Փիլ. «ձեռքից խլել, բռնութեամբ յափշտակել» Սեբեր. ետս. քր. «ցցել, խրել, մխել (նետը հողի մէջ)» Սուտ-Սեբ. էջ 4, Բուզ. էջ 47, 177—8, 198 (տե՛ս ՀԱ. 1913, 29 ծան.),* վտարակ *«պանդուխտ» Շնորհ. եղես. էջ 86,* վտարական *Նիւս. բն. Մագ.* վտարանդել *«պանդխտիլ, քշիլ հետացնել» Երր. բ. 15. Ետս. քր. Ոսկ. ես.* վտարանդի *«գաղթական, հայրենազուրկ» ՍԳր. Ետս. քր. Ոսկ. ես. և մ. Սեբեր. «տարակուսական, երկմիտ» Կոչ. 68, 292, Սեբեր.* վտարանդիկ *(չունի ՆՀՔ) Ետս. քր. բ. 262.* վտարանդութիւն *Երեմ. լ. 18։*

=Պհլ. vitar *ձևից. Համմտ. պհլ.* vitartan *«այն կողմ անցնիլ,* franchir», *Հպրս.* vitar *«վրայից անցնիլ», պրս.* گذاشتن guδāštan *կամ* گذشتن guδaštan, *նիրկ.* guδāram *«փոխանցիլ, անցնիլ. 2. ի բաց թողուլ, արձակել»,* گذار guδār *«անցք, զանցառութիւն», սանս.* विहरति vitarati, vitāráyati *«վրայից անցնիլ», որոնք կազմուած են* vi- *մասնիկով* tar *«անցնիլ» արմատից. Համմտ. հրատարակել<fra-tar (տե՛ս անդ)։ Մեր բառի նշանակութիւնը ցոյց է տալիս նորագիւտ սոգդ.* witēr (ē *յառաջացած յաջորդ* a-*ի պատճառաւ, իբր **vitarayāmi) «faire partir», witár *«հետանալ դնալ, ճամբորդել,* s'en aller, voyager» (Gauthiot, Gram. sogd. *էջ 81). Համմտ. նաև օսս.* t'arun *«վարել, քշել, որսալ, հետացնել» (որ է «վտարել»)* Horn § 893:

ՆՀՔ «լծ. վտառ, տար, օտար, վարել, *որպէս և Բրբ.* սիւրի *«վտառ» և* սիւրմէք *«վարել, վտարել»։* Böttich. ZDMG 1850, 362 *և* Arica 84, 405, Lag. Urgesch. 261, Müller SWAW 42, 257, Justi, Zendsp. 132, *Տէրվ.* Altarm. *47 ծան., Մասիս 1882 ապրիլ 16* ta- *արմատից, իբր սանս.* vitar, *Հպրս.* vi-tar, *պհլ.* vitāritan, *պրս.* guδāštan *են։ Աւելի ընդարձակ է Տէրվ. Մասիս 1882 յունիս 24, ուր* վտարել, վտարանդի, օտար, *կասկածով նաև* տար *(տարապայման, տարապարտ, տարաշխարհ են) փոխառեալ է դնում վերոյիշեալ իրանեան բառերից։ Սրանք յիշում է նաև Հիւբշ. 250, բայց նշանակութեանց տարբերութեան պատճառով («անցնիլ» և «վանել») մերժում է. (նորագիւտ սոգդ.*

բառերը ըստ իս վերացնում են այս դժուարութիւնը)։ Հիւնք. պրս. vārānī-dan:

Գիւռ.—Կայ միայն Ննխ. **վդարէ՛ սա դէղէն** *«կորի՛ր այդ տեղից» ձևի մէջ։*

ՎՏԱՐԱՆՋԵԼ *«գլուխ քաշել, ապստամբել, հպատակութիւնից հեռանալ» Դ. Թագ. իդ. ՀՀ. Խոր. գ. 19։*

Junker KZ 43, 350 *մեկնում է* vi+tar+anJ, *առաջին երկուսը նոյն ընդ* **վրտարել**, *վերջինը* **անջատել**։

ՎՏԱԻԱԿ, ի–ա *հլ. «ներքնակ, տակից հագնելու շոր» Ել. իր. 33. լԹ. 20—24, «ուսանոց» Ել. իր. 15, «վակաս» Ել. լԹ. 2. «վերարկու» Սփր. Թգ. 352, 374. սխալմամբ գրուած է* **վտաւտա** *Բուզ. 123 (Ջհիսան վտաւտաօքն ծածկեալ)։*

ՆՀԲ **վտաւակ՝** *լծ. Թրք.* **տիվան** *և* **տուվագ**. *իսկ* **վտաւտա** *առանձին բառ համարելով՝ մեկնում է «որպէս թէ մասն վտաւակի, վերջք, քղանցք»։ (ՋԲ նոյն ընդ* **վտաւակ**, *իսկ ԱԲ «հագուստ, կապայ կամ հագուստին ծայրը»)։*

ՎՏԱԻԱՆ, ի–ա *հլ. «մէկ ասպարէզ կամ մէկ նեռընկէց» ՍԳր. եւս. քր. Խոր. գրուած է նաև* **վտևան**, **վտավան**, **վտեվան**, *իսկ ըստ Բառ. երեմ. էջ 303* **վտաւանդ**։

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 170 պրս. **տէվան**։ *Նոյնը նաև ՆՀԲ (իմա՛ պրս.* دَوَان davān *«հրագընթաց»)։ Հիւնք. պրս.* **նէվէնտ** *«հրագընթաց ձի», նէվիյտէն «արշաւել, սուրալ»։*

Փոխ.—Վրաց. **ᲬᲔᲕᲜᲐᲜᲘ** *ուտեվանի (ըստ Մառ. Иппол. 67). ձևի համար հմմտ.* **ᲬᲜᲐᲮᲝ** *ուճախ<վճախ։*

ՎՏԱԻԱՌ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Բառ. երեմ. էջ 326՝ հետևեալ ձևով. փսոր «վտաւառ կամաղր». սրանից հետևում է որ* **վտաւառ** *նշանակում է «աղբ». ուստի թերևս ուղղելի է* **ապաւառ**։

ՎՏԻՏ *«նիհար, ճղած» Ծն. խա. (քանիցս) Մաղաք. ա. 13. Վրք. հց. որից* **վտիվ** *«նիհարիլ, տկարանալ» Եզեկ. լդ. 29. «հիւանդկախ, միշտ տկար լինել» Անկ. գիրք Հին կտ. Ա. 103.* **վտտել** *«տկարացնել (հաւատքը)» Ոսկ. մ. գ. 36. «նուազեցնել (պատիւը)» Ոսկ. ես. 227. «նեղել, չարչարել» ՍԳր. Ոսկ. ես. վտտանալ Մամբր. ըստ ԼՀ.* **անվտիտ** *Դտ. ժզ. 8. Խոր. գրուած է նաև վատիտ Յայսմ. փետր. 29։*

ՆՀԲ «որպէս թէ **վատոտ**, *յոյժ վատեալ»։ Հիւնք.* **վատ** *բառից։ Աճառ. ՀԱ 1899, 233 Թերևս իրրև կրկնաւոր **վիտ-վիտ *ձևից։*

ՎՐԱՆ, ի–ա *հլ. «վրան, չատրը» ՍԳր. որից* **վրանաբնակիչ** *Դատ. ը. 1,* **վրանայարկ** *Արծր.* **վրանանման** *Ջքր. կԹ.* **վրանապան** *Օրբել. Սմբ. պատ. հրտր. 1856, էջ 34.* **վրանատեղ** *Վրդն. սղ. նոր գրականի մէջ* **վրանբնակ**։

ՆՀԲ «ի վերայ արկեալն. լծ. և յն. ուրանո՛ս «երկինք» իբր **վրանաձև** *ի վերայ մեր. վասն որոյ և ի յն. բռ. ասի, թէ* **ուրան՝** *առ պարսիկս նշանակէ վրան թագաւորականն։ Մորթման, Բևեռ. արձ. Թրգմ. Ապտուլլահ, էջ 56 բևեռ.* varini *«վրան»։ Նագրճեան, Արեւելք 1884 Հոկտ. 17 սանս.* vṛ, var *«ծածկել» արմատից։ Հիւնք. յն.* οὐρανός *«երկինք, քիմք»։* Patrubány *ՀԱ 1910, 119 հնխ.* upēr *«վրայ» բառից։* Karst, *Յուշարձան 401, 403 սումեր.* bara *«վրան»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 185* **խորան** *հոմանիշից։ Մառ,* Яф. сборн. 2, 163 **վրան և խորան**, *յն.* οὐρανός, χρόνος *և լտ.* templum, tempus *իրար կցելով՝ գնում է յաբեթականն։*

Գիւռ.—Տփ. **վրան** *«չատրը», իսկ Մշ.* **վրան** *«երկինք. 2. կապոյտ»։*

ՎՐԴՈՎ, ի *հլ. «խռովութիւն, կռիւ» Թէոդ. խշ. որից* **վրդովել** *«խանգարել, յուզել, աղմուկ ձգել» Խոր. Ջքր. կԹ. Փիլ.* **վրդովութիւն** *Փիլ.* **վրդովումն** *Փիլ.* **վրդովասէր** *Պիտ.* **անվրդով** *Խոր. ՅՀ. կԹ.* **բազմավրդով** *Ճառընտ. Անան. եկ. Նար.* **յոգնավրդով** *Ճառընտ. Շնորհ. վիպ.* **վրդովեցուցիչ** *(նոր բառ)։*

Հիւնք. **դրդուել** *բայից։*

ՎՐԷԺ, ու *հլ. «ոխ, քինախնդրութիւն, պատիժ, պատուհաս» ՍԳր. «ոճիր, յանցանք» Պիտ. որից* **վրէժխնդիր** *ՍԳր. Կիւրղ. ծն.* **վրէժագործ** *«չարագործ, ոճրագործ» Սոփոն. բ. 15, գ. 1. Ես. ա. 23. Բուզ. Կորիւն. Վեցօր.*

նոր. գր. **վրիժապարտ** *Ագաթ.* **վրիժառու** *Նար.* **վրիժակ** «*վրէժխնդիր. 2. սպանող զէնք*» *Պատմ. աղէքս. 115. Փիլ. Պիտ. Ոսկիփ.* **վրիժակել** «*հեռուից զարնել նետով՝ քարով ևն*» *Փիլ. Պիտ.* սաճաճավրէժ *ԱԲ.* fառավրէժ *նոր. բգ. ևն*։

ԳԴ պրս. وژ važ «*գաւառումն կամ բարկութիւն*»։ Bezzenberger և Fick BB *6 (1881), 240 հսաքս.* wrâka «*պատիժ, վրէժ*»։ *Տէրվ. Նախալ. 107 սանս.* varǰ, *գոթ.* vrikan «*հալածել*», vraks «*հալածիչ*», *հսլ.* vragŭ «*թշնամի*», *գերմ.* Rache «*վրէժ*» *և հյ.* հալածել *բառերի հետ՝ հնխ.* varg «*հալածել, վրէժ խընդրել*» *արմատից։ Հիւնք. պրս.* پاداپ-ﻓﺮاﻫ «*պատուհաս*» *բառի վերջի մասից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 357 պրս.* فریز fariz «*փետել, քերթել*», فریش farīš «*յարձակիլ, աւարել*» *բառերից։*

**ՎՐԷՊ «սխալ, սխալանք» Սղ. հբ. 4. Ոսկ. ևս. «խոտորիակ, թիւր, ծուռ, դատարկ, քաւիւր» Համամ. առակ. Վրք. հց. որից* վրիպիլ *ՍԳր. եզն. Ոսկ. մ. ա. 5.* վրիպեցուցանել *ՍԳր. Վեցօր. եզն.* վրիպած *Սիրեր.* վրիպակ «*սխալ*» *Բուզ լե. 22. Ա. Բագ. զ. 9. «դիպուած» Եւս. քր. «սխալական, սխալեալ» Գ. մկ. ե. 23. Եւագր.* վրիպական *Ոսկ. մաթ.* անվրէպ *ՍԳր. Ագաթ. Բուզ.* բազմավրէպ *Նար. ևն*։

=*Պհլ. *virep ձևից, որ հայերէնի հետ ևնթադրում է պրս.* وریب virēb, vureb «*թիւր, ծուռ կամ խոտոր*»։—*Հիւբշ. 250*։

Նախ ԳԴ համեմատեց պրս. վիրիյոլ *և* ֆիրիյոլ *ձևերի հետ։ ՆՀԲ պրս.* վիրիյոլ, *թրք.* վէրէվ։ Müller, Armen. VI յն. ῥίπτω «*ձգել*» *և գոթ.* vairpa *բառերի հետ՝ իբր բնիկ հայ։* Pokorny 1, 280 *պրս. բառը կցում է սոյն ձևերին և բոլորը միասին հանում է հնխ.* u̯reip- *արմատից՝ ըստ* Persson, Beitr. 502: Trautmann BB 30, 329 *հայ բառին է միացնում լիթ. և լեթթ.* reibt «*չիմաբանալ*», *իբր հնխ.* wreib- *ձևից. բայց այս համեմատութիւնը ուղիղ չէ, որովհետև նախաձայն* w *տալիս է հյ. գ։*

ԳԻՒ.—Երևի նոյնից է **որէպ** *Ակն. «հագուստի կամ շորի շեղ՝ ծուռ կտրուած ձևը. տճկ. չարիքխ»*։

**ՎՐԻՆ «վէրք». ունի միայն Բռ. երեմ. 303։* =*Իրան. *vrīn ձևից. հմմտ. քրդ.* brin «*վէրք*», *որից* brindar «*վիրաւոր*», brindarkə «*վիրաւորել*». *բոլորը միասին ևնթադրում են պհլ. *vrīn ձևը։—Աճ.*

ՎՐԻՊ «*մի տեսակ վայրի բոյս, փուշ, թուփ կամ խաղող*». *ունի միայն Ներսէսովիչ, Բռ. լտ. հյ. 292* (labrusca, *փուշ, վրիպ, թուփ*)։

Վրիրակ *տե՛ս* Վարար։

**ՎՐՁԻՆ «ներկ քսելու բարակ խոզանակ». իբր մհյ բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 151 բ. որից* վրձնել «*վրձինով ներկել*» *ՀՀԲ։*

=*Նյն.* βούρτσα, *բուլգար.* vurca, *ռում.* vîrce, *թրք.* فرچه fərča *կամ* furča «*վրձին, խոզանակ*»։—*Աճ.*

Այս մեկնութիւնս տե՛ս նախ ՀԱ 1908, 122։—Մառ. Текст. и Раз. VI, Фзиологъ=*Բարոյախօս, 1904, էջ* XXXVII *և* 109, Тексты и Раз. по кв. фил. 1, *էջ 116 (1925 թ.) ևնթադրում է թէ հնապէս կար հյ. վրձին բառը և նշանակում էր «ласка, փայփայանք, գգուանք», որի հետ նոյն են վրաց.* qurcin, *բաց.* qurčī, *երկուսն էլ «ласка, փայփայանք», և որ Բարոյախօսից առնելով պահում է դեռ վրաց. վրցինի «գգուանք». յետոյ հայերէնը դարձաւ աֆխ։* Bittner WZKM 27 (1913), 130 *միացնում է թրք.* fərča, *գերմ.* Bürste «*խոզանակ*», Borste «*խոզի ստէն*», *ֆր.* brosse, *անգլ.* brush «*խոզանակ*» *բառերին։ (Սակայն սրանք ըստ* Walde 274 *և* Kluge 68 *բնիկ գերմանական են և կցւում են սանս.* bhṛṣṭi «*ծայր*», *լտ.* fastigium «*ծայր, կատար, գագաթ*» *բառերին)։*

ԳԻՒ.—Սչ. վրձին. *իսկ Ննխ.* վռձին *գործածւում է միայն վռձինի պէս «շատ խիտ» պատկերաւոր դարձուածքի մէջ։*

o**ՎՐՆՋԵԼ** «*ձիու խրխնջելը՝ էգին տեսած ժամանակ*» *երեմ. ե. 8. նիր. փես. 399. Զեն. Մագ. խոսր. Վրք. հց. որից* վրնջիւն *երեմ. ժգ. 27. Կոչ. 154.* վրնջողութիւն *Նար.*

վրնջումն Ոսկ. ճառք 740. վրնջապապչեակ (այծի մակդիր) Մագ. Թղ. 86, 122։

=Բնաձայն բառ՝ կազմուած վ ձայնից. համմտ. կռնչել, զռնչել, փռնչել, ճռնչել, դրռնչել, մռնչել, խռնչել, ճռնչիւն, շռնչան բնաձայնները, որոնց ռ և չ ածանցիչների տեղ գտնում ենք այստեղ r և ջ. այս կողմից համմտ. խրխնջել, մրմնջել, նաև տրտնջել? վերջիններիս հետ ձևով բոլորովին նոյնանում է վրվնջալ վն. «բազմութեան հանած ձայնը, ժխոր հանել. 2. լալ, տրտնջալ»։— Ա.Ճ.

Böttich. ZDMG 1850, 362 կցում է սանս. vṛṃh «մռնչել, բառաչել» բառի հետ, որ մերժում է Lag. Arm. Stud. § 2171՝ ջ ձայնի տարբերութեան պատճառաւ։ Bugge KZ 32, 27 իբր բնիկ հայ կցում է շվեդ. գւս. vrīna «վրնջել», հշվեդ. vrēn «վրնջող իբր մատակախաղ ձի» (բունը vrainja-), հնորվ. reini «մատակախաղ ձի», անգսք. wroéne «վաւաշոտ», հբգ. reineo «չմալեալ ձի» բառերին։ Հիւբշ. 495 անապահով է դրտնում այս մեկնութիւնը, հայ. վրնջ-< հնխ. vriny- շատ խնդրական համարելով, բայց IF Anz. 10, 46 հայ ձևը դնելով *վրինջել նախաձևից, մեկնութիւնը ուղիղ է համարում։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ. 1899, 204։ Pedersen, Նպաստ 2 վերի գերմանական ձևերի նմանութիւնը պատահական է գտնում և բառը բնաձայն է համարում։ Oštir, Wörter u. Sachen 3, 208 լտ. ringōr «մռմռալ», հսլ. rędnǫti «չղնջել» են բառերի հետ։ Scheftelowitz KZ 54 (1927), 239 սանս. vṛṃhati և ռուս. vereżžatĭ «բղաւել» բառերի հետ։ Boisacq 844 և Pokorny 1, 277 և 284 մերժում են յն. βύχθος «ալիքների շառաչը», շվեդ. vrīna «վրնջել», ռուս. verezgŭ «աղմուկ» են բառերը։

S

ՏԱԲԱՏ. *անստոյգ նշանակութեամբ բառ. մէկ անգամ գործածուած է Ել. լԹ. 27. «Աբարին... զանդրավարտիսն տաբատ ի նիւթոյ բեհեզոյ», որի դեմ եբրայեցին ունի «զանդրավարտիսն կտաւեայս (բուն* בַּד bad *«կտաւ, կտաւէ շոր») ի բեհեզոյ մանելոյ», իսկ յոյնը* τὰ περισκελῆ ἐκ βύσσου κεκλωσμένης, *ուր տաբատ բառի համապատասխանը պակասում է։—Ըստ այսմ հայերէնի մէջ տաբատ յաւելուած կամ մեկնաբանութիւն է անդրավարտիք բառին, և կամ ցոյց է տալիս նիւթը (իբր եբր. «կտաւեայ»)։ Բառ. երեմ. էջ 304 մեկնում է տաբատ «միջօք չափ և բարձիւք», ՀՀԲ «կտաւեղէն», ՆՀԲ «անդրավարտիք», ՋԲ «կտաւ կամ անդրավարտիք», ԱԲ «անդրավարտիք»։ Արևմտեան դրականում ընդունուած է «pantalon, շալվար, դրսի անդրավարտիք» նշանակութեամբ և գրում է նաև տափատ ձևով։*

ՀՀԲ եբր. բատ «կտաւ» բառից է դնում (իմա՛ בַּד bad, *որ գործածուած է բնագրի հենց նոյն հատուածում), ՆՀԲ «իբրու պրս. դա՛ պատտ, այսինքն մինչև ի սրունս, կամ դիւպպան, դիմպան»։ Հացունի, Պատմ. տարազի 118 տափատ «ուղիղ կտրուած ներքնատ»։*

***ՏԱԲԵՈՆԻ** *«խանութ, կրպակ, պանդոկ» Ճառընտ. ուր դրուած է յգ. սեռ.* տաբեոնեաց *ձևով. ուրիշ վկայութիւն չկայ։ Նոյն բառն է նաև կապեոնեայ «հասարակաց տուն», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սարգ. բ. պետր. դ. (բ տպ. էջ 452). «Պոռնիկք անուանին կանայք, որք ի կապեոնեայսն նստին և հաւասարապար ընդ ամենայն արս պոռնկել կամին»։ Այս ձևափոխութիւնը յառաջացել է շփոթելով բառը կապեղայ հոմանիշի հետ, ինչպէս որ Սարգսի առաջին տպագրութեան մէջ էլ արդէն նոյն տեղը (էջ 577) գտնում ենք ի կապելայսն։—Բառ. երեմ. էջ 156 գիտէ կապեոնեայս «պոռնկանոց, բոզանոց»։*

=Յն. ταβέρνα *«կապելայ, պանդոկ»* (Sophocles 1067), *որ փոխառեալ է լտ.* taberna *«խանութ, խրճիթ, պանդոկ» բառից. այս էլ ծագում է լտ.* trabs *«գերան» բառից* (Walde 759)։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՏԱԲՆՔԻ *«աղնիւ». ունի միայն Բառ. երեմ. էջ 304։*

***ՏԱԲԻՐՈՆ** *«գահաւանդ» Հին բռ.=Բառ. երեմ. էջ 304. այսպէս է նշանակուած երեմն Ովս. ե. 1.* գահաւանդ *բառի դէմ լուսանցքի մէջ (իբրև զվարմ ձգեալ ի գլուխ գահաւանդի). աւում է նաև տամբիոն Ղեւոնդ իբ, էջ 128 (իբրև զվարմ ձգեալ ի տամբիոն),* տամբիոն *ԱԲ,* տաբիոնդ *Բառ. երեմ. 304,* տաբեռովք *(բ փոխանակ բ) Բառ. երեմ. 308, և ուղղագոյն ձևով՝* իտաբիռովն *Սարկ. քհ. 52։*

=Յն. Ἰταβύριον *բառից տառադարձուած. սա եբր.* תָּבוֹר Thābōr *«Թաբոր լեռ» բառն է, որ գտնում ենք գործածուած Ս. Գրքի երբայական բնագրում։ Հայ թարգմանութեան մէջ փոխանակ դնելու* բաբոր, *տեղ տեղ դրուած է* գահաւանդ. *այսպէս Ովս. ե. 1 (ի գլուխ գահաւանդի=յն.* ἐπὶ τὸ Ἰταβύριον *= եբր.* עַל־תָּבוֹר ʿal-Thābōr*)։ Մեկնիչները տեսնելով որ բնագրի մէջ համապատասխան տեղը դրուած է* Թաբոր *(=*Տաբիռոն*), իրենք էլ լուսանցքի վրայ* գահաւանդ *բառի դէմ դր-*

բել են տաբիրոն *(Ովս. ե. 1). այսպէսով* տաբիրոն *դարձել է «գահաւանդ» նշանակող մի բառ։* (Gesenius[17], 869 *չունի երբ.* Թաբոր *տեղանուան ծագումը)։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Տաբուն *տե՛ս Տար-Աբուն։*

ՏԱԴՆԱՊ, ի–ա *հլ. (յետնաբար կայ գրծ.* –ով) *«սրտադող, անձկութիւն, մեծ նեղութիւն, հոգս» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 9. բ. 32. Եփր. ծն. Եղիշ. որից* տագնապաւ *«շուտով, սոսկով, փութով, աճապարանքով, հապճեպով» ՍԳր.* տագնապել *«նեղել, նեղը ձգել» ՍԳր. Մծբ.* տագնապիլ *«նեղուիլ, չարչարուիլ» ՍԳր. Կոչ.* տագնապեցուցանել *Բ. Թագ. իբ. 50. Դան. դ. 16. Եզն.* տագնապութիւն *Ոսկ. մ. ա. 15, բ. 3.* տագնապափոյթ *Ագաթ.* բազմատագնապ *Նար.* մեղատագնապ *Նար.* տագնապալի *(նոր բառ)։*

Հիւնք. տապ *բառից։*

+**ՏԱԳՐ**, ր *հլ. «ամուսնու եղբայրը» Խոր. գ. 32, 68. Երզն. մոթ. կայ նաև* տայգր, *որ նշանակում է ԱԲ, բայց չունի ՆՀԲ. պահուած է գաւառականների մէջ (տե՛ս տակը) և աւելի հին ձև է քան* տագր *(Հիւբշ.* ZDMG *35 (1881), էջ 176)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* daivér- *ձևից, որի այլ ժառանգորդներն են սանս.* देवर् devár-, *յն.* δᾱήρ (*δαϝήρ), *լատ.* lēvir, *հբգ.* zeihhur, *անգսք.* tācor, *լիթ.* dėveris, *հսլ.* dėverĭ, *լեհ.* dziewierz, *ուկր.* díver, *չեխ.* deveř, *ռուս.* деверь *նոյն նշանակութեամբ* (Pokorny 1, 767, Boisacq 160, Trautmann 43, Berneker 198, Ernout-Meillet 513, Walde 423):—*Հիւբշ. 496։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ, որ համեմատում է յն. տաի՛ր *ձևի հետ։ Ուղիղ են մեկնում նաև* Peterm. 25, Pott. Etym. Forsch. 93, Windisch. 12, Gosche 64, Böttich. ZDMG 1850, 362, Müller SWAW 38, 573, 576, Pictet 2, 374, *Հիւբշ.* KZ 23, 16, Arm. Stud. *§ 268, Տէրվ.* Altarm. *54 և Նախալ. 101։*

ԳԻՒ.—Ագլ. տա՛գիր, *Ալշ. Մշ.* տէգ՛ր, *Բրև. Շմ. Ջղ. Տփ.* տէր, *Մկ.* տի՛կ՛ըր, *Վն.* տի՛ր *(սեռ.* տիկեր), *Մրղ.* տէրէր *(սեռ.* տէրէի), *Հճ. Տիգ.* դէֆր, *Համշ.* դէֆոր, *Խրբ.* դոմֆր, *Ախց. Կր.* տաֆր, *Ակն. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սվեդ.* դաֆր, *Սչ.* դա՛ֆր, *Զթ.* դոմֆյր, դոմֆր, *Ղրբ.* տա՛ֆիր, *Գոր.* տր՛ֆր, *Ասլ.* դա*ր *(սեռ.* դաֆէ՛ր), *Սլմ.* տի՛յֆիր։—*Նոր բառեր են* տագերակին, տագրիկ։

ՏԱԺԱՆ *«չարչարանք, նեղութիւն» Պատմ. առ լհմ. «հէգ, տառապեալ» Անյ. բարձր. որից* տաժանիլ *«տառապիլ, չարաչար աշխատիլ, նեղուիլ» ՍԳր.* տաժանագոյն *Ոսկ. յհ. բ. 35.* տաժանալից *Զքր. կթ.* տաժանելի *Խոսր. Զքր. կթ. Նար.* տաժանումն *Ոսկ. յհ. բ. 14, 37.* տաժանագին, տաժանակիր *(նոր բառեր). ասւում է նաև* տարժանիլ, տարժանելի, տարժանակիր *են։*

Müller, Kuhns u. Schl. Btrg. 5, 382 *և* SWAW 84 (1877), 217 տաժանիլ *բայի հետ միասին դնդ.* daž *և սանս.* dah- *ձևերին է կցում։ Հիւնք.* տաժան *բառից։*

+**ՏԱԼ** (ի *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ամուսնու քոյրը» Երզն. քեր. ուրիշ վկայութիւն չկայ։*

=*Բնիկ հայ բառ. հնխ.* gʷəlōu- *ձևից, որի միւս ժառանգներն են յն.* γαλόως, γᾱλως, *լտ.* glōs, *հսլ.* zŭlŭva, *հչեխ.* zelva, *սերբ.* zäova *«տալ» և թերևս փռիւգ.* γέλαρος *«հղրօր կին»* (Pokorny 1, 631, Walde 347, Ernout-Meillet 408, Boisacq 140): *Հնխ.* gʷəlōu- *դարձած պիտի լինի նախ հյ. *ծալ, որ յետոյ տագր բառի ազդեցութեամբ՝ նախաձայնը փոխելով եղաւ* տալ։ *Այս մեկնութեան ժամանակ պէտք չէ մոռանալ նաև լազ.* ϑa *«քոյր», որի յոգնակին* ϑálepe *«քոյրեր» ցոյց է տալիս նախաւոր հզ. *ϑal։*

Müller, Armen. VI, *թ. 62 հնխ.* daivér *«տայգր» բառի իգական* daivri *ձևից։* Bugge KZ 32, *էջ 27—28 մեկնում է վերի ձևով։ Հիւբշ. 496 ընդունում է որ* տալ *յառաջացած լինի նախաւոր *տայլ ձևից, բայց չի ընդունում* Müller-*ի մեկնութիւնը. իսկ* Bugge-*ի մեկնութիւնը յիշում է առանց հաւանութիւն յայտնելու։ Ընդունում է* Meillet, Esq. 110: *Աճառ. ՀԱ 1908, 120 աւելացնում է լազ. ձևի համեմատութիւնը։ Բացատրութեան մի նոր փորձ հնխ.*

gʷəlōu- ձևից՝ ունի Pedersen KZ 39, էջ 347։

ԳԻՒ.—Ախց. Դոր. երև. Կր. Ղրբ. Շմ. Տփ. տալ, *Ակն. Ասլ. Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* դալ, *Ջղ.* տալն, *Տիգ.* դալ, *Զթ.* գօլ, դալ, *Ագլ.* տօյլ, *Մշ.* տալ, տալվ, *Ալշ. Բլ. Դվ. Մկ. Սլմ. Վն.* տալվ, *Հճ.* գօլ, *Մրղ.* տավլ, *Սվեդ.* դալ, դալդըգէն (<*տալտիկին*)։—*Նոր բառեր են* տալուկ, տալիկ, տալաճ, տալայր «*տալողը ամուսինը*»։

+ՏԱԼ «*տալ, յանձնել, վճարել են*». *բազմաթիւ ոճերով և փոխաբերական իմաստներով գործածուած բայ. երևան է գալիս երեք արմատական ձևերով.* 1. ՏԱ–, *որից ներկ.* տամ, *ապ.* տաց, *աներ.* տալ՝ *ՍԳր. Կոշ. Եփր. Եւ. Ծն. Եւս. քր.* տալի «*տուրք, պարգև*» *Ագաթ.* «*տուղդ*» *Ոսկ. փիլ.*—2. ՏՈՒ, *որից կտ.* տաս, *անց. դերբ.* տուեալ, *ածանցներով մէջ շատ յաճախադէպ է ինչ.* տուիչ *Մաթ. թ. 8. Եզն. Եւս. պատ. Եփր. Ծն.* տուումն *Ոսկ. յհ. բ. 36.* տուչութիւն *Ոսկ. մ. և գաղ. Ագաթ. Եւս. քր. և պատ.* անտուչական *Ագաթ.* ձեռնտու *ՍԳր.* մատնտու *Գ. մակ. գ. 16.* ուշատու *Մծբ.* վանատու *Ոսկ. մ. գ. 26 և Փիլիպ.* հարկատու *ՍԳր.* հրամանատու *Ագաթ. Եզն.* ստնտու *ՍԳր.* ժամատու *Ագաթ.* դեղատու *Սղ. ծէ. 6.* լուսատու *ՍԳր. Կոշ. Մծբ. Եզն.* կենատու *Եփր. երր.* կենդանատու *Ոսկ. ա. տիմ. յետնաբար* բացատուել, յառաջատուութիւն, դեղատուել *են.*—3. ՏՈՒՐ. *գործածւում է իբր* տալ *բայի հրամայականը. նաև իբր գոյական՝ ո հլ. «նուէր, պարգև, կաշառք, թագաւորական հարկ» (յատկապէս անեզական գործածութեամբ) ՍԳր. Ոսկ. փիլ. Եփր. աւետ. մտնում է շատ անգամ բարդութեանց և ածանցմանց մէջ. ինչ.* տուրևառ *Ագաթ. Փարպ.* տուրևառիկ *Ոսկ. մ. ա. 1, բ. 10. եփես. բ.* տրիտուր «*փոխարէն տրուած պարգև են*» *Սղ. ճժե. 12 (Համմտ. Մամիկ. 37. Առէք ի մէնջ հարիւր հազար դահեկան... և մեզ* տուրս տուք *զայս կինս*). աննտուր *ՍԳր. Ոսկ. մ. բ.* խոստրատուր *Բուզ.* ձայնատուր *Բ. մկ. գ. 14. Ոսկ. երր. Եւս. քր.* նուրատուր *Կորիւն.* կենդանատուր *Ագաթ.* հայրենատուր *Ա. պետ. ա. 18.* դիւատուր *Ոսկ. երր.* շնորհատուր *Ագաթ. Բուզ. Կորիւն.* վաճատուր *Բ. մկ. գ. 2. Ագաթ. յետնաբար* բացատրել, բարետուրիւն, փառատուրիւն *են. սխալ գրչութիւն է* պատասխանատուրիւն *Իմաստ. գ. 11. մհյ.* տուրտվել «*մատնել*» *Սմբ. դտ. 18.* տուրտվութիւն *(չունի ԱԲ) «կաշառում» Անսիդք 35. (երկու ձևերից առաջինը՝* տու՝ *ներգործական իմաստով է, իսկ երկրորդը՝* տուր՝ *սովորաբար կրավորական իմաստով)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* də, dō, d- «*տալ*» *արմատից. ցեղակիցներն են սանս.* dā, dádāmi, *հինդ.* دینا dena, *գնչ.* dava, dao, *գնդ.* daδạmi, *հպրս. (հրմ.)* dadātuv, *պհլ.* dātan, *պրս.* dādan, *քրդ.* dain, *աֆղան.* lal, *յն.* δίδωμι «*տամ*», δῶρον «*պարգև, նուէր*», *լտ.* do, *հլ.* damĭ, *լիթ.* dūmi, *լեթթ.* dūt, *հպրուս.* dāt «*տալ*», *ալբան.* δašε «*հատու*» *են* (Pokorny 1, 814, Walde 238, Boisacq 186, Berneker 178—181, Ernout-Meillet 266, Trautmann 57): *Հայերէն համապատասխաններն են՝* տա–<*հնխ.* də, տու<*հնխ.* dō-, տուր<*հնխ.* dōrā- *(յն.* δῶρα, *հլ.* ϑarŭ), ետ<*հնխ.* é-dō-t *(սանս.* ádāt, *գնդ.* dāt̨*)։—Հիւրշ. 496։*

Klaproth, As. pol. 101 *լտ.* dare, *պրս.* dādan. *ԳԴ պրս.* տատէն: *Ուղիղ համեմատութիւններ ունին նաև* Brosset JAs. *1834, 383 են, ՆՀՔ,* Peterm. *21, 34, 258 (դժբախտաբար նաև երր.* בתך ntk!), Windisch. 12, Gosche 33, Böttich ZDMG 1850, 362, Arica 83, 403, Lag. Urgesch. 98 *են։ Մորթման* ZDMG *26, 540 բևեռ.* turuni «*տուր*», *560* dubi «*հատու*»։ Bugge, Etr. u. Arm. *էջ 12 հարուստ.* turce «*տուրք*», *էջ 15* talce «*տալ*», *էջ 18* ϑues´ «*տուեց*», *էջ 21* tun «*հատուն*», *էջ 22* tan «*տան*», *էջ 56* tev «*ընծայ, ձօն*», *էջ 63* tru «*ի նուէր*», *էջ 144* ta=տայ: *Նոյն,* Lyk. Stud. *1, 42 լիւկ.* tesi=տացէ: *Հիւնք. էջ 119 ուղիղ է* (տալ), *բայց էջ 120* հատու, հտ=*արաբ.* yad «*ձեռք*», *թրք.* yād «*հեռու*», տուր=*պրս.* dūr «*հեռու*»։ Jensen *ՀԱ 1904, 273 եգիպտ. արձանագրութեանց մէջ յիշուած Հաթիան* Tiidwr *անունը*

մեկնում է Տիրատուր: Սանսալճեան, L'idiome 10 խալդ. dur՝ ի բառին Šariduris:

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. տալ, Ակն. Ասլ. Խրբ. Համշ. Ննխ. Ռ. Սեբ. Սչ. դալ, Ագլ. տօլ, Հճ. դօլ, Զթ. դօլ, դոլ, Սվեդ. դվիլ, Մշ. իտալ, Սլշ. իդալ, Տիգ. իդոլ: (Երև. գործածւում է նաև «զարնել» իմաստով, որին իբր հին օրինակ գտնում եմ Վրք. և վկ. Ա. 535 «Տո՛ւք զկողս գորա. Տո՛ւք զերեսս» և Ցայսմ. յնվ. 17 «Եւ տեսանէր Թոռցեալ բազում մարդիկքս, որ վերանային յերկինս և նա տայր ձեռօքն և ի վայր յերկիր ընկենոյր»):— Նոր բառեր են տալիճ, տալացու, տալացուճ, տուածուրիկ, տուտվի, տուուկ, տուրուբակ, տուրս են:—Հետաքրքրական ձև է Դվ. պուրճ ու բարիճ «ամէն տեսակ բանի առատութիւն, լիութիւն», որ յառաջանում է տուրճ ու բարիճ ձևից, նմանողութեամբ ս ազդուած բ-ից և դարձած պ:

ՏԱԼԱՊ «noëud céleste, որ է երկնային հանդոյց». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 232. բայց չի յիշում բուն բառարանի մէջ:

ՏԱԼԱԻՈՐ «փոքր սկուտեղ, որի վրայ միս են մանրում և ուտում». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 232, որից նաև ԳԲ:

*ՏԱԼԻԹԱՅ (սեռ. -ի) «աղջիկ» (Աստուածածնի համար ասուած) Եփր. ծն. քս. 10, 23. անընդ. 41. Սրճ. ածած. էջ 436. «աղջիկ» (Յիսուսի յարուցած աղջիկը) Բենիկ (Սոփերք ԻԱ. 107), Սրճ. չրշր. 196. «աղջիկ» (վատ մտքով. Հերովդիադայի համար ասուած) Գնձ. Տաղ. Տաճև. ձմ. ժբ. որից տալիթայ սարկաւագ «սարկաւագուհի» Իգնատ. թղ. 105. ամենահին օրինակն է. Մրկ. ե. 41 «Տալիթա, կո՛ւմի, որ թարգմանի Աղջի՛կ դու, քեզ ասեմ, արի՛»:

=Յն. ταλιθά ձևից, որ տառադարձուած է արամ. טליתא talīθā «աղջիկ» բառից. այս էլ արամ. טליא talīā և ասոր. ܛܠܝܐ ṭalia «տղայ, մանուկ» բառի իգականն է, որ կըցւում է արաբ. طلا ṭalā «գառնուկ, ուլ», ն. արաբ. ṭully «արու գառն», եբր. טלה ṭālc «փոքրիկ դառ», եթովպ. ጠሊ ṭalû «այծ» բառերին (Gesenius[17], էջ 276, Brockelmann, Lex. syr. 134): Նոյն ասոր. բառի արական ձևից է փոխառեալ Հյ. աղայ:—Հիւրշ. 325:

Նշ Բ դնում է «բառ եբր.», Bugge, Btrg. 33 հայերէն կարծելով՝ իբր բնիկ կցում է յն. τᾶλις, τάλιδος «Հարսնացու աղջիկ» բառի հետ՝ Մառ, Արաքս 1890 Ա. 109 միրժելով այս, դնում է ասորուց՝ Bugge, Etr. u. Arm. 128 ճանաչում է սխալը և ենթադրում է որ Հյ. տալիթայ, հորուսկ. taliθa և յն. ταλιθά միասին փոխառեալ են սեմականից՝ (Յոյն բառը ոմանք կցում են յն. τᾶλις «կոյս աղջիկ» բառին և միասին դնում են սեմականից փոխառեալ. բաս Möller, Idg-Sem. Wörterb. 52 յոյնն ու սեմականը հին ցեղակից են. Boisacq էջ 939):

*ՏԱԼԻՀ «մոզ, musa paradisiaca, բանան պտուղը» Բժշ. ունի միայն Հայբուս. § 2906:

=Արաբ. طلح ṭalḥ կամ طلاح ṭalāḥ «անուն մի քանի փշոտ բոյսերի. նշանակում է նաև մոզ» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 496):—Ա.Ճ.

Հբուս. դնում է արաբ. دليق dalīq «վարդի մասուր»՝ Վերի մեկնութիւնս հրատարակուած է ՀԱ. 1908, 124:

ՏԱԼԻՃ «հնդիկ ասփուր» Ամիրտ. ունի միայն Հբուս. § 2907:

ՏԱԼԻՍԱՅ «մի տեսակ փեղենայ. տառափ խոտը» Բժշ. ունի միայն Հբուս. § 2908:

*ՏԱԼԽ, որ և տալղ, տաղլ «գետնի ասող կոշուած բոյսը. asperula odorata» Բժշ. շփոթմամբ հասկացւում է նաև «հալուէ». ունի միայն Հբուս. § 2909:

=Արաբ. طلق ṭalq, որից նաև եւրոպական բուսաբանների լեզուով tale (տե՛ս Steinschneider WZKM 12, 215):—Ա.Ճ.

Հբուս. համարում է թէ ստաշխ> տաշխ բառից սխալագրութիւն է՝ Վերի մեկնութիւնս հրատարակուած է ՀԱ. 1908, 124:

*ՏԱԽՏ, ի հլ? «դահ, աթոռ, թագաւորական դահոյք» Բուզ. դ. 16, 54. Վրք. հց. Օրբել. Կանոն. Գնձ. «մահճակալ» Անկ. դիրք հին կտ. 164, 177. Վստկ. 80. «բազմոց» Կանոն. 37. որից տախտաձև «գահի ձևով» Արծր.։

=Պհլ. ptxt taxt, tāxt, պազ. taxt, պրս. تخت taxt «գահ, գահոյք». վերջինը նշանակում է նաև «մահճակալ, փայտակերտ կազմած՝ որի վրայ նստում, բազմում կամ պառկում են. տախտ, դիվան» (այս նշանակութիւնները տե՛ս նաև վերը)։ Պարսկերէնից են փոխառեալ թրք. taxt, taht «գահ», քրդ. taxt, takt, բուլգար. սերբ. taht, ռում. taft, նյն. τάχτι «գահոյք, գահ», թուշ. ტახტ տախտ, վրաց. ტახტი տախտի «գահ, անկողին, բազմոց», աւար. тахта «անկողին». յետին հայ ձև է բաղտ, որ տե՛ս առանձին։— Հիւրշ. 250։

ՆՀԲ պրս. թրք. դախտ, դէխտ, դէհդ: Petermn. 21, 27, 34 լտ. tectum «տանիք»։ Diefenbach, Berl. Jahrb. 1843, 449՝ սանս. sthag, պրս. سطح saṭḥ «մակերևոյթ, մակերես»։ Böttich. ZDMG 1850, 363 պրս. taxt, որ Lag. Urgesch. 554 հանում է taks «առաշել» արմատից։

ԳԻՒ.—Երև. Ջղ. Սլմ. Տփ. տախտ, Ախց. Ղրբ. Շմ. թախտ (նոր փոխառութիւն թուրքերէնից) «վրան նստելու կամ պառկելու բազմոց, դիվան», Ալշ. Մկ. Մշ. Վն. տախտ «սննեակի յատակը (հողէ կամ տախտակէ)»։

*ՏԱԽՏԱԿ, ի–ա հլ. «փայտի տափակ շերտ» (փխբ. նաև ուրիշ նիւթից. ինչպ. պղինձէ, քարէ ևն) ՍԳր. Ագաթ. «մահճակալ» Անկ. դիրք հին կտ. 154, 155 (թւում է նախորդի նուազականը). որից տախտակամած ՍԳր. տախտակագործ Ագաթ. տախտակաշար Նար. տախտակափակ Արծր. մայրատախտակ Նար. գնձ. ոսկետախտակ Բրս. Հայեաց. գեղատախտակ Ագաթ. ևն։ Հին հյ. գւտ. ձև է տաստակ «տախտակ» Փիլ. նխ. բ. 76 և տես. համմտ. դրախտ>դրաստ և բախտ>բաստ: Նոր բառեր են տախտակապատ, տախտակոտ ևն։

=Պհլ. tāxtak, պրս. تختک taxta «տախտակ». պարսկերէնից են փոխառեալ նաև քրդ. taxta, texte, արևել. թրք. تختا taxta կամ تاختا tayta, թրք. taxta, tahta, բուլգար. tahtaba, սերբ. tahta ևն։—Հիւրշ. 250։

Նախ ԳԴ պրս. թախթ, թախթէ: ՆՀԲ «նոյն և թրք. պրս. դաճտա, դէխտէ, լտ. tabula, tabella, յորմէ և ռմկ. դապադա, տապադա (արաբ. tabaqa): Bottich. ZDMG 1850, 363 տաշել բառի հետ takš արմատից։ Պրս. բառի հետ ուղիղ համեմատում են Lag. Urgesch. 555, Spiegel, Huzw. Gram. 187, Müller SWAW 38, 573—4, Մորթման ZDMG 24, 80 ևն։ Հիւնք. յն. δέλτος «գրութիւն, տախտակ, ցուցակ» բառից։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Գոր. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. տախտակ, Ալշ. Երև. Մշ. տախտագ, Ննխ. Համշ. Ռ. Սեբ. դախդագ, Ասլ. դախդագ, դախդայ, Սչ. դախդ'ագ, Խրբ. դ'ախդագ, Պլ. Ռ. թախդագ, Տիգ. թոխթոգ, Հճ. դախդօգ, Զթ. դախդօգ, դախդոգ, Սվեդ. դոխդիւգ.—սրանցից նախաձայն թ կամ դ՝ ունեցողները ձևացած են թրք. taxta բառի նմանութեամբ (այս մասին տե՛ս Աճառ. MSL 10, 324, Թրզմ. Բազմ. 1897, էջ 260)։—Գաւառականների մէջ տախտակ նշանակում է նաև «ածու» և այս իմաստով նոյն է թրք. taxta تخته բառի հետ (Կամուս, թրք. Թրզմ. Ա. 682)։ Նոր բառեր են տախտակագլուխ, տախտակամէջ, տախտակաշէն, տախտակել, տախտակուն:

ՓՈԽ.—Ուտ. daxtak «տախտակ»։

ՏԱԽՏԱՊԱՐ «փռել, գետնի վրայ պառկեցնել». առանձին չէ գործածուած. գտնւում է միայն տախտապարեալ Եզեկ. լբ. 4 և ի տախտապար արկանել Ճառընտ.=Պտմ. ամաս. 69 ձևերի մէջ. ուրիշ գործածութիւն և վկայութիւն չկայ։

ՆՀԲ կցում է տախտ և տախտակ բառերին։

ՏԱՏ «խնամք, դարման, հոգալը, սնուցանելը» Փիլ. Պիտ. որից տածել «խնամել, հոգ տանիլ, դարմանել» Եզն. Խոր. փիլ. տածիչ Եւս. քր. տածումն Խոր. Պիտ. ձիատած Մխ. դտ. ծերատածել Նխ. ծն. ծերատածու-

թիւն *Պիտ.* աճատած *Փիլ. Պիտ.* կուսատած *Ճառընտ.* աշխարհատած *Բուզ.* մանկատածութիւն *(նոր բառ)*, և ս զօրացուցիչ մասնիկով՝ սատածել *Լմբ. պարգ. Վստկ.* աճստած *ԱԲ.* բազկաստածու *(ծառին իբրև ածական) Նար. խշ.*։

ՆՀԲ ϐուի մեկնել ըստ ածել։ *Տէրվ.* Altarm. 106 *հնագոյն ձևը դնում է* սատածել = *յն.* στέγειν «ծածկել»։ *Հիւնք. պրս.* տատու, տատա «դայեակ» *բառից*։

*ՏԱԿ *(ըստ ՆՀԲ* ի, ի–ա, ու *հլ. բայց ընտիր հայերէնի մէջ կայ միայն սեռ.* –ի) «յատակը, տակը, խորքը» *Եւագր.* «բոյսի տակի մասը, արմատ» *Վեցօր. 96. Վստկ.* «ցեղ, զարմ, ծերդաստան» *Բուզ. դ. 4. որից* տակախիլ առնել «արմատախիլ անել» *Մարթին. (տե՛ս Արրտ. 1913, 1147).* տակակոտոր «արմատից ջարդել» *Ոսկ. մ. ա. 11. Ոսկ. եփես. 837.* տատածատակ *Վեցօր. էջ 96.* տակցի «արմատով միասին» *Սուտ-Շապհ. էջ 3.* կարմիր տակեր «տորո՞ն» *Մխ. բժշ.* (Seidel § 400), տակերոյ ջուր «դեղախաշու» *Մխ. բժշ.* (Seidel § 253), տկուտ «ցա՞ծ» *Վանակ. յոբ.*—*Այստեղ է պատկանում նաև* տակ, ի–ա *հլ. «արմատ» Դ. ϐագ. ղ. 23. «Եւ արկ առաջի նոցա խոտս տակաւ մեծաւ և կերան և արբին», որի դէմ ԵՐԲ. ունի «խընջոյս մեծ», և ըստ այսմ անգլ.* great provision, *պրս.* ziyāfat-i-buzurg, *բայց յոյնը* παράθεσιν μεγάλην, *որ պէտք է հասկանալ «սեղանի կամ ճաշի սպաս»* (Sophocles 843) *և որ յայտնի չէ ի՛նչ ϐիւրիմացութեամբ դարձել է հյ.* խոտս տակաւ մեծաւ!

=*ՊՀլ.* *tak *համանիշից, որ չէ աւանդուած, բայց նոյնն են հաստատում պրս.* تاک tak, tag «յատակ, տակ, աւազանի՝ հոր տակ ևն» և սրանից փոխառեալ *չաղաթ.* تاگ tag, teg «տակը, յատակը, հիմ, խարիսխ», tagida «տակը», *կիրգիզ.* تاك tek «ցեղ, տոհմ, սերունդ, ծագումը» (Будаговъ 2, 398):—*(Գ. Փառնակ, Անահիտ 1903, 103 և Տարագ. 1903, 263 ունի պՀլ.* tak «ճիւղ», *որ ևթէ ստոյգ է, այստեղ է պատկանում)։*—*Հիւբշ. էջ 250։*

ՆՀԲ յիշում է պրս. դէգ *և ϐրք.* տիպ? Lag. Urgesch. 314 *նախնական իմաստը համարելով «արմատ», կցում է յն.* τεχεῖν «ծնիլ» *բառին։* Lag. Beitr. bktr. Lex. 63 *մերժում է և կցում պրս.* tak *բառին։ Մառ* ЗАО 5, 285 *և ՀԱ. 1892, էջ 164 կրճատուած յա–տակ բառից։ Հիւնք.* ϐագ *բառից։* Karst, *Յուշարձան 423 ՊՊր.* tüg, tök «յատակ, տակ, վերջ»։ *Մարտիրոսեան ՀԱ. 1924, 459 հաՊ.* takšul «հպատակ» *բառի հետ։*

ԳԻՒ.—*Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ.* տակ, *Ալշ. Մշ.* տագ, *Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* դագ, *Աալ.* դագ (դայ, դա՞), *Տիգ.* դոգ, *Ագլ.* տօկ, *Հճ.* դօգ, *ՋՊ.* դօֆ, դոֆ, *Սվեդ.* դիւֆ, *բոլորն էլ «յատակ, տակ»։ Այլ նշանակութիւններով են Վն. «արմատ», Արբ. երև. Եւդ. ՋՊ. Հճ. Ջմ. Ղզ. Ղրբ. Մշկ. Ջղ. Սեբ. Վն. Ք. «ճակընդեղ», Տփ. «ցեղ, աղգատոհմ» (օր. ասկ ու տակը, ասկօվ տակօվ կու ճանչնամ)։ Նոր բառեր են* աճատակ, տակաբեր, տակաբբու, տակալաչակ, տակաճալաւ, տակաճառն, տականց, տակաշոր, տակաճճ, տակապուր, տակաճար, տակափչեչ, տակետակ, տակնուվրայ, տակտիճ, տկիչճ, տկմանց, տկուճ, տկուկ *են։*

ՓՈԽ.—*Քրդ.* տակ «ցօղուն». *Ջրաւլ ա՝լը տակէ կատէ «բարակ է աւուրտի ցօղունի պէս» (Ազդակ 1909, 429)։ Վրաց.* ტაკობახარა տակիմասխարա «խեղկատակ, որ ընկերանում է լարախաղացին», ტაკობახროზა տակիմասխարոբա «խեղկատակութիւն». *ունի Գրիշաշվիլի, Ձվելի քալաքիս բոհեմա, էջ 28, որ հայ գւռ.* տակի մասխարա *ձևից է (հաղորդեց Գ. Ասատուր)։*

*ՏԱԿ «մարգարիտների շարք, հիւսուածք» *Փարպ.* «կանաչեղէնի մէկ տրցակ, կապոց» *Վրք. հց. ք. 254.* «շարք, պատուածք» *Յայտ. սեպտ. 1 (հօβն տակ պարիսպ). որից* երեմտակէն *կամ* երեմտակեան «երեք շարքով» *Խոր. ք. 7. Ասող. ա. 6.* համատակ *Նար. խշ. 383 (գրծ.* համատակօֆ), *որի հետ նոյն է* համտակ *Բարիղ. յհ. մկ. (ՆՀԲ այս վերջինը անուշադրութեամբ համարում է անստոյգ*

բառ և մեկնում է «սառոտաք կամ վայրաբնր մասունք», ԱԲ «ղգեստի վարի մասունք»)։

=Պհլ. ﻳﺎﻙ tak կամ tāk «հատ, կտոր», ինչ. yak tāk «մի հատ», tak ū tak «հատ ու կենտ», պրս. تای tāy «ծալք, կուզ», yaktāy «մեհյակ», dutāy «երկու տակ», որ և دوتا dūtā «երկտակ. 2. կորաքամակ», yaktā «միածալ. 2. առանց բամբակի, միայն երեսատառով հագուստ», որից ՔՔր. تاق կամ طاق taq «կենտ, մի հատ. 2. շարք, յարկ. 3. մի տեսակ վերնազգեստ», دوطاق dutaq «երկտակ», ستاق setaq «երեքտակ» են, ուճկ. تك tek «մէկ հատ», توك‌تك tek-tük «հատուկենտ» (Horn § 373, Будаговъ 1, 726):—Աճ.

ՆշԲ նոյն է դրած նախորդի հետ։ Karst, *Յուշարձան 423 ՔՔր.* tak, tek, tag «յաւելուլ, մինչև», taku «նաև», *ալթայ.* ta, taa, tagani «նաև, և, իսկոյն»։

ԳԻՒ.—Ղրբ. Մշ. տակ «ծալք», *Վն.* տակ «անգամ, հեղ», *որից* մեծատակ, երկտատակ, տակել «մէկ անգամ ծալել», տակատակ «ծալուածք», տակտկել «ծալ ծալ անել»։

ՓՈԽ.—Ուտ. տակ «շարք, ծալք», տակփեսուն «շարել, շարքով դնել», տակկալ «շարող», տակփի «շարած», տակեսուն «շարուիլ»։

**ՏԱԿԱՒ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «գինու կարաս» Լաստ. ժղ. (Վենետ. 1844, էջ 63 տպուած է պաճառ, ձեռ. ոմանք՝ պակառ. ուղղելու է տակառ). որից* տակառապետ «մատակարար, մատուռակ» *ՍԳր. Խոր.* տակառապետութիւն *ՍՆ. խ. 13.* տակառապետել *Պիտ.* տակառագործ, տակառաշալփ *(նոր բառեր)։*

*=Պհլ. *takār ձևից. հմմտ. պրս.* تغار taγār «կարաս, սափոր», *որից փոխառութեամբ չաղաթ.* تغار taqar «աման, պարկ» *են. ընդարձակ տե՛ս* բաղար *բառի տակ, որ նոյնից նոր փոխառութիւն է։ Տակառապետ* ենթադրում է *պհլ. *takārpat, իբր պարսկական մի միտղոս, ինչպէս ունի Բուզ. դ. 46։—Հիւբշ. 251։*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 172 դրաւ պրս. թէղար *ձևից։ ՆՀԲ յիշում է վրաց.* տակա՛ռի «դուբ», *իսկ* տակառապետ *դնում է լծ.* տաճարապետ։ Lag. Ges. Abhd. 49 *պրս.* taγār։

ԳԻՒ.—երև. Ղզ. Ղրբ. տա՛ghar «գինու հոր, հնձանի աւազանը, քաղցու հիմելու կարաս» *(այս ձևը յիշում է արդէն Բռ. երեմ. էջ 304), Տփ.* տագար, *որից* տակառահամ *Ղրբ. «տակառի համը տուած (գինի)»։*

ՓՈԽ.—Վրաց. ტაგარი տագարի «տաշտ ուր վազում է քամած խաղողի հիւթը»։

**ՏԱԿԱՒ «մեղմով, կամացուկ, հեռուհետէ» ՍԳր. Եզն. «գեռ, ցայնժամ» Վեցօր. Ոսկ. յհ. ա. 17, 22, 24, 34. որից* տակաւ տակաւ «քչիկ քչիկ» *Կոչ. Եւագր. Եզն.* տակաւին «գեռ, գեռ ևս» *ՍԳր. կազմութեամբ եզ. գրծ. ձև է. –ին մասնիկի յաւելման համար հմմտ.* ամեներին, լիովին, բոլորովին, ազգովին *են (բոլորն էլ գործիականից)։*

*=Պհլ. *tak ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց նոյնն է հաստատում պրս.* تاک tak «սակաւ, քիչ, դուղն». *ըստ այսմ* տակաւ *նշանակում է բուն «սակաւուք, քիչ քիչ»։—Աճ.*

ՆՀԲ «որպէս թէ տակով, տակէն, *մէկ դիէն... լծ. Բրբ.* տաճա՝ *գեռ»։* Lag. Btrg. bktr. Lex. 63 tač *արմատից՝ իբր «գեռ յընթացս»։ Հիւնք. էջ 64* տակ *բառից, էջ 314* սակաւ-ից։ *Վերի մեկնութիւնը տուաւ Աճառ. ՀԱ 1908, 122։* Karst, *Յուշարձան 423 հյ.* տակ «շարք» *բառի հետ՝ ՔՔր.* tak, tek «մինչև, ց» *են։*

**ՏԱԿՈՒ «արմատ կամ արմատի մազմըզուքը» Վրդն. օրին. Սիմ. ապար. 104, որ և* տակուն, տակուիչ *Վստկ. 21. որից* բնատակոն *Վստկ.* տակոճիլ *Վստկ. 59։*

=Անշուշտ տակ «արմատ» *բառն է. բայց ի՞նչ է –ոի, –ոին։—Աճ.*

ԳԻՒ.—Գոր. տա՛կոի, *Ղրբ.* տա՛կոէ, *Շմ.* տակո՛ի, *Ագլ.* տա՛կոիւ, տա՛կոիկ, տա՛կոիյկ, տա՛կոինւ, *Տփ.* տա՛կրի, տակր «ար-

մատ». որից տակոտակալել *«արմատ բռնել»,* տակոտաիան *«արմատախիլ»,* տակոտուտ *«վայրի խոտերով ու արմատներով լի խոպան դաշտ»,* տակոհաիան *«արմատաքի»,* տակրոհապոկ *«արմատախիլ»,* տակոհոտ *«արմատներով լի»:*

ՏԱԿՏԱԿԵԼ *«դատել». ունի միայն Բռ. Ն-բեմ. էջ 304:*

***ՏԱՀՄՈՒՇՏ** *«դափնի» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2912, որի հետ նոյն է* դաշմուզտայ *«դափնիի պտուղ» Հին բժշ. (ՀԲուս. § 1332):*

=Պրս. دشمسد dahmšat *կամ* دسمسد dahmsat *«դափնի» (ձայնանիշը սխալ տեղ դնելով կարդալ* دشمشد dahmušt):

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1923, 161:

ՏԱՀՈՒՆԱԿ *«մի տեսակ բոյս». dentaire». ունի Նորայր, Բառ. ֆր. 373 ա, իբր նորակիրտ բառ:*

=Արդեօք պրս. دهان dihān, *նոր հնչումով* dähūn *«բերան» բառից?—Ա.Ճ.*

ՏԱՀՐԿԵԼ *«յաղթել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Աղէքսանդրի կաֆաններում. «Բայց որ տահրկէ զքեզ քո որդին այս Աղէքսանդրոս» (Աղթամ. հրտր. Կոստ. էջ 113). սրա կրաւորականն է տահրկուիլ Վրդ. առ. 175 (եւ ոչ տահրկուին (այլ ձ. տահարկուին) և խաբուին), որ և «դատարանի մէջ հակառակ փաստերով յաղթահարուիլ» Անսիզք 35, 59, 61, 63, 67:*

ՏԱՂ, *ի հլ. «հերգ, քերթուած, ոտանաւոր» Փիլ. Պղատ. օրին. մինովս. Բր. և Երզն. քեր. Նար. (ոսկեդարում չկար բառս.—Սիր. լթ. 20* տաղի *ուղղելի է ըստ յն.* տաւիս*).* որից տաղաչափել *Շնորհ. վիպ.* տաղաչափութիւն *Երզն. քեր.* տաղասաց *Մագ.* տաղերգութիւն *Լմբ. շնորհ.* տատաղ *«տոտախօս» Տիմոթ. կուզ, էջ 278,* տաղարան *Յիշատ.* տաղաչափ, տաղերգու *(նոր բառեր» են:*

Հներից Ոսկիփ. տուգաբանում է «Տաղ, այսինքն տայ աղ», իսկ Լծ. Նար. մեկնում է «Տաղն՝ բան ասի»: ՆՀԲ յիշում է թրք. տիլ «լեզու», յն. թալի՛ա «հերգ հարսանեաց», պրս. դալաշ, դալաճ «ձայն, հնչիւն, բոց, վառումն»: Հիւնք. տաղտար բառից: Scheftelowitz BB 29 (1905), 27 *միացնելով* տաղ *«խարան» բառի հետ իբր բնիկ հայ կըցում է լտ.* dolare *«շինել, կերտել», յն.* δαιδάλλω *«ճարտարութեամբ շինել», δαίλτος «գրատախտակ» բառերին: (Ընդունում է* Pokorny 1, 810 *հնխ.* del- *«ճեղքել, կտրել, արուեստով շինել» արմատի տակ): Նահապետեան, Բազմ. 1908, 499 նոյն է դնում* դաղ *«անասունների խարան՝ նշան» բառի հետ. համմտ. լտ.* nota *«նշան և խազ»: Կապ ունի՞ նաւտր.* talt'a *«խազ»,* talalt'a *«խազալ»:*

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. տաղ, *Խրբ. Ննխ. Շմ. Ռ. Սեբ.* դաղ, *Տիգ.* դուղ, *Հճ.* դօղ:

Փոխ.—Ուտ. տաղ *«հերգ»:*

***ՏԱՂ** *«խարան, այրելով դրոշմուած նշան» Բրս. մրկ. 78. «արձանագրութիւն կամ այլ գրաւոր նշան» Սմբ. դտ. 27. որից* տաղել *«խարանել» Բրս. մրկ. 185. Զքր. կթ. գործածական է արդի արևելեան գրականի մէջ դաղել ձևով, իսկ արևմտեանից մերժուած է իբր դռնհիկ բառ:*

=Պրս. داغ dayγ *«խարան, ատրաշէկ երկաթով այրելով նշան»,* dāγ kardan *«խարանել, դաղել», որից փոխառութեամբ Թրք.* داغلامق daγlamaq *«խարել», արև. Թրք. կամ չաղաթ.* داغ dayγ *«այրածի սպի, խարան»,* داغلاماق daγlamaq *«խարել», քրդ.* داغ dayγ *«խարան»: Իրանեան բառը ծագում է հնխ.* dheg$^{\text{u}}$h- *«այրել» արմատից, որի ժառանգներից են սանս.* dáhati, *զնդ.* dažaiti, *հսլ.* žegą, *ալբան.* djek, δez, ndez, *լտ.* foveo, *լիթ.* degù *ևն՝ «այրել, վառել, տաքացնել» նշանակութեամբ* (Horn § 529, Pokorny 1, 849), *որոնց դէմ իբր բնիկ հայ պիտի ունենայինք* դեգ:

Ուղիղ մեկնեց ՆՀԲ: Scheftelowitz BB *29 (1905), 27 սխալմամբ հայերէն բառ կարծելով և կարդալով* tał *փոխանակ* daγ, *իբր բնիկ հայ կցում է լտ.* dolare, *յն.* δαιδάλλω *«ճարտարօրէն շինել», δαίλτος*

«գրաատախտակ» բառերին։ Նոյնը կըրկնում են Walde 239, Boisacq 161, Pokorny 1, 810: *Տե՛ս նաև* տաղ «երգ»։

ԳԻՒ.—Սլմ. Ալշ. Մշ. դաղել, *Գոր. երև. Ղրբ. Նխ. Սեբ.* դաղէլ, *Ասլ.* դաղէ՝լ, *Ախց.* դ՝աղէլ, *Ագլ. Խրբ. Շմ. Տփ.* դաղիլ, *Վն.* դողել։

ՏԱՂ «առնի անդամի ծայրը». *ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 232։*

ՏԱՂ «մի տեսակ խոտ». *ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 232։*

*ՏԱՂԱԽ «ցեխ, շաղախ» *Նէմ. դ. 17. Նշ. եղեկ. ուրիշ վկայութիւն չկայ։*

=*Փոխառեալ է հարաւային կովկասեան լեզուներից. համմտ. վրաց.* ტალახი տալախի «ցեխ, տիղմ», ტალახიანი տալախիանի «ցեխոտ», ტალახიანება տալախիանեբա «ցեխոտիլ», *ինդիլ.* ტალახ տալախ «ցեխ», *սվան.* ტალახ տալախ «ցեխ», *լազ.* dalaxi, talaxi, tolop'i «ցեխ, տիղմ, ճահիճ, աղտեղութիւն», dalax «կեղտոտել, ցեխոտել» (*Արդեօք այս բառերի պարզ արմատն է* tal-? *համմտ. վրաց.* ტალა տալա «աւտամի վրայի կեղտը»)։—*Աճ.*

Նշ Բառում է կցել շաղախ բառին՝ իբրև տարբեր դրչութիւն։ Սպրդեան ՀԱ 1909, 334 հյ. շաղ, շաղախ, շողիմ, տողիմ, *Թրք.* sayanaq «տեղատարափ», *սումեր.* sağar «ցեխ», suk «ճահիճ» *են բառերի հետ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1908, 122։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* ṭalx «հեղեղի բերած ցեխաջուրը, որ կարելի չէ խմել» (*Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 550*)։

ԳԻՒ.—Ոշտ. տախախ *կամ* տաղախ «ցեխի ցամաք շաղախ՝ կտուրը ծածկելու համար» (*Ամատունի, Հյ. բառ ու բան 614*)։

*ՏԱՂԱԿ «ապահարզան». *Նորադիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած կղնկտ. տպ. Շահն. բ. էջ 8. «Եւ այս օրէնք տաղակի յաղգ նոցա եմուտ, եթէ զկին թողեալ ի կնութենէ, ապա առ այլում եղեալ ի քուն՝ առ ինքն առնուն» (Հրտր. էմ. էջ 232 սխալ է տաղտկալի): Որ և* տալախ *Վրդ. առ. 174։*

=*Արաբ.* طلاق ṭalāq «ապահարզան»։—*Աճ.*

Հրատարակուած է նախ իմ Հյ. նոր բառեր հին մատ. Ա. 36։

Տաղակել *տե՛ս* Տաւաղել։

*ՏԱՂԱՆԴ *կամ* ՏԱՂԱՆՏ, ո, ի–ա *Հլ. չարծաթի կամ ոսկու 125 լիտր=*40 kil. 800 gr. *(ըստ Մանանդեան, Կշիռները և չափերը, էջ 47), որ է 9000 դահեկան (Տեղեկ. ինստիտ. 2, 30)» ՍԳր. փխբ. «ձիրք. վերնային շընորհք» Մանդ. Շար. որից* տաղանդատ *Ոսկ. եփես.* տաղանդեայ *Լմբ. յայտ. ծ.* տաղանդապարտ *Մանդ.* տաղանդան «տաղանդներ» (պարսկաձև յոգնակի) *ԱԲ։*

=*Յն.* τάλαντον *բառն է, որ բուն նշանակում է «կշռի նժար», յետոյ «կշիռ, ծանրութիւն, քաշ» և մասնաւորապէս «ծանրութեան և դրամի չափ, որ տեղի և ժամանակի համեմատ փոփոխւում էր. Աթէնքի մէջ սովորաբար տաղանդը իբր կշիռ՝* 26 kil. *էր, իսկ իբր դրամական չափ՝ արծաթը արժէր 5600 ֆրանկ, ոսկին՝ 56,000 ֆրանկ»։ Բառս փոխառութեամբ անցել է շատ լեզուների. ինչ. լա.* talentum, *ֆրանս. անգլ.* talent, *ռուս.* талантъ, *վրաց.* ტალანტი տալանտի *են։ Մագում է հնխ.* tel-, tol-, tl- «քաշել, կշռել» *արմատից. համմտ. յն.* ταλαντεύω «կշռել, հաւասարակշռել», τάλας, τάλαν «դժբախտ, որ չարիքներ և թշուառութիւն է քաշում», ταλάσσαι «կրել, տանիլ, տառապիլ», τολμάω «կըշռել, քաշել», *սանս.* tulā «կշիռք», tulayati «կշռել», *լա.* tollo «բարձրացնել», tolero «կրել, տառապիլ», *հլտ.* tulere «կրել», *գոթ.* fiulan, *անգսք.* ƀolian, *հրդ.* dolēn, *գերմ.* dulden «տանիլ, համբերել», Geduld «համբերութիւն» *են* (Boisacq, *էջ 937—9*, Kluge, *էջ 169 են*)։—*Հիւրշ. 383։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ. նոյնը նաև Աւդերեան, Բացատր. չփ. և կշռ. 172, Նշ Բ են։

ՏԱՂԱՒԱՐ, ի–ա *Հլ. «հիւղ, վրան, մացառով շինուած խրճիթ» ՍԳր. Եւս. պտմ. «թատրոն» Ոսկ. ա. կոր. «վրան փերեզակաց» Պզատ. օրին. «պարտիզպանի հիւղակ» ՍԳր. որից* տաղաւարահարք *կամ* տօն տաղաւա-

ռաճարաց ՍԳր. տաղաւարակից Փիլ. ել. կիւրղ. կոյս. տաղաւարիկ Վրք. Հց. տաղաւարիլ «բնակիլ» ՅՀ. իմ. եկեղ. Ճառընտ. ևն. —ՋԲ ունի նաև տալաւար ձևը. շատ յետին է տեղաւար կամ տեղավար Օգոստ. բաջ. 10, 15։

ՆՀԲ Թրք. dal «ճիւղ»+Հյ. վայր բառերից, իբր «բնակարան ի վայրի կըրկտեալ յոստոց»։ Այվազովսքի, Յղ. Հրնչման 16 վրաց. տալավարի։ Հիւնք. սկավառակ բառից։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Կր. տաղավար, Ննխ. Պլ. Ռ. Սեբ. դաղավար, Խրբ. դօղօվար «եկեղեցական հինգ գլխաւոր տօներըն»։

ՓՈԽ.—Վրաց. ტალავარი տալավարի «վրան» Մտթ. ժէ. 4. Մրկ. Թ. 5, ტალავრობა տալավրոբա «տաղաւարահարաց տօնը»։

ՏԱՂԶ «խոտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 305. երևի «մի տեսակ խոտ». տե՛ս վերը տաղ «խոտ ինչ»։

ՏԱՂՄԱԿԱՆ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Մագ. Թղ. 121. «Եւ այսպէս վրաստահացուցանէ զմեզ զոլ տաղմական զօրուն կանաւոի և արիւինու, որք պարածածկէին կարմրակերպ կերպարուիք և կանաչորակ զգեստիւ»։ Իմաստը անյայտ է. ԱԲ նոյն է համարում պաղմական բառի հետ, որ է «մի տեսակ ցնցող երկրաշարժ» և որ բնաւ յարմար չէ տեղին։ Տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատեան. Բ. էջ 179։

*ՏԱՂՄԱՃԻ «խարան խփող պետական պաշտօնեայ». նորագիւտ բառ, որ երեք անգամ գտնում եմ գործածուած 1263 Թ. արձ. «Մեք տաղմաճիքս... բարձաք ի յԱնոյ իրիցանուս զբաժն. Անոյ տաղմաճի էի. Անոյ դաղմաչի» (Վիմ. տար. 106, 149)։ Տե՛ս և տամղա։

=Ղաղաթ. طامغاجي ṭamγačə, օսմ. damγaǰə, damgaǰə «դրոշմ զարնող պաշտօնեայ». ծագում է ṭamγa, damγa «դրոշմ» բառից, որ ինչպէս Հյ. տաղմանի ձևը ցոյց է տալիս, պէտք է հասկանալ tayma, dayma, այն է պրս. dāγ «խարել» բառից, իբր «խարանադրոշմ»։—Աճ.

Տաղոսել տե՛ս Տաւաղել։

ՏԱՂՏ «ձանձրութիւն, նողկանք, զզուանք, դժուարը զալը». այս իմաստով առանձին գործածուած չէ. փխբ. կայ միայն «յղի կանանց արտակարգ ցանկութիւնը» Բժշ. որից տաղտաղտ «ձանձրալի» և տաղտաղալի «ձանձրանալ» Պիտ. և Երզն. մտթ. առ լեհ. բայց յատկապէս -ուկ մասնիկով ածած՝ տաղտուկ «ձանձրալի» Ոսկ. մ. բ. 13. Վեցօր. 170, «ձանձրութիւն» Բ. մկ. գ. 17 (ինչպէս և արդի գրականում), տաղտկութիւն Բ. մկ. գ. 17. տաղտկալից Ոսկ. մ. ա. 15, բ. 28. տաղտկալ, տաղտկանալ ՍԳր. Ոսկ. ա. թես. և եբր. (նիւթական իմաստով ունի Սարգ. բ. պետ. ե. էջ 464 (բ տպ.). «Ջուր զբարինս... ոչ ի խորս անդնդոց իջուցանէ՝ տաղտկացեալ ծանրութեամբն», իբր «ծանրութեան չդիմանալ, ծանրութեան տակ ընկճուիլ»). անտաղտուկ Ոսկ. մ. ա. 15. ծանրատաղտուկ Վեցօր. Եւս. քր. Ոսկ. ես. և մ. ա. 15, 16 ևն։

ՆՀԲ «համարիլ զիմն իբր աղտեղի և ախտաւոր» (որով ուզում է հանել աղտ, ախտ բառերից)։ Հիւնք. ախտ բառից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 տաղտապել բառի հետ կցում է Թրք. داغدغه daγdaγa «հոգ, նեղութիւն» բառին։ Պատահական նմանութիւն ունին ասոր. ṭaleṭ «ծուլանալ, դանդաղիլ, յապաղիլ», ṭalāṭa «հեղգ, դանդաղ»։

ՏԱՂՏԱՊԵԼ «նեղել, չարչարել, հարստահարել» Ոսկ. մտթ. որից տաղտապիլ «նեղուիլ, տառապիլ, դժկամակիլ» Բուզ. 137 (երկու ձեռ. տաղտկապիլ), Ոսկ. բ. տիմ. էջ 168 (գրուած տաղտկապիլ), Մանդ. 171. Բրս. մրկ. Լմբ. (ստէպ).—տարբեր նշանակութեամբ է երևում Ոսկ. պօղ. ա. 61. «Մեք Թոյլ և մեղկք, տաղտապեալք և երկրասէրք, մարմնասէրք և անմխիթ»։ Թերևս նոյն բառն է տապել Բուզ. 135, որ տես տապ։

ՆՀԲ Թուի հանել տաղտուկ և տապ բառերից։ Տէրվ. Նախալ. 84 կրկնուած է *տղապ արմատից, որ գալիս է հնխ. tarp «ընդարմանալ» արմատից. համմտ. լտ. torpere, լիթ. tirpti։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 հյ. տաղտուկ և Թրք.

ﻏﺪﻏﺪ daydaya «հոգ, նեղութիւն» բառերի հետ։

ՏԱՂՏԵԼ «շարժել». անսովոյ բառ. կայ միայն աճատաղելի «անշարժ, հաստատուն» բառի մէջ, որ ունի ԱԲ. հմմտ. տղել, որից աճաղելի «անշարժելի»։

***ՏԱՃԱՐ**, ի–ա հլ. «պալատ, արքունիք» ՍԳր. Եղն. «անկելանոց, հիւանդ՝ ծեր՝ անկեալ պահելու յատուկ շէնք» Ճառընտ. «սեղանատուն, սեղան, կոչունք» ՍԳր. Եղիշ. «կուռքի մեհեան» Շար. Ճառընտ. «աղօթատուն Աստուծոյ» ՍԳր. որից **տաճարակապուտ** Բ. մկ. դ. 42. Ոսկ. ես. **տաճարակից** Դ. մկ. բ. 13. Բուզ. **տաճարապետ** ՍԳր. **տաճարակողոպուտ** Ոսկ. մտթ. և Բ. տիմ. մեհենատաճար Ոսկ. գծ.։

=Հպրս. tačara- «պալատ, տպարանք» (որ և գրուած dačara), որից պրս. تجر tajar «ձմեռանոց, տաքուկ բնակարան. 2. շտեմարան, համբարանոց» (Horn § 375)։ Պարսկից է փոխառեալ նաև արաբ. طزر ṭazar «ամառանոց», որ ըստ Կամուս, թրք. թրգմ. Բ. էջ 9 պրս. تزر tazar ձևից է։—Հիւբշ. 251։

ՆՀԲ վրաց. **տաձարի**, պրս. **տայիր**, **տէյր**, ի **տավէր** «Աստուած և դիք»։ Հին հայկաբանները մեկնում էին «տայ ճար»։ Ուղիղ մեկնեց նախ Gosche 38, որին հետևում են միւսները։ Հինք. պրս. **թէճէր**, **թաշիյր**, **շարկեան**, **շարբաճ**, հպրս. **թաատրա** (!), լտ. quatuor, պրս. **չաաիր**, թրք. **չաարբ**, յն. τέτταρα։ Ալիշան, Հին հաւ. 428 պրս. **թէճէր** և նորուր. tage չաատուածը։ Պատահական նմանութիւն ունի չին. 大 象 tá⁴-čiá «մեծ տուն»։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Կր. Մկ. Ջղ. Տփ. **տաճար**, Մշ. **տաջար**, Ռ. Սեբ. **դաջար**, Մրղ. **տաճճար**, ՋԲ. **դաջօյ**, **դաջոր**. այս բոլորը ունին «հեկեղեցի» նշանակութիւնը։ Իսկ Սլմ. գործածւում է միայն իբրայատուկ մի ասացուածի մէջ. երբ քոնիրը շատ վառուելով տպիտակի, ասում են թէ քոնիրը «սիւտկել է իշխօ տաճար». սրանից հանելով է անշուշտ, որ Ա. Աթայեան, Սալմաստ 66 դնում է **տաճար** «քոնիրը նշանակութեամբ մի բան, որ ինչպէս ստուգեցի Թաւրիզում Սալմաստեցի գաղթականների մօտ, գոյութիւն չունի.—հմմտ. նաև Ահարոնեան, Հոս կինը, էջ 67 Իգդիրեցոց մի երդումը քոնրի վրայ՝ «այս տաճարը վկայ»։

ՓՈԽ.—Վրաց. **ტაძარი տաձարի**, **ტაძარო տաձարո** «տաճար, եկեղեցի, պալատ, դատարան, պանդոկ», **ტაძრული տաձրեուլի** «պանդոկապետ», **ტაძრობა տաձրոբա** «ընթրիք, խնջոյք», Թուշ. **ტაძარ տաձար** «եկեղեցի», քրդ. **տաճար** «եկեղեցի» (այս ձևով է գործածուած Աւետարանի քրդերէն թարգմանութեան մէջ, տպ. Պօլիս, 1857, Մտթ. իգ. 16—17 ևն)։

***ՏԱՃԻԿ** «արաբ». հնագոյն ժամանակներից սկսած այս անունով էին կոչւում այն Արաբները, որոնք բնակւում էին Ասորիքի և Եփրատի միջև գտնուած եռանկիւնու մէջ. այս երկիրը կոչւում էր յն. Ἀραβία ἡ ἔρημος. գործածուած է նաև Փիւնիկէի և Քանանացոց համար (տե՛ս Կանայեան, Արրտ. 1913, 493—6 և Կոգեան ՀԱ. 1922, 542). հմմտ. Բ. մակ. ժբ. 10. իբրև ածական՝ գործածւում էր «արագավազ» նշանակութեամբ՝ ձիու և ուղտի համար. ինչպ. **տաճիկ ձի** Բուզ. դ. 47, էջ 134, **տաճիկ ուղտ** Բուզ. դ. 54, էջ 141. երիվարս **տաճիկս** Սեբ. Գ. ի (հմմտ. **արա. բական ձի, արաբ ձի**)։ Աւելի ուշ արաբները մահմետական դառնալով՝ **տաճիկ** բառն էլ սկսաւ նշանակել «իսլամ», որից և **տաճկացնել** «մահմետական դարձնել» Գնձ.։ Երբ Սելճուքները արշաւելով արևմուտք, մտան Միջագետք, խառնուելով տեղացի արաբների հետ, ստացան մեր մէջ **տաճիկ** անունը. հմմտ. «Ի հիւսիսոյ եղեն շարժեալ ազգ, որ կոչմամբ Թուրք անուանեալ, ի 24 ցեղս որոշեալ, իշխանութիւն տաճկաց առեալ, թեպէտ յաղանդ նոցին խմորեալ» Վահր. ոտ. էջ 183. «Իսկ արաբացիքն որ մինչև ցայն վայր տաճիկք կոչէին ... խառնեցան ի Թուրքն և եղեն ազգ մի վասն համակրօնութեան իւրեանց և միմեանց անուամբ կոչին» Միխ. ատ. էջ 407—8։ Սելճուքներից յետոյ նոյն անունը ժառանգեցին նրանց ցեղակից Օսմանցիք։

Սելճուքների բարբարոսութեան պատճառաւ տաճիկ դարձաւ նաև ած. «մարդու նեղութիւն տուող, չարչարող»» իմաստով Երզն. մաթ. 125 ա, որ մինչև անգամ Քրիստոսի բերանն է դրում (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Ա. 172)։ Նոր բառեր են տաճկերէն, տաճկաճայ, տաճկաբան, տաճկախօս, տաճկաճայերէն, տաճկաճպատակ, տաճկասէր են։

=*Պհլ.* tāčik «*Միջագետցի արաբ. 2. արաբական. 3. արագավազ*», uštr-i-tāčik «*տաճիկ ուղտ*», *պրս.* تاجيك tājīk, *նաև* tāžīk, tāzīk «*արաբացի ծնունդ, որ մեծացել է Պարսկաստանում*», tāzī «*արաբ*» (*ինչ.* zabān-i tāzī «*արաբերէն*»). 2. «*արագավազ*» (*ինչ.* asb-i tāzī «*տաճիկ ձի*»), *որից Քրք.* تازى tāzī «*որսի շուն*»։ *Այս բոլորի արմատն է իրան.* tāč «*վազել*», *ղնդ.* tačaiti «*վազել, հոսել*», *պհլ.* taxtan, taček, *պրս.* تاختن tāxtan, تازم tāzam «*վազել*», *որոնց այլ ցեղակիցներն են սանս.* tákti, *ալբան.* ndjek, *հիռլ.* techim, *հսլ.* teką, tešti, *ռուս.* теку, течь «*վազել, հոսել*» են (Horn § 368, Trautmann 316):—*Հիւբշ. 86։*

Տաճիկ *բառի վրայ խօսել է նախ Տէրոյենց, Երևակ 1861, յնվ. 16, առանց որոշելու բառի ծագումը։ Ուղիղ մեկնեց նախ Պատկ.* Арм. reorp. 54։ *Հիւբշ. 86 թէև դնում է պհլ.* tāčik *բառից, բայց այս ձևը հանում է սոր.* tāī, *արաբ.* طی ṭai *ցեղանունից՝* čik *մասնիկով, ինչպէս* սագիկ «*Սագաստանցի*» *և* rāčik=*պրս.* rāzi «Ray *գաւառից*»։ Stackelberg WZKM 17 (1903), 50 *տաճիկ ուղտ=պհլ.* uštr-i-tāčik։ *Տե՛ս նաև* Seidel, *Մխ. հեր. § 15։ Բառիս ծագման մասին վէմ ծագեցաւ Ճակատամարտի մէջ. Լ. Մեսրոբ (անդ՝ թ. 894) բառը հանում էր* tāǰ «*թագ*» *բառից, իբր «թագին հպատակող սորուկ ցեղ» (առաջին տաճիկներն համարելով այն քրիստոնեաներին, որոնց թաթարները քշելով Բուրթեստան, պահում էին սորկական ծառայութեան մէջ)։ Այս հերքելով շատ ուղիղ մեկնութիւններ է տալիս վերի ձևով Գ. Մեսրոպ (անդ, թ. 933)։ Նոյնը* Marquart, *անդ, 1922 փետր. 8, որ և Պարսկաստանի արևելեան սահմանի վրայի* Tačik-*ներին ծագած է համարում* tat *նախատաճկան անունից+նուազական* -čik. *այսպէս* (Tat) *էին կոչում նաև Խրիմի թաթարները տեղացի գոթերին ու յոյներին. նոյն ծագումից է թուում դարձեալ մաճառական* tot *կոչումը, որ տրւում է Սլովաքներին։ Այս բոլոր առուգաբանութեանց ամփոփումն ունի Թէոդիկի Ամէն. տարեց. 1923, էջ 354—6։ Բառիս մասին մի լաւ յօդուած ունի Բ. Ե. Կ.՝ Ամերիկահայոց «Տարրոս» հանդէսում, 1919, էջ 504։*

Գիւմ.—Ախց. տաճիկ «*օսմանցի թուրք*», *Մրզ.* տաճիկ «*պարսիկ*», *Պլ. Սչ.* դաչիկ «*օսմանցի*», *Պլ.* դաժգրնալ «*մահմեդական դարանալ*», *Սվեդ.* դիչոգ *են։*

Փոխ.—Վրաց. ტაჭიკი տաճիկի «*տաճիկ ձի*»։

*ՏԱՃԿԻՆԱԿ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «*ծնծի գաւազան կամ մտրակ, ծնծ*» *Կանոն. Ոսկիփ.։ (ՆՀԲ դնում է նաև տակնիւնակ և տակիւնակ գրչութիւնները. սրանցից առաջինը կարող է առոյգ լինել, բայց երկրորդը ՆՀԲ-ի հնարածն է թուում՝ կցելու համար Քրք.* degenek *բառին. երկուսն էլ չկան վկայութեանց մէջ. չունի նաև ՋԲ)։—*

=*Պհլ.* *tačīkēnak «*խարազան*» *բառից. համմտ. պրս.* تازيانه taziyāna «*խարազան*», *որ ենթադրում է պհլ.* *tačīkānak *ձևը։ Միջին շրջանից փոխառեալ է վրաց.* ტაჯაგანი տաջագանի, ტაჯგანი տաջգանի, ტაჯგანალა տաջգանալա «*խարազան, մտրակ*»։—*Հիւբշ. էջ 515։*

ՆՀԲ Քրք. տէկէնէկ, տայազ, *պրս.* բազիյանէ։ *Վերի ձևով մեկնեց* Müller WZKM 10, 278:

Գիւմ.—Սրանից ձևափոխեալ եմ կարծում տաճար Ղրբ. Շմ. «կարճ ու հաստ ձեռնափայտ» (Ամատունի, Հայոց բառ ու բան 616), տաճակ Ղրբ. «ոստայնի մի փայտը կամ գա-

ւազանը» (ըստ Բարխուդարեան, Ջորանն ու նշ. 81—82 տաճարկ)։

ՏԱՃՐ «լոբի» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2916։

=Արաբ. دجر dajr «լոբի»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

*ՏԱՄ «իշխանուհի» Անսիզք 93։

=Ֆրանս. dame «ազնուական կին»։

ՏԱՄԱԼ, ո հլ. որ և տամալի, -լոյ, լոջ «տանիք, երդիկ, ճեմելիք ի վերայ տան» Առակ. իե. 24. Պտմ. աղէքս.—Նո՞յն բառն է արդեօք տամալ անստոյգ ձևը, որ ունի Կալիսթ. 110 «Թոյլ տուք ինձ այսպէս ի տամալս (այլ ձձ. ի տամակս) անկանել կալ և յոգւոց հանել զանհարթութիւն խառնակութեանս դիպուածոյ». (ընդհանուր իմաստն է՝ թագաւորական պատուից ընկած յանծանօթս ծայրագաւառներում թափառիլ)։

=Ասուր. ta, lū, tamlīu «terrasse, պատըշգամբ», որ յառաջանում է malū «լցրած, լիցք» բառից (տե՛ս Muss-Arnolt. Ass. Handwb. 1169, 544):—Ա՛ճ.

ՀՀԲ սրանից է դնում տճկ. տամ։ ՆՀԲ Քրք. ﻟﻢ dam, յն. δῶμα, հյ. տանիք։ Տէրվ. Նախալ. 86 հնխ. dam «շինել, կանգնել» արմատից. համմտ. յն. δέμω «կապել», δόμος «տուն», լտ. domus «տուն», գոթ. timǐan «շինել» են, Հիւնք. պրս. տամալ «տան կարասիք»։

Տամբիոն *տե՛ս Տամբիրոն։*

ՏԱՄԲՈՒ «ջրհան, թուլումպա». ունի միայն Բառ. երեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 560, որից նաև ՓԲ. յիշում է Նորայր, Բառ. ֆր. 962 բ՝ իբր նորակերտ բառ։

ՏԱՄԿԱԼԱ «անյայտ մի բոյս, որ երեսի պալարների համար իբր դեղ է գործածւում» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3397։

ՏԱՄՂԱ «դրոշմ, նշանադրոշմ» Կիր. տպ. Վենետ. էջ 151, որ և էլ-տամղայ «ձեռնադրոշմ» Կիր. էջ 156, 160. որոշեալ յօդով դամղէն Արձ. ԺԹ դարու (Վիմ. տար. էջ 149)։

=Քրք. تمغا tamγa «դրոշմ», որից التمغاسی el-tamγa(sə) «ձեռնադրոշմ». տե՛ս նաև տաղմաճի:—Ա՛ճ.

ՏԱՄՈՋԵԼ, կամ ՏԱՄՈՒԺԵԼ «թագուհու հետ եղող ազնուական օրիորդ» Լծ. Նար. Թղթ. դաշ. 27։

=Հֆրանս. damoiselle, Ֆրանս. demoiselle, իտալ. domicella, damigella, անգլ. damsel «օրիորդ», որոնք յառաջանում են լտ. domicella «երիտասարդ տանտիրուհի» բառից. այս էլ ծագում է լտ. domus «տուն», dominus «տանուտէր, տէր» բառից։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

+*ՏԱՄՈՒԿ «խոնաւ» Վեցօր. գ. էջ 58 (Ստարացեալ գոտանին ի տամուկ խոնաւութենէն). որից տամկանալ «խոնաւանալ, թրջիլ» Յոբ. իդ. 8. տամկացուցանել Նիւս. կազմ. Դամասկ. Ոսկիփ. տամկութիւն եզն. տամկատեսակ Նեմես. 63. տամկացելի Քր. և երզն. քեր. անտամուկ Բրս. արբեց. տամկ Բժշ. որ ունի ՆՀԲ. բացատրութեան համար ուղարկում է տամուկ ձևին, բայց այս բառը մոռանում է յիշել թէ՛ իր տիղը և թէ՛ յատկութեան։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dā- «հոսիլ» արմատից, որ ածել է -mo- ածականով (-ուկ մասնիկ է, ինչ. անձուկ, աղմուկ). ցեղակիցներն են սանս. dā-nu- «հոսուն հեղուկ, կաթիլ, ցօղ», dā-na- «կաղուցքի ժամանակ փղի քունքերից հոսող հեղուկը», գնդ. dā-nu- «գետ, հեղեղ», օսս. don «ջուր, գետ», որոնք ներկայացնում են արմատի -n-ով ածած ձևերը. իսկ հայերէնի պէս -m-ով են ածած՝ յն. δημός և ալբան. djamε բառերը՝ «ճարպ» նշանակութեամբ։ Նոյն արմատից է նաև Don «Դոն» և Dānuvius «Դանուբ» գետերի անունը (Pokorny 1, 763, Boisacq 182): Benveniste BSL 33, *հտ. 99, էջ 143 վերոյիշեալ համեմատութեանց վրայ աւելացնում է նաև կամիս. dame (n)k «անձրևել», նկ սակայն ճիշտ է բառիս տրուած այս նշանակութիւնը։*

Böttich. ZDMG 1850, 363, *որից նաև* Arica 81, 368, Lag. Urgesch. 464 *սանս.* tim (tāmara, timi «ովկիանոս») *արմատից։ Հիւնք. ծմակ բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ* Liden, Arm. Stud. 73: Karst, *Յուշարձան 403 սումեր.* dim, tim, tum «հոսիլ, հոսանք», *423 քքր.*

tam, dam, *oսմ.* damla *«կաթիլ»։—Պատահական նմանութիւն ունին անգլ.* damp *«խոնաւութիւն, մէգ», գերմ.* Dampf *«շոգի, ծուխ» (հնխ. արմատն է* dhem- *որ պիտի տար հյ. *դիմ- ձևը), արաբ.* تمكّى tamakkī *«քրտնելով թրջիլ»,* تمغّى tamaγγī *«կաշին կակղիլ» (Համուս, Թրք. Թրգմ. Գ. 931)։*

ԳԻՒ.—Ղրբ. Շմ. **տմկիլ** *«տափկիլ, շատ եփուելով կակղիլ. 2. խոնաւանալ, խոնաւութիւնից կաշին թուլանալ. 3. մեռնիլ»։*

***ՏԱՆՒ** *«մի տեսակ բոյս.* croton tiglium *կամ* euphorbia latyris» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2917։*

=Արաբ. دند dand (*տե՛ս* Steinschneider WZKM 11, 83)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՏԱՆԻԼ *«կրել, փոխադրել» ՍԳր. «փխբ. պարունակել, բաւել, բովանդակել, տոկալ, համբերել, կատարել, գրաւել» ՍԳր. Ոսկ. Բուզ. Եղն. Եղիշ. որից* աննաանելի *Ոսկ. ա. 37. Խոր.* տանողական նար։ *Արմատի երկրորդ ձևն է* **տար**, *որից կազմւում են* **տանիլ** *բայի կատարեալը, ապառնին, հրամայականն ու անցեալ դերբայը. աւելի յաճախ երևում է բարդութեանց ու ածանցմանց մէջ, ինչ.* **տարուբեր** *Բ. մկ. ժդ. 20. Ագաթ.* **տարաբեր** *Ագաթ.* **տարող** *Եւագր.* **տարուբերիլ** *Կողոս. բ. 19. Պիտն. 381.* **տարուբերել** *Ոսկ. յհ.* **համբերատար** *Ագաթ.* **դիւրատար** *Եղիշ.* **բազմատար** *Նիւս. կազմ.* **ընդմատատար** *Ասող. ժդ. 10.* **ընծայատար** *Ագաթ.* **խնամատարութիւն** *Ոսկ. յհ. բ. 24, 36, 30* **պաշտօնատար** *Ագաթ. կրկնութեամբ կայ մհյ.* **տարատարել** *«ցրուել» (նորագիւտ բառ) Կոստ. երզն. 105 (Լեզուն հողմն սաստիկ, որ շատ խուխ է տարատարել)։*

Եւրոպա 1849, 200 Հայրս. **տար** *ձևից։* Justi, Zendsp. 131 *տանս. և զնդ.* tan *«տարածել, քշել», պրս.* tanūdan *«քաշել», իսկ էջ 148 զնդ.* dar, *տանս.* dhar *«ունել, կրել»։ Պատկ.* Изслед. *13 զնդ.* tan, tar, *տանս.* tan *արմատների հետ։* Canini, Et. étym. 68 *կցում է պրս.* -dān *մասնիկին։ Տէրվ. Մասիս 1882 ապր. 16 և Նախալ. 49, 88 հնխ.* dhar *«կրել, տանիլ» արմատից, իբր տանս.* dhar, *պրս.* dāštan, dār *«կրել, ունենալ». Հայը հնագոյն *տարեել ձևից։* Bugge KZ 32, 68 *և* IF *1, 439 արմատը* տար, *որով* տանիմ *<*տարնիմ <հնխ. *tṛ-nāmi, իբր տանս.* tiras *«ընդ», զնդ.* tarō *«վրայից անցնելով», տանս.* tarāya *«վրայից անցնիլ», հյ.* **տար** *«հեռու» են։ Հիւնք.* **տուն** *բառից։* Scheftelowitz BB 29, 67 *փոխառեալ պարսկերէնից. համմտ. զնդ. տանս.* tarati, *պհլ.* vitārtan, *պրս.* guδāram: Pedersen, *Հայ. դր. լեզ. 65 լատ.* tenēre *«ունել» կամ հսլ.* dĭrati *«պատռել», մրգ.* trinnen *«փախչիլ», տանս.* darayati *«բաժանել»։ Ընդունում է* Pokorny 1, 797 *հնխ.* der- *«ճեղքել, կաշին քերթել»։ արմատի տակ։ Տե՛ս և տակը* **ՓՈԽ**։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Կր. Մկ. Շմ. **տանիլ**, *Տփ.* **տա՛նիլ, տա՛նուլ տալ**, *Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն.* **տանել**, *Դոր. Երև. Ղրբ. Մրզ.* **տանել**, *Հճ. Սչ.* **դանել**, *Ասլ. Խրբ. Պլ. Սեբ.* **դանիլ**, *Ննխ. Ռ.* **դանել**, *ՋԹ.* **դանըլ**, *Մլկց. Տիգ.* **դոնիլ**, *Համշ.* **դօնիլ**։ *Նոր ձևեր են* **տարել, տարանի, տարկոռու, տարուկոր, տարուկ, տարուիլ են։**

ՓՈԽ.—Հայերէնի հետ նոյն են հնչում վրաց. **ტანება** **տանեբա** *«մէկի հետ մի բան ուղարկել, բռնել, ջանալ մի բան ունենալ, բերել, ասել»,* **ტანებული** **տանեբուլի** *«ուղարկուած»,* **ნატანი** **նատանի** *«բերուած, կրել, նեղուիլ»,* **გატანა** **գատանա** *«միասին երթալ, ընկերանալ»,* **მოტანი** **մոտանի** *«տանիլ, յանձնել»,* **გატანი** **գատանի** *«արտածել, փոխադրել».—* **ტარება** **տարեբա** *«տանել, առաջնորդել»,* **გატარება** **գատարեբա** *«առջևը հանել, փոխադրել, ընկերանալ, առաջնորդել»,* **მოტარება** **մոտարեբա** *«տեղից տեղ տանել»։ Ինչքան էլ որ առաջիններն ներկայացնում են հյ.* **տան-** *ձևը և երկրորդները* **տար** *արմատը, այնու ամենայնիւ բան իս այս բոլորը պատահական նմանութիւն միայն ունին։*

Տաճիք *տե՛ս Տուն։*

ՏԱՆՄՈԼՈՅ. *անյայտ իմաստով նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Արձ. 1293 թ. (Վխմ. տար. էջ 136). «Ես Գիրք և ամուսին իմ Շաքարս միաբանեցաք Ամենափրկչիս և գնեցաք զտանձոլան Ջոշիկին, որ քնի ռ. սպ. և տուաք ի սուրբ ուխտս»։*

Կոստանեանը (անդ, էջ 283 ա) տեղանուն է համարում, բայց ի զուր։

ՏԱՆՁ (ի *հլ. յետնաբար*) *«տանձ պտուղը»* Պղատ. օրին. 299 (*սեռ.* տանձից), *որից* տանձի *«տանձի ծառ»* Ա. մն. ժդ. 14, 15. *Նիւս. կազմ. Մխ. առակ.* տանձիկ *Մագ. և Երզն. քեր.* կարմրատանձ *Ագաթ.* խոզատանձ *Գաղիան. նոր բառեր են* տանձառն, տանձենի *են։*

Հիւնք. տանձ *բառից, «ըստ մերձաւորութեան պարսիկ ձայնիցս* լիկէ *«տանձ» և* լիկեամ *«տանձ»։* Patrubány SA 1, 195 *լիթ.* dinga *«երևի», հպրուս.* padingti *«ախորժելի լինել» բառերի հետ։ Նոյն, ՀԱ 1908, 152 յն.* χανδάνω *«բռնել, պարունակել», լտ.* praehendo *«բռնել», գոթ.* bi-gitan *«ձեռք բերել» բառերի հետ, իբր* տանձ<*ձանտ *«ծառից վար առնուած»։ Մառ.* ИАН *1915, 848 վրաց.* ხეალი սխալի *«տանձ» բառի հետ, իսկ* Яфет. сбор. 1, 65 *ալբան.* darde, *բասկ.* udare *«տանձ» բառերի, անդ՝ 2, 152 ծայրի ձ համարում է յոգնակիի նշան։*

Գիւր.—Ալշ. Երև. Գոր. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. տանձ, *Ախց. Կր.* տանճ, *Ղրբ.* տանձ, տոնճ, *Խրբ. Ռ. Սչ. Սեբ.* դանճ, *Ննխ.* դանճ *(պիւղերը դ՝անճ), Ասլ.* դանձ, դունճ, դոս *(օր.* դոս մը *«տանձ մը»). Տիգ.* բանճ, *Ակն. Հճ. Համշ.* դօնճ, *Զթ.* դօնճ, դոնճ, *Ագլ.* տունճ, *Սվեդ.* դունճ։—*Պլ. գործածւում է Բրբ. առմուդ բառը, բայց փխբ. կայ* դանց, դանցի գօր *(<*տանձի կոր) *«ապուշ, տըխմար, բթամիտ» նշանակութեամբ, յատկապէս գործածական տանձիկ դինւորների համար։ Նոր բառեր են* տանձաճոտ, տանձակեր, տանձակոր, տանձիկ, տանձանոց, տանձաշիր, տանձափաղ, տանձափաղի, տանձուտ, *Ղոլատանճ, մեղրատանճ։ Բրբախօս հայերից Ատն.* դանճ. *Էնկ.* դանճը գէս *«ապուշ, տըխմար» (Արևելք 1888 նոյ. 9, Բիւր. 1898, 865)։*

ՏԱՆՃԻՏ *«թրթնջուկ, գառնադմակիկ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2919։*

[**ՏԱՆՆ.** *ունի միայն ՀԲուս. § 2920, որ ասում է թէ Բժշկարանում մեկնուած է հապին անծանօթ բառով։ Ըստ Նորայր ՀԱ 1923, 343 ուղղել* տանձ, *ինչպէս ունին նոյն ձեռագրի լատադոյն օրինակները. իսկ հապին=յն.* ἄπιον *«տանձ»։*]

***ՏԱՆՋ** *«չարչարանք» Վրք. Հց. որից* տանջել *«չարչարել» ՍԳր. Սերբ.* տանջելի *Ոսկ. մ. ա. 9.* տանջաւէտ *ՍԳր.* տանջաւատար *Վեցօր. Եղն. Ոսկ. ես.* տանջումն *Ագաթ.* տանջիչ *Իմ. ժր. 22. Բ. մկ. դ. 16. Ոսկ. երր. Եղն. Մծբ.* դժոխատանջ *Պիտ.* դիւատանջ *Անան. ևկեղ.* հայրատանջ *Փիլ. Մխ. դտ.* չարատանջ *ՅՀ. կթ. են։*

=*Պհլ.* *tanǰ- *հոմանիշ ձևից, որ կորած է. համմ. պրս.* تنجیدن tanǰīdan *«փաթթել, պրկել, սեղմել, ճնշել»,* تنجیده tanǰīda *«նեղացնալ և վշտացնալ»,* تنگ tang *«նեղ, անձուկ. 2. նեղացումն ի բարկութենէ և ի ցաւմանէ» (*g *և* ǰ *ձայնների համար համմ. պրս.* فرهنگ farhang *և* فرهنج farhanǰ *«գիտութիւն»>հյ.* ճրահանգ*): Իրանեան բառերի ծագումը տե՛ս* բանկ *և* բանճ *բառերի տակ։ Նախնական իմաստն է «պինդ կապելով սեղմել», որից «նեղ, նեղել», որ է «տանջել»։ Նոյնի ուրիշ առումն է ներկայացնում պհլ.* tanǰišn *«պատիժ, տուգանք»,* tanǰed *«պատիժը կրել»։*

Նշխ վրաց. տանջվա *«գան»։* Lag. Urgesch. 325 *միացնում է վտանգ բառին։ Նոյն,* Arm. Stud. § 2185 *առաջին անգամ միացնում է պրս.* tanǰidan *են բառերին։* Canini, Et. étym. 203 *յն.* δάκος *«կծան»,* δηκανικόν *«եկեղեցական բանան»։ Հիւնք.* բանչ *բառից։ Հիւրշ. 251 մերժում է պրս.* tanǰidan *են, նշանակութեան տարբերութեան պատճառաւ։* Scheftelowitz BB 29, 67 *պաշտպանում է պրս.* tanǰ *են, որ և մեր տուած բացատրութեամբ հաստատւում է։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Սլմ. տանջել, *Ախց. Երև. Կր. Մրղ.* տանջէլ, *Ագլ. Շմ. Տփ.* տանջիլ, *Սչ.* դանջել, *Ննխ. Պլ.* դանջէլ, *ՋԹ.* դանճիլ, դանջ՛իլ, *Ռ.* դանչէլ, *Խրբ.* դանչիլ, *Սվեդ.* դոճ՛իլ, *Տիգ.* դոճչիլ, *Համշ.* դօնջուշ, *Թրքախօս հայերից՝ Ասն.* դէնչաճ *«տանջանք»։*

ՓՈՒԽ.—Վրաց. ტანჯვა տանջվա *«նեղութիւն, տանջանք, տանջուիլ»,* ვეტანჯები վեատանջեբի *«նեղվել, չարչարել, յոգնեցնել»,* ტანჯვილი տանջվիլի *«տանջեալ»,* მტანჯველი մտանջվելի *«դահիճ, բռնաւոր, դաժան, չարչարող»,* სატანჯველი սատանջվելի *«տանջող, տանջանք, տանջանարան»* Դուկ. *ժղ. 23։*

ՏԱՆՏԻՍԵՆԻ *«մի տեսակ բոյս. արաբ. հապ-ըլ-մլուք» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2921, որ թուի նոյնացնել տանդ բուսանունի հետ։*

**ՏԱՇ «տաշելը» Ոսկիփ. որից* տաշել *ՍԳր. Եւս. քր.* տաշածոյ *Կորիւն.* տաշեղ *կամ* տաշիղ *«տաշուք» Իմ. ժգ. 12.* անտաշ *ՍԳր. Ագաթ.* անտաշելի *Ջքր. կթ.* արբտաշ *Կիր. պտմ.* մեծատաշ *Ասող.* վիմատաշ *Խոր. Օրբել.* ծայրատաշ *Վրք. Հց. Բենիկ.* կատարատաշ *Փիլ.* պողովատատաշ *Ասող. ևն։*

=ՊՀլ. tāšītan, *պազ.* tāšīdan *«տաշելով շինել, ձևել», սոգդ.* taš *«տաշ, տաշելը», պրս.* تش taš *«կացին, ուրագ», զնդ.* taš *«կտրել, տաշել, կոփել, ձևել, շինել»,* taša- *«կացին», սանս.* takṣ *«կտրել, արուեստով շինել, կոփել». այս բոլորը պատկանում են հնխ.* tek'- *(կամ* tek'ֆ- *ըստ* Pokorny 1, 717*) արմատին, որի բնիկ հայ ժառանգն է* թեքել*։ Աւելի ընդարձակ տե՛ս այս բառի տակ։—Հիւբշ. 251։*

ՆՀԲ յիշում է մաշել *և պրս.* թիրաշիյ-տէն*։ Սանս. և զնդ. ձևերի հետ ուղիղ համեմատեցին նախ* Böttich. ZDMG 1850, 363 *և յետոյ* Arica 75, 223, Lag. Urgesch. 553, Müller SWAW 42, 254, Justi, Zendsp. 133, *Պատկ.* Изслед. *13, Տէրվ. Նախալ. 82։ Հիւնք. պրս.* թէշ, թիշէ *«ուրագ»* Кипшидзе, Грам. минг. 1914, *էջ XX մինգ.* ტოშო տիշոն *«մաքրել», որ յարեթականից ան-ցել է պարսկերէնի։ Պատահական նմանութիւն ունի թրք.* تلاش talaš *(գւս.* talaša*) «տաշեղ», որ յառաջանում է պրս.* تراشه tirāša *հոմանիշից. բուն թրք. ձևն է* یونغه yonγa *«տաշեղ»։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. տաշել, *Ախց. Երև. Կր. Մրղ.* տաշէլ, *Ագլ. Գոր. Ղրբ. Մկ. Շմ. Տփ.* տաշիլ, *Սչ.* դաշել, *Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* դաշէլ, *Ասլ.* դաշէ՛լ, *Խրբ.* դաշիլ, *Համշ.* դաշուշ*.—Մշ. Սլմ. Վն.* տաշեղ, *Ախց. Գոր. Կր. Ղրբ.* տաշէղ, *Սչ.* դաշեղ, *Տփ.* տա՛շիղ, *Մրղ.* տաշշէղ, *Ակն. Ասլ. Խրբ.* դաշէխ, *Ագլ. Ջղ.* տաշուղ*։ Նոր բառեր են* տաշուվի, անտաշած, տաշոտել, տաշշել, տաշուեմ, տաշուռ, տաշտաշոտել, տաշտշորել*։*

Տաշխ *տե՛ս Ստաշխն։*

**ՏԱՇՏ, ի հլ. «բաժակ, գաւաթ, թաս» ՍԳր. Բուզ. Ոսկ. ա. կոր. «խնկամանն» Երգ. ե. 13, ղ. 1. «կոնք» Վրք. Հց. «կթոց, կողով» Ճառընտ. «ձիու գաւակը պաշտպանող մի տեսակ զրահ» Արծր. 132 (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատեն. Ա. 208), «մի տեսակ երաժշտական խազ» (գրուած է* դաշտ *Վստկ., թաշտ ՀՀԲ. Համմտ. պրս.* طشتگر ṭaštgar *«անուն երաժշտի միջոց», որ ծագում է* ṭašt *«կոնք» բառից)։ Արդի գրականում և գաւառականներում* տաշտ *նշանակում է միայն «փայտէ կոնք»։*

=ՊՀլ. 𐭬𐭱𐭮𐭲 tašt *«աւազան, կոնք, տաշտ, թաս, բաժակ», պրս.* تشت tašt *«կոնք, մեծ լականն», աֆղան.* tašt, *քրդ.* tešt *«լուացքի տաշտ», զնդ.* 𐬵𐬀𐬱𐬌 tašta- *«բաժակ, գաւաթ, թաս»։ Այս բոլորը ծագում են* taš *«տաշելով շինել» արմատից, որի անցեալ դերբայն է. աւելի ընդարձակ տե՛ս* տաշ (Pokorny 1, 717, Horn § 389)*։ Իրանեանից փոխառեալ է նաև արաբ.* طست ṭast*«տաշտ, կոնք» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 314). սրա համառօտուածն է* طاس ṭās*, որ տարածուած է նաև շատ լեզուների մէջ. մանրամասն տես* բաս*։—Հիւբշ. 251։*

Ուղիղ համեմատեց նախ Աւգերեան, Բցտր. չափ. և կշռ. 175, իբր պրս. դաշք*։ Նոյնը յետոյ ԳԴ, ՆՀԲ,* Böttich. Arica 75, 223, Lag. Urgesch. 155 *(նաև զնդ.*

taśta-)։ Հինք. (նաև Բրք. բէստի «սափոր», որ սակայն այստեղ չի պատկանում և ծագում է պրս. دستی dastī «ձեռնակուլայ» բառից)։ Սանտալճեան, Բազմ. 1904, 499 լծ. բաս։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրզ. Սլմ. Վն. Տփ. տաշտ, Սչ. դաշդ, Խրբ. դ'աշդ, Համշ. Ռ. Սեբ. դաշդ, Ասլ. դաշդ, դաշ*, Ագլ. տօշտ, Զթ. դտյդ', դտրդ':—Զանազան բարբառներում տարբերւում են փայտէ տաշտը (խմորի համար) և պղնձէ տաշտը (լուացքի համար). այսպէս. Լ. Ախց. Ղրբ. տաշտ «փայտէ տաշտ» և Ախց. բտշտ, Ղրբ. բէշտ և Լ. տաշտակ «պղնձէ տաշտ»։ (Առաջին երկուսը նոր փոխառութիւն են. այսպէս նաև Զղ. բաշտ, Տիգ. բաշդ, Շմ. բէշտ)։—Նոր բառեր են տաշտագլուխ, տաշտադրէք, տաշտադրօճ, տաշտածնան, տաշտամանդ, տաշտաֆեր, տաշտաֆերանճ։

ՓՈԽ.—Վրաց. ტაშტი տաշտի, Թուշ. ტაშტ տաշտ «լուացքի տաշտ», Բրք. գւո. S. dasd «տաշտ» (Բիւր. 1899, 799)։

ՏԱՇՏ «խաղողի որթի տնկուած ճիւղ» Բուզ. 99. Գր. սքանչ. ծն. քս. (ՀԱ 1912, 473), որից տաշտատար «ուռճացնել, ճիւղաւիից» Ովս. ժ. 1. (սխալմամբ գրուած է նաև դաշտատար), տաշտագետ Սերեր. տաշտախիլ Ծղիշ. ը, էջ 156. տաշտաբաղ Վստկ.։

ՆՀԲ լծ. Բրք. բէստէ «տրցակ, փունջ» (իմա՛ պրս. dasta). բայց Թուում է թէ նոյն է համարում նախորդի հետ, որովհետև թէ՛ իբր առանձին բառ չէ գրած և թէ մեկնում է «բուն որթոյ տնկեալ ի կոնճաձև փոս, որոյ բացումն ասի բաժակել»։ Հիւրշ. 251 բաժանում է նախորդից։

ԳԻՒ.—Մշ. տաշտագ, Երև. տաշնակ «որթի բարունակ, որի վրայ մի քանի մատեր կան»։

*ՏԱՇՏԱԿ (ի–ա Հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «գաւաթ, բաժակ» Տօնակ. ուրիշ վկայութիւն չկայ։

=ՊՀլ. *taštak ձևից, որ աւանդուած չէ, բայց նոյնն են հաստատում պրս. دشتک taśta «փոքրիկ տաշտ, բաժակ» և իրանէանից փոխառեալ արևել. Բրք. (Kašgārī) تشتك taštak «մի տեսակ աման հողէ»։—Հիւրշ. 252։

ՆՀԲ դրաւ տաշտ բառից։—Lag. Arm. Stud. § 2188 պրս. tašta ձևի հետ։

ԳԻՒ.—Երև. Լ. Ղրբ. տա՛շտակ «փոքր տաշտ» (բայց տե՛ս տաշտ բառի տակ)։

*ՏԱՊ, n Հլ. «տաքութիւն, ջերմութիւն» ՍԳր. Եզն. Մծբ. Կոչ. «ծովի ալեկոծութիւն» (յն. πάνδ) Փիլ. յովն. Կիւրղ. կոյսն. որից տապագին Նար. պտմ. Փիլ. լիւս. տապախառն Երեմ. ժը. 17. Յովն. դ. 8. Նար. պտմ. Վեցօր. 86. տապախարշ ՅՀ. կթ. տապիլ Ա. տիմ. գ. 4. Նար. պտմ. «տեղումը հանգիստ չնստել» Բուզ. 135. տապացուցանել Ագաթ. տապանալ Մտթ. ը. 14. ժգ. 16, բ. կոր. ժբ. 29. Փարպ. հրատապ Նար. Լմբ. պտրգ.։

=ՊՀլ. 𐭬𐭯 tap «տաք, ջերմ», 𐭠𐭯𐭲𐭩𐭭 ṭapiśn «ջերմն, տենդ», 𐭲𐭠𐭯𐭬 tāftan, tapēt «հոտացնել», պրս. تاب tāb «տաքութիւն, ջերմութիւն, տապ, ճառագայթ, փայլ, բարկութիւն, նեղութիւն, վիշտ», تب tab «ջերմն, տենդ», tabiś «տաքութիւն», تف taf «տաքութիւն», تابستان tābistān «ամառ», تافتن tāftan «տաքանալ, տաքացնել», քրդ. tāw «կրակ, տաքութիւն, հոանդ», tā «տենդ», օսս. t'awjn «տաքացնել», բելուճ. tap, t'ap', taf «տաքութիւն, ջերմ, ցաւ», գնդ. 𐭲𐭠𐭯 tap, tāpayeiti «տաքացնել»։ Այս բոլորի հնխ. արմատն է *tep- «տաքանալ». համմտ. սանս. तप tap, तपति tápati «այրել, տաքացնել», tápa- «տաքութիւն», tapu- «կրակ, արեգակ», tāpin «խիստ տաք», հինդ. تپت tupt «տաք», tutta «տաք», تپنا tapna «տաքացնել», tap «տապ, տաքութիւն», գնչ. tapava «տաքացնել, այրել», tavava «եփել, հոացնել», tablo, tatto «տաք», թոխար. tsap «գաղջացնել, մի քիչ տաքացնել», tsatsāpauwa «տաքացրած», լտ. tepeo «տաքուկ՝ գաղջ լինել», հսլ. topiti «տաքացնել», teplŭ «տաք», ռուս. топить «վառել, տաքացնել», тепло, теплый «տաք», հիւլ. tene, ten «կրակ», tē «տաք», կիմր. twym «տաք» են (Horn § 372, Pokorny 1, 718, Trautmann 319)։ Արմատս չէ պահուած յունարէնում,

*ճիշտ ինչպէս հայերէնում, ուր իբր բնիկ պիտի ունենայինք *թև, *թու ձևերով։ Տե՛ս նաև* տապակ *և* տօր։—*Հիւբշ. 252։*

Նախ ԳԴ համեմատեց պրս. թապ, թէպ, թէվ *ձևերի հետ։ ՆՀԲ պրս.* դապ, թապ, թավ, թէվ, դէֆդ, դէֆս։ Peterm. 17, 34, Wind. 11, Böttich. ZDMG 1850, 363, Arica 80, 332, Lag. Urgesch. 448, Müller SWAW 38, 574—5, Bopp Gram. comp. 1, 14 *են սանս.* tap *և պրս.* tāb *ձևերի հետ։* Pictet 2, 508 *ուզում է կցել* տապան *բառին՝ իբր* tap *կամ* dabh *արմատից (կասկածով)։* Justi, Zendsp. *132 ընդ.* tap *ձևի տակ։ Տէրվ. Նախալ. 83 իբր բնիկ հայ՝ վերի ձևերի հետ հնխ.* tap *արմատից։ Հիւնք. պրս.* թապ, թէվ *և քրդ.* տավ *«արև»։ Ալիշան, Հին հաւ. էջ 470 փռիւգ.* Տապիա *«կրակի աստուածուհին»։ Պատահական նմանութիւն ուներ վրաց.* ტფილი տփիլի *«տաք»,* ტფობა տփոբա *«տաքանալ» (որ և* თბილი բրիլի, თბობა բրոբա), *ինդիլ.* თბილი բրիլի, *մինգ.* ხოთება սիքեբա, თიბუ բիբու, *սվան.* დებდი դեբդի *«տաք», լազ.* tib *«տաքացնել»,* tibu *«գաղջ, տաքուկ»։* Pictet, *բ տպ. Ա. 245 սանս.* dambh *«այրել» արմատի հետ։*

ՏԱՊԱԼ *«թաւալուած» խոր. ա. 10. որից* տապալել *«գլորել, գետին նետել, թաւալել, կործանել» ՍԳր.* տապալեցուցանել *Ծն. իթ. 10.* տապալած *Մծբ.* տապալիչ *Արծր.* տապալումն *Պիտ. փիլ.* տապալական *Մագ. քեր.* բեռդատապալ *«բերդ տապալող» Նիւր. վկ. արև. 70—71։*

ՆՀԲ լծ. հյ. թաւալել, *ոմկ.* թապլել, թապլոկիլ, *թրք.* տէվիրմէք։ *Տէրվ. Նախալ. 125 կցելով* տապաստ *բառին, արմատը դնում է* տապ։ Müller SWAW 136 (1897), 37=Armen. VI *յն.* ταπεινός *«խոնարհ» բառի հետ։ Հիւնք. թրք.* տէպէլէնմէք *«թաւալիլ»։ Փորթուգալ փաշա, եղիշէ 289 սեմականից փոխառնել պիտի։ դասլօճասդան Հոմանիշի հետ ցեղակից։* Lidén IF 44, 192 *չվնդ.* tappa, *իսլ.* tapa *«վայր գցել» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։*

ԳԻՒ.—Սրանից են տապլիլ *Մշկ. «ոտքը սահելով ընկնել»,* տապլտկիլ *Ակն. Արբ. Խրբ. Պլ. Սեբ.=*տապլկտալ *Վն. «այս ու այն կողմ գլորիլ»։*

Տապալի *տե՛ս Տապեղ։*

*ՏԱՊԱԽ *«անասունների փորհարութեան հիւանդութիւնը» Վստկ. 190—1, 212։=Արաբ.* جابِخ ǧābix *«ժանտատենդ»։—Աճ.*

*ՏԱՊԱԿ, ի–ա *հլ. (յետնաբար կայ ո հլ.) «մէջը բան խորովելու կամ տապակելու աման» ՍԳր. Եւս. պտմ. Կիւրղ. զեսո. որից* տապակել *երեմ. իթ. 22. Մանդ.* տապակումն *ճառընտ.։*

=*Պհլ.* 𐭬𐭱𐭯𐭪𐭪 tāpak *«տապակ», բհլուճ.* t'āfay *«փուռ», պրն.* تابه tāba, تاوه tāva *«տապակ», քրդ.* tāvá, tavé, *զազա* ta'ük *«տապակ»։ Ծագում են իրան.* tap, tāp *«տաքացնել» արմատից, որի վրայ ընդարձակ տե՛ս* տապ. *համմտ. սանս.* तापक tāpaka- *«ջեռուցանող»,* taptaka *«տապակ»։ Իրանականից են փոխառեալ նաև ասոր.* ṭabaqā *«տապակ, կասկարայ», արաբ.* ṭābiq, ṭābāq, ṭabaq *«մէջը իւղ հալեցնելու տապակ», թրք.* tava, *արևել. թրք.* tava, taba, *թուրքերէնի միջոցով էլ նյն.* ταβάς, *բուլղ.* tavi, *սերբ.* tava, *ռում.* tęvę *«ձուկ խորովելու տապակ» են։—Հիւբշ. 252։*

Աւգերեան, Բյտր. չփ. և կշռ. 175 և ԳԴ պրս. թապէ։ *ՆՀԲ հյ.* տապ *բառից, լծ. վրաց.* տապա՛կի, *պրս.* դապա, թապէ, *թրք.* թավա, թավէ։ *Պրս. բառի հետ են համեմատում նաև* Böttich. Arica 78, 297, Lag. Urgesch. 448, Ges. Abhd. 49 *են։ Ամատեան, Արևելք, 1890, սեպտ. 7 արաբ.* թապազ *«պնակ»!*

ԳԻՒ.—Ջղ. տապակել, *Տփ.* տաբա՛կիլ, *Շմ.* տաբագիլ, *Գոր. Երև. Ղրբ.* տպա՛կէլ, *Ագլ.* տպա՛կիլ, *Սլմ. Վն.* տապկել, *Ախց. Կր.* տապկէլ, *Մրզ.* տապկէլ, *Մկ.* տապկիլ, *Ալշ. Հճ. Մշ. Սչ.* դաբգել, *Նոխ. Պլ. Ռ. Սեբ.* դարգել, *Խրբ.* դարգիլ, *Հմշ.* դարգուշ, *Տիգ.* դորգել, *Սվեդ.* դորգիլ, *Ասլ.* դա՛գէ՛լ, *Զթ.* դար-

գիլ, նաև դաբօգ, դարոգ, որ այլուր ամէն տեղ պրս. թրք. թավա ձևով է։—Նոր բառեր են տապակայ, տապկոց, տապկիլ, տապկրտել, տապկտուք, տապկցու։

Փոխ.—Վրաց. ტაბაკი տապակի (կամ ტაფაკი տափակի) «տապակ» և ტაბაკა տարակա «տապակած միս կամ ձուկ» կարող են հայերէնից լինել. բայց յետին իրաննան փոխառութիւն են ტაფა տափա «տապակ», ტაფა-მწუარი տափամծուարի «խորոված»։

ՏԱՊԱԿ, ի–ա հլ. «մի տեսակ վահանաձև զարդ, որ և վահանակ». մէկ անգամ ունի Ա. մկ. դ. 57. «Զարդարեցին զկոնքս ... ոսկի պսակօք և ոսկւովք տապակօք»։ Սրանից է տապակեալ «վահանակներով զարդարուած», որ մէկ անգամ ունի Բուզ. զ. 2. «Եւ ինքն Զաւէն աթիենալս և զտապակեալս և զժապաւինեալս նարօտօք ագանէր»։

Նշ֊ի հանում է նախորդ տապակ բառից, իբր սրա ձևով մի զարդ։ Lag. Ges. Abhd. էջ 49, ծան. 1 կարծում է որ Ս. Գրքի տապակ բառը յառաջացած է ասոր. ܬܓܢܐ բառը կարդալով ܬܒܛ tagnā (τήγανον) «խորովելու աման, տապակ, թավա» և ըստ այսմ թարգմանելով տապակ։ Յիշում է Հիւբշ. 252, բայց նկատում է որ այս պարագային դուրս պիտի մնայ Բուզանդի տապակեալ ձևը։

*ՏԱՊԱՂ «պնակ» Մագաք. աբ. 27. «Տապաղ մի կարմիր ոսկի բերել և դնել առաջի»։

=Արար. طبق ṭabaq «ափսէ», որ Թուրքերէնի մէջ դարձել է طباق tabaq «պնակ» > Պլ. թաբախ։

*ՏԱՊԱՂԱՅ «նահանգ օդոյ, կլիմայ». այսպէս ունի Քաջունի, հտ. Գ. 233։

=Արար. طبق tabaqa «խաւ երկրի ևն»։—Ա֊ճ.

ՏԱՊԱՂԱՓ «մի տեսակ անծանօթ բոյս». ունի միայն ՀԲուս. § 2923, առանց յիշելու աղբիւրը և կասկածականով։

ՏԱՊԱՆ, ի–ա հլ. «արկղ, արկղի նման՝ շորս կողմը փակ նաւ (նոյի), մեռելի սրնտուկ, գերեզման, դամբան» ՍԳր. Ագաթ. որից տապանակ «արկղիկ, գանձանակ» ՍԳր. տապանակակիր Եփր. յես. տապանագործ Մանդ. Կիւրղ. խշ. տապանատուն, Մամիկ. Ուռհ. Վրք. հց. տապանիլ Ճառընտ. ևն։

Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. էջ 176—7 և 94 պրս. تبنگو tabangū «տախտակեայ սնտուկ»։ Նշ֊ի եբր. תבה tēbā, պրս. tabangū, վրաց. կիտօպանա՛կի։ Pictet 2, 508 կամ տապ բառի հետ tap, dabh արմատից, և կամ փոխառեալ սեմական dafana «թաղել» արմատից։ Մորթման ZDMG 24, 80 թրք. թավան «ձեղուն»։ Յոյս 1877, 259 են իբր. թեպան «նոյի տապանը» և եգիպտ. Թեբէ քաղաքի անունը։ Հիւնք. պրս. թէպէնկի։ և յն. τάφος բառերից հանում է տապանակ, որից համառօտուած տապան։ Ա. Լիշան, Հին հաւ. 417 տապ բառից, ինչպէս յն. τάφος, τάφη «դիականց այրման տեղը»։ Սանուալճեան, Բազմ. 1904, 499 լծ. դամբան։ Մառ, Иппол. էջ 60 և ЗВО 20, 064 վրաց. კიდობანი կիդոբանի «արկղ», սվան. კობჯენ կիբդվեն «հացի արկղ» բառերի հետ, հնագոյն ձևը համարելով *կտապան. սրանց հետ է միացնում նաև արաբ. دفن dafn «թաղել», ասոր. ܕܦܢ dafnā «պատգարակ», ասուր. dapanu, ասոր. ܕܘܦܢ dūfnā «դագաղ»։

Դիմ.—Ախց. Տի. տապան «նոյի տապանը», Մկ. տապան «գերեզման», Մշ. տապան «դիւղական տան յետևի մասը», ինչպէս նաև տապան Ջն. «սենեակի մէջ հողէ յատակ՝ առանց տախտակամածի», տապանակ Մլթ. «գերեզմանատան մէջ իւրաքանչիւր ընտանիքի յատկացուած հողամասը, թաղ», ճողտապան Խրբ. (ճողդաբան) «գերեզման».—Թրքահօս հայոց մէջ կայ Առն. թափան «տապան», որ և ըստ Պէտէլեան (Արեւելք 1888, նոյ. 8—9)՝

Փոխ.—անցած է նաև Առանայի Թուրքերի և Թրքահօս յոյների բարբառին, ուր. tapan «լուացքի տաշտ. 2. Նոյի տապանը»։

*ՏԱՊԱՇԻՒ «կարծր կղուած ի հանգոյցս բամբոյից (bambou), զոր վարէին երբեմն ի բժշկութեան». մհյ. բառ. յիշում է յաճախ

Մխ. բժշ. ունի միայն նորայր, Բառ. ֆր. 1189 ա։

=*Արաբ.* طباشير ṭabāšīr *«կաւիճ. 2. բամբուի շաքար, որ իր մէջ կաւիճ էլ է պարունակում»* (Будаговъ 1, 552), *որից և պրս.* تباشير tabāšīr, *թրք.* دبشور debešur, *աղաւ.* debešir *«կաւիճ» և ֆրանս.* tabaschir *«բամբուի հանգոյց»։ Բոլորի նախնականն է սանս.* तवक्षीर tavakšīra- *«բամբուի մանանա», որ յառաջանում է* त्वक्क्षीर tvakkšīra- *ձևից և այս էլ բարդուած է* त्वच् tvač *«մորթ, կաշի. 2. կասսիա»+* क्षीर ksīra- *«կաթ» բառերից* (Böhtlingk, Sansk-Wört. 3, 287 և 461)։

Ուղիղ մեկնեց Նորայր, անդ, յետոյ Seidel, *Մխ. հեր. § 37։*

ՏԱՊԱՍ *(սեռ. -ի) «մի տեսակ մահացու ցաւ» Ուխտ. Ա. 102. Վրք. և վկ. Բ. 364. Յայտմ. դեկտ. 4, յնվ. 2. Պտմ. վր. Եզն. առ լեհ. «մոլաքոր, érysipèle» Բժշ. (մոլաքոր որ է տապաստն. Բազմ. 1917, 102). վրիպակով գրուած է նաև* **տապասկ**։

ՆՀՐ մեկնում է «ախտ տապագին և ծաւալական և եռք որպէս բոր սաստիկ և ժանտախտ»։

ԳԻՒ.—Արբ. **դաբաս** *«մանուկներին յատուկ՝ մորթի հրատապ բորբոքում», որից տապասաղրիւր Արբ. «նոյն հիւանդութիւնը բժշկելու սուրբ աղբիւր»։*

ՓՈՒ.—Վրաց. ტაბასტი **տաբաստի** *«արիւներթութիւն»։*

***ՏԱՊԱՍ** *(սեռ. -ի) «օթոց, սփոռց, գորգ» Ժղ. Հռոմկլ. Յայտմ. մրտ. 22, որից* **երկրատապաստութիւն** *«գետնախշուութիւն» Աբեղ. էջ 538. աւելի հին և ընտիր է* **տապաստակ** *«բազմոց, դիվան» Ոսկ. մ. գ. 17։*

=*Պհլ.* *tapast *և* *tapastak *հոմանիշներից, որոնք թէև աւանդուած չեն, բայց նոյներն են հաստատում պրս.* دبست tabasta *«ծոպերով զարդարուած գորգ, կապերտ կամ օթոց», վրաց.* ტაბასტი **տաբաստո** *«անկողին» (փոխառեալ կա՛մ յետին պահլաւերէնից և կամ հյ.* **տապաստ** *«անկողին» մի բառից, համմտ.* **երկրատապաստութիւն**), *ասոր.* ܛܦܣܛܐ ṭapastā, ܛܢܦܣܛܐ ṭanpastā *«գորգ, օթոց», պրս.* دنبسة tanbasa *կամ* دمفذ tanfasa *«գորգ», արաբ.* ṭanfasa, *յն.* τάπης *«գորգ»>լտ.* tapes, tapetum>*ֆր.* tapis, *գերմ.* teppich *«գորգ»։—Հիւբշ. 252։*

Müller, Armen. VI *յն.* τάπης *«օթոց» բառի հետ։* Bugge KZ 32, 61 *ընդունում է կասկածով։ Պատկ.* Матер. I. 16 *պրս.* tabasta:

***ՏԱՊԱՍՍ** *«գետին փռուած, գետին տապալուած». առանձին չէ գործածուած. սրանից ունինք* **տապաստ անկանել** *«գետին փռուիլ, ընկնել մեռնիլ» Յուդթ. է. 9, Ա. կոր. ժ. 5. Վեցօր. 94.* **տապաստ արկանել** *«դիաթաւալ գետին փռել, սպանել» ՍԳր. Ոսկ. փիլ. Կղնկտ.* **դիտապաստ անկանել** *Ես. լդ. 3.* **տապաստիլ** *«փռուիլ մեռնիլ» Ա.Բ.* **տապաստել** *«գետին փռել, կործանել» (նորագիւտ բառ) Գիրք թղ. 30 (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 253)։*

=*Պհլ.* *tapast *բառից, որի պրս. ձևն է* تبست tabast. *այս բառի նշանակութիւնը պարզ չէ. մօտաւորապէս թարգմանւում է «աւեր, աւերակ կամ ապականեալ և շփոթեալ». առանձին գործածութիւն չունի, այլ միշտ կից է դրւում* تباه tabāh *«ապականութիւն, եղծում, ոչնչացում, վատթարանալ» բառի հետ. օր.* شد سراسر كار جهان تباه و تبست šod sarāsar kār-i ǰihān tabāh ū tabast *«աշխարհի գործերը ծայրէ ի ծայր ապականեցան»։—Աճ.*

ՆՀՐ **տապալել** *կամ* **տապաստ** *«օթոց» ձևից։ Տէրվ. Նախալ. 125 արմատը դրնում է* **տապ** *(աս մասնիկով) և կցում է* **տապալել** *բառին։ Հիւնք.* **տապաստան** *բառից։* Müller, Armen. *VI և* Bugge KZ 32, 61 **տապաստ** *«օթոց» բառի հետ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1908, 122։*

***ՏԱՊԱՐ**, *ի–ա հլ. «կացին, փայտատ» ՍԳր. «սակուր, պատերազմական կամ զինուորի կացին» Եզեկ. Բ. 2. Երեմ. իբ. 7. Ես. քր. 643. որից* **տապարաւոր** *«սակրաւոր զինուոր» Երեմ. խզ. 42. Նխ. եզեկ. և Երեմ.* **տա-**

պարահատ *Օրբել.* ողբ. տապարատաշ *Նար. խշ.*։

=*Պհլ.* *tapar *բառից, որի ժառանգներն են պրս.* تبر tabar, تور tavar *«կացին, տապար», քրդ.* tefer, tewir *«կացին, սակուր, բրիչ, փայտատ», բելուճ.* tapar, towār, *վախի* tipár. *Համմտ. նաև պհլ.* tabrak *«կացին»* (Horn § 374): *Իրանեանից են փոխառեալ արաբ.* طبر ṭabar *(այժմ «նաթաղան» իմաստով է. չգիտէ Կամուս, Քրք. Քրգմ. Բ. 7), Թիր.* tavar, *վրաց.* ტაბარი *տապարի,* ტაბარძენი *տապարձեռնի, ուտ.* **թավար**, *չէրք.* tavór, *պամիր.* tipár, *գնչ.* tover, tovel։ *Բառը անցել է նաև սլաւական, բալկանեան և ուգրոֆիննական լեզուներին. Համմտ. հսլ.* toporŭ, *ռուս.* топоръ, *նսլ.* topor, *լեհ. ռում. հունգ.* topor, *սլով.* porisko, *չեխ.* toporo, *չերեմիս.* tavár, *նյն.* τσεπέρι, *էստոն.* tapper, *ֆիննն.* tappara *ևն*: (N. Anderson, Studien zur Vergleichung der ugrofinnischen und indog. Sprachen, Dorpat 1891, *էջ 126—132 ջանում է ցոյց տալ թէ բառը բնիկ ֆիննական է և ածանցւում է* tap *«սպանել» արմատից. Համմտ. վոտյ.* tapan, *վեպս.* tappan, *էստոն.* tapan, tapma, *մորդվ.* tapan, *հունգ.* csapni *«սպանել, մեռցնել». այնուհետև փոխառութեամբ անցել է սլաւներին, պարսիկներին ևն)։—Հիւբշ. 252։*

Նախ Klaproth, Asia pol. 99 *պրս.* tabar *և ռուս.* topor *ձևերի հետ։ Պրս. բառին են կցում նաև ԳԴ, ՆՀԲ,* Böttich. Rudim. 13, Arica 46, Lag. Urgesch. 930, Gesam. Abhd. 49 *(նաև ռուս. ձևը),* Müller SWAW 42, 250, Pictet 2, 132, *Հիւնք. ևն։*

***ՏԱՊԱՐ** *«մի տեսակ կարմիր պատուղ՝ թզենու ցեղից» Ամիրտ. ունի միայն Հայբուսակ § 2924, իբր անստոյգ բառ։*

=*Արաբ.* طبّار ṭabbār, *որ Կամուս, Քրք. Քրգմ. Բ. 7 մեկնում է «թզենու նման մի ծառ է. ուրիշ բառարաններում նշանակուած է իբր մեծ և կարմիր թուզ, որ ուտելի չէ»։ Ջունի* Steinschneider:—*Ա.Տ.*

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1908, 124։

***ՏԱՊԱՐԶԱ.**, *որից* **տապարզի** շաfur *«մի տեսակ շատ մաքուր, կարծր և սպիտակ շաքար, որ բժշկութեան մէջ էր գործածւում» Մխ. բժշ. 69։ Տե՛ս և* **տապրիզատակ**։

=*Արաբ.* طبرزد ṭabarzad *բառից, որ փոխառեալ է պրս.* تبرزد tabarzad *հոմանիշից. այս էլ ստուգաբանւում է պրս.* تبر tabar *«տապար, կացին»+* زدن zadan *«զարնել, խփել» բառերից, իբր թէ այնքան է կարծր, որ միայն կացինով կարելի է կոտրել* (Horn § 374):

Ուղիղ մեկնեց Seidel, *Մխ. բժշ. § 194։*

Գիհ.—երև. **թարարզա** *«մի տեսակ խոշոր ու քաղցր ծիրան» (նոյն շաքարի նմանութեամբ կոչուած)։*

***ՏԱՊԵՂ** *«նարտ, նարդի, նարթախտա» Շիր. աւում է նաև* **տապալի** *Եւս. պտմ. 387.* **տապաղի** *Ոսկ. ճառք, էջ 284 (չունի ՆՀԲ), որից* **տապեղուլեմ** *«նարդի քուէ» Ոսկ. մ. գ. 6, Եփես. 923. Վեցօր. 178։*

=*Յն.* τάβλα *«նարտ, նարդի տուփ»* (Sophocles 1067), *որ փոխառեալ է լտ.* tabula *«աւազատակ, խաղի տախտակ» բառից. սրա նոր ձևերն են իտալ.* tavola, *որից տճկ.* طاولو tavlu>*ռմկ.* **թավլու** *«նարդի»։ Նկատելի է հայերէնի մէջ անկանոն պ ձայնը ընդդէմ յն. β-ի։—Հիւբշ. 383։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՏԱՊՂԷ *«իղացող» Մագ. քեր. 242 և երզն. քեր.*

ՆՀԲ **տապ** *բառից՝ իբր «տապացեալ ախտիւ»։*

ԳԻՒ.—Նո՞յն է **տապզի** *Դվ. «խորամանկ»։*

***ՏԱՊԼ** *«թմբուկ?» Կոստ. երզն. 131։*

=*Արաբ.* طبل ṭabl *«թմբուկ»։*

Այսպէս մեկնեց Պատուրեան, Հրտր. Կոստ. երզն. 58։

ՏԱՊՂԱՅ *«ցորենի ցեղից մի տեսակ բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2925, որ համարում է «դիլգիլ, պլպլ»։*

ՏԱՊՃԱԿ *«ձիու վրայ փռելու սփռոց» Բրս. աղ.։*

Նոյն ընդ **տապատ**՝ *ըստ ՆՀԲ. լծ. յն. լտ.* դա՛բէս *«գորգ»։* Bugge KZ 32, 61

կցում է նոյնպէս տապատ «սիտռոց» բառին։

*ՏԱՊՐԱՆ «աստղի անուն» Վստկ. 45. (Ի ժը հրորդ օրն ելանէ Տապրանն յարևմտից կուսէ. ի իդ օրն մարի Տապրանն ի յարևելս այթքն... ի ժբ օրն անկանի Տապրանն)։

=Արաբ. دبران dabarān, յօդով الدبران al-dabarān «Ցուլ համաստեղութեան մէջ 5 պայծառ աստղ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. էջ 852)։

Ուղիղ մեկնեց Վաստակոց գրոց հրատարակիչը, էջ 261։

*ՏԱՊՐԻՋԱՏԱԿ «մի տեսակ կարծր շաքար, շաքար վանի, սիսեռնաշաքար, տճ. նէօպէթ շէքէրի», որ և տապարզի շաքար Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2926։ Տե՛ս նաև տապարզա։

=Արաբ. طبرزد ṭabarzad, որ և طبرزن ṭabarzan, طبرزل tabarzal, ասոր. ܛܒܪܙܕ ṭəbarzad, որոնք փոխառեալ են պրս. تبرزد tabarzad հոմանիշից (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 730)։—Ա՛ճ.

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1908, էջ 124։

ՏԱՊՐԻԿ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Բուզ. 151. «Յաղագս Դմաւունդ վանիմականայ, որ 90 բիւրուն տապրիկ զօրօքն զոր առաքեաց ի վերայ Արշակայ»։

Թերևս յատուկ անուն է՝ ըստ Աճառ. Բանաս. 1905, 136։

*ՏԱՌ «նեղսիրտ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ճԲ և ամ. 253. «Զի մի՛ իցէ նեղսիրտ և տառ բարուքն, տեսեալ զինքն ի չքաւորութեան ստեղծեալ. այլ տեսցէ զամենայն կատարեալ, զի արձակ և առատ բարուք սնանիցի և վայելեսցէ։ Ագահն թեպէտ ընչիւք մեծատուն լինի, այլ մտօքն սին և տառ և ծակաշէք»։

=Թրք. dar «նեղ», որ յատկապէս գործածւում է սրտի նեղութեան համար։ Նախաձայն տ ներկայացնում է հին թուրքական t ط ձայնը, որ այժմ փոխուել է և դարձել d. Համմտ. dolma>տոլմա, այժմ դոլմա։—Ա՛ճ.

—ՏԱՌ տե՛ս Տարր։

Canini, Et. étym. 89 պրս. dār «coin de monnaie դրամ կտրելու գործիքը»։ Մառ ИАН 1911, 470 և ЗВО 1924, 181 մինգ. ճառա, վրաց. ծերա «գրել» բառերի հետ յաբեթական արմատից։

ՏԱՌ «մնջեղ (érable) ծառի սերմը կամ հունտը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. 36. «Ջմնջեղ ծառոյն սերմն, և իւր տառ ասեն, ի սոյն ժամս պարտ է քաղել և ցանել»։

Ըստ հրատարակչի Վաստակոց գրոց (էջ 36 ծան.) թուի արաբ։

*ՏԱՌԱՂԱՆ «կթոց, կողով» Պարապմ. լ. (այլ ձեռ. տառաղանդ). լուսանցքի վրայ մեկնուած է «սկուտեղ»։ Նոյն բառն է նաև տառաղայ Վրդն. սղ. ճիպ, էջ 484 (Ունելով զսերմն, ցանելով առաջի իւրեանց հող՝ ի տառաղայ արկեալ, որ բուսեալ և ծաղկեալ)։ Ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. τάλαρος «կողով», ταλάριον «կողովիկ». սրանք տուել են նախ հյ. տաղար կամ տաղառ, որից շրջուած են վերի ձևերը։—Հիւբշ. 383։

Ուղիղ մեկնեց նախ Ալիշան, Բցտր. չփ. և կշռ. էջ 177։ Ուղուրլեան (տե՛ս ԳԲ, էջ 1276 և 1406) պրս. թիւեան «մեծ կողով, որի մէջ միրգ և դալարիք են դնում»։

*ՏԱՌԱՊ «չարչարանք, նեղութիւն, անձկութիւն» ԱԲ. որից տառապիլ «խեղճութիւն քաշել, չարչարուիլ» ՍԳր. եզն. տառապանալ Ոսկ. յհ. ա. 35. տառապեցուցանել «չարչարել» ՍԳր. եղիշ. «պղծել, բռնաբարել» ՍԳր. տառապանք ՍԳր. տառապագին Մծբ. տառապեալ ՍԳր. տառապալից (նոր բառ) են։

=Ասոր. ܬܪܥ ṭarep «յոգնեցնել, չարչարել, հոգին բերանը բերել», ܛܘܪܦܐ ṭūrāpa «չարչարանք, տառապանք», ܡܛܪܦܘܬܐ məṭarpūṯā «տխրութիւն» (Brockelmann, Lex. syr. էջ 141)։—Ա՛ճ.

ՆՀԲ լծ. հյ. տրուպ, պրս. turāb «հող», թրք. dar «նեղ, անձուկ»։ Հիմնք. տրոփել բայից։

ՏԱՌԱՊՈՒԼ «այրելու մի նիւթ է?» նորա-

դիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած յետին մի տաղի մէջ. «Թո՛ղ զիս այրեն տառապուով, որ իմ սրտիս բոցն գոռայ» (հրտր. Զօպանեան, Հայ էջեր, էջ 74)։

ՏԱՌԱՏՈՒԿ, ի–ա *հլ. «դինուորական վերարկու» Դատ. գ. 16 (գրուած է նաև տառովատակ Հին բռ., տառովակ Բառ. երեմ. էջ 306, տառոտակ, տառիովատակ ՋԲ, տառիովկատ ՆՀԲ, ԱԲ)։ Ուրիշ վկայութիւն չկայ։*

Հացունի, Պտմ. տարաղի 159 «չորս տարերց դիմացող հատտ շոր», ուրեմն մեկնում է տառր և տոկալ բառերից!

***ՏԱՌԵՆ** *կամ* **ՏԱՐԵՆ** *«մի տեսակ մանր ձուկ, որ Վանայ ծովից է դուրս գալիս. մանաւանդ նրա չորացրածը» Ուռհ. Բժշ.։*

=Յն. ταρῑχος «աղած ձուկ (կամ նաև ծխածն ու չորացրածը)». գործածուած է յոյն շատ հին հեղինակների մօտ, ինչպէս Հերոդոտոս, Արիստոփան, Հիպոկրատ, և ունի զանազան ածանցներ. ինչ ταριχεία «ձուկ աղելը, մարմնի զմռսում», ταριχεύω «փտումից զերծ պահելու համար աղել կամ զմռսել», ταριχευτός «աղած», ταριχευτής «աղած բաներ շինող» են։ Նոյնի հետ է կապւում նաև ταρχύω «մեռելը թաղել» (նախապէս զմռսելու ակնարկութեամբ)։ Փիր. նաև ταριχεύω «վշտից ու ծերութիւնից հիւծուիլ»։ Բառիս ծագումը անյայտ է (Boisacq 943—4)։—*Հիւրշ. 383։*

Lag. Ges. Abhd. *48 կարծում է թէ յոյնը փոխառեալ է հայերէնից, որին համաձայն է գալիս տառեխի ընդարձակ մշակութիւնը Վանայ լճի շուրջը և նրա արտահանութիւնը Վասպուրականից դէպի շրջակայ երկիրները։ Ընդհակառակը, Հիւրշ. էջ 383 և 511 հայը փոխառեալ է յոյնից, որին ապացոյց են 1) յոյն բառի հնութիւնը և զանազան ածանցները՝ բազմադիմի իմաստներով. 2) հայերէնը շատ յետնաբար և խիստ քիչ է գործածուած. 3) նաև քր. հրտ. Աւգերեան, Ա. էջ 130, 5 յն. τεταριχευμένος ձևի դէմ դրուած է հյ. «աղծեալ ապրխտեալ և պահեալ», ուր պիտի գտնուէր անշուշտ նաև տառեխ ձևը, եթէ դա հայերէն լինէր և գոյութիւն ունեցած լինէր ն դարում։—Մառ* ИАН *1926, 391 հյ. տառեխ հանում է վրաց. ծղալի «ջուր» բառից։*

ԳԻՒ.—Ալշ. տառեխ, Մշ. տառեխ, տարեխ, Երև. տա՛ռէխ, Կր. տառէղ, Գոր. տա՛ռռէխ, Ղրբ. տա՛ռռէխ, տա՛ռռրխ, տա՛ռէխ, Ագլ. տառախ։ Բոլորն էլ «վանայ ծովի տառեխ ձուկը», իսկ Հճ. դայեխ «չորացրած ձուկ (ընդհանրապէս)»։ Ջղ. ասւում է միայն չոր տառեխ «շատ նիհար, վտիտ»։—Վանի բարբառում տառեխ բառը գոյութիւն չունի. Վանայ տառեխը այնտեղ պարզապէս **Վանայ ձուկ** *է կոչւում։*

ՓՈԽ.—Կան լտ. taricus *«աղած, պահածոյ» (գործածել է* Caelius Apicius, De re coquinaria *աշխատութեան մէջ, որ գրուած է յունականի հետևողութեամբ, Գ դար), ասոր.* ṭārīxā *«աղած ձուկ»* (Brockelm. Lex. syr. 140 բ), *արաբ.* ṭarrīx, ṭirrīx *«աղած և աղաջուր դրած մանր ձուկ» (Կամուս, Բրբ. Բրգ. Ա. 550), որից է նաև Արճէշի լճի արաբ. անունը՝* buhaira-aṭ-ṭarrīx *կամ* buhaira-aṭ-tirrīx *(ըստ Բլաղորի, Խաչախրի են)։ Բայց այս բոլորը, ինչպէս և ձայնաւորն էլ ցոյց է տալիս, համարւում են յունարէնից և ո՛չ թէ հայերէնից։ Ըստ* Auatremère *նոյնից է ծագում նաև արաբ.* baṭraxa *(չունի Կամուս), որից յառաջանում են ֆրանս.* boutargue, *սպան.* potagra, *իտալ.* buttagra *«կերակուր ինչ յիտալիա և ի հարաւակողման Գաղղիոյ ի ձուոց աղծեալ ձկան սնուցեալոց ի քացախի»։—ՀՀԲ և ՆՀԲ նշանակում են թրք.* **տառըխ, տառըգ** *ձևը, որ եթէ ստոյգ է, հաստատապէս հայերէնից է փոխառեալ։ Տճկ.* tarxoz *«տառեխ ձուկը» (Կարապետեան, Օսմ. բառ. 519) անշուշտ յունարէնից է, ինչպես ցոյց է տալիս -os վերջաւորութիւնը։*

ՏԱՌԵՂԱՆ *«ժողովարան». ունի միայն Բառ. երեմ. էջ 306։*

ՏԱՌԵՂՆ, ե *հլ. (սեռ.-դան, յգ.-դունք) «արագիլ» Անյ. պորփ. Մխ. առ. Լաստ.*

(*Հրտ. 1844, էջ 36* տաղեղուիմ, *երկու ձ.* դատաղեղուիմ, *իսկ նոյն ժը.* տառեղուիմ). *Սանահն. «ճայ թուչունը» նիւս. երգ. (որից ՀՀԲ համառօտեալ է դնում* տառն *հոմանիշ ձևը, որ այլուստ ծանօթ չէ)։*

Ղազրճեան, Մասիս 1884, 202 համարում է «արծիւ կամ բազէ» և կցում է գնդ. vārayna *հոմանիշի հետ։ Հինք.* **տրեխ** *բառից։* Petersson, Ar. u. Arm. Stud. 101 **-եղն** *մասնիկով* **տառ** *արմատից, որ կցում է անգսք.* teors, *անգլ. գւո.* tarse, *հոլլ.* teers, *հբգ.* zers «*առնիւ*» *բառերի հետ։*

ՏԱՌԹԻՇ «*մեծ տիզ որդն*». *ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 233, որից ԳԲ։*

***ՏԱՌՈՒՂԱՅ** «*դատաւոր քաղաքի,* полиц мейстеръ» *(Բանալի գիտութ. Կ. Սարաֆեանի, Սանկպետ. 1788, էջ 199)։*

=*Պրս.* دارغا dārūγa «*ոստիկան, ոստիկանապետ*», *չաղաթ.* daruγa «*թաղապետ, թաղի ոստիկանը*», *որոնց մայրն է մոնղոլ.* دارغا darγa, دارغا *կամ* دارۇغا dārūγā «*գաւառապետ, քաղաքապետ*», *որ ծագում է մոնղոլ.* darazy «*նեղել, ճնշել*» *բայից (*Будаговъ *1, 547)։—Ա.Ճ.*

+**ՏԱՍՆ**, ն *հլ.* (**-սիկ, -սուիմ, -սանց**) «*տասը*» *ՍԳր. եփր. յհս. որից* **տասներորդ** *ՍԳր.* **տասնեփիկ** *ՍԳր.* **տասնպատիկ** *ՍԳր. Ոսկ.* **տասնապետ** *ՍԳր.* **տասանորդ** *ՍԳր.* **տասանորդել** *ՍԳր.* **տասնեւրամանեան** *Կոչ.* **մեռասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, ճնգետասան, ութևտասն, իննևտասն** *են ՍԳր.* **տասնամեակ, տասնորդական** *(նոր բառեր) են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* dék'm *ձևից, որի ժառանգներն են սանս.* दशन् dáçan, देश dáça, *գնչ.* deš, *բոշայ.* լաս, լասր *(աշխ.* **տասր** *ձևի նմանութեամբ կազմուած), գնդ.* دسا dasa, *պհլ.* ڈ dah, *պրս.* ده dah, *քրդ. բելուճ.* deh, dah, *աֆղան.* لس las, *օսս.* däs, *թոխար. քուչ.* säk, çak, *յն.* δέκα, *լտ.* decem, *իտալ.* dieci, *ֆրանս* dix, *սպան.* diez, *գոթ.* taihun, *հիսլ.* tīu, *հբգ.* zēhan, *գերմ.* zehn, *հոլլ.* tien, *անգսք.* tien, tyn, *անգլ.* ten, *հսլ.* desętĭ, *ռուս.* десять, *լհհ.* dzi-esięć, *լիթ.* dẽšimt, dẽšimtis' *լեթթ.* desmit *հպրուս.* dessimpts, *հիսլ.* deichn-, *կիմր.* deg, *կորն.* dek, *ալբան.* djetε «*տասը*», *ևն։ վերջինը, ինչպէս և միւսներից մի քանիսը, որոնք յանգում են* t-*ով, ծագում են հնխ.* dek'm-t(i) *թուական գոյականից, իբր «մի տասնեակ»։—ենթադրում են թէ հնխ.* dé-k'm *ծագել է հնագոյն* dιe-k'mt> de-k'mt «*երկու ձեռք*» *ձևից (համմտ. գերմ.* Hand «*ձեռք*») *և կամ յն.* δέκομαι «*ստանալ (երկու ձեռքը պարզելով)*» (Pokorny 1, 785, Walde 222, Boisacq 172, Berneker 187, Trautmann 53, Ernout-Meillet 246, Horn § 587):—*Հնդևրոպականներից հին փոխառութիւն է համարւում ուգրո-ֆիննական լեզուների «տասը» բառը, ինչպ. սիրյ.* das, *վոտյ.* das, *հունգ.* tīz «*տասը*» (Szinnyei, Finnugr. spr. *էջ 109)։—Հին հնդևրոպական մի ածանց է* k'mtóm «*հարիւր*» (<dkmtom), *որի ժառանգներից են սանս.* शत çata-, *գնդ.* satəm, *յն.* ἑ-κατόν, *լտ.* centum, *հիսլ.* cēt, *կիմր.* cant, *բրետ.* kant, *կորն.* cans, *գոթ.* hund, *հբգ.* hunt, *լիթ.* šimtas, *լեթթ.* sìmts, *հսլ.* sŭto *ռուս.* сто «*հարիւր*» *ևն. Հայերէնի մէջ այս ձևը կորած և փոխանակուած է* հարիւր<հարևր *բառով, որի ծագումը անյայտ է։—Հիւրշ. 496։*

Առաջին անգամ ուղիղ համեմատութիւններ արեց Klaproth, Asia pol. 107, *դնելով նաև սիրյ. պերմ.* das: *ԳԴ պրս.* տաև, տէն: *Ուղիղ են նաև ՆՀԲ,* Peterm. 21, Windisch. 19, 31, Böttich. ZDMG 1850, 363, Arica 62, Lag. Urg. 529, Müller SWAW 35, 199 *են։ Առանձին յօդուած կամ ա ձայնաւորի վրայ մեկնութիւններ ունին Տէրվ. Երկրագունա, Ա. 17, 18, Լեզու 168,* BB 17, 118, Bugge KZ 32, 28, Meillet *Բրգմ. Բազմ. 1898, 119 են։* Bugge, Lyk. Stud. 1, 49 *լիւկ.* tasñ «*տասը*»։ Patrubány SA *1, 4 հայերէնի հետ անձուկ կերպով կապուած է գտնում հունգ.* tíz, *որ ըստ ֆիննագէտների հնդևրոպական փոխառութիւն է։*

ԳԻՒ.—Ջղ. տասն, *Ախց. Տփ.* տա՛սր, *Ասլ. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* դա՛սը, *Ալշ. Մկ. Մշ. Վն.* տաս, *Գոր. Երև. Կր. Ղրբ. Շմ. Սլմ.* տա՛սըր, *Ագլ.* տօ՛սըր, *Մրղ.* տա՛սասա, *Հճ.* դօ՛սը, *Զթ.* դօ՛սը, դո՛սը, *Անտ.* տո՛սըր, *Սվեդ.* դո՛ւսըր. *բոլորն էլ ձայնաւորի մօտ (էական բայից և ալ, էլ բառերից առաջ) վերջաձայն ը դարձնում են ն: Նոր բառեր են* տասանոց, տասնաչխ, տասնում, տասուց:

ՓՈԽ.—Վրաց. գւռ. ტახტარავნი տատարագանի *«10 տարեկան երախայի ոտքի կաղապար»* (Беридзе, Груз. глосс. по имер. и рач'. говор. *էջ 40)*:

***ՏԱՏՏԱԿ** *«նկարիչների ներկատախտակը,* palette» *(ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 234), «լաթ, պաստառ» (ունի միայն Տիրոյեան, Հանրագր. էջ 616)*:

=Յարմարեալ է տատտակ *բառից, որ* տախտակ *բառի հին գաւառական ձևն է (տե՛ս* տախտակ*):—Աճ.*

***ՏԱՏՏԱՆՊՈՒԵԱՅ** *«շամամ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2928*:

=Պրս. دستنبویه dastanbūya *«շամամ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 492)*:

Ուղիղ մեկնեց ՀԲուս.:

ՏԱՏՏԵԼ *«խարբալել, մաղել». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տիմոթ. կուզ, էջ 79 (տե՛ս իմ Հյ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 101)*:

°ՏԱՏ *«մեծ մայր», որից* տատիկ *«մեծ մայրիկ» Յիշատ. Ռձխ=1693 Թուից (Դիւան, Հտ. Ժ, էջ խդ)*: *կենդանի է ժողովրդական լեզուի մէջ զանազան ձևերով.* տատ *«մեծ մայր, մամ. 2. մանկաբարձուհի, տատմէր. 3. Հայր»,* տատա *«մեծ մայրիկ, մամիկ. 2. քոյր. 3. երէց եղբայր»,* տատէ *«հօրեղբօր կին»*:

=Բնաձայն բառ, որ յատուկ է մանկական լեզուին և գտնւում է թէ հնդևրոպական և թէ ոչ-հնդևրոպական լեզուախմբերի մէջ. ինչ. 1) սանս. tatá, *յն.* τατᾶ, τέττα, *լտ.* tatta, *ալբան.* tatɛ, *կիմր.* tad, *կորն.* tat, *լեթթ.* tēta, *լիթ.* tẽte, tẽtis, *ռուս.* táta, *սերբ.* tata, *չնխ.* táta, *հբգ.* todo, *գերմ.* tate, *բոլորն էլ «հայր. հայրիկ», հպրուս.* thetis *«մեծ հայր, պապ». 2) լիթ.* tetà, *չեխ. ուկր.* teta, *ռուս.* тётя, *հսլ.* teta, tetŭka, *շվեդ.* titta, *բոլորն էլ «հօրաքոյր, մօրաքոյր». սրանց նախաձևն է հնխ.* tata. 3) *յն.* τήθη *«մեծ մայր»,* τηθίς *«մօրաքոյր»,* θεῖος *«հօրեղբայր», լիթ.* dẽdė *«հօրեղբայր». հսլ.* dědŭ *«պապ», գերմ.* deite, teito *«հայր», ռուս.* дедъ *«մեծ հայր»,* ДЯДЯ *«մօրեղբայր, հօրեղբայր» ևն, որոնց նախաձևն է հնխ.* dhē-dh. 4) *հինդ.* ծāծi *«տատ, մեծ մայր», 5) ոչ-հնդևրոպական լեզուներից՝ վրաց.* დედა დեդա *«մայր»,* Թրք. ana dede *«պապ, մեծ հայր», արևել. Թրք.* dede *«հայր», տճկ.* dada *«հրեխայ պահող, սնուցիչ, մանկատած», որոնցից փոխառեալ են դրւում սերբ.* dáda *«հայրիկ», բուլգ.* dáda *«երէց քոյր, երախայ պահող կին», սերբ.* dáda *«մայրիկ, երէց քոյր» են (*Pokorny 1, 704 *և* 826, Berneker 176, 191, Trautmann 41, Boisacq 962, 965)*:—Աճ.*

Մատ ИАН *1913, 178 վրաց.* դեդա *«մայր», մինդր.* դադուլի *«էգ, հաւ» են*:

ՓՈԽ.—Գւռ. տատմէր *«մանկաբարձուհի» բառից փոխ են առնուած ուտ.* տատմեր *և վրաց.* ტატ-ბერი տատ-բեր *«մանկաբարձուհի» (տե՛ս Իլիա Ճղ'ոնիա, Սիտղ'վիսկոնա (բառացուցակ),* СПет. *1910, էջ 50), իսկ* տատմէր *(որ և* տատ *Երև. «մանկաբարձուհի») բառի իմաստի զարգացման համար համմտ. բրդ.* pirək' *«մեծ մայր. 2. տատմէր», պրս.* مامmām *«մայր»,* مامیmāmī *«տանտիկին»>Թրք.* mami *«մանկաբարձուհի»*:

ՏԱՏԱՄՄԻԼ *«վախի՝ հոգսի և մտատանջութեան մէջ լինել» Սեբեր. Ոսկ. ես. որից* տատամսագոյն *Ճառընտ.* տատամսելի *Նար.* տատամսութիւն *«հոգս, մտատանջութիւն» Յոբ. ժա. 17. գրուած նաև* տամտամսիլ. *իսկ ԱՔ ունի* տարտամսութիւն, *որ ազդուած պիտի լինի* տարտամ *բառից: Արդի գրականում* տատամսիլ *նշանակում է «վարանիլ, երկու մտքի լինել, որոշումների միջև տատանիլ», որից* տատամսոտ *«վարանոտ»*:

=Կրկնուած է պարզական տամս *արմա-*

ից. ըստ այսմ տամտամսիլ *ձևը աւելի մօտ է նախնականին։—Ա.Ճ.*

Տե՛ս իմ յօդուածը ՀԱ 1899, 232։

+**ՏԱՏԱՆ** *«այս ու այն կողմ շարժիլ՝ երերալը» Ոսկ. ես. Սերբ. «երերեալ, աստանդական, թափառական» Մծբ. Եփր. Բուզ, էջ 256. որից* տատանիլ *«տարուբերուիլ, երերալ, սասանիլ, դեղեիլ» ՍԳր. Ոսկ. ես.* տատանել *Բ. մկ. գ. 20. եղիշ.* տատանումն *Մծբ.* անտատան *Վեցօր. մշտատատան Նար. յոգնատատան Նար. յետին ռամիկ ոճ է* տատան առնել *«շարժում անել, քայլել, մանդալ» Մխ. բժշ. 125 (Նորայր, Հայկ. բառաք. 122)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. den- *«շարժել» արմատի ստորին* dn̥- *ձայնդարձից. միջին* don- *ձևն է ներկայացնում յն.* δονέω *«շարժել, ցնցել, հարել, ճօճել», որից* ἀλί-δονος *«ծովի վրայ տատանուած»։ Այլուր այս արմատը չէ աւանդուած։ Եղած համեմատութիւնները կեղծ են ըստ* Boisacq 196, Pokorny 1, 776: *Հայ ձևը կրկնուած է* տան *պարզականից։—Ա.Ճ.*

ՆՀԲ «իբր տանել ու տանիլ կամ սատանիլ»։ Canini, Et. étym. 10 *ֆր.* ծանծiner, *յն.* ταντάλίζω։ *Հիւնք.* տանիլ *բայից։ Աճառ. ՀԱ 1899, 232 բ դնում է կրկնուած* տան *արմատից։ Մառ* ИАН *1911, էջ 473 հյ.* ծածանիլ, *վրաց.* ճաճանի *«տատանում, աղմուկ»,* տատանի *«առկայծ կրակ»։ Պատահական նմանութիւն ունի վրա.* ტანტალი տանտալի *«քայլած ժամանակը դողդողալ»։*

Գիւռ.—Նոյն արմատից եմ կարծում գւռ. տանտան, տանտանա, դանդան, տանտանանա *«մանկիկը գրկում վեր վեր նետելով խաղացնել», որից.* տանտանոռիկ *Պրտ. «մի տեսակ թռչուն, որ միշտ պոչը շարժում է»։*

+**ՏԱՏԱՍԿ**, *ի–ա հլ. «սուր և խոշոր փուշ» ՍԳր. Ագաթ. «երկաթեայ խոցոտիչ մի գործիք» Ագաթ. որից* տատասկաբեր *Կոչ. 13. Ոսկ. ես.* տատասկանատաո *Տօնակ.* տատասկացան *Նար. ևն. յետին ժողովրդական ձևեր են* տատաշ, տատաշկ *Վրք. հց. բ. 415, Գնձ. Բժշ. Մխ. բժշ. 67* (Seidel § 179):

*=Բնիկ հայ բառ, որ կրկնուած է *տասկ պարզականից, այս էլ աճած ձևն է *տաս արմատի, որ ծագում է հնխ.* dək′- *արմատից։ Համմտ. սանս.* dáçati, daçati *«կծել», յն.* δάκνω, δακεῖν *«կծել, խայթել»,* δάκος *«կծան անասուն»,* δῆξις *«խածուածք», գոթ.* tahjan *«պատռել», սանս.* daṣṭra *և գնդ.* dąstra *«շնաատամ, կեռ, ճանկ», հբգ.* zangar *«կծող, սուր, հատու», հհիւս.* tǫng, *անգսք.* tange, *հբգ.* zanga, *գերմ.* Zange, *ալբան.* danɛ *«աքցան» (իբր «կծող») ևն։ Այս բառերը ծագում են հնխ.* denk′- *«կծել» արմատից, որ ուզում են կապել հնխ.* dək′-, dēk′- *«պատռել, պատառոտել» արմատին* (Pokorny 1, 785 *և* 790, Boisacq 163): *Հայերէնը դալիս է հաստատելու այս կապը, ըստ որում ձևով ծագում է* dək′- *արմատից, իսկ նշանակութիւնն է «խածնել, կծել». այս իմաստի զարգացման համար համմտ. թրք.* əsərmaq *«կծել, խածնել» և* əsəryan *«եղիճ փուշը», նաև Պլ. խածնել. «փուշը կառչիլ» (օր. փուշը փէշս խածաւ)։*

ՆՀԲ յիշում է երր. טארטאר *հոմանիշը։ Վերի մեկնութիւնը տուաւ Տէրվ. Նախալ. 75։ Հիւնք. դասական բառից։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* დახო *դասը «փուշ»։*

Գիւռ.—Ագլ. Երև. տա՛տաշ, *Տփ.* տա՛տաշ, տա՛տաշխ, *Խրբ.* դադաշ, *կրկնութեամբ՝ Մշ.* փուշ ու տադասկ, *Սեբ.* փուշ ու դադասգ, *Սլմ.* փուշ–տոտոշկ, *Տփ.* փուշ ու տատաշխ:

Փոխ.—Վրաց. ტატაში *տատաշի «ուղտափուշ, cynara cardunculus», որ Ջուբինով[2], էջ 1216 մեկնում է «волчецъ, сертополохъ, остролистъ»։*

ՏԱՏԻՆ *«մի տեսակ բոյս. գոճամօրո՞ւք, hypericum կամ tragopogon» Բժշ. անորոշ ձևով ունի ՀՌուս. § 2930։*

ՏԱՏՈՂԵԼ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնւում է Գրիգոր Մագիստրոսի նամականու մի ձեռագրում, իբրև գրչագրական բնթերցուած. «Հրամայեցաք տատողել զՀիմունան յարկացն և հրձիգ առնել» (տե՛ս Տաշեան, Ցուց. 148 բ), որի դէմ բնագիրն*

*ունի տապալել (տե՛ս Հրտր. Կոստանեանի, էջ 162)։—Պէտք է կարծել որ այն ժամանակ ծանօթ մի բառ էր, որով գրիչը սխալմամբ փոխանակել է տապալել բառը։

*ՏԱՏՐԱԿ, ի–ա հլ. «մի տեսակ թռչուն, տճկ. զումբի» ՍԳր. Վեցօր. 170. Փիլ. Արծր. Նար.։

=Սրա հետ նոյն են մի խումբ նոյնաձայն բառեր. ինչ. սանս. तित्तिरि tittiri, պրս. تذرو taδarv, քրդ. tiwirk, յն. τέταρος, τατύρας, τετράων, τέτραξ, τετράϊων, τέτριξ, լտ. turtur, իտալ. tortora, ֆրանս. tourterelle, հիսլ. þiδurr, դան. tiur, հսլ. tetrěvĭ, tetrja, ռուս. тетеря, լիթ. tetervas, tetirvá, tētervinas, լեթթ. teteris, հպրուս. tatarwis, որոնք նշանակում են զանազան թռչուններ, ինչ. «մի տեսակ կաքաւ, փասիան, ցախաքոր, խայտահաւ, նաև տատրակ». վերջին նշանակութիւնն ունի լատինական խումբը. հմմտ. նաև լտ. tetrinnio, tetrissito «բադի ձայնը», յն. τετράζω «կչկչալ» (Pokorny 1, 718, Walde 777, 800, Trautmann 320, Boisacq 962): Սրանց նախաձևը դրւում է հնխ. teter-, tetr-, իբրև կրկնաւոր բնաձայն բառ։ Հայերէնը չի կարող բնիկ լինել, նախաձայն տ–ի պատճառաւ (Սպասելի էր teter->*pĕr, tetr->*pĕr): Լաւագոյն է կցել մարական τατύρας ձևին, որ աւանդում է Athenaeus 9, 387, որից փոխառութեամբ բառը դարձել է նախ *տատրակ՝ իրանեաններին յատուկ –ակ. մասնիկով և յետոյ միջին ու–ի անկումով էլ՝ տատրակ: Յն. τετρᾶξ, τέτρακος ձևի դէմ ունինք գւռ. տեառակ, որ նոյնպէս փոխառեալ է մարական համապատասխան ձևից, թէև զրաբարի մէջ չէ աւանդուած։—Հիւբշ. 395։

ՆշՒ յիշում է յն. τρυγών, լտ. turtur, երր. ḥor ձևերը։ Lag. Ges. Abhd. 227 Athenaeus-ի աւանդած τέτραξ ձևի հետ։ Justi, Kurd. Gram. 84 վերի ձևերի հետ։ Տէրվ. Նախալ. 173 իբր բնիկ հայ՝ հնխ. tatara- բառից։ Bugge, Beitr. 33 և KZ 32, 70 նոյնպէս համարում է բնիկ և դնում է *tetrak նախաձևից: Justi, Dict. Kurde 102 քրդ. tiwirk բառի դէմ։ Հիմնք. Դիտէ դիւցազնուհու անունից։ Pedersen KZ 39, 374 դէմ է խօսում Bugge-ի, որին պաշտպանում է Pokorny 1, 718, ասելով թէ տ փխ. թ կարող էր յառաջանալ նոր կազմութեամբ։

ԳԻՒ.—Մկ. տատրակ, Մշ. տադրագ, Երև. տատարակ, Դոր. Ղրբ. Շմ. ախտրակ, Զթ. դադույօգ, դադուրոգ, Սվեդ. դոդըրգոգ, Ասլ. դադըրդիգ (<տատրակիկ<տատրկիկ)։

*ՏԱՐ «հեռու, հեռաւոր» (գործածուած իբր ածական՝ միայն աշխարհ բառի հետ) ՍԳր. Ոսկ. մտթ. Եւս. քր. Սեբեր. որից ծագում են տարաշխարհիկ Ոսկ. ես. մտթ. և փիլիպ. տարադէմ «հեռագնաց» Եւս. քր. Ագաթ. Ոսկ. մ. ա. 8. տարադիմիկ Ոսկ. ես. տարակաց «հեռուն կանգնած» Բուզ. ևն, որոնց մէջ տար նշանակում է «հեռու»։ Գործածւում է նաև «զատ, բացի, դուրս, արտաքոյ, չ, ապ» առումներով (հմմտ. բաց «հեռու, բացի, դուրս ևն»). ինչ. տարագիր ՍԳր. Սեբեր. Եւս. քր. Ոսկ. մտթ. տարաժամ ՍԳր. Ոսկ. Եղն. տարապայմանկ Բուզ. տարակարծ Բուզ. տարապարտ ՍԳր. Ագաթ. Սեբեր. Եղն. տարապարհակ Մտթ. ն. 41 ևն։ Յետոսկեդարեան շրջանին այս երկրորդ գործածութիւնը աւելի ընդարձակուելով և տարածուելով՝ տար դարձաւ նախամասնիկ՝ համապատասխան յն. διա- կամ παρα- մասնիկներին. օր. տարբերել=διαφέρω, տարաձայնութիւն=διαφωνία, տարօրինակ=παράνομος, տարբաղմատ=παρασυναπτινὸς ևն. հմմտ. նաև տարբեղուն «օտարասերմ, խորթ, օտարոտի», գրուած տարաբեղուն Տիմոթ. կուզ, էջ 239 (տե՛ս ՀԱ 1911, 546)։ Նոր բառեր են տարակարծիք, տարաբախտաբար, տարափոխիկ (հիւանդութիւն), տարբաղադրել, տարբաղադրութիւն, տարօրինակութիւն ևն։

=ՊՀլ. *tar հոմանիշ ձևից. հմմտ. զնդ. 𐬙𐬁𐬭𐬀 tarō «ընդ, միջով, վրայով, դուրս, այն կողմ, բացի», 𐬙𐬁𐬭𐬎𐬀𐬵𐬀 tarasča «դուրսը», 𐬙𐬁𐬭 tar «վրայից անցնիլ, սահմանից այն կողմ անցնիլ», բարդութեանց մէջ՝ ինչ. 𐬙𐬁𐬭𐬋𐬌𐬀𐬭𐬀 tarōyāra «տարուց աւելի», 𐬙𐬁𐬭𐬋𐬌𐬀 tarō-dənan «մի դրնանից աւելի» (շատ է), 𐬙𐬁𐬭𐬋𐬌𐬀 tarō-

tarō. piθwa *«անբաւարար անունդով»*, ⁖ⲙⲟⲛⲭⲃⲁⲙ tarōmata *«հակառակութիւն, ընդդիմադրութիւն»*, ⁖ⲙⲟⲧⲃⲁⲙ tarōidīta *«հեռացում, նուաճում»* (այս բոլորի մէջ tarō- տալիս է բացասական նշանակութիւն, ինչպէս հայերէնի մէջ **տար-**), հպրս. taradaraya *«ծովից այն կողմ»*: Պահլաւերէնի մէջ tar ձևի ազատ գործածութիւնը աւանդուած չէ, բայց անշուշտ գոյութիւն ունէր Հայաստանի մերձաւոր բարբառի մէջ, ինչպէս ցոյց են տալիս պհլ. ⁖ⲗⲟ tar *«վէմ, արհամարհոտ»*, ⁖ⲁⲍⲙⲁⲛⲓⲥⲛⲓⲑ tarmēnišnīh *«հպարտութիւն»* և մանաւանդ նորագիւտ սոգդ. trzmnčyk (կարդա՛ tarāžamančīk) *«տարաժամ»* (MSL 19, 128): Այս բոլորի արմատն է հնխ. ter- *«վրայից ա՛յն կողմ անցնիլ»*, որի այլ ժառանգներից են սանս. tirás *«միջով, մեկուսի, այն կողմ, դուրս»*, tīram *«եզերք»*, լտ. trans *«յայնկոյս, ընդ»*, terminus *«եզր. սահման»*, յն. τέρμα *«նպատակ, վերջ, ծայր»*, τέρμων *«սահման»*, հբգ. durh, գերմ. durch, կիմր. tra, հիւլ. tria, կորն. dre *«միջով»*, որոնց դէմ իբր բնիկ հայ պիտի ունենայինք ***թր** (Pokorny 1, 732—4, Boisacq 957, Walde 789, 774—5):

ՆՀԲ «իբր ի բաց **տարեալ**»: Windisch. *11* **դար** *«բարձրաւանդակ» բառի հետ* tr *արմատից*: Lag. Urgesch. 266 *յն.* τῆλε *«հեռուանց» ձևի հետ* tar *արմատից*: Müller SWAW 42, 250 *համեմատում է զնդ.* tarō, tarə *«յայնկոյս» բառերի հետ*: Justi, Zendsp. 133 *զնդ.* tarō *«դէմ, միջով, վրայ ևն», սանս.* tirás, *հպրս.* tara-, *պհլ. պրս. աֆղ.* tar: Lag. Btrg. bktr. Lex. *68* **տար**=*զնդ.* taro, tara, **տարադատել**=*զնդ.* taraδāta, **տարամտութիւն**=*զնդ.* tarōmati, *իսկ* Arm. St. § 2203 **տարապարհակ**=*զնդ.* *tarōpāθra: *Հիւբշ.* Arm. Stud. § *271 կասկածով յիշում է սանս.* tiras, *զնդ.* tarō, *լտ.* trans, *գոթ.* θairh, *հիւլ.* tar, *բայց մերժում է յն.* τῆλε: *Տէրվ. Նախալ. 83 իբր բնիկ հայ՝ վերիններէի հետ հնխ.* tar *արմատից*: *Հիւբշ.* Arm. Gr. 496 *մերժում է իբր բնիկ հայ կցել սանս.* tiras, *զնդ.* tarō *ևն ձևերին. (մտածած չէ փոխառեալ դնելու մասին)*: *Հիմնք.* **տատար** *բառից. յիշում է նաև յն.* ἄτερος, ἕτερος *«այլ, այլ ոք, միւս»*: Bugge, Lyk. Stud. 1, 18 Τάρασις *տեղանուան մէջ է գտնում*: *վերի մեկնութիւնը տուին* Meillet *(անձնական)*, Osthoff IF 5, 280 *և* Scheftelowitz BB 29, 19:—Pedersen, *Հայ. դր. լեզ. 65 նոյն ընդ տանիլ, որ տե՛ս (կըրկրնում է կասկածով* Pokorny 1, 797): Karst, *Ցուշարձան 423 ք՛ր.* tar, ter, *ույգուր. օսմ.* taramak, *չաղաթ.* tarimak, *ալթայ.* tara *«տարածել, ցրուել, ցանել»*: *Պատահական նմանութիւն ունին սանս.* dūrá-, *զնդ.* dūrō, *հպրս.* dura, *պրս.* دور dūr *«հեռու» ևն (*Pokorny *1. 778,* Berneker 181, Boisacq 183, Walde 245):

***ՏԱՐԱՋ**, ու *հլ. (յետնաբար նաև* **ո, ի–ա** *հլ.) «վարպետ բանուածք, արուեստաւոր գործուածք» ՍԳր. «միջոց» Ոսկ. Հռոմ. 80. «ձև, եղանակ, կերպ, օրինակ» Ոսկ. Հռոմ. 158, 207, Եփր. մրգ. 350 (գրծ.* **տարազիւ**). *որից* **տարազագործ** *«կտաւագործ վարպետ» Նս. ժբ. 10.* **տարազագործութիւն** *«ասրագործութիւն» Ոսկ. Եփես.* **տարազել** *«յօրինել, ձևացնել» Մագ.* այլաւտարազ *«ուրիշ ձևով» Ոսկ. Ես.* կերպատարազ *Նար. առաք. միատարազ Իսիւք.*:

=*Պհլ.* *tarāz *ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց նոյնն են հաստատում պրս.* تراز tarāz, *արաբացեալ ձևով՝* طراز ṭirāz, ṭarāz *«է նշանն այն զոր առնեն ոսկեթելիւ և մարգարտօք ի յուսս և յօձիս պատմուճանի և ի բերանս թևղանեաց»,* طرازيدن ṭirāzīdan *«կարել ի հանդերձս և ի պատմուճանս զարդարիլ իրս»,* طرازگر ṭirāzgar *«այն որ առնէ նշան ոսկեթելիւ և մարգարտօք ի յուսս և յօձիս պատմուճանի և ի բերանս թևղանեաց»,* արաբ. طرز ṭarz *«կերպ, ձև»,* طراز ṭirāz *«բարք, սովորոյթ, եղանակ»,* աֆղան. tarz *«կերպ, ձև, եղանակ»,* քրդ.

terz «կերպ, հղանակ», փոխառութեամբ՝ ռում. tarz «ձև, կերպ»։—Հիւբշ. 252։

Նախ ԳԴ պրս. darz «կարան» և ϯarz «հղանակ, կերպ» (վերջինը ուղիղ է)։ ՆՀԲ ռմկ. (իմա՛ քրք.) ϯarz: Lag. Arm. St. § 2198 պրս. և արաբ. ϯarz, ϯarāz:

ՏԱՐԱՂ «սունկ, աղարիկոն». ունի միայն ՀՀԲ. չգիտէ ՀԲուս.։

*ՏԱՐԱՂՈՒԿ «կշիռ կենդանակերպը» Շիր. 62 (ձ. արազուկ). նորագիւտ բառ, որ յիշում է միայն Պատկ. Арм. геогр. էջ XXII և Матер. I. 16, իբր

=պհլ. 𐭩𐭥𐭫𐭪𐭪𐭥𐭪 tarāzūk, պրս. ترازو tarāzū «կշիռք» (ռմկ. թէրազի)։ Բուն իմաստը պահում է ուտ. թուրզիւկ «կշիռք»։

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

ՏԱՐԱՓ, ի հլ. «սփռուող, ծաւալական» Ոսկ. յհ. ա. 1 և երր. Սերեր. 33. եփր. ծն. էջ 5. Վեցօր. 67, 74, «փռուիլ, տարածուիլը» Վեցօր. որից տարածել կամ տարածանել «սփռել, ծաւալել, ընդարձակել» ՍԳր. եղն. Ոսկ. կոչ. տարածատակ «արմատը գետնի տակ տարածուող» Վեցօր. 96. տարածոյ «չորացնելու համար փռած բան» Տաթև. ամ. 281, 285 (ի հեռանալ պահապանին զտարածոցն ցրուեն թռչունք. Ջտարածոց անպահապան՝ ցրուեն թռչունք). տարածոյ արկանել «փռել, տարածել» Վեցօր. 187. տարածումն Յոբ. լզ. 15. «ԳԿ ձայնին պատկանող մի հղանակի անուն» Մանրուս. (Ամատ. Հյ. բառ ու բան 619). տարածուիւն եղն. երկայնատարած եղեկ. ժէ. 3. Ոսկ. հս. Վեցօր. գետնատարած Ագաթ. Կորիւն. Ոսկ. հս. և մ. ա. 11. բազկատարած Ագաթ. Կորիւն. գրկատարած Ոսկ. հս. 205. բազմատարած Եւս. քր. մոխրատարած Ոսկ. մ. գ. 14. տարածականութիւն (նոր բառ) ևն։

=Ասուր. taraṣu «փռել, մեկնել, տարածել»՝ (Muss -Arnolt, Ass. Handwb. էջ 1194)։—Աճ.

ԳԴ պրս. dirāz «երկայն» բառից։ ՆՀԲ «ի տար ածեալ կամ տարեալ ածեալ», Spiegel, Huzw. Gram. 188 պհլ. և պրս. dirāz «երկար»։ Նոյնը Justi, Zendsp. 161 զնդ. drājaŋh «երկարութիւն» բառի տակ։ Պատկ. Изслед. 16 զնդ. drājō, պրս. dirāz և սանս. dirgha «երկար»։ Müller, Kuhns u. Schl. Btrg. 5, 382 զնդ. darəγa, սանս. dīrgha: Lag. Arm. Stud. § 2199 հյ. տար և ածել բառերից բարդուած։ Հիւնք. ածել բայից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 66 տար «տանիլ»+ած, այն է սանս. -al. որ երևում է bhišaj «բժիշկ» բառի մէջ։ Karst, Յուշարձան 423 հյ. տար+ած:

ԳԻՒ.—Ախց. երև. կր. տարածել, Շմ. տարածիլ, Մշ. դարածել, Խրբ. դարածիլ:

ՏԱՐԱԿՈՒՅՍ, ի հլ. «երկբայութիւն, վարանմունք, հոգս, մտատանջութիւն» ՍԳր. Ագաթ. «դժուարին խնդիր, կնճռոտ հարց» Ոսկ. մ. ա. 4, 6. եղն. «աղքատութիւն, թշուառութիւն» Փիլ. որից տարակուսիլ ՍԳր. տարակուսանալ Ոսկ. ա. թես. տարակուսագոյն Ոսկ. մտթ. տարակուսանք ՍԳր. անտարակոյս Պիտ. տարակուսելի (նոր բառ) ևն։ Կայ նաև գրուած տարեկոյս Տաթև. ամ. իգ (երկիցս)։

Հներից Առաք. լծ. սահմ. 222 և 556 (որից նաև ՆՀԲ) մեկնում է տար «հնոի» և կոյս «կողմ» բառերից։ Զուբինով վրաց. տարակուճա «ամէն բանի խառնուող» բառի հետ! Տէրվ. Նախալ. 83 ըստ ՆՀԲ։

ԳԻՒ.— Շմ. տարակուս, Երև. տարակուսած, Ջղ. տարակուսել, Մշ. տարակուսիլ Տփ. տարեկուսիլ:

ՏԱՐԱՆ «մի տեսակ ջրաման». մէկ անգամ ունի Վրք. հց. իզ. նոյնը գտնում եմ տառայ ձևով Տաթև. ամ. 218.— Սիրաս մեր և խորհուրդս որպէս սկուտեղ և տառայ է, որով նուիրեմք զամենայն ինչ Աստուծոյ։

ՏԱՐԱՆՔ «նշանք». ունի միայն. Բառ. երեմ. էջ 307։

*ՏԱՐԱՍԻՍ կամ ՏԱՐԱԹԻԹ «մի տեսակ բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2933—4. բուն նշանակութիւնը անստոյգ է։

=Արաբ. طراثيث ϯarāθīθ կամ طرثوث ϯarθūθ. առաջինը ունի Steinschneider WZKM 12, 213, որ մեկնում է «penis terrae», երկրորդը գիտէ Կամուս, Քրք. Քրդմ.

Ա. 355, որ տալիս է հետևեալ բացատրութիւնը. «Ուտելի բոյս է. տճկ. կոչւում է qōlγān tikeni, ըստ բժշկական լեզուի rabb- ul-arδ կամ rabb-ul-riyāḥ. կարմիր տեսակը քաղցր է և ուտելի. սպիտակը լեղի է. սրա մէկ տեսակն էլ հնդկական է»։ Հայերէնի մէջ u և p յառաջանում են արաբ. ت տառի օսմանեան s և արաբական ث հնչիւնից։—Ա.Ճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է ՀԱ 1908, 124։

ՏԱՐԱՓ, ո հլ. «առատ տեղացող անձրև, ձիւն կամ ցօղ» Բ. մկ. ժ. 36. Երգ. ե. 2. Ոսկ. անտմ. Սակր. (գրուած է տարաբ Մագ. Թղ. 13). պարզապէս «ցօղ» նշանակութեամբ Ստ. ժմ. 491 (նաև գՀաւուցն ևս ի տարափ առաւօտուն ճոռողելն). որից տարափել «տեղալ» Գնձ. տարափանման ժմ. յն. տարափումն ժմ. յն. տեղատարափ Օր. լբ. 1. Ոսկ. ես. և յհ. ա. 37, բ. 1. Փարպ. տարատարափ Մանդ. էջ 80. հրատարափ Բննիկ. բանձրատարափ Ագաթ. լեռնատարափ Բհնիկ. կայծակնատարափ Նար. յովէդ. Տօնակ. հողմատարափ Անան. նկեղ.—Հին բռ. մեկնում է տարաբ «խուռն ինչ» (իմա «որևէ բանի բազմութիւն՝ առատութիւն»)։

Տէրվ. Altarm. 94 տար և ափ բառերից բարդուած. առաջինն է նոյն ընդ տեղալ, սանս. tar «հոսիլ, յորդիլ», հրկրորդը՝ սանս. apa-, պրս. آب āb «ջուր»։ Bugge IF 1, 456 սանս. drapsá- «կաթիլ» բառի հետ։ Այս մեկնութիւնը մերժում է Հիւրշ. 497՝ նշանակութեանց տարբերութեան պատճառաւ։ Meillet, Rev. crit. 388, Թրգմ. Բազմ. 1898, 120 յիշեցնելով թէ սանս. բառի նախաձայնը հին dh չէ (տե՛ս Wackernagel, Altind. Gram. 1, 242), կողմնակից է դուրս գալիս Bugge-ի։ Հիմնք. տարփ արմատից։

+**ՏԱՐԳԱԼ** «դղալ, դգալ» Խոր. բ. 44. Մագ. քեր. աւում է նաև տրգալ, դրգալ, դգալ, դֆալ, դգել Մագ. և Երզն. քեր. Կանոնք սահ. 112 վասակ. Յայտմ. որոնք բառիս դանազան ժողովրդական ձևերն են. (հնագոյն ձևը Մագ. ևս համարում է տարգալ. «Դգալն տարգալ է և սղոցն սողոց է՝ ի փոխել ղլծորդսըն և զքմակիցսն»)։ Կեղծ ձև է Դրնղ. 499 տարիգայլ (հմմտ. տակը ՀՀԲ-ի տուգաբանութիւնը՝ դիր ի գայլն)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. drų- ձևից՝ l մասնիկով (ինչ. տեսիլ). հմմտ. սանս. dárvi-, darví, darvá- «գդալ». բոլորն էլ ծագում են հնխ. derevo- բառից, որ նշանակում է «ծառ, փայտ, և յատկապէս կարծրը փայտ». հմմտ. սանս. dāru, պհլ. պրս. dār, յն. δόρυ, լիթ. dervà, գոթ. triu, հսլ. drĕvo ռուս. дерево են «փայտ, ծառ», որոնք ներկայացնում են հնխ. dereų-, dreu-, deru-, derų-, doru-, dorų-, dru-, drū-, druų-, drou-, drru-, drų- ձայնդարձները։ Այսպէս է կոչուած գդալը նիւթի պատճառաւ (մինչև այժմ էլ գիւղացոց մօտ գդալը փայտից է լինում), ինչպէս որ նոյն ծագումն ունին փայտից շինուած ուրիշ զանազան առարկաներ՝ զանազան լեզուների մէջ. ինչ. սանս. druṇī «փայտէ գոյլ», druṇa- «աղեղ», drôṇom «գուռ, տաշտ», druváya «փայտէ աման, թմբուկի արկղը», զնդ. dāuru- «փայտէ ղէնք, լախտ», յն. δόρυ «նաւ, նիզակարուն, ճոկան, մականն», δροίτη «փայտէ լոգարան, դագաղ», δραιόν (<*druio-) «տաշտ», կրետ. δορά «գերան», ալբան. dru «վառելափայտ, ցից, թառ», միլ. droehta «կարասս», drochat «կամուրջ», հսաքս. trio «գերան», անգսք. trig, անգլ. tray «տափակ ափսէ», հրգ. գերմ. հոլլ. trog «գուռ, տաշտ», գերմ. Truhe «արկղ, սնուցիկ», հշրվիդ. trö «մի տեսակ չափ», լիթթ. dùoris «անտառի ծառի մէջ շինուած փեթակ, միակտուր տաշտ», հպրուս. drawine «փայտէ մեղուանոց» (Osthoff, Parerga 1, 164—166, Pokorny 1, 804, Walde 793, Trautmann 61, Berneker 214, 232, Boisacq 197, 201, 202, Horn § 522): Հմմտ. նաև հյ. տոռն «սանդի կոթ»։

ՀՀԲ «դիր ի գայլն, դի նովաւ դնեմք ղկերակուրն ի բերան մեր, որ իբրև ղգայլ կլանէ միշտ ղկերակուր»։ Ուղիղ մեկնից նախ Տէրվ. Altarm. 54 և Նա-

խալ. 101։ Հիւնք. յն. κοτύλη, *նյն.* κοτάλη «սկաւառակ»։ Müller SWAW 136 (1897), *38 յն.* τράχηλος «վիզ» *բառի հետ՝ իբր կրող։* Lidén, Arm. Stud. 66 *անկախ Տէրվիշեանից՝ մեկնից վերի ձևով։—Մառ.* ИАН *1917, 317 վրաց.* ჯუტალი კուտալի, *ավար.* ǧud, *լգ.* ǧudal *հոմանիշների հետ, վերջածայն ալ համարելով յոգնակիի մասնիկ։*

Գիւտ.—Ամէնից հաւատարիմ ձևն է Տիգ. prfml, *որ պահում է* տարգալի r *ձայնը.—այս* r-*ի անկումով՝ և նախաձայն* տ *նմանեցնելով յաջորդ* գ-*ին՝ Խրբ.* դ՛գ՛ալ, *ՀՀ.* դ՛ոգ՛օլ, *ՋԹ.* դ՛օգ՛օլ, *Սվեդ.* դ՛իգ՛ուլ, *և* գ *ձայնն էլ փոխելով՝ Աալ.* դ՛ֆալ, *Պլ. Ռ.* բֆալ, *Ննխ.* բֆալ, բիֆալ, *Երև. մնկ.* բա՛բալ.—*առաջին երկու բաղաձայնները տեղափոխելով՝ Ալշ. Հմշ. Մշ. Տփ.* գդալ, *Ախց.* գ՛դալ, *Սեբ.* գ՛դ՛ալ, *Ջղ.* գ՛դ՛ոլ, *Ոզմ.* գ՛յրդ՛ել, *Վն.* կաել, *Մկ.* կ՛ըդալ, *Երև.* բդալ, *Մրզ.* բ՛իբել, *Սլմ.* բիբել, *Գոր. Ղրբ.* բէօլ, *Շմ.* բիւբէօլ.—*առաջին խմբին է պատկանում նաև Ագլ.* դգիվ։—*Նոր բառեր են* դգալել, դգալիկ, դգալնոց, դգալուկ, գդալակուզի, գդալիսոխի, գդալաման, գդալճարել, գդալուն, *ևն։*

Փոխ.—Նյն. ումկ. κουτάλα, κουτάλι «գդալ», κουταλάκι «փոքր գդալ», κουταλιά «մի գդալաչափ», *վրաց.* ჯუტალი կուտալի «խոշոր գդալ կամ շերեփ»։ (Զուբինով[1] *այսպէս է մեկնում բառս և հանում է նյն.* κουτάλα *ձևից. Սուլխան Օրբելեանի համարում է «փայտէ կուժ», Զուբինով[2] 637 տալիս է երկու խմաստներն էլ և համարում է յն. Աճառ. Արարատ. 1898, 366 բ վրացին դնում է հայերէնից փոխառեալ. Մառ* ЗВО *17, 293 կրկնում է նոյնը, մերժելով Զուբինովի մեկնութիւնը և հայերէնից դնելով նաև նյն. ձևերը)։—Կարևոր է յիշել կոտալ Եւդ. «փայտէ բիակ, որով հերիսայ կը զարնեն կամ եփուղ սուպը կը խառնեն»։*

ՏԱՐԴԻՃ *«բոյս կամ խժային մի նիւթ է» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2936։*

[ՏԱՐԹՈՐԱԿԱՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Պատմ. աղէքս. 185. «Զարդարեալ ոսկի պատկաւ և ծիրանեաւ՝ առնելով տարթորական, որ է քանքար մի»։ ՆՀԲ մեկնում է «թորթորեալ կամ առկախեալ զարդուք», ՋԲ և ԱԲ «քանքար»։ Յն. բնագիրն ունի* λαμβάνων ἐνιαύσιον τάλαντον *«առցէ ամ ըստ ամէ տաղանդ մի». ըստ այսմ Տաշեան, Ուսումն. առյն-Կալիսթ. էջ 268* տարթորական *համարում է՝* τάλαντον *բառից աղաւաղեալ։ Ըստ իս պէտք է կարդալ* տարեորական, *որ* ἐνιαύσιον *բառի թարգմանութիւնն է և այլուր յաճախ գործածուած։]*

ՏԱՐԻ (տարւոյ, տարեաց) *«ամ, տարի» ՍԳր. Եւս. քր. Եփր. որից* տարեկան *ՍԳր. Կոչ. Ոսկ.* տարեմուտ *«ամանոր» Կղնկտ. Վրք. Հց. «տարելից» Մաշտ. 584.* տարեգլուխ *Տոմար.* տարեւոր *ՍԳր. Մծբ. Եւս. քր. նոր բառեր են* տարեգիրք, տարեգրութիւն, տարեորութիւն, տարեցոյց *ևն։—* Meillet MSL 23, 146—7 *ցոյց է տալիս՝ որ հին հնդեւրոպացիք տարբեր բառեր ունէին մի տարւայ և մէկից աւելի տարիների համար. այսպէս գնդ.* yarə *«մի տարի»,* sard- *«շատ տարիներ»=սանս.* çarád- *«տարիներ», լտ.* hōrnus *«այս (մի) տարւայ» և* bīmus, trīmus *«երկամեայ, եռամեայ», գոթ.* jer *«մի տարի»,* wintrus *«տարիներ» ևն։ Այսպիսի մի տարբերութիւն, որ շատ հասկանալի է խաշնարած ժողովրդի համար, կարծում եմ որ կար նաև մեր ամ և տարի բառերի միջև. տարի նշանակում էր «մի տարի», ամ «տարիներ»։ Այս տարբերութիւնը ե դարուց առաջ արդէն ջնջուած էր. Ոսկեդարում ամ և տարի կատարեալ հոմանիշներ էին, մինչև որ ամ բառն էլ ջնջուեց և մնաց միայն տարի (աւելի լի ձև քան ամ միավանկը)։ Ասածիս ապացոյց եմ համարում 1) երկեամ, երեամ, երկեմեան, երեմի շատ հնաձև բառերը. 2) միամեայ բառը չկայ Ոսկեդարում. 3) տարեկան նշ. «մի տարւայ». 4) վրաց.* ტარიგի *«միամեայ գառնուկ»* փոխառնուած *հայերէնից, շատ հին ժամանակ, յետոյ կորած հայերէնի մէջ, փոխանակուելով ամիկ բառով. 5) ի տարւոջ «մի տարում» Եզն. 199։ ե դարում տարի բառը երբեմն կարող էր նաև յոգնակի գործածուիլ. օր. Եղիցին ի*

նշանս և ի ժամանակս և զտարիս. Գաղ. դ. 10. Զթիւ աւուրց և ամսոց և տարեաց կարգէին. եզն. 119։— Ամբողջ Ս. Գրքում տարի բառը գործածուած է 66 անգամ, որից միայն երեքը յոգնակի, մնացեալ 63-ը եզակի, իսկ ամ բառը գործածուած է ընդ ամէնը 581 անգամ, որից 278 յոգնակի, 65 յոգնակի իմաստով եզակի (վեց ամ, զհազար ամ) և 198 եզակի։

Հներից Վանակ. տարեմտ. մեկնում է «Զի՞նչ է տարի. զի յինքեան տանի զօր, զշաբաթ, զամիսս և զչորս եղանակս. և դարձեալ զարեգակն տեսեալ ի կիսէն ի կէտն բոլոր ընթացեալ՝ ասացին, տարաւ զիմ ժամանակս»։ Նոյնը նաև Վրդ. սղ. կդ. էջ 214 «Այլ տարի դարձեալ որ զամենայն տանի».— Յայտմ. օգոստ. 11 «Եւ տարի ասի, որ տանի զերկոտասան ամիսն և զ52 շաբաթսն և զ365 աւուրսն... և նոքօք զկեանս մարդկան և զամենայն մահկանացուացս».— Տաթև. ձմ. ա. «Զի վասն այն կոչիմք տարի՝ որ զամենայն կեանս մեր և զհեշտութիւն կենցաղոյս ընդ ինքեան տանի և գնայ... Տարի կոչի վասն երեք պատճառի. նախ զի արեգակն տանի զերկոտասան կենդանակերպսն և վճարի. երկրորդ՝ զի տանի զչորս եղանակս և զամիսս և զշաբաթս, զաւուրս և զժամս և զայլսն. երրորդ՝ զի տանի զժամանակեայ կեանս մեր»։ Նոյնը նաև Տաթև. Հարց. էջ 190։ Սրանց համեմատ է նաև ՀՀԲ։ Böttich. Horae Aram. 36, 70 թերևս tar արմատից։ Նոյն, Wurzelf. 20 սրան է աւելացնում նաև արաբ. tāraǰ։ Ջուբինով վրաց. տարկոշի «չրի շերեփ»! Հիւնք. հյ. շար և կամ զնդ. սարետա։ Patrubány SA 1, 194 հնխ. dā «բաժանել» արմատից։ Աճառ. ՀԱ 1908, 122 թերևս կովկասեան ծագումից. համմտ. հիւս. օսթյ. tal', ֆինն. talvi, սիրյ. töl, դիդ. tlebi, վոգուլ. tal հոմանիշները։ Patrubány ՀԱ 1908, 314 տալ բայից։ Մառ ИАН 1911, 471 վրաց. წელი ծելի «տարի» բառի հետ։

Գիհ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. երև. Կր. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. տարի, Ակն. Ասլ. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. դարի, Տիգ. դորի, Ղրբ. տա՛րէ, Մկ. տարը, Սվեդ. դարա, Մրղ. տառը՛, Հճ. դայի, Զթ. դայը՛, դարը՛։ Նոր բառեր են տարուկ, տարեբեր, տարեկ, տարելից, տարեմնայ, տարեմտութիւն, տարեպտոյտ, տարեց, տարէնը, տարիֆոտ, տարիֆ, տարիֆաւոր, տարւօֆ, տարվկան, և յատկապէս տարեկան «հաճար», որի հին վկայութիւնն ունի Անկ. գիրք հին կտ. 348 և շատ աւելի ուշ Դիւան, ժ. 128 (1800 թուից)։

Փոխ.—Վրաց. ტარიგი տարիգի «դառնուկ» (համմտ. հյ. ամիկ «միամեայ դառն»), քրդ. daregan «հաճար» (գւռ. տարեկան հոմանիշից. Աճառ. MSL 16, 353), Թրք. գւռ. tereke «հաճար» (այս Թրք. բառը գիտէ Աբ հաճար բառի տակ. ունի Будаговъ 1, 351 تركى tereke ձևով և «хлѣба հացաբոյսեր» նշանակութեամբ)։ Տարի–տարեկան բառից են նաև վրաց. գւռ. մի քանի կօշկակարական բառեր, որոնք յիշում և հայերէնից փոխառեալ է դնում ბერიძე, ნიკოლაძე (Беридзе, Грузинск. глоссарій по имерскому и рач'инскому говорамъ, СП. 1912), այն է՝ ვახტარაგანი վաստարագանի «6 տարեկան երախայի կօշկի կաղապար» (էջ 14), ორტარაგანი որտարագանի «երկու տարեկան երախայի կօշկի կաղապար» (էջ 33), ტახტარაგანი տատարագանի «տասը տարեկան երախայի կօշկի կաղապար» (էջ 40), ჩუნტარაგანი չուտարագանի «4 տարեկան երախայի ոտքի կաղապար» (էջ 59)։

Տարիթիւրէ տե՛ս Դարիթիւրէ։

ՏԱՐԻՊԱՆ «վայրի ասփուր» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2938։

*ՏԱՐՂՈՆ, որ և տարխոն, տարդուն «համեմատային մի բոյս. լտ. dracunculus» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2940։

=Արաբ. طرخون ṭarxūn նոյն նշ. գործածական է այժմ Կովկասում բարխուն ձևով. Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 550 համարում է պրս. ترخون tarxūn ձևից արաբացեալ։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

ՏԱՐՄ, ի հլ. «թռչունների խումբ, երամ» Արշ. Լաստ. ժբ. Նար. 176. որից տարմ տարմ «խմբովին» Եփր. ծն. էջ 61 կամ տարմատարմ Եզն. տարմանալ «խմբուիլ» Լմբ. ժբ մարգ. էջ 107 (յովհէ. բ. 8). տարմաջուր «առասպելական ջուր՝ որին հետևում են մորեխասպան թռչունների խումբերը» Վրդն. աշխ. 523. տարմաբար Բր. և Երզն. քեր. 34. կք. լուսատարմիկ Կիւրղ. աղ. Եփր. խչ. 76. տարմանալ «մի տեսակ սարեակ» Վեցօր. 163, 174, և սրանից իբր համառօտեալ՝ տարմ «սարեակ» Շնորհ. եղես. Նչ. քեր. այսպէս կոչուած՝ խմբերով թռչելու պատճառով. Համմտ. Կիր. պտմ. (տպ. Մոսկ. էջ 217=Վենետ. էջ 209). «Քանզի եկն բազմութիւն մանր հաւուցն պիսակաց, զոր վասն բազմութեանն տարմ անուանեն»։ Սրան է միանում նաև տորմ «նաւերի խումբ», որ տե՛ս առանձին։

Պատկ. Истор. Моиг. 124 յիշում է վրաց. տարբի «տարմահաւ», առանց նմանութիւնը շեշտելու։ Հիւնք. 119 օ–տար բառից, իսկ 319 տրամ բառից։ Bugge, Beitr. 33 իրարից բաժանելով մեկնում է տարմ թռչունը=լտ. sturnus, գերմ. Staar, հբգ. stara. անգսք. stearn «սարեակ», իսկ տարմ «երամ»=լտ. turma, անգլսք. Þrym «խումբ», երկուսն էլ իբրև բնիկ հայ։ Մեկնութիւնս մերժում են Walde 800 և Pokorny 1, 750, քան որում լտ. t-ի դէմ սպասելի էր հյ. թ։

Գիմ.—Ագլ. տօրմ, Բ. դամր «մի տեսակ թռչուն»— Ըստ Դիւան, հտ. ժ, ծանօթ. 2 Տփ. տարբ՝ Մասիսի մորեխասպան թռչունն է, որով ո՛չ միայն տարբ միանում է տարմ ձևին, այլ և ցոյց է տալիս, որ՝

Փիլ.—վրաց. ტარბი տարբի բառն էլ փոխառեալ է հայերէնից։ (Ջուբինով[3], 1215 այս թռչունը համարում է каменный скворецъ, красный дроздь»)։

*ՏԱՐՄԱԼ «քուրձ, քսակ, տոպրակ» Վկ. արև. էջ 180, 182 (ներգ. ի տարմալին ձևով), Հին բռ. որից տարմալակ՝ Տօնակ. Երզն. մտթ. տարմաղակ Ոսկիփ.։

=Ասոր. ܛܪܡܐ; ܠ tarmāi, ܛܪܡ; ܐ tarmālā «պարկ, մախաղ» (Brockelmann, Lex. syr. 403ա). Ծագումն անյայտ։—Հիւբշ. 317։

Ուղիղ մեկնեց Lag. Arm. Stud. § 2207:

ՏԱՐՄԱՆԵԱՆ «ծոյլ». ունի միայն Բռ. երևմ. էջ 308. Համմտ. ասոր. ܛܪܡܢܝܬܐ; ܐ tarmānītā «ծոյլ»։

*ՏԱՐՊԱՅ «անգամ». Վրդ. առ. 147. Սմբ. դատ. 23. Անսիզք 25, 79. յգ. տարպայնի Սմբ. դատ. 212. աւելի յետին է տպրայ Նուշր. 77։

=Արաբ. ضَرْبَة ḍarba «անգամ» (չունի կամուս). բուն նշանակութիւնն է «զարկ». իմաստի զարգացման համար համմտ. լիթ. sỹkis «զարկ, հարուած. 2. անգամ», ֆր. coup «հարուած», deux coups «երկիցս» (Pokorny 2, 577) և մեր գաւառականներից Սվեդ. զարկ «անգամ». օր. Քանի՞ զարկ «քանի՞ անգամ» (անշուշտ. արաբերէնից թարգմանաբար)։

Ուղիղ մեկնեց Մառ, Վրդն. առ. I, էջ 269։

Գիմ.—Սչ. դարբա, Քղի դուրբ, Ննխ. դարբա։

+ՏԱՐՏԱՄ (ի, ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «դանդաղ, յամրաշարժ, ծոյլ» Ոսկ. յհ. Փիլ. ևլ. Կիւրղ. գնձ. Սրգ. Երզն. երկն. Տօնակ. «վարանիլը» Նար. «վարանում» Շնորհ. որից տարտամութիւն «թուլութիւն, ծուլութիւն» Առ որս. Խոսր. տարտամիլ Վրք. հց. Մագ. տարտամագոյն Պիտ.։ Արդի գրականում տարտամ նշանակում է «անորոշ»։

=Թևրևս բնիկ հայ բառ՝ կրկնուած հնխ. drem- «քնել, ննջել» արմատից, իբր *տատրամ, *տատարամ>տարտամ. Համմտ. լտ. dormio «քնել. 2. անգործ՝ դատարկ լինել», հսլ. drěmati, լհգ. drzemać, ռուս. дремать «նիրհել, թմրիլ, անհոգ լինել»։ Այս արմատը աճած է -m- ածականով՝ պարզական dre- «քնել» արմատից, որից ունինք սանս. drâti, drâyati «քնել» և ni նախամասնիկով ni-drâ «քուն» (որի իրանեան համապատասխան ձևից է փոխառեալ հյ. նիրհ, որով նիրհ և

արտամ միևնոյն բառերն են լինում)։ Նոյն արմատից -dh- *ածականով կազմուած է յն.* ὀαρθάνω *«քնել»* (Pokorny 1, 821, Berneker 223, Walde 243)։ *Կազմութեան համար տե՛ս նաև* տրտում։

ՆՀԲ լծ. լտ. tardum *«ծոյլ, դանդաղ» բառի հետ։* Justi, Dict. Kurde 96 *քրդ.* tertilin *«տատանիլ, երերալ» և արաբ.* ترتر tartara: Canini, Et. étym. 142 *անս.* dardha *«հաստատուն»։ Հիւնք. տարմ բառից։* Bugge, Beitr. 33 *ցեղակից լտ.* tardus *«դանդաղ» բառին, որ չի ընդունում* Walde 764։ *Աճառ. ՀԱ 1899, 235 համարում է կրկնուած տարմ պարզական արմատից, որի հետ նոյն է տարմ «երամ» (նշանակութեան տարբերութիւնը չի թոյլ տալիս այսպիսի նոյնացում)։ Վերի մեկնութիւնը տուաւ* Pedersen, *Հայ. դր. լիզ. 132, որ ընդունում են* Walde 243 *և* Pokorny 1, 821։

ԳԻՒ.—Սրանից է տաղտամ «անդուրեկան, ձանձրալի (մարդ)», որ գործածական է Հայքաղ և շրջակայք (Ամատունի, Հայոց բառ ու բան 616)։

ՏԱՐՏԱՐ *«հացի կամ թիղի ծառի պտուղը». ունի միայն ՀԲուս. § 2942, բայց առանց վկայութեան։*

* **ՏԱՐՏԱՐՈՍ** *(ի–ա հլ. յետնաբար) «դժոխք, անդունդք, անդնդային խաւարք» Առակ. լ. 16. Բ. պետ. բ. 4. Յոբ խ. 15. խա. 23. Մանդ. փիլ. Գառն. 46. որից* տարտարոսական *Պիտն. 388,* տարտարոսագնին *Տօնակ.* տարտարոսագէն *նոր. հոլիփ.։*

=Յն. τάρταρος *«դժոխքի խորքերում՝ աստրերկրեայ բնակարան, ուր Զևս գահավիժում էր իր դէմ մեղանչողներին. 2. դրժոխք. 3. աստրերկրեայ անդունդ. 4. Տիւփէոսի հայրը՝ Տարտարոս»։ Յոյնից են փոխառեալ նաև լտ.* tartarus, *ֆր.* tartare, *վրաց.* ტარტაროზი տարտարոսի՝ *նոյն նշ.— Հիւբշ։ 383։*

Հներից Գիրք առաք. 569 ա մեկնում է «Կոչի ևս դժոխն տարտարոս այսինքն խոռվևալ»։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՏԱՐՐ, r *հլ. (յետնաբար նաև* ի, ո *հլ.) «նախանձիբ» ՍԳր. եղն. վեցօր. Ագաթ «յօդ, տատ» եղն. որից* տարրական *Ագաթ. կամ* տարեական *նար. խչ.* տարրապաշտ *նխ. իմ. ՅՀ. իմ. պատլ.* տարրատր *Ագաթ.* տարրեղէն *եղիշ.* տարրանալ *«արմատանալ. հաստատուիլ» Փիլ. Սոկր. թուլատարր վեցօր. կարծրատարր Պիտ. (գրուած է* կարծրատորր*), ողորկատարր Պիտ. միատարր վեցօր. մեծատարր վեցօր. մերկատարր Ոսկ. ես. 180. անատարր Ոսկ. յՀ. ա. 14. Ագաթ. ևն։ Բառիս երկու r–երը միանալով՝ ձևացել է յետնաբար տատ «նախանձիբ» Փիլ. Պիտ. Երզն. նար. «գիր» Փիլ. իմաստ. Սարգ. «գրութիւն, գրուածք, գիրք, Աստուածաշունչ» Պիտ. խոսր. Մագ. որից* տատանալ *«տարբրանալ» Անյ. հց. իմ.* տատափիպ *Յիշատ. ևն։ Նոր գրական լեզուն զանազանութիւն դնելով երկուսի մէջ՝ ընդունում է* տարր *«նախանիբ» և* տատ *«գիր»։ Նոր բառեր են* տարեբային, տարրաբանութիւն, տարրագիտութիւն, տարրալուծութիւն, տարրալուծել, տատական, տատացի, տատակեր, տատակերութիւն, նախատատ, սկզբնատատ, վերջատատ, մեծատատ, փոքրատատ, մանրատատ, գլխատատ, շեղատատ *ևն։*

Հներից Բր. քեր. 4 տատգաբանում է «Տատր կոչին, վասն զի ունին տարրումն իմն և գաստութիւն»։ Հիւնք. արաբ. جرّ ǰarra *«հիւլէ» բառից։* Nyberg, Hilfsb. 2, 202 *փոխառեալ է դնում իրանեանից, իբր <*tarδ*<*θarδa *համմա. հպրս.* θarθa-, *զնդ.* sarəδa, *պհլ.* sarδak *«կերպ, հղանակ»։*

ՏԱՐՐԱ *«մանուկ, փոքր երախայ». նորադիւտ բառ, որ հոմանիշների մի շարքի մէջ դտնում եմ գործածուած Մագ. քեր. 242. «Տղայ, դիեցիկ, տանդեայ, տարրա, խորշ» (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 106—7)։*

ՏԱՐՐԱՇԻՇ, n *հլ. անատոյգ նշանակութեամբ բառ. որ մէկ անգամ դտնում եմ գործածուած Նար. տաղ. 472. Շուք տարրաշղշոյ գիղ մէջ ատոյ գիկեա։*

ՏԱՐՓ «սէր» Գնձ. Նար. տաղ. որից տարփալ «սրտով փափագիլ» Շար. Շնորհ. տարփացուցանել Անյ. Հց. իմ. տարփաւոր Խոր. Պիտ. տարփածու Խոր. տարփանք Փիլ. Խոր. սիրատարփ Շնորհ. տաղ. գեղեցկատարփելի Պիտ. ծաղկատարփակ Պիտ. ևն։ Անշուշտ նոյն բառերն են տարփել «խնդամտել» և տարփիծող «սքանչելի» Բառ. երեմ. էջ 309, Արմատիս միւս ձևերն են՝ ՏՐԻՓ «սէր, ցանկութիւն» Տաղ. որից տրփող Ագաթ. տրփանք Պիտ. Արծր. տրփութիւն Խոր. տրփումն Վրք. Հց. ՏՌԻՓ «կրքոտ սէր» Փիլ. որից տռփիլ Սուտ-Սեբ. 5, Բուզ. 99. տռփալ, տռփանալ Պատմ. աղէքս. Լմբ. տռփումն Շնորհ. Մագ. Մխ. առակ. տռփանք Բուզ. տռփական Փիլ. Յհ. իմ. մանկատռիփ Փիլ. տարտռփութիւն Յհ. իմ. պալ. պատանեկատռիփն Փիլ. դրժուարատռփական Բրս. Քղթ. ևն։ (Այս բոլորը, ինչպէս տեսնում է, Ոսկեդարում շատ սակաւ գործածութիւն ունէր. այս մասին տե՛ս Նորայր, Կորիւն վրդ. էջ 211—213 և Մէնէվիշեան ՀԱ. 1911, էջ 550)։

Տէրվ. Նախալ. 84 հնխ. tarp «դառնալ, յուզիլ, թափառիլ» արմատից. հմմտ. սանս. trap (tṛpra, tṛpala «անհանգիստ, թափառական»), յն. τρέπω հլտ. trep-it «դարձուցանէ», trepidus և սրանից trepidare «ճնշկել», հսլ. trepati «դողալ», հյ. բարբափել <*բա — բրափել. ըստ այսմ հայ բառի նախնական նշանակութիւնն է «սաստիկ շարժիլ, յուզիլ»։ Müller, Armen. VI յն. τέρπομαι «զուարճանալ»։ Canini Et. étym. 63 յն. Ἀφροδίτη-ից։ Հիւնք. արբուիճ բառից։ Պատահական նմանութիւն ունին արաբ. طَرَبَ tarab «գրգիռ, ցանկութիւն» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա, էջ 190), ظَرْف ẓirf «ամէն տեսածը ունենալ փափագիլ, ցանկանալ» (անդ, բ. 800)։

Փոխ.—Վրաց. ტურფა տուրփա «սիրելի, ախորժելի, շնորհալի, սիրուն, նուրբ», ტურფა ჭალი տուրփա ճալի «նուրբ և սիրուն աղջիկ», ტრფიალი տրփիալի «տուփեալ, սիրահարեալ, սիրահար» Սղ. բ. 10, ტრფობა տրփոբա, ტრფიალება տրփիալեբա «սէր, սիրահար», ვტრფიალობ վտրփիալոբ, ვეტრფი վետրփի «սիրահարուիլ, հաճոյքով դիտել», նატրფო սատրփո, նატრფიალო սատրփիալո «սիրուն, հաճելի», նატურფო սատուրփո, նატურფალი սատուրփալի «հաճելի, հաճոյական», დატრფობა դատրփոբա «զմայլիլ, յափշտակուիլ», მეტრფე մետրփե, მოტრფიალე մոտրփիալե «սիրահարեալ»։

ՏԱՐՓ «գօտիի մէջտեղի զարդարուն կապը». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Այրիվ. 8ա. «Սա մատանի բում կնքոյ և զինդ զեղոյ ականջոյ, Սա տարփ գօտոյ քոյդ միջոյ և շաղր հերաց բում հիւսոյ»։

ՏԱԻԱՂԵԼ «հաւաքել, ժողովել» Արծր. տաւաղիլ «հաւաքուիլ, ժողովուիլ» Յհ. իմ. հկեղ. Նար. տաղ. 475. Լմբ. մատ. 475. Շնորհ. գնձ. Կիր. ման. Ճառընտ. որ և տաւալիլ Լմբ. տատ. 148 և սղ.։ Սրա հետ նոյն են նաև տաղոսել «ժողովել, հաւաքել» Ետ. պատմ. է. 11, էջ 541 (ուրիշ վկայութիւն չը կայ) և տաղակել «համբարել», տաղակումն «համբարումն» Բառ. երեմ. էջ 305 և ՓԲ, Սրանցից տաղոսել ձևը թէև հնագոյնն է, բայց միայն մէկ անգամ գործածուած է, իսկ տաւաղել բազմաթիւ գործածութիւններ ունի. ուստի սորյդ ձևը պէտք է համարել տաւաղել. բոլորդիր աւ>ոս ձևերի նմանութիւնից յառաջացած վրիպակ է տաղոսել, որ պէտք է կարդալ *տաղաւել. այս էլ տաւաղել ձևի շրջուածն է, և շատ համաձայն է գալիս տաղակել ձևին, որ անշուշտ նոյնպէս վրիպակ է։

Հիւնք. նողկալ բայից։ Karst, Յուշարձան 407 սումխր. tab «խմբումն»։

***ՏԱԻԻՂ**, ի-ա հլ. «տասնաղեայ քնար» ՍԳր. Սևբեր. որից տաւղել «քնարերգել» Եփր. արմատ. 60. տաւիղապճիռ «քնարի թել երը զարնող» Ա.Բ. տաւղահարող Ա.Բ. ճոգիատաւիղ Նար. խչ. բարետաւիղ Նար. որ և տատում է տաւիլ Ոսկ. յհ. ա. 582. տաւեղ Անկ. գիրք նոր կտ. 301. տաւո՛ւղ Սևբեր. 136 (գործածուած է միայն գրծ. տաւուղաւ,

*ուսոի պիտի լինէր ուղ. *տաւոյղ, բայց ՆՀԲ դնում է տաւուղ, իսկ Վարդանեան, Բառաք. դիտ. Դ. 116 սրբագրում է տաւղաւ): Կայ նաև տօղիչ «երկաղի կամ երկլարի» Բառ. երեմ. էջ 315, որ նոյն արմատից է և գոնէ պէտք է կարդալ տաւղիչ:*

*=ՊՀլ. *tabil ձևից, որ աւանդում է Հեսիւքոս. „ταβάλα, ταβῆλα. ὑπό Ἀράνων οὕτω καλεῖται ὄργανον κριβάνῳ ἐμφερές, ᾧ χρῶνται ἐν τοῖς πολέμοις ἀντὶ σάλπιγγος. ըստ Պարթևաց այսպէս է կոչւում տապակի՞ նման երաժշտական գործիքը, որ պատերազմի մէջ գործածում են շեփորի փոխարէնն»: Այս իմաստը գոնում ենք նաև Հայերէնի մէջ. հմմտ. Եփր. աւետ. 318 պատերազմի նկարագրութեան մէջ. «Եւ ոչ այլ ինչ լսէ նա անդ, բայց միայն զձայն տաւղի բախելոյ և զհարկանել փողոց»: Սրանից են փոխառեալ նաև ասոր. ܛܒܠܐ tablā, արաբ. طبل ṭabl, որից էլ սպան. atabal, պորտ. atabale, իտալ. ataballo, taballo, Թրք. داول կամ داول davul «թմբուկ» (Berneker 725):— Հիւբշ. 252:*

Այվազովսքի, Յղ. հնչման 16 երր. ենվել, ոճկ. տավուլ: Ուղիղ մեկնից Lag. Ges. Abhd. 201:—Հինք. ոճկ. տավուլ:

ՓՈԽ.—Վրաց. ავლო ավիլի «սրինգ» Երեմ. խր. 36 (Հայերէնում փող), որ թերևս սխալ դրչութիւն է՝ փխ. ტავლო տավիլի<տափող:

**ՏԱՒԹԱՐ «տետրակ, տոմար» Վրդն. պտմ. որ և դաւթար Օրբել. Հրտր. էմ. էջ 312, 313, Մաղաք. աբ. 22, տֆթար Անսիզք 81:*

=Արաբ. دفتر daftar «տետրակ», որից Թրք. defter և սրանից էլ սերբ. ռում. Հունգ. defter, նյն. δεφτέρι, δευτέρι, διφτέρι «տետրակ»: Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 858 ասում է թէ բառը բնիկ արաբերէն է, բայց ծագումը չի տալիս. ըստ այլոց փոխառեալ է յունարէնից. հմմտ. δεύτερος «երկրորդ», իբր թէ «երկծալ (թուղթ)», ինչպէս ունինք տետրակ «քառածալ»:

ԳԻՒՂ.—Նոր փոխառութեամբ Ղրբ. դա՛վբar, Վն. դոֆբar, Նխ. դէֆբէր, Պլ. բէֆդէր:

**ՏԱՒԻՒՈՆ «մի աստղի անուն է». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ դրծածուած Խոր. աշխ. 586. Ունելով գտաւոնն միջերկնեայ (այլ ձ. տաւոռն, տոռոն):*

=ՅՆ. ταῦρον ձևից, որ դործածուած է յն. բնագրում. (ἔχουσι τὸν ταῦρον μεσουρανοῦντα, հմմտ. Պատկ. Арм. geogr. էջ 4):—Աճ.

ՏԱՓ «Հարթ տափարակ դաշտ» Արձ. 1061 թուից (Վիմ. տար. էջ 24). Վանակ. Հց. Օրբել. Հրտր. էմ. 169. Լաստ. որից տափակ Շնորհ. առակ. 62. տափակողմն «Հարթ կողմը» Ա. մկ. գ. 40. ե. 52. տափել «Հարթիլ» Ոսկ. բ. թես. տափան «ցաք, հողը Հարթելու գործիք» Եզն. առ լեհ. տափափուշ Ագաթ. տափարակ «Հարթ, դուրան» Ա. Թգ. ժէ. 20. ղկ. ղ. 17 (որ և գրուած տապարակ Պղատ. տիմ. 95), տափարակել Վրդն. օրին. Մագ. գեռնատափ «մի տեսակ ծառ» Ա.Բ. գտնւում է բազմաթիւ տեղանունների մէջ. ինչ. Տաշրատափ, Կամրջատափ, Խաչատափ, Տողատափ. Մախաղատափ, Տուարածատափ, Տափերական կամուրջ են (տե՛ս Հիւբշ. Հին հայոց տեղւոյ անունները, էջ 286): Նոր բառեր են տափակ, տափակուրիւն, տափաստան են:

Հինք. բոլորն էլ տապակ բառից: Ա. (Բազմ. 1901, 335) յն.տաφ-: Թիրեաքեան ՀԱ 1912, 288 տափել նոյն ընդ տուփել, թոսել:

ԳԻՒ.—Ագլ. Ղրբ. Շմ. Տփ. տափ «գետին, հող», Մշ. տափու «տափարակ», Ագլ. Ախց. Երև. Կր. Ղրբ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. տափակ, Ալշ. Շմ. տափագ, Գոր. տա՛փլակ, Մշ. տապլագ, Մկ. տոփակ, Պլ. Ռ. Սեբ. դափագ, Ասլ. դափագ, դափա, դափայ, Հճ. դափօգ, Ջթ. դափօգ, դափոգ, Նխ. դափագ, թափագ, Սվեդ. դոփիգ: Նոր բառեր են տափագիշերի, տափագործ, տափաքեր, տափախնձոր, տափակարպետ, տափակրեաց, տափակացնել, տափակիկ, տափակոտ, տափամուկ, տափանել, տափջոլիկ, տափաստոր, տափաստէր, տափիկ, տափկենալուկի,*

տափկլոր, տափկուկ, տափկերես, տափսալ, տափսաղալ, տափսլուկ, տափտփել:

ՓՈԽ.—Վրաց. მოტაბაკებული *մոտաբակեբուլի «տափակաւուն, հարթ» Չուբինով 849 (առաջին մո- և վերջին -բուլի մասնիկ են. առանձին *տաբակի ձևը չունի Չուբինով).—Հայ բոշ.* tap'ak *«տափակ», որից ծածկալեզուով* tap'ak sis *(sis «գլուխ») «ոուս»* (Finck, Die Sprache der arm. Zigeuner, ЗАН 1907, *էջ 121), որի հետ կապմութեամբ նոյն է գալիս Պլ. ծծկ. տափակ «հերոպացի» (ակնարկութեամբ նրանց յարդեայ տափակ գլխարկի).—օսս.* տափան *«հարթ, տափարակ», քրդ.* تاپان tāpān *«տափարակ», թրք. գաւ. նոգ.* تاپان tapan *«տափան» (ԴԴ պէրէն բառի տակ, Յուշարձան 329), թրք. գաւ. Սլմ.* tapan *«տափան», որից* tapanlamak *«տափնել», նոյնպէս և Ղազախի թուրքերի մէջ՝ թափան «տափան» (նախաձայնի համար հմմտ. Բբ. թափան «տափան», թափնել «տափանել»).—Այս բոլորից աւելի հետաքրքրական են արաբ.* طفّ ṭaff *«կողմ. 2. գետի ափ. 3. շէն տեղ, հող»,* ضفّة ḍāffa *«սարի և դաշտի միջի մասը» (Կամուս, թրք. թրգմ. Բ. 802—3). Հայերէնը չի կարող սրանցից փոխառեալ լինել, որովհետև գործածուած է ե դարում. ուստի արաբ. բառը կա՛մ պատահական է և կամ փոխառեալ հայերէնից:*

ՏԱՔ *«ջերմ» Խոր. գ. 37 (Շամփուրն... տաք էր իբրև գհուր). Էլ. արիստ. էջ 137. Վրք. հց. Վստկ. Վրդն. առակ. Յայտմ. որից* տաքացուցիչ *Խոր. տաքիլ «տաքանալ» Պիտ.* տաքուքիւն *Ոսկ. յհ. ա. 21. Մխ. բժշ.* տաքումն *Պիտ. 464.* տաքդեղ *«պղպեղ» Առաք. լծ. սահմ. 468. Ջքր. սարկ. Բ. 133 (Չպղպեղ, որ է տաքդեղ). Բառ. երեմ. 272 (կազմուած է ճիշտ ինչ. գւս. Թրք.* isotə *«պղպեղ», այն է* is *«տաք» +* ot *«խոտ»):*

ՆՀԲ «նոյն և ոմկ. Թրք. ըսըճագ, սըճագ» (արմատն է əsə *«տաք» +* jaq *մասնիկ): Տէրվ.* Altarm. 60 *սանս.* dah, *լիթ.* dėgti, *գնդ.* daz *«այրել, վառել», գոթ.* dags, *գերմ.* Tag *«օր» են: Հիւնք. յն.* δάκρυ *«արցունք» բառից: Թիրեաքեան, Արիահայ բռ. 362 պրս.* ﺩﺍﻍ dāγ *«այրել» բառից. (որ է դաղ «խարան»): Պատահական նմանութիւն ունին հգիպտ.* tkз *«բոց», բանտու* tete, *վոլոֆ.* taka-taka *«բոց», ճապոն.* タク taku *«վառել, տաքացնել»,* アタタカ atataka *«տաք, ջերմ»:*

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Ղրբ. Կր. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. տաք, *Մշ.* տաք, տակ, *Մկ. Վն.* տաք[1], *Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Մհբ. Սչ. Տիգ.* դաք, *Ասլ.* դաք, դա*: Նոր *բառեր են* տաքանալ *(Պլ.* դաքնալ, *Ղրբ.* թքանալ), տաքարիւն, տաքդեղաջուր, տաքկոճ, տաքճով, տաքուկ, տաքուշի, տաքօդք, տաքջուր, տաքտուն *«բաղանիք»,* տաքցոց:

ՓՈԽ.—Բոհեմ. takio *«չոր, հռացած, տաք»,* takiao *«տաքացնել, չորացնել, այրել»:*

*ՏԱՔՍԱՏ *«ղօրախումբ, վաշտ». մէկ անգամ ունի Եփր. Համաբ. 152. «Սատակեաց կորոյս զտաքսատս ղօրացս նորա վասն անարդանացն նորա»: Ուրիշ վկայութիւն չկայ:*

=Բիւզ. յն. ταξάτος *«կանոնաւոր դինւորս», յդ.* οἱ ταξάτοι *«բերդապահ զօրք», որ և* ταξατίων (Sophocles 1068 *բ): Կազմուած է* τάξις *«խումբ, դաս» բառից: Հայերէնը անշուշտ փոխառեալ է ասորերէնի միջոցով, որովհետև Եփր. թարգմանուած է ասորերէնից, թէև* Brockelmann, Lex. syr. *133 բ չունի համապատասխան ձևը. սակայն դիտէ յն.* τάξις *բառից ածանցուած ուրիշ փոխառեալ ասոր. բառեր:—Աճ.*

ՆՀԲ և Հիւբշ. 384 դնում են յն. ταξείδιον *«զինւորների փոքր խումբ», որ նուազականն է* τάξις *բառի: Բայց այս բառը ո՛չ միայն չի ծածկում հյ. ձևը, այլ և նշանակութեամբ անյարմար է, ըստ որում նշանակում է ըստ* Sophocles 1068 *բ «զինւորական արշաւանք»:*

*ՏԱՔՍԻՈՏ *«իշխանին հետևող հետևակ զինւորները». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սոկր. 594:*

=*Բիւգ.* յն. ταξιώτης, որ և ταξεώτης, յգ. ταξιῶται «մագիստրատի օգնականը. 2. բերդապահ զօրք» (Sophocles 1068 բ)։

Ուղիղ մեկնեց Մ. Վ. Տէր-Մովսէսեան, Սոկր. 594։

ՏԱՔՏԻԿՈՆ «դասաւորութիւն, կարգաւորութիւն». նորագիւտ բառ. որ երկու անգամ գտնում եմ գործածուած. Ոչ ունի եպիսկոպոս առանձինն, սակայն ի տաքտիկոն Թուխ յաթօռոն Կոստանդինուպօլսի. Նեղ. դոքս. էջ 27.— Եւ ի տաքտիկոնն, յորում կարգ եպիսկոպոսացն սահմանի, գրեալ է որ հայոց կաթուղիկոսն պատուեցաւ վասն սրբոյն Գրիգորի. Լմբ. ոսկ. 24։

=*Յն.* ταχτικόν «կարգաւորութիւն»։—*Ա՛ճ.*

Տգեղծ «անշնորհք, անվայելուչ» տե՛ս կեղծ *բառի տակ։*

ՆՀՔ մեկնում է «տգեղ և տխեղծ», Թիրեաքեան, Կարնամակ ծան. 41 գեղեցիկ բառի գեղ, գեղց արմատից։

ՏԵԱՌ «խոյր, թագ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 180. «Եւ յԱթէնս տեառ և ոսկի աթոռ Աթենայ»։

=*Յն.* τιάρα «խոյր» (Ֆր. tiare), *Արևելքից փոխառեալ բառ է, նախնականը կորած* (Boisácq 968):—*Ա՛ճ.*

ՏԵԼԵՏԻ «սրբազնագործութիւն, նուիրագործութիւն», իբր յն. փիլիսոփայական բառ յիշում է Մաքս. ի դիոն. որ և տեղեա Նոնն. 11։

=*Յն.* τελετή «արարողութիւն, ծէս. 2. զոհ. պատարագ. 3. խորհրդագործութիւն. 4. քահանայութիւն. 5. քաւութիւն»։—*Հիւբշ. 384։*

Ուղիղ մեկնեց ՆՀՔ։

ՏԵԼԵՏԻՍ «գլուխ իմաստասիրաց կամ հռետորաց» Մագ. Թղ. 57, 89, 92, 93 ևն. (Ջի՞նչ արդեօք, հզօր հռետոր և աստուածայինդ տելէտիս. Առ Հնձացին Գրիգոր տելետիսն). գրուած է տելետին Հին բռ., տեղետին Բառ. երեմ. էջ 309։

=*Յն.* τελειότης «կատարելութիւն» բառն է, որ բիւզանդական շրջանում իբր տիտղոս էր գործածւում, ճիշտ ինչպէս Մագիստրոսի մօտ ենք գտնում (Sophocles 1072 բ)։—*Ա՛ճ.*

ՏԵՂ «առատ անձրև» Բ. մկ. ժ. 36. Ա. գաթ. վիպաս. (Խոր. բ. 47). որից տեղալ *(նաև* տեղեալ, տեղել, տեղուլ) «անձրևը թափուիլ» *ՍԳր. եփր. ծն. Ես. քր.* տեղատարափ *Օր. լբ. 1. Ոսկ. յհ. ա. 37, բ. 1. Ոսկ. ես. Փարպ.* տեղացումն *ՅՀ. կթ. Լմբ. սղ. Նար.* երկնատեղաց *Նար. Կիր. Տօնակ. Սարգ.* կրակատեղաց *Ոսկ. մ. ա. 20 և ես. ունինք նաև* տաղատարափ *Ոսկ. յհ. բ. 12 և աւետ. Տօնակ. Ճառընտ.* տաղտարափ *Ջեհնոր 32, Ոսկ. մելիտ. Յայտմ. մրտ. 5։*

=*Փոխառեալ է ասորականից. հմմտ. ասոր.* ܛܠܐ ṭalā «ցօղ», ܛܠܬܐ ṭaltā «թացութիւն, խոնաւութիւն», *արամ.* טלא ṭallā, *եբր.* טל ṭal «ցօղ, անձրև», *եթովպ.* ጠል ṭal «ցօղ», *արաբ.* طلّ ṭall «ցօղ կամ բարակ անձրև. 2. բարակ անձրև տեղալ» (Gesenius[17], 276, *Կամուս, թրք. Բրգմ. Գ. 271,* Brockelm. Lex. syr. 133): *Հայերէնի* տաղ *ձևը աւելի համապատասխան է սեմականին, բայց ե-ի համար հմմտ.* տեռև, կեղև, սեռն։—*Ա՛ճ.*

*ՆՀՔ (*անձրև *բառի տակ) լծ. եբր. բալ: Տէրվ.* Altarm. 95 *սանս.* tar «հոսիլ, յորդիլ»։—*Հիւնք.* տեղի *բառից։ Սագրեան ՀԱ 1909, 334 սումեր.* diĝ «հեղուլ», *թրք.* dol-mak «լցուիլ», dalga «ալիք», döqmeq «թափիլ», *հյ. տիպմ ևն։* Petersson IF *43 (1925), 75 տիպմ բառի հետ միասին կցում է բրբտ.* delt *գալլ.* Þealt «խոնաւ, խոնաւութիւն» *բառերին, իբր բնիկ հայ։*

+ՏԵՂ, ի–ա *հլ. «տեղ, վայր» Կորիւն. Եղիշ. որից* ի տեղ «փոխանակ, տեղը» *Նիւր. Թուց և ծն. (սրանց հին գործածութեան վրայ տե՛ս Այտենեան, Քնն. քեր. էջ 65),* տեղակալ *Ա. եղր. դ. 14, դ. 47—9, Ոսկ. ա. տիմ. Վեցօր.* տեղակացութիւն *Ոսկ. ա. կոր.* տեղապահ *Կորիւն. կոուատեղ Փարպ. բռնատեղ կամ ձեռնատեղ «կոթ» Մամիկ. ընտեղակաց Պիտ. ժամատեղ Գնձ. Ոսկիփ. Ուռհ. Նովատեղ (իբր տեղանուն) Յայտմ.* տեղաւան, տեղաւանել, տեղաւանութիւն *(նոր բառեր) ևն։ Գործածւում է նաև հետևեալ ձևերով.*

ՏԵՂԻ (-ւոյ, -եաց) *ՍԳր. Ոսկ. Կիւրղ. ծն. Կոչ. եղն. Եւս. քր. կազմուած է* տեղ *ձևից ի մասնիկով. սրանից են* տեղի տալ «*քաշուիլ, յետ քաշուիլ*» *Ամովս. է. 12. Ոսկ. մ. ա. 14.* տեղի առնուլ *կամ* ունել «*հանդարտիլ, դադարիլ, կանգ առնել*» *Ոսկ. յհ. ա.* մեհենատեղի *Բուզ.* եակատատեղի *Նփր. թգ.* գերեզմանատեղի *Ոսկ. մ. ա. 9.* խղատեղի *Ոսկ. մ. ա. 7.* կոծատեղի *Մանդ. յետնաբար* տեղեսէր *Առ որս.* տեղեակ, տեղեկիկ «*փոքրիկ մի տեղ*» *Խոր. Արծր.* տեղիատան *Նար. տագ.* տեղիասիրութիւն *Առ որս.*—ԵՏՂ (*սեռ.* ետեղ), *որ շատ հին ձև է և յետոյ աղատ գործածութիւնից դադարած. Ոսկեդարեան մատենագրութեան մէջ աւանդուած է մի քանի ձևերով միայն. ինչ.* առ ետեղ *Ա. մկ. դ. 15, ժբ. 29. Ոսկ. յհ. բ. 20, 21.* զեղ առնուլ *Նփր. եկ. Կոչ. վեցօր.* յայսր ետեղ *Ոսկ. յհ. բ. 25, 26.* յիւրում ետեղ, յորում ետեղ *Խոր. աւելի սովորական է բարդութեանց մէջ, բառասկզբում* ետեղ *ձևով, բառավերջում* եաղ *ձևով. օր.* ետեղակալ *Ա. եզր. դ. 2. Ներս. խր. 18. Եղն. վեցօր.* ետեղապահ *Բուզ.* ետեղափոխ *Ագաթ. § 267.* ետեղանալ *Եղիշ. դս.* կրակեաղ *ՅՀ. իս. 9.* լալեաղ *Դաան. բ. 1.* բանակեաղ *ՍԳր. վեցօր. Նփր. ա. Կոր.* ժողովեաղ *Դծ. ժբ. 7.* գործեաղ *Անյ. բարձբր.*—ՅՏԵՂ, *որ կազմուած է զօրացուցիչ* զ *նախդիրով՝* տեղ *արմատից, որից* զտեղել «*կենալ, հաստատուիլ*» *Եւս. քր. ա. Արծր.*—ՅԵՏԵՂ «*հաստատուն, անփոփոխ, առկայացեալ*» *Ոսկ. երր. դ. և ա. տիմ. և մ. ա. 20. Պիտ. կազմուած է* զ *սաստկականով՝* եաղ *ձևից, որից* զետեղել, զետեղեցուցանել «*հաստատել, մի տեղ բնակեցնել*» *ՍԳր. Եւագր.* զետեղիլ «*հանգչիլ, հանգստանալ*» *Յես. է. 7. Եզն. սխալմամբ գրուած է* զեմեղ, զեմուղ, զեմեղել, *որոնք տե՛ս նաև առանձին.*—ՍՏԵՂ., *որից ունինք միայն* ստեղել «*կանգ առնել, կանգնիլ, հանդարտիլ*» *վրք. Հց. կամ* ստեղաճալ «*նոյն նշ.*» *Նիւս. Քէոդ. կազմուած են* զտեղ- *ձևից՝* զ *վերածելով ս-ի, յաջորդ* տ *ձայնի խուլութեան պատճառաւ. Համմ.* սրափիլ, սփռել *են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sedlo- *ձևից, որ յառաջանում է* sed- «*նստիլ*» *արմատից՝* -lo- *մասնիկով, համմտ. յն. լակոն.* ἑλλᾶ, *լտ.* sella, *հլտ.* sedla, *գոթ.* sitls, *անգսք.* sētl, *հբգ.* sezzal, *գերմ.* sessel, *նսորբ.* sedlo *են, որոնք նշանակում են «նստելու տեղ, աթոռ»։ Բուն* sed- *արմատի ժառանգները տե՛ս նիստ բառի տակ։ Հնխ.* sedlo- *տալիս է հյ.* եաղ, *որ հնագոյն ձևն է, և սրանից էլ* տեղ (Walde 697, Pokorny 2, 485):

Brosset JAs. 1834, 369 *են սանս.* desam «*տեղ*» *բառի հետ։ Նշ՞ր* ստեղել *դնում է կամ* զետեղել *բայից և կամ* ստեղն *բառից՝ իբր «հանդարտիլ որպէս թռչուն ի վերայ ստեղանն»։* Böttich. Arica 18, 43 *սանս.* sthala *և* sthali «*տեղ*» *բառերին է կցում։* Müller SWAW *38, 588 և 44, 552 են սանս.* tala «*հարթ երես, մակերես, դաշտ*»։ *Մորթման* ZDMG *26, 550 զնդ.* daqyu, *հպրս.* dahyaūs, *պրս.* dih «*գիւղ*» *և բևեռ.* dakhai. Bopp, Gram. comp. *1, 399* ֆարկեաղ *բառից (որ չդիտեն Նշ՞ր, ՋՐ և ԱՐ) ենթադրում է* կեաեղ (*տիս.* եաեղ, տեղ) *և կցում սանս.* k'šetra «*դաշտ*» *բառին։ Հիւբշ.* KZ *23, 47 նախաձևը համարում է* tala<tara, *բայց* Arm. St. 14 *մերժում է սանս.* tala «*հարթութիւն, մակերես*» *և հլ.* tlo «*հիմք*» (Walde 767 *այս բառերին է կցում նաև լտ.* tellus «*գետին*», *հիսլ.* talam «*գետին*», *հպրուս.* talus «*յատակ*» *և բոլորը միասին մերժում է կցել հյ.* եաղ, տեղ *բառին)։ Տէրվիշ. Նախալ. 113 սանս.* sthala, *յն.* στέλλω, *հբգ.* stalljan, *գերմ.* stall «*գոմ*», stelle «*տեղ*» *բառերի հետ հնխ.* star «*զետեղել*» *արմատից։ Հիւբշ. 497 կրկին անգամ անապահով է համարում սանս.* tala *և հլ.* tilo *բառերի համեմատութիւնը։ Հիւնք. յն.* ἑδώλιον «*աթոռ*»։ Patrubány SA 1, 193 ստեղաճալ, ստեղել *կցում է գերմ.* stellen «*զետեղել*» *բառին. իսկ* SA 2, 158 *և* Monde orient. *2 (1907/8), էջ 222, ինչպէս նաև* Pe-

dersen, *Հայ. դր. լեզ. 67* տեղի *դնում են հնխ.* sed- *«նստիլ» արմատից*: Scheftelōwitz BB 29, 19 տեղի *դնում է իբր=սանս.* sthalī *«տեղ», պալի* thali, *անգսք.* stal, *իսկ անդ՝ էջ 28 սրանից բաժանելով* եղ, *դնում է իբր =սանս.* sadas, *գոթ.* sitls, *լտ.* sedla, *յն.* ἕδρα, *հսլ.* sedlo: *(Ընդունում են այս վերջի մեկնութիւնը* Brugmann IF 32, 4, Walde 697, Pokorny 2, 485): *Սանտալճեան,* L'idiome, *էջ 12 խալդ.* sili, *ֆրանս.* lieu, *լտ.* locus *բառերի* li, lo *մասի հետ է կցում*: Karst, *Յուշարձան 403 սումներ.* dil *«տեղ» բառի հետ*: *Մատ ՀԱ 1921, 81 բասկ.* tegi *«տեղի» բառի հետ, իսկ* ЗВО *25, էջ 318 վրաց.* gi, *սեմ.* qam *«կանգնիլ» արմատի հետ*: Scheftelowitz KZ 53 *(1925), 249* ստեղել *բառը կցում է սանս.* sthálam *«տեղի», հրպ.* stellan, *գերմ.* stellen *«զետեղել» հոմանիշների հետ*: *Յիշում է* Pokorny 2, 643 *հնխ.* st(h)el- *«կանգնիլ, զետեղել» արմատի տակ և մերժում*: *Պատահական նմանութիւն ունին վրաց* ᲓᲒᲝᲚᲝ *մոխլի «դաշտ, այգի» Մոթ. ժգ. 31, օսթյ.* ᵻaga, taγa, taγi *«վայր, տեղի» և հունդ.* tér *«տափաստան». (որ* Patrubány SA 1, 223 *հայերէնից փոխառեալ է համարում)*:

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. տեղ, *Ագլ. Դոր. Ախց. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ.* տէղ, *Ջթ. Հճ. Սչ.* դեղ, *Ակն. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* դէղ *(բայց Պլ. Երբեմն* դէխ, *ինչ. վաւրդէխէն «որտեղից»), Ասլ.* դէ՛ղ, *Տփ.* տիղ, *Տիգ. Սվեդ.* դիղ.—*բայց կան նաև Ննխ.* վդէ, վդէխ *«ուր», Տփ.* մէ՛տի *«միատեղ», վուրաղանց, վուրդ՛անց «որտեղից»*: *Նոր բառեր են* տեղան, տեղաշար, տեղաց անել, տեղացի, տեղացու, տեղատուրանիմ, տեղատուրել, տեղեր *«անկողին»*, տեղխլուկ, տեղփոխ:

ՏԵՂԵԱԿ, ի–ա *հլ. «համուտ, խնամուտ, գիտակ» ՍԳր. Եւս. պատմ. Փարպ. Եղիշ. որից* տեղեկանալ *ՍԳր.* տեղեկացուցանել *Առակ. բ. 9, Բ. եզր. դ. 18. Ագաթ.* տեղեկութիւն *Ա. եզր. զ. 22. Բ. եզր. դ. 21, ե. 10. Ագաթ. Ոսկ. ես. Եփր. յես.* տեղեկագոյն *Ագաթ. Եւս. պատմ.* անտեղեակ *Բ. կոր. բ. 11. Ագաթ. Ոսկ. ես.* բազմատեղեակ *Սիր. լա. 9. Նոր բառեր են* տեղեկագիր, տեղեկագրութիւն, տեղեկատու, տեղեկատուութիւն, լաւատեղեակ:

ՆՀՌ տեղի *բառից «իբր խորամուխ ի բուն տեղի իրաց»*: *Այսպէս ունին նաև Հիւնք և* Bittner՝ WZKM 15 (1901), 409:

ԳԻՒ.—Ջղ. տեղակ, *Ախց.* տէղիյակ, *Մկ. Շմ.* աէղյակ, *Ննխ. Սեբ.* դէղյագ. *Նոր ձևեր են* տեղակ տալ *Լ. Ղրբ.* տեղակել *Երև. «մէկի մասին տեղեկութիւն տալ կամ հարցնել». սրանց հետ համմտ. Կեղծ-Շապհ. էջ 6՝* տեղեկացեալ:

ՏԵՂՀԱՒՐ *կամ* ՏԵՂԱՀԱՒՐ *«մինչև դետին քաւող երկար զգեստ» Մաշտ. ուրիշ վկայութիւն չկայ*:

ՆՀՌ մեկնում է «որ ճարկանէ *մինչև ի գետին (այն է* տեղ *և* ճար *բառերից) կամ լծ. լտ.* talaris *«պճղնաւոր»*: *Աբեղեան, Հայոց լեզ. տեսութ. 235 առաջին ձևով, ընդունելով* ճար *իբր մասնիկ, ինչ.* ծնկնաճար, ճոպաճար *են*:

ՏՆՆԻ, n *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ջերմ հիւանդութիւնը» Մրկ. ա. 31. Վեցօր. 86. Եւս. պատմ. ա. 8. Մծբ. որից* տենդոտիլ *Գէ. ես. գրուած է նաև* տենտ *և* տեանդ *Ոսկ. ա. թես. էջ 439. Նոր բառեր են* տենդոտ, տենդային, ժանտատենդ, տենդագին *են*:

ՆՀՌ «տենդ ասի՝ դուցէ առաւել ըստ ցրտութեան՝ որ տայ կրճել ատամանց»: Patrubány *ՀԱ 1906, 343 հնխ.* deun- *արմատից. համմտ. հանդ.* téona *«վնաս», սանս.* dunōti *«տանջել», յն.* δόγ *«դժուարութիւն»,* δυάω *«թշուառացնել». նոյն արմատից է նաև* տենչ: *(*Pokorny *1, 768 այս բառերը դնում է հնխ.* dāu- *արմատի տակ, որի նշանակութիւնն է «1. այրել. վառել. 2. տանջել են». համմտ. սանս.* dunōti *«այրել, չարչարել», յն.* δαίω *«վառել»,* δανός *«դիւրավառ, չոր» են)*: *Ուղուրիկեան (տե՛ս ԳՐ, էջ 1288 և 1406) ուղղում է* տենգ! *և կը-ցում* dengue *«հնդկական ջերմ, տանկ»*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. diu̯- *«օր» բառից. Համմ. սանս.* dívā *«ի տուէ»,* divēdivē *«օր աւուր, օր ըստ օրէ»,* divasa- *«օր, ցերեկ», հինդ.* दिवस divus *«օր», գնչ.* dives, gives *«օր», յն.* ἐῦ-δίοις *«լաւ եղանակ, լաւ ու պայծառ օր», լա.* diū *«ի տուէ»,* dies *«օր», ռում.* ḑi *«օր», հիսլ.* in-diu *«այսօր», կիմր.* diw, dyw *«օր»։ Այս բոլորի նախնական պարզ արմատն է *dei- *«փայլիլ, լուսաւորել» (Համմ. յն.* δέατοι *«երեկոյ», սանս.* dī-, adīdet *«երեկոյ, ցոլալ»,* dívyati *«լուսաւորել» են), որ աճել է* -eu-, -en- *աճականներով։ Առաջինից ստանում ենք հնխ.* deiu̯o- *«լուսաւոր»,* deiu̯os *«աստուած, երկինք»,* dḭēus *«երկինք, օր»,* diu̯- *«օր», որոնց ժառանգներն են սանս.* dyāúš *«երկինք, օր»,* divyá- *«երկնային»,* dēvá- *«աստուած», գնդ.* daevō *«դև», յն.* Ζεύς, Διός, *լա.* Deus *«աստուած»,* dīvī *«աստուածներ»,* divus *«աստուածային», լիթ.* dẽvas, *լիթթ.* dẽws, *հպրուս.* deiws, *հիսլ.* tīvar, *հիսլ.* dia, *կիմր.* duiu, *կորն.* duy, *բրբտ.* doué *«աստուած», ինչպէս և վերոյիշեալ «տիւ» նշանակող բառերը։ (Բալթեան խմբից փոխառութիւն է ֆիննն.* taivas *«երկինք»)։ Երկրորդից (-en- աճականով) ունինք հսլ.* dĭnĭ, *չհ.* dzień, *ռուս.* день, *լիթ.* dienà, *լիթթ.* dìena, *հպրուս.* deinan, *սանս.* dína *«օր» և լա.* nundinae *«ինը օրը մէկ եղած շուկայ» (իբր հնխ.* deien-): *Հայերէնի մէջ բնիկ է* **տիւ**, *իսկ իրանեանից փոխառութեամբ ունինք դն, ինչպէս նաև դէտ, դիտել* (Walde 230 232, Pokorny 1, 772—4. Berneker 203, 254, Boisacq 189, 293, 308, *տե՛ս նաև* Ernout-Meillet 259, Meillet BSL № 81, *էջ 126*)։—*Հիւբշ. 498։*

Klaproth, Asia pol. 105 *աֆղան.* uras *և լա.* dies *«օր»։ ՆՀԲ լա.* dies *«օր»։ Սանս. և այլ ձևերի հետ են համեմատում* Peterm. 21, 33, Windisch. *12,* Lag. Urgesch. 499, Müller SWAW 38, 572. Justi, Zendsp. 156, *Տէրվ.* Altarm. *68, Էմին, Հայ. հնթ. կր. (Թրգմ. Յոյս 1875, 348), Հիւբշ.* KZ 23, 18 *են։ Մորթման* ZDMG *31, 413 բևեռ.* Tiasba *աստուծոյ հետ, որ մեկնում է «Զի աւուրց»։ Հիւնք. սանս.* **տէվա** *և գնդ.* **տայիվա**: Bugge, Lyk Stud. *1, 56 լիւկ.* tivi *«քահանայ» բառն էլ է աւելացնում։ Մաո, լազ. քեր. 189 լազ.* տիղուչա *«դժբախտ» բառը ուղում է մեկնել հյ. տի «օր» + լազ.* ուչա *«սև»? Պատահական նմանութիւն ունին վրաց.* ტղა, *ինդ.* դիեյ, *չէչէն.* դէ *են համանիշները։*

Տիւտակիթ *տե՛ս Ստիւրաքս։*

*Տիւրոն, ի–ա հլ. «նորակոչ զինուոր». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած վրք. և վկ. Ա. 657. Զինուորեալ էր ի գնդին որ կոչէր Քղկեւտոն... զորս ականջս տարան ի Հռովմ ըստ սիւրոնաց օրինի։

=Բիւզ. յն. τίρων «նորակոչ զինուոր» (Sophocles 1083 ա), որ փոխառեալ է լտ. tiro, tironis համանիշից։—Աճ.

*Տիփոն «մրրիկ, փոթորիկ» Արիստ. աշխ. էջ 613։

=Յն. τύφων «սպառնակող բամի, թաթառ, ուրագան», որից փոխառեալ են նաև լտ. typhon, վրաց. ტიფონი տիփոնի համանիշները։— Հիւրշ. 384։

Բառ. երեմ. էջ 311 հասկանում է «այրող»։ Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

Տիփ տե՛ս Տիպ։

*Տիփտիկոն (սխալմամբ գրուած նաև ատիդիկոն) «երկիւղեան ցանկ կամ ցուցակի յիշատակ աւագութեանց և վասն յիշելոյ ի պատարագի» Լմբ. առ ոսկան։

=Յն. δίπτυχον, որից նաև լտ. diptychum, dypticum, ֆրանս. diptyques «տախտակ, ցանկ, ցուցակ», այսպէս էին կոչւում յատկապէս այն տախտակները, որոնց վրայ Հռոմէացիք գրում էին անուանի բդեշխների և մեծ ատենակալների անունները. քրիստոնէութեան ժամանակ էլ այս անունով էին կոչւում այն տախտակները, որոնց վրայ վանքերում և եկեղեցիներում նշանակւում էին եպիսկոպոսների և բարերարների անունները՝ պատարագի մէջ յիշելու համար։—Հիւրշ. էջ 384։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Տիք ևի Տաձք «խորխոր կոչին». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 311։

Տիքնիք «մարմնոյ թուլութեան ախտ». դիտէ միայն Քաջունի, հա. Դ. 237։

*Տլէ «դեղ ի ձիթոյ կակղացուցիչ, կակղադոյն սպեղանի. liniment» Մխ. բժշ. 72, 98. մհյ. բառ։—ՆԲ. տլա (Ագգ. հնդ. ժգ. 51)։

=Արաբ. ﻓﻴﻼ filā «օծանելիք, linimentum», որից փոխառեալ է նաև վրաց. ტლე տլե «բորբոքման ժամանակ գործածելու ամոքիչ խիւս խոտերից»։

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆր. 750 բ. նոյնը նաև Seidel, Մխ. հեր. § 202։

*Տլիսմ, ի–ա հլ. «դիւթութիւն, յուռութք» Պիտառ. Անկ. գիրք նոր կտ. 139. Մխ. այրիվ. 77. Մխ. ասոր. 44, 442. վերջինիս մօտ գտնում ենք նաև սեռ. տլսմոյ 442, յգ. տլսմոնք 80, տլսմս 139. տե՛ս նաև տլսմաք։

=Արաբ. طلسم tilism, որից նաև բրբ. tələsəm, յն. τέλεσμα, ֆրանս. talisman, սերբ. talasum, tilisum, բոսն. tilsum, tilšum, բոլորն էլ «յուռութք» են (Vambery, Etym. Wört. էջ 165 արաբ բառը թրք. կարծելով՝ կգում է ռճկ. demir «երկաթ» բառին և մեկնում է իբր բուն «հաւաքեալ, ամփոփ, խիտ ևն»!!)

ՆՀԲ բառ ռմկ. թլլըսմ։

Տլմել «տրորել, ճնշել (մարմինը ապաշխարութեամբ)» Ոսկիփ. ուրիշ վկայութիւն չկայ։

Տլոն «հոմանի, սեղեխ, սիրականը». մհյ. բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 50 ա (amant բառի տակ)։

*Տլսմաթ «կախարդական բաներ, յուռութք» Սամ. աննց. 131 (Մինն ուսուցանէր զարուեստ քեմիային և միւսն զալամաթին և զսուտ հրաշից կախարդութեան)։

=Արաբ. طلسم tilism + ات āt յոգնակիի մասնիկով. տե՛ս տլիսմ։—Աճ.

Տլվորուկ տե՛ս Ալիք։

Տլփա «անյայտ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 2960, որ կարծում է յն. լտ. telephium «թանթռնիկ».—Քաջունի, Դ. 237 դնում է «ֆր. érigeron»։

Տնաւտիկ «տխրիլ, թախծիլ, տրտմիլ, սգալ» Ոսկ. փիլիպ. ժէ, մ. բ. 9 և ապաշխ. Նխ. ևս. Պտմ. աղէքս. 111. վրք. և վկ. Բ. 496. որից տխատաճք «տխրութիւն, սուգ» Պիտ. 512. սխալ գրուած ստախտիլ Ոսկ. պօղ. ա. էջ 338։

—Տնեղմ տե՛ս կեղծ, որից կազմուած է տ բացատականով։—Աճ.

ՆՀԲ «իբրու տխուր և եղծ»։ Բիւրեաքեան, Կարնամակ ծան. 41 գեղեցիկ

բառի գեղ, գեղց, խեղծ արմատից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1909, 160։

*Տեիկ «կաղին» Բժշ. ունի միայն Հայ.-Բուս. § 2961։

=Վրաց. ცხილი տխիլի, լազ. txiri «կաղին»։—Աճ.

Այսպէս մեկնեց Աճառ. ՀԱ 1908, էջ 124։

ՏեմԱՐ, ի–ա հլ. «ոգէտ, անմիտ» Բուք. ժդ 23. Մծբ. Ոսկ. մ. ա. 15. Եղն. որից տխմարաբար Սեբեր. տխմարագոյն Ագաթ. Կորիւն. տխմարութիւն Սեբեր. Եղն.։

Հին բռ. արմատը դնում է խամար «դիտուն»։ ՆՀԲ թերևս համարում է նոյն ընդ տխմար։ Հինք. տրմուղ, կրմուղ ձևերից։ Թիրնաքեան, Արիահայ բռ. 36 պհլ. a-hamār «անհաշիւ, անդգոյշ»> ան–համար բառից, ան բացասականի տեղ դնելով տ բացասականը։

ԳԻՒ.—Ալշ. Մկ. Մշ. տխմար «ապուշ», իսկ Տիգ. բխմար «մանկիկ, երախայ» (նոյնը նաև Ակն)։

Տեոիր «տրտում, ոչ-ուրախ» Իմ. ժէ. 5. Նէեմ. բ. 23. Վեցօր. որից տխրիլ ՍԳր. տրխրութիւն Ա. Թգ. ա. 16. Ագաթ. տխրական Ագաթ. տխրեցուցիչ Ոսկ. ես. բազմատխուր Նար. գեղատխուր Նար. գնձ. յոգնատխուր Նար.։ Նոր գրականի մէջ՝ սգատխուր, տրխրադէմ, տխրալուր, տխրաւիր ևն։

ՆՀԲ ոչ խրախ։ Տէրվ. Նախալ. 70 արմատը *խուր, որից *խուրախ>խրախ, ուրախ և տ բացասականով՝ տխուր։ Հինք. պրս. xurram «ուրախ» բառից։ Patrubány ՀԱ 1908, 153 և Meillet, Altarm. Elementarb. 210 մեկնում են բստ. Տէրվիշեանի։ Մառ ИАН 1914, 1239 տ բացասականով՝ *խուր, որ է =հյ. խինդ, վրաց. խարեբա, յն. χάρ «ուրախութիւն»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. Զղ. Տփ. տխուր, Մրղ. տուխուր, Սեբ. դխուր։

Տկար տե՛ս Կար։

Տկեղտ տե՛ս Կեղծ։

Տկոիլ տե՛ս Տիկ։

[ՏՀՈԿԻԼ «լխկիլ, կակղելով փճանալ». գիտէ միայն Տիրոյեան, Հանրագր. էջ 621. աղբիւրը անյայտ է։

=Պէտք է ուղղել աճոկիլ «վնասուիլ». սխալը յառաջացել է ա և տ տառերի նմանութիւնից։]—Աճ.

ՏՀՈՏ «ճարպ խողի հալեալ և հանդերձեալ. axonge». մհյ. բառ. ունի միայն նորայր, Բառ. ֆր. 118 բ։

ՏՀՈՒԼ. անասոյզ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Արձ. 1558 թ. (Վիմ. տար. 178). Ձվանքս տուին տրհուլ, ես զաբուլ չարարի։

*ՏՂԱՅ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ.) «փոքր մանուկ, երախայ. 2. մատաղատի. 3. պատանեակ» ՍԳր. Եղն. Եւս. պատ. Եղիշ. «պարզամիտ, տգէտ» Մեկն. ղկ. Լմբ. պարզ. Արևելեան դրականում բառս յատուկ է միայն արական սեռին, բայց մեր արևմտեան դրականում, ինչպէս և գրաբարում և միջին հայերէնում թէ՛ արական և թէ՛ իգական սեռին. հմմտ. Տայր Աննա ասինս տղային և անուանեաց զնա Մարիամ. եւ առեալ Աննա զտղայն Մարիամ (Յայտմ. սեպտ. 8). Ողորմիմ մօրն իմում և քեռն իմում, զի տղայ է (Վրք. հց. ա. 114). Տղայ աղջիկ (այն է «փոքր աղջիկ» Վրք. և վկ. Բ. 422—3). Եւ ունէր ի նմանէ դուստր մի տղայ (իմա՛ փոքրիկ) Ռիթայ անուն (Մխ. պատ. 116), որոնց համեմատ են գալիս նաև տղայաքաղ, տղացկան, տղարերք, որոնք անշուշտ միայն արու տղաների համար չեն, այլ և աղջիկներին։ Այս բառից են տղայարարոյ Ոսկ. ա. Թես. տղայագոյն Կոչ. տղայահանձնար Բուզ. տղայակոտոր Իմ. ժա. 8. տղայանալ Ա. կոր. ժդ. 20. Եփր. ծն. տղա(յա)հասակ Անկ. գիրք նոր կտ. 143, 145, 312. տղայիկ Բուզ. 219. տղարում (չունի ԱՐ) «որդու ծննդեան տօնը» Տաթև. Հարց. 321։

=Ասոր. ܛܠܝܐ ṭalyā, ܛܠܐ ṭəlē «տղայ, պատանեակ». բնիկ սեմական բառ. հմմտ. եբր. טלה tāle «մատղաշ գառն», արամ. taliā «տղայ, գառնուկ», ܛܠܝܬܐ ṭalītā «աղջիկ, տալիթայ», սաբ. טלי tlī «գառն», արաբ. ṭalā «գառն, ուլ, եղնիկի ձագը»,

طلی ţalay «փոքրիկ գառ կամ ուլիկ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 865), ն. արաբ. ţully «արու գառ». Եթովպ. talū «այծ» (տե՛ս նաև տալիքայ):—Հիւբշ. 317։

Ուղիղ մեկնեց նախ La Croze, ըստ Lag. Arm. Stud. § 2229, որից յետոյ նոյնը Müller SWAW 41, 13 և Spiegel BVS 4, 462: Canini, Et. étym. 186 Եբր. tula, սանս. tala։ Հինք. կաղամբ բառից։ Bugge, Lyk. Stud. 1, 78 լիկ. tidei և Ետր. clan «որդի» հայերէնի հետ միասին փոխառութիւն է դնում աստրականից։ Գազանճեան, Տարեց. Պապիկեանի 1905, էջ 125 և Արև. մամ. 1907, 934—5 տեղ. շաղա «մանուկ»։— Տղացկան բառի առուգաբանութեան մասին խօսում է Գ. Անդրէասեան, Արևելք 1898 հոկտ. 19 և մեկնում է «տղայացու + ական»։

Գիմ.—Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. տղա, Ակն. Ասլ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. դղա, Խրբ. Տիգ. դղաւ, Ագլ. տղօ, Սվեդ. դղօ, Հճ. դօղօ, Զթ. դօղօ, դօղո, Համշ. (ըստ Մառ Зап. Кол. Вост. 1) դաղա։ Նոր բառեր են տղամարդ, աներեսայ, աներեսամարդ, տղաբերք, տղաբոյս, տղակութիւն, տղակուց, տղաճայր, տղաղջիկ, տղաճուտ, տղամայր, տղայրուք, տղաուէր, տղաստուն, տղեկ, տղուր, տղեկուր, տղով, տղովանալ, տղացկան։ (Վերջին ձևն ունի նաև Առաք. պտմ. 467. կազմուած է -ցկան մասնիկով. համմտ. մուրացկան, գնացկան, ուրացկան, ուտեցկան, դիմացկան՝ ըստ Աճառ. Արրտ. 1910, 178. ուրի հին են Յայսմ. փետր. 14 և Մխ. բժշ. 121, երկուսն էլ գրուած դղացկան, ուր յայտնի չէ թէ ինչո՞ւ համար է դ)։

Փոխ.—Թրք. գուռ. Կր. dəγa «տղայ, մանչ» (Բիւր. 1898, 627), քրդ. Լէզ təγa «հայի տղայ» (Justi, Dict. Kurde 101), տղակ ֆլա «հայի տղայ» (Հորիզոն 1914 դեկտ՛՛ 28), չէրքէզ. tγa «երիտասարդ», tγaγəbso «երիտասարդութիւն» (L. Loewe, A dictionary of the circassian language 1854), դիդօ և ունցօ taqui «տղայ». գուռ. ատա, արա ձևից է փոխառեալ ուտ. ara «այ տղայ, ատա»։

+ՏՂԵԼ «շարժել, յուզել». այս ձևի տակ աւանդուած չէ բառս, բայց սրանից ունինք աներեսի «անշարժ, հաստատուն» Բէդր. խչ. Տիմոթ. կուզ, էջ 153, 283 (գրուած աներեսի Կնիք. հաւ. 168), աներեսաբար «առանց շարժուելու» Բէդր. խչ. տղուրիւն Տիմոթ. կուզ, էջ 219 կամ տղելուրիւն «յուզում, շարժմունք» Տիմոթ. կուզ, էջ 294, Կնիք հաւ. 181, տղեցուցանել (նորագիւտ բառ) «դրդել, գրգռել, շարժել» Անկ. գիրք հին կտ. 394 («Հարստութիւն քո և փառք քո տխեցուցին զքեզ ի լինել քեզ հպարտ և ամբարտաւան». հրատարակիչը սրբագրում է տխրեցուցին, որ չէ յարմար. պէտք է ուղղել տղեցուցին, ըստ իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 235). աներեսի «անշարժ, հաստատուն» Փիլ. ել. բ. 40, 46 («Զանտեղ ցուցանելով և զանփոփոխ աստուածային տեղիոն բնակութիւն. Անչէզ և անտեղ և անշարժելի Աստուծոյ բնութիւնն». ըստ իս երկուսն էլ կարդալ աներեսի)։ Տղել բայի փխբ. իմաստներն են ներկայացնում՝ տղել «ուղել, կամենալ» Բուզ. դ. 15 (Չի և շարժել անգամ ոչ տղէր) և կրկնութեամբ՝ աներես-տղել «որոնել, քննել, փնտռել»՝ նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Սմբ. դատ. 46, 114 են (կենդանի է նաև դատաւորներում)։ Նշանակութեանց զարգացումը ճիշտ այնպէս է, ինչպէս յուզել «շարժել. 2. փնտռել. 3. ուզել»։ Պարզ արմատն է սիր։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dil- «շարժել» արմատից, որի միակ ժառանգն է յն. δεύδιλα «աչքերը այս ու այն կողմ շարժել, հայեացքը մէկի միւսի վրայ ձգել»։ Այս բառը բաւարար ձևերով, որոնք բոլոր մերժուած են (տե՛ս Boisacq 176, 1106 և Pokorny 1, 772)։ Ընդունած է միայն՝ որ բառը կրկնաւոր է. Հայերէնը գալիս է բացատրելու կրկնութիւնը և ծագումը—Աճ.

Բառիս համար շատ անորոշ են մեր բառարանները։ Հին բռ. մեկնում է աներեսի «անշարժ կամ անբաժին», Բառ. երեմ. էջ 312 տղելուրիւն «որոշու-

թիւն», էջ 309 տեղդուքիւն *«որոշումն», ՀՀԲ* տղել *«բաժանել», աճախիղ «անորոշ, անբաժան, անանջատ, անանջրպետ», ՆՀԲ* տղել *«կամիլ, յօժարիլ, խնդրել», լծ. յն.* թէ՛լօ, *թրք.* թիլեմէք, *որպէս* խնդրել, *ռմկ.* ուզել *կամ* տճաղել, *որպէս* յուզել, *լծ. ռմկ.* տաւտրղնել, տճաղելի *«անբաժանելի կամ թերևս անքննելի կամ անփոփոխ, անշարժ, որպէս անդրդռելի կամ անճղելի», տղաբար «անբաժանաբար կամ գուցէ անքննաբար, ի տեղափոխելոյ կամ ի ռմկ. անտղելոյ», իսկ* տճեղ *(իմա՛* տճաիղ*) մնկնում է «անտեղի, տեղ չունեցող»։ Այսպէս են նաև ՋԲ և ԱԲ։* Canini, Et. étym. 186 տղել *«ուզիլ»= յն.* θέλω *«ուզել»։ Նորագիւտ Տիմոթ. կուզի համեմատութեամբ վերի ձևով պարզեց ու իմաստը ճշտեց Աճառ. Հայ. նոր բառեր Տիմ. կուզի մէջ, էջ 102, որին հետևում է և այժմ յիշեալ մեկնութիւնը։* Karst, *Յուշարձան 424* տղել *«ուզիլ»= թրք.* dil-mek։

—ՏՂԸՆԴԵՐ *(գրուած նաև* տղընտեր*) «իրը ուռած կամ ջրզողեալ» Փիլ. լին. 75 և Նխ. բ. 46. Մխ. առակ։*

=կազմուած է տղ + ընդեր *բառերից, որին ապացոյց է առանձին առանձին գործածուած ձևով Եփր. վկ. արև. էջ 75—76՝ Պատառեսցէ զառագաստ սրտից նոցա և ելցէ ճարպն յուռուցեալ և ի տնտղեալ ընդերացն։—Աճ.*

Բառ. երևմ. էջ 312 դնում է տղընդեղ *«իրեղէն», իբր թէ* տղընդեր *ձևի մէջ* -եղ *մասնիկ լինէր։ ՆՀԲ մեկնում է «ոյր ընդերքն են ուռուցեալ իբր գլղի տղայարեր, կամ փորն ուռուցեալ իբրև զբոխիկ»։ ՋԲ համարում է անստոյգ բառ։ Աճառ. Հայ. նոր բառեր Տիմ. կուզի մէջ, էջ 103* տղել *և* տղղ *(*տող*) բառերի հետ?*

*[*ՏՂԻՂ *«ցեխ». տե՛ս* տղղ *կամ* տող։

Petersson IF 43 (1925), *էջ 75 նոյն ընդ* աիղմ։*]*

*[*ՏՂՂ *«քամուք, դիրտ». ունի միայն ՆՀԲ, առնելով Մագիստրոսից. և որովհետև այս բառը հայերէնի կերպարանք չունի, ուստի ԱԲ գրում է* տիղ *կամ* տղիղ *(վերջինը տե՛ս և առանձին) ձևով։ Երեքն էլ սխալ են և պէտք է կարդալ* տող, *ինչպէս ունի Կոստանեանի հրատարակութիւնը։ Աւելին տե՛ս* Տող։—Աճ.

ՆՀԲ կցում է տիղմ *և* տողուն *բառերին։ Աճառ. Հյ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, 103. կցում է* տղել, տղրնդեր *բառերին. բայց Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 211 Մագիստրոսի նոր ընթերցուածի համեմատ ուղղում է վերի ձևով։ Նոյնը աւելի յետոյ կրկնում է Տաշեան ՀԱ 1926, 77։]*

**ՏՂՂՈՒ «մի տեսակ թաթարական հարկ». Կալ ընդ հրամանաւ մեր և տալ մեզ տղղու և մալ և թաղար և ղփչուր. Մաղաք. ար. 10. Էառ գինի ամանով ինչ և գնաց ընդդէմ Տաթրին և բռնեաց տղղու, որպէս սովորութիւն է Տաթարին. անդ՝ 24։*

=Թր. تورغو turyu *կամ* تورقو turqu *«ուտելիք և խմելիք, պաշարիղէն.* пища и питье, провизія» (Будаговъ *1, 350 բ)։*

Ուղիղ տեկնեց Պատկ. հրտր. Մաղաք. ար. էջ 63, բայց դնում է تورغو tryu *կամ* تزغو tzyu *«հարկ. պաշար ճանապարհի», մինչդեռ* Будаговъ *վերի ձևով է միայն։*

ՏՂՈՐՏԵԱԼ *(կամ* տղօրտեալ*). անբաւոյդ բառ. մէկ անգամ ունի Մխ. դտ. օր. թգ. «Արդ մի՛ յայս տղաւրտեալ շահիցս զբաղիր»։*

Ըստ ՆՀԲ «անշուք գտեալ կամ անգոռնելի իբրև զճողորտիս», ՋԲ չունի, ԱԲ «լղրճուկ»։

ՏՂՈՒԿ *«ջրի փոքրիկ որդ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Անան. գիտ. 8. են գորտք որ... այնպէս մանրիկք են, մինչ տրդկունք կաեն գնոսա, իմաստը որոշում են գտ. ձևերը։*

Տաշեան, Բառաքննական դիտ. Վիեննա 1926, էջ է յն. τέλλε *կամ* τελλινῆ *«մի տեսակ երկպատեան խեցի» բառից աղաւաղեալ։*

*Գիմ.—*Տղուկ *Բբ.,* տղուկն *Սեբ. «փոքրիկ*

և դեղնաւուն սպիտակ գոյնով ջրային մի որդ»։ (Քաջունի, Գ. էջ 237 ունի տղուկ «մանր որդն աղբերց որ յողայ քալնախ»)։

Տմախիզ *տե՛ս Մախիզ։*

***ՏՄԱՂՈՒՆ** «հարբուխ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 237։*

=Ղազաթ. دوماغو dumaγu «հարբուխ» (Будаговъ 1, 575). տե՛ս նաև դում։—Աճ.

Տմկիլ *տե՛ս Մմկիլ։*

***ՏՆԱՉ** «այպն, կառակ, ծաղր» Ոսկիփ. Մագ. Թղ. 241. Վրդն. առ. 97։*

=Արաբ. زنز ẓanz «ծաղր, կառակ». որից زنّاز tannāz «ծաղրող, կառակող» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 184)։

Հիւնք. պրս. բանգ։

ԳԻՒ.—Ալշ. Դվ. Երև. Ախց. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Վն. տնազ, Ագլ. տնօզ. Հճ. բնօզ, Նախ. դնազ, դնած, ձնած «ծաղր» (իսկ Սվ. «բամբասանք»). նոր բառեր են տնազել, տնազավարի, տնազատեղ։

+ՏՆՏՂԵԼ «որոնել, պրպտել, փնտռել, քննել»։

=Բնիկ հայ բառ. ծագումը տե՛ս վերը տղել։—Աճ.

ԳԻՒ.—Տնդղել Ալշ. Բլ. Երև. Ղզ. Ղրբ. Տփ., տնդղնել Բլ. «ուշագրութեամբ նայիլ գննել՝ ինչ լինելը իմանալու համար. 2. քննել. 3. պրպտել, փնտռել. 4. Ղզ. նայիլ, դիտել. 5. Բլ. ծանրութեան չափը իմանալու համար ձեռքի մէջ վեր վար շարժել», որից տնդղոտել Տփ. «չորս դին պրպտել»։

ՏՆՏՂԻԿ *«ուշիլ». ունի միայն ԱՒ. երկու անգամ գտնում եմ գործածուած հետևեալ ձևով. Եւ նոցա ոգիք ջրգողեալք տնտղեալք տորմեալք (Ոսկ. կոզ. էջ 534). Ելցէ ճարպըն յուռուցեալ և ի տնտղեալ ընդերացն (Եփր. վկ. արև. 76=Սոփերք Ի. 133)։ Տե՛ս և տղընդեր։*

Նորագիւտ բառս վերի ձևով մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 11։ Վարդանեան ՀԱ. 1922, 295 գտնում է որ այս իմաստը սխալ է և պէտք է մեկնել «դոնդողիլ, թանձրանալ. մածնուլ», քան որում Եփրեմի ասոր. բնագրում համապատասխան բառն է gban «contraxit, coagulavit, τυρόω» (Brockelm. Lex. syr. 48), որ է «մածնուլ, պանրանալ», և Ոսկեբերանի յն. բնագրի մէջ էլ ὑδέρῳ καὶ φλεγμονῇ κατεχόμενοι։ Բայց այս բառերը չեն համաձայնում վարդանեանի տուած նշանակութիւնը. յն. φλεγμαίνω նշանակում է «enflammer, échauffer, dilater par la chaleur, gonfler, être enflé», որոնք բոլոր ունին միայն «այտնուլ, ուռչիլ» իմաստը (Bailly 2085¹)։ Մեր թարգմանիչները նոյն յն. բառը քան ՆՀԲ 890ա թարգմանել են նաև տորոմել, որ չի նշանակում բնաւ «մածնուլ», այլ «ուռչիլ». համմտ. Այտուցեալ տորոմեալ էր, այսինքն հպարտութեամբն։ Եւ ևթէ Եփրեմի gban բառը Brockelm. 48 մեկնում է «մածնուլ», մի տող ցածր էլ մեկնում է «concrevit», որ է «se former par une agrégation de parties, s'accroître, croître, s'augmenter, devenir plus considérable», որոնք բոլոր նշանակում են դարձեալ «աճիլ, մեծանալ, խոշորանալ», այսինքն «ուռչիլ»։ Բայց սրանից ունինք տղընդեր, որ կարելի չէ բաժանել վերի ձևից և որ անշուշտ նշանակում է «փորը ուռած»։ Վերջապէս նոյն է երևում՝

ԳԻՒ.—Ղփ. տնդռնիկ «ուռչիլ». օր. Երևսը մոծակներէ կծոտելուց տնդռնել է (Ագգ. Հանդ. ժՓ. 93)։

ՏՈԳԻԼ. *անստոյգ բառ. երեք անգամ ունի Մագ. Թղ. է. 134. «Եւ դու այսմ ցանկացար տոգեալ. Տրամախոհ տարագրական տատանական տոգեալ տոգեալ... տիրապէս տրամադրութեան տորբանականդ ի քէն (կամ ի ներ) տոգեալ»։ ՆՀԲ մեկնում է «տենչալ անյագաբար և կամ տոգորիլ և հոծեալ գոլ ամենայնիւ»։*

ՏՈԳՈՐ. *անստոյգ բառ. չորս անգամ ունի Մագ. «Ո՛հորական տոգորից տենչամ քեզ տրամակայեալ. Յորում մթերեալք են տոգորք աստուածային. Զքաւիցն (գիտութեանց) ի նա տոգորս երևակայութեամբ ցու-*

ցից. Ի տոգորս տղմից տաղտկացեալ ի գբի՝ արտաքս ոստոցեալ»։ Որից տոգորել, որ մէկ անգամ ունի Մագ. առ Լհհ. «Տախտակ տոգորեալ վարժ խուզմանն»։ Հին բռ.=Բառ. երեմ. 312 մեկնում է «Տոգորք. ներկոց», Լհհ. «Տոգոր. ներկ», ՆՀԲ «Տոգոր. թաթաւումն, շաղախումն, ներկումն, և նմանութեամբ՝ համաւթիւն, ուսումն, մակացութիւն», տոգորել «թանալ, թաթաւել, ներկանիլ», ՋԲ «Տոգոր. համաւթիւն, մակացութիւն, շաղախ, շաղախումն, ոռոգումն, թաթաւումն», և տոգորել կամ տոգորիլ «լի լինել, յղկիլ»։ Մէնէվիշեան ՀԱ. 1911, 665 տոգոր դնում է «տիպք, ապացոյց, փորձ, հանդէս», նաև «գանձ, տագնապ, մրցում, շաղախում»։ Նոր գրականի մէջ տոգորել, տոգորուիլ գործածւում են «համակել, համակուիլ» նշանակութեամբ։

ՆՀԲ լծ. պրս. թէր էբռէն «թրջել»։ Lag. Urgesch. 328 սանս. tuj: Հիւնք. տոչորիլ բայից։

ՏՈՂ «խաղողի որթ» Վստկ. 49, 142, 213 (Ամիաս [մի տեսակ ազնիւ որթատունկ] զտողի [ուզում է ասել ատրփիճայ] սիրէ ինքն և գծառս ի ջերմային գաւառսն. Ի վերայ պատին տոլիք ազգի ազգի տարածեալ. Տոլոյ տերև). գրուած է տոյլի (ձ. տելի) Բրս. մրկ.։

=Բառիս հետ նոյն են ուս. tul (տուլ) «խաղող» (ըստ Դափանցեան և Քուշմանեան) և արաբ. داوالی davālī «մի տեսակ խաղող» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 213), բայց այս երեքի յարաբերութիւնը դժուար է որոշել։

ՀԲուս. § 2972 տոլ, տոլի համարում է «դդում կամ ուրիշ տարածուող բոյս»՝ հետևելով գուռ. (Ակն. Բիւթ. Ջն.) տոլ «անամէջ դդում» բառին, թէև միևնոյն ժամանակ կցում է տոյլի «խաղողի որթ» բառին։ Սակայն «դդում» իմաստը յարմար չէ վաստակոց գրքի վկայութիւններին, որոնք տե՛ս վերը, և մանաւանդ էջ 213, ուր Հիւանդ տաւարին առաջարկում է կերցնել «տոլոյ տերև». խաղողի տերևները շատ յարմար են ուտելու, բայց դդումի փշոտ թերթերը լեզուն պիտի ծակոտէին։ Մեր ասածին աւելի զօրեղ ապացոյց է՝

ԳԻՒ.—Սվեդ. դիլլա «խաղողի որթ ամէն տեսակի», որից դիլլըդիրիվ «խաղողի տերև», Հճ. դիլի «որթատունկի կարճ տեսակը, որ սարիփինայի վրայ չի բարձրանում». (այս բառը Հաճինի ձայնաբանական օրէնքներով ծագում է տոլի ձևից. հմմտ. ճոգի, ոջիլ>ճիգ'ի, իջ'իլ)։

ՏՈՂՈՒԻ «մի տեսակ խմորեղէն». մէկ անգամ ունի Ոսկ. փիլիպ. ժ. էջ 469 (միւս ձեռ. սառյխողուկ)։

ՏՈՄ «մոմուռ», որից տոծալ «մոմոտալ». երկուսն էլ ունի միայն Բառ. երեմ. էջ 216. բայց այս բացատրութեամբ պէտք չէ հասկանալ «մրմնջել», այլ «կսկիծ, ցաւ կամ կծու», ինչպէս է մոմուռ՝ գաւառականների մէջ։

Տոծիկ տե՛ս Մոծակ։

+ՏՈԿ (ո հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վրկայութեան) «դիմացկանութիւն, տոկալ տևելը» Կոչ. 420. Ոսկ. մ. ա. 16. «երկար տևողութեամբ, շատ» Սեբեր. 108. Ագաթ. «յաջողակ, ուժեղ, լաւ փշող (քամի)». Հմմտ. նաև անկասկած է յընկղմելոյ և ի խափանելոյ մինչդեռ յաջողակ և տոկ օդով առաջնորդիցի. Սարգ. ա. յհ. դ, էջ 679 ա տպ.=էջ 534 բ տպ. (այս նշանակութիւնը՝ որ չունի ՆՀԲ, կազմուած է տևականութիւնը զուգորդելով ուժի հետ). որից տոկալ «ժուժել, համբերել, դիմադրել» Ել. ժը. 23. Եզն. տոկացուցանել Նիւս. բն. տոկուն Փարպ. Փիլ. անտոկ Ոսկ. Եփես. 830. անտոկութիւն Դիոն. ածայ. դժուարատոկ Պրպմ. 164։

=Բնիկ հայ բառ, հնխ. dowə- արմատից, որի dewə- ձևից ունինք տևել, արմատը ածելով -ko մասնիկով տուել է նախահայ *towoko, որից *took>տոկ. հմմտ. *nowro > նոր։ Աւելի ընդարձակ տե՛ս երկայն բառ տակ (տ. Walde 245, Pokorny 1, 780 են)։

Lag. Urgesch. 321 հմմտ. զնդ. taxta «զօրեղ»։ Հիւնք. pnf բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ Liden, Arm. Stud.

114, որ ընդունում է նաև Meillet REA 4, 3։

Գիմ.—Վն. տոկանիմ «տանջանք, նեղութիւն»։

*ՏՈԿՈՍ, ի հլ. «դրամի բերած շահը» Մանդ. լմբ. սղ. Նար. երգ. որից տոկոսիմ «ծնունդ» Ովս. բ. 11 (Փառք նոցա ի տոկոսից և յերկանց և յղութեանց). «դրամի տոկոս կամ վաշխ». ՍԳր. «պարտք» Մանդ. Ճառընտ. «տուգանք» Վեցօր. 160. տոկոսաճառ լծ. սահմ. տոկոսառ Մաշկ. Ոսկիփ. Անկ. գիրք առաք. 79. տոկոսել Եփր. ապաշխ. 193։ Նոր բառեր են տոկոսաբեր, տոկոսական, տոկոսաւոր, անտոկոս։

=Յն. τόκος «վաշխ». Ծագում է τίκτω «ծնիլ» բայից և բուն նշանակում է «ծնունդ». Համմ. հյ. փոխառդի «տոկոս» (իբր փոխ տուած դրամի որդին)։—Հիւրշ. էջ 384։

Ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. 47. Նոյնը նաև ՀՀԲ և ՆՀԲ։

*ՏՈՀՄ, ի, ի–ա հլ. «զարմ, ցեղ, ազգատոհմ» ՍԳր. Եփր. ծն. Եղն. Մծբ. Եղիշ. Փարպ. որից տոհմագիր «ցեղագրութիւն» Կոչ. 183. տոհմաբիւ «ազգահամար» Ա. տիմ. ա. 4. Տիտ. գ. 9. տոհմական «առաւ բերք» Ղկ. ժբ. 16. Ոսկ. Կոչ. Եփր. գ. կոր. 122. Ագաթ. Եղն. «ազգական» Մծբ. «ցեղային» Փիլ. «ազնուական» Մծբ. 374. տոհմակից Ագաթ. Վեցօր. տոհմիկ «ազնուական» Բուզ. Եղիշ. ը. 126. տոհմականութիւն «ազնուականութիւն» Փարպ. 167. ազգատոհմ ՍԳր. Եւս. պտմ. ապատոհմ Ոսկ. հին. 912. Մծբ. անտոհմ Ա. կոր. ա. 28. անտոհմական Փարպ. նամատոհմական (չունի ԱԲ) Բղ. պրոկըղ. ՀԱ. 1921, 20. բազմատոհմ Եփր. պհ. Վեցօր. բարետոհմիկ Ոսկ. ա. կոր. դայեկատոհմ Գ. մկ. ե. 18. ծառայատոհմ Ագաթ. միատոհմ Ագաթ. վատատոհմական Փարպ. տոհմարան (նորագիւտ բառ) Մխ. անեց. 37, 39 են։ Տոհմն ձևն է ցոյց տալիս նորագիւտ մնաց., ուր գտնում ենք ի տոհմանէ Ա. մն. ի. 6, տոհմանցն Ա. մն. իզ. 26, ազգատոհմականցն Բ. մն. ա. 2 հոլովաձևերը։

=Պհլ. tohm «տոհմ», որ գործ ածուած է Թուրֆանի նորագիւտ արձանագրութեանց մէջ. որից mrdwhm (կարդա՛ mardohm) «մարդիկ» (այն է *mard-tohm=«մարդատոհմ»>պրս. مردم mardum «մարդիկ» MSL 17, 2)։ Միւս իրանեան ձևերն են՝ սոգդ. tōxm «սերունդ», պհլ. 𐭬𐭥𐭭 tōhm, tōxm, tuxm «սերմն (բուսական և կամ առնական), սերունդ, ցեղ», 𐭬𐭥𐭧𐭬𐭩𐭪 tōhmak, tōxmak, tuxmak «սերմ, ցեղ, ծագում, ծրնունդ», պրս. tāhm (հնագոյն ձևը), تخم tuxm «սերմ, ձու, ցեղ, ծագում», تخمه tuxma «ծագում, ցեղ», تخمگان tuxmagān «ամորձիք մարդոյ, սերմն բուսոց», քրդ. toxma «ցեղ, սերունդ», txoma «բոյն», tīm «կորիզ, հատիկ, ունդ», բելուճ. tom, tūm «սերմ», պազ. tuxm «սերմ», tuxma «սերունդ, ծագում», Θūm «սերմ». հնագոյն ձևերն են հպրս. 𐎲𐎢𐎶𐎰 taumā (կարդա՛ tauhmā, քան Benveniste, BSL № 93, 76—79) «ընտանիք, ցեղատոհմ», զնդ. taoxman- «սերմ, ցեղ», սանս. तोक्मन् tōkman «ընձիւղ»։ Իրանեանից են փոխառեալ նաև ասոր. ܛܘܗܡܐ tōhmā «ցեղ, ազգատոհմ, սերունդ», արաբ. طخم ;tuxm, բրք. تخوم toxum, ռմկ. tohum «բուսական կամ առնական սերմ, ցեղ»։ Ըստ Pokorny 1, 713 իրանեան բառերը ծագում են հնխ. teuq- արմատից, որից է նաև մրգ. diehter «բոռ»։ Ուրիշ ցեղակից ձև չկայ։ Հայերէնի մէջ բնիկ լինելու պարագային պիտի ունենայինք *բոյհ։—Հիւրշ. 253։

ՆՀԲ լծ. պրս. բրք. բոխմ, բոխում, բօխմ, բօհում և վրաց. თო՛მი։—Զնդ. հպրս. և պրս. ձևերի հետ են համեմատել նախ Windisch. 11 և յետոյ Spiegel, Höfers Zeitsch. 1, 61, Gosche 13, Եւրոպա 1849, 200, Böttich. ZDMG 1850, 363, Lag. Urgesch. 322, Spiegel Hüzw. Gram. 164, Müller SWAW 38, 574, Justi, Zendsp. 130, Dict. Kurde 95 եև։ Böttich. Horae aram. 36, 68, Rudim. 42, 120, Lag. Cesam. Abhd. 48 ասոր. ձևի հետ։ Pictet 2, 237 կցում է սանս. dama, զնդ. dəmāna, nəmā-

na, յն. δόμος, δῶμα, լտ. domus=հյ. տուն *ընտանիքին*։

Գիր.—Կայ միայն Մշ. շան տորմ է *«շան ցեղ է» նախատական դարձուածի մէջ*։

Փոխ.—Հայերէնի միջոցով են վրաց. ტომი տոմի, *մինգ.* ტომი տոմի *«տոհմ, ցեղ» (այսպէս նախ* Brosset JAs. 1832, 529). *ուղղակի պարսկերէնից է փոխառնւալ վրաց.* ვარტუმე վարտուխմե *«ծնողք»*։

ՏՈՀՈՐԱԿԵԼ *«նազելով սիգալով քայլել». մէկ անգամ ունի Ոսկ. ա. տիմ. ը.—Մէնէվիշեան ՀԱ 1911, 666 տալիս է նաև տոհմարակել ընթերցուածը և այստեղ է կցում Մագ. գամագտ. 14* տոհմորական *անստոյգ բառը.—Նոյն են Բառ. երեմ. 304* տախտրակեալ *«գեղազանցեալ գնացք» և էջ 312* տոխտրակ *«գերանցեալ գնացք»*։

ՏՈՂ (ի *հլ. յեռնաբար) «ուղիղ շարք (մարգարիտների, շղթայի, բազմականների, խօսքի կամ բառերի)» Ոսկ. ա. թես. Բուզ. 172. որից* տողել *«ուղիղ շարել, դասաւորել» եւս. քր. Սեբեր. Ոսկ. Ագաթ.* տողեալ *«շարուած» Վեցօր. 86. Ոսկ. եփես. 915.* տողան *«շարք, դաս» եւս. պտմ. 664.* տողանի *«յաջորդական կարգով շարուած» եւս. պտմ. 608.* տողաբան *«շաւտախօս» Մծբ.* շղթայատող *խոր.* մարգարտատող *ՅՀ. կթ.* տարատողել *Բէոդ. խշ.* բարատող *«քարով շարուած» Կաղնկատ. 172։ Նոր բառեր են* տողաշար *(արդէն 1788 թ. ունի Սարաֆեան, Բանալի դիտութ. Սանկպետ. էջ 116, իբր ռուս.* терακса*),* երկտող, երկտողիկ, տողած, տողավարձ *են։*

=*Թւում է խալդեան շրջանի բառ. համմ. վրաց.* ტოლო տոլո, ტოლი տոլի *«հաւասար, նման, հասակակից»,* ტოლობა տոլոբա *«հասակակցութիւն»,* ტოლება տոլեբա *«բաղդատել»,* ტოლობა տոլոբա *«ձկների կամ օձերի ղուգաւորութիւն»,* ტოლტოლი տոլտոլի *«հաւասար, հասակակից»,* უტოლო ուտոլո *«անհաւասար»,* որոնց *նշանակութեան այսպիսի երանգները թոյլ չեն տալ ընդունելու թէ մին միւսից փոխառնւալ է. այլ երկուսն էլ փոխառնւալ են միևնոյն աղբիւրից։—Աճ.*

ՆՀԲ լծ. յն. στολή *«յարդարումն, զգեստ» են։* Pictet 2, *159 պրս.* duxtan *«կարել», սանս.* duh *«կաթ կթել, կարել»։* Bugge IF 1, 442 *սանս.* tántra- *«շարունակեալ կարգ, շարք, դասաւորութիւն»,* tandrá *«շարք» բառերի հետ հնխ.* tantri- (<tn̥tri-) *կամ* tantro- *ձևից, իբր* ten- *արմատից։ Հիւնք.* տաղ *բառից։* Scheftelowitz BB *29, 28 և յետոյ* Pedersen, *Հայ. դր. լեզ. 64 կցում են անգլ.* tal, *հբգ.* zala, *գերմ.* Zahl *«թիւ», լիթ.* dalis, *սանս.* dala *«մաս, կտոր, տերև-», կիմր.* dalen, *հիւլ.* duillen *«տերև»,* fodailim *«բաժանեմ» են բառերին։ Այս բառերը պատկանում են հնխ.* del- *արմատին, որ ըստ* Pokorny 1, 808 *նշանակում է «նկատի ունենալ, նպատակ դնել, վնասել, հաշուել, պատմել» և որի ժառանգների մէջ միայն անգլս.* toel, talu *ունի «շարք» նշանակութիւնը. այս պատճառով էլ* Pokorny *միտժում է հյ.* տող։ *(*Walde *թէև յիշում է ցանկում, բայց չի դնում գրքի մէջ, էջ 240՝ լտ.* dolus *«խորամանկութիւն, խաբեբայութիւն» բառի հետ)։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1908, 122։*

Գիր.—Ալշ. Մշ. տող, *Ախց. Երև.* տօղ, *Սչ. դօղ. Նոյնից են նաև* տող *Ննխ. «քանոն (ուղիղ գիծ քաշելու համար)»,* տող -բէ-տող *Ալշ. «շարան շարան»,* տող *Բլ. Զրս. «վզի զարդ, մանեակ» (իմա՛ «շարան, շարանուկ, ուլունքաշար»)։*

Փոխ.—Ռուս. տօղ *«գրուածքի տող»։*

+ՏՈՂ *«մարմնի մէջ արտադրուած հեղուկները. sécrétion» Մագ. քղ. 135 (Միայն ջերմինս և կծուինս տայ կերակրել տկարացելումն, զի զտողն հատցէ ի խոնարհ և օդնականութիւն ահեկին կողման և փայծաղան.—այս խօսքերը ջերմի բուժման համար է ասում, երբ իրօք որ փայծաղը՝ որ մարմնի ձախ կողմն է, ուռչում է և ցաւում), նաև էջ 6 (Հիւանդն խնդրէ զանախորժըս ախորժակս, մթերեալ յինքեան զհամաքամուածս և զտողս և զափոդիտականս.—ըստ ՆՀԲ զտղոս, որ սխալ ընթերցուած է. տե՛ս* տղղ*). որից* տողի *«թուք» Խոհ. յոր.*

112, տողուկ (որ և տողու, տողուն) «թուք, լորձունք» Յոբ. է. 19, Փիլ. այլաբ. 108. Պատմ. աղէքս. 25, բոլորն էլ միայն յոգնակի գործածութեամբ։

=Ինկ հայ բառ՝ հնխ. stol- արմատից, որի stel- ձևից են տիլ, տիղմ (տ. տիղմ բառի տակ)։—Ա՛։

Բառ. երեմ. էջ 313 տողուկ գնում է «վիշտ, կսկիծ», որ անշուշտ սխալ է։ Հինք. կցում է տող «շարք» բառին։ Սագրգեան ՀԱ. 1909, 334 հյ. շողիմ, շաղ, շաղախ, թրք. dalga «ալիք», dolmaq «լցուիլ», սումեր. diğ «թափիլ», šağar «ցեխ» են բառերի հետ։ Karst, Յուշարձան 407 շողիմ բառի հետ՝ սումեր. Šua «թացութիւն, թուք»։

ԳԻՒ.—Նախ. դօղում «մաղաս, խուխ, բալղամ».—կրկնական ձևեր են տղողաճմ Ղրբ. «դիրտ. 2. տակին մնացած անհիւթ անհամ մասը», տղողաջուր Ղրբ. «տակը մնացած մրրուտ ջուր», տղեղել Ագլ. «տան պատերը սպիտակ հող քսելով սպիտակացնել»։

*ՏՈՄ «գրքի հատոր». նորագիւտ բառ. որ հինգ անգամ գտնում եմ գործածուած Սոկր. Որպէս և ցուցանեն իսկ նորա հիւթերին տոմքն (էջ 304). Ամենեցունց մօտ ի հազար լինին իւրաքանչիւր տոմի հաւասարելով ի տոմին (էջ 642). Որիգէն յառաջնում տոմին (էջ 656). Ամենայն եւթ տոմիս (էջ 689)։ Սրա հետ նոյն է նաև տոմ Ճառընտ.=Անկ. գիրք նոր կտ. 338. «եւ առին տոմիւ քարտէս և գրեցին առ Յովսէփ». իսկ Եփր. վկ. արև.=Սոփերք Ի. 96 «Տոմք արգելան, ագահութիան սանձք արձակեցան» հատուածի դէմ Միաբանի հրատարակած բնագիրն ունի «Տուրք (այլ ձ. տոմք) արգելան» (էջ 45)։ Տե՛ս և տոմս։

=Յն. τόμος «պապիրոսի կամ մագաղաթի կտոր. 2. գրքի հատոր». ծագում է τέμνω «կտրել» բայից և բուն նշանակում է «կտոր». որից և ֆր. tome, ռուս. ТОМЪ «հատոր», լտ. tomus, ասոր. tōmsā։

Ուղիղ մեկնեց Մ. վ. Տէր-Մովսէսեան, Հրատ. Սոկրատի, էջ 304։—ՆՀԲ ունենալով մի՛միայն Ճառընտրի վկայութիւնը՝ տոմ մեկնում է «տոմս, տոմար». իսկ ՋԲ համարում է անստոյգ բառ։ Դանուած նոր վկայութիւններով բառը ստուգում է և մեկնում վերի ձևով։

ՏՈՄԱԼ «անպիտան մի խոտ. Բրք. տէվէ չէօբիւրտէն» Կմրկպ. ունի միայն ՀԲուս. § 2973։

*ՏՈՄԱՐ, ի—ա հլ? «մի հատոր գիրք, մի գրքի բաժանումները» Բ. եղր. ղ. 2. Եւս. քր. Եւթաղ. 95. «գրուածք, օրագրութիւն» Յայսմ. Ճառընտ. Վրք. հց. «Թուական, ժամանակագրութիւն» ՅՀ. կթ. Շիր. Յայսմ. որից տոմարական Վանակ. տարեմ. տոմարագէտ Մաշտ. կիլիկ. զատկատոմար Մարթին. պարզատոմար Տոմար. նոր գրականում տոմարակալութիւն, տոմարագիտութիւն, կրկնատոմար ևն։ Գրուած է նաև տուվմար, տաւմար, տօմար, տուման։

=Յն. τομάριον «հատոր, գիրք, վաւերագիր ևն». նուազականն է τόμος բառի, որի վրայ տե՛ս տոմ, տոմս. փոխառութեամբ անցած է նաև ուրիշ լեզուների. ինչ. պրս. արաբ. طومار ṭūmār «Թուղթ գալարեալ և այլ իր». վրաց. ტომარი տոմարի, ტომარაკი տոմարակի «նիւթերի ցանկ, գրուած գլան, ընդօրինակութիւն», արևել. Բրք. կամ չաղաթ. تومار tumar «նուսխայ, համայական պահպանակ» (որ մէծ սխալմամբ Vámbery, Etym. Wört. էջ 165 Բրք. demir «հրկաթ» բառին է կցում)։ Այս անունով (Թումարի) է կոչում նաև Ատրպատականի մահմետականների մէջ վերջերս միայն ծագած մի նոր կրօն, որ մահմետականութիւնից բոլորովին տարբերւում է և որոնց Ս. Գիրքն է Թումարը։—Ըստ այսմ հայերէնի նախնական ձևն է տոմար, որից և տուվմար, յետին ուղղագրութեամբ տօմար, որից և տաւմար, իսկ տուման ծագում է արար ձևից։—Հիւրշ. 384։

Հներից Օրբ. Հկճո. ժա, էջ 151 մեկնում է «կնքեալ Թուղթն տումար անուանի, որ է ժողով». Նոյնպէս Յկ. ղրիմ. և Տոմար. մեկնում են «Տումարն ժողով ասի». որից երևում է թէ հանում են գումար բառից։ Մեկնուած է Տոմար

Լևոնի, Վեննետ. 1805, էջ 4 ծան. իբր յն. τόμος, *լտ.* tomus: *ԳԴ պրս.* ‡ūmār: *ՆՀԲ յն.* τόμος *և պրս.* ‡ūmār:

ԳԻՒ.—Ասլ. դամար «տօմար». *իսկ Հճ.* դօմօյ «երապահան», *որովհետև տոմարական գրքերը պարունակում են նաև երապների մեկնութիւնը:*

***ՏՈՄՍ** (ի *հլ. ըստ ՆՀԲ, բայց առաց վրկայութեան*) «*թուղթ, մի թերթ թուղթ, տետրակ*» *ՅԱ. ը. 1. Աթան. Դէ. եա. ժմ. յն. յետնարար կայ «հրամանագիր, կաթուղիկոսական հրովարտակ» իմաստով՝ Զքր. սարկ. Բ. 136. նոր գրականի մէջ նշանակում է* «billet, *վրան գրուած թղթիկ, երկտողիկ ևն», որից* տոմսակ, տոմսակավաճառ, խաղատոմս, բաժնետոմս, հրաւիրատոմս, տոմսարան *ևն:*

=*ՅՆ.* τόμος «*մագաղաթի կտոր, մի թերթ թուղթ, հատոր գրքի*», *որի վրայ տե՛ս և տոմ. յունարէնից է փոխառեալ ասոր.* ‡ūmsā «*տետրակ, գիրք, գրքոյկ, թուղթ*», *որ թէև a-ի պատճառով աւելի մօտ է հայերէնին, բայց ու ձայնաւորի պատճառով հեռանում է:—Հիւրշ. 385:*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ:

ՏՈՄՓ (*բցռ. ի* տոմփէ) «*ցեղ, տոհմ*» *Տիմոթ. Կուզ. էջ 283. որից* տոմփական «*ցեղակից, նմաններ*» *Տիմօթ. կուզ, էջ 94. երկուսն էլ նորագիւտ բառ. որոնց վրայ տե՛ս Աճառ. Հայ. նոր բառեր Տիմ. կուզի մէջ, էջ 104: Մեր տուած նշանակութիւնը հաստատում է համեմատելով յոյն բնագրի համապատասխան պատառիկը, ուր գտնում ենք* φρατρίας *(Ակինեան ՀԱ. 1908, 383) և կնիք հաւ. էջ 168, որ փոխ առնելով Տիմոթէոսի յիշեալ հատուածը, համապատասխան տեղը դնում է* տոհմ:

=*Արդեօք ժողովրդական ձևՙն է* տոհմ >*տոմ *բառի՝ բառավերջի* p=փ *յաւելուածով, ինչ.* բեմ>բեմբ, պատշգամ>պատրշգամբ:—*Աճ.*

***ՏՈՅԺ**, ի *հլ. (մանաւանդ անեզաբար գործածուած) «պատիժ, վնասի փոխարէն հատուցուած դրամը» Առակ. իէ. 17. նաև. քր. Ոսկ. յհ. ա. 7. որից* տուժել *ՍԳր.* տուժապարտ *նոր. թգ. 405.* տուժանք *Մխ. ապար.* անտոյժ *Մխ. դտ.* սակաւատոյժ *Արծր. ունինք նաև r յաւելուածով* տուրժ *կամ* տուրժք, տուրժական, տուրժել *Պզատ. օրին. 57, 98, 138, 140. Վրք. հց: Բառիս կրկնակն է* ՏՈՅԳ, *որ առանձին չէ գործածուած, բայց սրանից են* տուգան *(մանաւանդ անեզաբար) ՍԳր. փիլ. Կղնկտ.* տուգանել *Խոր. Վրք. հց. երկու ձևերի լծորդութեան համար համմտ.* արժել–արգ, ոյժ–տոյգ:

=*ՊՀլ.* tōž-ēt «*տուժել, պատժուիլ*», tožišn «*տուգանք, պատիժ*», *պազ.* tōxtan *(բունը* tōž*)* «*վճարել, տուժել, տուգանքը տալ*», *պրս.* توختن tōxtan *կամ* توزیدن tōzīdan, *ներկ.* توزم tōzam «*վճարել, հատուցանել*», vām toxtan «*պարտք կամ փոխ տալ*»: *Սրանց ծագումը և նախնական ձևը յայտնի չէ: Իրանեանից է փոխառեալ նաև ասոր.* ‡ūgānā «*նեղեալ, տառապեալ*», *որ ցոյց է տալիս հայերէնի* տուգան *ձևը:—Հիւրշ. 253:*

Justi, Zendsp. 135 *գնդ.* tuš «*վնասել, կտրատել*» *արմատից կազմուած: Պրս. ձևերի հետ համեմատած նախ* Lag. Btrg. bktr. Lex. 67: *Հիւրշ.* Arm. Stud. *§ 276 կազմած է փոխառեալ համարելու: Հիմնք. տոյժ հանում է թոշակ բառից, իսկ* տուգան՝ տոկոս–*ից:*

Տոլի *տե՛ս Տոլի:*

ՏՈՇ «*ձիու առնանդամ*». *չորս անգամ ունի Վստկ. 199, 201. Տոշն ի չաքն ի մեծն և ի փոքրն. Զագեստակին մազն մկրատով ի վայր տուր, որ զտոշն չգանէ. Տոշն թուլանայ և ի բան չգայ. Օձ զտոշն և զձուքն: Որից* տոշբեռան «*ձիու անդամի ծայրը*» *Վստկ. 208:*

ՏՈՇԿԵԼ «*չարչարել, տանջել*» *Բէռդ. խշ. Ոսկ. Եառք. էջ 293. «կեանք մաշեցնել» Փիլ. լին. 60.—Հին բռ. մեկնում է «ողորկել կամ տանջել». այսպէս նաև Լծ. փիլ. իսկ Բառ. երեմ. էջ 313 գրելով* տոշկել՝ *մեկնում է «ողորկել, հարկանել, տանջել, թուլանալ, հեշտանալ, տոփել»,— (Փիլ. նոր ձեռ.* տոշկել *բառի տեղ դնում է* մաշել):

ՏՈՉՈՐ «*վառուիլ այրիլը*» *Գնձ. որից* տո-

չորիլ «այրիլ, վառիլ» Երեմ. խր. 9. 34. գ. 6, Ագաթ. եւս. պոմ. «Հրդեհի պէս ծաւալիլ» եփր. ա. կոր. տոչորական Ագաթ. տոչորումըն 34. կթ. հրատոչոր Բենիկ. ճոգետոչոր Անան. եկեղ.։

ՆՀԲ չոր բառից, իբրև թէ «սաստիկ չորութիւնից վառուած»։ Տէրվ. Altarm. 61 տաf բառի հետ՝ կցում է սանս. dah «այրել, վառել», լիթ. dègti «այրել», գնդ. daz «վառել», հբգ. tak «օր» են բառերին։ Canini, Et. étym. 130 յն. δάκαρ «մի տեսակ կասսիա»։ Հիւնք. տաf բառից։

ԳԻՒ.—Կայ Ագ. տոճորակ «ղաւղումա, տհալ» բառը (Ամատունի, Հայոց բառ ու բան 628 բ), որ ընդունուած է նաև արևմտեան գրական լեզուի մէջ, և որի հետ նոյն է տոժրակ Ջմշ. «ղաւղումա»։ Ամատունի դնում է տոչորել բայից։

*ՏՈՊՐԱԿ «քուրձ, պարկ» Կիր. պոմ. էջ 219, Վստկ. 183, որից ձիատոպրակ (որ և գրուած է ձիատոպրակ) Սամ. անեց. 82. Կիր. պոմ. 34. Մխ. անեց. 47։

=Թիր. توبرك tubrak, որ և دوبرا dobra, دوربا dorba, Բրք. تورب torba «տոպրակ, պարկ» (Будаговъ 1, 384). սրանցից են փոխառեալ նաև պրս. توبرا tobra, սասր. ṭūbarqā, քրդ. torba, վրաց. თოფრი բոփրի, ռուս. торба, ուս. բոպրակ, բոնրակ, նյն. τροβᾶς, սերբ. torbe, ռում. torbę, բոլորն էլ «պարկ, տոպրակ»։

Ուղիղ մեկնեց Այտնեան, Քնն. բերակ. էջ 155։

ԳԻՒ.—Ախց. երև. Ղրբ. Մկ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. տօպրակ, Ալշ. Մշ. տօբրագ, Պլ. դօբրագ, Ննխ. դօբրագ, դօբրա, Սեբ. դօրբագ, Սվեդ. դըբրիւգ, Հար. տօնբրակ։ Նոր բառեր են տոպրակել, տոպրակցու։

ՏՈՒՆ, ն հլ. (-ռին, -ռուն, -ռամբ, -ռանց) «չուան, կապանք» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 8. Իգնատ. Թղ. 131. Կոչ. 235. Սեբեր. 38. որից տոռնիլ «չուանով կապուիլ» Վրդն. սղ. էջ 401, տոռնեալ «կապուած» Լաստ. Տաթև. սմ. 126, որ և տոռանեալ Սիմ. տպար. 43։

Հիւնք. դուռն բառից։ Scheftelowitz BB 28, 302 տորգ բառի հետ։ Karst, Յուշարձան 422 ԹԹր. tar, ter, չաղաթ. օսմ. tar «նեղ», tartmak, termek «պընդել», չուվաշ. tort «քաշիլ»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 հյ. տոռոմ բառի հետ կցում է Թրք. pon «ցանց» բառին։ Petersson KZ 47, 258 սանս. darbha- «խոտի տրցակ, խոտ», dṛbháti «ոլորել, հիւսել», հբգ. zerben «դառնալ» են բառերի հետ՝ հնխ. derbh-, dorbh- «ոլորել, դալարել» արմատից։ Յիշում է Pokorny 1, 808: Պատահական նմանութիւն ունի լտ. torus «բարակ չուան», որից Ֆր. toron (ծագումն անյայտ՝ Walde 786)։

ԳԻՒ.—Բլ. Մշ. տօն «շան վզի կապ»։

+ՏՈՒՆ, ն հլ. «սանդի կոթ» Լմբ. առակ. սրանից բարդուած ձևով սանդիտոռն կամ սանդատոռն «նոյն նշ». Առակ. իգ. 31. Եւագրր. 226. Ճառընտ. (վերջինը յգ. գրծ. սանդիտոռամբ ձևով)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. doru- «փայտ» ձևից. հին ժամանակ սանդի կոթը կարծր փայտից էր լինում շինուած, և մինչև այժմ էլ սխտորդուշի կոթը միայն փայտից է շինւում. բառիս ցեղակից ձևերի վրայ տե՛ս տարգալ. յատկապէս համմտ. յն. δόρυ «նաւ, նիզակաբուն, ճոկան, մականն», կրետ. δορά «գերանն՝ իրենց ο ձայնաւորի համար, և սանս. druṇī «փայտէ դոյլ», druṇa- «աղեղ», dṛóṇa- «տաշտ»՝ իրենց ṇ ձայնի համար։— Ա՛ճ.

Իմ այս մեկնութեան համաձայն է նաև Meillet (անձնական)։

ՓՈԽ.—Վրաց. ტოტო տորի «հովուի գաւազան». այս բառը ի հարկէ փոխառեալ չէ հյ. տոռն «սանդի կոթ» ձևից, այլ ենթադրում է հնագոյն հյ. *տոռ «գաւազան» բառը, որ յետոյ կորել է մեր մէջ՝ փոխանակուելով իրան. գաւազան բառով, և որի անմիջական ընկերն է տոռն «սանդի կոթ» (նախապէս ունէր r, որ ն-ի պատճառով դարձաւ n)։

ՏՈՒՈՄ «լծակ, բառնալիք, լամբ» Շնորհ.

առակ. 114 (տապանակի ունկերի համար ասուած)։

Scheftelowitz BB 29, 27 յն. δάρυ «փայտ», սանս. dāru, գնդ. dauru բառերին ցեղակից, որոնք ունին «փայտ, ծառ, կոթ» նշանակութիւնները։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 հյ. տուն «չլան» և թրք. pon «ցանց» բառերի հետ։ Petersson, Ar. u. Arm. Stud. 101 դնելով -ում մասնիկ, արմատը համարում է տուն <հնխ. dors, որ կ՚ում է կա՛մ անգսք. teors, գւս. անգլ. tarse, հոլլ. teers, հբգ. zers «առնի», հյ. տառեղն «արագիլ» բառերին՝ մեկնելով «կարճ փայտ» նախնական նշանակութիւնից, և կամ յն. δῶρον «ափ», δάρυ, լակոն. δάρειρ «թիզ», իռլ. dorn, կիմր. dwrn «բռունցք», dyrnaid «մի բուռ» բառերի հետ՝ մեկնելով «կոթ, բռնելատեղ» նշանակութիւնից։

ՏՈՌՈՒՊ «ափիոն» Հին բռ. ունի միայն ՀԲուս. § 2876։

ՏՈՒՔ. նորագիւտ բառ. անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Դրնդ. 203. «Եւ հոռոմքն ամէնքն ի շարն կանգնեալք որպէս գտոռքն և մասարն («աղերսագիր») վերամբարձ ունելով»։

ՏՈՏՈՐ «մի տեսակ աչքացաւ կամ նրա դեղը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2977։

ՏՈՐԱՅՈՍ «լռութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 313։

ՏՈՐԲԱՆ «վարդապետութիւն», որից ունինք տորբանել «վարդապետել», տորբանական «վարդապետական» Մագ. Թղ. էջ 5, 134, գամագռ.։

=Պէտք է կարծել որ կազմուած է տոր+բան «խօսք» բառերից, բայց անյայտ է տոր։

ՆՀԲ (որից նաև ՋԲ) մեկնում է «մութ և խրթին խօսքեր խօսիլ, երկարաբանել» և ուզում է կցել տուն «չուան» բառին՝ վերի ձեով է թարգմանում Նորայր. Բանաս. 1900, էջ 138։

+ՏՈՐԳ «սարդի ոստայնի հիւսքը», մէկ անգամ ունի Վեցօր. 121 (եկեսցէ յարեւցի ի տորգս սարդիոստայնի). ուրիշ վկայութիւն չկայ։ Նախնական իմաստը պէտք է դնել ո՛չ թէ «ցանց կամ հիւսք», այլ, ինչպէս տակի գաւառական ձևերից երևում է, «ոստայնանկի փայտեայ կազմած, ոստայն», որ յետոյ փոխաբերաբար անցել է սարդի ոստայնին։ Ըստ այսմ բառս դառնում է՝

=բնիկ հայ բառ, հնխ. dorŭ- «ծառ, փայտ» ձևից, որի վրայ ընդարձակ տե՛ս տարգալ։—Ա՛ճ.

ՀՀԲ մեկնում է «մամուլ (իբր լտ. torcula «մամուլ») և ոստայն, ծուղակ»։ ՆՀԲ հանում է տուն կամ դուրգն բառից (իբրև զտուն ձգնալ կամ իբրև զդուրգն ճախարակեալ)։ Scheftelowitz BB 29, 51 տուն բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի լտ. torqueo «ոլորել, դարձնել, չարչարել ևն»։

Գիհ.——Տուրգ «ծանր բաներ վերցնելու դլանաձև փայտ» (Կոյլաւ, Բառ. գերմ. 815 ա), տուրգ Ղբ. «ոստայնանկի կազմած, դաղդահ», Ղրբ. «քառակուսի փայտերից կազմած, որի վրայ խալիչա են գործում»։

*ՏՈՐԹԻԿ «մի տեսակ թռչուն. թրք. արտրճ դուշու, ֆր. grive». գործածուած է Փիլ. լիւս. 128, բայց հրատարակչի յաւելուածը չէ՞։ Իբրև նորակերտ բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 619ա։

=լտ. turdus համանիշից կազմուած։

Այսպէս է դնում նաև Մառ, Яфет. сбор. 1, 135 անշուշտ կարծելով թէ հին հայերէն է։ լտ.turdus բառի հետ համեմատութիւնը տուաւ նախ Pictet, բ տպ. Ա. 603։

—ՏՈՐՄ «խումբ». գործածուած է միայն նաւերի համար. այսպէս՝ նաւատորմ Փիլ. եղ. բ. 44 և -իդ կամ -իլ մասնիկով (համմտ. տեսիլ)՝ տորմիդ նաւ. բր. նաւատորմիդ նաւ. բր. նաւատորմիլ Փիլ. նխ. ա. 35։

=Հյ. տարմ «խումբ» բառի կրկնակ ձևն է։

Լծ. փիլ. նաւատորմիլ մեկնում է «պատերազմական նաւ», Երզն. մտբ. համարում է «մալուխ, նաւի չուան», իսկ Հին բռ. «ձիակ կամ ձիական

նաև։ ՆՀԲ (տորմիղ և նաւատորմ բառերի տակ) լծ. հյ. տող, թել, տարմ, յն. ταρ'λου. լտ. turma, turmilla, որ է «գունդ, խումբ, տող, շարք»։ Հիւնք. կա՛մ լտ. turma և կամ յն. (ἱππό) ὄρμος բառի վրայից։

ՏՈՐՄ. անյայտ և անստոյգ բառ, որ գտնւում է տորմակերպ բարդի մէջ. այս նորագիւտ բառը մէկ անգամ գտնում եմ գործածուած վանականի մէկ հատուածի մէջ. «Բուսանի ծառ ոսկեգոյն, ոսկեթել, տորմակերպ, այսինքն է խառնագոյն» (հրտր. Իսիքիոսի մեկն. Յոբայ. էջ խը)։

ՏՈՐՈՄԻԼ «հիւանդութիւնից մարմինը ուռչիլ» Ոսկ. մտթ. փիլիպ. եբր. որից նաև Սարգ. յկ. դ. էջ 38, Բ. պետր. դ, էջ 456 (բ. տպ.), Արծր. որից տորմեցուցանել «ուռեցնել կամ այտնուլ» Ոսկ. կողոս. 601.— սխալ գրչութեամբ պորոմիլ Պատմ. աղէքս. 175 (տե՛ս այս բառը)։

Տէրվ. Նախալ. 85 հնխ. tu «ուռիլ, ուռճանալ» արմատից. հմմտ. սանս. tumra «ուռճացեալ», tīv «պարարտանալ», լտ. tumere «ուռիլ», tumulus «բլուր», լիթ. tuinti «ուռիլ» և հյ. տուրն «բլուր»։ Հիւնք. բառամիլ բայից։ Karst, Յուշարձան 408 սումեր. tur «փոսուիթիւն»։

ՏՈՐՈՆ «ներկաբոյս՝ որ արտահանւում էր Հայաստանից. լտ. rubia» Բժշ. Գաղիան. աւում է նաև տորն, տորուն, տորուն, տոնիր, որից տորնուկ «վայրի տորոն, asperula tinctoria» ՀԲուս. § 2980, տորոն խոտ «gentiana asclepiadea» ՀԲուս. § 2982, Տիրացուեան, Contributo § 362. սխալ գրչութիւն է սարուն, որ ՀԲուս. § 2725 համարում է անծանօթ մի բոյս և որ Նորայր ՀԱ. 1923, 341 հաստատում է թէ տորոն բառից վրիպակ է։

ՀԲուս. § 2981 յիշեցնում է Տարօն դաւառի անունը—կապ ունի՞ն արևել. Բրբ. تارن taran «կաշեգործութեան մէջ գործածական մի արմատ», ինգ. toroniš «արմատ»։

ԳԻՒ.—Մշ. տորոն, Ախց. Գոր. տորօն, Խրբ. դորօն, Շմ. Սլմ. տորուն, Մրղ. տոռուն, Ղրբ. Մկ. Վն. տուրուն, Ագլ. տա՛րան, Ջղ. տոնիր, Երև. տո՛նիր։

Տորոսուք տե՛ս Տրոսուք։

Տորոփ տե՛ս Տրոփ։

*ՏՈՐՏ «գինու կամ քացախի չորացած մրուր». ունի միայն ՀԲ՝ առանց վկայութեան. նոյնը կրկնում է Թորոսեան, Տետրակ հմտ. բառարանի, էջ 29։

=Պրս. درد durd «մրուր, դիրտ», որ աւելի ընդարձակ տե՛ս դիրտ։

Ուղիղ մեկնեց Հիւնք.։

ՏՈՐՐ «տունկի ճիւղ, մանաւանդ խաղողի որթի թևերը» Պիտ. 466. որից տորրել «տունկի թևեր և ճիւղեր արձակելը» Նեղոս. տորրանոց «այգի» Համամ. քեր. տորրական Պիտ. առ լեհ.։ Ուրիշ է կարծրատորր Պիտ. 506, որ թէև ծառի համար է ասուած, բայց թուի թէ պէտք է կարդալ կարծրատարր, ինչպէս ունինք ողորկատարր Պիտ. 546՝ նոյնպէս ծառի համար ասուած։

ՆՀԲ լծ. տոռն «չուան» և յն. δόρυ «գաւազան, նիզակարուն»։

ՏՈՒԱԼԱՅ «անծանօթ մի բոյս» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2983։

ՏՈՒԱՂԼՈՒՔ. նիւթ՝ որ իբր դեղ յիշուած է սառը ջրից վնասուելու դէմ. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2984։

ՏՈՒԱՅՏ «նեղութիւն, տառապանք, չարչարանք, վիշտ» (առանձին չէ գործածուած, բայց նւագր. առ լեհ. կայ տուայտ «ջրգողեալ»). որից տուայտել «տառապիլ» Սիր. դ. 1. Սեբեր. 133. Ոսկ. հս. 419. տուայտանք «տառապանք» Ագաթ. տուայտութիւն Ոսկ. բ. Թես.։ (Նար լծ. մեկնում է «կարկամիլ, ցամաքիլ»)։

ՆՀԲ «հակառակն այտնելոյ կամ շուայտելոյ» (ուրիմն հանում է ա բացասականից և այտնուլ կամ շուայտ բառից)։ Հիւնք. շուայտ բառից։

*ՏՈՒԱՅՐ (ի հլ. ըստ ՆՀԲ) «վարձանք, փեսի տուած օժիտը հարսին» Ասող. դատ. էջ 9. Մխ. դտ. Մաշկ. ջահկ. Անսիզք էջ 21, 45, 47, 55. գրուած է տուառ Լմբ. օր. էջ 19, տըվար Լմբ. օր. 24։

=Ֆրանս. douaire *(կարդացւում է* duar *կամ* duer*) «այրիութեան ժամանակ ապրուելու համար ամուսնու տուած ինչքը իր կնոջ». ծագում է ժղ. լտ.* dotarium *բառից և այս էլ յառաջանում է լտ.* dos, dotis *«նուէր, օժիտ»,* doto *«օժտել» բառից, որի պարզ արմատն է* dō *«տալ» (=հյ.* տալ, տուր*): Ֆրանսերէնից է փոխառեալ նաև անգլ.* Dower *«այրութեան օժիտ»։*

Հներից Մխ. դտ. էջ 289 տալիս է արդէն ուղիղ բացատրութիւնը՝ փեսի կողմից աղջկայ հօրը տրուած օժիտի համար գրելով թէ «առ մահմետականսըն... կոչի մաճր, նոյն և այս առ հռովմայեցիսն տուայր կոչի»։ Նշր մեկնում է (հայերէնով ստուգաբանելով) «տուեալն յառնէ»։ Ուղիղ մեկնեց նախ Խալաթեան, Ծրագիր աղգագր. էջ 96։ Կոստանեան, Աղգ. հանդ. ժգ. 132 յն. δῶρεὰ *նոյնը նաև Ագոնց,* Арм. Юстин. *190,* Karst *Գաւառատն. II 104։ Սխալւում է* Pedersen, *Հայ. դր. լեզ. 197 դնելով բառս* տուար, տաւար *բառից։ Ուղիղ է* Meillet IF Anz. 22, 16: *Վերջին անգամ՝ նախորդներից անտեղեակ՝ Աճառ. Արարտ. 1910, էջ 178։*

+**ՏՈՒԱՐ** *«արջառ». առանձին աւանդուած չէ հնագոյն գրականութեան մէջ, բայց ունինք սրանից* տուարած *«տաւար արածացնելը» նւս. քր.* տուարածական *«հովիւ, խաշնարած» Երեմ. լա. 10, Ա. Թագ. ժէ. 20.* տուարածափակ *«մակաղատեղի» Ագաթ.* տուարածատափ *«արջառ արածացնելու տեղ» (նաև իբր տեղանուն Հայաստանում)։ Յետնաբար դարձած է* դուար *Փիլ. լին. Մագ. քեր. 239 և Երզն. քեր. (սխալմամբ գրուած* դուաչ*),* դովար *Մագ. Թղ. 86 (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 180), որից* դուարեճի *«ոչխարի կամ արջառի մորթ» Բէռդ. մայրագ. Արծր. նոր բարբառներում և արդի գրականում ասւում է* տաւար*։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* dīpəro- *«արջառ» բառից. սրա* dipró- *ձևից են յառաջանում հբգ.* zëbar *«գոհի անասուն», անգսք.* tīfer *«գոհ, գոհի անասուն», հանգլ.* tīber *«գոհ»,* tīberness *«գոհաբերութիւն», գոթ.* tibr *(սխալմամբ գրուած* aibr*) «գոհ, ձօն», մբգ.* ungezībere, unzīver, *նբգ.* Ungeziefer *«գոհի անարժան անասուն, մանրաճճի, վնասակար միջատներ», գւս.* zifer, gezifer *«հաւեղէն, այծ, խոզ». գերմանական բառի առաջին նշանակութիւնն էր «տաւար» (ինչպէս ցոյց է տալիս փոխառեալ հֆրանս.* toivre *«տաւար»), որ յետոյ զարգացմամբ «գոհի անասուն» և պարզապէս «գոհ, ձօն» իմաստին է հասած (*Walde 220, Boisacq 166, Pokorny 1, 765, Kluge 503):

Նշր յն. ταῦρος, *լտ.* taurus, *նբր.* ᵭor, *թրք.* եէվար, տաւար *ձևերի հետ։ Պատկ.* Изслед. *13 քրդ.* dau'ar, *լտ.* taurus: *Տէրվ.* Altarm. *43, երկրագունտ 1884, 53 և Նախալ. 114 ցոյլ բառի հետ, որ համարում է բուն հայաձև, կցում է սանս.* sthāurin *«գրաստ», զնդ.* staora, *գոթ.* stiur, *գերմ.* Stier, *յն.* ταῦρος, *լտ.* taurus, *հալ.* turŭ, *հպրուս.* tauris *«ցուլ»։ Հիմնք. զուարակ բառի հետ՝ աւազ ձևից է գնում. համեմատում է նաև թրք.* տաւար *(հայերէնից փոխառեալ) և յն.* ταῦρος *«ցուլ»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 197* տուայր *«օժիտ» բառի հետ՝* տալ *բայից (խնդրական է գտնում* Pokorny *1, 816)։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. *էջ 8—9, որ վարանում է ընդունել* Meillet IF Anz. 22, 16, *իսկ Բ. Խալաթեանց Հմ. 1908, 87 սխալ գտնելով՝ կցում է յն.* ταῦρος, *սանս.* ओक tavr *ևն ձևերին։* Karst, *Յուշարձան 403 սումեր.* dapara *«ձգ», 424 թրք. մոնղոլ.* davar, tavar, *բասկ.* abere *«արջառ»։*

Գիմ.—Ալշ. Ախց. Ագլ. Երև. Ղրբ. Մշ. Շմ. Ոզմ. Զղ. Սլմ. վն. Տփ. տաւար, *Խրբ. Ննխ. Սեբ. Սչ. Տիգ.* դաւար, *Մրզ.* տաւաո, *Մկ.* տաւար, *Հւր.* տօվար, *Հճ.* դաւօյ, *Համշ.* դըվար, *սհն.* դավ- rուն, *որոնք ընդհանրապէս նշանակում են «արջառ», միայն Ախց. «կով ու գոմէշ, ոչխար և այծ», Հճ. «այծի և ոչխարի հօտ», Սեբ. «ոչխար», Տիգ. «ձի» և Մրզ. «էշ»։—Նոր բառեր են* տաւարդող,

տաւարաւէր, տաւարածաւէր, սեաւաւար, տաւարակով:

*ՓՈԽ.— Այս բառը տարածուած է Միջին Ասիայից մինչև Հիւսիսային և արևելեան Եւրոպա, այսպէս 1) Ալթայական լեզուներից՝ արևել. Թրք. توار կամ طوار tavar, չաղաթ. داوار davar, օսմ. طوار ḍavar «արջառ, նախիր», գուռ. Թրք. Ախց. ṭavar «ոչխար», կումուկ. tuwar-et «կովի միս», tuwarčə «հովիւ», Կազանի Թաթ. təuar «գոյք, ինչք», توار tavar «մետաքսեղէն և ատլաս» (Будаговъ 1, 382), ույղուր. تاوار tavar «ինչք, ստացուածք», որից փոխառեալ է մոնղոլ. تاوار tavar «ինչք, հարստութիւն» (ըստ Pappe, Հննինդրագ. անձնական. չկայ «եղ, կով» նշանակութիւնը). 2) Մերձաւոր Արևելքի լեզուներից՝ քրդ. داوار davar, լազ. davari, tavari «արջառ», գնչ. ḍavari «ձի, անասուն», ն. ասոր. t'ävirt'ə «կով», Կովկասեան լեզուներով davar «արջառ, կով, նախիր». 3) Սլաւական լեզուներից՝ հսլ. tovarŭ «ապրանք, բիւ, ինչք», tovarinŭ «էշ», ուկր. tovar, tovaryš «տաւար, ինչք, ապրանք», հռուս. товаръ «ծրար, կարասիք», ռուս. товаръ «ապրանք», товарищъ «ընկեր» (նախ առևտուրի մէջ ընկեր իմաստից յառաջացած), նսլ. tovor «բիւ, ձիաբիւ», tovaruš, tovariš, tivariš, tovarih «հարստութիւն, ինչք», նսլով. stovoriti «գրաստով կրել տանիլ», սլովակ. tovaryš, սերբ. tovarac «ապրանք», tovary, tovar «ինչք, էշ», նսերբ. tovariš, tovarš, խրվատ. tovora, tovar «էշ», tovarica «էգ էշ», tovarac «իշուկ», բուլղար. tovar «բիւ», լհհ. towar, towarzysz «ինչք, ապրանք», որոնցից ռում. tovarŭ «ապրանք», tarnic «ձիաբիւ», tovaroš «ապրանք» և լիթ. tavora «ապրանք». 4) Ուգրո-ֆիննական լեզուներից՝ ֆիննական. tavara, լապ. davver, մորդվ. tavarj «ապրանք», հունգ. táras, tárnoc «խանութպան»: Այս ձևերի մեծագոյն մասը յիշում է Miklosich, Die Fremdwörter in den Slavischen Sprachen (Wien 1867) և Die Türkischen Elemente in den südost- u. osteuropäischen Sprachen (Wien 1889—90): Այս երկու աշխատութեանց մէջ էլ անուանի սլաւագէտը յիշեալ բառերը դնում է Թուրքականից փոխառեալ. (այսպէս նաև ЗВО 17, էջ XI). Սլաւականից անցել է Ուգրոֆիննացոց 3. Ք. մինչև 1000 թիւը (Les langues du monde, էջ 177). Թուրքական ձևերն էլ փոխառեալ են հայերէնից (մանրամասն տե՛ս Pedersen, Հայ. դր. լեզ. 197—8):

*ՏՈՒԲԻ «եգիպտական մի ամիս» Պտմ. աղէքս. 41. Խոր. գ. 62. սխալմամբ գրուած տուբիլ Պտմ. աղէքս. 186:

=Յն. τῦβι «եգիպտական մի ամիս, որ ըստ լատինացոց համապատասխանում է դեկտ-յնվ. ամիսներին»—Հիւբշ. 385:

Ուղիղ մեկնեցին նախ Վիսթոնեանք, Բրդմ. Խոր. էջ 315, դնելով իբր եգիպտական հինգերորդ ամիսը: Նոյնը St. Martin JAs. 2, 330, էմին Ист. Вард. էջ 47:

ՏՈՒԲՈՍ կամ ՏՈՒԲՈՒՍ «կենդանի ոչխարանման, երկակենցաղ, ձկնակեր յովկիանոսի». ունին միայն ՀՀՔ և Քաջունի, հտ. Գ. 238:

*ՏՈՒԳԱՆՔ տե՛ս Տոյժ:

ԳԻՒՐ.—Մկ. տօկ՝ումՔ՝ «տուգանք», Մշ. տօկնել «տուգանել»:

*ՏՈՒԳԱՏ (որ և տուկատ) «դրամի անուն». նորագիւտ բառ. Արձ. 1283 Թ. (Վիմ. տար. 124):

=Իտալ. ducato, ֆրանս. ducat, որ է 10—12 ֆրանկ արժողութեամբ ոսկեայ դրամ. այս դրամը առաջին անգամ տրպուած Վենետիկում ԺԳ դարում:

*ՏՈՒԼԱՊ «ջրի անիւ» Լծ. սահմ. 262. Յորժամ վասն երկնից շրջագայութեան առնու սկզբունս և բերէ ապացոյց զտուլապի շրջիլն:

=Պրս. دولاب dūlāb «ջուր հանելու համար գետի կամ ջրհորի վրայ շինուած անիւ». նոյնից է նաև Թրք. dolab և արաբ. dūlāb, յոգնակին davālīb: Ըստ իս նախնականը պարսկերէնն է, որ կազմուած է دول dūl «դոյլ» + āb «ջուր» բառերից—Ա՛ճ.

*ՏՈՒԽՆ կամ ՏՈՒԽ «մի տեսակ կորեկ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2985:

=Արաբ. دخن duxn «մի տեսակ կորեկ, որ աւելի սև ու մանր է» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 626)։—Աճ.

ՀԲուս. ասում է միայն թէ արաբ. է։ Վերի ձևով Աճառ. ՀԱ. 1908, 124։

*ՏՈՒԿ «դուքս» Վրք. Հց. ա. 704. Մագ. Թղ. 213. Միխ. ասոր. Ուռհ. Վրդն. պտմ. 98, 104. Շնորհ. առակ. Սամ. անեց. 120։ Հին տառադարձութեամբ դուկ Մագ. մեծ են. յոջ. Աբծր. Հրտր. Պատկ. 309. Արձն. ՆԹ=1033 թուից (տե՛ս Շողակաթ 180). որից տուկուրիւն Նեղ. դրքս. 28։

=Հֆրանս. duc հոմանիշից. նոյն են նաև ֆրանս. duc, իտալ. duca, սերբ. düka են; որոնք ծագում են բիւզ. յն. δούκαξ ձևից, այս էլ փոխառեալ է լտ. dux «դուքս» բառից, որ յառաջանում է duco, ducere «առաջնորդել» բայից և նշանակում է բուն «առաջնորդ»։ Լատինից է նաև հսաքս. heritogo «բանակի առաջնորդ կամ դուքս», որից հբգ. heri-zogo, գերմ. Herzog (տ. Walde 244, 248, Berneker 236): Ըստ որում հայ բառը աւանդուած է Կիլիկեան շրջանից էլ առաջ (Արծր. Մագ. Արձ. 1033. թուից), ուստի պէտք է ընդունել որ փոխառութիւնը նախ կատարուած է յոյներից, յետոյ եւրոպացոց ժամանակ կրկնուած։—Հիւրշ. 391։

ՀՀԲ և ՆՀԲ լտ. dux ձևից։

*ՏՈՒԿ «իլ». ունի միայն Բառ. երեմ. յաւել. Գէորգ գպրէ. էջ 561, որ և տուկ Վրդն. առ. 293։

=Պրս. دوگ dūk, dūg «մատման, իլ»։

Ուղիղ մեկնեց Մառ., Վրդ. առ. 1, էջ 90։

ԳԻՒ.— Մղր. դուգ, Ագլ. դիւգ'։

ՏՈՒԿԱՏ «տկար, վատուժ» Տօնակ. գրուած նաև տուզատ Առ որս.։

ՆՀԲ «իբր տոկատ, հատեալ ի տոկոյ» ԳԻՒ.—Ախց. տուկատ, Մշ. տօկադ «տըկար, վատուժ», Երև. տուկատ «առանին պաշարները վերջացած՝ աղքատիկ»։—Այս ձևերը ցոյց են տալիս որ հին հայերէնի կըրկին ձևերից ուղղագոյնն է տուկատ: Համատունի, Հայոց բառ ու բան 635 նոյնը գիտէ նաև «ԴՀ ձայնին պատկանող մի եղանակի անուն» նշանակութեամբ (Մանրուս.)։

*ՏՈՒՀԱ «ծխախոտ». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. 238։

=Արաբ. دخان duxān «ծխախոտ»։

Ուղիղ մեկնեց Քաջունի։

*ՏՈՒՂԱՍ «լուսապան մի խոտ. athamanta peucedanum» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2987։

=Արաբ. دوقس duqas, որ է լտ. daucus «ստեպղին, գազար». նկատի ունենալու է որ Դիոսկորիտէս daucus կոչումով հասկանում է athamantha cretensis L և peucedanum Cervaria Lap. բոյսերը, իսկ athamantha libanotis L բոյսը գւռ. ռուս. էլ կոչւում է полевая морква «դաշտային ստեպղին» (Анненковъ, Бот. бит. 123ա և 58ա)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

*ՏՈՒՂՈՒ, որ և տողուն, տուկօլ «շակակուլ, լեռան ստեպղինի հունտ» Բժշ. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 2986։ Նոյն բառերն են նաև դոկո, դատկոյ, դուկու, դաւկոս, դաւփոս Գաղիան. Կամրկ. Ամիրտ. (ըստ ՀԲուս. § 595, 601, Բառ. երեմ. յաւել. 566, Նորայր ՀԱ. 1923, 61)։

=Արաբ. دوقو կամ دوقوا dūqū «վայրի ստեպղինի սերմ» (տե՛ս Steinschneider WZKM 12, 84), որ յառաջացած է յն. δαῦκος «ստեպղին» բառից, որից նաև լտ. daucus, daucum «գազար»։ Առաջիններդ ծագած են արաբերէնից, վերջիններդ յունարէնից. իսկ տուկօլ ձևն էլ արաբ. دوقوا dūqū կարդալով սխալմամբ دوقول dūqol: Համմտ. նաև տուղաս:—Աճ.

Նորայր, անդ, յն. և լտ. ձևերի հետ։

ՏՈՒՂՏ «մի տեսակ ծաղիկ և նրա բոյսը. լտ. althaea pallida WK» (ըստ Տիրացուեան, Contributo § 329. աւելի մանրամասն տե՛ս Seidel § 163) Գաղիան. Բժշ. Վստկ. 38, 108, ասւում է նաև տեղտ՝ ըստ ՀԲուս. § 2988. որից տուղտենկուլ կամ տղտենկուլ «տուղտ» Կամրկ. (կազմուած հյ. տուղտ + պրս. گل gul «վարդ» բառերից, իբր տճկ. gül-hatemi հոմանիշից Թրգմ.), տղտորիկ «դեղին տուղտ, լտ. abutilon». երկուսն էլ

ունի ՀԲուս. § 2968—9. վերջինը յիշում է նաև Նորայր, Բառ. ֆր. էջ 9 բ, իբր գռ. բառ։

Հիւնք. բոպր բառից։ Դաբամաճեան բառարան դնում է պրս. ﺗﻮﻟﻪ tula «մոլոշ», որ սակայն թէ՛ ձևով և թէ նշանակութեամբ անյարմար է։

ԳԻՒ.—Կր. Մկ. վն. տուղտ, Ջղ. Տփ. տուխտ, Երև. տուղդ, Ալշ. տուղդ, տեղդ, Զթ. Ննխ. դուղդ. Ագլ. տօխտ, Բլ. Սլմ. վն. տեղտ, Մշ. տեղդ, Խրբ. դէղդ։ (Տիրացուեան ունի նաև տիղտ ձևը. իսկ Սվեդ. դիւխդ նշ. «խաղողի սարփինայ»)։

ՓՈՒ.—Վրաց. ტუხტი տուխտի «mauve rose, althée ordinaire», ხეტუხტი խետուխտի «мольва, просвирнякъ»։

***ՏՈՒՂՐԱՅ**, *ի հլ. «Թրքական արքունի նշանագիր վինանշան» Վրդն. պտմ. էջ 104 (Հրատ. էմ. 139 ունի տուրղայիւ), Օրբել. Հրատ. էմ. 251, 287 (տուղրայիւ)։*

=Թրք. ﻃﻐﺮﺍ tuγra, գռ. tura, ՊՊր. ﻃﻐﺮﻯ tuγri «Սուլթանի փակագիր ստորագրութիւնը, որ պաճուճուելով զարդարուելով դարձել է Օսմանեան վինանշանը»։—Հիւբշ. 277։

Ուղիղ մեկնեց նախ S. Martin, Mém. sur l'Arménie, հտ. Բ (1819), էջ 253։ ՆՀԲ «բառ ոմկ. դուղրա, բուրա»։ Ուղիղ է և Հիւբշ. ZDMG 36 (1882), էջ 132.

+ՏՈՒՆ (տան, տամբ, տանց, տամբք) *«տուն կամ ուրիշ շինութիւն, ինչ. տաղաւար, պալատ, ապարանք, եկեղեցի ևն», նաև սենեակ, վրան, տան բնակիչները, ազգատոհմ, ցեղ, փխբ. «տոհմաւորի տուն» ՍԳր. Ոսկ. Եւս. պտմ. «տան յարկ» Եփր. աւետ. 324 (ի վերնում տան «վերի յարկում»). նշանակում է նաև «երկիր, աշխարհ». Համմտ. Անգեղտուն կամ Բուզանդի Հետևեալ հատուածները. «Զմեծ տունն յԱտրպատականն աշխարհին. Զեռն իշխանութեան տանն Հայոց Թագաւորին, որ էր վԱտրպատականն աշխարհաւն. Զտուն Թագաւորին Հայոց որ յԱտրպատականին էր». մհյ. աղաւնեաց տունն «Ագռաւանք» Մխ. բժշ. 79. Վրացում, Պարսկացում Դրնդ. 517, 518, 504. Համմտ. ասոր. beθ «տուն և աշխարհ». ինչ. d-bēθā d-Ostān «Աշխարհին Ոստանայ», bēθ Moksāyē «Աշխարհ Մոկաց», ինչպէս նաև Կովկասի հայոց գործածած Վրաստուն, Պարսկաստուն, Հայաստուն, Տանկաստուն ձևերը փխ. Վրաստան ևն (տե՛ս Հիւբշ. Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 64)։ Յետնաբար բստացել է «կին» նշանակութիւնը. Համմտ. Տաթև. ամ. 197—8. «Առանց կնոջ՝ աւեր է տունն. և տան շինութիւն՝ կինն է. և գարձեալ՝ որ տուն քաղաք և գաւառ և տուն՝ կինն է... զայս սովորութիւն կալան այժմ և կոչեն զկինն տուն. Տուն ունի՞ս. Տուն առնա՞լ ես»։—Ածանցման մէջ մտնում է երեք ձևով.* **1. Տուն**, *ինչ. մեծատուն ՍԳր. Սեբեր. անտուն Ոսկ. ես. ամերատուն Երեմ. լզ. 22. գետնատուն Վեցօր. սայլատուն Ոսկ. բ. կոր. ժե. կրակատուն Եղիշ. միջնատուն Ծն. գ. 16. ներքնատուն ՍԳր. Եւս. պտմ. սակատատուն Եւթագ. 170. վերնատուն ՍԳր. վաշկատուն Բուզ. գ. 7. թոխատուն Վստկ. տրնտեսատուն (Նորագիւտ բառ) Հայկ. 239. զանգակատուն Յիշատ. ևն։* **2. Տն.** *ինչ տնանկ ՍԳր. տնակից Ոսկ. ես. տնակալ Եզն. տնաշէն Ոսկ. ես. միատնութիւն Ագաթ. տնտես ՍԳր. տնիկ Վկ. շուշ. 15, 26 (ներդ. ի տնկանն), տառնին ՍԳր. Փարպ. տնային, տնտեսագէտ, տնտեսագիտութիւն ևն (նոր բառեր).* **3. Տան**, *ինչ. տանուտէր ՍԳր. տանիք ՍԳր. Եւս. պտմ. տանեսատան «տանիք» Եւս. պտմ. 159. տաներես Դր. տղ. բնատանի ՍԳր. աներնատանի Եզն.։*

*=Բնիկ հայ բառ՝ հնխ. dōm- ձևից. ժառանգներից համմտ. սանս. dam- (dámpatiš «տանուտէր», բարդի մէջ), սեռ. dán- (patir dan «տէր» ձևի մէջ), dáma-, māna- «տուն», գնդ. nmāna- «տուն, բնակարան» (փխ. dmāna-, ինչպէս կայ հին գնդ. dəmāna), dam- «տուն» (ներդ. dąm, սեռ. deng), բուշ. tanāpate «տանուտէր», յն. δῶ, δῶμα «տուն», δόμος «տուն, բնակարան», δεσ- (սեռ. *δεσν., որից δεσπότης <հնխ. dem-spotis «տանուտէր, տէր»), ἔν-δον «ի տան», δό-μος «տան յատակ», լտ. domus, հսլ. domŭ, սուս. домъ, սերբ. dȍm, չհնխ. dŭm, լհհ. dom, գնչ. tan «տուն», լիթ. dim-*

stis *«բակ, ինչք» ևն, որոնք ծագում են հնխ.* domo, domu-, dom-, dem-, dm̥-, dm- *ձևերից։ Այս բառերը յառաջացած են հնխ.* dem-, demā- *«շինել, կառուցել» արմատից, որ հայերէնի մէջ չէ պահուած, բայց նրա ժառանգներն են յն.* δέμω, *գոթ.* timrjan, *հոլլ.* timmeren, *հրգ.* zimberen *գերմ.* zimmern *«շինել», հիսլ.* timbr, *հրգ.* zimbar *«շինափայտ», նրգ.* Zimmer *«սենեակ» ևն։ Իսկ այս հնխ.* dem-, demā- *«շինել, կառուցել» արմատն էլ համարւում է ածած՝ պարզական* dē- *«կապել» արմատից, որի ժառանգը է հյ.* տի *«կապ»* (Pokorny 1, 787, Walde 241, Trautmann 44, Berneker 210—211, Boisacq 195, Kluge 544)։ *Լիթ. դարձել է բառս՝ նախաձայնի փոփոխութեամբ (որի պատճառը յայտնի չէ)* nāmas, *սովորաբար յգ. գործածութեամբ* namaĩ, *ճիշտ ինչպէս այժմ՝ երև. տներ՝ փոխանակ* տուն։ *Հյ.* տուն *յառաջանում է հնխ.* dōm *ձևից, սակայն* domu- *ձևն էլ պահուած է տանուտէր բառի մէջ (տե՛ս* Ernout-Meillet 271)։ —*Հիւբշ. 498։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Klaproth, Asia pol. 101, *որ կցում է լտ.* domus *և հսլ.* domŭ *ձևերին։ Նշի լծ. լտ.* dómus, *ի յն.* δόμος, *որ և* տանիք։ Windisch. *12 «անշուշտ կապ ունի լտ.* domus *բառի հետ»։* Böttich. ZDMG 1850, 363, Arica 52, 21, Lag. Urgesch. 910 *վիդ.* tuna(?): Müller SWAW 38, 571 *և 594, որից էլ* Justi, Zendsp. *155 դնդ.* dāman, *սնս.* dhāman *«արարած» ևն։ Հիւբշ.* KZ *23, 18 սանս.* dhāman *կամ* dama, *յն.* δόμος? Pictet *2, 242 հիսլ.* dunadh *«տուն», դրեակ»,* dunaim *«փակել, շրջապատել»։ Տէրվ.* Altarm. *20* տուն, *սեռ.* տան <*տաւան <*տաման, *իբր սանս.* dama, *յն.* δόμος, *լտ.* domus։ *Նոյն, Նախալ. 86, 99* տուն <*տումն = *յն. և լտ. ձևերը։ Մորթման* ZDMG 26, 526 *և 535 բևեռ.* dani, dun *«տուն»։ Նոյն, բևեռաձև արձանագր. Մորթմանայ, Թրգմ. Ագաթանգ. էջ 48 բևեռ.* danimi = տան *իմոյ.* burgadun = բուրգ+տուն։ *Հիւբշ. Arm. Stud. § 277 համեմատում է ծանօթ ձևերի հետ.* տուն *դնում է* <*տուվն <*տումն, *իսկ սեռ.* տան <*տուաւն <*տմաւն, *հմմտ. հին զնդ.* dmāna-: Bugge, Etr. u. Arm. *էջ 27 նոր.* lavtn *մեկնում է հյ.* լաւ տուն *«աղնուական ընտանիք», էջ 112* intem- = ընտանի *և* Lyk. Stud. *1, 84 լիւդ.* tuhes *«ազգականներ»։ Հիւնք. յն.* δόμος, δῶμα; Karst, *Յուշարձան 407* տանիք *կցում է սումեր.* tan *«բարձր»,* didim *«նստեցնել»,* du *«գագաթ», իսկ 424 Թրք.* dam *«կտուր» բառերին։ Պատահական նմանութիւն ունի չին.* tien *«տուն»։— Տէրոյենց, Երևակ 1865, թ. 63, «ոտանաւորի տուն» նշանակութիւնը սխալ թարգմանութիւն է կարծում պրս. խանեա «հրգ» բառից, որ գալիս է օր. խանտէն «կարդալ, երգել» բայից, բայց կարծուել է խանէ «տուն» բառից։*

Գիմ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Զղ. Սլմ. Վն. Տփ. տուն, *Զթ. Խրբ. Հճ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* դուն, *Ագլ.* տուն, տօն, *Գոր. Ղրբ.* տօն, *Ակն.Ասլ. Պրտ.* դիւն, *Սվեդ.* դօն, *Անտ.* դէ՝օն.—Տանիք *դարձել է Տիգ.* դոնիք, դէնիր, *սեռ.* դէնդրի, *Մրղ.* տինիս, *Վն.* տանիս, *Խրբ.* դէնէր, *սեռ.* դէյրի, *բց.* դէյրէ, *Հճ.* դէնեյ, *Զթ.* դինեյ, դիներ։—*Նոր բառեր են* տունաւորիչ, տունփակիչ, տունդուրս, տունդրի, տունտնախաղող, տունտնովի, տունտունակ. տաներէց, տանտուն, տափտուն, տանցի, տնագլուխ, տնագործ, տնաքիսի, տնածախ, տնակոլ, տնասիան, տնահատան, տնամէջ, տնավարի, տրնատեղ, տնատէր, տնարար, տնաւեր, տնաւորիլ, տնկից, տնմնայ, տնուրիկ։—*Թրքախօս Հայերից ունինք Ատն.* տնանկ *«աղքատ, տնանկ»։*

Փոխ.—Վրաց. ტანუტერი տանուտեր *«նոյն նշ». (տե՛ս Մառ,* ИАН *1911, էջ 1299)։* ტანოტრობა տանուտրոբա *(ուղղել* տանուտրոբա*) «ժամանակ տանուտէրութեան», նշ.* ტანტრო սատանտրո *«տանուտէր» (Մառ* ИАН *1911, 220), Բուլանըխի մօտ Հասան-*

Կորանի քրդերն ունին տնշէնօ «տնաշէն» *(ըստ Միրախորեան, Նկարագր. ուղևոր. Գ. 96).*—Pedersen, *Հայ. դր. լեզ. 199 սմմ.* dam «տանիք» դնում է հյ. տուն *բառին խնամի կորած մի ձևից (անհաւանական).*— *արդեօք հյ. գւռ. մի բարդ ձևի՞ց է փոխառեալ արաբ.* قِيطُون qīṭūn «գանձատուն, մառան» *(Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 690), որ արաբական արմատներով չի մեկնւում. համմտ. հյ.* գինետուն:

ՏՈՒՆԿ, ո հլ. «ծառ, բոյս» *ՍԳր. Եւս. քր. (նոր գրականում միայն «փոքրիկ և մատղաշ ծառ»), «տնկելու գործողութիւնը (այդու համար ասուած)» Մխ. ա. 6. Դ. Թագ. ԺԹ. 29. «խաղողի որթ» Բժշ. (վերջին նշանակութիւնը ունին ՀԲուս. § 2991 և Նորայր ՀԱ 1923, 347)։ Գրուած է նաև* տունգ: *Սրանից* տնկել *կամ* տնգել «ծառ տնկել, սերմանել, ցանել, 2. որևէ բան հաստատել, կարգել» *ՍԳր. Եփր. Եր. Եւս. քր. Եզն.* տնկաբեր *Ագաթ.* տնկակից *Հռ. ղ. 5. Գ. Մկ. գ. 15.* տնկարկ *Վեցօր.* նորատունկ *ՍԳր. Վեցօր. մատաղատունկ ՍԳր. Եւս. քր. Ոսկ.* տնկածոյ «տնկուած» *Սեբեոս. ԺԳ.* ծառատունկ *ՍԳր.* մանրատունկ *Եզնկ. ԺԷ. 5.* մարդատունկ *Ագաթ. Եփր. պհ. 170.* որթատունկ *Մծբ.* կենդանատունկ *Նիւս. բն.* տնկաղ *(իբր տունկի աղ)* «potasse, kali» *(նորակերտ բառ)։*

ՆՀԲ Թրք. տիքմէք «տնկել, կանգնեցնել», տիք «կանգուն», *հյ.* տէգ: Lag. Urgesch. 327 *սանս.* tunga «բարձր» (tuj *արմատից)։ Հիւնք.* տուն *բառից։*

ԳԻՒ.—Մշ. Տփ. տունգ, *Երև.* տնգի.—*Ալշ. Մշ. Զղ. Սլմ.* տնգել, *Ախց. Կր.* տնկէլ, *Գոր. Երև. Ղրբ. Մրզ.* տնգէլ, *Վն.* տնգ՝ել, *Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* դնգել, *Ասլ.* դնէգ՝լ, *Ագլ. Շմ. Տփ.* տնգիլ, *Մկ.* տնգ՝իլ, *Խրբ. Սվեդ.* դնգիլ, *Զթ.* դր՝նգիլ, *Հճ.* դոնգել, *Համշ.* դրնգուշ:—*Ղզ.* ծառ ու տրինգ «ծառ ու տունկեր՝ *որ նոր պիտի տնկեն»*— *Նոր բառեր են* տնկման, տնկոց, տնկուկ, տնկոտել:

ՓՈԽ.—Վրաց. ტუკი *տուկի «որթի մատաղ ճիւղ» (համմտ.* տունկ *բառի երկրորդ և երրորդ նշանակութիւնները), չաղաթայ.* تونك tong «թուփ» (Будаговъ, Срав. слов. *1, 402)*։

***ՏՈՒՊԼ** «կրկինը, երկու անգամ» *Անսիզք 83. Սմբ. դատ. 35, 76, որից* տպլել «կրկնել» *Սմբ. դատ. 71։*

=*Ֆրանս.* double *նոյն նշ.։*

Ուղիղ մեկնեց Անսիզքի հրատ. 82։

ՏՈՒՒ «անծանօթ մի բո՞յս» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2992։*

Տոռայճ *տե՛ս Դուռէճ։*

ՏՈՒՈՒՆ «շեղջ, դէզ» *Ոսկ. մ. բ. 19, էջ 649 և Ոսկ. մտթ. ղ (կրկնութեամբ). ուրիշ վկայութիւն չկայ։*

ՆՀԲ լծ. յն. σωρός «դէզ»։ *Տէրվ. Նախալ. 85 հնխ.* tu «ուռչիլ» *արմատից. համմտ. հյ.* տոռոմել, *սանս.* tumra «ուռճացեալ», tīv «պարարտանալ», *լտ.* tumere «ուռչիլ», tumulus «բլուր», *լիթ.* tuinti «ուռիլ»։ Karst, *Յուշարձան 408 սումեր.* tur «բարձրութիւն, ծայր»։ Macler REA 1, 270 տուր նա *ձևից!!*

ՏՈՒՍՈԱԿ «գրատակ, զգեստ, փշերք». *այսպէս ունի միայն Բառ. հրեմ. էջ 314. Թուի թէ պէտք է կարդալ* տուռսակ, *ըստ որում բառաշարքի մէջ յաջորդում է* տուռն *բառին։*

***ՏՈՒՏ** «ոստ, ճիւղ». *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Գնձ. «Վասն որոյ տուտօք ղյաղթանակ զառաջաբան չարչարանաց քոց օրհնեմք»։ ՆՀԲ կասկածում է թէ պիտի ուղղել* ռատօ՛. *ՋՔ չունի. բայց յամենայն դէպս* տուտօ՛ *դործիականի դէմ պէտք էր դնել ուղ. *տոյտ և ոչ *տուտ։*

=*Վրաց.* ტოტი տոտի «ծառի ճիւղ». *Ջուբինով[2] 1225 նշանակում է բառս նաև «գետի ճիւղ, վարտիքի ծայրերը» իմաստով և բոլորը միասին դնում է հայերէնից փոխառութիւն։ Կարծում եմ որ պէտք է բաժանել իրարից վրաց.* տոտի «ծառի կամ գետի ճիւղ», *որից փոխառեալ է հյ.* տուտ «ճիւղ» *և վրաց.* տոտի «վարտիքի ծայրը», *որ փոխառեալ է հյ.* տուտն *բառից։ (Ջուբինով՝ անդ դարձեալ սրանց հետ է դնում վրաց.* տոտի «թաթ», *որ սոյն երկուսից բոլորովին տարբեր է և պէտք է դնել հյ.* տոտ, տոտիկ *ձևից)։—Ա՛ճ.*

+ՏՈՒՏՆ, ն հլ. (սեռ. տատն) կամ ՏՏՈՒՆ, ո հլ. «մի բանի ծայրը կամ վերջը, ապի, պոչ» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. ես. «շորի՝ զգեստի ծայր, քղանցք» ՍԳր. «փայտի ծայրը» Անկ. գիրք նոր կտ. 192. որից ոսկետուն Ես. դ. 23. վիշապատուն Խոր. աշխ. տանատուր Եւս. քր. տատղեղն «մի տեսակ թռչուն՝ հաւանաբար ագիղնաձև պոչով» Լաստ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dud- ձևից, որ պահուած է միայն գերմանական լեզուների մէջ. հմմտ. նիսլ. toti «մռութ», tota «ծայր, քիթ (կօշիկի)», նորվ. գւռ. tota «կտուցի պէս դուրս ցցուած բան», գերմ. tote «ծայր, ծիծ», մանզլ. tote «ծայր». այս ձևերը ենթադրում են նախագերմանական *tutan-։

Հիմնք. դուն «քիչ» բառից։ Աճառ. ՀԱ 1908, 122 և Արրատ. թ. 1911, էջ 417 գնում է խալդեան շրջանի բառ՝ ցեղակից տակի կովկասեան ձևերին, որոնցից փոխառեալ է։ Սագրգեան ՀԱ 1909, 335 և Karst Յուշարձան 408 սումեր. tidnu «յետոյք»։ Վերի մեկնութիւնը տուաւ Petersson, Ar. u. Arm. Stud. 100։

Գիւմ.—Տփ. տուտ «պոչ» (միայն ձկան), Ագլ. Երև. Ջղ. տուտ, Ղրբ. տօ՛տնր «ծայր», Մշ. տուդ «կամուրջի տակի քարէ սիւները», Մկ. Շտ. տուտ «կամուրջի կամարը»։

Փոխ.—Վրաց. ტოტო տոտի «վարտիքի ծայրերը», մինգ. dudi «գլուխ», t'udo «ծայր, վերջ», վար. dudi «ծայր, վերջ», լազ. dudi «գագաթ, ծայր (սկիզբ կամ վերջ)» (օր. uǰiši dudi «ականջի ծայրը»), dude «տակ», dudele «տակը», tude, tudele, ttuže «տակը, վար, վարը», ududi «անվերջ»։—Հյ. գաւառականների մէջ ունինք նաև Տփ. տուտ «գետի ճիւղ» և տուտ «կորուած ծառի վրայ ձգուած ոստ. ֆր. gaulis» (ըստ Նուպարեան, Բառ. ֆրանս. էջ 468)։ Առաջինը փոխառեալ է վրաց. ტოტო տոտի «գետի ճիւղ» բառից (տե՛ս վերը տուտ «ոստ»), երկրորդը (եթէ ստոյգ է) պէտք է հասկանալ «ճիւղերի ծայրերը կամ տուտերը՝ որոնք մնում են ծառի վրայ»։

Տուր տե՛ս Տալ։

ՏՈՒՐ «հիւանդութեան ժամանակ բաղցած մնալը, բան չուտելը». նորագիւտ բառ, որ ունի Մխ. Բժշ. 118. «եւ ապա հետ այտոր ընդ ցորեկոյ տո՛ւր կենալ, զի խիստ օգտէ այս ջերմանս» (Seidel էջ 85 թարգմանում է Hinterher lässest du tagsüber nichts geniessen)։

Ուղիղ մեկնեց Seidel § 318։

Տուրժ տե՛ս Տոյժ։

*ՏՈՒՐԿԱՆ «պատգամաւոր», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած կղնկտ. հրտր. Շահն. Ա. էջ 251. Տուրկանն դարձաւ յաշխարհ իւր (հրտր. էմ. էջ 112 պակաս է այս տողը)։

=Պրս. ترگان turγān «ուղեցոյց, ռահվիրայ». գտնում է թէ թաթարական ծագում ունի։—Աճ.

Շահնազարեան (անդ) յատուկ անուն է կարծել։ Վերի մեկնութիւնս տե՛ս իմ Նոր բառեր հին մատ. Ա. էջ 36։

ՏՈՒՐՄ «շոկոլատ». գիտէ նախ Նորայր, Բառ. ֆրանս. 240 ա, որից Քաջունի, հտ. Գ. 238, Կոյլաւ, Բառ. գերմ. էջ 391 բ, Տիրոյեան, Հանրագրութ. 624. անշուշտ նորահնար բառ է, բայց իՙնչ աղբիւրից է հանուած։

Տուրտիճ տե՛ս Դիրտ։

ՏՈՒՓ, ո հլ. «փոքրիկ պահարան, մանաւանդ խունկի աման» ՍԳր. Գնձ. Տաղ. «արկղիկ, գզրոց» Յայսմ. Տօնաց. «գրքի պատեանն» Վրք. Հց. «աղիւսակի իւրաքանչիւր խորշը» Տոմար. Կանոն. որից նաղարդատուփ Կանոն. ոսկետուփ Վրք. Հց. Օրրհլ. մասնատուփ, խունկատուփ (նոր բառեր)։

Ջուրինով (նաև բ տպ. էջ 1229) կը գտնում է վրաց. ტუფი տուփի «ակօս, ածու», բայց ի՛նչ նմանութիւն իմաստի։ Հինք. համառօտուած տապան բառից. հմմտ. նաև պրս. թիւպուխ «փայտէ գոգաւոր աման»։ Պատահական նմանութիւն ունին հբր. תֵּבָה tēbā և խալդ. taibe «արկղ»։

Գիւմ.—Ջղ. դուփ. նոր բառ է Մշ. մասնատուփ «հաղորդի մասնատուփ»։

Տուր տե՛ս Տուկ։

*ՏՈՓԱՅ «լաստ». նորագիւտ բառ, որ

մէկ անգամ ունի Նորագիւտ բ. մնաց. բ. 16. «Եւ մեք հարցուք զփայտ ի Լիբանան լեռնէ բստ ամենայն պիտոյից քոց և բերցուք զնա ի տոփայս ընդ ծով» (միւս Թրգմ. և հբր. «լաստս»)։ *Նոյն իմաստով ունինք տուփ Առաք. պտմ. 30, 31. (Նաւ կամ տուփ, որով անցցին զգետն... յոլով տուփ շինեցին. Կաւեալ դիզերս նաւացն և ոմանք զտփոցն)։*

=*Ասոր.* ṭaupā «տկալաստ», որ ծագում է ասոր. ṭap «նաւել, լողալ, հեղեղել» արմատից. *Համմտ. նաև* ṭaupānā «ջրհեղեղ», ṭaupā «լողդ, նաւագնացութիւն, հեղեղում» *ևն* (Brockelm. Lex. syr. 131)։ *Ասորի բառի հետ նոյն է արաբ.* ṭauf «նեփրատի վրայ բանող տկալաստ, քելեք» (Կամուս, Թրք. Թրգմ. *Բ. 804*)։ *Ասորի ձևը տալիս է հյ.* տափայ, *իսկ արաբ. ձևը յետին հյ.* տուփ, *որ տե՛ս և գտ.։*

Նորագիւտ բառս գտաւ ու բացատրեց Աճառ. Հյ. նոր բառեր Մնաց. գրոց մէջ, էջ 33, որ կարծում է թէ կարող է կապ ունենալ տուփ *բառի հետ. իսկ Թրք.* duba «լաստ» *առատաւէրն հայերէնից է փոխառեալ։ Ուղիղ մեկնեց Վարդանեան ՀԱ 1914, 743, որից անկախաբար՝ վերի ձևով Աճառ.։*

ԳԻՒ.—Ախք. Տփ. տօփ, *Բլ.* դ'ուփ «գերաններով շինուած լաստ» (*նոյնը ունին նաև Երև. Մշ. Սլմ. բստ Ամատունի, Հայոց բառ ու բան 636, Ղզ.* տօփ «փոխադրելու համար կապուած ու գետը ձգուած գերաններ» (*նշանակութեան զարգացման համար համմտ.* ափանդ «լաստ» և արադ «նոյնպիսի գերան»). *կայ և* տուփիլ «մի բան ջրի վրայից ծփալով լողալով գալ» (Կոյլաւ, Բառ. գեր. anschwimmen). *բայց այս ձևերը ո՛չ տափայ բառի շարունակութիւնն են և ո՛չ էլ* տուփ-*ի, այլ նոր փոխառութիւն արաբերէնից։*

+ՏՈՓԵԼ «ծեծել, սպիտակեղէնը լուալով մաքրելու համար փայտով ծեծել» *Եւս. պտմ. «ոտքերով կոխոտել» Երզն. լս. (Ներբ. յորդ. 29). որից* տոփան «լուացքը ծեծելու փայտ» *Եւս. պտմ. 130.* տոփիչ «նոյն նշ». *Գէ. հս. Յայտմ. յուլ. 21.* տոփիւն «ծեծ՝ կոփոց տալու ձայն» *ԱԲ. գրուած է* տփել *Յայտմ. հոկտ. 23։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* doph- *ձևից. այս արմատի* deph- *ձևից են՝ յն.* δέφω «ձեռնահարելով կակղացնել», δέψα (s-ով աճած), «կակղել, կաշին աղաղել», δέψα «աղաղած կաշի», լտ. depsō *(յունարէնից փոխառեալ). «կաշին աղաղել», սերբ.* dẽpam, dépati «զարնել, հարուածել», dẽpiti, dẽpnuti «զարնել» (Pokorny 1, 786, Berneker 246)։ *Արմատը անշուշտ բնաձայն է, որի մի այլ ձևն է ցոյց տալիս հնխ.* deup- «խուլ հարուածի ձայնս», *որից յն.* δοῦπος «խուլ ձայն, ոտքի դոփիւն», δουπέω «ընկնելուց կամ հարուածից խուլ ձայն դուրս գալ», *սերբ.* dûpīm, dûpiti «շռնդալից զարնել», *սլովէն.* dûpam «դաւարկ բանի վրայ բաղխել», *ուկր.* dubaty «ոտքերով զարնել», *լեթթ.* dupêtiẽs «խուլ ձայն հանել» (Pokorny 1, 781, Ernout-Meillet 251, Berneker 238)։

Տէրվ. Altarm. *41 յն.* τύπτειν «ծեծել» *բառի հետ։ Թիրեաքեան ՀԱ 1912, 288 նոյն ընդ* թոպել, տափել։ *Ուղիղ մեկնեց* Petersson. KZ *47, 285։ Պատահական նմանութիւն ունին վրաց.* տարուցի «տոփան», տուփվա «ջրի մէջ տոփել»։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Ղրբ. Վն. տփել, տփէլ, *Մկ.* տփիլ, *Սեբ.* դփէլ, *Ախց.* դ'փէլ «ծեծել», *Մշ.* տօփան «փայտէ թակ՝ կտուրը հարթելու համար», տօփնել «նոյն թակով կտուրը հարթել»։

ՏՈՔՍԱԿԱՆ «թունաւոր». մէկ անգամ դեղ բառի հետ գործածուած ունի Պտմ. աղէքս. 172 (տպ. բոխսական ՆՀԲ ունի տոխսական)։

=*Յն.* τοξικόν «նետերը թունաւորելու համար թոյն». բուն նշանակում է «նետի կամ աղեղի չարմար» (*ծագում է* τόξον «նետ, աղեղ, ծիածան» *բառից). օր.* τοξικὸς κάλαμος «նետի եղեգ», *յետոյ* τοξικὸν φάρμακον «նետի դեղ կամ թոյն», *որից գոյականաբար* τοξικόν «թոյն»։ *Սրանից Ֆր.* toxique *(ընդհանուր անուն թոյնների)։ Հայերէնի մէջ* -ικο,

վերջաւորութիւնը թարգմանուած է -ական մասնիկով։—Հիւբշ. էջ 385։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՏՊԱԶԻՈՆ (կամ տպազիովն) (ի, ի-ս հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան. յետնաբար գտնում եմ գրծ. տպազիոնաւ Եփր. յհ. մկ. 133) «մի տեսակ ազնիւ քար» ՍԳր. նչ. եղեկ. լմբ. յայտ. Արծր. համաոտուած տպազ ձևն ունի ստէպ Գնձ. որից տպազիոնափայլ Մ. մաշտ. 24ա։

=Յն. τοπάζιον, որից փոխառեալ են նաև լտ. topazium, գերմ. Topas, տճկ. tobaj են համանիշները։—Յոյն բառի ծագումն անյայտ է։—Հիւբշ. 385։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՏՌԱՅ. նորագիւտ բառ՝ անյայտ իմաստով. մէկ անգամ ունի Սմբ. դատ. 163. Խրատեն զիրենք ի տռայն (այլ ձ. դոչն). (խօսքը յանցաւորի մէկ որևէ անդամը ի պատիժ խեղելու մասին է)։

ՏՌԱՌ «ծաղրածու կամ խաբեբայ». Վրդ. առկ. 50—51 (չորս անգամ գործածուած). «աւազակ» Տաղ. (վկայութիւնը տե՛ս բրոչն)։

=Նոյն է վրաց. ტრალო տրալի «խոշոր աւազակ» բառի հետ. բայց յայտնի չէ թէ ի՞նչ է սրանց կապը։—Ա.Ճ.

ԳԻՒ.—Տոալ ձևով է և նշանակում է վն. «գող, աւազակ», 2. «թագաւոր», 3. Բլ. Մշ. վն. «ծոյլ, պղերգ», որից և տոալնալ «ծուլանալ», տոալցնել «ծուլացնել» (երկուսն էլ ունի Rivol՝)։ Բլ. ձևն է տոռոալ «ծոյլ, դանդաղ, աշխատիլ չուզող, որ Ս. Մովսիսեան (նամակ 1913 մարտ) քրդ. է կարծում։

*ՏՌԻԲՈՒՆ, «հռետորի հանդերձ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Սոկր. 668 Ձմիայնականն վարս ճգնելով, տռիբունս ազանել ոչ յօժարէր։

=Յն. τρίβων բառից. այս բառը ծագում է τρίβω «շփել, մաշել, գործածել» բայից և նշանակում է նախ «ամէն օրւայ գործածելիք կամ դրսի (հագուստ)», յետոյ «կոշտ վերարկու (գիւղացու, աղքատի, Սպարտացիների)», ապա յետոյ «Սոկրատի վերարկուն կամ փիլիսոփաների և յատկապէս շնականների վ արկուն»։

Ուղիղ մեկնեց Մ. վ. Տէր-Մովսէսեան, Հրտր. Սոկրատի, էջ 668։

*ՏՌԻԿԼԻՆԱՐ «թագաւորական պալատի սեղանապետ». մէկ անգամ ունի Մխ. դտ. 268 (տպ. տռիղլինար)։

=Բիւզ. յն. *τρικλινάριος համանիշից (որ չէ աւանդուած), փոխառեալ լտ. triclinarius «ճաշի վրայ ծառայող սարուկ» ձևից. այս լատին բառը ծագում է triclinium «ճաշարան» բառից, որ փոխառեալ է յն. τρικλίνιον «երեք բազմոցով սեղան կամ ճաշարան» բառից. (կազմուած է τρί- «երեք» + κλίνη «անկողին» բառերից. Հռովմայեցիք ճաշը պառկած էին ուտում և սրա համար ճաշարանը կամ սեղանատունը ունենում էր միշտ երեք բազմոց)։

Ուղիղ մեկնեց Բասատեանն, անդ (բայց դնում է լատինից)։

Տռիվովն տե՛ս Տրիբուն։

*ՏՌԻՏՈՆ «հոօրհայ չերմ» Մագ. թղ. 135։

=Յն. τρίτος «երրորդ», չեզ. τρίτον. աստւում է յն. τριτατος (τριετὸς) «հոօրհայ (չերմ)»։—Հիւբշ. 385։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Տռիփ տե՛ս Տարփ։

Տռնաւող տե՛ս Տհս։

*ՏՍՏԱԿ «տրցակ, փոքրիկ խուրձ» Եպիփ. ծն. Սմբ. դատ. 61. որից տստակեալ «խուրձ. կապած» (նորագիւտ բառ). «ժողովեալ կուտեալ դիզեալ բարդեալ տստակեալ և ի միասին մի կապեալ» Յիշատ. 1340 թ. (տե՛ս Արրտ. 1915, էջ 71)։

=Պրս. دسته dasta «փունջ, տրցակ, կապոց», որից փոխառեալ են նաև թրք. deste, գւռ. teste, tesde «տրցակ», քրդ. deste, destek «փունջ, ծրար, կապոց», վրաց. დასტი դաստա «կապոց», ռուս. десть «մէկ կապ թուղթ» (Berneker 187)։—Պրս. բառի հին ձևն է dastak, որ կազմուած է دست dast «ձեռք» բառից և նշանակում է բուն «մի ձեռք, մի բուռ, մի ձեռքի մէջ հաւաքուելու չափ փունջ». սրանից հյ. դաստակ, որ տե՛ս առանձին։ Նոյն բառից շրջմամբ կազմուած է *տստակ, որից ցցակ և ր յաւելուածով՝ տրցակ։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բռ. ֆրանս. 779 ա. նույնը յետոյ Աճառ. ՀԱ 1908, 122։

ԳԻՒ.—Սվեդ. բսդիւգ, բբսդէօգ *«կապոց»։*

+ՏՏԻՊ *(յետնաբար* n, ի *հլ.). «փոթոթահամ» Պղատ. տիմ. 139. լմբ. իմ. Ճառընտ. որից* տտպատեսակ *Վրդն. երգ. Երզն. ժ. խոր. էջ 8,* տտպատեսիլ *Վահր.* տտպութիւն *Բժշ.* տտպել *Մխ. բժշ. գրուած* տետպել *«կծկել» Մխ. բժշ. 12 (Կաշուն չորութիւնն վասն այնոր եղև, որ գործեցաւ տրտպելով, զերդ զգործած կաշին գխտորով կամ նռան կեղևով... Երակն այրենն տետպինտ ի դրուց անդամոցն տետպելովն)։ Վերջին օրինակից երևում է որ բառիս նախնական նշանակութիւնն է «կծկել, հաւաքել, սեղմել, ամփոփել, կուչ ածել» (հմմտ. լտ.* adstringo *«կապել, սեղմել, ճնշել, շրթունքը կծկել, փորը պնդացնել, բերանին տտիպ համ տալ», որից և ֆր.* saveur astringente *«տտպահամ»), և այս իմաստով դառնում է՝*

=բնիկ հայ բառ՝ հնխ. stib- *«սեղմել, ճնշել ևն» արմատից. հմմտ. յն.* στείβω *«տրոր տակ կոխտտել՝ աւելի խիտ ու հաստատուն դարձնելու համար»,* στοιβάζω *«դիզել»,* στοιβή *«խցկելու բան, խցան»,* στιβαρός *«սեղմ, խիտ, հաստատուն», լտ.* stipo *«սեղմելով կապել, ճխտելով լցնել, դիզել, բազմութեամբ հաւաքուիլ, խճողուիլ, խտացնել», անգսք.* stīf *«կոշտ, խիտ», լիթ.* stipti *«կարծրանալ» (*Pokorny *2, 646—8)։ Նոյն արմատի* steib- *ձևից է հյ.* ստէպ, ստիպել, *որ տե՛ս առանձին։ Հայերէնի մէջ* stib- *տուել է նախ *ստիպ (տե՛ս տակը լազերէն ձևը), որից ս-ի անկումով *տիպ և կրկնութեամբ *տիտիպ>տտիպ (տե՛ս տակը վրացերէն ձևը)։—Աճ.*

Հիմնք. համառօտուած պաղատիտ բառից։

ԳԻՒ.—Երև. Ջղ. Տփ. տտիպ, *Ղրբ.* տրտրլ՛պ, տտր՛պ, *Գոր. Շմ.* տտէպ, *Ագլ.* տրտտայպ, *Մշ.* տդում! *Սլմ. (բարդութեամբ միայն)* տտպիխամ *«տտպահամ», և միայն բայական ձևով Ախց.* տտրփել *«տտպել», Պլ.* գըրդել *«տտպել», գըրդան «փոթոթահամ» (իբր* տտպել>*տպտել>կպտել*). Նոյն են նաև Մկ.* տրտրպիլ *և Ղրբ.* տրտրպէլ *«լուացքը վատ լուացումից կոտիլ»։*

ՓՈԽ.—Վրաց. ტოტობი տիտիրի *«տտիպ» (Ջուբինով[2] 1222 «նռան կեղև՝ որ ներկի համար են գործածում») և լազ.* ստիպո *«թթու»։ Վերջինս ներկայացնում է հայերէնի հնագոյն ձևը և հնդևրոպական պարզ արմատը։ Վրաց. բառի նշանակութեան համար հմմտ. Շիր.* տտիպ *«սև ներկ տուղ վայրի բոյս, որով բրդեղէններ են ներկում» (Ամատունի, Հյ. բառ ու բան 638)։*

ՏՏԿԻԼ. *անստոյգ բառ. մէկ անգամ գրտնում եմ գործածուած Եւագր. 70. «Որ զերկուս բարկս (բարկացածներ) ի մարտի իւրեանց տնկեալ աղաչէ, զի զբարկութիւն ի բաց մերժեսցէ». մի ձ.* տրտկեալ աղաչէ. *Եթէ վերջինս է տոյգ, ինչպէս կարծում եմ, կարելի է թարգմանել «խնդրել, աղերսել ևն», յոյն օրինակի համեմատութիւնը կարող էր պարզել խնդիրը, բայց Եւագրի հրատարակիչը (Սարգիսեան) չէ յիշած։*

ՏՏՈՅ *«արտաքնոց». ունի միայն ԱԲ. անստոյգ բառ։*

ՏՏՈՒԼԻՃ *«մի տեսակ անծանօթ խոտ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2998։*

Տտուն *տե՛ս Տուտն։*

ՏՏՓԻԼ *«ախորժիլ, սիրել» Մծբ. 323. ունի միայն ԱԲ. որից* մեղր տտփանաց *«մի տեսակ ընտիր մեղր» Մծբ. 325 (ՋՔ համարում է անստոյգ բառ, իսկ ՆՀԲ «անշափ ախորժ յուտելն կամ համ խորսխի»)։*

*ՏՐԱԽՏ *«ռետինի ծառ. լտ.* resina *» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 2999։*

=Պրս. درخت diraxt *«ծառ». աւելին տե՛ս* դրախտ*։—Աճ.*

*ՏՐԱԿ *տե՛ս Տետր։*

+ՏՐԱՄ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.* տրամի*) «ամուր, պինդ, հաստատուն» Պիտառ. Մարթին. Վրք. հց. Նար. տաղ. «չոր, կարծր (գետին)» Վրք. և վկ. Ա. 604, «հողի կարծր երեսը» Վստկ. 16. որից* տրամանալ *«հողը պնդիլ» Նիւշ. բ. էջ 26. հաստատրամ Շիր. 37.* տրամիկ *«կարծր, պինդ» Մագ. յունաբան հեղինակների լեզուով գոր-*

ծածւում է իբր նախամասնիկ՝ համապատասխան յն. διա-, լտ. dis-, di-, dia- նախամասնիկներին. օր. **տրամաբանութիւն**= διάλογος *Սահմ. Նոնն.* **տրամագիծ**= διαγραφή, διάγραμμα *Անյ. պերիարմ. Շիր. Փիլ.* **տրամադրել**= διατίθημι *Սահմ. Խոր. վրդ.* **տրամաչափ**= διάμετρος *Պերիարմ.* **տրամատպաւորել**= διατυπόω *Սահմ. ևն. այս ոճով է* **տրամակայեալ** «հասկանալ, ըմբռնել, խելամուտ լինել» *Մագ. Նոր բառեր են* **տրամադիր, տրամադրելի, անտրամադիր, անտրամաբան** *ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* dru-rā-mo «ամուր, կարծր» *բառից, որ ծագում է հնխ.* dru- «փայտ» *բառից՝* -rā- *և* -mo- *մասնիկներով և բուն նշանակում է «փայտի պէս ամուր»։ Փոխաբերութիւնը և ածանցումը ո՛չ թէ պուտ հայկական է, այլ ընդհանուր էր նոյն իսկ նախաշրջանին. համմտ. սանս.* dāruṇá- «կարծր, կոշտ, խիստ». dhruvā- *(փխ.* druvā-) «հաստատուն, ապահով, տևական», *զնդ.* drva- «հաստատուն, առողջ», *հպրս.* duruva «առողջ», *պրս.* durušt «խիստ, կարծր, խոշոր», durust «ողջ, ամբողջ, առոյգ, առողջ, առոյգ, դրուստ», *յն.* δρούν «ուժեղ» *(Հեսիքիոս), լտ.* dūrus *(փխ.* *drūros) «կարծր», կելտ.* dru- «յոյժ, ամենա-» *(ինչ.* Dru-talos «մեծածառակատ», Druides<dru-ɣid- «ամենագէտ, մեծ իմաստուն»>«կելտական քրմերը»), *հիւլ.* derb «ապահով, վստահ», dron «հաստատ», *միւլ.* dir, *կիմր.* dūr «կարծր, ուժեղ, ապահով», *կիմր.* dur, *բրետ.* dir «պողպատ» *(վերջին չորս ձևերը լատինականից փոխառնւալ), անգսք.* trum «հաստատ, ուժեղ, առողջ», trēowe «հավատարիմ», trēow «հաւատարմութիւն, ճշմարտութիւն, հաւատք», *հսաքս.* trio «հաստատուն, վստահելի», triuwi «հաւատարիմ», *հհիւս.* trū «վստահութիւն, հաւատք», *գոթ.* triggws «հաւատարիմ», *հրգ.* triuwa «հաւատարմութիւն», *հոլլ.* trouw, *նրգ.* treu «հաւատարիմ», *հհիւս.* traust, *հրգ.* trōst, *նրգ.* Trost, *անգլ.* trust «վստահութիւն, հաւատ», *գոթ.* triggwa «պայմանադրութիւն», որից փոխառութեամբ՝ *իտալ.* tregua *և ֆրանս.* trêve «զինադադար», *լիթ.* drútas «հաստատուն, ուժեղ», *հպրուս.* druwis «հաւատք», druwīt «հաւատալ», *հսլ.* sŭ-dravŭ, *ռուս.* здоровый «առողջ» *են, որոնք բոլոր նոյն հնխ.* dru-<derevo- «փայտ, ծառ» *արմատի ածանցներն են. երկու նշանակութիւնները պահում է յատկապէս հսաքս.* trio «ծառ, հաստատուն, վստահելի». *արմատիս վրայ աւելի մանրամասն տե՛ս վերը* **տարգալ**. *այնպէս որ հյ.* **գդալ, սանդիտառն**, *գւռ.* **դրուստ**, *ռուս.* здравствуйте «բարև», *ֆր.* trêve «զինադադար» *և նոյն իսկ վրաց.* **տորի** «հովվի գաւազան», *միևնոյն բառերն են (*Pokorny 1, 804—6, Walde 247—8, Boisacq 202, Kluge 495):

Müller, Kuhns u. Schl. Btrg. 5, 382 *սանս.* dharma, *լտ.* firmus «հաստատուն»։ *Հինք. լտ.* duramen, duramentum «ամրութիւն, հաստատութիւն»։ Bugge, Lyk. Stud. 1, 72 *լտ.* durus, durare, *լիւկ.* trm̃mili «ամուր տեղեր բնակողներ, լիւկիացիք», Osthoff, Parerga 1, 113 *պաշտպանում է լտ.* dūrus *բառի համեմատութիւնը, հյ.* **տրամ** *դնելով իբր* dru-rā-mo- *(բայց ո՛չ լտ.* durare, *որ է=հյ.* **տևել**): *Սրա դէմ է* Schefelowitz BB 29, 27, *իսկ* Pedersen KZ 40 (1906), *էջ 208 պաշտպանում է* Osthoff-*ի առաջարկը։* Patrubány *ՀՄ 1908, 155 նոյնպէս լտ.* durus «կարծր» *բառի հետ՝ կցում է հնխ.* dreuo- «փայտ» *արմատին։*

Գիւր.—վն. **տրամ**, *Մշ.* **տրամ-տրամ**, *Ակն.* **դրամ** «չոր, ամուր, խճուռ հող՝ որ շատ դժուարութեամբ է փորւում»։

Փոխ.—Թրք. գւռ. Ակն. dram «նոյն նշ». *(տե՛ս Ճանիկեան, Հնութ. Ակնայ 353). նաև վրաց.* ტრამა **տրամա**, ტრამალი **տրամալի** «ընդարձակ տափաստան» *(«անմշակ և կորդ դետին» իմաստից)։*

ՏՐԱՄԻՏ. *նորագիւտ անասոյզ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Թէոդ. խշ. էջ 166. «Ազդմամբ գրոյն տրամիտ և*

*ախորժ և արբուն գործիքէ»։—ԱԲ ունի տրամիկ կամ տրամ «ամուր, հաստատուն»։

*ՏՐԱՊԻՉ կամ ՏՐԱՊԻՉ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. ի) «սեղան կամ սեղանի տախտակ». ՅՀ. կթ. 231։ Թէոդ. խչ. 171. Օրբել. հրտր. էմինի, էջ 164, 176 և 230։ Տե՛ս և յաջորդը։

=Յն. τράπεζα «սեղան», որ ծագել է հին τετράπεζα «քառոտանի» ձևից. (haplologia-ի օրէնքով՝ ըստ Boisacq 979). յոյնից են փոխառեալ նաև լտ. trapezium, ֆր. trapèze, վրաց. ტრაპეზი տրապեզի «սեղան կամ երկրաչափական ձևը»։—Հիւբշ. 385։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԳԻՒ.—Նախ. դրաբէզ «սեղան»։

*ՏՐԱՊԻՉԻՏ կամ ՏՐԱՊԻՉԻՏ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «լումայափոխ, սեղանաւոր» Եւս. պտմ. 408, Ոսկ. մթ. Խոսր. 72. Սկևռ. լմբ. 28. «սեղանակից, բազմականն» Կղնկտ. հրտր. էմ. էջ 146։

=Յն. τραπεζίτης «լումայափոխ», որ կազմուած է τράπεζα «սեղան» (տե՛ս տրապիզ) բառից. իսկ Կղնկտ. «սեղանակից, բազմականն» իմաստը թերևս չն. τραπεζίτης «ուրիշի սեղանից ապրող, հացկատակ» բառից է։—Հիւբշ. 385։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՏՐԱՏԷ «ծառից հոսող մի տեսակ խէժ կամ խունկ» Խոր. աշխ. 600 (այլ ձ. տրա). ունի միայն ԱԲ։

Պատկ. Арм. reorp. 30 համարում է չն. τράκτη, որ մեկնում է «κακκουμπεάν δένδρον του σοφόρου ἠλέκτρου», չեն իմանում ո՛չ Bailly և ոչ էլ Sophocles։

Տրբեճա տե՛ս Արբենա։

Տրգալ տե՛ս Տարգալ։

ՏՐԵԽ, ի–ա հլ. «տրեխ» Մխ. դտ. Շնորհ. ընդհ. որից տրեխաւորիլ «տրեխ հագնիլ» ՅՀ. կթ.։

=Շատ նման է հնչում արաբ. طراق ṭirāq «կօշիկի կաշի. 2. արաբական փապուճի վրայ գամուած կաշիի թերթերից իւրաքանչիւրը, 3. վահանը պատելու համար կլորակ կտրուած կաշի» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 11). բայց սրանց յարաբերութիւնը իրար հետ՝ չեմ կարող որոշել։—Ա՛ճ.

ՆՀԲ մեզնից է համարում ամկ. (իմա՛ ռճկ.) չարըխ, չարըգ «տրեխ»։ Հիւնք. տառեխ բառից։ Փ. Տ. Մովսէսեան, Arm. Bauernhaus 139 և Գաղանճեան, Արև. մամ. 1907, 934—5 ռճկ. չարըխ բառի հետ։

ԳԻՒ.—Մշ. տրեխ, Գոր. Երև. Շմ. տրէխ, Ղրբ. տրէխ, տրոր՛խ, Տփ. տրիխ, Ագլ. տրէխ։ Նոր բառեր են անտրեխ, տրեխատր, տրեխամէջ, տրեխատաճ, տրեխչուան, տրեխացու։

ՓՈՒՆ.—Մեզնից պէտք է լինի դնչ. triák «կօշիկ», որից triakhengoro «տրեխ շինող»։ (Paspati այս բառերը մութ է համարում և կասկածով համեմատում է սանս. trikš «երթալ, շարժիլ» բառի հետ, որ անյարմար է)։

*ՏՐԿ (սեռ. տրեայ լաբուր. էջ 2) «Հայկական չորրորդ ամիսը, որ ըստ անշարժ տոմարի համապատասխանում է Հռովմէական նոյ. 9—դեկտ. 8» Ասող. վանակ. տարեմ.։ Նոյն բառն է և տրեկան «տրէ ամիսը» Գիրք թղ. 273 (Ըստ Հռովմայեցւոցն ի 10 հոկտեմբեր և ասորերէն Թշրին կտիմ և ըստ հայոց տրեկանի), որ յայտնի չէ թէ գրչագրական սխա՞լ է, թէ անեկան և մեծեկան ձևերից ազդուած և իրօք գոյութիւն ունեցող ժողովրդական մի ձև, որ գրուածքի հեղինակը կամ գրիչը գործածել է, ինչպէս որ մի քիչ յետոյ էլ ունի ժողովրդական կրոց ամասանունը՝ փոխանակ սահմի (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 254)։

=Պհլ. tīr «Շնիկ աստղը» (Nyberg, Hilfsb. 2, 225), գւռ. *tīrē ձևից. համմտ. պրս. تیر tīr «արեգակնային չորրորդ ամիսը», և լայնաբար «ամառ», կապադովկ. τῆρι, τειρει, τειδ «կապադովկիական չորրորդ ամիսը», զնդ. 𐬙𐬌𐬭𐬌𐬬𐬀 tištrya «Շնիկ աստղը», tištryehe mâ «զենդական չորրորդ ամիսը՝ որ նուիրուած է Շնիկ աստղին» (Bartholomae, Altir. Wtb. 651), սանս. तिष्य tišya «մի աստեղատուն և

նրա համապատասխան ամիսը», սոգդ. tiš, բուդդայական չին. (սոգդիականից փոխառեալ)՝ tīr «փայլածուն»։ Հայերէնը գալիս է հնագոյն *աիրէ ձևից. է վերջաւորութիւնը իրանական մի գաւառականի ուղղականի վերջաւորութիւնն է, ինչպէս ունինք քրիստ. սոգդ. ē, հմմտ. մարգարէ, բազէ. որ և –այ. հմմտ. կամայ ակամայ, աշկարայ ևն (Bailey JRAS 1930, էջ 17)։

Հներից Վանակ. տարեմ. մեկնում է «զի տայ կամ կրէ գիշերն յօրէն զժամն և զմասունքն» (այսինքն ցերեկը կարճանում է և գիշերը երկարում)։ Նոյնը Տաթև. հարց. 200. իսկ Տաթև. ձմ. ա. «Տրէ՝ զտէրունական խորհուրդն ասէ, յորժամ տիրեաց Աստուած ի վերայ ապարածոց»։ Brosset JAs. 1832, 529 հետաւոր նմանութիւն է ուղում նշմարել վրաց. ოთხი ოթხის «չորս» բառի հետ։ Böttich. ZDMG 1850, 365 պրս. Tīr յատուկ անունի հետ։ Lag. Ges. Abhd. 294, 9, Beitr. bktr. Lex. 56 սրանց է կցում սանս. taštar և զնդ. tištrya, որոնք չի ընդունում Lag. Arm. Stud. § 2245: (Սրանց վրայ տե՛ս Horn, Grdr. § 406): Պատկ. О назван. древ. арм. месяц. 39 պրս. և կապադովկ. ձևերի հետ նաև վրաց. տիրիս-կոնի, տիրիս-դենա «վրացական 11ու և 12ու ամիսները»։ Հիւնք. պրս. թիր, Հիւբշ. 89 Տիր աստուծոյ անունից։ Սոգդ. և չին. նորագիւտ ձևերի միջոցով մեկնեց Gauthiot MSL 19, 127։

ՏՐԷ «հայս ինչ յալերէ և ի ձուոց՝ հատեալ նման թելահայսի. էվրիշթէ. nouilles». մհյ. բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 857ա։ =Առն. դրա—։

*ՏՐԷՂ «հագուստի վրայ բանուածք, զարդարանք»։ ՆՀԲ մեկնում է «կար, կարուած, զօդ և հգր, ժապաւէն», որի համար տալիս է միայն մի վկայութիւն. «Ջոսկեճամուկն. տրէղն է խայտիւն յուս և ի կուրծս» Գէ. եւ երկրորդ անգամ գտնում եմ գործածուած Շնորհ. առ. 109 սիրամարգի համար՝ «Իւր անձն ամէն ոսկի տրէզ»։ Ըստ Նորայր, Բառ. ֆր. 584 «ֆր. galon», որ է «մի տեսակ նեղ և հաստ ժապաւէն՝ հագուստի եզերքը կարուած»։

=Արաբ. طراز ṭirāz «հագուստի եզերքը՝ եզրը, որ կտորից է լինում. 2. արքայական հագուստ», որ ըստ Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 184 պրս. تراز tarāz «խամ մետաքսե թել» բառից արաբացեալ է։ Սրանցից փոխառեալ պիտի լինի նաև Բրք. تریز tiriz «շերտ. 2. պատառի եզր»։

ՋՔ դնում է պրս.։ Ուղիղ մեկնեց Պատկ. Матер. I. էջ 16։ Աճառ. ՀԱ 1908, 122 սրանից անտեղեակ կցում է Բրք. tiriz բառին, կասկածելով որ այս էլ բուն իրանական է։ Հացունի, Պատմ. տարազի 268 պրս. درز darz «կարան, կցուած»։

*ՏՐԻԲՈՂՈՍ «տատասկ» Գաղիան. ունին միայն Բառ. երեմ. յաւել. 572 և ՀԲուս. § 2929։

=Յն. τρίβολος «տատասկ», որ բուն նշանակում է «հեռասայր»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

*ՏՐԻԲՈՒՆ «ցեղապետ, աղգապետ, հազարապետ ժողովրդեան կամ զօրաց» Պրպմ. 424. Լծ. պրպմ. 766. Վրք. սեղբ. 710. Ճառընտ. Մխ. անեց. 35. Մխ. դտ. Հ. կիլիկ. յետնաբար տռիվուն Անկ. դիրք առաք. 241. դուռ յունական ձևով՝ տրիբունոս Վրք. սեղբ. 708 (Նւս. պտմ. 239 տրիբունս ուղղել ըստ յն. Տուրբոն՝ յատուկ անուն). որից տրիբունական (չունի ԱԲ) Յայտմ. մայ. 21. հմմտ. նաև տոիբուն։

=Յն. τριβοῦνος, որ փոխառեալ է լտ. tribunus ձևից։—Հիւբշ. 385։

ՀՀԲ և ՆՀԲ լատինից։

*ՏՐԻԳՈՆ «վահանաձև տափարակ մի տեսակ ձուկ, կատուաձուկ, pastinaca raja L». մէկ անգամ գործածում է Վեցօր. 153. «Այլ և խայթոցք տրիգոնին, որ է ձուկն ծովուն, որ և յետ մահու իւրոյ մեղանչական է». ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. τρυγών նոյն նշ։—Հիւբշ. 385։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՏՐԻԷՐ «եռաթի (նաւ, ցոկանաւ)» Եւս. քր. բ. ուրիշ վկայութիւն չկայ։

=ՅՆ. τριήρης «եռաթի».—Հիւբշ. 385։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Տրիտուր տե՛ս Տալ։

*ՏՐԻՒՂՈՆ (կամ տրիւղիոն) «սկաւառակ, իսր ու կոլոր ափսէ» Շիր. 30 (ըստ Մանանդեան, Կշիռները, էջ 62 դնում է 204 դրամ պարունակութեամբ աման). ուրիշ վկայութիւն չկայ։

=ՅՆ. τρυβλίον կամ τρύβλιον նոյն նշ. = Հիւբշ. 385։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 179, նոյնը յետոյ ՆՀԲ։

Տրիփ տե՛ս Տարփ։

*ՏՐՒԱՆԱՅ «25 դրամ քաշ» Վպտկ. 14 (Նուկին ութ տրխանայ, որ է քսան և հինգ տրամ)։

=Տառադարձուած է յն. δραχμή բառի արաբական ձևից։—Աճ.

*ՏՐՄԻՍ «8 կերատի քաշ կամ 1/3 դահեկան» Շիր. 27. Վրք. հց. բ. 240։

=ՅՆ. τριμίσσιον, որից և լտ. tremissis՝ նոյն նշ. ըստ Մանանդեան, Կշիռները էջ 21 տանում է 1,51 1/9 դրամ։—Հիւբշ. 385։

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 179 պրս. ترمسه tarmasa «երկու եղջերակ որիզ, կէս դանկ»։ ՆՀԲ պրս. ترمسك և լտ. tremissis, trimesis: Պատկ. Շիր. 27 արար. ترمس t r m š և ترمسه tarmasa։

*ՏՐՄՈՒԽ «Հողի երեսի քարերը հաւաքելու գործիք, փոցխ». ունի միայն ՀՀԲ. նոյնը ՋԲ տրմուղ ձևով։

=Թրք. ترمیق tərmaq «տրմուխ», որի գաւ. և ոմկ. ձևն է tərməx- բնիկ ալթայական բառ է. հմմտ. Կազանի թթր. ترما tərmə «տափան, ցաքան», ترماسی قول qol tərmasə «տրմուխ», ترمالامق tərmalamaq «տափանել», Սիբիրի թթր. ترناوچ tərnavuč «փոցխ». բոլորի արմատն է թրք. ترناق tərnaq, չաղաթ. ترناغ tərnaγ, ույղուր. تنكراق təngraq «եղունգ». ترنامق tərnamaq, ترمامق tərmamaq «քերել, ճանկռել» (Будаговъ 1, 735)։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1908, էջ 122։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 80—81 դնում է սխալմամբ բնիկ հայ բառ՝ հնխ. dorgh- արմատից՝ մ և -ուխ (հմմտ. գլուխ) մասնիկներով. ցեղակիցներն են ռուս. дергать. «քաշել, խրլել, փետել, դրդել», дергалка «եղան» և նմաններ։

Գիր.—Մշ. տրմուխ։

Փոխ.—Justi, Dict. Kurde 98 հայերէնից է դնում քրդ. tirmix. նոյնպէս և Մխիթարեան (Բիւր. 1899, 865) և Պէտէլեան (Արեւելք 1888, նոյ. 9) էնկ. և Աան. թրքախօս հայոց, նաև յունաց ու թրքաց գործածած dərməx ձևը, որոնք ընդհակառակը դուստ թրք. բառեր են։

ՏՐՄՈՒՂ (սեռ. ի) «անվարժ, դեռ չվծուած ձի, եզ (նաև վզի համար ասուած)» Երեմ. լա. 18. Ոսկ. մ. ա. 6. և երր. լա. Բուզ. 262. Եւս. պտմ. Սերեր. 185 որից տրմղութիւն Ոսկ. մ. ա. 6 և կրկնութեամբ՝ տրմուղ կրմուղ Կոչ. 209 (երկու անգամ), որից և կրմուղ (ի հլ.) Ոսկ. մ. դ. էջ 54. Կիր. պտմ. էջ 132, կրմղութիւն Դիոն. երկն.։

=Կազմուած է մուղ «մղել, վարել» արմատից՝ տր- բացառական մասնիկով, որ այլուր անսովոր է. հմմտ. համապատասխան ձևմուղ ձևը՝ Ոսկ. մաթ. ղկ. յհ. Վրք. և վկ. ա. 653, Մագ. Զքր. կթ. նոյն նշանակութեամբ. Յիշեալ տր- մասնիկը պէտք է համարել բնիկ հայկական ո բացառականի երկրորդ ձևը. հմմտ. սանս. dur-, հհիւս. անգսք. tor-, հրգ. zur- բացառական մասնիկները (Pokorny 1, 816)։

ՀՀԲ տար-մուղ «ոչ մղեալ»։ ՆՀԲ թուի նոյնպէս հանել մուղ արմատից։ Հիւնք. մտրուկ բառից։

ՏՐՈՀ, ի հլ. «բաժանում» Պղատ. մինուվ. որից տրոհել «բաժանել, ջոկել, զանազանել», Խոր. ՅՀ. կթ. Կիւրղ. ղկ. Խոսր. Նար. կգ. էջ 161. (ըստ Նորայր, Կոր. վրդ. 213 և Բանաս. 1900, 139 մէկ անգամ գործածուած է Ոսկեդարեան մատենագրութեան

մէջ՝ Ոսկ. եփես. ժգ. 838). տրոհութիւն Փիլ. այլաբ. Մագ. տրոհումն Խոր. Շիր. Նար. տրոհարկել Երզն. քեր. գերատրոհ Նար. մծբ. եռատրոհ Շնորհ. տարատրոհել Նար. խչ. 401։

ՆշԲ լծ. հյ. ցրուել, մանաւանդ յն. διαιρέω «բաժանել»։ Հիմնք. գրոհ բառից։

ՏՐՈՅՔ «յափշտակութիւն, կողոպուտ». արմատ առանձին անգործածական. դոնւում է միայն աղխատրոյզ կամ ախատրոյզ «աւազակ, յափշտակիչ աղխից». ՅՀ. կԲ. 202, 361 և ախատրուզել «կողոպտել» Պոմ. առ լՀ. ձևերի մէջ։ Ունինք նաև աղխատրոյժ գրչութիւնը, որի մէկ ուրիշ խանգարուած վիճակն է ներկայացնում ախատրուծ «ձայն ամբոխի» Բառ. երիմ. էջ 8, որ նոյն էջ՝ քիչ յետոյ դառնում է ախատրոյժ «ձայն ամբոխի»։

Պատահական նմանութիւն ունին սանս. drúhyati «վնասել ջանալ», գնդ. družaiti «խարել, ստել», սլրս. duruy «սուտ», հբգ. triogan, գերմ. trügen «խարել» են, որոնց աղբիւրն է հնխ. dhreugh- «խարել, ստել, վնաս հասցնել» (Pokorny 1, 874). հմմտ. հյ. դրուժան, դրուժ։

—ՏՐՈՍ կամ ՏՈՐՈՍ «ճմռել, փշրել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են տրոսանք «խաղողի ճմռած չէչ» Վստկ. 87 (եւ ի հնձանին մէկ դհին փորրագոյն հնձան պիտի, որ զտրօսանքն անդ քամեն), տրոսանք «ձիթապտուղ ճմռելու մամուլ» Վստկ. 184 (ճխմեա ի քթոցանի և այնու ի տրօսանքն քամեա մեղմն քչիկ քչիկ... դիր ի քթոցանին և կրկին ի տրօսանքն դարձո և պինդ քամեա), տրոսուտ «հղջիւրի չոր փշրուանքները» Վստկ. 19 (են այլ ոմանք որ զեղին եղջիւրին տորոսուն և զփիլին ոսկրն թրջեն և ջրովն զսերմն մրնշեն). բոլորն էլ նորագիւտ բառեր, որոնց գործածութեան այլուր չեմ պատահած։

=Նոյն է յաջորդ տրորել բայի հետ, որ ունի թէ՛ «ճմռել» և թէ «փշրել» նշանակութիւնը։ Գաւառականների մէջ արդեն ունինք տրորս տալ Վն. «ոտքի տակ տրորել, ոտնակոխ անել» և տորորել Ննխ. «ճմռել»։ Ուղղակի վերի արմատին են պատկանում տրոսել (Կեչվէ) և տորսել (Մարմարճըք) «կոխտել», որոնք սաստկական *տորոսել <*տորորսել ձևերից են կրճատուած։—Ա՛ճ.

Ըստ այժմ պատահական նմանութիւն ունին անգսք. dros, drōsne, հբգ. druosana «մրուր», trestir «կոխած ճրմռած պտուղների չէչը», նբգ. trester «տականք». հանգլ. daerste, հլիթ. dragės, հպրուս. dragios, հիսլ. dregg, ռուս. дрожжá, լեհ. drożdże, հսլ. drożdīje «մրուր», ալբան. drā «ձէթի մրուր» են, որոնք յն. θράσσω, ταράσσω «պղտորել» բառերի հետ միասին ծագում են հնխ. dherēgh- արմատից (Pokorny 1, 854—855, Boisacq 350, Berneker 228, Kluge 495)։

ՏՐՈՐ «ճմռել, փշրել». արմատ առանձին անգործածական, որից տրորիլ «փտիլ, քայքայուիլ, մարմինը փտելով միջից շարաւ վազել» եւս. պոմ. Ոսկ. հս. 359. Մծբ. 139. Եղիշ. է, էջ 108. «փշրուիլ (քար ևն)» Եփր. աւետ. 265, տրորումն եւս. պոմ. որդնատրոր կնիք Հաւ. 328. տրորել «աճռել» Վստկ. 102, 125, «հարիլ» Առաք. պոմ. 465. պարզ արմատը ցոյց է տալիս տրոր տալ «հողը բահով ջրի հոսանքին տալ՝ որ տանի» Առաք. պոմ. 234։—Նոյնից պէտք է համարել շրորիլ «փտիլ (մարմինը)» Բրս. մրկ.։

ՆշԲ լծ. հյ. տեռիլ, լտ. tero «մաշել, խորտակել, փճացնել», Karst, Յուշարձան 408 սումեր. tur «փոսուիկն»։

Գիր.—Ջղ. տրորել, Ալշ. Մշ. Սլմ. տրօրել, Ախց. Երև. տրօրէլ, Շմ. Տփ. տրօրիլ, Մկ. տրուրիլ, Ննխ. դրօրէլ, դօրօրէլ, Սեբ. դրօրէլ, Ագլ. տրա՛րիլ, Խրբ. դվօրիլ «տոներով կոխոտել».—արմատական ձևը պահում է Երև. տրոր տալ։—Ներսէսովիչ, Բռ. լտ. հյ. 13 ա, 89 բ և 538 բ ունի տլորել «մանրել, փշրել»։—Նոր բառեր են տրորուիլ, տրորկել, տրորս տալ, տրորտակ տալ։

+ՏՐՈՒՊ, ի–ա հլ. «նուաստ, տորին, յետին, փոքր, խեղճ» Ա. կոր. ժե. 9. Եփես. գ.

8 Ոսկ. մ. ա. 9 և երբ. որից տրպանալ *լծ. ածաբ.* տրպագոյն *Բրս. ծն. կրճատմամբ՝* ռուպ *Գնձ.։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* drōb- *ձևից. այս ձևի հետ համմտ. հսլ.* drobǫ, drobiti «*ջարդել, մանրել*», drobīnŭ «*փոքր*», *նսլ.* drôb «*մանր կտորներ*», *ռուս.* дробь «*կոտորակ, մաս, կտոր*», дробить «*մանրել*», дребезги «*փշրտանք, մանրուք*», по-дробный «*մանրամասն*», *չեխ.* drob «*մանր բան*», drobný «*փոքրիկ, չնչին*», *բուլգար.* drebolija «*չընչին բաներ*», droben «*փոքր չնչին*», *լհհ.* drobny «*շատ փոքր, աննշան*», *սերբ.* droban «*փոքր*», *ուկր.* dribnýj «*փոքրացրած, նուրբ, թոյլ, տկար, անուժ*», *հհիւս.* drafna «*մանր մասերի լուծուիլ*», *գոթ.* gadraban «*քանդակել*», *հհիւս.* draf, *անգսք.* droef «*անկում*», *որոնք հանուում են հնխ.* dhrebh- «*ջարդել, փշրել*» *արմատից։ Կայ նաև նոյն արմատի* dhreb- *ձևը, որից հհիւս.* drepa, *անգսք.* drepan «*զարնել, հարուածել, սպանել*», *գերմ.* Treff «*հարուածՙ ևն* (Pokorny 1, 875, Berneker *225—6*)։ *Հայերէնի մէջ նախաձայնն էլ վերջաձայնին նմանուելով սաացուել է* drob- *ձևը, որ անսովոր է հնխ. ձայնաբանութիան. համմտ.* ծեծ<g'eg'- *ձևը։—Աճ.*

Նշխ լծ. հյ. տառապեալ, *արաբ.* turāb «*հող*»։ *Հիւնք. արաբ.* دبر dubr «*յետին*»։ Bugge KZ *32, 63 լիթ.* truñ-pas «*կարճ*» *բառին ցեղակից։ Փորթուգալ փաշա, Նղիշէ 124 գնդ.* տրիվիշ «*աղքատութիւն*» *բառից։*

ՏՐՈՓ «*սրտի թնդիւն, բաբախիւն*». *գործածական է միայն արդի գրականի մէջ. հների մէջ արմատ անգործածական, որից* տրոփել «*ոտքերով կոխկռտել*» *Ոսկ. մտթ. և փիլիպ. նաագր.* տրոփիւն «*ոտքի կոխոտման կամ կայթելու ցատկռտելու ձայն, թնդիւն*» *Ոսկ. մ. բ. 23.* տրոփական *34. կթ.* տրոփումն *նար. խշ.* բազատրոփ, ծանրատրոփ «*նրաժշտական խազ կամ եղանակ*» *Ոսկիփ. գրուած է նաև* տրփալ (*աշխ.* տրոփել) «*սիրտը բաբախել*» *Յայսմ. մայ. 4.* տռոփել *Ոսկ. ա. տիմ. ը.* սրտատրոփ *կամ* սրտատռոփ *Շնորհ.* ոտնատրոփ *կամ* ոտնատռոփ *Սիսիան. Արծր.։*

Brosset *սրա հետ է համեմատում վրաց.* տրաքախորա «*պարծենալ*»։ *Տէրվ. Նախալ. 84 կա՛մ* տռփալ *բառի հետ հնխ.* tarp *արմատի տակ (տե՛ս անդ) և կամ յն.* θρύπτω = τρύφτω *և լիթ.* trupù «*փշրել*»։ *Հիւնք.* տարափ *բառից։ Սրմագաշեան, Արմէնիա, ռում.* tropâire *հոմանիշի հետ։ Պատահական նմանութիւն ունին վրաց.* դատեռփ–վա «*ոտքերով կոխոտել*», տեռփ–վա «*հետքեր թողնել*», տեռփի «*կրունկ, ոտքի հետք, կճղակ*»։

Գիւր.—Մշ. տրըպալ, *Ագլ.* տրբփիլ, *Երև.* տրփալ, *Մկ.* տռօփալ, *Տփ.* տռփիլ, *Սեբ.* դրփալ, *Խրբ.* դռփալ «*սիրտը բաբախել*», *իմաստի զարգացմամբ Սեբ. Պլ. «հիւանդի տնքալ», Ախց. Կր.* (տրփալ) «*վէրքը կոտտալ*», *Պլ. «մլիկ մլիկ ցաւիլ», Սվ. «հոգեվարքի մէջ լինել», Մլկ. «տեղից շարժուիլ, երերալ», Վն. «գետին տապալիլ», Ալշ.* բրբփալ «*սիրտը տրոփել. 2. գետին թրմփալ*», *կրկնութեամբ* տրփտրփալ *Երև. Ղզ. «սիրտը տրոփել»։*

**ՏՐՈՔԻԼՈՍ «մի տեսակ թռչուն» Փիլ. լիւս. 155. գրուած նաև* տռոֆիղոս *Պիսիդ. Վիցօր. տող 983. սխալմամբ* տռոխոս *Վրդն. ծն. (տե՛ս ՆՀՌ* հիւդոս *բառի տակ),* տռոխոս *Յայսմ. մրտ. 21 (որ տե՛ս և առանձին)։*

=*Յն.* τροχίλος «*ցանկապատերում բնակող մի թռչուն է. ֆր.* roitelet» (*որից և լտ.* trochilus). *Ծագում է* τρέχω «*վազել*» *բայից* (Boisacq *983*)։—*Հիւրշ. 385։*

Ուղիղ մեկնեց ՆՀՌ։

**ՏՐՎԱՆ «մոլլայի կարդացած առաւօտեան աղօթքը՝ մզկիթի աշտարակից». մէկ անգամ ունի Քուշ. 66. «Մօլլան երբ գոըրվան կուտայ... գիտացաք որ կու լուանայ։ Քրդ.* devran «*աղօթք*» *բառից. օր.* mela devran də xanə ser mrian «*մոլլան աղօթք է կարդում մեռելների վրայ*»։

Այսպէս մեկնեց Դ. վրդ. Զարոյեան (Նամակ 1933 սեպտ. 28), որ հաւատում է թէ քրդ. devran *բառն էլ ծա-*

գած է արաբ davarān (ժղ. devrān) «ժամանակ» բառից։ Սակայն Կամուս չգիտէ davaran բառի այս նշանակութիւնը։

+ՏՐՏՈՒՄ «տխուր, վշտալի» ՍԳր. Եղիշ. Խոր. որից տրտմիլ ՍԳր. Ոսկ. փիլիպ. և մ. ա. 15. տրտմագին Առակ. իզ. 23. Ոսկ. Եբր. Կիւրղ. ծն. տրտմագոյն Դան. ա. 10, Գ. մկ. ե. 19. Ոսկ. Ես. տրտմեցուցանել ՍԳր. Ոսկ. ա. թես. անտրտում Ագաթ. Եղիշ. տրտմակից Ես. ծա. 19. Ոսկ. մ. գ. 80։ Նոր բառեր են տրտմաթախիծ, տրտմալար են։

=Բնիկ հայ բառ՝ կրկնուած հնխ. drom- արմատից, որ տալիս է *տրում, կրկնութեամբ *տուտրում, *տուրտում>տրտում: Արմատը նշանակում է բուն «քնել», որի ժառանգները տե՛ս հյ. տարտամ բառի տակ։ Ոմանք ուզում են նոյն արմատի տակ դնել նաև հյ. dĭrmǫ, dĭrměti, սերբ. drmim, drmljoti «տրտում, մոայլ, տխուր լինել» (Berneker 256), բայց նշանակութեան տարբերութեան պատճառաւ շատ անապահով են համարում (Pokorny 1, 821): Հայերէնը գալիս է նոր ապահովութիւն տալու սոյն համեմատութեան։—Ա՛ճ.

Brosset JAs. 1834, 378 վրաց. տրտոլա: ՆՀԲ լծ. Բրբ. տէրտլի «ցաւոտ»։ Peterm. 21 պրս. (որից և Բրբ.) dard «վիշտ», լտ. tristis «տխուր»։ Böttich. Arica 77, 279 պրս. dard «ցաւ»։ Նոյնը նաև Spiegel, Huzw. Gram. 189, Müller SWAW 38, 574 և 46, 464, Հիւրշ. KZ 23, 19 և Հիւրշ. Arm. Stud. § 278։ Lag. Ges. Abhd. 257 -ում մասնիկ է համարում։ Պրս. բառի համեմատութիւնը մերժից նախ Lag. Arm. Stud. § 2246 և յետոյ Հիւրշ. Arm. Gram. 498, որովհետև պրս. բառի նախաւոր ձևերն են պհլ. dart, զնդ. darətō։ Հիւնք. տրտունջ բառից։ Petersson, Ar. u. Arm. Stud. 85—87 դոթ. trigo, հհիւս. tregi, նիսլ. tregi, նորվ. trēge, շվէդ. troeghi «տխրութիւն, ցաւ», սանս. drāghate «յողնիլ» են բառերի հետ հնխ. di-drōgh-mo- կրկնական ձևից, gh-ի անկումով։ Ըստ Meillet (Dict. étym. Lt. 1016) յիշեցնում է լտ. tristis «տխուր», որի ծագումը անյայտ է, բայց կրկնական է թւում. սակայն հյ. t պահանջում է հնխ. d։

Գիւռ.—Մշ. տրդում, Մկ. տռտում։

+ՏՐՏՈՒՆՋ, ո հյ. «դանդաղ, դժգոհութիւն, բամբասանք, չարախօսութիւն» ՍԳր. Ոսկ. փիլիպ. Փարպ. «տրտնջող, դանդատաւոր» Ա. մկ. ժա. 39. Կոչ. Եփր. ա. տիմ, էջ 243. Եղիշ. որից տրտնջել ՍԳր. տրտնջալ Խոսր. Լմբ. տրտնջիւն Թուոց ժէ. 10, տրտընջումն Ես. ծր. 9. Ագաթ. անտրտունջ Յճխ. գետնատրտունջ Ոսկ. փիլիպ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. der-, կրկնութեամբ der-der-, drdor-, կրճատ կրկնութեամբ dor-d-, dr-d- «մռմռալ, մրմրթալ, յանդիմանել, շաղակրատել» բնաձայն արմատից. սրա ժառանգներն են սանս. dardurá- «դորտ, սրինգ», իռլ. deirdrethar «գոռգոռալ», dord, fodord «մռմռոց, մրմրթոց, բամբ ձայն», andord «հրգ», dordaim «եղջերուի ձայնը», յն. δάρδα «մեղու», կիմր. dordd «հնչիւն, աղմուկ», լիթ. dardėti, լեթթ. dārdêt «ճարճատել», բուլգար, dŭrdórŭ, սերբ. drdljati, սլով. drdráti «շաղակրատել, ճարճատել, ճայթել են» (Pokorny 1, 795, Berneker 254): Հայերէնի մէջ -ունջ մասնիկ է, ինչպէս շշունջ, մրմունջ. պարզ արմատը գտնում ենք վրաց. դրավինվա, ադրավինեբա «տրտունջ, գանգատ» բառի մէջ։

ՆՀԲ իբր ընդ ունչս տրտմիլ կամ տրտառալ։ Հիւնք. տեղչալ բայից։ Lidén, Arm. Stud. 17 զնդ. drənjayeiti «աղօթք մրմնջել», պհլ. dranjītan «սովորիլ», հիսլ. drengaitir «արտասանել» բառերին ցեղակից։ Վերի վրաց. ձևերին միացրից Աճառ. ՀԱ 1908, 123, որից յետոյ Մառ Иппол. 59 դրաւ նոյն ձևին ցեղակից։ Karst, Յուշարձան 424 Բրբ. dərdərlanmaq, վրաց. drdenva։ Մաքսուտեան, Շողակաթ 165 համարում է կրկնաւոր՝ իբրև տր-տունջ։ Վերի մեկնութիւնը տուաւ Petersson, Ar. u. Arm. Stud. 74—77 և յետոյ IF 43 (1925),

69՝ մերժելով Lidén-ի մեկնութիւնը։ Անկախաբար նոյն կարծիքն ունեցած եմ նաև ես, հիմնուելով վրացերէնի վրայ և -ունջ համարելով մասնիկ։

Գիմ.—Ախց. տռտունշ, Կր. տռտնջալ, Սեբ. դրդրնջ՛ալ, Մկ. տռտունջ։

Փիխ.—Վրաց. დრტვინვა դրտվինվա կամ ტრტვინვა տրտվինվա, აღრტვინება ադրտվինեբա, დატრტვინვა դատրտվինվա «տրտունջ, դանգատ, ծածկեալ դժգոհութիւն»։

*ՏՐՅԱԿ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «խուրձ, կապոց» Վրք. Հց. ա. 90. Վրդն. եվ. Բրս. մրկ. Ոսկիփ. որից տրցակել «տրցակ կապել» Սկևռ. աղ. Ճառընտ.։

=Պրս. دسته dasta «փունջ, տրցակ» բառից. աւելի ընդարձակ տե՛ս տստակ բառի տակ։—Աճ.

Հինք. հանում է Թրք. dirsek «արմուկ» բառից: Jensen, Hitt. u. Arm. 78, 104 վերագրում է հաթեան շրջանին։ Վերի մեկնութիւնը տուաւ Աճառ. ՀԱ 1908, 123։ Petersson KZ 47, 265 իբր բնիկ հյ. կցում է յն. δράσσομαι «բռնել», սանս. dṛdhás «հաստատուն», զնդ. dərəza «կապանք», պրս. darz «կարս», լիթ. diĩžas «փոկ» բառերին և հանում է հնխ. dergh- «բռնել» արմատից։ Նոյնպէս Pokorny 1, 807:

ՏՅԱԿ. անասոյզ բառ. մէկ անգամ ունի Ոսկիփ. «Մտցէ ի մէջ (պտղալից) դրաստին, ունելով փոքր մի տցակ, թէև ոչ զբովանդակն (քաղեսցէ), այլ լնլով զտցակ իւր, զարձցի ի յընթացս իւր»։ Հաւանաբար նշանակում է «կապոց» և կցւում է տրցակ բառին։

ՆՀԲ և ՋՔ կապում են տրցակ բառին։ Աճառ. ՀԱ 1908, 123 տե՛ս տստակ:

ՏՓԻԿ «բրդոտ տերևներով մի խոտ է» Գաղիան. ըստ Ստեփ. լեհ.։

°ՏՓԱԼ «հառաչել». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած հին մատենագրութեան մէջ. Ահա դուք տքայք ի ներքոյ բեռանց ձերոց (Տարօն. էջ 285). Հեծայ և տքայ որպէս զխոզս (Մտթ. եսայր. 23)։

=Բնաձայն բառ։

Գիմ.—Տարածուած է ամէն կողմ տֆալ կամ տճֆալ ձևով (Խրբ. Պլ. Մշ. դֆալ), որի կրկնականն էլ կայ տֆտֆալ և տճֆտճֆալ ձևով։

Տքճիլ տե՛ս Քուն։

*ՏՕԹ, ո հլ. «սաստիկ տաքութիւն» ՍԳր. «սաստիկ տաք» Եզն. որից տօթոյ «սաստիկ տաք ժամանակ, տաքին» Ոսկ. մ. ա. 10. տօթացեալ Առակ. իմ. 13. տօթագին Ես. ժբ. 4. տօթաժամ Բ. Թգ. դ. 5. Ես. պտմ. ա. 2. Մծբ. 72. տօթաժամանակ Եփր. Թգ. տօթային Վեցօր. ևն։

=Պհլ. *tāft ձևից. հմմտ. պհլ. 𐭬𐭠𐭥𐭲 tāftan «եռալ, եփուիլ», պրս. تفت taft «տաքութիւն, սաստիկ տաք, տօթ», تافتن tāftan «ջերմանալ, ջերմացուցանել», աֆղան. tōd, oss. t'aft, t'äf «տաքութիւն», հինդ. तप्त tupt «տաք», tutta «տաք», սանս. tapti- «տաքութիւն», tapta- «ջերմ, տաք, կիզիչ» ևն, որոնց ծագման և միւս ցեղակից ձևերի վրայ տե՛ս տապ:—Հիւբշ. 254։

Böttich. ZDMG 1850, 363, Arica 80, 332, Lag. Urgesch. 448 համեմատում են սանս. tapti բառի հետ։ Տէրվ. Նախալ. 83 հյ. տապ, պրս. taft, հալ. topiti «ջեռուցանել» են բառերի հետ հնխ. tap արմատի տակ։ Հինք. եգիպտ. բաւր «Հերմէս, ամառ» ձևից. յիշում է նաև պրս. թաֆթն: Վանցեան, Պատմ. քերակ. 145 ո բացատականով օդ բառից!

Գիմ.—Ախց. երև. Կր. Ղղ. Ջղ. Տփ. տօր, Մշ. տօտ:

ՏՕԼԱԹ «բաշ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մաղաք աբ. 7. «Ոտքերն (թաթարաց) կարճ զերդ ըղխողի, մօրուս բնաւ իսկի չունէին, տօլաթ ունէին զերդ առիւծի, ձայնն ճիչող քան զարծուի»։ Տաշեան ՀԱ 1932, 402 մեկնում է «պարանոց». բայց յայտնի չէ որտեղից հանելով. ես դրել եմ «բաշ», որովհետև «տօլաթ ունէին զերդ առիւծի»։

+ՏՕՆ, ի հլ. «հասարակաց հանդէս, հանդիսաւոր օր» ՍԳր. Սեբեր. Ոսկ. մ. բ. 14. որից տօնել ՍԳր. տօնախմբել Ագաթ. Կորիւն.

տօնական *Ագաթ. Ոսկ. Կորիւն.* **տօնավաճառ** *Իմ. ժե. 12.* **տօնապետ** *Կիւրղ. գնձ.* **նախատօնական** *Փիլ.* **յառաջատօնական** *Փիլ. Եւ.* **վերջատօնական** *Ածաբ.* **խորհրդատօն** *Փիլ. բառըն.* **զուգատօնել** *Նիւս. աքանչ.* **պասեքատօն** *Նար. բր.* **տօնամակ** *Գր. վկ. (Զարբհանալեան, Բրգմ. 722—3),* **տօնակատարութիւն** *(նոր բառ)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* dapni- *ձևից, որ նշանակում էր «զոհ». համմտ. հիսլ.* tafn *«զոհի անասուն, զոհ, ողջակէզ», լտ.* daps, dapes *«աստուածներին նուիրուած զոհ, նուիրական խնջոյք, հացկերոյթ»,* dapino *«առատ խնջոյք տալ», յն.* δαπάνη *«ծախս»,* δαπανάω *«ծախսել»,* δεῖπνον *«ճաշ, նախաճաշ, ընթրիք»։ Այս բոլորը յառաջանում են հնխ.* dāp-, dəp- *«բաժանել, բաշխել» արմատից (համմտ. սանս.* dāpayati), *որ ինքն էլ աճած է* p-*ով՝ պարզական* dā- *«բաժանել, մաս մաս անելով բաժանել» արմատից. համմտ. յն.* δαίομαι, δατέομαι *«բաժանել»,* δαιτύς *«բաժին, ճաշ, զոհ» են (*Boisacq 166, Walde 220, Pokorny *1, 764։* Meillet Dict. étym It. *243, որ լտ.* dapināre *ձևի մէջ* n *նոյն է դնում հյ.* **տօն** *և հիսլ.* tafn *բառերի* n-*ի հետ)։ Նոյն խմբին են պատկանում նաև հյ.* **տի** *«տարիք» և* **տուար** *«արջառ», որոնք տե՛ս առանձին։*

Հներից Տաթև. ամ. 654 սխալ է մեկնում իբր օտար բառ. «Տօնն Յարդմանի ուրախութիւն և պայծառութիւն... քանզի անունս այս ոչ է ի մեր լեզուէ, այլ յօտար ազգաց. զի նոքա զուրախութեան կամ զհարսանեաց տօն անուանեն և զպայծառ հանդէս՝ տօն կոչեն»։ Նշ հբ լծ. Բրբ. **տիւիւն** *«հարսանիք»,* **տօնանմա** *«հրավառութիւն»։ Ալիշան, Հին հաւ. 458 հյ.* **տալ, տուրմ,** *Արդիացոց Հերա դիցուհեայ* Tonée. *կոչուած տոնական օրերը։* Patrubány SA *1, 18 տարբեր է դնում վօթյ.* d'uonjos *«արձակուրդ», իսկ* SA *2, 175 տալիս է ուղիղ մեկնութիւնը, որ ընդունում են* Pedersen *Հայ. դր. լեզ. 30,* Lidén, Arm. Stud. 9, Walde 220, Meillet, Esq. latine *էջ* 78: Karst, *Յուշարձան 424 ԲԲր.* tam, tom, ton *«հաւաքուած», ույգուր. չաղաթ.* tömen *«դէզ», նաև Բրբ.* düyün *«հարսանիք»,* donanma *«հրավառութիւն»։ Մառ* ИАН *1911, էջ 472 վրաց.* **նոնա** *«զատկական ձու հաւաքելու երգ»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 80 դրում է թէ Մառ, անդ՝ էջ 441 կցում է վրաց.* ծանա *«խրախճանք, տօն» բառին, որին աւելացնում է ինքը մինդրել.* **նաև** *«հրաւիրել, կանչել»։*

Ըստ այսմ պատահական նմանութիւն ունի ասոր. ܫܡܟܐ *ṣemxā «ընձիւղ», արմատը* ṣəmax *«ծաղկիլ», որ ընդհանուր սեմական է, ինչպէս ցոյց են տալիս եբր.* צמח *ṣāmaḥ «ծիլ» և արաբ.* samaḥa *«ծլեց»։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 244 համարում է արաբերէն, բայց չի յիշում այդ հետաքրքրքիր բառը, որից պիտի սառնայինք* ցմախ (ց *ձայնով)։*

ԳԻՒ.—Խոջ. ցմախ *«օղի պատրաստելու համար քիթուեցրած խմորուած թուք ևն»։—Խալաթեան, Ար. ազգագր. 24 գիտէ նոյնպէս (իբրև գուռ. բա՞ո)* ցմախ *և* ցմախտակ *«մի տեսակ վայրի ծառ և նրա տերևը, որ տեղ տեղ կանայք դնում են իրենց ստինքների վրայ, երբ մանուկին կաթից կտրեն» (այսպէս նաև Վրք. Հց. ա. 688)։*

Ցնդիլ *տե՛ս Ցունդ։*

ՅՆԴՎԱՐ *«մի տեսակ բոյս, զրմբատ,* curcuma zerumbat*» Ոսկր. որից առնելով ունի միայն ՀԲուս. § 3017 և § 727։*

ՅՆՅԱԼ *«ուրախանալ, խայտալ» ՍԳր. Եփր. ծն. Բուզ. որից* ցնծութիւն *ՍԳր.* ցնծալից *Ագաթ. Փարպ.* ցնծալի *Պիտ. ևն։*

ՆՀԲ «ուրախանալ... հանդերձ դնելմամբ... սրտի, ցնցմամբ մարմնոյ»։ Հիւնք. սինձ, սոսինձ *բառերի հակառակն է և արմատակից է* ցնցել *բայինն։* Scheftelowitz BB 28, 293 *սանս.* čhandas *«ուրախութիւն» են։*

ԳԻՒ.—Տփ. ցնձալ *«հրճուիլ», Մշ.* ցնձում *«ուրախութիւն», Երև.* ցնձին տալ *«ցանքը գեղեցիկ գոյնով փայլիլ», իսկ փիսր. կամ կակ. Կր. Ղրբ. Մկ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ.* ցնձալ, *Զթ.* ցօնձօլ, ցօնձոլ *«տալ, դըրամը վճարել»։*

ՅՆԿՆԻԼ *կամ* **ՅՆԳՆԻԼ** *«ծնիլ» (ասւում է անասուններին, կամ անարգաբար նաև մարդկանց համար) Ոսկիփ. Յայսմ. յուլ. 3. որ և* ցկնիլ *Վասակ. 221։*

Ոմն xxx*, Արև. մամ. 1902, էջ 468 դնում է* ցակաձել *բայից, իբրև չարշաբուիլ։*

ԳԻՒ.—Ախց. Կր. ցրնկնիլ, *Մշ. Ջղ.* ցրնգնել, *Դոր. Շմ.* ցրնգնիլ, *Երև.* ցրնգնէլ, *Ագլ.* ցրնգնիլ, *Մկ.* ցրնգ՛նիլ, *Սվեդ.* ցրնգնիլ, ձ՛ըյնիլ, *Զթ.* ցր՛նգնալ, *Հճ.* ցոնգնել, *Խրբ. Ռ. Տիգ.* ցրգնիլ, *Ղրբ.* ցրղնէլ, *Ակն. Պլ.* ցրյնէլ, *Ասլ.* ցրյնէ՛լ, *Սեբ.* ցրյնիլ, *Ննխ.* ցրնձել, ցրնէլ, *Սլմ. Վն.* ցինել, *Մրզ.* ցինէլ.—*որից* ցնկնոտել *«շատ ձագեր ցնկնել»։*

ՅՆՈՐ, ի *Հլ. (անհզաբար գործածուած) «երևակայութիւն, աչքին երևեցած բան, երազ, արհաւիրք» ՍԳր. Ագաթ. Կոչ. Եւագր. Սեբեր. որից* ցնորիլ *«միտքը ցնդիլ, յիմարիլ» Ագաթ. Եզն.* ցնորական *Սեբեր. Ոսկ. մ. ա. 10.* ցնորակոծ *Կոչ. 312, 315* ցնորեցուցանել *Ոսկ. մ. ա. 6. Եւագր.* խելացնոր *Ագաթ. Փարպ.* խելացնորեցուցանել *Ագաթ.* բազմացնոր *Արիստ. աշխ.* ցայգացնոր *Սեբեր. 150։*

ՆՀԲ «սին երևոյթ»։ Հիւնք. ներել *բայից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 226 գոթ.* skeinan *«երևիլ» բայի հետ՝* -nr *մասնիկով։*

ԳԻՒ.—Ախց. Կր. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. ցնորիլ, *Ջղ.* ցնորվել, *Ագլ. Մշ.* ցնորվել, *Շմ. Տփ.* ցնորվիլ, *Երև. Ննխ.* ցնորվէլ *«զառամութիւնից խենթանալ, մտքով ցնդիլ»։*

ՅՆՈՐԲԵԼ *«ցանկալ կամ հոգալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 318։*

Ցնցոտի *տե՛ս Ջունձ։*

Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 70 կցում է հլ.* ցոիմ=*լտ.* scindo, *զնդ.* sid- *«ճեղքիլ» բային և հանում է հնխ.* sk'intsk'o- *ձևից։*

ՅՆՅՈՒՂ, ո *Հլ. «խողովակ, մէջը փոս անցք» Սեբեր. «ականջի լսողական խողովակը» Եղիշ. յիս. էջ 175 (ցնցուղս ականջաց), Բուզ. դ. 12 (...զամենայն լսելեացն*

*ցնցուղս ականջացն և սրտիցն երկրին. ձեռ. և տպ. ցուղս, որ Նորայր, Հայկ. բառաք. 30 և Կոր. վրդ. 251, աւելի ուշ Աճառ. Ձեռ. սրբագր. Փաւստոսի մէջ՝ ուղղում են ցնցուղս. սխալը յառաջացած է կրկին ցն տառերի շփոթութեամբ). «ստինքի կաթնատար խողովակները» Սասն. էջ 67. «ջրի ցայտում, սրսկում» Անյ. և Շ. բրբր. «կրակի կամ լոյսի ցոլք» Լաստ. Նար. որից ցնցղաճալ կամ ցնցղկաճալ «ցայտել, դուրս ժայթքել» Բուզ. ե. 28. ցնցղաձև Վեցօր. 78 (տպ. ցրնցղղկաձև՝ ինչպէս դնում է նաև ԱԲ). կինասցնցուղ Նար. (նոր գրականում ցնցուղ նշանակում է «ջուր սրսկելու գործիք, arrosoir» և այս իմաստի համեմատ է կազմուած ցրնցղխել (իմա՛ *ցնցղել) «զրամները վատնել, ցրուել, փճացնել» Առաք. պատ. 113)։*

Նշ Ք «իբր ցնդող հիւթից կամ ցնդելոյ ուղի»։ Տէրվ. Altarm. 43 *կրկնուած է ցուղ (իմա՛ և հմմտ. ցօղ) պարզականից, որ համարում է պահուած Բուզանդի մօտ։ Հիւնք. ցուց, ցնցել ձևից։ Պատահական նմանութիւն ունին վրաց. ծիւծկլվա «ցնցղել, սրսկել», ծիւծկլի «սրսկում, ցայտք», ծուծկլի, ծուծլի «սրսկում, կաթիլ»։*

ԳԻՒ.—Ղրբ. ցո՛ւնծուխներ «այդ, արևածագ», որից նաև ցնցղնել Պլ. «սրսկել, ցանել»։—Նուպարեան, Բառ. Ֆրանս. էջ 119 ունի գւռ. ցուղ «bronche, Բորբերի ցնցուղ» և էջ 196 ցուղ «ադուզայ, փողրակ, conduit». *բայց երևի սխալման արդիւնք է։*

ՅՈՂԱՆ *«հոսեալ սերմն առն, արուիւնք», Բժշ. (այլ դեղ ցողանի որ յարանց անկանի). ունի միայն Նորայր, Բառ. Ֆր. 1131 բ։*

ՅՈՂ *«ծխի և շոգու վեր բարձրանալը. 2. փայլ. 3. կրակի գոյ». առաջին իմաստով չէ աւանդուած հնից. երկրորդ իմաստով ունինք յետնաբար՝ Նար. երրորդ իմաստով դառնում եմ Վրք. և վկ. Բ. 319՝ Մաւալեցան շուրջ ցոլն և ղրագումս խարշեաց. ելեալ ցոլ փոքրիկ ի հնոցէն։ Սրանից ցոլանալ «ծուխը կամ շոգին վեր բարձրանալ» Ոսկ. մտթ. Նղն. ցոլել «կրակը դուրս ժայթքիլ» Բրս. մրկ. ցոլալ (գրուած ցողալ) «փայլիլ, փայլփլիլ» Ածաբ. ցոլական Շիր. ցոլացութիւն, ցոլացումն Յհ. կթ. ցոլումն Փիլ. Յհ. կթ. կայծակնացոլ Մխ. ապար. արտացոլում, արտացոլել, արտացոլութիւն (նոր բառեր)։ Այս բա՞ռն է որ Բառ. երեմ. էջ 318 գրում է ցոլանալ «սլանալ, փութալ, բացիլ» և ցողացեալ «աճապարեալ»։*

Նշ Ք լծ. հյ. ծաւալումն, յն. σελάς *«ճաճանչ»։ Տէրվ. Մասիս 1881 մայ. 5 յն.* σχίλλω *և լտ.* calere, calor: *Հիւնք. լտ.* sol *«արեգակ»։* Scheftelowitz BB 28, 289 *լտ.* caleo, calor, calidus, *լիթ.* šilti *«տաքանալ» և սանս.* çṛta *«եփած» բառերին ցեղակից։ (*Walde *112 յիշում է մեծ կասկածով)։* Patrubány *ՀԱ 1905, էջ 253 արմատակից և հականիշ է դնում սառն բառին. հմմտ. լտ.* calere, calidus, caldus *ևն։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. երև. խրբ. Կր. Մշ. Ննխ. Սչ. ցօլալ, Սլմ. ցէօլոլ «փայլիլ», որից ցոլուն Ննխ. Սչ. «մարուր, ջինջ», ցոլցլալ Ւզտ.։ (=Մկ. ցէօ'լցլ'ալ') «փայլփլիլ». նոյն է նաև ցօղ երև. «արևի ճառագայթ». Ախք. ցօղալ։

ՓՈԽ.—Կայ վրաց. ცოალე ցիալե «աստղերի պլպլալը, արևի՝ լուսնի փայլ», მოცოალე մոցիալե «պլպլուն»։

Ցող *տե՛ս Ցօղուն։*

ՅՈՂԿ *«բաղմոտանի գիշահոտ մի որդ, օձասանտր, Բրք. խըրխաչախ». ունին միայն ԱԲ. և Քաջունի, Հտ. Գ. 241՝ իբր Ֆր.* scolopendre. *սրանից նոր է կերտուած ցողկենի «մի տեսակ բոյս,* scolopendrium vulgare Sm. *(ըստ Տիրացուեան,* Contributo *§ 6)»։*

+ՅՈՅՅ *(ի հլ. ըստ Նշ Ք, բայց բերուած վկայութիւնները չեն տին են) «արտաքին երեւոյթ, ձևակերպութիւն» Մտթ. ղ. 1, իղ. 5. Ոսկ. «նշան, օրինակ, փորձ, գաղափար» Ոսկ. յհ. ա. 21, բ. 19. Եւագր. «ծաղր, խայտառականք» Օր. իր. 37. Սերեր. «փաստ, ապացոյց» Յճխ. Փիլ. որից ցուցանել ՍԳր. Նղն. ցուցակ Փարպ. ցուցիչ Եւս. պտմ. Վեցօր. ցուցումն Ոսկ. յհ. ա. 20. նորացոյց, Ոսկ. մ. ա. 4. Ագաթ. նահապարհացոյց Կոչ. մատնացոյց կամ մատնցոյց Գ. մկ. ղ. 22. Յոբ. լդ. 26. Եփր. ծն. և ել. յառաջացոյց*

Ագաթ. նկարացոյց *Ագաթ.* հրեշտակացոյց *Փարպ.* ճնարացոյց *Սեբեր.* երազացոյց *Սեբեր.* *Ագաթ.* կանխացոյց *Սեբեր.* ապացոյց *ՅԿ. իմ. Երև. Անյ.* **Նոր բառեր են** ցուցամոլ, ցուցամոլութիւն, ցուցամասն, ցուցաճանճել, ցուցաճանդէս, օրացոյց, կողմնացոյց, գրացուցակ, դասացուցակ, ցուցարար, ուղեցոյց, ցուցադրել, ցուցադրական, ցուցակագրել, ցուցակագրութիւն *ևն:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* skeu-sk'- *ձևից, որ յառաջանում է* skeu- *«դիտել, նկատել» արմատից՝* sk' *ածականով. ժառանգակից ձևերից յիշատակելի են հբգ.* scouwōn *«դիտել», հսաքս.* scauwōn, *նրգ.* schauen *«դիտել», գոթ.* skuggwa *«հայելի»,* us-skaws *«շրջահայեաց», հհիւս.* skýgna *«լրտեսել», չեխ.* skoumati *«նշանակել», պհլ.* šköh=*պրս.* شکوه šikūh *«փառաւորութիւն, փառք, շուք» (իրան. <*skauaθa-), *նոյն արմատը առանց նախաձայն* s-*ի՝ յն.* κύέω *«նկատել»,* ἀκούω *«լսել»,* ἀμνο-κῶν *«գառնաբած>միամիտ, պարզամիտ, անմեղ» (բայց նաև* s-*ով* θυο-σκόος *«զոհի տեսուչ»), լտ.* caveo *«զգուշանալ, հսկել», ռուս.* чуять *«զգալ, իմանալ»,* чудо *«հրաշք» (Հմմտ. գուս.* **ցուցանիմ**), *սանս.* kavi- *«դէտ, գուշակ, մարգարէ, իմաստուն»,* ā-kuvate *«ի նկատի ունենալով», զնդ.* čəvīšī *«վստահ՝ լիայոյս էի» ևն (*Pokorny *1, 370,* Boisacq *480,* Walde 143): *Հայերէնը պէտք չէ համարել անցողական, իբր* *ցու–ուցանել *«դիտել տալ», որովհետև այս պարագային հրամայականը պիտի լինէր* *ցո, *այլ ածած* sk' *ածականով:*

Böttich. Arica *69, 131* **ցուցակ** *բառը կցել է սանս.* čakšas *ձևի հետ: Տէրվ.* Altarm. *44—45* **ցից, ցուց** *են ձևերի հետ՝ հնխ.* sta, stu *արմատից. Հմմտ. յն.* στευ-, *լիթ.* stoviu, *լթթ.* stawė *են: Հիւնք.* **ուսանիլ** *բայից:* Bugge KZ 32, 76 *համարում է հյ.* **տես**, *յն.* δείκνυμι *և սանս.* diç *բառերին արմատակից* *տիս *ձևից, իբր* *տիսուցանել>տուցանել>* *ծուցանել>***ցուցանել**: *Ուղիղ մեկնեց* Meillet MSL 8, 296—7 Esq. 78 *(նոյնը* Scheftelowitz BB *28, 294, յետոյ* Benveniste MSL № 95, *էջ* 76): Patrubány SA 1, 211 *հնխ.* k'yousk- *ձևից. Հմմտ. սանս.* čyávam. *յն.* σεύω *«վարել, մղել»:* Pedersen KZ 38 (1905), 410 *յն.* δείκνυμι = *հյ.* *տուցանել>**ցուցանել**:

ԳԻՒ.—Ալշ. Մշ. **ցուցնել**, *Նախ. Պլ. Ռ.* **ցուցուցնել**, *Մշ.* **ցըցրնել**, *Ախց. Կր. Սեբ.* **ցըցրնել**, *Ասլ.* **ցըցրնէ՛լ**, *Խրբ. Տիգ.* **ցըցրնիլ**, *Զթ.* **ցը՛ցը՛նիլ**, *Սվեդ.* **ցըցցրնիլ**, *ՀՃ.* **ցոցոնել**: **Նոր բառեր են ցուցաւիճ, ցուցարաւիճ, ցուցուլաւիճ, ցուցիճ:**

ՅՈՎԻԼ *«երևիլ կամ բերկրիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 318:*

ՅՈՎՐԱԴՈՅՆ *«անդօրագոյն». ունի միայն Բառ. երեմ. էջ 318, որից հետևում է արմատական* *ցովր *«անզօր»:*

ՅՈՎՐՆԻ *«ցրուել, տարածել». ունի միայն Բառ. երեմ. էջ 318:*

ՅՈՐԵԱՆ, n *հլ. (գրծ.* **ցորեաւ** *ունին երեմ. իգ. 28 և Սիր. ծն. էջ 112, ուր տպուած է* **ցորենեաւ**. *կայ և բցո. ի* **ցորեանյն** *Իրին. 15, որոնք ևնթադրում են ուղ.* *ցորենի) *«ցորեն» ՍԳր. Սիր. ծն. որից* **ցորենաճաւ** *Փարպ.* **ցորենաբաշխ** *Ան որս.* **ցորենաշաւ** *Վրդն. ծն.* **բազմացորեան** *Պատմ. աղէքս.* **ցորենավաճառութիւն** *(չունի ՆՀԲ) Եւթաղ. 175.* **եգիպտացորեն** *կամ* **մարացորեն** *(Նոր բառեր). գրուած նաև* **ցուրեան** *Վրդն. առկ. 27:*

Böttich Arica 79, 309 *սանս.* çūla, *որ դառնում է* kuçūla *«ի՛նչքան ցորեն ունեցող» բառի մէջ:* Lag. Urgesch. *386 սանս.* čarṇ *«աղալ, մանրել»:* Pictet *1, 276* **ձաւար** *բառի հետ, իսկ 1, 264 հիւլ.* tuireann *և սանս.* tṛṇa *«խոտ» բառերի հետ, որ ընդունում է* Bugge KZ *32, էջ 45: (Նոյնը կասկածով նաև* Pokorny *1, 744՝ նախաձևը դնելով* toriană *«ցորեան»): Հիւնք. պրս.* zar *«ոսկի»:* Patrubány SA 1, 195 *սանս.* kšurás *«ածելի, մկրատի բերան, դրժնիկ», յն.* ξυρός *«ածելի»: Նոյն ՀԱ 1908, 187 սանս.* ghásati *«ուտել», լթթ.* goste *«հացկերոյթ» բառերի հետ* ghés- *արմատից՝* r *և եան մասնիկներով:* Karst, *Յուշարձան 415 մոնգոլ.*

tari «սերմանել», tarja «հատիկ», թուն-գուզ. tarin «ցանք», թրք. tarla «արտ», 426 թթր. tar, ter «ցանել, սփռել», չուվաշ. tyra «ցանք»: O tir, Btrg. alarod. 108 հիոլ. tuirend, ափխազ. adčaradz, վար. ači, սումեր. še ևն: Scheftelowitz KZ 53 (1925), էջ 252 սանս. káṇa «հատիկ», հբգ. skeren «հնոցանել, անջատել» բառերի հետ, որոնց ինքը KZ 54 (1927), 225 միացնում է նաև ցիր, ցրել:

ԳԻՒ.—Ջղ. վն. ցորէն, Ալշ. Մշ. Սչ. ցօրեն, Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Ննխ. Ռ. Սեբ. Տփ. ցօրէն, Պլ. ցօրէն (հին ձևն է ցէօրէն), Ասլ. ցէօրէ՛ն, Մրղ. Սլմ. ցէօրէօն, Շմ. ցօրան, Համշ. ցօրին (սեռ. ցօյնի), Տիգ. ցօրին, Մկ. ցուրին, Հճ. ցիյէն, Զթ. ցիյին, ցիրին, Ավհգ. ցիրին, Մղր. ցո՛ւրան, Ագլ. ցա՛րան, Հւր. ցուրուն:—Նոր բառեր են ցորենապուր, ցորենաէր, ցորենուկ, ցորենարտ, ցորենտեղ, ցորենհաղ, ցորենագունի, ցորենուկխոտ, ցորենաղանձ, ցորենոց, ցորենամորթ ևն:

Յու տե՛ս Յիւ:

+**ՅՈՒԼ**, ու հլ. «անմալ եղ, բուղա» ՍԳր. Ագաթ. Եզն. Եւս. քր. «ցուլ կենդանակերպը» Շիր. Նոնն. «մի կնոջ ապօրինի սիրականը» Սմբ. դատ. 120, 121. որից գլագլուխ Պտմ. աղէքս. գլանձ Գնձ. գլափիղ Սամ. անհց. 67. Շիր. քրոն. գլիկ ՅՀ. կթ. ծովացուլ Եզն. իշացուլ Եզն. Ոսկ. մ. գ. 6. Եւս. քր. ձիացուլ Եւս. քր. մարդացուլ Յայսմ. գլամարտ (նոր բառ):

=Բնիկ հայ բառ՝ հնխ. skulu- ձևից, որ նշանակում էր նախ «մատաղ ցուլ» և յետոյ դարձաւ «ցուլ». արմատը պահում է միայն յն. σκύλαξ «շնիկ, շան ձագ» (-αξ մասնիկ է. համմտ. μεῖραξ), σκύλιον «ծովի շուն», κύλλα (Հսիւք.) «շնիկ», σκύμνος «անասունի ձագ» և յատկապէս «առիւծի կորիւն»: Նշանակութեան զարգացման համար համմտ. հալ. Junĭcĭ և լտ. juvencus «անասունի ձագ», բայց յատկապէս «ցլիկ»:

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 ու բնաձայնից: Böttich Arica 65, 56 սանս. çūla «նիզակ» և çūra «վարազ» բառերի հետ՝ çr արմատից: Müller SWAW 42, 255 համմտ. գոթ. stiur, սանս. sthūra: Տէրվ. Altarm. 43, Մասիս 1881 մայ. 5, Երկրագունտ 1884, 53, Նախալ. 114, 171 սանս. sthūra, զնդ. stâra, գոթ. stiur, յն. ταῦρος, լտ. taurus, հսլ. turĭ, հլ. դուար հոմանիշների հետ: Նոյնը նաև Bugge KZ 32, 45: Հիւնք. լի, լցուցանել ձևից: Pedersen, Հայ. դր. լեզ. 189, 191 ենթադրեալ *ուցն ձևից (տե՛ս եզն), իբր uqsōlo-> ցուլ:—Scheftelowitz BB 28, 289 սանս. çūr «առիւծ, վարազ»: Մառ, О полож. абхаз. ափխ. ацы, ИАН 1917, 315 ավար. оц, ափխ. ацр «ցուլ», իսկ ՀԱ 1921, 83 վրաց. սուլի «հոգի» բառի հետ (իբր «կենդանի»): Petersson Ar. u. Arm. Stud. 84 հլ. սողլի, սողուն բառի հետ լիթ. šūlỹs «քառատրոփ», լիթթ. sūlis «քայլ». մրգ. schel «ցատկող, վայրենի», հբգ. scelo «յովատակ» (հնխ. sk'ōl-): Ուղիղ մեկնից Meillet BSL № 79 (1925), 20:

ԳԻՒ.—Ագլ. ցուլ «բուղա», Մրղ. ցուլ «արու գոմէշ», Նբ. ցլեկ «հասմեայ կով», ոճով աստում է Երև. ցուլ գ'ալ, Մշ. ցլի գ'ալ, Ալշ. ցլալ, ցուլ առնել ևն «կովի ցանկալը ցուլին»:

Յուղ տե՛ս Ցնցուղ:

Յում տե՛ս Ցամն:

ՅՈՒՆԴ «սփռուիլ, տարածուիլ, ցրուիլ». արմատ առանձին անգործածական, որից բազմացուն «բազմատիւս, աճած» Ագաթ. ցնդել «սփռել, ցրուել, տարածել» Ագաթ. Մանդ. ցնդիլ «ցրուիլ, հոսիլ, սպառիլ, ցնորիլ» ՅՀ. իմ. ՅՀ. կթ. Անյ. պորփ. Մագ. ցնդումն Աո որս. ՅՃխ. Շար. ցնդանիլ. Գնձ. նոմացնդիլ Մաքս. ևկեղ. անցնդելի Լմբ. մատ. էջ 3, ցնդողական (նոր բառ):

ՆՀԲ «ցանել՝ ցրուել իբր ցնցմամբ կամ ցայտմամբ»: Տէրվ. Altarm. 47 ցայտել, ցատկել բառերի հետ հնխ. skand- «ցատկել» արմատից: Հիւնք. սնդիկ բառից: Petersson. Ar. u. Arm. Stud. 70 ցոիլ բայի հետ լտ. scindo, զնդ. sid- «ճեղքիլ» ևն: Զևով նոյն են լիթ. skendaũ, հպրուս. au-skiendlai,

յն. σκινθός, *որոնք յառաջանում են հնխ.* sqendh- «*ջրի տակ գնալ*» *արմատից* (Pokorny 2, *էջ 565*, Trautmann 265, Boisacq 876), *բայց նշանակութիւնը տարբեր է։*

Գիր.—Ալշ. Մշ. ցնդել, *երև.* ցնդէլ, *Ախց. կր. Տփ.* ցնդիլ, *խրբ.* ցնդ՚իլ, *Զթ.* ցը՚նդալ, *Սլմ. Վն.* ցնբել, *Ննխ.* ցնբէլ, *Ակն. Ասլ. Պլ. Ռ. Սեբ.* ցնբիլ, *Հմշ.* ցնբուշ «*զառամութիւնից ցնորիլ*»։

ՅՈՒՆՑ «*թօթուել, շարժել, թափ տալ*». *որից* ցունց տալ *եպիփ. ծն. Ոսկիփ.* ցնցել *Ոսկիփ.* ցնցխել «*թափ տալ, թօթափիլ (իրան բռնողի ձեռքից փախչելու համար)*» *Դրնդ. 475.* ցնցում, ցնցիւն, ճոգեցունց, զգայացունց *(նոր բառեր)։ Նոյն բառն է նաև* ցանձել «*փակուած տեղից դուրս դալու համար այս ու այն կողմ ընկնել, տճկ. չապալանմաք*», *որի վկայութիւններն են՝ Յանցել ակնառան (Բանք ազ. 192). Ամենայն զօրութեամբ քո ցանձ տուր և քարշէ զազի քո... Իբրև ցանցեաց, հատաւ ագին (Վրդ. առ. 84, այլ ձմ.* ցունց տուր, ցունց եա, ցնցեաց). *Գալլն անկաւ յորոգայթ և սկսաւ ցանձել յայսկոյս և յայնկոյս. և աղուէսն ասէ. Ընդ նոյնդ և ես ցանցեցի երբեմն և ոչ զերծայ (Վրդ. առ. 88, այլ ձմ.* ցնցատել, ցնցել)։—*Զթ գրում է* ցանձել, *ՆՀԲ և ԱԲ* ցանցել *կամ* ցնցատել։

ՆՀԲ լծ. ցնդիլ։ *Հինք.* ցնծալ *բայից։ Պատահական նմանութիւն ունի կարաբդին* səs «*ցնցում*»։

Գիր.—Ախց. ցնցել, *իսկ Բլ. Մշ.* ցօնցել «*եղան՝ գլուխը ցնցելը*», *մարդոց համար էլ՝ «գլուխը վեր նետել՝ իբր բացասական նշան*»։

ՅՈՒՊ, ո *հլ.* «*ձեռքի գաւազան*» *ՍԳր.* «*մի տեսակ գաւազանաձև օդերևոյթ*» *Արիստ. աշխ.* «*լեռնային անպտուղ անծանօթ մի ծառ*» *Դան. ասոր. մնկն. սղմ. լզ (ըստ ՀԲուս. § 3028). որից* եղեգնացուպ *Յայսմ.* ցպիկ, անբացուպ *(նոր բառեր)։*

ՆՀԲ լծ. Բրք. չպուգ, չօփ... *արար. պրս.* չէյպ, չիյպ, *իսկ* սկիպտոս *ձևի տակ լծ. յն.* սկիպտոս։ Böttich Arica *74, 203*, Lag. Urgesch. 591, Müller SWAW 38, *էջ 578 սանս.* kšupa «*խրոխ, մացառ*» *և պրս.* čōb «*փայտ*»։ (*Յիշում է և մերժում* Pokorny 1, 501)։ *Տէրվ.* Altarm. *46—47 սրանց է աւելացնում նաև յն.* σκῆπτρον, *լտ.* scipio, *լիթ.* szapas «*փոքր ճիւղ*»։ Müller SWAW 88 (1877), 9 *սանս.* kšupa- (*փոխառութիւն չէ՛ պրս.* čōb *բառից*)։ Bugge KZ 32, 63 *սանս.* kšupa- *յատին ձևի տեղ դնում է վեդ.* kšúmpa- *համանիշը։ Հիւբշ. 499 անապահով է գտնում։ Հիւնք. պրս.* չօպ, *տճկ.* չըպըգ *են։* Karst, *Յուշարձան 424 չաղաթ. չուվաշ.* sapak, sabak «*կոթ*», *օսմ.* sopa «*բիր*», *426 չաղաթ..* tajak, *չուվաշ.* toja «*ցուպ*»։ Bittner WZKM 27 (1913), 130 *կցում է պրս.* چوب čōb «*գաւազան, բիր, ցուպ, փայտ*» *և թրք.* صوپ sopa «*բիր*» *բառերի հետ (Բայց իրան. բառի հին ձևն է պհլ.* čōp «*փայտ*», *որ պիտի տար հյ.* *ճոպ *և ո՛չ բնաւ* ցուպ)։ Petersson, Ar. u. Arm. Stud. 96 *լտ.* scōpa «*բարակ ոստ*» *բառի հետ, իբր հնխ.* sk͡ōbo-։ *Պատահական նմանութիւն ունի ճապոն.* ツエ tsuc «*ցուպ*»։

Գիր.—Մշ. ցուր «*բարակ ճիւղ*»։

ՅՈՒՊԱՆ «*խայծդան, խաթոան,* goudron». *ունի միայն Նորայր, Բառ. Ֆր.—Նոյն բառը սակայն Քաջունի, Հտ. Գ. 241 մեկնում է «հղոտ խիժոտ մախր»։*

Յուրան *տե՛ս Յուրան։*

ՅՈՒՐՏ, ո, ի *հլ.* «*պաղ, սառն*» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 20.* «*պաղ օդ, պարզ և ցուրտ եղանակ*» *ՍԳր. Մծբ. Եղն. Եփր. վկ. արև.* «*անշուք, տգեղ, անշնորհք*» *Ոսկ. ես. և յհ. Եսր. որից* ցրտաբեկ *Ոսկ. մ. գ. 8.* ցրտաբուխ *Վեցօր.* ցրտակէզ *Վեցօր.* ցրտաճարիլ *Եփր. Քգ. 376.* ցրտաշունչ *Ագաթ. Փարպ.* ցրտացուցանել *Երեմ. գ. 9.* ցրտուրիւն *Ա. Եզր. Բ. 6, բ. Եզր. ժ. 9, Եզն.։*

Klaproth, As. pol. 102 *պրս.* sarθ, *հինդ.* surdi «*ցուրտ*»։ Peterm. 23, 39 *պրս.* sard «*ցուրտ*»։ Windisch. 46 *սանս.* çarad «*աշուն*»։ Müller SWAW 40, 12 *համմտ. յն.* κρύος։ *Նոյն 41,6* սառն

ձևի պէս՝ զնդ. sarətō, պրս. sard «ցուրտ»։ Նոյնը Justi, Zendsp. 292 զնդ. sarəta ձևի տակ։ Տէրվ. Altarm. 48 և Նախալ. 72 սրանց հետ նաև լիթ. šaltas «ցուրտ», šalti «սառիլ», հյ. սառն ևն, իբր հնխ. çar «սառիլ» արմատից։ Հիւբշ. Arm. Stud. § 245 իբր բնիկ հայ՝ կցում է սառն բառին կասկածով։ Horn. Grdr. § 100 պհլ. afsartan, պրս. afsurdan «սառիլ» Հինք. արաբ. պէրտ և պրս. սէրտ «ցուրտ»։ Patrubány SA 1, 193 սանս. kšudra «փոքր, չար», kšud «ցնցել», իսկ ՀԱ 1905, 254 ըստ Տէրվ.։ Scheftelowitz BB 28, 294 գոթ. skura «տեղատարափ»։ (Այս համեմատութիւնը ուշադրաւ է գտնում Pokorny 1, 377 հնխ. k'ēuero- «հիւսիս, հիւսիսային քամի» բառի տակ, որի ժառանգներից են լտ. caurus «հիւսիսային քամի», լիթ. šiáurė և հսլ. sěveru «հիւսիս» ևն), Karsi, Յուշարձ. 425 ույգուր. նաթուդ. tong «սառոյց»։ Petersson, Ar. u. Arm. Stud. 62 (որ և Zwei sprachliche Aufsätze էջ 35) հնխ. sk'or-d- «ժայթքել, ցայտել» արմատից։ Պատահական նրմանութիւն ունին պրս. سرد sard «ցուրտ», որից փոխառեալ է արաբ. صرد ṣard «ցուրտ» (ըստ Կամուս. Բրբ. Բրգմ. Ա. 632), խունս. ցուէր «ցուրտ». վրաց. ցրիատի դղե «ամպամած և ցուրտ օր» (ուրիշ ձևով չի գործածուում)։

ԳԻՒ.—Ախց. Կր. Շմ. Ջղ. Տփ. ցուրտ, Երև. Ալշ. Մշ. Ննխ. Պլ. Սեբ. Սչ. Տիգ. ցուրդ, Մկ. Մրզ. Սլմ. Վն. ցուռտ, Համշ. ցույդ, Գոր. Ղրբ. Ագլ. ցօռտ, Սվեդ. ցօրդ, Ասլ. ցիւրդ, ցիւր*.—նոր բառեր են ցրտիլ, ցրտատար, ցրտաճարուիլ։

ՅՈՒՑ, ո հլ. «ուրախութիւնն խաղ, երգ, պար, կայքիւն» Ագաթ. Ոսկ. ա. տիմ. Խոր. Ոսկիփ. (գրում է սխալմամբ ցոյց). որից ցցաւաց Մաշկ.։

ՆՀԲ ցուցմ (ցնծութիւն) կամ ցոյց (ցուցանել) ձևի հետ, էմին, Վէպք հնոյն Հայաստ. էջ 97 մերժելով ցուցն ձևը, մեկնում է իբր ցոյց («զգործողութիւն դուսանին, որով սա հանդիսացնէր զգործս որևէ անձին ցուցանէր»)։ Հինք. ցոյց բառից։ Մառ, Христ. вост. 2 (1913), 27 վրաց. თუთა բուրա «լուսին» բառի հետ, որ նշանակում է նաև «շարժում». նոյնը գտնում է šuš ձևով՝ վրաց. შუშპარი շուշպարի, սվան. šüšpär «մի տեսակ պար» բառերի մէջ։ (Բայց դրժբախտաբար հյ. շուրջպար բառն է!)։

ՅՈՓ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «մեղկ, թոյլ, թուլամորթ, թեթևամիտ, շաղփաղփ» Առակ. ժ. 8, իէ. 20. Ոսկ. Ես. 324 («շառլատան» իմաստով) և մ. բ. 12. Խոր. «արագ խօսող, լիտանն» Տաթև. Հարց. 251. որից ցոփացուցանել Եւագր. ցոփացուցիչ Ագաթ. ցոփութիւն Երեմ. գ. 7, բ. մկ. ղ. 21. Ագաթ. ցոփոգի Մանդ. ցոփարերան Վեցօր. 119. ցոփանք Մանդ. ցոփիճանեմ, ցոփիճրնքաց Նար. տաղ. (երկուսն էլ սխալմամբ գրուած յոփիճանեմ, յոփիճրնքաց)։

Հինք. հյ. բոզ. պրս. ֆոշ ձևից։

ԳԻՒ.—Խրբ. ցօփ «թոյլ, լայն (օր. մատանին մատին, կացնի կոթը ծակին, կօշիկը ոտին)», Կր. ցօփ, Տիգ. ցուփ «անամօթ, լիրբ». Ախց. ցօփցած «լայնացած» (օր. գուլպան ոտին. բայց նաև մարդոց համար է ասում). Տիգ. ցուփնալ «բանալին փճանալ». Բլ. Մշ. ցօպնել, ցօպնըվել «անբարոյական ճանապարհ բռնել»։ Նոյն է նաև ցուփ բռչել, ցուփ կանգնել Երև. «մի ոստիւնով թռչիլ՝ կանգնիլ», ցուփ գնալ, ցուփ ման գալ Երև. «ոտքերը թեթևակի բարձրացնելով ման գալ» (Ամատունի, Հայոց բառ ու բան 645), որոնց հետ համմտ. ցոփիճրնքաց, ցոփիճանեմ։

ՓՈԽ.—վրաց. ცოფი ցուփի «կատաղած, կատաղի, շնախտ» Մատթ. ե. 22, ცოფიანობა-ცუფიანի (ძაღლი ձաղլի) «կատաղած շուն», ნაცოფევ սիցուխե «կատաղութիւն, յիմարութիւն, զայրոյթ», განცოფება գանցուխերա «զայրացնել, բարկացնել, սաստիկ կատաղեցնել», დაცოფვა դացուխվա «թունաւորել»։ Բայց հայերէն և վրացերէն բառերի նշանակութեանց այսքան տարբերութիւնը չի թող-

նում ենթադրել որ մին միւսից փոխառեալ լինի, այլ մատնանշում է մի երրորդ աղբիւր։

ՅՈՒ *«խուխ ի պէտս շերամոց». ունի միայն Քաջունի, Հա. Գ. էջ 242։*

ՅՈՒԿԻԼ *«դուրս ցայտել (ջուրը, լոյսը)» Ագաթ. Մագ. գրուած է նաև* ցիւղկիլ· *որից* ցոկեցուցանել *«յանկարծ յարձակիլ, ցատկեցնել, յառաջ հոսիլ», որ գիտէ միայն ՀՀԲ. արմատն է* ցուղ, *ինչպէս ցոյց են տալիս դաւառականները. բայց այս բառը նո՞ւն է արդեօք միւս* ցուղ *«դունչ, քիթ» բառի հետ, ինչ որ անհաւանական չէ։*

ՆՀԲ ցուղ *բառից։*

ԳԻՒ.—Սրա արմատն է ներկայացնում ցուղ *վն. «նոր ծիլ», Բղ. Մշ. վն. «նորահաս տունկ» և ծծկ. Ոզմ. «տղայ, երախայ». նշանակութեան զարգացումը ճիշտ այնպէս է, ինչպէս* վազ *«ուռ խաղողի» և* վազել *(տե՛ս* վազ)։

ՅՈՒՈՒԿ, *ի–ա կամ ո հլ. «դունչ, անասունների քիթը» ՍԳր. Եղիշ. դտ. 179. որից* ցըւկակապ *Սիր. ի. 31.* ցոկեղ *Վրդն. ծն.* ցըւկակաբեալ *(ձևս.* ցուակաբեալ*) «քիթը վազելով» Եղիշ. դտ. 179.* ճաւացոուկ *Խոր.* ցոկաճաւ *(նոր բառ)։*

ՆՀԲ «քիթ մեծ... որպիսի են ցուոց» ասելով՝ թուի հանել ցիւ *բառից։ Հիւնք.* ձուկն *բառից։ Ալիշան, Հին հաւ. 355 իրան.* ցոխակ-կուաշ *«Արքայութեան պահապան շունը»!* Bugge KZ 32, 72 *լիթ.* krùkis, krùke *«խոզի ցուոկ» ձևի հետ, որ Հիւրշ. 499—500 անապահով է համարում։ Մառ.* ЗВО *22, 85 երկրորդ սիւնակի լեզուով* siri, *վրաց.* ცხვირი *ցխվիրի, լազ. չխվինդի «քիթ» բառերի հետ՝ իբր յարեթական արմատից։*

ԳԻՒ.—Ջթ. gonnuq *«կիսափուլ դար՝ բարձրութիւն» (Հմմտ. Թրք.* burun *«քիթ (մարդու կամ անասունի). 2. դուրս կարկառած հողամաս, հրուանդան»)։*

ՅՈՓԵԱԼ *անսովոր բառ. մէկ անգամ ունի Եփր. պհ. «Անսուրբ անձամբ ի սուրբն մերձենալ վնասէ, որպէս ցոփեալ աչք ընդդէմ արեգական հայեցեալ»։ ՆՀԲ մեկնում է «իմ՝ կամ ընթերցիր* ցաւագնեալ»։ *ԱՒ և ՋԲ չունին։*

Յրցել, Յեցուել *տե՛ս Ջրձել։*

Յցուիք *տե՛ս Յից։*

Petersson Ar. u. Arm. Stud. 13 *ծան. կցում է յն. σιδήρη Հոմանիշին, համարելով վերջինս Թրակո-փռիւգական փոխառութիւն. Հայերէնը ենթադրում է հնխ.* ski-sku-ni *(կրկնական)։*

ՅՐԹԵԼ. *նորագիւտ բառ՝ անյայտ նշանակութեամբ, «իրար հրմշտկել»? մէկ անգամ ունի Յովսիմ. 30ա (համառօտ խմբագրութիւն). «Տեսի կռնի մեծամեծք... և օձք... և այլ սողունս... դիմեցին ի վերայ իմ, և կամէին կլանել զիս. մօտ գային և ժողովէին առ միմեանս և զիրար ցրթէին»։*

Հ. Բ. Սարգիսեան (անդ) կարդում է ցաէին։

ՅՓՍԻ *«այծի մազից հիւսուած կոշտ կտոր» Նար. պտմ. բ. 23. ՅՀ. կթ. Սիրաք խ. 14. Վրդն. պտմ.—նշանակութեան ճշտութեան համար հմմտ. Բրդեղէն ոչ զգեցաւ, այլ միայն ցփսիս, այսինքն մազեղէնս (Յայտմ. հոկտ. 23). Եպիսկոպոսին զաղտեղեալ ցրփսին, այս է զմազեղէնն (Յայտմ. յունվ. 18). գրուած է ցպսի «մսի վրայից հագնելու ճրգնաւորական մազեղէն զգեստ» Առաք. պտմ. 195. ցպսի Տաթև. ամ. 669. նոր գրականում գործածական է միայն ցփսի ձևով և նշանակում է «շալ»։*

ՆՀԲ լծ. Թրք. սօֆ, զօֆ, Եբր. ցէպի *«այծ», տճկ. չէփիճ «ուլ»։*

ՅՔԻ *(սևս.* ցքայ*) «արմաւից պատրաստուած մի տեսակ արբեցուցիչ ըմպելիք, օղի» ՍԳր. Ոսկ. ես. Եփր. գևտ. էջ 208.—Բռ. երեմ. էջ 319 բացի սրանից տալիս է նաև «քիրտ, քրտինք» նշանակութիւնը։ (ի նկատի ունենալ որ ծծկ.* Ըտիճ *նշ. «օղի»)։*

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 314, որից ՆՀԲ լծ. յն. σίκερα, *լտ.* sicera, *Թրք.* սէքէր, *Եբր.* շէքար*։ Թաղիադեան, Առաջն. մանկ. էջ 85—86 հանում է* ձգել *«թորել, թորակով հիւթը քաշել,* distiller» *բայից։ Հիւնք. դնում է Եբր. և յն. ձևերը։ Պատահական նմանութիւն ունի ճապոն.* 酒 sake *«բրինձի օղի»։*

ՅՕԴ *«գոզ, մէզ», որից* ցօղել *«գոզել, միզել». երկուսն էլ ունի միայն Բառ. երեմ. էջ*

319. նոյն է անշուշտ գւռ. գէր, գիր «*մէզ*», գեբել, գիբել «*միզել*», *որ գիտէ նաև Բռ. երեմ. 210 մէզ բառի բացատրութեան մէջ* գէր *ձևով։*

ՅՕՂ, ո *հլ.* «*շաղ*» *ՍԳր. եղն. Սեբեր. որից* ցօղել *ՍԳր. Ագաթ.* ցօղագին *Ես. ժը. 4. Դան. գ. 5. Ագաթ.* ցօղալից *Ագաթ.* ցօղաճար *Ագաթ. Ոսկ. մ. գ. 30.* ցօղածին *Արծր. Գնձ.* ցօղաւոր *Շար. Գնձ.* մանրացօղ *Ոսկ. Ես. Վեցօր.* վերացօղել *Տօնակ.* ցօղաբուրմ, ցօղաբաթախ, ցօղաշաղ *(նոր բառեր)։*

Klaproth, As. pol. 105 *պրս.* čeh, čih «*ցօղ*»։ *ՆՀԲ լծ. ռմկ.* շաղ, *եբր.* բալ։ *Մորթման* ZDMG *24, 80 կցում է թրք.* چيڭ čiy *հոմանիշի հետ։ Տէրվ.* Altarm. *43 սանս.* stu «*կաթկթիլ*», stīka «*կաթիլ, կայլակ*». *կրկնաւորն է հյ.* ցնցուղ։ *Հիւնք. լտ.* sol «*արեգակ*» *բառից։ Մառ* ЗВО 19, 171 *վրաց,* ցվարի, *մինգր.* ցուճջի, ցուճդի *հոմանիշների հետ յաբեթական արմատից։ Թիրեաքեան, Աբրիահայ բռ. 297 հյ.* շաղ *և պրս.* žāla *հոմանիշների հետ։*

ԳԻՒ.—խրբ. Կր. Մշ. Տփ. ցօղ, *որից և* ցօղալ *խրբ. «անձրևը շաղել», Ակն. «կայլակել, կաթկթիլ»,* ցօղուել *Պլ. «թեթև անձրևել. 2. մի քիչ ջրով լուալ,* rincer» *(որ և Սվ.* ցղուել), ցօղվուցք *Բլ. «ձմռամբ դատարկելուց յետոյ լուացած ջուրը»։*

ՅՕՂԱՆԱԼ «*զուարթանալ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 319։*

ՅՕՂՈՒՆ *(գրուած նաև* ցողուն*)* ո *հլ. (յետնաբար կայ և հլ. սեռ.* ցօղուան, *գրծ.* ցօղուամբ՝ *Նեղոս 645) «բոյսի ծղօտ» Յոբ. իդ. 24. Ագաթ. Վեցօր. Եփր. գ. Կոր. 122. սրա հետ նոյն է նաև* ցող «*ցօղուն*» *Եփր. ծն. էջ 116 կամ* ցօղ *Վեցօր. ե. էջ 87, 88։*

ՆՀԲ ձող բառի՞ց։ Տէրվ. Altarm. 43 *հբգ.* stanga «*ձող, գաւազան*», *լիթ.* stegerýs «*ցորենի կամ խոտի ցօղուն*» *բառերին արմատակից։ Հիւնք. ծաղիկ բառից։*

ԳԻՒ.—Վն. ցող «*ցօղուն. 2. ծղօտի վրայի հանդոյցները*», *երև.* ցօղ «*ծղօտ*» *(ցորենի, գարու, հաճարի), Ալշ. Բլ. Մշ.* ցօղ «*կանեփի ցողուն, որ ծծումբի մէջ թաթախելով իբրև լուցկի վառում էին*»։

ՅՕՇ «*ծծումբ*». *ունի միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 242, որից էլ Տիրոյեան, Հանրագրութ. 630։ Կարծում եմ որ պէտք է ուղղել* ցօղ, *որի իմաստը տե՛ս* ցօղ *գւռ.։*

Ի

Ի գործածական չէ բառասկզբում. յետին տաղաչափների կողմից միայն՝ ու-ով սկսող բառեր ունենալու համար՝ հնարուած են մի խումբ ձևեր. սրանք շինուած են՝ 1. ի-ով սկսող բառերի սկիզբը ի-ի տեղ դնելով ու. ինչ. իւանալ<ինանալ Շնորհ. տաղ. իւանդ <ինուանդ Գնձ. իւր<ինր Գնձ. Նար. տաղ. իւծեալ<ինուծեալ Շար. ժմ. իւսել<ինուսել Շար. տաղ. ովիւ<նովին Տաղ. հմմտ. նոյնպէս ւ տառի անունը՝ ինւն. 2. իւ-ով սկսող բառերի սկիզբը աւելացնելով ւ ինչ. իւղենի<իւղենի «ձիթենի» Նար. տաղ. յար. իւր<իւր Շնորհ. տաղ.։ Սրանցից դուրս գտնուած բառերը հետևեալներն են.

ԻԻԱԿԱՆ «մարմնաւոր». ունի միայն Բառ. երեմ. 319։

ԻԻՆՄ «խոսալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 319. ի՛նչ լինելը չի հասկացուում։

ԻԻՆ «թոյն և ժանդ» Հին բռ. «անցումն, ցնորումն, պակուցումն, թոյնք» Բառ. երեմ. էջ 319. անստոյգ բառ. յիշում է ՆՀԲ (և ՋԲ, ԱԲ), իբր յն. ւնչ «թոյն, ժանգ» բառից։

ԻԻՆ «օ՞ն» Գնձ. (ՋԲ գրում է ի՛ան)։

ԻԻՔ «մախանք, նախանձ, հպարտութիւն». ունին միայն ՀՀԲ և Բառ. երեմ. էջ 319. որից իւրայս «ինքնահպարտութիւն, մախանք» Բառ. երեմ. էջ 319։

ԻՐՈԴՐԵԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մագ. դամագտ. 2, որ Նորայր, Բանաս. 1900, 139 մեկնում է «պանձել», իսկ Մէնէվիշեան ՀԱ 1911, 207 ըստ այլ ձ. կարդում է տոգորել։

ԻԻՐ. անստոյգ արմատ, որից կազմուած են՝ իւրազանց «սերբազանց»? իւրանձնեալ «զգայինքն», իւրանձնութիւն «հպարտութիւն կամ չքոտի», իւրեալ «երկուցեալ», իւրաճցեալ «հիացեալ». բոլորն էլ գիտէ միայն Բռ. երեմ. էջ 319։

Փ

ՓԱՐՆԱԿ *«կարող, հարուստ» Հին բռ. որից* փարնակապէս *«կարողապէս» Մագ. գամագ. 11 (այլ ձեռ.* փափկանապէս, փարնապէս): *Բառ. երեմ. էջ 319 ունի* փարնական *«հարուստ կամ բնիկ»։*

Նորագիւտ բառս ունի Մէնէվիշեան ՀԱ 1911, 545։

ՓԱԳԱՂ *«վաղ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 319։*

ՓԱԳՐ *«մի տեսակ անծանօթ կենդանի». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 44. «Եւ զփագրէ ասեն թէ վազէ («մերձաւորիլ») ի պասկուճն և առ ի չժուժային՝ անկանին երկոքեանն ի ծովն և հեղձնուն»։ Անշուշտ փագրոս ձուկը չէ, քանի որ ջրի մէջ խեղդւում է։*

***ՓԱԳՐՈՍ** (ի–ա հլ. *ըստ ՀԲ, բայց առանց վկայութեան*) *«Նեղոս գետի մէջ գտնուած մի տեսակ ձուկ» Մագ. Թղ. էջ 116, 213, 215, 216։*

=*Յն.* φάγρος, *որից նաև լտ.* phagrus *նոյն նշ. ծագում է յն.* φάγρος *«սրոց, յեսան» բառից (*Boisacq 1010):—*Հիւբշ. 386։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

***ՓԱԴԱՆ** *«բերանի կողպատ, լաշակ» Ոսկ. ես. 292, որ և փադամ Գէ. ես.* փանդամ *(սեռ.* փանդամի*) Նղիշ. բ. էջ 40 (այլ ձ.* փանամ, փադամ*). Յայտմ. տպր. 24=Նոր վկ. էջ 193. Հին բռ.։*

=*Պհլ.* 𐭯𐭠𐭣𐭠𐭬 padām *«ըստ զրադաշտականդեղի՝ աղօթքի ժամանակ բիբն ու բերանը կապելու կողպատ, որով մարդուս անմաքուր շունչը արգիլւում էր սուրբ կրակին դիպչելուց», փարս.* panām, panōm, *պրս.* فادام fadām *«փադամ, որ է պարտակ ինչ՝ զոր կալնուն կանայք զերեսօք իւրեանց»։ Պհլ. ձևը տալիս է հյ. փադամ. բայց նրա հետ կար անշուշտ նաև աւելի հին* padān, *ձևը, ինչպէս ցոյց է տալիս զնդ.* 𐬨𐬀𐬌𐬙𐬁𐬌𐬙𐬀𐬥𐬀 paitidāna- *հոմանիշը և որից ձևացած է հյ. փադան: Զնդ. մայր ձևը կազմուած է* paiti- *մասնիկով* dā *«դնել» արմատից և բուն նշ. «դէմը դրուած» (*Bartholomae, Altir. Wört. 830): *Իրանեանից են փոխառեալ նաև թալմ.* פראמא fadāmā, *արաբ.* فدّام faddām, *որ կամուս, թրք. թրգմ. Գ. 529 մեկնում է «շորի կտոր, որ զրադաշտականները ջուր խմելու ժամանակ բերանին են կապում»։ Իրանեան ձևերի ձայնափոխութեանց վրայ տե՛ս* Benveniste 33, BSL № 99, էջ 158:—*Հիւբշ. էջ 254։*

Ուղիղ մեկնից նախ ԳԴ՝ իբր պրս. fadām, *ՆՀԲ լծ. պրս.* ֆիքամ, *թրք.* ֆըբաև: *Պրս. պհլ. և զնդ. ձևերի հետ են կցում* Spiegel. Übers. *2, 48,* Hüzw. Gram. *180,* Litter. *413,* Comm. *1, 335,* Justi, Zendsp. 177, Lag. Beitr. bktr. Lex. 57, Symmicta 48, *Տէրվ.* Altarm. *77 եև։*

ՓԱԹ *«պատատել, ծրարել, փաթաթել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են փաթաթել (գրուած նաև փաթաղել) «փաթաթել, շորս կողմով ծածկել» վրք. հց. վրք. ոսկ.* փաթուրել՝ *նոյն նշ. Ոսկ. յհ. բ. 14.* փաթոյր *կամ* փաթուր *«շարականի մի խաղ՝ ոլորուն ձևով» Ոսկիփ.* փաթէր *կամ* փաթաւիճ *«ծրար, կապոց, կախարդական հմայեակ» Ճղ. որ և* փաթէր *(գրծ.* փաթիրօք*) վրք. և վկ. Ա. 510։*

=*Թուի թէ նոյն է պատ արմատի հետ. համմտ. նաև* փոր։

Justi, Kurd. Gram. 80 և *Հիւնք.* պատել, պատատել *բառից։*

ԳԻՒ.—Արմատական ձևը պահում են Ալշ. Բլ. Մլթ. Մկ. Մշ. փաք *«շրջան, շուրջը, փաթոյթ», Սչ.* փաբել, *Մշ.* փատել *«փաթաթել»։ Միւսների մէջ ունինք Տփ.* փաբաբիլ, փաբրբիլ, *Ախց.* փաբրբել, փաբաել, *Կր.* փաբտել, *Մկ.* փոբոբիլ, փոբբիլ, *Մրղ.* փոբիբել, *Սլմ. Վն.* փոբիւբել, *Գոր. Երև. Ղրբ.* փբա՛բել, *Ագլ.* փբա՛բիլ, *Շմ.* փբաւիլ, *Ննխ. Ռ.* փաբբել, *Սվեդ.* փոբբիլ, *Ակն. Պլ. Սեբ.* փաբդել, *Ասլ.* փա*դէ՛լ *(որ է* փաբաբել*)*, *Հմշ.* փադդուշ, *իսկ Տիգ.* փբիլ։—*Նոր բառեր են* փաբաբաճ, փաբաբոռել, փաբաբուկ, փաբբոց, փաբբուկ, փաբիբոռել, փաբերօռնէլ *են։*

ՓԱԹԱՂԻԿԻՆ. *նախատական վերագիր է, անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ ունի Փարպ. Բզ. էջ 202. «Ո՞չ զլուսաւորիչն և զագիտահալած զդրեանն նորա առ անգիտութեան փաթաղիկէս կոչէին»։*

Էմին մեկնում է լտ. fatalicus *«ճակատագրական», իբր թէ նոյն գրքերի իմաստասիրական բովանդակութեան ակնարկութեամբ (Թուղթ առ Վահան Մամիկ. Մոսկ. 1853, էջ 64, ծն. 36)։ Վենետիկի 1873 թուի հրատարակութեան մէջ, էջ 608 ծան. հյ.* փաբերակ, փաբերաճ, *լտ.* fatalicus *«ճակատագրական» և կամ* fatuelis *«պատգամական»։ Ս. Վ. Պարոնեան, Արեւելք 1887, փետր. 11 յն.* πηδαλιοῦχος *«դեկավար»։ Մառ,* Виз. Врем. *1844 II. էջ 303 առ որ.* մftlā *«ծուռ» և* ikkiš *«ծուռ» բառերից (Հաղորդեց Ս. Կանայեան)։ Հ. Յ. Ադեր, Բազմ. 1909, 60 լտ.* fatalicus, *Ֆնտպլեան ՀԱ 1926, 94 ուղղում է* կարուղիկեայս։

Փաթարաբար *տե՛ս Փարթար։*

***ՓԱԹԵՐԱԿ** *«թշուառութիւն, փորձանք, աղէտ» Վրդն. առ. 94. Նաև «չար աչքի գալը, յաշաղանք», որից ոճով ունինք* փաբերակ առնուլ *կամ* փաբերակիլ *«չար աչքի գալ, աչքիլուիլ» Ախտարք, Մին. Համդ. 86.* փաբորակիլ *«վնասուիլ» Վրդն. առ. 61.* փաբորկեցնել, փոբորկեցնել *«վնասի հանդիպեցնել» Սմբ. դատ. 208։*

=*Պհլ.* 𐭯𐭲𐭩𐭯𐭠𐭫𐭠𐭪 patyārak, patiyārak *«հակառակ, թշնամի, հակառակութիւն, թշնամութիւն», մանիք. պհլ.* פתיאר patiār *(Salemann ЗАН 8 (1908), էջ 116), պազենդ.* patyāra *«թշնամութիւն, դժբախտութիւն», պրս.* پتیارا patyāra *«պատահար, փորձանք», զնդ.* paityārа *«բարի արարածների դէմ Ահրիմանի յառաջ բերած չարագործութիւնները, թշնամական հակառակութիւն»,* paityārena- *«թշնամի, հակառակորդ» (կազմուած է* paiti- *«դէմ, ընդդէմ» նախդիրով՝ ar «շարժիլ» արմատից՝ իբր «դէմ շարժիլ, վնասել»).* Bartholomae, Altir. Wört. 183, 840): *Պհլ. բառը ուսած է նախ *փաբեառակ, յետոյ սղմամբ դարձած* փաբերակ։ *Իրանեանից է փոխառեալ նաև վրաց.* ფათერაკი փաբերակի *«աղէտ, փորձանք»,* ფათერაკოს փաբերակիս *«անուշադիր կերպով, անգիտակցաբար»։—Հիւբշ. 254?*

Նշ. փաբաճ *«հմայական» + առնուլ ձևերից։ Ուղիղ մեկնեց նախ Պատկ.* Матер. *I. 16։ Նոյնը նաև Արեղեան,* Arm. Volksgl. 125:

ԳԻՒ.—Տփ. փաբէրակ, *Լ.* փէբէրակ, *Սլմ.* փէօբէրակ[1], *Սվ.* բօբարաճ, *Մշ.* պօտօրիկ *«աղէտ, փորձանք», որից* փաբերակաւոր *Տփ. «փորձանքաւոր»,* փաբերակի բուղբ *կամ* փաբերակաւոր բուղբ *«հմայական պահպանակ»,* փաբուրկել *Ակն. «պատուհասել (երկնային պատուհասով)»։*

***ՓԱԹՇԱՀ** *«թագաւոր». առանձին չէ գործածուած, բայց սրանից է կազմուած* փաբշահաբար *«թագաւորավայել» ձևով Կղնկտ. հրտր. էմ. էջ 155. աւելի նոր ժամանակից* փատիշահ *«թագաւոր» Կոստ. երզն. 130, 173. Քուչ. 87, կամ* փատշահ *Նոր վկ. էջ 314։*

=*Պրս.* پادشاہ pādšāh *կամ* pādišāh *«թագաւոր» բառից. Հայերէնում* թ *յառաջացել է յաջորդ շ-ի ազդեցութեամբ։ Պրս. բառի հինն է պհլ.* 𐭯𐭲𐭩𐭧𐭮𐭠𐭩𐭣 pātixšāh < *pāti-xšāyaθa- (Nyberg, Hilfbuch des pehlevi *II* 179). *տե՛ս նաև հյ.* բդեաշխ։—*Աճ.*

Ուղիղ մեկնեց Աճառ. Նոր վկ. էջ 794 և Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 37։

*ՓԱԼԱՆ *«համեհատ», որից անփալան «առանց թամբի» Շնորհ. առակ. 78 (բառարաններում չէ նշանակուած)։ Աւելի հին ձևն է պաղան։

=Պրս. پالا pālān «թամբ». տե՛ս և պաղան։—Աճ.

*ՓԱԼԱՆԻԿ «անդրուար, կաոքի կամ պատդարակի լծուած ձի, ջորի». ունի միայն ԱԲ՝ առանց վկայութեան, մէկ անգամ գտնում եմ Մագ. քեր. 241՝ ձիու վերաբերեալ հոմանիշների մի շարքի մէջ. «(Ձիոց) չեզոքն, որպիսի քուռակ, բաշահատ, մատաղաձի, խնշակ, դղի, բոչոյ, անդրավար, փալանիկ»։

=Պրս. پالانی pālānī «բեռ կրող ձի». կազմուած է پالا pālaṅ «համեհատ» բառից։—Աճ.

Հրատարակուած նախ ՀԱ 1908, 123։

*ՓԱԼԱՆՏՈՒՉ «համեհատագործ» Բժշ.։

=Պրս. پالاندوز pālāndūz՝ նոյն նշ. կազմուած pālān «համեհատ» և dūz «կարել» բառերից։

Բառս ունի միայն ՀԲուս. § 3033, որ թէև ուղիղ է մեկնում, բայց կարծում է թէ նշանակում է «մի տեսակ խոտ»։

*ՓԱԼԿՈՆ «մի տեսակ բազէ. 2. Սիկիլիական մի ատտուած» Ճառընտ. նո՞յն է նաև փալկոն Դրնդ. 449։

=Յն. φάλκων < լտ. falco «բազէ» (Sophocles 1134)։—Հիւբշ. 386։

Նշ Բ դրաւ բատիներէնից, Brokkelmann, Ուս. փոխ. բառից, էջ 115 յունարէնից։

ՓԱԽ «փախուստ, փախչիլը» ԱԲ. որից փախ ի փախ Գնձ. փախչիլ, փախնուլ ՍԳր. Ոսկ. փիլիպ. փախուցանել ՍԳր. Փարպ. փախուստ ՍԳր. Եւս. քր. փախուցիչ Ոսկ. մտթ. փախչուրիւն «փախուստ» Եփր. Համաբ. 159. փախստական ՍԳր. Եզն. Ոսկ. հս. Եւս. քր. փախստեայ ՍԳր. Կոչ. յետնաբար կայ փախատ «փախստական» Կղնկտ. Հրտր. Շահն. Ա. 290 (տե՛ս իմ Հայ նոր բառեր հին մատ. Ա. 37). գրուած է և փաղչիլ Վրդ. առ. 106. սաստկական ձևն է զըփախչիլ (սխալ գրուած զփաղչիլ) Վեցօր.։

Նշ Բ լծ. յն. φεύγω, լտ. fugio «փախչիլ»։ Müller SWAW 48, 427 յն. φυγարմատի հետ։ Fick BB 1, 316 յն. πτάξ «վախկոտ»? Տէրվ. Altarm. 98 սնս. bhaj, լեթթ. bégt, հսլ. бегати, бежати, յն. φεύγειν, լտ. fugere ձևերի հետ. նոյն, Նախալ. 96 նախնական ձևը համարում է փաղչել, որից յարմարցուած յետոյ փաղխչել, փախչել։ Bugge IF 1, 455 լիթ. bẽgu «վազեմ», bẽgas «փախուստ», հսլ. bĕžę «փախչիլ», bĕgŭ «փախուստ» ձևերի հետ։ Հիւնք. բախել, բաբախել բայից։

Գիւտ.—Հճ. Սչ. փախչել, Երև. Ննխ. փախչէլ, Ախց. Կր. Ջթ. Շմ. Ռ. Տփ. փախչիլ, Ասլ. փախիլ, փախչիլ, Ջղ. Սլմ. Վն. փախնել, Ալշ. Մշ. փախնիլ, Մրղ. փախնէլ, Խրբ. Մկ. Սեբ. Սվեդ. փախիլ, Հմշ. փախչուշ, Պլ. փախիլ, փախչիլ, Ակն. փախչիլ, Գոր. Ղրբ. փա՛խնիլ, Տիգ. փոխնիլ, Ագլ. փխո՛նիլ։—Նոր բառեր են փախուկ «խննթուկ» (որ և Ատն.), փախցնովի, փախցունկ, փախս, փախփխիլ, փախչտիլ, փախչոտիլ։

ՓԱՁ «հագնիլ». արմատ առանձին անգործածական. որանից են կազմուած փաձանիլ «հագնուիլ», փաձանելի «հագուստ», փաձուցանել «վրան շոր փաթաթել» Վրք. հց. սաստկական զ մասնիկով՝ զփաձանիլ, զփաձումն։ Ոսկ. յհ. բ. 34. Վրք. հց. կամ զ վերածուելով ս-ի՝ յաջորդ փ-ի պատճառաւ՝ սփաձանիլ «մէջքը շոր կապել» ՅՀ. ժգ. 4, 5. Եզնկ. է. 18. «հագնուիլ» Ոսկ. մ. ա. 24. սփաձումն Ոսկ. հս. սփաձանելի «զգեստ» Ծն. գ. 7, Երեմ. ժգ. 1=11. ՅՀ. իա. 7. պատմուճանասփած Ջքր. կթ. թգենակասփած Աթ. կոյտն. մաշկասփած (չունի ԱԲ) Տաթև. ամ. 337։

Նշ Բ սփաձանիլ մեկնում է «ի յն. օսֆի՛ս «մէջք» և հյ. ածանիլ»։ Տէրվ. Altarm. 57 դնում է հնխ. spak արմատից. համմտ. յն. φῖκα = σφίγγα, σφίγγω «սեղմել», σφηκῶ «մէջքից սեղմել, մի լաւ կապել»։ Հիւնք. սփաձանիլ դնում է ասպար և ածել բառերից։

ՓԱԿ «փակել, ծածկել, գոցել, կողպել» և

յետնաբար «կպցնել, փակցնել». որից փակ «կողպէք» Նէեմ. վ. 14. է. 3. Ոսկ. մ. ա. 12. Եփր. պհ. «գոց, գոցուած, փակուած» Փարպ. փակել «գոցել, ծածկել, շրջապատել» ՍԳր. Եւս. քր. Կիւրղ. ծն. փակնուլ Ոսկ. յհ. ա. 21. փակուցանել «կպցնել, փակցնել» Թէոփիլ. խ. մկ. փակչուտ «շուտ կպչող» Վստկ. փականճ ՍԳր. Ոսկ. մ. ա. 9. Եփր. պհ. փակոց Բարուք ղ. 17, փակաղակ Երգ. ե. 6. փակակալ Ոսկ. ա. թես. Կոչ. Մծբ. Փարպ. շրջափակել Փարպ. Խոր. անփակ Ագաթ. դռնափակ Օր. գ. 5. Ա. Թգ. իգ. 7. Բարուք ղ. 17, Նորագիւտ Ք. մն. ը. 5. սպարափակ Ագաթ. Փարպ. պարփակել Պիտ. 543, 549 (գրուած նաև պարպակել), ՅՀ. իմ. վահանափակ Բուզ. կողմնափակ Ագաթ. գուարափակ Ագաթ. ծրափակել Փարպ. փականագործ (նոր դրականում) ևն.։

Peterm. 259 լծ. բակ: Pictet 2, 252 պրս. bazang, baźang «սողնակ, նիպ», լտ. re-pag-ulum «սողնակ» ձևերի հետ։ Տէրվ. Altarm. 58 հյ. սփածանել, փափագիլ, փունջ, սպանդ, գերմ. sparren, յն. σφηκῶ ևն ձևերի հետ հնխ. spak արմատից։ Bugge, Btrg. 20—21 յն. σφηκόω «սեղմել, պնդել, գամել» բառի հետ հնխ. sph...ձևից։ Այս մեկնութիւնը անապահով է դտնում Հիւբշ. 500։ Հիւնք. Բրք. գաբամաճ «փակել»։ Scheftelowitz BB 28, 305 և 29, 56 հրգ. spanga, հհիւս. spong, անգսք. spang «նիպ, կեռ կոճակ», յն. φάκελος «կապոց, տրցակ» բառերի հետ։ (Այս բառերը յիշում է Pokorny 2, 651 հնխ. spaq-, spag- «կապել, կցել» արմատի տակ, որի ժառանգներն է դնում և յն. σφήξ, դոր. σφαξ «պիծակ», σφηκόω «պինդ սեղմել, փակել, խցկել», σφάκελος «ջղաձգութիւն», գերմ. Spachen «մկանների ձգում» ևն։ Այս բոլորը սակայն շատ կասկածելի է. յն. σφηκόω «սեղմել, փակել» յառաջացած է համարւում աւելի σφήξ «պիծակ» բառից և ո՛չ թէ հակառակը, որով σφήξ պիտի լինէր բուն «կապեալ, մէջքից սեղմուած». գերմաններէն ձևերը ունենալով նաև «ճաքճքիլ» իմաստը՝ հետաքրքիր են այս խմբից. վերջապէս անգսք. spang են ձևերը յառաջացած են համարւում ո՛չ թէ ընդհանուր յաւելումով, այլ n-ից յետոյ g-ի յառաջացումով, որով արմատը լինում է span՝- ածած spe- «քաղել» արմատից։ Այսպիսով ամբողջ կազմը քայքայւում է և հայերէնի դէմ մնում է միայն յն. φάκελος «կապոց, տրցակ»?)- Karst, Յուշարձ. 415 մոնղոլ. buke, կալմուկ. buku, թունգուզ. beki, Բրք. poko, ճապոն. bogo, օսմ. pek «ուժով, ամուր, հաստատուն», 416 մոնղոլ. xaga, թունգուզ. kā «փակել», 424 ԹԹր. bak, baklamaq «կապել, փակել», 428 ԹԹր. qap, qaq «փակել»։ Թիրեաքեան ՀԱ 1912, 288 նոյն ընդ բակ:

ԳԻՒՐ.—Սլմ. փակել, Մրղ. փակէլ, Ագլ. Մկ. փակիլ, Ալշ. Մշ. Սչ. փագել, Երև. Ննխ. փագէլ, Խրբ. Սվեդ. փագիլ, Վն. փոկել, Հմշ. փագուշ, բոլորն էլ «փակել, գոցել» և Ախց. փակ «կողպէք». իսկ Պլ. փագիլ, փակչիլ, Ռ. փագչիլ, Զթ. փագչըլ «կպչիլ»։—Նոր բառեր են փակ «բանտ», փակածակ, փակամայր, փակել «բանտարկել», փակիչ, փակոտել, փակոց, փակուիլ, փակուկ, փակչուն, փակչտաճ, փակչտիլ: Ստացած է նաև «կրակ վառել, բռնկցնել» նշանակութիւնը. ինչ. փակցնել Խրբ. «կրակը բորբոքել, բռնկցնել», փակիլ Բիւթ. «վառիլ», փակոց Բն. «մարխ», փակցաճ Խրբ. Սեբ. «կպչան»։—Հիմնական նշանակութիւնը պահուած է Պլ. այլափոխեալ ձևով փաճ ու բալլիճ ըլլա կամ բաթ ու բալլիճ ըլլա «Թող խրատ լինի և մէկ էլ այնպիսի բան չասէ կամ չանէ» ոճի մէջ, որ=է փակ ու բանալիճ լինի (բերանին)։

ՓԱԿ «գաւազան, ցուպ». մէկ անգամ գործածել է Վրք. հց. ձ. «Ունէր աղաբաղումն և փորր մախաղ՝ բաբելոնացի փակովք». (այլուր՝ ցուպ բաբելոնացի):

ՆՀԲ նոյն ընդ բակուղ, լտ. baculus, յն. βακτηρία։ Սագրեան ՀԱ 1909, 335 և Karst, Յուշարձան 406 սումեր. pa, pag «մականն»։

Փակդուրակ *տե՛ս Փանդուրակ։*

***ՓԱԿԵՂՆ,** ե հլ. (–ղամբ, –ղումբ) «ուրար» Մխ. դտ. Յայսմ. յունիս 14, Օրբել. հրտ. էմ. 80 (Ուրար, այսինքն փակեղն. փակեղն միայն զահնակ ուսումն). «բաճկոն, վերարկու» Գր. տղ. բղթ. «վեղար» Մաշտ. Ոսկիփ. «գլխի փաթթոց» Սմբ. դատ. 87. «կանանց կամ կոյսերի գլխարկ» Վրք. հց. Ճառընտ. արդի գրականում նշանակում է կրօնաւորների գլխարկը, որի արդի հայկական ձևը Պօլսի պատրիարքարանն է յօրինել 1845 թուին. որից* ուսափակեղ *ԱԲ։*

=Յն. φάκελος «կապոց, տրցակ», յետնաբար φάκελος, φάκελλος, φακιόλιον, φακεόλιον, φακεολίς, φακιάλιον *և նլն. φακιόλι «գլխի փաթթոց, չալմա» (*Sophocles 1133), *որից փոխառեալ է նաև ասոր.* ܦܨܠܐ faqīlā *«մի տեսակ խոյր»։—Հիւբշ. 386։*

Յունարէնից փոխառութիւն լինելը վկայում են նաև հները. «Փակեղն, որ է յունարէն, բանզի ոչ գոյր մեր, և ոչ էր սովորութիւն» Մագ. քեր. 228=Երզն. քեր.։ Ուղիղ մեկնեց ՆՀԲ, բայց թուի թէ ուղում է հանել հյ. փակել *«ծածկել» բառից։ Հիւնք.* բաղեղն *բառից։*

ՓԱԿՏԻՔ *«ապարանջան ինչ». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 243։*

***ՓԱԼԼ** «արու ձի». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. քեր. 240, հոմանիշների մի շարքի մէջ. «Եւ ձիոց՝ յովատակ, նժոյգ, փահլ, երիւար, գեղազատ. այսորիկ արականք են»։*

=Արաբ. فحل fahl *«որևէ անասունի արուն. այսպէս՝ ձիու, ուղտի են» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. էջ 310)։—Աճ.*

Հրատարակուած է նախ ՀԱ 1908, 123։

Փաւիրիզ *տե՛ս Պահրէզ։*

ՓԱՂ *«մի տեսակ թռչուն». մէկ անգամ ունի. Ոսկ. փիլիպ. «Որպէս սոխակն և ճրպուռն և փաղն և յուշկապարիկն» (յն. կարապ և սոխակ)։*

ՆՀԲ և ՋԲ դնում են ի հլ., համարում են նոյն ընդ փաղարիկ, որ փոխառեալ է յունարէնից. իսկ ՆՀԲ ուղում է նաև հանել յն. φαλός *«փայլուն» բառից։*

ՓԱՂ *«կակուղ, փխրուն (հող)» Վստկ. 150, 159, 169, 176։*

ՓԱՂ *«կից, յար, միացած». արմատ առանձին անգործածական. սրանից են կազմրւած* փաղել *«միացնել, յարել, շարակցել» Մագ. և Երզն. քեր.* փաղութիւն *«պարբերութիւն, շաղկապումն» Մագ. ի* փաղ գալ *«ոչխարների զուգաւորիլը» Վստկ. 216 (Ալիշան՝ Վստկ. 262 հասկանում է «յղանալ». ըստ իս «զուգաւորիլ». հմմտ. շան կցուիլ), աւելի յաճախ գործածւում է իբր նախամասնիկ՝ համապատասխան* բաղ, համ, նոյն *մասնիկներին. օր.* փաղաւնուն *«համանուն» Անյ. պորփ. Արիստ. ստոր. Թր. և Երզն. քեր.* փաղակերպ *«համատեսակ, նոյնակերպ» Դամասկ.* փաղասեռ *«նոյնասեռ» Նիւս. բն.* փաղաւորիւն *«վանկ» (ըստ յն.* συλλαβή *«միասին առնելը») Փիլ. ել. Պղատ. տիմ. ևն։ Ըստ իս այստեղ են պատկանում նաև 1)* կաւափաղաղ *«կաւով շաղախուած» Յհ. կթ. 277. հմմտ. տակը դւռ.* փաղաղել *բառը. 2)* փաղփիլ *(ուղղել *փաղղիլ=փաղաղիլ) «շաղախիլ, ապականիլ», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եփր. մատ. 184. «Նոյնպէս և փռանգք, զի տեսին զժառանգաւորս ի կանայս դիճութեամբ փաղփեալ, և զնուէրս եկեղեցւոյ ի պէտս որդւոցն ծախեալ, բարձին զունելն նոցա կանայս». (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 124). 3)* փաղել *«յարմարել, յօդել, տարբել»։ Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սոկր. էջ 451. Այլ զի և եկեղեցւոյն Հայհոյութիւն և Բշնամանս* փաղեաց։ *Բնագիրն ունի* ἀλλ᾽ ὅτι καὶ τῇ ἐκκλησίᾳ βλασφημίαν ἡ πρᾶξις καὶ ὕβριν προὐξένησεν *(Socr. Eccl. hist. Oxford 1893, էջ 234), ուր ստորագծեալ բառը (*προξενέω*) թէև հին լեզուով նշանակում է «հիւրընկալել, հիւրընկալուիլ, միջնորդել, առաջնորդել, հայթայթել, մեքենայել», բայց բիւզ. յն. նշանակում է «պատճառել, առթել, անել,* to cause, to effect, to do» *(Sophocles 933):—4)* փաղազան *(նորագիւտ բառ. չունի ՆՀԲ) «Համասեռ, համածնունդ» Պղատ. տիմ. 90 (բնագիրն ունի* ξυγγενές, *որ է* συγγενής, *տե՛ս*

Platonis opera, Paris 1883, *հտ. 2, էջ 206, տող 47), որի դէմ յետոյ գտնում ենք* բաղազան *Պղատ. տիմ. 115 (յոյնն ունի նոյն բառը՝ էջ 216, տող 31), որով իմացւում է* փաղ–բաղ *մասնիկների նոյն լինելը։*

ՆՀԲ նոյն ընդ բաղ, *Թրք.* պիլէ *«միասին»,* պաղ *«կապ»։ Տէրվիշ.* Altarm. 38 *նոյն ընդ* բաղ։—*Հիւնք. նոյն ընդ* բաղ *և Թրք.* պաղ *«կապ»։* Bugge IF 1, 454 *նոյն ընդ* բաղ։

ԳԻՒ.—Կայ կրկնութեամբ փաղաղել *Ալբս. Դվ. Ղրբ. «ալիւրը շաղուել», որի հին ձևերն են* փաղաղ *«շաղաղուած ալիւր» Մխ. բժշ. 148 և* կաւափաղաղ *«կաւով շաղախուած» ՅՀ. կթ. 277. Համմտ. գւռ.* փաղաղ *«խմորի մեծ մեծ շաղախներ. Հատածներ, որոնց հատ հատ թերակատար ունցելուց յետոյ, դնում են սաւանի վրայ. ապա բոլորը տաշտի մէջ դնելով ունցում են. 2. տաւարի համար գարի ալիւրից պատրաստած կերակուր» (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 647)։*

ՓԱՂԱՂԵԼ *«ուտել, լափել, դիշատել» Ոսկ. ա. կոր. Փիլ. այլաբ. 132. Կանոն. Սարգ. յկ. գ. բ տպ. էջ 36. «վառել, այրել, տոչորել» Աւ որս. Պիտ. Լմբ. սղ. 0ձն (Յուշարձան, էջ 337). որից* փաղաղիչ *Սկևռ. սղ. 126.* փաղաղօղ *Վրդն. գան. ե. էջ 260.* փաղաղութիւն *Ճառընտ. Տիմ. կոյս. 60.* բազմափաղաղ *«ամենակեր» Ճառընտ. այստեղ է պատկանում նաև* փաղաղս *«հիւանդի ծանր տաքութիւնը» Մխ. բժշ. 68—69 (ներբ անգամ)։*

Հիւնք. յն. φάγω *«ուտել» բառից կրկնուած։*

ՓԱՂԱՆ *«գիժ կամ խել». ունի միայն Բառ. երեմ. էջ 320 (տպ.* գիծ, *ուղղել* գիժ)։

*ՓԱՂԱՆԴ (ի–ա *հլ. յետնաբար) «գունդ, բանակ» Ոսկ. փիլիպ. Հռոմմ. 205, 422, 423. Փարպ. Սեբ. 39. «կարաւան» Գէ. ևս. Կղնկտ. (ըստ Մառ,* Тексты *հտ. 1, էջ 77). որից* փաղանգական *Նար. խրատ. առ. լհ. դիւափաղանգ Անան. եկեղ. գրուած է* փալանգ *Լմբ. սղ. սխալմամբ յդ. հյց.* փաղանս *Պրպմ. էջ 452։*

=*Յն.* φάλαγξ *(սեռ.* φάλαγγος*), որից և լտ.* phalanx *«զօրաբանակ»։ Բառիս առաջին և հիմնական նշանակութիւնն է «փայտի կոճղ, գաւազան», յետոյ «կշիռքի ուղիղ գաւազանը» և փխբ. «բանակի ուղիղ շարուած ճակատը», լյնր. «բանակ, գունդ»։—Հիւբշ. 386։*

Ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. 47, *յետոյ ՀՀԲ և ՆՀԲ։ Վերջինս լծորդ է դնում նաև Թրք.* bölük *«գունդ»։*

ՓԱՂԱՆԴ *«կումաշ». ունի միայն Բռ. երեմ. էջ 320՝ իբր տարբեր նախորդից, աղբիւրն է՝ Գէ. ևս. հետևեալ հատուածը. «Մի՛ անցցեն արաբացիք կամ վաճառականք փաղանդօք». այստեղ* փաղանգ *նշանակում է «խումբ կամ կարաւան». բայց լուսանցքում նշանակուած է «կումաշ կամ դումաշ»։ Այստեղից էլ Բռ. երեմ.։*

ՆՀԲ մեկնել ուզելով այս բառը, գրում է. «Թերևս առեալ որպէս պրս. փէլէնկիէ, *որ է վաղրային, և ազգ արջունի ղգեստու. և կամ ակնարկեալ ի միւս ևս նշանակութիւն յն. ձայնիս* ֆա՛լանգս, *որ է սարդ ոստայնանկ, իբրու գործ ոստայնանկաց»։*

*ՓԱՂԱՆԴ *«մորմ, թունաւոր սարդ». նորագիւտ բառ, որ գործածուած է Փիլ. լիւս. 144. լուսանցքի վրայ=ուտ.* ֆալանգ[1] *«կարիճ»։*

=*Յն. φάλαγξ նոյն նշ.։*

Ուղիղ մեկնեց Աւգերեան, անդ, ծանօթ.։

*ՓԱՂԱՆԴԱՄՈՒՇԿ *«բրդոտ ոեհան,* ocymum pilosum*» Խոր. աշխ. 615. սրա աւելի նոր ձևերն են* փաղանգամուշ, ֆարանճամուշկ, ֆալանճմուշկ *Բժշ.։*

=*Պհլ.* palangamušk, *պրս.* پلنگمشك palangmišk, *որից փոխառեալ են նաև սոր.* فرنجمشك parangmušk, *արաբ.* فلنجمشك falanǰmušk, فرنجمشك faranǰmušk, faranǰamušk *«ոեհան»։ Հայերէնի մէջ* փաղանգամուշկ *գալիս է պահլաւից, նորագոյն ձևերը արաբերէնից։— Հիւբշ. 254։*

ՆՀԲ մեկնում է «ձագախոտ», բայց նաև «որպէս թէ մուշկ կենդանւոյ... զի փէլէնկ *կամ* փալանկ *է ինծ. իսկ* փէլէնկ *է պարսամ, բալասան»։* Garrez

JAs 1869, 167 պհլ. բառը կարդալու համար՝ համեմատում և օգնութեան է առնում հայ ձևը։ Ուղիղ է մեկնում նաև Պատկ. Арм. геогр. 81։ Հիւբշ. ZDMG 35 (1881), 662 պրս. palangmušk, ՀԲուս. § 3034 պրս! faranǰmušk։

ՓԱՂԱՆԴՐԵԼ «շուրջ դնել». ունի միայն Բուն. երեմ. էջ 320. որի հետ նոյն եմ կարծում նաև փաղրօղ «շրջագրօղ» էջ 319, փառագրօղ «շրջագայօղ»։ Սրանցից ո՞րն է ուղիղ։

ՓԱՂԱՍԷՐ «բազմասէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 320, որ և էջ 324 գրում է փողասէր՝ նոյն նշ.։

***ՓԱՂԱՐԻԿ** «գեղեցկաձայն մի թռչուն» Համամ. քեր. առ երգն.։

=Յն. φαλαρίς «ծովային մի թռչուն, poule d'eau», որից նաև լտ. phalaris:— Հիւբշ. 386։

Փոխառութիւնը նշանակում է հնևրից Համամ. քեր. առ երգն. «Ջհան փաղարիկ և մեք ըստ Յունաց փաղարիկ ասեմք»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՓԱՂԱՐԻՄ «մարմինք սրբոց». ունի միայն Բառ. երեմ. էջ 320։

ՓԱՂԱՒ «սերմն». ունի միայն Բառ. երեմ. 320, որի հետ նոյն պետք է լինի փառ «սերմն» (անդ, էջ 321, իբր մէկ բառ գրուած)։

ՓԱՂԱՔՈՒՇ, ի–ա հլ. «կեղծաւոր, շողոքորթ» Եւագր. 62. Ոսկ. լս. ղկ. մրգր. «շողոքորթական» Լմբ. սղ. Վրդն. դան. ա, էջ 245. «կեղծաւորութիւն, շողոքորթութիւն» Մագ. քեր. որից փաղաքշել «գգուել, փայփայել, շողոքորթել» Եւագր. 62. Ոսկ. մ. բ. 18. փաղաքշանք Ոսկ. մթ. փաղաքշարար 3հ. կթ. փաղաքշոտ Վրդն. ծն.։

ՆՀԲ «ի փաղ և ի ſշել, քսել, քսուրտիլ, քծնիլ»։ Տէրվ. Altarm. 38 փաղ «բաղ, յար»+ſուշ. Համմտ. սանս. ǰuš «ախորժիլ, հաճիլ, սիրել»։ Հիւնք. պրս. ֆալկիուշ «կախարդ» և լտ. fallacia «խաբէութիւն»։

ՓԱՂԲԻԱՒԹ «հռչակաւոր». անստոյգ բառ. ունի միայն Հին բռ. որ և Բուն. երեմ. էջ 320 գրում է փաղպիօր սրանից է դնում Նորայր, Բանաս. 1900, 139 փաղպիական «հռչակեալ» Մագ. գամագ. 5։

ՓԱՂԵՐ, որից փաղերութիւն. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկ. յանդամ. էջ 851. «Տեսանել զանսեղանն... զգունոյն դեղնութիւն, զփաղերութիւն դեղնութեան տպոյն»։ ՆՀԲ մեկնում է «սպիտակութիւն որպես փրփրոյ. ի յն. φάλης, φάλος», ՋԲ չունի, ԱԲ «փրփուրի պէս ճերմկութիւն»։ Կայ յն. φαλερός «սպիտակ բծերով կէտկիտուած», որ Brokkelmann ZDMG 47 մերժում է, որովհետև բանաստեղծական հազուագիւտ մի բառ է և կցում է հյ. փաղփիլ բային։

ՓԱՂԵՐԵԱՅ «վարդապետ». ունի միայն Բառ. երեմ. էջ 320։

ՓԱՂԷՓ, ի հլ. «թունաւոր սարդ, մորմ». մէկ անգամ ունի Փիլ. լիւս. 144. «Նղջերուք առ խածածս փաղիժից իմացան փոխանակ դեղ իւրեանց խեցգետի, որոյ կերակուրն անդէն թժշկէ»։ Լուսանցքի վրայ դրուած է «փաղանգ», ինչպէս ընդունում է նաև Աւդերեան, լտ. թրգմ. սրա համեմատ են ԱԲ և ՓԲ. չունի ՆՀԲ։

ՓԱՂԿԵԼ «պատռել». ունի միայն Բուն. երեմ.

***ՓԱՂՂՈՍ** (գրուած նաև փաղոս, փալլոս), ի–ա հլ. «առնի անդամ» Ածաբ. յյտ. Նոնն. 7, 71. որից ուղղափաղղոս Նոնն. 7, ուղղափաղոս կամ ուղղափալլոս Ածաբ. յայտ. կողմնափաղղոս Նոնն. 7, փաղղական (սխալ գրուած նաև փաղաղական) «տուփական, ցանկական» Անկ. գիրք նոր. կտ. էջ 458։

=Յն. φαλλός «առնի, նշան սերնդագործութեան, որ Բաքոսի ատենին էին կրում»։ Հնխ. bhel- «ուռչիլ» արմատից է ծագում. համմտ. իռլ. ball «անդամ», հեսս. bille «առնի», միջ. սա. գերմ. bulle «ցուլ», անգսք. bulluc «գլխիկ», հհիւս. bole «ցուլ», հին շվեդ. bulin «ուռած» են (Boisacq 1013)։— Հիւբշ. 386։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՓԱՂՈՂ «կաթուած, apoplexie». նորագիւտ բառ. «փաղող, որ է սքթան». (=արաբ.

ڪَکسَ sakta «կաթուած») Բազմ. 1917, էջ 102։

ՓԱՂԶԻԼ «լռել, զսպել զանձն». ունի միայն ՓԲ. անստոյգ բառ։

+**ՓԱՂՓԱՂԻԼ** «փայլիլ».

=Կրկնուած է փաղ արմատից, որ նոյն է փայլ ձևի հետ (տե՛ս փայլ)։

ՆՀԲ լծ. փայլ և յն. φάλος «փայլուն»։ Bugge, Btrg. 34 և IF 1, 455 նոյն ընդ պաղպաղակ, իբր սանս. sphuráti «փայլիլ, կայծակել», sphulinga «կայծ»։ Մերժում է Հիւբշ. 500։ Հիմնք. հանում է պաղպաջել բայից։

Փաղփիլ տե՛ս Փաղաղ։

+**ՓԱՄՓՈՒՇՏ** «մէկի պարկը» տե՛ս բուշտ։

=Կազմուած *փամփ+բուշտ բառերից. երկրորդի ծագումը անյայտ է (տե՛ս առանձին). բայց առաջինն է բնիկ հայ բառ՝ հնխ. phamph- «ուռչիլ» արմատից. սրա հետ նոյն են bha*mbh-, ba*mb, pamp- ձևերը, որոնք բոլոր բնաձայն են համարում. բազմաթիւ ժառանգ ձևերից համմտ. սանս. bimba- «գնդակ», bimbī «մի տեսակ դդում», յն. βέμβιξ «ջրի պտոյտ, շռնչան», πέμφιξ «շունչ, փոթորիկ, պալար, ջրի կաթիլ», πομφός «գնդակ, կոճակ, բշտիկ, վահանի ուռած մասը, կումբ», լիթ. bamba «գունդ», pampt «ուռչիլ», լիթ. bámba «պորտ», bumbulis «պղպջակ», ուկր. búba «բշտիկ», չեխ. boubel «ջրի պղպջակ», լհ. bąbel «ջրի պղպջակ, պալար», ուկր. búbа «բշտիկ», սերբ. bubùljica «բշտիկ», bùbla «գնդակ», սլով. bobljati «պղպջակել», մբգ. bemstīn «հաստափոր», դան. bams «յոյր մարդ», fomp «հաստափոր մարդ», նորվ. pempa seg «տկոիլ» են (Pokorny 2, 107 109, Boisacq 765)։

Յն. πομφός բառի հետ համեմատեց նախ Justi, Dict. Kurde էջ 74 հյ. փուշտ, բայց ո՛չ փամփուշտ։ Ուղիղ մեկնեց նախ Տէրվիշ. Նախալ. 92, որ դնում է սակայն փամփ–ուշտ և կցում է լիթ. pàmti «ուռիլ», pampalas «ուռած» բառերին։ Bugge, Btrg. 20 անկախաբար յն. πομφός ձևի հետ։ Նոյնը կրկնում են ուրիշներ. վերջին անգամ Petersson, Ar. u. Armen. Stud. 47։ Վերի փամփ+բուշտ ձևով բաժանումը ինձնից է. միւսները –ուշտ մասնիկ են համարում։

***ՓԱՅ** «ոտք». առանձին անգործածական, որից կազմուած են փայտառական «ոտնառական, ուր լինի ոտից դիպիլ քարի» Մագ. թղ. 237. փայտառութիւն «ոտնառութիւն» Մագ.։

=Պրս. پای pāy, որ և համառօտեալ پا pā «ոտք», համմտ. նաև փայիկ, անփայի։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՓԱՅԱՄ «ժամանակ». ունի միայն Բռ. երեմ. էջ 321։

***ՓԱՅԻՉԱՅ** «թաթարական պատուանշան, որ մի թզաչափ ոսկեայ տախտակ էր՝ վրան Աստուծոյ և խանի անունը գրուած» (Տաճար 1913, էջ 318). երեք անգամ ունի Օրբել. եւ եաուն նմա փայիզայ ոսկի, որ էր տախտակ՝ ունկով զանուն Աստուծոյ և զարքայի գրեալ յինքեան. և այս էր մեծագոյն պատիւ նոցա (էջ 301). ետ նմա այր ի գրանէն և փայիզայ (էջ 314). Շնորհեաց և մեզ փայիզայ ոսկի, որ էր տախտակ ի չափ թղոյ միոյ և կիսոյ գրեալ ի վերայ զանուն Աստուծոյ և զանին և այլ սակաւ բանք (էջ 353). Նոյնը նաև Մաղաք. աբ. 17։

=Պրս. پایزه pāyiza «հրամանագիր թագաւորական, զոր տայ ումեք արքայ, վասն ազատ առնելոյ զնա ի դիմոսական հարկաց». (կոչւում է նաև کاغذ زر kāγaz-i zar, որի բուն նշանակութիւնն է «ոսկեթուղթ»)։ Բառիս մայրն է չին. pai-tseu «tabula, quam officiales pro signo dignitatis accipiebant, mongolice sōngōr dicta», որից փոխառեալ է նաև ասոր. ܦܝܙܐ paizā (Brockelmann, Lex. syr. էջ 270, տե՛ս և Будаговъ 1, 311), թաթարական մի փայիզայի պատկերը տե՛ս Սիսական, էջ 93։

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. հրտր. Մաղաք. աբ. 64։

***ՓԱՅԻՓՈՆ** «լուսնթագ» Արիստ. աշխ. լծ. սահմ. «երկնքի արարիչ աստուածը» լմբ. սղ. «փխբ. կենցաղս՝ արեգակամբ բերեալ» լծ. սահմ. 259։

=ՅՆ. Φαέθων «Հելիոսի որդին, Արեգակ աստուած. 2. Լուսնթագ. 3. արև, օր». բուն նշանակում է «փայլուն» և ծագում է φάος «լոյս» բառից։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՓԱՅԻԿ «սուրհանդակ, ձիաւոր պարոնի առաջից ոտքով վազող անձր» Լծ. Նար. Վրդ. առ. 287, 290. որ և փայեակ Կիր. պատմ. էջ 239, 241, 242, փայեկ Արբ. կրետ. 32. Ձքր. սարկ. Ա. 15. Առաք. պատմ. 81։

=Պրս. پیک payik «սուրհանդակ», որից փոխառեալ են նաև արաբ. فيج fayǰ «սուրհանդակ» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 432), քրդ. peik «թղթատար, նամակաբեր». աւելի ընդարձակ տե՛ս պայիկ, որ նոյն բառի աւելի հին ձևն է՝ փոխառեալ պահլաւերէնից։

ՆՀԲ դնում է «ռմկ. փէյիկ»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1908, էջ 123։

+ՓԱՅԼ, ի հլ. «պայծառ վառիլը, շողալը, պայծառութիւն» Ոսկ. մտթ. գ. 30. որից փայլել «պայծառ.վառիլ» Եզնկ. իա. 29. Ադաթ. փայլիւն ՍԳր. փայլուն ՍԳր. փայլածուն «պայծառ» ՍԳր. Ոսկ. մ. բ. 22. փայլածու «մոլորակը» Շիր. Արիստ. աշխ. փայլական «բուրդ, պիւրամիդ» (իբր Թրգմ. յն. πυράμις հոմանիշից, որ ծագում է πυρά «խարոյկ, փայտակոյտ» բառից!) Պղատ. տիմ. փայլակն ՍԳր. (կազմուած է փայլ+ակն «աչք» բառից, ինչպէս յն. ἀστεροπή, στεροπή, αστραπή «փայլակ» կազմուած են «աստղ»+«աչք» բառերից՝ ըստ Meillet ՀԱ 1927, 760), փայլատակել ՍԳր. Ադաթ. ¡(կազմուած փայլ+հատանել՝ ըստ Meillet անդ), փայլատակն Դան. ժ. 6, Եւս. պտմ. գ. 9. Եփր. աւետ. փայլատակումբ ՍԳր. Եղն. Եւս. քր. Ոսկ. բազմափայլ Փարպ. ջահափայլ Եփր. պհ. 169. լուսափայլ Ոսկ. յհ. ա. 14. Պիտ. գեղեցկափայլ Վրք. հց. կրկնութեամբ՝ փայլփայլումն Մեսր. եր. անփայլ (նոր բառ)։ Այս արմատի միւս ձևերն են՝ ՓԱՂ «փայլ». առանձին անդործածական, որից ունինք կրկնութեամբ՝ փաղփաղիլ «փայլիլ, ցոլցլալ» Բուզ. դ. 59, 3հ. կբ. փաղփաղուն «փայլուն» Վրք. ոսկ. փաղփաղեալ «փայլելով» Նար. կուս. 414. Օրբել. Հրտր. էմ. էջ 362 (տպուած է փաղփաջեալ). փաղփաղող «փայլուն» Վրդն. դան. (այս բառի վկայութիւնն է «Արջ անհեդեդ և փաղփաղող ատամամբք և ընգամբրք և ոտիւք». ՆՀԲ, որից և ԱԲ, մեկնում է «պապաչող, մռնչող», որ անյարմար է. կա՛մ պէտք է հասկանալ «փայլուն» (իբր ած. ատամներին) և կամ կարդալ փաղաղող «գիշատիչ»՝ իբր ած. արջին)։ Յետնաբար արմատը ենթադրուած է փաղփ, ի հլ. «փայլ, շողիւն» Թէոդ. կուս. որից փաղփիլ «փայլիլ» Պիտ. Նիւս. կուս. իդն. Պտմ. աղէքս. 60. փաղփեցուցանել Պիտ. փաղփեալ Լաստ. ժղ. Իգնատ. ղկ. 404. փաղփիւն «փայլուն» Պտմ. աղէքս. 155 (իմա՛ փաղփուն). փաղփումն Առ որս. Մագ. 120. փաղփուն Փիլ. սամփս. 569. Նիւս. կուս. են (առնուած է «փափուկ, կակուղ» իմաստով՝ Նար. խր. 506, ըստ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 154)։—ՓՈՂ «փայլ». առանձին անդործածական, որից փողել «փայլիլ» (նորագիւտ բառ) Օրբել. ողր ժե. կրկնութեամբ՝ փողփողել «փայլփլիլ, շողշողալ» Բ. մկ. ժե. 21. Ձեռնոր. Ղևոնդ. Արծր. փողփողենէջ Նար. տաղ.։ Կայ նաև փող «լուսնի շուրջը փակ». անստոյգ և նորագիւտ բառ, որ մէկ անգամ դտնում եմ գործածուած Վստկ. 12. Եւ թէ տեսանես ի շուրջն լուսնի զերթ կալ փողեր, բաղում անձրևաց նշան է (յն. երկուս կամ երիս կալս, այսինքն բակս)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. sphel-, phel- «փայլիլ» արմատից. ժառանգներից յիշենք սանս. sphul-iṅga «կայծ», višpulingakā- «կայծակնացայտ», -g- աճականով՝ սանս. phalgú- «փայլփլուն, կարմրափայլ», լեթթ. spulgůt «փայլիլ, կայծկլտալ», spulgans, spilgans «փայլուն, պայծառ», գերմ. flinkern կամ flunkern «փայլիլ», d- աճականով՝ լտ. splendeo «փայլիլ», հլիթ. splendžiu, splendėti «լուսաւորել», միռլ. lainn «փայլուն, պայծառ», lēss «լոյս», նիռլ. loinnreadh «փայլ», կիմր. llathru «մաքրել» են (Pokorny 2, 679, Boisacq 898):

Canini, Et. étym. 110 իտալ. falò, չեխ. palati «այրել»։ Bugge, Btrg. 19, 34 և Per Persson BB 19, 258—9

տուին նախ վերի մեկնութիւնը, բայց արմատը դնում են հնխ. sphelg-, phelg-, *որի համար էլ Հիւբշ. 500 մերժում է, չընդունելով հնխ.* -alg>*հյ.-այլ: Մառ* ЗВО 5, 320 *զնդ.* xᵛāθra *«փառք» բառի հետ։ Հիւնք. յն.* ϕαλός *«պայծառ» և տճկ.* parl-aq *«փայլուն» բառերից հանում է* փայլ, *իսկ պաղպաջ բառից փողփողել:* Scheftelowitz BB 29 (1905), 35 *հսլ.* paliti *«վառել» բայի հետ, որ կրկնում է* Charpentier KZ 40 *(1906), 477։ Գազանճեան, Արև. մամ. 1907, 934—5* փայլ *և* փողփողել *կցում է բրք.* partamaq *«փայլիլ» բառին, իսկ Յուշարձան 325 բրք.* parlamaq *հայերէնից է դնում։ Սագրգեան ՀԱ 1909, 335 սումեր.* bil, pil *«կրակ, այրել», հյ.* պլպլալ, *բրք.* yalən *«բոց», yəldərəm «կայծակ», Karst, Յուշարձան 403 սումեր.* bil, pil *«կրակ, այրել»։* Scheftelowitz KZ 53 (1925), 254 *հսլ.* paliti *«վառել», սանս.* sphuliṅga *«կայծ», sphulita «երևիլ»։— Պատահական նմանութիւն ունին պրս.* pālāyāl *«յոյժ փայլուն», pālāyīdan «պարզիլ», սանս.* bhāla *«փայլ» (=հյ.* բալ), *չաղաթ.* بالقمق balqəmaq *«փայլկտալ» ևն։*

Գիմ.—Մշ. փայլել *«փայլատակել», Երև.* փայլէլ, *Ննխ.* փայլէլ, *Սեբ.* փայլիլ, *Խրբ.* փոլիլ, *Մկ. Տիգ.* փէլոլ, *Մշ.* փէլալ, փիլալ, *Ալշ.* փիլալ, *կրկնութեամբ՝ Զթ.* փէլփէլօլ, փէլփէլոլ, *Ախց.* փլփլալ.—*գոյակատնաձև՝ Ալշ.* փելՐ, *Մշ.* փէլկ *«փայլ»։ Նոր բառեր են* փայլկտալ *(Վն.* փէլՐկըտալ), փայլխտիլ, փայլփստալ, փայլստալ *ևն։*

ՓԱՅԼԱՍ *«նարդոս». կայ միայն* փայլասենի *«նարդոսի բոյսը», որ մէկ անգամ ունի Անկ. գիրք հին կտ. էջ 14 (ՀԲուս. § 3035). «Հրամայեաց տալ նմա չորք իրք, որ են այսորիկ. կրաւկոն՝ որ է զափարան, և նարդոսն՝ որ է փայլասեննի» (Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 229, 236)։*

ՓԱՅԼՓԱՔԵԼ *«սփռփել, փաղաքշել, փարել». ունի միայն Բառ. երեմ. էջ 321։*

+ՓԱՅՏԱՂՆ, ն *հլ.* (-ղան, -ղամբ) *«փայծաղ, բրք. տալախ» Ոսկ. յհ. ա. 24. Փիլ. այլաբ. 36ախ. Պղատ. տիմ. 148. Մագ. Սոկր. որից* փայծաղնացաւ *Ոսկ. ղկ. Սարգ. (յաճախ). Մխ. բժշ.* փայծաղոտ *Բժշ. գրուած է* փայծեղն *Տաթև. հարց. 241, 242,* փայծաղն *Սոկր. 110, սեռ.* փայծղանն *Վստկ. 163։*

=Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են սանս. प्लीहन्- plīhán-, *զնդ.* -ɔɔʃɛʔɛʃ spərəzan-, *պհլ.* spārz, *պրս.* ɟɟ supurz, *քրդ.* pîšik, *յն.* σπλήν (*σπληγχ), *որ և* σπλάγχνον, *լտ.* lien, *անգլ.* spleen, *հիռլ.* selg, *բրբտ.* felch, *հսլ.* slězena, *ռուս.* селезенка, *լիթ.* blužnìs, *հպրուս.* blusne, *բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Անշուշտ այս բոլորը ծագում են միևնոյն ձևից, որ սակայն դժուար է վերականգնել։ Այս մասին ընդարձակ քննութիւն ունի* Walde IF 25, 160—6, *ուր կարևոր նշանակութիւն է տրւում հայերէնին։ Ընդհանրապէս նախաձևը դրւում է* sphelg'hen, spleng'h-, spleg'h-: *Ըստ* Meillet MSL *18, 310 փայծաղի անունը, ինչպէս մարմնի ուրիշ զանազան մասերի անուններ, կրօնական նախապաշարմունքով արգիլուած լինելով, այլևայլ լեզուներ աշխատել են խուսափել բուն անունը տալուց և դիտմամբ խաթարելով՝ ենթարկել են զօրեղ ձևափոխութեան (*Walde 429, Pokorny 2, 680, Trautmann 256, Ernout-Meillet 520, Boisacq 899): *Հայերէնը գալիս է աւելի հին *փայղծան ձևից, որ տեղափոխութեամբ դարձել է* փայծաղն *և* փածայղն: *(Հյ. փ ծագում է* sph- *նախաձայնից)։ Արդի գաւառականները ծագում են* փայծաղ *կամ *փածայղ>*փածէղ *ձևից. բացառութիւն է կազմում միայն Խոյ.* սիպէխ *ձևը, որ ծագում է հնագոյն *սիպեղն կամ *սիպայղն ձևից և ենթադրում է զրաբարից տարբեր մի գաւառական։ Սրա մէջ* սիպ-, սպ- *ներկայացնում է հնխ.* sp- *և ո՛չ* sph-, *իսկ ծ ձայնի համապատասխանը ջնջուած է՝ ճիշտ յն.* σπλήν *ձևի պէս։*

Վերի ձևերի հետ համեմատեց նախ Böttich. ZDMG 1850, 363, *յետոյ* Arica 72, 169, Lag. Urgesch. 702, *Տէրվ.* Altarm. 4 *և Նախալ. 82։ Հիւբշ.* ZDMG

30, 774—9 *մերժում է, իսկ* Arm. Gram. *յիշած անդամ չէ*։ Karolides, Γλ. σογχρ. *96 իրար է կցում* փայծաղն, պայուսակ *և* կապադովկ. πεϊσάχι *«փայծաղ». արմատը դնում է* φυς, pus, φύσκα, *լտ.* pusula, *լիթ.* pusti, *սանս.* pustus, *լտ.* spuma, spirare։ *Վերի ձևով են ընդունում* Meillet-*ի հետ՝* Vendryès MSL 18, 310, Walde 429 *են*։

ԳԻՒ.—Ագլ. փա՛յծուղն, փա՛յծուղ, *Շմ.* փայցախ, *Ղրբ.* փա՛ծէղնը, փա՛ծրղնը, *Մկ.* փածէղ, *Ալշ. Մշ.* փաձեղ, *Գոր.* փա՛զէի, *Երև.* փէցէղ, փիձէխ, *Ջղ.* փիծեղ, *Շշ.* փի՛ցէխ, *Ղզ.* փի՛ցախ, *Տփ.* փիծիղ *(ըստ Աղբալեան ՀԱ 1929, 554* փի՛ցախ*)*, *Սլմ.* փիւծեղ. *—իսկ Խոջ.* սիպէխ։

ՓՈՒ.—Վրաց. ფაწალი փածալի *(Մաո, Грам. др-арм. 110)*, ფაწალა փածալա *(Զուբինով[2] 1299)*, *լազ.* փածալա, փաւնծալա *(Աճառ. Արրտ. 1911, 418)*, *կապադովկ.* πεϊσάχι *(*Karolides 96, Bugge KZ 32, 11), *երեքն էլ «փայծաղ» նշանակութեամբ։ Վրաց. բնիկ բառերն են* ტყორცი տղ'իրպի *և* ელენთა ելենթա. *կապադովկացին փոխառութիւն է, որովհետև ունի* ղ>χ *և ո՛չ լ*

ՓԱՅՏ, ի *հլ. «փայտ. 2. ծառ. 3. կախաղան» (Համմ. կախել զփայտէ=պրս.* badār kašīdan) *ՍԳր. որից* փայտ ընկենուլ *«վիճակ գցել» Եղիշ. Բ. էջ 39 (սրա համեմատ էլ Բառ. երեմ. էջ 333 ունի* fուեայ *«փայտ». Համմ. Կովկասի արդի գռ. չօփ* fցել *«վիճակ գցել, քուէարկել»<պրս.* چوب čōb *«փայտ» բառից).* փայտաբեր *Յհս. Բ. 21,* փայտագործ *Ագաթ.* փայտակերտ *ՍԳր.* փայտակոյտ *Ես. լ. 33.* փայտակոտոր *Օր. իթ. 11. Յհս. Բ. 21, 27.* փայտակոփ *Եփր. Թգ.* փայտատ *ՍԳր. Ագաթ. Եփր. Թգ. 455. Եր ընդ Եղր. 44.* փայտեղէն *ՍԳր.* անփայտակերտ *Եւս. քր.* փայտանալ *«ցրտից փայտ կարիլ» Մծբ. 192.* փայտ հատարոյ *«հաշուեփայտ. տճկ. չէթէլէ» Լմբ. Մաո. 107 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 124).* խաշափայտ *Ա. պետր. բ. 24. Ագաթ.* մայրփայտեայ *Ագաթ.* լաստափայտ *Իմ. ժդ. 6. Եփր. Համար. 251.* եղևնափայտեայ *ՍԳր.* եաւափայտ *Իմ. ժդ. 1. նոր բառեր են* փայտաշէն, ձեռնափայտ, վառելափայտ, լուցափայտ, հաշուեփայտ, փայտածուխ, փայտային, փայտոջիլ, փայտփոր, փայտփորիկ *են*։

Վրդ. ծն. ա. 12 և Տաթև. Հարց. 214 հանում են փոխ *բայից*։ Klaproth, As. pol. 101, 142 *զնդ.* pjar *և սամոյէդ* pja, pä: Bugge IF 1, 455 (*նոյնը նաև* Scheftelowitz BB 29, 41) *պայթել բառի հետ՝ կցում է սանս.* bhédati, *լտ.* findere *«ճեղքել», յատկապէս «փայտ ճեղքել» ձևերին։ (Մերժում է* Pokorny 2, 139): *Հիւնք. յն.* παιδεία *«խրատ, կրթութիւն, պատիժ են»։* Patrubány SA *1, 212 հրգ.* spalten *«ճեղքել», մրգ.* spëlte *«ճեղքած փայտ» բառերի հետ։* Liden, Stud. z. altind. 34 *հհիւս.* biti *«գերան», հնխ.* bhid- *«ճեղքել» արմատից։* Lewy KZ 40 (1906), 422 *անգսք.* spitu, *լտ.* spissus *«պինդ, ամուր», լիթ.* spëst *«ճնշել»։* Коршъ, *Բրգմ. Հովիտ 1914, 470 չերքէզ.* pxa *«փայտ» բառի հետ։ Նոյնը նաև Մաո,* Яфет. сбор. *1, 55*։

ԳԻՒ.—Ագլ. փայտ, *Ախց. Կր.* փատ, *Ակն. ՀՃ. Նխճ. Պլ. Ռ. Պրտ. Սչ. Սեբ. Սվեդ.* փադ, *Շմ.* փադ, փէդ, *Ասլ.* փադ, փա*, *ՋԹ. Խրբ.* փոդ, *Ղրբ.* փոդ, փրէդ, *Մկ. Մրզ. Ջղ. Սլմ. Վն. Տփ.* փէտ, *Ալշ. Երև. Համշ. Մշ. Տիգ.* փէդ։ *Նոր բառեր են* փայտամած, փայտանոց, փայտաջուր, փայտատաւար, փայտարար, փայտել, փայտեփուր, փայտումիս, փայտուր, փայտոկել։ *Հետաքրքրական ձև է Ալշ. Մշ.* փիցուկ *«սատկած», որի բայն է* փիտնալ *«սատկել», որից երևում է թէ հինն է* փիտանալ<փայտանալ *և* փիտացուկ>փիտցուկ>փիցուկ։

ՓՈՒ.—Լազ. փատի *«տախտակի կտոր» (Մաո, Լազ. քերակ. 193). վրաց. գռ.* ხიზფეთი սիչափերի *կամ* ჩიჩაფეთი չիչափերի *«նոր կարելու ժամանակ կօշիկը շուռ տալու փայտ» (<հյ. *շրջափայտ), նաև* კარაბეტი կարապետի *«կարափայտ, նոանկիւնի փայտեայ պրիզմա, որի վրայ կօշկակարը կարելիք կաշին է ամրացնում»*

(Беридзе, Груз. глосс. по имер. и рач. говорам СПет. *1912, էջ 39 և 20*)։

ՓԱՅՓԱՅԵԼ *«խնամքով նայիլ, սիրելով մեծացնել, վրան գուրգուրալ, գգուել»* Մագ. *գ. 17. Եւս. քր. Խոր. որից* փայփայանք *Ոսկ. ես. և սխալ ևոթագրութեամբ կազմբաց փայփել «գթալ, սփոփել, սիրտը առնել ևն», որ գիտէ միայն ՓԲ յաւել.*։

ՆՀԲ «որպէս թէ պահել պահպանել»։ Հիւնք. պրս. բէնբէն *«փաղաքշական ձայնարկութիւն»։*

Փայքար *տե՛ս* Պայքար։

ՓԱՆԱԿ *«սրահ»? յիշում է միայն Բո. հրեմ. էջ 303* վրաճիկ *«սրահ» բառի բացատրութեան մէջ։*

+**ՓԱՆԱՔ** *«տկար, խեղճ»* Պզատ. *տիմ. Մագ. թղ. 237. «աղքատ» ՅՀ. կթ. որից* փանաֆի *«չնչին, խեղճ, աննշան» Փիլ. Խոսր. Սարգ.* փանաֆապէս *Լմբ. պարգ.* փանաֆիմաց *Անյ. բարձր. Մագ.* փանաֆութիւն *Մագ. Լմբ. Մխ. առակ. նոյն բառն է և* փանաֆի *Սակր. 363՝ սեռ.* փանաֆւոյ *ձևով (սխալ գրուած* փանաֆիոյ)։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sphn̥- *«կարօտ կամ պակասաւոր լինել» արմատից, որ* pn̥- *կամ* spn̥-, spen- *ձևով գտնւում է նաև յունարէնում. հմմտ.* σπάνιος *«քիչ, հազուագիւտ, սակաւ, անբաւարար, չնչին, ողորմելի»,* σπανός *«քարոց, մաղկարօտ»,* σπάνις *«պակասութիւն, սակաւութիւն, աղքատութիւն»,* σπανίως *«քիչ անգամ, հազիւ իմն»,* σπανίζω *«ցանցառ լինել, պակասութիւն ունենալ, պակասիլ»,* ἡπανία *«պակասութիւն»,* πεῖνη, πεῖνα *«քաղց»,* γεωπείνης *«սակաւահող» (*Boisacq 890, 756, Walde 553, Pokorny 2, 8 *և 661)։ Հայերէնի մէջ* -աֆ, -աֆի *մասնիկ է, ինչպէս* արմատաֆի։

ՆՀԲ լծ. լտ. vanus, vanidus, *Բրք.* ֆանի, ֆանըգ, ֆէնա։ *Ուղիղ մեկնութիւնը տուաւ Տէրվիշ.* Altarm. 4: *(Յոյն բառերի մասին զանազան համեմատութիւններ կան առաջարկուած եւրոպացի լեզուաբանների կողմից, բայց վերջիվերջոյ բոլորը մերժուած և յոյն բառերը մնում են առանձին)։—Հիւնք. պրս.* پناغ panāγ *«քարտուղար, գրագիր»։*

ՓԱՆԴԱՆԵԼ *«ցրուել, թշնամին հալածելով ասդին անդին փախցնել» Մամիկ. էջ 52 (այլ ձ.* փանդաղեղել*). որից* փանդաճիլ *«փախչիլ, սուրալ, վազել, թռչիլ» Գնձ. առաջինը նշանակում է նաև «յարձակիլ, վրան յարձակում գործել». Հմմտ. Եփր. վկ. արև. էջ 192—3 «ի խա՞շն քո սկսար բանդանել և ի գառինս քո գա՞յլ դարձար) (թէև տպուած է* բանդանել, *բայց այլ ձ.* փանդանդել*): Սրանից առնելով Յայսմ. մայ. 31 «ի խաշի՞նս քո սկսար փանդանդել, ի գառինս քո գա՞յլ դարձար՝ յանկարծակի խողխողել»։ Բառիս նշանակութիւնը ճշտում է Նոր-Ջուղայի բարբառը։*

ՆՀԲ մեկնում է «Թուի փաթաթել, փաթութել, իբր պաշարել, կաշկանդել կամ ջարդել», իսկ Գնձ. թողնում է անբացատրելի. ՋԲ դնում է փանդանդել *«փաթաթել» և* փանդանել *«անդամ անդամ պատառել»՝ իբր անստոյգ բառ։ ԱԲ երկուսի խառնուրդն է։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1921, 122։*

ԴԻՒ.—Ջղ. փանդանել *«վրան յարձակիլ»։*

***ՓԱՆԴԻՒՆ,** ն *հլ.* (-ոամբ, -ոունի) *«թելատոր մի նուագարան» Մեկն. դևտ. Ճառընտ. Յայսմ. Սահմ. առում է նաև* փանդիո, *ի-ա հլ. Բուզ. թղթ. դաշ.* փանդեոն *Պզատ. օրին.* բանդիոն, բանդեոն *Ոսկիփ.* բամբիոն *Խոր. Նար. որոնցից ունինք* փանդռնաւար *Եւս. քր. Ոսկ. ես.* փանդռներգակ *Պիտառ.* փանդեռնապէր, *Աթան. էջ 497.* փանդեռնաւար, փանդեռնաւարական, փանդեռնաւարութիւն, փանդեռներգութիւն *Պզատ. օրին.* բամբռասաց *Գր. տղ. ուղղագոյն ձևն է* փանդիոն։

=*Փոքր-Ասիական ծագում ունի. հմմտ. լիւդ.* πανδοῦρα, πανδούριον, πανδουρίς *«երկք լարով քնար»։ Բառս փոխառեալ և տարածուած է արևելք և արևմուտք։ Նախ անցել է յոյներին և տուել է* πανδοῦρα, πάνδουρον *«երեքլարեան քնար» (Յունաց մօտ առանդութիւն կար միշտ թէ փանդիռը Փոքր-Ասիայից է եկած)։ Այստեղից ձևացել են լտ.* pandura *և Բրք.* pandura, *որի միջոցով են*

բուլգար. pandura, *սերբ.* pandura, pandur, bandur, *ուկր.* bandura «*լարաւոր նուագարան կամ կիթառ*»։ *Միևնոյն բառը հասել է նաև Կովկաս, ուր ունինք վրաց.* ფანტური *փանտուրի կամ* ფანდური *փանդուրի, թուշ.* ფანდურ *փանդուր, չէչէն.* p'aydur «*լարաւոր մի նուագարան*», *օսս.* fändur, fändir «*երկու լարով կիթառ*»։ *Կովկասեան ձևերը հայերէնի միջոցով չեն ու ձայնաւորի պատճառաւ*—*Հիւրշ. 395։*

ՀՀԲ իրարից դանազանելով գրում է բամբիռն «*մատի ծնծղայ, թրք. չալփարա, չէնկի*», *իսկ* փանդիռն «*գալարափող*»։ *ՆՀԲ անորոշ կերպով մեկնում է* բամբիռն «*թերևս որպէս* բամպուռ *կամ* սանդուռ, *կամ ծնծղայ մեծ և փոքր, որպէս զիլ, չալփառա են*». *իսկ* փանդիռն «*իբրու նուագարան բախողական պէսպէս. որպէս երգնհոն, քնար, և* սանդուռ, բամպուռ ...*որպէս քնար երեքաղեան*». *և համեմատում է յն.* փանռո՛ուռա *ձևի հետ։ Գրեթէ նոյնն է նաև ՋԲ։ Եւրոպա 1851, 19 հանում է* բամբ=*պրս.* bām *բառից և հետևցնում է թէ «բարձրբրկիկ ձայն մ՚ունեցող աղեբախ նուագարան մը պիտ՚որ ըլլայ»։* Böttich. Arica 48 *և* Lag. Gesam. Abhd. 274 *լիւդ. և օսս. ձևերի հետ, բայց նաև իտալ.* mandora, mandoline: *Էմին, Հայ. հնթ. կր. (Յոյս 1875, 408) աղիրով մի նուագարան է ընդունում*—*Հիւրշ. 395 դնում է ծագումն անստոյգ փոխառութեանց շարքը։ Բամբիռ և փանդիռ երաժշտական գործիքների ձևի և կազմութեան վրայ, իբրև երկուսը իրարից տարբեր բաներ, բաւական ընդարձակ խօսում է Գ. Լևոնեան՝ Ազգ. Հանդէս ԺԴ 91—95։*

ՓԱՆԴՈՒԿ «*Հանդիսաւոր*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 321։*

[ՓԱՆԴՈՒՐԱԿ, *գրուած է նաև* փակդուրակ, բանբորակ. *Յիսուսի Հայր համարուած մի անձի անունն է և սխալմամբ կարծուած է թէ նշանակում է «Հիւսն». երկու անգամ գործածում է Եղիշ. բ. «Ի կնոջէ ումեմնէ ծնաւ, որում անուն էր Մարիամ և առն նորա Յովսէփ, այլ ճշմարտութեամբ բանբորակայ ուրումն նղելալ նա որդի յանկարդ խառնակութենէ». (Եղիշ. տպ. Թէոդոսիոյ, էջ 36. պարբերութեանս վերջի մասը սակայն չի գտնում ուրիշ օրինակների մէջ և անշուշտ կրճատուած է պարկեշտ գրչագրողների ձեռքով). «Թողեալ զՅիսուս Քրիստոս զփրկական անունն, փանդուրակայ որդի անուանեաս» Եղիշ. մատ. էջ 29։*

=Joseph Pandora *անձի անունն է, որ հին հրէական մի առասպելի մէջ Քրիստոսի հայրն էր համարւում։ Այս առասպելը առաջին անգամ գրի առաւ հռովմէական մատենագիր* Celsus *(3. Ք. 178)՝ իր հակաքրիստոնէական գրութեանց մէջ. «*Joseph Pandora, *հռովմայեցի զօրագլուխ կալաբրիական լեգէոնի յանկոյց զերբայեցի աղջիկն Միրիամ ի բնեղեհամէ և եղև հայր Յիսուսի». (Համմ. Որոգինէս, Ընդդէմ Կելսեայ Ա. 28, 32)։ Նոյնը կրկնում են նաև Թալմուդը և Սէֆէր Թոլէդոթ Եշու (Գիրք ծննդեան Յիսուսի) հրէական առասպելական գրուածքը։*

Հին բռ. բառս մեկնած է «հիւսն», անշուշտ հետևցնելով այն բանից, որ հայր Յովսէփ հիւսն էր։ Եղիշէին հետևելով Աւգերեան, Լիակ. վրք. սրբ. հ. 18 և միևնոյն ժամանակ առասպելը մեկնել ուզելով՝ Յիսուսի նախնեաց մէջ ընդունում է Պանթեռ անունով նշանաւոր մի հիւսն, իսկ փանդուրակ *համարում է* ibn-durgār «*որդի հիւսան*»։ *ՆՀԲ, անտեղեակ վերոյիշեալ առասպելին և առանց ուշադրութիւն դարձնելու սեռ.-այ վերջաւորութեան, որ յատուկ է միմիայն յատուկ անուններին, մեկնում է «բառ անյայտ, որպէս հիւսն»։ Նոյնը նաև ՋԲ։—ԱԲ դնում է «յատուկ անուն հին հերետիկոսի կամ գէշ մարդու, ըստ այլոց հիւսն»։* Lag. Gesam. Abhd. 53 փանդուրակայ որդի *մեկնում է «բողորդի» և կցում է* παν(θ)ήρας *յատուկ անուններին։ Լաւագոյն և ուղիղ մեկնութիւնը ունի Մ. Փորթուգալ փաշա, Եղիշէ 1903, էջ 240, որ զժբախտաբար սխալմամբ սրան է կցում նաև պրս.* پندورا pandūrā «*այր տխմար, սուտ՝*

կեղծեալ տղայ», پندار pindārā *«կարծիք, ցնորք, երևակայութիւն»։]*

ՓԱՆԽՉԻՆ *«ոլոռն». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 572։*

ՓԱՆՈՍ *«գձուձ կամ տգեղ». ունի միայն Բառ. երեմ. էջ 321։ Կապ չունի Փանոս անուան հետ։*

ՓԱՆՈՒՏ *(կամ փանճօտ) «կարօտ ամենայնի». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 321։*

Փաշ *տե՛ս Բաշ։*

***ՓԱՇԱՄԱՆ** «զիղջ կամ յանդիմանութիւն անձին» Ոսկ. մ. ա. 20. գ. 4. Սերբ. 140. «դատապարտութիւն, մեղադրութիւն» Եզն. յետին է փոշիման՝ որ տե՛ս առանձին։*

=Պհլ. 𐭯𐭱𐭠𐭱𐭥𐭠𐭭 pašāmān, *մանիք. պհլ.* פשימאן pašīmān, *պազ.* pašemān, *պրս.* پشیمان pasīmān *«զղջացած», պհլ.* pašāmānīh, *պազ.* pašēmānī, *պրս.* پشیمانی pašīmānī *«զեղջ, ապաշաւ»* (Salemann, Man. Stud. ЗАН 8, 114, Nyberg, Hilfsbuch des pehl. *II* 173). *ծագում է* pas=*հիւս. արևմ.* paš- *«յետոյ»+*ā *յօդակապ +* mān *«մտածել» և նշանակում է բուն «յետոյ մտածել (յանցանքի վրայ)». այսպէսով կազմութեամբ նոյն է յն.* μετάνοια *հոմանիշի հետ։ Իրանեան ձևի վրայ առանձին յօդուած ունի* Benveniste BSL 34, *№ 101, էջ 28—31, որ նախաձևը դնում է* *patiš-māna-, *իբր «յետամիտք». արևելքում վերածուել է* patiżmāna-, pažmān *(սոգդ.* ptẓmn, *պրս.* pižmān*), արևմուտքում* pašmān-, *որից օսս.* fäsmon, *քրդ.* pōšmān, *և յօդակապով՝ պհլ.* pašāmān, pašēmān, *պրս.* pašīmān, *պազ.* pašāmān. *միևնոյն կազմութիւնն ունի քրիստ. սոգդ.* nm'n<ni-māna- *միայն տարբեր մասնիկով։ Պարսկերէնից է փոխառեալ թրք.* pešiman *կամ* pūš-man *«զղջացած»։—Հիւբշ. 254։*

ՆշՒ յիշում է պրս. և թրք. ձևերը։ ՋՒ դնում է օտար բառ։ Lag. Arm. Stud. § 2285 *պրս.* pašīmān:

ՓԱՇԿՈՒՃ *«պարկ կամ տոպրակ», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ղր. «Թզենւոյ պտուղն է իրրև զփաշկուճ և մանր մանր սերմն ունի ժողովեալ. այսպէս և սիրտն Ադամայ՝ աման եղև չարին և զազգի ազգի կորստեան խորհուրդս ժողովեաց ի ներքս և աճեցոյց»։*

Նոյն իմաստն ունի նաև պարկուճ *բառը։*

***ՓԱՇՈՒՂ** «դնելն զոտս ի ջուր ջերմ». ունի միայն Քաջունի, Հտ. Գ. 244։*

=Պրս. پا pā *«ոտք» +* شوی šūy *«լուացում» բառերից։—Ա՛ճ.*

ՓԱՓ *«ծակ, խոռոչ, փոս. քարի մէջ այր» Ագաթ. Ոսկ. ես. 365. կող. էջ 545. Երզն. լս. էջ 124, 132. որից* անփապ *Թէոդ. մայր.* անփապելի *Շիր. նսեմափա՞պ Ճառընտ. փապուղի (նոր բառ), և* -ար *մասնիկով (հմմտ. տիպար)* փապար *«ծակ, ծերպ, ճեղք, քարանձաւ» Երր. ժա. 38. Ես. է. 19. Յովն. բ. 7. Եզն. «ճեղքուած, աւերակ». Ճ՚. կբ.* փապարել *«մարմինը՝ մորթը ուռիլ, ծակծկիլ» Օր. բ. 4. Եղիշ.։*

Տէրվ. Նախալ. 92 հնխ. pap, pamp *արմատից է դնում հյ.* փապարել, փամփուշտ, փափուկ, *լիթ.* pàmpti *«ուռիլ, գիրանալ»,* pampalas *«գէր»։ Հիւնք.* պարապ *բառից* փապար *է դնում և* փապար-*ից համառօտուած* փապ։

ՓԱՊԱՐ *«յետի կողմն գլխոյ.* затылокъ *(ծոծրակ)», այս իմաստով ունի Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. 1788, էջ 119, 161։*

Փապարազուն *տե՛ս Փարազուն։*

ՓԱՊԻԼ *«բաժանութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սարգ. բ. պետր. յոչ. էջ 399 (բ տպ.) «Սիրէին զնա և բևեռելք էին ի նմա և ոչ կամէին փապիլ ի նմանէ». (Հրէից համար է ասում, որ Մովսիսական օրէնքին պինդ յարած՝ չէին ուզում բաժանուիլ նրանից)։ Նորագիւտ բառիս դէմ Սարգսի ա տպ. ունի փոխիլ (էջ 509), որ նրա ճիշտ թարգմանութիւնն է։*

=Թերևս փապ *«ճեղք» բառից կազմուած՝ իբրև «հերձուած կազմել»։—Ա՛ճ.*

ՓԱՊՈՒ *«նորաբողբոջ տերևք ծառոց». ունի միայն Քաջունի. Հտ. Գ. 244։*

***ՓԱՌ** «բիս». արմատս առանձին գործածական է միայն արդի գաւառականների մէջ.*

այսպէս Ախց. փէռ «անիւի շառաւիղները», Ջղ. Վն. փառ, Բբ. փէռ «ջաղացքի անիւի թեւերը, որոնց զարնուելով ջուրը՝ անիւը պտտւում է. ֆր. aube»: Բայց սրա հին գործածութեան ապացոյց է խեչափառ «խեցգետին» Ոսկիփ. Վրդն. առ. 37. Մխ. քժ. 43, 55, Վստկ. 74, Սանահն. (բուն նշանակում է «խէչից՝ կողքից թևեր ունեցող»):

=Պրս. پر par և մանաւանդ پرّ parr (որ արդի Պարսից մօտ հնչւում է pärr փառռ) «թև, բազուկ, փետուր», որից և՛ پرّاي parai «անիւ աղօրւոյ, ջաղացքի անիւ». նոյն են քրդ. per, զազա pel «թև», հինն է պհլ. پر parr «փետուր», որ է զնդ. parana-, սանս. parṇá- =լիթ. spařnas «փետուր, թև» (Horn § 293, Nyberg, Hilfsbuch II 171): Նոյն է ուտ. p'ar «ջաղացքի անիւ»: Ըստ Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 128 պրս. par «ջաղացքի անիւի թևերը», ինչպէս գիտէ նաև Будаговъ 1, 313 և ինչպէս ունին մեր գաւառականները:—Ա՛ճ.

*ՓԱՌ «զգեստ, շապիկ» Վրդն. դան. (Ջբաղէն զգեցեալ, որ է փառս, քահանայական զգեստու ձև), «տղրնկեր, ընկերք, տղու շապիկ, նորածնի հետ արգանդից դուրս եկած աղտեղութիւնը» Ոսկիփ. «ձուի միջի մաշկը» Յայսմ. մրտ. 18. գտնւում է նաև գաւառականների մէջ՝ «թաղանթ, բարակ մաշկ, աչքի վրայ պատած լուսն, վէրքի երեսի խաւր, քացախի մարը, հալած իւղի երեսի փրփուրը, սարդի ոստայն» նշանակութեամբ:

=Խալդեան փոխառութիւն է. համմտ. վրաց. ფარვა փարվա «ծածկել, պահել, պահպանել, պաշտպանել», ფარული փարուլի «ծածկել», საფარებელი սափարեբելի «ծածկոց», აფარება ափարեբա «ծածկել, ցանկ քաշել, քօղարկել, գաղտնի պահել», აფარვა ափարվա «ծածկել, պահել, ապաստան տալ», დაფარნა դափարնա «ծածկոց»: Թէ հայերէնի և թէ վրացերէնի այսքան զանազանեալ նշանակութիւնները չեն թոյլ տալիս կարծել որ մին միւսից փոխառեալ լինի, այլ միասին ենթադրում են մի երրորդ աղբիւր, որ խալդերէնը պէտք է լինի:—Ա՛ճ.

ՀՀԲ գրում է նաև փար և մեկնում է փարիլ «փաթաթուիլ» բառով: Թիրեաքեան, Արիահայ բռ. 344 պրս. بار bār «քօղ» բառից: Պատահական նմանութիւն ունի պրս. پار pār «եզան յարդարեալ կաշի»:

ՓՈԽ.—Ուտ. p'ar «թաղանթ, հեղուկ ուտելիքների երեսին քոնող շերտը»:

*ՓԱՌ-Ք, ի-ա հլ. (միայն անհպարար գործածուած) «վհհութիւն, մեծութիւն, շուք. 2. գոհաբանութիւն, փառք տալը» ՍԳր. «3. կարծիք, կրօն, դաւանութիւն» (ըստ յն. δόξα, որ նշանակում է «փառք, կրօն, դաւանութիւն») Գերմ. Թղթ.: Առաջին նշանակութիւնից են փառաւոր ՍԳր. Ոսկ. մ. բ. 1. փառախնդիր Եւագր. փառասէր Եւս. պտմ. փառաւորութիւն Եղն. (տպագիրը սխալմամբ և հակառակ ձեռագրի ունի փառատրութիւն), մեծափառ Բուզ. սպիտակափառ Ագաթ. սրճոտեփառել «սուտ պարծենալ» Պիոն. 390. ծիրանափառ Ագաթ. Կորիւն. շիջելափառ Յոբ. լ. 8. զրափառ Ոսկ. յհ. ա. 2, 6. փառազնեայ «աղնուական» Հայել. 333, փառաշուք «փառաւոր և շքեղ» Փոնց. 165 (երկուսն էլ նորագիւտ բառ): Երկրորդ նշանակութիւնից են բխում փառաբանիչ Ագաթ. փառաբանել Շար. ժմ. Կիւրղ. ծն. փառամատոյց Գիւտ. Թղթ. առ վչ. փառատրել Շար. Նար. յատկապէս եզակի գործածութեամբ փառ «փառատրական մեղեդի», որից էլ հարցնափառ Տօնաց.: Երրորդ նշանակութիւնից են ծագում փառաբանել «կարծել, դատել, այնպէս համարել» Կիւրղ. գնձ. ուղղափառ =յն. ὀρθόδοξος Յճխ. Խոսր. Շար. ուղղափառութեաւառ Բուզ.! շարափառ =յն. κακόδοξος Խոր. Վրք. Հց. այլափառ =յն. ἑτερόδοξος Փիլ. ևն: Հոլովիւալ ձևից է՝ փառացասէր Ոսկ. մթթ. Ա. 61: Գրուած է ի փարաց՝ կրկնագիր Ագաթ. Յուշարձան 117 բ: Նոր բառեր են փառակազմ, փառապանծ, փառատենչ ևն:

=Պհլ. farr «փառք, շուք» բառից. համմտ. պրս. فرّ farr «փառաւորութիւն և շքեղ պերճութիւն. 2. լոյս», فرّة farra «պերճութիւն և զարդարանք», فرّهى farrahī «շքեղութիւն և փառաւորութիւն», Բուրհանի մանիք. պհլ. frh (farrah) «փառք, պերճու-

թիւն», աւելի պահուած է յատուկ անունների մէջ. ինչ. պհլ. Farr-Ohrmazd, Farnbag, Nāpī-farnāi, *հպրս.* Vindafarnā *(յն. տառադարձուած* Ἰνταφέρνης), *Farna-bāzu- (յն.* Φαρνάβαζος), *Tisa-farnā (յն.* Τισσαφέρνης), *որոնցից հետևում է հպրս.* farnah-. *այս բառը բնիկ չէ, այլ պնդ.* xvarənah- *բառն է, որ հպրս-ը գիտական ճանապարհով փոխ է առել և իր ձայնական օրէնքներին ենթարկելով դարձրել է* farnah- (Meillet MSL 17, 108. *այս մասին աւելի երկար տե՛ս* Benveniste BSL *հտ. 31, № 93, էջ 72—76). հպրս-ից անցել է պահլաւին և այստեղից էլ մեզ։—Հիւբշ. էջ 254։*

Tromler, Disputatio (1759?), *էջ XXIV (ըստ* Karst, Gesch. d. Arm. Phil. *2)* փառ *բառի հետ է կապում եգիպտ.* Potiphar *անունը և* Փարաւոն։—*ՀՀԲ* փառ *«մեղեդի» դնում է* փառ *«մաշկ» ձևի հետ։—ՆՀԲ* փառ՝ *լծ.* վարկ, յարգ։—*Պրս. բառի հետ կցից նախ* Müller SWAW 42, 252 *և յետոյ* Lag. Ges. Abhd. 149:—Lag. Beitr, baktr. Lex. 38, 71 *հպրպ.* -фарн-, *պնդ.* paranaiϑh, *պրս.* parr (farr): *Այվազեան, Սիօն 1872, 110 պրս.* ֆէր։ *Մորթմանն* ZDMG 26, 526 *բևեռ.* parni *հոմանիշի հետ։ Մառ* ЗВО *5, 320 պնդ.* xᵛāϑra *հոմանիշի հետ։ Հիւնք.* Պերոզ *անունից։—*Karst, *Յուշարձան 403 սումեր.* bar *«փայլիլ, արև»։*

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Գոր. Երև. Խրբ. Կր. Համշ. Ղրբ. Մշ. Մրզ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սլմ. Սչ. Վն. Ախց. Սվեդ. Տիգ. Սեբ. փառ, *Ասլ.* փառ, փառ*, *Տփ.* փարռ, *Մկ.* փառ[1]. *Բերքամօտ հայոց մէջ՝* փառ *Առն. «փառք»,* փառաբոնել օլմաք *Առն. «ուրախանալ»,* առօք փառօք *էնկ. «առօք փառօք, ամենայն փառաւորութեամբ» (Բիւր. 1898, 789).—Նրկատելի է Տփ.* փարավուլ<փառաւուռ՝ *ր-ը >ր-լ ձայնափոխութեամբ, որ վրացերէնի սովորական տարանմանութեան երևոյթն է։*

Փոխ.—Բոշ. p'ark' *«փառք»* (Finck, Die Spr. d. Arm. Zig. ЗАН 1907, 120):

ՓԱՌԱԶՆՈՏ *(կամ նաև* փառանձնոտ, փառազնոտի, փառազնօտի, փարազնոտի) *«հինգ մոլորակներից մէկը» (ըստ ՆՀԲ հրբառաբ, ըստ ՋԲ լուսնթագ) Զքր. կԲ. Մեկն. ծն. «աւելնաց ամսի չորրորդ օրը» Քաջունի, Գ. էջ 244։*

ՆՀԲ և ԱԲ փառ *բառից։*

[**ՓԱՌԱԿԱՆ.** *տեղական յատուկ անուն է, որ ԱԲ սխալմամբ մեկնում է «լերանց ստորոտն եղած»։ Այս նշանակութիւնը հանելու նպաստած լինի Բերևս գտն.* փառակ *«լեռան լանջ», որ ըստ իս սրա հետ կապ չունի։ Աւելի ընդարձակ տես* շեմակ։]

Փառայ *տե՛ս Փարայ։*

ՓԱՌԱՆԳԱՒՈՐ *«կապարճ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 156, որից նաև ՓԲ։*

***ՓԱՍ** «պատիւը պահել, նրա յարգը ճանաչել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Քուչ. 91.—«Առիւծն առիւծին մսէն քէ հազար որ տան նա չուտէ. գէմ ինքն ալ առիւծ եղեր, զառիւծն փասն կու պահէ»։*

=Պրս. پاس pās *«պահպանութիւն» բառն է, որ վերի ձևով էլ գործածուած եմ գտնում Գուլիստան, յոչբ.—*پاس خاطر بیچارگان pās-i xāṭir-i bī-čāragān *Թշուառների խաթրը պահել, նրանց յարգը ճանաչել»։—Աճ.*

Փաս *տե՛ս Քաս։*

***ՓԱՍԱԽ–ԱԿԱՆ** «պատասխանական». ունի միայն Բառ. երեմ. էջ 321։*

=Պրս. پاسخ pāsux *«պատասխան», որի վրայ տե՛ս* Պատասխան։—*Աճ.*

ՓԱՍԵԱԿ *«զատիկ, պասեք». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Իրեն. հերձ. 33, «եւ զօր չարչարանացն նորա ոչ անտեղեակ եղև, այլ նշանակելով յառաջագոյն պատմեաց զնա փասեակ անուանեալ». (բայց մի քիչ յետոյ* փասէք, պասէք): *Նոյնը փեսեկ ձևով Փիլ. ել. 458, 461։*

=Յն. φασέκ ձևից տառադարձուած. սրա վրայ աւելի ընդարձակ տե՛ս պասխա։

Համմտ. Վարդանեան ՀԱ 1910, 303։

***ՓԱՍԵԱՆ** «մի տեսակ թռչուն, որի միսը շատ համեղ է» Ոսկ. մ. գ. Խոր. բ. 81 (այստեղ գրուած նաև* փասիան):

=Յն. φασιανός բառն է. բուն նշանակում է Փասիս գետի շուրջը և եզերքները.

որից ὁ Φασιανὸς ὄρνις կամ պարզապէս φασιανός «նոյն գաւառին յատուկ մի տեսակ թռչուն, փասեան», բառս տարածուած է նաև ուրիշ շատ լեզուների մէջ. ինչ. ասոր. ܦܣܝܢܐ fasyānā, լտ. phasianus, իտալ. fagiano, ֆրանս. faisan, մրգ. fasān, ռուս. фазанъ ևն։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ՓԱՍՊԱՆ «գիշերապահ, պահապան» *Կոստ. երզն. 175։*

=Պրս. پاسبان pāsbān *նոյն նշ.։*

Ուղիղ մեկնեց Պոտուրեան, Հրտ. Կոստ. երզն. 205։

ՓԱՍՏ, ի հլ. «ապացոյց, պատճառաբանութիւն» *ՅՀ. կբ. որից* փաստասէր *Փիլ. լին.* փաստական *Մագ. Թր. քեր.* փաստապատիր *Կղնկտ.* փաստաբանական *Փիլ. լին.* դժուարափաստաբանելի *Փիլ. նխ.* անփաստ *Փիլ. լին. նոր բառեր են* փաստաբան, փաստացի, փաստաբուղթ, փաստօրէն, փաստել *ևն. անստոյգ նշանակութեամբ է* փաստումն *Կնիք հաւ. 146 (Եւ կամ զի՞նչ են բնութիւնքն փաստմունս. տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 101)։*

ՆՀԲ յիշում է պրս. պայիս *(իմա՛ արաբ.* bā'iθ «պատճառ»), *լծ. և* fas, *ի յն.* φάσις «ասութիւն»։ *Այտընեան ՀԱ 1911, 672 յն.* φάσις *բառից հյ. -աստ մասնիկով։ Հիւնք. յն.* φάσθαι «ասելն»։ Patrubány *ՀԱ 1908, 152* սպաս-(ել)+աս(ել)։

ՓԱՍՊ «օդի կամ քամու մի տեսակ». *ունի միայն ԱԲ. վկայութիւնը տե՛ս* մաղեւակ։

ՓԱՍՓՈՒՍ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «քսու, բամբասող» *Ա. տիմ. ե. 13. Սիր. իա. 31. որից* փասխել «շաղփաղփել, բամբասել» *Սերբեր. 178. Կնիք հաւ. 217. յետնաբար շրջուած ձև է* խսփուս *Մխ. դտ. վրբ. հց. համմտ. նաև* խսմոս *(տե՛ս* խուս *արմատի տակ)։*

=*Կազմուած է* փաս *և* խուս *բառերի բարդութեամբ. առաջինը անծանօթ է, երկրորդը* խսու, խսել *բառերի արմատն է։*

Աւետիքեան, Մեկն. Թղ. Պօղ. Գ. 497, «Գլեալ է ի յն. ψαυϛο «շատախօսել», *որոյ իգական ընդունելութիւն* ψαυϛուս՝ *համանի կին շատախօս». (բայց յն.* φάσκω *նշանակում է «ասել, յայտարարել, հաստատել, կարծել, հաւատալ»)։ ՆՀԲ «ի ձայնիցս* խուս, *յորմէ* խսու, *և* փաս, *յորմէ* բամբաս. *լծ. և յն.* փսի՛ρիρου, *որպէս և* ψա՛υϛο «ասել», *Թրք.* ֆասլ էրմէք «բամբասել»։ *Տէրվ.* Altarm. 71 փաս+խուս *(քսու). առաջինը համարում է կա՛մ* բաս *(որից* բամբաս*) և կամ նոյն ընդ* սպասել =*սանս.* spaç, *որով* փասխուս *լինում է բուն «բառի լրտես»։* Justi, Dict. Kurde 78 *քրդ.* pəsapəs *և պրս.* fasāfas «փսփսուք» *ձևերի հետ։ Հիւնք. յն.* βασκόσυνη «փասքսութիւն»?

ՓԱՏ «բերդի դո՞ւռ». *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. 319. «Դարձաւ Թորոսն զօրօքն և ի գիշերին հասանէր ի վերայ բերդին և դարանակալ առնէր գհետևակ զօրսն...։ Իսկ ի լուսանալ առաւօտուն՝ ելանէին ի փատէ բերդացիքն և հանդիպեցան ի վերայ քրմնին... և յորժամ տեսին բերդացիքն, փակեցաւ դուռն բերդին» (այլ ձև. ի փայտէ, ի բեռդէ)։*

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 198։ Նոյն դէպքը պատմում է նաև Սմբ. պտմ. 89, բայց ո՛չ մի համապատասխան բառ չունի. «ի լուսանալ առաւօտին՝ ելին բնակիչք բերդին, ամէն մարդ յիւր գործն և յանկարծակի տեսան զքմին»։

Փատիշահ *տե՛ս Փաթիշահ։*

ՓԱՏԼԱՅ «մարմնի մէջ յաւելուածոյ հիւթիկ». *նորագիւտ բառ, որ քանիցս ունի Մխ. բժշ. օրինակ՝ Փատլան ի ներքս ի մարմինն արգիլած կան, որ չելանեն ի գլուխն և ահոկեն ուղղոյն (էջ 13)։ Պատճառն այն է որ փատլայն արգիլած լինի ի մարմինն, որ է յաւելուած (էջ 22). յդ. փատլանի՝ էջ 23։*

=*Արաբ.* فضلة faḍla «աւելորդ, յաւելուած, մնացեալ» (>*տճկ.* fazla):— *Աճ.*

Նոյն մեկնութիւնը ունի նաև Seidel *§ 66։*

ՓԱՏՈՂԱՆԱԼ «մտքով բարձրանալ, վերանալ» *Մագ. գամագտ. ժա (ՀԱ 1911, 546). ըստ ՓԲ յաւել. նշանակում է «պերճանալ»,*

ըստ Բառ. երեմ. էջ 322 «բարձրանալ», որից փայտաղագոյն *«գերագոյն» անդ, էջ 321. միւսները չունին։*

ՓԱՏՈՒԷԼ *«փառաւորեալ, ուռճացեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 322։*

ՓԱՏՕՍԵԼ *«շփոթել». գիտէ միայն ՓՒ յաւել. անստոյգ բառ, որովհետև նոյնը Բո. երեմ. էջ 322 գրում է* փատաւել. *մին կամ միւսը սխալ։*

Փար *տե՛ս Պար։*

ՓԱՐԱՁ *կամ* **ՓԱՐԱՁ** *«խուզելու գործիք, մկրատ, կտրոց». ունի միայն ՀՀՒ. նոյնը ՋՒ «մկրատ» (իբր նոր բառ). իսկ Բո. երեմ. էջ 322* փարազ *(չկայ փարած) «խոզան, կտրոց»։*

ՓԱՐԱՁՈՒՄՆ *«խռովութիւն, վրդով. աղմուկ». ունի միայն ՀՀՒ. անստոյգ բառ։*

***ՓԱՐԱՁՈՒՆ.** *անյայտ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գործածուած է Դատ. ե. 7. «Պակասեցին փարազունք բնակեալք ի մէջ Իսրայէլի»։*

=Եբր. פְּרָזוֹן pərāzōn *բառն է, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը։ Այս բառի նշանակութիւնը անստոյգ է. Թարգմանը և Ս. Գրքի ասորական թարգմանութիւնը հասկանում են «բաց դաշտ», յոյնը ունի «δυνατοί զօրեղք, կարողք» (այլ ձ. φραζων), վուլգատան «fortes, հզօրք», ուրիշ մեկնիչներ հասկանում են «գիւղացի կամ աղնուական», անգլերէն թարգմանութեան մէջ (Mew York 1894) «the inhabitants of the villages գիւղաբնակք», պարսկերէն թարգմանութեան մէջ (Լոնդոն 1901) «حاکمان դատաւորք», Քաուզի գերմանական թարգմանութեան մէջ այս բառի տեղը բաց է թողնուած։ Իմաստուն են վարուած մեր թարգմանիչներն էլ յիշեալ անստոյգ բառը ուղղակի տառադարձելով, իսկ բնակեալ բառը յետին յաւելուած է իբր բացատրութիւն կամ իբր լրացուցիչ։*

Հին հայ մեկնիչները հասկացել են «աւան, գիւղ». այսպէս Ս. Գրքի լուսանցքների վրայ շատ անգամ իբր բացատրութիւն դրուած է «աւան». Հին բո.=Բառ. երեմ. էջ 322 դնում է «փարաղունք, աւանք». Ոսկեփորիկ՝ «փարաղունք, գեղ, շէն». նոյն իսկ Ճառընտ. Ա. իբր սովորական հայ բառ է գործածում. «Համարեալ գեօղս հազար՝ աւանաշէնս և փարաղունս» (սրխալմամբ գրուած է փապարագունս, որ թէև ՆՀԲ ուղիղ է սրբագրում, բայց ՋՒ և ԱՒ փապար բառից ածանց կարծելով՝ մեկնում են «գիւղական տեղիք նմանք փապարի. ծակումուկ տեղուանք գեղերու»)։ Նորերից ՀՀՒ փարազուն *մեկնում է «1. ճոխ, փառաւոր (իբր փառ–ազուն). 2. աւան, ագարակ (եբր. փերազոն, փերազիմ ձևից)»։ ՆՀԲ յիշում է եբր. բառը և նրա զանազան մեկնութիւնները, բայց հայերէնը մեկնում է «փառազուն, փառազն, փառաւոր»։ ՋՒ և ԱՒ ունին ըստ ՀՀՒ։ Հինք. պրս.* պիւրազէնտէ *«փառաւոր, վայելուչ» և* բիյրուզ, ֆիյրուզ, բէրուզ *«հզօր, քաջ, յաղթող»։*

***ՓԱՐԱԽ** *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ոչխարների գոմ. փխբ. եկեղեցի, վանք, իջևան» (ըստ յն.* μάνδρα *«փարախ, վանք») Ոսկ. յհ. ա. 22. Սեբեր. Խոր. որից* փառախել *«հօտը փարախում հաւաքել» Սեբեր. փառախապետ Վրք. հց. Երկնափառախ Մաշտ.։*

=Կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. համմտ. վրաց. ფარეხი փարեխի *«փարախ», որ արմատ չէ և կարող է մեկնուիլ կովկասեան լեզուներով. համմտ. վրաց. ფარა* փարա *«հօտ», ფარა ცხოვართა* փարա ցխովարթա *«ոչխարի հօտ»։ Արմատը գտնուելով վրացերէնում՝ փոխառու լեզուն հայերէնն է։ Հյ. ոչխար բառը կովկասեաններից փոխառեալ լինելուց յետոյ, կարող էր փարախն էլ նոյնը լինել։—Աճ.*

ՆՀԲ «պար աղխ» շուրջ աղխեալ, շրջափակ վայր. իսկ պրս. firāham *«հաւաքումն»։ Հինք. պրս.* ֆէրահէմ–*իւ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1908, 123։ Թիրեաքեան, Արիահայ բո. 251 պրս.* فراخ farāx *«արձակ, ընդարձակ» բառից։*

ԳԻՒ.—Ագլ. փա՛րան *«բակ», Գոր. Ղրբ.*

փա՛րախ «մեղուատուն, փեթակները պահելու տեղ», որից անփարախ խոջ. «առանց փարախի».—Մկ. փուրգ՛ոխ «կովերի գոմ» Թուխ խառնուրդ փակեախ (Վն.) և փարախ հոմանիշների։

Փոխ.—Թրք. գուռ. Կր. parax «փարախ» (Բիւր. 1898, 627)։

ՓԱՐԱԿԱՆ «բնական». ունի միայն Բռ. երեմ. էջ 322։

ՓԱՐԱԶ «պատասխան, պատասխանատուութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 322, որից և ՀՀԲ։

*ՓԱՐԱՃԻԿ «շրջազգեստ Թուրք կանանց». ունի միայն Քաջունի, հտ. Գ. 244։

=Թրք. فراجه feraje նոյն նշ. այս բառն է որ Կովկասում փարաջա ձևով գործածւում է՝ կրօնաւորի վերարկու նշանակութեամբ։

Ուղիղ մեկնեց Քաջունի, անդ։

ՓԱՐԱՅ կամ ՓԱՌԱՅ «կանեփուկի նըման՝ գետնաճապաղ և գրգռիչ մի բոյս է» Վստկ. 52. (ՀԲուս. § 3040 ունի միայն փառայ ձևով և անորոշ նշանակութեամբ)։ Նոյն բառը ունի նաև Մագ. Թղ. 48. «Տագնապ տոչորման Պռոմիդեայ հասեալ Հեփեստիւ պաշարեաց... և ափրոդիտականն նուազեալ Թառամի կարօտացեալ փարայի ի ծարակածպտել այս օգնականութեան». (միտքն այն է Թէ տաքը կոխեց և կարօտ ենք անձրևի կամ զով օդի)։ Կոստանեան բնագրում փարայի դնում է գլխատառով (իբր յատուկ անուն), բայց ցանկում ուղղում է մանրատառով։ ՆՀԲ համարում է վերի բոյսը. Թւում է Ափրոդիտէի արբանեակներից մին (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 191)։

*ՓԱՐԱՍԻՈՆ «մի տեսակ բոյս, խորտակ ծոթրին» Վստկ. 118, 217, որ և ֆարասիոն «Հոտիսոյ, մեղրածուծ» Ամիրտ. Բժշ. Վստկ. 212, վարասիոն Վստկ. 214։

=Արաբ. فراسيون farāsiun «marrubium», որ գալիս է յն. πράσιον Հոմանիշից և Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 683 մեկնում է «վայրի պրաս»։

Ուղիղ մեկնեց Վաստակոց գրոց Հրատարակիչը՝ էջ 262։

*ՓԱՐԱՏ «գատուած, հեռու, անջատ» Ջքր. կԹ. Լմբ. սղ. որից փարատել «հեռացնել, վերացնել, ցրուել» ՍԳր. եզն. Եւս. քր. Վեցօր. փարատեցուցանել Ես. լը. 14. ԱգաԹ. փարատումն Ոսկ. փիլիպ. մշտափարատ Նար յիշ.։

=Ասոր. ܦܪܛ pərat «dissipavit, divulgavit (famam), ցրուել, տարածել (անունը), 2. discidit (suturam), կտրելով բաժանել (կարը)», ܦܪܬܐ pərātā «ճեղք» (Brokkelmann, Lex. syr. 286 ա)։—Ահ.

Bugge, Beitr. 20 և IF 1, 452 յն. σποράς, ասո. σποράδος «ցրուեալ», σπείρω «ցանել, ցրուել» բառին ցեղակից. արմատը փար = σπειρ-. իսկ -ատ = -ած- մասնիկ է։ (Ընդունում է Brugmann, Grdr². 1, 510, յիշում է Boisacq 894): Meillet MSL 8, 294 համմտ. հյ. սփիւռ և սանս. sphuráti, parpharat, phaṇati «արձակել, փայլատակել»։ Հիւբշ. 494 և IF Anz. 10, 49 յիշում և մերժում է երկուսն էլ։ Հիւնք. վարատել, վտարել ձևերից։ Karst, Յուշարձան 403 սումեր. bar «կտրել, բաժանել»։ Վերջին անգամ Meillet BSL հտ. 31, № 93, էջ 51 հնխ. sper-, spher- արմատից, որի տակ են գնում նաև յն. σπείρω «ցանել», սանս. sphuráti «ոտքով խրտփել», նաև հյ. սփիւռ, սփռել, սպառնալ։—Հնխ. spher- «ցրուել, ցանել» արմատի տակ է դնում նաև Pokorny 2, 670: Պատահական նմանութիւն ունի վրաց. ფარატინი փարատինի «ցնցոտի, կտոր». օր. փարատինի խաղալիսա «Թղթի կտոր»։

Գիւմ.—Ջղ. Սլմ. Վն. փարատել, Ախց. Երև. Կր. Տփ. փարատէլ, Մշ. փարադել, Սեբ. փարադէլ, Խրբ. Շմ. փարադիլ, Մկ. փուրմտիլ, Մրղ. փառատէլ, որոնք ընդհանրապէս նշանակում են «ցաւը, հիւանդութիւնը վանել հեռացնել».—Տիգ. փուրմդիլ «կորչիլ հեռանալ երթալ».—Նոր առումներ են փառատել Երև. Սլմ. Վն. որ և փարտել Ակն. Բիւթ. Բլ. Մշ. «թոնիրի մէջը շորով սրբել՝ մաքրել», փարատել Գնձ. Լ. Ղրբ. Ննխ. Սլմ. «ծնունդից յետոյ տղացկանի տունը օրհնելը», որից փարատ. փարտիշ, փարտոց, փա-

ռաւիկ, փառատիչ, ականփառատիկ «փուռը կամ թոնիրը մաքրելու շոր», փառատկել «թոնիրը սրբել». հին գործածութիւնը ունի Մաշտ. 321 (Կանոն փառատելոյ զտուն նորածին մանկանց)։—Ուրիշ բառեր են Պլ. Ռ. փառադել «պատառոտել», Ատն. փառադել օլմաք «պատառոտուիլ, կտոր կտոր լինել», որոնք կազմուած են թրք. para-lamaq «պատառոտել» ձևի վրայից՝ հյ. փառատել բառի հետ խաչաձևմամբ։ Հնագոյն գործածութիւնն ունի Բռ. ստեփ. լևհ. «Զար զազանի դիպեալ նմա՝ փորոտեաց զնա» (տե՛ս և փորոտիլ)։

Փոխ.—Թրք. գւռ. bardəj «թոնրի փարտիչ» ըստ ՆՀԲ, Բ հտ. էջ 1067 գ. ըստ Ա. Պօղոսեանի (անձնական) Սերաստիոյ թուրք գիւղերի մէջ perdič «փարտիչ»։—Կայ և ն. ասոր. p'aratt'a «քակել, պատառոտել», որ չգիտեմ թէ հայերէնից նոր փոխառութի՞ւն է թէ հին ասորի pərat̠ ձևի շարունակութիւնը։

[ՓԱՐԱԻԱՐԱՑԵԱԼ «դիրացեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 322. տե՛ս փարաւարել։]

ՓԱՐԱԻԱՉ «սփոփանք, մխիթարանք» Ոսկ. ԵՒփես. 715 (այլ ձև. փարաւազանք), որից փարաւազիլ «մխիթարուիլ, սփոփուիլ» Ոսկ. երր. ժա. 506։

ՓԱՐԱԻԱԹԵԼ. *անաւոյգ բաւ. երկու անգամ ունի Ոսկ.* «Տաջի՛ր մանկանն հանդերձ առն կառարելոյ և տեսջի՛ր, ո՛րչափ ինչ մանուկն տաղտկայցէ՝ փարաւաթեալ պարաւանդել» (Ոսկ. մտթ. ա. էջ 279.—Երախային մեծի հագուստ տո՛ւր, տե՛ս ինչքա՛ն պիտի նեղուի մէջը փաթաթուելով)։ «Բազում հանդերձիւք պատատեալ փարաւաթիցին (Ոսկ. պօղ. ա, էջ 338)։—ՀՀԲ գրում է փարաւաթանալ և մեկնում է «գիրանալ» (իբր թէ մանուկը մեծի շորեր հագնելուց խոշոր, հաստ կամ գէր երևալ). ՓԲ ունի փարաւաթանալ կամ փարաւաբանալ. այսպէսով այս երկուսը նոյնանում են Բռ. երեմ.-ի հետ, որ ունի փարաւաբացեալ «գիրացեալ» (տե՛ս վերը). ՆՀԲ, ՋԲ, ԱԲ և Մէնէվ. ՀԱ 1911, 672 գրում են փարաւաթիլ և հասկանում են «սիգալ, նազիլ», իբր փերևէտիլ, փերևեթիլ բառի տարբերակը։ Ըստ իս պէտք է հասկանալ «փաթաթուիլ, կապկպուիլ», ինչպէս ցոյց են տալիս միասին գործածուած պարաւանդել և պատատեալ բառերը։ «Սիգալ» իմաստը լոկ փերևեթիլ բառին նոյնաձայն լինելուց է հանուած, ապա թէ ոչ երախան սիգալուց չի տաղտկանալ։—Անյայտ իմաստ ունի Մագ. գամագտ. ժդ. «Ոգեա՛ մեզ սևեռագոյն, զի ծանեալց, եթէ սուղ փաղփեալ՝ փանաքիմացդ փարաւարթեալ գոս, զփաստ քո վիպասանութեան», ուր Մէնէվիշեան ՀԱ 1911, 672 բառս մեկնում է «փերևեռտեալ, յղփացեալ, պերճացեալ»։

Փարաք *տե՛ս* Բարակ։

*ՓԱՐԳԱՍՏ «քա՛ւ լիցի, Աստուած չանէ՛» Սեբեր. 132, 173. Ոսկ. ես. 292 (յգ. փարգաստ)։

=Պհլ. *pargast ձևից, որ հաստատում է պրս. پرگست pargast (նաև برگست bargast, برگس bargas) նոյն նշանակութեամբ։—Հիւբշ. 254։

ՆՀԲ յիշում է թէ «կայ և պրս. փէրֆէսթ, լծ. ընդ պարկեշտ»։ Ուղիղ մեկնից նախ Հիւբշ. ZDMG 35 (1881), 663 և յետոյ Պատկ. Матер. I (1882), 16։

ՓԱՐԳՅՈՂ «հիմնադիր». ունի միայն Բառ. երեմ. էջ 322։

*ՓԱՐԴԱ «ջուխակի վրայ մատները դնելու տեղերը. touche» Կոստ. երգն. 175.—Շրթիունդ բերէ զփարդան, իւր լեզուն խօսի լարմանն։

=Պրս. پرده parda, որ բուն նշանակում է «վարագոյր» (հմմտ. վարը փառոյ), բայց ունի նաև այս իմաստը։

+ՓԱՐԵԼ «պարփակել, մէջը պարունակել, բովանդակել» Վրք. հց. Դիոն. երկն. «կրել, իր մէջ ունենալ» Խոր. գ. 8. որից փարիլ «փաթաթուիլ, գրկախառնուիլ» Առակ. ե. 20. Գ. մկ. ե. 27. Ագաթ. Կոչ. փառումն 34. իմ. եկեղ. յետնաբար նաև փարելի «սիրելի» Պիտ. Վրք. հց. Սարգ. նոյն բայից նաև ս սաստկականով՝ սփարիլ Խսիւք. յոբ. էջ 16, 58, 178։—

=Բնիկ հայ բառ՝ հնխ. sper- «ոլորել,

փաթաթել» արմատից. համմտ. յն. σπεῖρα *«գալար կամ ոլորք (օձի, ցանցի), պարան»,* σπειράω *«գալարել»,* σπείραμα *«գալարք օձի, հոլովում ժամանակի, ոլորած բան, երախայի քալուլ»,* σπάρτος *«մի տեսակ բոյս, որ հիւսելով պարան էին գործում»,* σπάρτον *«պարան»,* σπεῖρον *«փաթաթելու շոր, հիւսուածք, հագուստ, ցնցոտի, պատանք, առագաստ նաւի»,* σπείρασις *«կծիկ»,* σπεῖρος *«սոխի կճեպը»,* σπειρόω *«երախային բալուլի մէջ փաթաթել, քալուլել»,* σπυρίς *«հիւսուած կողով» (որից՝ եւրուսկերէնի միջոցով փոխառեալ է լտ.* sporta>*իտալ.* sporta>*ոճկ. և ոմկ.* щпогра *«կողով»), հլիթ.* spartas *«կապ», և -g- աճականով (հնխ.* sperg-*) յն.* σπάργω *«քալուլել»,* σπάργανον *«քալուլ», լիթ.* springstù *«խեղդել», լեթթ.* saspranga *«կապ»,* sprangât *«պարփակել, պնդել, սեղմել ևն» (*Pokorny 2, 667, Boisacq, 892 *և 894)։ Հայերէնը ցոյց է տալիս նախաձայն* sph-:

ՆՀԲ «ի հայ ձայնէս» **պար** *և յն.* περί *«շուրջ»։* Canini, Et. etym. 196 *զնդ.* pairi *«շուրջ»։ Տէրվ. Նախալ 92 համմտ. սանս.* pari *և յն.* περί *«շուրջ»։ Հիւնք.* **պար, պարել** *բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ* Scheftelowitz BB 29, *էջ 36։*

ՓԱՐԵԼ *«աղերսել, պաղատիլ, շատ աղաչել». հին ձև է և ոսկեդարեան մատենադրութեան մէջ արդէն կորած. սրանից մնացած հետքեր են* **փարելի** *«աղերսական, աղաչական» Ագաթ. Խոր. Հոիփս. Շար. Շնորհ. եգես.* **փարալի** *Մծբ.* **փարելի** *ասեմ «աղաչում պաղատում եմ» Ոսկ. եփես. դ. և մ. ա. 11.* **փարելի առնեմք** *Ոսկ. մ. բ. 14,* **փարելի ի ս** *Նփր. թգ.։*

ՆՀԲ կցած է նախորդին՝ առանց ուշադրութեան առնելու նշանակութեան տարբերութիւնը։

ՓԱՐԵԼ *«ման ածել». մէկ անգամ միայն գործածուած է Ոսկ. կողոս. ժբ. «Եւ ոչ ընդ հրապարակս փարես զդուստրն» (եթէ սխալ դրչութիւն չէ). յն. «ի հանդէս բերես»։*

ՓԱՐԵԼԻ *«ջնջան, ջնջոց, սրբիչ, քուրջի կտոր». մէկ անգամ ունի Ա. կոր. դ. 13. «իբրև առակ նշաւակի եղեալք ամենայն աշխարհի, ամենեցուն փարելի լինել մինչև ցայժմ». յն.* περίψημα *«աղտ, սրբուած կեղտը»։*

ՀՀԲ **փարիլ** *բայից։ Նոյնը ՆՀԲ, իբր «որ փարի զսրբելի ննթակայիւ, կամ որպէս* **փարատիչ** *աղտոյ»։ Հիւնք. պրս.* **բարուլէ** *(իմ՛* پارُلا pārūla *«անարդ և անպիտան ոք»)։*

***ՓԱՐԵՆԹԱԶԻՉ** *«փակագիծ». ունին միայն ՀՀԲ և ՋԲ (վերջինը իբր նոր բառ)։*

=Յն. παρένθεσις *«փակագիծ», որից նաև լտ.* parenthesis, *ֆր.* parenthèse *ևն։*

ՓԱՐԹ *«քաղիրթ». մէկ անգամ ունի Ոսկ. գծ. 38. «Հերձաւ և վայթեցաւ (փոր Յուդայի), բայց հոտ նեխոյ փարթին (տպ.* **բարդին***) և փորոտուոյն ժողովէր զորդիսն երուսաղէմի երթալ տեսանել զծանականս նորա»։*

ՆՀԲ դնում է «բառ անյայտ, որպէս պարարտութիւն կամ գիրուց, ճարպ»։ ԱԲ «գիրուց, ճարպ փորու, քաղիրթ»։ Ըստ իս նշանակում է միայն «քաղիրթ», ինչպէս ունի Ակն. յարմար չեն «փոր» և «աղիք» նշանակութիւնները, որովհետև արդէն յիշուած են նոյն տեղը։

ԳԻՒ.—Ակն. **փարթ** *«քաղիրթ», Արբ. «որոճողների ստամոքսը», Ջրս. «աղիք, փորոտիք», ոճով միայն պահուած՝* **փա՛րթ կթափեմ** *Սեբ. «փո՛րդ կթափեմ»,* **փարթը պատռիլ** *ՀՃ. «լեղին պատռիլ, շատ վախենալ»։ Նոր բառեր են* **փարթ–փուրթ** *«փորոտիք»,* **փարթ–երես** *«ծաղկահար, չհնոտ (ինչպէս է քաղիրթի մաշկը)»։*

ՓՈՒ.—Թրք. գւռ. Սեբ. part *ձևով՝ միայն* partənə dešerim *«փարթդ կթափեմ, փորդ կթափեմ» ասացուածի մէջ։*

ՓԱՐԹ *«փառաւոր», ունի միայն Բառ. երեմ. էջ 322. արդեօք շփոթած է* **փարթամ** *բառի հետ։*

***ՓԱՐԹԱՄ, ի–ա** *հլ. «ճոխ, հարուստ». այս բառը չէ՛ գործածուած ոսկեդարեան գրականութեան մէջ, բայց սովորական է յետոսկեդարեան շրջանին. ինչ. Ոսկ. յհ. ա. 21. Ածար. մկրտ. Նար. Լմբ. պտրգ. որից* **փարթամանալ** *Նար. Սարգ. Ոսկիփ.* **փար–**

բամացուցիչ *Խոր. ի գն.* մեծափարթամ *Պիտ.* փարթամութիւն *Ոսկ. յհ. ա. 42.* փարթամաշնորհ *Յհ. կթ.* բազմափարթամ *Պտմ. աղէքս. Ըստ Ե. եպս. Դուրեան, Բազմ. 1909, 161* փարթամ *բառը գործածուած պիտի լինի նաև Դան. ա. 3 «...ածել յորդւոց գերութեանն Իսրայելի և ի զաւակէ թագաւորութեանն և ի Պարթևաց մանկունս անարատս», որ յետոյ աղաւաղուելով եղաւ «և ի Պարթևաց». աղաւաղութիւնը ակներև է, որովհետև նոյն տեղը եբրայեցին ունի* וּמִן־הַפַּרְתֳּמִים Ūmin-hapartomim *«յիշխանաց», որից և յոյնը տառադարձութեամբ* -ἀπὸ τῶν φορθομιὶν *(այլ ձ.* πορθομιειν*)։ Այսպէսով* փարթամ *բառը մի անգամ գործածուած պիտի լինի Ոսկեդարում։*

=*Փոխառեալ պհլ. գաւառական անծանօթ մի ձևից. Համմտ. պհլ.* fratom, *պազ.* fradum. *Հպրս.* fratama, *սոգդ,* prtmw, *գնդ.* fratəma, *սանս.* prathama-, *որոնք բոլոր նշանակում են «առաջին»։ Բայց պահլաւական մի բարբառում անշուշտ նշանակում էր նաև «ազնուական, իշխան», որից փոխառեալ է եբր. յիշեալ* פַּרְתְּמִים partəmīm *«ազնուականք առ Պարսիկս» Եսթ. ա. 3, ղ. 9, Դան. ա. 3, որից նաև յն.* φορθομιὶν *և վրաց.* ფორთომნიანი փորթոմնիանի *«իշխան» (գոնէ ում է եբրայականի համապատասխան տեղը՝ Դան. ա. 3)։ Թէև իրանական բառերը հայերէնից ձևով և նշանակութեամբ հեռու են, բայց կապւում են եբրայականի միջոցով. եբր* հրաապ *բառի դէմ կայ* փառապ *ձևը, կարող էր նաև* fratam *ձևի դէմ գոնուիլ* *fartam։

La Croze, *Ձեռ. աշխատ. Բազմ. 1897, 8 մարական և եբր. ձևերի հետ։* Brosset JAs. *1834, էջ 369 վրաց.* ფრ- პამი *«նուէր, կաշառք» բառի հետ։* Lag. Urgesch. 959, Justi, Zendsp. 198, Müller. SWAW 38, 579 *են յիշում են վերի իրանեան ձևերը։ Հիւրշ.* KZ 23, *19 և 402.* Pers. Stud. *էջ 208 Թէև իրանեանից փոխառեալ է համարում, բայց նոյն* Arm. Gram. *էջ 255 մերժում է ձևի և իմաստի տարբերութեան պատճառաւ։* Scheftelowitz BB 29, 36 *իբրև բնիկ հայ կցում է սանս.* sphāra *«մեծ, ուժեղ», հսլ.* sporŭ *«ճոխ» բառերի հետ։ (Յիշում են կասկածով* Walde 618 *և* Pokorny 2, 657 *հնխ.* spē- *«գիրանալ, հաստանալ, պարարտանալ» արմատի տակ)։ Գաբրիէլեան ՀԱ 1911, 592 արմատը դնում է գւտ.* փարթ *«փորոտիք»։*

ԳԻՒ.—Ախց. փարթամ, *նաև Պլ. Սեբ. Տիգ.* փարթամ *«խոշոր կազմով, պարթև, յաղթակազմ (մարդ)», Շմ.* փարթամ *«հարուստ, ճոխ. 2. ժանտախտ», Սչ.* փարթամ *«անամօթ, անպատիւ (միայն իգական սեռի համար գործածուած)»։*

ՓԱՐԹԱՐ *«դէք, գոնէ, գոնեա՛» Ոսկ. ես. էջ 103. Եփր. ա. տիմ. 243. Կոչ. 98. Եւագր. Համամ. քեր. 285 (իբրև հոմանիշ* գեթ *և* գոնեա *բառերի), «փոքր, քիչ» (այս նշանակութիւնը չունի ՆՀԲ) Սոկր. 150 (ի ջանի ոչ ի փարթարում լինէր)։ Սրանից են նաև Սոկր. 332 «Ոչ կամիմ, ասէ, իբր գործոյ կերակրոյ հպիլ, այլ իւր* փարթարի» =*յն.* ὡς παρέργῳ *(«իբր երկրորդական անկարևոր բանի», որով և ուղղելի* իբր փարթարի*), Սոկր. 280 «Ո՛չ փութարարար էի ընթերցեալ» =յն.* μὴ παρέργως ἐντὲτυχήκασιν *(«հարևանցի, վերիվերոյ», որից երևում է որ բառը պէտք է ուղղել* փարթարարար*)։*

ՓԱՐԹԱՒ *«համարձակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 322։*

*ՓԱՐԹԱՒԵԼ *«ձգել». ունի միայն Բառ. երեմ. էջ 322. նոյն են արդի գաւառականներից* փարթաւել *Ջղ., փրթաւել Ղրբ. Շմ.,* փթաւել *Ագլ. «մէկ կողմ շպրտել, ուժգնապէս նետել»։*

=*Պրս.* پرتاب partāb *կամ* پرتاو partāv *«ընդոստումն. 2. ուժգին վազք. 3. հեռաձիգ նետ». երրորդ նշանակութիւնը յատկապէս նման է մերին։—Ա.Մ.*

ՓԱՐԹԻԼ *«ամանի կամ տիկի մէջ եղած հեղուկը ծակոտիքներից դուրս մղուիլ, ջուր գցել, տճկ. սիւզիւլմէք», նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Մտթ. եւագր. 7—8. «Ապա թէ պատառո-*

տեսալ է որպէս զտիկս հինս՝ փարթէ (զջուրն) յամենայն կողմանց... այսպէս և բուն բառամոքան որ զկերակուրն հալէ, եթէ ապականի նա ի ցաւոց, այնուհետև զկերակուրն զոր ինչ առնու՝ փարթէ և ա՛յլ ևս ցանկայ»։

ՓԱՐԻՉ *կամ* **ԲԱՐԻՍ** *«անիսոն» Գաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 573 և 575։*

***ՓԱՐԿԱԼ** *«կարկին» Առաք. լծ. սահմ. 577 (չունի ԱԲ)։*

=Պրս. پرگال pargāl, *ռմկ.* փէրկել *«կարկին»։ Աճ.*

ՓԱՐԿԱՆ *«անուանի». ունի միայն Բռ. երեմ. էջ 322։*

ՓԱՐՂԱՆՔ *«շէնքի շինութիւն կամ հիմնարկութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Հաւաք. էջ 21. «Յաղագս շինութեան գերապայծառ և պանծալի, հրկնանման և բարձրադմբեթ սուրբ խաչիս յԱղթամար քաղաքի, որ նիւթ նպաստաւորութեան փարղանցս բերաւ յերկրէն հռաստանէ»։*

***ՓԱՐՄԱՆ** *«հրաման, հրամանագիր, արքայական հրովարտակ»։ Նորագիւտ բառ, որ մի քանի անգամ ունի Օրբել. Պատուէին դնա տուղրայիւ գրոյ և փարմանաւ (էջ 251). Առնու փարման և սիգէլ ի մեծ աթաբէկէն (էջ 257).—գրուած է նաև ֆարման «Առնու ի նմանէ ֆարման և ման շուր վասն տեղւոյն այնմ» (էջ 255), որի դէմ Հրատ. Շահն. բ. 92 դարձեալ ունի փարման։*

=Պրս. فرمان farmān *նոյն նշ. ընդարձակ տե՛ս ֆրաման։*

Ուղիղ մեկնեց Շահնազարեան, Հտ. Բ. էջ 301։

ՓԱՐՇՄԱՆ *«փորձանք, պատիժ». մէկ անգամ ունի Արծր. բ. 7. «Տեսին թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն, և ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել». (Հրտ. Պատկ. էջ 119)։*

Նշ Ր յիշում է փաշաման բառի հետ և առանց նշանակութիւնները հաշտեցնելու կցում է իրար։

***ՓԱՐՈՆ** *«նաւահանգստի լապտերակիր աշտարակ». գիտէ միայն ՓԲ. այս իմաստով գործածական է նոր գրականում փարոս։*

=Յն. φάρος «փարոս». նախապէս Ալեքսանդրիոյ մօտ գտնուած մի կղզեակի անունն էր. Պտղոմէոս Սղբայրատէր կանգնեցրեց այնտեղ առաջին փարոսը (Ն. Ք. 285), որով և կղզու յատուկ անունը հասարակ անուն դարձաւ. նոյնից են ֆրանս. phare, *իտալ.* faro *են։*

***ՓԱՐՈՒԱՋ** *«ժապաւէն». մէկ անգամ ունի Կղնկտ. Հրատ. էմ. էջ 138, Շահն. Ա. 292. «Ադուցին նմա արջնաթոյր մորս չորիւք դրօշակօք և դրաւտս սնդուսս մետաքսաձէջս ոսկեթելան փարուաձով»։*

*=Պհլ. *parvaz ձևից, որ աւանդուած չէ, բայց որ հաստատում է պրս.* پروز parvaz *«ժապաւէն, որ է սիճաֆ, զոր դնեն յեզերս կապայից և ֆէրաճէից. և յայսմանէ առեալ նշանակէ զեզերս զինչ և իցէ իրաց». որից նաև քրք.* pervaz *«շրջանակ դռան, պատուհանի են»։—Հիւբշ. 255։*

Ա՛Ր համարում է արաբ. (չկայ արաբերէնում բ ձայն) և մեկնում է «քրղանցք, փէշ»։ Վերի ձևով ունի Հիւբշ. նոյնը նաև Աճառ. Հայ նոր բառեր հին մատեան. Ա. էջ 38։

ՓԱՐՉ *կամ* **ՓԱՐՋ**, *ի հլ. «ջրի փոքր կուժ» Յայսմ. դեկ. 11, Վրդ. առ. 304. Վստկ. 3, 77, 205. Քուչ. 73. Առաք. պատ. 371. Վրք. իլար. 106. որից* փարչիկ *(չունի ԱԲ) Քուչ. էջ 54.* նշխարփարչ *«նշխարի ջուրը լցնելու փարչ» Վրդ. լծ. (ըստ Այրարատ 147)։*

ՆՀԲ «բառ ռմկ. որպէս թրք. bardaq»։ *Ադոնց.* Арм. Юстин. *էջ 486 պրս.* پرچ (parča?), *որի ընթերցումը և նշանակութիւնը չէ դրած։ Չեմ գտնում Գ-ի մօտ։*

ԳԻՒ.—Ախց. Գոր. Խրբ. Կր. Ղրբ. Ննխ. Շմ. Ռ. Տփ. փարչ, *Ասլ.* փարչ, փարչ, *Հճ.* փարչ *(<փառչ), Ագլ. Ալշ. Երև. Ջղ. Սեբ. Տիգ.* փառչ, *Մշ.* փառչ. փառճ, *Սլմ. Վն.* փառչ, *Համշ.* փայչ։

ՓՈԽ.—Թրք. գւռ. Երև. پارچ parč *«ջուր խմելու յատուկ կոթաւոր աման հողէ կամ մետաղէ», վրաց.* ფარჩი *փարչի «գինու փոքր կուժ», լազ.* ფა՛რჩი *«12 ֆունդանոց կուժ» (*Кипшидзе, Дополнит. свед. о

чанскомъ СП. *1911)*, *ուս.* փարճ *«փարչ»*, *ավար.* պարճի *«շիշ»*։

ՓԱՐՊ *«դեղ»*. *ունի միայն Քաջունի*, *հտ. Գ. էջ 244*։

***ՓԱՐԱԱԽ** *«երկայնության չափ է (5250 մետր)» խոր. աշխ. գործածական է նաև արդի գրականում. հնագոյն ձևերն են* հրասախ (ի–ա *հլ.*) *ես. քր. Եղիշ. ը, էջ 122, 124, 141, Փարպ.* խրասախ. *Բուզ. Փարպ. որ և* հրասխ *ԱԲ*, խրասխ *Շիր. 33.* փարասանգ *Երզն. մաթ. 126 (տպուած* ֆարսանկ)։ *Գիրք առաք. 615 ա*։

=Իրանեան փոխառութիւն է։ Իրանեանի մէջ բառս ունէր երկու ձև՝ պհլ. frasang *և հիւս. պհլ.* *frasax (*համմտ.* Meillet MSL 17, 247), *այն է հպրս.* *fra-sanga- *և* *fra-saxa- (Nyberg, Hilfsbuch 2, 73), *որոնց յարաբերութիւնը անստոյգ է։ Առաջինից են ձևացած պազ.* farsang, *գիտական սոգդ.* 'βs'nγ (Benveniste *ՀԱ 1927, 764)*, *պրս.* فرسنگ farsang, *որից փոխառեալ են յն.* παρασάγγης *(Հերոդ.)*, *լտ.* parasanga, *ֆրանս.* parasange, farsange *են. երկրորդից ձևացած են բրիտտ. սոգդ.* fsx <*fasax<*farsax (MSL 23, 128) *և փոխառութեամբ ասոր.* פרסחא parsaxā *և արաբ.* فرسخ farsax *համանիշները։— Հայերէն* հրասախ *գալիս է հիւս. պհլ.* *frasax *ձևից. նախաձայնը վերջաձայնից ազդեցութով (համմտ.* հարբուխ>խարբուխ*) բառը յետոյ դարձած է* խրասախ *և ազմամբ՝* հրասխ, խրասխ. *յետին* փարսախ *ձևը փոխառեալ է արաբ.* farsax-*ից, իսկ* փարսանգ՝ *պրս.* farsang *ձևից։—Հիւբշ. 183*։

Ուղիղ համեմատութիւններ տալիս են Schröder, Thesaur. 47 *(պրս.* farsax*)*, St. Martin, Mém. 2, 314, *ԳԴ, Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. 180, ՆՀԲ,* Böttich. Arica 25, 78, Lag. Urgesch. 621, Ges. Abhd. 78—79, Müller SWAW 38, 579, *Հիւբշ.* KZ *23, 19, Տէրվ. Նախալ. 94, 120 ևն*։

***ՓԱՐՏ** *«անզոյգ, կոճաւ, թաք» Հին քեր. որ և* ֆարտ *Ոսկիփ. Վստկ. 9, 215։ Տաթև. Հարց. 641։*

=Արաբ. فرد fard *«անզոյգ, անհատ» (սեմական* frd *«բաժանուիլ, հեռանալ» արմատից)։—Հիւբշ. 278։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Մշ. ֆըրդ *«թաք»*, *խրբ.* փարդ *«անջատ, իրարից հեռու»*, *որից* ջուխտուփարտ *Բղ. «զո՞յգ թէ անզոյգ խաղը»*, *որ և Ախք. դարձել է* ջուխտու վարդ *(Ազգ. Հանդ. Բ. էջ 266)*։

***ՓԱՐՏԱՅ** *«վարագոյր, առագաստ» Գնձ.։*

=Պրս. پرده parda *«վարագոյր»*, *որից նաև թրք.* perde *«վարագոյր». Հին ձևն է պհլ.* *partak, *որից հյ.* պարտակ *(տե՛ս այս բառը)։—Հիւբշ. 278։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՓԱՐՓԱԼԵԼ *«ջնջել, եղծանել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պիսիդ. տող 437. «եւ զտումարս ձեռնագրաց բազմաց փարփալէ». յն.* τόμους δέ σαθροῖ *(եղծանէ, ապականէ)* μυρίων χειρογράφων *— Տիրոյեան, Հանրագրութ. 633 մեկնում է «բգբտել»*։

ՓԱՐՓԱՒՌ *«գեղեցիկ և վառվուն աչքեր ունեցող» Վեցօր. 119, Շիր.։*

=Կրկնուած է *փառ *«փայլ» պարզ արմատից, որ տե՛ս գւռ.։*

Karst, *Յուշարձան 403 սումեր.* bar *«փայլիլ»*։

ԳԻՒ.—Կայ փարփռիլ *(գաւառը անյայտ) «փայլիլ» (Արօր 1910, № 2, էջ 14)*։

ՓԱՐՓԱՐ *«փարատումն կամ փարատումնք». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 322*։

ՓԱՐՓԱՐ. *անստոյգ բառ. յիշում է միայն Գաղիան. և մեկնում է «πελεκαν, πελεκάνος», որ է «հաւալուսն ծովային թռչունք». իսկ ԼԿՀ. այս բառը կարդում է* πελεκῖνος *և հասկանում է «*bisserrule pelécine *դաշտային բոյսը»*։

Տէրվ. Նախալ. 43 թռչուն իմաստով առնելով՝ համարում է բնաձայն և կրկնաւոր. համմտ. յն. βοᾶν, *լտ.* bubere, baubari: *Հայը դնում է հնխ.* parp (< par-par) *արմատից։ ՀԲուս. § 3043 բոյսի իմաստով առնելով՝ կցում է գւռ.* փարփար *Մշ.*, փարփար *Ան. ձևերին, որոնք նշանակում են «փրփրեմ, դան-*

դուռ»։ Աճառ. ՀԱ 1908, 123 Թուրուն իմաստի համար յիշում է պրս. پرپر parpar *կամ* فرفر farfar *«սալամբ». բայց կայ նաև արաբ.* فرفار farfār *«մի տեսակ ծառ»,* فرفور farfūr *և* فرفر fur-fur *«հոգիպտական մի թռչուն կամ ճրնճղուկ» (ըստ Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 66 և 67)։*

[ՓԱՐՓԱՐՆԱՅ *(կամ նաև փարփանա, փալփալնա) «մի տեսակ բոյս. ձիու ըղունգ,* tussilago farfara*». ունի միայն ՀԲուս. § 3047. ըստ Նորայր ՀԱ 1923, 53 Ալիշանի սխալ ընթերցման արդիւնքն է. պէտք է կարդալ փալփալնաճիին, փարփարնաճիին, իբր պրս.* parpahan *«անմեռուկ, փրփրեմ, դանդուռ, տճկ. սէմիզ օթը»։*]

ՓԱՐՓՈՒՏ *«դատարկ, պարապ» Մխ. բժշ. 39, 104, «զուրկ, որ չունի» Մխ. բժշ. 36, 38, որ և փարփուր՝ էջ 36։ Նորագիւտ բառ։*

Seide, *Մխ. հեր. § 111 նոյնարմատ է դնում պարապել բառին։*

ՓԱՓԱԳ *(գրուած նաև փափաւ) «բաղձանք, տենչալը» Իմ. ժա. 4. Ոսկ. յհ. ա. 45, Բ. 28, որից* փափագել *ՍԳր. փափագանք Ոսկ. ա. Թես. փափագելի Եփր. դտ. փափագեցուցանել Եփր. ա. կոր. և ա. Թես. փափագումն Ոսկ. յհ. Փիլ. ըղձափափագ Մանդ. լուսափափագ Ճառընտ. մեծափափագ Պիտ. Ճառընտ. ևն։*

Նշ Բուում է հանել պապակ բառից։ Տէրվ. Altarm. 57—8 *պարզ արմատը դնելով փաֆ՝ հանում է հնխ.* spak *արմատից. համմտ. յն.* σφίγγω *«կապել, ճմռել, ճնշել», անգսք.* spange *«ճարմանդ», կամ յն.* σπάω *«քաշել», լտ.* sponte *«ինքնակամ»։ Նոյն, Նախալ. 91 հնխ.* pak *«եփել, խորովել» արմատից, համմտ. սանս. զնդ.* pač, *յն.* πέσσω, *լտ.* coquo *ևն։* Canini, Et. étym. *էջ 8 պրս.* buka *«փափագ», իսկ էջ 109 սանս.* bhâg'i *«կրակ», գերմ.* backen *«եփել»։* Bugge KZ *32, 58 և Հիւնք. պապակ բառի հետ։*

ԳԻՒ.—երև. Շմ. Սչ. փափագ, *Ախց. Կր. Ննխ. Սլմ.* փափաւ, *Ալշ. Ջղ.* փափակ, *Զթ.* փափօճ, փափոճ *«փափագ». իսկ Շիր.* փափագ *«փափագող», Ննխ.* փափաւ *«կարօտ»։*

*ՓԱՓՂՆՄՆ *«պտերների ցեղից մի բոյս. լտ.* cyathus*» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 3049։*

=*Արաբ.* فلفيمون falfīmūn *«մի տեսակ բոյս.* pityusa*» (տե՛ս Շթայնշնայդէրի հատ. քածոյքը՝* WZKM *12, 228)։—Աճ.*

ՓԱՓՈՒԿ (ի–ա *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կակուղ, մատղաշ. 2. գիրգ, քնքոյշ, նազուկ մեծացած. 3. ազնիւ, նուիրական՝ սուրբ կամ հանգստեան օր» ՍԳր. Ագաթ. Եփր. Թուղց. Փարպ. որից* փափկանալ *ՍԳր. Եփր. ծն.* փափկացուցանել *Յոր. լգ. 25.* փափկական *Ագաթ.* փափկակեաց *Վեցօր.* փափկասուն *Առակ. իթ. 11. Բարուք. դ. 26. Ոսկ. եփես. ժգ.* փափկոց *«ուղեղի փափուկ մասը» Տաթև. Հարց. 242 (չունի ԱՐ),* փափկանկատ, փափկանկատութիւն *(նոր բառեր)։*

Տէրվ. Նախալ. 92 կասկածով կցում է հյ. փապարել, փամփուշտ, *լիթ.* pàmpti, *«ուռիլ, գիրանալ»,* pampalas *«գէր» ձևերի հետ և բոլորը միասին հանում է հնխ.* pap, pamp *արմատից։* Bugge, Beitr, *21 յն.* ψαφαρός *«փափուկ» բառի հետ՝ իբր բնիկ հայ։ Աճառ. ՀԱ 1899, 232 կրկնուած *փակ պարզականից՝ ձայնաւորի փոփոխութեամբ։ Մառ.* Ипполит. *59 վրաց.* ფუფუნება *փուփունեբա «գգուանք» բառին ցեղակից։*

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Գոր. Կր. Ղրբ. Տփ. փափուկ, *երև. Շմ. Պլ.* փափուգ, *Մկ.* փմփուկ, *Վն.* փոփիւկ, *Խրբ.* փաֆուգ. *կան նաև* փափլիկ, փամփլիկ, փամփուլ *փաղաքշական ձևերը։*

ՓՈՒԽ.—Վրաց. ფაფუკი փափուկի *«փափուկ հաց» (Զուբինով[2] 1298), ուս.* փափուկ *«կակուղ»։*

ՓԱՔԱԴԻՄ *«ապաւառ». ունի միայն Բառ. երեմ. էջ 323։*

ՓԱՔԱԼ *«հիւանդութեան պատճառով անասունների շատ փոնդտալ կամ հազալը» Վստկ. 207, 213, 219, որից* փաֆոտ *«հևացող կամ դժուարաշունչ» Սմբ. դատ. 155*

(Նորայր, Բառ. ֆր. 1158 ա, Քաջունի Հտ. Գ., էջ 244)։

Գիտ.—Բլ. փէֆալ «կուշտ կերած անասունների ծանր արտաշնչելը» (Հաղորդեց Ս. Մովսիսեան, 1933 մարտ), որի հետ նոյն է նաև փեֆալ Եւդ. «դժուարաւ շունչ առնել, հևալ»։ Այս երկուսի համեմատութիւնից երևում է որ նախաւոր ձևն է *փայֆալ։

ՓԱՔԱՆԻ «թզուկ, կարճահասակ կամ պակասաւոր, հաշմանդամ» անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. աշխ. 502. «Ժողովեաց յամենայն ազգաց զփաքանիս և զկարճահասակս, զխեղս, զկոյրս, զգողս և զվնասակարս»։

ՓԱՔԱՐ. ձևով և նշանակութեամբ անստոյգ բառ, որ երկու անգամ միայն գործածուած է հետևեալ ձևով. «Որով և զրփայքարն իսկ հրամայեաց տալ». Սեբ. 122. «Որոց զչփաքարն իսկ հրամայեաց տալ» Ասող. էջ 96 (հին տպ. և 2 ձ. զփաքարն, 1 ձ. զչչփաքարն, 1 ձ. զչրփաքածառ, նոր տպ. զչփաքարն)։

> Շահնազարեան, Ասող. Փարիզ 1859, էջ 211 այս բառով ուղում է հասկանալ «ոռճիկ, թոշակ», Պատկ. Սեբ. 122 մեկնում է «պրս. پاکار pākār կամ پایکار pāykār, որ նշանակէ զհարկապահանջն և զառուրս հարկաց ի պէտս կալուածատեարց», Dulaurier, Թրգմ. Ասող. 192 «provision, պաշար, ոռճիկ ճանապարհի», անծանօթ է ըստ էմինի և Մալխասեանի, էջ 351—2. Մանանդեան, Տեղեկ. ինստիտ. 2. 35—37 կազմուած է դնում չ մասնիկով փայֆար=պեկար «հողային հարկ» <պրս. pākār, pāykār բառից, որով չփայֆար հասկանում է «բացի հողային հարկից նաև այն հարկերը, որ պեկար չէին»։

***ՓԵԲՐՈՒԱՐԻՈՍ** «բուն հռովմայեցոց վերջին ամիսը, որ մեր այժմուայ լատինական տոմարի երկրորդ ամիսն է» Նւս. քր. յատին ռմկ. ձևն է փեռուար կամ փեռուար, որ միակ գործածականն է արդի գրականի մէջ։

=Յն. φεβρουάριος «փետրվար», որ գալիս է լտ. februārius հոմանիշից. այս բառը ծագում է լտ. februo «մաքրել, մեղքերը քաւել, սրբուիլ» բայից և բուն նշանակում է «քաւութեան ամիս». այսպէս է կոչուած ա՛յն քաւութեան ծեսերի և հանդէսների պատճառաւ, որ Հռովմայեցիք կատարում էին այս ամսում՝ իրենց անձը մեղքերից սրբելու համար (Pokorny 1, 844, Walde 279, Ernout-Meillet 326)։ Բառս լատինական տոմարի հետ տարածուած է շատ լեզուների մէջ. ինչ. ֆրանս. février, գերմ. Februar, ռուս. февраль, վրաց. თებერვალი թերեվալի, թուշ. թերեվալ ևն։—Հիւբշ. 367։

Ուղիղ մեկնից նաև ՆՀԲ։

***ՓԵԳԱՆԱՅ կամ ՓԵԳՆԱՅ** «սատափ կամ սպանդ (թրք. իզէրլիկ) խոտը, ruta» (Տիրացուեան, Contributo դնում է § 176 փեգենայ=thalictrum elatum Murr. և § 325 վայրի փեգենայ=սպանդ=peganum harmala L) Ղկ. ժա. 42, Մխ. առակ. Դաղիան. գրուած կայ նաև թեկենա, թեգանոս։

=Ասոր. ܦܝܓܢܐ կամ ܦܝܓܢܐ peγānā, որ է փոխառեալ յն. πήγανον «ruta graveolens» հոմանիշից (Boisacq 777). սրանից են նաև պրս. پیغن payγan, արաբ. فيجن fayǰan, լտ. peganum «փեգենայ»։—Հիւբշ. 317։

ԳԴ պրս. ֆէյգէն ձևից։ ՆՀԲ յն. փի՛ղանօն։ Հիւնք. յն. պրս. ձևերի հետ նաև թրք. բէլին (իմա՛ pelin) «օշինդր»!

Փոխ.—Մտած է Աւետարանի քրդ. թարգմանութեան մէջ՝ Ղկ. ժա. 42. Ուշրէ նանայէ ու փէգենայէ ու ժր հէմի փէնճառ մէնճառան տըտրն (Տասանորդէք զանանուխ և զփեգենայ և զամենայն բանջար)։

***ՓԵԹԱԿ,** ի—ա հլ. «մեղուանոց» Փիլ. Մխ. դտ. (Ոսկեդարում աւում էր մեղուանոց եզն. մեղուաբոյն Սեբեր.), որից փեթականոց (նոր բառ)։

=Փոխառեալ պհլ. *petāk «կողով» (և կամ «փեթակ») բառից, որ նոյնպէս փոխառեալ է սանս. पेटक peṭaka կամ նաև पेटाक peṭāka «կողով, արկղ» բառից (սա էլ ծագում է पेट peṭa «կողով» բա-

ռից)։ Նախնական ժողովուրդների մէջ (ինչպէս դեռ այժմ էլ յատնեալ դիւղերում) փեթակը շինուած էր կողովից կամ պարզապէս մի կողով էր. այս պատճառով էլ շատ լեզուներում «կողով» նշանակող բառը նշանակում է նաև «փեթակ». օր. սանս. karaṇḍa «կողով և փեթակ», պրս. کوارا kavāra «կողով և փեթակ», որանից փոխառեալ արամ. kaweṛeṭ և արաբ. kiwāra, kuwwāra «փեթակ» (BSL հտ. 27, № 81, էջ 97), ֆրանս. panier «կողով», բայց նաև «փեթակ» (համմտ. Littré, Բառ. ֆրանս. հտ. Գ. էջ 920 գ, 12րդ նշ. և Bescherelle, հտ. Բ. էջ 755 ա), գերմ. Korb կամ Körbe «կողով» և Bienenkorb «փեթակ» (որ է բուն «մեղուակողով»), սպան. cuévano «կողով և փեթակ» (BSL անդ, էջ 107), մինչև անգամ մեր բարբառներում՝ Ախց. ղուղա «փեթակ» (թրք. قوغه qoγa «դոյլ» բառից), Ղրբ. fpoց «կողով և փեթակ», Սեբ. ակ՝փէ՝ր «փեթակ» (թրք. sepet «կողով» բառից), Բբ. ծղի «փեթակ» (համմտ. Ղզ. ծղիկ «կողով»)։ Իր երկրորդ նշանակութիւնը ստանալուց յետոյ փեթակ բառի «կողով» նշանակութիւնը չնչուեց. բայց նրա հետքը պահում են դեռ գաւառականներից Մշ. Ք. «ալիւրաւոն», Զղ. փեռակ «ալիւրի արկղ» (համմտ. fpոց «կողով», իսկ Շլ. «ալիւրի աման»). աւելի հին է Դրնդ. 472 փեթակ ցոռենոյ։—Աճ.

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 181 յն. ἀποθήκη «շտեմարան, աւանդատեղի»։ Bugge, Beitr. 21 լիթ. spėcziù, spesti, լեթթ. špeets «պար մեղուաց» բառերի հետ։ վերի ձևով մեկնեց Աճառ. Բանաս. 1899, 250—1։ Մէյլէ (անձնական) բառս համարում է անշուշտ փոխառեալ իրանեանից, բայց ո՛չ վերի ձևից, որովհետև սանս. peṭāka հընդկական բառ է և ո՛չ թէ հնդիկ-իրանեան։ (Արդեօք չկայ որ բուն հնդկական մի բառ փոխառութեամբ անցած լինէր Պարսից, ինչպէս օր. փիղ)։ Պատահական նմանութիւն ունին վրաց ფუტკარი փուտկարի, ինգիլ, futkar, լազ. putoǰi, putuǰi «մեղու»։

ԳԻՒՒ.—Ալշ. Ախց. Մշ. Վն. փէբակ, Ասլ. Երև. Խրբ. Սեբ. Նոխ. փէբագ, Մկ. փէբաֆ՝, Հճ. փէբօգ, Ագլ. փո՛տոկ, Սվեդ. փիբիւգ. —Նոր բառեր են փեբակաբոդ, փեբակատէր, փեբկիկ։ Նկատի պէտք է առնել յատկապես փեբակ Ախց. «մեղու», Զղ. փեռակ «ալիւրի արկղ», Սլմ. փէբոմ՝ (նաև Մշ. Ք.) «ալիւրատուն», Սվ. «մանկիկներին կանգնիլ սովորեցնելու մի գործիք», և մանաւանդ Նոխ. փէբագ «կողով, հողէ կամ թրիքէ աման՝ մոխիրը թափելու համար»։

ՓՈԽ.—Քրդ. petek «փեթակ» (Justi, Dict. Kurde 74 ա), արևել. Թրք. پتك petek «ruche de miel, փեթակ» (P. de Court), օսմ. پتك petek «մեղրախորիսխ, rayon de miel» (Աբիխեան, Բառ. տճկ. 211 ա), «փեթակ» (Будаговъ 1, 312), Թրք. գր. էնկ. Սեբ. Տ. փէբէֆ «փեթակ» (Բիւր. 1898, 865 ա և 1899, 799 ա), Առն. (Թուրքաց և յունաց բարբառով) փէբէֆ «մեղրախառն մոմ» (Պէտէլեան, Արեւելք 1888 նոյ. 9). կայ նաև գր. Թրք. پتك petek «ալիւրաւոն» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 845), որ մեր գր. փեթակ հոմանիշ բառից է փոխառեալ։

ՓԵԺԱՏ «անգուժատ, չարհոտ, քաղբան խէժը, galbanum» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3051։

=Վերջին մասը պրս. ژد žad «խէժ» բառն է, բայց անծանօթ է մնում առաջին մասը փե-։—Աճ.

*ՓԵԿՈՆ «կաղամախի» ըստ ՓԲ. (Տիրացուեան, Contributo § 77 fagus silvatica L). գործածւում է նոր դրականի մէջ, իբր Թրք. «կիւլկէն» Յ. Եուսուֆեան, Արեւելք 1889 Թ. օգոստ՟՟ 23։

=Յն. φηγός «խոզկաղնի, quercus esculus L»=լտ. fagus «hêtre» բառի հայցականից՝ նոր (արևմտեան) տառադարձութեամբ։—Աճ.

ՓԵԿՈՒԿ «նշոյ». կազմուած է նոր դրականի մէջ՝ իբր

=Ֆրանս. fécule նոյն նշ.։

*ՓԵՂԱՄԲԱՐ «իսլամութեան մարգարէն Մուհամմէդ». յաճախ գործածուած արձանագրութեանց մէջ՝ մահմետականների դէմ եղած նզովքներում. ինչպէս Օրբել. 160. «եւ եթէ տաճիկ աւագութիւն փոխի և յափըշ-

տակել ջանայ, հազարէն հազար նալաթ ի վերայ նորա գայ և յիւր փեղամբարէն ապիղար լինի» համմտ. նաև անդ, էջ 170, 266 ևն։

=*Պրս.* پیغامبر peyγāmbar *«պատգամաբեր, մարգարէ, յատկապէս Մուհամմէդ»։ Ընդարձակ տե՛ս* պատգամ։

ՓԵՂԱՄԻԿ *«նեղաբերան սրուակ գինւոյ». ունի միայն ՀՀԲ, ինչպէս և Թորոսեան, Տետրակ համառօտ բառարանի, Նախիջեան 1794, էջ 69։*

Պատահական նմանութիւն ունի պրս. پیغاله payγāla *«բաժակ գինւոյ»։*

+ՓԵՂԿ, ի կամ ի-ա՞ *հլ. «կտաւէ կամ մաշկէ վարագոյր, վրանի պատ» ՍԳր. Փարպ. «լեռան ստորոտը» Խոր. ա. 15. նոր գրականում «դռան կամ պատուհանի թև». որից* փեղկիլ *«ճեղքուիլ, երկուսի բաժանուիլ» Օրբել. հրատ. էմ. էջ 63, «երկպառակիլ» Միխ. ատ. 451 (ՓԲ գրում է* փեղեկել *«բաժանել, զատել»),* երկփեղկ *Ուտ.* երկփեղկել *«քակտել, իրարից բաժանել» Եզիշ. դ. էջ 48. ՅԿ. կթ.* խոռանափեղկ *ՍԳր.* տասնփեղկեան *Ել. իզ. 1, լգ. 8.* վերնափեղկ *Թիւք դ. 25։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sphelg-, spelg- *արմատից, որի ժառանգներից են նաև հիսլ.* spjalk *«բարակ փայտի կտոր, շամփուր», կիմր.* fflochen *«տաշեղ», ֆրիզ.* spalken *«ճեղքել»,* spalke *«ճեղքած փայտ, տաշեղ», շվեդ.* spjälka *«նեղ ու բարակ երկար կտորներ ճեղքել հանել» ևն։ Հնխ.* sphelg- *«ճեղքել» կազմուած է* -g- *ածականով՝ պարզական* sphel-, phel- *«ճեղքել» բայից, որի բազմաթիւ ժառանգներից յիշենք սանս.* sphaṭati, paṭati *«ճեղքել, ճեղքուիլ, պատռուիլ»,* phálati *«ճեղքուիլ, երկուսի բաժանուիլ»,* phálaka- *«տախտակ, տաղտ»,* phāla- *«խոփ», յն.* σφαλάσσειν *«կտրել»,* σπολάς *«կոկած մորթ. կաշէ զգեստ»,* σπαλίς, *տոտ.* ֆալίς *«մկրատ»,* σφέλας *«փայտի կոճղ, նետարան», ալբան.* pal'ε *«կողմ, կուսակցութիւն», լտ.* spolium *«կաշի, աւար», հբգ.* spaltan, *նբգ.* spalten *«ճեղքել», հիսլ.* spjald, fjǫl *«տախտակ», անգսք.* spillan *«ճեղքել»,* speld *«փայտի կտոր», լիթ.* spals *«կոթ», հպրուս.* spelanxtis *«տաշեղ», հսլ.* rasplatiti *«ճեղքել»,* polica *«տախտակ», ռուս.* располоть *«երկուսի բաժնել, ճեղքել»,* полтина *«կէսք» ևն (*Pokorny 2, 677, 680, Boisacq 890, 928, Walde 732, Ernout-Meillet 925)։

Հիւնք. 327 յն. φύλλον *«տերև» բառից՝* Karst, *Յուշարձան 403 սումեր.* bulug *«ճեղքել»։ Գաբրիէլեան տե՛ս* փրկել։ *Ղափանցեան* ՅՐՕ *23, 351 արաբ.* فلق flq *«ճեղքել» արմատի հետ։ Վերի մեկնութիւնը տուաւ* Petersson KZ *47, 264, որ և իմ էլ կարծիքն է եղած։ Պատահական նմանութիւն ունի ասոր.* פלג pəlag *«բաժանել, երկպառակել»,* פלגותא pelgūθā *«բաժանում, հերձուած, երկպառակութիւն»։*

Գիւր.—Աղշ. Մշ. փեղգ, *Ախց.* փէղկ *«դռան փեղկ», Մշ.* փէղգել *«երկուսի ճեղքել», նոյն են նաև* փեղկ *Ղզ. «ճեղքուածք»,* երկու փեղկ լինել *Երև. «ճեղքուիլ, երկու կտոր լինել»,* փեղկ անել *Ղզ. «ճեղքել»,* փեղկաճաճ *Ղզ. Ղրբ. «փեղկերը հանած»։*

***ՓԵՂՄՈՆԻ,** *որ և* փելմոնի, փէլոնի *«այս ինչ կամ այն ինչ» Դաւ. ը. 13։*

=*Եբր.* פַּלְמוֹנִי palmōni *«այս ինչ» բառից՝ յն.* φελμονή *տառադարձութեան միջոցով (տե՛ս նաև* եղմոնի*). Նոյն բառն է արաբ.* فلان fulān, *որից* ֆուլան *Սմբ. դտ. 124, որ այժմ էլ գործածական է ռմկ.* ֆիլան, ֆալան *ձևերով։*

Հներից ոմանք իրր քաղդ. բառ մեկնում էին «սերտ բարեկամ կամ գլխաւոր, դահիրէց նշանաւոր». բստ այսմ հասկանում է նաև Վրդն. մեկն. դան. «Ձոր փելմոնի ասաց, որ է ի նշանաւոր դասուց»։ Ուղիղ մեկնութիւնը տուին ՀՀԲ և ՆՀԲ։

ՓԵՂՈՅՐ *«կանացի գլխարկ». ունի միայն ՓԲ. գործածական է արևմտեան գրականում. սրանից նաև* փեղուրագործ, փեղուրավաճառ։

Փեճեկ *տե՛ս Փոճոկ։*

—Փեճռել *«խոտը փրցնելով քաղել» Վրդ. առ. 202։*

=Շրջուած է ճապոել, ճեպոել, ճպոել հոմանիշից, որ ծագում է ճապուտ «ճիրան, ճանկ» բառից։—Աճ.

Փեննակ «մի տեսակ անասոյգ ծաղիկ» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 3052։

ՀԲուս. կարծում է նոյն ընդ փեռուճայ։

***Փեննիտ** «զտած շաքար». ունին միայն ԱԲ և Նորայր, Բառ. ֆր. 922 բ՝ իբր մհյ.։

=Պրս. فانيد fānīd կամ پانيد pānīd «կըրկին եռացուած, զտուած ու բանձրացրած շաքար», որից նաև Բրք. penid կամ աղաւաղեալ penir šekeri, ֆրանս. pénide, սանս. phánita. ծագում է պրս. فانيدن fānīdan «շաքարը կրկին եռացնել, զտել ու բանձրացնել» բայից։

ԱԲ համարում է պրս.։ Նորայր, Բառ. ֆրանս. 922 բ դնում է պրս. ֆանիտէ ձևից։ Վերի ձևով ունի Seidel § 181։

***Փեննան** «մի տեսակ ծաղիկ» Մխ. առակ. «խաչափայտ կամ դարունաճ բոյսը. paconia officinalis L (Տիրացուեան, Contributo § 177 դնում է anemone armena Boiss.) Գաղիան. գրուած է նաև փեննուճայ, փիոնիա, փիննա «խաչափայտ բոյսը» Բժշ. ֆայունիա՝ որ է փիննաի տակն Վստկ. 77. որ և փեննատակ Seidel, Մխ. բժշ. § 391։

=Արաբ. فاوانيا fāvāniyā «խաչափայտ բոյսը» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 685), որ և فاونيا fāvniyā (Steinschneider WZKM 12, 225) կամ افاونيا āfavniyā (անդ, 11, 273), յն. παιονία։

ՆՀԲ ուղած է կցել յն. φαινής «անհմոն» բառին, որ մերժում է Brockelmann ZDMG 47: Ալիշան, Հին հաւ. 74 յս. paconia հոմանիշից։ Տե՛ս և Seidel Մխ. հեր. § 332։

Փեշաւոր. անասոյգ բառ. մէկ անգամ ունի Հին բռ. հոմանիշների մի շարքի մէջ. «նմանութիւն, որակ, նմանակ, փեշաւոր, դիմաւոր, կենդանագիր»։ ՀՀԲ գրում է նաև փեռշաւոր: ՆՀԲ մեկնում է «արուեստաւոր ինչ ճարտար յօրինուածով գծագրեալ յար և նման իրաց». ՋԲ «նմանաւոր» (իբր բառ քերականական), իսկ ԱԲ՝ «յարմար՝ նման բանած, վարպետ բան»։ Այս նոյն բառն է, որ Բառ. հրեմ. էջ 323 դրում է փեշր «նմանաւոր» և Թորոսեան Տետր. հմռ. բառ. էջ 57 «փեշ, պատեհ, դիպան, տեղ. ուղղուն»։

Աճառ. ՀԱ. 1908, 123 հետևելով ՆՀԲ-ի բացատրութեան՝ դնում է պրս. پيشه pīšavar «արուեստաւոր», որ գալիս է پيشه pīša «արուեստ» բառից։

***Փեշրաւի** «յառաջընթաց». յետին ռամիկ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ղա. «Փեշրաւ է մահու հիւանդութիւնն և այս փութով նշանակէ ըզգալուստ մահուն»։—

=Պրս. پيشرو pīšrav «յառաջընթաց»։—Աճ.

+**Փեռեկ** «ճիղք». արմատ առանձին անգործածական, որից փեռեկել «ճիղքել, պատառել, բզկտել» Ոսկ. ճառք, էջ 443, Կնիք հաւ. 328. Փիլ. սամփս. 34. կք. Խոսր. 74. «մեկնել, պարզաբանել» Լմբ. մատ. 234 (Կարևոր համարեցայ ըստ կարգի խուզողութեամբ ևս փեռեկիլ առաջի այնոցիկ որք խնդրին դիմացութիւնն). **փեռեկիլ** «բաժանուիլ, սփռուիլ, ցրուիլ» Մագ. **փեռեկումն** «ճիղք, բացուածք ծերպի» Եզն. «անջատութիւն» Բր. և Երզն. քեր. **փեռեկտել** «հրկպատակել» Առաք. պտմ. 6. **փեռեկտիլ** «բաժանուիլ, հրկպատակիլ» ԱԲ. գրում է նաև պեռեիլ Փիլ. սամփ. 565 և ել. 532։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. spher- «ճիղքել, կտրել» արմատից. հմմտ. յն. σπαράσσω «պատռել», σπάραγμα «պատռած կտոր», σπαραγμός «պատառուածք», հհիւս. spiǫrr (*sperrō) «պատռած կտոր շորի». հայերէնի մէջ -եկ կարող է լինել մասնիկ և կամ հնխ. -g- աճականից։ Այս աճականով (sphereg-) ենթադրւում են մի քանի ձևեր, որոնք նշանակում են «պայթիլ, ճարճատել». այսպէս են յն. σφαραγεῖσθαι, սանս. sphūrjati, լիթ. spragėti, հհիւս. spraka, լեթթ. sprėgstu, ֆրիզ. sprokkeln (Boisacq 891, 927, Pokorny 2, 668 և 673. վերջինս տալիս է նաև բազմաթիւ ուրիշ բառեր, որոնց նշանակութիւնը չի թոյլ տալիս միացնել նախորդների հետ, ինչպէս ասում է և Ernout-Meillet 919):

ՆՀԲ նոյն ընդ եռկ-պատակել. պրս.

պիւրիյտէն, պիւրրիտէն *Բրբ.* փարչաշամագ, փառալամագ: Bugge IF 1, 455, պեռեբել, փեռեկել, պառակել և պառակտել՝ *իբր բնիկ հայ կցում է գոթ.* brikan, *գերմ.* brichen «*խորտակել*» *բնատանիքին: Հիւնք. բոլորն էլ պառակ «հօտ» բառից: Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Scheftelowitz BB 29 (1905), 36, *որ կցում է յն.* σπάραγμα, *սանս.* sphūrjati *և լիթ.* sproga *ձևերին:— Գաբրիէլեան ՀԱ 1909, 222* փերկ *(գւռ.* փերկաճալ, *գրբ.* փրկել) *արմատի ընդլայնեալ ձևն է:* Karst, *Յուշարձան 403 սումեր.* bar «*կտրել, ճեղքել*»: *Ղափանցեան* ՅՒՕ *23, 351 արաբ.* فرق frq «*բաժանել*»: Petersson, Ar. u. Arm. Stud. 108 *դնում է* -եկ *մասնիկով* *փեռ-<*հնխ.* spersā *արմատից, որից նաև հհիւս.* spjerr: *Պատահական նմանութիւն ունի սեմական* frq *արմատը, որից են. արամ.* פרק frq «*կտրել հանել, խլել փրցնել*», *արաբ.* فرق farq «*ճեղքել, կրկուսի բաժանել, զատել*», تفرّق tafarruq «*անջատիլ, բաժանուիլ, ցրուիլ, երկպառակիլ*», *եբր.* פרק frq «*պատռել, խլել, հանել, փրցնել*», *սար.* פרק frq *և եթովպ.* ፈረቀ faraqa «*ազատել*», *ասոր.* ܦܪܩ perqā «*կտոր, մաս*», *խպտ.* pōrk «*փրցնել, քակտել*», *որոնք տալիս են հյ.* փրկել:

ԳԻՒ.—Պահուած է զանազան ձևերով. ինչ. փառակ *խաչ.* «*որևէ բանի վերևից ցած ճեղքուած կէսը*», փեռկել *խրբ.* «*ոտքերը լայն լայն բանալ*», փեռկուիլ *խրբ.* «*ոտքերը մեկնել, փռուիլ. 2. փռուիլ, հեռուները տարածուիլ*», փեկռտել *Ջրս. (այն է* փեռեկտել) «*պատռտել, կտրտել*», փեռռել *ՋՔ.* «*պատռռտել*», փեկռատ *(իմա՛* փեռեկատ) *Բլ. Լ. Վն.* «*ատամները թափած*», *որից* փեռատ *Մշ.* «*կտրտած*», *Պրտ.* «*ատամները թափած*», *Ննխ.* «*դէշ, վատ, յոռի*»: *Վերջին ձևերի վրայից* ՓՒ *կազմած պիտի լինի* փեռեկատ «*ատամները թափած սղոց՝ սանտրը, մաշուած դանակ*»:

ՓԵՍԱՅ, ի *հլ.* «*փեսայ. 2. ամուսինը աներոջ և զոքանչի առնչութեամբ. 3. քեռայր*» *ՍԳր. Եփր. յես. որից* փեսայանալ *ՍԳր.* փեսայացուցանել *Ա. մկ. ժ. 56.* փեսային *Եփր. ծն.* փեսայանուէր *Ոսկ. Ես.* փեսայութիւն *երգ. գ. 11. Ա. մկ. ժ. 54 ևն. նաև. վերջի* -այ *վանկի կրճատումով՝* փեսաւէր *Ա. մկ. բ. 39. Կոչ. 2. Ոսկ. մ. բ. 5.* փեսածու *Անան. ևկեղ.* փեսաճրաւէր *Մծբ.* փեսեղբայր *Տօնակ.:*

Lag. Urgesch. 536 *գրելով պեսայ՝ հարցնում է թէ չի՞ պատկանում* paç «*կապել*» *արմատին: Տէրվ. Նախալ. 159 յն.* πάσις, *լիթ.* patis «*ամուսին*» *և հյ.* պետ: Karolides, Γλ. συγκρ. 96, 207 *սրանց վրայ աւելացնում է նաև կապադովկ.* ποσίκα *որ յարգական մի պատուանուն է: Հիւնք. պրս.* բաղշա, բաշա «*թագաւոր*» *բառից:* Müller WZKM 10, 355 *ևնթադրում է որ յն.* πάϊς «*տղայ, մանուկ*» *բառը անցել է նախ ասորերէնի, ուր տուել է* ܦܣܐ **paisā ձևը, որից էլ փոխ է առնուել հայ. փեսայ.* Patrubány *ՀԱ 1908, 277 հնխ.* bhend- «*կապել*» *արմատից: Թիրեաքեան, Արիահայ բռ. 323* պատկ *բառից:*

ԳԻՒ.—Ջղ. փեսա, *Ալշ. Ախց. Գոր. Ասլ. Երև. Խրբ. Կր. Հմշ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ.* փէսա, *Տիգ.* փէսոm, *Ղրբ.* փըէ՛սա, փը՛սա, *Ագլ.* փո՛սm, *Սվհդ.* փիսօ.—*Նոր բառեր են* փեսադարձ, փեսախաշ, փեսախում, փեսականչ, փեսատես, փեսատէր, փեսացու *ևն:*

ՓԵՏ, ի *հլ.* «*մազերը պոկելը*» *Մանդ. որից* փետել *(գրուած նաև ըստ ոմկ.* փետտել) «*մազերը՝ փետուրները՝ թևերը պոկել*» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 8. Վեցօր. 168.* «*տագնապիցնել, վախացնել*» *Ոսկ. փիլ. էջ 518.* փետիւն *Մանդ.* աՒափետ *(*«*տագնապիցնել*» *իմաստից) Ագաթ. ՅՀ. կթ. 205. Արծր.* դատափետ *Ոսկ. մ. ա. 16. ՅՀ. կթ.* դատափետ առնել *ՇՆ. խթ. 23.* դատափետել *Երեմ. ժե. 10.*

ՆՀՒ փետուր *բառի՞ց:* Bugge, Btrg. *21 իբր բնիկ հայ կցում է յն.* ψεδνός «*կնտաակ, ճաղատ*» *բառին: Մերժում է Հիւրշ. 500: Հիւնք.* փետուր *բառից:* Petersson, Ar. u. Arm. Stud. 108 *ար-*

մատը դնում է փետ<հնխ. sphed-, որից շրջմամբ յն. ψεδνός փխ. *σπτεδνός, -ուր մասնիկով հյ. փետուր, և նույն արմատի spedio- ձևից էլ՝ փեճեկ:

ԳԻՒ.—Ախց. կր. փէտէլ, Տփ. փէ՛տիլ, Մշ. Սչ. փէդէլ, Ննխ. փէդէլ, Խրբ. փէդիլ, Համշ. փէդուշ, Ակն. Պլ. Սեբ. փէդդել, Ասլ. փէ*դէ՛լ, Ռ. փէբբէլ, Ալշ. Հճ. Սլմ. փիտել, Երև. փիդել, Մկ. փիտիլ, Զթ. Սվեդ. փիդիլ: Նույն է նաև փետել Համշ. Տր. «փրցնել քաշել հանել, կանեփը ծեծել, կոտրել»: Նոր բառեր են փետուիլ, փետուռ, փետռակել:

ՓՈԽ.— Վրաց. ფოთება փեբեբա կամ ფოთება փոբեբա «վախեցնել», დაფეთა դափեբա «փրցնել, պոկել», დაფეთება դափեբեբա «վախեցնել, ահափետ առնել» (մեր երկու նշանակություններով էլ պահուած):

ՓԵՏՈՒՐ, ո հլ. «փետուր, թևպուր» Պիտ. Մխ. առակ. որից փետրալից Ոսկ. փիլիպ. 370 (չունի ՆՀԲ). փետրամօրուս Խոր. աշխ. փետրիկ Մագ. նորափետուր Ես. խ. 31. Ոսկ. մ. բ. 7, 25 և Փիլիպ. Կոչ. լուսափետուր Ագաթ. ոսկեփետուր Արծր. Երզն. Մաղաք. աբ. գրուած է փայտուր Վրդ. բար. 103. ոսմկական ձևով թեպուր Աբր. կրետ. 43, 44, 72, Բառ. երեմ. 117, Վրդն. առկ. 36, թեպրիկ «փետուրիկ» Շնորհ. առ. թեպրել «ճեպռել» Բառ. երեմ. էջ 118, նոր բառեր են փետրաթափ, փետրափոխութիւն:

Klaproth, Asia pol. 100 դերմ. Feder, իսլ. fidur հոմանիշների հետ՝ Böttich. ZDMG 1850, 363 և Arica 80, 349, առնս. pátatra-, páttra- «փետուր»՝ Lag. Urgesch. 388 առնս. pat և յն. πέτεσθαι «թռչիլ»՝ Müller SWAW 42, 252 գնդ. ptara. յն. πτερόν, πτέρυξ «փետուր», Justi, Zendsp. 183 գնդ. patara, առնս. páttra ձևի տակ՝ Պատկ. Изслед. առնս. և յն. ձևերի հետ՝ Հիւբշ. KZ 23, 19 դերմ. feder «փետուր» բառի հետ՝ Lag. Arm. Stud. § 2293 հին ձևը համարելով թեպուր՝ դնում է թև բառի հետ՝ Հիւբշ. Arm. Stud. § 281 կասկածելի է համարում այս բառերի համեմատութիւնը՝ ձայնական անկանոնութեանց պատճառով՝ Տէրվ. Նախալ, 92 առնս. pattra, յն. πτερόν են ընտանիքի հետ՝ Bugge KZ 32, 40 փետուր դնում է շրջուած թեպուր բառից, իսկ այս էլ թև բառի հետ՝ կցում է յն. πτερόν, πτέρυξ ձևերին՝ Հիւբշ. 500 մերժում է թէ՛ այս և թէ pattra, πτερόν ընտանքի համեմատութիւնը՝ (Համապատասխան հյ. ձևն է թիռ, որ տե՛ս առանձին)՝ Հիւնք. դարձեալ յն. πτερόν՝ Pedersen, Հայ. դր. լեզ. 226 փետել բայից է հանում՝ (Այսպէս են նաև Petersson, Ar. u. Arm. Stud. 107 և Scheftelowitz KZ 54 (1927), էջ 231.—Petersson յիշեցնում է լտ. pluma=լիթ. plūnksna «փետուր» ծագած «պոկել» բայից. համմտ. լեթթ. plūzu «փետել»)՝ Մ. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 398 յն. πέτομαι, լտ. prae-pets, հրգ. fedara ևն՝ Karst, Յուշարձան 415 թև բառի հետ՝ մոնգոլ. dabi-debi, ճապոն. tobi, թրք. dai «թռչիլ»՝ Մարտիրոսեան ՀԱ 1924, 458 և սրանից անկախաբար Աճառ. Նորք 1925, № 5, էջ 393 կամիս. p'etar կամ pettar «փետուր, թև» բառի հետ՝ Բայց որովհետև այս բառը նոյն է վերի pter- ընտանիքի հետ, որ տալիս է հյ. թիռ, թեր, թերթ, ուստի փետուր միայն փոխառութիւն պիտի լինի կամ իսեռէնից՝ Առանձին քննութեան կարօտ հարց է՝

ԳԻՒ.—Վն. փիտուր, Սլմ. փիտուռ, Սվեդ. փիդէօր, Մրղ. փուրուր.—շրջմամբ փ և ռ տեղափոխութեամբ և ձայների աստիճանը փոխանակելով՝ Զղ. թեփուռ, Գոր. Ղրբ. Շմ. թէփուռ, Ագլ. թոփիռ, Ախց. կր. թեպուր, Ալշ. Խրբ. Համշ. Մշ. Ննխ. թէբուր, Ակն. Ռ. թէբուռ, Ասլ. թէբիւր, Զթ. թօբույ, թօբուր, Հճ. թուրուղ.—կրկին ձևերն էլ ունի Սեբ. փէդուր, թէբուր՝—Ածանցեալ ձևով Ալշ. փէդոել, Երև. թէբոել «հաւը են փետրատել» (փետռել ձևով յիշում է Բառ. երեմ. էջ 273)՝ Նոր բառեր են փետրակալել, փետրաճաճ, փետրփոխուկ, անփետուր՝— Rivola, Բառ. հայոց 1633, էջ 134 և 376 ունի բևուր «փե-

տուր» ձևը, որ ծագում է **թեպուր** *բառից՝ թև բառի նմանութեամբ ձևափոխուելով։*

ՓԵՏՈՒ. *անսովոր նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած եփր. վկ. արև. 72=Սոփ. Ի. 129* ի փետս մտանել *«յորդորել» ոճի մէջ. «Որոց հարքն յետս կացեալ էին և ազգատոհմնն ի փետս մտեալ ի գայթակղութիւն յօժարեցուցանէին»։*

Նորագիւտ բառս երևան հանեց ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 12, ուր և ուզում է ուղղել ի միտս մտանել *«մէկի ուղեղը մտնել, համոզել»։ Վարդանեան ՀԱ 1922, 296 մերժում է, որովհետև* ի միտս մտանել *ոճը այլուստ յայտնի չէ։ Աճառ. ՀԱ 1923, 66 համարում է կորած ոճ, որի յօրինուածութեան համար հմմտ. Կովկասի հայոց գործածած միրը մտնել «մէկի ուղեղը (թրք.* min*) մտնել, համոզել» ոճը։*

Փետրուար *տե՛ս Փերրուարիոս։*

***ՓԵՐԵԶԱԿ,** ի–ա *հլ. «շրջուն մանրավաճառ» Վրք. հց. ա. 447. Երզն. մաթ. էջ 231. որ և* **փերեզիկ** *Շնորհ. առակք.* **փորեզիկ** *Զքր. սարկ. Ա. 24.* **փորէզիկ** *ՀՀԲ,* **փօրեզիկ** *Զքր. սարկ. Ա. 15.* **փօրէզիկ** *Առաք. պատմ. 330 (արք վաճառականք՝ զոր հայոց բառիւ փօրէզիկ ասեն և այլազգեաց բառիւ չարչի ասեն). փորգեկ Բար. 175։*

*=Պհլ. *perezak կամ* perezīk *ձևի՞ց. հմմտ. պրս.* پیرزی pīrzi *«մանր մունր առարկաներ», որից վրաց.* ფერეზიკი *փերեզիկի «շրջուն մանրավաճառ» (հայերէնից փոխառեալ), պրս.* pīrzī-firūś *«մանրավաճառ, փերեզակ»։—Աճ.*

Հիւնք. պրս. **փիյրզիֆիրուշ** *«մանրավաճառ» ձևից։*

Գիւռ.—Սվեդ. **փիրիզոգ**։

ՓԵՐԵԻԵՏԵԼ *«հագուիլ սգուիլ, պճնուիլ, սիգանքով ման գալ» Ոսկ. ես. էջ 92. Վրք. և վկ. Բ. 132. Կանոն. 46. Վանակ. յոր. որ և* **փերևեթիլ** *Ոսկ. գաղ. Անթիպատր. ծն. Սարգ. յուդ. ա. էջ 808 (ա տպ.), 640 (բ տպ.),* **փերևեդիլ** *Ղևոնդ ժա, էջ 38 (նոր տպ.* **փերևետեալ***),* **փերևերտիլ** *Ոսկ. մ. գ. էջ 110. Փարպ. ղր. Բննիկ. (Սոփերք Իա. 117), պերևետել Կղնկտ. հրտր. էմինի, էջ 158 (որի դէմ հրտր. Շահն. Ա. 322* **փերևեթել**). *ԱԲ ունի նաև* **պերևեթել**. *արևմտահան գրականում գործածական դարձաւ միայն* **փերևետիլ** *ձևով, որից* **փերևետիկ** *«շիկ, սիգալով ման եկող». տե՛ս և* **փառաւաբել**։

Նշ Բ նոյն ընդ պրս. **փէրվէտէն, փէրվէրիյտէն** *«անուցանել»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 368 պրս.* برازیدن barazīdan *«պճնուիլ, զարդարուիլ»։*

+ՓԵՐԲ *(ի հլ. ըստ Նշ Բ, բայց առանց վկայութեան) «կտոր» Վրք. հց. ա. 703. Վստկ. 156. Առաք. պտմ. 290 (գրքի հատոր կամ թիւ ցոյց տալու համար). որից* **փերթել** *«պատառոտել (մարմինը)» Բրս. մրկ.* **միափերթ** *«միակտուր, միաձոյլ» Մխ. այրիվ. 8, Թղթ. դաշ. 27 կամ* **միափերթի** *Մին. Համգ. 134.* **սեկափերթ** *«կաշիի կտոր» Մարթին.* **փերթկար** *«հնակարկատ» Վրդն. առակ. 172. հմմտ.* **փերթ** *Ակն. Ալշ. «կարկատան անելու կտոր (կաշի կամ շոր)»։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. sper- *կամ* spher- *«պատռել» արմատից. հմմտ. հհիւս.* spǫrr *(<*sperrō) «պատռած կտոր շորի», յն.* σπαράσσω, *աոտ.* σπαράττω *«պատռել», σπάραγμα «պատռած կտոր», σπαραγμός «պատռուածք»* (Boisacq 891, Pokorny 2, 668)։ *Նոյն արմատի* spher-eg- *(կամ հյ. -եկ) ձևից է յառաջանում հյ.* **փեռեկ**, *որ տե՛ս առանձին. ըստ այսմ երկուսի արմատն է *փեր (բ– մասնիկի համար հմմտ. հյ.* **բերբ**, *արմատը* **բեր**)։

Նշ Բ յիշում է իտալ. parte, pezzo *«կտոր»։* Scheftelowitz BB 29, 23 *սանս.* sphaṭati, *հբգ.* spalten, *գերմ.* spalten *«ճեղքել», արմատը հնխ.* sphel, *որ տե՛ս վերը* **փեղկ**։ *Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Persson Beitr. 1, 418 *և 869։ Տե՛ս և* **փրկել**։ *Պատահական նըմանութիւն ունի հյ.* **փրթիլ** *«պոկուիլ»։*

Գիւռ.—Ալշ. **փերբ**, *Մշ.* **փերբ, փեռտ**, *Ախց. Սեբ.* **փէրբ**, *Պլ.* **փէռբ**, *Հճ.* **փէյբ**, *Մրշ.* **փէյբ** *«մեծ կտոր (մսի, ապուխտի, կաշիի ևն)».—յատկապէս Ակն. «կաշիի կտոր՝ կօշիկ կարկատելու համար» և Ալշ. «շորի կտոր՝ կարկատանի համար»։*

ՓՈԽ.—Justi, Dict. Kurde 75 *հայերէնի հետ է դնում քրդ.* pərti *և* pərtik *«մանր իրեր, կտորտանք», որոնք բնականաբար թրք.* پرتی pərtə *«մանր մունր իրեր, կարասիք» բառից են փոխառեալ։ Բայց արդեօք թրք.* pərtə *ևս հայերէնից փոխառեալ չէ՞։ (*Будаговъ *1, 313 ո՛չ միայն ալթայական ուրիշ ձևեր չի յիշում, այլ և չի յիշում նոյն իսկ osm. բառը)։*

ՓԵՐՃՈԿ *«փշուր, կտոր» Մխ. հեր. 74 (իբր դեղ յիշում է պղնձի փերճոկ՝ որ ըստ Նորայր ՀԱ 1921, 233 թուի լեպիդոմաղկոս։ Ջունի ՆՀԲ). շատ անգամ Հերացին ունի* փերճոկած *կամ* փերճկոտած, փերճկած *«մանրած, փշրած» (մաշ, գարի, բակլայ). ինչ. էջ 14, 21, 29, 42, 45 ևն։*

***ՓԵՐՈՄ** *«լաստ կամ նաւակ» Դրնդ. 89, 423, 68, որ և* փերեմ *68, Ներզ. ի փերոման 124։*

=Թրք. پرم pereme *«փոքր նաւ, մակոյկ». որ ունի* Будаговъ *1, 314 և կցում է ռուս.* паромъ *«լաստ» բառին։—Աճ.*

***ՓԵՐՈՒՉԱԿ** *«մի տեսակ երկնագոյն պատուական քար». գործածական է միայն արդի գրականում. չունին բառարանները։*

=Նոր է կազմուած պրս. پیروزه pērūza, pīrūza *հոմանիշի վրայից. սրա հետ նոյն են սանս.* pīroǰa, *արաբ.* فیروزج firūzaǰ, *քրդ.* piruze, *տճկ. ոմկ.* peruz *նոյն նշանակութեամբ։ Հայերէնի մէջ* -ակ *թէև հնթադրում է հին ձև, բայց իրօք այսպէս չէ և կեղծեօք միայն դրուած է հին իրանական փոխառութեանց նմանութեամբ՝ նոր բանասէրների ձեռքով։—Աճ.*

Փերփեր, փերփերաւ *տե՛ս Փրփրիմ։*

ՓԵՑԻ *«ձեռքը վնասուած կամ կտորած» մէկ անգամ ունի Խոսր. 31։*

ՆՀԲ (կաղ բառի տակ) լծ. հբր. ֆիսսէխա։

ԳԻՒ.—Նո՞յն է լ. փանց «անճարակ, փընթի թափթփած»։

ՓԿ *«անկողին». ունի միայն Բառ. երեմ. էջ 324։*

ՓԿՔ *«հէգ, թշուառ». մէկ անգամ ունի միայն Մագ. թղ. 237 (տե՛ս Աճառ. ՀԱ 1923, 256)։*

ՆՀԲ թուի կցել ճէք բառին. յիշում է նաև թրք. پك pek *«խիստ, պինդ»։ Տէրվ.* Altarm. *7 իբր բնիկ հայ կցում է սանս.* phēna *«փրփուր», հսլ.* pěna *«փրփուր», յն.* σπῖλος *«աղտ, կեղտ», հյ.* ճէք, փիճ, փիճաւ *բառերին։*

ՓԹԻԹ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ծաղկիլը, ծաղիկների և բուրաբոյների բացուիլը» Ագաթ. (գրուած է փըթոյթ Լմբ. ածած. Հրտր. ՀԱ 1925, 450). որից* փթթել *«ծաղիկ բանալ, ծիլ արձակել» Ագաթ. Ոսկ. մ. բ. 25.* փթթազարդ *Գնձ. կամ* փթթիճազարդ *Տաղ.* զանազանափթիթ *ԱՒ* մշտափթիթ *Պիտ. Խոր. Հռիփս.* յարափթիթ *Խոր. վրդ.* ծաղկափթիթ *Պիտ.* ծառափթիթ *Պիտ.* համափթիթ *Ջքր. կթ.* լուսափթիթ *Ճառընտ.։*

ՆՀԲ (տե՛ս փթթել *և* ծաղկափթիթ*) լծ. հբր. և արաբ* ֆէք, ֆաձար, ֆաբաճ *«բանալ», որից* եփփաթա *«բացի՛ր»։ Հիւնք. փոխ. բայից։ Աճառ. ՀԱ 1899, 233 բ կրկնուած *փիթ պարզականից։*

ԳԻՒ.—Վն. փըփըթել *«ծաղկիլ. 2. մանկիկը քնից արթնացած ժամանակ՝ երեսը կարմիր ու սպիտակ փայլիլ», Մշ. փոպոփիլ. —*Rivola, *բառ. հայոց² 376 ունի* փըփըրիլ *«ծաղկիլ»։*

ՓԹՈԻՐ *«մանր փշուր, մճիր, աւազ» Հին բռ. Դաղիան. (Բառ. երեմ. էջ 323* փրուար*). որից* փրուանք *«փշրանք, կտորտանք» Պիտառ.* փրիլ *«փխրիլ, փշրուիլ» Ոսկ. Հերոդ. 618.* փրտուկ *«փխրուն, դիւրափշուր» Վստկ. 159. գրուած է նաև* փրուղ, փրուր։ *Թերևս այստեղ պատկանի նաև* փրումն *(անյայտ իմաստով) իրեն. Հերձ 100 (փիլըրմամբ տառապանաց չարշարանս կրելով կազմին)։*

ՆՀԲ յիշում է գռ. փրիր *«թրիք»։*

ԳԻՒ—Նոյն է փրուր *Ղզ. «կտոր, ծուէն» (շորի, փայտի, թղթի ևն),* փրուակ *Ղզ. «փրտած»,* փրուանք *Ղրբ. «մէջը փուտ, փուճ». երևի թէ նոյն է և* փրիր *«վառելու աթար» Պտմ. ԺԲ դարից (Դիւան ժ. էջ 128), որի գաւառական ձևերն են երև.* փրիր, *Խլ.* փրբեր, *Շմ.* փիրիր, *Մշ.* պտրուկ *(իմաստի յա-*

բաբերուքեան համար հմմտ. ցանել «սփռել» և ցան «թրիք»)։

*փիթրաւ կամ ԲԹՐԱՂ «ապիկոյ խոտ, մի տեսակ կպչուն խոտ». ունի միայն ՀԲուս. § 3058. գործածութեան տեղն անյայտ։

=Բրք. پوترق putraq կամ بوتراق butraq «մի տեսակ փշաբոյս» (Будаговъ 1, 272 բ), «փուշ ինչ բոլորակ որ կպչի ի հանդերձս և ի բուրդս ոչխարաց» (ԳԴ). կայ նաև Բրք. գւռ. Սեբ. pətərax:

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1923, էջ 343։

Փիլակէ տե՛ս Փիւղակէ։

*փիլաք «երկինք, երկնակամար» Վրք. դիոն. էջ 36, «աստեղատուն» Տօնակ. («Ջաստեղատունս շրջաբերեն, որ փիլաքս ասեն». այստեղ բառը յգ. հյց. է, ինչպէս զաստեղատունս, ուստի սխալմունք է՝ երբ ՆՀԲ դնում է ուղ. փիլաֆս):

=Արաբ. فلك falak «երկինք, երկնակամար», որ երբ. פלך pelek, արամ. פלכא pilkā, ասուր, pilku «շրջանակ, բոլորակ» բառն է և ծագում է 𒇻𒆷𒂵 palaku «ցանկապատ կամ սահման քաշել» բայից (Delitzsch, Assyr. Hndwb. էջ 527 և Strassmaier, Alphab. Verzeich. 833): Արաբերէնից է անշուշտ փոխառեալ նաև վրաց. ფალაჯი փիլաճի «բախտ, ճակատագիր»։

ՆՀԲ սխալմամբ հասկանում է «Հայկ աստեղատունը» և համարում է յն. φύλαξ «պահապան»։ Նոյնը կրկնում է և Հիւրշ. 386։ Ուղիղ մեկնեց Ակինեան ՀԱ 1913, 654, որ Դիոնեսիոսի վարքը արաբերէնից թարգմանուած համարելով՝ այս բառն էլ պարզապէս արաբերէնից տառադարձուած է համարում։

*փիլթաւ «վէրքի պատրոյգ». ունին միայն ՀՀԲ և ՋԲ։

=Արեւել. Բրք. پيلتا pilta «պատրոյգ» բառից, որ R. Shaw, A. Sketch համարում է պրս. پيتله pitīla հոմանիշից փոխառեալ։ (Զարաչար սխալւում է Vámbery, Etym. Wört. որ չաղաթ. پيلته pitte ձևը իբր բնիկ թաթարական բառ՝ հանում է bel «մէջք» բառից)։ Պրս. բառն էլ ծագում է արաբ. فتيل fatīl, ռմկ. fitīl, շրջմամբ՝ فتيله filīta «պատրոյգ» բառից։ Բառս բնիկ սեմական է. հմմտ. ասոր. ܦܬܝܠܐ fətīlā «պատրոյգ» և թալմ. פתילה ftīlā «պատրոյգ». արմատն է արաբ. فتل ftl, երբ. פתל ftl, ասոր. ܦܬܠ fətal, եթովպ. ፈተለ fatala «ոլորել, հիւսել», ասուր. patālu «փաթաթուիլ, գալարուիլ», որոնցից նաև արաբ. تفتيل taftīl «հիւսել», مفتول maftūl «հիւսուած թել» (Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 310), երբ. פְּתִיל pātīl «թել, կապ». բառիս ծայրը հասնում է մինչև եգիպտ. petira (Gesenius[17], 668)։ Թուրքերէնի միջոցով բառս տարածուած է ամբողջ Արեւելքում. ինչ. վրաց. ფიტილა փիլքա, ფთილა փթիլա, ფრთილა փրթիլա, քրդ. fitil, ftil, fetil, pilte, ավար. pilta, չեչէն. milt, նյն. ფიტილი, փըտիլւօ, բուլգար. fetil, սերբ. fitīlj, ուկր. fytýl, ռուս. фитиль, ուտ. filtä բոլորն էլ «պատրոյգ» (Berneker 282)։

Նախ Justi, Dict. Kurde 82 և Kurd. Gram. 88 կցնց պրս. արաբ. և ավար. բառերի հետ՝ համարելով քրդերէնը հայերէնից փոխառեալ։

ԳԻՒՌ.—երև. Ջղ. Տփ. փիլքա, Սլմ. փիլքո, փըլքո, Շմ. փիքլո, միւսները նոր փոխառութեամբ ֆիքիլ։

*փիլիկոն «մի տեսակ պատերազմական մեքենայ, բաբան» Վանակ. յոբ. որ և փիլիկկոն Երզն. մաթ. 407, փիլիկուաճ Լաստ. ժզ, էջ 69, փիլիկպաճ Ուռհ. 191, 196, 250 (փիլիպաճ, փլիպաճ, փիլապաճ, փիլիպոճ. ըստ այլ ձձ). փլաւաճ Դրնդ. 225։

=Պրս. پلكن palkan «բաբան, մանգղիոն», որի երկրորդ մասն է كن -kan (արմատ كندن kandan «փորել, քանդել» բայի) և նշանակում է «փորող, քանդող». բայց անյայտ է pal-: Պրս. բառը բոլորովին չի ծածկում հայ ձևը, որին աւելի նման է հնչում վրաց. ფალაკანი փիլականի, որ և փիլագանի, փիլակոնի, փիլեկոնի (Մառ, տ. Тексты հտ. IX, էջ 16)։ Երկուսը միասին մի երրորդ աղբիւր են ենթադրում։—Աճ.

ՆՀԲ դնում է պրս. فلاخن falāxan «պարսէտ» բառից, որ և ասում է palxam, palxamān, falāxān ևն, բայց

ո՛չ մէկը չի համապատասխանում մեր բառին։

***ՓԻԼԻՍՈՓԱՅ**, ի հլ. «իմաստասէր» Գծ. ժէ. 18. Եւս. քր. Եգն. Ոսկ. յՀ. ա. 1. «հրաժիշտ, մեծ տիրացու» Օրբել. Շնորհ. բարձր. Ոսկիփ. Վրդ. առ. 86, որից* փիլիսոփայական *Ագաթ. Բուզ. Եւս. քր. Փարպ.* փիլիսոփայութիւն *Ոսկ. կող.* փիլիսոփապետ *Կղնկտ. աստւում է նաև* փիղիսոփայ *Եւս. քր. Եփր. ա. կոր. 84, կողոս. 165,* փիլիսովփայ *Անկ. դիրք առաք. 60. Եւագր. 51։*

=*Ասոր.* ܦܝܠܣܘܦܐ filōsōfā *«իմաստասէր», որ փոխառեալ է յն. φιλόσοφος բառից.—Հայերէնը գալիս է ասորի ձևից (-այ յօդով). և տարբեր է* փիլիսոփոս *կրկնակից, որ ուղղակի յունարէնից է փոխառեալ։— Հիւբշ. 317։*

ՀՀԲ և ՆՀԲ առանց տարբերելու յաջորդից՝ յունարէնից փոխառեալ են դրնում։ Ուղիղ մեկնից նաև Müller WZKM 2, 284, *Թրգմ. ՀՄ. 1894, էջ 295։*

ԳԻՒ.—Գրականից փոխառութեամբ են ձևացած Ախց. Պլ. Տփ. փիլիսոփա, *Մշ.* փիլիսոպա, *Ղրդ.* փիլուս *«մեծ գիտնական» ևն։*

***ՓԻԼԻՍՈՓՈՍ** (ի–ա հլ. *ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան*) *«իմաստասէր» Նխ. բ. մկ. Վեցօր. էջ 21. Ոսկ. պօղ. Ա. էջ 330, 908, մաթ. ա. 10. Վրք. հց. Սարգ. որ և* փիղիսոփոս *Եւս. քր. բ (ստէպ). որից զփիղիսոփոս Եւս. քր. բ. էջ 288 (չունին ՆՀԲ և ԱԲ)։*

=*Յն.* φιλόσοφος *«իմաստասէր» բառից, որ գալիս է* φίλω *«սիրել» և* σόφος *«իմաստուն» բառերից. ըստ այմ թարգմանուած է հյ. իմաստասէր. հմմտ. նաև* փիլիսոփայ, *որ յառաջացած է ասորերէնից փոխառութեամբ, ինչպէս ցոյց է տալիս ասորական -այ վերջաւորութիւնը։ Յն. բառը փոխառութեամբ անցած է ամէն կողմ. կայ նաև արաբ.* فيلسوف faylasūf, *որ մինչև անգամ արաբական արմատների կարգն է անցած։— Հիւբշ. 386։*

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

***ՓԻԼՈՆ** *(յետնաբար ի–ա հլ.) «անթև վերարկու, կրկնոց» Բ. տիմ. դ. 13=Եփր. բ. տիմ. 257. «կրօնաւորի վերարկու» Սարգ. յուդ. Օրբել. Հրտր. Էմինի, էջ 76, Վրք. հց. Լմբ. առ Լև. էջ 218, «ծածկոց, վարագոյր» Բրս. մրկ. էջ 354 (գրծ.* փիլոնաւ*), որից* փիլոնաւոր *Ոսկիփ. (ըստ ՀՀԲ) գրուած է նաև* փիղոն *Եփր. բ. տիմ. 247։*

=*Յն.* φελόνης, φελώνιον, φελόνιον *ձևերից. սրանք աղաւաղուած են* φαινόλης *«կրկնոց, թիկնոց, վերարկու», նուազական* φαινόλιον *«կրօնաւորի վերարկու» բառերից։ Յոյնից են փոխառեալ նաև լտ.* paenula, *ռուս.* фелонъ, *վրաց.* ფელონი *փելոնի «փիլոն»։—Հիւբշ. 386։*

ՀՀԲ յունարէնից։ Աւետիքեան, Մեկն. Թղ. պօղ. Գ. 608 «ի յն. ֆէլօ՛նի, համարեալ բառ լտ. փէնուլա»։ ՆՀԲ յն. ձևերի հետ նաև լտ. ֆէ՛նուլա և վրաց. ფილონი։

ԳԻՒ.—Ալշ. ՀՃ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. փիլոն, *Ախց. Երև. Ննխ. Կր. Պլ. Ռ. Սչ. Տփ.* փիլօն, *Մրզ.* փիլուն, *Համշ. Սեբ.* փիլէօն, *Մկ.* փիլիւն, *Զթ.* փիւլիւն, *Սվեդ.* փիլլիւն, *Շմ. Ղրբ.* փէլուն, *Ասլ.* փիլան. *բոլորն էլ «կրօնաւորի վերարկու» իմաստով.— կարևոր է յիշել* փիլոն *Բլ. «ցորենը դեռ հասկի մէջ եղած ժամանակ հատիկի վրայի կեղևը, որ կալսելով պիտի բաժանուի»։*

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ պէտք է լինի վրաց. ფილონი *փիլոնի՝ ի ձայնի պատճառաւ. ուղղակի յոյնից է* ფელონი *փելոնի, որ պահում է և ձայնը։*

***ՓԻՄ** «պիղծ, անմաքուր» Փիլ. բան. և լին. 190, 215 Սարկ. Հանգ. Անյ. Հց. իմ. որից* փծաճ *«պղծութիւն» Փիլ. լիւս. 157.* փծել *«պղծել» Փիլ. լին. բ. 12.* փծիկ *կամ* փծուկ *«աղտեղի» Ոսկիփ.* փծուրիւն *Փիլ. ժ. բան. և նխ. բ.* փծուն *Խոր. Յիշատ. (ստէպ).* փծորել *«պղծել, շաղախել» Բառ. երեմ. էջ 324.* փծկել *«եղծանել, ապականել» Ոսկ. մ. բ. էջ 478 և Հռ. ժդ. էջ 182,* փծկիլ *«եղծանիլ» Ոսկ. ա. տիմ. Թ. էջ 72 (ըստ սրբագրութեան Նորայրի, Հայկ. բառաք. 42). գրուած է նաև* պիծ, պիւծ, փից *ԱԲ. որից* փցկիլ *«եղծանիլ» Ոսկ. ա. տիմ. ժդ. 150 և Եփես. իբ. 922.* փցուն *«փծուն, անպիտան, չեփին, ապիկար» Խոր. Տօնակ. Անյ. պորփ. «փտած (տունկ)» Լծ. փիլ.* փցնուրիւն *Փիլ. յովն.*

611. փցագործ «պղծագործ» (չունի ԱԲ) Բառ. երեմ. էջ 213։— Իմաստով նոյնանում է յաճախ բիծ բառի հետ, որ տե՛ս առանձին։

ՆՀԲ փիծ՝ ռմկ. փիս, հյ. պիղծ, իսկ փցուն, փծուն, փեցի՝ վրաց. փուցունի: Justi, Dict. Kurde 78 քրդ. pəz «գող, աւազակ», bīž «պոռնկորդի». պրս. پزو (?) բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 93 պիղծ, բիծ, լտ. pingere «նկարել», հսլ. պէգր «պիսակ». սնս. pinǰ «ներկել» և pingala «գորշ» բառերի հետ՝ հնխ. pig «ներկել» արմատից։ Հիւնք. պրս. փիս և հյ. բիծ։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 339 բիծ, պիս(ակ), սպի և պիղծ բառերի հետ՝ կցում է Թրք. փիս «աղտոտ» բառին։

ԳԻՒ.—Պատահել եմ երև. փծնի «գէշ, անպիտան» (փծնի արհեստ), բայց աղբիւրս չեմ նշանակած.—Ագլ. փցրնիլ «կերակրի փճանալը, հացը թրջուելով ապականուիլ անձրևից խխում դառնալ. ծիծաղից ուշքը դնալ»։

ՓՈՒՆ.—Վրաց. ფუცუნი փուցունի «խնդճ ու կրակ, զառամեալ», որից დაფუცუნება դափուցունեբա «ծերանալ, զառամիլ»։— Ջուբինով (Թ տպ.) փուցունի մեկնում է «камень треснутый ճաքած քար» և չունի «զառամեալ» իմաստը, բայց գիտէ դափուցուներա «զառամիլ»։ Ցառաջանում են մեր փցուն ածականից։

*ՓԻՂ, ի–ա հլ. «փիղ անասունը» ՍԳր. Եղն. Վեցօր. որից փղապան Ա. մկ. ղ. 37. փղապետ Բ. և Գ. մկ. փղակոյտ Բուզ. փըղոսկր Խոր. Կանոն. փղոսկրեայ ՍԳր. զուարակափիղ Պտմ. աղէքս. ցլափիղ Շիր. քրոն. Սամ. անեց. 67. ասում է նաև փեղ Վեցօր. Պտմ. աղէքս. Վրդն. ծն. փիլ Պտմ. աղէքս. Վասակ. 19. փիւղ Ճառընտ. Պտմ. աղէքս. 139. Նոր գրականում ընդունուած է միայն փիղ ձևը։

=ՊՀլ. 𐭯𐭩𐭤 pīl, սոգդ. pīl համանիշից, որի նոր ձևն է պրս. پیل pīl։ Ըստ Przyluski BSL № 83, էջ 221—2 այս բառը փոխառեալ է դրավիդեան կամ աւստրասիական լեզուներից. բուն նշանակում է «փղոսկրը», որից հպրս. piru «փղոսկր», որ յետոյ դարձաւ «փիղ», ճիշտ ինչպէս յն. ἐλέφας որ նախ նշանակում էր «փղոսկր», յետոյ եղաւ «փիղ». Համմտ. չամ. bala, կոնտու palò, քմեր. phlūk «փղոսկր» և թամուլ. թելուգու, մալայալամ pallu, գոնդի pal ևն «ատամ»։ Բառս նախ մտաւ Հնդկաստան (սանս. पीलु pīlu «փիղ»), յետոյ Պարսկաստան, որտեղից տարածուեց սեմական աշխարհը. Համմտ. ասուր. pilu, արամ. pīl, ասոր. ܦܝܠܐ pīlā, արաբ. فيل fīl, այստեղից ամբողջ Արևելք, մինչև Եւրոպայի ծայրը. այսպէս Թրք. քրդ. fil, վրաց. ბიღლო պիլո, სპილო սպիլո, Թուշ. სპილ սպիլ, բուլգար. fil, սերբ. fîlj, հիսլ. fīll, դան. fil «փիղ» (Berneker 281)։ Տարբեր ծագում ունին յն. ἐλέφας «փղոսկր. 2. փիղ». լտ. ebur «փղոսկր», որոնք փոխառեալ են եգիպտոսից. Համմտ. եգիպտ. āb, ābu և խպտ. ɛβɔ, ɛβu «փիղ, փղոսկր» ըստ Osthoff, Et. Par. 1, 281 հնդեւրոպական բառ է և նշանակում է «հղջիւր» (Boisacq 243)։ Այստեղից ֆրանս. éléphant, գերմ. անգլ. elephant, իտալ. elefante «փիղ» ևն։—Հիւրշ. 255։

Նախ Klaproth, Asia pol. 100 և ԳԴ դրին պարսկերէնից։ ՆՀԲ յիշում է արաբ. պրս. և վրաց. ձևերը Peterm. 17, 37 պրս. pil, արաբ. fīl։ Փղի այլևայլ անուննների վրայ ընդարձակ մի քննութիւն ունի Pictet, Sur les origines de quelques noms de l'éléphant JAs. 1843, 133—166, ուր մեր բառը=արաբ. fīl ևն։ Պրս. և սանս. ձևերի հետ համեմատած են նաև Böttich. Horae aram. 39, Rudim. 50, 190, ZDMG 1850, 353, Spiegel, Hüzw. Gram. 164, Müller SWAW 38, 579 ևն: Lag. Arm. Stud. § 2294 փոխառեալ է դնում Սելևկեանց օրով։

*ՓԻՃԻ «մի տեսակ մայրի, սնովպար, pinus sativa» Ոսկ. դծ. 198, Լծ. փիլ. Հին գր. Մխ. առակ. Վասակ. 4, 58, 158. որից գետնի փիճի, փիճոյ պտուղ Բժշ.։

=Վրաց. ფიჭვი փիճվի «մի տեսակ մայրի, pin, сосна», ფიჭიანი փիճվիանի «եղևնեայ», ფიჭნარი փիճվնարի «եղևնեաց անտառ», մինգր. pičvi «փիճի», լազ. փիճնո «մի տեսակ եղևին»։ Վրաց. բառը հին է. գործածուած է Ես. կ. 13, ուր Հայերէնն ունի դանագան ծառանուններ, բայց ո՛չ փիճի («Եւ փառքն Լիբանանու առ քեզ եկեսցեն, սարդիւն և սօսիւ և նոճով և մայրիւ»)։ Հայերէնը ընդհակառակը լինելով նոր բառ, չունենալով ածանցներ, մինչդեռ վրացին ունի մի քանի կարևոր ածանցներ և գտնւում է ցեղակից լազ. և մինգր. լեզուներում, փոխառեալ է վրացականից։ Սրան համապատասխան է գալիս այն հանգամանքը, որ այժմ էլ բառը գոյութիւն ունի միայն Պոնտական շրջանում։—Աճ.

Նշխ (կաղնի բառի տակ) լծ. յն. φηγός, լտ. fagus «փեկոն» (նոյնը նաև Հիւնք.)։ Lag. Arm. Stud. § 2295 ուզում է համեմատել յն. πίσσα, լտ. pix «ձիւթ» բառերի հետ։ Հիւբշ. Arm. St. § 282 կասկածով դնում է յն. πίσσα, լտ. pix, հսլ. pĭklŭ և գերմ. Pech «ձիւթ» բառերի հետ։ Schrader, Sprachvergl. u. Urgesch. 1890 կա՛մ յն. πεύκη, հբգ. fiuhta, գերմ. Fichte, լիթ. puszìs ծառանունների հետ և կամ յն. πίσσα «ձիւթ»։ Հիւբշ. Arm. Gram. 501 միտում է բոլորն էլ և էջ 397 ուրիշ կովկասեան լեզուների մէջ համապատասխան բառեր չգտնելով՝ վրացին դնում է հայերէնից փոխառեալ։— Երևի կապ կայ փիճի, նոճի և սոճի ծառանունների վերջավանկերի միջև։

Գիմ.—Խաչ. փիչի, Հճ. փիճի՝ (կարդա՛ փիչի) ըստ Թէրզեան, Ամէն. տարեց. 1924, էջ 198, Սվեդ. փիչա։

Փիճխ «բուսական մի բո՞րք» Բժշ. Համատ. նաև փիչխ, փխճի ևուևա, որոնց ի՛նչ լինելը անյայտ է. ունի միայն Հրուս. § § 3063 և 3066։

Հրուս. (անդ) ուզում է միացնել հյ. փիճի կամ արաբ. փիչէֆ (չ-ով արաբ!) «մի տեսակ բաղեղ» բառերի հետ։

+Փին «աղբ, կղկղանք», որից փին բերել կամ փին գալ ընդ բերանն «մի տեսակ զարհուրելի հիւանդութիւն, երբ աղիքները շրջուելով՝ կղկղանքը բերանից է դուրս գալիս. լտ. ileus, miserere» (բուն նշ. «Ողորմեա ինձ» ըստ Սղ. ծ. 1 «Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում») Գաղիան. չանփին «չան քաք» Ոսկիփ. Վստկ. 77, որ և չնփին՝ ըստ Նշխ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pino- կամ spīno- և կամ sphino- ձևից, որին միանում է նաև յն. πίνος «կեղտ (մորթի կամ շորի վրայ), յետնաբար՝ մետաղի ժանգ», πινόω «կեղտոտել», πινάω «կեղտոտիլ», πινερός, πινόεις «կեղտոտ»։ (Յոյն բառի համար առաջարկուած են դանագան համեմատութիւններ, որոնցից յիշելու արժանի են սանս. phéna- «փրփուր, կեղտ, անմաքրութիւն», օսս. fink'ä, հսլ. peny, սերբ. pĕna, spjĕna, ռուս. пена, լիթ. spáine, հին պրուս. spoayno, որոնք բոլոր նշանակում են «փրփուր»։ Նոյն խմբի դէմ արևմտեան լեզուները ներկայացնում են n-ի փոխարէն m. ինչ. լտ. spuma «փրփուր», pūmex «փրփրանման մի քար, չհշաքար», հբգ. feim, հանգլ. fám, ինչպէս և սոդդ. pym'kh «փրփուր»։ Այս համեմատութիւնը սակայն չի ընդունուած. տե՛ս Boisacq 693, Pokorny 2, 681 և 683. իսկ Ernout-Meillet 927 յայտնապէս ասում է թէ spuma խումբը անծանօթ է յունարէնի և հայերէնի)։

Տէրվ. Altarm. 7 սանս. phena «փրփուր», հսլ. pĕna, յն. πίνος «կեղտ», ἀπίνος «կեղտ» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Bugge, Btrg. 20 յն. πίνος, բոհեմ. špina, լտ. fimus «աղբ» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Յն. πίνος բառի հետ է կցում նաև Müller SWAW 136 (1897), էջ 32։ Պատահական նմանութիւն ունին Ատրպ. թրք. پین peyin (Будаговъ, Срав. слов. 1, 326), քրդ. pein, ուտ. փեին «անասունի, մանաւանդ ձիու աղբ», վրաց. ფუნე փուճե «կղզկղզանք», որ Ջուրինով պրս. է համարում։

Գիմ.—Ջթ. խրբ. Հճ. Ք. փին «կատուի կամ շան աղբ», որից Ախց. շնփին, Պլ.

շամփին «շան աղբ», ինչպէս նաև փինել ԶԲ. Խրբ. ՉՆ. «կղկղել» (շան, իշու, մարդու)։

+ՓԻՆԱՏ «աղբատ, խեղճ, ողորմելի, հէգ» Մագ. թղ. 237. Յիշատ. Զքր. սարկ. Բ. էջ 143. ուրիշ վկայութիւն չկայ։ Տե՛ս և Աճառ. ՀԱ 1923, 256։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. (s)phen- արմատից՝ –ատ մասնիկով. հմմտ. յն. πένομαι «շարշարանքով աշխատիլ, աղքատ ու չքաւոր լինել», πόνος «տառապանք, յոգնութիւն», πονεῖν «նեղուիլ, տառապիլ», πονηρός «վատ վիճակի մէջ, պակասաւոր, չար, տաժանագին», πένης «կարօտ», πενία «աղքատութիւն, կարօտութիւն», πενιχρός «աղքատ»։ (Այս բառերը դնում են հնխ. spen- «հեռուլ» արմատից, բայց ի հարկէ նշանակութեամբ շատ հեռու են) (Boisacq 767, Pokorny 2, 661):—Աճ.

ՆՀԲ յն. πένης, սեռ. πένητος «աղքատ, կարօտ»։ Տէրվ. Altarm. 7 փին «աղբ» բառից։

ՓԻՆՋ «ցօղուն, ծղօտ». դիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ. հյ. 124 ա (իբր լտ. culmus, որպէս փինջ). 2. «նեցուկ կամ յենարան, որ դնում են մի բանի տակ, որպէսզի փուլ չգայ (fullcrum, quo quid fulcitar ne corruat)». ունի միայն Rivola (Paris 1633). նոյնը գաւառականների մէջ՝ փինչ Բլ. Մշ. Շտ. Վն. «փայտէ գամ, սեպ՝ որ մի բան պնդացնելու համար են խփում, ֆր. angrois, կամ փայտ ճեղքելու միջոցին են գործածում, ֆր. ébuard» (ունի Նուպարեան, Բառ., ֆր. էջ 323, նաև Քաջունի, Հտ. Գ. 245 մի անգամ փինչ «angrois» և յետոյ էլ փինջ «սեպ, երիթ» ձևով, իբր թէ այս երկուսը տարբեր բառեր ու բաներ լինէին)։

=Վրաց. ბუნჯი բունչի «չոր ու հաստ փայտի կտոր, կոճղ ևն», որի յարաբերութիւնը մեր բառի հետ դժուար է ճշտել։—Աճ.

Փիռնա տե՛ս Փէռնա։

Փիչխ տե՛ս Փիճխ։

ՓԻՏ. անյայտ իմաստով և առանձին անդործածական բառ, որից կազմուած են խոռափիտ «փոս, խորխորատ, վիհ» էր ընդ խղբ. Ղևոնդ է, էջ 21, Ասող. 123, 3Հ. կթ. 139, 205, 364. Մագ. Ճառընտ. «խոր, խորունկ» 3Հ. կթ. (սեռ. խոռափտի Լմբ. ժր. մարգ. էջ 136՝ նաւում գ. 14), խոռափիտ ԱԲ. կոռափիտ «կոր, ծուռ» ՀՀԲ, ՋԲ, ՓԲ և ԱԲ, փայտափիտ «խայտաբղէտ» ՋԲ, նոյնպէս և Վարդան Յունաննան, Ճեռաբծութիւն 1671, էջ 312 (խայտափիտ «որ ունի գիսայտս և գրիծս յոգներանգս և կամ գրփոսորակս մանուսս 'նինքևան սևհռեցեալս»)։

ՓԻՐ «խրատ». ունի միայն Բառ. երեմ. էջ 324։

*ՓԻՐԻՍԿՈՊՈՍ, ի–ա հլ. «քորեպիսկոպոս» Սմբ. դատ. էջ 4, 5, 50, 85 ևն։

=Յն. *περίσκοπος «շուրջ դիտող, քննիչ» բառից, որ պիտի ծագէր περι-σκοπέω «շուրջ դիտել, քննել» բայից. բայը և ուրիշ ածանցներ աւանդուած են, բայց վերի ձևը չկայ ո՛չ հին և ոչ բիւզանդական յունարէնում։

Karst, Դասան. II 64 և կիլ. քեր. 176 ինքն է տալիս այս մեկնութիւնը և ինքըն էլ մերժում է՝ աւելի լաւ համարելով դնել ſորեպիսկոպոս բառից յառաջացած՝ պերեռուտ բառի նմանութեամբ։ Անընդունելի է այս երկրորդ մեկնութիւնը, որովհետև 1) պերեռուտ հայոց մէջ սովորական բառ չէր (վկայութիւններ այս մասին տե՛ս պերեռուտ բառի տակ), 2) մին ունի պ, իսկ միւսը փ նախաձայնը։ Տե՛ս և Karst, կիլիկ. բերակ. 176։

*ՓԻՒՂ «ձկան խոշոր թեփ». մէկ անգամ միայն ունի Պատմ. աղէքս.։

=Պրս. پول pūl, որ և նոսպատական پلك pulak «ձկան թեփ». ըստ իս հայ ձևը ուղղելու է փուղ, որ տե՛ս տակը գւռ.։

ՆՀԲ ռմկ. (իմա՛ Թրք.) փուլ «թեփ ձկան» (Թրք. pul «թեփ» փոխառեալ է պարսկերէնից)։

ԳԻՒՌ.—Ղրբ. փող «ձկան թեփ». հնչւում է ճիշտ այնպէս, ինչպէս փող «դրամ», բայց ըստ իս յառաջանում է փուղ ձևից՝ ու>օ ձայնափոխութեամբ, ինչ. տուն>տօն, շուն>շօն, Լուղ>Լօղ։

*ՓԻՒՂԱԿ «բանան» Բուզ. էջ 89, 104, որ և գրուած փիլակ Հին բռ.=Բռ. երեմ. 323։

=Յն. φυλακή «բանտ», որ ծագում է φυλάττω «պահել» բայից։—Հիւբշ. 387։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

*ՓԻՓՆԻԿ «մի տեսակ առասպելական թռչուն» Անյ. պորփ. Տաթև. ձմ. եհաս. Վրդն. սղ. իա. Գիրք առաք 172 բ (Փիւնիկ հաւն, որ է մի միայն, յետ 500 ամաց, յորժամ ծերանայ, ժողովէ զփայտս և թևօքն հարկանելով հանէ զհուր, և այրի ի նմին. և յետ երից աւուրց դարձեալ ծնանի ի մոխրոյն յայնմանէ). գրուած է նաև փիւնիկս Բար. էջ 145, փիւնիկոս Բար. 146։

=Յն. φοῖνιξ «փիւնիկ հաւ» բուն նշանակում է «արմաւ, արմաւենի» և կոչուած է այսպէս՝ փետուրների գոյնի պատճառաւ. կայ և թարգմանաբար հյ. արմաւ, որ տե՛ս։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։—ԱԲ բառիս տալիս է նաև «արմաւ» նշանակութիւնը, որ գոյութիւն չունի մեր մէջ և յոյնից է ներթագրուած։

*ՓԻՍԻԿԵԱՆ «բնախօս, բնագէտ» Վեցօր. ա. էջ 18. Սամ. անեց. 52. որ և փիւսիկեան Նա. քր. բ։

=Յն. φυσικός «բնախօս», որ կազմուած է φύσις «ծնունդ, բնութիւն» բառից. սրանից նաև լտ. physicus, նոր փոխառութեամբ ֆիզիկոս «բնագէտ» (արևելեան գրականում)։

Ուղիղ մեկնեց ՀՀԲ և ՆՀԲ։

ՓԻՐԵԱԼ. մէկ անգամ ունի Վրք. հց. բ. 289՝ Յօնքն և բիբքն փիրեալ յարտասուացըն.—ըստ իս ուղղելի փխրեալ, որ բացի «փշրած» իմաստից, նշանակում է նաև «խանձուած, խարկուած»։

Փիւրիդ կամ **փիւրիտ** տե՛ս Սփիւրիդ։

ՓԻՒՔ «բարձր». ունի միայն Բառ. երեմ. էջ 324։

ՓԼԻՔ «թոյլ, անարի, վախկոտ». մէկ անգամ ունի Երզն. քեր. «փիւրիւ ասէլն փլիք զթոյլ և զանարի մարդն նշանակէ. և բննիւ ասելն. զբլիթ հացի և կամ զայլ իրի նշանակէ»։

ՆՀԲ լծ. իտալ. poltrone «վախկոտ»։ Այս բառը անշուշտ կապ չունի, բայց կայ պրս. پلید palīd «պիղծ, զազիր»։

ՓՂԱԿՈՆ «գիշերային աղօթքներն ասող, հսկող, կցորդասաց». երկու անգամ ունի Մխ. դտ. 269 և 270. «Փղակոնքն՝ նոքա են կցորդասացք և արձակապաշտօնք»։— Բառարանները առանձին չեն նշանակած. հրատարակիչ Բաստամեան գրում է փղակոն, իսկ ՆՀԲ արձակապաշտօն բառի տակ յիշելով այս բառը՝ գրում է փղական.—նո՞յն է նաև ԳԲ բղակոնք՝ որ տե՛ս առանձին։

ՆՀԲ (անդ) մեկնում է «յն. φι՛λαγλος, այսինքն գիշերապահք կամ հսկողք»։ Բաստամեան (անդ, ծան.) սրբագրում է փսաղտոս, որ ընդունում է նաև Karst, Դատաստ. I 84, II 80։

ՓՂՁՈՒԿ «սրտի դառնութիւն» Ոսկ. մ. ա. 19. Վրդն. դան. որից փղձկիլ կամ փղձկալ «սիրտը դառնանալ, տխրիլ, լացակալել» Ոսկ. ես. Բ. կոր. և մ. ա. 19. Եփր. Թգ. 421, փղձկումն Փարպ. փղձկալի Պատ. աղէքս. գրուած կայ նաև փղձուկ, փղձուք, փղձկիլ են. սխալմամբ փղկումն 34. կթ.։

ՆՀԲ փղձկիլ «սաստկականն մղձկիլոյ. նեղսրտութեամբ շարժիլ մաղձի. հեղձամղձուկ լինել», իսկ փղձուկ «արմատ փղձկելոյ, ի փուղձ բառէ, իբր կակուղ, մեղկ և ի մղձուկ»։ Հինք. բղխիլ բայից։ Պատահական նմանութիւն ունի չաղաթայ. پوخسامق puxsamaq «լաց լինել»։

ԳԻՒ.—Մշ. փխծկալ «լալու պատրաստուիլ», Շմ. փխծկիլ, Տփ. փխցկիլ «սիրտը նեղուիլ»։

*ՓՂՈՄՈՍ «բժշկական մի խոտ է, եզան ագի, խոնդատ, ձկան մահարար, լտ. verbascum, ֆր. molène». մէկ անգամ ունի Վեցօր. 186 (Երթայ խլէ զարմատ մի. որ անուանելով կոչի փղոմոս). ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. φλόμος նոյն նշ.—Հիւբշ. 387։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

Փղփջաձայ տե՛ս Պղպջակ։

Փճոք տե՛ս Փոճոկ։

Փնդեռն տե՛ս Բնդեռն։

[ՓՆԴԻ «գաղձ». ունի միայն ՀԲուս. § 3070, իբր Գաղիանոսից առնելով, ըստ Նորայր ՀԱ. 1923, 343 Գաղիանոս գրում է. «կաղամփինդինէ. գաղձն», որ ըստ այլ ձե,

կարդացում է «կաղամինթենէ. դաղձն», որ է յն. καλαμίνθη «դաղձ». այսպէսով վերոյիշեալ անգոյ բառը ջնջւում է։]

ՓՆԴՈՒԲԱ «սամոյր կենդանին, zibeline». ունի միայն Քաջունի, Գ. 245։

+**ՓՆԹԻ** «կեղտոտ, զզուելի» Մարթին. Սմբ. դատ. 6, 123. կրկնաբա՞ր փնթթի Սմբ. դատ. 123, 124 (թէ՞ գրշագրի պատահական վրիպակ)։

=Կազմուած է հյ. փին «աղբ» և թի բառերից, իբր «աղբի թի». այսպիսի պատկառաւոր բացառութիւններ սովորական են ժողովրդական լեզուի մէջ. համմտ. Պօլսի արդի հայ ժողովրդական բարբառով՝ ֆաֆի ֆիւրէմ (թրք. kürek «թի», որով ամբողջը փին-թի), ճարկաւորի կամ գործարանի կամ էնէֆի (թրք. kenef «արտաքնոց») աւել (որ է «արտաքնոցի աւել») են. այս ձևերը գործածւում են իբր ածական կամ մակդիր՝ «կեղտոտ, անպիտան, զզուելի» և նման իմաստներով։ Յատկապէս մեր փնթի բառի կազմութեան համար կարևոր է յիշել Ղրբ. փնթիփարախ «կեղտոտ, փնթի» ձևը, ուր փարախ կարող է կապուել միայն փին «աղբ» բառի հետ (իբր թէ «ախոռի աղբի թի»)։— Աճ.

> Նշ ուզում է հանել փին բառից։ Bugge, Btrg. 33, 75 յն. πίνος, πιναρός բառերի հետ։ Մառ, Արաքս 1890 ա, էջ 109 վրաց. փինթի ձևի հետ՝ կցում է հյ. պիղծ, բիծ բառերին և բոլորը դրնում է սեմականից։

Գիր.—Տրև. Շմ. Պլ. Ջղ. Սլմ. Տփ. փնթի, Ասլ. Ախց. Սեբ. փինթի, Ալշ. փնտի, Սվեդ. փնթա, Ննխ. փնթի կամ փինթի, Ղրբ. փնթէ «կեղտոտ, անճարակ, թափթփած»։ Նոյն բառը ունին նաև Ագլ. Ակն. Խրբ. Վն. Ջրս. «կեղտոտ» և Արբ. «տգեղ, չար և դէշ» նշանակութեամբ։ Նոյնպէս Ատն. և Էնկ. փնթի «կեղտոտ» (Արևելք 1888 նոյ. 9 և Բիւր. 1898, էջ 865)։ Նոր բառեր են փնթիկ Վն. և փնթիփարախ. Ղրբ. «կեղտոտ»։

Փոխ.—Վրաց. ფინთი փինթի «զզուելի, կեղտոտ, կեղտ, կղկղանք!» (Ջուբինով[2] 1301 համարում է հայերէնից փոխառութիւն), թրք. پنتی pinti «գծուած, զազիր», որից پنتیلمك pintilemek «գծծիլ, վատթարանալ». —ըստ Будаговъ, Срав. слов. 1, 319 թրք. پنتی pinti նշանակում է «կեղտոտ. 2. ժլատ» և ո՛չ միայն չունի թուրքական արմատներով ստուգաբանութիւն, այլ և ցեղակից ուրիշ թաթարական լեզուների մէջ էլ չկայ։ (Ըստ Pedersen, Հայ. դր. լեզ. 200 թուրքերէնը հայերէնից է փոխառեալ)։ Թուրքերէնի երկրորդ իմաստի համար համմտ. Ջղ. փնթի փողատ «շատ հարուստ»։ —Թուրքերէնի միջոցով և կամ ուղղակի հայերենից է փոխառեալ նոր ատր. p'int'ii «կեղտոտ, թափթփած»։

°**ՓՆՁԵԼ** «բթից ձայն հանել կամ փռշտալ». Եզն. 176—7. Նար. մծբ. որ և փնչալ «գազանի մռնչել» Բկր. 41. որից փնչիւն (Լազաց) Գիրք առաք. 447 ա. փնչատել «բարկացած ուժգին շնչել» Դրնդ. 62։

=Բնաձայն բառ. կազմուած է փ ձայնից՝ ն և չ ածանցիչներով. ձևի համար համմտ. ճնչել, շնչել, բնչել, գնչել, կնչել, պնչել, մնչել, խնչել, իսկ արմատի համար համմտ. փչել, փռնչել։—Աճ.

> Նշ ուղ բառի՞ց։ Հիւնր. էջ 89 փռնգալ և փռնչել բառերի հետ ռուսգ բառից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 203 բ։

Գիր.—Նոյն են Ալշ. Մկ. Շլ. Ջղ. Վն. փրնչալ, Մշ. փնճալ «ձիու փչելով շնչելը». Նբ. «քնից նոր արթնացող մարդու մշմշալը, բթի միջից շնչելը», Սլմ. ֆնչալ, Թհկ. փնչել «յոգնութիւնից հևալ». Նոր բառեր են փրնչացնել, փնչփնչել։

*ՓՆՏՈՒԿ «պանդոկ, իջևան» Տաթև. ձմ. կգ (Եւ պանդոկն է եկեղեցի, զի ի վերայ երկրի ոչ գոյ տեղի սուրբ քան զեկեղեցի. բայց համեմատելով ընդ վերինն երուսաղէմ՝ իբրև փնտուկ է). նոյնը փինդուկ ձևով, ի-ա հլ. Արձ. 1038 և 1042 թթ. (տ. վիմ. տար. 21, 22)։

=Արար. فندق funtuq «պանդոկ, իջեվան, խան» (Համուս, թրք. թրգմ. Գ. 44), որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս Պանդոկ։ Նոյնից են փոխառեալ նաև վրաց. ფუნდუკი փունդուկի կամ ფუნდრუკი փունդրուկի «պանդոկ, իջևան», მეფუნდუკე մեփունդուկն

«պանդոկապետ», ֆրանս. fondic «խանութ կամ մթերանոց արևելեան»։

Այտնեան, Քնն. քերակ. էջ 137 համարում է պանդոկ բառի պրս. ձևը։ Ուղիղ մեկնեց Նորայր, Բռ. ֆրանս. 554 աւ։

—ՓՆՏՌԵԼ կամ ՓՆԴՌԵԼ «պահանջել» Գէ. ես. (մի ձեռագրի լուսանցքի վրայ այսպէս է գրուած՝ իբր բացատրութիւն բնագրի պահանջել բառի). «որոնել» Վստկ. 214 (Փընդռեա՛ զբերանն և զլեզուն՝ թէ ուռեց կենայ...). «հարցուփորձել» Սմբ. դատ. էջ 5, 79. որից իրաւունք փնտռել «իրաւունք բանեցնել» Անսիզք 13 (մհյ. դատաստանական մի դարձուած է, իբր ֆր. faire valoir ses droits). փնդռտուրիւն «հարցաքննութիւն» Սմբ. դատ. էջ 5, 79. գործածական է արևմըտեան գրականում «որոնել» իմաստով (գրում է փնտռել), երբեմն միայն արևելեան գրականում փնդռել ձևով։

=Մագում է նախաւոր պտռել ձևից. որի վրայ տե՛ս պտիղ։ Սրա համեմատ Ղարաբաղի բարբառը՝ որ ունի պտռել ձևը, չգիտէ փնտռել։

ԳԻՒ.—Տե՛ս պտիղ։

—ՓՇԱՏ «փշատ պտուղը, տճկ. իյտէ, ֆր. chalef (ըստ Քաջունի, Գ. 245 իբրև. élaeagnées)» Բժշ. որից փշատի «նոյնի ծառը, լտ. elaeagnus» Բժշ.։

=Կազմուած է փուշ բառից և այս անունն է ստացել իր հատու ու երկար փշերի պատճառաւ։ Համմտ. վրաց. փշատի «դժնիկ, սպիտակափուշ, ֆր. aubépine» (ունի Զուբինով ա տպ. չկայ երկրորդում)։

Schröder, Thesaur. 340 ստուգաբանում է. «Փշատի ծառն մեծ հատու ու փշոտ ծառ այ, որ ուրիշ բանի պէտք չի թէ ոչ այրելու համար. զարա շատ խոշ և փուշ ունի. էնտուր էս պտղի անունն փշատ այ, իբր թէ փշահատ»։ ՀՀԲ և ՆՀԲ հանում են նոյնպէս փուշ բառից։ Բաղիշեան, Առաջն. մանկ. 168 մեկնում է երկու ձևով. «Հայեցեալ ի ծառն փշալից՝ ասի փշատ, այսինքն փշահատ, բայց հայեցեալ ի քաղցր ալիւրն... կոչի փշատ, այսինքն փոշահատ»։ Փուշ բառից է հանում նաև Աճառ. ՀԱ 1908, 123՝ համեմատութեամբ վրացի ձևի. (բայց պէտք չկայ կարծելու, որ հյ. փշատ նախապէս ուրիշ փշոտ մի ծառ էր նշանակում, որովհետև արդէն փշատին փշոտ է)։

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Մկ. Զղ. Սլմ. Վն. փշատ, Ալշ. Խրբ. Ղրբ. Մշ. փշադ, Մրզ. փիշատ, Շմ. փուշադ, Ագլ. փշօտ, Ռ. փշաբ, Կր. փրշատ, Ղրդ. փըշրատ, փըշըրճատ. վերջիններըը կարող են ենթադրել նախաւոր *փրշատ կամ *փշրատ ձևը, որով վերի մեկնութիւնը սխալ դուրս կգայ։ Հետաքրքրքրական է որ Արբ. պտուղը կոչւում է փըշատի խնձոր։ Նոր բառեր են փշատի «դեղնակարմիր», փշատծաղիկ «մի տեսակ հոտաւէտ ծաղիկ»։—Յիշենք նաև փշատիլ Ախց. «բամնիլ, փշաքաղուիլ» (փուշ բառից)։

ՓՈՀ.— Վրաց. ფშატი փշատի «փշատ, лохъ, лоховина, իտալ. ginggiole farinoso» (ըստ Զուբինով[2], 1321) փուշադ։

*ՓՇԻՏ (սեռ. փշտի) «մանր մի կշիռ է. հրիք գարեհատ. 0, 14 1/6 դրամ (ըստ Մանանդեան, Կշիռները՝ էջ 20). 2. դահեկանի 1/32 մասը» Շիր. էջ 27, Փիլ. նխ. 76։

=Պհլ. *pišīt ձևից. համմտ. պհլ. pišīzak, pišīčak, պրս. پشیز pišīz «ձկան թեփ. 2. պղնձէ կամ արոյրէ խիստ փոքրիկ մի դրամ», و پشیزه pišīza «վիշապի կամ ձկան թեփ. 2. մի տեսակ մանր դրամ». հին և նախաւոր նշանակութիւնը «ձկան թեփ» է, որից նմանութեամբ «դրամ». համմտ. փող՝ երկու իմաստով։ Իրանեանից է փոխառեալ նաև ասոր. ܦܫܝܙܐ pišīzā «մի փոքրիկ դրամ»։—Հիւբշ. 255։

Հներից Շիրակացին արդէն գրում է «ըստ պարսկական լեզուին կոչի փշիտ» (հրտր. Պատկ. էջ 27)։ Նորերից ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 182 պրս. փեշիյզ կամ փեշիյտ։ ՆՀԲ պրս. պիսդի, փեշիյզ, փեշիյտ։ Lag. Ges. Abhd. 79, Symmicta 103 և ZDMG 32, 330 պրս. pišēz։

*ՓՇՈՒՐ «շատ մանր կտոր, փտոր». գործածական է գաւառականներում և արդի ըր-

բականում. որից փշրել *«լեսուլ, մանրել»* ՍԳր. Ագաթ. Եփր. ծն. փշրանք Դատ. ա. 7. Մտթ. ժե. 27, Մրկ. է. 28. Ղկ. ժզ. 21. փշրումն Եղիշ. Հյր. մեր. 204. Վրդն. դան. դիւրափշրելի *վանակ. յոբ.* ոռնափշուր Եղիշ. երէց *(բայց տե՛ս* շուփ). փշրամաղ *«փշրանք հաւաքող»* Օրբ. Հկճռ. ղ. էջ 91։

=Կովկասեան կամ խալդեան փոխառութիւն է. համմտ. վրաց. ფშერი փշերի *«փոշի»*, ფშვიერი փշվիերի *«չոր փշրած հող»*, ფაშარი փաշարի *«փխրուն»*, ჩაფშარვა չափշարվա, ჩაფუშვა չափուշվա *«փշրել, կոտրատել, խորտակել»*, ფუშვა փուշվա *«քանդել, խռովել, լուծել, խառնակել, փուլ ածել»*, ფშვნეტა փշվնետա *«յօշել, մանրել»*, მოფშუნეტა մոփշունետա *«կոտրատել, փըշրել, փոշիի վերածել»*, ნაფუშევი նափուշեվի *«քանդուած, խանգարուած»*, ფშხუნა փշխունա *«յօշոտել»*, ფშხუნადი փշխունադի, ფშხალული փշխալուլի *«փխրուն, դիւրափշուր»*, սվան. püsj *«փոշի»*, աբազա pšaxo, կաբարդին pšaxrro, շապս. pšaxo, pšaxrro *«աւազ»* են։ Այս բոլորը իրենց ձևերի բազմազանութեան և նշանակութեանց երանգների աճման պատճառաւ չեն կարող հայերէնից փոխառնալ լինել, մանաւանդ որ փշ–, փուշ արմատը ցոյց տալով՝ իրար են միացնում փոշի և փշուր։—*Ա.Ճ.*

ՆՀԲ *լծ.* փխրել։ *Տէրվ. նախալ. 93 սանս.* դնդ. piš, *լտ.* pinso *«ծեծել, գարնել»*, յն. πτίσσω *«մանրել, ջարդել»*, հսլ. պրխատի *ձևերի հետ հնխ.* pis *«փըշրել, ճմլել»* արմատից։ Հիւնք. փոշի բառից կամ շփել բայից։ Patrubány ՀԱ 1908, 313 փոշի բառից։ Աճառ. Նորք 1925, № 5, էջ 393 յիշում է կամիս. paršiia *«կոտրել, բաժանել»*։ Pictet, բ. տպ. Բ. 160 սանս. piš *«փշրել»*, pišṭa *«ալիւր»*, յն. πτίσσω, լտ. piso *«սանդ» են բառերի հետ։*

ԳԻՒ.—Ալշ. Ջղ. Մշ. Սչ. Վն. փշրել, Գոր. Երև. Ղրբ. Տիգ. փշրէլ, Ագլ. Մկ. Շմ. Սվեդ. Տփ. փշրիլ, Ախց. փշրէլ, փշէլ, Կր. Պլ. Ռ. փշէլ, Ասլ. փշէ՝լ, Խրբ. փշրիլ, Համշ. փըշուշ, Հճ. փուշել, Զթ. փը՝շը՝յիլ, փը՝շը՝րիլ, Ակն. Սեբ. փշէլ,—Ննխ. փշրէլ, փշրաճ, փըշաճ, փշօր,—Պլ. փշրաճ, Մրզ. փիշիւր.—շ-ի տեղ ս ձայնով ունինք Տփ. փսուր *(օր. ջարթ ու փսուր «ջարդ ու փշուր»)*, Պլ. փսօր *«փշուր»*. փսօրէլ *«փշրել»*, աւելի հին վկայութիւնն ունի Բառ. երեմ. 326 փսորել *«ըղկել կամ մաշել»*, փսոր *«ապաւառ (տպ. վաաւառ) կամ աղբ»*, որից երևում է թէ փրուր և փրիր, ինչպէս նաև ցանել և ցան *«թրիք»* նոյն բառերն են։ Նոր բառեր են փշրուկ, փշրուկապուր, փշրուր, փշրուճք, փշրաել, փշրկիլ, *կրճատ ձևով ունինք* մեփշու, մեշու *«քիչիկ, մի քիչ»* (<մի փշուր)։

ՓՈԽ.—Վրաց. ფუშრუკი փուշրուկի *«աւիւրով և մեղրով շինուած մի կերակուր»*, քրդ. piširin *«փշրուիլ»*, piširandin *«փշրել»*, pišruk *«մի տեսակ խմորեղէն»* (Justi, Dict. Kurde 80), ուտ. փուշուր *«աւերակ, փլատակ»*, փուշուր բախուն *«աւերուիլ, քանդուիլ»*, թևրևս նաև թաբաս. buŏuruk *«փոշի, փխրուն՝ փշրուկ հող»*, համմտ. Բրբախօս հայերից՝ էնկ. փրշալամաք, փըրշէլլէմէք *«փշրել»*, փշրաճ *«փշրանք»* (Բիւր. 1898, 865), Առն. փշրաճ *«հացի բեկոր»։*

ՓՇՏԻՆ *«պայտառ». ունի միայն Բռ. երեմ. յաւել. Գէորգ դպրէ, էջ 563։*

ՓՇՏԻՆ *«խաղալիկ տղայոց». ունի միայն Քաջունի, Դ. 246։*

=Կայ Բրբ. pišdi *«մի տեսակ խաղ»*, ինչպէս և dangala-pišdi *«արաւանդի խաղը»։*—*Ա.Ճ.*

—ՓՈՓ *«ծալք, ոլորք». ընդարձակ զարգացում կրած արմատ, որից կազմուած են՝* ՓՈՓ, ի Հլ. *«զգեստի ծալք» լծ. Նար.* փոբիլ *«երեսը կնճռոտիլ» Վրդն. եվ.* փոբուած *«կնճիռ, ոլորք, ծալք, խորշոմ» Նիւս. կազմ. Սկևռ. յար.* փոբութիւն *Նիւս. կազմ.* անփոբ *«անծալ, հարթ» Շիր.* ՓՈՓՈՓ *(գրուած նաև սխալմամբ փողող) «տափակ, լեզուն փոքրոքող» Դամասկ. Մագ. Բղ. 116. Ոսկիփ. որից և* փոբոբաճամ *Վեցօր. 101.* փոբոբայիկ, փոբոբուրիւն *Մխ. քժշ. (իմաստի զարգացման համար համմտ. Բրբ.* bun-maq *«ոլորել» և* buruš-maq *«տատպել, փոքրոքել»),*

փոթոթել *(նոր բառ)*. ՓՈԹՈՐ «ոլորուն, պտուտքած» *(որ կազմուած է* -nr *մասնիկով, ինչ.* ճաս-nr, բեկ-nr, պղտ-nr*)*. *այս իմաստով գործածուած չէ, բայց ունինք* փոթոր «կոնաձև» *Պիտ. և Մագ. առ լհ.* «շռնչան, հոլ» *ԱԲ. որից* փոթորուն «պտուտքած» *Եփր. առ լհ.* փոթորել «հոլի պէս դարձնել» *ԱԲ. սրանից* -իկ *մասնիկով՝* ՓՈԹՈՐԻԿ «պտուտքեալ հողմ, մրրիկ» *Ես. ԺԷ. 13, խ. 24. ոամկաձև՝* փոթորակ *Ոսկիփ.* =*Անկ. գիրք նոր կտ. 120, որից* փոթորկիլ *ՍԳր. ՅՀ. կթ. Ճառընտ.* փոթորկալ *Օրբել. նոր գրականում* փոթորկալի, փոթորկոտ, փոթորկածուփ *(մասնիկի համար հմմտ. իր հոմանիշը* մրրիկ*)*:

=*Նոյն է* փար *հոմանիշի հետ։*

ՆՀՌ փոթոր *դնում է* փոր *բառից, իսկ* փոթուած *համեմատում է* փաթոյր *ձևի հետ։ Տէրվիշ.* Altarm. 5 *սանս.* phui «փչել» *արմատի հետ։ Նոյն, Նախալ. 50, 93* փուֆ, փչել *են բառերի հետ հնխ.* sput «փչել» *արմատի տակ։ Հիւնք.* փոր *և* փոթոր *հանում է շփոր բառից, իսկ* փոթորիկ *դնում է* րօթ+մրրիկ*։*

ԳԻՒ.—Ջղ. փոր, *Ախց. Կր. Երև. Հճ. Ղրբ. Ննխ. Պլ.* փօր, *Ասլ.* փէօր, փէօ*, *Սեբ.* փէօր, *ՋԹ. Սվեդ.* փիւր, *Ալշ. Վն.* փոնր, *Երև.* փօնր, *Մշ.* փոնտ, *Ագլ. Մկ.* փուռ, *Սլմ.* փուէնր «ծալք, և յատկապէս՝ ղգեստի ծալքերը»,—*Պլ.* փօրդել «ծալքեր շինել. 2. բերանը տոպել», *Երև. Տփ.* փօրօրել «կծու մի բանով բերանը այրել», *Ջղ.* փրոռբել, *Ղրբ.* փրօ՛բել՝ *նոյն նշ.— Սչ. Տիգ.* փօրօրիգ, *Մշ.* փոռօրիգ, *Խրբ.* փօրըլիֆ[1] «փոթորիկ».—*Սլմ. կրկնութեամբ ասում է* արուն-փէօրէօրիւն *կամ* արուն-փէօրէօրիմ «կոհւ, արիւնհեղութիւն», որ *և Վն.* որում-փոթորում «աշխարհի կործանումը, դատաստանի օրը»։—*Թրքախօս հայոց մէջ՝ Ասն.* փօր «փոթ, ծալք», փօրօրիգ «մրրիկ», *էնկ.* փօրիգ «փոթիկ, փոթփոթուած ծալք» *(Բիւր. 1898, 865)։ Նոր բառեր են* փոր *Մշ.* «քուրջ, ցնցոտի», *Սս.* «ղգեստ», փոռբել *(Մշ.* փօռտել*)* «ծալքեր շինել», փորիլ *Սվ.* «բերանը տոպիլ», փորիկ *Ակն.* «տոհմ», փորոց «փորձանք», փոթռտել, փոթռտիլ, փոթորուկ «կոհւ, աղմուկ». *տարբեր մասնիկով է* փոթորաւիճ *Ալբս.* «փոթորիկ, աղէտ»։

ՓՈԽ.—Ուտ. փօր «շորի փոթ, ծալք», *Քրք.* پوت pot «ծալք», بوت pot «ծալծալուած շոր». پوتك potik «ծալք», پوتوك potuk «լայն և ծալծալուն», پوتكلمك potiklemek «ծալծլել», پوتور potur «ծալծլուած», پورت purt «ծալք» (Zenker), پوتراق putrak «ծալծալուն». *այս բոլորը հայերէնից են ըստ* Kraelitz-Greifenhorst WZKM 27 (1913) *էջ 130։ Սրանց պէտք է աւելացնել և* پوتور potur «մի տեսակ տափատ» *(լայն ու ծալծալուն ձևից առնելով այսպէս կոչուած)։*

[ՓՈԹՈՐՆԻ. *մի տեսակ բոյս. յիշում է ՀԲուս. § 3080. ըստ Նորայր ՀԱ 1923, 345 սխալ բառ է. պէտք է ուղղել* ծորոռնի, *ուղ.* ծորորուն «ծոթրին», *ինչպէս ունի Գաղիանոս։*]

*ՓՈԼԱՏ «պողպատ» *Կոստ. երզն. 159։ =Պրս.* پولاد pōlād *նոյն նշ. որի վրայ մանրամասն տե՛ս* Պողովատ*։*

Ուղիղ մեկնեց Պոռուրեան, հրտ. Կոստ. երզն. 59։

*ՓՈՒ, ո *հլ. (երբեմն նաև ի հլ.) «փոխ առնուած բան, մանաւանդ դրամ» ՍԳր. Ոսկ. «փոփոխակի տուն առ տուն սաղմոսերգութիւն» Լմբ. սղ. Տօնաց. ՃՀ.* որից փոխել *ՍԳր. Եւս. քր. (փխր. «հիւանդութիւնը մէկից միւսին անցնիլ, վարակել» Մխ. դտ. 189),* փոխադարձ *Ագաթ.* փոխան *Մն. լ. 2. Փիլիմ. 20.* փոխանակ *ՍԳր. Եզն. Եւս. պատմ.* փոխանակել *ՍԳր. Եւս. քր.* փոխանորդ *ՍԳր. Ագաթ.* փոխարէն *ՍԳր. Ագաթ. Եզն. Մծբ. լումայափոխ ՅՀ. Բ. 16.* կերպարանափոխ *Ոսկ. մ. ա. 16.* արագափոխ *Վեցօր.* երեսփոխան *Մխ. դտ. Յայտմ.* ոտնփոխ *Ոսկ. յհ. ա. 1.* պահակափոխ *Կոչ.* տեղափոխ *Ագաթ.* վաղափոխուկ *Ոսկ. եփես. յիտնաբար դարձել է նախամատնիկ՝ համապատասխան յն.* ἀντὶ *և մանաւանդ* μετὰ *նախդիրներին. ինչ.* փոխաբերութիւն = μεταφορά *Պղատ. տիմ. Նոնն.* փոխադրել = μετατίθημι *Նար. Ոսկ. յհ.* փոխանցել = μεταβαίνω *Նիւս. բն. Դիոն. երկն.* փոխատրել = ἀνταποδίδωμι, *հոր. Ոսկ. գծ. են։ Նոր բառեր են* անփոխարինելի, փոխաբերական, փոխաբերաբար,

փոխադրական, փոխադրանաւ, փոխադրելի, փոխադրեալ, փոխարժեք, փոխարինաբար, փոխարինութիւն, փոխարկայ, փոխարկայութիւն, փոխ-նիւպատոս, փոխ-տեսուչ, նոգե-փոխութիւն *են։ Այս արմատի կրճատ կըրկնաւորն է՝* ՓՈՓՈԽ *«փոխան ի փոխը» Ես. լ. 32. որից* փոփոխել *ՍԳր. Եզն.* փոփոխական *Ոսկ. Ես.* փոփոխիչ *Եզն.* փոփոխումն *ՍԳր. Եզն. Վեցօր. Ոսկ. Ես. Եւս. քր.* բազմափոփոխ *Փարպ.* երազափոփոխ *Պիտ.* անփոփոխ *Ագաթ. Փարպ.* փոփոխամիտ, փոփոխակի *(նոր բառեր) են։*

=*Ասուրերէնից փոխառեալ չընդունելու պատճառն այն էր, որ ասուր.* pūxu *ունէր միայն «փոխառութիւն կամ փոխարինութիւն» նշանակութիւնը, որ բառիս երկրորդական առումն է, մինչդեռ հայերէնի հիմնական իմաստն է «փոխել»։ Այժմ տեսնում եմ որ ասուրերէնի մէջ էլ* puxxu *«փոխանակել,* exchange, tauschen» *նախապէս նշանակում էր «փոխել,* change, verändern» *(*Muss-Arnolt, Ass. Handwb. *793 բ), որով և արգելքը վերանում է։ Նոյն արմատից են նաև ասուր.* pūxu *«փոխանակութիւն,* exchange. barter, Tausch. 2. *փոխառութիւն, փոխատուութիւն,* loan, Darlehen. 3. *ընկալագիր, ստացական,* receipt, Quittung», pūxatu *«փոխանակութեան առարկան»,* pīxatu *«փոխանակութիւն» (*Muss-Arnolt, Ass. Handwb. 793—7): *Այսպէսով հայերէնի բոլոր առումները գտնւում են ասուրերէնում։*

Böttich. Horae aram. *42, 100 երր.* פּמה pexā *«գաւառապետ» բառի հետ է համեմատում Հյ.* փոխանակ։ *Նոյն,* Rudim. *50, 188 սրա հետ նաև սանս.* pakša *«հրամանատար» Հիւնք.* փող *«դրամ» բառից։* Jensen IF Anz. 14, 61 *(Քրդմ. ՀԱ 1904, 276) ասուր,* pōxu, pūxu *«փոխարինութիւն» ձևից փոխառեալ։ Վերջինիս է կցում նաև* Karst, *Յուշարձան 400։ Ասուրերէնից փոխառեալ է ընդունում նաև այժմ* Pedersen *ՀԱ 1929, 119։*

ԳԻՒ.—Ալշ. Հճ. Մշ. Սլմ. Վն. փոխ, *Ախց. Կր. Երր. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ.* փօխ, *Մկ. Տփ.* փուխ, *Սչ.* փրխ, *Ասլ. Համշ. Սեբ.* փէօխ, *Զթ. Սվեդ.* փիւխ, *Ագլ.* փուճ.—*Զղ. Սլմ. Վն.* փոխել, *Մշ. Սչ.* փօխել, *Ախց. Դոր. Երև. Կր. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* փօխէլ, *Երր. Շմ. Տիգ. Տփ.* փօխիլ, *Համշ.* փօխուշ, *Մրղ.* փրէխէլ, *Մկ.* փուխիլ, *Ասլ.* փէօխէ՛լ, *Հճ.* փէխել, *Զթ.* փէխիլ, *Սվեդ.* փիխիլ, *Ագլ.* փա՛ճիլ։ *Նոր բառեր են* փոխան *«վարտիք»,* փոխնոռդ *«նոր փոխելու սպիտակեղէն»,* փոխանացու, փոխարայ, փոխման, փոխմանի, փոխուտուրս, փոխուտրիլ, փոխսարար, փոխփշտել, փոխփխատել *(Ագլ.* փրնփրնա՛տիլ*) «փոփոխել»։*

ՓՈԽ.—Հայերէնից է փոխառեալ Թրք. գւռ. Այն. փօխնօդ *«փոխնորդ» (Կոշնակ, 1928? Թուականը մոռացել եմ նշանակել)։*

ՓՈԽԻՆԴ, ո *հլ. «խարկած կամ բուված ալիւր, իղով՝ մեղրով ու ալիւրով պատրաստուած մի ուտելիք» ՍԳր. (Մխ. բժշ. 96 ունի նաև նոյն ձևի փոխիդ, փշատի փոխիդ, չոր խնձորի փոխիդ). որից* գարէփոխինդ *Վստկ. 75, 113, 212.* փոխնդեայ *«փոխինդով շինուած ուտելիք» Ոսկ. փիլ. 469։*

ՆՀԲ լծ. յն. πόλτος. *լտ.* puls, pulmentum *«ալիւրով պատրաստուած կերակուրներ»։ Հիւնք. ինչպէս և* Seidel, *Մխ. բժշ. § 140 լտ.* polenta *բառից։ Կապ չունի լտ.* polenta *«բուված գարեալիւր, որ աղքատների կերակուրն էր», որի ընկերներն են լտ.* pollen, puls, *յն.* πάλη, παιπάλη, πάλτος, *միռլ.* littiu, *գալլ.* llith, *սանս.* palalam *են, որոնք նշանակում են «գարեալիւր, նաշիհ, կամ ալիւրով պատրաստուած խիւս». աւելի հեռաւոր ցեղակիցներն են հսլ.* papelŭ, popelŭ, *ռուս.* пепель, *լիթ.* pelenaĩ, *հպրուս.* pelanne *«մոխիր», որոնց բոլորի նախաձևն է հնխ.* pel- *«փոշի, ալիւր, խիւս» (*Pokorny 2, 60, Ernout-Meillet *էջ 748)։*

ԳԻՒ.—Վն. փոխինդ, *Ալշ. Երր. Համշ. Մշ. Սեբ. Սլմ. Տիգ.* փօխինդ, *Ախց. Կր.* փօխինճ, *Մկ.* փուխինդ, *Ասլ.* փէօխինք (փէօխի*), *Մրղ.* փօխունդ, *Զթ.* փէխանդ.—*ձ վերջաձայնով՝ Զղ.* փոխինձ, *Դոր. Երև. Շմ. Տփ.*

փոխիճն, Ղրբ. փո՛խէճն, ՀՃ. փէխիճն.—*իմաստի տարբերութեամբ էլ՝ Արբ. «չոր թութի ալիւր», Մշ. «ձէթ հանելու համար ծեծած կտաւատ».—նոր բառեր են* փոխնդխաշ, փոխնձացու, փոխնդուտ:

ՓՈԽ.—Քրդ. poxin *կամ* poγin *«հրուշակի նման քաղցր մի խմորեղէն»* (*տե՛ս* Justi, Dict. Kurde 83, 84):

ՓՈԽՕՍԵԱԼ *«կորուսեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 324:*

ՓՈՄՈՐԵԱԼ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Եւագր. էջ 86. «Տկարութիւն լսելեաց բանսարկութեամբ փոծորեալ (այլ ձ. փոնորեալ)». յոյնն ունի ըստ համեմատութեան Սարգիսեանի՝* διορύττων, *որ է «փորել, ծակ բանալ, փխբ. աւրել, եղծանել»:*

ՆՀՔ մեկնում է «պղտորեալ կամ աղտեղեալ», ՋՔ չունի, իսկ ԱՔ փոծորել *«պղտորել»:—Կողբի բանսարկութեամբ բառից հեռացնելով Բառ. երեմ. էջ 324* փոծորել *«բանսարկել», որից ՓՔ* փոծորել *«քսու լինել»:*

ՓՈԿ, ո *հլ. «կաշիի նեղ և երկար շերտ» Ես. ե. 18. Գծ. իր. 25. Սիրաք լգ. 27. Եւս. պամ. 162 (յգ. սեռ.* փոկոց*). Փիլ. «ծեծի յատուկ կաշեայ խարազան» Պամ. աղէքս. Նոնն. Մխ. երեմ. որից* փոկաճանապիւն *«կաշեգործութիւն» Ոսկ. մ. ք. 27.* փոկակապ *Ուռհ.* ոսկեփոկ *Ճառընտ.* շիկափոկ *Վիպաս. (Խոր. բ. 47).* փոկեայ *Մծբ.* փոկաձև *«կաշեայ վրան կարող» Ճառընտ. ևն:*

Տէրվ. Altarm. *58 փակ արմատի հետ՝ որ տե՛ս: Հիմնք.* փոկ *անասունի անունից:*

ԳԻՒ.—Ալշ. ՀՃ. Մշ. փոգ, *Գոր. Ղրբ. Շմ. Կր.* փօկ, *Երև.* փօգ, *Ագլ. Մկ.* փուկ, *ՋՔ.* փիւգ, *բոլորն էլ «կաշեայ փոկ». փխբ. Սեբ.* փէօգ *«տխմար մարդ».—նոր բառեր են* փոկամայր, փոկաբար, փոկացու, փոկեմաղ, փոկել, փոկով *(վերջինս Սեբ.* փօգօվ *«ծոր. գիւղացի, անուս»):*

**ՓՈՒ, ի–ա հլ. «երկակենցաղ մի անասուն, ծովահորթ» Վեցօր. 138, 141 (սեռ.* փոկաց*), Եզն. Վանակ. հց. որից* փոկոտն *«փոկ անասունի նման ոտքեր ունեցող» Խոր. աշխ. Պամ. աղէքս. 142:*

=Յն. φώκη, *որից նաև լտ.* phoca, *ֆր.* phoque *են՝ նոյն նշանակութեամբ. ծագում է հնխ.* phōu- *«փչել» արմատից (*Boisacq *1044):—Հիւբշ. 387:*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՔ և ՆՀՔ, յետոյ Peterm. *25, 38: Պատահական նմանութիւն ունի ճապոն.* 河豚 fugu *«ծովային շուն»:*

ՓՈՂ *«նեղ անցք». ճոխ ածանցներով աճած մի արմատ է. նախնական «նեղ անցք» նշանակութիւնից փոխաբերաբար և լայնաբար բխում են «1. կոկորդ, շնչի և կերակրի անցքը» (ի հլ. անեղաբար) Ա. Թգ. ժէ. 35. Յուդթ. ժզ. 11. Ագաթ. «2. ընդունք, քթի երկու անցքերը կամ ծակերը» (ո հլ.) Յս. որդի. «3. տան մէջ սրահի առջևի անցքը, միջանցք» Բուզ. ե. 6 (ըստ Թորամանեանի (նամակ 1912 մարտ 21) հին հայոց ճարտարապետութեամբ պալատներն ու ապարանքները միայարկ էին. շէնքի մէջտեղից անցնում էր միջանցքը, որ փող էր կոչւում և ամբողջ շէնքը երկու մասի էր բաժանում. այս փողի վրայ էին բացուած թէ՛ արտաքին մուտքերը և թէ սենեակներից ոմանց դռները. լոյսը տարածւում էր երդիքից. սրա համար փողի բարձրից բացուած էին լուսամուտներ, որոնք լուսիջոյց (Բուզ.) էին կոչւում, մինչդեռ ուղղահայեաց պատերի վրայ բացուածները պատուհան կամ լուսանցոյց էին կոչւում). «4. այգիների միջև նեղ ճամբայ» Օրբել. «5. խողովակ, ջրի փողրակ, եղէգ» (ո հլ.) Ագաթ. Կոչ. Խոր. «6. շնփոր, սրինգ, խողովակաձև երաժշտական փչողական գործիք» (ո հլ.) ՍԳր. Ոսկ. ա. տիմ. «7. ազդարարող, քարոզիչ (առաքեալները)» Շար. ևն: Նշանակութեանց զարգացման համար համմ. պրս.* بوری bōrī *և ռուս.* труба *«խողովակ, շնփոր», յն.* αὐλός *«սրինգ, խողովակ, երկար անցք»,* αὐλών *«փոս ու երկար անցք, ձոր, ջրի փողրակ, խողովակ»: Այս զանազան նշանակութիւններից են կազմուած՝ փողակ «կոկորդի երկու անցքերը, շնչափող» Սեբեր. «մասունք պահելու խողովակաձև մի աման» Ճառընտ. փողաճար Մծբ. կամ փողար Դ. Բագ. ժա. 14. Մաթ. թ. 23. Ոսկ. մ. դ. 16. Բուզ. դ. 20.*

փողաւոր «շատակեր» Պատմ. աղէքս. փողերաւակ «շնչերակ» Նիւս. բն. Վստկ. «ջրի խողովակ» Միխ. աս. 80 (որ և փողոտակ, փողրակ Կանոն. Ոսկիփ. Վստկ. 144), փողոց «քուչա, սոխախ» ՍԳր. Եւս. պատմ. Ոսկ. երր. «սեռեակների առջևի միջանցքը» Մամիկ. 25. «կոկորդ» Վրդ. առ. 6, 131. «երկու շարք կանգնած մարդոց միջև բաց թողուած տարածութիւնը, որով շքադիր անձը պիտի անցնի» Լմբ. մատ. 201. փողոց տալ «ճամբայ բանալով երթալ» Մամիկ. փողել «փող փչել» Վկ. գէ. 36. Յայտ. Պղատ. օրին. «յառաջ անցնիլ, խմբով առաջ երթալ» Ա. մկ. ե. 42. ժզ. 6. Ագաթ. (հմմտ. փողոց տալ ոճը). սրանի՞ց է նաև փողել «վեր բարձրանալ» Վեցօր. ա. 14 (գետնից բարձրացող գոլորշու համար է ասում), «վեր ցատկեցնել» Քերդ. քեր. 160—161, փողոտել «վիզը կտրել» ՍԳր. Եւս. պատմ. fրաւփող Փիլ. լին. Վստկ. շնչափող Կոչ. 228. Փիլ. ներաւփողոց Վեցօր. ողնաւփող Նորագիւտ բ. մնաց. ժբ. 33. լայնաւփողոց Նիւս. կազմ. Վրդն. պատմ. վաճառաւփողոց Վրբ. հց. Մաշկ. երեխփողոցեան Տեսիլ դան. էջ 118. խոչաւփող Նիւս. բն. ոսկեփող Ոսկ. ապաշխ. տաւփողել Շար. Գնձ. տողան «տան մէջ նրբանցք» Սամ. անեց. 111 (նորագիւտ բառ). փողկապ (նոր բառ) ևն։

ԳԴ փող «շեփոր» դնում է պրս. (արաբ.) بوق būq «եղջերեայ փող տէրվիշաց»։ ՆՀՌ իրարից զանազանում է փող «պարանոց» լծ. Բրք. պօղազ, պօյն, լտ. faux, և փող «շեփոր» լծ. Բրք. պօռու, պրս. պուրը, արաբ. būq, լտ. buccina. իսկ փողոց «Բերևս ի նմանութենէ պարանոցի և կրճի, լծ. և պողոտայ, յն. փլադիա՛ լտ. ֆո՛ռում»: Peterm. 17 փող «կոկորդ»=լտ. collum «վիզ»։ Տէրվ. Altarm. 5 փող «շեփոր», հմմտ. փուֆ, փչել ևն։ Justi, Dict. Kurde 75 քրդ. persiw «հարբուխ» կցում է հյ. փողացաւ բառի հետ! Հիւնք. փող «կոկորդ»=Բրք. պօղազ և պօռու, փող «փողոց»=յն. πόρος «անցք», տճկ. պօղազ: Karst, Յուշարձան 429 Բրք. ol-uq «խողովակ»։ Թիրեաքեան ՀԱ 1912, 288 փողրակ՝ նոյն ընդ խողովակ, Բազմ. 1913, 342 փող «կոկորդ»=Բրք. boγ-az:

ԳԻՒ.—Մշ. փող «կօշիկի կամ գուլպայի ճիտք», Բլ. Մշ. Վն. փող «սրինգ», Հմշ. փօղ «նեղ անցք վարտիքի եզերքին կարուած, որի միջով խոնջանն է անցնում», Մկ. փուղ «սրինգ», Ագլ. փուղ «մի փողոցի յատուկ անունը».—Ակն. փօխգ «կոկորդ» (որ է փողի), Ջղ. փոխկ «վարտիք», Երև. Ղրբ. փօխկ, փօխկէրէ «վարտիքի ծայրերը», Ախք. փօխ «շալվարի վերևը մէկ քիլ լայնութեամբ կտորից կարուած առանձին մաս, որից խոնջանն է անցնում» (Ազգ. հանդ. Ա. 230). Վն. փողան, Ալշ. Մշ. փօղան «փողոց» (փողրան ձևով յիշում է Բառ. երեմ. էջ 272).—Վն. փուղոց «ճեմիշ, արտաքնոց», Սլմ. փօղոց, փօղղոց «աղբանոց», Տփ. փօղօց «բազար, շուկայ», Կր. փօղօց «փողոց».—Մշ. փօղրագ, Մկ. փուղրակ, Ալշ. փօղրանգ, Ախց. Կր. փէօղրոնկ, Խոջ. Սեբ. փօրղանիճ, Խրբ. փօրղէնի՛, Ակն. փօողագ.—նոր բառեր են փոնդուռ (իմա՛ փողնդուռ<փողանդուռ) «փողոցի դուռը», փողհակասլ, փողհատար, փողհիկ, փողհաճուղ:

ՓՈԽ.—Վրաց. ფოლოქი փոլոքի «փողոց, շուկայ, հրապարակ, փլատակներ» Ղուկ. ժդ. 23 (նախ Աճառ. Արրտ. 1898, 314 բ, յետոյ Մառ, Грам. др.-арм. 5, որ համարում է հայերէնի հատարակ տառադարձութիւնը). խմաստի համար հմմտ. Գնձ. փողոցի «գիւղամէջի փոքր հրապարակ», Տփ. փօղօց «շուկայ»։ Հայ. գւռ. ձևերից են փոխառեալ Բրք. գւռ. Ատն. և Եւդ. pöhreng, Ակն. poryeng «փողրակ, ագուցայ, ջրի կաւէ խողովակ»։ Հայերէնից է փոխառեալ նաև կապադովկ. προυχάγκι, προχάγκι, որ Karolides, Γλ. συγκρ. 208 այսպէս է բացատրում «ὁ μακρὸς καὶ στενὸς πόρος, δι'οὗ τὸ βάθος τοῦ ὑπογείου κριβάνου συγκοινωνεῖ πρὸς τὸν ἀέρα» (երկար և նեղ անցք, որով ստորերկրեայ Թոնրի յատակը հաղորդակցում է օդի հետ). այս բացատրութիւնից հասկացւում է որ προυχάγκι մեր «սնդուն» է, ինչպէս որ կապադովկիան այլ բարբառներ էլ կոչում են sunda, suntul<սնդուն. այս իմաստով ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր փողրակը (գւռ.

փորղաճ ձևից առած). այնպէս որ ի դուր Karolides, անդ 97 և 208 նրա ծագումը փնտրում է հյ. փորել, բրել, յն. πόρος, լտ. porta և մինչև անգամ. piparmi «անցուցանել» են բառերի մէջ։—Պատահական նմանութիւն ունին վրաց. ფუქე փուղ'ե «ծակ, պարապ», արևել. թրք. بوغ buγ «փող, շնփոր», بوغچی buγči «փողահար», արաբ. بوق būq «շնփոր»։

*ՓՈՂ, ո հլ. «մանր դրամ, ստակ» Սմբ. դատ. 49. Սամ. անեց. 73. Վրք. հց. Ոսկիփ. «դրամի ամենամանր ստորաբաժանումը» Անսիղք 43, 47. որից փողեան «դրամներ» Վրք. հց. լումափող Ոսկիփ. նոր դրականում փողերաանց «դրամ կտրելու յատուկ հաստատութիւն» (արդէն գործածուած է 1792 թուին՝ Քերականութիւն Թօսքաննեան լեզուի, Վենետ. էջ 40), փողասէր, փողապաշտ, փողատէր, աճփող են. (վերջիններս գործածական են միայն արևելեան գրականում, ուր սովորական է նաև փող «դրամ» բառը, որ անծանօթ է արևմտեանին)։

=Պրս. پول pūl «մանր դրամ, լումայ», որ Արևելքի մէջ շատ տարածուած բառ է. համմտ. վրաց. ფოლი փուլի, ფული փուլի «դրամ», քրդ. pūl «մէկ ստակ», արևել. թրք. և շաղաթ. پول pul «5 փէնս արժող դրամ և ընդհանուր առմամբ՝ դրամ», թրք. پول pul «1/6 ստակ=1/720 դահեկան=1/90 կոպէկ, որ հին ժամանակ գործածական դրամ էր», ատրպ. pul «դրամ». դնչ. polia «մի քանի տեսակ ոսկեդրամներ» են։ Այս բոլորի մայրը պրս. pūl բառն է, որի հնագոյն և առաջին իմաստն է «ձկան թեփ», նմանութեամբ յետոյ դարձել է «դրամ»։ Այս իմաստը պահում են դեռ թրք. pul «ձկան թեփ», պրս. նուազական پولک pulak «ձկան թեփ» և յատկապէս Ղրբ. փող «ձկան թեփ», որի ղ ձայնը ցոյց է տալիս՝ որ բառիս այս իմաստը հայերէնի մէջ էլ շատ հին է։ Տե՛ս նաև վերը փիւղ։ Նշանակութեան զարգացման համար համմտ. պրս. pišīz «թեփ. 2. դրամ»>հյ. փշիտ։

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 182 յն. φόλλις «մանր դրամ» բառից։ ԳԴ պրս. pūl բառից։ ՆՀԲ «որպէս ռմկ. փուլ, ֆուլ, ֆիւլիւզ, յն. φο΄λλις, օվօլօ՛ս, լտ. ovo΄lus»։ Հիւնք. պրս. pūl, Հիւբշ. 387 դրած է յն. φόλλις «մանր դրամ» բառից, որ փոխառեալ է լտ. follis «կաշիէ քսակ, մի քսակ դրամ» բառից (կապ չունի յն. φολίς «աղուննների թեփ» բառի հետ որին ուրիշ ծագում է տալիս Boisacq 1033). բայց այս յոյն ձևը հազուագիւտ ու անսովոր մի բառ է և հաղիւ թէ մինչև Հայաստան տարածուած լինի։ Միւս կողմից փող բառի արդի գործածութիւնը միայն Կովկասի հայոց մէջ՝ նշան է թէ բառը իրանեան է։

ԳԻՒ.—Ջղ. փող «1/2 շահի դրամ», Սլմ. փող. Շմ. երև. Ղրբ. փօղ, Տփ. Ագլ. փուղ, Մրզ. փըղ «դրամ», Սեբ. փէօղ «բաղնիսին վճարելու դրամը!»—Նոր բառեր են փողասակ, փողակաչ, փողակապ, փողահաջ են։

+ՓՈՂ, որից փողել, փողփողել «փայլիլ» տե՛ս Փայլ։

ՓՈՂԱԽ «մի տեսակ վնասակար միջատ է». տե՛ս Ալիշան, Հին հաւ. 155։

ՓՈՂԱՀԱՐՑԵԱԼ «համեմատական», ունի միայն Բառ. երեմ. էջ 324։

ՓՈՂԵԼ «հիւսել», որից ունինք փողիլ «հիւսուիլ, իրար անցուելով ընդելուզուիլ» Նար. Մագ. «հիւսուիլ, ոլորուիլ բրդի» Վրք. սեղբ. 781. կրկնութեամբ փողփողել «իրար հետ հիւսել, ընդելուզել» Ել. լթ. 15, 17. Ագաթ. սասունական ս նախդիրով՝ սփողել «ընդելուզել» Մագ. թղ. 204 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 206)։

ՓՈՂՈՇ «մուէնա կոչուած պատուական ձուկը, որ նման է օձաձկան. murène», Բռ. առեփ. լեհ.։

ՓՈՂՈՇՈՒԿ «կանացի մի գլխազարդ» Թուց լտ. 50. Վրդ. Թուց. (ըստ Հացունի, Պատմ. տարազի 127 մազերը գլխի վրայ բռնելու համար)։ Այս բառն է որ Բռ. երեմ. 325 գրում է փողոշուկ և մեկնում է «մանեակ» (թերևս աղբիւրն էր «մանեակ») և քիչ յետոյ էլ փողոր «շուրջ մանեակ»։—Սրանցից դուրս ունինք փողփողոշաձև, փողողոշաձևաբար, փողոշաձևաբար, որոնք ըստ ՆՀԲ «ի նիւս. կազմ. երկիցս դնի իբր

յն. σωληνοειδῶς «խողովակատեսակ» և αὐλοειδῶς «փողաձևաբար»։ Այս պարագային յիշեալ ձևերը ծագած պէտք է դնել փող «խողովակ» բառից՝ -ոլ մասնիկով (համմտ. գոլոշի, լայնշի)։—

Նշբ ռմկ. լծ. ֆիլիզիկ, զիլիֆ կամ բելլի փուլլու։ Հացունի, անդ, յն. φλόος «կճեպ»։

ՓՈՂՈՐԴ–, որից փողորդաձգութիւն «դուրս ցցուած կորութիւն» (թութակի կտուցի համար է ասուած) Կղնկտ. Հրտր. Շահն. Ա. 322։

Աբ հանում է փող «շնփոր» բառից և դնում է «փողի պէս ձև՝ կորութիւն», որ յարմար չի գտնում Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 39։

Փողփողել «փայլիլ» տե՛ս Փայլ։

Փողփողել «հիւսել» տե՛ս Փողել։

—ՓՈՃՈՒ, ի–ա հլ. «կեղև» Վեցօր. 87, 88, 99, որ և փեճեկ, փեճուկ, փճուճ, փչոճ Նար. երգ. 338, Երզն. մտթ. 304. Ոսկիփ. Վստկ. 127, 204, փչոկ Տաթև. ձմ. ճծա. որից փեճուկել, փոճուկել «կեղևել» Փիլ. նխ. բ. 51. Նոնն.։

=Շրջուած է կենալ, խեճեալ համանիշից, որ տե՛ս առանձին. նման ձայների շրջման իբր օրինակ համմտ. նեպռել> փեճուել «խոտը փրցնելով քաղել»։— Ա.Ճ.

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ. 1909, էջ 159։ Petersson, Ar. u. Arm. Stud. 108 արմատը դնում է հնխ. sped- «պոկել, փրցնել», որից հյ. փեռել և փեռուռ, իսկ սրա *spedio- ձևից փեճեկ, (-եկ մասնիկ է)։

ԳԻՒ.—Սրանի՞ց են փեճեկել Տիգ. «տրորելով մանրել», սաստկականը փեճկռուել Տիգ., նաև փեճկել Խն. Խրբ. նեպկել Խն. «փետել, փետրատել, փեթռտել», իսկ Rivola² 320 ունի պեճկել և նեպկել «փետրատել»։—Բառիս վստահելի ներկայացուցիչն է Շմ. պիճուկ¹ «կճեպ, կեղև»։

ՓՈԽ.—Պատահական պէտք է համարել չաղաթ. արևել. թրք. پوچاق pučaq, بچاق bučaq, پوجاق puǰaq, پوچقاق pućqaq «մորթ կամ պտուղի կեղև» (Будаговъ 1, 244, 321, 804)։

+ՓՈՅԹ, ո հլ. «ջանք, ճիգ, հոգատարութիւն, աշխատասիրութիւն» ՍԳր. Եփր. ծն. Եւս. պտմ. և քր. Ոսկ. «աճապարանք, ըշտապում» Եզն. 19 (առ փութի), «աշխատատէր, ջանացող» (ի հլ.) Ոսկ. մ. ա. 17. Վեցօր. որից փոյթ առնել– փոյթ ունել «ջանալ, հոգ տանիլ» ՍԳր. Բուզ. փոյթ ի փութոյ «շուտով» Եփր. թգ. 430. փութալ «շտապել» ՍԳր. Ագաթ. փութաճակի ՍԳր. Եւս. քր. Ագաթ. փութագոյն Ոսկ. ես. և Կողոս. Կիւրղ. ծն. փութկոտ Եւս. պտմ. փութոտ Եւագր. անփոյթ ՍԳր. Սերբհր. Ագաթ. բազմափոյթ Ոսկ. ժ. կուս. երագափոյթ Մծբ. մեծափոյթ Եփր. թգ. 418. յօժարափոյթ՝ Մծբ. տագնապափոյթ Ագաթ. փութաթայլ (չունի ԱԲ) «արագընթաց» Յայսմ. սեպ. 20. փութաջան, անփութօրէն (նոր բառեր) ևն։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. speud- «ճնշել, արտորցնել, շտապել» արմատից. ժառանգներն են յն. σπουδή «խնամք, ջանք, փոյթ, հոգածութիւն», σπεύδω «շտապել, փութալ», σπουδαῖος «փութկոտ, ջանասէր», ալբան. pune «գործ, աշխատանք» (<*spudna), կիմր. ffwdan «շտապումն, փութկոտութիւն» (Zupitza BB 25 (1899), 104), լիթ. spudinti «շտապել, փախչիլ», spaudžiu «ննջել, ճնշիլ», spūdėti «ննջութիւն քաշել», spaustùve «մամուլ, քամիչ», լտ. pudet «ամաչել» (Ernout-Meillet 782)։ Հայերէնի մէջ դժուարութիւն է յարուցանում վերջաձայն p (փխ. u), որ կարող է մեկնուիլ կա՛մ նախաձայն փ-ի ազդեցութեամբ և կամ (ըստ Meillet MSL 10, 277) հնխ. պարզ արմատը դնելով speu-, որից d աճականով speud- և t աճականով էլ speut-> հյ. փոյթ (Pokorny 2, 659, Boisacq 895, Trautmann 273—4)։ —Հիւբշ. էջ 501։

Tromler, Disputatio (1759 ՔՀ) էջ XXIV փոյթ բառի հետ է կապում եդիպտ. Potiphar անունը (ըստ Karst, Gesch. d. Arm. Phil. էջ 2)։ Նշբ լծ. յն. σπουδή, յորմէ լտ. studium: Bopp, Gram. comp. 3, 106 սանս. pathāmi «երթամ»։ Տէրվ. Altarm. 4 յն. σπεύδω։

Հիւբշ. ZDMG 36 (1882), 117 յն. σπουδή, ուր δ-ը թէև անկանոն է, բայց բաւական պատճառ չէ համեմատութիւնը մերժելու։ Նոյն, Arm. Stud. § 284 կասկածով յն. σπουδή։ Տէրվիշ. Նախալ. 115 յն. նաև լտ. studeo «ջանալ, հոգ տանիլ», գերմ. sputen «փութալ, շտապել» բառերի հետ հնխ. spud արմատի տակ։ (Յիշեալ լտ. և գերմ. բառերը առաջ կցում էին յն. յիշեալ արմատին, բայց այժմ տարբեր արմատի տակ են դնում, տե՛ս Walde 746, 729)։ Յն. σπουδή բառի համեմատութիւնը ընդունում են նաև Bartholomae BB 17 (1891), 99, Bugge IF 1 (1892), 455 (δ=բ համեմատութեան համար տպագոյց է բերում պայքել=սանս. bhēdá), Zupitza BB 25 (1899), 104 և ի վերջոյ Հիւբշ. Arm. Gr. 501 (կցելով նաև լտ. studeo)։—Հիւնք. յն. βοήθω «օգնել»։ Մերժում է յն. բառի համեմատութիւնը Pedersen, Նպաստ 10, որովհետև չի ընդունում sp>փ և δ=բ յարաբերութիւնը։ Այսպէս նաև Persson, Beiträge էջ 416, որ փոյթ կցում է յն. σφύζ-արմատին, որ է «զարնել, ուժով խփել» (Boisacq 931)։ Ընդունում է Petersson, Ar. u. Arm. Stud. 61—62 հայերէնի նախաձևը դնելով sphoug-to- և իմաստի զարգացման համար համեմատելով լտ. studeo «ջանալ»=գոթ. stautan «խփել, հարուածել»։ Պատահական նմանութիւն ունին վրաց. փոթեբա «վախեցնել, անհանգստացնել», գափոթեբա «շփոթիլ, անհանգստացնել»։

ՓՈՅՏ «խաղողի որթի մեծ ուռերը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. էջ 50. «Բայց մենիաս մանկիս շատ փոյտ պարտ է թողուլ ի հօտելն»։

ՓՈՅՐԿԻՆՋ «անկողի՞ն». անստոյգ բառ. որ Նորայր, Կոր. վրդ. 342 մի անգամ գործածուած է համարում Բուզ. Դ. ժև. «Յայնժամ թագաւորն զիւր սամոյրսն զգլխովն ածեալ, ի փոյրկնջանն մտեալ, զիւր դէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ». տպ. ունի ի փոյթ կնջանն. Նորայր այսպէս սրբագրելով՝ նորահնար բառը կցում է սանս. paryanka «անկողնի տախտակ, անկողին» ձևին, որ յամենայն դէպս չի կարող կապ ունենալ վերինի հետ։

Նահապետեան, Բազմ. 1906, 445 կնջանն ուղղում է նջմանն։ Աւգերեան, Բազմ. 1909, 158 կարծում է թէ լտ. sedile «գահոյք» բառը թարգմանիչը հասկացել է sedule «ի փոյթ, ջանիւ»։

ՓՈՇԻ (–շւոյ, –շեաց) «թօզ» ՍԳր. Վեցօր. Սեբեր. որից՝ փոշոտ Կոչ. փոշոտիլ Ոսկ. ես. Ագաթ. փոշաջուր Պիտառ. կամ փոշեջուր Վստկ. փոշեեռակ Մագ. Սարգ. փոշիանն Անան. եկեղ. փոշեթաթախ, փոշիանման, ղեղափոշի (նոր բառեր) են։

=Տե՛ս փշուր բառի տակ ասուածները։

Klaproth, Asia pol. 105, 201 վօգուլ. pošox, սիրյ. պերմ. buš «փոշի» բառերի հետ։ ՆՀԲ փշրել բայի՞ց։ Böttich. ZDMG 1850, 363, Arica 81, 350, Müller SWAW 38, 579, Justi, Zendsp. 195, Տէրվ. Altarm. 7, Նախալ. 94, Հիւբշ. KZ 23, 19 կցում են սանս. pāsú-, գնդ. pąsnu «աւազ, փոշի», հսլ. pěsŭkŭ, ռուս. песокъ «աւազ» բառերին, որոնք Հիւբշ. Arm. Stud. § 283 կասկածով միայն նշանակում է, իսկ Arm. Gram. 501 բոլորովին մերժում է։ Karolides, Γλ. συγκρ. 100 կպգովկ. φὸς «փոշի», յն. φε, φυ, θε, θυ, լտ. fumus, յն. θύος, սանս. dhus «ծուխ» և հյ. փչել բառերի հետ։ Հիւնք. շփել բայից։ Thomaschek, Deutsche Littz. 1883, էջ 1254 ուս. phos ձևի հետ։ Patrubány SA 1, 197 գերմ. spuck «թուք», իսկ ՀԱ 1908, 313 *phū- «փչիլ» արմատից։ Pokorny 2, 68 յիշելով սանս. pāsú- ևն խոսքը, հայը դնում է փոխառեալ։

ԳԻՒ.—Ջղ. փոշի «խմորը թաթախելու աւիւր», Ալշ. Մշ. փոշի «մոխիր, աւիւրի փոշի», Երև. փոշի «սպասի աւիւր», Սեբ. Սչ. Տփ. փոշի, Ասլ. փէօշի «փոշի», Սլմ. փէօշի «աւիւր», Խրբ. Տիգ. փոշի «մոխիր», Մկ. փուշը՛, Ղրբ. փուշի «խմորը թաթախելու աւիւր», Սվեդ. փիշա «փոշի»։ Նոր բառեր են փոշաման, փոշաճամ, փոշաճոտ, փոշա-

բուխ, փոշեկ, փոշեճաճ, փոշեռուն, փոշևոր, փոշինայ:

ՓՈԽ.—Վրաց. ფოშო փոշի *«խնկի փոշի» (Ջուբինով[2] 1313), կպդովկ. յն.* φὸς *«փոշի» (*Karolides, Γλ. συγχρ. *99), բոհեմ* poš, puš *«փոշի»* (Vaillant, Gram. Bohem. 123), *գնչ.* posik *«հող, գետին»* (Paspati)։— *Գնչ. բառը* Ascoli, Zigeun. *10 կցում է ռուս.* posva *«գետին» (իմա՛* почва!*) և բոհեմ.* puda *ձևերին,* Paspati *սանս.* puš *«խնամել, մեծացնել» արմատին, որոնք անյարմար են.* Müller SWAW *66, 278 առաջին անգամ դրաւ հայերէնից փոխառեալ, մինչդեռ Հիւբշ.* Arm. Stud. *§ 283 հակառակն է դնում։*

*ՓՈՇԻՄԱՆ *«զղջացեալ» Ադամ. 291, Թլկր. 45, Քուշ. 64, որից* փոշիմանութիւն *«զղջում, ստրջանք» Ադամ. 252, Մխ. ապար. (գրուած* փոշէմանութիւն *Մ. մաշտ. 339),* փոշիմանիլ *«զղջալ» Նոր վկ. էջ 195, Տաթև. ձմ. լէ. Յայսմ. փետ. 14, Ադամ. 19, 38, 215, 227, 276,* փոշաման, փոշամնիլ *Անսիզք 83, Սմբ. դատ. 92,* փոշամնչէք *«միտքը փոխելու կամ պայմանը քանդելու առթիւ տուգանք» Սմբ. դատ. 128։*

=*Պրս.* پشیمان pašīmān, *Թրք.* پشمان püsman *«զղջացեալ», որի վրայ ընդարձակ տե՛ս փաշաման: Վերջինս հին փոխառութիւն է, մինչդեռ փոշիման շատ նոր է։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

Փոշիշ *տե՛ս Փուրսիշ։*

—**ՓՈՇԿ** *«թրիք». որից ունինք միայն* փոշկացեալ, *որ մէկ անգամ գործածում է Փիլ. լիւս. էջ 165. «Եւ ծիծառանց ձագք զփոշկացեալ կերակուրն յետս դարձեալ ի բաց ընկենուն»։ Այլուր նոյն բառի տեղ գործ է ածում* թրացեալ, *որով* փոշկացեալ *բառի իմաստը ճշտւում է։—Թերևս* *փոշիկ?

=*Ածանցուած է* փոշի *բառից, նկատելի է որ «փոշի» նշանակող բառերը նաև «աղբ» իմաստն են ստանում. ինչ.* փիր *և* փուր, փսուր *«փշրունք և ապաւառ»,* ցաճել *և* ցաճ *«աղբ»—Աճ.*

ՆՀԲ մեկնում է «իբրև զփոշի եղեալ, մարսեալ, թրքացեալ որպէս ապաւառ և ծիրտ»։ Նոյնը նաև ՋԲ։ Վարդանեան ՀՍ. 1910, 283 կցում է բոժգուբիւն *«մէջը փուտ լինելը» բառին։*

Փոշտ *տե՛ս Բուշտ, որից* փոշտանկութիւն: *Գիրք մոլութ. 93 ա։*

Ջուբինով[2] 1320 վրաց. ფუშო *փուշի «кила աղեթափութիւն» բառը դնում է Հայերէնից փոխառեալ. երևի ուղում է հասկանալ Հյ.* փոշտ–փոշտանկ: *Յամենայն դէպս այս բառը կապ չի կարող ունենալ վրաց.* փուշի *ձևի հետ։*

ՓՈՒՆԱԿ. *Նորագիւտ բառ՝ անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 89. «Բարկութեամբ զարթեաւ ի վերայ զօրացս իւրոց գալ և հանել զփոռնակական զայն, որ տիրեալ էին գաւառիս մեր և պատառէին զամենեսեան իբրև ղչար գազանս»։ Անշուշտ «գազան» կամ նման իմաստով մի բառ է։*

ՓՈՍ, ո, ի Հլ. «փոս տեղ, փորուած տեղ. 2. ջրի անցք, խրամ» Ես. իէ. 12. Եզեկ. իզ. 8. Ագաթ. որից փոսել *Ագաթ.* փոսացուցանել *«փորել» Ագաթ.* փոսեալ *Մամիկ.* փոսափորել *Վրդն. ծն.* փոսաձեռն *Ճառընտ.* դարափոս *Եղիշ. ևն։*

=*Ծն.* φόσσα *«փոս» բառից, որ փոխառեալ է լտ.* fossa (>*իտալ.* fossa, *ֆրանս.* fosse*) «փոս» բառից. այս էլ ծագում է լտ.* fodio *«փորել» բայից. յունարէնից է նաև ասոր.* ܦܣܐ pasā *«փոս»։—Հիւբշ. 387։*

Այսպէս մեկնեց նախ S. Martin, Mém. 2, 395: *ՆՀԲ «որ և լտ. ֆո՛սսա», իսկ* բել *բառի տակ «լծ. լտ.* fodio *փորել»։* Pictet *2, 268 ալբան.* pus, *պրս.* pūtah, *լտ.* puteus *ևն։* Lag. Arm. Stud. *§ 2305 յն. և լտ. ձևերի հետ։ Տէրվ. Մասիս 1881 ապրիլ 27 լատինից է դնում, նոյնը և Հիւնք.։*

ԳԻՒ.—Ալշ. ՀՃ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. փոս, *Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Ննխ. Շմ. Ռ. Սչ.* փօս, *Մրղ.* փրʰu, *Ագլ. Մկ. Տիգ. Տփ.* փուս, *Համշ. Սեբ.* փէօս, *Ասլ.* փէօ՝ս, *ՋԲ. Սվեդ.* փիւս:—*Նոր բառեր են* փոսիկ, փոսաչքանի, փոսելուկ:

ՓՈՀ.—Վրաց. ფოსო փոսո *«փոս» (հայերէնի ո բունով),* ფოსოვი փոսովի *«փոսիկ, ճամբի վրայ ծակ»,* ფოსოანი փոսոհանի

«փոսոտ, ուր որ շատ փոսեր կան»։—Յն. Ագաթանգեղոսի մէջ (Հրատ. Lag. էջ 12) հայ. դրուելս փոսից ձևից տառադարձութեամբ կազմուած է φοσέων πύλας։

*ՓՈՍՈՒՈՒԱՅ «կայծորիկ» Շիր. էջ 50, ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. *փաշսուրձ հոմանիշ բառից, որ կազմուած պիտի լինի փῶς «լոյս» և οὐρά «ապի, պոչ» բառերից. բայց այս բառը յոյն մատենագրութեան մէջ առնդուած չէ՝ ո՛չ հին, ո՛չ բիւզանդական և ո՛չ էլ նոր շրջանում. կազմութեան կողմից համմտ. πυγολαμπὶς և λαμπυρὶς «լուսատունիկ»,—Հիւբշ. 387։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՓՈՍՏ «չափ է. սափորի $^1/_{10}$ մասը» Նչ. Եզեկ. ուրիշ վկայութիւն չկայ։

ՓՈՎԱՂԱՅ «գործուած». ունի միայն Բռ. երեմ. էջ 325։

ՓՈՎԿԱՍԱՆ «տաք երկրների յատուկ մի տեսակ մեծ սողուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 127. «Եւ փովկասած յոլովս և մեծամեծս տեսաք որ սողային յերկրի»։

ՓՈՐ, ո հլ. «ծակ, պարապութիւն, մէջը փոս տեղ» Ոսկ. Եփես. (Մինչ ընդ միմեանս մածեալ իցեն քարինք շինուածոյն և չկայցէ ինչ փոր). «սին, մէջը ծակ, սնամէջ, պարապ» Վեցօր. 88. «որովայն, արգանդ, սիրտ, ընդերք» ՍԳր. Եզն. Սերբեր. (մարդուս ներսը իբրև մի մեծ խոռոչ ըմբռնելով, համմտ. գոգել «ծակել, փոս բանալ, փորել» և գոգ «գիրկ, ծոց»), «ընդունարան, միջուկ իրաց» (օր. նաւի, սեխի, ամանի) Վրդն. սղ. հը, էջ 267. Ճառընտ. Սարկ. տոմ. որից փորել «փոս բանալ, խորացնել, բրել, կռել կոփել, բանդակել» (յետնաբար գրուած նաև պորել, ինչ. նոր վկ. էջ 317. համմտ. Վն. պորել) ՍԳր. Ագաթ. Եփր. յոր. ՀԱ 1912, 671. «ձգել, երթալ, հեռանալ» Պտմ. աղէքս. (ըստ Տաշեան, Ուսումն. ատոյն Կալիսթ. էջ 201). փորած «փոս, խոռոչ» Վեցօր. փորածոյ Ասող. փորոմ «փոս, ծակ» Նոնն. 69. Աթիստ. աշխ. (որից փորոգիլ «սնանալ» Վստկ. 163), փորուած «խորութիւն» Եզեկ. խգ. 14. Վեցօր. փորագրել Նոր. Փիլ. վիմափոր Բրս. մրկ. Շար. գեռնափոր Երեմ. ը. 11. Ոսկ. ա. տիմ. ժդ. Վեցօր. փորոտի «աղիք, ընդերք» ՍԳր. Կոչ. փորկարսիմ «մարդու փորը կամ ընդերքը (իբր փորի կարասիք)» Մխ. բժշ. 38, 106 (նորագիւտ բառ, որ գտնում եմ երեք անգամ գործածուած), փորանց Բժշ. դարափոր Բուզ. Վեցօր. Կիւրղ. Թգ. հիմնափոր Մծբ. փորանալ «կռանալ, ծռիլ, թեքուիլ՝ յատկապէս նստած տեղից» Վրք. հց. ա. 428 (նոյնի մէկ այլ խմբագրութիւնը՝ Վրք. հց. ա. 492 ունի կորացաւ). փորաճեկեալ ՅՀ. ժԹ. 24. Երզն. մաթ. 594 (աշխ. ձևով փորանկած Շնորհ. եղես. տող 973, իսկ Իրենն. ցոյցք 57 գրուած է «ի վերուստ անկեալ») «միակտուր հիւսած (սպասմուճան)» (հակառակն է փոր ի բաց). փորագրիչ, փորագրութիւն (նոր բառեր) են։ Համմտ. նաև յաջորդը։

Klaproth, Asia pol. 99 և 328 ճապոն. fara, ալբան. bark, թունգուզ. ur, օսթյաք. poroch, perga և կանգաղ bar հոմանիշների հետ կցում է հյ. փոր։ Müller, Armen. VI յն. περάω «ծակել» բայի հետ։ Պատկ. Փորձ 1880 մրտ. էջ 94 ալթայ. پُر pur «ծակիչ»։ Canini, Et. étym. 101 հյ. unr և փորել=իտալ. foro, պելասգ. vörö «ծակ», էջ 224 փոր=խպտ. pera «որովայն»։ Մառ, ЗВО 5, 317 պրս. kanda «փորուածք» բառի հետ? Հիւնք. փոր «որովայն» դնում է յն. φορὸς «կրող, տանող» ձևից, իսկ փոր «փոս, թուրն, ձուկ» խմաստներով՝ հանում է առաջին նշանակութիւնից. նոյնպէս փորանկեալ մեկնում է պրս. վէրէնկ և բէրկեալ «հիւսուած» ձևերից։ Մէնէվիշեան, Արդի լեզ. 44 փոս բառից։ Patrubány ՀՄ 1908, 152 յն. σφαῖρα «կլոր, գնդակ» բառի հետ։ Karst, Յուշարձան 403 սումեր. bar «որովայն», 408 սումեր. ur, bar «փորոտիք», 414 թունգուզ. burguida «բերել, ծակել», մոնգոլ. burgui, բրք. burgu «գլիր», 428 նաբութ. qor «փորել» և qarn «փոր», Թիրեաքեան, Արիահայ բռ. 109 նոյն ընդ բրել։ Պատահական նմանութիւն ունին լտ. forare «ծակել», որի ցեղակիցն է հյ.

բիր, բրել, և արաբ فَأَر fār «փորել» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 62)։

Գիտ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. փոր, Ախց. Դոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սչ. փօր, Ագլ. Մկ. Տիգ. Տփ. փուր, Համշ. Սեբ. փէօր, Ասլ. փէօ՝ր, Սվեդ. փիւր, Ջթ. փիւյ, փիւր, Հճ. փոյ, Մրղ. փր՝ր «փոր, որովայն».—բայածև Վն. փորել, պորել, Ալշ. Մշ. Սչ. փօրել, Ախց. Կր. Ննխ. Պլ. Տիգ. փօրէլ, Ասլ. փէօրէ՝լ, Խրբ. փօրիլ, Տփ. փօ՛րիլ, Համշ. փօռուշ, Մկ. փուրիլ, Ջղ. բ՛որել (աղդեցութեամբ բրել հոմանիշի՝ նախաձայն փ դարձած ՝բ՛) «փորել»։ Նոր բառեր են փոխրափոր (կայ արդէն Էֆիմ. էջ 26), փորաբաց, փորաեղ, փորաճաճուցք, փորաճարիճ, փորամճայ, փորասոք, փորատակ, փորացաւ, փորբարձ, փորթափել, փորխաշ, փորխոց, փորմուտ, փորոց, փորճակ, փորփրել, փորմշտկել, փորսող, փորցուր, փորֆաշ, փորշուկ, փորօք, փորոք «մեղուի փեթակ» են։—Կարևոր է յիշել ֆշփորել «ատամը, ականջը, քիթը խառնել, փորփրել», որից և ֆշփորիկ «ատամխառնիչ». բառիս այլ ձևերն են կշպորել, կշփորել, պշկորել, փշխորել, փշփորել, ֆշպորել, կճպորել, ֆըցպորել, ֆցփորել, որոնց բոլորի նախնականն է պճկորել (կազմուած է -որ մասնիկով պճկել Մշ. «ատամները փորել» բայից), բայց այնպիսի ձևափոխութիւններ է կրած, որ իբր թէ փորել բայից է ձևացած (ֆշփորել=«քիչ փորել»)։

Փոխ.—Վրաց. ფორი փորի կամ ფორო փորո «մարմնի ծակոտիք», ფოროვანი փորովանի «ծակոտի» (սրանք հնագոյն նշանակութեամբ են), բոհեմ. pori «փորոտիք». pir «փոր», puri «աղիքները» (Vaillant, Gram. bohem. 122—3), սպան. դնչ. poriá «փոր» (Campuz), ռումելիի դնչ. per «փոր», per peresa «փոր փորի», peréskero «մեծափոր» (Paspati), բոշ. պեր «փոր, արգանդ», պերը «սիրտ»։

—ՓՈՐ «ձոր, ձորագաւառ». մէկ անգամ ունի Բուզ. Դ. ծե. (Հրտր. Պատկ. 147). «Եւ զայլ դերութիւնս գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, աշխարհի աշխարհի, ածին ժողովեցին ի քաղաքն»։ Աւելի ուշ մէկ անգամ էլ ունի Արծր. Հրտր. Պատկ. էջ 232. «զամուրն Սևանի ի փորն Լմբայ», որի հետ համմտ. ճիշտ նրա մօտին՝ Զամուրն Կոտոր ի ձորն Ընծայից. կամ էջ 275՝ «ի գաւառին Լումբայ կոչեցեալ փորակ» (Ս. Մալխասեան ցանկում վերջին բառը իբր յատուկ անուն է դնում)։ Հնագոյն փոր բառը աւելի ազատ գործածութիւն ունէր, որին ապացոյց են նրանով բարդուած զանազան աշխարհագրական անուններ. ինչ. Զորափոր, Կողբափոր, Մոփափոր, Պարաիզացփոր, Ամեռնափոր, Առսեացփոր, Բակափոր, Բերդացփոր, Կոռոշփոր, Միափոր, Նախաձնփոր, Ուռեացփոր, որոնց հետ կարելի է համեմատել Բալահովիտ, Արճիշակովիտ, Կոգովիտ են։ Նոյնի նուազականն է փորակ «ձորակ, փոս տեղ», որ երկու անգամ գտնում եմ գործածուած Օրբել. «Ընդ ոտնատեղիս երիվարին անուշահոտութիւն բուրեալ զանազան՝ գրեթէ զամենայն զփորակ գաւառին ելից (Հրտր. Էմ. էջ 28). Գոչէին զերգս օրհնութեան այնքան, մինչ լի լինէր փորակ գաւառին իբրև յորոտմանէ ամպոց» (Շահն. Ա. 116.—Էմինի հրատարակութիւնը տարբեր է և չունի այս բառը)։ Նաև նախորդի նման աշխարհագրական անուանց հետ, ինչ. Փառակ Լմբայ (տե՛ս վերը Արծր.), Մարական փորակ, Եւթնփորակեան բագինք։ Նոյնը՝ օտար երկիրների համար՝ ինչ. փորն Ասորոց, Մանգղեաց փոր, Քուշափոր, Բողնուփոր։

=Նախորդ փոր «ծակ, փոս, խորութիւն, փորուածք» բառն է. համմտ. յատկապէս՝ Փորն Ասորոց=յն. ἡ κοίλη Συρία «կղեսուր, խոռոչ Ասորիք» (յն. κοιλία «խոռոչ, փոս, որովայն» բառից)։—Հիւբշ.։

ՆՀԲ փոր մեկնում է «կող, կողմն» և առանց աշխարհագրական անունները նկատի առնելու՝ կցում է փոր «որովայն» բառին։ Էմին, Վահագն Վիշապաքաղ 1874 (նոր տպ. Изслед. и Статьи, էջ 78) կցում է հնդ. փուրա «քաղաք» բառին. համմտ. Սինկափուր, Միրզափուր, Լահիփուր են (Նոյնը կրկնում է Մ. Թումանեան ՀԱ 1911, 524)։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւբշ.

Altarm. Ortsnamen *389, Թրգմ. Հին հայ. տեղույ անուններըը, էջ 287։*

Փոր *տե՛ս Բուռ։*

ՓՈՐ *(յետնաբար n հլ.) «կարապ թռչունը» Օր. ժդ. 16. Վեցօր. ը. 175. Ոսկ. մ. ա. 22 և Փիլիպ. է. Փարպ. Առ որս. (գրուած է նաև* **պոր** *Խոր. բ. 81). որից* **փորաձայ** *«հաւալուսան» Պիսիդ. վեցօր. տող 1098. Բար. էջ 137։*

ՀՀԲ **փոր** *«որովայն» բառից՝ թռչունի մեծ փորի պատճառաւ այսպէս կոչուած։ ԳԴ պրս.* هوبره hūbara *«կարապ», Ինճիճեան, Հնախ. Գ. 22 n բնաձայնից։ Հինք.* **փոր** *«փոս» բառից, որովհետև* **կարապ**=*յն.* κάραβος *«նաւ», «որ գոգաւոր է, իբր մէջը փորուած»։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* **ბორა բորա** *«մի թռչուն»։*

ՓՈՐ *«մի տեսակ ծովային ձուկ, որ իր վընասակարութեան պատճառով յն. կոչուած է* σκορπίος, σκορπίδων, *այն է՝ կարիճ». բստ ՆՀԲ բառս գործածել է Բժշ. բայց վկայութիւնը չէ դրուած, ինչպէս նաև յայտնի չէ թէ յաճախադէպ մի ձև է, թէ միայն մի անգամ գործածուած։ Վերջին պարագային կարող էինք ուղղել* **կոր** *«կարիճ», իբր Թրգմ. յն. բառիւ։*

Նոյն բառը ունի նաև Քաջունի, հտ. Գ. էջ 248, բայց ինչպիսի՛ այլայլութեամբ. «փորձուկ. է ծովու կարիճ». պէտք է կարդալ «փոր. ձուկ է. ծովու կարիճ»։

+**ՓՈՐՁ**, n, ի *հլ. «փորձելը, քննութիւն» ՍԳր. Ոսկ. Կոչ. Եղն. Վեցօր. «փորձուած, տեղեակ, հմուտ» ՍԳր. Փիլ. «արկած, աղէտ» (համմտ. յն. πεῖρα «փորձ, փորձանք») Շնորհ. խոստ. և մաթ. Վահր. ոտ. որից* **փորձել** *ՍԳր.* **փորձանք** *«աղէտ, արկած» ՍԳր. Եփր. ծն. Եղն.* **փորձութիւն** *ՍԳր. Եփր. ծն. անփորձ ՍԳր. Ոսկ. ես. և Եփես.* **փորձապետ** *«սատանայ» Եպիփ. ծն.* **փորձիչ** *«աւազակ, ծովահէն» (նիւթական Թրգմ. յն.* πειρατής *հոմանիշից) Պղատ. օրին. երազ-***փորձութիւն** *Վրք. հց. Կանոն.* **բազմափորձ** *Շիր.* **եօթնփորձեան** *Շիր.* **իննապո՞րձ** *Ագաթ.* **խուզափորձ** *Փիլ. լիւս.* **ճարցափորձ** *ՍԳր. եւս. պտմ. նոր բառեր են* **փորձառութիւն, փորձառական, փորձառու, փորձնական, փորձաբար, փորձարկել, փորձանօք, փորձանակ են։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. phor- *ձևից (ձ աճականով), որ միջին ձայնադարձն է հնխ.* per- *«փորձել» արմատի սաստկական ձևիւ Ցեղակիցներից ունինք յն.* πεῖρα, *նոլ.* πέρρα *«փորձ, փորձառութիւն», ἔμπειρος, ἔμπειρος «փորձառու», πειρᾶν, πειράζειν «փորձել», πειρατής «ծովահէն», լտ.* periculum *«փորձ, փորձարկութիւն, փորձանք, վտանգ»,* peritus *«փորձառու», *perior (որից* experior*) «փորձել»,* experimentum *«փորձ», հրգ.* fara *«լրտեսում, վտանգ», անգսք.* foér *«յանկարծական վտանգ, յարձակում», հհիւս.* fár *«դժբախտութիւն»,* freista *«փորձել», դոթ.* fraisan *«փորձել», հբգ.* freisōn *«վտանգի մէջ լինել, սարսափիլ» են (*Pokorny 2, 28—29, Boisacq 756):

Ուղիղ մեկնեց Meillet, Dict. étym. lt. *721։*

ՆՀԲ յծ. յն. πειράζω, *լտ.* ex-perior *«փորձել, փորձիլ»։ Տէրվ. Նախալ. 94 հյ.* **ճարցանել**, *պրս.* pursidan, *յն.* πράσσω *են բառերի հետ հնխ.* prask, praç *արմատի տակ։* Müller, Armen. *VI յն.* σπέρχομαι *«ճիպել», զնգ.* sparɔz *«ճիպել», սանս.* spṛh *«բաղձալ»։— Հինք ստ. լտ.* forgia, *յն.* πειράω *«փորձել» և* πυρόω *«կրակով մետաղը հալեցնել և դռել». այս երկու յն. բառերի ձայնական նմանութիւնից առնելով ձևացել են հյ.* **փորձել** *«փորձ փորձել» և «մետաղը դռել», Փառնակ, Տարազ 1903, 263 նոյն ընդ* **ճարց**։ *Փորթուգալ փաշա, Եղիշէ 387 յծ. պրս.* pursiš, *հյ.* **փուրսիշն** *«հարցափորձ»։* Nyberg, Hilfsbuch des Pehlevi, *II. էջ* 137 *պհլ.* xvārak, xvālak *«քաղցրութիւն» <*xuarδak <*xuarza-ka, օսս.* xorz *«լաւ» >հյ.* **ախորժ** *բառից. հյ.* **փորձ** *դնում է *forz<*hvarza, մի այնպիսի բարբառից, ուր* hv- *դառնում էր* f-։ *Իմաստը չի թոյլ տալիս նոյնացնել այս երկուսը։*

Գիհ.—*կր.* փorց, *Ասլ.* փէorց, փէorս, *Մրղ.* փրʰց.—*Ջղ.* փուռ'ել, *Սչ.* փorցել, *Ախց. Երև. Ննխ. Պլ.* փorցել, *Խրբ. Տփ.* փorցիլ, *Ալշ. Մշ.* փorծել, *Մկ.* փուռիլ, *Ասլ.* փէorցել, *Շմ.* փէorցիլ, *Գղ.* փէ'orծիլ, *Ագլ.* փէ'ռնիլ, փէ'ռզիլ.— *Առն. Խրբ. Կր. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* փorցաՆ, *Ագլ. Ախց.* փorցաՆ, *Տիգ.* փorցոՆ, *Սլմ.* փուռծաՆ, *Մշ.* փուռծանկ, *Տփ.* փո'ռցաՆփս, *Հճ.* փոյցօՆ, *Անտ.* փուռցոՆ, *Զթ.* փույցօՆ, փուռցոՆ, *Ասլ.* փէorցոՆ, *Մրղ.* փրʰռծաՆ.—*Նոր բառեր են* փուռնուկ, փուռնոես, փուռնաՆփոտ *են։*

ՓՈՐՄ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մխ. դտ. 216. «Ըստ իւրաքանչիւր կամաց և ըստ իւրաքանչիւր փորմի» (այլ ձ. ֆրմի)։ Ըստ Բաստամեանի լտ.* forma *«ձև, եղանակ, կերպ» բառն է, բայց սեռ. փրմի պիտի ենթադրէր *փիրմ կամ *փուրմ ուղղականը. թևևս փրմի ուղղակի է փորմի։*

*ՓՈՐՈՆ *«հրապարակ». մէկ անգամ միայն ունի (իբրև յատուկ անո՞ւն) Խոր. բ. 88, որ և գրուած փառոն։*

=Յն. φόρον, *որ փոխառեալ է լտ.* forum *«հրապարակ» բառից։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՓՈՐՈՆ *«ուրա՞ր». առանձին չէ գործածուած. բայց սրանից է բարդուած լայնափորոն. նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Պարպ. 197, 371։*

=Յն. ὠμοφόριον *>Հյ.* եմիփորոն *բառի վրայից, իբր թէ յն.* φόριον *առանձին ձև գոյութիւն ունենար։—Աճ.*

ՓՈՐՈՏԱԼ *կամ* ՓՈՐՈՏԵԼ *«գոռալ, մռնչել» Իմ. ժա. 19. Ոսկ. Եփես. 849. գրուած է նաև* փառոտել, փառատել. *(իսկ* փորոտել *«դիշատել» տե՛ս* փառատ*)։*

ՀՀԲ մեկնում է իբր փորոտիից *դուրս փչել։ ՆՀԲ «Ի փորոյ անտի որոտալ»։ Տէրվ. Նախալ. 43 արմատը փոր, որի կրկնականն է փարփար «մի տեսակ թռչուն», իբր հնխ.* par-par=parp *«կարկաչել, պապաջել»։ Հիւնք.* որոտալ *բայից։*

ՓՈՐՉԻ *«սիկղ, քառորդ, ունկի». մէկ անգամ յիշում է Շիր. էջ 28՝ երբ. սիկղ, յն.* մէտ *և լտ. մեդիատիս ձևերին իբրև հոմանիշ հայ բառ։*

*ՓՈՑԽ *«տրմուխ». ունի միայն ՀՀԲ, որ գրում է նաև* փոցղ. *գոծածական է նոր գրականում՝ միայն* փոցխ *ձևով։*

=Վրաց. ფოცხი փոցխի *«փոցխ, երկրագործական սանտր» ձևից. բառիս բուն կովկասեան լինելուն ապացոյց են ո՛չ միայն հայ բառի յետնութիւնը, այլ և միւս կովկասեան լեզուների մէջ ընդհանուր տարածուած լինելը՝ դանազան նշանակութիւններով այսպէս՝ վրաց.* ფარცხი փարցխի, ֆարցխի, *մինգր.* ֆարցխի, *ինգիլ.* ֆարցխ, *աբխազ.* աֆարցխ *«տափան», վրաց.* ფარცხვა փարցխվա *«տափանել», գարչեթո փարցխատի «սանտր», գուցխ փուցխի «երկբժանի», լազ.* բուցխի *«փոցխ», սվան.* լափացխ *«խոտանոց»։—Աճ.*

Հրատ. Նախ ՀԱ 1908, 123 բ։

Գիհ.— Ալշ. Մշ. փոցխ. *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ.* փօցխ.—*Նոր բառեր են* փոցխել, փոցխաւոր *կամ* փոցխոր*։*

*ՓՈԻ *կամ* ՖՈԻ *«կատուախոտ,* valeriana*» Բժշ. (այլուր համարւում է «աղբաղբուկ խոտը,* valerianella *կամ սև պղպեղ»). գիտէ միայն ՀԲուս. § 3083։*

=Արաբ. فو *fū «կատուախոտ» (տե՛ս* Steinschneider*-ի հաւաքածոյքը՝* WZKM *12, 228 և Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 899), որ իր հերթին փոխառեալ է յն.* φοῦ *ձևից. սրանից են նաև վրաց.* ფუ փու «valeriana officinalis» *և իտալ.* fu*։—Աճ.*

Աճառ. ՀԱ 1908, 124 դնում է յոյնից. բայց իբրև Բժշկարանի բառ՝ աւելի յարմար է դնել արաբերէնից։

*ՓՈՒՉԻ *«ճարտարապետական մի զարդ՝ անասնոց բերանի ձևով», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Զքր. սարկ. Գ. 13. Սալաթեորքն. փորածու նկար. թէ՛ չորս թևքն, թէ՛ չորեքին փուզէքն, թէ ներգոյ գտակին։*

=Պրս. پوز pūz *«շրջանակ բերանոյ. 2. բերան անասնոյ»։*

Ուղիղ մեկնեց նախ Զաքարիայի Պատմութեան հրատարակիչը, էջ 13 ծան.։

ՓՈԻԹ *«կատր, պատառ». մէկ անգամ ունի Ոսկիփ. «Թափեցան շունքն ի վերայ գայլոցն՝ խածատել և վիրաւորել, և փութ փութ արարին»։*

Փութկայ *տե՛ս Փուտկայ։*

+**ՓՈԻԼ** *«աւերակ, փլած տեղ» Ոսկիփ. «դարափլակ» Առաք. պտմ. 70, 377. Բրս. մրկ. 148. «լուսնի լրանալուց յետոյ հետըզհետէ նուազիլը» Սպիփ. ծն. Ուռհ. 295, 332, Վստկ. 28, 34. որից* ի փուլ գալ, ի փուլ ածել *«փլիլ, փլցնել, քանդել» Մարթին. Տօնակ. Ոսկիփ.* փլանիլ *Եզնկ. ժգ. 10. Յոր. ժդ. 18. Եւս. պտմ. Ոսկ. ես.* փլուցանել *Ես. ժա. 15, Բ. մկ. ժ. 17, Վեցօր. կամ* փլուզանել *Ագաթ. Ոսկ. մ. ա. 15 և երր. և.* փլատակ *Ոսկիփ.* փլած *խոր. դարափուլ Վրդն. պտմ. դարափլակ ՅՀ. կթ. 205 (չունի ԱԲ),* վաղափուլ *Ագաթ.* վիմափուլ *Անյ. բրձր.* փլել *«լուսնի նուազիլը» Վստկ. 39. գրուած նաև* բլաւ *Անկ. դիրք նոր կտ. 300, Հաւաք. 5,* բլան *«փուլ եկան» Պատմ. ԺԸ դարից (Դիւան, ժ. էջ 121),* ուժն բլցնել *«թուլացնել» Մխ. բժշ. 99. կրկնութեամբ* բլբլակ *«փլփլած» Վրդն. առ. 264,* բլբլկեալ *Առաք. պտմ. 205, 267։ Արդի գրականում (արեւմըտեանից սկսելով և յետոյ արեւելեանին անցնելով) սովորական դարձաւ* փուլ *«երեւոյթ, շրջան» իմաստով (առնուած լուսնի փուլերից, ճիշտ ինչպէս ֆրանս.* phase):

=Բնիկ հայ բառ՝ հնխ. phōl- *ձևից, որի այլ. ժառանգներն են լիթ.* pũlu, pùlti, *լեթթ.* pũlu, pult, *հրգ.* fallan, *անգսք.* feallan, *հիսլ.* falla, *անգլ.* fall, *նրգ.* fallen *«ընկնել, ցած ընկնել»,* einfallen *«փուլ գալ», հրգ.* falla, *գերմ.* Falle, *հոլլ.* val, *անգսք.* fealle *«թակարդ», բևրևս նաև հպրուս.* aupallai *«գտնել»* (Pokorny 2, 103, Walde 268, Trautmann 229, Kluge 129): *Ըստ* Meillet, Esq. *80 այստեղ է պատկանում նաև յն. σφάλλω «տապալել, վայր ձգել», որ ուրիշներ դնում են սխալ բառի հետ. վերջին անգամ կրկնում է նոյնը* Ernout-Meillet 313, *որի հետ կապակցով նաև լտ.* fallo *«խաբել, խուսափիլ»։—Հիւբշ. 501։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Bugge KZ 32, 28, *որ սակայն էջ 77 դնում է նաև յն. παλεύω «թուլունը թակարդը ձգել», որ այստեղ գործ չունի։* Meillet MSL 8, 294 *աւելացնում է նաև յն. σφάλλω և լտ.* fallo. *ընդունում է* Müller SWAW 136 *(1897), էջ 36։ Հիմնք.* փլչիլ *դնում է յն. πλίνθος «աղիւս» բառից, իսկ* փլատակ *հանում է* բլրակից։ Sköld *ՀԱ 1927, 792 սանս.* sphurati *«ոտքով հրել», որ սակայն մեր* սպառնալ *բային է կցւում։*

ԳԻՒ.—Արմատական ձևով՝ երև. Տփ. փուլ գալ, *Ջղ.* փուլ գ'ոլ, *Շմ.* փուլ կ'ոլ, *Գոր. Ղրբ.* փօլ գ'ոլ, *Ագլ.* փէլ գիլ։—*բայական ձևով՝ Սչ.* փլել, *Ասլ. Խրբ. Պլ. Սեբ. Տիգ.* փլիլ, *Սվեդ.* փլչիլ, *Ռ. Տփ.* փլչիլ, *Զթ.* փը՝լչիլ, *ՀՁ.* փուլցոնել, *Սլմ. վն.* պլել, *Մկ.* պլնիլ, *Մրղ.* պիլվել, *Ալշ. Բլ. Մշ.* բ'լել, *Ախց.* բ'լշիլ, *Ննխ.* բ'լշէլ, *երև. Տփ.* բլիլ, բլշիլ, *կր.* բլշիլ, *Համշ.* բլուշ։ *Նոր բառեր են* փլանիճ, փլեկ, փլից, փլզուն, փլոտ, փլուկ, փլմուն, փլուճ, փլփլիլ, փլփլկիլ, փլշկիլ, փլչախիլ, փլշտուկ, փլոտիլ, փլփլուկ *են։ Այս արմատից է նոյնպէս գուռ.* փլխիլ, շրջմամբ փխլիլ, *սասունական* փլխոռիլ *«ձուն, ծիրանը են ընկնելով փշրուիլ՝ ճխլուիլ». Համմտ. «Վազեալ հաւ մի ի գոգ նորա ձու արկանէր և կիթն հոլովեալ ի գոգոյ նորա յերկիր ի բաց փլանիւր» Պտմ. աղեքս. էջ 12։*

ՓՈՒՆ.—Վրաց. ფლატე փլատան *«գետի ներքին ջրի քանդած տեղը»։*

Փուլոս *տե՛ս Փսուլոս։*

*+**ՓՈԻԽՍ** *«կակուղ, փափուկ, դիւրափշուր» Վստկ. վերջաձայնի անկումով նաև* փուխ *Մաքս. դիոն. Վստկ. 54. 162. որից* փխրել *«փշրել, փոշիի վերածել, քայքայել» Ոսկ. Փիլիպ. Թ. Ագաթ. Փիլ. եվ. բ. 41, «խորովել, խանձել, խարկել» Եզնկ. իդ. 10, Ղևտ. բ. 14, իգ. 14,* փխրան *«փշրուր» Փարպ. Երզն. մտթ. 491. Ուխտ. բ. 113. Լծ. ածաբ.* դիւրափուխր *Երզն. մտթ. 543.* դիւրափխրելի *Նար.* փխրուն *(նոր բառ)։*

=Կովկասեան ծագումով բառ է թուում. Համմտ. վրաց. ფხუნა փխունա *«փշրել, կոտրատել»,* ფხეკა փխեկա *«ջնջել, քերիչով քերել»,* ფხურა փխուրա *«ջնջել, խլել, քանդել»,* ფხვრა փխվրա *«արմատից խլել, աւե-*

րել», მოფხვრა մոփխվրա «արմատից պոկել», საფხეკი սափխեկի «քերիչ», ფხვიერი փխվիերի «փխրուն», որոնց պարզ արմատն է փխ. մասնիկ է r, ինչպէս և ն, կ:—Աճ.

ՆՀԲ թւում է կցել փշրել բառին։ Տէրվ. Նախալ. 93 փշրել բառի հետ հնխ. pis կամ սրանից ածանցուած pisk արմատից։ Bugge IF 1, 457 յն. ψώζω «փշրել, մանրել» բառին ցեղակից։ Այս վերջինը բոլորովին անապահով է համարում Հիւբշ. 501։ Հիւնք. յն. φρύγω «բոհրել» բայից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 98 փշուր բառի հետ։ Մառ ЗВО 25 (1921), 36 խալդ. ipxulie, վրաց. փխուճա, փխվա:

ԳԻՒ.—Ալշ. երև. Հճ. Մկ. Սլմ. Վն. Տփ. փուխր, Սվեդ. փիւխր, Ախց. Ակն. խրբ. Ջղ. Նախ. Սեբ. փուխ, Մշ. փուրխ, Մրղ. փուխ «կակուղ, փխրուն».—Պլ. կայ միայն բարդութեամբ փուխսիրտ «բարեսիրտ» և սիրտը փուխ «սիրտը կակուղ». ուրիշ գործածութիւն չունի.—Նոյնից են Մշ. փրխուն, փրխիգ «փուխր», Թրբախօս հայերից Այն. փխրել կամ փրխել «փխրուիլ» (Բիւր. 1900, 685), կրճատ կրկնութեամբ՝ փխուխ Վն. «կակուղ, փափուկ»։

ՓՈՒՂԱ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Փիլ. ժ բան. էջ 223. «Ի դուզակողմանցն կրկնակաց երեքանկիւնիցն՝ երեք տարբ բաղկանան. հուր և փուղձ և ութանիստն. քանզի է՛ որ հրոյ ձև է և է՛ որ օդոյ և է՛ որ ջրոյ. իսկ ի չորեքանկիւննացն քուեայն է»։ Բառ. երեմ. էջ 325 մեկնում է «ջուր». նոյն բառը վեց անգամ դտնում եմ գործածուած էֆիմ. հետևեալ ձևով. Շոգիք՝ որք են բարակ փուղձ, նուրբ ճնճեր և անզգայ շունչ (էջ 245). Ծծումբն ունի յինքեան այժ հրային, փուղձ և խոնաւութիւն սնդկային, նաև աղ հողային (էջ 252). Հոյծ, պարարտ, փուղձ և սոսնձանման խոնաւութիւնն է սընդիկ (էջ 261). Փայտն ունի առաւել փուղձ և խոնաւութիւն ջրային, բայց քարն ունի սակաւ փուղձ և խոնաւութիւն... Հրահալելին պարարտ խոնաւութեամբ և փղձով (էջ 262)։ ՆՀԲ մեկնում է «լոյծ, խոնաւ, հոսանուտ», իսկ ՋԲ սրա հետ նաև «ջուր», ԱԲ «թոյլ, լոյծ, խոնաւ»։ Ըստ իս, ինչպէս ճուր (պիրամիդ) և ութանիստ, նոյնպէս և փուղձ երկրաչափական մի մարմին է նշանակում։ Ըստ Փիլոնի երեքն էլ հաւասարակողմեան եռանկիւններից կազմուած ձևեր են. քառանկիւններից կազմուած իբր ձև չիշում է քիչ յետոյ խորանարդը (քուեայ). եւ որովհետև երկրաչափութեան մէջ հաւասարակողմեան եռանկիւններից կազմուած կանոնաւոր բազմանիստերը երեք են միայն (պիրամիդ, ութանիստ և քսանանիստ), որոնցից առաջին երկուսը արդէն չիշուած են, ուստի փուղձ նշանակում է «քսանանիստ, իկոսաէդրոն»։— Բոլորովին ուրիշ իմաստ ունի փուղձ՝ էֆիմէրտէի մէջ։ Երկրորդ վկայութեան մէջ տեսնում ենք որ ծծումբին վերագրւում է հների չորս տարրերը, ճուր (ոյժ հրային), ջուր (խոնաւութիւն սընդրկային), ճող (աղ հողային), մնում է փուղձ, որ պիտի նշանակէ «օդ»։ Այս իմաստով է նաև առաջին վկայութեան մէջ, ուր «օդ» և «գազ» համաղօր են։—Երկու նշանակութիւնները փուղձ «օդ» և «քսանանիստ» թէև շատ անյարիր, բայց միևնոյն բաներն են։ Հները, ըստ Պիւթագորեան փիլիսոփայութեան չորս տարրերը չորս երկրաչափական ձևերի հետ էին կապում. օդը ութանիստի հետ, հողը խորանարդի հետ, ջուրը քսանանիստի հետ և հուրը պիրամիդի հետ (տե՛ս Фл. Кэджори, Исторія Элемент. Математики, Одесса, 1910, էջ 55)։ Սրա համար է որ Փիլոնի մէջ էլ ճուր (պիրամիդ) «հրոյ ձև է», փուղձ (քսանանիստ) «օդոյ ձև է» և ութանիստն «ջրոյ ձև է»։ Ինչպէս տեսնում ենք, շարքը տեղափոխուած է. և դրա համար է որ էֆիմէրտէն դնում է փուղձ «օդ» ըստ Փիլոնի, իսկ Բռ. երեմ. փուղձ «ջուր»=քսանանիստ՝ ըստ Պիւթագորեանց։

ՆՀԲ փուղձ դնում է փղձկել բայի արմատը։

*ՓՈՒՃ «դատարկ, սին, պարապ» Ադամ. 136, որ և փուչ Տաթև. Հարց. 276. Ադամ. 137, 265, Առաք. պտմ. 438, որից փչացնել Ադամ. 265. փուչ փուչ «մէջը ծակոտկէն» Առաք. յծ. սահմ. 639։ Նոր գրականում արև-

մտեանը գործածում է փուճ *ձևը, արևելեանը* փուչ *ձևը. այսպէս նաև նրանց ածանցները՝ փճանալ կամ փչանալ ևն։*

=Պրս. ԹԹր. پوچ pūč *«պարապ, դատարկ, զուր. 2. անխելք, ապուշ», որից ԹԹր.* پوچلق pučlək *«դատարկութիւն»,* پوچ اتمك puč etmek *«ոչնչացնել», փոխառութեամբ՝ քրդ.* puć *«դատարկ», փուճ պու «փճացաւ, ոչնչացաւ» Յայտ. ժր. 16 (Զմաքօ աւ գաս զէնկինիթի լը եէք սաաթտա փուճ պու.—զի ի միում ժամու պակասեցաւ այնչափ մեծութիւն քո). վրաց.* ფუჭი *փուճա կամ* ფუჭი *փուճի «պարապ (մարդ), դատարկ (ընկոյզ)»,* ფუჭება *փուճեբա «վատնել, ծախսել, փճացնել, ոչնչացնել»,* დაფუჭვა *դափուճվա «փճացնել, ապականել».—Աճ.*

Գիմ.—Ախց. երև. փուչ, Մշ. փուջ, Ագլ. փէչ. Նոր բառ է Ջղ. փուճկար (<փուչքար) «չհչաքար». Համմտ. Առաք. լծ. սահմ. 639 Իբրև դչեչաքար փուչ փուչ է։

ՓՈՒՆՈՒ *«մի տեսակ աման կամ չափ». մէկ անգամ ունի Եփր. Թգ. էջ 365. «Արարին զբրաստանսն ոսկի և զմկունսն ոսկի և առաքեցին հանդերձ տապանակաւն ի սայլակին ...եկին իջուցին զտապանակն Ղևտացիքն և զփուճսն ոսկեղէն մկանցն և տարան եդին առ մեծ վիմին». Համապատասխան տեղը Ս. Գրքում կարդում ենք. «Եւ Ղևտացիքն հանին զտապանակն Տեառն և զքուրձն արգոք ընդ նմին և զաճօրսն ոսկիս որ ի նմա և եդին ի վերայ վիմին մեծի» (Ա. Թագ. ղ. 15)։ Համեմատութիւնը դժբախտաբար կատարեալ չէ փունդ բառի իմաստը ստուգելու համար։ Բառ. երեմ. էջ 325=Հին բռ. դնում է փունդս և մեկնում է «աման ինչ»։ Այսպէս է ընդունում նաև ՆՀԲ։ Նորայր, Բառ. Ֆրանս. 300 բ յատկացրած է ֆր.* cornue *բառին, որ է «անօթ ինչ խեցեղէն կամ ապակեղէն ի պէտս տարրագիտաց»։ Բառս մէկ անգամ էլ գտնում եմ գործածուած Մծբ. 219. «Յետու պարտաւորեաց զԱքար, զի գողեաց և Թագոյց զարծաթն ի փնդէ անտի, զոր ունէր. և Յիսուս փրկիչ մեր ետ զքանքարս առ շահս». ասորի բնագիրը (Հրտր.* Graffin, *էջ 504) *ունի. «Յետու Բարնուն պարտաւորեաց զագահն Աքար, զի գողացաւ և Թագոյց, և Յիսուս փրկիչ մեր դատապարտեաց զագահն Յուդաս, զի գողացաւ և Թագոյց զարծաթն յարկղէն», ըստ համեմատութեան վիճնայի միաբան Պ. Էսապալեանի (անձնական)։ Այս համեմատութիւններից երևում է, որ փունդ նշանակում է «արկղ»։*

Petersson KZ 47, 270 *կցում է հսլ.* spądŭ *«մոդ,* modius» *ձևին։*

ՓՈՒՆՋ *(սեռ.-ի) «բոյսի ցօղուն» Ծն. խա. 5, 22. «տրցակ բոյսի կամ կապոց ծաղիկներիւ» Տաղ. Վրդն. սղ. Երզն. լս. Միսայէլ. որից* ոսկեփունջ *Ց. կթ. Ասող. Նոր բառեր են* ծաղկեփունջ, վարդափունջ, փնջակ, փրնջիկ։

ՆՀԲ (ունջ բառի տակ) լծ. լտ. fundum: Lag. Urgesch. 692 *սանս.* pūga, punga, puñja *«դէզ ևն»։* Riggs, *Քհրակ. էջ 61 անգլ.* bunch *«խուրձ, փունջ»։ Տէրվ.* Altarm. *58 յն.* σφίγγω *«կապել, իրար կապել» ևն։* Bugge IF *1, 455 դնում է *bunyo- ձևից՝ կազմուած* բուն=*պրս.* bun *«ծառի բուն» բառից։ Հիւնք. պրս.* պինճ, պինճէ *«հանգոյց, կանանց ճակատանոց»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 368 պրս.* پنچه punča *«ճակատ. 2. ճակատի վրայ ձգուած մազերի փունջ»։*

Գիմ.—Ախց. երև. Մկ. Մշ. Ջղ. Տփ. փունջ, *Գոր. Ղրբ.* փօնջ, *Ագլ.* փէնջ *(այս վերջինը թէ ծաղկի փունջ և թէ զգեստի ծոպ նշանակութեամբ)։ Նոր բառեր են* փնջել *«փունջ կապել»,* փնջուիլ *«ծաղկիլ»,* փնջաւոր *«ծոպերով զարդարուած»։*

ՓՈՒ.—Ուտ. փունջ *«ծոպ», վրաց.* ფუნჯი *փունջի «ծոպ,* houppe, touffe de fils en bouquet»։

ՓՈՒՇ, ո *հլ. «փուշ» ՍԳր. Եփր. ծն. Կոչ. «մի տեսակ երաժշտական խազ (𝄽)» ԱՔ «մի տեսակ վէրք» Վստկ. 168. որից* փշաքեր *Ես է. 24. լդ. 12. Կոչ. 13. Ագաթ. Ոսկ. մ. բ. 19. փշալից Առակ. իզ. 9. Եփր. ծն. չարափուշ Եփր. Թգ. 410. փշեղէն Բրս. մրկ. ժանտափուշ Ագաթ. սրափուշ Ագաթ. տապափափուշ Ագաթ. թանձրափուշ Պղատ. օրին. կառափուշ Լծ. փիլ. ուղտափուշ Բժշ. Նոր*

բառեր են փշուռ, փշապատ, փշամաղիլ, փշալար են։

Justi, Dict. Kurde 78 *քրդ.* peż *«թուփ, մացառ»? Հիմնք. շփել բայից։* Petersson IF 43 (1925) *էջ 74 յն.* πευκέδανος, πέυκη, *լիթ.* puszìs, *գերմ.* Fichte *ծառանունների հետ, որոնք ծագում են հնխ.* peuk´, puk´ *«խթել» արմատից. հյ. փուշ <*spuk´-uo-։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Հճ. Մկ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Սևբ. Սչ. Վն. Տփ. փուշ, *Ասլ. Սլմ.* փիւշ, *Սվեդ.* փէօշ, *Գոր. Ղրբ.* փօշ, *Ագլ.* փէշ։ *Նոր բառեր են* փշախեղդ, փշակոկոռ, փշաթել, փշմթել, փշամզիլ, փշբոյլ, փշդրամ, *-ուկ,* փշեճի, փշիկ, փըշմանգաղ, փշմաշ, փշփշոտ, փշփլոռուն *են։*

*ՓՈՒՇԻՒ *«թաղ, կամար». ունի միայն Բառ. երեմ. յաւել. Գեորգ դպրէ, էջ 563։*

=*Պրս.* پوشش pūšiš *«ծածկոյթ, ծածկոց», որ ծագում է* پوشیدن pūšīdan *«ծածկել» բայից։—Ա՛ճ.*

*ՓՈՒՇՏԻՊԱՆ, ի–ա *հլ. «թիկնապահ, անձնապահ զինուոր» Բուզ. դ. 53, ե. 7. Փարպ. Օրբել. որ և* փշտիպան *Եղիշ. գ. էջ 49, է. էջ 104, Ղևոնդ ժա. էջ 38, Ասող, տե՛ս և յաջորդը։*

=*Պհլ.* *puštīpān *ձևից. համմ. պհլ.* puštīkpān-sālār *«անձնապահապետ»,* puštīkpānakīh *«պաշտպանութիւն», պրս.* پشتیبان puštībān *«թիկնապահ, նպաստաւոր, օգնական» (որ և* پشتبان puštban*),* پشتوان puštvān *կամ* پشتیون puštīvan *«փայտեայ պահանգ, նիգ, սողնակ», քրդ.* pištuvan *«պաշտպան». սրանք կազմուած են պհլ.* pušt=*պրս.* پشت pušt=*սանս.* pṛšta *«կռնակ, թիկն» +* pān *«պահապան» բառերից. ըստ այսմ հյ. թրգմ.* թիկնապահ։ *Նոյն բառի հին արշակունեաց ձևից է հյ.* պաշտպան։—*Հիւբշ. 255։*

Պրս. բառի հետ համեմատեց նախ Գ. Նոյնը նաև Նշ՛ր, Lag. Beitr. bktr. Lex. 57։

*ՓՈՒՇՏԻՊԱՆՍԱՂԱՐ *(սեռ. անջատ ձևով փուշտիպանաց սաղարի) «թիկնապահապետ, զօրավար անձնապահ զօրաց» Փարպ. էջ 128 (երկիցս)։*

=*Պհլ.* puštīkpān-sālār *«հրամանատար անձնապահ զինուորաց», որի կազմութիւնը տե՛ս փուշտիպան և սաղար բառերի տակ։—Հիւբշ. 235, 255։*

+ՓՈՒՋ *«փչելը, փչիւն». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են դիւրափուչ Արծր. 179 («Դու յարդ և մեք հողմք դիւրափուչ»).* ոսկեփուչ *«վրան ոսկեփոշի փշած՝ ցանած» ՅՀ. կթ. Ասող. (ըստ Նշ՛ր* ոսկեփուճք, *որ և այսպէ՛ս է ուղղում Նորայր, Հանդ. գր. և պտմ. բ. 319)։* Փչել *«շնչել մարդու, անասունի կամ քամու» ՄԳր. Եղիշ. Խոր. «վերջին շունչը աւանդել» Խոր. ա. 10. Լմբ. սղ.* ի վեր փչել *«նորաբոյս ծիլեր արձակել» Կոստ. Երզն. էջ 77.* փչումն *Եզն. Կոչ. Ոսկ. յհ. բ. 40.* փչեցուցանել *«փչել ուտեցնել» Աւ (գրում է նաև* փնեցուցանել*),* փչիկ *«միզափամփուշտ» էֆիմ, 273,* փչողական *(նոր բառ).* փչրակ *«բշտիկ» էֆիմ. էջ 68 (շուրջ գերեզմանովն ծնանին փըչրակը).* զուգափչումն *Պիսիդ.* վերափչումն *Արիստ. աշխ. կրճատ կրկնութեամբ՝* փչուչ *«սրինգ» Վստկ. 82.* դիւափչուչ *«սատանաներից փչուած» Մխ. այրիվ. 39 (տպ.* դիւարչուչ*)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* phu- *բնաձայն արմատից, որ երևում է նաև* pĕu, pou, pu, bu, bhu *են ձևերով, ինչպէս և աճած զանազան աճականներով։ Հայերէնի մէջ նոյն արմատին են պատկանում նաև* փուք, ոգի, հոգի, հևալ, հոգ։ *Ցեղակից ձևերից յիշելի են այսոքա՝ սանս.* phupphukāraka *«հևալով»,* phuphusa- *«թոք»,* phut-karōti *«փչել», պրս.* پوک pūk *«փչիւն, փուրս», աֆղան.* pū, pūk *«փչիւն», յն.* φῦσα *«փուրս, շունչ, պղպջակ»,* φυσᾶν *«փչել»,* φυσιᾶν *«ուժեղ շնչել»,* φῦσιγξ *«անամէջ ցօղուն»,* φυσαλίς *«սրինգ»,* φύσκη *«մեծ աղիք»,* φύσκων *«հաստատփոր», լտ.* pustula *«պղպջակ», լիթ.* pušiù, pûsti *«փչել»,* putà *«փրփուր»,* pūkšti *«հևալ, փնչել»,* pūslė *«պղպջակ, միզափամփուշտ», ռուս.* пышать, пыхнуть *«փչել»,* опухоль *«ուռոյց» են.—Հայերէնի մէջ չ, ինչպէս և f աճական են* (Boisacq

1042, Trautmann 234, մանաւանդ Pokorny 2, 79—80)։—Հիւբշ. 502։

ՆՀԲ «արմատն երևի փուշ կամ փուռ, ի ձայնէս ֆր՛շ, ֆր՛ս, յն. ֆիսա՛օ»։ Տէրվ. Altarm. 5 փուռ բառից՝ ռ վերածելով շ։ Նոյն, Նախալ. 93 հնխ. pu արմատից՝ շ ածանցիչով, ինչպէս և փուռ ռ ածանցիչով։ Justi, Dict. Kurde 88 և Kurd. Gram. 122 քրդ. pešin «փշրիւն, շունչ» բառի հետ։—Հիւբշ. Arm. Stud. § 285 և Arm. Gram. 502 յն. φυσάω ձևի հետ՝ իբր բնիկ հայ։ Հիւնք. յն. φυσάω և պրս. բուկ «փուք»։ Scheftelowitz BB 29, 35 լտ. faux, fauces «կոկորդ», իսկ KZ 54 (1927), էջ 225 յն. ποιφύσσω (բայց ո՛չ φύσκα), ռուս. pučiti։ Karst, Յուշարձան 406 սումեր. pes «շնչել, փչել»։

ԳԻՒ.—Ջղ. Սլմ. Սչ. վն. փչել (բայց Սչ. մանաւանդ «երդել կամ նուագել»), Ախց. երև. կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. փչել, Ասլ. փչե՛լ, Ագլ. Գոր. Խրբ. Ղրբ. Մկ. Շմ. Սվեդ. Տփ. փչիլ, Զթ. փը՛չիլ, Հճ. փուչել, Մրղ. փիչէլ, Ալշ. Մշ. փեվել, Համշ. փչուլ։ Նոր բառեր են անփչել, փչոց, փչան, փչիմրիկ, փրչում, փչկել։

ՓՈՒՒ. անստոյգ նշանակութեամբ՝ յետին շրջանի բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած. Պղնձ. 41. Եւ գեղեցիկ թագուհի մի ի վերայ աթոռոյն նստած և խալիչայ մի փուռ մարգարտով լցած ի ներքև թագուհույն։ Այս անստոյգ բառի հետ Ս. Մովսիսեան կցում է Բլ. փուռ «շատ, չափից աւելի». օրինակ՝ Փուռ մը հալաւ ունինք լուանալու (նամակ 1933 մարտ)։ Այս պարագային կարող ենք դնել՝

=պրս. پر pur «լիքը. 2. շատ» (ծագումը տե՛ս լի բառի տակ)։—Աճ.

Զէ՛ անշուշտ պրս. پر pur «լիքը», որովհետև մի բառ յետոյ արդէն կայ լցած։

*ՓՈՒՒՆ, ն և հլ. (սեռ. փուռն, բց. ի փուռնէ) «հաց եփելու հնոց» վրք. հց. բ. 272, կլիմաք. Վստկ. 89, 134. որից փռնապան «հացագործ, վերակացու փուռն» Ճառընտ. փռնատուն (չունի ԱԲ) Առաք. պտմ. 235. կրափուռ Միխ. ատ. 237 (սրանից անկախաբար նոյն ձևով շինուած նաև նոր գրականում)։

=Յն. φοῦρνος կամ արաբ. فرن furn «հրնոց, փուռ» բառից. երկուսն էլ փոխառեալ են լտ. furnus «փուռ» բառից, որ և fornax. ծագում է կա՛մ formus «տաք» բառից, որ հնդևրոպական է (տե՛ս ջերմ) և կամ fornix «կամար» բառից՝ իբր հորուսկեան փոխառութիւն. և կամ երկու բառերի խաչաձևումից (տե՛ս BSL № 89, էջ 97 և Ernout-Meillet 365)։ Լատինից կամ յոյնից են փոխառեալ իտալ. forno, ֆրանս. four, ալբան. furrę, fur, բուլգ. fúruna, սերբ. fùruna, vùruna (Berneker 286), թրք. فرن furun, լազ. funni, վրաց. ფურნე փուրնե, թուշ. ფურნ փուրն, ասոր. ܦܘܪܢܐ fūrnā «փուռ»։ Հիւբշ. 387։

Նախ ՆՀԲ լտ. fornax, իտալ. fornace, forna ձևերի հետ։ Lag. Arm. Stud. § 2308 համեմատում է արաբ. յն. և լտ. ձևերի հետ և հայը գնում է արաբերէնից։ Հիւնք. յիշում է տճկ. և լտ. ձևերը։ Յակոբեան, Բանասէր. 1900, 37 զնդ. haurva-։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. երև. Զթ. կր. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. փուռ. Ագլ. փո՛ռնը, Հճ. փուռ, Տփ. փուրը, Ասլ. փիւռ։ Նոր բառեր են փռնչոր, փռնաւել։

ՓՈՒՍՊԱՅ «աւերակ». ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հայ. abiecta.

=Թուի լեհերէնից։

*ՓՈՒՍՏԱ. անստոյգ բոյս, որի կանաչ կեղևի խաշուն դեղ է՝ ըստ Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3089։

=Պրս. پسته pista «պիստակ, ֆստուղ» բառն է ըստ իս. իրօք էլ այս պտղի խակը ծածկած է կանաչաւուն հոտաւէտ կծուահամ մի կեղևով։—Աճ.

*ՓՈՒՏ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ.) «նեխութիւն, մարմնի կամ ուրիշ մի բանի փտած մասը» Ոսկ. Վեցօր. Սերբր. «փտած, նեխած, փճացած» Յոբ. խ. 18. Առ որս. Գէ. ես. «անհարազատ (սերունդ)» Իմ. դ. 3. որից փտել, փտիլ «ապականիլ, փճացնել, նեխիլ» Յոբ. խ. 7, ժթ. 20, ժզ. 8, Սղ. լէ. 6. Ոսկ. ես.

փտուրիւն *Նիւս. բն. Նար.* փտանալ *Սիրաք ժդ. 20.* անփուտ *ՍԳր.* անփտելի *Երզն. մտթ.* վաղափուտ *Պիտ.* դժուարափուտ *Փիլ. եվ.* փտախտ *(նոր բառ)*։

=*Պհլ.* 𐭯𐭥𐭲 pūt *ձևից. Համմտ.* պրս. پُود pūd «հին, փտած», oऽ پُوذا pūda «հին և փտած. 2. փտնալ ծառ», պազ. pūd «փտած, փտութիւն», պհլ. 𐭯𐭥𐭲𐭠𐭪 pūtak «փտած, նեխած», զնդ. 𐬯𐬎𐬀𐬵𐬌 pūiti- «մարմնի փտութիւն». սանս. pūti- «փտած, նեխած, հոտած, շարաւ, թարախ», pūtika- «նեխած, հոտած» (Horn § 334)։ Այս բոլորի արմատն է հնխ. pū-«հոտիլ, նեխիլ» (համարւում է բնաձայն, փո՞ւն բացագանչութիւնից յառաջացած), որի այլ ժառանգներից են սանս. pūyati «հոտիլ», pūya- «թարախ», զնդ. puyeiti «հոտիլ», յն. πύθω «հոտեցնել», πύον «թարախ», լտ. pus «թարախ», լիթ. pūvù, գոթ. fūls «հոտած» են (Boisacq 328, Trautmann 234, Pokorny 2, 82, Ernout-Meillet 788)։—*Հիւբշ. 256*։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ՝ համեմատելով պրս. pūd *բառի հետ՝ ՆՀՒ լծ. լտ.* putredo, *յն.* σηπεδών։ Lag. Urgesch. *192 սանս.* pū, *լտ.* putidus: Müller SWAW 42, 252 *և* 45, 538 *զնդ.* pavaiti, *յն.* πύω։ Justi, Zendsp. 191 pū *արմատի տակ*: Salemann KZ 8, 60 *օսս.* buy, *պհլ.* pūtak, *պազ.* pūt: *Հիւբշ.* KZ 23, 19 *սանս.* pūti, *պհլ.* pūtak: *Պատկ.* Матер. *1, 16 պհլ. և պրս.* pūd: *Տէրվ. Նախալ. 93* pu- *արմատից՝ т ածանցիչով, Հիւնք. պրս.* puт, *յն.* πίθω, φθίω, φθίνω, *լտ.* putredo: *Мат,* Яз. и Лит. *I 275 բանկ.* hutz «դատարկ», *վրաց.* փուտուրո «պարապ», *հյ.* փուճ *են։—Տե՛ս և* ճու *բառի պատմականը։*

ԳԻՒ.—Սլմ. վն. փտել, *Մկ.* փտիլ, *Ալշ. Խրբ. Մշ. Տիգ.* փդիլ, *Ակն. Պլ. Ռ. Սեբ. Սվեդ.* փրդդիլ, *Ասլ.* փը*դիլ, *ՋԹ.* փը՝դը՝լ, *Հճ.* փտդդել, *Ջղ. Սչ.* փբել, *Գոր. Երև. Ղրբ. Մրզ.* փբէլ, *Ագլ. Ախց. Կր. Շմ. Տփ.* փբիլ, *Համշ.* փբուշ, *Ննխ.* փբբէլ, *բայց Ակն.* փննիւգ (<փտնուկ) «փտած»։ Նոր բառեր են փտաճ, փտլուկ, փտոտ, փտուկ, փուտանալ, փուտանուն, փուտշրէշ. Նաև *Երև. Ղրբ. Տփ.* փուտ «թերութիւն, պակասութիւն».—*Բրբախօս հայերից Ատն.* փտտել օլմագ «փտիլ»։

ՓՈԽ.—Վրաց. ფუტური փուտուրո «ծառի փտութիւն, մէջի դատարկութիւնը», დაფუტუროება դափուտուրոեբա «ծառի փտիլը», დაფუტუროებული դափուտուրոեբուլի «փրտած ծառ», *քրդ.* پەتوت petut «փտութիւն» *(քստ* Justi, Dict. Kurde 74), *որ է գւտ.* փտոտ։

*ՓՈԻՏԿԱՅ *կամ* ՓՈԻԹԿԱՅ *(սեռ.* ի*)* «պանդոկ, կապելայ». *մէկ անգամ գործածում է Գոր. և շմ. էջ 69.* «Եւ հրամայեաց դատաւորն Եւետոս զահճապետի տանել զերկոսեան և արգելուլ ի բանտի, ուր արգելեալ էին ընկերք իւրեանց ի փուտկայի միոջ որ կոչի բեթթիկա»։ Զարմանալի է որ բառս գործածում են նաև նոր ժամանակի մատենագիրներից երկուսը՝ Առաքել և Յակոբ Կարնեցի. այսպէս՝ Զետղեալ բնակեցուցին ի փութկայն՝ որ է քարվանսարայ *(Առաք. պտմ. 111.—հրատարակիչը յատուկ անուն կարծելով դնում է գլխատառ)*. Վասն տանց և ապարանից, բաղանեաց և փութկայից, որ է քարվանսարայ *(Առաք. պտմ. 373)*. Բաղանիքներ և փութկաներ և քաղաքի պարիսպն *(անդ, էջ 514)*. Սպանդանոցք և շուկաներ, սալարակապ խաներ և փութկաներ, քարաշաղ դեղեցիկ շինուածովք և նկեղեցիք բաղումք *(Յկ. կր. 31)*։—Սրանց համեմատ Բառ. երեմ. *էջ 325* փութկայ «քարվանսարայ», որից և ԱՔ «կարաւանի իջևան, քարվանսարայ»։

=*Ասոր.* ܦܘܛܩܐ pūṭqā «կապելայ, հանրատուն» *բառից, որ փոխառեալ է յն.* πανδοχεῖον «պանդոկ» *բառից. սրա ծագումը և միւս ձևերը տե՛ս* պանդոկ *բառի տակ*։

Ալիշան, Հին հաւ. 303 պրս. butkada «կոաատուն, պանդոկ» *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Մատ ՀԱ. 1898, էջ 270 բ. և յետոյ* Goussen, *որ Հրատարակեց Վարդանեան ՀԱ. 1913, 136։ Ի նկատի ունենալով բառի նոր գործածութիւնները, ուզեցի կարծել որ փութկայ բառը թերևս արաբերէնի մէջ էլ գոյութիւն ունի, որից անցել է ասորին*

հայերէնի։ Բայց Կամուսի բառարանում (Թրք. Թրգմ. հտ. Գ. էջ 38) գտայ միայն արաբ. فتق fatq «լայնատարած ընդարձակ տեղ», որ անշուշտ նոյն բառն է, բայց յամենայն դէպս հայերէնի մայրը չէ (տե՛ս իմ Նոր բառեր հին մատ. Բ. 97)։

*ՓՈՒՐ «պատուղների արտաքին կանաչ կեղևը» Վստկ. 136, որից փրաբափել «կեղևները հանել» Վստկ. 136 (երկուսն էլ նորագիւտ բառ)։

=Թթր. (Ալթայ.) پر pür «ծառի տերև», որ և Տոբոլսկի բարբառով bür (Будаговъ I, էջ 313)։—Ա.Տ.

ԳԻՒՐ.—Արբ. փուր «ծառի տերև», Ջրս. «ծառի նորածիլ տերև», Սեբ. «տերևի մակերևոյթը», Արբ. «մրգենղէնի կամ կանաչեղէնի կեղև», Ակն. «ընկոյզի կամ նուշի կանաչ կեղև». Բն. Ջմ. «սոխի կեղև», Խրբ. «ձուի, խնձորի և ծառի կեղև», Ջն. «ձկան թեփ»։

Փուրծ տե՛ս Պուրծ։

Müller SWAW 41, 13 արամ. פּלט plt ձևից փոխառեալ կամ ուիլի հատանաբար ընդ. pərəθ։—Հինք. փրկել բայից։ Scheftelowitz BB 28, 309 լիթ. sprauga «ցանկապատի մէջ պատառուածք»։ Գաբրիէլեան ՀԱ 1909, 222 փերք բառի մէկ ուրիշ ձևն է։

*ՓՈՒՐԿԱՆ (սեռ.-ի) «Մահմետի Ղուրանը». մէկ անգամ ունի Ղևոնդ, էջ 58։

=Արաբ. فرقان furqān «Ղուրան». բառիս բուն իմաստն է «բաժանում, որոշումն ի մէջ բարւոյ և չարի» և յետոյ Ս. Գիրք, որի նպատակն է չարը բարուց որոշել» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 41)։—Հիւբշ. 278։

*ՓՈՒՐՍԻՇՆ «դատական քննութիւն և հարցաքննութիւն». երկու անգամ ունի Եղիշ. Մինչև ի գլուխ չոգաւ փուրսիշն ամբաստանութեան (է, էջ 106). Եւ աշխարհաւ փուրսիշ ի վերայ յարուցիր (ը, էջ 124).—նոյն բառն է նաև փոշիշն (r ընկած u-ից առաջ և u վերածուած շ՝ նմանութեամբ յաջորդ շ-ի), որ երկու անգամ գործածում է ՅՀ. կթ. «փոշիշն ամբաստանութեան նորա յաճախիւր» (էջ 219). «Կապէ զնա և առաքէ տայ ի ձեռս բուղայի, ի մտի եդեալ՝ եթէ գուցէ փոշիշն ինչ բարւոյ ի բուղայէ սակս այնորիկ նմա գոցի» (էջ 160)։ Սրանից անփոշիշ «անդատաստան, առանց հարցաքննութեան» ՅՀ. կթ. 143 (իբրև այնպէս անփոշիշ իմն ի հայրապետէն ոստիկանն լինէր)։

=Պհլ. pursišn «հարց, հարցափորձ»=մանիք. պհլ. פורסישן pūrsīšn (Salemann, ZAH 8, 111), պրս. پرسش pursiš «հարցումն». արանց ծագման վրայ տե՛ս հարց, որ նոյն բառի բնիկ հայ ձևն է։—Հիւբշ. 256։

Նախ ԳԴ դրաւ պարսկերէնից։ ՆՀՐ փուրսիշն բառի մէջ և յօդ համարելով՝ բառը դնում է փուրսիշ ձևով, ինչպէս ունին նաև միւս բառարանները. կցում է պրս. փիւրսիշ և լտ. processus ձևերի հետ. փոշիշ բառին տալիս է երկու նշանակութիւն. առաջին վկայութեան մէջ «քննութիւն ատենական, փորձ հանդիսական» (այն է փուրսիշն), իսկ երկրորդի մէջ «չքմեղութիւն, արդարացուցումն, նպաստ» (պրս. پوزش pūziš «չքմեղանք»). սրանից անփոշիշ «որ չունի տեղի արդարանալոյ, անպատասխանի, պարտաւոր, բաւարկի»։ ՋՔ փոշիշ երկու պարագային էլ դնում է «հարցաքննութիւն ատենական», իսկ անփոշիշ «առանց դատաստանական քննութեան գործող»։ Հիւբշ. KZ 23, 19 և Տէրվ. Նախալ. 94 փոխառեալ պարսկերէնից։

*ՓՈՒՐՓՈՒՉՆԱՅ «մի տեսակ խաղող» Վստկ. 47 (Աղգ մի սպիտակ խաղող կայ, որում հռոմն ասինաս ասէ. և այլ կայ որում փուրփուչնա ասեն). ուրիշ տեղ չէ գործածուած.—Ըստ ՀԲուս. § 3092 յոյն բնագիրը բառիս դէմ ունի կուկինեքական։

=Անշուշտ նոյն յունարէն բառն է, ինչպէս վկայում է նաև Վաստակոց գրոց թարգմանիչը. միայն յառաջացած է բառի արտաբերէն տառադարձութիւնից՝ սխալ կէտադրութեամբ. այսպէս قورقنتیه qūrqintiya դարձած فسفورقو fūrfusna. Համմտ. նաև

ճաւառս՝ նոյնպիսի սխալ ընթերցմամբ յառաջացած։—Աճ.

*ՓՈԻՓԻԼ կամ ԲՈԻԲԱԼ «բժշկական մի բոյս. լտ. areca catechu L» Մխ. հեր. 72. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3093. նոյնը պուպալ «մի տեսակ շահոքրամ» Բժշ. բստ ՀԲուս. § 2586. փուպել «հնդկական մի պրտուղ» Քաջունի, Գ. էջ 248։

=Արաբ. فوفل fūfal, որ ծագում է պրս. پوپل pūpal հոմանիշից (տե՛ս Steinschneider WZKM 12, 228)։—Աճ.

Ուղիղ մեկնից նախ Աճառ. (անտիպ), յետոյ Seidel, Մխ. հեր. § 203 (ուր և բոյսի ընդարձակ նկարագիրը) և աւելի ուշ Նորայր ՀԱ 1923, 499։

+ՓՈԻՔ, ո հլ. «փչած շունչը, փուքսից դուրս եկած օդը» Յոր. է. 7. Սերեր. եղն. «հպարտութիւնից ուռիլը» Լմբ. աստ. Ներս. մոկ. «փորի քամի» Բրս. մրկ. 28. Յայտմ. որից փուff (աննգական) «կրակը հրահրելու գործիք, քէօրիւկ» Յոր. լր. 19. Երեմ. ղ. 29. Եա. ծգ. 16. «նուագելու տիկ» Սերեր. «բնդնդէնի կճեպ», Բժշ. փքալ, փքանալ, «ուռիլ, տկռիլ» (հպարտութիւնից) Բ. մկ. Բ. 4. Ագաթ. «փուք արձակել» Մանդ. փքռնուլ Փիլ. լին. փռոիլ «ուռչիլ» (ՔՔուած խմորի համար ասուած) Տարօն. Ա. § 96, էջ 196, «ուռիլ» Զիարուծութիւն (Զեռ. Թաւրիզի, էջ 110). փռուն, փռոց (նոր բառեր), փռոցուռոյց Ագաթ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. phu- «փչել» բնաձայն արմատից. ընդարձակ տե՛ս ճևալ, փուչ, ոգի, ճոգի, որոնք ծագում են նոյն արմատից (Boisacq 1042, Pokorny 2, 79—80, 144, Trautmann 234):

ԳԴ պրս. پوق pūq «փուք, փչիւն կամ փչոմն բերանով»։ ՆՀԲ նոյն է դնում հյ. փուչ. յն. φῦς ռմկ. ֆը՛ս, պրս. փուf բառերի հետ։ Lag. Urgesch. 191 լիթ. puti։ Տէրվիշ. Altarm. 5—6 հյ. փչել, փուն, փոփոգել են, ինչպէս նաև պրս. pūk, յն. φυχή, հսլ. пыхá, ռուս. пухнуть «ուռիլ» են բառերի հետ հնխ. spu արմատից։ Հիւբշ. ZDMG 35 (1881), 663 պրս. pūk բառից. իսկ Arm. Stud. (1883), § 285 պարակերէնից փոխառեալ չէ, այլ փչել բառի հետ՝ իբր բնիկ հայ կցւում է յն. φῦσα, ῥυσάω «փչում, փչիլ» բառերին։ Justi, Dict. Kurde 294 քրդ. fik «սրինգ», fikandin «սրինգ ածել» և վրաց. փուխի բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 93 հնխ. pu «փչիլ» արմատից՝ f ածանցիչով։ Meillet MSL 7,58 և 8, 293 փուf և pուf բառերի f ձայնի համապատասխանը չգտնելով ցեղակիցների մէջ՝ մասնիկ է համարում։ Հիւնք. հյ. փչել և պրս. pūg ձևերից։ Horn. Grdr. § 339 յն. φῦσα են ձևերի հետ՝ իբր բնիկ հայ։ Հիւբշ. 256 և 502 չի կարողանում որոշել թէ բառս պրս. pūk ձևի՞ց է փոխառեալ թէ իբր բնիկ կցւում է վերիններուն հետ և կամ թէ իբր բնաձայն՝ նմանութիւնը պատահական է։ Meillet, Dial. indo-eur. 81 ունի վերի ձևով։ Պատահական նմանութիւն ունին հսլ. fukati, ռուս. фýкать, ուկր. fúkaty, չհխ. foukati «փչել, քամի անել», չհհ. fukać «նախատել» են (Berneker 286):

ԳԻՒ.—Ալշ. Երև. Խրբ. փուf, Մշ. փուկ, Մկ. փուf[1], Սվեդ. փէօf «շունչ բերնի կամ փուքսի» (օր. Սվեդ. ճիդդուձ փէօf գուճէս «հոտած շունչ ունիս»). Ախց. փուf «զայրոյթ», ՋԲ. Սեբ. Տիգ. փուf, Ալշ. Ախց. Երև. կր. Ջղ. Տփ. փուfս, Մկ. փո՛ւf[1]ըս, Մշ. փուկս, Գոր. Ղրբ. փօfսը, Վն. փիւզ (<*փիւկս ձևից), Ագլ. փօսկ, Սլմ. փիւակ, փիւս «փուքս գործիքը»։ Նոր բառեր են փիլ «ուռիլ» (Մշ. փկիլ «հպարտանալ»), փռուիլ «ուռիլ, հպարտանալ», փշուն, փճնել, փըռիլ «շատ ուտելուց փորը տկռիլ» (>ննխ. ՍլԲ. փռոիլ, Պլ. բռոիլ), փփփռռել, փփփռռուիլ, գիշերապուf. հմմտ. նաև Ագլ. մանչը փէօգ[1] «մէջը փուճ, անամէջ, տճկ. խօֆ (բողկ են)»։—

ՓՈԻԽ.—Վրաց. ფუქვა փուխվա, დაფუქვა դափուխվա «մի բանի մէջ հաւաքուած օդը դուրս հանել», ფუქსი փուխի «փուքս գործիքը» (հյ. փուխս հայցական ձևից)։

ՓՈԻՔՆԻ «մի տեսակ վաղահաս խաղող» Բժշ. վտակ. 50. (Լինի անդ ազդ մի տունկ որ անուանի փուքնի և ինքն շոյտ հասուցա-

նէ զխաղողն... և է ազգ մի ևս զոր ամիենատին անուանեն, որ չէ այլ քան ըզփուքնի)։ Գիտէ միայն ՀԲուս. § 3094։

Վատտակոց Գրոց հրատարակիչը ասում է թէ բնագրի վոլինի կամ վոլոնի բառից է փոխառած, ենթադրելի է ուրեմն յն. *βολίνη կամ *βολόνη որ չգիտեն ոչ Bailly և ո՛չ Sophocles։ Թէ իրօք յոյնը ունի այս ձևը, պիտի տար արաբ. بولنى որ և դիւրութեամբ կարող էր կարդացուիլ فوكنى fūknī>հյ. փուճնի։ Համմտ. վերը փուրփուզնայ և ճաւարս։

—ՓՈՓՈԳԵԼ «ցաւը թեթևացնել, սփոփել» Ոսկ. ես. 405 և մաթթ. ա. ժե. էջ 220 (տպ. փոփոխ. այսպէս սրբագրել ըստ Նորայր. Բառաք. 41), որից փոփոգանք «սփոփանք» Ոսկ. ես. 406։

=Կազմուած է փոփ արմատից՝ -ոգ մասնիկով. աւելի բնդարձակ տե՛ս սփոփ։—Աճ. Տերվ. տե՛ս Սփոփ։

Փոփոխ տե՛ս Փոխ։

ՓՈՔԻ. անստոյգ մի բոյս է. ունի միայն ՀԲուս. § 3095։

+ՓՈՔՐ (սեռ. փոքու, բց. -քուէ, յգ. -քուիմ, -քուից, յետնաբար փոքեր, փոքրէ) «պատիկ, քիչ» ՍԳր. Ոսկ. որից փոքրել «մազերը կտրել» ՍԳր. փոքրիկ ՍԳր. փոքրկանամ ՍԳր. Ագաթ. Եփր. Լ. փոքրոգի Մաթթ. ժա. 30. Ոսկ. ա. Թես. փոքրաքան Ոսկ. ա. կոր. փոքրագին «էժանանոց» Սեբեր. փոքրադիր, փոքրամասնութիւն, փոքրատառ, փոքրամանակ (նոր բառեր) են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. phuku- ձևից, որ առել է հյ. *փուքու, տարանմանութեամբ փուքու, որից փոքր։ Հնխ. արմատն է pōk, pou, pu «փոքր, քիչ», որ -ko-, -ro-, -lo- մասնիկներով աճած ձևի տակ երևում է հետևեալ բառերի մէջ. լտ. paucus «քիչ», paulus, paullus «փոքր, տկար», pauxillus «շատ փոքրիկ», pauper «աղքատ», parvus «փոքր», parum «շատ քիչ», յն. παῦρος «սակաւութիւն, փոքր, կարճ», նաև գոթ. fawai, հբգ. fao. fō, fōh, անգսք. féa, անգլ. few, հհիւս. fár «քիչ, սակաւ»։ Հնխ. pōu- արմատի սաստկականն է (ըստ Ernout-Meillet 707) phau-, որից է յն. φαῦλος «ցածրակ»։ Նոյնի կրճատ phu- ձևից -ko- մասնիկով յառաջանում է փոքր (համմտ. Walde 566, Boisacq 752, Pokorny 2, 75)։—Աճ.

Klaproth, Asia pol. 102 լտ. paucos, իտալ. poco, վոթյակ. pokzi։ ՆՀԲ լծ. լտ. paucus, իտալ piccolo «փոքր», poco «քիչ»։ Peterm. 17, 25, 38 յն. μικρός «փոքր», պրս. pusar և լտ. puer «մանուկ»։ Diefenbach, Berl. Jahrb. 1843, 449 յն. μικρός, լտ. paucus կամ պրս. pusar, սանս. putra, լտ. puer։ Windisch. 15 լտ. paucus։ Պատկ. Изслед. ըստ Windisch։ Տէրվ. Altarm. 7 լտ. pau-cus, pu-er, յն. παῦρος «քիչ», παῖς =*παϝιδ «տղայ», գոթ. faus, favs «քիչ» բառերին ցեղակից։ Նոյն, Նախալ. 93 կա՛մ ծագած հնխ. pu «զարնել, կոտրել» արմատի puk առնականից (համմտ. յն. παίω, լտ. pavio, լիթ. piauti) և կամ աճած է f մասնիկով։ Հիւնք. փուխր բառից։ Bugge 32, 31 ըստ Windisch. նախաձևը դնելով phauku-։ (Մերժում են Walde և Pokorny նախաձայնի պատճառով. վերի ձևով կապելով յն. φαῦλος բառի հետ՝ բացառութիւն է նախաձայնը)։ Patrubány ՀԱ 1908, 277 հնխ. bhog- «չորացնել» արմատից։

ԳԻՒ.—Ջղ. փոքր, Երև. փօքր, Ագլ. Տփ. փուքր, Ննխ. փօքր «փոքր», իսկ Հւր. փօրիկ «մի քիչ», նոր բառեր են փոքրաւոր, փոքրուր, փոքրափոր։

Փչել տե՛ս Փուչ։

*ՓՌԱՍԱՆ «պրաս» Վատ. ունի միայն ՆՀԲ, որ ԱՐ ջնջել է։

=Թրք. پراصا prasa «պրաս». այս բառը յունարէնից է փոխառնալ, ուստի ԺԴ դարուց է և հետևաբար Վատտակոց Գրոց մէջ յետին ներմուծութիւն է. ծագումը տե՛ս պրաս։—Աճ.

*ՓՌԱՏՈՐ, ի–ա հլ. «գործակալ». մէկ անգամ ունի Պղատ. տիմ. 82, որ և իբր բացատրութիւն աւելացնում է «որք են վերագոյն պաշտօնեայք տաճարին»։

=Յն. φράτωρ «եղբայրակից, ընկերակից.

2. ցեղակից. 3. դիւանական պաշտօնեայ, պալատական»։—Հիւբշ. 387։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

+**ՓՒԽԵԼ** *«սփռել, տարածել, պարզել». յետնաբար և քիչ անգամ միայն ունին Գնձ. Վստկ. 187, 194, Կոստ. երգն. 77. շատ սովորական է արդի գրականում և գաւառականներում. հին մատենագրութեան մէջ պահուած է սաստկական ձևը՝* **սփռել** *(փխ. *զփռել, ուր զ դարձել է ս՝ յաջորդ փ-ի պատճառաւ. բստ այսմ հնագոյն հնչումն է բսփռել, ինչպէս գտնում ենք երբեմն գրուած. համմտ. Տաթև. ձմ. ճծր (էջ 728 բ). արմատը* **սփիւռ**, *որ և* **սփիւռ** *տե՛ս առանձին)։*

*=Բնիկ հայ բառ՝ հնխ. phĕr-s ձևից, որ աճած է s աճականով phĕr- պարզականից. (պարզականը առանց աճման գտնում ենք փրփուր<*փիրփուր բառի մէջ, որ տե՛ս առանձին)։ Հնխ. phĕr- սաստկականն է per- արմատի, որի sper- «սփռել, ցանել, ցրուել» ձևից են յառաջանում յն. σπείρω «ցանել, ցրուել, սփռել», σπορά «ցանք», σποράς «ցանուցիր», σπέρμα «սերմ», մրգ. Sprōewen, գերմ. sprühen «ցայտել, դուրս ցայտել, ներտել, ցրուել», լեթթ. spraujûs «դուրս դալ, բխիլ», զանազան աճականներով՝ գերմ. spritzen, springen, լտ. spargo, sparsi «ցանել, ցրուել» են են (*Walde 728, Boisacq *894*, Pokorny 2, 670—2, Ernout-Meillet 918 և BSL № 93, էջ 51):*

ՆՀԲ **սփռել** *բայից* **ս**-*ի անկումով։ Միւսները՝ յատկապէս Մէնէվիշեանի մեկնութիւնը տե՛ս* **սփիւռ**։ *Հիւբշ. 494 յն. σπείρω կգում է կապակցով հյ.* **սրփռել** *բառին, մինչդեռ սա ածանց է. յն. σπ <հնխ. sp միտի տար հյ.* **սպ**։— Karst, *Յուշարձան 403 սումեր.* bur *«լուծել»։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Սչ. **վն. փռել**, *Ախց. Երև. Կր. Ղրբ. Նխճ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* **փռէլ**, *Ասլ.* **փռէ՛լ**, *Հմշ.* **փռուշ**, *Զթ.* **փր՛ռիլ**, *Ագլ. Խրբ. Մկ. Շմ.* **փռիլ**, *Մրզ.* **փռռէլ**, *Սվեդ.* **փըռռիլ**, *Տփ.* **փրիլ**, *Հճ.* **փռրել**.— *Նոր բառեր են* **փռռածծ**, **փռռուն**, **փռռռել**, **փռռուկ**, **փռմաճ**, **փռռց**, **փռռցք**։

ՓՒՆՆԻ *կամ* **ՓՐԵՆԻ** *«վարտամ բոյսը, տուսամբար,* tenacetum balsamita L» *Բժշ. ունին միայն Բառ. երեմ. էջ 325 և ՀԲուս. § 3098։*

***ՓՒՆՆԻՏ** *«խելագարութիւն» Նիւս. բն ժգ։*

=Յն. φρενῖτις «խելագարութիւն»։—Հիւբշ. 387։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՓՒՓԹԵԼ *«ցայտեցնել». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. լծ. սահմ. 639. «Յորժամ տանին զձեռն թէ կտրեն (զբուսան), յերեսն փռթէ զջուրն և կծկի»։*

°**ՓՒՆՁԵԼ** *«ձիու փնչելը, խրխնջել, խրոխտալ, պարծենալ, ճչել, աւաղել, փղշտալ» ՍԳր. ետս. պտմ. Կոչ. 125. Վանակ. յոբ. որ և փռնկալ Ես. ժգ. 8,* **փռնգալ**, **փռնճալ**, **փռնճռալ** *ՅՀ. կթ. 223, Փիլ. ֆռնչել Զքր. սարկ. Ա. 29, որից* **փռնճռոյ** *«փռնքռալու ձայնը» Անսիզք 47,* **փռնչաճմայութիւն** *(նորագիւտ բառ) «փղշտալու ձևից հմայութիւն» Դիրք մոլութ. 134 ա (ուր յիշուած են 14 տեսակ հմայութիւն)։*

=Բնաձայն բառ. կազմուած է փ ձայնից՝ ռ սաստկականով և ն, չ ածանցիչներով. արմատի համար հմմտ. **փչել**, **փուռ**, **փնչել**, *իսկ ձևի համար հմմտ.* **կռնչել**, **ճռնչել**, **դրդրնչել**, **մռնչել**, **զռնչել** *են։—Ա.Ճ.*

ՆՀԲ **ռուիգ** *կամ* **ուիչ** *ձևերի՞ց. լծ.* **վրնջել**։ **Ռուիգ** *բառից է դրուած նաև* ZDMG *32, 330։—Հիւբշ.* Arm. Stud. *§ 286 կասկածով համեմատում է յն.* πταίρω, πτάρνυμαι, *լտ.* sternuo *հոմանիշների հետ։ Տէրվ. Նախալ. 114 նոյն ձևերի հետ հնխ.* spar- *կամ սրա աճական* sparg- *արմատից. հմմտ. սանս.* sphurǰ, *յն.* σφαραγέω «շաչել, շառաչել»։ *Հիւնք.* **ռուիգ** *բառից։ Հիւբշ.* Arm. Gram. *502 անապահով է գտնում կըցիլ յն.* πτάρνυμαι, *լտ.* sternus, *հիւլ.* sreod *են հոմանիշներին։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ. 1899, 204 աւ Հիւբշմանի մերժած մեկնութիւնը կրկնում է* Pedersen KZ 39, 428, *որ և առանց նկատողութեան ընդունում են*

Boisacq 820, Walde 738, Pokorny 2, 101՝ *հնխ.* pster- *արմատի տակ։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. փոնգ՛տալ, *Խրբ.* փորնգ–դալ, *Սվեդ.* փոնգդիլ, *Ախց. Կր.* փոնփտալ, *Մկ.* փոնփ՛տալ, *Ննխ. Պլ. Ռ.* փրորնփդալ, *Համշ.* փոնփդուշ, *Տիգ.* փոնփբալ, *ՋԹ.* փօոնփ–դօլ, փօոնփդոլ, *Վն.* փորնփ՛տալ, փրորչնփ՛կ–տալ, *Սչ.* փոնբալ, *Սեբ.* փրորբդալ, *Ասլ.* փրոր*դալ, *Սլմ.* փրորբկալ.—*այս բոլորը գալիս են* փոնգտալ *ձևից։—Այլ է* *փոնչտալ, *որից յառաջանում են Գոր. Երև. Ղրբ. Զղ. Վն.* փոշտալ, *Ագլ.* փոշօլ, *Տփ.* փշտալ։—*Հճ. զանազանում է իրարից* փոռոնփդօլ *(մարդու համար) և* փոռոնչել *(անասունների համար). այսպէս և Երև. Վն. Տփ. ունինք* փոնչալ՝ *ձիու համար։*

ՓՈՆԴԱԴ *«բժշկական անասոյդ մի բոյս, որի ալիւրը կարիճի խայթածի դեղ է լինում» Բժշ. Դաղիան. ունի միայն ՀԲուս. § 3099։—*=*Երևի խոնդատ «ձկան մահարար» բոյսն է, որ և գտն.* ֆոնդատ։—*Հճ.*

*ՓՍԱԼՄՈՍ *«սաղմոս». մէկ անգամ գործածում է Լմբ. սղ. յոջ. իբր Հյ. սաղմոս բառի համապատասխան յոյն ձևը. Բառ. հրեմ. էջ 326 էլ ունի* փսաղմոս։

=*Յն. ψαλμός «սաղմոս»,—Հիւրշ. 377։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ՓՍԱԼՏ *կամ* ՓՍԱՂՏ, *ի–ա Հլ. «սաղմոսարկու, փոխասաց, դպիր» Ա. Եզր. ը. 5. Լմբ. պտրգ. ՅՀ. իմ. առ. Ճառընտ. գրուած նաև* փսաղտոս *Օրբել. իղ. (Հրտր. էմ. էջ 81), որ սխալ ձև է. սրանից* փսաղտուրիւն *«դպրութիւն» ՅՀ. կթ. 141։*

=*Յն ψάλτης «սաղմոսերգու»։—Հիւրշ. էջ 377։*

Ուղիղ մեկնութեան ծանօթ էր հներից Լմբ. մատ. էջ 85. «իննևերորդ դաս եկեղեցւոյ՝ փսալտաւ, որ թարգմանին երգեցողք»։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և յետոյ ՆՀԲ։

*ՓՍԵՆԱՍ *«արու արմատենու և արու բղենու բեղմնափոշին, որ Հասարակ կամ էգ բոյսի վրայ են ցանում պտղաբերութեան համար». մէկ անգամ ունի Վեցօր. էջ 98։*

=*Յն. ψήν նոյն նշ. մեր բառը առնուած է յն. յգ. հյց. ψῆνας ձևից։—Հիւրշ. էջ 387։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՓՍԻԱՓ *«պրտուից (ճիլից) կամ արմատի տերևից հիւսուած ծածկոյթ, խսիր» Վրք. հց. որից* փսիաբեայ *«խսիրից շինուած» Վրք. հց։ Արևմտահն գրականում գործածական է* փսիաք, *մինչ արևելահնը ունի միայն խսիր։*

=*Յն. ψίαθος «խսիր», որ և նոր յն. ψαθί. բառիս ծագումը անյայտ է՝ ըստ* Boisacq *1077։—Հիւրշ. 387։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

*ՓՍԻԱՓԻՆ *«փոքր խսիր» Վրք. հց. բ. 455։*

=*Յն. ψιάθιον որ նախորդի նուազականն է։—Հիւրշ. 387։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ՓՍԽԵԼ *«կերածը յետ գալ, փսխել, սիրտը թափել» Առակ. իե. 6. Յոբ. ի. 15. Ոսկ. փիլիպ. որից* փսխիլ *«ծանրութեան տակ ճնշուելով փորը դուրս թափիլ» Վրդ. առկ. 26.* փսխիլ *«ալիքները քարին զարնուելով փշրուիլը» Բրս. մրկ. 22 (Որպէս ալիք հարեալ գվիմի՝ փսխին, հարեալ մահն ի տէրունեան մարմին՝ խորտակեցաւ).* փսխած *«փսխունք» Առակ. իզ. 11. Բ. պետր. բ. 22. Մանդ. որոնց պարզ արմատը ՆՀԲ դնում է* փխս, *որ սակայն չէ աւանդուած։*

ՆՀԲ լծ. Թրք. fəšqərmaq, püsgürmek *«ցայտեցնել»։ Հիւնք.* բղխիլ *բայից։ Պատահական նմանութիւն ունի ՖՐր.* pəsqərmaq *«ձիու փռնչել»։*

ԳԻՒ.—Վն. փսխել, փխսել, *Ռ. Պլ.* փսխէլ, *Ասլ.* փսխէ՛լ, *Խրբ. Շմ. Տիգ.* փսխիլ, *Սեբ. Կր.* փսխէլ. *Համշ.* փսխուշ, *Ալշ. Մշ. Սլմ.* փխսել, *Ախց. Երև. Մրղ. Ննխ.* փխսէլ, *Թրքախօս Հայերից Առն.* փսխել օլմագ։—*Դաւառականներում նշանակում է նաև «ճրզմել, ճնշել, սեղմել. 2. հրազէն արձակել. 3. մէկի վրայ բարկանալով սաստել. 4. ձիւը թափուիլ»։*

*ՓՍՈՒՈՍ *«մոխրատեսակ փոշի բերող կայծակ». մէկ անգամ ունի Արիստ. աշխ. 613. ձևո.* փուլոս, *որ պէտք է այս ձևով ուղղել։*

=*Յն. ψόλος «ծուխ, մուր», որից ψολόεις «մի տեսակ կայծակ»։—Հիւրշ. 387։*

Նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ դրին յունարէնից. երկուսն էլ նշանակած են փուլոս *ձևով, բայց ՆՀԲ սրբագրում է* փսուլոս։

Bugge IF 1, 456 փոլոս *համարելով ուղիղ ձև՝ իբր օրինակ է գործածում իր մէկ օրէնքի համար, որի համեմատ բնիկ հայ փ յառաջանում է հնխ.* ps- *ից։*

ՓՍՈՒՍ *«փառքուս». ունի միայն Բառ. երեմ. էջ 326.*

ՓՍՈՒՍ *«մի տեսակ դեղ». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 249։*

ՓՍՍԱԼ *«յամրանալ, ծոյլ շարժիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 326 (տպ. փոսալ, բառաշարքը պահանջում է փսսալ, ինչպէս ուղղուած է բ տպագրութեան մէջ)։*

°**ՓՍՏ-Ա-ԾԱՂԻԿ** *«լեզուի ծայրովը խօսուած» (յունաց արտասանութեան համար է ասում). մէկ անգամ ունի Ճառընտ.= Պտմ. պահ. 8 (ի յունական լեզուածայր փրօտածադիկ ծննքենայիցն)։*

=Կապմուած փսա բնաձայնից և ծաղիկ բառից։ Գւռ. **փստացնել**։

ՓՍՏԵԼ *«սխալիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 326։ Նոյն է գւռ.* **փստալ** *Լ. Ղրբ. Մշ. Վն. «ի զուր անցնիլ, չյաջողիլ», Բլ. Մշ. «սահիլ, դիպիլ»,* **փսա գալ, փսա անց կացնել** *Սրև. «չյաջողիլ, չյաջողեցնել»։*

***ՓՍՏՈՒԿ** *«պիստակ» Բառ. երեմ. էջ 326. ծագումը տե՛ս* **Պիստակ**։

Փսրայ *տե՛ս Փրիտայ։*

Փտեղի *տե՛ս Պտղի։*

Փտղել *տե՛ս Պտուղ։*

ՓՏՈՒ *կամ* **ՓՏՈՒՒ**, *որ և* **փբուր** *կամ* **փբուշ** *«բժշկական անստոյգ մի խոտ» Գաղիան. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3109, որ Նորայր ՀԱ. 1923, 50 կարծում է «խունդատա», բայց Բառ. ֆր. 971 բ դնում է «ազգ ինչ մեծի անկան,* potiron»։

Կայ արաբ. فطة fuṭr *«սունկ»։*

ՓՐԲՐՈՒԿ *կամ* **ՓՐԻՐՈՒԿ** *«արմատ» Կամրկ. Հին բռ. ունին միայն ՀԲուս. § 3113 և Բառ. երեմ. յաւել. 572։*

***ՓՐՉԱՆԴ** *«զաւակ, որդի (արու կամ աղջիկ)». մէկ անգամ ունի Մագ. քեր. 241= Երզն. քեր. Համանիշների մի շարքի մէջ. «Ու չէզոքացն, որպիսի՝ մանուկ, զաւակ, փըրղանդ, ժառանգորդ, հարազատ»։ (ՆՀԲ ունի ու-ով* **փրզունդ**, *Ադոնցի Հրատարակութեան մէջ* **փրզանդ** *է)։*

=Պրս. فرزند farzand *«որդի, զաւակ», է պհլ.* farzand *=գնդ.* frazaiñti- *«սերունդ» (Horn § 816)։—Հիւբշ. 278։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ՓՐՉՈՒՏ *«թաւիշ,* velours*». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 249։ Կասկածելի բառ։*

***ՓՐԻՖԱՅՈ** *նոյն ընդ պրէֆաց, որ տե՛ս. մէկ անգամ ունի Գիրք առաք. 446 բ. «իրնդրուածքն է, որ լինի ի ծածուկ նախքան զպրէֆացիօն»։*

=Լտ. praefatio:

—**ՓՐԹԱՆԻԼ** *«ձեռքից աղատիլ, պրծնիլ» Լմբ. աղ. Մխ. այրիվ. «փախչիլ, կորչիլ» Անսիզք 63. որից* **փրթանիլ ի մաց** *«մտքիցը դուրս գալ. մոռացուիլ» Մխ. այրիվ. 2 (համմտ. պրծանիլ յուշոյ Ոսկ. յհ. ա. 1),* **փրթուցանել** *«նետը պլացնել» Օրբել. Հրտր. էմ. էջ 37, «ձգել» Վստկ. էջ 200.* **փրթչիլ** *«ձեռքից պրծնիլ (փայտ, կացինի կոթ ևն)» Ամբ. դատ. 194. ի փրմաև «բաց թողած, փախցրած» Անսիզք 55, 65.* **փրթուած** *Օրբել. փրթած Հին քեր.։ Յետնաբար դործածուելով անշունչ առարկաների համար բստացուած է «պոկուիլ, պոկել» նշանակութիւնը, որ սովորական է արդի բարբառներում. այսպէս Զքր. սարկ. Բ. 97 «Զի բուռն (կոթը) լախտին շաղախեալ էր արեամբ, փրթաւ ի ձեռանէ նորա. փրթոյց զգեղարդն ի ձեռանէ Շիշուշին».—միջ. հյ. ձև է* **փրչիլ** *«աղատիլ» Անսիզք 81։*

=Նոյն ընդ **պուրծ, պրծանիլ, փրծանիլ** *և* **ապուր**:

Brosset JAs. 14. 383 *և ՆՀԲ իրար լծորդ են համարում։ Այտնեան, Քնն. քեր. 270* **փրթիլ, փրցնել** *հանում է փերբ բառից։ Յակոբեան, Ծաղիկ 1899 նոյ՛՛ 4* **փրցնել** *համեմատում է պրս.* **վիրճ** *«կորզել» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* **ფრეწა** **փրեծա** *«պատռել»։*

Գիւ.—Նոր առումով են գործածում իբր «պոկուիլ, պոկել, խլել» Սլմ. **փրթել, Հճ. փույթել, փույցոնել.** *«ձեռքից բաց թողնել. 2. փրցնել»։ Ասլ. խրբ. Պլ.* **փրթիլ, փրցնել**

(որ է *փրբցնել=փրթուցանել), Սեբ. փըրթիլ, փրթնել (<փրթուցանել), Մշ. փըրանալ, Ալշ. փոցնել «պոկուիլ», փոցուցել «պոկել», Սվեդ. փոցնիլ.—իսկ Շտ. փոքնիլ «ազատիլ» և Զրս. ափուցը փրցնել «ձեռքից ազատել» դեռ առաջին իմաստը անփոփոխ պահում են։ Այսպէս նաև փրքնիլ Վն. «ազատիլ, արձակուիլ», փրբցնել Զթ. «ազատել, ազատ արձակել»։ Համմտ. նաև Ախց. պըրծրցնել «պոկել, փրցնել»։

ՓՐԻՍԱՅ, ի հլ. «չորացած խոտ, խուխ» Փարպ. 3հ. կթ. 197. գրուած փսրայ Ողիշ. ը, էջ 156։

ՆՀԲ «բառ չն. ֆրի՛սսաեօն, ֆրի՛դաեօն»։

Փրծանիլ տե՛ս Պուրծ։

*ՓՐԿԵԼ «ազատել» ՍԳր. որից փրկանք «ազատութեան փոխարէն տրուած դրամ» ՍԳր. Բուզ. փրկիչ ՍԳր. Եփր. ա. կոր. Եւս. քր. փրկանիչ Տիմոթ. կուզ. 234. փրկութիւն ՍԳր. փրկութենական Կոչ. կիսափրկումն Թէոդ. մայր. տիեզերափրկող Անան. եկեղ. Ղևոնդ. փրկարար (նոր բառ)։

=Ասոր. פְּרַק pəraq «փրկեաց, ազատից ապրեցոյց», פָּרוֹקָא pārōqā «փրկիչ, ազատիչ», פורקנא purqānā «փրկութիւն, ազատութիւն», ն. ասոր. p'urkunyä «փրկութիւն». բնիկ սեմական արմատ է, որի ցեղակիցներըն են եբր. פָּדָה fereq «ազատել», հբռվպ. faraqa «ազատել», արաբ. فَرَقَ farq «բաժանել, ճեղքել» են։—Հիւրշ. 318։

ՆՀԲ թուի հանել փեռեկել բայից։ La Croze- (ըստ Lag. Arm. Stud § 2317) արդէն դրել է ասորի ձևի հետ։ Peterm. 17 եբր. ձևի հետ։ Müller SWAW 41, 13 արամ. և արաբ. ձևերի հետ։ Մորթման ZDMG 26, 518 բևեռ. burgamani մեկնում է կա՛մ փրկել կա՛մ հարկ և կամ հարցանել ձևով։ Lag. Arm. Stud. § 2316 հյ. փրկանք դնում է ուղղակի ասոր. purqānā ձևից։ Գաբրիէլեան ՀԱ 1909, էջ 222 գտ. փերկանալ «տեղից բաժանուիլ, զատուիլ» բառի համեմատ՝ արմատը դնում է փերկ, որին կցում է փերթ, փեղկ, փեռեկել, բրդել, փուրծ։ Թիրեաքեան, Աբիահայ բռ. 63 նոյն է համարում պուրծ և պիրկ բառերի հետ։

ԳԻՒ.—Սլմ. փրկել, Ախց. Կր. փրկէլ, Մկ. փրկիլ, Ալշ. Մշ. Ջղ. Սչ. փրգել, Երև. Սեբ. Տիգ. փրգէլ, Մրղ. փիրգել, Ագլ. Խրբ. Շմ. Սվեդ. Տփ. փրգիլ, Զթ. փը՛յգիլ, փը՛րգիլ.—Պլ. կայ միայն փրգիչ «խնճթանոց, չիմարանոց», որ ծագած է Պօլսի Ս. Փրկչի Աղգային Հիւանդանոցի (յարակից նաև չիմարանոց) անունից։ Բրքախօս հայերից Ատն. կրկնութեամբ ունի փրփրկուրիւն եօf «շատ չքաւոր»։

ՓՈԽ.—Justi, Dict, Kurde էջ 77 մեզանից է դնում քրդ. پرگیژ pirgîč «հայի գիրգմանատուն», որ անշուշտ տեղանունից է յառաջացած։

*ՓՐՈՒՐԻՏՈՍԻԿ «պահապան զօրք». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Պտմ. վր. 20. «Եւ կացոյց ի վերայ երկրին պատրիկ՝ որ է աւագ, պայր մի Մակեդոնացի՝ Ագոն կոչեցեալ. տուեալ նմա զօրս հարիւր հազար, որք էին փրոտիտոսիկ քաջակորովք և բռնամարտիկք»։

=Յն. φρουρά «պահապան զօրք, պահակ» բառի մի ածանցն է, որ կորած է յունաց մէջ (չունին Bailly և Sophocles). Համմտ. φρουρητός «պահպանուած», φρουρητικός «պահապան», φρουρέω «պահել, պահակ կանգնիլ, պաշտպանել, զինուորական պաշտպանութեան տակ առնել»։—Աճ.

ՆՀԲ և ԱԲ չունին բառս։ Պտմ. վր. տպուած է փրոտիտոսիկ, որ հրատարակիչը համարում է յն. προταχτός «առաջնակարգ զինուորք, որ առ յոյնս յառաջնում գծի բանակին կարգէին»։ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. Բ. 17 մերժում է այս մեկնութիւնը, որովհետև յն. π>պ ո՛չ վրացերէնում և ո՛չ հայերէնում չէր կարող շփոթուել փ-ի հետ. բացի այդ՝ միւս ձայներն էլ համապատասխան չեն. ուստի սրբագրում

է փրուրիտոսիկ *(սխալը յառաջացած է ur և u ձևերի նմանութիւնից)* և մեկնում է վերի ձևով։

ՓՐՅԼԻՔ «շողիք, բերնից վազող թուք» Վրդ. առ. 321 *(ոնի Նորայր, Բառ. ֆր. 138* u bave). *որ և* փցլինք «նոյն նշանակութ.» Վրդ. առ. 116։

Մառ. Վրդ. առ. I, էջ 197 դնում է Թրք. پيسلك pislik «կեղտոտութիւն» *բառից։*

ԳԻՒ.—Ագլ. փցլինք[1], *Ղզ. Ղրբ.* փսլինք[1], *Լ.* փսլինք, *Շմ.* սլինք[1], *Մկ.* ցմբլինք[1].— *նոր բառեր են* փսլնֆոտ, փսլնֆաջուր, փսլնֆոտիլ, փրցլոտիլ *(Ախց. Կր.)* «խիստ բարկանալ, զայրանալ»։

+ՓՐՓՈՒՐ, n *հլ. (յեռնաբար յգ.* փրփրուն, -րանց) «փրփուր» *Վնցօր. որից* փրփրել, փրփրիլ *Մրկ. Թ. 17, 19. Յուգ. 3. Են.* փրփրեցուցանել *Ղկ. Թ. 39.* փրփրածին *Նոնն. Մագ.* փրփրեռախ *ՅՀ. իմ. պալ.* եղեգնափրփուր *ՋԹ.* ծովափրփուր, փրփրալից, փրփրուն *(նոր բառեր)*։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* pher- *արմատից, որ և* sper- «ցանել, ցրուել, սփռել», *(տե՛ս* փռել, սփիո). *սրանից հյ.* *փիր, *կրկնութեամբ* *փիր-փուր>փրփուր. *ցեղակիցներից ունինք միայն յն.* ἀφρός «փրփուր»՝ *պարզ արմատից, առանց կրկնութեան և* α *յաւելուածով. Համմտ. նաև օսս.* ffiur «փրփուր»։ *Միւս հնդևրոպական լեզուների մէջ այլ արմատից ունինք* n *կամ* m *բաղաձայնով՝ սանս.* phéna-, *օսս.* fing, *հպրուս.* spaoyno, *լիթ.* spáine, *հբգ.* feim, *հանգլ.* fám, *լտ.* spūma, *սոգդ.* pym'kh, *որոնք հաւանաբար պակասում են հյ. և յն. (*Meillet-Ernout *927)*։

ՆշԲ լծ. յն. πορφύρα, *լտ.* purpura «ծիրանի»։ Bugge IF *1, 456 միացնում է կասկածով յն.* μορφύρω «ծփալ, տատանիլ *(ծովու)»* *կամ լտ.* spuo «թքքնել» *ձևի հետ։ Հիմնք. յն.* πορφύρα։ Patrubány *ՀԱ 1908 246 կազմուած փուր արմատից, որ կցում է փուք և փշել բառերին։* Petersson, Ar. u. Arm. Stud. 84 *կրկնուած* phor- *արմատից, որի մեկնութիւնը տուել է* Balt. u. Slav. *Et 67, որ չեմ տեսած։ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet, BSL № 93, *էջ 51 (տեղեկացնում եմ օսս.* ffiur)։

ԳԻՒ.—Ախց. Խրբ. Կր. Համշ. Ղզ. Սեբ. Սչ. Տիգ. փրփուր, *Ռ.* փուրփուր, *Գոր. Ղրբ.* փրփօր, *Սվեդ.* փրփէօր, *ՋԹ.* փօյփույ, փօրփուր, *երև. Ալշ. Մկ.* փոփուռ, *Ագլ.* փրփօռ, *Շմ.* փոփրո, *Սլմ. Վն.* փոփուռ, *Մշ.* փրռպուռ.— *Նոր բառեր են* փրփրալի, փրփրակալել, փրփրուկ։

ՓՈՒ.—Լազ. փոփոժի, փոփոջի «փրփուր», *որ թէև բառական հետու է երևում հայերէնից, բայց ենթադրում է հնագոյն* *փոփորի. Համմտ. վրաց.* ქაფარი=*լազ.* ქոմոջի «ամուսին» *և վրաց.* ბერი=*լազ.* მწაջի «ճանճ» *(Աճառ. Արրատ. 1911, 419)։ Համեմատութիւնը շատ կարևոր է ջ-ի և r-ի նախնութիւնը որոշելու համար։*

ՓՐՓՐԵՄ «անմեռուկ կամ կոճկորակ կոչուած բոյսը. դանդուռ, լտ. portulaca, *ռճկ.* սէմիզ օբ, *պրս.* խրլֆա» *Բժշ. Հին բռ. Մխ. Հեր. որոնց մէջ գրում է նաև* փերփեր, փրփրեռան, փեռփեռան, փարփար, փառփառ. *Մեր գրականում լինդունուած է* փրփրեմ *ձևով, իսկ արևելահայում չի գործածուում (կայ միայն դանդուռ)։*

=*Պրս.* پرپرم parparam, *որ և* پرپحن parpahan, فرفين farfin, *որից արաբ.* فرفحن farfahan, فرفخ farfax (*Կամուս, Բրք. Բրգմ. Ա.* 554), فرفير farfīr (Steinschneider WZKM 12, 226), *սասր.* ﺣﺮ ﻓﺴﻔﻮﻧﻴﻨﺎ farfonīnā, *քրդ.* perpiná, *վրաց.* ფარფინა փարփինա «փրփրեմ, անմեռուկ»։—*Հիւբշ. 278։*

Նախ ԳԴ կցեց պրս. ֆիրֆիյէ, ֆիրֆէնէն *ձևերին։* Pott ZKM 7, 140 *բրգ. պրս. են ձևերի հետ։* Böttich. Horae aram. 41, 98 *սասր.* parpaxīn: *Տե՛ս և* Seidel 92a:

ԳԻՒ.—Էնկ. Բրքախօս հայոց մէջ փրփրեմ *(Բիւր. 1898, 865), Սվեդ.* փրփրէօմ, *Ագլ.* փրփռրիւն, *Ղզ.* փէրփէրան *(նոր փոխառութիւն պարսկերէնից), Ղափան՝* պրրպրա՛ն, *Կր.* փիրփիրի, *Խն.* փարփար, *Խրբ.* փէրփէր, *Մկ.* փառփառ, *Մշ.* փարպառ, *Ալշ.* փոռօփոռօ *(որ Բուի Թէ նշանակում է*

«օճառախուռ կամ օշինդր»).—Ըստ Մշ. ժողովրդական ստուգաբանութեամբ բառս ծագում է փառ «կտոր» ձևից, իբր թէ փառ-փառ «կտոր կտոր, փերթ փերթ տարածուած բոյս»։

ՓՈՒ.—Թրք. զուռ. S. pirpirim «փրփրիմ» (Բիւր. 1899, 799)։

ՓՐՔԱԼ «դլփին ձկան՝ ջուրը քթի միջից փչելով դուրս ցայտեցնելը» Ածաբ. նոր կիր.—արդիօք ուղղելի փխա՞լ։

*ՓՐՕՍՈՓՈՆ «դէմք, երես». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան։

=Յն. πρόσωπον «դէմք, երես. 2. երևոյթ. 3. դէմք, անձն. 4. շէնքի ճակատ»։

Ուղիղ մեկնեց ՀՀԲ։

Փցլինք տե՛ս Փրցլիք։

Փցուն տե՛ս Փիծ։

ՓՔԻՆ, ի–ա հլ. «նետ» Ա. Թգ. ի. 20—38. Նխ. ա. Թգ. Նչ. եղևկ.։

ՆՀԲ պրս. پیکان paykān «նետ» բառի հետ։ Pictet 2, 208 նոյնի հետ նաև լտ. spica «հասկ» ևն, իբր pik=piç արմատից։ Տէրվ. Altarm. 6. մերժում է պրս. paykān, որ արդէն տալիս է հյ. պատկան, և հանում է փուռ բառից. համմտ. սանս. pū «փչել» և pavi «նետ, սլաք» Հիւնք. պրս. բէյֆեան։ Վերջին անգամ խօսում է բառիս վրայ Petersson KZ 47, էջ 267 և կցելով լտ. spīca «հասկ», spīculum «տէգ, ճոկան, խայթոց», լեթթ. spikis «սուին» բառերին, հանում է *spiqino- նախաձևից։ Ընդունում է Pokorny 2, 654 հնխ. spei- «սրածայր, սրածայր փայտ» արմատի տակ, որի բոլոր ժառանգորդներն էլ անորոշ է համարում Ernout-Meillet 923։

Ք

ՔԱՐԱՐԱ. «ճանդանի խէժ» Բժշ. Հին բռ. ունի միայն ՀԲուս. § 3120։

***ՔԱԼԱ.** «ա՛յ աղջիկ» (իբր կոչական) Մագ. քեր. 242 = Երզն. քեր. նոյն է և ֆալ «աղջիկ» Քուչ. 121. Ադամ. 139 (չունին ՆՀԲ և ԱԲ). Նախատաբար ֆալիկ Աղթամ. (Հրատր. Կոստ. էջ 118)։

= Վրաց. ჭალი ֆալի, ինդ. ჭალ ֆալ, լազ. ֆալ, ֆալէ «աղջիկ». որի կրճատն է վրաց. ჭა ֆա «ա՛յ կին, ա՛յ աղջիկ»։—Աւելի ընդարձակ տե՛ս ծօլա։—Ա՛ճ.

Հներից Առաքել Սիւնեցի հանում է ֆայլ բառից. «Դարձեալ կոչին զանունն ֆալ, քանզի քալեաց ի ծառն շար (ակնարկութիւն Նապի). այսպէս զտեառըք իւր անհամար՝ քայլ քայլ քարշեն զմարդիկ ի շար» (Ադամ. էջ 139)։ Մնացեալը տե՛ս ծօ բառի տակ։

ԳԻՒՐ.— Ալշ. Ախց. Բլ. Երև. Եւդ. Մշ. Պլ. Ջղ. Սեբ. Վն. Տր. Տփ. ֆա. Սլմ. f'm, Ախց. Շմ. աֆա, Ննխ. ֆաֆա. սովորաբար գործածւում են իբր կոչական՝ իգական տեսի համար, տեղ տեղ էլ կինը մարդուն է կոչում այսպէս. կայ նաև ֆալա խաբո՛ւն Վն. Օրտ.։

***ՔԱԼԱՄԱՉԻ** «թարգման». նորագիւտ բառ, որ չորս անգամ գտնում եմ գործածուած Տաթև. և Դրնդ. հետևեալ ձևով. Յուցանէ համբոյր բերանոյն զանընդմիջաբար խօսիլն ընդ մեզ բերանովն իւրով. զի վարդապետն որ քալամաչով քարոզէ, չէ այնպէս քաղցր, որպէս իւր բերանովն (Տաթև. ձմ. է). Նոյնպէս և ի քալամաչիս և յամենայն իրաց միջնորդս (սատանայ սերմանէ) զստախօսութիւն, զդողութիւն, որ յերկու կողմանց չանան գոլանալ (Տաթև. ձմ. դթ). Ընդուն ի յաղօթան՝ նման է ելլուոյ (= թթր. թրք. elči «սուրհանդակ, պատգամաւոր») կամ ֆալամաչոյ (Տաթև. ամ. 225). Նոյնը ֆալամաճի ձևով Դրնդ. 381։

= Թթր. kälimäči حمالمچی հոմանիշ ևնթադրելով ձևից, որ կազմուած է արաբ. كلام kalima «բառ, խօսք» + թթր. či արհեստ կամ զբաղմունք ցոյց տուող մասնիկով։—Ա՛ճ.

ՔԱԼԱՍԻԿ «լեարդի վերին մեծ երակը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. Հարց. 244։

ՔԱԼԱՐ «գեռուն ինչ». գիտէ միայն Քաջունի, Գ. 249։

***ՔԱԼԱՔ** «երկնքի պատումնակը, մոլորակների սահմանը» Տօմար. (քանիցս)։

= Արաբ. فلك falak «երկինք, երկնակամար» բառն է, որ սխալ գրչութեամբ այս ձևն է առացել՝ փխ. փալաք. հմմտ. նաև փիլաք։—Ա՛ճ.

Նոյնպէս է մեկնում նաև ԳԲ։

ՔԱԼՔԱԼ «մի տեսակ հիւանդութիւն». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. 249։

***ՔԱՄ** (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. ի) «էգ շուն» Նոնն. 46. Տաթև. ամ. 22. գործածուած է նաև ուրիշ անասուննների համար. ինչ. իշու ֆած Վրդն. առ. 119. գայլի ֆած Առակք ողոմպ. ա. ֆած ինձ (իբր ած. «էգ ինձ») Բռ. ստեփ. լեհ. որից ֆածքոր «մի տեսակ բորոտութիւն» Վստկ. 223 (գրուած ֆածպոր)։

= Կովկասեանններից փոխառեալ բառ, որի հետ հմմտ. արչ. k'ačč «էգ շուն», վար. k'ača, լակ. k'učča, կիւր. k'ač, kkxač, թուշ. kaǯ, կոմուկ. kueči, ավար. k'uča, guaži, օսս. ֆաչա «էգ» են (տե՛ս Erckert, Die Spr. d. kauk. Stammes, №№ 190, 191

և 346)։ Որովհետև հայ բառը շատ սակաւ գործածութիւն ունի, մինչդեռ ընդհակառակը կովկասեանների մէջ շատ է տարածուած, ուստի պէտք է կարծել թէ փոխառուն հայն է։—Հիւբշ. 397։

Böttich. Arica 64, 48 սանս. svaǰā «աղջիկ»?. Lag. Urgesch. 869 աֆղ. χāça ձևի հետ։ (Հիւբշ. Arm. St. էջ 14 մերժում է երկուսն էլ)։ Տէրվիշ. Altarm. 62 հալ. coyka «էգ շուն», դնդ. spaka, պրս. sag «շուն»։ Նոյնը նաև Մասիս 1882 յուլ. 24 և Լեզու 160։ Հիւնք. ճնճել բայից։ Վերի մեկնութիւնը տուին Thomaschek, Deutsche Litt. 1883, էջ 1254 և Bugge KZ 32, 86: Pedersen, Հայ. դր. լեզ. 230 հայ բառը կցելով սրգ. swach «տկար» բառին (համմտ. լտ. mulier «կին» <mollis «թոյլ»)՝ կովկասեանները հայերէնից փոխառեալ է համարում։ (Հակառակ է Pokorny 2, 527)։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 342 հյ. էնք և թրք. قانجق qanǰəq: Պատահական նմանութիւն ունի սանս. kaća «էգ փիղ»։

ԳԻՒՌ.—Ջղ. ճած «էգ էշ», Ախց. ճած «էգ մատակ» (բոլոր անասուններին), Գոր. Կր. Ղրբ. Մրդ. Սլմ. Շմ. Տփ. ճած, Երև. Համշ. Մշ. Սեբ. ճած, Ագլ. ճաց «էգ շուն կամ նախատ. կին», Վն. ճ'ած «մատակ էշ կամ էգ շուն», Մկ. ճ'ած «նախատական բառ կանանց», Ասլ. ճած, ճազ «էգ շուն կամ նախատ. կին», Սչ. ճած «անամօթ՝ ջլթիկ աղջիկ», Խրբ. ճած «էգ մատակ», Սեբ. ճած ածու միս «յոռի տեսակի բան».—Նոր բառեր են ճաճարմատ, ճաճուճուճ «աղջիկներ», ճաճիկ-փաճիկ լինել «քծնիլ», ճաճաբեր, ճաճոռ, ճաճի։

ՓՈՒՇ.—Քրդ. kać «աղջիկ» (Beidar, Gram. Kurde 70):

ՔԱՇԱԻԱՐՈՏ «կռտած, ներքինացեալ». Մէկ անգամ ունի Ղևտ. իր. 24. Նոյն բառը Տաթև. Հարց. 371 գրում է ճաճաւարի և մեկնում է «այլամազն խառնեալ», այսինքն «բուրդը խառնիխուռն գոյներ ունեցող անասուն»։

ՀՀՔ և ՆՀՔ մեկնում են ճած և առու բառերից կազմուած. ՀՀՔ -ոտ մասնիկ համարելով՝ իր կողմից շինում է նաև ճաճաւարել «արուն կոտել, ներքինացնել» ձևը, որ այլուր չեմ գտած։ Տէրվ. Altarm. 75—76 ճած «ձուանք կամ վարոց» (=սանս. skand «ցայտել, ցրուել»)+ւար «կտրել, ջարդել» (=սանս. vadhri «ներքինացնել»)+-ոտ մասնիկ։ Հիւնք. խաւարծի բառից՝ -ոտ մասնիկով։ Հիւբշ. 398 պէտք չէ, ասում է, սրա մէջ ճած բառը փնտռել։ Pedersen, Հայ. դր. լեզ. 218 -ոտ մասնիկով ճած և վարել բառերից։

ՔԱԿ «բաժանում, անջատում կամ բաժանեալ, անջատուած, զատուած» Ոսկ. մ. գ. 26. Նահապ. որից ճակել «բաժանել, իրարից ջոկել. 2. աւրել, քայքայել. 3. ջնջել, ցրուել, մէջտեղից հանել» ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. յհ. ճակիչ Մագ. երգն. մաթ. ճակումն Փարպ. ճակուտ «խախուտ» Եփր. Համար. 55. անճակ Ել. լթ. 21. Սևբեր. Ոսկ. մաթ. Ագաթ. անճակութիւն Ագաթ. կողմակ Բուզ. դիւրաճակ Կոչ. 90. ձեռնաճակ Ջքր. կթ. դժուարաճակ Փիլ. սաստկական ա մասնիկով՝ ճակատել «քակել, բանդել, քայքայել» ՍԳր. ճակատումն Բուզ ե. 21 ևն։

Տէրվ. Altarm. 19 և Նախալ. 46 հնխ. ska արմատի ածանց skak- ձևից. համմտ. հյ. հայհայել, սանս. chā, զնդ. skā «կտրել, բաժանել», յն. σχάω «ճեղքել»։ Հիւնք. ճակոր բառից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 73 յն. κακός «վատ», լտ. cacare «աղքել» և հյ. ճակոր բառերի հետ։ Scheftelowitz BB 28, 307 գերմ. schwach=հբգ. swach «թոյլ» բառի հետ (մերժում է Pokorny 2, 527)։ Meillet MSL 15, 340 բաժանելով ճակոր բառից՝ ուղում է կցել թերևս փռիւգ. κακοῦν և յն. κακός «վատ» բառերին, Karst, Յուշարձան 416 մոնգոլ. xagul, բուրեաթ. xugul, kukul ևն «կոտրել, խորտակել»։

***Օնոսմա.** «բժշկական մի խոտ է» Ամիրտ. որ սխալմամբ գրում է ավճուսմա, իմա՛ ունոսմա. ունի միայն ՀԲուս. § 3251։

= Արաբ. اونوسما aunusmā, որ փոխառեալ է ինքն էլ յն. ὄνοσμα «lithosperme violet» բառից։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

Օճ կամ օշ թէ «երանի՛ թէ, իցէ թէ» Սղ. ճԺը. 5. Ոսկ. բ. կոր.. Պիոն. 384. Քեր. թր. երդն. քեր. Պրպմ.։

Տէրվ. տե՛ս Վաւաշ։ Հիւնք. նոյն ընդ վա՛շ և թրք. էշ (?)։

Օշ, Օշակ տե՛ս Աւշակ։

Օճ «մսի պատառ, կտոր». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Գոր. և Շմ. էջ 71. «Ճեղքեսցին և քակտեսցին օշխ ձեր ի թիկանց ձերոց», նոյն են նաև օշ օշ կոտորիմ «կտոր կտոր լինել» Պիոն. 386. ոշ ոշ կոտորեալ Վրք. և վկ. Ա. 124. որից օշատել Նոնն. 12. Առ որս. Պիտ. օշատում, օշոտում Նոնն. 12. օշել Փարպ. օշոտել Պիտ. Սարգ. աւելի գործածական է բառս յ նախդիրով՝ յօշ, որից ունինք յօշ յօշ «պատառ պատառ, բղիկ բղիկ» ԱՒ. յօշել «կտոր կտոր անել» ՍԳր. Ագաթ. Կոչ. 341. Վեցօր. 162. յօշատել կամ յօշոտել Գնձ. Նար. 58, 62. յօշուած ՍԳր. յօշումն Մագ.։

ՆՀԲ յօդ բառից կամ իբր յօտել։ Հիւնք. յօդել բայից։ Karst, Յուշարձան 422 թթր. üz, öz, yüz «կտրել, բաժանել», չաղաթ. osmaq, yüzmek, օսմ. ösmek «կաշին հանել»։ Պատահական նմանութիւն ունին թրք. oš-al-maq «խորտակուիլ», oš-at-maq «խորտակել»։—Գոր. և Շմ. օշխ ձևը վարդանեան ՀԱ 1922, 477 ուղղում է յօդխ. սա-

կայն սրանով օշ ձևը չի ջնջւում։ Սրա դէմ է Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 295։

***ՕՇԱՐԱԿ** (ի–ա հլ. ըստ ՆՀԲ. կայ միայն բց. –է) «այլևայլ հիւթերից պատրաստուած ախորժահամ ըմպելիք» Երգ. ը. 2. Նար. երգ. Բժշ.։*

*=Պհլ. *afśarak ձևից, որ հաստատում է պրս. oشفا afšara «մուշ կամ քամուր, պտուղների հոյզ». ասւում է նաև afšara. գալիս է afšurdan «խաղող և այլ նման պտուղներ ճզմելով՝ ջուրը քամել» բայից։ Իրանեանից են փոխառեալ նաև ասոր.* ܐܦܫܪܓ *afśarag «պտղի քամուք» (*Brockelm. Lex. syr. 62 *ա) և արաբ.* افشرج *afšaraǰ, որից էլ վրաց. ავშარაჯი ավշարաջի «օշարակ»։—Հիւբշ. 259։*

Պրս. ձևից դրին նախ Lag. Ges. Abhd. 214 *և յետոյ* Beitr. bktr. Lex. 5, *Հիւնք. են։ Պատահակա՞ն նմանութիւն ունին ասոր.* ʿūṣārā *«հոյզ, ճզմած հիւթը»=արաբ.* عصارة ʿuṣāra *նոյն նշ.։*

***ՕՇԻՆԴՐ.**

*=Պհլ. *afśind-. աւելին տե՛ս ափսինք։*

***ՕՇՆԱՅ**, որ և օշնա, ուշնա «կաղնի ծառի վրայ բուսնող մի տեսակ մամուռ. muscus arboreus» Բժշ.։*

=Արաբ. պրս. ušna *նոյն նշ. որից փոխառեալ են նաև լտ.* usnea, *ֆրանս.* usnée *«մի տեսակ մամռային բոյս»։*

Ուղիղ մեկնեց Հիւս. § 3254։

***ՕՇՆԱՆ** «օճառախոտ, saponaria. օճառի պէս փրփրող և իբր օճառ գործածւող մի տեսակ բոյս է» Եղիշ. ը. էջ 156, Բժշ.։*

*=Պհլ. *afšnān ձևից. հմմտ. պրս.* اشنان ušnān *(որ և* vušnan, šinān*) «օճառախոտ». ենթադրում է Հպրս. *awi-śnāna-(WZKM 10, 183), զնդ. *ava-snāna-, *us-snāna-ձևերը, որոնք կազմուած են* snā- *«լուալ» արմատից՝* avi, ava, us *մասնիկներով։ Պրս. բառը ճիշտ նոյն ձևով փոխառեալ է նաև արաբերէնի մէջ, ուր բոյսական ձևով էլ կայ* تاشّن taaššun *«օշնանով լուացուիլ» (կամուս, Թրք. Թրգմ. Գ. 592)։—Հիւբշ. 259, 515։*

Նախ ՆՀԲ պրս. իշնան, վիշնան ձևերի հետ։ Նոյնը նաև Lag. Beitr. bktr. Lex. 28: Հիւբշ. Pers. stud. 15 *հայը դնում է *ոշնան ձևով, որով կգում է պրս.* ušnān *<հպրս.* ušnāna- *ձևերին։*

Օսարդ *տե՛ս Աւսարդ։*

ՕՍԼԱՅ *«նշալ, նշաստա». ունին միայն ՀՀԲ և ՋԲ՝ իբր նոր բառ. ըստ Նորայր, Բռ. ֆրանս. 54ա մհգ բառ է և բուն ձևն է* **nuլայ**, *որից* ոսլայել *«օսլայով պատել թուղթը» Տաղ. 1604 թուից (հրտր. Բազմ. 1922, 102)։*

***ՕՍՐ** «դարբինի սալ, զնդան». նորագիւտ բառ. յիշում է միայն Պատկ. Драр. камни, էջ 71։*

=Թրք. اورس örs *«սալ»։—Ա.Ճ.*

***ՕՏԱՐ**, ի–ա հլ. «օտար, դրսից, ոչ-բնիկ. 2. պանդուխտ, հիւր» ՍԳր. Եւս. պտմ. Եփր. ա. Թես. և բ. տիմ. «պարապ տեղ, ի զուր» Ես՛թ. դ. 1. որից* **օտարագոյն** *Ագաթ.* **օտարազգի** *Եղ. իթ. 33. Ղեւտ. իբ. 10. Ես. ծզ. 3. Եզն.* **օտարանալ** *ՍԳր. Ոսկ.* **օտարախառն** *Ղեւտ. ժԹ. 19.* **օտարակերպ** *Վեցօր.* **օտարածայն** *Բ. մկ, ժդ. 26. Երր. ժդ. 9. Կոչ.* **օտարամիտ** *Ոսկ. Եւս.* **օտարասէր** *Ա. պետ. դ. 9. Եւս. քր.* **օտարոտի** *ՍԳր. Եզն. Եփր. ծն. Ոսկ. Նոր բառեր են* **օտարահպատակ**, **օտարերկրացի**, **օտարախօս**, **օտարամոլութիւն** *ևն։*

*=Պհլ. *awtar ձևից. հմմտ. զնդ.* aiwitara-, *որ մէկ անգամ գործածուած է Եաշտ. ժէ. 14 և նշանակում է ըստ նոր քննիչների «օտար»* (Bartholomae, Altir. Wört. 90): *—Հիւբշ. 112?*

ՆՀԲ լծ. հյ. **վտար**, ի **տար**, *յն.* ἕτερος, ἀλλότριος։ Lag. Urgesch. *266 դնում է սանս.* tar *արմատից՝ յն.* τῆλε *«հեռու» բառի հետ։ Էմին,* Ист. Аохика *119 ο մասնիկով* **տար** *«հեռու» բառից։* Lag. Beitr. bktr. Lex. *5 զնդ.* aiwitara-, *Տէրվ.* Altarm. *47 սանս.* avatar *«հեռացնել»,* vitar *«մէկ կողմ տանիլ, բաժանել»։ Նոյն, Մասիս 1882 յունիս 24 տե՛ս* **վտար**: *Մատ* ЗВО 5,

317 և Müller WZKM 9, 299 սանս. ántava-, գոթ. anþar, լիթ. antras հսլ. vŭtory ձևերի հետ՝ իբր բնիկ հայ։ Meillet, Rev. crit. 1896, 423 պհլ. y'avītar, որ տուել է յաւտար>հաւտար>օտար (ի-ի անկումով)։ Հիւբշ. 511 միջոցով է Müller-ի մեկնութիւնը՝ սպասելով գոնէ աւդար>օդար. իսկ Meillet-ի հակառակ՝ ցոյց է տալիս թէ վերի պհլ. բառը պէտք է կարդալ yuttar, իբր yut արմատից բաղդատական=զնդ. yūta- «բաժանեալ»։ Հիւնք. 118 տար բառից, 340 վտարել բայից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 66 աւ (=սանս. ava-, լտ. auferre) մասնիկով՝ տանիմ բայից։

ԳԻՒ.—Ախց. Կր. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. օտար, Տփ. օ՛տար, Ալշ. Մշ. Ննխ. Սեբ. Սչ. օդար, Տիգ. օդմր, Մկ. Շտ. ուտար, Ջթ. ուդօյ, ուդար, Սվեդ. ուդը՛ր (օտար հավերը բշելու համար բացականչութիւն, ը՛շը՛շ)։ նոր բառ է օտարացնել (Ննխ. օդօրցուիլ, օդուրցուիլ) «օտար կարծելով վախենալ» (մանուկների համար է ասում)։

ՓՈԽ.—Ըստ Bugge IF 5, 168—80 (Բրգմ. ՀԱ 1895, 230) մեզանից է փոխառեալ գոթ. gataurniþ «օտարացեալ»՝ Տիմ. ղ. 5 հատուածի մէջ. այս բառը ծագում է մեր օտարացնալ բայից՝ միջին ա-ի ազդմամբ և աւ նախաձանկը ջնջելով։

*ՕՏԱՐԻՏ կամ ՈՏԱՐԻՏ «փայլածու մոլորակը» Շիր. Տաթև. ձմ. աւ։

=Արաբ. عطارد ʿuṭārid «փայլածու»։—Հիւբշ. 265։

Նախ ՆՀՔ և ՀՀՔ դրին պրս. ուդարիա։ Վերի ձևով մեկնեց Հիւբշ. ZDMG 35 (1881), 663։

+ՕՐ (հոլովւում է աւտր, յօրէ, աւտրք, աւտրէ, աւտրց, աւտրբ) «մի օր, գիշեր և ցերեկ միասին» ՍԳր. «արևածագից մինչև մայրամուտը, ցերեկ» ՍԳր. «ժամանակ, կեանք, տարի» ՍԳր. եփր. Թգ. որից օրաւուս Գ. մկ. ղ. 22. Կոչ. կամ օրիաս ՍԳր. եփր. ծն. օրիասարակ. եփր. Թգ. հանապազօր ՍԳր. աւօրեայ Յոր. է. ժ. Ագաթ. աւօրեական Ագաթ. Կորիւն. օրերևակ «ցերեկին երևացող (արև)» Աբան. 199. այսօր ՍԳր. երկօրեայ Գծ. իր. 19. երեքօրեայ ՍԳր. Կոչ. եփր. ծն. երեքօրիկ Ա. Թգ. ի. 19. միջօրեայ ՍԳր. Մծբ. Եւագր. ծերաւուրց եփր. Համար. էջ 16. երկաւուրց Մանդ. սակաւաւուր «վաղանցուկ» Ոսկ. ես. 281. երկաւուրք Վրք. Հց. մանիօր (չունի ԱԲ) «մահուան օրը, օրհաս» Մխ. Հեր. 148. յայսմաւուրկ Յիշատ. նոր բառեր են օրագիր, օրագրութիւն, օրավարձ, օրացոյց, օրհաշիւ, ամէնօրեայ են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. āmōr ձևից, որ առել է նախ *ամուր, յետոյ *աւմր, աւր ցեղակիցներից այս բառը պահել է մի՛միայն յունարէնը, ուր ունինք հոմեր. ἦμαρ (սեռ. ἤματος՝, ἡμέρα, ալլուր ἀμέρᾱ, լեսբ. ἀμέρα «օր» (Meillet IF 5 (1895), էջ 331, Esquisse 32, Joh. Schmidt, Pluralbild. 195, Bartholomae, Studien 2, 37, Bugge IF 1, 453, Pedersen KZ 39, 408 և 428, Boisacq 322, Pokorny 1, 53, Ernout-Meillet 259, 649):—Հիւբշ. 426։

Նախ Acoluthus, Obadias armenus, Lipsiae 1680, էջ 24 և յետոյ Schröder, Thesaur. էջ 45 եբր. אוֹר ōr «լոյս» բառից փոխառեալ։ Klaproth, Asia pol. 105 հֆրանս. žor, ֆրանս. jour «օր»։ ՆՀՔ լծ. եբր. աւր «լոյս», յն. ὥρα, լտ. hora «ժամ, ժամանակ»։ Peterm. 24, 30, 41 եբր. aur, սանս. ahar «օր»։ Գ. Կ., Արշ. արբտ. 1843, № 130 հաւր «կրակ» բառից։ Gosche 26 փուպ. Οὔριος «Արամազդ», պհլ. hūr, xūr, Müller, Kuhns u. Schl. Btrg. 3, 90 պրս. hūr, xūr, պհլ. ōr, արմատը svar: Justi, Gött. Gelehr. Anz. 1866, էջ 997 առում է թէ or=չէ՛ յն. αὔρα «սիւք», αὔριον «վաղը, առաւօտը» բառերի հետ։ Պատկ. Изслед. սանս. divā, լտ. dies ձևերի հետ? Müller SWAW 64, 452 առաջին անգամ կցեց յն. ἦμαρ ձևի հետ։ Fick KZ 22, 96 զնդ. ayarə: Էմին, Հայ հեթ. կր. Բրգմ. Յոյս 1875, 347 և Ист. Асохика 276 երկինք, երկիր, երդ, այրել, եռալ, արեգ բառերի հետ մէկ ընդհանուր արմատից։ Նոյն, Վահագն Վիշապաքաղ (Изслед, 78) սանս. Varuna, յն. Ura-

no´s: *Տէրվ.* Altarm. *51 սանս.* vāsara, *յն.* ἡμέρα, *լիթ.* auszti: *Հիւբշ.* Arm. Stud. *§ 299 կասկածով վերի մեկնութիւնը՝ Մուրատեան, Մասիս 1823 սեպ. 26 լտ.* aurora, *յն.* αὔριον «վաղը»: Canini, Et. étym. 26 *հբր.* or «լոյս» *և մալայ.* ârl «օր»: Գաստպեան, Բիւր. *1890, 155 անգլ.* hour «ժամ»: *Հիւնք. զնդ.* աճուրա մասդա, *հպրս.* աուրա, *հբր.* aur. *յն.* ἄνως «արշալոյս», αὔριος «առաւօտեան», αὔριον «վաղիւ», αὔρα «օդ», ὥρα «ժամանակ», *լտ.* aura «լոյս, օր», aurora «արշալոյս»: Patrybány SA 1, 188 *զնդ.* ayarə «օր»: *Դաւիթ Բէդ. Յուշարձան 396 գալլ.* awr, *կորն.* anur, *բրբտ.* annaor «այն օրից», *հիւլ.* ór, úar: Meillet *(Նամակ 1931 թ. դեկտ. 18) գրում է «թէև յն.* ἡμέρα *բառի հետ համեմատութիւնը ներկայացնում է դժուարութիւններ, բայց բան իս ապահով է. մերժելի է հնխ.* ausra «առաւօտ, այգ» *(որից յառաջացել են լիթ.* aušrà, *լտ.* aurora, *յն.* αὔριον *ևն), ինչպէս ցոյց է տալիս* աուր *տեռականը:*

Գիմ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Հմշ. Մշ. Ղրբ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. Տփ. or, *Մրզ.* or, on, *Ակն.* or *(բայց* ասէor «այսօր»*), Ասլ. Մկ.* էor, *Զթ.* էo՝յ, էo՝r, *Սվեդ.* nur, *Հճ.* էյ.— *Նոր բառեր ևն* օրաբան, օրգաուրի, **օրէնը**, **օրուց-մանկուց**, **օրպատ**, **օրպակաս**, **օրչէք** *կամ* աուրչէք, կէuor *ևն: Գրբ.* **օրհասարակ** *ձևը տե՛ս* հասարակ:

Փոխ.—Բոշ. **օրօրսակ** «կէսօր» (Finck, Die Spr. d. arm. Zig. ЗАН 1907, *էջ 118)*:

ՕՐԱՆ, ի–ա *հլ.* «որանների դէզ. կալսելու համար հաւաքուած ցորենը» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 27. Եփր. մն. 476:*

Նշ՝ի **որայ** *բառից: Տէրվ.* Altarm. *72* **որայ** *բառի հետ=սանս.* lāvya «կրտրել», lāvaka «կարած, հնձուած», *յն.* λῆτον «ցանուած արտ» *ևն: Սագրչեան ՀԱ 1909, 336 և* Karst, *Յուշարձան 408 սումեր.* uru «ցորենի դէզ»: Liden IF *44, 191 իսլ.* Ǫmstr «խոտի դէզ»:

Գիմ.—Ալշ. Ախց. Երև. Երզ. Կր. Մշ. Վն. **օրան**, *Մկ.* էorան: *Տե՛ս և* **որայ**:

ՕՐԱՍ *(գրուած նաև* **աւրաս***)* «աստղերի բոլորտիքը երևցած կալ, բակ» *Արիստ. աշխ. ուրիշ վկայութիւն չկայ:*

Ըստ Նշ՝ի յն. ὅρασις «տեսութիւն, երևոյթ». *բայց նշանակութեամբ, մանաւանդ ձևով անհամաձայն է:*

Օրդու *տե՛ս Որտու:*

ՕՐԲՐ, ի–ա *հլ.* «անէծք, թշնամանք, նախատինք». *մէկ անգամ ունի Բուզ. ե. 3:*

Նշ՝ի յն. ἀρά «անէծք, նզովք» *բառից՝ իբր յգ.* ար–եր «նզովքներ»: *Նոյնը նաև Անդրիկեան, Բազմ. 1906, 440:* Karst, *Յուշարձան 408 սումեր.* ur «անիծել»:

***ՕՐԷՆ**, ի–ա *հլ. (մանաւանդ աննզական)* «օրէնք, կարգ ու կանոն, հին աւանդութիւն, իրաւունք, օրինագիրք» *ՍԳր.* «սովորութիւն» *ՍԳր.* «Հաղորդութիւն» *Եւթաղ. 134. Բուզ. Եղիշ. (այս առման մասին տե՛ս Վարդանեան, Եւթաղ. էջ 134 ծան.)* «գաւառ կամ նահանգ» *ՍԳր. Եւս. քր. (վերջին նշանակութիւնը սխալմամբ յառաջացած յն.* νόμος «օրէնք» *և* νομός «գաւառ» *բառերի նմանութիւնից), «կանանց ամսական հոսումը» ՍԳր. (հետևողութեամբ ասորերէնի, ուր* ܐܘܪܚܐ ʾūrḫā «օրէնք, բարք, կրօն, ամսական հոսում»*): Ածանցման մէջ մտնում է հետևեալ ձևերով.* **1. Օրէն.** *ինչ.* աճօրէն *Ա. կոր. ժ. 21. Առակ. ա. 18. Ոսկ. մ. բ. 26.* զօրէն «կերպով, ձևով» *ՍԳր. Բուզ.* տճօրէն *Լմբ. Սարգ.* իճճօրէն *Եւս. քր. առանց սղման՝* օրէնադիր *Փիլ.* օրէնազանցութիւն *Կանոն. նաև* **–օրէն** «–ապէս» *մակբայակերտ մասնիկը.* **2. Օրէնս,** *որ բառի հայցական ձևն է. ինչ.* օրէնսդիր *ՍԳր. Եւս. քր. Եզն.* օրէնսդրիչ *Եւս. պտմ. Եփր. ծն.* օրէնսուսոյց *Գծ. ե. 34. Ագաթ.* օրէնսատու *Ճառընտ.* **3. Օրինս-,** *ինչ.* օրինապահ *Ագաթ.* օրինաւոր *ՍԳր. Ոսկ. տիտ. Եփր. Եփես. և Փիլիպ.* օրինապատում *Եփր. Թգ. Ագաթ.* օրինական *ՍԳր. Կորիւն. Ագաթ.* աճօրինական, ապօրինի *(նոր բառեր). 4. յ նախդիրով՝* յօրէնս, յօրինս—. *ինչ.* յօրինել *ՍԳր. Ագաթ. Եզն.* յօրինիչ *Սեբեր. Եզն. 15.* սեղանայօրէնս *Ոսկ. մ. գ. 17.* **թա–**

գայօրէն նար. խշ. գեղայօրէն նար. պճնայօրէն նար. կուս.։

=պհլ. *awδēn ձևից, որ է զնդ. *awiδayana-, կազմուած awi- մասնիկով dāy >պհլ. dītan>պրս. دیدن dīdan «դիտել, տեսնել» բայից։ Նոյն բայից ā մասնիկով էլ ունինք պհլ. *āδēn, որից պրս. āδīn, āyīn «սովորութիւն, կանոն. կարգ, կերպ, եղանակ. զարդ», āyīna «հայելի» և փոխառութեամբ հյ. -արէն մասնիկը, իբր իրան. *āδayana-։ Այս բառերի հետ զուգահեռ կազմութիւն ունին պհլ. յԹՄ aδvēn և ՈՐՄ āδvēnak «կերպ, եղանակ», որոնց անորոշ բնթերցումը ճշտւում է այժմ Սար-ի-Մէշհէդի արձանագրութեան 'dwyn ձևով և Թուրֆանի պհլ. 'ywyng ձևով էլ կապւում է δ>y ձայնափոխութեան։ Ենթադրում են իրան. *aδi-vaina- «հայեացք», որ կազմուած է aδi- նախդիրով նախորդին հոմանիշ vaina (որ է պհլ. vēn, պրս. بین bīn) «տեսնել» բայից։—Հիւբշ. 510—511 և IF Anz. 8, 48։

Schröder, Thesaur.[45] քաղդ אוריתא aurītā «տեղեկութիւն, օրէնք» բառից. Lag. Urgesch. 221 զնդ. vərəna «յղութիւն»։ Justi, Zendsp. 270 կասկածով զնդ. varona «հաւատք, կրօնք» բառի տակ։ Ludwig SWAW 55, 190 զնդ. *ahuraēna: Lag. Beitr. bktr. Lex. 6 զնդ. *aorəna: Müller SWAW 64, 452 or բառից՝ իբր «առօրեայ կեանքի վերաբերեալ»։ Մառ ЗВО 5, 316 պրս. āyīn բառից և Արաքս 1890 Ա. 112 զնդ. daēna- «դէն»։ Մառի վերիվերոյ հաւանմատութիւնը գիտական սխտէմի վերածեցին Andreas և Meillet (տե՛ս Maspéro, Recueil 18, 216)։ Meillet, Rev. crit. 1896. 423 և յետոյ JAs 16 (1910), 383 դնում է որ որէն, օրինակ՝ պրս. āyīn, āyīna բառն է, որի պհլ. ձևն էլ կայ, բայց անստոյգ ընթերցուածով. այս անհիմանալի գրչութիւնն է յԹՄ, որ ինքը կարդում է awiδēn, իսկ Bartholomae՝ -ēvēnak՝ Մարքվարտ (անձնական, նամակ 1926 թ. յունվ.) կարդում է պհլ. ՈՐՄ aδvēn և յԹՄ aδvēnak «հայեացք, կերպ, եղանակ, օրէնք, հայելի», որ է պրս. āyīn և հյ. *արէնն, որից շրջմամբ արէն>որէն։—Ս. Գ., Բիւր. 1900, 518 պրս. rang «հրանգ» բառից։ Գազանճեան, Տարեց. Պապիկեան 1905, 125 և Արև. մամուլ 1907, 934—5 յօրինել կըցում է Թրք. էօրմէք «հիւսել» բայից։ Karst, Յուշարձան 424 որէնք=Թրք. oran «չափ, ձև», 417 յօրինել՝ յարել բայից։ Ղափանցեան, Նոր ուղի 1929, յնվ. էջ 340 խալդ. awri «տէր» բառից։ Մեկնութեանս վերի եղանակով ձևակերպումը տուաւ Nyberg, Hilfsbuch 2, էջ 3։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ագլ. Գոր. Երև. Կր. Հմշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տփ. որէնք, Սեբ. յօրէնք, Ղրբ. Մրզ. որէնք¹, Ասլ. էօրէնք¹, Եօրեն*, Մկ. Սլմ. էօրէնք¹, Շմ. օրանք, Հճ. օայէնք.—իմաստի զանազանութեամբ Ագլ. օ՛րէնք «օրէնք» և օ՛րինք¹ «հաղորդութիւն». —Ալշ. անօրա «անկրօն, անհաւատ».—Նոր բառեր են օրինաւոր «շատ, լաւ», օրէնքել «հաղորդել», օրէնքուիլ (Մշ. օրէնկվիլ) «հաղորդուիլ»։

ՓՈԽ.—Էնկիւրիի Թրքաց և Թրքախօս հայոց ու յունաց բարբառով՝ anürün «անօրէն. 2. խեղկատակ» (Բիւր. 1898, 789)։

*ՕՐԹԻ (աւելում է նաև орթի, աւրթի, աւրթի, որթիւ, որթիւ, ուրթի, ուրթիւ) «ուղիղ կանգնեցէք (ուշադրութեամբ լսելու համար Աւետարանի ընթերցումը)» Պարզ. ժմ. Թէոդ. խշ. ևմբ.։

=Յն. ὀρθοί «ուղիղք», որ եզ. ὀρθός «ուղիղ» բառի յոգնակին է. ըստ այսմ ուղղագոյն տառադարձութիւնն է որթի(ւ) ձևը, որ գտնում ենք Պարզ. էջ 187։—Հիւբշ. 518։

Հներից Յովհ. Արճիշեցի, էջ 61 մեկնում է «Որթիւ, որ Թարգմանի ունկն դիք կամ յոտն կացէք»։ Տաթև. ամ. 154 «որթիւ, իբր Թէ օրհնեցէք զՏէր և յառաջ մատիք ի լուր աւետարանին»։ Ուղիղ մեկնեցին ՀՀՔ և ՆՀՔ։

*ՕՐԻՆԱԿ, ի–ա հլ. «նախատիպը, նմոյշ, օրինակ. 2. դաղափար. 3. առակ, նմանութիւն. 4. ցուցակ. 5. գրքի պատճէն. 6. եղա-

նակ, ձև, կերպ. 7. նման. պէս. կերպով» ՍԳր. Եւս. քր. և պտմ. Եզն. Կոչ. որից օրինակ զայս, զայս օրինակ, զնոյն օրինակ «այսպէս, այնպէս» ՍԳր. Փարպ. օրինակագիր Եւս. պտմ. Վեցօր. օրինակել Ագաթ. Փարպ. օրինակութիւն նար. միօրինակ Իմ. ղ. 8. Ոսկ. յհ. ա. 6. Կոչ. վեցօրինակ Եւս. պտմ. բազմօրինակ Փիլ. Խոր. դոյնօրինակ Եղիշ. ընդօրինակել Յիշատ.։

=Պհլ. *awδēnak ձևից, որի վրայ մանրամասն տե՛ս Օրէն:

Նշխ և Հինք. օրէն բառից։ Ա. Գ., Բիւր. 1900, 518 պրս. rang «գոյն, երանգ». բառից։ Գաղանճեան, Արև. մամ. 1907, 934—5 Բրք. էօրնէֆ, որ սակայն հայերէնից է փոխառեալ։

ԳԻՒ.—Ախց. Կր. Ջղ. Վն. Տփ. օրինակ, Ալշ. Երև. Մշ. Սեբ. Սչ. օրինագ, Ննխ. օրինագ, օրնագ, Տիգ. օրինոգ, Շմ. օռնակ, Ղրբ. բրէ՛նակ, Մկ. էօրինակ, Ջթ. ույուռօգ, ույուռնոգ, Պլ. էօրինագ, Ասլ. էօրինագ, էօրինայ. (Պլ. և Ասլ. էօ ձայնը տճկ. örinek ձևի ազդեցութեամբ է, ըստ Աճառ. MSL 10, 324, Թարգմ. Բազմ. 1897, 260)։ Սլմ. էօրինակ գործածւում է միայն հետևեալ դարձուածով. Մարդը էնքան մաշուել նիհարել է, որ էօրինակն է մնացել (այն է միայն երևոյթը)։

ՓՈԽ.—Հայերէնից են փոխառեալ արև. Բրք. اورنك örnak, örnek «պատկեր, նմանութիւն, մի բանի նախատիպը, բուն օրինակը», օսմ. اورنك örnek «նախատիպար, օրինակ, նմոյշ», Կազանի ԹԹր. ürnäk, գաւ. Բրք. Կես. S. և էնկ. (նաև Բրքախօս հայոց ու յունաց բարբառով) örnek «օրինակ» (Բիւր. 1898, 712, 789 և 1899, 798), Եւդ. örnak (Յուշարձան 328)։ Թուրքերէնի միջոցով են լազ. ornegi, քրդ. էօրնէկ, օրինէկ (Համմ. Յովհ. Ժդ. 15 Ջըմա քօ մը ժը ոռա էօրնէկ քի տա=Ձի օրինակ մի հաու ձեզ, Հռոմ. Ճ. 14 Աւ օրինէկ քի պու ժէռա, քօ լը բաշէ տէ պը հաթա=Որ է օրինակ հանդերձելոցն), յն. ὑρνέκι, սերբ. urnek «օրինակ, նմոյշ»։ (Vámbery, Etym. Wört. էջ 78 Բրք. բառը համարելով բուն körnek, ստուգաբանում է gör «տեսնել» արմատից. բայց որովհետև Թուրքերէնի մէջ տարօրինակ է այսպիսի բառակազմութիւն, միանգամայն և գոյութիւն չունի միւս ալթայական ցեղակիցների մէջ, ուստի հաստատապէս փոխառեալ է հայերէնից։ Այսպէս է դնում նաև Будаговъ 1, 127։ Բուն Բրքական բառն է ولكو ülñü (Будаговъ 1, 155)։— Աւելորդ է խօսել Շահինեանի դէմ, որ Բիւր. 1900, 341 Բրք. բառը ուզում է դնել ցեղակից հայերէնի, մինչդեռ հայերէնը պհլ. փոխառութիւն է)։

ՕՐԻՈՐԴ (ի—ա հլ. յետնաբար) «կոյս աղջիկ» Վիպաս. (Խոր. բ. 47), ՍԳր. որից օրիորդութիւն Եփր. ծն. քս. 23. Լմբ. սղ. ճառընտ. գրուած նաև օրտրդ, որիորդ, նաև ուրտրդ՝ ըստ Ալիշ. Հին հաւ. 199։—Իմաստի համար համմտ. Խոր. բ. ծ. «Տալ զտիկին օրիորդն Ալանաց զՍաթենիկ ի կնութիւն Արտաշիսի. Առնու զտիկին օրիորդն Սաթենիկ»։

Նշխ Բրք. (իմա՛ արաբ.) ճիւրի «կոյս պարիկ»։ Տէրվ. Երկրագունտ 1883, 170 «գուցէ թէ որի–որդ», Եազրճեան, Պատկեր 1890, 198—209 սանս. vira «մարդ» ձևից դնում է որ–եար, իգականը ի մասնիկով՝ ուրճի կամ որի, ուրի, որից օրիորդ։ Մէնէվիշեան, Արևելք 1890 Հոկտ. 18 մերժելով այս՝ դնում է or բառից՝ իբր «օր ունեցող, չափահաս աղջիկ»։ Հինք. արաբաեան բառից կամ յն. ἄβρα «աղախին», տճկ. ավրէք «կին», Ալիշան, Հին հաւ. 199 ուրու, ճուրի բառերի հետ։ Pedersen, Հյ. դր. լեզ. 46 –որդ մասնիկով։ Karst, Յուշարձան 402 սումեր. aru «էգ»։ Մառ ИАН 1917, 314 և 1920, 123, ՀԱ 1921, 81 որի=ուրճի+որդի=բասկ. -til «որդի»։ Ղափանցեան, Նոր ուղի 1929, յնվ. էջ 339 խալդ. awri «տէր»+urudani (=վրաց. օրբ) «սերունդ»։ (Սակայն խալդ. «տէր» բառն է ըստ Sayce 477 euri (և ո՛չ թէ awri), որ –II գաղափարանշանի ընթերցուածն է. գրտնըվում է Մհերի դռան արձանագրութեան մէջ)։

*ՕՐՀՆ (ի հլ. յետնաբար) «օրհնութիւն,

բարեմաղթութիւն» Վրդն. պտմ. Յիշատ. ո-րից օրհնել *ՍԳր. Ոսկ. եփես. Եփր. ծն. Սեբեր.* օրհնեալ *ՍԳր.* օրհնիչ *ՍԳր. Եփր. ծն. և հտ.* օրհնութիւն *ՍԳր. Սեբեր.* բազմօրհնեալ *Մաքս. եկեղ.* բազմօրհնեան *Դիոն. երկն.* եկեղեցօրհնէք *Մաշտ.*։

=*Պհլ.* *āfrīnam *«օրհնեմ, գովեմ»* ձևից, *որ կազմուած է* ā *նախամասնիկով* frī- *«սիրել, յարգել, գովաբանել»* արմատից. *համմտ. զնդ.* āfrīnāmi *«օրհնեմ, աղօթեմ»,* frī *«աղօթք»,* frīma- *«օրհներգութիւն», սոգդ.* āfirīwan *«օրհնութիւն», պհլ.* āfrīn *«գովեստ, գովաբանութիւն»,* nafrīn *«անէծք», պրս.* āfrīn, āfarīn *«գովեստ. կեցցե՛»,* nafrīn *«անէծք»։ Այս բոլորը պատկանում է հնխ.* prēi-, prī- *«դուր գալ, հաճիլ, բարեկամանալ» արմատին, որի այլ ժառանգներն են՝ սանս.* prīyatē *«սիրել»,* priyá *«սիրելի, կինը»,* priyátā- *«սէր», գոթ,* frijōn *«սիրել»,* frijaθwa *«սէր»,* frijōnds=*հբգ.* friunt=*գերմ.* Freundᵭ *«բարեկամ», անգսք.* frēod *«սէր», հիսլ.* frī *«սիրելի, կինը»,* frīa *«սիրել»,* frōendi *«բարեկամ», հսլ.* prijatelĭ =*ռուս.* пріятель *«բարեկամ» են են (*Pokorny 2, 86—7)։ *Հայերէնի, ինչպէս և յունարէնի մէջ, այս արմատը չէ պահուած։ Իրանեանից են փոխառեալ նաև ուտ.* afre *«աղօթք, օրհնութիւն»,* afrep'esun *«աղօթել, օրհնել»։ Հայերէնի մէջ պհլ.* *āfrīnam *տուած է նախ* աւրինեմ, *որ թէև անսովոր, բայց պահուած է էջմիածնի հնագոյն Աւետարանում (տե՛ս* Rev. des ét. arm. 1, 168), *յետոյ շրջմամբ* աւրինեմ։

Նշբ մեկնում է «օ՛րդ ինձացի» ձևով։ Gosche *23 տանս.* vr̥, *զնդ.* vərə *«պատուել, ընտրել, որոշել»։* Müller, Kuhns u. Schl. Btrg, 5, 381 *զնդ.* aiwifrī-na, *որ նոյն է վերի մեկնութեան հետ, միայն* ā *նախդիրի տեղ դրուած* aiwi-։ *Թօփուզեան, Արծիւ Վասպ. էջ 44* or ինքնել։ Canini, Et. étym. 172 *տանս.* arh *«յարգել»։* Bugge KZ *32, 29* or և ինքն *բառերից, իբր «հին օր (երկար կեանք) բաղձալ»։ Մառ* ЗВО *5, 320 և* Meillet *դնում են զնդ.* āfrīnāmi *«օրհնել», որ կասկածելի է գտնում Հիւբշ. 511։ Հիւնք.* օրէնք *բառից կամ պրս.* աֆէրիյն *«կեցցես», զնդ.* աֆրիդի *«ըստեղծել»։ Ալիշան, Հին հաւ. 449 զնդ.* աւուրա։ *Հիւբշմանի մերժումը տե՛ս նաև* IF Anz. *8, 48։* Meillet, Esq. *13 նոր պատճառաբանութեամբ, վերի ձևով ընդունելի է դարձնում մեկնութիւնը։*

Գիմ.—*Ջղ.* օրհնել, *Ակն.* օռհնէլ, *Տիգ.* օրնել, *Ասլ.* էօրհնէ՝լ.—*Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Պլ. Ռ.* օրքնել, *Հմշ.* օրքնուշ, *Ննխ. Սեբ.* օռքնել, *Ագլ. Շմ.* օռքնիլ.—*Ալշ. Մշ.* օշնել, *Խրբ.* օռշնիլ, *Սվեդ.* ուշնիլ.—*Սչ.* օրխնել, *Ջղ. Սլմ. Վն.* օխնել, *Երև. Մրղ.* օխնէլ, *Մկ. Տփ.* օխնիլ, *Զթ.* ուխնիլ, ույհնիլ, ուրհնիլ *(այլ թաղերում* ուշնօձ *«օրհնածօ»)։ Այստեղ է պատկանում նաև գւռ. Լ. Ղրբ.* խնօ՛-բուն, *Նբ.* ուխնէքբեն *«սրբի գերեզմանից իբր դեղ վերցրած հող», որ է* օրհնութիւն *կամ* օրհնութեան հող *Երև. և որի հին վկայութիւնը ունի Վրք. և վկ. Ա. 338* (օրհնութեան հող).—*պատահական նմանութիւն ունի ասոր.* ܚܢܢܝܐ xənāyā *նոյն նշ.*—*Նոր բառեր են* աւօրհնել, աւօրհնէք, օրհնաւք, օրհնիքբ, օրհնիքբաւհող, օրհնիքբազիր, օրհնուկ, օրհնուման.—*հետաքրքրական է կրակը օրհնի՛ Ղրբ. «կրակը հանդգրուն» բացատրութիւնը, որ հրապաշտական դարերի մնացորդ է համարւում (Ազգ. Հանդ. Բ. 194)։*

ՕՐՕՐ *«մօր երգը՝ մանկիկին քնեցնելու համար» Տաղ. որից* ororbել *կամ* nrnrbել *«մանկիկին օրրանում շարժելով քնեցնել» Վրդն. ծն.* nrnrալ *«երերալ, շարժուիլ» Բառ. երեմ. էջ 256,* ororng, nrrng, orng, ornrաւն, nrnrաւն, nrrաւն, nrnrng, nrng *«երախան քնեցնելու մահիճ» Մանդ. Եփր. աղբ. Վասկ։*

=*Կրկնուած է պարզական* or *«շարժել» արմատից, որ պահուած է գւռ.* orել, orուիլ, նոր *են ձևերի մէջ։*

Նշբ երերալ *ձևի՞ց։ Հիւնք. պրս.* իւրաւն *«դագաղ» բառից։* Patrubány *ՀԱ. 1906, 56 հնխ.* or *«շարժել» արմատից. համմտ. լտ.* orior *«յառնել», յն.* ὄρνυμι *«շարժել», հյ.* յառնել *են։* Karst,

Յուշարձան 416 մոնգոլ. ulugei, ologun *ճապոն.* juri *«օրօրել»։*

Գիմ.—Պարզ արմատից են՝ Մշ. որել. *Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* որէլ, *Համշ.* որուշ *«օրօրել» և Ախց. Կր.* օրօցք, *Համշ.* որիցք, *Մշ.* որոն, *Ասլ.* էօրա, *Սվեդ.* իւրիւգ, *Զթ.* իւյիւցք, իւրիւցք *«օրօրոց».—կրկնական են՝ Ալշ. Մշ. Սչ.* օրօրել, *Երև.* որո՛րէլ, *Տփ.* որո՛րիլ, *Ախց.* որրրել, *Ալշ.* որրել, *Ղրբ.* բրո՛րէլ, *Շմ.* ուրորիլ, *Սլմ.* էօրէօրել, *Մրղ.* էօրէօրէլ, էօրիւրէլ, *Մկ.* էօրէօրիլ, *Զղ.* աւրօրել, *Ագլ.* բրա՛րիլ, *Զթ.* իյյիլ, իրրիլ *«օրօրել» և Հճ.* ույյօցք *«օրօրոց»։ Նոր բառեր են* օրրանոց, օրօրածածկան, օրօրոցկան, օրօրոցագող, օրոցբերան, օրոցկապ, օրոցչուան, օրուիլ, նոր *(ճիւղերի վրայ օրրան)։*

Փհխ.—Ուտ. լէօրէօց, *«օրօրոց»։*

**ՕՓՐԱՆՏ (որ և* օֆրանք, օֆռանք, ոֆրանք, ոփռանտ) *«ժամուց, եկեղեցուն տրուած նուէր» Մաշտ. կիլիկ. էմբ. մատ. 320, 322. Թղթ. դաշ. 26։*

=Հֆրանս. offrende *(կարդացւում էր* ofrand*), ֆրանս.* offrande *«ընծայ, նուէր առ Աստուած», որ գալիս է լտ.* offero *«ընծայաբերել» բայից։—Հիւբշ. 390։*

ՀՀՔ դնում է լատինից։ ՆՀՔ «բառ գաղղ. ի լտ. offertum*»։*

**ՕՔՍԻՆՏՒ «աստեղնագործ», մէկ անգամ ունի Սեբ. պատմ. 115. «Քանեաց զօքսինտուի զվլատ (ծիրանեգոյն) նափորտն Տէր Ներսիսի, որ շատ ոսկւով կարած էր, որ զէտ ձուլածոյն կանգնէր» (տպ. Մոսկ. էջ 104 զօքսին տուիզ վլատ)։*

=Յն. ὀξυντήρ *«հերիւն աստղնագործաց», որի հետ համմտ. նաև յաջորդը։*

Այսպէս մեկնեց Հացունի, Պատմ. տարագի 397։

**ՕՔՍՈՒՆԱԿԱՆ «ծիրանի, ծիրանեգոյն». մէկ անգամ ունի Թղթ. դաշ. 17. «Մովային ծիրանեօք, օքսունական մետաքսօք մարգարտամաւճօք»։*

=Յն. ὀξύς, ὀξύ *«ծիրանի, մուխ ծիրանեգոյն» (*Sophocles *811 բ)։ Սրանից է անշուշտ նաև վրաց.* ოქსინო ოსინი *«թանկագին ոսկեհիւս կտոր. 2. եկեղեցու վարագոյր»։*

Ուղիղ մեկնեց Հացունի, Պատմ. տարագի 238, որ սակայն ըստ Du Fresne, Glossarium 1688, *էջ 1047 դնում է «մանիշակագոյն» իմաստով։*

Ֆ

[**Ֆ.Ֆ.** *անյայտ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ ունի Սմբ. պտմ. 70. «Ետուն նմա ձի աղուոր և զրահ և տաղաւարտ. և հեծաւ և կապեաց յինքն ֆաթ երեք շիշ. և կապեաց թուղթ ի ծայր ոմբին». (այս բոլոր պատրաստութիւնները տեսնել է թուրքերի բաբանը այրելու համար)։ Պէտք է ուղղել... կապեաց յինք ճֆաթ երեք շիշ... և հասկանալ «նաւթ», որ արդեն կայ գրուած ճֆաթ. տե՛ս նաւթ բառի տակ։*]

Ուղիղ մեկնեց Ստ. Մալխասեանց (1935, մայ. 31)։

***Ֆ.Յ.Լ.** «դատի մէջ պարտուիլ, յաղթուիլ, դատը կորցնել» Անտիզք 61, 63։*

=Ֆրանս. faillir *«թերանալ, պակասիլ»։*

Ուղիղ մեկնեց Անտիզքի հրատարակիչը՝ էջ 60։

***Ֆ.Ն.Ի.Տ** «մի տեսակ շաքար». ունի միայն ՀՀԲ։*

=Արաբ. فانيذ fanīḏ, *պրս.* پنیز panīz, panīð *նոյն նշ.—Ա.Ճ.*

***Ֆ.Ն.Ո.Ս.Ել** «կոկել ողորկել կարասը՝ ձիւթելուց առաջ» Վստկ. 40, 89, 92։*

=Յն. φανός «մաքրութիւնից փայլող, շատ մաքուր»—*Ա.Ճ.*

***Ֆ.Ա.Շ.Ա.Ր.Ա.Յ** կամ **Ֆ.Ա.Շ.Ր.Ա.** «լօշտակ բոյսը» Ամիրտ. (ՀԲուս. § 3260)։*

=Արաբ. فاشرة fāšīra «լօշտակ»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս.։

***Ֆ.Ա.Ռ.Ա.Շ** «պալատի ատորին մի պաշտօնեայ» Սմբ. դատ. 89։*

=Պրս. فراش farrāš «հասարակ ոստիկան կամ գինուոր», *որ արաբ.* فرّاش farrāš «աւելացծու» *բառն է։*

Ուղիղ մեկնեց Karst, *Դատան. 2, 79։*

***Ֆ.Ա.Ր** «մուկ». գիտէ միայն ՀՀԲ։*

=Արաբ. فأرة fāra «մուկ»։—*Ա.Ճ.*

Ֆարասիոն *տե՛ս Փարասիոն։*

Ֆարսաւնկ *տե՛ս Փարսախ։*

***Ֆ.Ա.Ր.Ս.Ի.Ն** «քոս ինչ ձիոց՝ չորեացց» Բժշ. (ունի միայն Նորայր, Բառ. Ֆր. 524 Բ)։*

=Ֆրանս. farcin *նոյն նշ. ծագում է լտ.* farciminum *հոմանիշից։*

Ուղիղ մեկնեց Նորայր, անդ։

Ֆարտ *տե՛ս Փարտ։*

Ֆ.Է.Հ.Ա.Տ.Ք.Ո.Ի.Շ.Տ «հագնի» Վստկ. 197. «Ֆէհատքուշտ և ծծումբ և ատնոպրի մէջ և տաշխա»։ Ալիշան՝ Վստկ. 263 դնում է իբր պրս. «vitex agnus castus» (չունի Գ.Դ)։*

Ֆ.Թ.Ն.Ա.Յ «անուշահոտ դեղնագոյն մի ծաղիկ. փուխի». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 572, որից առած է Թուում ՀԲուս. § 3262։*

***Ֆ.Լ.Ե.Հ.Ի.Լ** «աճիլ, զարգանալ (ծառի)» Վրդ. առ. 172։*

=Արաբ. فلاح falāḥ «յաջողիլ, բարգաւաճիլ» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 502)։

Այսպէս մեկնեց Մառ, անդ։

***Ֆ.Ո.Խ.Լ.Ա.Ն** «այս ինչ, ոմն ոք». գործածական է միայն միջին հայերէնում. համմտ. Անտիզք 1, 13, 15, 39, 41, 75։*

=Արաբ. فلان fulān «այս ինչ անձը», որից Բրք. فلان filan «այս ինչ», filan falan «այս ինչ այն ինչ»։—*Ա.Ճ.*

***Ֆ.Ո.Խ.Ա.** «գարեջուր, biere». գիտեն միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 258։*

=Արաբ. فقاع fuqāʿ *«է տեսակ ինն օշարակիւ» (Գ.Դ). արդի պարսկական հնչումով* فوقا *«ջրից, գարուց և շամչից պատրաստուած մի խմիչք, գարեջուր» (Կիրակոսեան, Բռ. պրս. հյ. Ջուղա 1933, էջ 439). Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 640 գիտէ* فقاع fuqqāʿ

ձևով «հունտերից և պտուղներից շինուած օշարակ» նշանակութեամբ։ Բառս գործածել է նաև Ֆիրդուսի՝ հետևեալ հատուածում.

بپاداش کنج مرا در کشاد بمن جز بهای
فقاعی نداد

ba-pādāš kanǰ marā dar-kušād,
ba-man ǰuz bahā-i fuqāʿī na dād.

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Մխր. Թիրեաքեան (նամակ 1933 սեպտ. 21)։

ՖՐԱ *«եղբայր» (ունիվոռական միաբաններին տրուած կոչում). յետին շրջանի բառ։*

=*Լա.* frater *«եղբայր» բառից համառօտուած։*

***ՖՐԵՐ կամ ՖՌԵՐ** «խաշակիր զինուոր» Ուռհ. «եղբայր» (կրօնաւորի կամ աշխարհականի տրուած կոչում) Թղթ. դաշ. 20։*

=*Ֆրանս.* frère *«եղբայր»։*

***ՖՐԻԱՔ** «ողբ, հառաչ». յետին ժամանակի բառ է. հմմտ. Կոստ. երզն. 91. «Ֆրրիաք կանչեմ հազար... ահեղ հառաչ բերեմ լալով»։*

=*Պրս.* فریاد faryād *«օգնութեան հայցումն»։—Ա՛ճ.*

Պօտուրեան, Կոստ. երզն. 59 դնում է արաբ. **ֆիրիյէք** *«բողոք, հառաչ»։*

ՖՕՏ *«հանդերձի մի մաս, եղերք կամ քղանցքի ծայրերը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բրս. մրկ. 338. «Կարմիր էր հանդերձն (Քրիստոսի քղամիդի համար է ասում)... և ունէր ծիրանի ֆօտո, այսինքն մօտ». (պէտք չէ հասկանալ «fond, տափ», որովհետև նախապէս յիշուած է).—տե՛ս և* **մոտ**։

***ՖՕՏԱՆՋ** «վայրի դաղձ» Վստկ. 78 (Ա՛ռ ղևոնտային ֆօտանջն, որ է լեռան դաղձն)։*

=*Արաբ.* فوذنج fūðanǰ *կամ* فوتنج fūtanj *«բրբ. նարիուղ կոչուած բոյսը», որ արաբացեալ է պրս.* پودنه pūdana *ձևից (Կամուս, բրբ. թրգմ. Ա. 29)։—Տե՛ս և Պուտինա։—Ա՛ճ.*

Ալիշան, անդ, էջ 263 մեկնում է արաբ. պրս. ֆադինէճ *«վայրի ծոթրին,* origanum»։

ՎԵՐՋ

1932 դեկտ. 21, ժ. 10 եր.

«Արմատական բառարանի» հրապարակումից հետո, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» (հասարակական գիտություններ) Հ. Աճառյանը «Հայկականք (Armeniaca)» ընդհանուր խորագրով տպագրել է բառաքննական-ստուգաբանական և բանասիրական բնույթի մանր հոդվածներ։ Այստեղ, իբրև հավելված, դրված են «Հայկականքի» բառաքննական-ստուգաբանական, ինչպես և այլ բնույթ ունեցող հոդվածների բառաքննություններ պարունակող հատվածները, որոնց մեջ տրվում են նոր ստուգաբանություններ կամ վերանայվում նախկիններըւ

«Տեղեկագրում» տպագրված «Հայկականքի» հոդվածներն ունեն ընդհանուր համարակալում (1—74). այստեղ պահպանված է հոդվածների հաջորդականությունը՝ նոր համարակալմամբ. դուրս թողնված հոդվածների պատճառով հեղինակի համարակալումից առաջացած տարբերության դեպքում փակագծում նշված է նախկին համարըւ

Հոդվածների մեջ հաճախ հղումներ են տրվում «Արմատական բառարանին». հեղինակը, բնականաբար, նկատի է ունեցել ապակետիպ հրատարակությունըւ Ընթերցողներին օգնելու նպատակով հավասարության նշանով տրվել են նաև տպագիր հրատարակության հատորը և էջըւ

ՀԱՅԿԱԿԱՆԻՔ (Armeniaca)

Ա.—Թ

1. ԼԱՌՆԱԿ

Իր մի պատմական հոդվածի մեջ, որ տրպված է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» 1944 թ. № 1—2-ում, վրացի հայագետ Իլիա Աբուլաձեն երեվան հանեց հայերեն այս նորագյուտ բառը։ Գործածված է Վարք Հարանց, հտ. Ա, էջ 695. «Եւ մտեալ անկցիս ի վերայ լեառնակի հարցն և ասա...»։ Հեղինակը համեմատելով այս բառը հունարեն բնագրի հետ, գտավ, որ նա համապատասխանում է λάρναξ բառին, որ Հարանց վարքի վրացերեն թարգմանության մեջ թարգմանված է ճշտիվ «գերեզման»։

Այս առթիվ երկու փոքրիկ խորհրդածություն։

ա) Տպագրյալ օրինակում այժմ ունինք լեառնակ, որի տարբերակն էլ է լեառնական։ Արդյոք այսպե՞ս էր նախնական օրինակում։

Լեառն *բառը այն սակավաթիվ բառերից է, որ հաճախ սղման չեն ենթարկվում։ Հավատարապես գործածված կան լեառնական և լեռնական, լեառնաբնակ և լեռնաբնակ, լեառնադաշտ և լեռնադաշտ և այլն ձևերը։*

Այնուամենայնիվ լեառնակ ձևը չկա, այլ միայն լեռնակ. հունարենն էլ λάρναξ. λάρνακος միշտ α-ով է. ըստ Աբուլաձեի՝ նույնը փոխառյալ է նաև վրացերենում և Ջուբինովի բառարանն էլ ունի էջ 643 ա վրաց. ლარნაკი «урна, рака св. мощей, ваза»։ Ըստ այսմ իրոք որ հայ բնագրում նախապես եղած պիտի լինի լառնակ, որ հետո գրիչները ձևափոխել են լեառնակ։

բ) Արդյոք հայ թարգմանիչը չէ՞ր հասկացել հույն բառը և իր տգիտությունը ծածկելով՝ պարզապես տառադարձել է ու անցել։—Ո՛չ։ Եվ այդ հայտնի է հաջորդ տողերից, ուր թարգմանիչը, այս անգամ դնելով հայերեն համապատասխան բառը, ասում է. «Կրկնեալ իմ երկոտասան ծունր և անկայ ի վերայ գերեզմանի հարցն... (էջ 696)»։

Bailly-ի հունարենից ֆրանսերեն մեծ բառարանում (6-րդ տպ. էջ 1172) այս բառը մեկնված է «urne funéraire, ամֆիմակալ մեռելոց. 2. bière, cercueil, դագաղ»։ Չկա «գերեզման» իմաստը։ Նույն բառը չունի Sophocles 706 ա։

Հայերենի մեջ անսովոր այս իմաստն է, որ ստիպել է թարգմանչին պահելու հունարեն բառը՝ գոնե առաջին անգամ, իբր «գիտական տերմին»։

2. ԴԳԵԱԿ

Իր երկրորդ պատմական հոդվածում նույն վրացի հայագետը քննում է վրացերեն ջո-ლՅՅი դիլեցի «темница զնդան» (Ջուբինով 479 ա) բառը և կցելով հյ. դղեակ բառին, գտնում է, որ երկուսն էլ փոխառյալ են պահլավերենից։

Այնքան ստույգ և գեղեցիկ է այս մեկնությունը, որ ցավում եմ թե Ջուբինովի բառարանը ծայրից ծայր ուշադիր մաղելու ժամանակ ինչպե՞ս չեմ նկատել այս համեմատությունը՝ մտցնելու համար իմ Արմատական բառարանի մեջ։

Հարկ չկա բնավ կասկածելու այն մասին, թե հյ. դղեակ բառն էլ, բացի իր առաջին «ամբոց» իմաստից, նշանակել է նաև «զբնդան», ինչպես է և արդի բարբառներում հյ.

բերդ: Եվ երբ Ագաթանգեղոսը գրում է «տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատու», անշուշտ այստեղ դղեակ ասելով պիտի հասկանանք «բանտ կամ զնդան»։

Շատ ճիշտ է նկատում հայագետը, որ վրացերեն բառը թեև հյ. դղեակ բառի համազորն է, բայց հայերենից անկախ է և առանց նրա միջնորդության, պահլավերենից փոխ է առնված ուղղակի։

Թեկուզ այս մի օրինակը բավական է ցույց տալու, որ վրացերենի պահլավական փոխառությունները ամեն անգամ Հայաստանի ճամբով չեն անցել, այլ կարող են առաջացած լինել ուղղակի ճամբով։ Ուստի նախորդի պարտականությունն է այստեղ ամեն մի դեպքում ըստ հնարավորին ճշտել աղբյուրը։

Հայտնի է, որ հին պահլավերենի վերջավորություն էր k, նոր պահլավերենում փոխվել է g, որ պարթևերենում էլ չենջվեց։ Ըստ այսմ հյ. դղեակ հին պահլավերենից է, վրաց. dilegi նոր պահլավերենից, իսկ պարթևերենում սպասելի էր *dile, որ գոյություն չունի։ (Պրս. بلا dūla «բարձր բլուր» կապ չունի սրանց հետ, ինչպես որ ես էլ իմ Արմ. բառարանում (հտ. Բ, էջ 568 = տպ. Ա, էջ 673) դրել եմ կեղծ մեկնությանց շարքում)։

Կամուսի արաբերեն ծավածավալ բառարանում (հտ. Ա., էջ 400) جلد dlǰ արմատի տակ 18 բառ կա, որոնցից դուրս դնելով 4 հատուկ անունները, կունենանք 14 բառ։ Այս 14 բառերը 5 տարբեր աղբյուր են մատնանիշ անում.

1. جلد dalaǰ «գիշերվա սկզբում վեր կենալով ճանապարհ գնալ».

2. جولد dulūǰ «ջրհորի գլխից դույլը վերցնելով՝ թափելու համար դեպի ավազան տանել և ուղտերից կթած կաթը հետոն դրված ավելի մեծ ամանների մեջ փոխադրել».

3. مدلج madlaǰ «ոզնի».

4. دلجان dalaǰān «մորեխների բազմություն».

5. جولد daulaǰ «վայրի գաղանների որջը, գետնափոր նկուղ, ականի (վազում) նման տեղ»։

Համեմատելով այս բառերը եբրայեցերենի և ասորերենի հետ, գտա միայն մի բառ, այն է եբր. דלג dlg «ցատկել, ցատկոտել», որ պիտի կապվի վերոհիշյալ 4-րդ ձևի հետ։ Ասորերենը ոչ մի համապատասխան արմատ չունի։

Մի կողմ թողնելով ուրեմն 1—4 ձևերը, գտնում եմ, որ 5-րդ ձևը (արաբ. جولد daulaǰ նկուղ, որջ), որ ոչ մի սեմական արմատի հետ չի կապվում, փոխառություն է նոր պհլ. *dileg ձևից, որի վերջածայն g ըստ օրինի դարձել է ապաբերենում ج ǰ։ Արաբները այնպես են յուրացրել այս բառը, որ բնիկ համարելով՝ կազմել են նրանից ism-i makān مدلجة madlaǰa «վայրի գաղանների որջ»։

3. ՆԱԽԱԴԻՐ

«Շարադրութիւն հայկազեան հայոց» գրվածքի մեջ Հովհան Մանդակունու համար ասված է թե «Սա նախ գիր գտաւ Հայաստանեայց ժամակարգութեան» (տե՛ս Հ. Բ. Սարգիսեան, Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ, Վիեննա. 1895, էջ 26)։—Անիմա՞ստ խոսք։

Հ. Սարգիսյանը քննում է գիր բառը և գտնում է, որ պիտի նշանակե «ժամակարգութեան վերաբերեալ աղօթքները» և կամ «նշանագիր կամ խաղ երդոց և շարականաց»։ Այնուհետև անցնում է որոշելու թե Մանդակունին սրանցից որն է հնարել։

Այնքան մանրամասն քննությունների հետևից ընկնող հեղինակը գժբախտաբար չի անդրադարձել, թե գտաւ գրաբարում չի նշանակում «գտավ, հնարեց, երևան հանեց» (որ է գրբ. եգիտ), այլ «գտնվեց, հանդիպացավ»։ Ուստի կարելի չէ մեկնել «գիր գտաւ՝ գիր հնարեց» իմաստից։

Այս բանը նկատել է Գալուստ Տ.-Մկրտչյանը և նույն գրքի իր սեփական օրինակում, որ այժմ գտնվում է մեր Մատենադարանում (№ 675a), լուսանցքի վրա մատիտով գրել է «նախադիր»։ Հայերենի մեջ գ և դ տառերի շփոթությունը ամենասովորական բանն է, ուստի և նախադիր սրբագրությունը

շատ պատշաճավոր է, և այդպես է պահանջում գոնաւ կրավորականը։

Դիմեցի Հայկազեան բառարանին և որչա՛փ ուրախացա, երբ տեսա, որ նրա հրանաշրջնորհ հեղինակները (հտ. Բ, էջ 399) ճիշտ նոյն վկայութեան դեմ, նախգիր բառի տակ գրել են «ընթերցի՛ր կամ իմա՛ նախադիր, նախկին կարգադիր»։

Որքա՜ն անփութի է գտնվել Հ. Սարգիսյանը, որ ավելորդ է համարել գոնե մի անգամ դիմելու Հայկազեան բառարանին։

Այժմ արդեն նախադասութիւնը կանոնավոր ձև է ստանում և նշանակում է («Մանդակոսնին) հանդիսացավ հայ ժամակարգութեան առաջին կազմակերպիչը»։

4. ԳԻ, ԳԻՀԻ

Սա մի ծառ է, որ կոչվում է «թրք. ardəj, լտ. juniperus». բարբառներում կենդանի է Զթ. գ'է, Լ. կէ՛ճի, Ղրբ. կէ՛ճէ, Ղրդ. իգէ՛ճէ ձևերով (վերջիններդ ներկայացնում են *գիճեճի ձևը). իսկ Բն. գ'ի դարձել է իմաստի փոփոխութեամբ «նոճի»։ Liden IF 18, 494—8 այս բառը դնում է viso կամ vito նախաձևից, որոնցից երկրորդը ստույգ է, բայց հեղինակը լավ չի պաշտպանած։

Ըստ իս հյ. գի բոլորովին նույն է հնխ. wītā «ուռի» բառի հետ. այս բառի ամենահնամոտիկ ժառանգներն են հուն. ἰτέα, լտ. vitex, գնդ. vaeiti, սկվ. vēt, պրս. بید bīd, հհիւս. wīðir, անգսք. wīðig, հբգ. wīda, գերմ. weide, հոլոնս. witwan, լեթթ. vītuols, որոնք բոլոր նշանակում են «ուռի»։ Ծագում է հնխ. wei- «ոլորել, հիւսել» արմատից և ըստ այսմ նույն է նաև հսլ. vetvь =ռուս. ветвь «ճիւղ» (Walde-Pokorny, 1, էջ 224)։

Հնխ. wītā ձևի մեջ w ըստ օրինի տալիս է գ, իսկ t երկու ձայնավորի միջև դառնում է յ. ըստ այսմ հյ. գի բառի նախաձևն է *գիյ, ուր ապա յ ըստ սովորութեան ջնջված է ի-ից հետո։

Այնուհետև գի ստանալով ծառ կամ բույս նշանակող ի մասնիկը, դարձել է *գիի, ուր հորանջի պատճառով ներմուծվելով ճ, բաղադրվել է գիճի։

Տարբեր է միայն երկու ծառերի նշանակութիւնը «ուռի» և «juniperus», որոնք բուսաբանորեն նույն ընտանիքին էլ չեն պատկանում։ Բայց բույսերի անուններդ լեզվից լեզու շատ են փոխված և wītā բառն էլ զանազան լեզուների մեջ տարբեր իմաստներ ստացած է (տե՛ս Walde—Pokorny անդ)։

Վրաց. ղվիա և թուշ. ղվիէ խէ համանիշները փոխառյալ են հայերենից և ներկայացնում են հայերենի գ<w նախաձայնի նախավոր վիճակը, ճիշտ ինչպես գիճի> վրաց. ղվիճի, ղվիճո բառի մեջ։

Որքա՜ն հետաքրքիր պիտի լիներ, եթե իմանայինք նաև վրաց. ղվիա բառի վերջին ա ձայնավորի ծագումը։ Արդյոք այս էլ հնխ. wītā բառի վերջին ā ձայնավո՞րն է։ Եթե այո՛, ուրեմն մենք ունինք ժամանակագրական մի կռվան, որոշելու համար հայերենի մեջ վերջին ձայնավորների անկման ժամանակը։

5. ՅԱՆԴՈՒԳՆ

Նախապես մտածում էի, թե ինչպես որ հյ. աո–դունդ կազմված է աո բացառականով՝ *դունդ «տակը, խորք» բառից, նմանապես յ–աո–դուգն ներկայացնում է բացառական նախդրիվ հայցական մի ձև, արմատը լինելով *դուգն «վախ», որ այժմ կորել է։

Բայց *դուգն բառին համապատասխան մի ձև ուրիշ լեզվի մեջ չգտաւ։

Սրա փոխարեն դուա սակայն հնխ. dheugh արմատը, որ «ձեռք բերել, հաջողել, հանդիպել» իմաստների կողքին ունի նաև «խիզախել, քաջ լինել, tüchtig (kräftig) sein» նշանակութիւնը։

Հնխ. dheugh արմատի ստորին ձայնդարձը (dhugh) տալիս է ճիշտ հյ. դուգ.—հայերենում աո– նախամասնիկը ոչ բացառական իմաստով անսովոր չէ։

Հնխ. dheugh արմատից ծագած ձևերը (հուն. τυγχάνω, τύχη, τεύχω, հիսլ. duga, գոթ. daug ևն) տե՛ս Walde-Pokorny I, 847։ Հիշում եմ այստեղ մեր իմաստին ամենահնամոտիկ ձևերից հբգ. tuht «քաջութիւն, ուժ», մբգ. tühtec, նբգ. tüchtig=անգլսաքս. dyh-

dögen «դիմադրել»։
tig «ուժեղ», անգլսաքս. gedīegan=մհգ.

6. ԱԼԻՒՐ—ԱԼԵՐ

Ր հոլովման մեջ զարմանալի բացառութիւն է կազմում այս բառը, որ հայերենի սովորական օրենքներով չի բացատրվում։

*Պետք է մեկնել հնագոյն ալեւր ձևից, որի սեռականը ըստ օրինի պիտի լիներ *ալեւեր, ինչպես* ոսկր—ոսկեր։ *Այսպիսով երևան է գալիս մի նոր ձայնական օրենք, որով* –եւե *դառնում է* –ե։ *Նույնը դտնում ենք նաև գիւղ բառի հոլովման մեջ։ Հնագոյն ձևն է* գեւղ, *որ տվել է նախ սեռական *գեւեղ (ինչպես* ասող—ասողեղ), *որից* –եւե *դառնալով* –ե, *տուացվել է սեռ. *գեղ։ Բայց որովհետև* գեղ *շատ թույլ ձև է իբրև սեռական, նոր մասնիկով զորանալով դարձել է* գեղջ։ *Ըստ այսմ* –ջ *սեռականի (ինչպես նաև տրականի) զորացուցիչ մասնիկ է, որ դտնում ենք նաև* ո *հոլովման պատկանող մի խումբ ուրիշ բառերի վրա, ինչպես* եկեղեցի—եկեղեցւոյ —եկեղեցւոջ, կղզի—կղզւոյ—կղզւոջ, մի—միոյ—միոջ, կին—կնոջ։ *Վերջին ձևը ենթադրել է տալիս, որ նախապես* կին *բառի սեռականն էլ եղել է *կնոյ, որի վրա ավելանալով ջ զորացուցիչ մասնիկը, տուացվել է* կնոջ։

Հայերենի եւե>ե *ձևափոխության նման մի երևույթ է պարսկերեն* توانم tuvānam *«կարող եմ», որ արդի բարբառով դարձել է* tunäm.

7. ԳԱՐԵԳԻՆ

«Հայոց անձնանունների բառարան»-ի մեջ այս անվան ծագումը նշանակել եմ անհայտ։

Հին հայոց իշխանական տոհմերի անունները մեծ մասամբ պահլավերեն են, բայց պահլավերենում կարելի չեղավ գտնել Գարեգին *ձևը։*

Մի կողմից այս հանգամանքը և մյուս կողմից այն իրողությունը, որ բառի վերջին մասը նույն է հյ. գին *«արժեք» բառի հետ, մտածել է տալիս, որ այս անունը զուտ հայերեն է, բարդված* գին *բառով։*

Եթե Գարեգին *բարդ բառ է՝ կազմված* գին *բառից, առաջին եղրը պիտի լինի *գարի, որ չի կարող լինել սովորական հատեղենի անունը, այլ բոլորովին ուրիշ բան։*

Համապատասխան մի խումբ հատուկ անունների համեմատությունը (ինչ. Բահլաւու, Բահլաւում, Թանկ, Թանկիկ, Թանկխաբուն, Թանկմամա, Թանկտիկին, Թանկազիզ, Թանկագին) *ենթադրել է տալիս, որ այս *գարի անծանոթ բառն էլ պիտի նշանակե «թանկ» և այս վերջին փոխառեալ բառի (<պհլ.* tang) *հարազատ հայ ձևն է։*

*Այսպիսով երևան է հանվում անհետացած մի հայերեն բառ էլ *գարի «թանկ», որի գործածությունը Դ դարից առաջ է։*

Այստեղ արգելք չպիտի հանդիսանա այն հանգամանքը, որ գին *բառը պատկանում է* ո *հոլովման, իսկ* Գարեգին *հոլովված է միայն սեռ.* Գարեգնի *(Բուզ. Դ. ծթ. Արծր. Ա. ժ)։ Որովհետև* մեծագին *և* ծանրագին *բառերն էլ սեռականում կարող են լինել* մեծագնի, ծանրագնի։

Ուզեցի գտնել այս բառի ծագումը։ Հընդհրոպական ցեղակից լեզուների մեջ գտա միայն հնխ. g²er *«ծանր» արմատը, որի ժառանգներն են սանս.* gurú, *զնդ.* gouru, *պրս.* گران girān, *հուն.* βαρύς, *լտ.* gravis, *միռլ.* bair, *գոթ.* kaúrjōs, *լիթթ.* gruts, *որոնք բոլոր նշանակում են «ծանր»։ Հիշելի է հատկապես հուն.* βάρος *«ծանրություն»* (Walde-Pokorny 684)։

—«Ծանր» բառը բարդվելով «գին» բառի հետ, նշանակում է «թանկ». Համմտ. պրս. گرانبها girān-bahā *և հյ.* ծանրագին։

Բայց այս բոլորը ցույց են տալիս նախաձայն g², *որ հայերենում դառնում է* կ *(և ոչ թե* գ)։

Արդյոք այստեղ է՞լ ունինք g² *և* g²h *ձայնների փոխանակության մի դեպք, որի մասին վիճում են լեզվաբաններից ոմանք, թե՞ նմանությունը պատահական է միայն։*

8. ԸՄԲՈՍ

Հյ. ըմբոստ (բայը ըմբոստանալ) նշանակում է «ապստամբ, անհնազանդ, գլուխ բարձրացնող». պետք է կազմված լինի ընդ նախդիրով *բոստ արմատից, որ այլուր գործածված չէ և այլուստ մեզ հայտնի չէ։

Սլավական լեզուների խմբի մեջ ունենք հսլ. bystrŭ, հռուս. быстръ «արագ, արագընթաց», ռուս. быстрина́ «գետի արագ հոսած տեղը», ուկր. býstryj «արագահոս», býstryča «հեղեղատ», բուլգար. bistъr «պայծառ, սրամիտ», սերբ. bïstar «պայծառ», bistrica գետերի անուն, չեխ. bystrý «արագ, ճարպիկ», bystrina «հեղեղ», լհհ. bystry «արագ, արագահոս, սրատես», bystrzyna «արագահոս հեղեղ» ևն։

Այս բառերը Berneker 113 կցում է հիսլ. bysia «մեծ ուժգնությամբ դուրս հոսել», նորվ. գւռ. böysa «դուրս նետվել», նորվ. buse, շվեդ. busa «վրան հարձակվել», արևել. ֆրիզ. būsen «ուժգին և բուռն լինել, աղմկել», būsterig «փոթորկալի» բառերին։

Berneker այս համեմատությունները տալուց հետո, սլավական լեզուների արմատական ձևը դնում է *bys-ro, որ է հնխ. bhūs-ro, արմատը bhūs, աճած ro մասնիկով։ Նախավոր իմաստը դնում է «թափանցել, թափանցիկ», որ ապա ամեն մի սլավական լեզվի մեջ մի նոր երանգ է ստացել։

Walde-Pokorny, Vergl. Wört. *II* 118—119 ընդունում է այս համեմատությունը, բայց արմատը դնում է հնխ. bhus «փչել»։

Հյ. ըմբոստ բառի արմատը *բոստ գալիս է միացնել այս բոլորը. նախավոր նշանակությունն է «դուրս նետվել». ձևանում է հնխ. bhos- արմատից՝ ti դերբայակերտ մասնիկով. ինչպես ves-ti տալիս է զ-գեստ (լտ. vestis), նմանապես հնխ. bhos-ti տալիս է *բոստ, որից ընդ նախդիրով ըմբոստ։

9. ԳՈՒՍԱՆ

Ակադեմիկոս Սահակ Կարապետյանը վերջերս մի առաջարկություն արեց, այն է՝ վերացնել աշուղ բառը և նրա փոխարեն գործածել գուսան, որից և գուսանական երգեր, փոխանակ ասելու աշուղական երգեր։

Այս առաջարկությունը շատ տեղին էր, որովհետև աշուղ բառը՝ նման վարժապետ բառին, վաղուց նվաստացել և արժեզուրկ էր դարձել։ Պետք էր բարձրացնել այն իր նվաստ դիրքից. և վերակենդանացած գուսան բառը մեծ հաջողությամբ կատարեց այդ պաշտոնը։

Այս գեղեցիկ առաջարկությունը առիթ հանդիսացավ ինձ մտածելու գուսան բառի ծագման մասին և ահա իմ աշխատանքի արդյունքը։

Գուսան բառը համարվում է պարսկերեն كوسان բառից փոխառություն։ Այս բառը պարսիկները կարդում են kūsān, որ ըստ Գևորգ Դպրի Պարսկերեն-հայերեն բառարանի (էջ 674բ) «է անուն սրնգահարի մխոջ, որ էր ի ժամանակս միոյն ի թագաւորացն վաղնջականաց. 2. է տեսակ իմն յերգեցողութենէ. 3. է անուն աւանի միոջ ի կցորդացն Մազէնտէրանու»։

Հյուբշմանը իր Arm. Gramm. աշխատության մեջ (էջ 131) չի ընդունում այս երկու բառերի համեմատությունը, որովհետև պրս. k և հյ. գ տարբեր ձայներ են։

Սակայն պրս. ك բառը կարելի է կարդալ երկու ձևով՝ g և k։ Քանի որ հայերեն ունինք գուսան ձևը, որ և հաստատվում է վրաց მგოსანი մգոսանի «երգող, երաժիշտ, սրնգահար, ողբասաց» բառով, ուստի կասկած չկա, որ հիշյալ պրս. բառը պետք է կարդալ gōsān կամ gūsān, և ոչ թե kōsān։ Ըստ այմ Stackelberg ZDMG 48, 495 առաջարկել է սրբագրել պարսիկ բառի հնչումը և կարդալ g նախաձայնով, որով հայերեն, վրացերեն և պարսկերեն բառերի միության կապը հաստատվում և ամրանում է (այս բոլորը տե՛ս նաև իմ Արմ. բառարանում)։

Բայց պարսկերեն gōsān (ինչպես նաև kōsān) բառը ո՛չ մի բացատրություն չունի. պահլավերեն բառարանումն էլ ավանդված չէ. ո՛չ Horn հիշում է այն՝ իր Պարսկերենի ստուգաբանական բառարանում, ո՛չ էլ Hübschmann իր Persische Studien աշխա-

տության մեջ, որ Horn-ի Ստուգաբան. բառարանի քննադատությունը և հավելվածն է։ Նույնիսկ պարսիկ բառի հնչման անորոշությունը (g նախաձայնո՞վ, թե k) նշան է, որ այդ բառը բնիկ պարսկերեն չէ։

Ենթադրում եմ, որ դա հայերենից փոխառյալ բառ է և ծագում է գովասան բառից։

Գովասան, ճիշտ ինչպես վիպասան և ճարտասան, հայերենի հնագույն բառերի շարքից է՝ իր –ան դերբայակերտ մասնիկով և կազմված է գով–ել արմատից, իբրև «գովք ասող»։ Այս բառը՝ վիպասան բառի հետ միասին, ներկայացնում է հին հայոց երգիչների մի տեսակը, որ պարապում էր իշխանների և թագավորների վրա գովքեր ասելով ու երգելով։ Նրանց համբավը այնպես էր տարածվել, որ հասել էր նաև Պարսկաստան՝ մեր հարևան երկիրը։

Հարց է, թե գովասան բառը կարո՞ղ էր դառնալ պրս. gōsān կամ gūsān. այս մասին առարկության տեղիք չկա, որովհետև ōvā կամ ūvā ձևի վերածումը ō կամ ū ձևին՝ անսովոր չէ պարսկերենում։ Այսօր էլ պրս. tūvānam կամ tōvānam «կարող եմ» բայը դարձել է ժողովրդական լեզվում tōnām կամ tūnām։ Ըստ այսմ հյ. գուսան՝ պարսկերենից եռ առնված փոխառություն է։

Երկրորդ հարցն էլ այն է, թե կարո՞ղ էր հայ երաժշտությունը Պարսկաստան անցած լինել կամ հատկապես նրա մի տեսակը ընդունված լինել նաև Պարսկաստանում։

Պարսկական երաժշտությունը շատ հարուստ է. բառարանում կան բազմաթիվ բառեր, որոնք ներկայացնում են բազմատեսակ եղանակի անուններ։ Կան եղանակներ էլ, որոնք իրենց անունը ստացել են այս ինչ երաժշտի անունից կամ այն ինչ երկրից ու գավառից։ Պրս. gōsān բառն էլ համարվում է մի նշանավոր արնգահարի անունից, որ կարող էր հայ եղած լինել և կոչել իրեն պարզապես «գովասան»։

Ես 7 տարի մնացել եմ Պարսկաստանում. պիտի խոստովանվեմ, որ երաժշտությունը չտեսա այնպես ծաղկած, ինչպես սպասելի էր։ Կովկասում և հատկապես Ղարաբաղում շատ ավելի ծաղկած է պարսկական երաժշտությունը։ Եվ 1919 թվին, երբ ղարաբաղցի հայ երաժիշտների մի խմբակ, 5 հոգուց բաղկացած, եկավ Թեհրան մայրաքաղաքը, ամենամեծ ընդունելությունը գտավ և նույն իսկ արքայական պալատը բարձրացավ։

Հիշեմ վերջապես մի առած, որ տարածված է Կովկասում.—

Էրմենի օխտյանըն դիլինի քէսէքէն,
Մուսիլման չալանըն էլինի քէսէքէն.
(Հայ երգողի լեզուն կտրես, իսլամ ածողի ձեռքը կտրես)։

Այս առածը ցույց է տալիս, որ հայը իբրև երգիչ արժանավոր բարձրության վրա կանգնած չէ (անշուշտ ո՛չ թե ձայնի, այլ ո՛չ հարուստ և մաքուր արտասանության պատճառով), իսկ նվագելու մեջ նա շատ ավելի գերազանց է, քան իր իսլամ եղբայրակից երաժիշտները։

10. ԹՈՒՂԹ

Այս բառի ծագումը կապված է կուլտուրայի պատմության հետ։

Հայերենում թուղթ բառը ունի երկու իմաստ. 1) այն բամբակյա նյութը, որի վրա գրում ենք, և 2) գրվածք, գրություն, նամակ։

Իմաստաբանորեն ո՞րն է սրանցից նախնականը։

Բոլոր բառարաններն էլ առաջին իմաստը դնում են նյութը, որից հանում են «գրվածք, գրություն կամ նամակ»։ Այսպես են Հայկազյանը, Առձեռնը և Արմատականը։ Սակայն ճիշտ չէ այս։

Թուղթ բառը՝ երկրորդ իմաստով գործածված է մեր մեջ հենց 6 դարից. «Պատղոսի առաքելոյ առ կորնթացիս Թուղթ առաջին և Թուղթ երկրորդ»։ Իսկ առաջին իմաստով գտնում ենք նախ Վրք. հց. ժը. «Ընդարձակն որ գիտէին գործել Թուղթ» (ԺԲ դար)։

Թուղթը հնարված էր չինացիների մոտ շատ վաղ ժամանակ։ Ն. Ք. 123 թվին, Ցայլուն՝ նախարար երկրագործության՝ հանձնարարեց Քղթի շինարարությունը Չինաս-

տանում։ Շատ ավելի ուշ, 8-րդ դարում միայն, սկսեց տարածվել Արևմտյան աշխարհում, հետևյալ ձևով.

751 թվին չինացիք արշավեցին Սամարղանդի վրա, որ պատկանում էր արաբներին։ Արաբները դուրս եկան նրանց դեմ, չինացոց դուրս քշեցին և բռնեցին նրանցից դերիներ։ Գերիների մեջ կային թուղթ շինող վարպետներ, որոնց արաբները գործածեցին Սամարղանդում թղթի գործարան բանալու համար։ 794 թվին մի գործարան էլ Բաղդադում բացվեց, որից հետո թղթի գործածությունը տարածվեց ամբողջ Արաբական խալիֆայության մեջ։ 9-րդ դարից հասել են մեզ բազմաթիվ արաբերեն ձեռագրեր, գրված թղթի վրա։ ԺԱ դարի վերջում, թղթի գործածությունը հասնում է Պոլիս և տարածվում է 13-րդ դարի կեսից սկսած։ Ավելի ուշ անցնում է Սպանիա, Սիկիլիա, Իտալիա, Անգլիա և 17-րդ դարումն էլ Ամերիկա։

Եթե ոչ 9-րդ, գոնե 10-րդ դարում թղթի գործածությունը մտած պիտի լինի Հայաստան, որովհետև արդեն 981 թվից ունինք թղթյա մի ձեռագիր, որ պահվում է մեր Մատենադարանում (№ 2679)։

Այս բոլոր տվյալներից երևում է, որ ե դարում Հայաստանում և առհասարակ Արևվելքում դեռ թուղթ չկար և հետևաբար թուղթ բառի առաջին և նախնական իմաստը ո՛չ թե թուղթ նյութն է, այլ «գրություն, գրվածք»։

Մեր հարևան լեզուների մեջ որոնումներ կատարելով՝ գտա միայն մի բառ, որ կարող է լինել հյ. թուղթ բառի աղբյուրը. այդ է լտ. titulus:

Quicherat-Daveluy-ի լատիներեն—ֆրանսերեն ընդարձակ բառարանում (Paris, 1913), էջ 1404 titulus բառի առաջին իմաստը տրված է «արձանագրություն», որից հետո գալիս են «գրքի խորագիր կամ ամփոփում, գինու պիտակ (étiquette), գերու կամ դատապարտյալի վզին կախած գրվածք (դատավճիռ), մեռելի տապանագիր, վաճառման կամ վարձու հայտարարություն» և, վերջապես, միայն փոխաբերաբար՝ «պատվի տիտղոս»։

Լատին բառը փոխառությամբ անցել է նաև հունարենին և առաջին անգամ գործածված է Յովհ. ԺԹ 19—20 τίτλος ձևով և «մակագրություն» իմաստով (տե՛ս Bailly, Dict. Gr-Fr. 6-րդ տպ. և Sophocles, Greek lexicon, 1914)։ Այս երկու բառարաններումն էլ նույն բառը մեկնվում է միայն իբր «մակագրություն, արձանագրություն, գրավոր տեղեկություն, նամակ, գրքի բաժանմունք» (և չկա «տիտղոս, աստիճան»)։ Նույնը կա նաև ասորերեն (Brockelmann, 132 բ), միմիայն «մակագրություն կամ արձանագրություն» իմաստով։

Ըստ այսմ հայերեն բառի իմաստը համապատասխանում է լատին բառի իմաստին։

Մնում է խոսել բառի ձևի մասին։

Մատնագետներին հայտնի է, որ հայերենի մեջ նայ ձայնները առաջ են անցնում. սրա դասական օրինակն է սուրբ = սանս. çubhra, որ նախապես էր *սուրբր։ Թուղթ բառն էլ նախապես պիտի լիներ բուրթ, որ է բուրլ։ Լատին բառի միջին ձայնավորը (u) ընկել է հայերենում, ինչպես որ ընկած է նաև հունարենում, ասորերենում և վրացերենում. միայն թե հայերենում առաջին վանկի i ձայնավորն էլ նույն u-ի նմանությամբ դարձել է ու։

11. ԺՊԻՐՀ

Այս բառի ծագումը հայտնի չէ։

Արտաքին կերպարանքը մատնանիշ է անում իրանական ծագում։ Փորձենք։

Հայերենում րհ (ßr) ձայնախումբը առաջանում է իրանական θr խմբից. ինչ. աշխարհ < հպրս. xšaθra, զոհ < զորհ < զնդ. zaoθrā, ժահր < զնդ. ǰaθra, շնորհ < զնդ. xšnaoθra, պտուղ < պտորհ < զնդ. pāθra, սնապուղ < զնդ. višō-puθra, Մանաճիհր < իրան. Mana-čiθra, Միհր < հպրս. Miθra և այլն։

Ըստ այսմ ժպիրհ պիտի ենթադրեր *ži-piθra ձևը։ Այս ձևը իսկույն հիշեցնում է մեզ *aži-piθrā բառը, որ պիտի նշանակեր

«օձահայր», կազմված aži «օձ» և piθra «հայր» բառերի բարդությամբ։ Զենդերենի սովորական ձևն է pitra, բայց հին զենդերենում գտնում ենք piθra (տե՛ս Bartholomae, Altiran. Wörterb., էջ 905)։ Բարդության հնագույն ձևն է սա, որ նշանակում է ո՛չ թե «օձի հայր», այլ «նա, որի հայրը օձ է», իբրև հակառակը հուն. εὐ-πάτωρ «բարեհայր» և εὐ-πατέρεια «նշանավոր հոր աղջիկ» բառերի։

Նույն բառից ունինք նաև զնդ. aži-čiθra, որ Bartholomae (անդ 266) մեկնում է «vom Drachen abstammend», այն է՝ «վիշապազարմ» (համմտ. հյ. Մանաճիհր <Mana-čiθra «Մանայի զարմ կամ սերունդ»)։

Մնում է բացատրել հյ. ժպիրն և զնդ. aži-piθra «օձահայր» բառերի իմաստի տարբերությունը։ Բայց փուտ անունները չափազանց շատ են փոփոխում իրենց իմաստը և այս կողմից մեծ արգելք չեն ներկայացնում. համմտ. օր. ճով, Թրք. ճոջա «մեծ»։

12. ԴԺՊԻՒ

Այս բառը գործածված է Իմ. բ. 12, Ես. դ. 10 ևն. «անհաճոյ, ծանր, խիստ, դժընդակ» իմաստով։ Բայց կա նաև հնության հաղվագյուտ մի մնացորդ էլ՝ դժպիրն, որ մի անգամ գործածված է Գ. մակ. ե. 22։ Այս ձևից, r բաղաձայնի սովորական կրճատումամբ, առաջացել է դժպին, որ առանձին չէ գործածված, բայց ի մասնիկով կազմվել է նրանից սույն դժպին բառը, ինչպես որ ել և ութիւն մասնիկներով էլ՝ դժպինել, դժպինութիւն։

Այս բոլորը ապացույց էին մեկնության։ ժպիրն բառը վերի ձևով մեկնելուց հետո այլևս դժվար չէ ենթադրել իրան. *duž-piθra ձևը, որ պիտի նշանակեր «չարահայր, նա, որի հայրը չար է, չարի ծնունդ»։

13. ԱԴԻՅԱՄԱՆ

Այս անունն են կրում Նոր-Բայազետի մոտ գտնված երկու գյուղ՝ Վերին և Ներքին։ Ադի-յաման կազմված է Թրք. ad «անուն», adi «անունը» + yaman «սոսկալի, ահավոր են» բառերից և նշանակում է «անունը սոսկալի»։

Ինչո՞ւ է ստացել գյուղն այս անունը։

Ալիշանը ցույց է տալիս, որ Աթիյամանի հին անունն է Կոթ (տե՛ս Սիսական, էջ 55 ա և շար.)։ Նույնը գտնում ենք նաև Մամբռեանց, Դեղարբունի, էջ 530, 645 ևն։ Այս բառը Թուրքերը պիտի արտասանեին göt, որ Թուրքերենում նշանակում է «նստոց տեղի»։ Ահա թե ինչու նրանք պժգալով այս իմաստից, խուսափել են անունը տալու և կոչել են «անունը սոսկալի»։

Հեղվաբանության մեջ հայտնի euphémisme-ի սովորական մի դեպք է այս։

Միևնույն երևույթը նկատեցի ես այս ամառ, Գագրիում եղած ժամանակս, համշենցոց բարբառում։ Տեղացիք թեև գիտեին, բայց խուսափում էին գործածել կոր բառը (որ բարբառային արտասանությամբ հնչվում էր ճշտիվ göt) և նրա փոխարեն ասում էին պոչ>բէօչ։ Երբ հարցրի, թե ինչո՞ւ պոչ եք ասում և ոչ կոթ, պատասխանեցին, թե «մենք բոլորս Թուրքերեն գիտենք, և այդ բառը Թուրքերենով «վատ իմաստ ունի»։

Ուրիշ տեղեր էլ կան Ադիյաման անունով վայրեր։ Հիշենք հատկապես Մալաթիայի հարավային կողմը գտնված Ադիյաման քաղաքը, որ նաև Հիսնիմանսուր=Հասանմբսուր էլ է կոչվում։ Արդյոք սրա՞նք ինչու են ստացել «սոսկալի» անունը։

14 (15). ՎՌՆԴԵԼ

Այս բառը գրաբարից ավանդված չէ. հատուկ է արդի բարբառներին, սովորական է պոլսահայ բարբառում, որից անցել է արևմտահայ գրական լեզվին և գրվում է վրնջել։ Նույնը կա նաև Երևանի բարբառում և բիչ անգամ գործածվում է արևելահայ գրականում՝ վռնդել ձևով։ Երկուսի հնչումն էլ նույն է (Թրթռուն դ ձայնով)։

Ծագումը բացատրված չէ. բուն իս առաջանում է պրս. راندن rāndan «վանել, վտարել, քշել» համանիշից։ Ասվում է հատկապես باز راندن bāz rāndan «յետս վանել»,

որ ժողովրդական լեզվով արտասանվում է vá randan «*ետ քշել, վռնդել*». *օր.* äz dār vá randän «*դռնից վռնդել*»։ *Պրս.* randän *բառի մեջ նախաձայն* r *հնչվում է թե՛* r *և թե* n, *ուստի հյ.* n *կարող է նրանից առաջանալ, բայց կարող է նաև հաջորդ* ն *ընդհանի պատճառով աստիճացած լինել։*

Միևնույն բառի գոյությունը թե՛ Պոլսի և թե՛ Երևանի բարբառում, նշան է, թե բառը փոխ է առնված պարսկերենից ա՛յն ժամանակ, երբ դեռ պոլսեցիք Հայաստանումն էին և պարսիկները Հայաստանի սահմաններից հեռացած չէին, այն է Թրքական գաղթից ավելի առաջ։

15 (16). ՅԱՏԿԵԼ

Այս բառի գրության մասին մի ժամանակ արևմտահայերը վիճում էին. ոմանք գրում էին ցաբֆել, *ոմանք* ցաբկել, *ոմանք* ցատկել։ *Վերջինը արևելահայոց ընդունած միակ ձևն է։ Գրաբարում այս բառը գոյություն չունենալով՝ այսպիսի վիճեր հնարավոր են։ Օրինակ՝ «Հայ կայսերք Բիւզանդիոնի» գրքում, տպ. Վիեննաիկ 1905, հտ. Բ, էջ 123 կարդում ենք. «Ցատկելու, գնտակ խաղալու, նիզակ նետելու, աղեղը լեցնելու և արձակելու ձևն»։ Ուղղագրությունը որոշելու միակ միջոցը բառի ծագումը գտնելն է։*

Գիտենք, որ հյ. ց *ծագում է հնխ.* sk *և* ks *ձևերից հավասարապես. ուստի պետք է որոնել* skad *կամ* ksad *և* skat *կամ* ksat *ձևով մի արմատ։ Կատարելով այս որոնումը,* Walde-Pokorny *բառարանում, հտ. Բ, էջ 538 գտա* sqat «*ցատկել, ոստնուլ, ոստոստել*», *որի վստահելի ժառանգներն են լտ.* scateo «*ջրի դուրս ժայթքել կամ ցատկելը*», *հին լիթ.* skatau «*ցատկել, խոյանալ, ոստնուլ*», *հուն. (ըստ Հեսիքիոսի* ἐσκατάμιζεν «*խոյանալ, ոստնուլ*»։ Ernout-Meillet *բառարանը (էջ 863) նույնպես հիշում է այս ձևերը, որոնց վրա ավելացնում է սլավական* skoku «*ոստիւն*», *որ է ռուս.* скакать, скачка *են։ Հայերենից հիշում է* ցայտել *կամ* ցայթել, *առանց սակայն պնդելու նրանց նույնության վրա։*

Տարակույս չկա, որ մեր ցատկել *բայը պատկանում է ճիշտ նույն արմատին.* t *կամ* th *հավասարապես տալիս են հյ.* թ, *ուստի Հայերենի ճիշտ ձևն է* ցաթ–, *որի վրա ավելանալով* կ *աճականը (համմտ. հար-ուկ և հարկանել), ստացվել է* ցաթկել։

Այնուհետև բաղաձայնների աստիճանի հարմարեցմամբ՝ առաջացել են մի կողմից ցաբֆել *և մյուս կողմից* ցատկել *ձևերը։*

16 (17). ՅԱՂԹԵԼ

Ի նկատի ունենալով ֆ=յ *փոխանակությունը հայերենում (ինչ. հինգ—յիսուն, հատանել—յօտել, հետ—յետ), կարող ենք ասել, թե այս բառի նախաձայնն էլ իրավունք ունինք բացատրելու ինչպես* h։

Ըստ այսմ յաղթ *արմատը պետք է ենթադրել* palt *կամ* salt *նախաձևից։ Առաջինը գոյություն չունի. երկրորդը գտնում ենք լատիներենում։ Լտ.* saltus *նշանակում է «ոստում», որի բայն է* salto «*պարել*» >*ֆրանս.* sauter «*ցատկել*»։ *Այս բառը համարվում է ածանցված* salio *բայից, որի նախնական նշանակությունն է «ցատկել», ապա զանազան երանգավորումներով՝ «խոյանալ, պարել, նետվել, սիրտը բաբախել, հուզվել, դուրս նետվել, ջուրը ժայթքել, հոսել, և վերջապես «*saillir ou couvrir une femelle, *խառնք անասնոց, որ և ժղ. ծածկել (ճիշտ ինչպես ֆրանսերենում)»։ Այս վերջին իմաստից էլ լտ.* salax «*լպիրշ, լիրբ*»։

Walde, *ինչպես նաև* Walde-Pokorny 2, 505 *և* Ernout-Meillet 849 *լտ.* salio *արմատական ձևի հետ միացնում են հուն.* ἅλλομαι «*ցատկել, ոստնուլ, խոյանալ, առաջ նետվել*», *որոնցից ենթադրվում է հնխ.* sel «*ցատկել*»։

Հյ. յաղթել *ըստ ձևի նույն է լտ.* salto *բայի հետ։ Մնում է գտնել կապը «ցատկել» և «յաղթել» նշանակությանց միջև։*

Հենց լատիներեն բայը այնքան նախամասնիկներ է առանում և նրանց միջոցով այնքան է փոփոխում իր իմաստը, որ հասնում է արդեն «յաղթել» նշանակության։ Համմտ. circumsilio «*ամեն կողմից հարձակ-*

վել», exsilia «թշնամու վրա հարձակվել», resultatio «դիմադրություն», transilio «արհամարհել», insulto «թշնամին հարվածել, լողալու ժամանակ ալիքները հաղթահարել», assultatio «նվաճում, ընկճելը, հաղթել», exsultans «հաղթական»։

Ես կարծում եմ, որ «յաղթել» իմաստը առաջանում է «վրան նետվել» իմաստից։ Երբ անդուսպ ձին ուզում են ընկճել, քաջ հեծնորդը մոտենում է նրան, սանձից բռնում, մի քիչ այս ու այն կողմ հետը շարժվում և հանկարծ վրան նետվում։ Այլ ևս ձին հպատակվում է։ Նմանապես երբ ուզում են գայլը կամ արջը զսպել, վրան են նետվում, կոկորդից խեղդում, և նա հպատակվում է։ Այսպիսով «յաղթել» դառնում է մի պատկերավոր բացատրություն նման իր հոմանիշ «ընկճել» բառին, որ նշանակում է բառացի «ծունկի տակ դնել»։

Գալով հյ. յաղթել *բայի մեջ մտած* t>p *ձայնին, պետք է բնականաբար ընդունել աճական։ Լատիներեն* salio—salto *ձևի մեջ* t *համապատասխանում է սաստկական։ Հայերենում երևան հանելով* t *աճականը, կարելի է այժմ մտածել որ նաև լտ.* t *աճական է։* Walde-Pokorny 2, 505 sel- *արմատի տակ հիշում է հսլ.* slъpati, slepati «*ցատկել*», *իբր կազմված* p *աճականով. բայց կասկածական է։ Եթե հայերենում* t *իբրև աճական ընդունենք, սլավական բառն էլ կապատվի կասկածականից։*

17 (18). ՅԵՒ

3 բաղաձայնով սկսվող բառերով զբաղվելու ժամանակ, Walde-Pokorny *բառարանում, հտ. 2, էջ 587 պատահեցի հնխ.* sk'er- «*կղկղանք, կղկղել*» *արմատին, որի ժառանգներն են սլավ.* serǫ, sьrati «*կղկղել*», *ռուս.* cop «*աղբ*», *վնդ.* sairya «*աղբ*», *պհլ.* sargōn *և պրս.* sargīn «*աղբ*», *հուն.* σκῶρ, σκατός «*կղկղանք*», *հիսլ.* skarn, *անգսք.* scearn, *հֆրիսլ.* skern, *գերմ.* scharn «*աղբ*», *լտ.* muscerda «*մկան աղբ*», sucerda «*խոզի աղբ*», būcerda «*կովի թրիք*», ovicerda «*ոչխարի աղբ*», *որոնց մասին խոսում է նաև* Ernout-Meillet, *էջ 171։*

Հայերենը ձևով և իմաստով նույն է այս բառերի հետ և ո՛չ մի բացատրության պետք չունի։ Կարևոր է միայն անդրադառնալ վերջածայն n-*ի վրա, փոխանակ* r-*ի։ Այս էլ կա՛մ առաջանում է* s *աճականով հնխ.* sk'ers *ձևից և կամ ավելի ճիշտ՝ տեռ. բառի նմանությամբ վերջածայնը սաստկացնելով։*

18 (19). ՀԻՒԱՆԴ

Լեզվաբանները այնքան շատ աշխատանք են կատարել հայերեն բառերի համեմատության ասպարեզում, որ բոլոր պարզ աշքի ընկնող և հայտնի ստուգաբանությունները կատարվել վերջացել են, և մեզ մնում է միայն ամենից դժվար աշխատանքը։

Այդ կարգի բառերից մեկն է հիւանդ *բառը, որի համար տրված բոլոր բացատրությունները արդեն մերժված կամ մերժելի են (տես Արմ. բռ., հտ. Դ, էջ 315=տպ. Գ, էջ 98)։*

Առաջին հայացքով հիւանդ *պետք էր համարել հնագույն *հէվանդ ձևից, ըստ որում նախավանկերի անշեշտ* ի *առաջանում է է-ից (օր.* սիրել <*սէրել)։ *Բայց աչքի առաջ ունենանք հայերենի այն կանոնը, որով* ի *նախաձայնից հետո* ի *ձայնավորը չի փոխվում (ինչ.* հինգ—հինգեւորդ *և ո՛չ թե *հընգեւորդ). ուստի՝* հիւանդ *էլ մնում է* հիւանդ *և պետք չէ ենթադրել *հէւանդ նախաձևը։*

Գիտենք նաև, որ բառամիջում, ձայնավորից հետո ւ *առաջանում է* p*-ից (ինչ.* epi> և, septn̥>եւթն), *իսկ բառասկզբի* h *ընդհանրապես ծագում է* p*-ից (ինչ.* pətér> հայր)։ *Այսպես պարզվում է մեր աչքին հնխ.* pen *արմատը՝ «հիվանդություն կամ ցավ» նշանակությամբ։*

Այսպիսի մի արմատ գոյություն չունի Walde-Pokorny *բառարանում։*

Հունարենում ունինք πόνος «*ցավ*», πονέω «*ցավ կրել, ցավ քաշել*», πονέω τὴν κεφαλήν «*գլուխը ցավել, գլխացավով տառապել*», πονέω τὰ σκέλη «*սրունքները ցավել*», πένομαι «*տառապել, չարչարանքով աշխատել*» *են։ Այս բոլորը ներկայացնում են մեր դուրս բերած* pen *արմատը, իր միջին ձայնդարձով միասին, որ է* pon. *Հայերենում ունինք այժմ ստորին ձայնադարձը՝* pn̥>pan:

Գալով հայերենի դ վերջաձայնին, մենք գիտենք, որ դ բաղաձայնը ընգականից և r-ից հետո ներկայացնում է պարզ խուլ t (ինչ. antā>անդ «շեմք», anti>բնդ, entero>բնդերք, k'wonta>սկունդ «շուն», mr̥to>մարդ են)։ Այսպեսով հյ. ճիւանդ դառնում է հնխ. pen «ցավ քաշել, հիվանդ լինել» արմատի սովորական կրկնականի անցյալ դերբայի ձևը՝ pi-pn̥-to (համմտ. լտ. gi-gnō, հուն. γίγνομαι «ծնանել»՝ gén արմատից)։

Հունարեն πένομαι, πόνος բառերը Pedersen և Persson մեկնել են հնխ. spen «հյուսել» արմատից, իբր թե «հյուսելը» մի դժվարին կամ նեղացուցիչ աշխատանք լիներ։ Այս մեկնությունը ընդունված չէ (տե՛ս Walde-Pokorny 2, 661)։ Վերջինս մերժելով այդ մեկնությունը, ասում է, որ ավելի շուտ պետք է վերագրել սորկական աշխատանքին. ինչպես օր. ռուս. работа «աշխատանք», որ ծագում է раб «ստրուկ» բառից, նույնպես և գերմ. Arbeit «աշխատանք»։ Առաջարկում է այս իմաստով որոնումներ կատարել։

Walde-Pokorny հունարենի երեք առումների մեջ (շարչարվել, տառապել, ցավագնել) հիմնականը համարում է ուրեմն առաջինը, որից բխեցնում է մյուս երկուսը։ Բայց ըստ իս՝ նախնական նշանակությունը պետք է համարել «ցավագնել», որ երեք առումների մեջ ամենից ավելի նյութականն է։ Սրանից էլ բխում են մյուս երկուսը։

Առաջարկելով πένομαι = ճիւանդ համեմատությունը՝ մենք 1) տալիս ենք մի նոր առուգաբանություն, 2) ավելացնում ենք ընդհանուր բառագանձի մեջ մի նոր արմատ, 3) մեկով ավելացնում ենք այն բառերի թիվը, որոնք հատուկ լինելով միմիայն հայերենին և հունարենին, շեշտում են այս երկու լեզուների անձուկ կապը, որ վաղուց առանձին ուշադրության առարկա է դարձել։

19 (20). ԿԵՂՏ

Հայերենի չմեկնված բառերից է։

Սլավական լեզուներում կան մի խումբ բառեր, որոնք իմաստով բոլորովին նույն են սրա հետ։ Այսպես՝ հսլ. гадьнъ «կեղտոտ», ռուս. гад, гадина «զզվելի», гажу, гадить «կեղտոտել, ապականել», гадкий «կեղտոտ, զզվելի», гадость «զզվելի բան», ուկր. hadyty s'a «զզվել», սերբ. gâd «զզվանք» են։ Այս բառերը լեզվաբանները կցում են հին անգլ. cwēd «վատ, չար», նրգ. kāt, kot «անմաքրություն, կեղտ», լիթ. gẽda «ամոթ, անպատվություն», հպրուս. gīdan «ամոթ» են բառերի հետ (Berneker 289)։ Բոլորը միասին հանվում են հնխ. g²ōdh-, g²edh- արմատից, որ Walde-Pokorny 1, 695 համարում է g²ōu, g²ū «աղբ, կղկղանք» պարզական արմատից ածանցված՝ dh ածականով։ Հայերենը ենթադրում է g²ed-lo ձևը, որ կազմված է g²ed արմատից -lo- մասնիկով. համմտ. հատկապես sed-lo ձևը, որ կազմված է հիշտ նախորդի նման՝ sed- «նստել» արմատից՝ -lo- մասնիկով։ Հայերենում նայ բաղաձայնները հաճախ տեղափոխվում են. այսպես neg²-ro>մերկ, meg'h-ri>մերձ, smug-ro>մուրկ, մրկել, snōbhri >նուրբ, k'ubhro>սուրբ են։ Վերի sed-lo >եաղ ձևի մեջ շրջում տեղի չի ունեցել, իսկ g²ed-lo>կեղտ ձևի մեջ կա։

20 (21). ԽՈՒՏԱՓԻՐԻՆ

Սա մի նշանավոր կամուրջ է, որ գտնվում է Արաքսի վրա՝ ռուս-պարսկական սահմանում։ Ահա թե ինչպես է նկարագրում Բարխուդարյանցը իր «Արցախ» աշխատության մեջ այս կամուրջը. «Խուտափիրին... Երկու կամուրջ կա այստեղ—Վերին և Ներքին։ Խիստ հնաշեն և համակ սրբատաշ քարով շինված է Վերին կամուրջն, որ ունի ինն աչք, որոց ոտքերն հաստատված են բնութենաբուսեղծ վեմ քարերի վերա։ Աչքերի կամարներից կանգուն են չորսն և բանդված՝ հինգն։ Իսկ Վարի կամուրջն հիմնարկված է նույնպես բնական վեմ քարերի վերա, որ ունի 15 աչք, որոց ոտքերն շինված են քարով և թաղերն թրծյալ աղյուսով և կրաշաղախ ցեխով» (էջ 62)։

Նկարագրությունից երևում է, որ Խուտափիրինը բնական մի կամուրջ է, մարդու ձեռ-

քով լրացրած։ Ծագումը ժողովրդական բացատրությամբ դնում են պրս. خدا Xudā «Աստված» և پیر pīr «սուրբ» բառերից։ Այս բացատրությունը բավարար չէ, որովհետև -ին մնում է առանց մեկնության։

Հիմնվելով այն ձայնական օրենքի վրա, որով տեղացիք (ղարաբաղցիք, զանգեզուրցիք և մեղրեցիք) չունենալով ֆ բաղաձայնը, օտար լեզուների այս հնչյունը վերածում են փ, հիշյալ բառը մեկնում եմ պրս. خدا آفرین Xudā-āferīn «Աստուծու ստեղծած, աստվածաստեղծ»։

Թրքական արշավանքից հետո՝ Արաքսի երկու ափերին էլ պարսկերեն լեզուն վերացված էր։ Ուստի խուդափիրին պարսկերեն անունը թրքական ներխուժումից ավելի առաջ է։

21 (22). Մ Ա Լ Ա Հ Ի

Հայկական Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Գուլքանյանը հարցրեց ինձ, թե ի՞նչ ծագում ունի մալաճի բառը, որով հասկանում են այժմ Երևանում և նրա շրջակայքում մի տեսակ խաղող և նրանից պատրաստված սքանչելի քաղցրահամ գինին։

Այս բառը ինձ ծանոթ է մալաղի ձևով և ո՛չ թե մալաճի։ Գավառական բառարանում (էջ 742—3) գտնում ենք մալաղի կամ մալաղեկ (վանի բարբառով) «սքանչելի քաղցրահամ տանձ, որ կախան են անում», մեղլաղ կամ միլաղ (վանի բարբառով) «կիսահաս պտուղների կապոց, որ կախան են անում»։

Երկուսի մեջ էլ հիմնական իմաստն է «կախել, կախան անել»։

Riggs, անգլիացի կամ ամերիկացի բողոքական քարոզիչ Զմիռնիայում, հրատարակել է 1847 թվին մի բառարան, որի խորագիրն է «A vocabulary of words used in modern armenian, but not found in the ancient armenian lexicons»։ Այս գրքում, էջ 93, իբրև ռամիկ բառ հիշված է մուղալլեխը կենալ «կախված մնալ, ընկնելու վտանգի մեջ լինել»։

Միջին հայերենումն էլ գործածված է այս բառը մաղլաղ ձևով, ինչպես գտնում ենք Հայսմաւուրքում (մարտի 18). «Երեք երկինք հաւասարեալ ի շուրջ դան և պատեն զաշխարհաւս՝ ի վեր և ի վայր մաղլաղ (տրտված է մաղալաղ) առեալ և իւրեանց շրջագայութեամբն զերկիրս ի կայի պահեն»։

Այս բոլորը միևնույն են և ծագում են արաբ. معلق mu'allaq բառից, որ նշանակում է «կախեալ, առկախ»։ Գիտական առած է كرۀ ارض معلق kurre-i arð mu'allaq «երկրագունդը առկախ է»։ Նույն բառը նշանակում է նաև «գլխիվայր շրջվել, գլուխկոնծի տալ» և այս իմաստով Պարսկաստանում դարձել է maylay. այս ձևից է նաև միջ. հյ. մաղլաղ։ Նույնից է դարձյալ վրաց. მალაყი մալաղի «գլուխկոնծի» (տես նաև Արմ. բառ., հտ. Դ, էջ 771 = տպ. Գ, էջ 239)։

22 (23). Ջ Ի Ր

Մինջանի բառարանում, որ հրատարակեց իմ հանգուցյալ դասընկեր R. Gauthiot (MSL, հտ. 19, 1916 թ.), էջ 145 գտնում եմ čīrī «ծիրան» բառը, որի հետ հեղինակը համեմատում է նաև եիդղահ բարբառով čeri և բաֆիր բարբառով tsiran. (այս բոլորը խոսում են Հինդուքուշի բարձունքում)։ Հեղինակը չգիտի այս բառերի ծագումը. միայն հիշում է թե Մոնղոլի Ցայիղ-Բախշը գրում է այս բառը cherī ձևով. ապա հարցնում է թե արդյոք Հնդկաստանի լեզուներից փոխ առնված մի բառ չէ՞։

Ակներև կերպով մինջանի չիրի, եիդղահի չերի և բաֆիրի ցիրաճ «ծիրան» նույն են մեր չիր բառի հետ։

Ո՞ր լեզուն փոխ է առել այս բառը մյուսից. հայերե՞նը Հինդուքուշից, թե՞ Հինդուքուշի այս բարբառները հայերենից։

Հայերեն չիր բառի ծագումը հայտնի է. նա իբրև ձայնդարձ միանում է հյ. չոր բառի հետ, որի ծագումը հնդեվրոպական է. առաջանում է հնխ. k²soros ձևից. համմտ. սանս. kšārá, հուն. ξερός «չոր»։ Հյ. չիր՝ թեև առաջանում է չոր բառից և բուն այսմ բուն նշանակում է ամեն մի չոր պտուղ, բայց հատկապես ծիրանի չորը։ Մյուս պտուղների

չորը բարդությամբ է կազմվում. ինչ. տաճ-ձաչիր, շլորաչիր:

Կարո՞ղ էր Հայաստանի չիրը մինչև Հինդուքուշ հասնել:

Ըստ բուսաբանների ծիրանը Հայաստանի բնիկ պտուղներից է. այնպես որ գիտական անունն է Prunus armeniaca = *հայկական սալոր. լատիներեն կոչվում է* armeniacum *և իտալերեն* armellino. *իսկ արաբ.* تفاح الارمنى tuffāh-al-armanî, *որ նշանակում է «հայկական խնձոր»:*

Չիր *բառը փոխ է առնված թրք.* čir *ձևով, որ նշանակում է «չորացրած ծիրան կամ սալոր», և վրաց.* ჩირი *չիրի ձևով, որ նշանակում է ընդհանրապես «չորացրած պտուղ». օր.* ლեღվիս ჩირი *«չոր թուզ»:*

Այս հանգամանքների տակ հասկանալի է դառնում, որ չիրը մինչև Հինդուքուշ հասած լինի. բայց չիրը և ո՛չ թե ծիրանը:

23 (24). Մ Ա Թ Ո Ւ Զ

Մաթուզը կիսավայրենի մի պտուղ է, որ աճում է մարգի կամ մարգենի կոչված ծառի վրա: Լատիներեն կոչվում է arbutus, *ծանոթ է Պոլսում թրք.* hoĵa yemiśi *«պառավի պտուղ» անունով: Հնից ավանդված է միայն մարգի (ծառը) Վստկ. 155, իսկ այժմ բարբառներում ունենք՝ Զեյթուն* **մաթուզ**, *Սվեդիա* **մաթէօս** (mätös) *պտուղը և Զեյթուն* **մարգի**, *Սվեդիա* mät'sina *ծառը:*

Այս բառի ծագման մասին ոչ ոք ոչ մի կարծիք չի հայտնել:

Կարծում եմ որ **մաթուզ** *արդյունք է արտաբաբանության* (haplologie) *և ձևացած է* **աղամաթուզ** *բառից:*

Արդի բառարաններում **աղամաթուզ** *բառով նշանակված է* banane *կոչված պտուղը, որ հայտնի է նաև արաբ.* **մօզ** *անունով: Բայց ավելի ճիշտ է* figue-banane *պտուղը, որ պարսկերեն կոչվում է* انجیر آدم anĵīr-i Adam *և աննիրիտամ ձևով հիշատակված է Ամիրտովլաթի մոտ: Բառացի թարգմանվում է «Ադամի թուզ», ինչպես նշանակում է նաև Գէորգ Դպիրը իր Պարսկերեն բառարանում (տպ. Պոլիս 1826), էջ 87ա՝ «Ադամայ թուզ» ձևով: Իբր թե նախամայր Եվայի կերած և Ադամին էլ մատուցած պտուղը հենց այս էր: Ուրիշներ Ադամի կերած պտուղը շատ բամբարակ ձևով են բացատրում, որի աղբյուրը անշուշտ պրս.* انجیر anĵīr *«թուզ» բառի երկրորդ նշանակությունն է, որ և հատուկ բառով կոչվում է* انجیره anĵīra:

Որպեսզի **մաթուզ** *բառը առաջացած լինի* **աղամաթուզ** *բառից արտաբանությամբ, պետք է որ այս* **աղամաթուզ** *բառը ո՛չ միայն ավելի հին լինի, այլ և ժողովրդի մեջ սովորական դարձած բառ, որովհետև* **մաթուզ** *բառը գոնե Կիլիկիայի հիշյալ երկու գավառներում սովորական է:*

Ադամ *անունից կազմված մի խումբ բառեր ունենք մեր ժողովրդի մեջ. այսպես՝* **աղամադող, աղամալույս աղամամուխ, աղամամբնիկ, աղամացավ, աղամաճուն, աղամորդի, աղամամերկ,** *որ և արտաբանությամբ ասվում է* **ադամերկ**: *Չկա* **աղամաթուզ**, *որ սակայն ըստ մեր տեսության նախապես գոյություն ունեցած պիտի լինի, ապա անհետացած, որովհետև այդ պտուղը մեր երկրում չկա:*

Արտաբանության այս ձևը անհավոր է կարծեմ. լավ կլիներ, եթե ուրիշ օրինակ էլ ճարվեր:

24 (25). Տ Ա Ք

Այս բառի ծագումը բացատրելու համար զանազան մեկնություններ են տրված, որոնց ո՛չ մեկը ընդունելի չէ (տե՛ս Արմատ. բռ., հտ. Զ, 849 = տպ. Դ, 391):

Ըստ իս շատ հեռավոր բացատրություն ունի և զարմանալի է, որ ոչ ոք չի մտածել այդ: Նրանց հետ նաև ես, որ տակ դրել եմ առանձին արմատ!

Տակ *բառը առաջացած է պարզապես* **տապ** *բառի հոգնակի* **տապք** *ձևից՝ պ բաղաձայնի աղմամբ: Սրա ճիշտ պատկերն է ներկայացնում չամ (ապա չանի), որ առաջանում է չափ բառից աղմամբ:*

Ուշ ժամանակի հայերենում մի խումբ բառերի հոգնակին գործածվում էր իբրև ե-

զակի, անշուշտ նշանակության որոշ երանգով։ Այս կարգից են չափ—չափ, կշիռ—կշիռ, ձև—ձևիմ, պատճառ—պատճառ են։ Երբեմն էլ գործ է ածվում սրանց հոգնակի հայցականը. ինչ. չափսը վերցնել, չափ ու ձևս, են։ Շիրակացին գրում է իր մի գիրքը «Յաղագս չափուց և կշռոց», որի ուղղականը պիտի լինի «չափք և կշիռք»։

-փf, -պf ձայնախմբի սղման շատ լավ օրինակ է թամբ բառի հոգնակին՝ թամբf, որ բարբառներում (Սուշավա, Երևան, Ղարաբաղ, Վան են) դարձել է թամf, և այս ձևով գործածված է արդեն Առաք. պտմ. 82։

Կարելի է հիշել նաև թափ «պատյան թրի կամ դանակի», որի հոգնակի թափf ձևը տեղ-տեղ դարձել է թամf (տես Արմ. բռ., հտ. Բ, էջ 1170=տպ. Բ, էջ 148)։

Ըստ Հայկ. բառարանի տաf ձևի գործածությունը շատ հին է. ունենք օրինակ՝ տաf Խոր. Գ. 37, էլ. արխատ. էջ 137. տաfացուցիչ Խոսր. տաfիլ «տաքանալ» Պիտ. տաfություն Ոսկ. յհ, ա. 21. տաfումն Պիտ. էջ 464.— այս բոլորը հետին գրչություններ են՝ հին բնագրերի մեջ մտցրած։

26 (27). ՏԻԳՐԱՆ

Մեր ամենամեծ թագավորի անունն է, որ կրում են նաև մեր պատմության մեջ հայտնի մի խումբ ուրիշ թագավորներ և իշխաններ։ Սկսվում է այս անվան գործածությունը ամենահին շրջանից և գնում է մինչև ԺԴ դար։ Իմ Անձնանունների բառարանում կա 29 Տիգրան, որոնցից վերջինն է Տիգրան Հոնենց, որ շինեց Անիում Ս. Գրիգորի տաճարը՝ 1215 թ. (տե՛ս Օրբելի, Անույ աւերակները, էջ 32 և Յովսէփեան, Խաղրակեանք, 16)։

Պարսիկներ էլ կան այս անունով. այսպես՝ Տիգրան աթմննեան, առաջնորդ Մարաց (Հերոդ. 7, 62), Տիգրան պարսիկ, Սատրապաս ծովակալի փեսան (Ն. Ք. 390 թ.), Տիգրան զորավար պարսիկ, որ ուղարկվեց Գայլ Վահանի որդի Սմբատի դեմ (Մամիկ. դ)։ Ուրիշ պարսիկ չկա այս անունով։

Տիգրան անունը թեև հին իրանական լեզվին է պատկանում, բայց ոչ ոք չէ փորձել նրա բացատրությունը տալու, ո՛չ Lagarde, ո՛չ Justi, ո՛չ Bartholomae և ոչ էլ Hübschmann, Arm. Gram. 87: Այնպես որ Տիգրան անվան ստուգաբանությունը բոլորովին անհայտ է։

Ենթադրում եմ, որ այս անվան սկզբնական ձևն է եղել հին պրս. tigra-rāna, որ կազմված է tigra «նետ» և rāna «մարտընչող» բառերից և նշանակում է «նետով մարտընչող՝ նետամարտիկ»։ Սրա հետ համմտ. Τιγρανάτης լազ իշխանի անունը (170 թ.), որ նման կազմություն ունի և նշանակում է «նետերի պետ կամ տեր»։ Հին պրս. *tigrarāna ստուգաբանության օրենքով (haplologie) դարձել է tigrāna։ Այս օրենքի համաձայն, երբ երկու նման վանկեր հաջորդում են իրար, նրանցից մեկը կորչում է։ Օրինակ՝ չենք ասում կեղծածամ, այլ կեղծամ։ Նմանապես ճարտասան<ճարտարասան, մարմաշէն<մարմարաշէն, ասպետ<ասպապետ, աշխարհահայեացք<աշխարհայեացք, աննմանուէր<աննմանուէր։ Նման մի օրինակ նաև իրանական լեզվից տալու համար հիշենք գնդ. Vīra-rāz ձևից Vīrāz անունը (Bartholomae, Altir. Wört. էջ 1454)։

27 (28). ՎԱՉԳԷՆ

Նախաձայն վ և մանավանդ վերջավանկ էն ցույց են տալիս, որ այս անունն էլ իրանական է։ Ինչպես ասում է Hübschmann, Arm. Gram., էջ 90, ծան., էն<պրս. în=ēn իրանական անունների փաղաքշական ձևն է. այսպես են՝ Հյ. Յազդէն, Վրկէն, Գուրգէն, Արտաշէն, Արտէն, Արշէն, Դատաբէն, Մանէն, Ատգէն, Արսէն, Բաբգէն, Ջաւէն, Ջուարէն, Խուժէն, Խորէն, Կիշկէն, Շահէն, Վրէն, Սուրէն, Փառէն, պրս. Gurīn, Tahmin, Bāpīn, Yazdīn, Sādagīn, Gurgin, ասոր. Sahrēn, են։

Բայց ոչ ոք, ոչ Lagarde, ոչ Justi և ոչ իսկ Hübschmann չեն ստուգաբանել այս անունը։

Երբ հանենք նրա վրայից -էն փաղաքշա-

կան մասնիկը, կմնա արմատը Վազգ, որ ըստ իս ուրիշ բան չէ, եթե ոչ գնդ. vazaya «գորա» բառը (տես Bartholomae, Altiran. Wört., 1389):

Գորտը պիղծ կենդանիների շարքումն էր. ուստի սպասելի չէր, որ մարդկանց վրա այդպիսի «պիղծ» անուն դրվեր։ Միևնույն ժամանակ գիտենք, որ հին հնդևրոպական ազգերի անձնանուններր միշտ բարդ են լինում, այսինքն բաղկացած են երկու բառի բարդությամբ։

Այս վերջին կետը տալիս է մեզ բառի բուն բացատրությունը և վերացնում է իմաստի կողմից ծագած դժվարությունը։

Վազգէն փաղաքշական ձևը առաջացած պիտի լինի «գորտասպան, գորտաջինջ...» և այլ նման մի բարդությունից, որի երկրորդ մասն ըստ սովորության կրճատվել է և փոխանակվել է -էն մասնիկով։ Ճիշտ այսպես է կազմված Փառէն անունը, որ կրճատված է Փառ-Ներսեհ անունից։ Ավելորդ ենք համարում տալ ուրիշ օրինակներ։

Ջնդ. γ տալիս է միշտ հյ. գ. միակ դժվարությունն է vazaya բառի միջին a ձայնավորի կորուստը. բայց կրճատման մեջ այդպիսի սղումը անբնական չէ։ Մյուս կողմից ունինք Բագարատ<հպրս. Bagadāta «աստուածատուր», որ Բագրատունի ձևի մեջ դրկված է նույնպես միջին ա ձայնավորից։

28 (29). ԼԱԻԱՇ

Հայոց մեջ սովորական հացի տեսակի անունն է։ Շատ տեղ գործածվում է այս ձևով, տեղ տեղ էլ լօշ ձևով, ինչպես ունի նաև Տաթև. հարց. 357 (տես Արմ. բռ. Գ. 299)։ Իր պատշաճ մեկնությունը դեռ չի գտած։

Սեմական բառ է և հատկապես ասորական և ասուրական, որոնցից անցել է հայերենին։

Ասուրական ձևն է lāšu, եբր. לֵשׁ lōš, եթովպ. lōsa, որոնք նշանակում են «տրորել, ճմլել, շաղախել»։ Եբրայական բառը գործածված է Մն. ԺԸ 6, ուր հայերեն թարգմանությունն ունի «փութա՛ բրեա գրիւս երիս ալեր նաշհոյ և արա նկանս» (Gesenius, եբր. բռ. 17-րդ տպ., էջ 382)։

Նույն արմատը արաբերենում ստացել է لَاث lāθ ձևը, որ նշանակում է «պատառը եղի մեջ թաթախել». սրանից էլ لوث luvāθa «խմորը չկպչելու համար ցանված ալյուրի փոշին» (Կամուս, Արաբ. բռ. Ա. 364 և 365)։

Մեր բառին ավելի նման են ասոր. lāš «խմոր շինել, շաղախել», laišā «զանգված, խմոր», lāišā «տրորում. 2. ալյուր թրելու և հաց թխելու տաշտ», laišonā «մի տեսակ խմորեղեն» (Brockelmann, Lex. syriacum, էջ 174 ա)։

Féghali MSL հտ. 21 (1920 թ.), էջ 243 Լիբանանի արդի արաբական բարբառով հիշում է lāš, láuleš «ալյուր շաղվել», láuše «փոքր քանակությամբ շաղված ալյուր». իսկ ասոր. lāš են ձևերը համարում է քանանացոց լեզվից փոխառյալ։

29 (30). ԺՂ. ԼՆՀՏ ՐԼԼԱԼ

Այս բառը գործածվում է Խարբերդի և Մանիսայի բարբառում, «հոգնիլ, պարտասիլ» նշանակությամբ (տես Գւռ. բռ. էջ 419), որի հետ նույնանում է Դրբ. լաճ տալ «հոգնած հոգնած երթալ» (անդ 408)։

Գտնվում է արաբերենում. հմմտ. لحاث lahaθ «ծարավել», لحاث luhāθ «ծարավից առաջացած այրուցքը, պապակում», لحاث lahaθ, لحث luhāθ «ծարավից կամ նեղությունից և կամ հոգնածությունից լեզուն դուրս հանելով ուժեղ ուժեղ շնչել, ինչ որ ավելի շներին է պատահում» (Կամուս, Արաբ. բռ. Ա. էջ 365)։

Նույնը կա նաև ասոր. lehtā «դժվարաշնչություն», lahheθ «հևալ» (տես Brockelmann, անդ. էջ 173 ա և Féghali, անդ. էջ 243)։

Որովհետև արաբ. ث θ չի տալիս հյ. տ, ուստի փոխառությունը պետք է դնել մեր հարևան ասորիների լեզվից։

30 (31). ԺՂ. ՇԻԹԻԼ

Երևանի բարբառում գործածական է այս բառը, որ բույսը ցանելու և տնկելու մի առանձին ձև է։ Միջին հայերենից ավանդված

է մեզ սատիր «շիթիլ» և սատրել «շիթիլ անել» Վստկ. էջ 166, 38, 59, 160 նույն իմաստով։ Ծագում է ըստ իս արաբ. سدير sadīr ձևից (տես Արմ. բռ. Զ. 114)։

Շիրիլ գործածական է նաև արդի արևել. բրբ. լեզվով, բայց չի նշանակված Будагов-ի բառարանում։

Բոլորի ծագումը սեմական է. համմ. ասուր. šitlu «ծիլ, ընձյուղ», satâlu «տրնկել», եբր. שתל šθl «տնկել», שתיל šāθīl «նորածիլ բողբոջ», ասոր. šəθal «տնկել», šəθeltā «ծիլ, նորածիլ բողբոջ», նոր արաբ. شتل štl, Ալժիրի բարբառով šttl «բույսը մեծացնել սերմ ստանալու համար» (տե՛ս Gesenius 867, Brockelmann 391 բ, Féghali MSL, 21, 239)։

31 (32). Ի ԴԷՄՍ ԵՒ Ի ԼԱՏԱՅ

Պրոֆ. դր. Աշոտ Աբրահամյանի հրատարակած «Անանիա Շիրակացու մատենագր.» աշխատության մեջ (տպ. Երևան 1944), էջ 242 կարդում ենք.

«Նաև յնդհմական աղբերէն, որ է սիոական առաքինութիւն, չորս բղխեն առաջս։ Առաջին Փիսոն, որ կոչի բերան հրոյ, զրանականին ունի ի մեզ տեսակս, որ շրջի ի Դէմս, և ի Լատայ, որ են վայրք խելացն, յորում բանականն շրջի։ Իսկ երկրորդ գետն՝ Գեհոն...»։

Չհաշվելով կետադրության սխալները, որոնք ձեռագրի հետևողության արդյունք են, երկու սրբագրելի կետ կա այստեղ։ Առաջինն է շեղատառ տպված բառը, որ անշուշտ պետք է կարդալ զրանականին, ինչպես հիշվում է քիչ ներքև։

Շատ ավելի ծանր է երկրորդ սխալը, որի դառն պատասխանատվությունը ընկնում է իմ վրա, քանի որ ես եմ եղել գրքի խմբագիրը։

Ձեռագրում գրված է եղել «Դէամս և ի լատան», ինչպես նշանակված է ստորագիր ծանոթության մեջ. հեղինակը ուղղել է «ի Դէմս, և ի լատայ և անունների ցանկումն էլ գրում է Դէմ 232 (ուղղել 242), լատ չէ հիշված։

Շիրակացին նկարագրում է այստեղ դրախտի գետերը, որի ամենահայտնի աղբյուրն է Ծննդոց գրքի գլ. Բ, 10—16. «Եւ գետ ելանէր յնդհմայ ոռոգանել զդրախտն. և անտի բաժանի ի չորս առաջս։ Անուն միումն Փիսոնն. նա է որ պատէ զամենայն երկիրն Եւիլատայ... Եւ անուն գետոյն երկրորդի Գհհոնն...»։

Շեղատիպ բառն է ահա շաղկապով կազմված «և ի Լատայ» ձևի ուղիղը։

Իսկ «շրջի ի Դէմս» առնված է նույն հատվածի երրորդ գետի նկարագրից. «Եւ գետն երրորդ՝ Տիգրիս, նա է որ երթայ յանդիման Ասորեստանի։ Այս հատվածի «երթայ» բառի տեղ Շիրակացին դրել է «շրջի», իսկ «յանդիման» բառի տեղ էլ նրա հոմանիշը՝ «ի դէմս»։

Ըստ այսմ Շիրակացու «որ շրջի ի Դէմս, և ի Լատայ» բառերը պետք է ուղղել «որ շրջի ի դէմս Եւիլատայ» և ըստ այսմ էլ անունների ցանկը։

32 (33). ԺՂ. ԽՈՒԿ ՏԱԼ

Երևանի բարբառի ոճերից է սա, որ նշանակում է «վանել, վռնտել, հալածել»։

Խուկ հնդևրոպական բառ է և բոլորովին նույն է ռուս. улица «փողոց» բառի հետ։

Խուկ տալ ոճի միաձույլ ձևն է խոկել, որ նույնպես գործածվում է Երևանի բարբառում, նույն իմաստով։

Խոկել սաստկական ձևն է խրկել բայի, որ սովորական է Պոլսի բարբառում և ծագում է ղրկել ձևից։—Պոլսի բարբառում բառասկզբի ղ դառնում է միշտ խ. ինչ. Ղուկաս > Խուկաս ևն։

Ղրկել կրճատված է ղարկել ձևից, որ սովորական է Ղարաբաղի բարբառում, և այս էլ առաջանում է ուղարկել բայից, որ միաձույլ ձևն է (յ)ուղի արկանել ոճի։

Ըստ այսմ ուղի բառից առաջացած յուղի արկանել ոճի ընթացքն է եղել ուղարկել > ղարկել > ղրկել > խրկել > խոկել > խուկ տալ։

Ամենքին հայտնի է, որ հյ. ուղի «ճանապարհ» նույն է ռուս. улица «փողոց» բառի հետ (Ռուս. улица կազմված է uli արմա-

տականից՝ -ца մասնիկի հավելումով, ինչպես ունենք նաև ռուս. сердце «սիրտ» (= հյ. սիրտ, լեթթ. sirds), солнце «արեգակ» (=լտ. sol) են բառերի մեջ):

Երբ մի անգամից ասում ենք թե հյ. խոիկ և ռուս. улица միևնույն բառերն են, մարդ խրտնում է և չի ուզում հավատ ընծայել: Բայց երբ ձայնափոխությանց շարքը ճշտությամբ և կետ առ կետ հաստատում է նույնը, այլ ևս կասկած չի մնում:

Այսպես են լեզվական օրենքները:

Բառեր կան, որոնք տատ առ տատ նման են իրար հետ, բայց ո՛չ մի կապ չունին. բառեր էլ կան, որոնք ո՛չ մի նմանություն չունին արտաքին կեղևի տակ, բայց երբ դնանք դեպի հինը և գտնենք նրանց ծագումը, կարող են իրար հետ բոլորովին նույն դուրս գալ: Այսպես ռուս. подарок «նվեր, ընծա» տատ առ տատ նույն է հյ. պատարագ բառի հետ, որի առաջին իմաստն է նույնպես «ընծա»: Բայց այս երկու բառերը բնավ կապ չունեն իրար հետ: Ռուս. подарок կազմված է по նախամասնիկով և ок հետամասնիկով՝ дар արմատից, որ նույն է հյ. տուր արմատի հետ և ոչ մի նմանություն չունի պատարագ բառի հետ: Նմանապես ֆրանս. hôtel (կարդացվում է օտել) «հյուրանոց» հնչմամբ և իմաստով միևնույն է հյ. օթել «գիշերել, օթևանել» բառի հետ, բայց ո՛չ մի կապ չունի նրա հետ, որովհետև hôtel առաջանում է լտ. hospitale բառից, իսկ հյ. օթել ծագում է եվ բայական վերջավորությամբ օթ արմատից, որ է հնխ. au+ti:

Խոիկ ձևը մի ուրիշ բան էլ է սովորեցնում մեզ: Նրա նախաձայնը (խ)՝ ուղի բառի վերջին մնացորդն է, իսկ -ոիկ վանկը ուկ արմատի ձևափոխությունը: Բայց այս երկու մնացորդները այնպես են միացել իրար հետ, որ կազմել են մի բոլորովին նոր արմատ: Այնպես որ եթե չլինեին պատահաբար միջին և դավառական ձևերը, մենք չըպիտի կարողանայինք իմանալ նրա ծագումը և պիտի համարեինք անկախ և ինքնուրույն նոր արմատ:

Այս երևույթը խրատական է լեզվաքաննության համար:

33 (34). ՈՒՐՔՈՒ

Այս բառը նշանակում է «խորթ որդի»: Խորթության նշանակող երկու ուրիշ բառ էլ ունինք, այն է հorու և մorու: Այս երկուսն էլ հնդևրոպական ծագում ունին և համապատասխանում են ճիշտ հուն. πατρυιός «հորու» և μητρυιά «մորու» բառերին (Walde-Pokorny 2, 4): Հorու բառը ունի նաև յorայ ձևը, որ ցույց է տալիս h=յ լծորդությունը, ինչ. ևինգ=յիսուն ևն:

[Ծանոթ.—Նախորդ հոդվածիս մեջ № 17 յաղթել=salto հիմնել էի այս h=յ լծորդության վրա. բայց այժմ գտնում եմ, որ ավելի լավ է յ դնել նախդիր: Ինչպես որ հնխ. sāld- տալիս է հյ. աղ, աղա, նույնպես հնխ. salt- տվել է հյ. *աղթ, որ յ նախդիրն առանալով դարձել է յաղթ: Այս ձևով յաղթ կազմված է լինում ճիշտ այնպես, ինչպես լտ. in-sulto «վրան ցատկել, խոյանալ, ալիքները հաղթահարել, հարվածել»]:

Թե՛ հorու= πατρυιός և թե մorու μητρυιά բառերի մեջ ιός, ιά վերջավանկերը ջնջվելով՝ բառավերջին մնացել է ու=υ (համմտ. հուր =հուն. πῦρ<հնխ. puro): Ըստ այսմ ու ո՛չ թե հայկական մասնիկ է, որ ավելացել է հայր, մայր բառերի վրա, այլ ուղղակի պատկանում է բնին:

Բայց հայերենում ըմբռնված է այնպես, իբր թե հorու և մorու կազմված են ու մասնիկով՝ հայր և մայր բառերի սեռականից:

Ճիշտ այսպես պիտի լինի նաև ուրջու, որ կազմված է ու մասնիկով՝ «որդի» նշանակող բառի սեռականից:

Հյ. ուրջու բառը հյ. որդի բառի հետ կապելու փորձեր արել են սկսած Հայկազեանից, մինչև Bugge, Patrubány, Wiedemann և Pedersen (սրանց մասին տես Արմ. բառ.), բայց այդ բոլոր փորձերը անհաջող են անցել: Ուրջու բառը որդի բառի հետ կապ չունի և մնում է գտնել բոլորովին ուրիշ բացատրություն:

Եթե հյ. ուրջու բառի վրայից հանենք ու մասնիկը (կամ բունը), կգտնենք ուրջ, որ պիտի լինի «որդի» նշանակող մի բառի սեռականը: Սեռականի համար ջ վերջավորու-

թյուն մենք գիտենք կնոջ և գեղջ բառերի վրայ, որոնցից առաջինի մեջ –ոջ բնավոր (thématique) ձևն է, երկրորդի մեջ ջ՝ անբուն (athématique)։

Հայերենում չունինք այնպիսի բառ, որ r հանգի և առանց սեռականի մեջ ջ։ Բայց ինչպես որ ուրիշ դեպքերում r և ղ հանգող բառերը հոլովման մեջ զուգընթաց են գրնում (համմտ. արկղ—nuկr), այստեղ էլ կարող ենք ենթադրել նույնը։ Ըստ այսմ nurջ՝ անբուն ձևի սեռականն է nur բառի, ինչպես գեղջ՝ գիւղ բառի։

Այսպես երևան է գալիս մի նոր հայերեն բառ *nur, որ նշանակում է «որդի»։

Հնդևրոպացիք երկու բառ ունեին «որդի» նշանակությամբ. առաջինն է sunus, որ պահված է սանս. sūnúh,, զնդ. hunuš, գոթ. sunus, հին. sunr, հբգ. sunu, անգլ. son, գերմ. Sohn, լիթ. sūnús, հսլ. synъ, ռուս. сын են ձևերով։ Այս բառը որ պիտի տար հյ. *ուն, իր չափազանց կարճության պատճառով ջնջված է հայերենում։

Երկրորդն է putro-, որ պահված է միայն արիական ճյուղում. այսպես սանս. putrá-, զնդ. հպրս. puθra- (Walde-Pokórny 2, 76), վուխի pötr, օսս. furt', fərt', պհլ. pusar, պրս. پسر pusar, բարբառներում pus, pūr, pür, pur, քրդ. pūer (Horn § 318), որ արմատով միայն նման է լտ. puer հոմանիշին։ Այս բոլորը նշանակում են «որդի»։

Հնխ. putro- պիտի տար հյ. *nur. նախաձայն p կարող է ջնջվել ու ձայնավորից առաջ, ինչպես ցույց է տալիս ոլ<հնխ. pōlo. իսկ t բաղաձայնը r-ից առաջ դառնում է ւ, ինչպես ցույց են տալիս մուր<հնխ. mutro-, արաւր<հնխ. aratrom, հաւր<հնխ. patros։

Ահա այս putro- «որդի» բառն է, որ դարձել է հյ. nur «որդի» և որ նույնպես կորել է մեր մեջ իր չափազանց կարճության պատճառով. մանավանդ որ շփոթվում էր համանուն n°ur բառի հետ։ Նրա փոխարեն հրնարվել է nuunr բառը։ Իսկ *nur «որդի» բառի հետքը մնացել է սեռ. nurջ ձևով՝ nurջու «խորթ որդի» բառի մեջ։

Թե սեռ. nurջ կարող էր մի ուրիշ մասնիկ էլ առանալ իր վրա՝ համմտ. գեղջ-ուկ, որ կազմված է ուկ մասնիկով՝ գեղջ սեռականից։

Այսպեսով մեկով ավելանում է թիվը այն բառերի, որոնք հատուկ են միայն հայերենին և արիական ճյուղին (տես Հայոց լեզ. պատմ. Ա. 85)։ Հյ. բառը հասել է համարյա այն աստիճանին, ուր պարսկերենի բարբառներն են և դեռ ավելի՛ էլ։

34 (35). «ԳԱՂՏՆԻՔ ԿԱՆԱՆՑ»

Հանրածանոթ մատենագետ կնաբան և իմ սիրելի բարեկամ բժ. Գ. Հարությունյանը մի հետաքրքրական գրքույկ ցույց տվեց ինձ, որ հայ և ընդհանուր բժշկության պատմության համար մեծ արժեք է ներկայացնում։ Հայկականքիս այս համարը նվիրում եմ այդ գրքույկի հետազոտության։

Գրքույկի արտաքին շապկի վրա գրված է.

ԳԱՂՏՆԻՔ
ԿԱՆԱՆՑ

—◆—

ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ
ՁՈՐՍ ՀԱՐԻՒՐ ՏԱՐՕՒԱՆ ՁԵՌԱԳՐԷ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆՈՒՆ

ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՄԸ ՅՕՐԻՆԵԱԼ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

1876

Հրատարակչի անունը, ինչպես և տպարանի անունը չեն հիշատակված։

Որոնցի Զարբհանալյանի Մատենագիտության և Ղազիկեանի Մեծ ցուցակի մեջ մի որևէ նոր տեղեկություն գտնելու հույսով, բայց ոչինչ դուրս չեկավ։ Առաջինը հիշում է նույնը՝ սխալ դնելով տպագրության թիվը (1871), երկրորդը սխալ դնելով էջերի թիվը (20 փոխանակ 16)։

Շապկի երկրորդ երեսում կա հետևյալ նամակը.

«Սիրելիդ իմ.

Թէպէտ քու թախանձելէդ ստիպեալ ձեռք զարկի «Կանանց Գաղտնեաց» վրայ գրել, բայց թեթևաբարոյ մարդոց տկարութեանը նայելով կը վախնամ, թէ գուցէ քու բաղձանքդ կատարել ուզելով՝ ուրիշներուն գայթակղութեան առիթ տամ։ Ուստի կը խնդրեմ ներքայրութենէդ, որ իբրև հաստատուն ծառայ Քրիստոսի, ողջախոհ ականջով, ամբիծ մտօք և անյողդողդ սրտիւ կարդաս ինչ որ քեզի կը գրեմ և չհաղորդես զանոնք ծանծաղամիտ և վատաշուք մարդոց։

Երեքտասան յօդուածով պիտի յայտնեմ քեզ այս մասին համառօտիւ ինչ որ գիտել շատ կարևոր է»։

Հաջորդ էջերով, որոնք թվագրված են էջ 1—16, տրվում են խոստացված 13 հոդվածները, որոնց վերնագրերն են.

Ա. Յղացում.

Բ. Սաղմին կերպավորութիւնը.

Գ. Մոլորակաց ազդեցութիւնը.

Դ. Սաղմերու բազմապատկութիւնը.

Ե. Հոգւոյն զօրութիւնն ու ծնանելու ժամանակը.

Զ. Յուցանք կամ հրէշք.

Է. Էգին յղացման նշանները.

Ը. Արգանդին մէջ զետեղեալ սաղմին արու կամ էգ ըլլալը.

Թ. Կուսութեան խախտումը.

Ժ. Յղացման արգելումը.

ԺԱ. Սերման յառաջ գալը.

ԺԲ. Կարողութիւնք.

ԺԳ. Սերման շատանալը։

Սրանով էլ վերջանում է գիրքը։

Ըստ այսմ ուրեմն ԺԵ դարի կեսից հետո, Յովհաննէս անուն մի հայ արքեպիսկոպոս, իր բարեկամներից մեկի թախանձանքից ըստիպված գրել կամ հեղինակել է այս գրքույկը գրաբար լեզվով, որի աշխարհաբար թարգմանութիւնն է, որ հրատարակիչը հրատարակել է Պոլսում 1876 թ։

Առաջին հարցը, որ ներկայանում է մեզ՝ այն է թէ այս բոլորը կեղծիք չէ՞ արդյոք. այսինքն այն անծանոթ հրատարակիչը այս բոլորը իրանից չի՞ սարքում։

Գրվածքը կեղծիք չէ և իրոք թարգմանված է գրաբարից, որի շատ հետքերը մնում են դեռ թարգմանութեան մեջ։ Ահա այդ հետքերից մի քանի կարևորները։

1. էջ 1, տող 5. «...Աստուած, ինչպէս բոլոր շնչաւորաց, նոյնպէս մարդուն մէջ բնածին ախորժակ և բերում մը տնկած է...» արդի գրողը չպիտի ասեր «տնկած է», այլ «դրած է, հաստատած է»։ Ոսկեդարյան հայերենի ընտիր ձևերից մեկն է այս տնկելը, որի վկայութիւնները տես ՆՀԲ. հիշենք գրաբանցից «ի բնական օրինաց՝ որ ի միտսն տնկեալ է» եղն.։

2. էջ 1. տող 5. «...որով ևոհա անդիմադրելի զօրութեամբ կերթան յորդեծնութիւն». —արևելահայ գրողի համար սովորական էր ևոհա դերանունը. բայց արևմտահայ գրողը, այն էլ 1876 թվին, չի գործածում ևոհա, այլ միշտ անոնք։

3. էջ 1, տող 20. «Արգանդին մէջ զետեղուած այն խառնուրիւնը վեց օրէն ապիտականալով կաթի որպիսութիւն կը ստանայ»—արևմտահայ հեղինակը պիտի ասեր «...այն խառնվածքը (կամ խառնուրդը) վեց օրէն ձերմկելով կաթի որակ կը ստանայ»։

4. էջ 1, տող 3 (տակից). «Յետ այնորիկ կը սկսի մածնուլ, այսինքն թանձրանալ և պնդիլ մինչև յղացման երկոտասաներորդ օրը».—արևմտահայ հեղինակը անշուշտ ասում էր «երկոտասաներորդ», կարող էր նաև ասել «յետ այնորիկ», բայց «մածնուլ» բառի մոտ «այսինքն» բառը դնելով բացատրութիւն տալը գրաբար բնագիր է ենթադրում։

5. էջ 2, տող 12 «...կրնէ ծնունդը խոստպարանոց...» գրաբար բացատրութեան հետևողութիւն է. «առնէ զծնունդն խոստապարանոց». արդի հեղինակը նախ չպիտի գործածեր «խոստապարանոց» բառը, որի իմաստը շատ չենք հասկանում, այլ պիտի ասեր «յամառ, ըմբոստ» կամ նման մի բան։ Բայց մանավանդ պիտի փոխեր շարադասութեան ձևը և պիտի ասեր «ծնունդը խոստապարանոց կրնէ (կամ կը դարձնէ)։ Այս ձևը կրկնվում է հետո մի քանի անգամ. ինչ. էջ 2, տող 18 «ծնունդը կրնէ գեղեցկատեսիլ», տող 1 (տակից) «կրնէ ծնունդը կար-

մըրագոյն», էջ 3, տող 4 «կընէ ծնունդը խաբեբայ» են են։

6. էջ 3, տող 8 ասված է «աչուրները փարփար».—հին հայերենից մենք գիտենք փարփար «հաւաստուսն» (ծովային թռչունը)։ Խոսքը իհարկե սրա մասին չէ. այլ պետք է հասկանալ փարփառ, որ ՆՀԲ մեկնում է «վառ ի վառ աչօք, կամ աչք գուարթատեսիլ...» և վկայութիւն է տալիս Վեցօր. «Այս անուն ասեն՝ դանդրահեր, և ծաւի և փարփառ է ի ծնէ»։ Թարգմանիչը հետևել է իր գրաբար ձեռագրին, ուր փարփառ բառը գրչի սխալով գրված էր փարփար։

7. էջ 4, տող 1. «...անյարմար պաշտամանց, կարճահասակ...» արդի ընթերցողը պիտի հասկանա «պաշտելու, աստվածապաշտութեան անհարմար», մինչդեռ հեղինակը ուզում է ասել «պաշտոնի անընդունակ»։

8. էջ 4, տող 3 (տակից) գործածված է «կանացածնաց մէջ». ո՞վ կարող է այժմ այսպիսի բառ գործածել, փոխանակ ասելու «մարդ, մարդ էակ, մարդկանց ծնունդ» են։

9) էջ 7, տող 2 (տակից). գկնի սերմնաուութեան, փխ. ասելու «սերմնաուութենէն յետոյ»։

10. էջ 8, տող 1. աեեկին վրայ պատկի. փխ. ասելու «ձախ կողմին վրայ պատկի»։

11. էջ 8, տող 6. «ցուրտ զգայ կամ ցաւ յոլովագոյն մարմնոյն այլևայլ կողմերը». փխ. ասելու «մարմնոյն այլևայլ կողմերը շատ ցաւեր զգայ»։

12. էջ 8, տող 14. կը քարշուի, փխ. կը քաշուի։

13. էջ 8, տող 18. կ'ախորժէ փխ. կ'ախորժի։

14. էջ 9, տող 3 և 4. «խոժոռ և անմարտական բաներ». արդի հայերենում խոժոռ միայն «դաժանադէմ» նշանակութիւնն ունի. իսկ գրաբար նաև նշանակում է «կոշտ, կոպիտ», որին հետևել է նաև թարգմանիչը։

15. էջ 9, տող 8. «եթէ յղութեան ժամանակին մէջ». ընդունված ձև չէ արդի հայերենում. պետք էր ասել «յղութեան ժամանակ». սա գրաբարի «ի ժամանակի յղութեան» ձևի ստրկական թարգմանութիւնն է։

16. էջ 10, տող 2. «եթէ սոեան պտկանը վրայ...» դուռ գրաբար է. արդի գրողը պիտի ասեր «ստինքին պտուկին վրայ»։

17. էջ 10, տող 12 և 13. երկու անգամ գործածված է դրզալ, որ հին ձև է. արդի արևմտահայ լեզվով ասվում է դպալ։

18. էջ 10, տող 17 բշտկան՝ սեռականն է բշտիկ բառի. բայց գրաբարում բշտիկ բառը գործածված չէ. ո՛ւր մնաց թե նրա գրաբարաձև սեռ. բշտկան ձևը, որ չի կարող թարգմանչի գյուտը լինել։

19. էջ 11, տող 13. «սերման նիւթը չի կրնար ըմբռնիլ և պահել». մենք այսօր ըմբռնել ասելով հասկանում ենք «մտքով ըմբռնել, հասկանալ». մինչդեռ գրաբարը «բռնել» իմաստով է գործածում, որ և պահել է թարգմանիչը։

20. էջ 11, տող 4 (տակից). «պուտանը մէջ». դուռ գրաբար է, ինչպես որ քիչ վերև էլ ասում է ուղ. պոյտ. արդի գրողը ասում է «պտուկ, պտուկի» կամ «պուտուկ, պուտուկի»։

21. էջ 12, տող 7. «ծնանիլ զաւակ արու», դուռ գրաբար է. աշխ. արու զաւակ ծնիլ։

22. էջ 14, տող 5 (տակից). «խնդականն կամ հրճուողական զօրութիւն». արդի հայերենում խնդալ նշանակում է «ծիծաղիլ», իսկ գրաբարում «ուրախանալ». սրանից էլ խնդական «ուրախական, բերկրական», ինչպես բացատրում է ՆՀԲ։

23. Ամենագեղեցիկ ապացույցը պահված է վերջին էջին, ուր կարդում ենք. «Սերմը կը շատնայ հետևեալ կերակուրներով, շողգամով, զալար (թաղէ) մսով հաւու խոզի և որթոյ, ձուոք և ձիթով, թերխաշ զալար բակլայիւ և ռուսմամբ, ռատրէիւք, և մանաւանդ քաղցրահամ գինւով...»։ (Արտագրեցի կուտագրական վրիպակներով միասին)։

Շեղատառ գրած բառս անշուշտ պետք է կարդանք ռուսմամբ, այսինքն «ցաւոտելով», որ կերակրի անուն չէ! Իհարկե բնագրում գրված պիտի լիներ ռսպամբ, այսինքն «ռսպով», որ վրիպակով դարձել է ռսմամբ։

Չափազանց կարևոր է ստուգել թե վրիպակը գրաշարի՞ց է, թարգմանչի՞ց թե ձեռագրից։

16 էջ շարվածքի մեջ գրաշարը 4 աննշան վրիպակներ միայն ունի. սրանք են՝

էջ 8, տող 8 (տակից) ներգուստ փխ. ներքուստ.

էջ 14, տող 16 ընբռնմանց.

էջ 14, տող 6 (տակից) եղունդները.

էջ 14, տող 1 (տակից) կ'առոյֆանայ.

Այս բոլորը գրաշարական հասարակ վրիպակներ են, որոնք արդարանում են տառերի նմանությամբ և պոլսահայ արտասանությամբ։ Ինդրական ռամամամբ բառի մեջ էլ երկրորդ n փխ. u արդարանում է այս ձևով. բայց անհնարին է որ ռսպամբ գրչությունը գրաշարը կարդար ու շարեր ռամամբ, որ թերևս գրաշարի համար էլ ծանոթ բառ չէր։ Միևնույն ժամանակ թարգմանչին էլ չեմ կարողանում վերագրել այնքան տգիտություն, որ ուտելեղենների շարքում հիշված ռսպամբ–ը կարդար ռամամբ, ուստի սխալը ձեռագրինն է։

Այս բոլորի եզրակացությունն այն է, որ այս գրքի հրատարակիչը խարդախիչ չէ և իրոք թարգմանել է գրաբար մի ձեռագրից, որ գրված է հղել ԺԵ դարի կեսից հետո։

Այժմ պետք է քննենք երկրորդ հարցը. թե այդ ձեռագիրը արտագրություն էր մի ավելի հին ձեռագրից, թե՞ բնագիր։

Ինքնին հասկանալի է, որ շատ դժվար է ենթադրել, թե այդ ձեռագիրը բնագիր էր. բայց այն երկու սխալ ընթերցվածները, որ տեսանք արդեն, բավական են ցույց տալու համար, թե ձեռագիրը արտագրություն է։ Այդ սխալներն են փարփար և ռամամբ, որ պետք է ուղղել փարփառ և ռսպամբ։

Կա նաև էջ 13 բաղափուշտ, որ էջ 10 գրված է փաղափուշտ. բայց այս երկու գրչություններն էլ սովորական էին հին ձեռագրիրների մեջ, ինչպես նշանակում է նաև ՆՀՔ բաղափուշտ բառի տակ։

Անցնում ենք երրորդ հարցին։ Ե՞րբ էր գրված բնագիրը, այսինքն ո՞ր դարից պետք է դնել հեղինակին։

Մեր բժշկական գրվածքները սովորաբար Կիլիկյան շրջանից են. սրանք բոլորը մատնվում են իրենց միջին հայերեն լեզվով։ Իսկ այն բնագիր ձեռագիրը, որից արտագրված էր ԺԵ դարի ձեռագիրը, միջին հայերե՞ն էր։

Վճռականապես ոչ։

Ուշադիր կերպով և մի քանի անգամ կարդալով աշխարհաբար թարգմանությունը, ո՛չ միայն չզտա այնտեղ միջին հայերենի հետքեր, այլ ընդհակառակը տեսա, որ լեզուն շատ ավելի հին հայերեն է։

Ամենալավ ապացույցը նույն չարաբաստիկ ռամամբ բառն է, որ բնագրում գրված էր ռսպամբ։ Սա ռսպն բառի հին գործիականն է. միջին հայերենում ռսպն բառի գործիականը լինում էր ռսպօմ։ Գրաբարի –ն հանդող բառերի գործիականը լինում էր օմ մասնիկով. ինչ. ձկօմ, ոսկօմ, սիտօմ, արջասպօմ, եղեգօմ, պտղօմ, անձօմ, կաթօմ, բութօմ, մատօմ, ձեռօմ, ոտօմ են (տես իմ Հայոց լեզվի պատմ. մասն Բ, էջ 243)։ Եվ այս է պատճառը, որ ԺԵ դարի գրիչը բնագրի ռսպամբ ձևը կարդացել է ռամամբ, որովհետև իրեն համար ռսպ բառի գործիականն էր ռսպօմ։

Հին հայերենի հետքեր են նաև հետևյալ ձևերը.

1. Կաճացածին (էջ 4, տող 3՝ տակից). սրանչելի ոսկեղարյան բառ է. բստ ՆՀՔ մի անգամ գործածված է Լմբ. սղ., որի համար էլ ասում է «փոխանակ գրելոյ կանանցածին». իսկ կաճաճացածին ձևի համար տալիս է Ս. գրքից 4 օրինակ։ Իրողությունն այն է, որ կաճաց ավելի հին և հարազատ ձև է քան կաճաճց. ուստի կաճացածին ամենահին հայերեն ձևն է։

2. Փարփառ (էջ 3, տող 8), որի վկայությունը ունինք Վեցօրէից գրքից (տե՛ս վերը)։

3. Ըմբռնել (էջ 11, տող 13) «բռնելը» իմաստով ոսկեդարյան ընտիր ձև է, որի վկայությունները տե՛ս ՆՀՔ. ավելի ուշ փոխանակվեց «ունիմ/կալայ» բառով, իսկ աշխարհաբարում տարածվեց բռնել, որ չկար Ոսկեդարում։

4. Ախորժել (էջ 8, տող 18) առաջին լծորդությամբ ընտիր հայերեն ձև է. իսկ ախորժիլ համարվում է բստ ՆՀՔ ռամիկ, որի համար բերում է միայն մի վկայություն Մագիստրոսից։

5. Խոժոռ «կոշտ, անհարթ» իմաստով վերկայված է Վեցօրէից գրքից. ապա դարձավ խոշոր, որ սովորական է չեռ-ոսկեդարյան լեզվում։

6. Պոյտն, սեռ. պուտան (էջ 11, տող 4՝ տակից) ընտիր ոսկեդարյան ձև է, որ ուշ ժամանակ դարձավ պոյտ, սեռ. պուտի։

7. Պտուկ «ստինքի ծայրը», ավելի հին ձևն է եղել պտուկն, սեռ. պտկան, յգ. ուղ. պտկունք. այս գրքումն էլ գործածված է սեռ. պտկան (էջ 10, տող 2)։

8. Զգայուն «զգայարանք». ընտիր ոսկեդարյան բառ է, որի վկայութիւններն են՝ Սուր ևս զգայուն նորա ունին առ ի հոտ բան զմեղ (Վեցօր.)—Որ ինչ ի զգայնոց շօշափի կամ զննի կամ ազդի, այն մարմնաւոր է. և որ զգայնոց ոչ ազդի՝ անմարմին (եղնիկ).—Գլուխ՝ առաջին է մարմնոյ, ոչ դրիւն միայն, այլ կենօք և զգայնօք (Կիւրղ. ծն.)։ Ոսկեդարից հետո այս բառը դարձավ զգայարան, ինչպես գործածում ենք այժմ։ Սույն գրքում գրված է զգայուն, որ թարգմանիչը կարիք է զգացել բացատրել հետևյալ ձևով. «քանի մը զգայունք կամ արտաքին գործարաններ կ'ստանայ» (էջ 14, տող 8)։

9. Աստեղաճշմար «աստեղագետ», ընտիր ոսկեդարյան բառ է՝ վկայված եղնիկից. Ոչ որպէս քաւդեայքն աստեղանշմարք (եղն. էջ 154)։ Այս գրքում գործածված է էջ 15, տող 11՝ տակից։

10. Աղծեալ «աղած, աղր դրած». սքանչելի ոսկեդարյան բառ է. վկայված է Եւս. քր. ա. «Աղդի ազդի ազգս ձկանց՝ իբրև աղծեալ ապխտեալ». ճիշտ նույնը գտնում ենք այս գրքում էջ 16, տող 7 «աղծեալ և ապրխտեալ մսով»։

Տրված օրինակներում միշտ Ոսկեդարը շեշտեցինք, մանավանդ Վեցօրէից գիրքը։ Բայց մենք շատ հեռու ենք կարծելուց՝ թե գիրքը Ոսկեդարից է։ Նրա ոսկեդարյան ձևերը իհարկե առաջացած են այն բանից, որ հեղինակը օգտվել է Ոսկեդարյան գրվածքներից և հատկապես Վեցօրէից գրքից։

Գրքի գրության թվականը որոշելու համար մենք ունինք մի պատվական բառ, որ է գործելի «ածուխ». գործածված է էջ 9, տող 1. «գործելի, հող, և ուրիշ ասոնց նման բաներ»։ Այս բառը, որ այժմ կենդանի է մի քանի բարբառներում (Տփղիս, Լոռի, Զեյթուն, Մուշ, Կարին, Համշէն, Վան, Տրապիզոն), չի գտնվում գրաբարում, ինչպես և Պոլսահայ բարբառում և մեր արդի աշխարհաբարում։ Գործածված է միջին հայերենում. այսպես Անկ. գիրք հին կտ. 315, Վստկ. 117, Անսիզք 39, Տաթև. առ. 79, որոնցից ամենահինն է Վաստակոց գիրքը (ԺԲ դար)։ Այս ժամանակից էլ համարում եմ Յովհաննէս արքեպիսկոպոսի «Գաղտնիք կանանց» գիրքը։

Ամեն մի գիրք, որ նոր է հայտնագործվում, ունենում է որոշ նոր բառեր։ Հակառակ իր փոքրիկ ծավալին, այս գիրքը ունի 10 նորահայտ բառեր, որ ըստ իմ բարի սովորության հավաքում եմ այստեղ։

1. Ամեգ «իգական անդամ» (էջ 10, տող 9՝ տակից). այս գաղափարի համար ծանոթ էին մեզ ճամ և մուճի. բայց ամեգ ձևը բոլորովին անհայտ էր. աստուգաբանությունն էլ անծանոթ է։

2. Առամնախոտ «մի տեսակ բույս, որի խաշուն կասեցուցիչ է հղութեան» (էջ 12, տող 3)։ Հիշվում է Հայբուսակ § 3288՝ Աւետիք Ամդեցուց։

3. Բշտիկ, թեև գործածական է բարբառներում և գրականում, բայց հնից չէ ավանդված, այս գրքում գործածված է էջ 10, տող 11 (տակից), սեռ. բշտկան ձևով։ Սեռականի այս ձևը ցույց է տալիս, որ բառը թարգմանչի կողմից չէ ավելացրած, այլ բուն հեղինակից է։

4. Երկամոր «որձևէգ». գործածված է այս գրքում էջ 8, տող 3. «երկամօթ կամ որձէգ (իմա՛ որձևէգ) կը ծնանին». չեմ կարծում որ թարգմանչի սարքած բառը լինի, այլ բուն հեղինակից է. սրանից է նաև երկամօթեայ ածանցը (էջ 7, տող 9)։

5. Կաթսակայ «մի տեսակ խոտ, որի պըտուղը դրվելով համքի մեջ, խակուն միզեցնում է» (էջ 10, տող 3՝ տակից)։ Ասված է «կաթսակայ խոտին պտուղն». ուստի կա-

րելի է ենթադրել թե սեռական հոլով է և ուղղականն է կաթսակ?

6. **Կոճղ**, *սեռ.* **կոճղոյ** «*խոյ*». *գործածված է էջ 12, տող 15 հետևյալ ձևով. «եթէ կոճղոյ, այսինքն խոյոյ լեարդն ու ամորձիքն առնելով չորցունէ...»։*

7. **Մոլոշ** «*բաղրջուկ, աղջկտակ, փիփերդ, լտ.* malva silvestris L». *այս բառը մեզ հայտնի է մոլոշ ձևով, ինչպես բարբառներում, նույնպես և հին հայ գրականության մեջ. հունարենն էլ ունի μολόχη ձևը։ Այս գրքում (էջ 10, տող 4՝ տակից) գրված է* **մոլոշ**. *արդյոք տպագրական սխա՞լ է, թե այս ձևով գրված էր նաև հին ձեռագրում. համմտ.* **գոլոշի** *փխ.* **գոլոշի**։

8. **Շարոյր** «*կուսական թաղանթ*». *իր բացատրությամբ միասին հիշված է էջ 10, տող 11 (տակից)։ Բոլորովին անծանոթ բառ։*

9. **Վիժակ** «*մարմնի ծակոտիքը*». *գործածված է այս գրքում էջ 13, տող 10. «մարմնոյն վիժակներէն և ծակտիններէն դուրս կը ցնդի»։ Այլուստ գիտենք* **վիժակ** «*վարադոյր*»։

10. **Փոքրավոր** «*փորի վարի մասը, պորտից ցած գտնված մասը*». *այժմ գործածական է Սրմանի և Ղարաբաղի բարբառում. հնից վկայություն գիտեմ միայն էֆիմ. էջ 26. այս գրքում գործածված է էջ 15, տող 4 (տակից)։ Համարում եմ նույն ձեռագրի բառերից։*

Այս տասը նոր բառերը մի վերջին ղորհդ ապացույց են այն բանի, թե թարգմանիչը չի կեղծում, այլ իրոք թարգմանել է իր առջև գտնված ԺԵ դարի ձեռագրից։

Ոչ թե թարգմանչից, այլ բուն հեղինակից է նաև այն փոքրիկ ընծայականը կամ նամակը, որ ամբողջությամբ գրինք վերևում (որի մեջ հեղինակը խոստանում է գրել «13 յօդուածով» մի գրքույկ։ Մեր ձեռքը եղած գիրքն էլ ունի ***13 հոդված***։

Այն անձը, որին ուղղում է Յովհաննես արքեպիսկոպոսը իր նամակը, նույնպես կրոնավոր է։ Սրան իբրև ապացույց է ծառայում այն ձևը, որով նա դիմում է իր բարեկամին. «Կը խնդրեմ եղբայրութենէդ, որ իբրև հաստատուն ծառայ Քրիստոսի...»։ Կրոնավորներն են, որ իրար կոչում են «եղբայր» և իրենց անվանում են «ծառայ Քրիստոսի»։ Նամակի առաջին տողերից էլ կարելի է հետևցնել, որ Յովհաննես արքեպիսկոպոսը հեղինակ է այս գործի և ոչ թե թարգմանիչ որևէ լեզվից։ Ասում է **գրել** *և ոչինչ չի ասում թարգմանելու մասին։*

Վերջին մի նկատողություն էլ ունինք անելու։

Մեր բժշկարանները բոլոր աշխարհական անձանց երկեր են. որքան ինձ հայտնի է, դեռ չի հայտնագործված մի հոգևորական բժիշկ. առաջին անձը այս Հովհաննես արքեպիսկոպոսն է իր կրոնավոր բարեկամով միասին։ Այս երևույթը ցույց է տալիս, որ հնագույն շրջանում կրոնավորները իրենց մասնագիտության մեջ էին առել նաև մարմնավոր բժշկությունը, որ ապա դարձավ աշխարհական բժիշկների սեփականությունը։ Այս նկատողությունն էլ մի նոր ապացույց է առաջին բնագրի հնության։

Հավելված

Վերևում հիշված **շարոյր** *բառի մասին ընկ. Գառնիկ Ստեփանյանը հայտնեց ինձ, թե այդ բառը գործածված է Գ. Ներշապուհի «Առողջաբանության» մեջ (էջ 46), որ և ինքը ցույց տվեց։ Այս պատմական տեղեկությունը նոր հայտնության դուռ բացեց։*

Գրքի ամբողջական վերնագիրն է. «Առողջաբանութիւն և բնախօսութիւն ամուսնութեան, մասնաւոր առողջաբանութիւն յղի կնոջ և նորածին մանկան, Գ. տպագրութիւն, թարգմանեալ ի Գ. Ներշապուհէ, Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Յ. Գամաֆեան 1885»։—Այստեղ էջ 46 ասվում է «որուն կուսական կնիք, կամ շարոյր անունը տուած են»։

Ըստ այսմ **շարոյր** *բառը ծանոթ էր Գաբրիէլ Ներշապուհին՝ 1885 թվին։ Կարող է լինել, որ նա այդ բառը սովորած լինի հենց «Գաղտնիք կանանց» գրքից, որ տպված է 1876 թ.։ Բայց Ներշապուհի այս գիրքը երրորդ տպագրությունն է։ Ե՞րբ են տեղի*

ունեցած Ա և Բ տպագրությունները։ Մեր Հանրային գրադարանը և Մատենադարանը չունեին ո՛չ մի օրինակ այս գրքի որևէ տպագրությունից։ Դիմեցի Զարբհանալեանին և նրա մոտ գտա հետևյալը.

«Առողջաբանութիւն ամուսնութեան, Ա. Տրպէ գաղղիացւոյն, թարգմանեց Գ. Ներշապուհ, Կ. Պոլիս 1876»։

Որովհետև այստեղ տպագրության մասին խոսք չկա, ուստի պարզ է որ առաջին տպագրությունն է։ Դժբախտաբար տպագրության տարեթիվը նույն է «Գաղտնիք կանանց» գրքի տպագրության տարեթվի հետ։ Սրանցից ո՞րն է ավելի առաջ, թեկուզ մի քանի ամսով։ Սրանով մենք պիտի կարողանայինք որոշել թե շարոյր բառը Ներշապուհի՞ հնարածն է, թե ԺՆ դարի ձեռագրում կար և պատկանում է ԺՒ դարից առաջվա հայերենին։

Բայց Գ. Ներշապուհը (էջ 46) ասում է «որուն... շարոյր անունը **տուած** ենք», որով հասկացնում է հայտնապես թե ինքը այդ բառի հեղինակը չէ։ Հակառակ պարագային պիտի ասէր «**տուած** ենք»։

Սրանից հետևում է, որ Ներշապուհը այդ բառը սովորել է կամ այն ձեռագրից և կամ նրա 1876 թվի թարգմանությունից։

Ես կարծում եմ, **որ այս երկու** ենթադրությունները պիտի միացնել և ասել, որ «Գաղտնիք կանանց» գրքի անծանոթ թարգմանիչը հենց նույն Գաբրիել Ներշապուհն է, որ առանձին հետաքրքրություն է ունեցել դիտության այս մասնաճյուղին, ձեռք է բերել և թարգմանել նախ այն ձեռագիրը 1876 թ., նրանից անմիջապես հետո թարգմանել Ա. Տրպէ (A. Debaie?) ֆրանսիացու գիրքը, որ հրատարակել է գոնե երեք անգամ, ա տպ. 1876, բ. տպ. 188...?, գ. տպ. 1885 թ.։

Այժմ իմ կողմից առաջարկում եմ նույն շարոյր բառի բացատրությունը։—

Շարոյր կազմված է հյ. շար «քող, շղարշ, տիւլ» բառից, որ գործածել են Գնձ. Մաշտ. Տօնակ. Նար. առաք. և որ փոխառյալ է պրս. شار šār «նուրբ և գունդգունդ տիւլ» բառից (Հիւբշ. 212)։ Շարոյր կրկնականն է շար արմատի, ճիշտ այնպես՝ ինչպես ունինք շար «շարք, կարգ» համանուն բառից կրկնությամբ շարուրել «իրար վրա կամ կողք կողքի կարգ կարգ դիզել» (ըստ ԱԲ)։

35 (36). ԵՐԲ Լ ԴԱՐՁԱՎ Ղ

Ամենքիս հայտնի է, որ Ե դարում հայերը ունեին երկու տեսակ լ. մեկը նուրբ լ, որ արտասանվում էր լեզվի ծայրով, ինչպես է այսօրվա մեր լ ձայնը, և երկրորդ՝ հաստ կամ թանձր լ, որ արտասանվում էր լեզվի հետևի մասով։ Այսպիսի հնչյուն ունեին նաև լատիններեն, ունին լեհերը և ինքս էլ լսել եմ Պոլսի հունաց արդի արտասանության մեջ։ Այսպիսի լ ձայնը հին հայերը գրում էին ղ տառով, որ ապա ավելի թանձրանալով, դարձավ արդի կոկորդական ղ և սրանով ստացանք այնպիսի աններդաշնակ բառեր, ինչպես են խաղաղ, խաղաղ, ուղեղ և այլն։ Սրանք նախապես հնչվում էին խալալ, խալալ, ուլել և այլն։

Բնականաբար կային այս ձայնների գործածության որոշ պայմաններ. այսպես բառասկզբում ամենամեծ մասամբ լինում էր լ և ո՛չ թե ղ։ Այս ղ ձայնով սկսվող բառերը օտար են. ինչ. ղեկ<ասոր. lēqā, ղենջակ <հուն. λέντιον, լտ. linteum և այլն. մյուսները դեռ մեկնված չեն. ինչ. ղօղիլ, ղօղանջել։ Եթե ղ ձայնը ընկներ բառի սկիզբը, իսկույն ստանում էր ե կամ ա հենարանը. ինչ. եղբայր, աղբյուր և այլն։

Բառամիջում, երկու ձայնների միջև կարող էր գտնվել թե՛ լ և թե ղ. բայց բաղաձայնից առաջ լինում էր միշտ ղ և ոչ լ։ Այս ձայնական օրենքը գտավ Meillet հայագետը։

Բառավերջում ունինք ձայնավորից հետո թե՛ լ և թե ղ. ինչ. գոլ և գող. բայց յ-ից հետո լինում է միշտ լ. ինչ. այլ, փայլ, հայլ, նշույլ են։ Եթե որևէ պատճառով այս յ ձայնը վերանար, լ դառնում էր ղ. ինչ. այլ—աղաւաղել, նշույլ—նշողել, յոյլ—յողալ, փայլ—փաղփաղիլ, բոյլ—բողոլ և այլն։

Նկատել եմ որ բառավերջում եթե լ գրաբարի բաղաձայնից հետո, դառնա ղ. այսպես ունինք թե՛ բնիկ հայ և թե օտար բա-

ուրիշ՝ ասաղ, արկղ, կոճղ, նույն իսկ Պրոկըղ, Հերակղ:

Իմ նպատակը չէ խոսել լ-ի և ղ-ի ձայնական օրենքների մասին. այս մի քանի կետերը հիշեցի, մի քիչ հետո օգտագործելու համար:

Որոշելու համար թե ե՛րբ լ դարձավ ղ, մենք ունինք երկու միջոց. առաջին՝ այսօրվա բոլոր հայ բարբառների արտասանությունը և երկրորդ՝ լ ձայնի տառադարձությունը:

Այսօրվա հայությունը ամբողջությամբ, ամենահեռավոր Ամերիկայի հարավային ծայրից (Պատագոնիա) մինչև Սուչավա, ուր սկսում են հայ բարբառները, և Սուչավայից մինչև Ջավա, ուր վերջանում են հայ բարբառները, ամեն տեղ ղ բաղաձայնը հընչում են ը: Այսպիսի ընդհանուր համաձայնություն չէր կարող առաջանալ հայության մեջ, արտագաղթից հետո, ուստի ղ ձայնի կոկորդական ը հնչումը արդեն ձևացած է եղել հայության մեջ նախ քան Կիլիկիայի դաղթականությունը (1080 թ.) և նախ քան Բագրատունյաց պետության կործանումը և Անիի գաղթը (1046 թ.)—ԺԱ դար:

Թե ԺԱ դարում արդեն լ դարձել էր ղ, հաստատվում է Աղսարբան անվան տառադարձությամբ: Աղսարբան անունը վրացերեն գրվում է ճշտիվ Աղսարբան, պարսկերեն Axsatan. հայերեն գրված է միշտ ղ-ով: Առաջին անձը՝ որ կրում է այս անունը, Դավիթ Անհողինի թոռն է, Աղսարբան, որին որդեգրեց Կախեթի Կյուրիկե Գ թագավորը (+1029). հիշում է նրան Օրբելյանի ժամանակագրությունը (էջ 15) և մեռած է դնում 1079 թ.: Մյուս Աղսարթանները՝ թվով հինգ, ԺԳ դարից են. ոմանք նույն իսկ գրված են խ-ով (այսպես Վարդան պատմիչ՝ գլուխ 2ե):

Այն ենթադրությունը, թե ԺԱ դարում ղ արդեն դարձել էր ը, խախտվում է երկու եվրոպական անունների տառադարձությամբ կիլիկյան շրջանում: Սրանք են Ըռնաղտ, Ռընալտ<Renald և Պաղտին, Պաղտայն <Balduin, Baldouin. Թերևս գոնվին նաև մի քանի ուրիշ ձևեր էլ: (Սրանց մասին տե՛ս Karst. Kilik. arm. 38):

Պետք է որոշել թե սրանց մեջ ղտ կարդացվում էր ld թե՞ yd. առաջին դեպքում քանդվում է մեր ստացած այն օրենքը, թե ԺԱ դարում ղ դարձել էր ը (Պաղտին անունը կրում են նաև մի քանի հայ անձինք, որոնցից հնագույնն է Պաղտին, պարոն և տեր. Ընկուզուտի. ներկա եղավ Լևոն Բ-ի թագադրության հանդեսին, 1199 թ.): Երկրորդ դեպքում այլանդակ է եվրոպական ld ձևի դեմ դնել հյ. yd: Բայց թե այս դեպքում ղտ հնչվում էր իրոք yd, ամեն կասկածից դուրս է, ինչպես ցույց է տալիս մարաջախտ<mareschalt բառը: Այստեղ ո՛չ թե միայն yd, այլ նույն իսկ տեսնում ենք xt (վերջաձայն խուլ տ-ի մոտ ղ թավացած):

Ինչպե՞ս դուրս գալ այս երկընտրանքից: Karst-ը այս մասին ոչինչ չի ասում և պարզապես ընդունում է yd հնչումը:

Իմ ուսուցիչը՝ հայագետ Meillet, իր մի մասնավոր խոսակցության ժամանակ, հայտնեց ինձ այն միտքը, թե հին ֆրանսերենում al ձայնախումբը արդի ô ձայնավորին անցնելուց առաջ՝ անցել է միջին aը աստիճանից. դրա համար էլ ունինք գրված Renault, Renaud, Renald, Renau և Balduin, Baldouin, Baudouin անցման ձևերը: Հայերենը իր ղտ, խտ տառադարձությամբ տալիս է մեզ սքանչելի նյութական ապացույց այդպիսի հնչման գոյության հին ֆրանսերենում:

ԺԱ դարը երևույթի վերջին սահմանն է. իսկ սկիզբը պետք է դնենք արաբների արշավանքից հետո, որովհետև ունինք արաբերենից փոխառյալ قفل qufl «փականք» բառը, որ հայերենի մեջ դարձել է կոպղ, համաձայն վերջաձայն լ-ի այն օրենքին, որով բաղաձայնից հետո դառնում ղ և ոչ լ (արկըղ, աստղ, կոճղ, Հերակղ, Պրոկղ): Կոպղ բառը կենդանի է մեր բոլոր բարբառներում. ինձ ծանոթ են առայժմ Ախալցխա՝ կօղպաճ, Մոկք՝ կօղպիս, Երևան, Տփղիս՝ կօխպէ, Ալաշկերտ, Մուշ՝ կօղբէս, Սվեդիա՝ գըղրագ, Պոլիս՝ գըղրաճ, Նոր-Նախիջևան՝ գբղագ,

Սուչավա՝ գրմղագ, *Սիվրի-Հիսար՝* ղույբախճ, *Վան՝* կօխպէս, *Հաճին՝* գօղրել, *Սեբաստիա՝* գրղրել։

Արաբների արշավանքը Հայաստան է դարից է. բայց գոնե մի դար պետք է դնել, որպեսզի արաբերենը տարածվեր Հայաստանում և բառեր փոխ առնվեին հայերենում։ Այնուամենայնիվ Ը դարից մինչև ԺԱ դար միջոցը շատ մեծ է և պետք է ավելի սեղմել։

Անշուշտ, եթե իմանայինք կողպեճ *բառի փոխառության թվականը, շատ բան կպարզվեր։ Դժբախտաբար շատ ուշ է ավանդված այս բառը. ամենահին վկայությունը Օրբելյանից է. «Եդեալ ի փոքրիկ սնդուկ փայտեայ և կոպղեալ» (Հրտր. Էմինի, էջ 353)։ Օրբելյանը մեռել է 1304 թ., հոգևոր կոչում է ստացել 1280 թվին։ Բայց* կոպղ *բառը այս թվերից շատ ավելի հին է, որովհետև պահում է վերջածայն լ-ի օրենքը, մինչդեռ* գունդստապլ *բառը՝ որ 1276 թվին կար (Սմբատ Գունդստապլը մեռել է այս թվին), չի պահել այդ օրենքը և չի դարձել* Գունդրստապլ։ *(Այսպես նաև* դանիլ <temple «տաճար» և տուպլ <double «կրկին»)։

Երկու ուրիշ փոքր վկայություններ էլ կան, որոնք գոնե մի դարով ևս են տանում ղ-ի թվականը։ Այսպես Հովհաննես Վանական վարդապետի (ծն. 1181 թ.) «Մեկնութիւն Յոբայ» գրքում, որից հատվածներ կան հրատարակված Իսիքիոսի երիցու Երուսաղէմացւոյ Մեկնութիւն Յոբայ գրքում (տպ. Վենետիկ, 1913), էջ 309 գրված է. «Ջայլամըն ոմանք դիշորմուղն անուանեն»։ Այս բառը պրս. غ ورمش ušturmurγ «ջայլամ» *բառն է, որից երևում է որ 1181 թվին հյ. ղ արդեն թանձրացած էր։ Մխիթար Գոշը ըսկըսել է գրել իր Դատաստանագիրքը 1184 թվին. այդտեղ գտնում ենք հուն.* λαγᾶτον *բառի դեմ* լիղատ *ձևը, որ ցույց է տալիս նույնպես թե այդ թվին ղ ձայնի թանձրացումը կատարված իրողություն էր։*

Իմ գտած հնագույն վկայությունը, որ ներկայացնում է արաբ. կամ թրք. غ γ *ձայնի դեմ հյ. ղ, արաբ ոստիկան Բուղայի անունն է (Ը դար)։ Սա թրքական* بوغا buγa «ցուլ» *բառն է, որ նաև իբրև անձնանուն գործածական էր այն ժամանակ։ Օրինակ՝* Boghā-el-soghayr՝ *արաբների Մութավաքքիլ խալիֆայի թիկնապահապետը, որ սպանեց նրան 861 թ. (տես* Vaujany, Histoire de l'Egypte, *էջ 202)։ Բուղա ոստիկանը արշավեց Հայաստան 850 թ. իր անունը գրված է* Բուղայ *կամ* Բուխայ *(Ջամչ. Բ. 445). և այդ շատ լավ է, որովհետև նոր տառադարձություններդ միշտ տատանյալ ձև կունենան։ Բուղայի մասին ընդարձակ խոսում է Հովհաննես ե կաթողիկոս Դրասխանակերտցին (898—929 թ.)։ Իր Պատմությունը հասել է մեզ զանազան օրինակներով, դրժբախտաբար շատ ուշ ժամանակից։ Ըստ մեր հմուտ ձեռագրագետ պրոֆ. դր. Աշոտ Աբրահամյանի հաղորդած տեղեկության (1947 թ., գեկտ. 26) մեր Մատենադարանում ունինք 7 օրինակ, որոնք գրված են ԺԸ դարից առաջ, հնագույնը 1597 թ.! Երկար ժամանակ կասկածել եմ ես* Բուղայ *գրչության վրա. արդյոք դա Հովհաննես Դրասխանակերտցու ձեռքի՞ց է դուրս եկած, թե ուշ ժամանակի սրբագրություն է։ Թրք.* բուղա *«ցուլ» բառը այնպես սովորական է հայոց մեջ, որ ամեն մի գրիչ կարող էր իսկույն* բուխաև *սրբագրել* բուղայ։ *Համմա. մեր մեջ գործածական* Աղբուղա *անձնանունը (հնագույն հիշատակությունը 1240 թվից), բուն նշանակությունը «սպիտակ ցուլ»։*

Բուղա անվան բուխա *գրչությունը միշտ այս կասկածն էր ներշնչել ինձ։*

Եվ իրոք, մինչդեռ Դրասխանակերտցու Պատմության Երուսաղեմի հրատարակությունը (1867 թ.) ունի միշտ Բուղայ *ձևը, Տփղիսի հրատարակությունը (1912 թ.) ունի միշտ* Բուխայ *(ըստ անվանացանկի՝ գործածված է 10 անգամ, էջ 118—134)։*

Այժմ գտնում եմ մի ուրիշ լավագույն վկայություն։ Կաղանկատուացին (հտ. Գ. գլ. ԻԱ) պատմում է թե Բաղդղի *ամիրան Նախիջևանում նահատակել է Հովհան մանուկին, 834 կամ 852 թ.։ Ըստ Մարքվարտ, Բազր. 54 այս ամիրան է Հասան-բին-Ալի-ալ-Բաղդիս-ալ-Մամոնի։* Բաղդղի *կամ* Բաղդիս *այնպիսի անսովոր անուն է, որ կարելի չէ մտածել, թե որևէ գրիչ սրբագրած լինի*

Բուղա անվան նման։ Ուստի նա անշուշտ հարազատ է և ղ=չ տառադարձությունը տանում է Թ դարի կեսը։

Բուղա անունը հիշատակում է նաև Թովմա Արծրունին (Թ դար). նա հիշում է ոստիկանի անունը 40 էջ, բայց դարձյալ Բուղայ և Բուխայ տատանյալ ձևով. և որովհետև ինքը վանեցի է և վանեցոց համար խ և ի միևնույն բաներն են, ուստի իր երկու ձևերի վրա ավելացել է նաև Բուհայ։

Ասողիկն էլ ունի Բուղայ անունը և միշտ ղ տառով (հրտր. Պետերբ. 1885, ըստ ցանկի 4 անգամ)։

Թովմա Արծրունին հիշում է նաև Բաղդադը (էջ 106), որ Աբբասյան խալիֆաների մայրաքաղաքն էր և հիմնվեց Ը դարի կեսին։ Այս անգամ Բաղդադ գրչությունը հաստատուն է և չոմնի վարիանտ։ Սեբեոսը բնականաբար չպիտի հիշեր Բաղդադը, որովհետև ինքը է դարի կեսի մարդ է։ Իսկ Ղևոնդը, որ ապրել էր մինչև Ը դարի վերջերը (Զարբ. Հին դպր.[3] 497), բնականաբար պիտի ճանաչեր։ Եվ իրոք մի անգամ հիշատակում է այդ քաղաքը Բաղդադ ձևով (տե՛ս տպ. Պետերբ. 1887, գլ. լդ, էջ 145)։ Դրժբախտաբար այս էլ հետին արբագրություն է. և այդ հայտնի է նրանից, որ ձեռագիրը ունեցել է արևմտյան հետին տառադարձությամբ Պաղտատ և հրատարակիչը դարձրել է Բաղդադ։

Զարմանալի է որ Յովհաննէս Դրասխանակերտցին, որ մեռել է 929 թվին, դեռ չգիտե Բաղդադը և կոչում է «Բաբելոն»։ Այսպես՝ հիմնվելով Տփղիսի 1912 թվի հրատարակության ցանկի վրա, չկա Բաղդադ, բայց կա Բաբելոն՝ երկու անգամ։ Առաջինն է՝ էջ 193 «Ապա գրէ հրովարտակս և առաքէ դեսպանս և ընծայս գնդեցկայարմարս Իսմայէլեան ամիրապետի ի Բաբելոն». (նույնը տպ. Երուսաղէմի, գլ. լբ էջ 242, var. դեսպակս, ի Բաբիլոն)։ Երկրորդն է տպ. Տփ. էջ 325 «շուրջ զքաղաւորանիստ քաղաքաւն Բաբիլոնի»։

Ասողիկի մոտ (Ժ/ԺԱ դար) նույն քաղաքը հիշված է Բաղդատ ձևով, ութ անգամ (ըստ ցանկի հրատ. Պետերբ. 1885)։

Այժմ անցնում ենք վրաց աղբյուրներին։ Հայտնի բանասեր Լ. Մելիքսեթ-բեկը հրատարակեց իր երկհատոր աշխատությունը (Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան 1934—6), ուր հավաքված են այն բոլոր հատվածները, որ տալիս են վրաց հեղինակները հայոց մասին։ Աշխատությունը հատկապես մեր նպատակի համար շատ լավ է կազմված, որովհետև թարգմանիչը ամեն անգամ հատուկ անունների կողքին փակագծով դնում է վրացերեն տառադարձությունը։ Ամեն տեղ ուր պատահում է ղ տառով մի բառ, վրացին դնում է ղ։ Այսպես օր. Արսեն Սափարացու (Թ դար) հատվածում ունինք Ա հտ. էջ 35 եկեղեաց =ելեկեցի, էջ 42 Մուշեղ=Մուշել (նույնը էջ 43), էջ 44 Շողակաթ=Շուլկաթ, եղվարդ=ելիվարդի, էջ 45 Մաթուսաղա=Մաթուսալա և այլն։

Ջեմ ուզում երեսներ լցնել այս կարգի բառերը հավաքելով, որոնց համար հատուկ ցուցակ է տվել նաև պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը, էջ 69—70, ապա էջ 84—85։

Ինչպես պրոֆեսորը՝ էջ 63—66 ցույց է տալիս, վրացի հեղինակը օգտվել է հույն աղբյուրներից, բայց նա կուրորեն չի հետևել բնագրին. այլ տառադարձությունը ճշտել է ըստ հայերենի։ Այսպես օր. Մաշտոց, Մուշեղ և այլն բառերի մեջ դրել է ո՛չ թե ս, ինչպես է հույնը, այլ ճշտիվ շ, ինչպես է հայերենը։

Եթե վրաց աղբյուրները ուշ շրջանում գրած լինեին հյ. ղ-ի դեմ լ, դա ոչ մի նշանակություն չունի. նրանք պահել են հին աղբյուրների ավանդությունը, ճիշտ ինչպես այսօր մենք գրում ենք Տփղիս (ղ-ով), հաստատ իմանալով հանդերձ թե վրացիք ասում են Թբիլիսի և պարսիկները Թիֆլիս (լ-ով)։

Նմանապես երբ վրացոց շատ ուշ շրջանի աղբյուրները գրում են ղ-ի դեմ ղ, այդ էլ նշանակություն չունի. նրանք հավատարմությամբ տառադարձել են այն՝ ինչ որ լսել են։ Կարևորը միջին շրջանն է։

Օրինակ՝ վրաց անանուն պատմիչը (ԺԱ դար) «Վրաց մատյանը» գրքում (տե՛ս վր.

րաց աղբ. Ա. էջ 200), Արաբական արշավանքները պատմիչս գրում է Բուղա (var. Շուղա) և Բաղդադ։ Երկուսն էլ վաղուց հայտնի ձևեր են։

Նույնպես ԺԸ դարի պաշտոնական գրությանց մեջ (Վրաց աղբ. հտ. Բ, էջ 74) գրտնում ենք հյ. Մաղասբերդի փոխարեն վրաց. **Մաղասբեռեթի**: *Կամ թե ԺԷ դարում, Փարսադան Գորգիջանիձեի Պատմության մեջ (Վրաց աղբ. հտ. Բ, էջ 89), Վաղարշապատ տառադարձված է* **վաղարշափաք** *և նրմաններ։ Այս բոլորը մեր հարցի համար այլ ևս նշանակություն չունին։*

*Այժմ անցնենք այն բառերին, որոնք ընդհանուր են թե հայերենի և թե վրացերենին։ Սրանց մեջ մեծագույն մասամբ ղ-ի դեմ գտնում ենք վրաց. լ. ինչ. քաղաք=*ქალაქი, *պուղտ=*პული, *մախաղ=*მახალი, *եղերդ=*ალერდი, *բաղարջ=*ფლარჯი, *նեղ=*ნელი, *շիւղ=*ჯიღო, *տող=*ტოლო, *տաղաւ=*ტალახი *և այլն։*

Մի քանի դեպքում հյ. ղ-ի դեմ գտնում ենք ղ. այսպես են՝

հյ. Քաղար=վրաց. ქალაქი, *երկուսն էլ փոխառյալ Քաթարերենից։*

հյ. քալղինջ<վրաց. ქალიჩა, *բղաւել <*ბღავილი, *ճղաւնդիտէլ <*ճղ'ոնդիդելի, *ծինամծղոր<*ծինամձղოլი *ուշ ժամանակի փոխառություններ են վրացերենից հայերեն. հնագույնը՝ ծինամծղոր 1245 թվի մի արձանագրության մեջ։*

հյ. տուղտ>վրաց. ტიტა, *օղ>վրաց.* ოღი *«գինդի օղակը» բոլորն էլ ուշ ժամանակի փոխառություն են հայերենից վրացերեն։*

Մնում է հյ. ջրմուղ, որից կազմվել է վրաց. ջուղրմուլի «ջրհոր», առաջին մասում պահելով հյ. ջուր բառը և նրան կցելով վրաց. ղմուլի «խոր, խորունկ» (ըստ Մառի ЗВО *11, 58)։*

Ահա սրանք են մեր հարցի առթիվ վրացերենի մատուցած նպաստները, որոնք եթե նոր բան չեն ասում, գոնե չեն հերքում, այլ նորանոր օրինակներով հաստատում մեր արդյունքները։

Կխնդրեի մեր եղբայրակից վրացի գիտնականներից, որ եթե ունեն որևէ նոր բան այս նյութի պարզաբանության մասին, հրատարակության տալին։

Պարսկերենն էլ ունի մի քանի բառ, որոնք շոշափում են մեր հարցը։

Առաջինը **Մուշեղ** *անունն է, որ հիշում է Ֆիրդուսին (տե՛ս իմ Ֆիրդուսին Հայոց մասին, էջ 43, 63)* موسیل Mūsīl *ձևով, սա այն Մուշեղ Մամիկոնյան զորավարն է, որ Մորիկ կայսրը օգնական ուղարկեց Պարսից Խոսրով Թագավորին (584 թ.)։ Ֆիրդուսին կարող էր այս անունը հույներից տացած լինել (շ-ի տեղ* s *ձայնով). բայց կարող էր նախապես գրած լինել* موشیل Mūšīl, *ապա եռակետը կորչելով դարձած լինել* Mūsīl. *երկու դեպքումն էլ ղ=*l *համապատասխան է 9 դարի արտասանության։*

Երկրորդն է պրս. سنبلة Sanbalīla *բառը. սա այն բույսն է, որ հայոց մեջ կոչվում է «չաման» և դիմաւոր դերն է խաղում ապուխտի պատրաստման մեջ։ Պարսիկ բառը կարելի չէ ստուգաբանել որևէ ձևով. ուստի կարծում եմ, որ փոխառյալ է հյ. շնբաղեղ ձևից։ Այսպիսի բառ չէ ավանդված մեր մատենագրության մեջ. բայց հեշտ է ենթադրել շուն+բաղեղ բառերի բարդություն։— Փոխառությունը կատարված պիտի լինի նախ քան Թ դարը։*

Երրորդն է պրս. آخیز āxīz, *որ ձևով և իմաստով նույն է հյ. աղիս բառի հետ։ Հայ ձևը չի կարող պարսկերենից ծագել, բայց պարսկերենը կարող է մեծ դյուրությամբ ծագել հայ ձևից՝ ուշ շրջանի γ արտասանության համաձայն։— Վրացին ունի* l*-ով ալիզի։*

Չորրորդն է **սաղաւարտ**, *որ Ե դարում արդեն փոխառյալ էր պահլավերենից։ ՊՀլ. ձևն էր *sārawart «գլխանոց», ուր թեև մեր ղ-ի դեմ* r *ենք գտնում, բայց դա խաբուսիկ է։ ՊՀլ. բառի մեջ կրկին* r*-երից առաջինը տարանմանությամբ դարձել է* l, *որով բառը դարձել է *salawart, սրանից էլ կանոնավորապես հյ.* **սաղաւարտ**։

Հինգերորդն է **սարաղուճ** *«վիզար, կնգուղ». այս բառը Առձևն բառարանը միայն գիտեր և գրում է* **սարաչուճ**. *բայց ես պետք է ուղղել* **սարաղուճ**, *ինչպես ունի Քուշակի մի*

երգը և ինչպես գիտեն մի քանի հայ բարբառներ։ Փոխառյալ է պրս. سراغوج sarāγūǰ, հոմանիշից, որից են նաև վրաց. սարաղուջի, թթր. seraγuǰ և թրք. soryuǰ.—փոխառությունը լինելով շատ ուշ ժամանակից, ղ=ǰ հնչումը բնական է։

Ի վերջո պետք է հիշեմ հյ. աւաղ բառը (Ե դար), որ նման է հոմանիշ اوَاخ āvāx ձևին. բայց այս նմանությունը պատահական է և ղ=ǰ համեմատությունը առերեվույթ։

Այժմ հիշատակելու եմ գավառական մի բառ, որ Վանի բարբառով շուրաղուկ և Մեղրու բարբառով շաաղուկ ձևն ունի. երկուսն էլ նշանակում են «դեղձ»։

Վանի բարբառում սալոր բառը ջնջված է և նրա տեղ փոխ է առնվել պրս. آلوچه ālūča հոմանիշը, որ آلو ālū բառի նվազականն է։ Պրս. ālū բառի ծագումը հայտնի չէ. չունի Horn. հայտնի չէ նաև պահլավ ձևը. չգիտե Nyberg, Hilfsbuch des Pehlevi II. բայց ինչպես որ պրս. آهو āhō «պակասություն» (հյ. աճոկ) ծագում է պհլ. āhōk ձևից, ինչպես որ պրս. جادو jādū «կախարդ, ջատուկ» ծագում է պհլ. ǰādūk ձևից, և ինչպես որ պրս. زالو zālū «տզրուկ» ծագում է հնագույն زلوک zalūk ձևից, նմանապես ենթադրում եմ որ պրս. ālū ծագած պիտի լինի պհլ. *ālūk «սալոր» ձևից։ Ահա այս բառից են ծագել վն. շուրաղուկ և Մղ. շաաղուկ «դեղձ» բառերը, ինչպես և պրս. شفتالو šaft-ālū «դեղձ» և زردالو zardālū «դառնակորիզ ծիրան», բոլորի էլ բուն նշանակությունն է «դեղին սալոր», ինչպես որ հյ. դեղձ նշանակում է բուն «դեղին» (համմտ. դեղձան, դեղձանիկ)։

ԺԱ դարում, թուրքերի արշավանքով կտրվեց հայոց հարաբերությունը Պահլավների հետ. ուստի շաւռաղուկ բառի փոխառությունը այս թվից առաջ է։ Բայց պահլավերենն էլ ուշ շրջանում չէր պահած այլևս բառավերջի k ձայնը, ուստի փոխառությունը է՛լ ավելի հին է։ Այս ձևով հասնում ենք այն թվականին, երբ պհլ. l պետք էր որ դառնար հյ. ղ։

Հոդվածիս վերջում դիմում եմ խոբենացուն։

Խոբենացու մոտ (Բ. ձա) երկու ճենացու անուն կա Բղդոխ և Մամգուն. սրանք երկուսով «դայեկորդի էին, մեծ նախարարք»։ Սրանց մասին խոսում է նաև Սեբեոսը (տպ. 1939, էջ 12), բայց կոչում է Մամիկ և Կոնակ։ Մալխասյանը իր աշխարհաբար թարգմանության մեջ (էջ 308, ծան. 22) Բղդոխ անունը մեկնում է մոնղոլ. Բողդիխան բառով, որ «տիտղոսն է չինական կայսրների՝ մոնղոլներեն, որ նշանակում է մեծ կամ սուրբ թագավոր»։—Будагов-ի բառարանումն էլ (Сравн. слов. турецко-татар. нар. 1869, էջ б 284) գտնում եմ կիրգիզներեն بوغدا خان boydaxan «титул Кит. императора, богдыхан»։ Անհնարին է խոբենացու Բղդոխը միացնել Բողդիխանի հետ, որովհետև անհնարին է Ե դարում ապրող խոբենացու մեջ գտնել ղ=γ։ Նա կարդացվում է միայն Բլղոխ։

Խոբենացու դիրքը որոշելու համար լ և ղ տառերի հարցում, քանի որ անհնարին է գտնել նրա մոտ Բուղա, Բաղդադ և նմաններ, վերցնում ենք Բուլղար ժողովրդի անունը։ Այս բառը մի անգամ գործածված է խոբենացու մոտ՝ Գիրք Բ, գլ. Զ, հետևյալ ձևով. «Իջանել ի տեղիս խոտաւէտ մերձ ի սահմանն Շարայի, զոր հինքն Անփայտ և վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածին վշրնդուր Բուղկարայ վնդայ բնակելոյ ի տեղիս, յանուն նորա անուանեցաւ Վանանդ»։

Այս բառը սքանչելի կերպով ցույց է տալիս, որ խոբենացու մոտ ղ հնչվում է դեռ լ և տակավին ղ հնչումը չէ ձևակերպված։

Նույն հատվածը Թ գլխում պատմվում է հետևյալ ձևով. «ազմուկ մեծ լեալ ի գօտիս մեծի լերինն Կուկասու յաշխարհին Բուլղարայ, և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր և բնակեցան ներքոյ Կողայ»։ (Այսպես բստ հրատ. Վենետիկ։ Նոր հրատարակությունը (Տփ. 1913) մեծ անուշադրությամբ երկու դեպքումն էլ ղ-ով (Բուլղարայ, Բուլղարաց)։

Բուլղարայ ձևը իր ղ ձայնով չի համապա-

տասխանում նախորդին, ուստի հետին սըրբագրության արդյունք է։ Այս բանը ապացուցվում է նաև նրանով, որ Հովհաննես Դրբատախանակերտցին էլ, որ փոխ է առնում Խորենացու հիշյալ հատվածը իր պատմության մեջ, գրում է. «Յաւուրս սորա հատուածեալք ոմանք ի Հրէից բնակելոց ի Բուլկարս, որ ի ծործորս Կովկասու, եկեալ բնակէին առ ի ստորև Կողայ» (Հրտր. Եմ. էջ 36 = Հրտր. Տփ. 27)։

Բուլղարները հիշված են նաև Ասողիկի մոտ 11 անգամ և բնականաբար միշտ էլ Բուլղարք ձևով։

Ահա այն բոլոր տվյալները, որ կարողացել եմ հավաքել ղ ձայնի ծագման մասին։

Անշուշտ ղ-ի ծագումը մի տարում տեղի չունեցավ և մի անգամից ամբողջ Հայաստանի հողի վրա չտարածվեց. այլ նախ մի որոշ գավառում, որից հետո տարածվեց կամաց կամաց ամբողջ երկրում։ Այսպես է բոլոր ձայնական օրենքների ծագումը և տարածումը։

Հայոց բոլոր շրջակա ժողովուրդները ունեին ղ. այսպես Վրացիք և Աղվանները ունեին երկու տեսակ ղ (ղ և ղ՝). արաբները ունեին غ ղ և ق գ, որ ղ-ի մոտիկ հնչում ուներ. պարսիկները ունեին غ (γ), որոնց ավելացավ հետո նաև թուրքերին غ (ղ)։ Նույն իսկ Բիւզանդական հունարենը ուներ γ ղ հնչումը։ Միայն հայերն էին բացառություն կազմում այս կողմից։

Իմ ենթադրությամբ ղ ձայնը նախ երևան եկավ հյուսիսում, Աղվանքի սահմանակից հայոց մեջ՝ Ե դարի սկզբից (Կաղանկատուացին), ապա իջավ հարավ. Ժ դարի կեսին դեռ տատանյալ դրության մեջ է (Դրբատախանակերտցի), իսկ ԺԱ դարում արդեն ամբողջ երկրում տարածված է (Ասողիկ)։*

36 (38). Ս ե Դ Ա

Այս անվան հնագույն հիշատակությունը 1040 թվից է. Սեդան Գրիգոր Համզա Պահլավունու աղջիկն է, քույր Վահրամ ապարապետի և հորաքույր Գր. Մագիստրոսի։ Վաղամեռիկ եղավ և նրա մյուս եղբայրը՝ Ասպրղարիպ Հայոց մարզպանը շինեց նրա գերեզմանը 1040 թ. (Շիրակ 53, Ադգապատում 1154)։ Այնուհետև հիշվում են Սեղայ կամ Սետայ՝ դուստր Գագիկ Ասլումրուան Արծրունու (Ժ դար, Արծր. Դ. ԻԲ, ԻԴ, ԻԵ, ԻՔ. Սուտ-Շապհ. 64), Սեղա դուստր Պարսիմոյ Օշականցու (1210 թ. Շիրակ 117), Սէդա՝ կին Առիւծի (1277 թ. Շիրակ 25) Սէթա խաթուն (1606 թ. Սիսական 109) են։

Շատերը հարցրել են ինձ Սեդա անվան ծագումը. բայց անծանոթ էր ինձ. ոմանք մեկնում էին seda բառով, որ նշանակում է «ձայն»։ Այս մեկնությունը, որ տված պիտի լինի մի տաճկահայ անձ, բոլորովին անհիշտ է։ Այդ seda صدا «ձայն» բառը, որ տաճկերենում գործածական ձև է, իսկապես արար. صدا sadā բառն է, որ երբեք հայերենի անցներ, պիտի դառնար ծաղա։ (Արար. ص տալիս է հյ. ծ)։

Այնուհետև տարիներ մտածել եմ այս անվան ծագման մասին և ոչ մի լուծում չեմ կարողացել տալ։

Հաճախ պատահել է ինձ, որ երբ մի բառի ծագումը որոնել եմ և չեմ գտել, միտքս ինձանից անկախ աշխատել է և մի օր էլ հանկարծ պատասխանը թելադրել է ինձ։

Այսպես եղավ նաև այս դեպքում։

Անցյալ տարի, հունիսի 22-ին Մոսկվայից Լենինգրադ գնալու ժամանակ, գիշերային մթնշաղի մեջ, աչքիս առաջ գրվեց Սեդա բառի ծագումը։

Դա արար. سيد seyid «տեր» բառի իգական է, որ կարող է ունենալ երկու ձև՝ سيدة seyida կամ ة سيد Seyidat։ Մեր Սեդա բառը ծագում է առաջինից և իսկապես է Սեյդա։ Երկրորդը գործածական է այժմ արաբների մոտ. գրական ձևով ասվում է seyidet «տիրուհի»։ Առաջին դեմքի ստացական հոդով լի-

---

* Այս հոդվածը առաջին քարտանուիթյամբ կարդացվեց Հայ-վրացական Ակադեմիաների միացյալ նիստում, Թբիլիսի, 24 մայիսի 1948 թ.։

նում է سیدتی Seyidetī «տիրուհիս», یاسیدتی yō Seyideti «ո՛վ իմ տիրուհիս»։ Ժողովրդական լեզվով նույն բառը դարձել է ستّی Sittī «տիկին», որ այժմ ընդհանուր գործածական է Եգիպտոսում և Ասորիքում։ Այս բառն է, որ հայերեն էլ դարձել է սթի, սիթի՝ մի խումբ իգական անունների մեջ. ինչ. Սիթի խաթուն, *Սրթքուլի (=Հյ. Ամէնահիկին), Սթըլքուլ, Սըթըլումամ են (ԺԹ.—ԺԸ դար)։*

Հասնելով Լենինգրադ, իմ այդ գյուտը հաղորդեցի Ակադ. Հ. Ա. Օրբելիին, որ լիովին համաձայնեց ինձ հետ և ավելացրեց, թե արձանագրություններում հաճախ գրվում է Սէյդա և կամ Սէդա, ուր է տառի պոչը գոնե ձևապես պահում է յ տառի հետքը։

37 (39). Ա Ռ Ա Ս Ի Կ

Հայերենի ամենաանսովոր բառերից մեկն է, բայց շատ հին. ուղղակի ե դարի առաջին կեսից։ Գործածված է մի անգամ Ագաթանգեղոսի մեջ հոգնակի գրծ. առատկօք ձևով, նույնը ՅՀ. կթղ. 300 և մի անգամ էլ հոգ. սեռ. առատկաց ձևով ՅՀ. կթղ. 312։ Նշանակում է «առատան կամ չվան, որով հանցավորի ոտքերն ու գլուխը պրկում էին գելարանի մեջ»։ Ուղղական ձևը չէ ավանդված. պիտի լիներ առատիկ կամ առատուկ։

Առնում եմ առատիկ ձևը, որ ինձ ավելի հավանական է թվում։

Առ կամ առա նախդիրով կազմված մի քանի լավ բառեր ունենք, որոնցից հիշենք հատկապես առասպել <առա+հնխ. spel «խոսիլ, պատմել» և առաստաղ <առա+հնխ stel «դնել, զետեղել, բարձրացնել, կանգնեցնել, ցից, սյուն, հենարան» (սրանց վրա ավելի մանրամասն տե՛ս Արմ. բռ. հտ. է, էջ 90—91=տպ. Ա, 253—254)։

Վերոհիշյալ առատիկ բառն էլ կազմված է ճիշտ նույն ձևով առա նախդիրով+տի «կապ, կապել» արմատից, որ գտնում ենք նաև սամեսի, կալոտի, գվռ. ռոտեն, ռոտիմ, վզտա բառերի մեջ. այն է հնխ. dē «կապել», հուն. δεω-λέω (տես Արմ. բռ. Ջ. 892=տպ. Դ հտ.)։ Վերջահար -իկ ծանոթ նվազական մասնիկն է։

Իսկ եթե բառի ձևն է առատուկ, ամեն ինչ կմնա նույնը, միայն վերջահար մասնիկը կլինի -ուկ, որի համար իբրև օրինակ ունենք ադմ-ուկ=հուն. pólemos, արմուկն հնխ. arm ձև։

38 (40). Է Ջ, Ի Ջ Ա Ն Ե Լ

Հայերենի չմեկնված արմատներից է։ Նույն է ռուս. идu «արի, գնա՛», итти «գալ, գնալ» բայերի հետ, որոնք զանազան նախամասնիկներով գառնում են сойду, сойти, *հսլ.* sъn-iti «իջնել», *սերբ.* iči «երթալ», sići «իջնել» են։ *Այս բոլորը ծագում են հնխ.* ei, i «երթալ» *արմատից՝* d, dh *աճականով, որ ավելի լավ ցույց է տալիս հսլ.* jado «երթալ (ձիով)». *Համմտ. լտ.* eo, ire, *հուն.* εἶμι, ἴμεν, *սանս.* ēmi, imas, <*հնխ.* éimi, imés, iénti (Berneker *421, 442*)։

Հայերենի մեջ, ճիշտ սլավականին նման, պարզ արմատը չէ պահված իր չափազանց կարճության պատճառով. կա միայն d, dh *աճականով կազմված ձևը՝ բարձր աստիճանի* ei *ձայնդարձից, որ տալիս է «է» (էջ)։ Ըստ այսմ հյ. իջի ճիշտ նույնն է ռուս.* идu *ձևի հետ։*

Իմաստի տարբերության համար հետաքրքիր է հիշել, որ Կուսգետի մեջ (Մօսկան) իջանել բայը (իշվիլ) նշանակում է «երթալ», որովհետև տեղը լեռնային լինելով՝ երթալը իջնել է (Արևելք 1898 նոյ. 19> Արմ. բռ. հտ. Բ, էջ 1024=տպ. Բ, էջ 119)։ Հին հայերենումն էլ տեղի բարձրության համեմատ ասում էին՝ օր. Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով (Ղկ. ժ 30)։ Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղեմ (Մտթ. ի. 18)։ Երկու տեղումն էլ ելանել և իջանել պարզապես նշանակում են «երթալ»։

39 (41). Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

Այս բառը, որ արդի գրականում միայն այս ձևով է հայտնի, հին գրականության մեջ 11 ձևով է ավանդված. արշալուրշ, արշալուշ, աշալուրջ, աշալուրշ, աշալուջ, աշալուշ, աշալուշս, աշալուս, աշալոյս, ար-

շալուս, աշալուրջ, որոնք միշտ անեզական են։

Արմ. բռ. Ա. 723(=տպ. Ա, էջ 330) այս բոլորի մայրը դրել եմ արշալուրջ և մեկնել եմ արշ «սկիզբ» (?) և լուրջ «կիսամութ, կիսալույս» բառերից։ Որովհետև արշ «սկիզբ» բառը գոյություն չունի հայերենում, ուստի այժմ փոխում եմ այս մեկնությունը և նախաձևը դնում եմ արջալուրջ, որ կազմված է արջ «սև» և լուրջ «կապույտ» բառերից։ Այսպիսով բառի իմաստը նույնանում է արդի ժողովրդական մութնուլուսուն ձևի հետ.—արշալույսը այն ժամանակն է, երբ երկնքի մի մասը կապտում է, իսկ մի մասը դեռ սև է։

40 (42). ԴՈՒՆՉ

Այս բառը նշանակում է «երեսի ցածրի մասը՝ քիթը, բերանը և ծնոտը միասին». սովորական ձև է բարբառներում, իսկ հին մատենագրության մեջ շատ ուշ է գործածված. ունեն միայն Մաղաքիա աբեղա (էջ 6) և Քուչակ (էջ 52, 73)։ Ըստ այսմ մենք կարող ենք համարել գավառական բառ (ինչպես արել է նաև ՆՀԲ) և վարվել նրա հետ գավառական բարբառների օրենքներով։

Գիտենք որ գավառական բարբառներում բառասկզբում գտնված ըն ջնջվում է. համմա. անկողին> ընկողին> կողինք, ընկոյզ> կոյզ, կուզ, ընդ՞որ>դո՞ր, ինձի>ընձի>ձի, ձիկ, նույն իսկ ընկեր>գեր։

Այս օրենքի համեմատ կարող ենք ուրեմն դունչ բառի ծագումն էլ դնել ընդ ունչ «քթի տակի մասը»։ Իսկ եթե ընդուննք ընդ «հետը» իմաստով, կլինի «քիթն էլ հետը»։

Ըստ այսմ պատահական նմանություն ունի վրաց տուչի «շրթունք, մռութ»։

41 (43). ԻՄԱՀ

Ջանազան բարբառներում կա այս բառը՝ «ինչպե՞ս» նշանակությամբ. հիշենք ի միջի այլոց Մուշ, Նոր Բայազետ, Ալաշկերտ, Սասուն։ Սրա հետ կազմությամբ նույն են էմալ կամ ամալ «այսպես», էդմալ «այդպես» և էմալ (և ընկած) «այնպես»։ Բոլորն էլ կազմված են ուրեմն էս, էդ, էն ցուցականներից և ի՞նչ հարցականից՝ մալ անծանոթ բառով։

Այս անծանոթ բառը համարում եմ նման բառի ձևափոխությունը. ուստի էմալ <էնման, էդմալ<էդ նման, էման<էն նման, ի՞մալ <ի՞նչ նման։ Այս բացատրությունը ստուգություն կստանա, երբ նկատի առնենք Ախալքալաքի և Ախալցխայի հետևյալ ձևերը, որոնք գտնվում են դեռ միջին աստիճանի վրա. էդման «այդպես», էման «այսպես», էման «այնպես»։ Սրանց հարակից են Տր. էմօն, էդմօն, էմօն և Հմշ. mամուն, mդմուն, բմուն կամ իմուն համանիշները, որոնք կազմված են ա ձայնավորը ոնգականի մոտ վերածելով o կամ u։

Նման>մալ ձայնափոխությունը հիշեցնում է մեզ քրդերենի էլ māl «տուն» բառի ծագումը։ Սրա նախաձևն է հնխ. dōm (ռուս. дом, լտ. domus, հյ. տուն), որ արիական ճյուղում դարձել է dam, հին պնդ. dəmāna, պնդ. nmāna, սանս. māna և քրդ. māl, բոլորն էլ «տուն»։

Երկու դեպքումն էլ (հայերեն և քրդերեն) n>l ձայնափոխությունը տարածման արդյունք է։

42 (44). ԸՌՉԷԼ

Ղարաբաղի բարբառում սովորական դարձված է ըորբելդ ֆաշի «գնա՛, հեռացի՛ր», որ գործածական է նաև Զանգեզուր և Մեղրի։ Իրրև առանձին բառ գոյություն չունի և գործածողներն էլ չգիտեն թե ի՛նչ է նշանակում։

Ըստ իս արաբ. رحل raḥl արմատից է, որին պատկանող բառերը հետևյալներն են. رواحل rāḥūl «մեկի ոանեցած շորերը և այլ իրերը», رحل raḥl կամ رحيل rahīl «մեկ իջեվանից մյուս իջևանը չվել, քոչ», راحل raḥil «մի տեղից քոչող մարդ» են (տե՛ս Կամուս, հտ. Գ., էջ 222)։ Ըստ այսմ ըորբելդ նշանակում է «ճամբորդության ժամանակ իր հետ վերցրած զանազան իրերը» և ըորբելդ քաշի նույն է՝ ինչ որ «փաստափուստագ հավաքի» (ու վեր կաց գնա՛)։

43 (45). Շ Մ Ա Թ

Սա մի նորագյուտ բառ է՝ «կրծկալ, գոգնոց» նշանակությամբ, որ գտնում եմ գրծածված Բուշակի մոտ երեք անգամ, էջ 53, 75։ Իմ Արմ. բառ. հտ. Ե, էջ 380 խոսում եմ այս բառի մասին և կցում եմ պրս. شمد *šämäd «սփռոց» բառին՝ Թեհրանի պարսիկ բարբառով։ Սրա ծագումը այն ժամանակ ինձ հայտնի չէր։ Այժմ Կամուսի մեջ, հտ. Բ, էջ 438 գտնում եմ արաբ.* شمط simaṭ *«սփռոցի վրա երկար շարված կերակուրներ» (հանում է արաբ.* شمط smṭ *«շարել» արմատից)։ Միևնույն ժամանակ մի արաբերեն դասագրքում գտնում եմ պարզապես* شمط simāṭ, «Tischtuch» *«սփռոց» (տե՛ս* Harder, Arab. Conv. Gram. Heidelberg 1898, *էջ 145)։*

44 (46). Ձ Ե Ղ Ո Ւ Ն

Արմ. բառ. Դ. 480 (=տպ. Գ, 148) ասում եմ թե հյ. ձեղուն *պատահական նմանություն միայն ունի վրաց.* ձելի «գերան» *բառի հետ (Ջուբինով[2], 1614)։ Այժմ կարծում եմ, որ այս երկու բառերը կապ ունեն իրար հետ և* ձեղուն *բառը կազմված է* ձեղ «գերան» *արմատից՝ -ուն մասնիկով։*

Երկու տեսակ ուն մասնիկ կամ վերջավորություն կա. առաջինը այն սովորական -ուն *մասնիկն է, որ կազմում է ածական. ինչ.* թռչուն, շարժուն, անասուն *են. սրանք որոշվում են իրենց սեռական* -ոյ *ձևով. ինչ.* թռչնոյ, անասնոյ *են։*

Երկրորդը այն վերջավորությունն է, որ գտնում ենք որոշ արմատական բառերի ծայրին. ինչ. տուն, շուն, անուն, ձեղուն, տատուն, սրուն *և գուցե ուրիշներ էլ։ Սրանք էլ վերածվում են երկու խմբի.* տուն *և* շուն *սեռականում լինում են* տան, շան, *իսկ* անուն, ձեղուն, սրուն *լինում են* անուան, ձեղուան, սրուան։ *Այս վերջին երկու բառերի շատ անկանոն սեռականը կանոնավոր ձև կստանա, երբ որ մտածենք թե նրանց ուղղականը եղել է* անուան *(<հնխ.* anōmn̥*) և* *ձեղուան, *որով սեռ.* *անուան, *ձեղուան, *ապա ու-ի սովորական կորուստով* անան, ձեղան=անուան, ձեղուան, *ճիշտ ինչպես ունենք* տուն, շուն *սեռ.* *տուան, *շուան, *ապա ու-ի կորուստով* տան, շան։

Առաջին *անուն *<հնխ.* anōmn̥ *ձևը ցույց է տալիս, որ ու ծագում է* m*-ից, ինչպես գտնում ենք նաև* պաշտուամն*—սեռ.* պաշտամանն *և* մրջիմն*—մրջիւն ձևերի մեջ։ Սրբանք հայերենի ամենահին խավերի բառերն են, որոնց հետ պիտի միանա նաև այժմ* ձեղուն, *իր հնագույն* *ձեղուն *ձևով։*

Այս իմաստով երեք հոմանիշ ունենք հայերենում. առաստաղ, առիւ, ձեղուն, *որոնք իհարկե ցույց են տալիս առաստաղի տարբեր ճարտարապետական ձևեր։ (Մի կողմ եմ թողնում* աճառ=ոճոռ *բառը, որ երևի միայն «գերան» էր նշանակում)։ Վերոհիշյալ երեք բառերից առաջինը զուտ հնդևրոպական է և կցվում է ռուս.* столб «սյուն» стель *«սենյակի ծածք» բառերին (առ նախադիրով հնխ.* stel *արմատից)։ Երկրորդը բոլորովին անհայտ է. երրորդը (ձեղուն) պահում է մեզ վարանոտ դրության մեջ։ Արմատը գտնվում է միայն վրացերենում և որքան գիտեմ՝ չկա մյուս կեղակից լեզուների մեջ. մյուս կողմից հայերենը իբրև բնիկ մեկնված չէ։ Այս դրության մեջ անհնար է որոշել, թե այս երկուսից որն է փոխառյալ։ Եվ այդպես էլ կմնա մինչև այն օրը, երբ կունենանք վրացերենի արմատական բառարանը և Կովկասյան լեզուների համեմատական քերականությունը։*

45 (47). Հ Ա Յ Ե Զ Ե Ն

1480 թվին գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի թագաւորութեանն Ադուպին, զի շատ փորձութիւն և նեղութիւն և վիշտ հասոյց քրիստոնեայ ազգին... և զհայ եղեն միսն խափանեց և զմեռեալն ի ցած ասաց տանուլ» (տե՛ս Յուցակ Հայերեն ձեռագրաց Հալէպի, Երուսաղեմ 1935, էջ 68 ա)։

Զհայ եղեն միսն, որ ո՛չ մի իմաստ չունի, բնականաբար հրատարակչի սխալ ընթերցման արդյունքն է. պետք է կարդալ «զհայելեն միսն» և հասկանալ «հայի կամ քրիս-

տոնյայի մորթած միսը», ա՛յն, ինչ որ այժմ Ղարաբաղի բարբառով կոչվում է հայամորթ և որ Տաթևացին գրում է հայգեն։

46 (48). Տ Ո Ռ

Ախտայի բարբառում գործածական է այս բառը՝ «վիզ» նշանակությամբ։ Ոճով ասվում է «տառը լցվել է. տառը հաստացրել է» (վիզը լցվել է, վիզը հաստացրել է)։ Իբր առանձին բառ չի գործածվում։ (Այս տեղեկությունը հաղորդեց կինս՝ Սոֆիա Աճառյան)։

Ըստ իս լտ. dorsum *«մեջք, թիկունք, կռնակ» բառն է։*

Այս լատին բառը մեկնված է զանազան ձևերով, որոնք բոլորը մերժում է Walde 243 *և ընդունում է բաս* Bréal-*ի առաջարկության* deorsum *«ցած, դեպի վայր» բառից «հավանաբար»։* Ernout-Meillet *բառարանումն էլ (էջ 272) ասվում է, թե «սրանից ավելի լավ բացատրություն չի տրված», իբր թե թիկունքը մարմնի այն մասն է, որ վերից դեպի ցածր է թեքվում (*deorsum dictum quod pars ea corporis devexa sit deorsum).

Հյ. n *համապատասխանելով հնխ.* rs *ձայնախմբին, այս երկու բառերը (*տոռ = dorsum*) բոլորովին նույնանում են իրար հետ։ Մնում է միայն իմաստի տարբերությունը (վիզ և թիկունք). բայց հայտնի է, թե որքան շարժական են մարմնի մասերի նշանակությունները։ Լավագույն օրինակն է պրս. ջիգար, որ թե՛ թոքն է և թե՛ լերդը։ Բայց հատկապես այս իմաստի համար հիշում եմ հյ. ջլիճ (հինը ջլեի), որ թեև ամեն տեղ «վիզ» իմաստն ունի, բայց Համշենում առացել է «դեմք» նշանակությունը և Բուլանըխում «ծոծրակի տակը՝ վզի ներքևի մասը», որ արդեն թիկունքն է (տե՛ս Արմ. բառ. հտ. ե, էջ 371 = տպ. Գ, 522)։*

47 (50). Ա Հ Ե Ա Կ

Աճեակ «ձախ» բառի ծագման մասին խոսելով Hübschmann, Arm. Gram. *էջ 414, համեմատության է առնում սանս.* savyá *և զնդ.* havya *համանիշները։ Իր կարծիքով այս երկու բառերի և հայերեն բառի միջև կապ չկա։ Որովհետև եթե աճեակ բնիկ լիներ՝* savya *ձևի դեմ պիտի ունենար* ճեգի *կամ* եգի *ձևը, ինչպես սանս.* gavya *ձևի դեմ գտնում ենք հյ. կոգի «կարագ»։ Բայց նաև չի կարող փոխառյալ լինել, որովհետև պհլ.* hōī, havik *շատ հեռու են հայերենից։*

Նույնը փոխ առնելով ես իմ Արմ. բռ. Ա. 103 (= տպ. Ա, 113) աճեակ բառի ծագումը դրել եմ անհայտ։

Այն ժամանակ, երբ հրատարակվեց Hübsch. Arm. Gr. (1897), *դեռ ծանոթ չէր երևի պհլ.* hōyak *«ձախ» ձևը, որ գտնում ենք* Bartholomae, Altir. Wört. *(հրատ. 1904 թ.) զնդ.* haoya *համանիշի դեմ։*

Հայերենում -ակ *վերջացող բառերը ընդհանրապես մեկնված են իբր իրանական փոխառություն։ Վրացի հայագետ պրոֆ. Ի. Աբուլաձեն ցույց տվեց դղեակ բառի բացատրությամբ, որ* -եակ *վերջացող բառերն էլ կասկածելի են։ Պհլ.* hōyak *«ձախ» բառը այնքան նման է հյ. աճեակ համանիշին, որ անհնարին է մերժել նրանց կապը։ Տարբերությունը միայն ա նախաձայնի մեջ է, որ կարող է առաջացած լինել մեզ անծանոթ հյուսիսային-արևմտյան պահլավ ձևի միջոցով, և կամ հյ. աջ բառի նախաձայնի ազդեցությամբ։*

48 (51). Ա Ռ Ա Ք Ի Ն Ի

Այս բառի նախնական իմաստն է «կարիճ, բաջ», որը դարձավ «բարեպաշտ, բարեգործ»։ Ե դարում դեռ այս երկու իմաստներն էլ գործածական են, մինչև որ հոգեկանը գերազանցում է և այսօր առաքինի ասելով հասկանում ենք միայն «բարեպաշտ»։ Հին իմաստի լավագույն օրինակներից են. Ի մէջ պատերազմի երևեցայց առաքինի (Իմ. ը. 15)։ Լսելով զառաքինեացն զքաջութիւն (Եղիշ.) վասն հայոց պատերազմին, յորում բաղումք առաքինացան՝ քան թէ սակաւք. Յորում ասպարիսի նախ ինքն առաքինացաւ (Եղիշ.) Սամփսոն իշու ոսկերովքն առաքինացաւ (մեծ քաջություններ գործեց) (Բիբր. ղևտ.)։

Սա ամենալավ օրինակներից մեկն է իմաստաբանության մեջ՝ ցույց տալու համար թե արմատների իմաստը նախ նյութականն է, ապա միայն անցնում է բարոյականին ու վերացականին։

Բառի ծագումը անհայտ է. զանազան ստուգաբանական փորձեր տե՛ս իմ Արմ. բռ. Ա. 507—8 (=տպ. Ա, 257) բոլորն էլ մերժված։

Նախ պարզ է, որ բառի ի վերջավորությունը ածական կազմող մասնիկն է. ինչ. բար-ի, աղ-ի, երկաթ-ի, արծաթ-ի, մեծագնի և հատկապես ներքին-ի որի մեջ զարմանալի կերպով չէ ջնջված անշեշտ ի ձայնավորը (փոխանակ լինելու *ներքնի)։

Այլուստ գիտենք, որ առա- սկզբնավորությամբ սկսվող բառերի մեջ առա նախդիր է. այսպես են հատկապես առասպել, առաստաղ, առաւտիկ։ Այսպես է նաև առաքինի, որով նրա արմատական մասը մնում է քին։

Ըստ ձայնական օրենքների հյ. ք առաջանում է sw-ից և ի ձայնավորը ընդհանից առաջ՝ առաջանում է e ձայնավորից։ Ըստ այսմ հասնում ենք նախավոր swen-արմատին։ Այսպիսի արմատ չկա, բայց ունենք swento, sunto «աշխույժ, կորովի, առողջ» արմատը, որ պահված է հետևյալ ձևերով.— գոթ. swinþs «ուժեղ, զորավոր, առողջ», հիսլ. svinnr «արագ, ուժեղ, խելոք», անգս. swiþ «ուժեղ, զորավոր», հին սաքս. swith «զորավոր, կատաղի, քաջ» մբգ. swint «հզոր, ուժեղ, կատաղի, արագ, կատաղած», նբգ. geschwind «արագ», հբգ. gisunt «առողջ», հին սաքս. gisund «անառողջ, առողջ», հին ֆրիզ. sund «քաջ, անեղծ, առողջ» (Walde-Pokorny, II, էջ 525)։

Բառավերջում n-ին հաջորդող խուլ ատամնականը (t) ջնջվում է հայերենում. այս երևույթի լավագույն օրինակներն են՝ նաև wīkńti, նուն <pont, խոնարհման մեջ՝ հոգնակի գ դեմքի բայերի ահագին շարքը (են, բերեն, ուտեն, ևն)։ Ինչպես նաև երևսուն, քառասուն, յիսուն... իննսուն շարքը, որոնց բոլորի վերջավորությունն է -սուն <K'ontə.

49 (52). ՄԵԾՈՓ, ՕԾՈՓ

Թովմա Մեծոփեցու հայրենիքն է Մեծոփ, որ գտնվում է Վասպուրականում։ Այս բառի ստուգաբանությունը շատ պարզ է. հին հայերեն ոփ նշանակում է «փոս կամ խոռոչ, որի մեջ ջուր է հավաքվում». կենդանի է մինչև այժմ Մուշ, Շատախ, Չենկիլեր օփ ձևով «փոքրիկ լճակ, լճացած ջուր» իմաստով. նույնը խիանում գտնում է նուբ, որից էլ Մուշ՝ օփոել «ջուրը լճանալով հոտել» (տե՛ս Արմ. բռ. հտ. Ե, 711—2=տպ. Գ, 619)։

Ըստ այսմ Մեծոփ դառնում է «մի մեծ փոս կամ խոռոչ, որի մեջ ջուր է հավաքվել»։

Սրան նման է Օծոպ, Աւծոփ, Օծոպի գիւղ, որը գտնվում է Նախիջևանի մոտ, ուր կա նաև Օծոպի վանքը։ Այս տեղից էր Վրթանես Օծոպեցին (կամ Ոծոպեցի), որ Աղթամարից գողացավ լուսավորչի աջը և դարձրեց էջմիածնի վանքին (տե՛ս Սիսական 480, 483)։

Օծոպ պիտի լինի *Օձոփ և պետք է նշանակի «լճակ, որի մեջ օձ է բնակվում»։

Վաղարշավանի մոտ կա այժմ Օփուկ անունով մի գյուղ, որտեղից տապահամ և երկաթախառն հանքաջուր է բխում (Այրարատ 25)։ Սրի հանքաջուր է բխում, ուրեմն ամենայն հեշտությամբ կարող ենք Օփուկը մեկնել իբրև «փոքրիկ ոփ կամ խոռոչ»։

Երբ Ակադեմիայի միացյալ ժողովների առթիվ Վրաստան էինք գնում, գնացքում ակադ. Ղափանցյանին հայտնեցի Մեծոփ և Օծոփ գյուղերի մասին. նա սրանց ավելացրեց մի հրրորդ տեղանուն։ Իր դասախոսության մեջ նա այս բոլորը միացրեց վրացական ուրիշ տեղանունների հետ և մեկնեց ընդհանուր Ասիանական արմատներով։

50 (53). ԴԱՐՁԱԼ «ԳԱՂՏՆԻՔ ԿԱՆԱՆՑ»

Իմ ոչ մի բանասիրական ենթադրությունը այնքան շուտ և այնքան ճիշտ ստուգված չի եղել, ինչպես եղան իմ ենթադրությունները «Գաղտնիք կանանց» անհայտ գրքի մասին։

Հազիվ մի ամիս անցել էր իմ հոդվածի հրատարակությունից, երբ բժ. Գ. Հարու-

թյունյանը մատենադարանում գտնում է «Գաղտնիք կանանց» գրքի ձեռագիրը, իմ Լենինգրադում եղած ժամանակ։

Նորագյուտ ձեռագիրը կրում է № 4607 համարը. գրված է 1795 թ. բժշկական գրվածքների ժողովածու է տարբեր գրիչներից։ Նրանց մեջ անջատ մաս է կազմում Գաղտնիք կանանցը, որ գրավում է 381—402 էջերը։ Այս մասը տարբերվում է մյուսներից հատկապես նրանով, որ երկսյուն է, մինչ մյուսները միասյուն են։ Գիրը ավելի հրնաձև նոտրագիր է, ուստի կարող է և պետք է 1795 թվից հին լինի։

Վերնագիրն է «Գիրք որ կոչի Գաղտնի դաղտնեաց. Արարեալ մեծին Ալպերտի յաղագս դաղտնեաց կանանց»։ Սրանից հետո գրվում է նախ «բան առ ընթերցող սիրելին», որ մեր նախորդ հոդվածում հիշատակված նամակն է։

Նամակից հետո առանձին վերնագրով բ-կըսում է «Գիրք առաջին», որին հետևում են «պրակ» անունով 11 հոդվածներ, որոնք համապատասխանում են իրենց վերնագրով և իրենց բովանդակությամբ մեր հիշատակած Ա—ԺԱ հոդվածներին (պակասում են մեր ԺԲ և ԺԳ հոդվածները)։

Այս 11 գլուխներից (պրակներից) հետո սկսում է «Յաղագս իրաց բնականաց որք երևին ի ծնունդս մարդկան». ունի 8 պրակ, որի վերջում գրված է «ԵԹԷ կամիս տես ի գիրս դաղտնեացն Ալպերտոսի»։ Սրա վերջումն էլ գրված է «Վախճան առաջին գրոցն»։

Այստեղ վերջանում է գրվածքը, հետևում են երեք պարապ թերթ, որից հետո սկսվում է այլ նյութ, այլ ձեռագրով։

Այն ենթադրությունները, որ ես արել էի իմ նախորդ հոդվածում և որոնք առուգվ! ցին նոր ձեռագրի գյուտով, հետևյալներն են.

1. Պոլսում, 1876 թվին հրատարակված «Գաղտնիք կանանց» վերնագրով գրքույկը, որի հեղինակը անհայտ է պահում իր անունը, կեղծիք չէ՝ ինչպես կարծում էին ոմանք։

2. Նրա բնագիրը պետք է եղած լինի գրաբար, որից թարգմանել է անանուն հրատարակիչը։

3. Նա միջնադարյան հայերենով չէ. ես գրել էի «վճռականապես ոչ». հիմնվելով նրա զանազան հատքերի վրա, որոնք հնագույն հայ լեզվին են պատկանում։

4. Գրքի սկիզբը գրված նամակը կամ ընծայականն էլ ո՛չ կեղծիք է և ոչ հետին հավելված. նա պատկանում է առաջին հեղինակի գրչին։

5. ԵԹԷ այն ձեռագիրը, որից թարգմանել է հեղինակը, իր ասելով ԺԵ դարից է, բուն բնագիրը ԺԵ դարից ավելի առաջ է. ես համարում եմ ԺԲ դարից։

Նոր ձեռագրի հայտնությամբ այս բոլորը ստուգված է։

Բայց նոր ձեռագիրը տալիս է մեզ նորանոր այլ հայտնություններ։

Ձեռագիրը իբրև հեղինակ հիշում է «Մեծն Ալպերտոսին»։

Այս անունով հայտնի է Albert le Grand, դոմինիկյան աբեղա, աստվածաբան, փիլիսոփա, ալքիմիստ, ծնված 1193 թ. և մեռած Կոլոնիայում 1280 թվին։ Գրել է ի միջի այլոց կանանց վերաբերյալ բժշկական մի գրվածք, որի մասին ոչ մի տեղեկություն չունեմ։

Կարելի չէ, որ մի գիրք ունենա Ա մաս, մի քանի գլուխներով և այլևս Բ մաս չունենա։ Ուստի ձեռագիրը կիսատ է, ինչպես որ կիսատ է նաև 1876 թվի տպագրությունը։

Տարակույս չկա, որ հայերենը թարգմանված է լատիներենից. բայց արդյոք գուտ թարգմանությո՞ւն է թե խմբագրություն։ Պոլսի հրատարակությունը գիրքը համարում է «Յովհաննես անուն հայ արքեպիսկոպոսի մը յօրինեալ». ո՞վ է այս արքեպիսկոպոսը և ինչի՞ց գիտե, որ հայ է. այս մասին եթե որևէ տեղեկություն կար հրատարակչի տեսած ձեռագրում, մեզ հայտնի չէ։ Այս բոլորը պարզելու համար անհրաժեշտ է նախ ունենալ Ալբերտոսի վերոհիշյալ աշխատությունը։

Համենայն դեպս գիրքը գրված չէ ԺԲ դարում, ինչպես մենք ենթադրել էինք, այլ մի քիչ նրանից ուշ, ԺԳ դարու կեսին։

Այժմ տեսնենք, թե ի՛նչ համեմատություն կա ներկա ձեռագրի և 1876 թվի հրատարակության մեջ։

Ընդհանրապես երկուսը միևնույն են. այն դրաբար ձևերը, որ ես հավաքել էի հրատարակությունից՝ կան նաև ձեռագրում, բիչ տարբերությամբ։ Այսպես՝

1. էջ 1, տող 20, հրատ. **որպիսութիւն**, *ձեռ.* **որակութիւն**։

2. էջ 1, տող 3 (տակից), հրատ. Յետ այնորիկ կը սկսի մածնուլ, այսինքն թանձրանալ, և պնդիլ մինչև յղացման երկոտասաներորդ օրը. Ձեռ. յետոյ սկսանի մածիլ և պնդիլ մինչև ցաւուրս երկոտասան։

3. էջ 2, տող 12, հրատ. «...կրնե ծնունդը խստապարանոց».=Ձեռ. առնե ըղխտապարանոց (ձեռ. մի բառ պակաս է և անիմաստ, դրել է նախդիրը ըզ, բայց փախցրել է ծնունդն)։

4. էջ 3, տող 8, հրատ. «աչուրները փարփար» ձեռ. գաչան մեծամեծ։

5. էջ 4, տող 1, հրատ. անչարմար պաշտամանաց. նույն է նաև ձեռ.։

6. էջ 4, տող 3 (տակից), «կանացածնաց մեջ»=ձեռ. ի ծնունդս կենդանեաց։

7. էջ 8, տող 1, հրատ. ահկկին վրայ=ձեռ. ի ձախակողմն։

8. էջ 8, տող 6, հրատ. «ցուրտ զգայ կամ ցավ յոլովազոյն մարմնոյն այլևայլ կողմերը». ձեռ. շեղատառ բառի տեղ ունի յոյոհուեսն։

9. էջ 9, տող 3 և 4, հրատ. խոժոռ և անմարսական բաներ=ձեռ. խոժոռք և անմարսական։

10. էջ 10, տող 12 և 13 դրգալ=ձեռ. դգալ։

11. էջ 11, տող 13, հրատ. ըմբռնել և պահել, նույնը և ձեռ.։

12. էջ 12, տող 7, հրատ. ծնանել զաւակ արու, նույնը և ձեռ.։

Այս 12 կետերի համեմատությունը ցույց է տալիս, որ թեև երկու ձեռագրերը նույնն են, բայց 1876-ի հրատարակությունը շատ անգամ ավելի ընտիր է. օր. վերի կետերից՝

1) որպիսութիւն, 2) մածնուլ, 3) զծընունդն, 4) փարփար, 6) կանացածնաց, 7) ահկկին, 10) դրգալ։ (Դժվարանում եմ արտահայտվել 8) յոլովագոյն—յոլոհուես ձևերի հանդեպ։ Սրանց վրա ավելացնենք հրատ. էջ 16, տող 7 աղծեալ և ապխտեալ մսով=ձեռ. մսօք աղեցելովք։

Այս բոլորը, մանավանդ վերջինը, բավական են ցույց տալու համար, թե հրատարակվածը ավելի ընտիր և հին օրինակ էր, քան մեր ձեռագիրը։

Արտաքին կազմությամբ երկուսը իրարից մի նշանավոր տարբերություն ունեն։ Մինչդեռ հրատարակվածը միահար մի գիրք է 13 գլխի բաժանված, ձեռագիրն ունի երկու մաս, որից առաջինը ունի հրատարակվածի 1—11 գլուխները և չկան 12 և 13 գլուխները։ Բայց այս երկու գլուխների բովանդակությունը գտնում ենք ձեռագրի երկրորդ մասում։ Հետաքրքրական է հատկապես հրատարակության ԺԳ գլուխը, որ ձեռագրում հետևյալ ձևով է.

«Սկսմն շատանայ այսորիւք կերակրովք. այսինքն շոգամօք, թարմեօք[1] մսօք (կարծեմ տաք քեպապն է), հաւամսօք, խոզենիններօք **որձիւ**[2]*, ձուօք թերախորովիւք, բակլայիւք կոտորեցելովք[3], բունճիթօք[4] կամ դահինովք, երվիշտայիւք, հացիւք թարմեօք[1] (որ է տաք և խաս հաց), և կամ թխադունիւք, պանրօք դերապանցիւք, ոստռիւք, շողոտիւք[5], ծտամսիւք, և մանաւանդ դինւովք բաղցրահամիւք»։*

Մեկ. 1. Երևի ձեռագրի գրիչը թարմ բառի դրչություն, նույնպես և խմասոը չի իմացել. նա գիտեր միայն «թաժա»։

2. Հրատ. էջ 16 ունի «մսով հաւու, խոզի և որթոյ». իսկ այստեղ **որթոյ** *գարձել է* **որձիւ**։ *Գրիչը չիմանալով, որ որթը հորթ է, հասկացել և ուղղել է* **որձ** *(արու խոզ)։*

3. Հրատ. ունի այստեղ **ոստմամբ** *(սխալ դրչություն փխ.* **ոսպամբ**)*, մի բառ, որ ինքը միակ նշան եղավ ինձ որոշելու գրքի ժամանակը, լեզուն և թե նա կեղծիք չէ, այլ հարազատ։*

4. Քունճիթ—սուսամ, իսկ դահին (—արաբ. تحين tahîn*) կնճիթն է ծեծած, բայց դեռ քուսպը չհանած և չմաքրած եղը. այս ձևի տակ գործածական է այժմ էլ Պոլսում և ասվում է* **բահան** *կամ* **բահին**։

5. Շողոտը առանց կճեպի խխունջն է. այժմ էլ Պոլսում խխունջը եփելով ուտում են. իսկ շողոտը որոշ հիվանդությանց ժամանակ հում կուլ են տալիս։

Այս բոլորը ի նկատի առնելով, կարելի է ենթադրել, որ հրատարակվածը ո՛չ թե զուտ թարգմանություն է, այլ որոշ խմբագրություն, ներևս այն նույն «Յովհաննես արքեպիսկոպոսից»։ Բայց այս ենթադրությունը կարելի է ստուգել միայն քննելով Ալբերտոսի գիրքը։

Այժմ անցնենք այն նորագյուտ բառերին, որ գտել էի հրատարակության մեջ։ Ահա այդ բառերը, որոնք կան և ձեռագրում։

1) Ամեգ «իգական անդամ», (Բազմ. 1898, էջ 223 բ գտել եմ մի օրէնք, որի համաձայն եթե մի բառ վերջանում է գ բաղաձայնով և նրանից առաջ կա e ձայնը, գրվում է «է» և ոչ ե. ինչ. եղէգ, վէգ, տէգ, մէգ, նէգ, սէգ. բացառություն է արեգ։ Այստեղ էլ հրատարակված օրինակում բառը ուներ ամեգ ձևը, որ սխալ է, իսկ ձեռագիրն ունի էջ 391 բ ճշտիվ ամէգ, իսկ էջ 398 բ ա-ամէքիս)։

2. Աստամնախոտ. ձեռագրում, էջ 393 ա տված է «ողջունական, որ այլապես աստամնախոտ ասի կամ սալվիայ». սրանով իմացանք, որ աստամնախոտն է լտ. salvia =ֆրանս. sauge. ողջունականն էլ թարգմանչի տարբածը պիտի լինի՝ լտ. salvia բառը ենթադրելով լտ. salve «ողջոյն» բառից։ Լտ. salvia բառը սաղվիա տառադարձությամբ գտնում ենք Փեշտիմալճյան բառարանում, ուր մեկնված է «մի տեսակ խոտ. տճկ. տիշ օթու». ուրեմն աստամնախոտն էլ թարգմանված է թրք. տիշ օթուից։ Սակայն լտ. salvia=ֆրանս. sauge այլուստ գիտենք հյ. զսպայ, որ է թրք. աստա չայի «հղեսպակ»։ Տարբերությունը ստուգել բուսաբանների գործն է։ Իմ Արմ. բռ. հտ. Զ. (= տպ. հտ. Դ) սաղվիա բառի տակ հարց եմ տալիս, թե հնի՞ց է առնված այս բառը, թե նորահնար։ Ձեռագրի սալվիա ձևը երկուսի միջտեղն է։

3. Բշտիկ, հիշված է էջ 391 բ։

4. Երկամօթոյ «որձևէգ», էջ 369 աբ։

5. Կաթսակայ (խոտը). այստեղ էջ 341 բ ասված է սեռ. հլ. «կաթուկային, այսինքն խոտին, որ այլապես թառայ ասի». պետք է ճշտել, թե երկու ձևերից ո՛րն է ուղիղ, իսկ թրք. թառայ նշանակում է «կոտեմ»։

6. Կոճղ «խոյ». ձեռագրում, էջ 393 ա գրված է սրա փոխարեն սեռ. զօճոյ, որ երևի գոջի «խոզ» բառն է։ Հայտնի չէ թե առաջինը ուղի՞ղ է։

8. Շարոյր «կուսական թաղանթ» 391 բ։

9. Վիժակն, վիժակուեաց «մարմնի ծակոտիքը» 394 ա։

10. Փոբրաիոր «փորի վարի մասը» 397բ։

Սրանից դուրս նոր ավելանում է աստղազնին «աստղաբաշխ», էջ 382 բ։

Հիշենք նաև գործելի «ածուխ», էջ 390 ա, 399 ա կուտատուկ «մոլոշ» (ձեռ. սեռ. կատատկան, որ է ապէմկօմէջի), էջ 341 բ= թրք. جمجومبم! ebem gümeji «մոլոշ. malva silvestris», և որսայսիլ «մեջքի վրա պառկիլ» 400 ա։

51 (54). ԲՐԱՆԻԿ, ԲՐՋԱՆԻԿ

Այս բառերի ղուգորդությունը վաղուց էր զգացված մեր մեջ։ Ենթադրում եմ, որ մինչև իսկ Բարսեղ Կեսարացու «Վեցօրէից» գրքի թարգմանիչը գիտեր այդ և, ըստ այդմ էլ, գրել է. «փափկակեաց, բարեկեցիկ, դիւրաշնունդ, երանիկ, երջանիկ, չարաչօժար և մեղսասէր» (Վեցօր. ե)։ Բայց այս բառերի ստուգաբանությունն անծանոթ էր, միայն իմ «Արմատական բառարանի» մեջ այդ երկուսի արմատը գրել եմ եր։

Այժմ առաջարկում եմ հետևյալ ստուգաբանությունը։

Ունենք հնդեվրոպական մի արմատ, այն է prēi, prəi, pri, որի ժառանգներն են. սանս. prīyatē «գոհանալ, սիրժել», priyá «սիրելի, ցանկալի, սիրված», հպրս. rīar «ցանկություն, իղձ, կամք», զնդ. frāy «ուրախ առնել, ուրախացնել», հսլ. prêja «գոհ եմ, խնամք եմ տանում», հսլ. և ռուս. приятель «բարեկամ, սիրելի», ռուս. приятный «դուրեկան, հաճելի», գոթ. frijōnd, հիսլ. frōendi, հբգ. Friunt, գերմ. Freund, հսաքս. Friund. անգլ. friend «բարեկամ», հբգ. fri-

du, հսաբս. frithu, գերմ. Friede «ուրախություն» և այլն (Walde, 2, էջ 86—87)։

Նախալեզվի prē արմատը p-ի անկումով պիտի տար հյ.-ր և ե-ի սովորական հավելվածով պիտի դառնար **եր** (համմ. ե-րաստան<prk'to, երես <prepsā երևիլ <prep-, երէց<preisk'hu, եր<pri, որի ի-ն բառի ծայրը լինելով ընկել է և աճի (կ) մասնիկով ստացվել է **երաճի(կ)**: **երջանիկ** բառի մեջ ջ կամ աճական է և կամ նախալեզվի ȳ-ի օրինական համապատասխանը, ինչպես որջ<ōlyo, աստղ< ster, հուն. steîra, ջինջ, ջնջել<g²henye։

Ծանոթ.— Այս ստուգաբանությունը մտածեցի 18 նոյ. 1950 թ. հիվանդ պառկած անկողնում։ Հեռախոսով առաջարկեցինք ընկ. Էդիկ Ադայանին՝ գտնել թե ի՛նչ կլինի ռուս. приятный բառի համապատասխան հայերենը՝ հնդևրոպական հիմքի վրա։ Նա նույնպես գտավ, որ այդ բառն է երջանիկ։

Առաջարկված խնդրի այս ճիշտ լուծումը մի կողմից ցույց է տալիս ընկ. Էդ. Ադայանի համաութիւնը ձայնագիտական օրենքների գործադրության մեջ, մյուս կողմից վերի ստուգաբանության ճշտությունը։

Ճշմարտությունը մեկ է[1]։

21 նոյ. 1950 թ., Երևան

52(56). ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՏՈՒՑԱՆ ՆՊԱՍՏԸ ՊԱՐՍԿԵՐԵՆԻՆ

Ամեն մի իրանագետ, որ առիթ է ունեցել քիչ թե շատ զբաղվելու հայերենով, դիտել է այն մեծ բառապաշարը, որ հայերենը փոխ է առել իրանական լեզվից զանազան շրջաններում, հին պարսկերեն, պահլավերեն և պարսկերեն։ Ըստ իմ հաշվի, այս բոլորից փոխառյալ բառերի թիվը 1405 է (տե՛ս իմ Հայոց լեզվի պատմ. Երևան, 1940, Ա հտ. էջ 240—292), ուր դրված է նաև այդ բոլոր բառերի ցանկը (դուրս են ձգված նոր պարսկերենից եղած փոխառությունները, որոնք գտնվում են արդի ժողովրդական բարբառներում)։

Հարուստ չէ իրանական հին գրականությունը և հետևաբար հարուստ չէ նաև իրանական բառամթերքը։ Հին պարսկերենի ամբողջ բառամթերքը բաղկացած է 400 բառից, զենդերենը 4000 բառից. պահլավերենի բառարանը բնականաբար ավելի հարուստ է։ Թեհրանի համալսարանի նախկին դասախոս պրոֆ. Ռուբեն Աբրահամյանը կազմել է պահլավերենի լիակատար բառարանը, բաղկացած 10.000 բառից, պահլավերենից պարսկերեն և անգլերեն։

Հայերենը մեծ ծառայություն է մատուցանում պահլավերենի ուսումնասիրության համար հենց իր այդ փոխառյալ բառերով։ Այդ ծառայությունը մենք կարող ենք ամփոփել հետևյալ կետերի մեջ։

1) Հաճախ հայտնի չէ պահլավերեն բառի ընթերցումը՝ այդ լեզվի շատ պակասավոր այբուբենի պատճառով, ուր ձայնավորները չեն գրվում, տառերի միացումները խառնակում են բառի պատկերը, տառերը իրար նման են և ունեն զանազան արժեքներ։ Հայերեն փոխառյալ ձևը՝ պահելով բառի հարազատ պատկերը, ցույց է տալիս պահլավերեն բառի ստույգ ընթերցումը։ Օրինակ՝ Արտավիրաֆի մեջ (Artaviraf) I, 42, 40 կարդում էին nahīčak *(կամ* nāīčak) ramitūnīt «վիճակ դնել»։ *Այս բառի առաջին տառը պհլ. կարդացվում է թե՛* n *և թե* v. *կապում էին բառը պրս.* nay «եղեգ» *բառի հետ՝ ենթադրելով թե վիճակը դնում էին եղեգի կտորտանքներով։ Տողերս գրողը, երբ ուսանող էր Փարիզում, ի նկատի ունենալով հյ. վիճակ բառը և վիճակ արկանել ոճը, որ ճիշտ ու ճիշտ համապատասխանում է պհլ. ոճին, մտածեց թե այդ բառը պետք է կարդալ ո՛չ թե* nahīčak *կամ* nāīčak, *այլ* vēčak, *ըստ որում հյ. վիճակ* vičak *բառի հին ձևն է *վէչակ* večak. *իմ այս միտքը ես*

[1] *Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» 1952 թ. № 12-ում տպագրված «Հայկականը է» (№ № 37—54)-ի առանձնատիպի իր օրինակում Հ. Աճառյանը կատարել է սրբագրական ուղղումներ, որոնք մուծված են այստեղ, իսկ 54-րդ՝ «Երանիկ, երջանիկ» բառերի ստուգաբանության վերաբերող ծանոթագրությունը փոխել է վերևում դրված շարադրանքով։*

հայտնեցի իսկույն Մեյեյին, որ տվեց իր հավանությունը իմ ընթերցման ճշտության մասին։ Երբ ես պատրաստվում էի դրել այդ մասին մի հոդված, հրատարակվեց Fr. Müller-ի հոդվածը նույնի մասին WZKM 10, 175, ուր հեղինակը բոլորովին անկախ հասել էր նույն եզրակացությանն։ Hübschmann-ը իր Arm. Gram. աշխատության մեջ 1, 247 ընդունեց այդ մեկնությունը և այժմ չեմ կարծում, թե գտնվի մի պահլավագետ, որ այդ բառը շարունակի կարդալ nahīčak կամ nāīčak.

Nyberg, իր Hilfsbuch des Pehlévi (Upsala 1931) աշխատության մեջ II, 173 ունի պհլ. մի բառ, որ ենթադրաբար կարդում է pašn և թարգմանում է «etwa Vertrag, Vereinbarung»: Կապելով այս բառը հյ. դաշն և վրաց dašni բառերի հետ, ես այդ պհլ. բառը առաջարկեցի ուղղել dašn. (իմ այս առաջարկը տպված է Մառի անվան նվիրված ժողովածուի մեջ, 1933 թ.)։

2) Երբեմն պահլավերեն բառի նշանակությունը կամ բոլորովին հշտված չէ և կամ մոտավորապես միայն հայտնի է. հայերենը գալիս է այս դեպքում որոշելու կամ հաստատելու ճիշտ նշանակությունը, ինչպես վերի dašn բառի օրինակը ցույց տվեց։

3) Հայերենը օգնում է երևան հանելու երբեմն պահլավերենի բարբառային ձևերը և հշտելու նրանց գավառը և ժամանակը։ Օրինակ՝ «պողպատ» նշանակող բառը հայերենում ունի երկու ձև՝ պողովատ և պողպատ. պահլավերենում չկան այս բառերը և կա միայն ածականը, որ կարդացվում է pōlāpaten կամ pōlāfatēn «պողպատյա». հայերենը երևան է հանում երկու պհլ. ձև *pōlavāt և *pōlāpat, նույնիսկ պողովատիկ < պհլ. *pōlavātīk, որոնք ներկայացնում են երկու տարբեր պահլավական բարբառներ։ Ավելի ուշ պիտի առաջանա պրս. پولاد pōlād, որ փոխ պիտի առնեն զանազան հարևան լեզուներ։

4) Շատ բառեր կան, որ չեն ավանդված պահլավական գրականության մեջ (պարսիկները երբ ընդունեցին Իսլամը, ոչնչացրին իրենց կրակապաշտական շրջանի «պիղծ» գրքերը)։ Այդ բառերի մի մասը պահված է իրանական ուրիշ լեզուներում. բայց հայերենը գալիս է շատ հարազատ կերպով հաստատելու ո՛չ միայն այն, որ այդ բառերը կային նաև պահլավերենում, այլև երևան է հանում նաև նրանց ճիշտ ձևը։ Օրինակ պաշար pašar հայերեն բառը, որ նշանակում է «պահեստի կամ ճանապարհի ուտելեղեն», անշուշտ պահլավերեն է։ Այդպիսի բառ չկա պահլավերենում, բայց որովհետև սոգդիերենում կա pš" βr «vivres» (BSL 23, 107) և հայերենը բառեր չէ վերցրած սոգդիերենից, ուստի պետք է առանց այլևայլի ենթադրել պհլ. *pašar բառը այս նշանակությամբ (իմ այս մեկնությունը տե՛ս Revue des études arm. III, 8)։

Հյ. նուիրակ կոչվում է պալատական հատուկ այն պաշտոնյան, որ արքունիք կանչված անձերին առաջնորդում էր թագավորի առաջ. կամ թագավորի կամ իշխանի առաջից դնալով՝ նրա գալուստն էր հայտարարում և ժողովրդի մեջ ճանապարհ բաց անում։ Այս բառը պահլավերեն է և ենթադրում է պհլ. niveδ'ak ձևը (համմտ. զնդ. nivaēδ'ayemi «ծանուցանեմ» և պրս. نويد nuvīd «ավետիք, լուր»)։

Բոլորն էլ կապված են ni մասնիկով vid=զնդ. vaēd «գիտենալ, ճանաչել, հասկանալ» արմատից։ Չէ ավանդված պհլ. *nivēδak բառը. հայերենն է միայն, որ երևան է հանում այդ բառը և միանգամայն այդ պաշտոնն ու պաշտոնյան։

5) Դեպքեր կան, երբ հայերեն բառը ինքը մենակ ենթադրել է տալիս պահլավերեն մի բառ, որ ո՛չ մի իրանական լեզվի մեջ չէ պահված։ Վերջերս հաջողվեց ինձ երևան հանելու երկու այդպիսի բառ։ Առաջինն է հյ. ժպիրհ. այս բառը չունի հայերենում ո՛չ մի մեկնություն. որովհետև ժ հնչյունը պարունակող բառերը ընդհանրապես իրանական են, ես այդ բառը վերածեցի պահլավական ձևին։ Հայերենի րհ ձայնախումբը ծագում է իրանական θr ձայնախմբից. օր. աշխարհ<հպրս. xšaθra գոհ<զնդ. zaoθrā, ժամր>զնդ jaθra, շնորհ<զնդ xšnaoθra, պահ, պարհ<զնդ pāθra, սեպուհ,

սեպուհր<զնդ vīsō-puθra, Մանաճիհր< իրան. Mana-čiθra, Միհր<հպրս Miθra են։ Ըստ այսմ ես կազմեցի *žipiθra ձևը, որ իսկույն հիշեցրեց զնդ. *aži-piθrā «նա, որի հայրը օձ է, օձահայր» և այս ձևը ենթադրել տվեց պհլ. žipihr անծանոթ բառը։ (Տե՛ս Տեղեկ. Ակադ. 1945, № 1—2, էջ 6)։ Այս միևնույն բառը առաջնորդեց ինձ բացատրելու երկրորդ բառը դժպիհ, հին ձևը դժպիրհ «անհաճո, ծանր, խիստ, դժնդակ», որ ավեց իրան. *duž—piθra>պհլ.=*dužpihr «նա, որի հայրը չար է, չարահայր»։

6) Հայերենը օգնում է նաև երևան հանելու պահլավերեն բառերի մի նոր անհայտ նշանակությունը. օր. հյ. ոստիկան նշանակում է «կուսակալ, գավառապետ». և ոչ մի ուրիշ նշանակություն չունի. նա ծագում է անշուշտ պհլ. ōstīkān բառից, որ նշանակում է միայն «հավատարիմ» և ուրիշ ո՛չ մի նշանակություն չունի։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայերենում հավատարիմ բառը ոչնի նաև «թագավորին մոտիկ բարձրագույն պաշտոնյա» իմաստը, ուստի ենթադրում եմ, որ պահլավերենում էլ ōstīkān «հավատարիմ» բառը նշանակում էր նաև «գավառապետ», որ փոխ առան հայերը (այս վերջին իմաստով)։

7) Էլ ավելի բազմաթիվ և հետաքրքրական են այն հայերեն բառերը, որոնց մեջ ո՛չ մի իրանական արմատ չի երևում, բայց բուն իսկական հայ ականջը զգում է ինչ որ անսովոր բան հայերենի զգացողությամբ և ասում է, որ սա պահլավերեն պիտի լինի։ Այսպիսի բառերից են «ամբաստանել», «աշտարակ», «աշտանակ» և այլն, որոնք ենթադրում են պհլ. *ambastan, *štarak, *štanak կամ սրանցից քիչ տարբեր ձևով բառեր։ Այսպիսի բառերի թիվը հասնում է հարյուրների։

Նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները, անհրաժեշտ է ուրեմն ամեն մի իրանագետի համար հայերենի ուսումը՝ բացատրելու և մանավանդ վերականգնելու համար պահլավերենի կորած բառամթերքը։

53 (57). Ի ՍՄԲԱԿԷՆ ՎԱՐԵԼՈՅ

*Եղնիկ Կողբացին (տպ. Վենետիկ, էջ 174) անասունների բնազդի մասին խոսելով՝ ասում է. «Յորս են և աղդմունք ինչ բնականք, որովք հանդերձելոց իրիք իրաց ազդ լինիցի նոցա. որպէս ձիոյն ի սմբակէն վարելոյ. և եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ. և մօտ ի գարունն ընդ դրաց կողմնն դառնալոյ. և ծիծառան՝ յառաջ քան զաշունն ի ջերին տեղիս ի ձմերոց երթալոյ. և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն զձմերունս կարևորս, և վաղ ի մարմանդ տեղիս փութալոյ. և ճայից՝ վաղագոյն տարմատարմ շրջելոյ. և աղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ, և ագռաւուց՝ ի ծմակաց վաղագոյն ի ջերին տեղիս գնալոյ, և անգեղց՝ ի հեռաստանէ զգիշոյ անկանելոյ դիտաւորութեան»։

*Մեր բառով խոսելով՝ այս բոլորի իմաստը հետևյալն է.

«Անասուններին մեջ կա բնազդը, որով նրանք իմանում են լինելիք բաները, այսպես ձին՝... եզը ձմեռ ժամանակ գումի խորքն է նստում և գարնան մուտ դռան կողմն է դառնում. ծիծեռնակը աշունից առաջ տարուկ տեղեր ձմեռանոց է գնում. կռունկը առաջուց իմանում է թե խիստ ձմեռ է լինելու և շուտով մարմանդ տեղեր է շտապում. ճայերը ավելի վաղ խմբերով շրջում են և աղավնիները երամ երամ գնում են, ագռավները առաջուց ծմակներից տարուկ տեղեր են գրնում և անգղներն էլ հեռվից դիակի անկումը նկատում են»։

*Մնում է միայն բացատրել «ի սմբակէն վարելոյ», որ դժվար է հասկացվում։

Վարել բայը երկու իմաստ ունի. 1. հողը կամ արտը վարել, հերկել, 2. ձին քշել, որից ձիավար, ձիավարել, ձիավարություն։ Քանի որ խոսքը ձիու մասին է և ձին չի կարող հող մշակել, ուստի պետք է առնել երկրորդ իմաստով։ Վարելոյ կարող է լինել կա՛մ վարեալ դերբայի (ածականի) և կամ վարել անորոշի սեռական-տրական ձևը։ Երկուսն էլ որոշ իմաստ չեն տալիս, ուստի և հարմար չեն տեղին։ Մնում է մի երրորդ ձև,

որ է վարիմ=վարիլ կրավորականը։ Շատ հարմար է ուրեմն հասկանալ թե «ձին էլ սմբակից (քոր գալուց կամ մարմաջից) բնազդով իմանում է, որ պիտի վարվի, քշվի, վրան պիտի հեծնեն և քշեն»։*

54 (58). ՔՈՅՐ, ՍԵՌ. ՔԵՌ

Հայտնի է, որ **հոյր** բառը ծագում է հնդևր. swésōr ձևից և սեռ. **քեռ** ծագում է նրա սեռ. swesrós ձևից։

Բայց հյ. սեռ. **քեռ** շատ նման լինելով **քեռի** բառին, կարող էր երբեմն շփոթվել նրա հետ։ Այսպես, օրինակ, **քեռորդի** բառը, որ նշանակում է «քրոջ որդի», այժմ էլ ոմանք սխալմամբ հասկանում են «քեռու որդի»։

Այս շփոթության առաջը առնելու համար ահա, միջին հայերենում ստեղծվեց **քուեր** ձևը և նրանից ձևացավ անմիջապես **քուեր-որդի** կամ **քվերորդի** «քրոջ որդի» բառը, որով «քեռու որդի» իմաստի հետ շփոթելու վտանգը վերացավ։

Թե ո՛րտեղից առաջացավ այս **քվեր** ձևը բավական հեշտ է գուշակել։ Ր բաղաձայնով վերջացող մի խումբ բառերի սեռականը կազմվում էր ե հոլովումով (ոսկր-ոսկեր, տարր-տարեր) և հատկապես **տայգր-տայգեր**, որ ազգականական բառ լինելով՝ նման էր **հոյր** բառին։

Ավելի ուշ բառը կապվեց **մայր** բառի հոլովման և դարձավ միջին հայերենում մի կողմից **քվոր** և մյուս կողմից **քոր**։ Առաջին **քվոր** ձևը կենդանի է այժմ էլ Երևանի բարբառում և նրա նման են հոլովվում՝

կեսուր, կեսրոր
աներ, հանոր, հանորտղա
ընկեր, ընկոր, հընկոր։

Վերջին շրջանում **հոյր** հեռանում է նաև **մայր** և **հայր** բառերի հոլովումից և անցնում է կին բառի հոլովման, որով ստանում ենք **հոյր, սեռ. հրոջ**, ինչպես ունենք **կեսրոջ, աներոջ, ներոջ, տագրոջ, ընկերոջ**։

55 (59). Ք Ե Ռ Ի

Հնդևրոպական ընտանիքի կազմակերպությունը այնպես էր, որ ամուսինը կնոջ կողմի ազգականների հետ կապ չուներ, ուստի նրանց համար անուններ չկային։ Այսպես, թեև ամուսնու հայրը, մայրը, եղբայրը և քույրը որոշ անուններով կոչվում էին սկեսրայր, սկեսուր, տայգր, տալ, սակայն կնոջ հայրը, մայրը, քույրը և եղբայրը հնդևրոպացոց ժամանակ առանձին կոչում չունեին։ Ավելի ուշ, երբ ընտանեկան կազմակերպության այս ձևը փոխվեց, երևան եկան այն ժամանակ նոր անուններ, ինչպես **աներ**, զոքանչ, և նմաններ, որոնց ծագումը ծանոթ չէ։

Նորակերտ անուանների կարգին են պատկանում **քենի** (որ տես Արմ. բառ.) և **քեռի**։ **Քեռի** բառը, որի հոմանիշն է **մօրեղբայր**, գործածված է արդեն 6 դարի կեսից առաջ գտնված շրջանում մի անգամ (Ղևտ. ի. 20)։ **Մօրեղբայր** ձևը բնավ չէ գործածված հին մատենագրության մեջ. բայց դա պատահական է, որովհետև գործածված կա նրանից կազմված **մօրեղբօրորդի** բառը։

Քեռի բառի ծագումը համարված է անհայտ և այսպես էլ նշանակված է Արմ. բառ. Ջ, էջ 1447 (=տպ. Դ, 570)։

Սակայն ամեն ոք էլ կարող է զգալ, թե այս բառը պատկանում է **հոյր** բառին, և հատկապես նրա սեռ. **քեռ** ձևին։

Թեև նշի ոչինչ մեկնություն չի տալիս, բայց նրանից առաջ Ավետիքյան, Քերակ. 1815, էջ 224 կցում է սեռ. **քեռ** ձևին, նույնը կրկնում է Էմին, Քերակ., էջ 40։ Hübsch. ZDMG 35 (1881), 656 և Arm. St. § 294 կասկածով դնում է **հոյր** բառի **քեռ** սեռականից, համեմատելով հսլ. swiri «մորեղբոր կամ մորաքրոջ որդի» բառի հետ։ Իսկ Arm. Gr., էջ 504 իմաստի տարբերության պատճառով մերժում է։

Արմ. բառարանիս մեջ ես էլ բառիս ծագումը դրել եմ անստույգ։ Այժմ սակայն մը-

---

* Այս հատվածի բացատրության համար տե՛ս նաև Վարագ Առաքելյանի «Գրաբարի հատընտիր» տպ. Երևան, 1946 թ., էջ 85, ծան. 3։

տածում եմ, որ անհրաժեշտ է կցել **fոյr** *բառի* **fեո** *սեռականին։ Հին սլավական ձևին կցել անշուշտ անտեղի է, որովհետև բառը հնդեվրոպական շրջանում դոյութիւն չուներ։ Բայց երբ հայերը կազմեցին այս բառը, անշուշտ իրենց ունեցած արմատներից մեկի հետ պիտի կցեին։ Մենք զգալով հանդերձ, որ «քոյր» և «մօրեղբայր» հարակից գաղափարներ են, դժվարանում ենք ո՛ր թե ըստ ձևի, այլ ըստ իմաստի կապել այս երկուսը իրար հետ։ Բայց երբ մեկնենք «քեռին» իբրև «այն անձը, որի քույրը խոսողի մայրն է», երկուսի կապը արդեն գտած կլինենք։*

Ընդունելով այս բացատրութիւնը, առաջարկում եմ Արմ. բառարանում **fեոի** *բառի մոտ դնել + նշանը և հնդեվրոպական կամ բնիկ հայ բառերի թիվը մեկով ավելացնել։*

56 (61). Տ Ա Ր Թ

Գավառական բառ է, որ գործածական է հետևյալ բարբառներում. Ախալքալաք, Աղբակ, Ապարան, Աստապատ, Բաբերդ, Բուլանըխ, Երևան, Լոռի, Խարբերդ, Ղարաբաղ, Նոր-Բայազետ, Նոր-Ջուղա, Շիրակ, Սուրմալու, Վան։ Նշանակում է վառելու համար պատրաստված՝ մեծ ու կոշտ ձևով աթար կամ թրիք գոմեշի, կովի կամ եզան (տարբը ձեռքով չեն պատրաստում ինչպես թիթեռնը, այլ ոտքերով կոխոտելով, բահով կտրատում են և չորացնում, հողով խառն է և հեշտութեամբ չի վառվում)։ Նշանակում է նաև 2. մարմնի վրա կապած հաստ կեղտ (Խարբերդ, Վան)։ 3. Կեղտոտ (Նոր-Ջուղա)։ Հնչվում է **տաոբ** *(Սեբաստիա) և նշանակում է նստած կեղտ (ջրի տակ, ամանի երեսը, ատամի վրա, ձեռքի երեսին)։ Սրանից կազմված բառեր են՝* **տաոբակալել** *(Երևան, Ղարաբաղ) «կղկղանքը վրան չորանալ», 2 (Ղարաբաղ) «վերքի վրա փառ կապել, երեսը չոր փառ կապել»,* **տաոբացաև** *(Վան) «աթարի մի տեսակ»։*

Այս բառը կարող ենք համեմատել հընդեվրոպական բառերի երկու խմբի հետ. առաջին՝ անգլ. dirt, *հոլլ.* dreet, *հ՛հյուս.* drīta, *անգսք.* drītan, *հյուս. գերմ.* drīten, *ռուս. գվո.* dristàtь *«փորը լուծել», մակեդ.* διρδαίνει *(Հեսիք.) «կեղտոտել, ապականել»։ երկրորդ՝ լիթ.* derkiù *«ապականել, փորը դատարկել», լտ.* foria *«փորի լուծ»,* forio *«կղկղել»։ Առաջինը (լիթ.) ցույց է տալիս, որ նախորդների մեջ ատամնականը աճական է. երկրորդը (լտ.) ցույց է տալիս, որ արմատի նախաձայնն է* dh *և ոչ* d։ *Ըստ այսմ արմատը դրվում է* dher, *աճականով* dh(e)rei-d *«կեղտոտութիւն, կղկղել» (*Pokorny *861)։*

Բայց, թեև այս արմատի իմաստը շատ լավ համապատասխանում է հայերեն **տաոբ** *բառի իմաստի հետ, ընդհակառակը նախաձայն* **տ** *(*t*) թույլ չի տալիս այս համեմատութիւնը, ապաստվում է *դաոտ։ Ուրեմն պետք է թողնել այս ստուգաբանութիւնը որպես սխալ և փորձել մի ուրիշը։*

Նախաձայնի հետ համաձայն է մի ուրիշ ձև, որ է հ՛հյուս. torð, *անգսք.* tord *«կեղտ», լիտուա.* dìrstu, dìrst *«կղկղել»,* dirša *«հետույք», սրգ.* zurch, zürch *«թրիք»։ Առաջին երկուսը գալիս են հնխ.* dr̥-tó *ձևից. արմատը դրվում է* der, *որի կոկորդականով աճած ձևից է գերմանականը (*Pokorny *798). Հնխ.* dr̥-tó *ձևը ամբողջապես ծածկում է հյ. ձևը, բացի բառավերջի* **p**–*ից, որ պետք է լիներ ****տաոդ** *(հնխ.* t *տալիս է* r*-ից հետո հյ.* **դ**)։

Բայց **տաոբ** *լինելով գավառական բառ, ուր* **ր**–*ից հետո* **դ** *դառնում է* **բ**, *ամեն իրավունք ունենք ասելու, որ* **տաոբ** *պետք է գրել ****տաոդ**։

Միայն երկու բարբառ կա, ուր **ր**–*ից հետո* **դ** *պահվում է անփոփոխ. դրանք են Ագուլիս և Մեղրի։ Դժբախտաբար այս երկու բարբառներումն էլ* **տաոբ** *բառը պահված չէ, որովհետև փայտի առատութեան պատճառով աղբը իբրև վառելանյութ չի գործածվել*[1]*։*

---

[1] *Ինչպես պրոֆ. Հ. Աղայանը ինձ հայտնեց, Մեղրիում կա* **տաոտ** *«թաց գուղձ», որ չգիտեմ թե նույն բա՞ռն է։*

57 (62). Թ Ր Ք. tantun

Այս բառը գործածական է միայն Թրք. ժողովրդական լեզվի մեջ tantuna düšmek *«անդունդի մեջ ընկնել» դարձվածքում. ասվում է օրինակ* düšdün-mi tantuna? *«ընկա՞ր անդունդը»։ Ոչ մի բառարանում չգտա. ոչ Ապիկյանի մոտ, ոչ Զեքի Կարապետյանի մոտ, ոչ* Bianchi-*ի մոտ, ոչ* Будагов-*ի մոտ և ոչ էլ նույնիսկ Հյուսեին Քազիմ Քադրիի մեծ բառարանում (Պոլիս, 1927—1928 ԹԹ.)։*

Ենթադրում եմ, որ փոխառեալ է հյ. հոմանիշ անդունդ բառից, որ միայն գրաբար չէ, այլ գործածական է բազմաթիվ հայ բարբառներում (տե՛ս Արմ. բառ.)։ Թուրքերենը բառավերջի դ ձայնը հնչել է թ, ինչպես է մեր մեջ և փոխադրելով բառի սկիզբը, կազմել է մի տեսակ կրկնավոր, ինչ որ սիրելի ձև է ժողովրդական լեզվի մեջ։

58 (63). Թ Ր Ք. bürüm bürüm

Նույնպես ժողովրդական լեզվի մեջ սովորական բառ է թե՛ Թուրքերեն, թե՛ հայերեն և նշանակում է «հոտավետ, անուշ հոտ արձակելով». օրինակ՝ bürüm bürüm qoqularə čəqəyor=*բիւրիւմ բիւրիւմ հոտը կելլա կոր (անուշ անուշ հոտը փչում է)։ Թեև ընդհանրապես անուշ հոտի համար է ասվում, բայց ծաղրարար կարելի է գործածել նաև վատ հոտի համար։*

Այս բառն էլ նախորդ հոդվածում հիշված բոլոր բառարաններում չգտա, թեև Պոլսում շատ սովորական գործածություն ունի։ Ենթադրում եմ, որ փոխառյալ է հյ. բուրում *«բուրմունք, անուշ հոտ» բառից կրկնությամբ։*

59 (64). Ս Ր Ի Կ Ա Տ

Երեք տարի առաջ ընկ. Գևորգ Ջահուկյանը առաջարկել էր ինձ մեկնել այս բառը իբր ասորերեն, որովհետև վերջավորվում է –այ և շատ նման է արաբ. سارق sāriq *«գող» բառին։*

Այն ժամանակ ես չգտա ասորերեն համապատասխան բառը։

Արդարև հայերենում այն բառերը, որոնք վերջավորվում են –այ, ընդհանրապես ասորական փոխառություն են. ինչպես՝ տղայ, կաթսայ, շղթայ, ծնծղայ, շուկայ, խահանայ, սատանայ *և այլն։*

Brockelmann-*ի ասորերեն բառարանում (*Berlin *1895), էջ 240 ա գտնում ենք ասոր.* سرق sraq *արմատը* spoliavit *«կողոպտել» իմաստով, որին համապատասխան էլ դրված է արաբ.* سرق srq *«գողանալ»։ Այս արմատի տակ հիշված են ասոր* srīqā *«գուր, ունայն»,* sūrāqā سورقا *«կամավոր աղքատություն», և ուրիշ մի քանի նման բառեր։*

Այս բոլորը ես հիշել եմ իմ Արմ. բառ.-ի մեջ գիրկ=գուրկ *(զրկել) արմատի տակ, որ դրել եմ փոխառություն նույն ասորի արմատից։*

Այժմ գտնում եմ, որ հիշյալ մեկնությունը սխալ է. «ունայն» իմաստը խաբել է ինձ։ Ասորերեն sriqā *ձևը ամբողջովին ծածկում է հյ. արիկայ բառը, իսկ նույն ասորի «ունայն, գուրկ» իմաստները, միանալով ասոր. «կողոպտել», արաբ.* سرق srq *«գողանալ»,* سرقة sirqat *«գողություն»,* سارق sāriq *«գող» իմաստների հետ, ենթադրել են տալիս ասորի (գավառակա՞ն) մի բառ՝* srīqā *«գաւարկապորտ, գող, ավազակ» իմաստով։*

60 (65). Ջ Ո Ւ Ր Կ, Ջ Ր Կ Ե Լ

Ի, ու ձայնավորների սղման պատճառով երբեմն կարելի չի լինում որոշել բառի պարզ արմատը, եթե հնից ավանդված չէ։ Օրինակ՝ փրկել *բառի արմատը մենք կարող ենք ենթադրել* փիրկ, փուրկ, փրիկ *կամ* փրուկ. *բայց սրանցից ոչ մեկը ընդունելի չէ, որովհետև հնից ավանդված չէ։ Բառը փոխառյալ է ասորերենից, որ ունի* pəraq *ձևը։ Այսպես է նաև զրկել բայը, որի արմատը կարող է լինել* զուրկ *կամ* զիրկ։ *Երկուսն էլ ավանդված են և ըստ ՆՀԲ* զուրկ *ընտիր հայերեն է,* զիրկ *ռամկական։*

Գիտենք նաև, որ հաճախ բայերի սկիզբը դրվում է զ *նախդիրը՝ սաստկական կազմե-*

լու համար. օր. զանցանել, զառամիլ, զարմանալ, զառանցել և այլն։

Կարող է լինել նաև, որ բայը արմատական ձևով պահված չլինի, այլ միայն զ աստիճանով։ Այսպես է զերծանել բայը, որի արմատն է *երծ, որ չի ավանդված և հայտնի է միայն լեզվաբանական քննությամբ (տե՛ս Արմ. բառ.)։

Հյ. զուրկ, զրկել բառն էլ այս կարգից է. համարում եմ զ աստիճանով կազմված՝ ուրկ արմատից, որ ավանդված չէ։ Այս ուրկ արմատը համեմատում եմ լտ. urgeo բայի հետ, որի նշանակությունները շատ զանազան են (վարել, քշել, գլորել, ափի վրա քրցել, ասեղ խրել, սպառնալ, վտանգել, ճնշել, տանել, կրել, վրան ծանրանալ, ընկճել, չարչարել, տանջել, հոգնեցնել, քաղցից նեղվել, սեղմել, շտապեցնել և այլն)։

Այս լատին բառը մասնագետները դնում են հնխ. vreg² արմատից որի նախաձայնը և իմաստները շատ չեն համեմատվում լտ. urgeo բայի հետ, որին միացնում են նույնիսկ ռուս. врагъ «թշնամի» բառը։ Այսպես Walde, Lat. etym. Wört. 859, Walde-Pokorny, 1 319: Բայց իրենք էլ են կասկածում այս ստուգաբանության վրա և հիշում են հարցականով։ Trautmann, էջ 342, նույնիսկ չի հիշում լատին ձևը. հետաքրքիր էր իմանալ Ernout-Meillet-ի առաջարկած բառուգաբանությունը, բայց դժբախտաբար այդ գիրքը ձեռքի տակ չունիմ։

Ըստ իս urgeo բայը անջատելով հնխ. vreg² արմատից, պետք է դնել urg² արմատից, որ գտնում եմ նաև հյ. զ-ուրկ բառի մեջ։

Ըստ այսմ պետք է ուղղել Արմ. բառ.-ի մեջ իմ հիշած ստուգաբանությունը։

Ինչպես զերծ, նույնպես և զուրկ՝ բայարմատի ձևով պարզ ածականներ են. իսկ զիրկ, ինչպես և ճիճղ սխալ ձևեր են (փխ. զուրկ, ճուճղ)։

61 (66). Ա Մ Ո Ի Ր Ի

Նշանակում է «չամուսնացած մարդ, որ կին չունի»։ Այս իմաստից իսկույն հետևում է, որ բառը պետք է լինի կազմված ան բացասական մասնիկով, որի ն ձայնը հաջորդ մ-ի մոտ ջնջվել է։ Այսպես բացատրել են արդեն Lagarde, Նազըճեան, Հիւնքեարպէյէնեան և Ղափանցյան (ЗВО 23, 360), բայց բոլորն էլ դժվարացել են գտնել արմատը։ Ըստ իս նախ բառը պետք է համարել *ան-մոյրի ձևից, որի արմատն է *մոյրի և պետք է նշանակի «կին»։

Այս *մոյրի ձևը «կին կամ աղջիկ» նշանակությամբ, հնդեվրոպական բառ է, որ գտնում ենք զանազան լեզուների մեջ։ Այսպես սանս. márya—«երիտասարդ մարդ, սիրական, հովատակ», maryaka—«մարդուկ», յն. μειρᾰξ «աղջիկ, հետևաբար նաև տղա» μειράκιον «տղա, մանչ», կրետ. Βριτό-μαρτις «Արտեմիս աստվածուհին», լտ. maritus «ամուսնացյալ մարդ, կին առած» (հետևաբար նաև marīta «ամուսնացյալ կին, մարդու գնացած, արամբի»), լիթ marti «հարս, նորահարս», mergà «աղջիկ», լիտտ. marscha «եղբոր կինը», հպրուս. martin «հարսն», mergo, mergu «աղջիկ, աղախին», գոթ. (խրիմի) marzus «հարսանիք», կիմր. merch «դուստր», morwyn «աղջիկ», mor-forwyn «ծովային հուշկապարիկ», կորն. moroin «աղջիկ, կույս», myrgh «աղջիկ, կին», բրետ. merc'h «դուստր», հիռլ. muir-moru «ծովային հուշկապարիկ»։ Բոլորի նախաձևն է հնխ. mério-, լատինը՝ հնխ m°rī- ձևից, որից նաև հյ. մարի «էգ թռչուն, հավ», իսկ գերմանական և բալթյան ճյուղի մեջ g, t աճականով (Walde-Pokorny 2, 281, Walde 465, Boisacq 621, Trautmann 170): Այսպիսով *մոյրի և մարի լինում են հայերենում ձայնդարձի ձևեր։

Այս բոլորը տես Արմ. բառ. մարի բառի տակ։

62 (67). Յ Լ Ե Պ

Ժողովրդական բառ է, որ գտնում ենք Ղաբրաղի (ցլեփ), Մեղրու (ցլեպ) և Շուլավերի (ծլեպ) բարբառներում։ Նշանակում է նախ «փայտի մանր կտորներ, որ իբր կրպչան են գործածում. 2 փոխաբերաբար «ապրակու փշրանք». տես Գվո. բառ. 1055բ։

Համեմատում եմ ասոր. ṣlîbā «խաչ» բառի հետ Brockelmann, Lex. syr. 1895, 303 բ, որի հետ նույն են արաբ. ṣalîb «խաչ» և սրանից փոխառյալ պրս. čelîpā «խաչ» բառերի հետ։

Զանազան լեզուների մեջ խաչ նշանակությունը ծագում է նախորդ «փայտ» նշանակությունից։ Այսպես հուն. σταυρός «ցից». 2. մահապարտի ցից, 3. «խաչ», σκόλοψ «սրածայր փայտ, ցից, հետևաբար խաչ», պրս. dārū «ծառ, փայտ», մանիքէական գրվածներում «խաչ», որից է ba-dār kardan «խաչել», ասոր. qaysā «ծառ, փայտ, խաչ», գոթ. galga, հանգլ. gealga և հհյուս. galgi «կախաղան, խաչ» = արևմտ. հհյուս. gelgja «կոճղ, գերան», հանգլ. rōd «խաչ» = անգլ. rod «ճպոտ, գավազան», արևմտ. հհյուս. rōda «խաչ» և «ձող»։ Նաև հյ. խոշ, խէշ «փայտ», որ ապա դարձավ խաչ (տե՛ս Արմ. բառ.)։

Այսպես և ենթադրում եմ, որ ասոր. ṣlîbā «խաչ» բառն էլ նախապես նշանակել է «փայտ», որ ապա կորել է և մնացել է միայն հայ բարբառների մեջ (հայացած արամայեցիների միջոցով)։

63 (69). Բ Ո Յ Ն

Այս բառի ստուգաբանությունը հայտնի չէ։ Երեք մանր ստուգաբանություններ (երեքն էլ անընդունելի) տե՛ս իմ Արմ. բռ. հտ. Բ, էջ 1270 = տպ. Բ, 195—196)։

Անշուշտ պետք է կապել «սպանել» գաղափարի հետ։ Եղնիկ, էջ 63 ասում է.

Զի՞նչ չար քան զօձ կայցէ, և ի նմանէ թերիակէ. և ի սպանող դեղոց (=բոյն), որք ի նենգութենէ մարդկան կազմեցան, չև հասուցեալ և անդէն բուժէ։

Նաև պրս. zahr «թույն», որ մեկնվում է գնդ. *jaθra-, սանս. *hatra- «սպանիչ» բառերով (Horn § 678)։

«Սպանել» գաղափարի համար հունարենում ունենք Θείνω, որ թեև Bailly-ի մեծ բառարանում մեկնված է «զարնել, խփել», բայց օրինակների մեջ ունենք «սուրով կոկորդը ծակել ևն», որով հասնում ենք ըսպանելու գաղափարին։ Boisacq թեև նույնպես Θείνω բառի տակ (էջ 336) նշանակում է «զարնել», բայց էջ 1033 Φόνος բառի տակ նշանակում է ճիշտ Θείνω «tuer, սպանել»։

Θείνω հույն բառը գրեթե ճշտիվ ծածկում է հյ. բոյն բառը։

Երբ երկու ցեղակից լեզուների մեջ ձևով և իմաստով նման բառեր գտնվեն, նմանությունը կարող ենք բացատրել երկու ձևով. 1. այդ երկուսը ցեղակից են և բխում են միևնույն արմատից. 2. մեկը փոխառյալ է մյուսից։ Հայերեն և հունարեն բառերի նմանությունը բացատրելու համար վերի առաջին դեպքում պետք է դիմենք հնդեվրոպական հիմնալեզվին։ Վերի հույն բառի նախաձևն է հիմնալեզվի մեջ g²hen «զարնել, ծեծել» արմատը, որից բխում է նաև հյ. գանել «ծեծել», ռուս. гонить «քշել, հալածել» և այլն։ Այս դեպքում հունարեն Θείνω կապ չունի հյ. բոյն բառի հետ, որովհետև նույն արմատից բխող համապատասխան բառն է հայերեն գան։ Առաջին կետի հերքումով մնում է ընդունել երկրորդ կետը, այսինքն՝ թե բոյն փոխառյալ է հունարեն Θείνω ձևից, բայց հունարեն Θείνω էլ լրիվ չի ծածկում ոչ հայերեն բոյն բառը, որովհետև մեկը ունի ե երկբարբառը, իսկ մյուսը ոյ երկբարբառը. մյուս կողմից հայերենի «բոյն» իմաստը չկա հունարենում։ Այսպիսով հայերեն բոյն բառը հունարենից փոխառյալ չէ և մեր վերի երկու կետերը ջուրն ընկան։

Հունարեն Θείνω բառի հետ համընթաց է Θάνατος «մահ», որ ըստ Boisacq էջ 333, բնավ կապ չունի Θείνω «սպանել» արմատի հետ, ուստի կապ չունի նաև մեր բոյն բառի հետ։ Մնում է գտնել մի ուրիշ հարմար բառ։

Հարմարագույն բառն է κτείνω «սպանել», որի հետ նույն է κτόνος «սպանություն», Boisacq, էջ 524 նախաձևը դնում է qθen. նույնը Walde-Pokorny 1. 505. Հնդեվրոպական հիմնալեզվի մեջ θ ձայնի գոյությունը խախուտ է (Brugmann, Abrégé. 216)։

Այս ձայնով հայերենի մեջ ունենք միայն ցին «թռչունի անունը»=հուն. ἰχτῖνος (տե՛ս Արմ. բռ.)։

Այժմ հնխ. kten արմատի դեմ դնելով հայերեն թոյն, կունենանք մի նոր, ավելի պայծառ օրինակ։ Արդարև բառասկզբի kt ձայնախմբի մեջ k ընկնելով, մնում է միայն t, որ տալիս է հայերեն միշտ թ. երկբարբառ հնխ. eu և ou տալով հյ. ոյ, հայերեն թոյն բառի նախաձևը դառնում է kteun կամ ktoun։ Ավելացնենք նաև, որ հայերենի մեջ ունենք դարձյալ թիւն ձևը, որ նշանակում է «թույն»։ Ըստ այսմ կարելի է երկբարբառին տալ մի ուրիշ ձև։

64 (70). Ա Ն Տ Ա Ռ

Այս բառը չի մեկնված. զանազան հեղինակներ ուզում են կապել հյ. ծառ=doru բառի հետ, բայց այդ բոլոր փորձերը անհաջող են անցել։ Տե՛ս Արմ. բռ. անտառ բառի տակ։

Ամենահարմար բառը, որի հետ կարելի է կապել, հուն. δένδρον ձևն է, որ նշանակում է «1. ծառ, 2. անտառ»։

Հուն. բառի ծագումը անորոշ է։ Ամենալավն է Bailly, էջ 444, որ համարում է բառիս ծագումը անհայտ (origine inconnue)։ Boisacq 176 և Walde-Pokorny 1, 804 տալիս են զանազան մեկնաբանություններ, մերթ համարում են կրկնավոր, մերթ արագաբանության (haplologie) արդյունք, մերթ էլ կապում են հնխ g^{2}end արմատի հետ։ Այս բոլորը իրար են հերքում։

Կարծում եմ լավագույնն է կապել հյ. անտառ բառի հետ և բաժանել բոլոր ուրիշ նման արմատներից։ Հունարեն δένδρον և հյ. անտառ բառերի մեջ բոլոր բաղաձայները նույն են։ Երկուսի մեջ էլ ունենք n, d, r, միայն հունարենի մեջ d երկու անգամ է։ Պետք է կարծել, որ երկրորդ անգամի d թարմատար հավելված է n և r բաղաձայների միջև, ինչպես սովորական է շատ լեզուներում օր.՝ հյ. ծանդր, մանդր. ֆր. cendre («մոխիր»>լտ. cener), այսպես և հուն. ἀνήρ «տղամարդ», սեռ. ἀνδρός, նույնիսկ թրք. tandər=թոնիր, penir>pendir։ Այսպիսով բառի նախնական ձևը կլինի *δένρον կջնջվի երկրորդ d ձայնը և հայերենի հետ բոլորովին կնույնանա։

Մնում է միայն ձայների տարբեր շարքը, որ կարելի է մեկնել տեղափոխությամբ, մանավանդ որ d, r, n ձայները ընդունակ են տեղափոխության, օր.՝ արագիլ= πελαργός, արտասուք=δάκρυ, խաստոր=σκόροδον (ալբան. huθere) են։

Եթե անտառ բառը այսպիսով կապվեց հուն. δένδρον բառի հետ, մեկով ավելացավ թիվը այն հայ բառերի, որոնք միայն հունարենում ունեն իրենց համապատասխանը, այսպես՝ արագիլ, խաստոր, աղմուկ=πόλεμος, թարփ=ταρπών, կարիճ=καρίδος, արինգ=σῦριγξ։

65 (71). Հ3. -ՍՏ ՄԱՍՆԻԿԸ

Հայերենի մեջ կան մի խումբ բառեր, որոնք կազմված են ուստ մասնիկով. այսպես՝ թաքուստ, գալուստ, ելուստ, փախուստ, պահուստ, հարուստ, կորուստ, որկորուստ, ապրուստ, հագուստ, կապուստ։ Այս բառերից մեծ մասը հատած են մեզ հնից, իսկ միմիայն երկուսը (հագուստ, կապուստ) նոր են կազմված. այս բառերի հիմնական իմաստն է ինչ որ գործողության կատարումը. օր.՝ գալուստ նշ. «գալը, գալու գործողությունը», փախուստ «փախչելը, փախչելու գործողությունը» և այլն։

Ուրեմն այս մասնիկը ձևով և նշանակությամբ նույնանում է ռուս. -ость մասնիկի հետ, որով նույնպես կազմվում են շատ բազմաթիվ բառեր. օր.՝ мудрость «իմաստություն», новость «նորություն», храбрость «քաջություն», хитрость «խորամանկություն» (այս կարգի բառերի թիվը ընկ. Ռաֆիկ Մելքոնյանի հաշվով 2500 հատ է)։

Ռուս. -ость ձևը առաջանում է հսլ. ость ձևից և ենթադրում է հնխ. osti. հյ. -ստ առաջանում է հնխ. st խմբից, ինչպես՝ ըզգեստ<հնխ. vesti, որով հյ. և հսլ. ձևերը միանում են իրար հետ. (հյ. ու նախաձայնի մասին կխոսենք քիչ հետո)։

Հայերենի մեջ բացի այս -ուստ *մասնիկից, ունենք մի քանի բառեր էլ, որոնք կազմված են* -եստ, -աստ *և* -իստ *մասնիկներով։ Այսպես՝*

-եստ *մասնիկով են* գովեստ, ուռեստ, համեստ, պաճեստ *և թերևս* արուեստ, *որ դարձել է հետո* արհեստ։

-աստ *մասնիկով են* առագաստ, զգաստ, իմաստ, ուրաստ, հաւաստ *(վերջինը պահված է* հաւաստի *և* հաւաստիք *բառերի մեջ)։*

-իստ *մասնիկով ունենք միայն* հանգիստ։

Ի՞նչ են արդյոք այս -ստ *ձայնախմբից առաջ գտնված* ե, ի, ա, ու *ձայնավորները. արդյոք հնդեվրոպական ձայնադարձի աստիճաննե՞րն են ներկայացնում. այդ դեպքում ինչո՞ւ է պակասում* ո, *որ նույն ձայնդարձի միջին կարևոր աստիճանն է։ Երկրորդ՝ եթե հյ. ու համարենք հնխ.* ō *աստիճանից, ապա* ō *պիտի տար սլավոնականում* a *և ոչ* o։ *Ավելի լավ է, ուրեմն, ենթադրել, թե հայերենի այս* ե, ի, ա, ու *ձայնավորները ներկայացնում են հայերեն բայական չորս լծորդությունների բները (սիրել, խօսիլ, աղալ, թողուլ)։*

Այսպես՝ դգալ-դգաստ, իմանալ- իմաստ, ուրանալ-ուրաստ, հանդչիլ-հանդիստ, գովել-գովեստ, ուտել-ուտեստ, կորուսանել-կորուստ և այլն։

Ճիշտ է, որ մեր բոլոր վերև հիշած բառերը չենք կարող այսպես դասավորել, բայց բառակազմության համար այդ ոչ մի նշանակություն չունի, որովհետև որոշ բառեր արդեն հետին կազմություն լինելով՝ քնի գաղափարը ջնջված էր ժողովրդի գիտակցության մեջ։ Այսպես է հագուստ, *որ հնից չէ ավանդված (հինն է* ագանիմ*), որի օրինակով էլ կազմվել է* կապուստ. *ասում ենք իրար հետ միասին* հագուստ-կապուստ *(և ոչ թե* կապեստ*)։*

Վերն ասացինք, թե այս մասնիկով կազմված բառերի նշանակությունն է գործողության կատարում. բայց դա նշանակության առաջին աստիճանն է, որ և նույնանում է սլավոնականի հետ։ Բայց գործողությունը հասնում է ապա արդյունքի, դրա համար էլ վերի բառերից մի քանիսը նշանակում են նախ գործողություն, ապա արդյունք։ Օրինակ՝ գովեստ *«1. գովելու գործողությունը, գովաբանություն, 2. գովասանական»,* պահեստ *«1. պահելու գործողությունը, պահպանություն, 2. պահած բանը, մթերք»,* ելուստ *«1. ելնելու գործողությունը, 2. ուռուցք»,* ապրուստ *«1. ապրելը, 2. ապրելու միջոցներ, ուտելիքներ»,* հանգիստ *«1. հանդստություն, 2. դադար»։*

Նույնիսկ երբեմն այդ երկու նշանակությունները այնպես են միանում իրար հետ, որ կարելի չէ լինում զանազանել, թե ո՞ր իմաստով պետք է առնել. օր.՝ իմաստ, *որ թե «նշանակություն» է և թե նշանակած բանը։*

Կան էլ, որ միայն երկրորդ իմաստով են, ինչպես է հագուստ։

Երկրորդ իմաստին հասնելուց հետո բառը կարող է դառնալ ածական, ինչպես է զգաստ, *որ այժմ չի նշանակում զգացողություն, այլ զգացող,* համեստ *(նախկին համ անծանոթ արմատից),* հանգիստ *(որից մինչև անգամ նոր բայ է հանգիստանալ),* հարուստ *(նախապես նշանակում էր շատ, երկարատև, բռնակալ, իսկ այժմ մեծատուն, ընչավետ)։*

Առանձին ուշադրության արժանի են հետևյալ բառերը.

Առագաստ, *որ նշանակում է թե նավի առագաստը և թե հարսանեկան սենյակ։ Սա գումը անորոշ է, որովհետև կարող է պատկանել թե ագանիմ «հագնել» արմատին և թե ագանիմ «իջևանել» արմատին։ Առաջինից է, թերևս նավի առագաստ իմաստով, իսկ երկրորդից է հարսի սենյակ իմաստով։ Իմ Արմ. բառարանում երկուսն էլ դրել եմ առաջին արմատից։*

Որկորուստ *«որկրամոլ» նշանակությամբ. գործածված է հետին հեղինակների մոտ. երկու անգամ ունենք որկորաստութիւն «որկրամոլություն» ձևով Ս. Գրքում (Գ. Մակ. Զ. 26, Առակ. ԻՀ. 7), և մի անգամ եւագր.։ Մինչև այստեղ հիշված օրինակները ծագում են բայական արմատներից, ուստի զարմանալի է որկորուստ ձևը, որ ծագում է* որկոր *գոյականից։ Նույնիսկ* կապուստ *պետք է*

համարել կապել բայից, ինչպես որ հառուստ՝ հառալ բայից և հաւատարիմ՝ հաւատալ գնամ՝ հաւանիլ բայից։

Մի կարևոր հանգամանք էլ կա, որ արժանի է առանձին հիշատակութեան։ Այս բառերի մեծ մասը հետևում են ի հոլովման, բայց ամենահին ձևերից մի քանիսը սեռականում լինում են -եան ինչ.՝ գալուստ—գալստեան, փախուստ—փախստեան, թաքուստ—թաքստեան, հանդիպուստ—հանգստեան, կորուստ—կորստեան, նույնիսկ նյուստ—նյստեան և որկորուստ—որկորստեան։

Ի՞նչ է այս ե ձայնավորի ծագումը։ Ուն, -թիւն վերջավորած բառերը սեռականում բոլորում են -եան, -թեան ձևերը, բայց վերոհիշյալ բառերը բացառութեան կազմելով հետևում են նույն հոլովման. կարծում եմ, թե այս ե ձայնավորի հավելումը հնխ. osti մասնիկի վերջաձայն i-ի մնացորդն է։

Այս ուստ մասնիկի հետ բնականաբար ոչ մի կապ չունի այն -ուստ մասնիկը, որ կազմում է մակբայ՝ «մի տեղից» նշանակութեամբ, ինչպես երկնուստ, աբատուստ, ի ներքուստ, ի վերուստ, ի հետուստ և այլն։

66 (72). Խ Չ

Միջին հայերեն բառ է «կողքին, քովը» նշանակութեամբ. գործածված է հետևյալ տեղերում. Անսիզք 81. Սմբ. դատ 120. Վստկ. 79, 208 (Եւ թէ ղկանկիփ կանաչ ցաման ի խէչդ պահես, մնջեխ ի քիզ չմերձենայ. Դիր խէչ տոշ բերանին). Քուչ. 83 (Այն մարդուն ի խէչ մի՛ նստիր)։ Այս բառից է կազմված խնչափառ «խնչգնաւին», իր երկու կողքի չորս դույզ թևերի պատճառով այսպես կոչված։ Այս վկայութիւնները տանում են մեզ մինչև ԺԲ դար. բառը այսօր էլ գործածական է մեր զանազան բարբառներում նույն նշանակութեամբ. (տե՛ս Արմ. բո. հտ. Գ. 475=տպ. Բ, 362)։

Համեմատում եմ ընդհանուր Թրք. ჯაჲ qəč բառի հետ, որ նշանակում է «հետույք, նստ, գավակ» (Աբիկեան Ընդ. բո. տճկ.-հյ. Պոլիս 1898, 466, Զէքի 1912, 647)։ Будагов ունի II էջ 39 «մի բանի հետևի կողմը, ծունկից մինչև կռնը հատ մասը»։ Թուրծածական է պոլսահայ բարբառում խրչ ձևով և նշանակում է ազդրի վերևի մասը՝ դեպի հետևի կողմը։ Ասվում է հատկապես խըչը կցափի։ Նավի համար էլ գործածվում է խրչ՝ նշանակելու համար նավի հետևի մասը, խնչքօր.՝ նավին խըչը նստած է։

Բաթարական ազդեցության ժամանակ խէչ բառը փոխ է առնվել նրանց լեզվից «կողք, քով» նշանակութեամբ, ճիշտ ինչպես ունենք որ. առ եւի «քովը, նստրը», որ կազմված է եւի բառից «անաչառնի աջ, ուրքը ուսով միասին»։ Դաղմատիա է յարևելից Գաղղիոյ, առ երի Գերմանիոյ. խոր. (=Շիր.) Աշխ.։ Այսպես նաև առրնքեր «կողքին», որ կազմված է քեր բառից։

67 (73). Է Վ Ե Ր Ե Կ

Կեսարիա քաղաքի հարավ-արևելյան կողմում, 5 ժամ հեռավորութեամբ, Կիլիկիայի սահմանի վրա գտնվում է այս գյուղը, որ Թրք. կոչվում է Everek։ Գյուղը ամբողջ հայաբնակ էր և ուներ 1000 տուն, որ է՝ 5000 շունչ։ Կարծում եմ, որ այս բառը ծագում է հայերեն ավերակ բառից։ Եթե ամբողջ գյուղը հայաբնակ էր և հայ բնակիչները ավերակ անունն են տվել այդ գյուղին, ուրեմն հին մի քաղաքի ավերակին էր ներկայացնում։ Թե որն էր այդ հին քաղաքը (Թերևս Հիտիտական) մեր նպատակից դուրս է որոշել։ Մենք միայն ցույց ենք տալիս, որ Թրք. Everek բառը ծագում է հյ. ավերակ ձևից։ Այս բառի մեջ շեշտը դրված էր միջին վանկի վրա։ Թուրքերենի մեջ սովորական ձայնավորների ներդաշնակության համաձայն պետք էր երեք ձայնավորներն էլ նույն լինեին, կամ 3 a, կամ 3 e (avarak կամ everek)։ Որովհետև միջին է շեշտված է, ուստի է հաղթող հանդիսանալով, ավերակ-ը դարձել է everek։

Ճիշտ այսպես է նաև Severek քաղաքը, որ գտնվում է Տիգրանակերտի մոտ և ծագում է անշուշտ հյ. Սև-ավերակ ձևից։

68 (74). ԹՐՔ. DANGALAQ

Будагов-ի *բառարանում, էջ 550 այս բառը գրվում է* دانغلق *և* دابغلق *ձևերով և բացատրված է* «зъвака праздношатающійся» Hindoglou, *Աբիկեան բառարանում (Պոլիս 1892), էջ 250 գրված է* دانغلاق *և բացատրված է «1. շինական, 2. անհոգ, պղերգ», իսկ Զեքիի բառարանում (Պոլիս 1912) էջ 340 գրված է նոյնպես* دانغلاق *և մեկնված է «1. գեղջուկ, տմարդի, 2. անհոգ»։ Այժմ Պոլսի Թուրքերենով հնչվում է* dangalaq *և նշանակում է «տխմար, բթամիտ»։ Նույնը փոխ են առել Պոլսի հայերը նույն իմաստով և հնչում են* դանգալախ (dangalax)։

Կարծում եմ, թե այս բառը գոյութիւն ունի նաև Խրիմի թաթարերենում dangalax *ձևով, որ նույն տեղի հայերն էլ փոխ են առել նրանցից և շարունակում են մինչև այժմ Նոր-Նախիջևանում «դրսեցի, ոչ նախիջևանցի հայ» իմաստով։ Բառի բուն իմաստը անհայտ է իրենց մոտ, բայց գիտեն, որ նախատական իմաստ ունի։*

Կարծում եմ, թե այս բառը Հայերեն է և ձևափոխված է տան գլուխ *բառից։ Այս բառը նշանակում է «մեծատուն, գլխատուն», իբրև թե ոտանավորի տան գլուխը գտնված տուռ։ Այս բառը չկա Նոր Հայկազեան բառարանում, բայց գործածական է Պոլսի ժողովրդի մեջ վերի իմաստով։*

Պետք է ասել, որ Պոլսի հասարակ ժողովրդի ավելի զարգացած մի մասը ունի մի քանի Հայերեն բառեր, որոնք գրական չեն, բայց գուտ Հայերեն են։ Այս կարգի բառերից են՝ տափտուն «բաղանիք», եղինճ «փրլավ» և երսանկ «բաղանիքի փայտյա կոշիկ, լալին»։ Տաճ գլուխ բառն էլ սրանց կարգից է, որի հնագույն գործածութիւնը գտնում եմ Մխիթար Աբբայի բառարանի Բ հատորի մեջ, էջ 14 (Մխիթար Աբբան մեռել է 1749 թվականին, իսկ բառարանի Բ հատորը տպված է 1769 թ.)։

«Մեծ, խոշոր» նշանակութեամբ բառերը նաև «կոպիտ, տգեղ» իմաստն ունեն։ Գրբ. խոշոր բառը նշանակում է «կոպիտ», որից էլ ունենք խոշորագեղ, խոշորաձայն *են։ Աճառեանի գրաբարում նշանակում է նախ «մեծ, վիթխարի». Զօձ ցամաքային անճռոնի վիշապ անուանեն (Եզն.)։ Ավելի ուշ ստացել է «տգեղ» նշանակութիւնը, որ այժմ սովորական է։ Եվ երբ Թովմա Արծրունին արաբատյան բանակի զինվորներին կոչում է* անճռոնի, *դրանով չի ուզում ասել «տգեղ», այլ «բարձրահասակ, հաղթանդամ»։ Այս կարգից է նաև* անճեռեք, *որի հին նշանակութիւնն է «մեծ, վիթխարի». Ազգ ակայից անհեղեղք. Խոր. ՟ 8, հետո ստացավ տգեղ նշանակութիւնը։*

Այսպես է եղել նաև տան գլուխ *բառը։ «Մեծատառը» կամ «գլխագիրը» իբրև խոշոր բան, արհամարհական իմաստ է ստացել. օր.՝ Տան գլուխ ե՞ս, ինչ է. իբր թե խոշոր, բայց անօգուտ մի բան ես։ Եվ այս նախատական իմաստով հայերենից անցել է թուրքերենին։ Բացի Պոլսից և Խրիմից, ուրիշ տեղ թուրքական բարբառներում գոյութիւն չունի այս բառը և թուրքական արմատներով էլ չի բացատրվում։ Նույնիսկ* Будагов-ը, *որ նշանակել է այս բառը, իբրև աղբյուր հիշում է միայն Հինդօղլուի բառարանը և ոչ մի բարբառ չի հիշում։*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ., Հայերեն արմատական բառարան: Հ. 1—7: 1927—1935: Ապակենտիպ:
Հ. 1, 1927
Հ. 2, 1928
Հ. 3, 1930
Հ. 4, 1930
Հ. 5, 1931
Հ. 6, 1932
Հ. 7, 1935

ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ., ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների, 1928:

ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ., Հայոց անձնանունների բառարան: Հ. 1—5:
Հ. 1, 1942
Հ. 2, 1944
Հ. 3, 1946
Հ. 4, 1948
Հ. 5, 1962

ԱՃԱՌՅԱՆ Հ. Հ., Հայերեն արմատական բառարան: Հ. 1—4:
Հ. 1, 1971
Հ. 2, 1973
Հ. 3, 1977
Հ. 4, 1979

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Գ. Մ., Գերմաներեն-հայերեն բառարան, 1976:

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ե. Հ., Ժամանակակից հայոց լեզվի համառումների բառարան, 1978:

ԾԱՏՈՒՐՅԱՆ Թ. Գ., Բույսերի անունների լատիներեն-հայերեն-ռուսերեն բառարան, 1962, 1970:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ռ. Թ., Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, 1965:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ա. Մ., ԳԱԼՍՏՅԱՆ Ս. Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, 1975:

Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, խմբ. Պ. Պողոսյանի և Ռ. Մելքումյանի, 1975:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. I, 1979:

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Դ
ՀԱՏՈՐ

Պ—Ֆ

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Լ. Աղայան

Նկարիչ՝ Հ. Ն. Գոռծակալյան

Տեխնիկական խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան

Վերատեսուղ սրբագրիչ՝ Ս. Վ. Ղազարյան

Ջոկս հատորների էջերը կապել և օտար լեզուների շարվածքը կատարել է գրաշար-էջակապ՝ Պողոս Եղիշի Նալբանդյանը

Լինոտիպիստ՝ Հ. Օհանյան

Տպագրիչներ՝ Դ. Գալստյան, Շ. Սաֆարյան

Պատվեր 2045 *Տպաքանակ 20000*

Հանձնված է արտադրության 14.11.1978 թ.։
Ստորագրված է տպագրության 10.07.1979 թ.։
Թուղթ՝ 84×108 1/16։ Տպագր.-պայմ. 70,98 մամուլ։
Հրատարակչական 59,51 մամուլ։
Գինը՝ 5 ռուբ.
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մաշտոցի փող. № 1։

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փող. № 52։

Б П.